

ՌՕԼԼԷՆԻ ԳԱՂՂԻԱՑՒՈՑ
ՀՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Ի ՎԵՐԱՅ
ԵԳԻՊՏԱՑՒՈՑ ԿԱՐՔԵԴՈՆԱՑՒՈՑ ԱՍՈՐԵՍՏԱՆԵԱՅՑ
ԲԱԲԵԼԱՑՒՈՑ ՄԱՐԱՑ ԵՒ ՊԱՐՍԻՑ ՄԱԿԵԴՈՆԱՑՒՈՑ
ԵՒ ՅՈՒՆԱՑ

ԹԱՐԳՄԱՆԵԱԼ Ի ԳԱՂՂԻԱԿԱՆ ԲՆԱԳՐԷ
Ի ՁԵՌՆ ԵՐԿՈՒՑ ՀԱՐԱԶԱՏԱՑ
Հ. ԳԷՈՐԳԵԱՅ ԵՒ Հ. ԵԴՈՒԱՐԴԱՅ ՀԻՒՐՄԻՒԶԵԱՆՑ
Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆԻՑ

ՏՊԱԳՐԵԱԼ ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ
ՏՆ. ՍՈՒՔԻԱՍԱՅ ՍՈՄԱԼԵԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՍԻՒՆԵԱՑ
ԵՒ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱԲԲԱՅԻ

Արդեամբք և ծախիւք Պարոն Աղէքսանդրի Ռաֆայէլի Ղարամեան
յերախտագէտ Յիշատակ մեծապատիւ ազգասէր Հօր իւրոյ
Աղայ Եդվարդի Ռաֆայէլի Ղարամեան,
որ երբեմն վաճառական 'ի Մատրաս 'ի Հնդիկս ։

ՀԱՏՈՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

գրակ
732

Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ
1828 ՌՄՀԷ

Նուէր

Լիզպոնի Գալուստ Կիւլպէնկեան
Հիմնարկութեան կողմէ
Հայկական ՍՍՌ Գիտութիւնների
Ակադեմիայի Մատենադարանին

1966

ԳԻՐՔ ՔՍԱՆԵՐՈՐԴ

Զգիրս զայս յերիս բաժանեմք, յառաջնումն ըզպատմութիւն Հրէից համառօտեալ յԱրիստաբուղեայ մինչև ցՀերովդէս մեծն. յերկրորդումն զՊարթևացն, 'ի սկզբանէ պետութեան մինչև ցպարտութիւն Կրասոսի. և յերրորդումն զթագաւորացն Կապադովկացւոց, մինչև 'ի մտանել նոցա ընդ ձեռամբ Հռոմայեցւոց:

ՊՐԱԿ ԱՌԱՋԻՆ

Համառօտութիւն պատմութեան Հրէից, յԱրիստաբուղեայ յորդւոյ Հիւրկանեայ մինչև ցթագաւորել Հերովդի մեծին Հռոմայեցւոց:

Բանզի ընդ վէպս Ասորւոց և եգիպտացւոց կցորդին Հրէիցն բազում իրք, 'ի պատեհ պատեհ տեղիս պատմեցաք որ ինչ 'ի դէպ և կարևոր թուէրն. այժմ զթերին լցցուք մինչև ցթագաւորութիւն Հերովդի մեծին: Այլ որ քաջահմուտ լինել ցանկան՝ Յովսեպայ մատեանքն առ ձեռն կան ամենեցուն, զայնոսիկ ընթերցցին. այլ և զՊրիտոյի մատեանսն, յորմէ բազում ինչ աստ 'ի կիր առնումք:

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Յաղագս երկամեայ թագաւորութեան Արիստաբուղեայ առաջնոյ:

ԱՄ ԱՇ. Ն.Ք
3898 . 106
Յով. պատմ.
հնխ. ժգ. ժբ:
պտրզմհր. ա. գ:

Հիւրկանոս քահանայապետ և իշխան Հրէից եթող 'ի մեռանել իւրում հինգ որդիս. անուն երիցուն Արիստաբուղ, երկրորդին Անտիգոնոս, երրորդին Աղեքսանդր Յաննէոս, չորրորդին անուն անծանօթ, իսկ հինգերորդին Աբեսաղոմ: Նա եկաց Արիստաբուղ անդրանիկն նորա քահանայապետ և իշխան փոխանակ նորա: Նա հաստատեալ 'ի կրկին իշխանութիւն, թագ եդ և կոչէ

ԱՄԱՌ․ ՆՔ ցաւ Թագաւոր․ զի յետ գերութեան բաբելացւոց՝ ոչ ոք ՚ի նախորդաց նորա Թագաւոր կոչէր։ Եւ յոյժ յաջողեաց նմա ժամանակն․ քանզի Թագաւորք Ասորւոց և եգիպտացւոց, որ միայն կարող էին հակառակ կալ նմա, նոքա յայնժամ տկարք էին և առտնին ՚ի համազգի պատերազմունս պատաղեալ, և Թագաւորութիւն նոցա խարխուլ և կարճատև։ Եւ զպառակտումն պետութեանցն և զԹագաւորաց ջանային հռոմայեցիք հաստատել, զի իւրաքանչիւր ոք ՚ի նոցանէ տկարացեալ՝ նկուն և սակաւաւոր լիցին առաջի իւրեանց։ Դարձեալ և պարտ էր Արիստաբուղեայ յօգուտ արկանել զյաղթութիւնս և զաշխարհակալութիւնս նախորդաց իւրոց՝ որք պատրաստեցին աներկեան և յարատև հաստատութիւն ազգին, և զօրութիւն Թագաւորելոյ նմա փառօք ՚ի մէջ ազգաց՝ որ շուրջ զնոքօք բնակեալ էին։ Եւ Թէպէտ մայր նորա՝ որում կտակաւ Թողեալ էր Հիւրկանոս զառաջնորդութիւն աշխարհին՝ կամէր Թագաւորել անձամբ, այլ զօրացաւ որդին, և արկ զմայրն ՚ի բանտ, և սովամահ արար զնա։ Եւ ընտրեաց զերէցն ՚ի մէջ եղբարց իւրոց զԱնտիգոնոս՝ զոր յոյժ սիրէրն, և կալաւ զնա օգնական յառաջնորդութեան աշխարհին։ Իսկ զերեսին եղբարսն հրամայեաց ՚ի բանտ, և կային անդ մինչև ցմահ նորա։

3898 · 106 Յ․Հ․ պտմ․ Նախն․ ԺԳ․ ԺԹ։ Եւ իբրև զօրացեալ կալաւ Արիստաբուղ զամենայն իշխանութիւն հօր իւրոյ, խաղաց պատերազմաւ ՚ի վերայ իտուրացւոց, և զմեծ մասն աշխարհին նուաճեաց․ և ստիպէր զնոսա դառնալ ՚ի հրէութիւն, որպէս զեդոմայեցիսն յառաջ քան զամս ստիպեաց Հիւրկանոս։ Եւ բռնադատէր զնոսա կամ Թլփատել և յանձն առնուլ զօրէնս Հրէից, և կամ մեկնել յաշխարհէն և խնդրել այլուր բնակութիւն։ Նոքա յանձն առին զհրէութիւն քան ըդպանդխտել յաշխարհէն, և խառնեցան ընդ Հրեայս կրօնիւք և ամենայն իրօք։ Յայնմ հետէ ընդ օրէնս կարևորս կալան ասամոնեանք՝ ստիպել զայլազգիս ՚ի հրէութիւն․ յայտ է զի չև ևս ճշմարտութեան ՚ի վերայ հասեալ էին՝ եթէ հաւատք ՚ի կամաց են և ՚ի հաւանութենէ մտաց, և ոչ բռնութենէ։ Եւ էր Իտուրիա մասն Ստորին Ասորւոց, և յարևելից հիւսիսոյ Թևակոխէր ՚ի հրէաստան, և բաժանէր ընդ վիճակ կիսոյ ցեղին Մանասէի, յայնկոյս Յորդանանու և ընդ աշխարհն դամասկացւոց։

՚Ի ժամանակին յայնմիկ հիւանդացաւ Արիստաբուղ, և հարկ եղև նմա դառնալ յԻտուրիոյ յԵրուսաղէմ, և եԹող ՚ի վերայ զօրացն զԱնտիգոնոս զեղբայր իւր կա-

ԱՄ ԱՇ. Ն. Ք

տարել զպատերազմն ։ Յայն ժամանակ պարապոյ գտին դշխոյն և համախոհք նորա, որք մախային ընդ փառս Անտիգոնոսի, 'ի գրգռել զԹագաւորն 'ի վերայ նորա սուտ համբաւովք և անօրէն զրպարտութեամբք ։ Անտիգոնոս յաղթեալ պատերազմին, դարձաւ յԵրուսաղէմ յաւուրս տօնից տաղաւարահարացն. և եմուտ վաղվաղակի 'ի տաճարն սպառազէն հանդերձ Թիկնապահօքն, որպէս և եկեալն էր 'ի ճանապարհէն, և ոչ եթող նոցա ժամանակ փոխելոյ ինչ ։ Վասն որոյ ամբաստան եղեն զնմանէ առաջի Թագաւորին. և Թագաւորն յաւել 'ի կասկածանս, և պատուէր առաքեաց նմա 'ի բաց դնել զզէնս և վաղվաղակի գալ յանդիման լինել. զի եթէ անսաստեսցէ՝ յայտնեսցի չարութիւն նորա, և սպանցեն զնա ։ Այլ որ առաքեցաւն յԱրիստաբուղեայ, հրապուրեալ 'ի դշխոյէն և 'ի համախոհից նորա՝ այլ ընդ այլոյ եցոյց Անտիգոնեայ զպատուէր Թագաւորին, թէ սպառազինութեամբդ քով կամի արքայ տեսանել զքեզ ։ Փութացաւ Անտիգոնոս գալ առ նա. և պահապանացն տեսեալ զնա սպառազէն, հարին սպանին զնա որպէս պատուիրեաց Թագաւորն ։ Բայց Արիստաբուղ իբրև գիտաց զհաւաստիս իրին՝ յոյժ տրտմեցաւ, և ոչ կարէր մխիթարել՝ դատեալ 'ի խղճէ մտաց ընդ սպանութիւն եղբօրն, զոր 'ի մայրասպանութիւն յաւել. և եկեաց Թշուառութեամբ, և մեռաւ 'ի սուգ մեծ և 'ի յուսահատութեան ։

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Թագաւորել Աղեքսանդրի Յաննեայ զամս քսան և եօթն ։

3899 · 105 Ընդ մեռանել Արիստաբուղեայ՝ Սաղոմէ կին նորա արձակեաց զերեսին զեղբարս նորա, զարգելեալսն 'ի նմանէ 'ի բանտ ։ Եւ Թագաւորեաց երէցն 'ի նոցանէ Աղեքսանդր Յաննէոս. և սպան զկրտսեր եղբայր իւր, զի ձգեաց նա զձեռն 'ի յափշտակել զԹագաւորութիւն. իսկ զԱբեսաղոմ զկրտսերագոյնն զայր խաղաղասէր՝ որ առանձինն կեայր յանդորր՝ փառաւորեաց զնա, և եղև նմա պաշտպան մինչև ցմահ ։ Եւ այլ ոչ ինչ զնմանէ աւանդեն վէպք՝ բայց զի զդուստր իւր ետ կնութիւն Արիստաբուղեայ կրտսերոյ որդւոյ եղբօր իւրոյ Աղեքսանդրի, և զի օգնական եղև ընդդէմ Հռոմայեցւոց 'ի պա-

Յ-ս. պատմ. Նախն. ժգ. Ի. ժգ. Է. և յաղ. պատմ. Հր. Ա. Գ.

ԱՄ.ԱՌ.Ն.Ք. շարել նոյա զԵրուսաղէմ, և զի յետ քառասուն ամաց գերեցաւ յառնուլ Պոմպէի զտաճարն ։

Մինչդեռ այս անցք անցանէին 'ի Հրէաստան, Թագաւորք Ասորւոց Գրիպոս և Անտիոքոս Կիզիկենացի տային ընդ միմեանս խիստ պատերազմ եղբայր ընդ եղբօր · Գրիպոս Թագաւորէր յԱնտիոք, և Անտիոքոս 'ի Դամասկոս ։ Իսկ յԵգիպտոս Թագաւորէր Կղէոպատրա ընդ կրտսերոյ որդւոյ իւրում Աղեքսանդրի, և անդրանիկն նորա Պտղոմէոս Լաթիրոս Թագաւորէր 'ի Կիպրոս ։

Աղեքսանդր Յաննէոս դարձեալ յԵրուսաղէմ և ժառանգեալ զաթոռն, յետ ոչ բազում ժամանակի յարոյց բանակ մեծ, և անցեալ ընդ Յորդանան՝ եկն պաշարեաց զԳադարա, և նստեալ զնովաւ զամիս տասն՝ էառ զայն, և զամուր ամուր քաղաքս՝ որ էին յայնկոյս Յորդանանու ։ Այլ իբրև դարձեալ գայր զօրօք, յանպատրաստից 'ի վերայ անկան Թշնամիք, և հարին 'ի նոցանէ բիւր մի, և զա՟մ աւար մարտին և զաղխս բանակին կալան ։ Իսկ եկն եմուտ յԵրուսաղէմ պարտեալ և ամաչեցեալ. և առաւել դառն Թուէր նմա, զի բազումք փոխանակ կարեկցութե՟ ուրախ լինէին մեղմեխանօք ընդ վիշտս նորա ։ Զի փարիսեցիք յետ հակառակութե՟ն Հիւրկանեայ ընդ նոսա՝ անհաշտ Թշնամիք էին ընդ որդիս նորա մանաւանդ ընդ Աղեքսանդրի · և գրգռեալ չարայուցին ընդդէմ նորա զժողովուրդն, զի գրեթէ ա՟մ ժողովուրդն կախեալ կային զնոցանէ ։ Իսկ աստի իսկ պատճառս առին ա՟մ աղմուկք և խռովութիւնք՝ որ հասին 'ի վերայ Թագաւորութե՟ նորա ։

3904 . 100 Ոչ ինչ վհատեցաւ Աղեքսանդր 'ի խիստ հարուածոյն · այլ տեսեալ զԳազա անպատսպար, քանզի մեկնեալ էր անտի Լաթիրոս՝ դիմեաց անդր, և էառ զՌափիա և զԱնթեդոն՝ որ սակաւ մղոնիւք հեռի էին 'ի Գազայ, և որպէս պատնէշք քաղաքին · յայն սակս յարձակեցաւ անդր Աղեքսանդր ։ Զի էր ցասմամբ ընդ Գազացիս յօրէ յորմէ գրգռեցին զԼաթիրոս ընդ իւր 'ի Թշնամութի՟, և զօրացուցին զձեռս նորա, և հարաւ 'ի նմանէ յեզր Յորդանանու մեծաւ պատերազմաւ · և խնդրէր Թէ զիարդ պարապով լուծցէ զվրէժ ։ Իսկ իբրև պարապ էառ 'ի գործոց աշխարհին, եկն զօրօք բազմօք պաշարեաց զԳազա ։ Ապողոդոտ վերակացու քաղաքին, զամ մի քաջութե՟ և իմաստութե՟ պահ կալեալ, յոյժ անուանի եղև ։ 3906 . 98

Բայց Լիւսիմաքոս եղբայր նորա նախանձեալ ընդ փառս նորա, սպան զնա · և միաբանեալ ընդ իւր արս

անօրէնս ոչ ինչ պակաս չարութե քան զինքն, մատնեաց ԱՄԱՇ·ՆՔ
զքաղաքն 'ի ձեռս Աղեքսանդրի ։ Որ 'ի մտանել իւրում անդր, քաղցր հրամանօք 'ի վերին երեսս հեզուի և մարդասիրութի առնէր ընդ նուաճեալս ․ այլ իբրև կալաւ զիմ ամիսս, և ոչ ևս ոք կարէր ընդդիմանալ նմա, հրաման ետ զօրացն 'ի սուր սուսերի կոտորել զբնակիչս քաղաքին, աւար առնուլ և ապականել զիմ․ և ոչ ինչ թողին 'ի չարեաց՝ զոր ոչ գործեցին զօրքն անխնայ ընդ թշուառ քաղաքին ։ Այլ մեծաւ տուգանօք խնդրեաց զվրէժն ․ քանզի գազացիք կատաղեալ յուսահատութե զդէմ կալան, և սպանին 'ի զօրաց նորա՝ ոչ ինչ պակաս քան զանկեալս իւրեանց ․ բայց գազանաբարոյ սրտմտութի նորա յագեցաւ, յաւէր դարձուցեալ զքաղաքն՝ անուանի 'ի վաղ ժամանակաց, և դարձ արար յԵրուսաղէմ․ և տևեաց պատերազմն զամ մի ։

Յետ ոչ բազում ժամանակի արարին ընդ նմա ժողո- 3909 · 95
վուրդն անհնարին թշնամանս ։ Զի 'ի տօնս տաղաւարահարաց 'ի մատուցանել նորա 'ի տաճարին ըստ օրինի քահանայապետութեն 'ի սեղան ողջակիզաց հանդերձ զպատարագն, ձգեցին կիտրոնս 'ի գլուխ նորա հանդերձ բանիւք թշնամանաց, կոչելով զնա ստրուկ անարժան թագաւորութե և քահանայապետութե, ըստ յանդգնութեն Եղիազարու՝ որ ստրկածին ժպրհեցաւ կոչել զՅիւրկանոս ։ Եւ յոյժ սրտմտեալ Աղեքսանդրի, և դիմեալ թիկնապահօքն 'ի վերայ ժպիրհ ամբոխին՝ սպան 'ի նոցանէ վեց հազար այր ։ Եւ ոչ ևս վստահացեալ 'ի Հրեայս վասն չարութե սրտի նոցա՝ արար թիկնապահս այլազգիս, ածեալ 'ի Պիսիդեայ և 'ի Կիլիկեայ ամբոխ վեց հազար արանց, որք ընդ նմա շրջէին հանապազ ։

Եւ զառտնին խռովութիւն առ վայր մի ցածուցեալ 3910 · 94
վրէժխնդրութեն, դարձաւ Աղեքսանդր 'ի վերայ արտաքնոց թշնամեացն ։ Եւ 'ի սկզբան պատերազմին յաղթեալ նոցա՝ ապա անկաւ 'ի դարան, և կորոյս զբազումս յիւրոցն, և ինքն մազապուր զերծանէր ։ Եւ 'ի դառնալ նորա յԵրուսաղէմ, զայրացեալ 'ի վերայ նորա Հրեայք վասն պարտութե պատերազմին՝ ապստամբեցին 'ի նմանէ ․ քանզի համարէին զնա վատթարեալ 'ի սպառ և նկուն լեալ 'ի հարուածոյ անտի, և յուսային դիւրաւ կորուսանել զնա՝ որպէս 'ի բազում ժամանակաց ցանկային ։ Բայց Աղեքսանդր զգոյշ և արի և աջողակ էր, և կազմեաց վաղվաղակի զօրս ընդդէմ նոցա ․ և յարոյց մարտ քաղաքական, և պատերազմէր զամս վեց ընդ ժո-

ԱՄ ԱՇ. Ն. Ք. ղովրդեան իւրում. եւ հասին աղէտք անբաւ երկուց կողմանցն. եւ հարան ապստամբք ՚ի հարուածս բազումս, եւ
3918. 86 ՚ի պարտութիւն մատնեցան։ Եւ կալաւ Աղեքսանդր զքաղաք ապաստանի նոցա՝ յոր բազումք ՚ի նոցանէ ամրացեալ էին. եւ խաղացոյց ՚ի նոցանէ արս ութ հարիւր յԵրուսաղէմ, եւ հրամայեաց զամենեսին միանգամայն կախել զփայտէ, եւ զկանայս նոցա եւ զորդիս սրախողխող առնել առաջի նոցա։ Եւ մինչդեռ զհրամանն անօրէնութեան կատարէին դահիճքն, ինքն թագաւորն խնջոյս ուրախութեան առնէր կանանց եւ հարճից իւրոց ՚ի տեղւոջ՝ ուստի տեսանէր զա̃մ. եւ առաւել ՚ի տեսիլ աղէտիցն զուարճանայր ընդ նոսա։ Ո՛ անագորոյն մտացն։ Եւ ընդ վեց ամս պատերազմին առաւել քան զհինգ բիւրս սպանան յապստամբացն։

Եւ իբրեւ հանդարտեաց երկիրն ՚ի պատերազմէ, արշաւէր Աղեքսանդր ՚ի կողմանս կողմանս յաղթութեամբ մեծաւ։ Եւ դարձեալ յԵրուսաղէմ՝ ետ զանձն ՚ի շուայտու-
3925. 79 թիւն եւ յարբեցութիւն. եւ չորեքօրեայ տենդիւ ջերմացեալ՝ մեռաւ յետ երից ամաց. թագաւորեալ զամս քսան եւ եօթն։ Եւ եթող երկու որդիս, զՀիւրկանոս եւ զԱրիստաբուղ. այլ զԱղեքսանդրա զկին իւր կացոյց ՚ի վերայ աշխարհին թագաւորել մինչեւ ցմահ, եւ կացուցանել զհետ իւր զմի ոք յորդւոց իւրոց՝ զոր ընտրեսցէ։

ՅՕԴՈՒԱԾ Գ.

Թագաւորել Աղեքսանդրայ կնոջ Աղեքսանդրի Յաննեայ. առ որով անդրանիկն նորա Հիւրկանոս քահանայապետէ։

3926. 78
Յով. պատմ.
Նախն. ԺԳ.
ԻԷ: Եւ յաղ.
պտրզմ. Հտ. Ա.
Է:

Եւ յետ մեռանելոյ Յաննեայ, Աղեքսանդրա կին նորա խրատեալ ՚ի նմանէ՝ հնազանդեցաւ փարիսեցւոց որդւովքն հանդերձ, եւ պատմեաց նոցա՝ թէ ինքն Աղեքսանդր ՚ի մեռանել իւրում զայն պատուէր ետ։ Եւ յանկոյց յինքն զսիրտս ամենեցուն, զի որք ոխերիմ ատեցողքն էին Աղեքսանդրի առ կենդանութեամբ նորա՝ ապա յետ մահուն իսկ եւ իսկ մեծարէին փառօք զյիշատակ նորա. եւ փոխանակ թշնամանաց բանիցն եւ նախատանաց, գովէին զնա եւ բարեբանէին. եւ պաճուճաբանեալ պանծացուցանէին զվաստակս քաջութեան նորա, որովք մեծացոյց զազգն եւ հզօրացոյց եւ արար ՚ի պարծանս եւ անուանի յոյժ։ Եւ որք յառաջագոյն ոչ դադարէին զըր-

ԱՄ ԱՇ.Ն.Ք

գուել զժողովուրդն ընդդէմ նորա, դարձեալ շրջեցին զմիտս նոցա՝ առնել նմա յուղարկաւորութի՟ շքով մեծաւ, որպէս ոչ ումեք 'ի նախորդաց նորա արարեալ էին. և զԱղեքսանդրա ըստ պատուիրանի կտակին կացուցին 'ի վերայ ա՟մ իրաց աշխարհին։ Տե՛ս ինձ զի փարիսեցիք զա՟մ վաստակս քաջութե՟ զայն համարէին, եթէ միամըտեալ հնազանդեր ոք կամաց և իշխանութե՟ նոցա. իսկ զայլն ա՟մ թերութի՟ և զանօրէնութի՟ս ծանունս ապախտ առնէին, որպէս սովորութի է իշխանասիրացն։ Այլ իբրև ամրացաւ Աղեքսանդրա յիշխանութե՟ն, կացոյց զանդրանիկն իւր զՀիւրկանոս քահանայապետ, ամաց իբր երեսուն և երից. և զիրս կարևորս աշխարհին յանձն արար փարիսեցւոց, որպէս խոստացեալն էր։ Որոց իշխանութի՟ 'ի ձեռս առեալ, իսկ և իսկ եղծին զհրովարտակն՝ զոր Յովհաննէս Հիւրկանոս հայր Արիստաբուղեայ և Աղեքսանդրի ետ 'ի բարձումն աւանդական կարգաց նոցա, որ առաւել ևս յաճախեցին յայնմ հետէ։

Այլ յարուցին հալածումն խիստ 'ի վերայ այնոցիկ՝ որք առ Թագաւորութե՟ն Աղեքսանդրի թշնամիք լեալ էին նոցա, և ոչ կարաց Աղեքսանդրա խափանել զայն. զի կաշկանդեալ էին ձեռք նորա, թողեալ զա՟մ իշխանութի՟ 'ի ձեռս փարիսեցւոց։ Դարձեալ և անբաւ աղետից քաղաքական պատերազմին ականատես լեալ առ կենդանութե՟ առն իւրոյ, երկնչէր գրգռել զայն միւսանգամ. և ոչ գտեալ ելս չարեացն՝ բայց միայն ներել առ ժամանակ մի խիստ և անողոքելի վրէժխնդրութե՟ն, համբերէր թեթևագոյն չարին 'ի խափանումն ծանունցն։ Արդ այս ա՟մ բաւական է 'ի խելամտութիւն բարուց ազգին հրէից, և թէ որպիսիք ոմանք առաջնորդէին նոցա։

Այլ ոչ դադարէին փարիսեցիք 'ի հալածելոյ զնոսա, որ առ նախորդ թագաւորաւն հակառակորդ նոցա լեալ էին։ Այլ ա՟մ անգթութե՟ց նորա և անօրէնութե՟ց՝ որովք բամբասէին զանուն նր՟, զնոսա պարտաւոր առնէին. և սովին պատճառանօք զբազումս 'ի նոցանէ կորուսեալ, և այլ պատճառս յուզէին հանապազ առ 'ի կորուսանել և 'ի մնացելոց անտի զատելեացն։ Իբրև տեսին բարեկամք և կուսակիցք Աղեքսանդրի՝ զի ոչ գոյր դադարումն հալածանացն, և զի 'ի կորուստ նոցա երդուեալ էին փարիսեցիքն, ժողովեցան և եկին 'ի միասին առ Աղեքսանդրա. և Արիստաբուղ կրտսեր որդի նորա առաջնորդէր նոցա։ Այլ յիշեցուցեալ նմա զա՟մ վաստակս՝ զոր վաստակեցին Աղեքսանդրի, և զանդրժելի սէր և զհաւա-

3931 · 73
Յ-Ե · դարձ.
Նախն · Ժ՟ .
Իէ : և դդր՟մ
Կր · Ա-Է :

տարմութ՟ իւրեանց ընդ նմա յա՟մ պատերազմունս և 'ի վտանգս խռովուե՟ցն, ասեն. Դառն է մեզ՝ զի արդ ընդ քոյով իշխանութ՟բ վասն այնր ա՟մի վնասապարտ դատիմք, և մատնիմք անողոքելի ոխակալութե՟ թշնամեաց առ գութ սիրոյ քո և ազգատոհմիդ։ Արդ դադարեցո՛ զհարցափորձդ. և եթէ զայդ ոչ կարիցես, թոյլ տուր մեզ մեկնել յաշխարհէս, և խնդրել այլուր ապաստան. կամ ամրացո զմեզ յամուրս զօրօք քովք, զի պատսպարեալ լիցուք 'ի բռնութե՟ թշնամեաց։

Յայժ ողորմէր դշխոյն ընդ թշուառութ՟ նոցա և ընդ զրկանս. այլ ոչ ինչ ձեռնհաս էր առնել ըստ ցանկութե՟ն, զի 'ի կամս փարիսեցւոց գերեալ էր՝ ըստ հաճոյից նոցա առնել զա՟մ։ Տես զի քանի վտանգ է տալ իշխանութ՟ հզօր 'ի ձեռս ազգի այնպիսւոյ։ Բողոք բարձին, զի եթէ վնասապարտից ոչ եղիցի այց՝ խափանեսցին ատեանք, և ոչ ոք յազգաց յանձն առցէ զայդ, և ոչ մեք։ Իսկ հրաման տալ մեկնելոյ յաշխարհէն հաւատարիմ և անկեղծ բարեկամացն՝ չար թուէր դշխոյին, թէ գուցէ առանց օգնականութե՟ մատնեսցի 'ի ձեռս խռովասէր ամբոխին փարիսեցւոց, և ոչ լիցի նմա ապաւէն 'ի վտանգին։ Հաճոյ թուեցաւ նմա միւս այլ խորհուրդն, և բաժանեաց զնոսա յամուրս աշխարհին 'ի զօրանիստ տեղիս, կրկնակի օգուտ համարեալ. մի՝ զի չհամարձակեսցին թշնամիք յարձակել 'ի վերայ նոցա յամուրս՝ ուր առ ընթեր կային նոցա զէնք, և միւս ևս՝ զի էին նոքա որպէս գունդ պահեստի հաւատարիմ օգնականք 'ի վտանգի։

Իսկ յետ ոչ բազում ամաց հիւանդացաւ Աղեքսանդրա հիւանդութ՟ մեծ, և մերձ եղև 'ի մահ։ Իսկ Արիստաբուղ կրտսեր որդի նորա, որ 'ի բազում ժամանակաց խորհէր 'ի մտի ժառանգել զթագաւորութի՟ն 'ի մեռանել մօր իւրոյ, իբրև ետես թէ չէ նա ապրանաց՝ գաղտագնաց եղև գիշերայն յԵրուսաղեմէ ընդ միում ումեք 'ի ծառայից, և եկն յամուրս առ բարեկամս հօր իւրոյ, որք յառաջագոյն խորհրդով նորա առաքեալ էին անդր։ Նոքա սիրով մեծաւ ընկալան զնա. և յաւուրս հնգետասան հնազանդեցան նմա քսան և երկու ամրոցք և բերդք. և նոքօք զօրացեալ կալաւ գրեթէ զա՟մ ամուրս աշխարհին։ Իսկ էին պատրաստ զօրքն և ա՟մ ժողովուրդն միաբանել ընդ նմա՝ տաղտկացեալ 'ի խստութե՟ փարիսեցւոց, որք առ իշխանուե՟ն Աղեքսանդրայ բռնանային անհանդուրժելի. և եկին ժողովեցան յա՟մ կողմանց զինուորել Արիստաբուղեայ, զի ազատեսցին 'ի բռնութե՟

փարիսեցւոց. զի ոչ յուսային յերէց եղբայր նորա 'ի Հիւրկանոս, որ ոչ միայն միամտէր աղանդոյ նոցա՝ վարժեալ 'ի մօրէն, այլ և զի վատասիրտ էր և ապիկար առ գործն արիական, զի յոյլ էր և անփոյթ, դանդաղ և տաղտուկ և անհանճար։ ԱՄԱՌ. ՆՔ

Փարիսեցիքն իբրև տեսին՝ զի ստուարանայր կողմն Արիստաբուղեայ, եկին բազմութ՟բ առ Աղեքսանդրա՝ մինչ մերձ էր նա 'ի մեռանել, և Հիւրկանոս առաջնորդ նոցա. պատմեցին նմա զա՟մ, և խնդրէին 'ի նմանէ՝ պատուէր տալ վասն թագաւորութե՟ն, և օգնական լինել նոցա։ Նա հրաժարեաց վասն տկարութե՟ն, և եթող 'ի նոսա զա՟մ հոգս իրացն. բայց զՀիւրկանոս եցոյց ժառանգ իւր, և ոչ ինչ յերկարեալ 'ի կեանս վախճանեցաւ։

Եւ յետ մեռանելոյ նորա՝ կալաւ զաթոռն Հիւրկանոս, և փարիսեցիք ջանային ա՟մ ճգամբք ամրացուցանել զթագաւորութ՟ի նորա։ Բայց Արիստաբուղ ոչ էր յայնժամ յԵրուսաղէմ, և կալեալ զկին նորա և զորդիս՝ զորս թողեալ էր անդ՝ եդին զնոսա 'ի դիպահոջ ո՟մ պատանդս յամրոցն 'ի Բարիս[1]։ Եւ ոչ այնու կարացեալ խափանել զնա, զօրաժողով եղեն 'ի վերայ նորա. զօրաժողով եղև և Արիստաբուղ։ Եւ մերձ յԵրիքով պատերազմաւ լուծին զվէճն. բազումք 'ի զօրացն Հիւրկանեայ հատուածեցան առ Արիստաբուղ, և ինքն փախստեայ անկաւ յԵրուսաղէմ յամրոցն 'ի Բարիս. և որ ընդ նմա միաբանեալ էին՝ ապաստանեցան 'ի տաճարն։ Ապա յետ սակաւ միոյ և նոքա ձեռն ետուն յԱրիստաբուղ. և ստիպեցաւ Հիւրկանոս խօսել ընդ նմա 'ի խաղաղութ՟ի։

ՅՕԴՈՒԱԾ Դ.

Թագաւորել Արիստաբուղեայ երկրորդի [illegible] ամ։

Իրաւախոհ եղեն ընդ միմեանս երկոքին եղբարք, Արիստաբուղեայ թագաւոր և քահանայապետ կալ, և Հիւրկանեայ հրաժարեալ յա՟մ իշխանութե՟է կեալ առանձինն՝ ընդ ձեռամբ եղբօրն 'ի բարեկենդանութեան։ Եւ ոչ ծանր թուեցաւ Հիւրկանեայ, զի էր նա հանդար- 3935. 69

---

[1] 'Ի [illegible], յորոյ [illegible] տաճարն կառուցեալ էր, էր ամրոցն այն [illegible] տաճարէն։

ԱՄԱՇ·Ն·Ք տասէր և անձնդիւր․ և 'ի բաց եկաց յիշխանութենէ Թագաւորեալ զամիսս երիս։ Ընդ իշխանութեան նորա՝ վախճան եղև բռնաւորութեան փարիսեցւոց․ որ 'ի մահուանէ Աղեքսանդրի մինչև ցայնժամ չարչարէին զազգն։

Բայց դեռ ևս խռովէր հրէաստան․ վասն փառամոլութեան Անտիպայ հօր Հերովդի, որ յաճախ ևս կոչի Անտիպատրոս։ Սա եդումայեցի էր յազգէ, իսկ կրօնիւք Հրեայ, որպէս զամենայն եդումայեցիսն Հիւրկանոս ած 'ի հրէութիւն։ Եւ մնեալ յարքունիս Աղեքսանդրի Յաննեայ, և կնոջ նորա Աղեքսանդրայ՝ որ յետ նորա կալաւ զաթոռն, յինքն պարուրեաց զսիրտ Հիւրկանեայ անդրանկին նոցա, զի 'ի թագաւորել նորա և ինքն հաս-
3939 · 65 ցէ իշխանութեան։ Այլ իբրև այլազգ իրքն կատարեցան, և Հիւրկանոս մերժեցաւ յիշխանութենէ, և կալաւ զաթոռն Արիստաբուղ, վրէպ լեալ 'ի յուսոյ՝ զամենայն ձիգն և ճարտարութիւն 'ի գործ արկ յամբառնալ զՀիւրկանոս յաթոռ։ Զնա Հիւրկանոս յղեաց նախ առ Արետաս արքայ Ապառաժն Արաբիոյ, խնդրել 'ի նմանէ օգնութիւն։ Եւ ապա յետ բազում անցից, զոր վասն համառօտութեան 'ի բաց թողաք, կարդաց առ Պոմպէոս՝ մինչ դեռ ևս դարձեալ էր նա յԱսորիս 'ի պատերազմէն Միհրդատայ։ Եւ անդ Պոմպէոս լուաւ զդատ Հիւրկանեայ և Արիստաբուղեայ, կոչեցեալ զնոսա անդր։ Եկն ընդ նոսա և ամբոխ Հրէից, խնդրել ազատութիւն 'ի ձեռաց երկաքանչիւրոցն, և ասեն․ Մի լիցի մեզ թագաւոր․ զի մեք 'ի սկզբանէ նախնեաց ընդ քահանայապետօք կայաք՝ որք առանց այլ իշխանութեան իրաւունս առնէին մեզ ըստ հայրենի օրինաց և կարգաց։ Իսկ սոքա արդ, թէպէտ և յազգէ քահանայութեան կացեալ, զօրէնս առաջնորդութեան փոխեցին․ և իցեմք ստրուկք, եթէ ոչ ոք ազատեսցէ զմեզ։

Իսկ Հիւրկանոս բողոքէր զԱրիստաբուղեայ, զի յափշտակեալ զիրաւունս անդրանկութեան իւրոյ, և զաշխարհն ամենայն գրաւեալ, եթող նմա ածու փոքր՝ կեալ յեկամտից անտի։ Եւ ամբաստանէր ևս զնմանէ՝ թէ հինաբար աւազակէ 'ի ծովու, և ասպատակէ ընդ ցամաք յազգս սահմանակիցս։ Եւ վկայ ածէր բանիցն արս իբր հազար 'ի գլխաւորաց Հրէիցն, զորս նմին իրի կոչեցեալ էր անդր Անտիպատրեայ, երաշխաւորել չարախօսութեանց նորա զեղբօրէն։ Ետ պատասխանի Արիստաբուղ և ասէ․ Հիւրկանոս վասն ապիկարութեան մերժեցաւ յիշխանութենէ, զի հեղգ էր և յոյլ և 'ի յանձանձանս իրաց անպատկան, և արհամարհեաց զնա ժողովուրդն, վ՟ որոյ հարկ եղև ինձ յանձն առնուլ զառաջնորդու՟ն աշխարհին, զի մի՛ օտարք տիրեսցեն. և պատիւ և իշխանութի՟ ոչ ինչ աւելի է ինձ քան զհայրենիսն։ Եւ ած 'ի վկայու՟ն բանիցս զազատագունդ մանկտին, որ եկին կացին ա՟մ շքով և գեղով. այլ ճոխու՟ն և գեղեցկու՟ն ոչ ինչ օգնեցին նմա յատենի։

Պոմպէոս խելամուտ եղև բանու՟ն Արիստաբուղեայ՝ այլ ոչ առժամայն ետ զվճիռն, զի մի՛ գրգռեալ ընդ իւր՝ խափան լիցի խորհրդոց իւրոց, զի յոյժ ցանկայր առնուլ զԱրաբիա. վասն որոյ արձակեաց զնոսա քաղցրու՟բ, և ասէ. Նուաճել իմում զԱրետաս և զարաբացիս՝ դարձեալ անցից ընդ Հրէաստան, և իրաւ արարից և ուղղեցից զամենայն։ Բայց Արիստաբուղ գիտաց զխորհուրդս Պոմպէի, և մեկնեալ բարկու՟բ 'ի Դամասկեայ՝ առանց յանդիման լինելոյ նմա միւսանգամ, եկն 'ի Հրէաստան, զինուորեաց զՀրեայս, և կազմեցաւ 'ի պատերազմ, կոչելով 'ի վերայ իւր զոխերիմ ոսոխն։ Եւ պատրաստէր Պոմպէոս մեծաւ պատերազմաւ 'ի վերայ արաբացւոց։ Արետաս՝ որ արհամարհէր՟ զզօրութի՟ս հռոմայեցւոց՝ իբրև ետես զնա յաղթող բանակաւն եկեալ հասեալ յաշխարհ իւր, հրեշտակս աղերսաւորս առաքեաց առաջի նորա։ Բայց Պոմպէոս յառաջ խաղացեալ եկն մինչև 'ի Սէմ՟ 'ի մայրաքաղաք աշխարհին, և էառ զայն պատերազմաւ. և զԱրետաս ձերբակալ արարեալ՝ ետ 'ի դիպահոջ, մինչև յանձն էառ կատարել զա՟մ կամս իւր, և ապա արձակեաց զնա. և ինքն դարձաւ վաղվաղակի 'ի Դամասկոս։

Ազդ եղեն նմա պատրաստուի՟քն Արիստաբուղեայ 'ի Հրէաստան. և դիմեալ անդր զօրօք՝ եգիտ զնա յԱղեքսանդրիոն 'ի դղեկին, որ էր 'ի մուտս սահմանաց աշխարհին 'ի վերայ լերին բարձու ամրոց հզօր, զոր Աղեքսանդր հայր նորա կառոյց յիւր անուն։ Անդր Պոմպէոս պատգամ առաքեաց իջանել նմա առ ինքն. և ոչ յանձն առնոյր Արիստաբուղ. այլ որ ընդ նմայն էին, զարհուրեալք 'ի զինուց հռոմայեցւոց՝ խրատ ետուն նմա իջանել, և լուաւ նոցա։ Եւ էջ խօսեցաւ ընդ Պոմպէի վ՟ հակառակուե՟ն ընդ եղբօրն, և դարձաւ անդրէն։ Ապա միւսանգամ և երրորդ անգամ չոքաւ առ նա, զի հաշտ արարեալ զնա՝ յաղթեսցէ 'ի դատաստանին։ Բայց վ՟ կասկածանացն զդղեակս հզօրս ամրացուցանէր, և կազմէր պատրաստէր ուժգին զդէմ ունել՝ եթէ հակառակ իւր տայր վճիռ ։ Իբրեւ գիտաց զայն Պոմպէոս, 'ի վերջնում նուագին 'ի գալ առ նա Արիստաբուղեայ՝ խնդրեաց 'ի նմանէ պատանդ զամուրս աշխարհին, եւ բռնադատեաց զնա հրովարտակս առնել առ վերակացուս տեղեացն ։

Իսկ Արիստաբուղեայ սրտմտեալ վասն բռնութեան, իբրեւ արձակեցաւ՝ փութացեալ յԵրուսաղէմ կազմեցաւ 'ի պատերազմ, 'ի մտի եդեալ պահել զթագաւորութիւնն. եւ մերթ խրախուսէր, եւ մերթ յողդողդէր. եւ առ փոքր մի յոյս քաղցրութեան Պոմպէի՝ զամենայն հնարս գործէր վասն հաճոյ լինելոյ նմա 'ի յաղթութիւն դատաստանին, եւ առ դոյզն կասկած խստութեան նորա՝ զհակառակն գործէր. որովք թուէր 'ի ժամանակին յայնմիկ ընդ անձին ոգորել ։ Պոմպէոս մօտ հասեալ, դիմեալ 'ի քաղաքն երուսաղեմացւոց՝ բանակեցաւ նախ յԵրիքով ։ Անդ լուաւ զհամբաւ մահուն Միհրդատայ, զոր 'ի յաջորդ գիրս պատմեսցուք ։ Եւ խաղայր դայր յԵրուսաղէմ. եւ Արիստաբուղ սորջացեալ ընդ գործս իւր, եկն առ նա յաղերս հաշտութեան, յանձն առեալ հնազանդել նմա, եւ տայր նմա գանձս բազումս 'ի հաշտութիւն ։ Յանձն առ հաւանեցաւ Պոմպէոս, եւ զԳաբինիոս ջոկատիւ միով առաքեաց ընդունել զարծաթն ։ Այլ 'ի հասանել Գաբինեայ յԵրուսաղէմ, փակեցին քաղաքացիք առաջի նորա զդրունս. եւ փոխանակ արծաթոյն՝ ձայն ետուն 'ի պարսպացն թէ ոչ կամիմք ընդ խաղաղութիւն ։ Եւ Պոմպէոս վրէժխնդիր եղեւ նախատանացն, եւ անդրէն կալեալ զԱրիստաբուղ արկ 'ի շղթայս, եւ եկն եկաց զամենայն բազմութեամբ զօրացն յանդիման Երուսաղեմի ։ Եւ էր քաղաքն անառիկ 'ի բնէ եւ ձեռակերտ ամրութեամբք, եւ յերկար զդէմ ունէր, եթէ ոչ պառակտէին բնակիչքն ։ Կուսակիցք Արիստաբուղեայ կամէին պահ ունել քաղաքին, մանաւանդ իբրեւ կալաւ Պոմպէոս զԱրիստաբուղ. իսկ բարեկամք Հիւրկանեայ կամէին բանալ զդրունս առաջի Պոմպէի. եւ 'ի բազմութենէ սոցա զարհուրեալ արիստաբուղեանց, ամրացան 'ի լեառն տաճարին՝ պահել զայն. եւ հատին զկամուրջս խորաձորոցն եւ զխրամոց՝ որ շուրջ պատէին ։ Եւ բացան դրունք քաղաքին, եւ Պոմպէոս մտեալ 'ի ներքս՝ պաշարեաց զտաճարն ։ Իսկ ամրականքն զդէմ կալան զամիսս երիս, եւ նոյնչափ եւս մարթէր նոցա տեւել, թերեւս եւ ձեռնթափ առնել զհռոմայեցիս, այլ կարի երկիւղածութեամբ պահպանութեան շաբաթուցն՝ տեղի ետուն ։ Զի յաւուր շաբաթու՝ ընդ այնոսիկ միայն օրէն համարէին մարտնչել, որ գայցեն 'ի վերայ նոցա 'ի մարտ պատերազմի, այլ զգործածս նց̃ ոչ խափանէին, և ինքեանք անգործ կային ։ Եւ Հռոմայեցւոց յօգուտ արկեալ զշաբաթութիւն նոցա, ոչ ևս յարձակէին 'ի վերայ նոցա՝ այլ զխրամս լնուին, զպատնէշս կազմէին, և զմեքենայս կանգնէին անխափան ։ Ապա զմի 'ի հզօր աշտարակաց կործանեցին. և անկաւ ընդ նմա 'ի պարսպէն խրամատ մեծ առաջի յարձակման Հռոմայեցւոց, և կալան ուժգին զամուրն ։ Եւ եղև կոտորած խիստ, և անկան 'ի սուր սուսերի ոգիք աւելի քան զերկոտասան հազար ։

Յայն աղմուկ շփոթի և 'ի ձայն աղաղակի և խռովութե̃ կոտորածին՝ քահանայքն 'ի տաճարին անխռով զպաշտամունսն կատարէին զարմանալի արիութբ̃, 'ի տեսիլ գազանացեալ զօրացն և աղետից սպանութե̃ բարեկամաց իւրեանց և ազգականաց ։ Եւ բազմաց 'ի նոցանէ արիւնքն ընդ արեան զոհիցն խառնեցան՝ զոր մատուցանէինն, զի յանձն առին զմահ 'ի վերայ պաշտաման իւրեանց ։ Երանելիք և նախանձելիք, եթէ զօրութե̃ օրինացն այնպէս երկիւղածք էին որպէս գրոյն ։ Եւ ել Պոմպէոս 'ի տաճարն բազմութբ̃ զօրապետացն. և եմուտ 'ի սրբութի̃ն, և մինչև 'ի սրբութի̃ սրբութե̃ցն՝ ուր չէր օրէն մտանել ումեք, բայց միայն քահանայապետին միանգամ 'ի տարւոջ 'ի տօնի քաւութե̃ ։ Ընդ որ Հրեայք 'ի խոր խոցեցան, և ևս քան զևս գրգռեցան ընդդէմ Հռոմայեցւոց ։

Բայց 'ի գանձս տաճարին ոչ ձեռն էարկ Պոմպէոս, որք առաւելագոյն մասամբ էին ինչք ժողովրդեան յաւանդի եդեալ անդ յամբի ։ Եւ էր քանքար արծաթի դրամոց երկու հազար. Թող զանօթս մեծագինս ոսկեղէնս և արծաթեղէնս, որոց ոչ գոյր թիւ ։ Ոչ զի երկընչէր Պոմպէոս յա̃յն՝ որ անդ պաշտէրն, ասէ Կիկերոն[1], զի քան զա̃մ կրօնս ազգաց արհամարհ թուէին նմա կրօնք Հրէիցն, և դժպատեհ իմաստութե̃ և մեծութե̃ Հռոմայեցւոց, և հայրենի օրինաց նոցա հակառակ. այլ ազնուական անընչասիրութբ̃ն չտայր պատճառս յաչաղկոտաց և

---

[1] Կն. Պոմպէոս յառնուլ զքաղաքն երուսաղեմացւոց՝ ոչ ինչ եբարձ 'ի տաճարէն իմաստութբ̃. մանաւանդ վասն չտալոյ, որպէս բազումք ուրեք, և ասա պատճառս բամբասողաց 'ի չարախօս և 'ի չարախորհուրդ քաղաքին ։ Զի ոչ կարծեմ թէ Հրէիցն և թշնամեաց կրօնք խափանեցին զքաջ զօրավարն, այլ նախատինք ։ Զի նոցա կրօնք սրբութե̃ն յոյժ դժպատեհք էին պայծառութե̃ պետութե̃ս, և փառաց անուան ձերոյ, և նախնեաց օրինադրութե̃ ։ Կիկ. Ճռ. Փլաք. կէ. կթ.

ԱՄԱՌ·ՆՔ պարսաւագիտաց, զի մի՛ բամբասեսցի 'ի նոցանէ : Զայս այսպէս հանճարեղք 'ի հեթանոսաց խորհէին զմիայնոյ այ՟ կրօնիցն, և զած՟՝ զոր ոչն գիտէին՝ հայհոյէին :

Նա ցայս վայր ամ՟ ինչ յաջողէր Պոմպէի. այլ յետ ամպարիշտ ցանկութեանն՝ մեկնեցաւ 'ի նմանէ բարեբաղդութիւն, և յաղթութիւն նորա 'ի վերայ հրէից եղև վերջինն :

ՅՕԴՈՒԱԾ Ե·

Թագաւորել Հիւրկանեայ երկրորդի զամս քսանևչորս :

3941 · 63 Պոմպէի վճարեալ զպատերազմն և քակեալ զպարիսպս Երուսաղեմի, զՀիւրկանոս թագաւորեցոյց. և զԱրիստաբուղ և զերկու որդիս նորա զԱղեքսանդր և զԱնտիգոնոս կալեալ՝ յղեաց 'ի Հռոմ. եհան քաղաքս բազումս յիշխանութէ հրէից և յաւել յԱսորիս, արկ հարկ Հիւրկանեայ, և կացոյց 'ի վերայ աշխարհին զԱնտիպատրոս՝ որ էր յարքունիս Հիւրկանեայ մի յաւագանւոյն : Բայց Աղեքսանդր փախուցեալ զճանապարհայն՝ դարձաւ 'ի Հրէաստան, և խռովեաց անդրէն զաշխարհն : Իսկ Հիւրկանոս քանզի տկար էր և ոչ կարէր զդէմ ունել, կարդաց առ հռոմայեցիս : Եւ Գաբինիոս կուսակալ կողմանցն Ասորւոց պարտեալ զԱղեքսանդր՝ եկն եմուտ յԵրուսաղէմ, և հաստատեաց անդրէն զՀիւրկանոս քահանայապետ : Եւ փոխեաց զկարգ առաջնորդութեան աշխարհին 'ի միապետութէ յազնուապետութի, որ ոչ տեւեաց 'ի սպառ :

3947 · 57

Յովս. պատմ. հնխն. ժդ̄ : և յղ. պտրզմ. Հր. ա̄-է̄ :

3950 · 54 Կրասոս 'ի խաղալ իւրում պատերազմաւ 'ի Պարթևս, ըստ հանապազօր ցանկութե զօշաքաղութեանն, զկայ եառ յԵրուսաղէմ. քանզի լուեալ էր թէ է անդ գանձ բազում. և եառ աւար զամ՟ գանձս տաճարին իբրև բիւր մի քանքարոյ :

'Ի հասանել Կեսարու յԱսորիս, յորժամ դարձեալ գայր յԵգիպտոսէ՝ յարշաւանացն, եկն անկաւ յոտս նորա Անտիգոնոս զերծեալ 'ի Հռոմայ՝ հանդերձ Արիստաբուղեաւ հարբն իւրով, և խնդրէր զհայրենի թագաւորութիւնն, զի մեռեալ էր յայնժամ հայր նորա. և բազում ինչ չարախօսէր զԱնտիպատրեայ և զՀիւրկանեայ : Բայց Կեսար ոչ կամէր երախտաւորացն հակառակ լինել, զի օգնականութ՟ նոցա յաղթեաց Եգիպտացւոց , որպէս յիւրում տեղւոջն պատմեսցուք ։ Եւ հրամայեաց Հիւրկանեայ և զաւակի նորա ունել զքահանայապետութի՟ և զիշխանութի՟ հրէաստանի , և զԱնտիպատրոս կացոյց 'ի ձեռանէ նր՟ հազարապետ աշխարհին ։ Եւ բարձաւ ազնուապետութի՟ զոր կացոյց Գաբինիոս , և հրէաստան յառաջին կարգն դարձաւ ։ Եւ ետ Անտիպատրոս կացուցանել 'ի վերայ Երուսաղեմի զանդրանիկն իւր ըզՓասայէլ, և զկրտսերն զՀերովդէս 'ի վերայ Գալիլեայ ։

Եւ աղաչեաց Հիւրկանոս զԿեսար, և նա հրաման ետ նմա վասն օգնականութե՟ն յԵգիպտոս և յԱսորիս՝ շինել վերստին զպարիսպն Երուսաղեմի զկործանեալս 'ի Պոմպէէ ։ Եւ Անտիպատրոս փութով պնդութե՟բ 'ի սուղ ժամանակի ամրացոյց զքաղաքն որպէս զառաջինն ։ 'Ի սմին ամի սպանաւ Կեսար 'ի Հռոմ ։

Մինչդեռ հռոմայեցիք յառտնին պատերազմունս էին, խռովէր հրէաստան և ա՟մ գաւառք ինքնակալութե՟ նր՟ ։ Պակոր որդի Որոդի արքային Պարթևաց եկն եմուտ յԱսորիս հզօր բանակաւ , և զօրահատոյց արար 'ի հրէաստան, թագաւորեցուցանել զԱնտիգոնոս զորդի Արիստաբուղեայ ։ Եւ Արիստաբուղ զօրաժողով լեալ պատրաստեցաւ ։ Հիւրկանոս և Փասայէլ եղբայր Հերովդի դիւրահաւան լեալ 'ի կոչ Թշնամեաց , եկին իրաւախոհ լինել ․ և գերեալ արկան 'ի շղթայս ։ Իսկ Հերովդէս փախեաւ յԵրուսաղեմէ , մինչդեռ հասանէին անդր ունել զնա ։ Նոքա վրիպեալ 'ի յուսոյ , աւար հարին զքաղաքն և զանդաստանս նորա շուրջանակի , և զԱնտիգոնոս թագաւորեցուցեալ՝ ետուն 'ի ձեռս նորա զՀիւրկանոս և զՓասայէլ կապեալս ։ Իբրև գիտաց Փասայէլ զանհրաժեշտ մահն՝ որ առաջի կայր , եհար զգլուխ իւր ընդ որմ՟ բանտին և ջաղջախեաց , զի մի՛ մատնեսցի դահճաց ։ Բայց Անտիգոնեայ ապրեցուցեալ զՀիւրկանոս , հրաման ետ կտրել զականջս նորա , զի մի՛ դարձեալ քահանայապետել կարասցէ ․ զի խեղանդամք ըստ ղևտական օրինաց ոչ կային քահանայապետ ։ Նմին իրի խեղեալ զնա մատնեաց 'ի ձեռս Պարթևաց , տանել յարևելըս , զի մի՛ խռովեցուսցէ զհրէաստան ։ Եւ կայր 'ի բանտի 'ի Սելևկիա որ 'ի Բաբելոն , մինչև թագաւորեաց Փրաատ , և եհան զնա 'ի կապանացն , և եթող զնա համարձակ ընդ Հրէայս՝ որոց բազմութի՟ յոյժ էր յաշխարհին ․ որք իբրև զթագաւոր իւրեանց և զքահանայապետ մեծարեալ զնա , կարդեցին նմա ռոճիկ՝ կեալ ըստ պայմանի իշխանութե՟ն շքով ։ Այլ նա առ սէր հայրենեացն ե- Ղև․ 16։

ԱՄԱՌ.ՆՔ. Թող զփառսն, և 'ի միւսում ամի դարձաւ յԵրուսաղէմ հրաւիրմամբ Հերովդի, որ յետ ոչ բազում ամաց սպան զնա :

Հերովդէս նախ յԵգիպտոս ամրացեալ, ապա անց 'ի Հռոմ: Յորմէ հետէ եռապետական իշխանութ՟ի հաստատեցաւ 'ի Հռոմ, Անտոնիոս ինքնիշխան էր անդ. և եղև օգնական Հերովդի, և արար ընդ նմա 'ի վեր քան զակնկալութ՟ի յանկութ՟ե նորա : Զի Հերովդէս խնդրէր թագաւորեցուցանել զԱրիստաբուղ[1] զեղբայր Մարիամնեայ՝ որ խօսեցեալն էր նմա, յուսացեալ զի և ինքն հազարապետ աշխարհին կացցէ որպէս Անտիպատրոս ընդ Հիւրկանեաւ. այլ Անտոնիոս զնա ինքն կացոյց թագաւոր արտաքոյ օրինաց հռոմայեցւոց, զի նոքա վրէժխնդիրք էին թագաւորաց յեցելոց 'ի նոսա, զի մի օտարք յափշտակեսցեն զժառանգութ՟ի զաւակի նոցա : Այլ թագաւորեաց Հերովդէս Հրէից հրովարտակաւ ծերակուտին, և ածին զնա բդեաշխք 'ի մեհեան Կապիտոլին, ուր եդաւ զթագն օրինաւոր կարգօք: Այլ յաւուրս եօթն կատարեալ Հերովդի զմեծ գործն, դարձաւ 'ի Հռոմայ 'ի Հրէաստան, ճանապարհորդեալ զամիսս երիս ընդ ծով և ընդ ցամաք :

ՅՕԴՈՒԱԾ Զ.

Թագաւորել Անտիգոնեայ շերջեամ գ :

3965. 39 Ոչ որպէս զանուն թագաւորութեանն դիւրաւ ժառանգեաց Հերովդէս զաթոռն : Քանզի Անտիգոնոս ոչ յանձն առնոյր թողուլ նմա, զոր բազում աշխատութ՟բ և գանձիւք ստացաւ. և մարտնչէր սաստիկ զերկեամ մի :

3966. 39 Յովս. պատմ. հին. ժդ. ժէ. և պատերազմ. Հր. ա-ժդ. Հերովդէս զժամանակ ձմերայնոյն պատրաստեալ 'ի պատերազմ, ապա պաշարեաց նախ զԵրուսաղէմ զօրու ծանու հզօր բանակաւ : Անտոնիոս պատուէր ետ Սոսիոսի, որ կուսակալ կայր կողմանցն Ասորւոց, նուաճել զԱնտիգոնոս ա՟մ զօրաւք, և հաստատել զՀերովդէս 'ի ժառանգութ՟ի թագաւորութ՟ե Հրէաստանի :

Մինչդեռ զպատնէշս և զկազմածս կանգնէին 'ի պաշարումն, Հերովդէս շրջէր զՍամարեաւ, և արար զհարսանիսն ընդ Մարիամնեայ՝ որ 'ի չորից ամաց հետէ խօսեցեալն էր նմա, և դէպք ժամանակին խափանէին ըզհարսանիսն ։ Եւ Մարիամնէ էր դուստր Աղեքսանդրի որդւոյ Արիստաբուղեայ արքայի, և Աղեքսանդրայ դըստեր Հիւրկանեայ երկրորդի, թոռն երկոցունց եղբարցն. չքնաղ գեղովն և առաքինութբ, և գերազանցեալ յամենայն պարծանս ազգի կանանց ։ Եւ յայն սակս կատարէր յայնժամ Հերովդէս զհարսանիսն, զի յինքն յանկուսցէ զՀրէայս առ գութ տանն ասամոնեանց ։

---

[1] Արիստոբուղ էր որդի Աղեքսանդրայ դստեր Հիւրկանեայ. և հայր նորա Աղեքսանդր որդի Արիստոբուղեայ եղբօր Հիւրկանեայ. որով Արիստոբուղ երկոցունց ևս եղբարց ժառանգ էր :

Եւ դարձեալ յԵրուսաղէմ և գումարեալ ընդ Սոսեայ՝ սաստկացուցին զպաշարումն 'ի վերայ քաղաքին բազմամբոխ զօրօք՝ աւելի քան զվեց բիւրուք ։ Ը դէմ կալան նոցա քաղաքացիք զամիս բազումս. և եթէ ըստ անվեհեր արիութեանն հմուտք էին պատերազմի և 'ի պահ քաղաքի, ոչ արդեօք գերէր Երուսաղէմ ։ Բայց հռոմայեցիք ազգ պատերազմող, նուաճեցին զքաղաքն՝ պաշարեալ զամիս վեց, սուղ ինչ աւելի ։ Եւ ընդ ամ կողմանս հարեալ զպահակսն՝ հորդան եռուն 'ի քաղաքն և տիրեցին ։ Եւ 'ի հատուցումն յամառութեան բնակչացն, և 'ի վրէժխնդրութի երկար և դժուարին աշխատութեան պաշարմանն, լցին զքաղաքն արեամբ, և դիակամբք ծածկեցին. և աւար հարեալ կործանէին զամ, և ոչ կարէր Հերովդէս արգելուլ զաւերն և զկոտորած ։ 3967. 37

Անտիգոնոս յուսահատեալ, եկն անկաւ առ ոտս Սոսեայ խոնարհեալ և ամաչեցեալ ։ Եւ Սոսիոս կապեալ ըզնա շղթայիւք, առաքեաց առ Անտոնիոս յԱնտիոք՝ 'ի հասանել նորա անդր ։ Եւ պահէր զնա Անտոնիոս 'ի շուք յաղթանակին ։ Բայց Հերովդէս յար 'ի կասկածանըս լեալ՝ ցորչափ ձեռ թագաւորութեանն կայր, ստէպ թախանձանօք և ինչս տալով բազումս՝ հաւանեցոյց զԱնտոնիոս սպանանել զնա ։ Եւ ածաւ 'ի հարցափորձ, և դատապարտեցաւ 'ի մահ. և խրձամբք և տապարաւ սպանեալ՝ կախեցաւ զփայտէ ոչ զգուեհիկ ոք մահապարտ. զի զայն պատուհաս ոչ ումեք 'ի թագաւորաց առնէին հռոմայեցիք ։

Յովս. Հնխ.
Պատմ. ԺԴ.
գլ. 932 ։
Դիոն. կես.
ԽԹ. 405 ։

Եւ բարձաւ թագաւորութիւն 'ի տանէ ասամոնեանց յետ հարիւր քսան և ինն ամաց 'ի սկզբանէ իշխանութեն Յուդայ Մակաբեայ. և կալաւ խաղաղութբ զիշխանութի հրէաստանի Հերովդէս ։

Պարտ էր նոր և անսովոր իրօքն, որպիսի չէր լեալ 'ի սկզբանէ՝ առն օտարի եդովմայեցւոյ թագաւորել հրէաստանի, զգաստանալ Հրէից և 'ի միտ առնուլ զբազ-

մահուչափ յայտապատում գուշակութեանն : Զի այն անշուշտ առհաւատչեայ էր ամենայն ազգին բարեացն՝ որոց ակընկալեալ մնայր , և այնու իսկ ընդ հատ էր յամենայն ազգաց երկրի՝ որք յանկարծ և յանդէտս հանդիպէին նոցին : Այս ինքն է նախահայրին Յակոբայ գուշակութեանն . որ 'ի մեռանել իւրում ժողովեալ զիւրև զերկոտասանեսին որդիս իւր , պատմեաց նոցա որ ինչ 'ի վախճանի աւուրց պատահելոց էր երկոտասան ազգատոհմին , որ 'ի նոցանէ հանդերձեալ էին ծնանել և կոչել յանուն նոցա : Իսկ բազում ինչ գուշակեալ զՅուդայէ , յաւելու ապա .
ծն. խթ. 10. "Մի՛ պակասեսցէ իշխան Յուդայ, և մի՛ պետ յերանաց նորա , մինչև եկեսցէ նա՝ որոյ իւրն է հանդերձեալքն . և նա է ակնկալութիւն հեթանոսաց „ :

Իսկ քանզի նախնի Հրեայք ամենեքին 'ի Մեսիայն առնուին զայս . ապա անժխտելի հաւաստիք են երկու այս . մի՝ ցեղին Յուդայ լինել գերակայ և իշխան 'ի մէջ երկոտասանիցն մինչև ցվախճան , և երկրորդ՝ կալ և մնալ նմա հասարակապետութիւն ինքնօրէն ընիկ դատաւորօք մինչև ցգալուստ Մեսիային :

Առաջնումն վկայեն վէպք եբրայեցւոց , յորս գահերիցութիւն ցեղին Յուդայ յայտնի տեսանի . զորոյ զհաւաստիսն ցուցանել ոչ է տեղւոյս , այլ գտցեն զայն խնդրողք 'ի մեկնութեան Ծննդոց գրոցն, որ նորոգ 'ի լոյս ածաւ : Իսկ երկրորդն յայտնի է ամենեցուն՝ որ միտս ունիցին . զի 'ի թագաւորել եդովմայեցւոյն Հերովդի այլազգւոյ՝ պակասէր այնուհետև իշխանութիւն և գահերիցութիւն 'ի Յուդայ . և այն նշանակ էր մերձենալոյ գալստեան Մեսիային : Այլ արդ չիք իշխանութիւն Յուդայ , և ոչ որոշումն ցեղին՝ թէ դատաւորք 'ի նմանէ կացցեն , ապա եկեալ իսկ է Մեսիայն : Իսկ եթէ ոք զժամանակն խնդրեսցէ հաւասարելոյ և խառնելոյ ցեղին Յուդայ ընդ այլս, գտանէ առ Տիտոսիւ խառնեալ, և առ Ադրիանոսիւ 'ի սպառ բնաբարձ լեալ զազգն Յուդայ . ապա յառաջ քան զնա եկեալ էր Մեսիայն :

Որպէս սքանչելի է Աստուած 'ի լրումն գուշակութեանս , և իցէ օրէն պատմագրի ոչ զկայ առնուլ վայրիկ մի 'ի խելամտութիւն իրացս այսոցիկ : Հերովդէս հալածեալ յԵրուսաղեմէ , անկանի 'ի Հռոմ . թագաւորել խնդրէ ոչ վասն իւր , այլ վասն այլոյ ուրուք . և ոչ օրէն էր զժառանգութիւն արքայորդւոյ՝ տալ օտարին . և ոչ միայն չէր օրէն , այլ և հռոմայեցւոց սովորութեան հակառակ : Այլ յաւիտենից սահմանեալ էր թագաւորել Հերովդի 'ի վերայ Հրէաստանի , և դիւրագոյն էր երկնից և երկրի անցանել՝ քան այնմ հրամանաց անկանել ։ Նմին իրի Անտոնիոս դիպի 'ի Հռոմ , հզօր ունելով իշխանութ՟ի ։ Դժուարադէ՛պ պատահումն , այլ առաջի ամենակալին ոչ ինչ է դժուարին ։

ԴՐԱԿ ԵՐԿՐՈՐԴ

Համառօտութիւն պատմութեանն Պարթևաց 'ի սկզբանէ մինչև 'ի պարտութիւնն Կրասոսի , և պարտութեանն Կրասոսի երկարապատում վէպք ։

Ընդ մեծամեծ և ընդ հզօր պետութ՟իս եկաց յարևելս պարթևականն պետութ՟ի . տկար 'ի սկզբանն՝ որպէս զա՟մն , այլ տակաւ ընդարձակեալ կալաւ զա՟մ վերնագաւառս Ասիոյ , և ահ զօրութեան նորա եհաս մինչև 'ի Հռոմ ։ Ժամանակք իշխանութե՟ն Պարթևաց համարին ամք չորեքհարիւր եօթանասուն և չորք , երկերիւր և յիսուն և չորիւք ամօք նախ քան զՔ՟ս , և երկերիւր վեշտասան ամօք յետոյ ։ Հիմնադիր եղև ն՟ց Արշակ , յորմէ յաջորդք նորա Արշակունիք կոչեցան ։ 'Ի հինգերորդում ամի տէրութե՟ Աղեքսանդրի կայսեր որդւոյ Մամմեայ , Արտաշէս՝ ազգաւ պարսիկ՝ պարտեալ պատերազմաւ և սպանեալ զԱրտաւան , որ յետ ամենեցուն թագաւոր եկաց Պարթևաց , փոխեաց զիշխանութ՟ի նոցա 'ի Պարսս ։ Արդ որ ինչ 'ի Պարթևս նախ քան զՔ՟ս անցք անցին՝ համառօտիւ աստանօր պատմեմք , զպարտութիւն ևեթ Կրասոսի երկարապատում արարեալ ։

Վասն առաջնոյն ԱՐՇԱԿԱՅ թէ զիարդ վտարանջեցոյց 3754 · 250
զՊարթևս , և հալածեաց զՄակեդոնացիս՝ որ յաւուրց մեռանելոյ մեծին Աղեքսանդրի տիրէին նոցա , և որպէս թագաւորեաց 'ի Պարթևս , զայն ա՟մ յառաջագոյն ասացաք [1] ։ 'Ի նմին ժամանակի Թէոդոտ զԲակտրիս ապըստամբեցուցեալ , էառ զաշխարհն 'ի ձեռաց Անտիոքոսի՝ որ անուանեալ կոչէր Թէոս ։

Յետ սակաւ ժամանակի Սելևկոս Կալլինիկոս յաջոր- 3768 · 236
դեալ Անտիոքոսի , ել պատերազմաւ նուաճել զՊարթևս և ձերբակալ լեալ 'ի նոցանէ գերեցաւ [2] ։ 'Ի ժամանակին յայնմիկ թագաւորէր նոցա Տրդատ կոչեցեալն ԱՐՇԱԿ երկրորդ , եղբայր առաջնոյն ։

---

[1] Հատոր Դ · 209 ։

[2] Հատոր Դ · 225 ։

ԱՄ ԱՇ. Ն.Ք. Անտիոքոսի Մեծին [1] յաջողեալ քան զնախորդ իւր, խաղաց
3792 . 212 ընդ արեւելս, եւ կալաւ անդրէն զաշխարհն Մարաց՝
զոր հանին 'ի նմանէ Պարթեւք : Եմուտ եւ 'ի Պարթեւս
եւ հալածեաց զԹագաւորն [2] Պարթեւաց 'ի Վրկանս . որ
զօրաժողով լեալ, տասն բիւրուք հետեւակօք՝ եւ երկուք
բիւրուք հեծելովք, դարձաւ տալ ընդ նմա պատերազմ :
Եւ յերկարել գործոյ պատերազմին, եդին դաշինս՝ Արշակայ
ունել զՊարթեւս եւ զՎրկանս . բայց ձեռն տալ
Անտիոքոսի 'ի նուաճել զազգս վտարանջեալս : Խաղաց
3798 . 206 ապա Անտիոքոս 'ի վերայ Եւթիդեմեայ արքային բակտրիացւոց
. եւ ընդ նմա եւս հարկեցաւ խօսել 'ի խաղաղութի՟
: ՊՐԻԱՊԱՏ որդի Արշակայ երկրորդի պայազատեալ
զհայր իւր՝ Թագաւորէ զամս հնգետասան՝ եւ ժառանգեցուցանէ
'ի մեռանել իւրում զաթոռն անդրանկին
իւրում ՓՐԱԱՏԱՅ առաջնոյ :

3840 . 164 Եւ Փրաատ ժառանգեցուցանէ զայն եղբօր իւրում [3]
ՄԻՀՐԴԱՏԱՅ, զնա վասն քաջութե՟ն ընտրեալ քան զորդիս
իւր : Որ եղեւ իսկ մի 'ի մեծազօր Թագաւորացն
Պարթեւաց, եւ աշխարհակալեաց անդր քան զմեծն
Աղեքսանդր . եւ զԴեմետր՝ Նիկատոր սա գերի կալաւ 'ի
պատերազմի :

3873 . 131 Զմիհրդատ յաջորդեաց որդի նորա ՓՐԱԱՏ [4] երկրորդ
. 'ի վերայ սորա եկն Անտիոքոս Սիդէացի զօրօք
բազմօք իբր 'ի պատճառս ազատութե՟ եղբօր իւրոյ Դեմետրի՝
որ 'ի բազում ժամանակաց գերի կայր : Եւ յերիս
ճակատս յաղթող լեալ, ապա 'ի չորրորդումն 'ի պարտութե՟
մատնեցաւ եւ սպանաւ . եւ սաստկապէս հարեալ
սատակեցան զօրք նորա : Իսկ զՓրաատ սպանին սկիւթացիք
'ի ճակատու պատերազմի, յարձակեալ 'ի վերայ նորա՝
մինչ պատրաստէրն դիմել 'ի վերայ Ասորւոց :

3875 . 129 Եւ Թագաւորեաց ԱՐՏԱՒԱՆ եղբօրորդի նորա փոխանակ
նորա, եւ ոչ յերկարեալ յիշխանութեանն մեռաւ :
Զնա յաջորդեաց ՄԻՀՐԴԱՏ երկրորդ . որ կոչեցաւ մեծ
վասն քաջայաղթ արութե՟ցն, ասէ Յուստինոս : Սա պատերազմեալ
ընդ Հայս, 'ի պայման խաղաղութե՟ կալաւ
3909 . պատանդ զՏիգրան արքայորդի, զոր յետոյ Թագաւոր
Յուստին . լբ . է : կացուցին Պարթեւք 'ի Հայս, եւ գումարեցաւ ընդ Մի-

---

[1] Հատոր Դ . 272 :

[2] Լոնկրիւ 'ի լատիներէն ճառին յաղագս արշակունեաց, զայս ամ՟ Արտաւանայ ընծայէ, կարգեալ զնա յաջորդ Արշակայ երկրորդի, նախ քան զՊրիապատ : Զնմանէ ոչ ինչ ծանօթս տայ Յուստինոս :

[3] Հատոր Դ . 735 :

[4] Հատոր Դ . 753 :

հրդատայ արքային Պոնտոսի ընդդէմ հռոմայեցւոց։ Առ սա ինքն Միհրդատ փախստեայ անկաւ Անտիոքոս Եւսեբի, զոր յետ երկուց ամաց դարձոյց Միհրդատ 'ի ժառանգութիւն մասին թագաւորութեան Ասորւոց։ Սա ինքն արձակեաց զՕրոբազ առ Սիղղա, որպէս յետոյ ասասցուք, առնել ուխտ և բարեկամութիւն ընդ հռոմայեցիս. և 'ի դառնալ նորա սպան զնա՝ թէ ընդէ՞ր Սիղղայի զառաջին բարձըն ետ։ — ԱՄ ԱՇ. ՆՔ — 3912. — 3914. 90

Դեմետր Եւկեր արքայ դամասկացւոց պաշարեաց ըզՓիլիպպոս զեղբայր իւր 'ի Բերեա. և պարտեալ 'ի Պարթևաց՝ որ հասին յօգնութիւն Փիլիպպեայ, գերի ածաւ առ Միհրդատ. և եկեաց առ նմա փառօք, մինչև ախտիւ հիւանդութեան մեռաւ։ Եւ Միհրդատ երկրորդ մեռաւ, թագաւորեալ զամս քառասուն. և կոծեցան զնա ամենայն ժողովուրդն կոծ մեծ։ Եւ առտնին խռովութիւնքն յետ մեռանելոյ նորա, որովք տկարացան յոյժ Պարթևք, առաւել յաճախեցին զուգն։ Եւ Տիգրան կալաւ անդրէն զա̃մ գաւառս, զորս եթող 'ի նոսա. յաւել հատանել և յաշխարհէն նոցա մասն. անց ընդ Եփրատ, և նուաճեաց զԱսորիս և զՓիւնիկէ։ — 3915. 89 — Ստրաբ. ժա. 532. — Պլուտար. 'ի Լուկուլ. 500 505. 517

Մինչդեռ Պարթևք զայնու աղմկաւն էին, թագաւորեցուցին զՄՆԱՍՔԻՐ, և յետ նորա զՍԱՆԱՏՐՈԻԿ. որոց անուանքն և եթ կան 'ի վէպս։

ՓՐԱԱՏ որդի Սանատրկոյ, որ զանձն Աստուած կոչէր, հրեշտակս արար առ Լուկուլլոս յետ մեծի յաղթութեան հռոմայեցւոց ընդդէմ՝ Տիգրանայ, ընդ որում համախոհ էր 'ի ծածուկ։ Եւ 'ի սմին ժամանակի գրեաց առ նա Միհրդատ զթուղթն, զոր Սալլուստիոս աւանդէ։ — 3935. 69 — 3938. 66

Պոմպէի զօրավար կացեալ փոխանակ Լուկուլլեայ վճարել զպատերազմն ընդ դէմ Միհրդատայ, միաբանեաց զՓրաատ ընդ հռոմայեցիս։ Փրաատ օգնական լեալ կրտսերոյն Տիգրանայ ընդդէմ հօր նորա, գրգռեցաւ ընդ Պոմպէի։

'Ի դառնալ Պոմպէի 'ի Հռոմ՝ սպանին զՓրաատ որդիք նորա, և թագաւորեաց ՄԻՀՐԴԱՏ անդրանիկն փոխանակ հօր իւրոյ։ Յայսու ժամանակօք մեռանի Տիգրան արքայ Հայոց, և թագաւորէ Արտաւազդ որդի նորա ընդ նորա։ — 3946. 56

Միհրդատ հալածեալ յաշխարհէն, ատելութ̃ ժողովրդեանն եթէ դաժանութ̃ Որոդի եղբօր իւրոյ՝ ոչ գիտեմ, անկաւ առ Գաբինիոս կուսակալ կողմանցն Ասորւոց, զի անդրէն կալցի զաթոռն։ Այլ ոչ գտեալ 'ի նմա- — Յովսեփն խր. Ժ̃.

ԱՄ ԱՇ.Ն.Ք նէ օգնականութիւն, պատրաստեցաւ պահ ունել անձին. և
3949. 55 պաշարեալ 'ի Բաբելոն և 'ի նեղ անկեալ, անձնատուր եղև Որովդի. որ ոչ խնայեալ յարիւն և 'ի հարազատութիւն իւր, ետ սպանանել զեղբայրն իբրև զթշնամի. և 'ի մեռանել նորա կալաւ ՈՐՈՎԴԷՍ խաղաղութեամբ զաթոռն ։

3950. 54 Այլ արտաքուստ, ուստի ոչ կասկածէրն, յարեաւ 'ի
Պլուտարք. 'Ի Կրաս. 55ա. վերայ նորա պատերազմ ։ Քանզի Կրասոս միւսանգամ բդեաշխ կացեալ 'ի Հռոմ ընդ Պոմպէի, վիճակեցաւ զկուսակալութիւն կողմանցն Ասորւոց. և յոյժ ուրախ եղև ընդ այն, քանզի խորհէր խաղալ պատերազմաւ 'ի վերայ Պարթևաց. և ոչ կարէր ծածկել զխնդութիւն առաջի անծանօթից իսկ իւրոց. իսկ առաջի բարեկամացն համարձակ ևս խիզախէր, որպէս ոչ վայելէր հասակին և իշխանութեանն, օտար 'ի բարուցն. և ոչ միայն զԱսորիս խորհէր նուաճել և զշրջակայ գաւառս, և զՊարթևս, այլ և ըզքաջայաղթ արութիւնս Լուկուլլեայ ընդդէմ Տիգրանայ, և զՊոմպէին ընդդէմ Միհրդատայ, ցուցանել առ իւրովքն մանկտւոյ խաղս ։ Ցնորէր 'ի խորհուրդս մտացն զԲակտրիս և զՀնդիկս ունել, խաղալ գնալ մինչև յՈվկիան հեռի և մինչև 'ի ծագս արևելից ։ Սակայն ոչ էր տուեալ նմա իշխանութիւն պատերազմելոյ ընդ Պարթևս, թէպէտ և ամենեցուն յայտնի էին իղձք ցանկութեան նորա ։

Արդ այս ոչ բարենշան սկիզբն էր. այլ 'ի չու առնել նորա եղեն առաւել ևս գուշակութիւնք չարեաց. զի Ատէոս հազարապետ ժողովրդեան սպառնացաւ խափանել ըզնա. և միաբանեցին ընդ նմա ամբոխ բազում ; զչարեալ զի ուրախութեամբ երթայր տալ պատերազմ ընդ նիզակակից բարեկամս՝ որոց ոչ ինչ մեղուցեալ էր ։ Ատէոս առ դրան քաղաքին, ընդ որ հարկ էր Կրասոսի անցանել, ժամանեաց ընդ առաջ նորա. և զուր ջանացեալ կդեմ ունել, խարոյկ վառեաց 'ի կրակարանի, և խունկս արկեալ անդր յանցանել նորա, և քաւութիւնս հեղեալ, անէծս ահագինս սարսափեցուցիչս լսելեաց կարդայր 'ի վերայ նորա ։ Եւ յոլովք 'ի մատենագրաց զչարիսն որ անցին ընդ Կրասոս՝ համարին կատարումն այնց անիծիցն ։

Ոչ ինչ յայսցանէ խափանեցին զԿրասոս ։ Խաղաց գընաց նա մինչև 'ի Բրունդուս. և նաւարկեալ մինչ չև ևս վտանգք ձմերայնոյ դադարեալ էին, կորոյս զբազումս 'ի նաւացն յանցս իւր ։ Եւ համախմբեալ զզօրս իւր, եկն մինչև 'ի Գաղատիա. անդ եգիտ զԴէոտարոս արքայ ծերացեալ, որ շինէր քաղաք նոր, և ասէ ընդ խաղ. Տարաժամ, արքայդ Գաղատիոյ, յերկոտասաներորդ ժամու՛ շինես դաստակերտ ։ Նա պատասխանի Դէոտարոս. Եւ ոչ դու վաղ քաջ գնաս 'ի պատերազմ ընդդէմ Պարթեւաց ։ Զի էր յայնժամ Կրասոս զվաթսնամենիւք անցեալ . և առաւել քան զտիսն ալեւորեալ էր ։

Այդ եղեւ Կրասոսի յառաջագոյն, զի էին գանձք բազումք յԵրուսաղէմ 'ի տաճարին՝ յորս ոչ իշխեաց Պոմպէոս ձեռն արկանել, և ցանկութե̄ աւարին յանձն առեալ զաշխատութի̄ ճանապարհին, խոտորեցաւ անդր ա̄մ զօրօքն ։ Ընդ փարթամ մեծութիւնս տաճարին՝ էր և ձող ոսկի ագուցեալ 'ի գերանի, զոր ոչ ոք գիտէր՝ բայց միայն Եղիազար քահանայապետ աւանդապահ գանձուցն սրբութե̄ . և էր կշիռ ոսկւոյն երեք հարիւր մնաս ։ Իբրեւ գիտաց Եղիազար վասն որոյ Կրասոս դիմեալ գայր յԵրուսաղէմ, 'ի պահ այլ ա̄մ գանձուցն՝ որ գրեթէ բովանդակ աւանդք էին ժողովրդեանն՝ եցոյց նմա զձողն ոսկի. և երդմնեցուցեալ զնա մի յայլ ինչ ձեռն արկանել, եթող նմա բառնալ զայն . այլ անգիտացաւ՝ զի և ոչ 'ի սրբութիս խնայէ ագահութի̄ ։ Նորա բարձեալ զձողն ոսկի, և զա̄մ գանձս տաճարին կողոպտեաց իբրեւ ութ հազար քանքար . և գնաց զճանապարհ իւր ։

Ամենայն ինչ 'ի սկզբանն յաջողեցին նմա ըստ ակնկալութե̄ նորա ։ Արկ կամուրջ յԵփրատ գետ, և անցոյց անխափան զզօրս իւր 'ի Պարթեւս, հարկանել զնոսա ոչ վասն այլ իրիք՝ բայց միայն վասն անյագ զօշաքաղութե̄ն, զի ցանկայր լնուլ աւարաւ համբաւատենչ բազմագանձ աշխարհին ։ Յաւուրս Սիղղայ և Պոմպէի՝ ուխտ և դաշինս խաղաղութե̄ եդեալ Պարթեւաց ընդ Հռոմայեցիս, և հաւատարիմ կացեալ 'ի նոսա, և ոչ ինչ պատճառս տուեալ պատերազմի, բնաւ անկասկածք էին յարշաւանաց, և անզգոյշք և անպատրաստք 'ի դիմամարտ ։ Որով Կրասոս յաղթեալ պատերազմին՝ աշխարհակալեաց անխափան զՄիջագետս մեծաւ մասամբ . և քաղաքս բազումս առանց պատերազմի էառ . և եթէ յօգուտ արկանէր զաջողութի̄, հասանէր անաշխատ մինչեւ 'ի Սելեւկիա և 'ի Կտեսիփոն, և զԲաբիլոն և զՄիջագետս լրիւն նոցա նուաճէր ։ Այլ նա փոխանակ զառաջարկութի̄ խորհրդոյն կատարելոյ, 'ի հասանել աշնայնոյն՝ կացոյց պահապանս եօթն հազար հետեւակս և հազար հեծեալ 'ի զգուշութի̄ քաղաքաց նուաճելոց, և ինքն դարձեալ ընդ Եփրատ՝ զայլս 'ի զօրացն արձակեաց 'ի ձմեռոցս 'ի քա-

Յ. Է. պատմ. նախն. ԺԳ. ԺԷ։

---

[1] Յերկոտասաներորդ ժամ երեկոյին։

ԱՄԱՀ. ՆՔ. զաքս Ասորւոց, և ժողովէր անդ մեծութիս, և աւար հարկանէր զմեհեանս ։ Անդր եհաս 'ի Գաղղիոյ որդի նորա հազարաւ ընտիր հեծելովք՝ առաքեալ 'ի Կեսարէ . և մրցանակս բազումս ընկալեալ էր պատանւոյն, որպէս սովորութի էր զօրավարաց՝ տալ քաջամարտիցն ։

Բայց զամենայն սխալանս մեծամեծս առաւել սխալեաց Կրասոս յայնմ արշաւանին, 'ի թողուլ զպատերազմն յետ սկսանելոյ, և դառնալ յԱսորիս . ընդ այս ոչ ինչ երկբայելի է ։ Զի պարտ էր նմա վաղ հասանել ունել զԲաբելոն և զՍելևկիա, զի բնակիչք քաղաքացն այնոցիկ անհաշտ թշնամիք էին Պարթևաց . այլ նա յետըս նահանջեալ, ժամ ետ թշնամեացն 'ի պատրաստութ. որ եղև նմա 'ի կործանումն ։

Մինչդեռ ժողովէր դարձեալ զզօրս իւր 'ի ձմերոցաց, հասին առ նա հրեշտակք յարքայէն Պարթևաց, և հակիրճ տուեալ պատգամ, ասեն . Եթէ հրամանաւ Հռոմայեցւոց դիմեալ գաս զօրօք 'ի վերայ Պարթևաց, ոչ ինչ ուխտ խաղաղութե զրաւ արասցէ աննուէր մարտիս, բայց սպառսպուռ կործանումն միոյ յերկուց կողմանց ։ Ապա եթէ 'ի քէն՝ որպէս լսեմք, առանց կամաց հայրենեացդ, զօշաքաղութե քով ածես պատերազմ 'ի Պարթևս, և մտեր 'ի գաւառ նոցա, քաղցրութե խնայէ արքայ յալիս ծերութե քո . և հռոմայեցիքդ ողջ անվտանգ մեկնեսցին 'ի քաղաքաց նր, որք յորդելանս կան քան 'ի պահ ։ Զի պահապանս եդեալ էր Կրասոսի 'ի քաղաքսն նուաճելոյ, որպէս երևի ։ Խրոխտագոյն ետ պատասխանի Կրասոս, թէ 'ի Սելևկիա տաց պատասխանի ։ Իսկ Վահիսէս երիցագոյն պատգամաւորացն ծիծաղեալ, և ափ 'ի բաց՝ ասէ . Նախ հերք 'ի սմա արձակեսցին, և ապա Կրասոս տեսցէ զՍելևկիա ։ Իսկ դարձան պատգամա-

3951. 53 ւորքն առ Որոդ, և ցուցին նմա զմտ . և զի հարկ էր պատրաստել 'ի պատերազմ ։

Իբրև ձմեռն էանց, խաղացոյց Կրասոս զզօրս իւր . այլ զժամանակ ձմերայնոյն պարապ առեալ Պարթևք պատրաստեալ էին զօրօք բազմօք ընդդէմ նորա ։ Իսկ զօրահատոյց արար Որոդ, զկէս զօրացն խաղացոյց յեզըր սահմանաց աշխարհին Հայոց, և կիսոցն զօրավար կացոյց զՍուրէն յղեալ 'ի Միջագետս . և Սուրէն երթեալ կալաւ անդրէն զբազում 'ի քաղաքաց, զորս ամաւ յառաջ նուաճեալ էր Կրասոսի ։ Բայց ոմանք 'ի զօրականացն հռոմայեցւոց մազապուր զերծեալ 'ի քաղաքացն Միջագետաց՝ որոց պահ ունէին, զի հասեալ Պարթևաց զկէսս անդրէն նուաճեցին, և զայլս յարգել և 'ի պաշարումն արկին, եկին առ Կրասոս 'ի բանակն, և պատմեցին նմա յերկիւղ և 'ի տագնապ, եթէ տեսաք զահեղ բազմութ̅ի զօրաց թշնամեաց, և զփորձ առաք հզօր զօրութ̅ե նոցա յանագորոյն պատերազմունս 'ի վերայ քաղաքաց: Ոչ է մարթ փախչել 'ի նոցանէ, և ոչ հասանել զհետ նոցա. և 'ի ստուար և յերագասլաց նետից նոցա 'ի մահառիթ հարուածոցն չէ հնար պատսպարել: Եւ զանգիտեցուցին և լքուցին զարիութ̅ի և զխրախոյս զօրացն հռոմայեցւոց. զի նոքա զՊարթևս ոչ ինչ ընդ հատ համարէին 'ի Հայոց * և 'ի կապադովկացւոց, զորս դիւրաւ նըկուն արար Լուկուղղոս. և զ̅մ աշխատութ̅ի պատերազմին կարծէին՝ յերկայնութ̅ե ճանապարհին և 'ի հալածել զթշնամին, իբր թէ հարկ էր նոցա խոյս տալ յերեսաց իւրեանց և 'ի փախուստ դառնալ. և ահա՝ որպէս ոչն կարծէին՝ պատերազմունք մեծամեծք և ահագին վտանգք հասին նոցա. և առ յոյժ վհատութ̅ե բազումք յաւագսպայիցն ասէին ցԿրասոս՝ ատեան կոչել, և խորհել միւսանգամ վասն պատերազմին: Բայց Կրասոս ոչ լսէր նոցա, այլ այնոցիկ՝ որ ստիպեալ ձեպէին զնա 'ի պատերազմն:

Եւս առաւել խրախուսեալ համարձակեցաւ 'ի խորհուրդն՝ 'ի գալ հասանել Արտաւազդայ արքային Հայոց. զի ածէր նա յօգնութ̅ի վեց հազար այրուձի 'ի գնդէ թիկնապահաց իւրոց, և բիւր հեծեալս զրահաւորս, և երիս բիւրս հետևակաց: Բայց խրատ տայր Կրասոսի՝ մի ածել զզօրս իւր 'ի դաշտս Միջագետաց, այլ ընդ հայաստան աշխարհ դիմել առ թշնամիս. և հաստատէի առ-

---

* Կարծեմ ոչ զայն կարծիս կալեալ Լուկուղղեայ զՀայոց, որ զահագին մարտըն և զսաստիկ ընդդիմակայութիւն կրեաց 'ի նոցանէ: Յորժամ ընդ Թագաւորին Հայոց Տիգրանայ, ասէ Կիկերոն, զծանր և զերկայն ժամանակաց մարտն մղեցաք, որ իմաստակարութեամբքն առ նիզակակիցս մեր՝ ձայն տայր գոգցես 'ի պատերազմ. և որ գրեթէ վասն ինքնակալութեան ընդ մեզ մաքառեցաւն ևն: Իսկ թէ զինչ կարծիս ունէր Լուկուղղոս զՀայոց, քաջ յայտ առնէ 'ի խօսելն անդ 'ի պատերազմին Միհրդատայ 'ի նմին մատենի. Գիրք ԻԲ: Զի ասէ. Ոչ բազում ինչ աւուրց ճանապարհ է յանապատէ 'ի Հայս, և Թագաւորէ անդ Տիգրան արքայից արքայ. որ հզօր զօրութ̅ե զՊարթևս ընդ իւրև նուաճեաց, և զազգս Յունաց փոխեալ 'ի Միջերկրեայս Մարաց բնակեցոյց, կալաւ զԱսորիս և զՊաղեստին, և զազգն Սելևկեայ՝ զթագաւորս բարձեալ... Եւ 'ի փութալ մեր հալածել զՄիհրդատ, գուցէ զՏիգրան ևս ոսոխ յանձինս ձըգիցեմք.... Ո՞չ կարի իսկ լաւ իցէ թոյլ տալ նմա խրախուսել և յուսալ 'ի զօրս իւր, զի ընդ եգերացիս միայն և ընդ Տիբարս և ընդ կապադովկացիս լիցի մեզ պատերազմ, որոց յոլով անգամ յաղթեցաք. քան խիզախել 'ի վտանգ՝ յաւելեալ 'ի թշնամիս և զՀայս և զՄարս:

նելով բանիցն, ասէ. Քանզի հայաստան աշխարհ երկիր լեռնային է, և այլուձին Պարթևաց՝ յորում է զօրու՟ի նոցա մեծ՝ անպիտան լիցի նոցա: Եւ զա՟մ պէտս զօրացդ գտանիցես 'ի Հայս լիու՟ե. իսկ 'ի Միջագետս պակասեսցեն համբարք, և ճամբար հզօր թշնամեաց՝ ընդ որ հարկ լիցի անցանել միջամուխ լինել յերկիր նոցա՝ նեղեսցէ զձեզ յամենայն ճանապարհին, ուր ընդ հարթարդակ դաշտսն 'ի ճահ ասպարիզէ հեծելազօրն նոցա. և ընդ աւազուտ անջուր անապատս հիւծեսցի զօրդ 'ի ծարաւոյ: Քաջ էր խորհուրդն Արտաւազդայ, և պատճառքն դիպող. բայց Կրասոս արհամարհեաց զայն, զի կուրու՟ի 'ի տ՟նէ եղև նմա 'ի պատուհաս, և դատաստանք ամպարշտու՟ե նորա՝ կողոպտելոյ զտաճարն Երուսաղեմացւոց՝ հասին նմա: Այլ խնդրէր յԱրտաւազդայ, 'ի դառնալ նորա յաշխարհ իւր՝ վաղ հասուցանել զօգնականու՟ին: Արդ թէպէտ և յայտնի է զի կուրու՟ի 'ի տ՟նէ եղև Կրասոսի, բայց զայն և այր հեթանոս ազդ առնէ; Կասիոս Դիոն հանճարեղ մատենագիրն և իւրաց պատերազմի հմուտ: Ասէ. Հռոմայեցիք՝ որոց զօրավարէր Կրասոս՝ ոչ խորհէին խորհուրդս պիտանիս, և յամենայն դէպս յօգտակարացն խորհրդոց վերջացեալ, և զառաջարկու՟ի խորհրդոցն ոչ կատարէին. ո՟պ յա՟յ ուրեմն դատեալ և պատուհասեալ, և 'ի մտաց և յուժոյ անպիտանք լեալ: Այլ զա՟ծն չճանաչէր Դիոն, զվերակացու ազգին Հրէից, որ զանարգանաց տան իւրոյ խնդրէր ըղվրէժ:

Զու արար վաղվաղակի Կրասոս. էին նորա լեգէոնք եօթն՝ հետևակախումբ, հեծեալքն բրև չորեքհազարք, և աղեղնաւորք մեկնակազէնք նոյնչափ. միահամուռ աւելի քան զչորս բիւրս, բանակ հաւասար այնմ սակաւ երբեք յարուցին հռոմայեցիք: Մինչդեռ Կրասոս անցուցանէր զզօրս իւր ընդ Եփրատ՝ կամուրջ արկեալ զգետոյն առ Զեւգմաւ, յանկարծակի ճայթմունք ահաւորք և ահագին փայլատակմունք ընդդէմ զօրացն անկեալ, որպէս թէ ընկճէին նոցա 'ի ճանապարհին. և ամպ թխպագին փոթորկեալ զկամուրջն, շանթահարեալ կործանէր զկողմն նորա: Եւ յահաբեկ լինել զօրացն՝ լուծեալ և վհատեալ, մխիթարէր զնոսա Կրասոս բանիւք բազմօք, երդնոյր և խոստանայր ածել զնոսա ընդ Հայաստան, և մի՟ ումեք 'ի նոցանէ դառնալ անդրէն ընդ նոյն ճանապարհ: Իսկ նոքա առաւել ևս խռովեցան 'ի վրիպական կեղծակարծ բանիցն, զոր անիմաստութ՟ե խօսեցաւ Կրասոս ։ Որ թէպէտ և գիտաց զխռովութի՟ զօրացն , այլ յանդգնուե՟ յամառեալ՝ ոչ ինչ հոգացաւ ուղղել զվրիպակն , և զիմաստս բանին յայտ առնել առ 'ի խրախուսել զերկչոտս ։

Եւ խաղացոյց զզօրսն ընդ եզր Եփրատ գետոյ , և դարձան արքն՝ որք լրտես երթեալ էին առ թշնամիս , զրոյց ետուն և ասեն . 'Ի թշնամեաց մեք զոք ուրեք ոչ տեսաք , բայց միայն հետս հեծելոց բազմաց խուճապելոց 'ի փախուստ յերեսաց հալածչաց ։ Եւ առաւել այնու քաջալերեցաւ Կրասոս . և զօրքն անգոսնէին զՊարթևս , իբր ոչ իշխեալ նոցա կալ առաջի իւրեանց և ճակատ յարդարել ։

Բայց Կասիոս խրատ ետ Կրասոսի՝ գէթ 'ի մի 'ի քաղաքաց մտանել , յորում պահապանք 'ի նմանէ կային , և հանգուցանել վայրիկ մի զզօրսն , և պարապով հաւաստել զթիւ և զզօրուե՟ թշնամեաց , և զգործածս զոր կազմէին ։ Իսկ եթէ այն ոչ հաճոյ թուեսցի , խաղալ ընդ եզր Եփրատայ 'ի Սելևկիա . զի առ գետովն այրուձին Պարթևաց չկարէր պաշարել զնոսա , և նաւատորմն ընդ նոսա գնայր՝ ածել անխափան յաշխարհէն Ասորւոց պաշար և զամ՟ պէտս կարևորս ։ Եւ էր Կասիոս գանձապետ Կրասոսի , և սա է՝ որ յետոյ սպան զԿեսար ։

Մինչ դեռ Կրասոս 'ի վարանս էր , եկն առ նա Արիամնոս իշխան արաբացի , և ճարտարուե՟ շրջեաց զմիտս նորա ։ Եւ էր Արիամնոս յառաջագոյն ծառայեալ Պոմպէի , և ճանաչէին զնա բազումք 'ի զօրացն հռովմայեցւոց , և իբրև զբարեկամ ունէին զնա ։ Զնա Սուրէն եգիտ գործի պատկան 'ի կատարել զխորհուրդս իւր . որ իբրև եկն առ Կրասոս , խօսեցաւ ընդ նմա և ասէ . Ոչ հանդարտեսցեն Պարթևք առաջի երեսաց հռոմէական բանակիդ . արդէն յանուանէ քումմէ սարսեն , իսկ 'ի դիմել քո 'ի վերայ նոցա՝ 'ի տեսիլ ևեթ քո նուաճեսցին 'ի սպառ ։ Ես իսկ առաջնորդեցից բանակիդ ընդ կարճոյ ճանապարհ ։ Հաճոյ թուեցաւ Կրասոսի խորհուրդն այն , հրապուրեալ շողոմիքն Արիամնեայ , որ արուեստաւոր բանիւքն քաջ գեղերեսէր զհրապոյրսն ։ Եւ թէպէտ Կասիոս և այլք ստէպ թախանձէին զԿրասոս 'ի բաց կալ յառնէն յայնմանէ՝ կասկածեալ ընդ խորամանկ խորհուրդս նորա , այլ նա ոչ լուաւ խրատուց նոցա ։

Իսկ նենգաւորն հաւանեցուցեալ զնա մեկնել յԵփրատայ , առաջնորդեաց նմա ընդ դաշտս ընդ ճանապարհ հարթ և դիւրին , որ ածէր 'ի խոր աւազուտս . և անկաւ բանակն յահագին յապալէր յանջուր անապատն յանեզր և անսպառ, ուր ոչ գոյր հանգիստ արծարծանելոյ զօրացն. և առաւել քան զծարաւն և զաշխատութի ուղեգնացութեն՝ լքուցանէր զնոսա տեսիլ երկրին. զի ոչ 'ի մօտոյ և ոչ 'ի հեռուստ ծառ կամ թուփ երևէր, կամ վտակ ջուրց, կամ բլուր, կամ բնաւ խոտ դեղ դալար, բայց միայն աւազակոյտք հրատապք: Բազում իրօք պարտ էր կասկածել զնենգութէն, իսկ 'ի հասանել սուրհանդակաց յԱրտաւազդայ արքայէ՝ ոչ ևս երկբայելի էր. զի առաքեաց նա առ Կրասոս և ասէ. Որովդ բազում ամբոխիւ եհաս 'ի վերայ իմ. և պատաղեալ ընդ նմա 'ի պատերազմ, չկարեմ պարապեցուցանել զօրս քեզ 'ի թիկունս, որպ խոստացայ: Այլ դու եկ 'ի Հայաստան, և գումարեսցուք 'ի միասին ընդդէմ հասարակաց թշնամւոյն: Ապա թէ ոչ հաճոյ թուի քեզ. զգոյշ լեր, մի բանակեսցիս և մի չու առնիցես յերկիր դիւր ձիավարուն, այլ զլեռամբք քերեսջիր: Բայց Կրասոս արհամարհեաց զքաջ խորհուրդն Արտաւազդայ, և զայրացեալ իսկ ընդ նա՝ չետ պատասխանի, այլ ասէ ցպատգամաւորսն. Ոչ է ինձ ժամ խորհելոյ զՀայոց, այլ ընդ հուպ հասից 'ի Հայաստան զհաւատադրժութեն Արտաւազդայ խնդրել զվրէժ: Եւ քաջայոյս լեալ յարաբացին, և ըմբռնեալ 'ի խորամանկ խաբէութեն, երթայր զհետ նորա՝ ոչ ինչ կասկածեալ ամենայն բանիւք խրատտուացն, մինչև հասին յաւազուտ անապատն, զորմէ ասացաք: Յայնժամ նենգաւորն խոյս ետ, և եկեալ առ Սուրէն պատմեաց զամ:

Մինչդեռ գնային ընդ անապատն յերկիր թշնամեաց, ուր դժուարին էր առնուլ համբաւ, յետ աւուրց հասին անդր սուրհանդակք շտապաւ, և պատմեցին Կրասոսի՝ թէ ահա Պարթևք մեծաւ ամբոխիւ յանդուգն և խրոխտ եկեալ հասանեն. և խռովեցան ամ զօրքն յահէն, և առաւել քան զնոսա Կրասոս. և ճակատեցոյց զզօրսն խուճապաւ: Եւ նախ ըստ խրատուն Կրասոսի տարածեաց զհետևակազօրն՝ որչափ մարթէրն ընդարձակել, զի զմեծատարած ճակատն դժուարին լիցի թշնամեաց պաշարել. և զհեծելազօրն յաջ և յահեակ թևս բաժանեաց: Այլ ապա դարձեալ ամփոփեաց զնոսա 'ի մի գունդ ստուար քառակուսի, յամ կողմանց ճակատեալ, երկոտասան գումարտակ[1] 'ի մի կողմն. և առ ընթեր միոյ միոյ 'ի գումարտակացն գունդ մի հեծելոց , զի ամենուստ հաւասար ամրութ̃բ դիմեսցեն միաբան 'ի վերայ թշնամեաց ։ Միում 'ի թեւոցն կացոյց զԿասիոս զօրավար , միւսում̃ն զորդի իւր զկրտսերն Կրասոս , և ինքն 'ի միջոցին եկաց 'ի բուն բանակին ։

---

[1] Գումարտակն cohors — հռոմայեցւոց էր խումբ հնգից կամ վեցից հարիւրոց հետևակաց:

Նա նովին կարգաւ յառաջ խաղացեալ , հասին 'ի վտակ մի սակաւաջուր . և ցնծացան զօրքն պապակեալք 'ի տօթագին անապատին ։ Բազումք 'ի սպայից խորհէին բանակել անդ , զի հանգիցեն զօրքն յանհնարին աշխատուե̃ն երկայն և տաժանաւոր ուղեգնացուե̃ն , և ննջեսցեն անդ զայն գիշեր . և զի ինքեանք պարապ առեալ՝ դիտասցեն զթիւ և զկարգ թշնամեաց , զի 'ի վաղիւ անդր տացեն պատերազմ ։ Բայց Կրասոս զառածեալ յեռանդն որդւոյն , և 'ի խրախոյս հեծելոցն՝ որոց առաջնորդէր , զի նոքա ստիպէին զնա վաղ հասանել առ թշնամիս , հրաման ետ քաղցելոց ճաշակել անշարժ 'ի կայից . և մինչ դեռ կերակուր 'ի բերանս նոցա էր , փութանակի մղեաց զչուն . և պնդագոյնս վարէր՝ ոչ ուրեք զկայ առեալ , մինչև տեսին զթշնամիս . որք ոչ ըստ համբաւին և ըստ կասկածանացն բազումք և ահաւորք թուեցան ։ Քանզի Սուրէն 'ի հնարս խաբէութեան՝ թաքոյց զբազմուե̃ի զօրաց իւրոց յետկոյս յառաջամարտիցն , և հրամայեաց ծածկել զսպառազինուե̃իմն լօդկօք իւրեանց կամ մաշկօքն , զի մի՛ 'ի շողիւն նշուլից յայտնեսցին ։

Կացին հանդէպ թշնամեաց կազմք 'ի յարձակել , և փող եհար Սուրէն 'ի պատերազմ , և հնչէր դաշտն 'ի գոչում̃ն ահեղ աղաղակի զօրացն , և 'ի շռինդն ահագին ։ Զի ոչ եղջերեօք միայն և պղնձի փողովք կոչ առնեն Պարթևք 'ի պատերազմ , այլ են նոցա ազգի ազգի գործիք գոգաւորք մաշկապատք՝ բոժոժիւք պղնձեօք շուրջանակի զանգակեալ , զոր ընդ միմեանս բաբախեն . և ձայն մեծ և խորին՝ որպէս 'ի սաստիկ ամպոց որոտմանէ՝ խառն ընդ մռնչիւն ամեհի գազանաց հնչէր ։ Նա զայն այնպէս առնէին բարբարոսքն , գիտելով՝ զի քան զա̃մ զգայուե̃իս լսելիք առաւել դղրդեն զոգիս , և վաղագոյն ազդեալ գրգռեն , և արագ յանձնէ 'ի բաց յափշտակեն ։

Իսկ իբրև 'ի բաց առին Պարթևք զծածկոյթմն , և վառեալք երևեցան , անդ 'ի փայլատակել սաղաւարտիցն և 'ի պողովատիկ զրահիցն շողիւն բազմափայլ քան զճառագայթս արեգական , և 'ի նշոյլս երկաթի և պղնձի ասպազինացն , նոր արհաւիրք և նոր աղմուկ շփոթի յաճախէին 'ի զօրս հռոմայեցւոց ։ Առաջի բանակին եր-

Թայր Սուրէն աւարտահասակ կայտառ և գեղանի, և համբաւաւ քաջուե̃ գերազանցեալ զկանացի կերպարանօքն. զի ըստ Մարաց օրինի շպարէր 'ի մնգոյր, և զհերսն գանգրաձև յօրինէր՝ ողորկս փոքրելով վարսիցն, որպէս ոչ էր սովորուի̃ Պարթևաց. զի նոքա տակաւին հանգոյն սկիւթացւոց թողուին զհերսն անխնամ որպէս աճէրն, զի ահարկու տեսողացն երևեսցին: Եւ անդէն դիմեալ Պարթևաց անկանել նիզակօքն 'ի վերայ հռոմայեցւոց, և միջամուխ լեալ հերձանել զճակատ նոցա, իբրև տեսին 'ի մօտոյ զխորուի̃ հոծ և կուռ միաձոյլ սնդակազմ և ամրախիտ քառակուսի գնդին՝ դարձան յետս, որպէս եթէ ցրուեալ քակտէր ռազմն. բայց իբրև տեսին զնոսա հռոմայեցիք դարձեալ շուրջ պատեալ զիւրեամբք, կարկեցան կացին: Եւ հրաման ետ Կրասոս աղեղնաւորացն և մեկնակաղէն հետևակաց յարձակել 'ի վերայ նոցա, այլ ոչ կարացին նոքա կալ ընդ երկար առաջի թանձրատարափ նետից թշնամեացն, և դարձեալ ամրացան յետկոյս սպառազէն հետևակացն:

Եւ յաճախէր ահն և աղմուկ 'ի զօրս հռոմայեցւոց 'ի խստուէ̃ և 'ի զօրուէ̃ նետից թշնամեացն, յորոց ոչ կարէին պատսպարել զրահիւք՝ վասն թափ անցանելոյ հարուածոցն ընդ ա̃մ: Եւ բաժանեալ և պատեալ զնոքօք Պարթևք նետաձիգ լինէին 'ի նոսա 'ի բացէ, և ոչ գոյր վրէպ հարուածոյ նոցա՝ վասն ամրակուռ կազմութե̃ն իսկ գնդին հռոմայեցւոց, և կարէվէր առնէին զնոսա հաստախոց հարուածովքն. զի 'ի լիագիրկ աղեղանցն գնային ուժգին նետք ստուարաստուրք, և ոչ ինչ կարէր կալ առաջի թափոյ նոցա:

Իսկ հռոմայեցիք հարեալ յա̃մ կողմանց և խուճապեալ, վարանէին. զի եթէ անշարժ յիւրաքանչիւր տեղւոջ կային, հարկանէին 'ի մահ. իսկ 'ի յարձակել 'ի թշնամիսն՝ ոչ ինչ կարացեալ առնել նոցա չար, ինքեանք 'ի նոցանէ կրէին: Քանզի Պարթևք և 'ի նահանջել իւրեանց և 'ի փախստի նետաձիգ լինէին. զի յետ սկիւթացւոց նոքա էին ճարտարք 'ի հնարս յայս քաջ հանճարեղ. քանզի փախստեամբն ալրէին, և դիմամարտուե̃ն զվատուի̃ փախստեանն բառնային:

Հռոմայեցիք ակն կալեալ սպառելոյ նետից թշնամեացն, զի կամ դադարեսցեն կամ խառնեսցին 'ի պատերազմ, քաջուե̃ կային առաջի հարուածոցն. այլ իբրև գիտացին՝ զի յետկուսէ զօրացն ուղտերամակք բարձեալ բերէին նետս, և զի որոց սպառէին նետքն՝ դարձեալ վերստին զկապարճսն անտի լնուին, յոյժ վհատեցան ։ Եւ Արատոս պատուէր արար որդւոյ իւրում, մինչ չեւ պաշարեալ էր 'ի սպառ 'ի թշնամեաց՝ զամենայն վտանգ յանձն առեալ յարձակել 'ի վերայ նոցա. զի 'ի վերայ նորա առաւել դիմէին թշնամիք, և շուրջ պատէին զնովաւ 'ի թիկանց ։ Եւ նորա առեալ ընդ իւր հազար երեքարիւր հեծեալս, հինգ հարիւր աղեղնաւորս, և ութ գումարտակս ասպարաւորս[1], շրջան առեալ կալաւ զառաջս թշնամեաց՝ որք պաշարէին զնա ։ Նոքա երկուցեալ 'ի յարձակմանէ ամրակազմ գնդին, և կամ մանաւանդ առ 'ի հեռացուցանել զորդին 'ի հօրէն, կապարճս դարձուցին ։ Յայնժամ որդին Արատոսի աղաղակեալ մեծաձայն՝ եթէ խուսափեն թշնամիք, դիմեաց ձիարձակ 'ի վերայ նոցա ։ Եւ հետևակայն խրախուսեալ 'ի տեսիլ հեծելոցն, և 'ի նախանձ մտեալ, զհետ երթային նոցա մտադիւր յօժարութ̃ վստահք 'ի յաղթութ̃, զի համարէին հալածել զթշնամին պարտեալ ։ Այլ իբրև հեռացան 'ի բանակէն՝ ապա ծանեան զդարանսն, յորժամ թշնամիքն 'ի կեղծ փախստենէն դարձեալ՝ դիմէին 'ի վերայ նոցա հանդերձ բազմութ̃ այլոց զօրաց՝ որ եկին յարեցան 'ի նոսա ։ Եւ կասեցոյց որդին Արատոսի զզօրս իւր, զի թերևս ընդ սակաւաձեռն գնդին համարձակեսցին թշնամիք 'ի պատերազմ ։ Այլ նոքա զսպառազէն այրուձին կացուցեալ 'ի ճակատու, զմեկնակազէնսն արձակեցին 'ի վերայ նորա. որոց ճախր առեալ, եկեալ պատեալ զնոքօք 'ի բացէ տեղային 'ի նոսա նետս, և տապալեալ 'ի խորոց աւազակոյտն՝ ամբառնայր փոշի թանձր, մինչև չտեսանել հռոմայեցւոց զմիմեանս, և չկարել խօսել. և մածեալ հոլովեալ յինքեանս՝ կարծրացեալ պընդութ̃, կային նշաւակ նետից թշնամեացն, սատակել չարալլուկ և յամր մահուամբ ։ Ո՛չ 'ի խոցք կարեվէրք, աչհանդուրժել ցաւոյն թաւալեալք յաւազին, և նետք 'ի վէրսն, քստմնելի տանջանօք մեռանէին. կամ 'ի կորզել զոլաքս ճանկաւորս թափ անցեալս ընդ ջիղսն և ընդ երակս՝ չարաչար զխոցուածսն կեղեքէին, և յաւելուին զցաւսն ։

Բազումք անդէն 'ի տեղւոջն այնպէս սատակեալք, և այրեալքն ոչ ևս զօրէին մարտնչել ։ Եւ մինչ խրախուսէր զնոսա Արատոս դիմել 'ի վերայ զրահաւոր հեծելոցն, նոքա զձեռս իւրեանց կարկամեալս 'ի վերայ վահանացն ցուցանէին, և զոտս կարեալ նետիւք ընդ երկիր, զի ոչ փախչել կարէին և ոչ 'ի դիմի հարկանել թշնամեաց։ Ապա Կրասոսի այրուձիովն սաստկապէս հարեալ ընդ հեծեալս թշնամեաց սպառազէնս՝ խառնեցաւ յանդգնաբար ընդ գունդս նոցա. և բազումք 'ի նմանէ անկան 'ի յարձակելն և 'ի վանել զթշնամիս։ Զի զօրք նորա կարճ և տկար գեղարդամբքն ոչ ինչ երգիծանէին 'ի պողովատիկ յանդծելի և 'ի պղնձի կարծրակուռ զրահս նոցա։ Իսկ Պարթեւք ստուար և հզօր շամփրաձև նիզակօքն հարկանէին զանզէն կամ զմեկնակազէն գաղղիացիսն՝ յորս առաւել յուսացեալ էր Կրասոս, և նոքօք զարմանալի արուեստս կացուցանէր։ Որոց բուռն հարեալ զնիզակաց Պարթեւացն, և յիւրեանս ձգեալ զնոսա, վակժուժեալ՝ յերիվարացն յերկիր կործանէին զնոսա. և նոքա անկեալ դնէին անշարժ ընդ ծանրաբեռն զրահիւքն։ Այլ բազումք իջեալ յերիվարացն, ընդ ձիովք թշնամեացն մտեալ, հարկանէին սրով զորովայնս նոցա. որոց վայրենացեալ առ ցաւոցն և խեռեալ և խոյացեալ, և զվերելեակսն 'ի բաց ընկեցեալ՝ խառն ընդ թշնամիսն սմբակակոխ առնէին, և դիտապաստ 'ի վերայ նոցա անկանէին։

---

[1] Այս ինքն երեքհազար կամ հնգհազար այր ։

Այլ առաւել ևս յանընդել տապոյն և 'ի ծարաւոյ նեղէին գաղղիացիք. և բազմաց ևս ձիանն յանդուգն յարձակեալ ընդդէմ սպառազէն հեծելոցն, իւրովի անկանէին 'ի նիզակս նոցա։ Այլ հարկ եղև նոցա ամփոփել 'ի հետևակազօրն, ածեալ ընդ իւրեանս զորդին Կրասոսի վիրալից կարեվէր խոցովք։ Այլ հասեալ զճանապարհայն յաւազակոյտ մի բլուր, նստան անդ. և 'ի մէջ առեալ զձիանն ասպարափակ արարին շուրջանակի, յուսացեալ պատսպարել այնու յերեսաց թշնամեաց, այլ խաբեցան։ Զի 'ի դիւրի՝ յառաջամարտք յետնոցն լինէին պատսպարան և 'ի հանդիստ. իսկ 'ի բլրի՝ կարգ ըստ կարգէ ընդ զառ 'ի վերն ամբարձեալ, ևս առաւել յետակացքն երևելի լեալ՝ նշաւակ կային հարուածոց։ Այլ ոչ կարացեալ խուսել 'ի նետիցն՝ զոր անդադար տեղային 'ի նոսա Պարթեւք, հարան առ հասարակ. և ողբային զբաղդ իւրեանց վասն թշուառութեան, զի առանց 'ի կիր արկանելոյ զզօրութիւն զինուց և զկորով բազկի՝ կորնչէին։

Իսկ ընդ որդւոյն Կրասոսի պատանիք երկու յեկացն Յունաց բնակելոց յերկրին 'ի քաղաքն Կարէս. նոքա կարեկից եղեալ նմա վասն թշուառութեան, յորդորէին զնա գաղտագնաց լինել 'ի միասին յԻքնէ քաղաք, որ ոչ ինչ կարի հեռի էր, և բնակիչք նորա միաբանեալ էին ընդ Հռոմայեցիս ։ Պատասխանի ետ Արատոս և ասէ . Չիք մահ դժնդակ՝ որ հարկ արասցէ ինձ մեկնել յայսքանեաց քաջաց կորովեաց, որ մեռանին վասն իմ ։ Իմաստ չքնաղ և 'ի վեր քան զտիս պատանւոյ ազատի ։ Այլ նոցա պատուէր ետ փրկել զանձինս, և զիրկս արկեալ՝ 'ի հրաժեշտի կացոյց զնոսա ։ Եւ հրամայեաց վահանակրին մխել սուր 'ի կողս իւր, զի ոչ կարէր գնալ զիւրովին վասն նետահար գոլոյ ձեռինն ։ Իսկ աւագք 'ի սպայիցն անձնասպան եղեն . և բազումք արուք անկան 'ի պատերազմի ։ Եւ գերեցին Պարթևք արս իբրև հինգ հարիւր, և հատեալ զգլուխ որդւոյն Արատոսի՝ ապա 'ի վերայ նորա դիմեցին ։

Այլ նա 'ի տալ զպատուէրն որդւոյ իւրում՝ յարձակել 'ի վերայ Պարթևաց, զրոյց առեալ՝ զի Թշնամիք պարտեալ փախստեայ գնային յերեսաց որդւոյն, ոչ սակաւ քաջալերեալ էր . մանաւանդ զի ոչ յոյժ նեղէին զնա մնացեալքն 'ի Թշնամեաց դիմամարտք իւր, զի բազումք ընդդէմ որդւոյ նորա երթեալ էին ։ Եւ ամփոփեալ զզօրս իւր, նստաւ առ ստորոտով միոյ 'ի բլրոյ, զի Թերևս ընդ հուպ դարձցի այսրէն որդին ։ Բազումք 'ի սպայից, զորս 'ի վերայ միմեանց յղէր Արատոս առ հայր իւր՝ զգացուցանել նմա զվտանգն, անկեալ զճանապարհայն 'ի ձեռս Թշնամեաց՝ սպանան . այլ ապա մազապուր լեալ ոմանց՝ հասին առ նա, և գոյժ տուեալ ասեն . Վաղ հա՛ս գունդ հզօր յօգնականութ՟, զի դեռ ևս որդին քո կորնչի ։ Զայն իբրև լուաւ Արատոս, առյոյժ տրտմութ՟ն և առ տագնապ բազմայոյզ խորհրդոցն յապուշ լեալ, ոչ ինչ տեսանէր և ոչ լսէր . այլ առ փոյթ կենաց որդւոյն և փրկութ՟ բանակին ձեպէր հասանել յօգնականութ՟, և հրաման ետ չու առնել զօրացն ։

Իսկ Պարթևք, որ դարձեալ գային 'ի յաղթութ՟ն՝ պարտեալ զորդի նորա, հասին յայն վայր աղաղակաւ, և յաղթական երգովքն գուժէին 'ի հեռաւուստ տառապելոյ հօրն զԹշուառութ՟ին ։ Եւ բարձեալ բերէին 'ի տեգ նիզակի զգլուխ որդւոյ նորա . և մատուցեալ առ Հռոմայեցիս, յոխորտ երգիծանօք ոռնհար լեալ, ասէին . Ո՞ր որդի է մանուկս այս, և ո՞յք ընտանիք սորա . զի չէ մարթ արի և քաջ պատանւոյն՝ վատի և երկչոտի առն Արատոսի գոլ որդի ։

Լուծեալ վհատեցան Հռոմայեցիք 'ի տեսիլն յայն . և փոխանակ բարկութ՟ և վրէժխնդրութ՟՝ ոպ՟ արժան էր, լի եղէն արշաւրօք, և սասանեալ թուլացան ։ Բայց անդ Կրասոս խրախուսեալ անսովոր արիութեամբ, ընթացեալ ընդ կարգս զօրացն՝ ասէր ․ Արք հռոմայեցիք վասն իմ են չարիքս այս ․ Հռոմայ բաղդն և փառք անխոց և անպարտելի կան, եթէ դուք անսասան և անյողդողդ կացջիք ։ Եթէ ողորմիք 'ի հայրս որդեկորոյս, որ զարմանայիքն ընդ քաջութիւն Կրասոսի, ցուցէք զայն բարկութեամբ ձերով և վրէժխնդրութեամբ 'ի վերայ խուժադժիցդ ։ Կարճեցէք զստահակ ցնծութիւն նոցա ․ պատուհասեցէք զանդըթութիւն նոցա ․ և մի՛ թշուառութեամբ իմով վհատեսջիք ։ Որք քաջայաղթ արութեան ցանկան, հարկ է նոցա կրել հարուածս ։ ԶՏիգրան ոչ պարտեաց Լուկուլլոս առանց արեանհեղութեան, և ոչ Սկիպիոն զԱնտիոքոս ։ Հռոմ զմեծամեծ յաղթութիւնս յետ մեծամեծ պարտութեանց տարաւ ։ Զի ոչ բաղդիւ ամբարձաւ 'ի հզօր իշխանութիւն, այլ երկայնմտութեամբ և արիութեամբ՝ ընդ թշուառութիւնս կռուեալ ։

Զայս ամենայն 'ի խրախոյս զօրացն խօսեցաւ Կրասոս ․ այլ իբրև պատուէր ետ զաղաղակ հարկանել 'ի պատերազմ, ծանուցաւ վհատութիւն նոցա 'ի նուաղ և յեղյեղուկ և 'ի յողդողդ բարբառոյն ․ իսկ թշնամեացն սաստիկ և անյեղլի և համարձակ հնչէին բարբառք ։ Եւ անդ ընդ միմեանս գունդքն երկոքին հարան ․ և տարածանէր այրուձին Պարթևաց զեղջիւր առ թևովք հռոմայեցւոց, և տարափք նետից տեղային 'ի նոսա 'ի թեւէ ․ և 'ի հանդիպոյ սաստկապէս հարեալ 'ի սպառազէն հեծելոց տիգաւորաց, ամփոփեալ կարծրացան 'ի մի գունդ ․ բայց կէսք վասն ազատելոյ 'ի հարուածոց նետիցն յամր և 'ի չարալլուկ մահուանէն, խիզախեցին գազանացեալք ընդդէմ թշնամեաց ․ այլ ոչ բազում ինչ գործեցին նախճիրս, և ոչ ինչ յանդգնութեամբն շահեալ՝ բայց զի արագ մեռանէին 'ի մեծաբաց խորամուխ վիրացն ։ Զի այնու ուժով զնիզակսն ձգէին Պարթևք, մինչև բազմաց թափ հանել ընդ իրան նոցա զտէգսն, և զերկուս 'ի մի հարուած շամփրել ։

Եւ մինչև ցերեկոյ պատերազմեալ, ապա 'ի հասանել գիշերոյ՝ ամփոփեցան յետս Պարթևք ․ ժամ տային զայն գիշեր Կրասոսի 'ի կոծ որդւոյն, եթէ ոչ լաւ համարեալ 'ի փրկութիւն իւր՝ յանձն առցէ կամակար գնալ առ Արշակ, (որ թագաւորէրն յայնժամ Պարթևաց), քան վարել անդր բռնի ։ Եւ բանակեցան հանդէպ հռոմայեցւոց, քաջայոյսք առ վաղիւն նուաճել զնոսա 'ի սպառ դիւրին պատերազմաւ ։ Այն գիշեր սոսկումն էր հռոմայեցւոց. ոչ յիշէին զդիականցն թաղումն, և ոչ պատել զվիրաւորս՝ յորոց բազումք անհնարին ցաւովք մեռանէին. այլ ընդ իւրաքանչիւր աղէտսն վարանեալ հոգային, զի ոչ գոյր նոցա յոյս փրկութ՟ե եթէ կային 'ի բանակին այգուն լինելոյ, և թէ համարձակէին գիշերայն փախստեայ անկանել ընդ անեզր անոլորտ դաշտն: Եւ վիրաւորքն յաճախէին զվարանսն. զի եթէ 'ի միասին զնոսա ածէին, դանդաղէր չուն. իսկ 'ի թողուլ զնոսա, կողկողանացն և ողբոց ձայնք մատն լինէին փախստեանն:

Բայց թէպէտ և ա՟մ չարեացն պատճառք ինքն Կրասոս էր, սակայն զօրքն ցանկային տեսանել զնա, և լսել զբարբառ նորա: Իսկ նա 'ի խաւարչտին տեղւոջ մեկուսի 'ի բանակէն՝ ծածկեալ ձորձովն զգլուխն, անկեալ դնէր՝ ասէ Պլուտարքոս, յահաւոր օրինակ անհաստատութ՟ե բաղդին առ ռամիկն. իսկ առ իմաստունս և առհանճարեղս յահաւորագոյն օրինակ վտանգին յանդըգնութ՟ե և փառասիրութ՟ե, որովք շլացեալ՝ գեր 'ի վերոյ ամենեցուն խորհէր անցանել, և ամօթ և նախատինս համարէր՝ 'ի բիւրս բիւրուց հռոմայեցւոց զԿեսար միայն և զՊոմպէոս 'ի վեր քան զինքն տեսանել:

Մատուցեալ Օկտաւիոս՝ մի 'ի զօրավարաց նորա՝ և Կասիոս, յարուցանէին զնա մխիթար քաջալեր բանիւք: Այլ նա ընկղմեալ կայր 'ի խոր տրտմութ՟ի, և ոչ լսէր յորդորանացն և աղերսանաց: Եւ կոչեցին զա՟մ աւագսպայս 'ի ժողով. և ամենեցուն միաբանեալ 'ի չու, յարուցին զբանակն առանց հնչման փողոց: Եւ այն ինչ լռելեայն յաջողէր, իրազեկ լեալ հիւանդաց և վիրաւորաց՝ որք ոչ կարէին երթալ ընդ նոսա՝ զի ինքեանք թողլոց էին, վրդովեալ աղմկեցին զբանակն աղաղակաւ և հեծեծանօք և անհեդեդ կականաւ. մինչև յառաջախաղաց գնդացն խռովել և զարհուրել՝ որպէս թէ թըշնամիք զհետ իւրեանց հասեալ իցեն: Եւ ստէպ յետս դարձեալ ճակատէին 'ի պատերազմ, կամ զվիրաւորս՝ որ ընթանային զհետ նոցա՝ բառնային 'ի գրաստս, զզօրաւորագոյնս իջուցեալ յերկիր. որովք դանդաղեցին յոյժ: Այլ հեծեալք երեքարիւր, առաջնորդեալ յԻգնատեայ, անդադար չու արարեալ՝ հասին 'ի մէջ գիշերի 'ի Կարհէս քաղաք: Եւ կարդաց Իգնատիոս առ գիշերապահս 'ի պարիսպն, և ձայն ետուն նմա. և լուր արար ընդ նոսա առ Կոպոնիոս վերակացու քաղաքին, զի Կրասոս ետ ճակատ մեծ ընդ Պարթևս. և այլ ինչ ոչ ասաց, և ոչ ծանօթս ետ՝ թէ ո՛ իցէ: Եւ դիմեալ եհաս 'ի կամուրջն՝ զոր Կրասոս արկ զԵփրատաւ, և ապրեցոյց ըզգունդ իւր. այլ վասն մեկնելոյ 'ի զօրավարէն՝ բամբասեցաւ յամենեցունց ։ Բայց աղդարարութ̃ն Իգնատեայ 'ի ձեռն պահապանացն առ Կոպոնիոս՝ փրկեցաւ Կրասոս ։ Քանզի Կոպոնեայ, 'ի տագնապէ անծանօթին բանիցն գուշակեալ իմաստութ̃ զարկածսն, հրամայեաց վաղվաղակի պահակապանացն զէն առնուլ. և ստուգեալ զդէմ փախստեան Կրասոսի՝ ել ընդ առաջ նորա, և ած զնա և զզօրս նորա 'ի քաղաքն ։ Բայց թէպէտ և զգացին Պարթևք զփախուստ նորա, ոչ կամեցան գիշերայն հետամուտ լինել. այլ 'ի վաղիւ անդր առաւօտուն մտեալ 'ի բանակն, խողխողեցին զա̃մ վիրաւորս՝ որ մնացեալ էին անդ, արս իբրև չորեքհազար. և հեծելոց սփռեալ զհետ փախստէիցն ընդ դաշտն, կալան 'ի նոցանէ զբազումն՝ որք այսր և անդր մոլորեալ էին ։

Վարդունդ մի 'ի զօրավարաց Կրասոսի՝ մեկնեալ գիշերի 'ի բանակէն չորիւք գումարտակօք, մոլորեցաւ զճանապարհայն. և 'ի վաղիւ անդր գտին զնա բարբարոսք 'ի միում ուրեք 'ի բլրոց, և յարձակեցան անդր ։ Նորա մեծաւ քաջութ̃ պահ կալեալ անձին, ապա ընկճեցաւ 'ի բազմուէ̃ թշնամեաց. և ա̃մ զօրք նորա սպանան, բաց յարանց քսանից՝ որոց զոգիս 'ի բաց եդեալ, սուսեր 'ի ձեռին դիմեցին անցանել ընդ մէջ թշնամեաց. և բարբարոսացն պակուցեալ և յոյժ զարմացեալ ընդ յանդըգնութ̃ի նոցա, ետուն անցս նոցա. և հասին նոքա անվտանգ 'ի Կարէս ։

Յայնմ վայրի եհաս համբաւ սուտ առ Սուրէն՝ թէ Կրասոս ընտրիւք զօրացն ապրեցաւ, իսկ 'ի Կարէս ամրացեալքն սինլքորք զօրացն էին, և ընդունայն աշխատ լինէր հալածել զնոսա ։ Նա համարեցաւ Սուրէն կորուսեալ զփառս յաղթութե̃ն. այլ զի դեռ ևս երկբայէր՝ խորհեցաւ ստուգել զիրսն, զի եթէ Կրասոս իցէ անդ 'ի Կարէս՝ պաշարեսցէ զքաղաքն, իսկ եթէ մեկնեալ անտի՝ հետամուտ լիցի նմա ։ Նա արձակեաց զմի ոք 'ի թարգմանացն՝ որ հաստատագոյն զերկոցունց ազգաց ըզխօսսն գիտէր՝ պատուէր ետ մատչել 'ի պարիսպսն, և հռոմայեցւոց բարբառովն կարդալ զԿասիոս կամ զինքն իսկ զԿրասոս, և ազդ առնել՝ թէ խնդրէ Սուրէն խօսել ընդ նոսա ։ Նա թարգմանն արար որպէս պատուիրեաց նմա Սուրէն, և մտադիւր յանձն էառ Կրասոս ։ Ապա եկին 'ի խուժական զօրացն արաբացիք ոմանք, որք ճանաչէին զԿրասոս և զԿասիոս՝ յառաջ քան զպատերազմն տեսեալ զնոսա 'ի բանակին, և մատուցեալ 'ի քաղաք անդր, և տեսեալ զԿասիոս 'ի վերայ պարսպին, ասեն. Մուրէն յանձն առնու խօսել ընդ ձեզ 'ի խաղաղութի, և թողուլ զձեզ ազատս, եթէ լիջիք բարեկամք ընդ արքային. և թողցուք նմա զՄիջագետս, որ երկոցունց իսկ կողմանց օգուտ է, քան մնալ Հարկին.

Հաւանեցաւ Կասիոս, և խնդրեաց ժամ և տեղի սահմանել, վաղվաղակի յանդիման լինել միմեանց Կրասոսի և Մուրենայ. և արաբացիքն յուսացուցեալ զնա, մեկնեցան 'ի բաց: Բայց Մուրենայ ուրախ լեալ ընդ արգելումն որսոյն անփախուստ 'ի Կարես՝ 'ի վաղիւ անդր մատոյց զՊարթևս 'ի քաղաքն, և խօսեցան խորոխտանօք ընդ Հռոմայեցիս՝ տալ 'ի ձեռս զԿրասոս և զԿասիոս կապեալ ոտիւք և ձեռօք, եթէ խնդրիցեն առնել դաշինս խաղաղութե փառօք: Նոքա սրտմտեալ ընդ խորամանգ խաբէութե նոցա, մատեան առ Կրասոս և ասեն. Ո՞ր ևս յուսով սնոտեաւ յապաղեալ մնամք օգնականութե Հայոց, յայսմ իսկ գիշերի պարտ է մեզ փախչել, և մի դանդաղել: Բայց հարկ էր նոցա գաղտագնաց լինել, զի մի ոք 'ի քաղաքայնոց նախ քան զժամ չուոյն իրազեկ լիցի: Բայց մի ոմն 'ի նոցանէ Անդրոմաքոս գիտաց զիրսն, քանզի Կրասոս իսկ յայտնեաց նմա, և զնա կալաւ ուղեցոյց՝ տարապարտ յուսացեալ 'ի հաւատարմութի նորա: Ոչ անագանեցին Պարթևք գիտել 'ի ձեռն նենգաւորին զամ խորհուրդս Հռոմայեցւոց. և զի ոչ սովոր էին 'ի գիշերամարտ, և եթէ Կրասոս ժամ առեալ փախչէր՝ ոչ ևս մարթ էր հասանել զհետ նորա, մոլորեցոյց նենգաւորն զՀռոմայեցիս ընդ զարտուղի ճանապարհս, և ած զնոսա 'ի թանձրախոր մօրուտս, և 'ի լայնատարած խրամս, 'ի դժուարակոխ ուղի՝ յոր հարկ էր նոցա որպէս ընդ բազմահետ բաւիղ յածեալ շրջել հետաղօտելով զելս.

Ոմանք կասկածեալ զնմանէ՝ զի չարուե յածեցուցանէր զնոսա, 'ի բաց կային 'ի նմանէ. և ինքն իսկ Կասիոս դիմեալ 'ի Կարես, և պնդագոյնս վարեալ զչուն՝ ապրեցաւ յԱսորիս հինգ հարիւրովք հեծելովք: Եւ բազումք ընդ առաջնորդս հաւատարիմս զերծան 'ի սինաքեան լերինս յառաջ քան զծագել արևու: Եւ էին նոքա արք իբրև հինգ հազար, և Ոկտաւիոս զօրավար նոցա: Բայց Կրասոսի մինչդեռ 'ի մօրուտն և ընդ դժուարս խաբէութեն Անդրոմաքեայ տագնապէր, լուսացաւ օրն: Էին ընդ նմա գումարտակք չորք ասպարաւորք հետևակք, պրուձի սակաւ, և պայիկք հինգ՝ որ զխուրձսն կրէին առաջի նորա ։ Եւ բազում տարժանաւոր ճգամբք յարահետ ճանապարհն էր, մինչև հասանէին թշնամիք 'ի վերայ նորա ․ և էր յառաջեալ քան զնա Ոկտաւիոս գընդաւն իւրով ասպարէզս երկոտասան ։ Յանհնարին վըտանգին՝ փութացաւ 'ի մի այլ 'ի լերանցն դիւրամատոյց հեծելոց, և նոյն իսկ կասկածելի, խոնարհագոյն քան զսիննաքեանսն՝ շարայարեալ 'ի նոսա ընդ գօտիս լերանց բազմաց ։ Բայց Ոկտաւիոս տեսեալ ակներև զվտանգ Կրասոսի, էջ 'ի լեռնէ անտի սակաւուք ոմամբք հասանել յօգնութ̃ի ․ այլ զհետ նորա և այլ զօրքն խրախուսեցին, անգոսնելով զվատութ̃ի միմեանց ։ Եւ հասին հարին սաստկապէս զՊարթևս, և հալածեցին զնոսա 'ի լեռնէն ։ Ապա 'ի մէջ առեալ զԿրասոս, և շուրջանակի ասպարափակ արարեալ, և որպէս պատնէշ շուրջ պատեալ, 'ի մոլի եղեալ՝ ասէին պատերազմել 'ի վերայ զօրավարին, և ամենեցուն առ հասարակ անկանել շուրջ զնովաւ, ապա թէ նետ թշնամեաց հասցէ 'ի նա ։

Իբրև ետես Սուրէն՝ զի Պարթևք դժկամակեալ յուլանային 'ի մարտ, և եթէ գիշեր 'ի վերայ հասանէր և առնուին հռոմայեցիք զլերինսն՝ անհնարին էր թափել զնոսա անդրէն, 'ի հնարս խաբէութ̃ե անկաւ ։ Քանզի արձակեաց զոմանս 'ի գերեաց, յառաջագոյն պատուէր տուեալ բազմաց 'ի զօրացն խօսս արկանել 'ի լուր նոցա, և որպէս թէ պատմել միմեանց զզրոյցս բանակին՝ թէ չկամի արքայ տալ անհաշտ պատերազմ ընդ հռոմայեցիս, այլ ածել զնոսա 'ի բարեկամութ̃ի, և ցուցանել զմարդասիրութ̃ի իւր՝ քաղցրութ̃ի առնելով ընդ Կրասոսի ։ Եւ 'ի հաւատարմութ̃ի բանիցն, ընդ արձակել զգերիս՝ կասեցին Պարթևք 'ի պատերազմէ ։ Եւ Սուրէնայ առեալ ընդ իւր զաւագ սպայս՝ մատեաւ հանդարտ 'ի լեառնն, և չէր լարեալ զաղեղն իւր ։ Եւ ձգեալ զձեռն՝ կարդայ զԿրասոս, և ասէ ․ Ե'կ խօսեսցուք 'ի հաշտութ̃ի ․ զի ոչ կամաւ եկն արքայ 'ի պատերազմ՝ այլ 'ի հարկէ, զի արդարութ̃ք պահ կալցի անձին, և զպարթևականն ցուցցէ ոյժ և զօրութ̃ի ։ Այլ արդ զիջեալ 'ի քաղցրութ̃ի և 'ի մարդասիրութ̃ի, կամի խաղաղութ̃ի առնել և արձակել զձեզ ազատ և անվտանգ ։ Եւ ոչ խղճէին խուժադուժքն ընդ հաւատադրժութ̃ի, խաբէութեամբ և նենգաւ կատարելով զկամս իւրեանց, որպէս բազում ուրեք ցուցաւ ։

Յոյժ ուրախ եղեն զօրք Կրասոսի, դիւրահաւան լեալ բանիցն Սուրենայ · բայց Կրասոս ստէպ զփորձ առեալ խաբէութեան և դրժանաց բարբարոսացն , և ընդ յեղակարծ փոփոխութիւն կասկածելով՝ ոչ արագալուր լեալ , խորհէր ընդ բարեկամս իւր ։ Իսկ զօրքն աղաղակ բարձեալ՝ ստիպէին զնա խօսել ընդ Սուրենայ · մինչև թշնամանեալ նախատել և բամբասել զնա 'ի վատութեան , իբր թէ 'ի մահ մատնէր զնոսա , ածեալ 'ի պատերազմ ընդդէմ այնոցիկ , ընդ որս և խօսել անգամ չիշխէր ինքն՝ մինչ անզէնքն իսկ էին ։

Բայց Կրասոս ողոքանօք աղերսէր զնոսա՝ պնդել կալ մինչև ցերեկոյ 'ի դժուարամատոյց լերինսն , զի մարթ էր նոցա գիշերայն ապրել · և զճանապարհն իսկ ցուցանէր , և քաջալերէր զնոսա մի՛ վհատել մերձ 'ի փրկութիւն ։ Այլ նոքա զայրագին եւս պատրաստեալք յապստամբութիւն , սուր ընդ ասպար շխահեալ՝ սպառնային նմա ։ Իսկ Կրասոս զարհուրեալ յաղմկէն , յուղի անկեալ իջանէր · և դարձեալ 'ի զօրսն ասէ · Օկտաւիէ և Պետրոնիէ և ամենայն սպայք և զօրագլուխք լուարո՛ւք ։ Ահա 'ի հարկէ և ոչ կամաւ գնամ զճանապարհս , և դուք էք վկայք թշնամանաց և բռնութեանս՝ զոր կրեմ ։ Այլ զձեզ աղաչեմ , 'ի դառնալ ձեր անվտանգ 'ի պատերազմէս , պատմեցէ՛ք 'ի փառս Հռոմայ մօր հասարակաց՝ զի Կրասոս 'ի թըշնամեաց պատրեալ կորեաւ , և ոչ յիւրոյն մատնեալ ։ Եւ ոչ թողին զնա միայնակ Օկտաւիոս և Պետրոնիոս , այլ իջին ընդ նմա ընդ զառ 'ի վայր լերինն · բայց ըզպայիկսն արգել Կրասոս , որք իջանէին զհետ նորա ։

Եկին նախ ընդ առաջ նոցա արք երկու հելլենք հրեշտակք Պարթևաց , և իջեալ 'ի ձիոց ետուն ողջոյն մեծարանաց , խօսեցան ընդ նոսա յունարէն , և ասեն · Առաքեցէ՛ք այս , և տեսցեն զՍուրէն և զզօրս նորա՝ զի անզէն ամենայն հաւատարմութեամբ գան այսր ։ Պատասխանի ետ նոցա Կրասոս · Եթէ զկեանսն ինչ համարէր Կրասոս , ոչ էր եկեալ մատնել զայն 'ի ձեռս թշնամեացն ։ Եւ առաքեաց զերկուս եղբարս զՌոսկեանս , գիտել զպայմանս ևեթ դաշանցն և զթիւ արանցն՝ ընդ որս յանդիման լինելոց էին ։ Եւ հրամայեաց Սուրէն ունել զնոսա և պահել · և ինքն յառաջեալ երիվարաւն ընդ աւագ սպայսն , իբրև ետես զԿրասոս 'ի հեռուստ , ասէ · Եւ զիա՞րդ , ընդէ՞ր հեծեալք մեք , և զօրավարդ հռոմայեցւոց հետևակ · առէ՛ք դմա ձի ։ Քանզի համարէր 'ի պատիւ իւր գալ նմա հետի ։ Պատասխանի ետ Կրասոս , և ասէ · Ոչ ինչ են զարմանք , զի երկաքանչիւր ըստ բնիկ աշխարհին սովորութեան գամք[1] : Սուրէն ասէ . Քաջ է, լսել յայսմ հետէ ուխտ խաղաղութեան ընդ Որոդ արքայ և ընդ հռոմայեցիս . երթիցուք յեզր Եփրատայ՝ կռել և կնքել զդաշինս . զի հռոմայեցւոց բարք են՝ վաղ մոռանալ զպայմանս : Եւ աջ խաղաղութեան մատոյց Կրասոսի : Եւ 'ի խնդրել նորա երիվար, Սուրէն ասէ . Ոչ ինչ է պիտոյ, ահաւասիկ պարգևէ քեզ արքայ : Եւ ածաւ անդէն երիվար ոսկեսանձ . և ձիապանք թագաւորին առեալ հեծուցին զԿրասոս, և շուրջ պատեալ՝ մտրակէին զերիվարն յընթացս : Ջչարեալ ընդ այն Օկտաւեայ, յառաջեաց կալաւ զսանձից ձիոյն . զհետ նորա եհաս և Պետրոնիոս և որ ընդ նմայն էին, և 'ի մէջ առեալ զԿրասոս՝ կասեցուցանէին զերիվարն, 'ի բաց վանեալ զարսն՝ որք վարէին զնա տագնապաւ : Եւ խռովեալ և աղմկեալ ընդ միմեանս, ապա սկսան 'ի հարուածս . և ձգեալ Օկտաւեայ զսուր իւր՝ սպան զմի 'ի ձիապանաց ուրումն 'ի Պարթևաց . և ինքն յայլմէ ումեմնէ հարեալ 'ի թիկանց, անկաւ մեռեալ : Եւ Պետրոնիոս ոչ ունելով ասպար, հարաւ ընդ տախտակ կրծոյն . այլ 'ի վայր վաղեալ 'ի ձիոյն՝ ապրեցաւ անխոց : Անդ և Կրասոս անկաւ, հարեալ յումեմնէ 'ի Պարթևաց : Եւ այլ զօրք հռոմայեցւոց, որք գտան անդ, կէսք պատերազմեալ 'ի վերայ Կրասոսի՝ անկան, և կէսք յառաջագոյն խոյս ետուն ընդ զառ 'ի վեր լերինն : Անդր հասին զհետ նոցա Պարթևք, խօսեցան ընդ նոսա և ասեն . Կրասոսի հասին դատաստանք հաւատադրժութեան . արդ իջէք աներկիւղ 'ի լեռնէդ, և խոստանայ Սուրէն՝ չար ումեք 'ի ձէնջ մի հասուցանել : Սմանք յուսացեալ 'ի բանս նոցա, իջին և անձնատուր եղեն թշնամեաց . այլք զգիշեր օգնական առեալ՝ այսր և անդր ցրուեցան . բայց սակաւք 'ի նոցանէ եղեն ապրեալք . զի 'ի վաղիւ անդր հասեալ 'ի վերայ նոցա արաբացիք կոտորեցին զնոսա :

Հարուած խիստ հանդոյն այսմ չէր ընկալեալ հռոմայեցւոց յետ Կաննեայ պատերազմին : Երկու բիւրք 'ի նոցանէ անկան 'ի Ճակատուն տեղւոջ, բիւր մի 'ի գերութեան վարեցան . և ապրեալքն 'ի նոցանէ ցրուեցան փախստեայ, կէսք 'ի Հայս, կէսք 'ի Կիլիկիա, և այլք յԱսորիս . բայց Կասիոս զկայս մնաց զօրացն ժողովեալ յԱսորիս, պահեաց զաշխարհն յերեսաց յաղթականին :

Այս պարտութի դժոխըմբեր եղև հռոմայեցւոց քան զԿաննեայն, այնու զի յեղակարծ էր։ Ընդ 'ի կանգնել Աննիբաղայ 'ի վերայ նոցա զյաղթութն, 'ի բազում պատերազմունս պարտեալ և խոնարհեալ էր Հռոմ, և խորհէր անձին ևեթ պահ ունել, և հալածել զթշնամին 'ի բաց։ Իսկ աստ պերճացեալ յաղթութեք յահ և 'ի դողումն ազգաց, և զհզօր Թագաւորութիս Եւրոպայ Ասիոյ և Ափրիկեայ նուաճեալ, և զահաւորագոյնն քան զմ̃ թշնամիսն այն ինչ պարտեալ, և 'ի բուն ծայր մեծութե հասեալ, յանկարծակի զմ̃ փառսն տեսանէր յերկիր կործանեալ յամբոխէ խուժադուժ ազգաց արևելից, զորս արհամարհէրն, և նախ քան զյաղթուն ընդ ազգս նուաճեալս համարէր զնոսա։ Այլ սպառսպուռ պարտութեն եւես զոռոզ տիեզերակալն 'ի տար աշխարհ զազգոսոխ՝ որ կարող էր զդէմ ունել և մաքառել ընդ նմա վասն տիեզերակալութե, և ոչ միայն Թումբ և պատուար կալ ընդդէմ փառամոլ աշխարհակալութեց նորա՝ այլ և 'ի բնիկ աշխարհին սարսեցուցանել զնա։ Այնու պարտութեն ծանուցաւ, զի մարթէր հռոմայեցւոց և 'ի Ճակատու պատերազմի՝ հանդերձ զմ̃ զօրութե իւրեանց՝ նկուն լինել, և զի որ իբրև զծով ծայրածաւալ յորդեալ ողողանէր զամենայն աշխարհ՝ մարթէր նմա ամփոփել յեդեալ սահմանի։

---

[1] Քանզի բդէշխք հռոմայեցւոց հետի առաջնորդէին հետևակաց :

Այսու կոտորածիւ Կրասոսի արհամարհեցան հռոմայեցիք առ Պարթևս. և ոչ յաղթութեքն՝ զոր յետ սակաւ միոյ կանգնեաց ընդդէմ նոցա Բենտիդիոս կամ Վենտիդիոս, կարացին ջնջել զկեղտն։ Գրօշք լեգէոնացն պարտելոց պահէին առ նոսա 'ի տեսիլ նշաւակի. և գերեալք 'ի դառնաղէտ մարտին կացին մնացին անդարձ, քաղաքացիք Հռոմայ և դաշնաւորք՝ զաւակ խառնեալ ընդ նոսա ամօթալի հարսանեօք 'ի նախատինս Հռոմայ, որպէս քաջ նկարագրէ Հորատիոս[1], և յերկիր բարբարոսաց 'ի զինուորութիւն նոցա կեցեալ խաղաղութեամբ մինչև ցծերութիւն ։ Ապա յետ ամաց աւելի քան զերեսուն, առ Օգոստոս Կայսերաւ, Թագաւորն Պարթևաց առանց բռնութեան և զինուց յանձն եառ դարձուցանել 'ի Հռոմայեցիս զդրօշս նոցա և զգերիսն, և համարեցաւ զայն Օգոստոս հանդերձ ամենայն աշխարհաւն շքեղ և պայծառ յաղթանակ. զի 'ի կոր կործանէր զնոսա յիշատակ այնր պարտութեան, և զհետսն ջանահնար լինէին ծածկել. այլ չեղեն նոցա մոռացօնք 'ի սպառ ։ Զի և Յուլիոս Կեսար, 'ի ժամանակի յորժամ սպանաւ, պատրաստէր խաղալ պատերազմաւ 'ի վերայ Պարթևաց 'ի վրէժ նախատանացն Հռոմայ ։ 'Ի նոյն խորհեցաւ և Անտոնիոս, այլ խորհուրդք նորա 'ի նախատինս նորա դարձան ։ Յայնմ հետէ հզօր քան զամենայն թշնամիս համարէին զՊարթևս Հռոմայեցիք. և ճգնեցան ընդդէմ նոցա քաջայաղթք յինքնակալաց նոցա, Տրայիանոս և Սեպտիմոս Սևերոս և այլք, քան զամենայն մեծարանաց անուանս ցանկալի լեալ նոցա կոչել Պարթև ։ Էր զի Հռոմայեցիք անցեալ ընդ Եփրատ՝ ընդարձակէին զսահմանս իւրեանց յայն կոյս, և էր զի Պարթևք անցեալ յայս կոյս՝ ասպատակեալ աւերէին զԱսորիս և զՊաղեստին ։ Միանգամայն ասել, ոչ կարացին Հռոմայեցիք ընդ լծով արկանել զՊարթևս, որք իբրև պատուար պղնձի կացին անսասան առաջի սաստիկ յարձակման նոցա ։

---

[1] Կրասեայ զինուորն ընդ խուժ հարսին
Ընդէր եկաց ժանդ ամուսին։
Ողբամ Հռոմայ ըզքեզ ո՛ տուն,
Եւ զքո զեղծեալ բարս 'ի նախնոյն։
Հին ընդ աներացն Թշնամիս
Զինուորակիցք յեցան յալիս.
Ընդ դրօշակաւ Մար արքային
Ապուլեցին և մարսացին,
Ոչ զԱնկիլեայս և ոչ զանուն,
Ոչ զտօգին յիշեալ համբուն,
Եւ ոչ զՎեստայն յաւէժական,
Մինչ Ջևս և Հռոմ կայր անսասան։
Ոհր. տաղերգ. Գ. Ե։

Մինչդեռ պատերազմ էր 'ի Կարէս՝ Որոդ ուխտ խաղաղութեան կնքէր 'ի Հայս ընդ Արտաւազդայ արքայի ։ Քանզի Արտաւազդ 'ի դառնալ հրեշտակացն՝ զոր յղեաց առ Կրասոս, գիտաց զի պարտութիւն անշուշտ հասանէր Հռոմայեցւոց վասն յանդգնութեանն, և խօսեցաւ ընդ Որոդի 'ի խաղաղութիւն. և վասն ամրագոյն հաստատելոյ զբարեկամութիւն, ետ զմի 'ի դստերաց իւրոց Պակորայ որդւոյ նորա կնութեան ։ Մինչ չև յանկ ելեալ էին աւուրք հարսանեացն, և ահա ածաւ գլուխ և աջ Կրասոսի, զոր Սուրենայ հատեալ՝ յղէր 'ի նշան յաղթութեան ։ Եւ յաւելին ուրախ լինել, և ոսկի հալեալ լցին 'ի բերան նորա վասն անյագ արծաթսիրութեանն, որպէս պատմի ։

Բայց Սուրէն ոչ ինչ յերկարակեաց եղև յետ յաղթութեանն. քանզի զչարեալ արքային Պարթևաց ընդ փառս և ընդ զօրութիւն նորա՝ զոր ստացաւ յաղթութիւնն, յետ սակաւ միոյ ետ սպանանել զնա ։ Պայծառ առաքինութիւն ածէ վտանգ, և կեղակարծ են արութիւնք՝ նախանձելիք թագաւորաց. ոչ հաճոյ է նոցա ծառայ իմաստուն, որ հանճարովն իւրով զնոցայն մթացուցանէ ։ Որպիսի ոք Որովդեան էր․ զի որպէս Տակիտոս զՏիբերեայ ասէ, [1] Գիտաց զի չէր ձեռնհաս հատուցանել վարձս ըստ քաջուե̄ զօրավարին. իսկ վաստակք անփոխարէնք՝ փոխանակ շնորհակալութե̄ և սիրոյ՝ ապերախտութեան և մախանաց նշաւակք են ։ ԱՄ ԱՇԽԲ

Բայց Սուրէն զօրավար քաջ և զարմանալի, և յերեւնամենին ամենահմուտ, քան զա̄մ զօրավարս ժամանակին գերազանցէր արիութբ̄․ հանդերձ ոգիմբք և կայտառ էր մարմնով, և աւարտահասակ․ և մեծութբ̄ք և համբաւու և իշխանութբ̄ գեր ՚ի վերոյ ամենեցուն, և առաջին յամենայն թագաւորութեան Պարթեւաց յամենեցունց վկայեալ ։ Եւ հայրենի ժառանգութբ̄ թագադիր լինէր արքայից ՚ի գահակալել նոցա, անդստին ՚ի սկզբանէ թագաւորութե̄ն Պարթեւաց ընկալեալ ազգի նորա զպատիւն ։ ՚Ի գնալ նորա ՚ի ճանապարհ, գնային զհետ նորա ուղտք հազար կարասեկիրք, կառք երկերիւր կանանցն և հարճից, և հեծեալք հազար սպառազէնք թիկնապահք, և մեկնակազէն զօրք, և ամբոխ գերդաստանաց իբրև բիւր մի ։

Եւ յետ պարտութե̄ն հռոմայեցւոց դիմեցին Պարթեւք յԱսորիս՝ ունել զայն, զի համարէին անպատսպար զաշխարհն ։ Բայց Կասիոսի ժողովեալ զկաց մնաց բանակին, քաջութբ̄ զդէմ կալաւ․ և ստիպեցան դառնալ կորակոր ձեռնունայն ընդ Եփրատ ։ 3952 . 52

՚Ի միւսում ամի կուսակալեցին բդեաշխք, Կալպուռնիոս Բիբուղոս զԱսորիս, և Տուղղիոս Կիկերոն զԿիլիկիա ։ Եւ կանխեաց Կիկերոն եկն յերկիր կուսակալութե̄ իւրոյ․ իսկ Բիբուղոս դանդաղեաց ՚ի Հռոմ, և յերկարէր Կասիոս յիշխանութե̄ն՝ ըստ բախտի եղեալ հռոմայեցւոց, զի ՚ի գործ պատերազմաց աշխարհին Ասորւոց բնաւ ապիկար էր Բիբուղոս ։ Քանզի Պակոր որդի Որովդի արքային Պարթեւաց, ՚ի գալ գարնայնոյն՝ անց ընդ Եփրատ ծանր ամբոխիւ, և եմուտ յԱսորիս ։ Եւ էր ինքն մանուկ, և ոչ կարէր անձամբ զօրավարել. նմին իրի Որշակ զօրավար ծեր համհարզ կացեալ՝ նա գործէր զամենայն ։ Խաղաց գնաց յԱնտիոք, և նստեալ զքաղաքաւն՝ արգել զԿասիոս ա̄մ զօրօքն ՚ի ներքս ։ Իբրև զայն 3953 . 51 Կիկ. Թուղթ. ընտան. և առ Ատտ :

---

[1] Համարէր Կեսար անկեալ յիշխանութէ, և ապիկար ՚ի տրիտուր մեծի քաջութե̄ն ։ Քանզի բարերարութիւնք, եթէ զկշիռ փոխարինացն ունիցին, հաճոյ են․ իսկ անկշռելին՝ ատելութե̄ փոխանակ շնորհաց ընկալցի ։ Տակիտ․ Տարեգ․ դ․ ժը ։

լուաւ Կիկերոն 'ի Կիլիկիա, քանզի ազդ արար նմա Անտիոքոս արքայ Կոմագենայ, ժողովեալ զ՟մ զօրս իւր՝ եկն բանակեցաւ յեզր սահմանաց Կիլիկիոյ յարևելից, ընդ որ թևակոխէ 'ի Հայաստան, զդէմ ունել Հայոց՝ եթէ խլրտեսցին, և 'ի դէպ ժամանակի հասանել յօգնութիւն Կասիոսի ։ Յղեաց զօրս և յԱման լեառն, զգուշանալ և յայնմ կողմանէ ․ նոքա պատահեալ զճանապարհայն բազմութեան հեծելոց Պարթևաց՝ զի մտեալ էին ընդ այն 'ի Կիլիկիա, սաստկապէս հարեալ խորտակեցին զնոսա, և ոչ թողին 'ի նոցանէ ապրեալ ։

Այդ եղև յաղթութիւն և հասանել Կիկերոնի 'ի կողմանս Անտիոքայ, և խրախուսեաց Կասիոս զօրօք իւրովք 'ի պահ ամրոյն ․ և լուծան լքան Պարթևք, և մեկնեցան անտի յուսահատեալ, և եկեալ պաշարեցին զԱնտիգոնիա՝ որ ոչ ինչ կարի հեռի էր ։ Այլ քանզի ոչ հրմուտք էին նուաճելոյ զքաղաքս, անտի ևս ընդունայն դարձան ։ Եւ ոչ ինչ են զարմանք ․ քանզի Պարթևաց հզօր զօրութիւն յայրուձին էր, և 'ի ճակատու պատերազմի կորովագոյնք էին՝ 'ի բնէ ունելով միտումն յայն ։ Բայց Կասիոսի գիտացեալ զդէմ փախստի նոցա, դարան եդ 'ի ճանապարհին, յոր և անկան ․ և պարտեաց զնոսա 'ի սպառ, և սպան 'ի նոցանէ զբազումս, և զզօրավար նոցա զՕրշակ ․ իսկ ապրեալքն դարձան ընդ Եփրատ ։

Իբրև մեկնեցան Պարթևք, և Անտիոք ազատեցաւ ․ դարձաւ Կիկերոն 'ի վերայ բնակչաց Ամանոյ լերին, որք բնակէին ընդ Ասորիս և ընդ Կիլիկիա՝ ազատք 'ի նոցանէ, և տային ընդ երկաքանչիւրսն պատերազմ, և նեղէին յանդադար ասպատակաց նոցա ։ Եւ նուաճեաց Կիկերոն զլեռնորդեայսն, և առեալ կործանեաց զ՟մ ամուրս նոցա 'ի հիմանց ։ Անտի խաղաց 'ի վերայ վայրենեաց խժից՝ որ ազատ կիլիկեցիքն կոչէին, և խրոխտացեալ պարծէին՝ որպէս ոչ ուրեք ծառայեալ 'ի թագաւորաց, որ շուրջ բանակեալ էին ․ կալաւ զ՟մ քաղաքս նոցա, և եդ նոցա օրէնս հաճոյականս սահմանակից ազգացն՝ յորս նոքա անդադար հինիւ ասպատակէին ։

Զայսոսիկ ինքն Կիկերոն մանրապատում առնէ բազում ուրեք 'ի թուղթս իւր ․ յորոց մանաւանդ երկուքն անթերի օրինակ են զօրավարաց 'ի գրել զիրս մարտի առ թագաւորն կամ առ հազարապետ նորա ․ զի յոյժ պարզ և յստակ և ճշգրիտ զ՟մ ինչ գրէ, որպէս կարևոր պարտն է յայսպիսի պատմութիւնս ։ Զմին, որ է երկրորդն հնգետասաներորդ գրոց ընտանեկան թղթոց նորա, գրէ առ

ծերակոյտն և առ աւագանին և առ ժողովուրդ Հռոմայ․ ԱՄԱՀ. ՆԲ
իսկ զերկրորդն առ Կատոն, և է ընտիր 'ի Թուղթս նորա․ յորում ա̃մ հնարիւք արուեստին ճարտարախօսութե̃ն ողոքէ զայրն զգօն, զի յոյժ ցանկայր յաղթանակել 'ի ձեռն նորա վասն արշաւանին։ Եւ որպէս Պլուտարքոս պատմէ, 'ի դառնալ նորա 'ի Հռոմ՝ ետ նմա ծերակոյտն զփառս յաղթանակի․ այլ վասն մօտալուտ պատերազմին Կեսարու ընդ Պոմպէի՝ հրաժարեաց յայնմանէ Կիկերոն, դժպատեհ համարեալ զտօն ցնծութեանն 'ի ժամանակի՝ յորում աղէտք ծանունք 'ի վերայ կային աշխարհին։ Այս հրաժեշտ 'ի փառաց՝ վասն աղմկին և խռովութե̃ն դառնաղէտ մարտին համազգեացն՝ ցուցանէ զհայրենասիրութի̃ մեծ Կիկերոնի և զնախանձ բարւոյ աշխարհին․ որք առաւել յաճախեն նմա փառս քան զյաղթանակն։

Պլուտար. 'ի Կիկ. 870.

Յայնմ քաղաքական մարտին Կեսարու ընդ Պոմպէի, և 'ի յաջորդսն, մերթ 'ի մի կողմն ձեռն տային Պարթևք և մերթ 'ի միւս կողմն, և սակաւ ասպատակէին յԱսորիս և 'ի Պաղեստին։ Այլ ոչ անկ է ինձ պատմել որ ինչ 'ի վէպս հռոմայեցւոց և Հրէից պատկանէին։

Արդ այժմ վախճան առնելով համառօտ պատմութե̃ն իւրայն Պարթևաց, ասասցուք զմահ Պակորայ և Որովդի հօր նորա։ Վենտիդիոս զօրավար հռոմայեցւոց առ իշխանութբ̃ Անտոնիոսի յաւուրս եռապետութե̃ն՝ զօրավիգն եղև 'ի կանգնել զփառս ազգին։ Որ նա մի 'ի սինլքոր զօրացն, և վաստակօք քաջութե̃ 'ի դռեհիկ բախտէն ամբարձաւ 'ի բարձր աւագութիւն։ 'Ի պատերազմին ընդդէմ դաշնաւորաց հռոմայեցւոց, որք պահանջէին զքաղաքակցութե̃ ունել կարգ, Ստրաբոն հայր մեծին Պոմպէի գերի կալաւ զնա 'ի տիս մանկութե̃ հանդերձ մարբն՝ յԱսկողոն մայրաքաղաք պիկենացւոց, և ած 'ի Հռոմ, և ձաղեաց զնա առաջի յաղթական կառացն։ Ապա պաշտպանեալ 'ի Կեսարէ՝ որում 'ի պատերազմին Գաղղիոյ զինուորեալ էր և անցեալ ընդ ա̃մ կարգս զինուորութե̃՝ եհաս նա 'ի կուսակալուի̃, և բդեաշխ եկաց։ Սա միայն նախ քան զՏրայիանոս յաղթեալ Պարթևաց, յաղթանակեաց փառօք՝ որ երբեմն 'ի յաղթանակի ձաղեցաւն։

Վէլլ. Պատէրկ. Բ. ԿԵ։
Վաղ. Մաքս. Զ. Թ։
Ա. Գէլլ. ԺԵ. Դ։

Արդ սա, որպէս ասացաք, զօրավիգն եղև 'ի բառնալ զնախատինս՝ զոր ընկալան հռոմայեցիք 'ի Կարէս։ Զի կրկին մեծամեծ յաղթուե̃ք զվրէժ պարտութե̃ն Կրասոսի և զօրաց նորա խնդրեալ յահաւոր թշնամւոյն, ապա եր-

ԱՄԱՌ. ՆՔ

րորդ անգամ մեծ եւս յաղթութ՟ ելից զվրէժխնդրութ՟ն, որպէս զօդեմք աւասիկ ։

3965. 39
Յովս. պատմ. հին. ժդ. իէ. Պլուտ. յԱնտոն. 931 ։ Ապպիան. 'ի Պարթ. 156 ։ Դիոն. կաս. խթ. 403 ։ Յուստինէն խբ. ։

Քանզի Վենտիդեայ կասկածեալ, զի մի գուցէ Պարթեւք՝ որ կազմ եւ պատրաստ էին՝ կանխեալ անցցեն ընդ Եփրատ, մինչ չեւ համախմբեալ իւր զզօրսն 'ի ձմերոցաց, խորհեցաւ զհնարս զայս ։ Եւ 'ի բանակին մի 'ի թագաւորաց փոքրկանց աշխարհին արեւելից, նիզակակից հռոմայեցւոց՝ այլ բարեկամ Պարթեւաց, ընդ որս բանագնաց լինէր 'ի ծածուկ, եւ ցուցանէր նոցա զա՟մ խորհուրդս հռոմայեցւոց՝ որոց իրազեկ լինէր ։ Զայն իբրեւ գիտաց Վենտիդիոս, խորհեցաւ 'ի ձեռն նենգաւորին ձըգել զթշնամիս յորոգայթ ։ Նմին իրի ընտանեբար խօսէր ընդ նմա սակս զգործոց պատերազմին. եւ որպէս առ յոյժ մտերմութ՟ն մերկացեալ նմա զխորհուրդս իւր, ասէ. Խիթամ յոյժ, զի լսեմ եթէ խորհին Պարթեւք անցանել ընդ Եփրատ, ոչ եւս առ Զեւգմաւ՝ այլ խոնարհագոյն յոյժ. զի յանցանել նոցա առ Զեւգմաւ, անտի եւ այսր լերինք են, եւ հեծելազօրն՝ յորում է զօրութիւն նոցա մեծ՝ ոչ յոյժ վնասակար լիցի մեզ. այլ թէ ընդ վայր կոյս գետոյն անցանիցեն, համարձակ 'ի հարթարդակ դաշտին ասպարիզեն, եւ ոչ կարասցուք կալ առաջի նոցա ։ Իսկ լուեալն զայն ա՟մ մտերմութ՟ բանս ազդարար վաղվաղակի Պարթեւաց, որ՟պ յառաջագոյն խորհէրն Վենտիդիոս. եւ ըստ ա՟մ խորհրդոց նորա յաջողեցաւ ։ Քանզի Պակոր փոխանակ անցանելոյ առ Զեւգմաւ՝ կալաւ զմիւս ճանապարհն, եւ յապաղեաց յոյժ ընդ երկայն ճանապարհն եւ 'ի պատրաստութ՟ի անցիցն ընդ այն. եւ Վենտիդիոս զաւուրս քառասուն պարապ կալեալ, կոչեաց 'ի հրեստամանէ զՍիլոն հանդերձ լեգէոնօքն՝ որ էին յայն կոյս լերին Տաւրոսի 'ի ձմերոցս. եւ հզօրացեալ եհար զՊարթեւս՝ 'ի մտանել նոցա յԱսորիս ։

Զի իբրեւ տեսին Պարթեւք՝ զի ոչ ոք ընդդիմանայր նոցա յանցս գետոյն, եւ ոչ յետ անցիցն, համարեցան առ ահի եւ վատութ՟ե չիշխել նոցա. եւ դիմեցին մինչեւ 'ի բանակետղ նոցա 'ի լեառն դժուարամատոյց, 'ի մտի եդեալ՝ վաղվաղակի անխափան տիրել նմա ։ Այլ ոչ յաջողեաց խորհուրդ նոցա. զի հռոմայեցիք յարձակեալ 'ի բանակէն՝ անկան 'ի վերայ նոցա, եւ սաստկապէս վարեալ հալածեցին զնոսա ընդ զառ 'ի վայրն. եւ օգնականութ՟ տեղւոյն եւ մեկնակազէն հետեւակացն՝ որ 'ի բարձանց նետաձիգ լինէին 'ի Պարթեւս՝ քակտեցին զճակատ նոցա, թէպէտ եւ նոքա ուժգին զդէմ ունէին ։ Եւ եղեւ կոտորած խիստ . և Պակոր անկաւ 'ի պատերազմին , և ա՟մ զօրք նորա չոքան 'ի փախուստ , դիմեալք 'ի կամուրջն՝ դառնալ յաշխարհն իւրեանց : Բայց հռոմայեցիք ժամանեալ հարին զբազումս 'ի նոցանէ , և սակաւք զերծան առ Անտիոքոս արքայ Կոմագենաց : Յաւուր յորում եղև պատերազմն 'ի Կարես յառաջ քան զամս չորեքտասան , 'ի նմին աւուր մեծաւ յաղթութ՟ վրէժխնդիր եղեն հռոմայեցիք պարտութեանն Կրասոսի , որպէս վկայեն վիպագիրք : ԱՄԱՇ.Ն.Ք

Որոդէս[1] առ յոյժ տրտմութե՟ն ընդ պարտութ՟ պատերազմին և ընդ մահ որդւոյ իւրոյ՝ թուէր խելայեղեալ . և զաւուրս բազումս կայր անխօս և անսուաղ : Ապա 'ի զիջանել տրտմութե՟ն և յարձակել լեզուին , ստէպ որդեկոչ լինէր , զՊակոր ցնորէր տեսանել , և կարդայր զնա յանուանէ , և թուէր լինել ընդ նմա , և խօսէր առ նա , և լսէր նմա . և մերթ յիշատակաւ մահու նորա դառն արտասուէր : Եւ ոչ տարապարտ . զի այն հարուած ճեպեցոյց զօրհաս պարթևական պետութե՟ն քան զայլ ա՟մ հարուածս : Մահ արքայորդւոյն ոչ ինչ թեթև էր քան զբեկումն բանակին . զի սա քան զա՟մ արշակունիս արժանաւորն էր աթոռոյ վասն արդարութե՟ն և ողորմութե՟ և արիութե՟ , և ամենայնիւ՝ որ անկ են մեծի արքայի : Սակաւ աւուրս կացեալ յԱսորիս՝ այնպէս սիրելի եղև բնակչաց աշխարհին , զի որպէս զթագաւոր իւրեանց սիրէին զնա :

Բայց Որոդ սթափեալ յանհնարին տրտմութ՟ն 'ի 3967 . 37
սուգ սիրելւոյ որդւոյ իւրոյ՝ վարանէր թէ զո՞ յայլոց որդւոցն կացուսցէ փոխանակ իւր , զի էին նմա որդիք երեսուն յայլ և այլ կանանց , և իւրաքանչիւր զիւրն թախանձանօք յառաջ մատուցանէր . իսկ նա ոչ զօր իշխէր մերժել , տկարացեալ 'ի ծերութ՟ն և 'ի տրտմութ՟ : Այլ զընտրութե՟ն կարգ պահեալ՝ զանդրանիկն իւր զՓՐԱԱՏ, զչարախտագոյն յորդւոց իւրոց կացոյց 'ի տեղի իւր : Եւ Փրաատ ընդ ժառանգել զթագաւորութ՟ն՝ սպան զա՟մ եղբարս իւր զորդիս արքայի , զծնեալս 'ի դստերէ Անտիոքոսի Եւսեբեայ արքային Ասորւոց . զի էր նա աղ-

---

[1] Որոդ ընդ անակնկալ մահ որդւոյն և ընդ բեկումն բանակին տրտմեալ ցնորէր , և զաւուրս բազումս անխօս և անսուաղ կայր և անմռունչ՝ մինչև թուել համր : Ապա յետ բազում աւուրց 'ի փարատել տրտմութ՟ն և 'ի լուծանել լեզուին՝ զՊակոր կոչէր , զնա թուէր տեսանել և զձայն նո՟ր լսել , և ընդ նմա խօսակից լինել և կենակից . և մերթ ընդ մահ նորա արտասուէր : Յուստին :

նուաճանագոյն քան զմայր իւր, և որդիք նորա քաջք քան զինքն։ Այլ և զհայր իւր, որ դեռ ևս կենդանի էր, և զի ոչ լուռ եղև ընդ չարիսն, սպան օտարախորթ որդին. ապա և յա՟մ եղբարս իւր մխեաց զձեռն, և յորդին իսկ ոչ խնայեաց՝ թէ գուցէ փոխանակ իւր թագաւորեցուսցեն զնա։ Նա ինքն Փրաատ, անողոր՟մն յընտանիս իւր, արար քաղցրութ՟ի և մարդասիրութ՟ի յոյժ ընդ Հիւրկանեայ արքային Հրեից։

ՊՐԱԿ ԵՐՐՈՐԴ

Համառօտութ՟ պատմութ՟ թագաւորացն Կապադովկեցւոց, 'ի սկզբանէ թագաւորութ՟են մինչև 'ի կալ նորա մարզ աշխարհին Հռոմայ։

'Ի դէպ համարիմք այսր 'ի մի վայր ժողովել զա՟մ իւրս թագաւորացն կապադովկացւոց, զորոց 'ի պատեհ պատեհ տեղիս ասացաք՝ առանց պատմելոյ հաւաստեաւ զսկիզբն և զկարգ նոցա։

Ստրաբ. ժբ. 503. Կապադովկիա էր աշխարհ մեծ 'ի փոքրն Ասիա. և նախ պարսիկք տիրէին անդ, բաժանեալ զաշխարհն 'ի կրկին նախարարութ՟իս կամ 'ի մարզս։ 'Ի նոցանէ առին զայն մակեդոնացիք, առ որովք երկոքին մարզքն կային 'ի կրկին թագաւորութ՟իս. մին ընդ Տաւրոս լեառն տարածանէր, և կոչէր բունն կամ մեծն Կապադովկիա. միւսն ընդ Պոնտոս, և կոչէր փոքրն Կապադովկիա կամ Կապադովկիա Պոնտոսի։ Իսկ ապա խառնեցան կային երկոքին 'ի մի թագաւորութ՟ի։

Կապադովկացւոց առաջին թագաւոր եկաց Արիարաթ, որպէս վկայէ Ստրաբոն, այլ զժամանակ թագաւորութ՟ նորա լռէ. երևի ձգեալ նորա զթագաւորութ՟ին ընդ Փիլիպպեայ հօր մեծին Աղեքսանդրի՝ որ թագաւորէրն 'ի Մակեդոնիա, և ընդ Օվքոսի՝ որ 'ի Պարսս իշխէր։ Իսկ ժողովլին ա՟մ ամք թագաւորութ՟ Կապադովկիոյ՝ երեք հարիւր եօթանասուն և վեց, մինչև եկաց մարզ աշխարհին Հռոմոց առ Տիբերիւ։

'Ի սկզբանն կային անդ թագաւորք բազումք համանուանեալք Արիարաթ. և յետ նոցա կոչեցեալք Արիոբարզան, մինչև յազգ երրորդ. և յետ ամենեցուն թագաւորեաց Արքեղայոս։ Դիոդոր սիկիլիացի, և յառաջ քան զԱրիարաթ թագաւորս բազումս, ասէ կացեալ 'ի

ԱՄ ԱՌ.Ն.Ք

Կապադովկիա. այլ զի չէք ինչ զնոցանէ պատմեալ, զնոսա 'ի բաց թողլի է։

3644։ 360 ԱՐԻԱՐԱԹ Ա. Թագաւորեաց ընդ եղբօր իւրում Հողոփեռնեայ, զոր յոյժ սիրէր։ Եւ միաբանեալ ընդ Պարսս յարձակեալ նոցա յԵգիպտոս, արար անուն քաջութ՟ե. և մեծարեալ յՈվքոսէ, ի փառօք դարձաւ յաշխարհ իւր։

3668. 336 Պլուտ. յԵւմն. 548. Դիոդ. ԺԸ. 599. ԱՐԻԱՐԱԹ Բ. որդի առաջնոյն, եկեաց խաղաղութ՟բ յաւուրս պատերազմաց մեծին Աղեքսանդրի. զի նա ցանկացեալ հասանել 'ի վերայ Դարեհի՝ ոչ դանդաղեաց նուաճել զԿապադովկիա, բայց միայն հարկս հնազանդութ՟ե կալաւ 'ի նմանէ։ Այլ յետ մահուն Աղեքսանդրի՝ 'ի բաժանել զօրավարաց նորա զգաւառս ինքնակալութ՟ե՟ն, Կապադովկիա անկաւ բաժին Եւմենեայ. և առեալ ած զնա Պերդիկկաս զօրու ծանու, կացուցանել զնա 'ի ժառանգութ՟ե՟ն։ Եւ Արիարաթ զդէմ կալաւ մեծաւ պատերազմաւ. էին նմա երեք բիւրք հետևակաց, և այրուձի բազում յոյժ. և ետուն պատերազմ, և պարտեցաւ Արիարաթ, և 'ի գերութ՟ե վարեցաւ։ Եւ հրաման ետ Պերդիկկաս կախել զնա և զաւագ սպայսն ընդ փայտէ, և ժառանգեցոյց Եւմենեայ զաշխարհն։

3689. 315 ԱՐԻԱՐԱԹ Գ. 'ի մեռանիլ հօր իւրոյ փախուցեալ ամրացաւ 'ի Հայս. և իբրև լուաւ եթէ մեռան Պերդիկկաս և Եւմենէս, և զի Անտիգոնոս և Սելեւկոս 'ի պատերազմունս պատաղեալ էին, եմուտ 'ի Կապադովկիա զօրօք Արդուարդայ արքային Հայոց, հալածեաց յաշխարհէն զմակեդոնացիս՝ պարտեալ զԱմինտաս զօրավար նոցա, և կալաւ անդրէն զաթոռ հարցն իւրոց։

3720. 284 Զնա պայազատեաց ԱՐԻԱՄՆԷՍ անդրանիկն նորա, և նիզակակից եղև արքային Ասորւոց Անտիոքոսի Թէոսի, զՍտրատոնիկէ՝ զդուստր նորա անդրանիկ՝ ածեալ որդւոյ իւրում կնութ՟ե. և աթոռակից իւր արար զնա առ յոյժ սիրոյն։

ԱՐԻԱՐԱԹ Դ. յետ մեռանելոյ հօր իւրոյ՝ միահեծան կալաւ զաշխարհն. և 'ի մեռանելն ժառանգեցոյց զայն որդւոյ իւրում Արիարաթայ մանկան։

3814. 190 ԱՐԻԱՐԱԹ Ե. զԱնտիոքիս զդուստր մեծին Անտիոքոսի էած կնութ՟ե. որ խորամանկութ՟բ ծածկեալ զամլութ՟ին, խաբեաց զայրն՝ կեղծեալ իւր որդիս երկու, և կոչեցեալ զնոսա Արիարաթ և Հողոփեռն[1]։ Ապա յետ սա-

---

[1] Այսպէս կոչէ զնա Պողիբիոս, իսկ Դիոդոր Սիկիլիացին՝ Որոփեռն։

ԱՄԱՀ. Ն. Ք. կաւ ժամանակի բացաւ արգանդ նորա, և ծնաւ 'ի նմանէ դստերք երկու, և ուստր մի՝ որ կոչեցաւ Միհրդատ։ Նա խոստովան եղև առն իւրում զնենգութի՟ն, և զերեցն 'ի սուտ որդւոցն ետ յղել 'ի Հռոմ սպասաւորօք՝ կալ անդ, և զկրտսերն 'ի Յոնիա։ Իսկ Միհրդատ՝ հարազատ որդի նորա՝ կոչեցաւ Արիարաթ, և դաստիարակէր յունական հրահանգօք։

'Ի պատերազմին Անտիոքոսի արքային Ասորւոց ընդ Հռոմայեցիս՝ Արիարաթ ձեռնտու եղև աներոյ իւրում զօրօք։ Իսկ 'ի պարտել Անտիոքոսի, հրեշտակս արար 'ի Հռոմ յաղերս՝ պատճառելով առաջի ծերակուտին ըզհարկն ձեռնտու լինելոյ աներոյ իւրում ընդդէմ նոցա։ Նա ներեաց նմա ծերակոյտն, տոյժս արկեալ նմա երկերիւր քանքար։ Այլ ապա և զկէս սակի տուգանացն եթող նմա՝ աղաչանօք Եւմենեայ արքային պերգամացւոց, որ զդուստր Արիարաթայ ած կնուե՟։

Ապա միաբանեաց Արիարաթ ընդ Եւմենեայ, որում զդուստր իւր տուեալ էր կնութե՟, ընդդէմ Փառնակայ արքային պոնտացւոց։ Հռոմայեցիք՝ որ էին յայնժամ իրաւարարք թագաւորացն արևելից՝ հրեշտակս արարին համոզել 'ի մէջ նոցա, և արհամարհեաց զնոսա Փառնակ. այլ ապա յետ երկուց ամաց հարկեցաւ ծանր պայմանօք առնել խաղաղութի՟ ընդ Եւմենեայ և ընդ Արիարաթայ։ Նա էր Արիարաթայ որդի մի համանուն, որ վասն կարի հայրասիրութե՟ն Փիլոպատոր կոչեցաւ։ Նա հայրն ոչ ինչ նուազ սիրէր զնա, և առ ցոյց սիրոյն կամէր ժառանգեցուցանել նմա զարքայութի՟ն՝ մինչդեռ կենդանին էր։ Իսկ ծնողասէր հայրամեծար որդին, որպէս արժան իսկ է սիրել և մեծարել զհայր այնպիսի, հրաժարեաց 'ի պատուոյն՝ որ յաչս մարդկան պերճ թուի, այլ խանդակաթ սրտի նորա էր խոց կարեվէր, և ասէ ցհայրն. Ոչ թագաւորեցից առ կենդանութե՟ կենսատուին իմոյ։ Արդ այս պատկառանք և մեծախոհութի՟ և ազնուականութի՟ և անկեղծ հայրասիրութի՟ յոյժ առաւել զարմանալի են ըստ այնմ ժամանակի՝ յորում փառամոլութի՟ անխնայ յա՟մ ոք մխէր զձեռն, կոխելով համարձակ զկարգս բնութե՟ և կրօնից զկարի իսկ սուրբս։

3842 . 162 Դիտ. 'ի փաղ. լա. 895. ԱՐԻԱՐԱԹ Զ. Փիլոպատորն թագաւորեաց 'ի մեռանել հօր իւրոյ, և բազում ուղղութե՟ կալաւ զաթոռն։ Ընդ գահակալել իւրում հրեշտակս արար 'ի Հռոմ, նորոգել զհայրենի ուխտ նիզակակցութե՟ն. և հաճոյ թուեցաւ հռոմայեցւոց։ Նա և իմաստասիրութե՟ մտադիր

էր. որով Կապադովկիա, որ անծանօթն էր Յունաց, ԱՄԱՇ. Ն.Ք
իմաստնոց բազմաց եղև ասպնջական: Նա զԴեմետրեայ արքային Ասորւոց զքոյրն մերժեալ, ոչ էառ կնուե̃՝ թէ գուցէ ոչ հաճոյ թուեսցի հռոմայեցւոց: Եւ Դեմետր զչարեալ ընդ այն՝ եգիտ փաղփաղակի յաջողուի̃ վրէժխնդրութե̃, և զօրացոյց զձեռն Հողոփեռնեայ, որ իբր եղբայր Արիարաթայ՝ բռնակալեաց զաթոռն, հալածեալ զԱրիարաթ 'ի թագաւորուէ̃: Եւ սպան նա զբազումս, և զբազմաց մեծամեծաց զինչս յարքունիս գրաւեաց, և զմեհեանն Արամազդայ՝ որ 'ի վաղնջուց ժամանակաց պաշտէրն, և ոչ ուրուք ձեռն արկեալ էր 'ի գանձս նորա, կողոպտեաց: Եւ չորեքարիւր քանքար 'ի Պրիենա քաղաք 'ի Յոնիա յաւանդի եդ, առ ահի ապստամբութե̃ ժողովրդեանն՝ զորոց յիրաւի կասկածէր վասն անգթուե̃ցն: Արիարաթ անկաւ 'ի Հռոմ խնդրել զօգնուի̃. առաքեաց և Հողոփեռն հրեշտակս անդր: Իսկ ծերակոյտն ըստ խորագէտ քաղաքավարուե̃ն, որպէս սովորն էր, հրամայեաց բաժանել 'ի նոսա զթագաւորութի̃ն: Արդ և հզօր ևս օգնականուի̃ ետ նմա Ատտա- 3845. 159
ղոս արքայ պերգամացւոց, անդէն 'ի սկզբան թագաւորութե̃ն անուանի լեալ՝ զթշուառ թագաւորն յաթոռ հարցն դարձուցանելով: Արիարաթ առ 'ի խնդրել ըզվրէժ յափշտակութե̃ն Հողոփեռնեայ, պահանջեաց 'ի պրիենացւոց զչորեքարիւր քանքարսն՝ որ կայր առ նոսա յաւանդի: Նոքա չառին յանձն տալ՝ վասն սրբուե̃ աւանդիցն, զի ոչ էր օրէն հանել զաւանդն՝ մինչև կենդանի էր աւանդատուն: Բայց Արիարաթ ոչ ունկն մատոյց աղերսական յանդիմանուե̃ նոցա, այլ հարեալ անողորմ զերկիր նոցա ապականեաց. և ոչ մեծաւ տուժիւքն հաւանեցան դրժել աւանդատուին՝ հաւատարիմք կացեալ 'ի սպառ:

Իսկ Հողոփեռն մեկնեալ յԱնտիոք, միաբանեաց զան- Յողոմպ. ՃԾԵ. Ա:
տիոքացիս՝ դաւել զԴեմետր, և թագաւորել փոխանակ նորա: Յայտնեցաւ դաւաճանուի̃ն, և Հողոփեռն արկաւ 'ի բանտ: Եւ կամէր Դեմետր սպանանել զնա, այլ խորհեցաւ 'ի ձեռն նորա նուաճել զԿապադովկիա, և ընկեցեալ յաթոռոյ զԱրիարաթ՝ սպանանել զնա: Բայց թագաւորք Եգիպտոսի և Պերգամայ կանխեալ դաւակից լեալ արքային Կապադովկիոյ, թագաւորեցուցին փոխանակ Դեմետրի զԱղեքսանդր զԲաղաս:

Արիարաթ միաբանեալ ընդ հռոմայեցիս ընդդէմ 3876. 128
Արիստոնիկեայ, որ բռնակալէր 'ի Պերգամս, անկաւ Յողոմպ. ՃԿԳ. Ա:

ԱՄԱՇ. Ն.Ք 'ի պատերազմին. և եթող որդիս վեց, որ ծնան նմա 'ի Լաւոդիկեայ: Հռոմայեցիք փոխանակ օգնականութեան նորին՝ յաւելին տալ որդւոց նորա և զԼիկայոնիա և զԿիլիկիա: Բայց մինչ դեռ արքայորդիքն մանկունք էին՝ Լաւոդիկէ վարէր զաշխարհն, և զի 'ի յարբունս լինել նոցա՝ հասանէր նմա անկանել յիշխանութենէն, 'ի նմին ամի մեռանելոյ Արիարաթայ՝ արբոյց դեղ մահու հնգեցունց որդւոցն, և մազապուր զվեցերորդն կեցուցին ազգականք նորա յանագորոյն գազանութենէ մօրն. և թագաւորեցոյց զնա ժողովուրդն, սպանեալ զորդեսպան զխուժադուժ մայրն:

Յ····.լը.=: ԱՐԻԱՐԱԹ Է. էառ կնութեան զԼաւոդիկէ քոյր Միհրդատայ Եւպատորի. և ծնան նմա որդիք երկու, Արիարաթ Ը. և Արիարաթ Թ: Իսկ ետ Միհրդատ սպանանել 3913. 91 զնա 'ի ձեռն Գորդիոսի ուրումն 'ի ժողովրդենէն. և եղև Լաւոդիկէ Նիկոմիդեայ արքային բիւթանացւոց կին, որ իսկ և իսկ եկն կալաւ զԿապադովկիա: Իսկ առաքեաց անդր Միհրդատ զօրս, և հալածեալ զպահակապանս Նիկոմիդեայ՝ թագաւորեցոյց զքեռորդի իւր զորդի Արիարաթայ, զոր ետն սպանանել դաւաճանութեամբ:

Իսկ իբրև գահակալեաց ԱՐԻԱՐԱԹ Ը. ստիպէր զնա Միհրդատ դարձուցանել զԳորդիոս յաքսորանաց, զի 'ի ձեռն նորա և զորդին խորհէր սպանանել՝ որպէս ըզհայրն: Իսկ Արիարաթ կասկածեալ վասն խնդրոյն, զօրաժողով եղև ընդդէմ Միհրդատայ: Այլ նա ոչ խիզախեալ 'ի մարտ, կոչեաց զնա 'ի խորհուրդ. և սուսեր ընդ հանդերձիւն ծածկեալ, իբրև եկին առ միմեանս՝ սպան զնա դաւաճանութեամբ յանդիման երկուց ճակատուցն. և թագաւորեցոյց փոխանակ նորա զորդի իւր ութամեայ, և զԳորդիոս ոստիկան կացոյց նմա: Կապադովկեցիք տաղտկացեալ 'ի հարստահարութենէ նոցա, ապըստամբեցին. և կոչեցին յԱսիոյ զԱրիարաթ Թ. զեղբայր ութերորդին, և թագաւորեցուցին զնա:

Իսկ իբրև թագաւորեաց ԱՐԻԱՐԱԹ Թ. ել 'ի վերայ նորա Միհրդատ պատերազմաւ. և եհար վանեաց զնա, և թագաւորեցոյց անդրէն զորդի իւր: Իսկ Արիարաթ ախտացեալ 'ի վշտացն, յետ սակաւ միոյ մեռաւ:

Նիկոմիդեայ արքային բիւթանացւոց խիթալով, թէ գուցէ Միհրդատ տիրեալ Կապադովկիոյ՝ արշաւեսցէ յաշխարհս իւր, առեալ մանուկ մի ութամեայ, և յորջորջեալ զնա Արիարաթ, խնդրեաց 'ի Հռոմայեցւոց օգ-

ԱՄԱՌ.ՆՔ

նուի՟՝ ժառանգեցուցանել նմա զհայրենի աթոռն ։ Եւ Լաւոդիկէ կին նորա չոգաւ 'ի Հռոմ 'ի հաստատութի՟ ստուե՟ն, վկայել մանկունս երիս ծնեալ յԱրիարաթայ եօթներորդէ, և զնա յետ ամենեցուն ։ Համարձակեալ և Միհրդատ ետ վկայել Գորդիոսի, զի զոր Թագաւորեցոյցն՝ էր որդի նորին իսկ Արիարաթայ, որ 'ի պատերազմին Արիստոնիկեայ անկաւ ։ Ո՛ աւուրք չարութե՟ . ո՛ անեզրական նենգութե՟ցն ։ Բայց հռոմայեցիք խելամուտ եղեն խաբէութե՟ն, և ոչ միում՟ ձեռն տուեալ, առ 'ի ցածուցանել զաղմուկն՝ հրաման ետուն Միհրդատայ 'ի բաց կալ 'ի Կապադովկիոյ, զի յայնմ հետէ կեցցեն ազատ և ինքնիշխան բնակիչք աշխարհին ։ Բայց կապադովկացիք առաքեցին 'ի Հռոմ, և ասեն. Ոչ կարեմք ազատ և անտերունչ կալ, այլ լիցի մեզ Թագաւոր ։ Ապաքէն յիրաւի է զարմանալ, զի զծառայութի՟ ընտրեցին քան զազատութի՟ . բայց են ազգք, որոց լաւ է միահեծան պետութի՟ քան զհասարակացն . զի համարձակ և անխափան ազատութե՟՝ սակաւք են որ ոչ չեղծիցեն ։ Եւ կացուցին կապադովկացիք կամ մանաւանդ ընկալան 'ի հռոմայեցւոց Թագաւոր զԱրիոբարզան, որ մինչև ցերրորդ ազգ Թագաւորեաց ։

ԱՐԻՈԲԱՐԶԱՆ Ա. Թագաւորեալ՝ ոչ յերկարեաց խաղաղութե՟ յաթոռ իւր ։ Քանզի Միհրդատ և Բագու՝ զօրավարք Տիգրանայ՝ հալածեցին զնա յաշխարհէն, և Թագաւորեցուցին զԱրիարաթ որդի Միհրդատայ ։ Բայց հռոմայեցիք վերստին կացուցին զԱրիոբարզան. և դարձեալ յետ սակաւ ժամանակի հալածեաց զնա Միհրդատ՝ զօրս բազումս արձակեալ 'ի Կապադովկիա, և Թագաւորեցոյց անդրէն զորդի իւր ։ Ապա Սիղղա 'ի բազում ճակատս յաղթեալ Միհրդատայ, պահանջեաց 'ի նմանէ զԿապադովկիա ։ Յետ ոչ բազում ժամանակի Տիգրան արքայ Հայոց գրգռեալ 'ի Միհրդատայ՝ եկն կալաւ զաշխարհն, և խաղացոյց երեսուն բիւր գերի, և ետ նոցա երկիր բնակութե՟ 'ի Հայս, և զբազումս 'ի նոցանէ բնակեցոյց 'ի Տիգրանակերտ քաղաք ։ Արիոբարզան նախ քան զարշաւանս մարտին փախուցեալ 'ի Հռոմ, ապա յետ պարտելոյ Պոմպէի 'ի սպառ զՄիհրդատ, դարձաւ յաթոռն .

3915 . 89
Յուստ. լը. գ։
Պլուտարք. 'ի
Սիղ։

5938 . 66

ԱՐԻՈԲԱՐԶԱՆ Բ. ժառանգեալ զաշխարհն, զոր Պոմպէի ընդարձակեալ էր յոյժ՝ 'ի դարձուցանել զհայր նորա յաթոռն, ոչ յերկարեաց յիշխանութե՟ն ։ Զի 'ի դաւ Կիկերոնի կուսակալութե՟ 'ի Կիլիկիա՝ սպանեալ էր նա, ԱՄ ԱՇ. Ն.Ք և Թագաւորէր յայնժամ 'ի Կապադովկիա

3953 . 51 ԱՐԻՈԲԱՐԶԱՆ Գ. Թոռն առաջնոյն ։ Կիկերոնի 'ի մեկնելն 'ի Հռոմայ պատուէր ետ ծերակոյտն՝ օգնել նմա և պաշտպանել ամ՟ խնամով, զի սիրելի էին ծերակուտին և ժողովրդեան Հռոմայ կեանք նորա . և ոչ ա՛յլ ումեք 'ի Թագաւորաց զայս պարծանս ետուն ։ Կիկերոն զպատուէր հրամանին ելից . զի 'ի հասանել նորա 'ի Կիլիկիա՝ 'ի վտանգի կայր Արիոբարզան սպանանելոյ որպէս զհայրն . քանզի դաւ գործեալ էր ընդդէմ նորա՝ Թագաւորեցուցանել զԱրիարաթ եղբայր նորա ։ Բայց Արիարաթ ազդ արար Կիկերոնի, զի ինքն ոչ էր ընդ խորհուրդս դաւաճանացն՝ Թէպէտ և ստէպ հրապուրեալ 'ի նոցանէ, և հրաժարէր և չկամէր բնաւ Թագաւորել մինչդեռ եղբայրն կենդանի էր ։ Իսկ որպէս Թուի, ոչ գո՛յր Արիոբարզանայ որդի ։ Կիկերոն սաստիւ իշխանութեան և համբաւոյն փարատեաց զմօտալուտ վտանգն 'ի Թագաւորէն մեծաւ յաջողութ͞բ . և պահեաց զիշխանութ͞ի և զկեանս նորա հաւատարմութ͞բ առանց զօշաքաղութ͞ե, անհրապոյր յա͞մ կաշառոց և յողոքանաց [1] ։ Իսկ առաւել 'ի քրմապետէն Կոմանայ հասանէր վտանգ Թագաւորին ։ Բայց Կոմանա կրկին քաղաքք մեծամեծք էին, մին 'ի Կապադովկիա, միւսն 'ի Պոնտոս . երկոքին ևս նուիրեալ Բելլոնայ դիցն, և նոյն պաշտամունք էին նոցա . և մին ըստ միւսումն օրինակի էր շինեալ, պոնտացւոցն ըստ Կապադովկեայն ։ Իսկ մեհենին Բելլոնայ էին նուիրեալ անդք բազումք, յորս բազմութ͞ի մարդկան վաստակէին հրամանաւ քրմապետին ։ Իսկ էր քրմապետն յետ արքայի, հզօր և երևելի յա͞մ Թագաւորութ͞են . և օրէնք էին՝ յարքունի տանէ կալ քրմապետաց, և մինչև ցկեանս վարել զիշխանութ͞ի ։ Ստրաբոն զԹիւ համարոյ նուիրելոցն 'ի ծառայութ͞ի մեհենին Կոմանայ ասէ լեալ յաւուրս իւր աւելի քան զվեց հազար . և նոքօք էր հզօր քրմապետն ։ Նմին իրի որ առ Արիոբարզանաւ քրմապետէրն՝ կարող էր դրդել [2] պատերազմ մեծ և

Կիկ. Թուղթ. ընտան. Ժ. Գ: առ. Ատտիկ. Ե. Է:

Ստրաբ. ժբ. 535. 557:

---

[1] Իսկ կեայ Արիոբարզան, և սուղ ինչ Թագաւորէ խրատու և իշխանութ͞բ իմով . զի 'ի դարանողաց նորա ոչ միայն անկաշառ, այլ և անմատոյց լեալ, զԹագաւորն և զԹագաւորութ͞ի նորա պահեցի ։ Կիկ. առ Ատտիկ. Ե. Է:

[2] Մինչ պատերազմ մեծ 'ի վերայ կայր կապադովկացւոց, եԹէ զէն առնոյր քուրմն՝ որպէս կասկածէին ամենեքեան, զի էր նա առոյգ հասակաւ և կազմ այրուձիով և հետևակազօրօք և գանձիւք, և ամենեքումբք՝ որք խռովասէրքն էին, 'ի բաց հանի զնա յաշխարհէն, և զԹագաւորն անխռով և անզէն՝ ամրացեալ ա͞մ արքունական զօրութ͞բ և փառօք՝ դար-

բաղմավտանգ, և աղմուկ բազում յարուցանել 'ի վերայ նորա, եթէ զինուք պահ ունէր անձին, որպէս ամենեքեան կասկածէին. զի էին նմա զօրք հետևակք և հեծեալք կազմք 'ի պատերազմ, և գանձ բազում 'ի ոսկի և 'ի դարման նոցա։ Բայց Կիկերոն իմաստութբ խոհրով եհան զնա 'ի բաց, և խաղաղութբ ժառանգեցոյց Արիոբարզանայ զթագաւորութին։ ԱՄ ԱՀ·Ն·Բ

'Ի համազգի պատերազմին Կեսարու ընդ Պոմպէի՝ Արիոբարզան եած զօրս յօգնութի Պոմպէի 'ի Ճակատուն Փարսաղեայ։ Յայն սակս արդեօք արկ հարկ նմա Կեսար, կշիռ բազում արծաթոյ պահանջելով 'ի նմանէ՝ ոպ յայտ է. քանզի և աղերս արար առ նա Արիոբարզան՝ թէ չեմ ձեռնհաս 'ի հատուցումն 'ի չդադարել Փառնակայ յաւար հարկանելոյ զԿապադովկիա։ Եւ էր յայնժամ Կեսար յԵգիպտոս, և չու արար 'ի վերայ Փառնակայ հնազանդեցուցանել զնա։ Եւ եանց ընդ Կապադովկիա, և արար անդ ուղղութիս. որով երեւի՝ զի չէին միաբան Արիոբարզան և եղբայր նորա. և զԱրիարաթ հնազանդեցոյց 'ի սպառ եղբօր իւրում, և զկողմն մի աշխարհին Հայոց և Կիլիկեայ ետ Արիոբարզանայ։ Սան այսուիկ յետ ամաց կասկածեցին դաւաճանք Կեսարու, զի թագաւորն կապադովկացւոց հակառակ կացցէ նոցա. և թէպէտ ոչ յայտ յանդիմանութբ թշնամի եղև նոցա, այլ հրաժարեաց 'ի միաբանութէ. և այն խէթ եղև մտաց նոցա, և ոչ խնայեաց 'ի նա Կասիոս. այլ յարձակեալ 'ի վերայ նորա, ձերբակալ արար զնա և ետ սպանանել։

Կես. քաղաք. ճառք. Գ։ Հիրտ. պատ. Աղեք։

Դիոն. ԽԲ. 183։

3962. 42

ԱՐԻԱՐԱԹ Ժ. 'ի մեռանել Արիոբարզանայ եղբօր իւրոյ թագաւորեաց 'ի վերայ կապադովկացւոց։ Բայց Սիսինա անդրանիկն Գղափիրայ կնոջ Արքելայոսի քրմապետին Բելլոնայ, որ 'ի Կոմանա կապադովկացւոց, ոսոխ եկաց նմա։ Եւ էր Արքելայոս թոռն Արքելայոսի կապադովկեցւոյ, որ 'ի Միհրդատայ յղեալ զօրօք 'ի յունաստան ընդդէմ Սիղլայ, և յերկրորդում Ճակատուն վտարանջեալ 'ի նմանէ՝ առ հռոմայեցիսն հատուածեցաւ, որպէս 'ի յաջորդ գիրսդ պատմեսցուք։ Սա եթող որդի համանուն զԱրքելայոս, որ զԲերենիկէ ըդդշխոյն եգիպտացւոց կին արար, և յետ վեց ամաց 'ի Ճակատու պատերազմի անկաւ։ Սա 'ի Պոմպէէ ընկալեալ զպերապանծ փառս քրմապետութե Կոմանայ կապա- 3962. 42

Ստրաբ. ԺԲ. 556։ Դիոն. ԼԹ. 116։

ձուցի յաթոռ իւր։ Թղթ. ընդ. ԺՆ. Գ։

ԱՄ ԱՇ. Ն.Ք դովկացւոց, ժառանգեցոյց որդւոյ իւրում Արքեղայոսի. որ ընդ չքնաղագեղին ամուսնաւորեալ Գղափիրայ, ծնաւ 'ի նմանէ ուստերս երկու զՍիսինա եւ զԱրքեղայոս։
3963 . 41 Եւ Սիսինա երէցն ամբարձ զձեռն իւր ընդդէմ Արիարաթայ՝ թագաւորել 'ի Կապադովկիա. եւ Մարկոս Անտոնիոս իրաւարար կացեալ՝ զՍիսինա արդարացոյց։ Այլ զՍիսինայ ոչ ինչ պատմի յետ այնորիկ. եւ թագաւորեաց անդրէն Արիարաթ 'ի Կապադովկիա։
Ապպ. քաղաք. մարտ. Ե. 675։
3968 . 36 Յետ հինգ կամ վեց ամաց՝ Անտոնիոս մերժեալ զնա 'ի թագաւորութենէ, կացոյց փոխանակ նորա զԱրքեղայոս զկրտսեր որդին Գղափիրայ։

3973 . 31 ԱՐՔԵՂԱՅՈՍ զօրացաւ յոյժ. եւ փոխանակ բարեացն՝ զոր ընկալաւ յԱնտոնիոսէ, եած նմա զօր բազում յակտիական պատերազմին. եւ դէպք 'ի բարի յաջողեցին նմա, զի ոչ եղեւ ցասումն Օգոստոսի 'ի վերայ նորա, եւ կալաւ անկորուստ զԿապադովկիա, որ ոչ այլ ումեք 'ի թագաւորաց շնորհեցաւ։

3984 . 20 Եւ 'ի թագաւորեցուցանել զՏիգրան 'ի Հայս՝ օգնեաց Տիբերի, եւ ընկալաւ յՕգոստեայ զփոքրն Հայս եւ զԿիլիկիոյ մասն։ Եւ Տիբեր պատսպարան լինէր նմա առաջի Օգոստեայ. եւ մանաւանդ յորժամ ամբաստան եղեն զնմանէ ժողովուրդն, ինքնին պատասխանի տուեալ արդարացոյց զնա։ Եւ բնակէր Արքեղայոս յԵլեւս կղզի մերձ 'ի ծովեզերս Կիլիկեայ, եւ ած կնութեան զՊիթոդորիս զայրին Պողեմոնի արքային պոնտացւոց. եւ յաւել այնու յիշխանութիւն մեծ. զի որդիք Պողեմոնի դեռ եւս տղայք էին, եւ հարկ էր նմա վարել զաշխարհն ընդ մօր նոցա։ Եւ կալաւ նա խաղաղութեամբ բազմաւ եւ երկայնաւուրբք զթագաւորութիւն, այլ վերջին ամք նորա ցաւագինք եղեն 'ի չարեաց վրէժխնդրութենէն Տիբերի։ Քանզի սա չարակնեալ՝ զի մեծանային քան զինքն Կայիոս եւ Լուկիոս որդիք Ագրիպպայ որդւոյ Օգոստեայ, որ յորդեգիրս զնոսա առեալ էր, առ 'ի չտալ նոցա կասկած, եւ զի տրտմութեամբք[1] տեսանէր զփառս նոցա, խնդրեաց եւ եառ հրաման մեկնել գնալ 'ի Հռոդոս, իբր թէ 'ի պատճառս հանգստեան եւ կատարեալ առողջութեան։ Բայց համարեցաւ նա աքսորեալ, եւ արհամարհէր՝ որպէս թագաւորին յաչաց ելեալ, եւ ոչ ոք իշխէր բարեկամութիւն

Յովս. պատմ. Նախն. ԺԶ. Է։
Սուետոն. 'ի Տիբ. Ը։
Դիոն. ԾԷ. 614։ Նոյն. 662։
Ստրաբ. ԺԲ. 671։
Վէլլ. Պատերկ. Բ. ՂԹ։

---

[1] Զի մի պայծառութիւն իւր զնորանշոյլ փայլումն մանկանցն մթացուսցէ, հրաժարեաց յաներոյ իւրմէ եւ 'ի հօրուէն՝ պատճառանօք հանգստեան 'ի հանապազորդ աշխատութեանցն։ Պատերկ. Բ. 999։

առնել ընդ նմա[1] ։ Մինչ դեռ էր նա 'ի Հռոդոս, Արքեղայոս արքայ, որ ոչ ինչ կարի հեռի էր՝ բնակեալ յԱղեաս կղզի[2], ոչ յիշեաց զմեծամեծ բարիսն՝ զոր ընկալաւ 'ի նմանէ, և ոչ մեծարեաց զնա ։ Իբր ոչ առ հպարտութե՟ և առ ամբարտաւանութե՟, ասէ Տակիտոս, այլ խրատեալ 'ի մտերիմ բարեկամաց Օգոստեայ, որք վտանգ համարէին բարեկամութի՟ առնել յայնժամ ընդ Տիբերի ։ Իսկ իբրև պատանին Կայիոս Կեսար կուսակալ արևելից առաքեցաւ յՕգոստեայ 'ի Հայս՝ ցածուցանել զաղմուկս աշխարհին, Արքեղայոս որպէս զժառանգ ինքնակալութե՟ն մեծարեաց զնա ա՟մ փառօք, և յաւել քան զայս 'ի սպաս նորա ։ Բայց վրիպեցաւ 'ի խորհուրդս իւր, որպէս ստէպ պատահէ քաղաքավարաց՝ վասն հանդերձելոցն անգիտութե՟ ։ Իմաստնագոյն ևս գործէր Արքեղայոս, երկաքանչիւրոցն ևս՝ որոց մարթէր ամբառնալ յինքնակալութի՟ն՝ ընդ միտ մտանել, նմանեալ Պոմպէի[3] Ատտիկեայ, որ յա՟մ հերձուածս Հռոմայ՝ առաջնորդաց երկաքանչիւր կողմանցն սիրելի էր ։ Տիբերի ոխացեալ վասն տարապարտ արհամարհութե՟ն քան զոսոխն, և մանաւանդ վասն ապաշնորհ ապերախտութե՟ն Արքեղայոսի, վրէժխնդիր եղև թշնամանացն՝ ընդ հասանել յիշխանութի՟ն ։ Կոչեաց զԱրքեղայոս 'ի Հռոմ, որպէս խռովարար աշխարհին կապադովկացւոց. և Լիւիա գրեաց առ նա և եցոյց զցասումն Տիբերի, և քաջալերէր զնա գալ խնդրել և գտանել զթողութի՟ ։ Ոչ գիտաց Արքեղայոս զորոգայթն՝ որով հնարէին հանել զնա յաշխարհէն. և կամ թէ գիտաց, այլ ոչ իշխեաց չերթալ 'ի կոչն[4] ։ Չու արար 'ի Հռոմ, և անարգեալ 'ի Տիբերեայ՝

ԱՄ ԱՇ․ Ն․ Ք

4002 . 2

4020 . 17
Դիոն. ԾԷ. 614 ։
Տակիտ. տարեգր. Բ. ԽԲ ։

---

[1] Արքեղայոս արքայ զամս յիսուն 'ի Կապադովկիա իշխէր՝ ատեցեալ 'ի Տիբերեայ, զի 'ի գալ նորա 'ի Հռոդոս՝ չարար մեծարանս նմա. ոչ առ հպարտութե՟՝ այլ 'ի մտերիմ բարեկամացն Օգոստեայ խրատեալ, որոց կեղակարծ թուէր բարեկամութի՟ Տիբերի, մինչ Կայիոս Կեսար պայծառանայր, և երթայր կուսակալութե՟ յարևելս ։ Տակիտ. տարեգ. Բ. ԽԲ ։

[2] Եղէա հեռի էր 'ի Հռոդոսէ հինգ ժամ ձեւօ [illegible], ու ինչ առաւել ։ Ստրաբ. ԺԴ. 651 ։

[3] Եւ այս յայտ է հանճարեղ ընտրողաց՝ թէ քանի իմաստութե՟ պէտք իցեն վ՟ սիրելի և բարեկամ լինելոյ այնոցիկ, որոց ոչ միայն նախանձ բարձրագունե՟՝ այլ և այնքան ատելութի՟ էր ընդ միմեանս, որպէս Անտոնիոսի ընդ Կեսարու, զի երկաքանչիւր ցանկային տիրել՝ ոչ Հռոմայ և եթ, այլ և տիեզերաց ։ Կ. Նեպ. յԱտտիկ. Ժ ։

[4] Այլ նա ոչ գիտաց զնենգութի՟ն. կամ թէ գիտաց, այլ երկուցեալ 'ի զօրութե՟՝ փութացաւ 'ի Հռոմ. և խոտիւ յիշխանէն ընկալեալ, և վաղվաղակի կոչեցեալ յատեան ծերակուտին, ոչ վ՟ զրպարտութեցն՝ այլ 'ի բազում նեղութե՟ն և 'ի ծերութե՟ նուաղեալ, և զի ար-

յետ աւուրց ածաւ յատեան ։ Համարէր զառանցեալ 'ի ծերուէ̃, ասէ Դիոն, այլ էր նա առողջ մտօք, և պատճառէր զյիմարութի̃ 'ի հնարս փրկութե̃ ։ Այլ թէպէտ ծերակոյտն ոչ դատապարտեաց զնա 'ի մահ, այլ ինքնին 'ի ծերուէ̃ և յոտնառութէ̃, և 'ի նախատանացն՝ որ դըժոխմբեր էն թագաւորի՝ վաղ մեռաւ, թագաւորեալ զամս իբր յիսուն ։ Այլ յետ վախճանի նորա, Կապադովկիա մարզ եկաց աշխարհին Հոռոմոց․ և էր յայնժամ հզօր, և այնչափ եկամուտք էին նմա 'ի ժամանակի մահուան Արքեղայոսի, զի 'ի ժառանգել զայն Տիբերի՝ խորհեցաւ զկէս հարկին թողացուցանել ժողովրդեան․ և 'ի կապադովկացիս խնայեալ, նուազեցոյց 'ի հարկացն՝ զոր տային Արքեղայոսի ։

Ստրաբ. ժբ. 537: Կապադովկիոյ թագաւորանիստ քաղաք էր Մաժակ, առ ստորոտով Արգեայ լերին․ և վարէին կապադովկացիք ՚Խարոնդայ օրինօքն[1] ։ Այլ էր Մաժակ կառուցեալ առ Մեղաս գետով, որ երթեալ խառնի յԵփրատ ։ Միումն 'ի թագաւորաց կապադովկացւոց, զոր Ստրաբոն Արիարաթ կոչէ, այլ զժամանակ թագաւորութե̃ նորա ոչ նշանակէ, խից արկ 'ի բերան գետոյն, և յողողանել դաշտաց շուրջանակի՝ հրաման ետ կղզեակս խիտ առ խիտ գործել հանդոյն Կիւկլադայցն․ և մանկաբար զբօսնոյր անդ ։ Ապա պատառեալ գետոյն զթումբսն անջրպետս, դարձեալ ամփոփեցան ջուրք 'ի յատակ իւրեանց․ և յորդեալ 'ի նոցանէ Եփրատ, ոճիրս անհնարինս գործեաց 'ի Կապադովկիա և մինչև յաշխարհն փռիւգացւոց, ուր բնակէին գաղատացիք․ որք ընդ ծանունց վնասուցն երեքարիւր քանքար տուժս պահանջեցին յարքայէն կապադովկացւոց՝ բողոքեալ առ հռոմայեցիս ։

Լինի 'ի Կապադովկիա ձի և էշ և ջորի բազում, և անտի ածէին երիվարք ինքնակալաց․ զի նոցա միայն, և ոչ բդեշխիցն օրէն էր հեծանել 'ի նոսա ։ Լինի անդ և բազ- Պօղ. փառձգ. գ. ծա.
մութի̃ ստրկաց[2], և սուտ վկայք բազումք ։ Ասի զկապադովկացւոց՝ զի 'ի տղայ տիոց մարզէին 'ի տոկ տանջանաց, մինչև խոշտանգել զմիմեանս՝ առ 'ի չզանգիտելոյ 'ի պատժոց պատուհասից սուտ վկայութե̃ցն ։ Սոքա յա-

---

ժանն իսկ դժոխըմբեր է թագաւորի՝ թող զտարապարտն, կամակար կամ օրհասիւ զկեանսն վախճանեաց ։ Տակիտ. տարեգ. բ. խբ.

[1] Խարոնդաս էկաց օրէնսդիր անուանի 'ի մեծն յունաստան, զորմէ ասացաք ։

[2] Գամրաց արքայն ճոխ ստրկօք, 'ի պախրէից չքաւոր ։
Ոհրատ. 'ի Թուղթսն. ա. զ. 39.

ւելին և քան զհելլենս, որ ծայրագոյնք էին 'ի չարիս յայս. որպէս Կիկերոն դիմառնութեամբ ասէ զնոցանէ. « Վկայեա ինձ և վկայեցից քեզ »։ Կիկ. ՚ի Փլակ. Թ-Ժ։

Ըստ հասարակաց բանից 'ի դէպ է ասել, զի ոչ ինչ քա՛ն զիմաստուն և զհանճար դժուարագիւտ էր 'ի Կապադովկիա. բայց կային և անդ մատենագիրք անուանիք, որպէս Ստրաբոն և Պաւսանիաս։ Մանաւանդ 'ի ճարտարխօսութե՛ն բնաւ վերջացեալ էին կապադովկացիք, մինչև յառակս ասել՝ թէ գտցէ ոք ագռաւ սպիտակ և կամ կրայ երագընթաց, բայց ճարտարախօս կապադովկացի ոչ երբէք[1]։ Իսկ 'ի նոցանէ զարմանալի եղեն սուրբն Բարսեղ և Գրիգոր նազիանզացի։

---

[1] Քան զագռաւ սպիտակ և կրայ թևաւոր
Անգիւտ 'ի Գամիրս է ճարտար հռետոր։

ԳԻՐՔ ՔՍԱՆ ԵՒ ՄԻ

ԱՒԱՐՏԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՍԻՐԱԿՈՒՍԱՑՒՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՆ

Զլրումն պատմութեանն Սիրակուսայ ունին տալ գիրքս այս, յերիս պրակս։ Յառաջնումն՝ զիրս երկարատեւ թագաւորութե՟ն Հերոնի. յերկրորդումն զՀերոնիմեայ թոռին նորա զկարճատեւ թագաւորութե՟ն, եւ զաղմուկս՝ որ զհետ եկին, մինչեւ պաշարեալ առաւ Սիրակուսա 'ի Մարկեղեայ. իսկ յերրորդումն՝ համառօտ եւ ճշգրիտ զվէպս Սիրակուսայ, եւ յաղագս կարգի տեսչութե՟ն, եւ բարուց սիրակուսացւոյն. եւ վասն Արքիմիդեայ։

ՊՐԱԿ ԱՌԱՋԻՆ

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Հերոնի երկրորդի սպարապետ ա՟մ զօրացն կալ 'ի Սիրակուսա, եւ յետ սակաւ միոյ թագաւորել. եւ ապա խաղաղութե՟ դնել ընդ Հռոմայեցիս 'ի սկզբան առաջնոյ կարթեգոնական պատերազմին։

ԱՄԱՇ. Ն.Ք. 3700. 304 Յառաջ. Ք.Ք.: Հերոն երկրորդ յազգէ Գեղոնի, որ թագաւորեաց երբեմն 'ի Սիրակուսա, սա սնազգի էր 'ի մօրէ. եւ Հերոկղ հայր նորա, ըստ անագորոյն բարուց ժամանակացն, յետ աւուրց ծնանելոյ նորա՝ արկ զնա 'ի բացի, զի մի՛ լիցի 'ի նախատինս ազգատոհմին։ Այլ պարք մեղուաց, եթէ հաճոյ ումեք թուեսցի լսել առասպելին Յուստինեայ, բուծին զնա զաւուրս բազումս։ Այլ պատգամ լեալ 'ի դից, զի նորանշան դէպքն հանդերձելոյ մեծութե՟ մանկանն հաւաստի գուշակ լինէին, դարձոյց զնա Հերոկղ 'ի տուն իւր եւ սնոյց ա՟մ խնամովք։

Այլ ըստ ա՟մ ակնկալութե՟ կրթեցաւ մանուկն, եւ էր բարենշան յա՟մ զինուորակիցս իւր յաջողութ՟բ 'ի հրա-

հանդս մարտի և 'ի ճակատու պատերազմի արիութ̃. զի ԱՄԱՌ·ՆԳ
և Պիւռոս մեծարեաց զնա, և պարգևս բազումս ետ նմա ։ Եւ էր ինքն գեղեցիկ տեսանելով, յաղթահասակ և կորովի[1]. ցած և համեստ բանիւք, արդար 'ի դատաստանի, և հեզ 'ի հրամայել. և ոչ ինչ 'ի պատշաճից Թագաւորի Թերի էր 'ի նմա, բայց միայն Թագն ։

Դէպ եղև սիրակուսացւոց քաղաքայնոց գրգռել ընդ 3729 · 275
զօրս. և զօրքն՝ որ շուրջ զքաղաքաւն էին՝ կացուցին իշ- Պօլիբ. ա. 8։
խանապետս զԱրտեմիդոր և զՀերոն, իշխել 'ի քաղաքի և 'ի բանակի ։ Էր յայնժամ Հերոն ամաց երեսնից, այլ զգօն և իմաստուն՝ որպէս Թագաւոր լի հասակաւ. և եմուտ փառօք իշխանութ̃ 'ի քաղաքն՝ օգնեալ 'ի բարեկամաց, և զամենեսին զհակառակորդսն և զխռովարարս յինքն յանկոյց ։ Եւ այնու իմաստութ̃ և մեծախոհութ̃ գործէր զա̃մ, զի Թէպէտ և սրտմտեալ էին սիրակուսացիք ընդ համարձակութ̃ զօրացն՝ որոց ոչ էր անկ ընտրել իշխան, սակայն միաբանեցին ընդ նոսա և հաստատեցին զնա յիշխանութ̃ն ։ Սովին նախկին գործով եցոյց Հերոն զբարձրագոյն զմտաւորութ̃ին ։ Եւ քանզի 'ի մեկնել զօրացն Սիրակուսայ՝ աղմկէր քաղաքն 'ի խռովարար և յանխաղաղասէր մարդկանէ, կարևոր համարեցաւ 'ի չու առնելն զօրօք՝ կացուցանել հաւատարիմ զոք, որ զքաղաքացիսն 'ի հնազանդութ̃ կալցի ։ Եւ ընտրեաց զԼեպտինոս, զի էին նմա կուսակիցք բազում յոյժ, և էր նա հզօր առաջի ժողովրդեան. և սերտիւ միաբանեաց զնա ընդ իւր, առեալ զդուստր նորա կնութ̃. և պատրաստեաց խնամութ̃ն անխռով խաղաղութ̃ աշխարհին 'ի հեռանալն իւրում, և 'ի չու առնել 'ի պատերազմ ։

Միւս ևս խորագիտագոյն խորհուրդ դժպատեհ՝ այլ արիական՝ խորհեցաւ յապահովութ̃ և յանդորր անկասկածելի ։ Խիթայր յոյժ զայլազգի զօրացն, զի էին խռովարարք և նենգաւորք, անհնազանդք, ապախտաւորք բարեաց օտար աշխարհին, փառամոլք արծաթասէրք և երագունք յապստամբութ̃. և որք յանդգնեցան յընտրութ̃ն՝ որ ոչ էր նոցա անկ, նոքա և յա̃մ ինչ հակառակ ինքեան ժպրհէին առ դոյզն դժկամակութ̃ ։ Քաջ գիտաց զի չկարէր իշխել նոցա, ցորչափ սերտ միաբանեալ էին ընդ միմեանս. զի եթէ զվնասապարտս 'ի նոցանէ պատժէր, միոյն պատուհասիւ այլք գրգռէին, և անհը-

---

[1] Քաղցրախօս, արդարադատ, հեզ 'ի հրամանս, և ոչ ինչ 'ի պատշաճից Թագաւորի պակասէր նմա, բայց միայն Թագն ։ Յովսեփն ։

ԱՄ ԱՇ·ՆՔ նար էր խաղաղու՟ն առնել՝ առանց բառնալոյ 'ի սպառ զգունդն խռովայոյզ, որ յանդգնու՟ք իւրով և ըմբոստու՟ք զեղծուցանէր զայլ զօրսն, և զառածեցուցանէր զնոսա յանօրէնութի՟ս ։ Վասն որոյ ձախողակի նախանձու և յանդուգն հայրենասիրութ՟ք, դրդեալ յահէ վտանգին՝ որ հասանէր նմա, պարտ վարկաւ 'ի փրկութ՟ի աշխարհին և 'ի պահ անձին՝ գալ անսովորաբար 'ի խիստ և 'ի դժնեայ անօրէնութ՟ն ընդդէմ ուղղութ՟ե իւրոյ, կարևոր համարեալ զայն ըստ իւրոց ժամանակին ։ Զոր արար 'ի պատերազմ, պատճառանօք իբր թէ զՄամերտս¹ նուաճելոյ ։ Հասին ճակատեցան առ թշնամիս, և երկգնդեաց զզօրս իւր Հերոն, և կացոյց զսիրակուսացիսն աստի և զայլազգիս անտի ։ Եւ առաջնորդելով սիրակուսայւոցն իբր 'ի յարձակումն, եթող զայլազգիսն առաջի մամերտացւոց, որք հարեալ խորտակեցին զնոսա 'ի սպառ. և դարձաւ խաղաղութ՟ք 'ի Սիրակուսա ընտիր զօրօքն ։ Եւ իբրև եբարձ զխռովարարս և զապստամբս 'ի զօրացն, ապա զօրաժողով եղև 'ի լնուլ պակասորդին, և խաղաղու՟ք յաջողեաց 'ի գործն ։ Մամերտացիք խրոխտացեալ յաղթութ՟ն՝ հորդան ետուն 'ի դաշտն. և ել ընդդէմ նոցա Հերոն սիրակուսացւովքն սպառազէն և քաջակիրթ զօրօք՝ և ետ ընդ նոսա պատերազմ 'ի Միլեայ դաշտին. և սպան զբազումս 'ի նոցանէ, և գերեաց զզօրավարս 1836 . 268 նոցա ։ Եւ իբրև դարձաւ՝ թագաւորեցուցին զնա քաղաքացիքն, և քարոզեցաւ ընդ ամ՟ ազգս նիզակակիցս ։ Այն ամ եօթներորդ էր իշխանապետութ՟ե՟ն ։

Ոչ արդարացուցանեմ զհնարսն՝ որով եհաս յիշխանութիւն. զի եթէ ինքն զայլազգի զօրականն յորդորեաց, որպէս 'ի դէպ է կասկածել, և եթէ զիջաւ ևեթ 'ի կամս նոցա, երկոքումբքն ևս դրժեաց հայրենեացն և հասարակաց իշխանութ՟ե զօրհասական հարուածն տալով նմա յուռի օրինակաւն ։ Ապաքէն հաւանութ՟ի ժողովրդեանն և նիզակակից ազգաց անագան 'ի վերայ յաւելեալ՝ ուղղեցին զանիրաւ իշխանութ՟ին, այլ հաւանութ՟ին այն չէր ազատ ։ Բայց 'ի թագաւորութ՟ի առանց ամ՟ բռնութ՟ե եհաս. և եթէ գահասիրութ՟ի գաղտ ինչ 'ի ներքս եմուտ, և զայն քաւեաց իմաստուն և հայրենասէր ուղղու՟ք ընդ ամենայն ժամանակս երկարատև թագաւորութեան իւրոյ և կենաց ։

---

[1] Սոքա գաւառաւ կամպանիացիք էին. տիրեցին 'ի Մեսսինա, հարեալ 'ի սուր զինուորեալ Ագաթոկլի վարձուք. և սպանէին զամ [illegible] քաղաքին ։

Եւ նկուն եղեալ Մամերտք պարտութեամբ մարտին՝ զոր ասացաք, կէսք 'ի կարքեդոնացիս անկան՝ տուեալ զմիջնաբերդն 'ի ձեռս նոցա, և կէսք խորհուրդ կալան թողուլ 'ի հռոմայեցիս զքաղաքն, և աղերս արարին խնդրել 'ի նոցանէ օգնութիւն: Եւ աստի շարժեալ դրդեցաւ կարքեդոնական նախկին պատերազմն՝ որպէս յիւրում տեղւոջն ասացաք: ԱՄԱՌ·ՆՔ

Կղօդիոս բդեաշխն չու արար ընդ ծով յօգնութիւն մամերտացւոց. և ոչ կարացեալ անցանել ընդ կիրճն Մեսանայ, զի ունէին զայն կարքեդոնացիք, որպէս թէ ձեռնթափ լեալ 'ի գործոյն դառնայր 'ի Հռոմ ամենայն զօրօքն՝ զորս 'ի ցամաք թափելոց էր: Եւ իբրև զօրք թշնամեաց՝ որ 'ի ծովակոյս կողմանէ պաշարեալ պահէին զՄեսանա՝ ամփոփեցան յետս անկասկած, դարձեալ անդրէն Ապպիոս էանց ընդ կիրճն անվտանգ: Փըռնտբն · 'ի Հարբ. ան. ա. Է :

Մամերտացիք յանկարծ 'ի վերայ հասեալ միջնաբերդին և սպառնալեօք հալածեալ զսպայն՝ որ անդ 'ի կարքեդոնացւոց վերակացու կայր, կոչեցին զԿղօդիոս, և բացին առաջի նորա զդրունս քաղաքին: Եւ կարքեդոնացիք եկեալ պաշարեցին զքաղաքն, ուխտ նիզակակցութեան եդեալ ընդ Հերոնի, և գումարեալ 'ի միասին ըզզօրսն: Կղօդիոս խորհուրդ կալաւ ճակատել 'ի մարտ, և նախ 'ի վերայ սիրակուսացւոյն յարձակեցաւ: Ետուն պատերազմ խիստ. և Հերոն քաջութեամբ մեծաւ պատերազմէր, այլ ոչ կարաց կալ առաջի զօրութեան հռոմայեցւոց, և 'ի պարտութենէ մատնեալ դառնայր 'ի Սիրակուսա: Նոյնպէս և զկարքեդոնացիսն պարտեալ Կղօդեայ՝ տիրեաց բանակին, և մինչև 'ի Սիրակուսա հասեալ՝ խորհէր պաշարել զայն:

Եհաս լուր յաղթութեանց Ապպեայ 'ի Հռոմ, և լցաւ քաղաքն ցնծութեամբ. և զայն ժամ պատեհ համարեցան հռոմայեցիք ելանել անդրէն 'ի պատերազմ: Վասն որոյ Օտակիղիոս և Վաղերիոս, նորոգ բդեաշխք կացեալ, 3741 · 263
պատուէր կալան անցանել 'ի Սիկիլիա. և ընդ հասանել նոցա անդր, յոլովք 'ի քաղաքաց կարքեդոնացւոց և սիրակուսացւոց նուաճեցան 'ի նոսա: Հերոն հայեցեալ 'ի վհատութիւն սիկիլիացւոց, և 'ի բազմութիւն և 'ի զօրութիւն հռոմէական լեգէոնացն, գուշակեաց զելս պատերազմին անդուստ 'ի սկզբանէ: Գիտէր իսկ զի հաւատարիմ և հաստատուն ևս էր բարեկամութիւն հռոմայեցւոց, և զի կարքեդոնացիք դեռ ևս 'ի նոյն յառաջինն խորհուրդս կային՝ նուաճել զՍիկիլիա լրիւ իւրով. և եթէ զՄե-

սանա առնուլին, ոչ ևս կարէր կալ առաջի նենգաւոր և ահաւոր սահմանակցացն ։ Եւ ոչ ա՛յլ պատսպարան եգիտ թագաւորութեանն, բայց գրգռել զկարքեդոնացիս ընդ Հռոմ. զի ոչ երկմտէր՝ թէ ընդ համազօր պետութիւն յերկարաձգեսցի աննուէր պատերազմ, և ցորչափ նոքա ընդ միմեանս մարտիցեն՝ ոչ ինչ վտանգ կացցէ նմա ։ Եւ արար հրեշտակս առ բդեաշխսն խօսել 'ի խաղաղութի, և դնել ընդ նոսա ուխտ նիզակակցութեան. և նոքա ոչ հրաժարեցին ։ Քանզի երկնչէին՝ թէ գուցէ կարքեդոնացիք, որ տիրէին ընդ ծով, կալեալ զկիրճն՝ արգելցեն զհամբարս զօրացն. և յիրաւի կասկածէին զայն, զի որք յառաջագոյն անցին ընդ կիրճն՝ կրեցին սով սաստիկ ։ Եւ զի 'ի դաշնաւորել ընդ Հերոնի՝ անկասկածք լինէին, նմին իրի յանձն առին զայն վաղվաղակի, պայմանս արարեալ՝ դարձուցանել Հերոնի ձրի առանց փրկանաց զգերին հռոմայեցւոց, և 'ի վերայ այնորիկ տալ հարիւր քանքար արծաթոյ ։

Եւ ոչ ևս եղև պատերազմ յերկրին Հերոնի. բայց միայն յղէր ըստ ժամանակի օգնութի հռոմայեցւոց ։ Եւ թագաւորէր որպէս ոչ ինչ խնդրելով, և ոչ իմիք ցանկալով, բայց սիրելի և մեծարոյ լինել ժողովրդեանն ։ Ոչ ոք 'ի թագաւորաց գովելի գտաւ քան զնա, և ոչ ոք յարգասիս իմաստութեն և խոհականութե յերկար քան զնա վայելեաց ։ Ընդ ամ ժամանակս թագաւորութեան նորա՝ առաւել քան զամս յիսուն՝ հուր բորբոքէր շուրջ զնովաւ յանագորոյն պատերազմաց երկուց հզօրագոյն ազգաց. իսկ նա իմաստութեամբ և բարեբախտութեամբ 'ի զնին ևեթ կայր. և 'ի շաչիւն զինուցն, որովք սասանէին գաւառք շուրջանակի, ինքն միայն ժողովրդեամբն 'ի բազում խաղաղութե կայր ։

Գ-ՆէՓ · 18 ։ Յառաջնումն կարքեդոնական մարտին բազում իրօք, մանաւանդ 'ի պաշարմանն Ակրագանդայ՝ որ նախաշաւիղ եղև մարտին, 'ի միտ առին հռոմայեցիք՝ զի զօրավիգն մեծ էր նոցա Հերոն, 'ի հայթայթել նորա 'ի կարևոր վտանգին սովելոյ զօրաց նոցա առատ պարէնս ։

Յառաջնմէ կարքեդոնական պատերազմէն մինչև ցերկրորդն, զամս քսան և հինգ, 'ի խաղաղութե և յանդորրու եկաց Հերոն, և ոչ ինչ իրք պատերազմի զնմանէ պատմին ։ Բայց միայն Պողիբիոս պատմէ, զի 'ի լիբէական դժնդակ մարտին վարձկանաց՝ կարքեդոնացիք 'ի նեղ անկեալ՝ կարդացին առ նիզակակիցս, և մանաւանդ առ Հերոն. և նա յանձն առեալ՝ օգնական եղև նոցա, զի լաւ էր նմա առ ամրութի իշխանութենն՝ թէ կարքեդոնացիք յաղթէին. զի այլազգիք յառաջագոյն 'ի բազում ճակատս յաղթողք լեալ՝ եթէ պարտէին զնոսա 'ի սպառ, այնուհետեւ ոչ ինչ արգել լինէր խորհրդոց նոցա, եւ մինչեւ 'ի Սիկիլիա զյաղթական զէնսն ածէին: Թերեւս եւ 'ի մեծազօր զօրուէ հռոմայեցւոց խորհէր պատըսպարել խորագէտ քաղաքավարութեամբն. զի 'ի պարտել կարքեդոնացւոց յապստամբեաց, միահեծան ունէին զաշխարհ հռոմայեցիք:

Հերոն ընդ բազում ամս խաղաղութենն 'ի մի ինչ ուշ ունէր պատշաճ պարապումն թագաւորի, 'ի բարեկենդանութի ժողովրդեանն, եւ 'ի լնուլ զտոյժս բռնակալութեանն Ագաթոկլի՝ որ եկաց սակաւ ամօք յառաջ քան զնա, եւ զառտնին հերձուածոցն՝ որ զհետ եկին: Սիրակուսացիք յողդողդք էին եւ յեղամիտք, եւ ստէպ զառածանէին 'ի յանդգնութիւն եւ յըմբոստութի. այլ 'ի բնէ հեզք եւ իրաւասէրք էին, եւ հլուք արդար եւ ուղիղ իշխանութե. եւ իմաստուն եւ հեզ իշխեցողացն, որպիսի ոք Տիմոլէոնն էր, մտադիւր հնազանդէին. եւ ակն ածէին սաստից օրինաց եւ դատաւորաց:

Հերոն 'ի սկզբանէ իշխանութեն 'ի յանձն առնուլ ըզգահերիցութին՝ խորշէր յանմիտ քաղաքավարութէ բռնաւորաց, որք թշնամիս համարեալ զքաղաքացիսն՝ նկուն առնէին, եւ աշխ նուաճէին զնոսա, եւ յայլազգի թիկնապահսն յուսային: Իսկ ինքն զքաղաքացիսն զինուորեալ՝ փութով մեծաւ հրահանգէր 'ի պատերազմ, նախամեծար արարեալ զնոսա:

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Սան խաղաղաւէր թագաւորութեն Հերոնի, եւ ջանք նորա 'ի բարգաւաճել զերկրագործութե, եւ յօգուտ արկանել զճարտարութէ Արքիմեդեայ աշխարհին իւրոյ, եւ տալ կազմել նմա մեքենայս բազումս ամրապահս. եւ վախճան նորա լի աւուրբք, եւ սուգ ժողովրդեանն:

Հերոն իշխանապետ կացեալ, հաւատարմագոյն արդեամբք քան բանիւք՝ զի չկամէր զրկել զոք, եւ ոչ գերել զազատութի ժողովրդեանն: Ջանայր սիրելի լինել եւ ոչ ահաւոր, զի համարէր զանձն հայր եւ պաշտպան ժողովրդեանն քան տէր: Յառաջ քան զթագաւորել նորա երկպառակեալ Սիրակուսայ, եւ գրգռեալ քաղաքայնոցն ընդ զօրս ոխերիմ մարտիւ՝ գործէին անբաւ չարիս . վասն որոյ փութացաւ հետախաղաղ առնել զայն, և արմատախիլ առնել զհերձուածս և զհակառակութիւնս 'ի սրտէ ամենեցուն ։ Եւ արար իսկ արդեօք՝ զի զամս աւելի քան զկիսուն թագաւորեաց յանխռով խաղաղուե՟, և ոչ մի ինչ աղմուկ կամ ապստամբութիւն յարեաւ 'ի Սիրակուսա ։

Այսմ խաղաղութեան պատսպարան մեծ եղև փոյթ խնամոց նորա 'ի զբաղեցուցանել զժողովուրդն, և 'ի հալածել յաշխարհէն զդատարկութի՟ և զծուլութի՟ զծնողս ա՟մ ախտից և զպատճառս խռովութե՟ց բազմաց, և 'ի յարդել և յաւելուլ զարգասաւորութիւն երկրին՝ պատուեալ զերկրագործութի՟ որպէս անսխալ օճան բարեկենդանութե՟ ժողովրդեանն և լիութե՟ աշխարհին ։ Քանզի երկրագործութի՟ ոչ միայն զբազմաց ծուլից և զդատարկակեցաց ձեռն 'ի գործ արկեալ՝ զբաղեցուցանէ զնոսա, այլ և բերոցն վաճառաշահութ՟ զմեծութի՟ս շրջակայ ազգաց ժողովէ 'ի բնիկ աշխարհն, և 'ի տունս իւրաքանչիւր զեղու զայն տարևորական տուրևառիկ շահիւքն, որ արդար արդասիքն են վաստակոց և ճարտարութեան նոցա ։ Նա մի 'ի կարևոր խնամոց իմաստուն առաջնորդութե՟, զոր յասելոյ երբէք ոչ դադարեմ, և կարևորագոյն մասն քաջ և հանճարեղ քաղաքավարութեան . այլ աւա՜ղ, զի արհամարհեալ է ։

Պլին. ԺԸ. Գ ։ Բայց Հերոն քաջ մտադիր եղև այնմ, ոչ ինչ դժպատեհ համարեալ արքունական փառացն՝ ուսանել անձամբ և կրթել յօրէնս երկրագործութե՟ . մինչև գիրս իսկ երկասիրեալ աւանդեաց յաղագս մշակութե՟, այլ եղո՜ւկ, զի կորեան ։ Քանզի աւագ աչօք հայէր յայն՝ որպէս 'ի գանձ մեծ աշխարհին և յաղբիւր անսպառ եկամտից թագաւորի . և համարէր զայն գործ կարևոր, արժանի ամենայն փութոյ և խնամոց ։ Եւ վասն օրինաւոր վաճառաշահութեան, և յապահովութի՟ և 'ի բարեկեցութի՟ մշակաց, զի էին մեծ մասն աշխարհին երկրագործք, և առ 'ի հասս արքունի՝ որ յաճախագոյն յեկամտից անտի գային, և զի մի՛ զօշաքաղութի՟ 'ի ներքս խառնեսցի, և առ 'ի խից արկանել զրկանաց և հարստահարութե՟ց՝ որոց մարթ էր յարամիտ 'ի ներքս անկանել, եդ կարգս հանճարեղս ուղղութե՟ և արդարութե՟, շահաւէտս թագաւորի և ժողովրդեան, որ ապա բովանդակեցան 'ի մատեան օրինաց աշխարհին, և որպէս օրէնք սուրբք պահէին առ նոսա, ոչ միայն առ թագաւորութ՟ նորա, այլ և յետ նորա մինչէ 'ի սպառ ։ Եւ յորժամ հռոմայեցիք նուաճեցին ըզքաղաքն և զպետութի սիրակուսացւոց, ոչ ինչ 'ի հարկսն յաւելին, այլ զօրէնսն Հերոնի հռոմայեցին պինդ ունել, զի 'ի փոփոխել պետութեն՝ սփոփեսցին նախնի օրէնօքն ընիկ Թագաւորին, որոյ յիշատակն սիրելի էր նոցա և օրէնքն պաշտելի [1] ։

Մի 'ի յաճախագոյն եկամտից Սիկիլիոյ՝ էր ցորեան, որպէս ասացաք, զի տասանորդէին զայն արքայի. նմին իրի երկրագործութի և քաջ մշակել և բարգաւաճել երկրին՝ օգուտ էր Թագաւորին. զի ըստ առատութեան բերոց յաւելուին եկամուտք ։ Կապալառուք՝ որ զտասանորդս պտղոցն ժողովէին, և ոչ առնուին արծաթ, կոչէին տասանորդողք ։ Հերոն 'ի սահմանել զկարգս զայսոսիկ՝ խորհեցաւ և յօգուտ իւր, որպէս անկ է իմաստուն և քաջատեսուչ Թագաւորի ։ Քանզի գիտէր՝ թէ հնարին մշակք խաբել զիրաւունս Թագաւորին, զի թուի նոցա դժոխըմբեր և կարի իսկ արդարն և չափաւոր հարկ, և խափանեաց զվտանգն խիստ և արդար օրինօք, սպառնացեալ խիստ պատուհաս՝ որ ցհատ մի ցորենոյ իշխեսցէ խաբել կամ նենգել կապալառուաց, եթէ յորայն իցէ ցորեանն, եթէ 'ի կալն, եթէ 'ի շտեմարան և թէ 'ի բեռնակրի [2] ։

Զայսոսիկ Կիկերոն մանրապատում առնէ. և յաւելու՝ զի Հերոն զնոյն զգուշութի արար 'ի խափանել և ըզզօշաքաղութի կապալառուացն, զի մի աւելի քան զտասանորդն պահանջեսցեն յերկրագործաց ։ Երեւի յօրինադրութիսն Հերոնի արգելեալ՝ մի ինչ պատճառանօք փոխել զմշակս 'ի բնակութէ իւրեանց, և վասն այնորիկ Կիկերոն կշտամբէ զՎերրէս, զի աշխատ առնէր զնոսա ստէպ տարժամանաւոր ուղևորութեամբ ։ Քանզի խիստ և դժնդակ է զհողագործս աղքատս ձգել յանդաստանաց 'ի քաղաքս, յարօրոյ 'ի բեմբ, յանապատական աշխատութէ 'ի դատաստան [3] ։ Զի թէպէտ և նոցա էին

---

[1] 'Ի սակ տասանորդաց զհերոնեան օրէնսն սահմանեցին ունել, զի մտագիւր հարկեսցեն. 'ի փոխել իշխանութեն պահեալ ոչ միայն զօրէնս՝ այլ և զանուն Թագաւորին որ յոյժ սիրելի է սիկիլիացւոցն ։ ԿԻԿ. 'Ի ՎԷՐ. Գ. ԳԼ. ԺԸ ։

[2] Հերոնեան օրէնք ամ խստիւ ընդ տասանորդողօք արկանէին զերկրագործն, զի մի 'ի հունձս, մի 'ի կալորայն, մի 'ի շտեմարանս, և մի 'ի կրել զցորեանն խաբեսցէ ցհատ մի. և զի որ զտասանորդողն պատրեսցէ, լուծցէ ծանր պատուհաս ։ ԿԻԿ. 'Ի ՎԷՐՐ. Գ. ԳԼ. Ը ։

[3] Անգթութի և անիրաւութի է ածել զոք յագարակէ յատեան, 'ի մաճակալութէ 'ի գահ, և 'ի գեղջէից իւրացն՝ յանսովոր վէճս և 'ի դատ ։

ԱՄ ԱՌ. Ն.Ք իրաւունք, այլ ոչ գոյր յոյս արդարանալոյ նոցա և կապալառուացն պարտաւորելոյ ։

Արդ զի՞նչ քան զայս գովելի կայցէ Թագաւորի. մարթ էր Հերոնի արիւն պատերազմունս հարկանել, յաղթութիւնս կանգնել, և աշխարհակալութ՟բ ընդարձակել զսահմանս տէրութ՟են իւրոյ, և հանդոյն դիւցազանց փառաւորել. այլ քանի՞ հարկս ծանունս ոչ պարտ էր յայնժամ արկանել 'ի վերայ ժողովրդեան, քանի՞ անդս ամայի առնել 'ի մշակաց, ո՞րչափ նախճիրս արեանց գործել. և զի՞նչ յայնցանէ օգուտ էր աշխարհին ։ Այլ Հերոն ծանեաւ զանկապուտ փառս Թագաւորի, և հրաժարեաց 'ի փառաց, լաւ համարեալ առաջնորդել իմաստու՟բ ժողովրդեանն, և երանելի առնել զնա ։ Փոխանակ յափշտակելոյ զինուք զայլոյ երկիր, զիւրն ընդարձակէր գոգցես արդասաւորու՟բ բարուք մշակու՟ն, և բազմացուցանէր զժողովուրդ իւր՝ զամուր պարիսպ աշխարհին, և զճշմարիտ մեծու՟ին՝ որոց չիք վրէպ ցորչափ երկրագործք զարդիւնս արդար վաստակոցն շահին ։

3786 . 218 Յերկրորդում կարքեդոնական մարտին եցոյց Հերոն
Լիւ. իա. ծ ։ զհաւաստիս բարեկամութ՟են ընդ հռոմայեցիս ։ Զի 'ի շրջուկ համբաւոյ գալստեան Աննիբաղայ յԻտալիա, չուարար ամենակազմ նաւատորմաւ առ Սեմպրոնիոս բդեաշխ 'ի Մեսանա, օգնական լինել նմա, և յալիս ծերու՟են նախանձել զնոյն նախանձ Հռոմայ, որպէս յառաջնում կարքեդոնական մարտին՝ մինչ պատանին էր ։ Այլ յանձն էառ պատրաստել 'ի գանձուց իւրոց ցորեան և զգեստ լեգէոնացն հռոմայեցւոց և նիզակակից զօրաց ։ Բայց Սեմպրոնիոս իբրև լուաւ զաւետիս յաղթու՟են հռոմայեցւոց, զի հարին նաւամարտիւ զկարքեդոնացիս, շնորհս կալեալ զնմանէ՝ հրաժարեաց 'ի պարգևացն ։

Լիւ. իբ. լէ ։ Յայտնագոյն ևս եցոյց Հերոն զանդրժելի հաւատարմու՟ի իւր, որ էր նորա բնիկ տիպ նկարագրին, 'ի պարտել հռոմայեցւոց առ Տրասիմենեաւ լճին ։ Զի յարկածս երեքկին պարտու՟ե նոցա յԱննիբաղայ բազմավէտ և անագորոյն մարտիւ՝ յղեաց նաւատորմաւ համբարս 'ի նաւահանգիստն Ոստեայ ։ Այլ հրեշտակք նորա յանդիման լեալ ծերակուտին ասեն. Հերոն ընդ վիշտ մեծի վտանգիդ յոյժ տրտմեալ, թէպէտ և հռոմէականդ մեծու՟ի առաւել զարմանալի է յարկածս քան 'ի յաջողութ՟ե, յղէ ձեզ օգնու՟ի որպէս քաջ և հաւատարիմ նիզակակից, և աղաչէ ընդունել զայն 'ի հաճոյս. մանաւանդ զՅաղթութի՟ն ոսկի երեքարիւր լտեր, զոր իբր առհաւատչեայ յաջողուե՟ մարտից գրաւ և ուղերձ առաքէ, և զերեսուն բիւր գրիւ ցորենոյ և քսան բիւր գարւոյ համբարս. և եթէ պակասէ, յղեսցէ այլ ևս ուր և որչափ պիտոյ իցէ: Եւ թէպէտ ընիկ և նիզակակից եւեթ զօրս զինուորէք, բայց այլազգիս ոմանս մեկնակաղէնս տեսեալ 'ի բանակիդ, հազարս աղեղնաւորաց և պարսաւորաց յղէ 'ի Ճակատ բաղէարացւոցն և մաւրիտանացւոց զօրաց Աննիբաղայ: Եւ յաւելլին տալ խրատս պիտանիս, զի կուսակալն' որ հանդերձեալ էր գալ 'ի Սիկիլիա' անցցէ նաւատորմաւ յԱփրիկէ, և անդր իսկ յերկիր թշնամեաց ածցէ պատերազմ, զի մի ժամանեսցեն յօգնութ՟ի Աննիբաղայ:

Եւ ծերակոյտն շնորհակալութ՟ և մեծարանօք գոհացեալ զհրեշտակացն, ասէ. Հերոն արդարև թագաւոր աննախանձ, և հաւատարիմ նիզակակից է մեզ. և յօրէ յորմէ ուխտ եդ ընդ հռոմայեցիս' անլուծանելի կալաւ զբարեկամութ՟ի, ա՟մ ուրեք և յա՟մ դէպս հզօր և առատ օգնականութ՟. և ժողովուրդ Հռոմայ շնորհապարտ է երախտեաց նորա: Եւ թէպէտ 'ի պարգևացն' զոր մատուցին քաղաքք Իտալիոյ' հրաժարեաց գոհութ՟, բայց զՅաղթութե՟դ անդրի բարեգուշակ ընկալցի, և կանգնեսցէ 'ի Կապիտոլ 'ի մեհեան մեծին Դիայ յիշատակ յաւիտենական ազգաց յազգս: Եւ ցորեանն և գարին, և աղեղնաւորքն և պարսաւորք յանձնեցան բդեշխին:

Աստանօր Վալերիոս[1] ազդ առնէ զազնուական և զիմաստուն առատաձեռնութի՟ն Հերոնի, զի մեծախոհութ՟ զերկերիւր և զքսան լտերսն ոսկւոյ պարգև մատուցանէր հռոմայեցւոց, և զի Ճարտարութ՟ ընդունելի ևս առնէր զայն. ոչ դրամս ոսկիս մատուցանելով, քանզի գիտէր զկարի զգուշութ՟ի հռոմայեցւոց, այլ 'ի ձև Յաղթութե՟' զոր ոչ իշխէին մերժել վասն բարուե՟ց գուշակն գոլոյ:

Զքնա՟ղ առաքինութ՟ի. Թագաւոր բնակեալ 'ի Սիրակուսա հուպ 'ի Կարքեդոն' յորմէ յիրաւի երկնչէրն, մինչ Հռոմայ կործանումն 'ի վերայ կայր' հաւատարիմ եկաց նմա անյողդողդ, և յայտ յանդիմանութ՟ե միաբանեաց ընդ նմա, յանձն առեալ զա՟մ վտանգս՝ զոր համարձակութ՟ն յինքն ձգէր։ Խորագէտ քաղաքավարութ՟ե օրէնք էին՝ մնալ միւս ևս ճակատամարտի, և չփութալ առանց հարկի և հանդերձ անհնարին վտանգաւ 'ի յայտնել զթշնամութ՟ի։ Արդ այս ուղղութ՟ի չքնաղագիւտ, և գրեթէ անգիւտ, յոյժ զարմանալի է։

---

[1] Երեսուն բիւր գրիւ ցորենոյ, և քսան բիւր գարւոյ, և երկերիւր և քառասուն կշիռ ոսկւոյ պարգևեալ քաղաքիս, քանզի գիտէր զնախնեացն մերոց զանսիրելութ՟ի արծաթոյ, 'ի պատկեր Յաղթուե՟ ձուլեալ զայն' կրօնիւք բռնադատեաց զնոսա յընդունելութ՟. կրկնակի առատաձեռնեալ, մի' պարգևաւն, և միւս ևս' նախախնամութե՟ն զի մի անընկալ լիցի: Վաղ. Մաքս. Դ. Է:

Այլ ըստ օրինաց իսկ քաղաքավարութ՟ե, ո՞չ կարծեմ, չմարթէր լաւ ևս գործել Հերոնի։ Ապաքէն վտանգ մեծ էր Սիրակուսայ՝ 'ի նկուն լինել և 'ի տկարանալ իսկ Հռոմայեցւոց, զի վաղվաղակի նուաճէին զայն կարքեդոնացիք · քանզի հանդէպ Կարքեդոնի բնակէր, և էր քաջ յարմար յապահովութ՟ի վաճառականութ՟ե նոցա և յաներկեան ծովակալութ՟ի, և 'ի հաստատութ՟ի նոցա 'ի Սիկիլիա, և 'ի տանել նովաւ զամենայն կղզին ընդ իւրով։ Ապա ուրեմն ոչ իմաստութ՟բ գործէր 'ի թողուլն վատութ՟բ զդաշնաւորս իւր առաջի կարքեդոնացւոց 'ի պարտութ՟ի, որք բռնի զգուշութ՟ն ոչ յաւելուլին 'ի բարեկամութ՟ի։ Ապաքէն վտանգ էր միաբանել ընդ Հռոմայեցիս · այլ զի կորուստ անհրաժեշտ պատրաստէր Սիրակուսայ 'ի կործանել Հռոմայ, հարկ էր զա՟մ վտանգ յանձն առնուլ 'ի փրկել զնա կամ 'ի կործանել ընդ նմա։

Թէպէտ և ոչ զա՟մ գործս երկարատև և բարեբաստ թագաւորութե՟ն Հերոնի ունիմք գրով, այլ 'ի սակաւուցն մարթի զչափ առնուլ որպիսի ոք էրն · աւա՛ղ զի ոչ ոք մանրապատում արար զվէպս նորա։ Աշխ հարիւր քանքարոյն, և նուէրք բազումք՝ զոր յետ մեծի սասանութե՟ն Հռոդոսի և կործանման հսկայաձև պատկերին՝ մատոյց Հերոն Հռոդացւոց, են հաւաստիք պանծալիք առատութ՟ե նորա և մեծագործութե՟ն։ Իսկ ցածութ՟ն յաւել զյարգ պարգևացն · զի անդրիս երկու կանգնեաց 'ի Հռոդոս 'ի հրապարակի, մին ժողովրդեան Հռոդացւոց, և միւսն սիրակուսացւոց · և Սիրակուսայն պսակէր զմիւսն · ոչ միայն ոչ պանծացեալ 'ի վերայ առատ պարգևացն, ասէ Պողիբիոս, այլ որպէս շնորհապարտ զանձն համարեալ։ Քանզի թագաւոր բարերար անդստին 'ի բարերարութե՟ն զփոխարէնսն առատապէս ընդունի՝ խնդութ՟բ առաքինութե՟ն և փառօք։

Թէոկրիտոս 'ի վեշտասաներորդումն 'ի գեղօնիցն՝ որ յանուն Հերոնի կոչի՝ ստգտանէ իմն զնա լռելեայն, իբր թէ ագահէր 'ի վարձս տաղից երգողացն · բայց վատ մուրողութ՟ն ճահադոյն իւրում ագահութե՟ն պատկանագրէ մեղադրանս, քան Թագաւորին՝ որ առատաձեռն յամենեցունց վկայեալ գովի, որպէս 'ի վեր այսր ասացաք։

Կազմածք զարմանալի մեքենայից, որ եղեն պատսպարան մեծ Սիրակուսայ 'ի պաշարելն 'ի Հռոմայեցւոց, էին արգասիք կիրթ ախորժակաց և բազում խնամոցն Հերոնի։ Զի թէպէտ և թուէր պատաղեալ ամենևին 'ի հոգս խաղաղութե՟ և 'ի յանձանձանս աշխարհին, այլ և զպատերազմականացն ոչ ինչ թերահոգ էր. զի առ աներկեան խաղաղութի՟ աշխարհին՝ հարկ համարէր կազմ կալ 'ի պատերազմ ընդդէմ շուրջանակի ազգաց անօրինաց, որ խռովէին զաշխարհն։ Նմին իրի զամենահմուտ երկրաչափն զԱրքիմիդէս ընդ իւրև ունելով, զբարեբաղդութի՟ն յօգուտ էարկ։ Նա էր Արքիմիդէս անուանի, ոչ միայն չափականին ներհուն հմտութբ՟՝ այլ և ազնուականութբ՟ն, զի էր ազգական Հերոնի։ Նա միայն 'ի զբօսանս հանճարոյ բերկրեալ, մեկնեալ հեռացեալ յաղմկէ իրաց աշխարհին տեսչութե՟՝ տայր զանձն յուսումն գիտութե՟, որ բարձր տեսութբ՟ մտաւորական իմանալի աննիւթ ճշմարտութե՟ց զմայլեցուցեալ զմիտս բազմաց յիմաստնագունիցն՝ չներէ նոցա յայլ ինչ պարապել։ Պղուտարք. Դ Մարկեղ. 305։

Բայց զԱրքիմիդէս 'ի բարձրագոյն տեսութե՟ցն զիջոյց Հերոն 'ի մեքենականն, որ թէպէտ և ձեռօք ճարտարի, այլ 'ի հանճարոյ ուղղին յայն ձեռք։ Աստէպ յորդորէր զնա մի՛ յաննիւթս միայն և յիմանալիս վերաթևել՝ այլ և զզգալեօքս և զնիւթականօք գալ, և ակներև և իմանալի մարդկան առնել զիւրն փորձիւ. և խօսէր ընդ նմա յաճախ, և ունկնդիր լինէր նմա բազում մտադիւրութբ՟ և բերկրութբ՟։ Նա 'ի ճառել երբեմ՟ Արքիմիդեայ զհրաշից զօրութե՟ շարժման, զի որ և է զօրութի՟ շարժէ զամ՟ բեռն, զուարճացեալ ընդ հաւաստիս բանիցն, խոստանայր շարժել և զերկիրս՝ յոր բնակեմք, եթէ էր միւս այլ որպէս խորհէրն՝ առ 'ի կալ անդ։ Իսկ Թագաւորն հիացեալ զարմանայր, և զփորձ խնդրէր՝ շարժել մեծ իմն տկար զօրութբ՟։ Նա Արքիմիդեայ յանձն առեալ զպատշաճ խնդիրն, հրամայէ զմի 'ի պատերազմիկ նաւաց՝ որ էին 'ի նաւահանգստին՝ հանել 'ի ցամաք. և հանին բազում աշխատութբ՟ ամբոխ մարդկան։ Նա բարձոյց զսովորական բեռինս, և մարդիկ որչափ տանէրն. և ընկողմնեալ 'ի բացի, մեղմով անաշխատ շարժէր ձեռամբ զծայր մեքենային՝ որ բազում պարանօք և ճախարակօք կազմեալ էր, և ձգէր յինքն զնաւն սաղապաձեմիւ ընդ ցամաք որպէս ընդ ալիս։ Իսկ Թագաւորն 'ի տեսիլ հրաշալի զօրութե՟ն պաշեալ, և միոյն զփորձ առեալ հնարից արուեստին՝ ստիպէր զնա կառուցանել կազմածս ամրապահս և պարսպամարտս ։ Տեսցեն արդ որք երկբայինն, թէ բարձրագոյն գիտութի՟քս այս վայելլիցեն թագաւորի, կամ ընաւ իսկ արուեստից և գիտութե՟ց փոյթ կարևո՞րք իցեն 'ի հրահանգս արքայորդւոց ։ Եթէ Ներոն մեկուսի 'ի բանասիրական ախորժակաց կայր յանձնդիւրի 'ի զբօսանս, Արքիմիդէս անգործ մնայր յիւրում խղին, և ա՟մ չքնաղ խելամտութի՟ք նորա՝ անպիտանք աշխարհին լինէին ։ Քանի՜ գանձք իմաստութե՟ 'ի խաւարի կան և որպէս ընդ երկրաւ ծածկեալ, վասն անտես առնելոյ զնոսա իշխանաց և անպիտանս աշխարհին համարելոյ ։ Որոց եթէ 'ի մանկութե՟ առեալ էր զճաշակ արուեստից և զգիտութե՟ց փոքր 'ի շատէ, զի աւելին քան զայն ոչ է նոցա անկ, յարգէին զգիտունս անուանիս, զբօսնուին ընդ նոսա, և 'ի պատուի ունէին զնոսա, և պանծալի խնամօքն՝ լինէին պատճառք ցանկալի հնարագիտութե՟ց յօգուտ աշխարհին ։ Զայս շնորհս արար Ներոն Սիրակուսայ. և այն առանց երկբայութե՟ արգասիք էին բարւոք դաստիարակութե՟ նորա, զի ա՟մ խնամօք սնաւ 'ի մանկութե՟ ։

Որ ինչ ցայս վայր ասացաք զԱրքիմիդեայ, և մանաւանդ որ ինչ ընդ հուպ ասելոց եմք զզարմանալի կազմածոց պատերազմական մեքենայիցն՝ որովք սիրակուսացիք մարտեան 'ի պաշարել զքաղաքն, յայտ առնեն՝ զի յոյժ անիրաւին որք զբարձր և զտեսական գիտութի՟նս արհամարհեն որպէս զանգոյից և զաննիւթից իրաց ։ Ապաքէն ոչ ա՟մ տեսութի՟ք պարզ երկրաչափութե՟ և գրահաշուին պիտանիք են, այլ ո՞չ ապաքէն և անպիտանքն այն պիտանեացն բազմաց պատճառք կամ կցորդք են ։ Անդունայն թուին ցորչափ յիմանալի աշխարհն դեգերին, եթէ այսպէս պարտ իցէ ասել. այլ խառն չափաբանութի՟ն՝ որ զնիւթովք յածի, 'ի զննել զընթացս աստեղաց, 'ի քաջահմուտ նաւաստականութի՟ն, 'ի մերձեցուցանել դիտակօք զբացական տեսիլս, 'ի յաւելուլ զզօրութի՟ն շարժման, 'ի ճշգրիտ և 'ի հաւաստի հարթաչափութի՟ն, և 'ի սոցին սակս իրս, դիւրամատոյց ևս է, և ռամկին իսկ գոգցես ընտել ։ Արքիմիդեայ վաստակքն անծանօթ կային յերկար, թերևս և արհամարհեալ, ցորչափ 'ի պարզ և յանարգասաւոր տեսութի՟նս պարապէր, այլ մի՛թէ անօգո՞ւտք և անպիտա՞նք էին ։ Զի ահա 'ի տեսականաց անտի իմաստից, որ մինչև ցայնժամ 'ի խաւարի կային, ծագեցին միանգամայն պայծառ գիտութի՟ք և զարմանալի հնարագիտութիւնք, որ անդէն իսկ յայտնի և ակներև օգտիւքն եղեն 'ի հիացումն և 'ի վհատութիւն հռոմայեցւոց 'ի մարտնչել նոցա ընդ Սիրակուսայ։

Հերոն մեծախոհ և մեծագործ գտաւ յամի, և 'ի շինուած ապարանիցն և զինարանաց և մեհենաց. և կառոյց նաւս անթիւ ըստ ամենայն մեծութեան առ 'ի կրել ցորեան, յորում էր գրեթէ ամենայն ճոխութիւն կղզւոյն։ Եւ զնաւն Աթէն. Է. 206:
պատերազմիկ, մի յանուանի նաւաց վաղ ժամանակաց, ետ կառուցանել ճարտարապետութեամբ Արքիմիդեայ. և տևեաց գործն զամ մի ողջոյն, և ինքն իսկ Հերոն զօրն ցերեկ ընդ գործաւորսն կայր 'ի խրախուսել զնոսա 'ի գործ։ Եւ էին նաւուն քսան կարգք թիոց, և շինուածն անարգել, ամրացեալ շուրջանակի պղնձեօք ստուար բևեռօք՝ որոց մէն մի կշռէր աւելի քան զտասն լիտր։ Երրեակ սրահք էին 'ի նմա. խոնարհագոյնն ածէր 'ի զնիստ նաւուն ընդ աստիճանս, և միջինն 'ի բնակարանս. իսկ 'ի վերնումն էին կայեանք զօրացն։ 'Ի միջնայարկն յաջմէ և յահեկէ երեսուն սենեակք էին, և 'ի նոսա չորք չորք անկողինք վասն նաւորդաց։ Իսկ 'ի կայեանս նաւավարացն և նաւաստեաց՝ անկողինք հնգետասան, և ճաշարանք երեք, և 'ի վերջնումն՝ յառաջ կոյս նաւուն՝ խոհակերոցն։ Եւ 'ի յատակս յարկացն յերփնագոյն խըճից Իլիականն Հոմերի նկարակերտեալ էր, և ձեղունքն և պատուհանք և ամենայն ինչ հրաշակերտ և ազգի ազգի զարդուք յօրինեալ էին։

'Ի վերնայարկն էր կրթարան, և ճեմելի ըստ երկայնութեան նաւուն. և պարտէզք, և բազում ազգի ազգի տունկք՝ քաջ դասակարգեալք. և էին շուրջանակի խողովակք կապարեայք և խեցեղէնք ջրանցոյցք յոռոգումն տնկոցն։ Էին և կամարք հովանաւորք որթովք և սպիտակ բաղեղամբք, որ 'ի թակոյս մեծամեծս տնկեալ էին, և հանգոյն պարտիզացն ոռոգանէին։

Էր և Աստղկանն սենեակ երիւք անկողնովք, յատակեալ 'ի քարանց պատուականաց կղզւոյն և յակատից։ Եւ որմք և ձեղունք նոճիք էին, և պատուհանք փղոսկրեւք և անդրեօք փոքրկամբք և նկարուք զարդարեալ։ Եւ 'ի միւս այլ կողմն էր մատենադարան, և 'ի վերայ նորա յարտաքին կողմն 'ի բարձու՝ ժամացոյց արեգական։ Էին և բաղանիք երիւք անկողնովք. և անդ կաթսայք երեք պղնձիք մեծամեծք, և լոգարան անդստին 'ի միջէ պիսակ քարէ, որ տանէր երկերիւր և յիսուն մար ջրոյ։

Եւ զնաւուն էին անդրիք Ատլասայ վեց կանգնեայք՝

որք զշրթունս նաւուն բառնային, հաւասար անջրպետեալք 'ի միմեանց. և նաւն շուրջանակի նկարուք զարդարեալ էր: Այլ 'ի նմա աշտարակք ութ համեմատք մեծութեան նաւուն, երկու յառաջմն, երկու 'ի խելս համաչափք, և չորք 'ի միջին. և մահարձանք 'ի կատար աշտարակացն առ 'ի քարընկէց թշնամեաց 'ի մօտել նոցա. և 'ի մի մի յայնցանէ պահապանք կային պատանիք չորք սպառազէնք, և աղեղնաւորք երկու. և լի էին աշտարակքն քարամբք և նետիւք: 'Ի վերնայարկն տախտակամած յեզր նաւուն մարտկոց իմն ամբառնայր, և 'ի վերայ նորա քարաձիգ մեքենայ՝ կազմեալ յԱրքիմիդեայ, որով ձգէր վէմ 'ի կշիռ երեքարիւր լտեր, և նետ երկոտասան կանգնեան ասպարիզաւ 'ի բաց:

Այլ կայմք երեք էին, և թեւք նոցա երկուստեք բարձեալ բերելով վէմս և կարթս և գունտս կապարեայս՝ ձգել յայնոսիկ որ մատչիցին: Այլ էր շուրջ զնաւաւն պատսպարան երկաթի ածեալ առ 'ի խափանել զմատուցեալս. և ճանկք երկաթիք շուրջանակի կազմեալ՝ ընկենուլ մեքենայիւք 'ի նաւս թշնամեաց, և կարթել ձգել զնոսա և դիւրաւ հարկանել: Երկուստեք յեզր նաւուն կարգեալ կային պատանիք վաթսուն սպառազէնք, և առ կայմիւքն և առ քարընկէց մեքենայիւք՝ նոյնչափ: Այլ զխորայատակ ջրշեղջ նաւուն մի ոք դատարկէր գալարաձև ջրհանաւն, զոր Արքիմիդէս հանճարեաց: Արքիմեղոս քերդող աթենացի արար 'ի մեծակառոյց նաւն յայն արձանագիր, որ եհաս առ մեզ. և Հերոն ետ նմա վարձս առատ, հազար կեղթ ցորենոյ մինչև 'ի Պիրէոն 'ի նաւահանգիստն յղեալ: Տես ինձ, զի յարգ տաղից ճանաչէր յայնժամ առ սիրակուսացիս:

Բայց քանզի նաւահանգիստք Սիկիլիոյ ոչ տանէին զնաւն, և որք տանէինն իսկ՝ ոչ ապահովք էին, խորհեցաւ Հերոն պարգևել զայն Պտղոմեայ[1], և յղել յԱղեքսանդրիա: Այլ էր յայնժամ սով մեծ ցորենոյ ընդ ամ՟ Եգիպտոս. և յաւել ընդ մեծի նաւուն և այլ բազում նաւս ամբարաբերս, որք բարձեալ տանէին վեց բիւր գրիւ ցորենոյ, և ձուկն աղեալ թակոյս կճեայս մեծամեծս բիւր, և ապուխտ երկերիւր բիւր լտր. և ստուար բեռինս ազգի ազգի հանդերձանւոյ բիւրս երկերիւր, թող զպարէնս նաւորդացն և զնաւաստից: Աթենէոս զնաւս զայս հոյակապ երկարապատում արաըեալ նկարագրէ . յորմէ ինչ ինչ թողլ 'ի բաց վասն համառօտութե̃ : Իցէ՛ թէ ճշգրիտ ևս զկերպարանս իրին տայր, հանդերձ հաւաստի չափովքն . և մանաւանդ ըղկարգաց թւոցն սուղ ինչ բանիւ, լուծանելով զվէճն մեծ՝ որ յերկբայս կալոց է և անյայտ մինչև 'ի սպառ : ԱՄ ԱՇ․Ն․Ք․

---

[1] Երեւի Պտղոմէոսս այս գոլ Եղբայրասէրն:

Հաւատարմութի̃ Հերոնի 'ի խիստ ևս հանդիսի փորձ գտաւ՝ յետ բազմաղէտ պարտութե̃ն հռոմայեցւոց առ Կաննեաւ, 'ի մեկնել 'ի նոցանէ ա̃մ նիզակակցացն . զի և 'ի խուժել կարքեդոնացւոց նաւատորմաւ 'ի Սիկիլիա և յապականել զերկիր իւր՝ անյողդողդ եկաց . այլ այն դառն էր նմա, զի ապականարար յոռի օրինակն և 'ի տուն իւր եմուտ : Զի Գեղոն որդի նորա, որ զՆերեիս Լփ․ ժգ․ ւ։ դուստր Պիւռոսի ածեալ էր կնութե̃, և ծնեալ 'ի նմանէ բազում որդիս, ընդ որս և զՀերոնիմ՝ զորմէ ասասցուք ընդ հուպ, արհամարհեալ զծերութի̃ հօրն և դրժեալ ուխտին նիզակակցութե̃ հռոմայեցւոց յետ Կաննեայ պարտութե̃ն՝ միաբանեաց ընդ կարքեդոնացիս, և ժողովէր զօր բազում, յորդորէր ընդ իւր և զդաշնաւորս Սիրակուսայ, և խռովէր արդեօք զՍիկիլիա, այլ յեղակարծ օրհաս մահուն կանխեալ խափանեաց զխորհուրդն, այնպէս 'ի դէպ ժամանակի հասեալ՝ մինչև զհօրէն կարծիք եղեն որդեսպանութե̃[1] : Նա ոչ յերկարակեաց լեալ Հերոնի յետ մահուան որդւոյ իւրոյ՝ մեռաւ ամաց իննսնից, թագաւորեալ զամս յիսուն և չորս . և կոծեցան զնա ա̃մ ժողովուրդն : 3789 · 215

---

[1] Եւ յարուցանէր 'ի Սիկիլիա մարտ պատերազմի, այլ մահ բարեպատեհ՝ որ և զհայրն կասկածելի արար, 'ի զօրաժողով լինել նորա և 'ի դրդուել զնիզակակիցս՝ եբարձ զնա 'ի կենաց:

ՊՐԱԿ ԵՐԿՐՈՐԴ

ՅՕԴՈՒԱԾ Ա․

Հերոնիմեայ թոռին Հերոնի պայազատել զհայրն, և չարաչար [illegible] և անգթութեամբ [illegible] առնել [illegible] նորա, և մեռանել դաւաճանութեամբ․ և վասն [illegible] մահու տիկնացն․ և Իպպոկրատեայ և Եպիկիւդեայ բռնակալել 'ի Սիրակուսա, և ըստ օրինակին Հերոնիմեայ մեռանել ընդ [illegible]։

Զհետ մահուն Հերոնի աղմուկ մեծ յարեաւ 'ի Սիկիլիա․ քանզի կալաւ զթագաւորութիւն Հերոնի թոռն նորա, որ մանուկ տիօք՝ ոչ զազատութիւն իմաստութեամբ կարէր 'ի կիր արկանել, և ոչ հրապուրանաց բարձու իշխանութեան ընդդէմ կալ[1]։ Բայց Հերոն մինչ կենդանին էր, կասկածեալ թէ գուցէ 'ի թագաւորել մանկանն՝ խրթնացի աշխարհն յիւրակերպն բարեզարդութենէն, խորհեցաւ տալ ազատութիւն Սիրակուսայ։ Բայց երկոքին դստերք նորա ամենայն հնարիւք հակառակ կացին այնմ, զի թերևս անուամբ եւեթ թագաւորեսցէ մանուկն, և զամենայն իշխանութիւն կալցին ինքեանք ընդ արս իւրեանց՝ ընդ Անդրանոդոր և ընդ Զոյիպպոս, որք էին աւագ ոստիկանք արքայորդւոյն։ Դժուարին էր[2] ծերոյ իննսնամենի անպարտելի մնալ յողոքանաց և 'ի հնարից դստերացն՝ որք զտիւ և զգիշեր առ նմա կային, և կալ ազատ 'ի յոգնաթախանձ յանլռելի հրապոյրս նոցա, և արիաբար զօգուտ ազգատոհմին 'ի վերայ աշխարհին փոխանակել։ Այլ 'ի հնարս խափանելոյ չարեացն՝ յորոց կասկածէր, կացոյց մանկանն ոստիկանս հնգետասան 'ի խորհրդականութիւն․ և 'ի մեռանելն իւրում՝ մեծաւ թախանձանօք յորդորեաց զնոսա, կալ մնալ յուխտին նիզակակցութեան հռոմայեցւոց՝ յոր ինքն զամս յիսուն հաւատարիմ եկաց, և կրթել զմանուկն 'ի նմանութիւն իւր, և պինդ կալ յիմաստս՝ յորս վարժեալն էր։

Եւ զայս պատուէր տուեալ՝ մեռաւ Հերոն․ և վաղվաղակի ժողով կոչեցին ոստիկանք, և կացուցեալ զմանուկն առաջի ժողովրդեան, ընթերցան զկտակն. և ոմանք յամբոխէն յառաջագոյն հրահանգեալ՝ ծափս հարին ձայնիւ ցնծութ̃. իսկ այլք առհասարակ տրտմեալ՝ որպէս որդիք 'ի բարւոյ հօրէն որբացեալք, տխուր լռութ̃ զմորմոք սրտից իւրեանց յայտ առնէին ընդ կորուստն մեծ, և զկասկած հանդերձելոց չարեացն։ Եւ արարին նմա յուղարկաւորութի̃. և առաւել սուգ և արտասուք ժողովրդեանն յաւելուին զշուք հանդիսին՝ քան փոյթ և մեծարանք իւրոցն [1]։

---

[1] Մանուկ տիօք չև ևս զազատութիւն և ոչ զիշխանութիւն կարող էր 'ի չափու ունել։

[2] Ոչ դիւրին ինչ էր ծերոյ իննսնամենի, շուրջ պատեալ զտիւ և զգիշեր 'ի կանացի ողոքանաց՝ ազատ կալ, և վասն աշխարհին զօգուտ իւր ապախտ առնել։ Լի․ ։

Բայց Անդրանոդոր վաղ ընդ փոյթ ելեալ յիշխանութենէ զօստիկանս, իբր թէ կարող էր արքայորդին իւրովի վարել զաշխարհն. և էր մանուկն ամաց իբրև հնգետասանից։ Եւ ինքն նախ հրաժարեալ 'ի հանդիտապատիւ ոստիկանութ̃էն, ապա զամենեցուն իշխանութ̃ին յինքն կալաւ։ Արդ այսպէս և հրամանք բարիք թագաւորաց 'ի մեռանել նոցա արհամարհին, և դուն ուրեք առնուն զկատարում̃ն։

Եթէ ամենայնաւ ոք և զգօն թագաւոր յաջորդէր Հիերոնի սիրելւոյ թագաւորին, դժուարաւ մարթէր սփոփել զսուգ ժողովրդեանն ընդ կորուստն մեծ. իսկ Հիերոնիմ որպէս յաւելուլ կամեցեալ զսուգ նոցա չարաչար ախտիւքն, ընդ թագաւորելն՝ զա̃մ ինչ կերպարանափոխ արար [2]։ Ոչ Հիերոնի արքայ և ոչ Գեղոնի որդի նորա ընդ այնչափ ամս կամ զգեստիւք կամ պերճ զարդուք որոշէին 'ի քաղաքայնոցն։ Իսկ Հիերոնիմ իսկ և իսկ ծիրանազգեաց թագ 'ի գլուխ երևէր, և գունդ թիկնապահաց սպառազէն զնովաւ. և մերթ նախանձաւոր լեալ Դիոնիսեայ բռնաւորին, ելանէր յարքունեացն բաղմեալ իբրև զնա 'ի կառս սպիտակաձի լծեալ 'ի չորից. և այլով ամենայնիւ ոչ ինչ ընդհատ էր 'ի սպասուց նր̃ պերճութ̃էն։ Արհամարհող ամենեցուն, խրոխտ և ամբարհաւաճ 'ի լսել, թշնամանող, դժուարընդել, և անհամբոյր իսկ, ոչ օտարաց միայն՝ այլ և իւրոց խնամակալացն. հնարագէտ 'ի զեղխութիւն, և խստասիրտ մինչև յանզգամութի̃ [3]։ Որովք դժպհի եղև ամենեցուն և զարհուրելի, մինչև ոմանց յոստիկանացն անձնասպանութ՟ կամ ինքնահալած փախստեամբ ձողոպրել յանգթութենէ նորա ։

---

[1] Յուղարկաւորի թագաւորապէս. և գութ և գորով քաղաքայնոցն յաւելուն զշուքն քան զփոյթ իւրոյն։ Այ-։

[2] Յոյժ դժուարին էր և կարի իսկ բարւոյ և զգօն թագաւորի սիրելի լինել սիրակուսացւոց զհետ Հիերոնի. իսկ Հիերոնիմ իբր թէ կամէր ախտիւքն ցանկալի առնել զյիշատակ հաւոյն, անդէն զա̃մ ինչ կերպարանափոխ արար։ Այ-։

[3] Պերճ սպասուցն և հանդերձից ճահաւորէր արհամարհութին ամենեցուն, խրոխտ լսելիքն, թշնամանող բանք, և մատուցում̃ն դժուարին, ոչ միայն օտարաց՝ այլ

Բայց Անդրանոդոր և Զոյիպպոս փեսայք Հերոնի և Թրասոն մտանէին և ելանէին համարձակ առ Թագաւորն, ոչ 'ի խորհրդակցութ՟ այլ զի երկոքեան էին կուսակիցք կարքեդոնացւոց և Թրասոն հռոմայեցւոց, հաճոյ թուէր Թագաւորին պայքար նոցա՝ զի տարաձայնութ՟ կարծեացն ստէպ վիճէին ։

Զայնու ժամանակաւ յայտնեցաւ դաւաճանութիւն ընդդէմ Թագաւորին, և Թէոդոտ՝ մի յառաջնորդաց անօրէնութե՟ն՝ ըմբռնեալ ածաւ 'ի հարցփորձ, և զմեղանս յանձն էառ, այլ ոչ զոք 'ի դաւակցացն մատնեաց՝ զոմ դառն տանջանս կրեալ. և ապա որպէս ոչ համբերելով խստութ՟ ցաւոցն՝ զբարեկամս արքայի զարս լաւս անմեղս զրպարտեաց, ընդ նոսա և զԹրասոն, իբր թէ նա գլուխ և առաջնորդ էր դաւաճանութե՟ն, և թէ 'ի զօրութ՟ նորա յուսացեալ միաբանեցին այլք ։ Եւ հաւատարիմ եղև զրպարտութ՟ն վասն նախանձայուզութե՟ն Թրասոնի, որ հանապազ ջատագով կայր հռոմայեցւոց. և մատնեցաւ նա 'ի մահ ։ Բայց ոչ ոք 'ի դաւակցացն, մինչ Թէոդոտ 'ի տանջանս հարցափորձին էր, խոյս ետ կամ թագեաւ. քանզի վստահք էին յարիութ՟ և 'ի հաւատարմութ՟ նորա, զի քաջ խորհրդապահ էր գաղտնեաց ։ Ի մեռանել Թրասոնի, որ միայն էր զօդ և շաղկապ նիզակակցութե՟ն հռոմայեցւոց, համարձակեցան այնուհետև կուսակիցք կարքեդոնացւոց ։ Եւ առաքեաց Հերոնիմ հրեշտակս առ Աննիբաղ, և Աննիբաղ յղեաց առ նա զոմն պատանի յազնուականացն կարքեդոնացւոց համանուն իւր, և զԻպոկրատ և զԵպիկիդէս ընդ նմա՝ որ էին սիրակուսացիք հայրենեօք, բայց ծննդեամբ կարքեդոնացիք ։ Եւ յետ կռելոյ ուխտի դաշանցն՝ դարձաւ պատանին առ զօրավարն. իսկ Իպոկրատ և Եպիկիդէս հրամանաւ Աննիբաղայ կային առ Թագաւորին ։ Եւ այս պայման էր ուխտին, զի 'ի վանել նոցա զհռոմայեցիս 'ի Սիկիլիոյ՝ ընդ որ ոչ ինչ երկբայէին, լիցի սահման աշխարհակալութե կարքեդոնացւոց և Թագաւորութե՟ն Հերոնիմեայ Իմերա գետ՝ որ անցեալ բաժանէր զկղզին գրեթէ ընդ մէջ ։ Բայց Հերոնիմ գովութ՟ք փաղաքշացն հպարտացեալ,

և իւրոց խնամակալացն, նորահնար զեղխութ՟ք, և տմարդի անգթութ՟ ։ Լի-իօ ։

յետ սակաւ ժամանակի խնդրէր զՍիկիլիա լրիւն իւրով, թողեալ զԻտալիա կարքեդոնացւոց։ Խրոխտ և յանդուգն էր խնդիրն. բայց Աննիբաղ յանձն էառ զայն, զի 'ի հռոմայեցւոց ևեթ միաբանութենէ որոշեսցէ զմանուկ արքայն։

'Ի լուր համբաւոյ ուխտին նիզակակցութեան՝ Ապպիոս կուսակալ Սիկիլիոյ հրեշտակս արար առ Հերոնիմ նորոգել զուխտն, զոր եդ ընդ հռոմայեցիս հաւ նորա։ Այլ նա խրոխտաբար արհամարհեալ զհրեշտակսն, և ծաղր արարեալ՝ հեգնէր և ասէր. Զի՞նչ զրոյցք լիցեն զԿաննեայ պատերազմէն, զի օտարացուցիչս իմն պատմեն պատգամաւորք Աննիբաղայ. լուիցուք զհաւաստին 'ի ձէնջ, և գիտասցուք յո՛ ձեռն տալ։ Նոքա ետուն պատասխանի։ Ակն ած, եթէ միւսանգամ կամիս զի դարձցուք այսրէն։ Եւ խրատ ետուն նմա և սպառնացան մի՛ յանդուգն փոխանակել զնիզակակիցս, և մեկնեցան գնացին։

Բայց Հերոն անգթութեամբ և չարաչար ախտիւք, յորս մոլեալ զակատէրն, էած 'ի վերայ իւր թշուառ կատարած։ Զի գաւաճանքն՝ զորոց ասացաք՝ ոչ 'ի բաց կացին 'ի խորհրդոյն, այլ ժամանակ պարապոյ գտեալ մինչ երթայր նա 'ի Սիրակուսայ յաշխարհն և 'ի քաղաքն լեոնտացւոց, սպանին զնա զճանապարհայն։

Տե՛ս ինձ քանի՛ խտիր է ընդ թագաւոր և ընդ բռնաւոր, և զի ոչ զէնք և թիկնապահք են ամրութիւն թագաւորի՝ այլ սէր ժողովրդեան։ Հերոն խորհէր 'ի միտ, զի թագաւոր պահապան օրինացն կացեալ առաջնորդութեամբ ժողովրդեան՝ և ինքն ընդ նովին օրինօք կայ, այնպէս վարէր զժողովուրդն՝ զի օրէնք թագաւորէին և ոչ ինքն։ Համարէր 'ի բարերարել ևեթ և 'ի յարդարել զբարեկենդանութիւն այլոց՝ առեալ զիշխանութիւն։ Ո՛չ ինչ պէտք էին նմա թիկնապահաց զգուշութեան. էր զնովաւ ամրագոյն պահ սէր ժողովրդեանն, և քան զամենայն վտանգ ահագին էր սիրակուսացւոց կորուսանել զնա։ Նմին իրի և զմահ նորա լացին իբրև զհօր հասարակաց, և յերկար ժամանակաւ 'ի բերանս ամենեցուն, ևս առաւել 'ի սրտի կայր յիշատակ նորա, և ոչ դադարէին օրհնել զնա։ Իսկ Հերոնիմ, որում օրէնք արդարութեան բռնութիւն նորա էր, և համարէր զամենայն մարդիկ 'ի ծառայութիւն իւր ծնեալ, և որպէս 'ի վերայ ստրկաց խրոխտանայր 'ի վերայ հնազանդելոց իւրոց, թշուառագոյն վարէր կեանս, եթէ իցեն իսկ կեանք՝ հանապազ յարհաւիրս կեալ։ Զամենեցունց կասկածէր, և նովին իսկ կասկածելի էր ամենե-

ԱՄ ԱՇ·Ն·Ք ցուն. և մերձաւորագունիցն առաւել վտանգ էր 'ի կասկածանաց և յանգթութէ̃ նորա, որք ոչ այլազգ զկեանս իւրեանց համարեցան յանկասկածի, բայց զնորայն բառնալով. և այս եղև վախճան թագաւորութե̃ն, որ 'ի սուղ ժամանակին ելից զչափ ա̃մ անկարգութե̃ անօրէնութե̃ և բռնութե̃։

3790 · 214 Լէ-է··· լԴ· է=· Ա: Բայց Ապպիոս որ ինչ զհետ մահուն Հերոնիմեայ պատահելոց էին՝ գուշակեալ, ազդ արար ծերակուտին. և զգուշացաւ ա̃մ կարևորօք պահել զմարզ հռոմայեցւոց 'ի Սիկիլիա։ Բայց հռոմայեցիք հայեցեալ 'ի գրգիռ ժամանակն՝ զի մարթէր դրդել պատերազմ կարևոր 'ի Սիկիլիա, առաքեցին անդր զՄարկեղոս, որ 'ի սկզբան հինգերորդի ամի երկրորդի կարքեդոնական մարտին բըդեաշխ կացեալ ընդ Փաբիոսի՝ պայծառացաւ յաղթութե̃ք ընդդէմ Աննիբաղայ։

Ազդ եղև զօրացն սպանութի̃ն Հերոնիմեայ, և առ նախանձ թագաւորին քան առ գութ սիրոյ նորա, յարեան խնդրել զվրէժ մահու նորա 'ի սպանողացն. այլ յորդոր ազատութե̃ և 'ի յոյս աւարառութի̃ն գանձուց բռնաւորին, և յաւելուածոյ թոշակին, և 'ի լուր ահագին անօրէնութե̃ց նորա և ամօթալի զեղխութե̃ցն հրապուրեալ դարձան 'ի թշնամութի̃, և զդիակն նորա թողին անթաղ՝ զորոյ վայրիկ մի յառաջ ողբային զմահն։

'Ի հռչակել համբաւոյ մահուանն Հերոնիմեայ 'ի Սիրակուսա, կալաւ Անդրանոդոր զԿղզին՝ որ էր մասն քաղաքին. և զմիջնաբերդն և զամուր ամուր տեղիս. և նստոյց 'ի նոսա գունդս հզօրս 'ի պահ։ Իսկ Թէոդոտ և Սոսիս, առաջնորդք դաւաճանութե̃ն, թողեալ զդաւակիցսն 'ի բանակին 'ի վերայ զօրացն՝ հասին կալան զկողմն քաղաքին զԱկրադինա. և զթագ և զպատմուճան բռնաւորին արինաշաղախ 'ի տեսիլ ժողովրդեան ածեալ՝ գրգռեցին զնոսա 'ի զէն 'ի վերայ ազատութե̃. և արարին ամբոխ մեծ։ Այս էր խռովեալ ա̃մ քաղաքն. և 'ի վաղիւ անդր 'ի ծագել արեգական ա̃մ ժողովուրդն զինեալ և անզէն դիմեցին յԱկրադինա՝ ուր ժողովէր ատեանն. բայց չև ևս յետ մահուն Հերոնիմեայ ժողովեալ էր, և ոչ վիրաց ինչ խորհուրդ կալեալ։ Ընդ Պողիենոս մի յատենակալաց խօսեցաւ առ ժողովուրդն բաղում համարձակութ̃բ և համեստ բանիւք, և ասէ. Ո փորձ առեալ աղետից դժպատեհ ծառայութե̃ն, զարհուրիք յայնմանէ. իսկ զաղէտս համազգեաց պատերազմի՝ հայրենի աւանդութե̃ք և ոչ ականատեսիւ գիտէք։ Քաջք արդարև՝ զի երագ 'ի զէն ընթացայք, և առաւել քաջք՝ եթէ 'ի կարևորագոյն հարկին 'ի կիր արկանիցէք զայդ։ Այլ արդ եթէ ինձ լսէք՝ առաքեսջիք հրեշտակս առ Անդրանոդոր, խոնարհել 'ի կամս աւագանւոյն, բանալ զդրունս Կղզւոյն, և 'ի բաց հանել զպահակապանս · ապա եթէ յամառեալ պնդեսցի բռնակալել, խստագոյն քան զՀերոնիմ ընկալցի դատաստան ։

Նա 'ի սկզբանն ոչ ընդդէմ դարձաւ պատգամացն, կամ զի թերևս ակն ածէր յաւագանւոյն և 'ի միաբանութէ քաղաքացեացն, և կամ զի զանգիտէր վասն ունելոյ սիրակուսացւոց մատնութբ զամրագոյն կողմն Կղզւոյն ։ Բայց Դեմարատա կին նորա դուստր Հերոնի, տիկին գոռոզ և փառամոլ, առեալ զնա մեկուսի, և յիշեցուցեալ նմա զառածն Դիոնիսեայ բռնաւորին՝ թէ յաթոռոյ թագաւորութէ ոչ է պարտ իջանել, բայց եթէ բռնի ձգեալ զոտիցն¹, ասէ · Արթի 'ի վայրկեան ժամանակի հրաժարել 'ի բարեբաստութէ մեծէ, այլ յոլով ճգանց և բազում ժամանակաց պէտք են 'ի ստանալ զայն ։ Փութա մի կորուսաներ զժամանակդ, թարթափեցո տարտամ բանիւք զաւագանին, և բանագնաց լեալ գաղտ առ զօրսն՝ որ են 'ի Լեոնտինոն, դիւրաւ զնոսա ածցես զքև զանձիւք թագաւորին՝ որ 'ի ձեռին քում են ։

Ոչ արհամարհեաց Անդրանոդոր զխրատն, և ոչ յանդգնաբար այնմ հետևեալ, այլ 'ի միջասահմանին եկաց՝ հնազանդել աւագանւոյն · մինչև դիպողագոյն պարապ գտցէ ։ Նա 'ի վաղիւ անդր բացեալ զդրունս Կղզւոյն՝ եկ գնաց յԱկրադինա, և պատասխանի արարեալ առաջի ժողովրդեան վասն յապաղմանն և ընդդէմ կալոյ հրամանացն, իբր թէ զանգիտէր պատուհասել ընդ բռնաւորին վասն ազգակցութէն, ասէ · Ահա դամ տալ զանձն իմ, և զամենայն ինչ զիմ, աւագանւոյն ։ Նա դարձեալ առ Թեոդոտ և առ Սոսիս սպանողս բռնաւորին, ասէ · Գործ մեծ արժանի յիշատակի գործեցէք · այլ այդ, եթէ հաւատայք ինձ, սկիզբն է փառաց ձերոց, և ոչ լրումն ։ Զի եթէ ոչ զխաղաղութի և զմիաբանութի հաստատեսջիք ընդ քաղաքացիս, հասցէ ահագին վտանգ կործանման և կորստեան աշխարհիս անդէն 'ի վայելս բերկ-

---

[1] Բայց Դեմարատա կին նորա՝ դուստր Հերոնի, դեռ ևս իշխանական ճոխութբ և կանացի ցանկութբ առեալ զնա մեկուսի 'ի հրեշտակացն, յիշեցուցանէր նմա զոր Դիոնիսիոս բռնաւորն ասէր յաճախ՝ թէ հետևակին և ոչ հեծելոյն պարտ է թողուլ զբռնակալութին ։

րունց ազատութե՟ն ։ Եւ զայս ասացեալ եդ առ ոտս նոցա զփականս Կղզւոյն և զգանձուց Թագաւորին. և եղև ուրախութի՟ ընդ ա՟մ քաղաքն, և զօրն ցերեկ լի էին մեհեանք բազմամբոխ ժողովրդովք՝ որ վասն սքանչելի յաջողութե՟ն գոհանային զդից ։ Եւ ՚ի միւսում աւուր ժողովեալ աւագանւոյն ըստ նախնի սովորութե՟ն, կացուցին դատաւորս և զԱնդրանոդոր ընդ առաջինսն, և զԹեոդոտ և զՍոսիս և զայլս ՚ի դաւակցացն՝ որ ոչ էին անդ ։

Իսկ Իպոկրատ և Եպիկիդէս, զորս յղեաց Հերոնիմ երկու հազարաւ՝ խռովել զքաղաքս կուսակիցս հռոմայեցւոց, ՚ի լուր համբաւոյ մահուան բռնաւորին Թողեալ ՚ի զօրացն՝ դարձան ՚ի Սիրակուսա, և խնդրէին զօրս յուղարկաւորս՝ որպէս զի անվտանգ դարձցին առ Աննիբաղ. իբր զի ոչ ևս պիտանիք էին անդ ՚ի մեռանել Հերոնիմեայ, վասն որոյ առաքեցանն ։ Կամէին և սիրակուսացիք արձակել զնոսա զարս այլազգիս անխաղաղասէրս և խռովարարս, և որք ՚ի բազում պատերազմունս մնեալ էին ։ Բայց իրաց ա՟մի ժամ և ժամանակ է անդարձ. և վասն զի ոչ սահմանեցին նոցա ժամադրութի՟, նոքա պարապ առեալ՝ յիւրեանս յանկուցին զզօրս՝ որ ակն ածէին ՚ի նոցանէ վասն քաջութե՟ նոցա, և գրգռեցին զնոսա ընդդէմ աւագանւոյն և լաւաց քաղաքայնոց ։

Անդրանոդոր դրդեալ անդադար ՚ի փառամոլ կնոջէն, զայն ժամ պատեհ կալաւ ՚ի մերկանալ զխորհուրդս իւր՝ զոր ցայնժամ կեղծաւորեալ Թագուցանէր, և միաբանեաց ընդ Թեմիստեայ՝ որ զդուստր Գեղոնի առեալ էր կնութե՟, նուաճել յինքն զԹագաւորութի՟ն. և զայն խորհուրդ իւր յայտնեաց Արիստոնի ումեմն կատակերգուի, յորմէ ոչ ինչ Թագուցանէր ։ Բայց կատակերգութի՟ առ Յոյնս ոչ անարգաց գործ էր, և արք ազնուականք կատակերգէին ։ Արիստոն պարտ համարեցաւ, զի և էր իսկ, փոխանակել զբարեկամի՟ ընդ հայրենեաց, և յայտնեաց զդաւաճանութի՟ն. և իսկ և իսկ ՚ի մտանել յատեան աւագանւոյն Անդրանոդոր և Թեմիս հրամանաւ այլոց դատաւորացն սպանան ։ Եւ ամբոխ արարեալ ժողովրդեանն, խնդրէին զվրէժ մահու նոցա. բայց դատաւորքն զարհուրեցուցին զնոսա, արկեալ զդիակունս դաւաճանացն արտաքոյ ատենին. և ցուցին զչարանենգ խորհուրդս նոցա, ՚ի նոսա հանեալ զվնաս ա՟մ չարեացն՝ որ հասին Սիկիլիոյ, և անբասիր արարեալ զչարութե՟ Հերոնիմեայ, իբր զի նա մանուկ էր, և խրատուք նոցա գործէր զա՟մ ։ Եւ ասեն. Դայեակք նորա և խնամակալք թագաւորէին յանուն նորա. պարտ էր զնոսա նախ քան զնա կամ ընդ նմա կորուսանել. այլ նոքա անպատուհաս մնացեալ՝ յաւելին 'ի չարիս, մինչեւ 'ի բռնաւորութիւն մտաբերել. եւ ոչ յաջողեալ զօրուք̃, 'ի նենգ եւ 'ի խաբէութի̃ ձեռն արկին : Այլ ոչ շնորհք եւ ոչ բարերարութի̃ք ողոքեցին զչարասէր կամս Անդրանոդորայ, զի կացուցին զնա ընդ ազատարարս հայրենեաց դատաւոր մեծ զոխերիմ ոսոխն ազատութե̃ : Այլ 'ի ցանկութի̃ թագաւորութե̃ հրապուրեցին զնոսա կանայք նոցա՝ տիկնայք արքայազունք, քանզի Անդրանոդոր զդուստր Հերոնի ածեալ էր կնութե̃, եւ Թեմիստէս զԳելոնին : Իբրեւ զայն լուաւ ժողովուրդն, աղաղակեցին ամենեքեան. բարձցին բռնաւորք, անձեռ եւ անհետ լիցին : Զի ռամիկն[1] ստրկաբար ծառայէ, կամ յոխորտօրէն իշխէ. իսկ որ ընդ մէջ ծայրայեղ անչափութե̃ցն է ազատութի̃՝ զայն ոչ արհամարհել եւ ոչ 'ի չափու ունել կարէ : Այլ մարդահաճոյք բազումք շողոմարարք գրգռէին զնա, եւ մղեալ զառածանեն 'ի բռնութի̃ եւ յանագորոյն խստութի̃՝ յոր 'ի բնէ իսկ մէտ եւ յօժարն է : Զոր եւ աստ է տեսանել. զի հաւանեալ փաղփաղակի խնդրոյ աւագանւոյն, հրաման ետուն ջնջել զտոհմ արքունի :

Այլ նախ զԴեմարատա դուստր Հերոնի զկին Անդրանոդորայ, եւ զՀարմոնիա դուստր Գելոնի զկին Թեմիստեայ սպանին. ապա դիմեցին 'ի տուն Հերակլեայ կնոջ Զոյիպպեայ, որ առ Պտղոմէոս արքայ եգիպտացւոց հրեշտակութ̃ք երթեալ՝ կամակար պանդխտէր, զի մի տեսցէ զաղէտս հայրենեացն : Այլ Հերակլիա իբրեւ լուաւ՝ եթէ դիմեալ գան 'ի վերայ իւր, ամրացաւ երկոքումբք դստերօքն 'ի խորշ մի տանն առ Թերափս իւր. եւ 'ի հասանել անգղ յելուզակացն՝ զգէսս արձակեալ, արտասուալից յողորմ կերպարանս, հեծեծելով աղաչէր զնոսա յանուն հօր իւրոյ եւ եղբօր՝ Հերոնի եւ Գելոնի, եւ ասէր. Մի՛ ընդ անօրէնութի̃ս եւ ընդ չարիս Հերոնիմեայ դատիք զկին մի անմեղ, որ ոչ ինչ շահեցայ թագաւորութ̃ք նորա՝ բայց զի վտարանդի կայ յինէն այրն իմ : Ոչ բախտին եւ ոչ խորհրդոց չարաց Դեմարատայ քեռն իմոյ հաղորդեղէ, եւ ընդէ՞ր պատուհասին եղէց պարտաւոր : Զի՞նչ կասկած երկիւղի կայցէ 'ի կնոջէ՝ որ թողեալ կամ ամայի և այրի, և զի՞նչ 'ի թշուառական դստերաց յորբոց անօգնականաց յարհամարհելոյ ։ Եթէ ատեայք զճետ արքայի, և է խոչ յական ձերում, տարագրեցէք զմեզ յԱղեքսանդրիա, և կեցցուք կին ընդ առն և դստերք ընդ հօր ։ Եւ ոչ կարացեալ աղերսանօքն ողոքել զնոսա, թողեալ զանձն՝ վասն դստերացն աղաչէր, դէթ 'ի նոսա խնայել, որ մատաղ տիօքն զկարի իսկ վայրենացեալ թշնամիս 'ի գութ ածէին ․ այլ ոչ ինչ ազդեաց յանագորոյն միտս նոցա ։ Եւ ձգեալ զնա, որպէս 'ի ձեւանէ թերափիցն յափշտակելով, հարին սպանին առաջի դստերացն, և զնոսա զհետ նորա՝ թաթաւեալս յարենէ մօր իւրեանց ։ Եւ այն ողորմելի ևս էր, զի իբրև այն ինչ սպանման՝ հրաման եհաս 'ի ժողովրդենէ կեցուցանել զնոսա ։ Եւ գթութ ամբոխին դարձաւ 'ի ցասումն և 'ի կատաղութ ընդդէմ սպանողացն, թէ ընդէ՞ր վաղվաղեալ՝ չետուն նոցա պարապ 'ի զգաստութ և 'ի ստրջանս ։ Եւ խնդրէր ժողովուրդն կացուցանել դատաւորս փոխանակ Անդրանոդորայ և Թեմիստեայ ․ և յերկարել խորհրդոյն, ոմն յամբոխէն զԱպիկիդէս խառն 'ի խուռն 'ի մէջ եարկ, և այլ ոմն զԻպոկրատ ․ և միաբանեցին բազմութ քաղաքացեաց և զօրաց խնդրել զնոսա մեծաւ թախանձանօք՝ մինչև ոչ կարել աւագանւոյն հակառակ կալ նմ ։

---

[1] Սովորութ̃ն է ամբոխին՝ կամ ծառայել վատութ̃ք, կամ խրոխտաբար իշխել. եւ զազատութ̃ն որ 'ի միջասահմանին կայ՝ ոչ գիտէ արհամարհել, եւ ոչ 'ի չափու ունել : Եւ ոչ պակասեն պաշտօնեայք գրգիչք սխալից, որք զանարգ եւ զմոլեկան ցանկութ̃ ռամկին գրգռեն յարիւն եւ 'ի կոտորած :

Բայց Ապիկիդէս և Իպոկրատ 'ի սկզբան իշխանութեն թագուցին զկամս իւրեանց միաբանելոյ ընդ Աննիբաղայ, այլ ոչ հաւանէին ընդ գործս առաջնոց իշխանացն ․ զի ընդ հաստատել ազատութեն՝ հրեշտակս արարին առ Ապպիոս նորոգել զուխտ նիզակակցութեն, զոր ելոյծ Հերոնիմ ․ և Ապպիոս յղեաց զնոսա առ Մարկեղոս՝ որ այն ինչ եկեալ էր 'ի Սիկիլիա հզօրագոյն իշխանութ, և նա անդրէն հրեշտակս առաքեաց 'ի Սիրակուսա խօսել ընդ աւագանին 'ի խաղաղութե ։

Բայց իբրև եկին հրեշտակքն, կերպարանափոխ լեալ էր ամ ։ Իպոկրատ և Ապիկիդէս 'ի սկզբանն ծածուկ հնարիւք, և ապա համարձակ բողոք բարձեալ՝ ատելի առնէին զհռոմայեցիս ամ ժողովրդեանն, իբր թէ նուաճել հնարէին զՍիրակուսա ։ Եւ Ապպեայ նաւատորմաւն մատուցեալ 'ի մուտս նաւահանգստին՝ իրախուսել զկուսակիցս հռոմայեցւոց, յաւել հաստատել զկասկածանսն և զչարախօսութիս ․ և ամբոխ արարեալ գրոհ ետ բազմութին խափանել զնոսա, զի համարէին եթէ գան իջանել յերկիր ։ Հաճոյ թուեցաւ վասն ամբոխին խռովուէն ժողով կոչել . և 'ի պառակտել ժողովրդեանն , և 'ի զայրանալ վիճիցն , առ կասկած աղմկի Ապողոնիդէս մի 'ի գլխաւորաց աւագանւոյն խօսեցաւ ըստ պատշաճի իրաց ժամանակին , և ասէ . Ահա մերձ 'ի վերայ կայ և վտանգ կորստեան և յոյս փրկութե , որպէս ոչ ումեք 'ի քաղաքաց դիպաւ . եթէ միաբան կամ հռոմայեցւոցն կամ կարքեդոնացւոց ձեռն տացուք , բարեբաղդք գտանիցիմք . ապա եթէ երկպառակեսցուք , պատերազմ խիստ և բազմաղէտ քան զհռոմայեցւոցն և զկարքեդոնացւոց գրգռեսցի 'ի մեզ , զի կողմանցն երկաքանչիւր 'ի միում պարսպի զօրք և սպառազինութիք և զօրավարք խռնին : Ոչ է ժամանակս խնդրելոյ՝ թէ ում յերկուցն նիզակակցել օգտակարագոյն իցէ, այլ կարևոր այն իսկ է՝ միաբանել ամենեցուն 'ի մի խորհուրդ : Իսկ յընտրութի նիզակակցութեն՝ ապաքէն դատաստան Հիերոնի քան զՀիերոնիմեայն հաւատարիմ է , և բարեկամութի հռոմայեցւոց յիսնամեայ փորձիւ յաջողութեն քան զկարքեդոնացւոցն ընտրելագոյն , ընդ որ երբեմն ստրջացաք , և արդ իսկ ոչ կարեմք վստահել 'ի նոսա : Եւ այլ իմն հարկեցուցիչ պատճառս յաւելեալ , ասէ . Եթէ ընդ հռոմայեցիս համարձակեսցուք զթշնամութի , մօտալուտ հասցէ մեզ պատերազմ . իսկ 'ի կարքեդոնացւոց յամրագոյն հասանէ վտանգ :

Եւ ազդողագոյնք հանդարտութեն թուեցան բանք նորա . և առ 'ի գիտել զկամս այլ և այլ կարգաց՝ աղաչեցին զգլխաւորս սպայիցն 'ի խորհուրդ կոչել զամենայն զօրս , զընիկս և զօտարս : Յերկարեցաւ խորհուրդն , և բազում վէճք եղեն . և զի ոչ կարէին զդէմ ունել հռոմայեցւոց պատերազմաւ՝ հաստատեցան 'ի խաղաղութի , և հրեշտակս արարին կռել զուխտն :

Յետ աւուրց եկին հրեշտակք լեւոնտացիք 'ի Սիրակուսա՝ խնդրել օգնութի վասն պահպանութե սահմանաց աշխարհին իւրեանց : Իսկ սիրակուսացւոց 'ի ճահ առեալ զայն պատեհ վարելոյ 'ի քաղաքէն զանխաղաղասէր և զխռովայոյզ ամբոխն , և զառաջնորդս նոցա զվնասակարս աշխարհին , առաքեցին զԻպոկրատ չորեքհազարաւ . և ուրախ լինէին նոքա վասն զերծանելոյն 'ի նմանէ , և Իպոկրատ ընդ յաջող դէպսն ապստամբութե : Որ հասեալ 'ի Լեոնտինոն՝ ասպատակէր 'ի ծայրս սահմանաց կողմանցն հռոմայեցւոց , և եհար կոտորեաց զզօրս Ապպեայ՝ որ 'ի պահ սահմանացն եկեալ էին : Վասն որոյ Մարկեղոս բողոք կալաւ առ սիրակուսացիս , և խնդրէր մերժել զայլազգին 'ի Սիկիլիոյ եղբարբն հանդերձ Եպիկիդեաւ, որ եկեալ յայնժամ 'ի Լեւոնտիոն խռովէր զբնակիչս քաղաքին ընդ սիրակուսացիս՝ գրգռելով և զնոսա յազատութ՟ի։ Քանզի լեւոնտացիք էին ընդ իշխանութ՟ սիրակուսացւոց, այլ յայնժամ ջանային ընկենուլ զլուծ նոցա և ազատ ինքնիշխան կալ։ Նմին իրի 'ի բողոքել առ նոսա սիրակուսացւոց վասն թշնամութ՟ե գործոյն՝ զոր արարին ընդդէմ հռոմայեցւոց, և 'ի ստիպել զնոսա հալածել զառաջնորդս գործոյն զերկոսին եղբարս կարքեդոնացիս, նոքա ետուն պատասխանի՝ թէ ո՞ կացոյց զձեզ խաղաղարար ընդ մեզ և ընդ հռոմայեցիս։ Նաև դարձան հրեշտակք սիրակուսացւոց և ցուցին Մարկեղեայ զպատասխանին նոցա, և ասեն. Չիք մեր այսուհետև մասն ընդ լեւոնտացիս. արա որպէս և գիտես, և տուր ընդ նոսա պատերազմ. բայց մեր ընդ հռոմայեցիս հաստատուն կացցեն դաշինք։ Չու արար վաղվաղակի Մարկեղոս 'ի Լեւոնտիոն, և 'ի մի հարուած կալաւ զքաղաքն. բայց Իպոկրատ և Եպիկիդէս փախուցեալ զերծան։ Նաև կոտորեցան զօրքն դասալիք, արք իբրև երկու հազար. այլ 'ի նուաճել քաղաքին ոչ ևս ոք 'ի լեւոնտացւոց կամ յայլոց զօրաց սպանաւ, բաց յանկելոցն յաղմուկ շփոթի առման քաղաքին, և ինչք իւրաքանչիւր հատուցան տեարցն։

Բայց արս ութ հազար առաքեցին սիրակուսացիք յօգնութ՟ի Մարկեղեայ. և պատահեաց նոցա զճանապարհայն այր մի, և ետ նոցա զրոյց պատիր զԼեւոնտեայ առմանէն, ստուարացուցեալ չարութեամբ զխստութ՟ի հռոմայեցւոց, և ստեալ՝ թէ սպանին 'ի սուր սուսերի զա՟մ բնակիչս քաղաքին, այլ և զզօրս՝ որ 'ի Սիրակուսայ անդր յղեալ էին։ Նաև նոցա ոչ ինչ կասկածեալ զխաբէութե՟ն, և ողորմեալ 'ի զինուորակիցս իւրեանց, մրմռեալ քրթմնջէին։ Յայն աղմուկ շփոթի հասին Իպոկրատ և Եպիկիդէս յառաջածանօթք զօրացն, ապաւինել 'ի նոսա յանհնարին վտանգին. և ընկալան զնոսա զօրքն մտադիւր խնդութեամբ։ Հնչեաց համբաւն ընդ ա՟մ բանակն, մինչև յունկն զօրավարացն Դինոմենեայ և Սոսեայ. և իբրև գիտացին նոքա զպատճառս աղմկին, հասեալ անդր կշտամբէին զզօրսն՝ թէ ընդէ՞ր պատսպարան եղեն թշնամեաց հայրենեացն Իպոկրատայ և Եպիկիդեայ, և հրաման ետուն կալեալ կապել զնոսա. և յանսաստել զօրացն և 'ի սպառնալ, յղեցին արս 'ի Սիրակուսա՝ պատմել զիրսն ծերակուտին։

Բայց բանակն խաղայր գնայր 'ի Մեգարա. և եկն այր մի խրատեալ յԻպոկրատայ, բերելով թուղթ կեղծեալ իբրև յաւագանւոյն Սիրակուսայ առ Մարկեղոս. և էր գրեալ 'ի թղթին գովուե̃ բազում վասն 'ի Լեոնտիոն կոտորածին, և խրախոյս 'ի կոտորել և զա̃մ վարձկան զօրսն յազատուե̃ Սիրակուսայ: Եւ իբրև ընթերցաւ ստայօդեալ գիրն՝ յարեաւ աղմուկ մեծ 'ի բանակին. զի գրեթէ ա̃մ զօրքն վարձկանք էին. և ամբոխ արարեալ խնդրէին սպանանել զսիրակուսացիսն ոմանս: Բայց Իպոկրատ և Եպիկիդէս խափանեցին զանիրաւութի̃ն, ոչ առ գութ մարդասիրութե̃՝ այլ առ յոյս դարձի 'ի Սիրակուսա: Եւ հրապուրեալ զայր մի, յղեցին 'ի քաղաքն պատմել զանցս աւարառութե̃ Լեոնտինի ըստ առաջնոյ համբաւոյն: ԱՄ ԱՇ·Ն·Բ

Եւ ժողովուրդն զչարեալ, խնդրէին ձայնիւ մեծաւ՝ փակել զդրունս ընդդէմ հռոմայեցւոց: Յայնմ վայրի հասին Իպոկրատ և Եպիկիդէս 'ի Սիրակուսա. և կէս բռնի կէս մատնութե̃ ոմանց 'ի քաղաքայնոցն՝ մտին 'ի ներքս, և զաւագանին սպանեալ՝ տիրեցին քաղաքին: Եւ 'ի վաղիւ անդր գերեաց և բանտարկելոց թողութի̃ արարեալ, խառն 'ի խուռն 'ի ժողովն ընտրեցան իշխանապետք. և Սիրակուսա յաղօտ նշոյլ ազատութե̃ն դարձեալ յառաջին ծառայութի̃ն անկաւ:

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Ջան Մարկեղեայ եդեղխէ պաշարելոյ զՍիրակուսա, և կորստեամբ մեծաւ զօրացն և նաւաց յահագին հնարածոյն Արքիմեդեայ՝ 'ի բաց կալ, և առնել զէն և զմօտ քաղաքին, և առնուլ զայն մատնութե̃ քաղաքայնոցն. և յաղագս Արքիմեդեայ սպանութե̃ն յանծանօթէ ումեմնէ 'ի զօրացն:

Մինչդեռ սիրակուսացիք զայնու աղմկաւն էին, Մարկեղոս մեկնեալ 'ի Լեոնտեայ՝ դիմեալ գայր 'ի Սիրակուսա. և մերձ հասեալ 'ի քաղաքն, առաքեաց հրեշտակս՝ ազդ առնել բնակչացն զի ազատութի̃ ածէր և ոչ պատերազմ: Ոչ նոքա և ոչ 'ի քաղաքն ընկալան զհրեշտակսն. այլ Եպիկիդէս և Իպոկրատ ելեալ ընդ առաջ նոցա՝ լուան զպատգամսն, և խրոխտ ետուն պատասխանի, ասեն. Եթէ պաշարել գայք զքաղաքս, վաղ ծանիջիք զի խտիր մեծ է ընդ պաշարումն Սիրակուսայ

3790 · 214
Լիւիոս · իդ·
լգ · լդ:
Պղուտարք · 'Ի
Մարկ · 305:
Պողիբիոս · Ը·
515:

և ընդ Լեւոնտեայ։ Եւ եդ 'ի մտի իւրում Մարկեղոս հարկանել զքաղաքն ընդ ծով և ընդ ցամաք. 'ի ծովէ ընդ Ակրադինա, զի զպարիսպս նորա բաղխէին ալիք, և 'ի ցամաք կուսէ ընդ Եքսապիլոս[1]։

Եւ զԱպպիոս 'ի վերայ ցամաքային զօրացն կացուցեալ, ինքն նաւացն հրամայէր. և էին նմա վաթսուն հնգաթիք, լի աղեղնաւորօք և տիգաւորօք և պարսաւորօք 'ի հարկանել զվերամարտս պարսպացն։ Թող զայլ բազում նաւսն՝ յորս ազգի ազգի պարսպամարտ կազմածք էին։

'Ի յարձակել աստի և անտի Հռոմայեցւոց՝ զարհուրեցան սիրակուսացիք յահաւոր զօրուե՟ն և 'ի մեծամեծ պատրաստութե՟ն. զի չկարէին իսկ զդէմ ունել առանց առն միոյ զարմանալի հանճարոյն, զԱրքիմիդեայ ասեմ, որ առ ա՟մ ինչ հասանէր։ Նա ամենայարդար պատրաստուե՟ ամրացոյց զպարիսպս յուժգին դիմակալութի՟. և իբրև սկսաւ զկազմածս մեքենայիցն շարժել 'ի ցամաք կուսէ, տեղային 'ի վերայ հետևակազօրացն տարափք ազգի ազգի նետից. և վէմք ստուարք և ծանունք սաստիկ շառաչմամբ խիստ և երագ ձգմամբ տապալեալ խորտակէին զա՟մ դիմակացս, և վեր 'ի վայր հարեալ խռովէին զա՟մ կարգս ճակատուն։

Ոչ ինչ առաւել ընդ ծովակողմ՟ն յաջողէր Մարկեղոս. քանզի Արքիմիդեայ ըստ ա՟մ տարակայուե՟ զմեքենայսն կազմեալ, 'ի բացէ մեծամեծօքն և հաստաձիգ բալստրօք և բաբանօք հարկանէր զթշնամիս, իսկ 'ի մօտոյ զփոքրագոյնսն 'ի գործ արկանէր ըստ չափոյ հեռաւորուե՟ն. յորոց հռոմայեցիք խուճապեալ, ոչ ինչ ձեռնհաս լինէին գործել։

Եւ ոչ այս միայն էր ահագին վտանգն. այլ և յետ կուսէ պարսպացն կառոյց բարձրաբերձ հաստաշինած կազմածս, որովք հեծանս ստուարս՝ ծանունս ունելով 'ի ծայրսն բեռինս՝ յանկարծ 'ի վերայ նաւաց ուժգին իջուցեալ, խորասոյզ առնէր զնոսա։ Դարձեալ և խիղըս երկաթիս արկեալ շղթայիւք՝ կարթէր զնաւս զառաջիցն, և վերառեալ յօդս հակամէտ բեռամբ՝ որ 'ի ներքս 'ի պարիսպն իջանէր, կանգնէր զնոսա 'ի խելսն. և այնպէս վայրիկ մի կալեալ, արձակէր ապա անուով կամ ճախարակաւ զշղթայսն. և մղեալ անկանէին նաւքն անհնարին թափով ընդ խելսն 'ի վայր կամ 'ի կողս, և բազումք 'ի նոցանէ ընկլուզանէին։ Այլ մերթ մեքենայիցն կարթիւք և տուամբք 'ի ցամաք կոյս ձգեալ զնաւս՝ պտուտկէր ընդերկար, և ընդ յառաջակարկառ սեպս ժայռից 'ի ստորոտ պարսպացն հարեալ՝ խորտակէր, և զամենեսեան որ էին 'ի նմա կորուսանէր։ Այլ էր ահագին տեսիլ նաւացն, որ ճախր առեալ 'ի թուիչս նաւորդօքն հանդերձ՝ կործանեալ 'ի ծով խորասոյզ լինէին։

---

[1] Գտցեն խնդրողք ընդարձակագիր Սիրակուսայ տեղագրութիւն մատենի Հնախօսութեան. 314։

Այլ և Մարկեղոս բազում ինչ 'ի կազմած մեքենայիցն ծախեաց, որ ջութակքն կոչէին վասն նուագարանին նմանութեան։ Այլ առ 'ի բարձումն նոցա՝ հնգաթիոց նաւաց ութից զմիոյ կողմանն թիակս եբարձ, զկիսոյ զաջակողմանն, զայլոց զահեկին, և զոյգ զոյգ առ միմեանս ընդ անթիակ կողմանս կցորդեաց։ Իսկ կազմածն էր սանդուղք չորքոտնաչափ 'ի լայնութեան, և բարձրութիւն նորա հաւասար պարսպացն 'ի կանգնելն. բայց իջուցեալ յենուլին զայն 'ի միմեանսայար կողմանս երկուց նաւացն, և ձգէր երկայնէր անդր քան զցռուկսն։ Այլ 'ի ծագս կայմից նաւացն էին ճախարակք հաստատեալ, և պարանք ածեալ, զի յորժամ հարկ լինէր 'ի գործ արկանել զմեքենայն՝ արկանէին զպարանն 'ի ծայր նորա, և կեռք 'ի խելս նաւացն զպարանսն ընդ ճախարակս ձգեալ, և այլք յառաջ կուսէ խեչակօք ամբառնային զայն. և զնաւսն 'ի պարիսպն յառաջ մատուցեալ՝ յեցուցանէին անդր զմեքենայն։ Հաւաստի կարծեմ թէ էր այն կամուրջ բառնալի, ընդ որ 'ի պարիսպս ելանէին պաշարողք։ Այլ ընդունայն եղև կազմածն այն. զի մինչ դեռ 'ի բացի կայր, եհար զնա Արքիմիդէս միանգամ և միւսանգամ և երիցս վիմօք մեծամեծօք 'ի կշիռ տասն տաղանդաց. և որոտընդոստ ահագին շառաչմամբ ջաղջաղխեալ խորտակեցին վէմք զմոյթս նորա, և ուժգին դղորդմամբ՝ քակեալ բաժանեցան նաւքն՝ որ բառնային զայն։ Իսկ Մարկեղոս վհատեալ, և յանհնարս մտեալ, աճապարեաց յետս նաւատորմաւն. և առ ցամաքային զօրսն զնոյն պատուէր արար։ Այլ ժողովեալ զսպայս և զզօրագլուխս, խորհուրդ կալաւ 'ի վաղիւ անդր ընդ աղջամուղջն մատչել 'ի պարիսպն. յուսացեալ զերծանել 'ի հարուածոց մեքենայիցն՝ անգործ առնելով զնոսա մօտելովն։

Բայց Արքիմիդեայ, որպէս յառաջագոյն ասացաք, նախատես զգուշութեամբ նետակալս և քարընկէցս ըստ ամենայն տարակայութեան կազմեալ էր, և հեծանս կարճս արագաշարժս առ 'ի ստէպ հարուած ։ Եւ պատուհանս խիտ առ խիտ 'ի պարիսպն գործեալ էր, և առ 'ի հարկանել զմատուցեալսն՝ կարիճս [1] 'ի նոսա կանգնեալ անտես 'ի թըշնամեաց ։

Արդ մինչ հռոմայեցիք 'ի ստորոտ պարսպին որպէս յամրի կային, գտան դարձեալ նշաւակ թանձրատարափ նետից և քարանց, որ անկանէին զգլխով նոցա ․ և զի ա՟մ ուրեք շուրջ զպարսպաւն տեղայր անդադար սաստկական կարկուտն, ուստի 'ի փախուստ դառնային ։ Այլ ընդ հեռանալն ն՟ց և ահա անդրէն սկսան նետք զհետ նոցա, և կորեաւ 'ի նոցանէ ամբոխ բազում, և նաւք գրեթէ առ հասարակ հարան կամ խորտակեցան, ոչ ինչ քաղաքայնոցն կարացեալ ստնանել ։ Քանզի Արքիմիդեայ զյոլովս 'ի կազմածոց յետ կոյս պարսպացն պատըսպարեալ էր․ ուստի հռոմայեցիք զթանձրախիտ հարուածսըն յաներևութից յանտես ձեռանէ ընկալեալ՝ որպէս արդարև ընդ դիս պատերազմէին, ասէ Պլուտարքոս ։ Բայց Մարկեղոս յանհնարին վտանգին, մինչ վարանէրն՝ թէ զիարդ զդէմ կալցի կազմածոյն Արքիմիդեայ, հանճարաբանէր առ գործաւորսն և առ ճարտարապետս՝ թէ Մի կասեսցուք 'ի պատերազմելոյ ընդ երկրաչափդ Բրիարեւս՝ որ զնաւս մեր և զջութակս հարեալ խորտակէ․ զի սա քան զհարիւրաձեռնեայսն հսկայս առասպելին գերազանցէ, զթանձրահոծ տարափ նետիցն տեղալով զմեօք ։ Եւ կարի յիրաւի ընդ Արքիմիդեայ ևեթ ասէր պատերազմել․ զի էին սիրակուսացիք ո՟մ մարմին կազմածոյ մեքենայիցն, իսկ նա հոգի նոցա վարիչ և ուղղիչ․ զի այլ ա՟մ սպառազինութիւք անգործ կային, և միայն Արքիմիդեայ մեծի երկրաչափին զէնքն պահէին յայնժամ զքաղաքն, և զթշնամիսն հարկանէին ։

Եւ իբրև ետես Մարկեղոս զերկիւղ և զվհատութիւն հռոմայեցւոց, զի ընդ տեսանել ձող իմն կամ պարան 'ի վերայ պարսպացն՝ ճեպէին աղաղակաւ 'ի փախուստ, թէ գուցէ դարձեալ Արքիմիդէս կազմածս ահագինս 'ի գործ հանիցէ, ոչ ևս յուսայր պատերազմաւ առնուլ զքաղաքն․ և դադարեցուցեալ զմարտն, նստեալ պահէր 'ի բացէ զել և զմուտ քաղաքին, ժամանակին թողեալ զկատարածն․ զի սովով միայն հնար էր նուաճել զքաղաքն բազմամարդ, կարճեալ զա՟մ պաշարս ընդ ծով և ընդ ցամաք ։ Նա զամիսս ութ նստեալ զօրայն զքաղաքաւն, և զա՟մ ազգի ազգի հնարս և զքաջու՟ն 'ի գործ արկեալ, բայց 'ի քաղաքն ոչ իշխեցին յարձակել ։ Տես ինձ զի այր մի՝ մասին ինչ գիտու՟ե հմուտ՝ որքան զօրէ, 'ի դէպ ժամանակի 'ի կիր արկեալ զայն ։ Զի եթէ նա ոչ էր, հարկ էր Սիրակուսայ ընկճել առաջի ա՟մ զօրու՟ե հռովմայեցւոց. այլ յերեսաց ծերոյ միոյ առն խափանեալ եղծան ա՟մ խորհուրդք նոցա ։

---

[1] Կարիճ էր ազգ կազմածոյ առ նախնիս որպէս [illegible] քարընկէց և նետաձիգ ։

Արդ թէպէտ և յաճախ զնոյն ասիցեմ՝ ոչ աւելի ինչ ասեմ. զի ահա և աստ տեսանի՝ քանի՞ կարևոր է թագաւորի խնամ ունել 'ի զարգացումն արուեստից, ձեռն տալ բանասիրաց, խրախուսել զկաճառս գիտնոց՝ տալով նոցա փառս և վարձս տեւականս, զի ոչ անկանի նոքօք պետութիւն և ոչ չքաւորի ։ Թողեալ արդ զտոհմ և զազնուականու՟ն Արքիմիդեայ, զի ոչ ազգին էր գերագոյն հանճարն և ներհուն հմտու՟ն, նկատեսցուք զգիտու՟ն նորա և զքաջ երկրաչափու՟ն ։ Քանի՞ տոյժք էին Սիրակուսայ՝ եթէ 'ի դուզնաքեայ ծախսն և 'ի ռոճիկն խնայէր, և թողոյր անգործ և անյայտ զայնպիսին ։ Բայց Հերոն ոչ այնպէս արար. ծանեաւ նա զքաջու՟ն Արքիմիդեայ. և այն իսկ քաջու՟ն մեծ է թագաւորի, ճանաչել զայլոց քաջու՟ն. և մեծարեաց և 'ի գործ էարկ զայն, ոչ տարաժամ՝ պիտոյից կամ հարկին մնալով, այլ նախահայեաց իմաստու՟բ՝ ըստ ճշգրիտ կերպարանաց քաջ թագաւորի կամ հազարապետի՝ պատրաստեաց[1] զկարեւորս յաղթու՟ե մարտին և 'ի տօկ պաշարման, մինչ դեռ 'ի խաղաղու՟են էր, և չդոյր նմա կասկած երկիւղի 'ի հռովմայեցւոց, զի անքակ ուխտիւ նիզակակցու՟ե դաշնաւորեալ էր ընդ նոսա ։ Սրով անհնարին բազմու՟թի ազգի ազգի մեքենայիցն մեծամեծք և փոքունք 'ի վայրկեան ժամանակի որպէս յերկրէ վերբերեալ լինէին, որոց տեսիլն եւեթ բաւական էր 'ի խռովել և 'ի խուճապեցուցանել զզօրս ։

Այլ ոմանց 'ի նոցանէ զօրու՟ն դժուարահաս թուի, և երկբայելի իսկ էր ճշմարտու՟ն իրացն, եթէ ոչ հաւատարիմք 'ի վիպագրաց պատմէին զայն. յորոց մի և Պողիբիոն է՝ որ գրեթէ ժամանակակից եկաց իրացն, և զմօտաւորաց գրէր, և վէպք նորա յածէին 'ի ձեռս ամենեցուն ։ Նա արդ չմարթի երկբայել ընդ միաբան վկայ-

---

[1] կամ նախահոգ թէ զգուշու՟բ ոք յանդորրու.
կազմէ որ ինչ է 'ի մարտին պիտանացու ։
Հոր. Երգեծ. բ. ժ.

ԱՄԱՇ·Ն.Ք ունի այնչափ մատենագրացն Յունաց և Հռոմոց, հակառակորդաց և կուսակցաց, զիրաց՝ որոց բազմամբոխ բանակք ականատեսք էին, և զզօրութիւն մեքենայիցն զփորձ առեալ, և մարտակիցք լեալ պատերազմին: Որ ինչ 'ի պաշարման աստ Սիրակուսայ երկուստեք գործեցան, ցուցանեն զնախնեացն ծայրագոյն հանճար և արուեստ 'ի վերամարտութեան քաղաքաց: Օ ի՞նչ աւելի քան զԱրքիմիդեայ կազմածոն գործիցն արդ ուստընդոստ հրազինութիւնքդ. Թերևս չհաւատարեսցեն իսկ զօրութեան նոցա:

Ասի և կիզանող հայելեաւ զկէսս 'ի նաւացն Հռոմայեցւոց այրեալ Արքիմիդեայ. որ չքնաղ գիւտք են, եթէ իցէ ճշմարիտ. բայց ոչ ոք 'ի հնոց պատմագրաց վկայէ այսմ, այլ արդի զրոյց է անհաւաստի: Ապաքէն էին առ նախնեօք հայելիք կիզիչք, այլ ոչ այսպիսիք՝ որ անհնարաւոր իսկ թուին *:

3791 · 213
ԼԷ·. ԻԴ·. ԼԷ: Բայց Մարկեղեայ խորհուրդ կալեալ պահևեթ կարգել զքաղաքաւն առ 'ի խափանել զելս և զմուտ, եթող անդ զԱպպիոս առաջի քաղաքին, և ինքն երիր մասամբ զօրացն միջամուխ լեալ 'ի Սիկիլիա՝ էարկ զոմանս 'ի քաղաքաց 'ի հռոմայեցիս: 'Ի ժամանակին յայնմիկ Իմիլկոն զօրավար կարքեդոնացւոց զօրու ծանու եհաս 'ի Սիկիլիա, հալածել անտի զհռոմայեցիս, և ունել զայն անդրէն: Նա Իպոկրատ ել 'ի Սիրակուսայ բիւր հետևակօք և հինգ հարիւր հեծելովք, համագունդ ընդ նմա տալ պատերազմ ընդդէմ Մարկեղեայ. իսկ Եպիկիդէս եկաց 'ի քաղաքին 'ի վերայ պաշարմանն: Նա երևեցան 'ի միասին նաւատորմք երկոքեան առ ծովեզերբք Սիկիլիոյ. բայց կարքեդոնացւոցն, քանզի սակաւաձեռն էր, ոչ խիզախեալ 'ի պատերազմ՝ վաղվաղեաց դառնալ 'ի Կարքեդոն:

Պոլիբիոս զամիս ութ համարի նստեալ Մարկեղեայ Ապպեաւ հանդերձ առաջի Սիրակուսայ, մինչև ցկատարումն ամի իշխանութեան. և 'ի նմին տարւոջ պատմէ Լիւիոս զարշաւանս նորա 'ի Սիկիլիա, և զյաղթութիւն ընդդէմ Իպոկրատայ, որոց հարկ է 'ի միւս ամն անկանել. զի զամ իրս երկրորդի ամին յառաջնումն ամփոփեալ՝ 'ի միւսում ամի ոչ ինչ պատմէ, որ յոյժ դժուարին է՝ թէ զայն ամ ինչ ոչ գործեալ իցէ: Զայս այսպէս իմաստասիրէ Գրուիէ վարժապետն Ճարտարխօ-

---

* Միով հայելեաւ արդարև անհնարաւոր է, այլ բազում հայելեաց 'ի մի վառարան զճառագայթսն ամփոփելով՝ կարի հնարաւոր, որպէս փորձ եցոյց Պիւֆոն:

ԱՄ ԱՇ. ՆՔ

սուն 'ի Ռիլոմինոն, որ զԼիւեայ մատեանսն բաղում տեսութեմբք ածէ նորոգ 'ի տիպ. և որպէս կարծեմ, հաճոյ թուեսցի հասարակաց. զառաջին հատորն վաղ իսկ ամովք յառաջ ետ 'ի լոյս, զորոյ զյառաջաբան զերկայն ճառսն ընթեռնուլ արժան է։

Ապա 'ի միւսում ամի Մարկեղոս զամիսս բաղումս ասպատակէր 'ի Սիկիլիա։ Եւ 'ի վերայ Ակրագանդայ ընդունայն ճգնեալ, իբրև դարձեալ գայր անտի՝ պատահեաց Իպոկրատայ, և եհար սպան 'ի զօրաց նորա ութ հազար այր. և հաստատեալ պնդեաց զկուսակիցս իւր, որք խորհէին ձեռն տալ 'ի Կարքեդոնացիս։ Եւ յետ յաղթութեն դարձեալ 'ի Սիրակուսա՝ արձակեաց զԱպպիոս 'ի Հռոմ, զի երթայր նա խնդրել զդեշխութի. և փոխանակ նորա կացոյց զօրավար զԿրիսպինոս։

'Ի սկզբան երրորդ ամի պատերազմին՝ Մարկեղոս ոչ ևս յուսացեալ նուաճել զօրութ̃ զՍիրակուսա, զի նորանոր խորս անպարտելիս հնարէր ընդդէմ նորա Արքիմիդէս, և ոչ սովով՝ զի կարքեդոնացիք յոլով քան զառաջինն նաւօք դարձեալ, մուծանէին անդր պարէնս անխափան, տարակուսեալ վարանէր՝ պնդել զպաշարումն 'ի վերայ քաղաքին կամ դառնալ ամ̃ զօրութ̃ 'ի վերայ Ակրագանդայ։ Եւ 'ի վարանս տարակուսին խորհեցաւ՝ զի թերևս մարթ իցէ դաւով նուաճել զքաղաքն։ Էին 'ի բանակի նորա սիրակուսացիք բաղումք 'ի սկզբանէ խռովութեն անդր ապաւինեալք. և միոյ ուրումն 'ի նոցանէ ստրուկ գաղտ բանագնաց լեալ՝ միաբանեաց ընդ իւր արս իբրև ութսուն յաւագաց քաղաքին, որոց 'ի դումարտակս բաժանեալ՝ գային առ նա 'ի բանակն 'ի նաւակս ձկնորսականս թագուցեալ ընդ ուռկանօք։ Այլ մերձ 'ի կատարած դաւոյն, Ատտաղոս ոմն զչարեալ վասն ծածկելոյ 'ի նմանէ իրացն՝ մատնեաց զայն Եպիկիդեայ. և նա զամ̃ դաւակիցսն կորոյս։

3792. 212
Լիւիոս. իե. իդ-լա։
Պլուտարք. Դ.
Մարկ. 308։

Եւ 'ի նշաւակել խորհրդոյն յաւել Մարկեղոս 'ի վարանս. և մինչ տխրէրն և զամօթի հարկանէր 'ի խորհելն լուծանել զպաշարումն՝ յոր այնչափ ժամանակս աշխատ եղև, և կորոյս զբազմութի զօրաց և նաւաց, դէպք յեղակարծ քաջալերեցին զնա անդրէն 'ի յոյս։ Դամիպպոս հրեշտակ յղեալ յԵպիկիդեայ առ Փիլիպպոս արքայ մակեդոնացւոց՝ գերեցաւ զճանապարհայն 'ի նաւաց հռոմայեցւոց. և յոյժ ցանկային սիրակուսացիք փրկանաւորել զնա։ Յանձն առ Մարկեղոս, և սահմանեցին մերձ 'ի Տրոգիլեայ նաւահանգիստ տեղի, խօսել զփրկանաց գերւոյն ։ Եւ 'ի յաճախ երթևեկելն անդր, մի ոմն 'ի զօրացն Հռոմայեցւոց քաջ զննեալ 'ի մօտոյ զպարիսպն, և 'ի թուոյ աղիւսոյն և 'ի թանձրութե՟ նոցա 'ի կշիռ ական գուշակեալ՝ եգիտ զայն խոնարհագոյն յոյժ քան զկարծիս, և սանդղովք ոչ յոյժ բարձամբք դիւրելանելի. և վաղվաղակի ազդ արար Մարկեղեայ ։ Ոչ ամ՟ իմաստութե՟ յամ՟ զօրաւորս է, այլ և սինլքոր զօրականին մարթ է խորհուրդս պիտանիս 'ի միտ արկանել ։ Ոչ արհամարհեաց Մարկեղոս զխորհուրդն, այլ ականատեսիւ ստուգեալ զիրսն՝ ետ կազմել սանդուղս. և 'ի դէպ ժամանակի անահտական տօնիցն, զոր երեքօրեայ կատարէին Սիրակուսացիք ընկղմեալք 'ի խնջոյս և 'ի գիներբուս, 'ի ժամ գիշերոյ՝ յորում թմբրութե՟ յետ զեղխութե՟ցն հասանէր 'ի վերայ նոցա՝ մատոյց մեղմով հազարեակ մի ընտրելոց զօրաց 'ի պարիսպն, բարձեալ սանդուղս ։ Եւ յելանել առաջնոցն լռելեայն և անձայն 'ի պարիսպն, քաջալերեալ արիութե՟ նոցա և այլք զհետ նոցա խրախուսեցին. և մինչ կէսք 'ի քաղաքայնոց 'ի քուն, այլք յարբեցութե՟ էին՝ ելին գունդն ամ՟ 'ի պարիսպն, և խորտակեցին զդրունս Եքսապիլեայ առաջի ամ՟ զօրացն. և տիրեցին 'ի կողմ՟ն քաղաքին՝ որ անուանեալ կոչէր Եպիպօլէ, ոչ ևս դաւով՝ այլ ահարկութե՟ ։ Եւ մինչդեռ յաղմկէ զօրացն սթափեալ խլրտէին Սիրակուսացիք, միանգամայն զամենայն զփողսն հնչեցոյց Մարկեղոս. և ամենեքեան խուճապեալ արհաւրօք աճապարէին 'ի փախուստ, կարծելով տիրեալ թշնամւոյն ընդ քաղաքն ։ Բայց Ակրադինա՝ հզօրագոյն և գեղեցիկ կողմ՟ն քաղաքին՝ չև ևս նուաճեալ էր, զատեալ պարսպաւ 'ի քաղաքէն ։

Եւ ծագեաց առաւօտ, և էր Մարկեղոս 'ի Նոր[1] քաղաքն, 'ի կողմ՟ն՝ որ կոչէր Տիքէ ։ Եւ Եպիկիդեայ փութացեալ ժողովեաց զզօրս՝ որչափ էին 'ի Կղզւոջն, որ կից էր Ակրադինայ, և խաղաց ընդդէմ Մարկեղեայ. այլ եգիտ զնա հզօր և յոլովաձեռն՝ որպէս ոչն կարծէր, և սուղ ինչ մարտուցեալ՝ ամրացաւ յԱկրադինա ։

Իսկ Մարկեղոս, մինչդեռ ամենեքեան՝ որ զնովաւն էին զօրագլուխք և սպայք՝ ուրախ լինէին ընդ նմա վս՟ յաջողութե՟ բախտին, ինքն 'ի բարձանց պարսպին հայեցեալ ընդ գեղ և ընդ արձականիստ մեծութե՟ քաղաքին՝

---

[1] Նոր քաղաք կամ Նէապօլիս էր Եպիպօլէ, որ յետ ժամանակաց պարըսպեալ խառնեցաւ 'ի քաղաքն.

լայր 'ի վերայ նորա, որպէս պատմեն, ողորմեալ ընդ մօտալուտ թշուառուե՟ քաղաքին։ Յիշէր զկրկին նաւատորմն հզօրս աթենացւոց խորասուզեալ առ նովաւ. զերկուս բազմամբոխ բանակս բեկեալ, հանդերձ երևելի զօրավարօքն. զքաջայաղթ պատերազմունս նորա ընդդէմ կարքեդոնացւոց, զգոռոզ բռնաւորսն և զթագաւորս հզօրս, և մանաւանդ զՀերոն զանմահն յիշատակաւ, և զանուանին արքայավայել առաքինուե՟քն, ևս առաւել կարևոր վաստակօքն՝ զոր ժողովրդեանն Հռոմայ մատոյց։ Եւ զայսոսիկ յիշելով խնայէր 'ի քաղաքն. և մինչ չև հարեալ զԱքրադինա՝ առաքէր յորդորէր զամրականս՝ խոնարհել տալ զքաղաքն, և մի յաւէր մատնել զայն. այլ ընդունայն եղեն ամ՟ աղերս և յորդոր։ Ապա վասն յետ կուսէ անկասկած լինելոյ՝ դիմեաց նախ յԵւրիալոս յամուրն, որ 'ի ծայր Եպիպօլայ կառուցեալ՝ հայէր 'ի ցամաք կուսէ ընդ ամ՟ դաշտավայրն. և նուաճեալ զայն, և կացուցեալ անդ պահ հզօր, դարձաւ ամ՟ զօրուք՟ 'ի վերայ Աքրադինայ։

Յայնմ վայրի հասին Իպոկրատ և Իմիլկոն, և առաջնորդէր Իպոկրատ սիկիլիացւոց. և բանակ հարեալ, և առ մեծի նաւահանգստին պատնէշ ածեալ, նշան ետ ամրականացն յԱքրադինա, և դիմեաց 'ի նախկին բանակետղ հռոմայեցւոց՝ ուր Կրիսպինոսն առաջնորդէր. 'ի նմին պահու և Եպիկիդէս յարձակեցաւ 'ի քաղաքէն 'ի մարտկոցս Մարկեղեայ։ Այլ երկոցունցն իսկ չյաջողեցաւ. զի Իպոկրատ 'ի Կրիսպինեայ վանեալ մինչև 'ի պատնէշսն հալածեցաւ, և Եպիկիդէս 'ի Մարկեղեայ վարեալ ամփոփեցաւ յԱքրադինա։

Եւ էին աւուրք աշնայնոյ, և ախտ սրածուե՟ անկեալ 'ի քաղաքն՝ արար կոտորած խիստ, ևս առաւել 'ի ճամբար հռոմայեցւոց և կարքեդոնացւոց։ Տկար էր ախտն 'ի սկզբան, և յօդոցն ևեթ ապականուե՟ և 'ի վնասակարուե՟ եղանակին տածէր. այլ ապա սերելով յայլմէ յայլ, և 'ի դարմանոյ իսկ ախտացելոյն ճարակեցաւ. և կէսք անխնամ 'ի բաց թողեալ՝ 'ի սաստկուե՟ ախտին մեռանէին, և այլք խնամակալաց իւրեանց մահառիթ լինէին։ Եւ էր տեսիլն ողորմելի, հանապազօր մեռելոցն և թաղելոց դիականց. և ձայնք ողբոց և հեծութեանց զտիւ և զգիշեր յամ՟ կողմանց հնչէին։ Այլ ապա ընդելուե՟ աղետիցն այնպէս խստացոյց զսիրտս և ցամաքեցոյց զգութ, մինչև ոչ միայն չաշխարել զմեռեալս՝ այլ և թողուլ զնոսա անթաղ. և դիակունք ամ՟ ուրեք անկեալ կային 'ի տեսիլ ախտացելոյն, որ նմին թշուառութե՟ մնային։ Կարքեդոնացիք զի անյարկ ևս էին՝ յոյժ առաւել կրեցին չարիս, և գրեթէ ամենեքին իսկ կորեան, և զօրավարք նոցա Իպոկրատ և Իմիլկոն։ Իսկ Մարկեղոս ընդ ճարակել ախտին՝ ած զզօրսն 'ի քաղաքն, ուր ընդ յարկաւ պատսպարեալ կազդուրեցան, սակայն և 'ի նոցանէ բազումք մեռան։

Բայց Բոմիլկար առաջնորդ նաւատորմին կարքեդոնացւոց, որ միւսանգամ երթեալ էր ածել 'ի Կարքեդոնէ օգնութի՟, դարձաւ անդրէն. և էին ընդ նմա հարիւր և երեսուն նաւք պատերազմիկք, և եօթն հարիւր բեռնաբարձք. և վասն հողմոցն ընդդէմ լինելոյ՝ ոչ կարէր զՊաքինեաւ հրուանդանաւն պատել։ Եւ կասկածեալ Եպիկիդեայ, թէ գուցէ 'ի տևել հողմոցն՝ չհանդուրժեալ նաւատորմին դարձցի յԱփրիկէ, եթող յԱկրադինա զզօրապետ վարձկան զօրացն, և եկն յորդորեաց զԲոմիլկար՝ ընդ թողանալ հողմոյն խիզախել 'ի նաւամարտ։ Իբրև ետես Մարկեղոս զի օր ըստ օրէ յաւելուին զօրք սիկիլիացւոց, և եթէ այլ ևս յապաղէր՝ պատեալ պաշարէին զնա 'ի Սիրակուսա, և 'ի նեղ մեծ անկանէր 'ի ծովէ և 'ի ցամաք կուսէ, ոչ ինչ հայեցաւ 'ի նուազութի՟ նաւացն, եդ 'ի մտի զդէմ ունել նաւատորմին կարքեդոնացւոց։ Իսկ Բոմիլկար ընդ զիջանել հողմոցն՝ նաւարկեաց 'ի խորս, պատել 'ի բացէ անվտանգ զհրուանդանաւն. այլ իբրև ետես զնաւատորմ հռոմայեցւոց՝ զի կարգեալ ճակատեալ գայր ընդ դէմ իւր, անդէն 'ի փախուստ դարձաւ, վասն ինչ պատճառանաց՝ ոչ գիտեմ. և բեռնակիր նաւացն պատուէր տուեալ՝ դառնալ յԱփրիկէ, ինքն խոյս ետ 'ի Տարենտոն։ Եւ Եպիկիդեայ անկեալ 'ի յուսոյ, և ոչ ևս իշխեալ մտանել 'ի քաղաքն՝ որ կիսովին նուաճեալ էր, նաւարկեաց յԱկրագանդ. ոչ առ 'ի գտանել անտի օգնականութի՟, այլ ելից իւրացն դէտակն ունել։

Ազդ եղև 'ի բանակն սիկիլիացւոց՝ եթէ Եպիկիդէս մեկնեցաւ 'ի Սիրակուսայ. և կարքեդոնացիք թողին զՍիկիլիա. և գիտացեալ զյօժարութի՟ պաշարելոցն, հրեշտակս արարին առ Մարկեղոս խօսել զպայմանաց նուաճելոյ Սիրակուսայ։ Եւ միաբանեցին երկուստեք, զի որ ինչ թագաւորացն էր՝ այն հռոմայեցւոց լիցի, իսկ զայլն ամ՟ կալցին սիկիլիացիք ինքնօրէն ազատութե՟։ Եւ ապա խնդրեցին խօսել ընդ զօրապետս, զորս փոխանակ իւր կացոյց Եպիկիդէս 'ի մեկնելն իւրում, և ասեն ցնոսա.

Գնամք 'ի բանակէն առ Մարկեղոս և առ բնակիչս Սիրակուսայ , զի միաբանութ̃ ա̃մ սիկիլիացւոց՝ որ 'ի քաղաքիդ են և որ արտաքոյ՝ կռեսցուք դաշինս , և լիցի հաւասարութ̃ի ամենեցուն ։ Եւ հաւանութ̃ նոցա մտին 'ի քաղաքն՝ խօսել ընդ բարեկամս և ընդ ազգականս իւրեանց , և ցուցեալ նոցա զդաշինսն՝ զոր եդին ընդ Մարկեղեայ , և վստահացուցեալ զնոսա ընդ փրկութ̃ի կենացն , հաւանեցուցին զնոսա՝ նախ քան զա̃մ լուծանել յիշխանութ̃է զերեսին փոխանորդս Եպիկիդեայ ։ Որ իսկ և իսկ կատարեցաւ ։

Կոչեցին ապա ժողով ժողովրդեան , խօսեցան ընդ նոսա և ասեն . Վասն ա̃մ չարեաց՝ զոր կրեցէքն և զոր կրէք՝ մի զքաղդէ̃ն բողոք կալջիք , զի կարող էիք ապրել յայդցանէ ։ Հռոմայեցիք ոչ առ ատելութ̃է , այլ 'ի սիրոյ ձերմէ եկին պաշարել զՍիրակուսա ։ 'Ի լուր բռնակալութ̃է Իպոկրատայ և Եպիկիդեայ՝ փառամոլ արբանեկացն Աննիբաղայ և Հերոնիմեայ՝ զէն առին , ոչ 'ի կործանել զքաղաքդ՝ այլ 'ի բառնալ այտի զբռնաւորս ։ Այլ զի Իպոկրատ մեռաւ , և Եպիկիդէս ոչ ևս է 'ի քաղաքիդ , և փոխանորդք նորա սպանան , և զի կարքեդոնացիք հալածեցան 'ի Սիկիլիոյ 'ի ծովէ և 'ի ցամաքէ , խնայեն արդ հռոմայեցիք 'ի Սիրակուսա , որպէս եթէ այժմ իսկ կենդանի էր Հերոն՝ միայն օրինակն հաւատարիմ բարեկամութ̃ե ընդ հռոմայեցիս ։ Ոչ ձեզ և ոչ քաղաքիդ հասցէ ուստեք վտանգ , բայց 'ի ձէնջ՝ եթէ կորուսանիցէք զդէպ ժամանակ բարեկամութ̃ե ընդ հռոմայեցիս . և ժամանակ դիպող քան զայժմս չիք , մինչ ազատացեալդ էք 'ի խիստ լծոյ բռնաւորաց . լիցին երախայրիք ազատութ̃եդ՝ զգաստութ̃ի ։

Հաճոյ թուեցան ամենեցուն բանք նոցա . բայց մինչ չև զհրեշտակսն ընտրեալ՝ 'ի դէպ վարկան կացուցանել ատեան , որպէս զի յատենակալաց անտի կացցեն հրեշտակք ։ Առաջնորդ բանին , որում յանձն էր ա̃մ հոգ փրկութ̃ե Սիրակուսայ , խօսեցաւ ընդ Մարկեղեայ և ասէ . Ոչ սիրակուսացիք լուծին նախ զդաշն բարեկամութ̃ե ձերոյ և զէն առին , այլ Հերոնիմ՝ վնասակարագոյն հայրենեացն քան ձեզ ։ Եւ ոչ դարձեալ 'ի մեռանել բռնաւորին և 'ի հաստատել վերստին խաղաղութ̃են , սիրակուսացիք խախտեցին զայն , այլ Իպոկրատ և Եպիկիդէս՝ արբանեակք բռնաւորին ։ Նոքա ետուն ընդ ձեզ պատերազմ , ծառայեցուցեալ զմեզ բռնի և խորամանկութ̃ և նենգաւ . և ոչ երբէք ազատօրէն թշնամիք եղաք հռոմայեցւոց ։ Իսկ արդ իբրև բարձան որք հարստահարէինն զՍիրակուսա, ընդ լինել ինքնիշխան՝ ահա դամք յանձն առնել ձեզ զզէնս, զպարիսպս, զքաղաքս և զանձինս. աւասիկ կամք, պայման արարէք որ ինչ հաճոյ իցէ ։ Եւ դարձեալ յաւելեալ՝ ասէ ցՄարկեղոս. Այլ աստ երկաքանչիւրոց մեզ փառք առաջի կան. զի շնորհեցին քեզ դիք, Մարկեղիէ, նուաճել զմեծագոյնն և զգեղեցիկ յա̃մ քաղաքաց յունաստանի. և որ ինչ արուե̃ք յիշատակաց արժանի գործեցան 'ի մէնջ ընդ ծով և ընդ ցամաք, յաւելցեն զշուք յաղթանակիդ ։ Ոչ է համբաւ վկայ հաւատարիմ մեծութե̃ և զօրութե̃ քաղաքիս՝ զոր նուաճեցեր, առանց ականատես գոլոյ ոչ կալցին զքէն յետինք զպատշաճ կարծիս ։ Պարտ է, զի որ 'ի չորից ծագաց այսր նաւարկեն՝ տեսցեն զյաղթանակս մեր 'ի վերայ աթենացւոց և կարքեդոնացւոց կանգնեալ, և զքոյս 'ի վերայ մեր. և զի Սիրակուսա պաշտպանեալ միշտ 'ի Մարկեղեանց, կայցէ հաստատուն և յաւերժական արձան քաջութե̃ և գթութե̃ այնորիկ՝ որ նուաճեացն զնա, և խնայեաց 'ի նա ։ Ընդէր յիշատակն Հերոնիմեայ յաղթեսցէ Հերոնին. զի սա յերկարագոյն յոյժ կալաւ ընդ ձեզ բարեկամութի̃, քան թէ նա զթշնամութի̃ ։ Դարձեալ, ներեսցի ինձ ասել, զի և յարգասիս բարեկամութե̃ն Հերոնի դուք ինքնին վայելեցէք, իսկ Հերոնիմեայ յանդրգնութե̃ն տոյժք յանձն իւր կրթեցան ։

Ոչ ինչ դժուարին էր Մարկեղեայ հաւանութի̃ն, այլ քաղաքայնոցն խաղաղութի̃ և միաբանութի̃ ։ Դասալիք փախստէից երկուցեալ 'ի վտանգէն մատնելոյ 'ի ձեռս հռոմայեցւոց, 'ի նոյն երկիւղ և զվարձկան զօրսն արկին. և մինչ դեռ հրեշտակքն 'ի բանակին Մարկեղեայ էին, նոքա աճապարեալ 'ի զէն վառեալ առ հասարակ՝ սպանին նախ զնոր աւագանին, և ընդ ա̃մ քաղաքն ընթացեալ՝ սրակոխ առնէին՝ որոց պատահէինն, և որ ինչ առ ձեռն դիպէր՝ կողոպտէին ։ Եւ առաջնորդ իւրեանց կացուցին զօրավարս վեց. երիցն իշխել յԱքրադինա, այլոց 'ի Կղզւոջն ։ Եւ յետ դադարելոյ ամբոխին, ապա իրազեկ լեալ այլազգի զօրաց որ ինչ դաշինք ընդ հռոմայեցիսն եդան՝ գիտացին զի ոչ փախստէիցն դատաստանք միայն նոցա. և հրեշտակսն ևս յայնժամ դարձեալ 'ի Մարկեղեայ, փարատեցին զա̃մ կասկածանսն ։ Եւ էր մի յիշխանացն Սիրակուսայ սպանիացի, Մերիկոս անուն նորա. նա կաշառաբեկ լեալ, եբաց զիշերի զդուռնն՝ որ էր մերձ յաղբիւրն Արեթուսայ, և եմուծ 'ի ներքս զզօրս Մարկեղեայ : Եւ 'ի վաղիւ անդր ընդ առաւօտն յարձակեցաւ Մարկեղոս որպէս թէ 'ի կողմ՟ն Ակրադինայ, զի որք 'ի միջնաբերդին էին զօրքն, և որք 'ի Կղզւոջն՝ որ կից էր նմին՝ յայն կողմ՟ն դիմեսցեն, և 'ի նաւացն՝ որ պատրաստ կային՝ դիւրաւ իջցեն զօրք իւր 'ի Կղզին անմարդի : Եւ յաջողեցաւ խորհուրդ նորա. և իջեալ զօրացն 'ի Կղզին՝ գտին գրեթէ թափուր ըզմարտկոցս, և զդրունս՝ ընդ որ դիմեցին զօրքն 'ի միջնաբերդէն ընդդէմ Մարկեղեայ՝ դեռ ևս 'ի բաց, և դիւրին պատերազմաւ կալան զայն : Եւ իբրև լուաւ Մարկեղոս եթէ առաւ Կղզին և կողմ՟ն Ակրադինայ, և թէ Մերիկոս հանդերձ գնդաւն յաւելաւ յիւրսն, փող եհար և դարձոյց զզօրսն, զի մի աւար հարցեն զգանձս արքունի, թէպէտ և ոչ ըստ համբաւուն յոլովք էին :

Իսկ քաղաքացիք թողեալ ելս փախստի դասալիք զօրացն, բացին ապա զա՟մ դրունս Ակրադինայ առաջի Մարկեղեայ. և հրեշտակս արարեալ՝ խնդրեցին 'ի նմանէ զկեանս և եթ շնորհել նոցա և որդւոցն : Եւ Մարկեղեայ կոչեցեալ զատեան խորհրդականացն, և զսիրակուսացիս ոմանս՝ որ էին 'ի բանակին, լու 'ի լու ամենեցուն պատասխանի ետ հրեշտակացն և ասէ. Հերոն զամս յիսուն ոչ այնչափ բարիս արար Հռոմայեցւոց, որչափ 'ի սակաւ ամս արարին չարիս բռնաւորք Սիրակուսայ. այլ չարիք նոցա դարձան 'ի գլուխ նոցա, և զպատուհաս ուխտադրժութե՟ն անձամբ յանձինս ընկալան առաւել յոյժ քան զցանկութի՟ վրէժխնդրութե՟ Հռոմայեցւոց : Երեք ամք են՝ զի պաշարեալ պահեմ զՍիրակուսա, ոչ առ 'ի ծառայեցուցանել զնա ժողովրդեանն Հռոմայ՝ այլ զի մի առաջնորդք փախստէից բռնացեալ տիրեսցեն նմա : Զա՟մ աշխատութի՟ և զվտանգ կրեցի ընդերկար զպարըսպօքս, այլ առաւելումն ընկալայ զհատուցումն, զփառս յաղթութե՟ և զբերկրութի՟՝ փրկելով զքաղաքդ 'ի սպառըսպուռ սատակմանէ, որում արժանին էր : Եւ պահ կարգեալ գանձուցն արքունի և տանց սիրակուսացւոց՝ որ ապաւինեալ էին առ իւր 'ի բանակն, մատնեաց զքաղաքն յաւար : Եւ մեծութիւն բազում յոյժ ասի ժողովեալ յաւարէ անտի, որչափ ինչ 'ի Կարքեդոն չգտանէր աւար :

Դէպք իմ՟ն չարաշշուկ դառնացուցին զխնդութի՟ Մարկեղեայ, և տրտմեցաւ յոյժ : Մինչ դեռ քաղաքն ա՟մ խռովեալ դղրդէր, Արքիմիդէս մնացեալ 'ի սենեկին՝ որպէս ոք այլաշխարհեայ՝ անկցորդ ընդ աստի իրս, պարապէր 'ի տեսութ՟ի երկրաչափական ձեւոյն՝ աչօք և մտօք պշուցեալ յայնս, և ոչ զգայր զաղմուկ զօրացն Հռոմայեցւոց՝ որ ընդ ամ՟ կողմն ընթանային, և ոչ զշուխնդն առման քաղաքին։ Եւ ահա մի ոմն 'ի զինուորաց կացեալ առ նմա, կոչէր զնա առ Մարկեղոս՝ խօսել ընդ նմա. իսկ նա աղաչէր՝ մնալ վայրիկ մի մինչև 'ի լուծումն և 'ի ցոյց խնդրոյն։ Բայց զօրականն՝ անփոյթ խնդրոց և ցուցմանց՝ զայրացեալ 'ի յապաղել նորա, ձգեաց զսուրն և սպան զնա։ Վիշտ եղև յոյժ Մարկեղեայ ընդ գոյժ մահու նորա. ցանկայր արդեօք, այլ ոչ կարէր դարձուցանել զնա 'ի կեանս. բայց որ ինչ կարէրն՝ արար 'ի փառս անուան նորա։ Զի խոյզ և խնդիր արարեալ, զոյս և եգիտ յազգականաց նորա՝ պատուեաց, և ետ նոցա շնորհս ազատութ՟ե. և զդին Արքիմիդեայ շքով մեծայուղարկաւորեալ, կանգնեաց նմա շիրիմ ընդ. երևելի արանցն՝ որք կային 'ի Սիրակուսա։

ՊՐԱԿ ԵՐՐՈՐԴ

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Գիւտ շիրմին Արքիմիդեայ 'ի Կիկերոնէ.

Բայց Արքիմիդէս պատուիրէր ազգականացն իւրոց և բարեկամաց՝ քանդակել զշիրմաւ իւրով փոխանակ արձանագրի գունտ 'ի գլանի, և զչափ և զհամեմատութ՟ի երկուց հաստատնոցն ընդ միմեանս՝ զպարագրելոյն և զպարագրողին՝ 'ի ներքոյ դրոշմել։ Արժան էր նմա տալ քանդակել 'ի պատուանդան շիրմին զպաշարումն Սիրակուսայ, և զինքն 'ի կերպ ամպայարոյցն Դիոսի շանթընկեց 'ի Հռոմայեցիս. այլ նա քան զհրաշակերտ կազմածոյն ճարտարանս գեր 'ի վերոյ վարկանէր զգիւտն և զապացոյցն երկրաչափական։ 'Իմին իրի և առ յապայս նովին ցանկացաւ պատուել՝ գիւտիւ համեմատութ՟ե համաբերձ և համախառնիւ գնտոյ և գլանի, որ իբր երկու առ երիս ունին առ միմեանս։

Սիրակուսացիք, սիրողք երբեմն գիտութ՟եց, վաղ մոռացան զյարգ և զերախտիս Արքիմիդեայ՝ որ զայնպիսի փառս Սիրակուսայ մատոյց։ Եւ այնքան ապախտաւորք լեալ մեծաց վաստակոցն, զի մինչ չև ամք հարիւր և քսան 'ի վերայ անցեալ, ոչ ևս գիտէին թէ 'ի

Տուսկ. խնդ. Ե. ԻԳ:

Սիրակուսա թաղեալ իցէ: Զայս Կիկերոն պատմէ. զի նա ինքն 'ի գանձապետութեան իւրում 'ի Սիկիլիա հետազօտեալ խնդրեաց զշիրիմն Արքիմեդեայ: Հետազօտութիւն արժանի Կիկերոնի՝ այնպիսւոյ հանճարեղ առն, և նախանձելի շնչողաց ընդ աշխարհս: Իսկ սիրակուսացիք վիճեալ պնդէին, իբր թէ 'ի նանիր խնդրէր զանգոյ յիշատակն. այլ ամօթապարտ տգիտութիւն նոցա առաւել 'ի ցանկութիւն ածէր զնա: Եւ 'ի ստէպ խուզարկելն, ետես արտաքոյ դրան քաղաքին՝ որ հայէր յԱկրագանդ՝ ընդ այլ բազում շիրիմս սիւն մացառապատ ծածկեալ մորենւովք, և նշմարէր 'ի նմա գնտաձև իմն և գլան: Հնագիտացն յայտ է աստանօր խնդութիւն նորա: Եւ գոչէր. Գտի զոր խնդրէի: Եւ ետ սրբել մանգաղաւ զմայրն, և բացաւ մինչև 'ի սիւնն ճանապարհ. և դեռ ևս երևէր 'ի նմա արձանագիրն, յեղծուածոյ ժամանակին ցկէսս տողիցն խանգարեալ: Եւ յաւելու Կիկերոն. Արդ մեծն 'ի քաղաքս յունաստանի, և 'ի վաղ ժամանակս բարգաւաճեալ քան զայլսն գիտութեամբ, տգիտանայր գանձուն՝ զոր ժառանգէր, եթէ ոչ այր մի տարաշխարհիկ՝ զոր խուժն համարէր, այր մի արպինացի զայնր քաղաքի ճշգրտատես և կորովամիտ քաղաքացւոյն զշիրիմն գտանէր[1]:

Արդ թէպէտ և շնորհապարտ եմք Կիկերոնի՝ որ զայս չքնաղ և զցանկալի պատմութիւն ետ մեզ, այլ արհամարհանօքն իմն 'ի սկզբան բանիցն խօսելով զԱրքիմեդեայ՝ ստգտանելի է: Քանզի Դիոնիսեայ բռնաւորին թշուառ կենացն ընդդէմ դնելով զերանելի կենցաղ առն իմաստնոյ և ժուժկալի, ասէ.[2] Ոչ զՊղատոնին և ոչ զԱրքիտայ զգերահանճար իմաստնոցն և զգիտնոց համեմատեմ զկեանսն ընդ Դիոնիսեայն դժնէագոյն հեգ և ատելի կենցաղ, այլ զմի ոք 'ի քաղաքակցացն զայր աննշան և կրտսեր յոյժ ժամանակաւ. զնա 'ի փոշւոյ[3] իւրմէ ձգեալ, կարակն 'ի ձեռին հանդէպ կացուցից:

Լռեմ զազգ Արքիմեդեայ, զի այլ իմն է նորայն ազնուականութիւն. այլ զվեհագոյնն յերկրաչափս վաղ ժամանակաց, որոյ գերապանծ գիւտք յա՟մ ժամանակի զարմանալի եղեն գիտնոց, ընդ էր Կիկերոն որպէս զդոյն ոք աննշան ընդ սինլքոր ձեռագէտս մեքենագործս համարի, բայց թերեւս զի հռոմայեցիք՝ որ ինչ յառաջնորդու՟ի և 'ի քաղաքավարու՟ի պատկանէր՝ զայն եւեթ մեծարէին. զի երկրաչափութե՟ և տեսական գիտուե՟ցն ախորժակք ոչ երբէք քաջ բարգաւաճեցին առ նոսա։

---

[1] Արդ գերապանծն 'ի քաղաքս յունաստանի, և իմաստնագոյնն իսկ երբեմն, զմիայնոյ կորովամիտ քաղաքացւոյն տգիտանայր զշիրիմն, եթէ ոչ այր մի արպինացի ցուցանէր նմա զայն:

[2] Արդ ընդ դժնդակ ընդ թշուառ և ընդ չարաչար կեանս նորա՝ որչափ մարթիցի խորհել՝ ոչ զՊղատոնին և ոչ զԱրքիտայ ըզգիտնոցն և արդարև իմաստնոց կենցաղ արկից 'ի կշիռ, այլ անդրատին 'ի նմին քաղաքէ զայր նուաստ 'ի փոշւոյն և 'ի մականէ ձգեալ ածից. զկրտսերագոյնն ամօք բազմօք, զԱրքիմեդէս:

[3] Ակնարկէ 'ի փոշին երկրաչափիցն:

Վիրգիլ։ Ենէ։ Զ. 847.

Կոփեսցեն այլք ըզկենդանի դէմս 'ի վէմ,
Ձուլեսցեն քաջ շնչող պղինձս գիտեմ.
Գըծագրեսցեն ցըպով ըզծիրս եթերաց,
Գոգցեն զաստեղց ելս, լիցին գոռ դատասաց.
Իսկ դու իշխել աշխարհի կա՛լ քեզ պահեստ,
Հռոմայեցիդ դու, այդ լիցի քո արհեստ։

Զայս Ֆրակլիէ իմաստասիրէ 'ի համառօտ ճառին 'ի վէպս յայս, զոր պատմէ Կիկերոն[1]։

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Համառօտութե՟ պատմութե՟ Սիրակուսայ.

Մեծին անուանեալ յունաստանի էր մասն Սիկիլիա և մեծ կէս կողմանն Իտալիոյ՝ որ անջրպետէ ընդ երկոսին ծովս. և էր այլ 'ի բնոյն յունաստանէ, հատուած 'ի նմանէ բնակեալ։

Սիրակուսա, երեւելին 'ի քաղաքս Սիկիլիոյ, և մի 'ի հզօր քաղաքաց յունաստանի, կառուցաւ յԱրքիայ կորնթացւոյ՝ յամին յերրորդում եօթնևտասներորդի ողիմպիադին։ Որ ինչ անդ յերկուս առաջին դարսն գործեցան իրք՝ նսեմք են, վասն որոյ և լռեմք զայնոսիկ. այլ յետ թագաւորուե՟ն Գելոնի տակաւ պայծառանան վէպք նորա, և ընդ ամս աւելի քան զերկերիւր ընծայեն իւրս մեծամեծս։ Արդ ընդ երկերիւր ամսն մերթ 'ի ծառայուե՟ բռնաւորաց և մերթ յընկերահաշտ ազատութե՟ կային Սիրակուսացիք, մինչև Հռոմք նուաճեալ զնոսա՝ եդին մարզ աշխարհին իւրեանց զՍիրակուսա։

Զայս ա՟մ յիւրաքանչիւր տեղւոջ պատմեցաք, բաց 'ի պատմելոյս աստ. այլ քանզի հատուկտիր յայլ և այլ

---

[1] 'Ի յիշատակագիրս արձանագրաց կաճառոյն. Հատ. Ե։

գիրս սփռեալ են, 'ի դէպ համարիմք այսր 'ի մի վայր ԱՄ ԱՇ·
կարճառօտիւ ամփոփել, և զտեղիսն ուր ըստ պատշաճի երկարապատում արարաք՝ առ ընթեր նշանակել, համօրէն տեսուչ դիւրահաս արարեալ զկարգ և զկցորդութ̃ի իրացն ։

ԳԵՂՈՆ

Կարքեդոնացիք միաբանեալ ընդ Քսերքսեայ յարշաւել նորա 'ի յունաստան, դիմեցին 'ի վերայ Յունաց բնակչաց Սիկիլիոյ. և Գեղոն որ իշխէր յայնժամ 'ի Սիրակուսա՝ մեծաւ յաղթութ̃բ եհար զնոսա, յաւուր ճակատամարտին Թերմոպիլեայ ։ Եւ Ամիլկար զօրավար նոցա անկաւ 'ի մարտին ։ Զսորա մահուանէ այլափոխս տան պատմիչք. վասն որոյ և ես իմոց բանիցս ոչ զհետ երթեալ[1], մերթ ըստ Դիոդորի՝ ասացի զնա սպանեալ 'ի սիկիլիացւոց 'ի ճակատամարտի, և մերթ ըստ Երոդոտեայ՝ զիւրովին երթեալ 'ի մարդազեն խարուկին՝ զի մի յետ պարտութ̃ն տեսանիցէ զարև ։ 3520.

Գեղոն դարձ արարեալ յաղթանակաւ, եմուտ անզէն միայնակ 'ի ժողով ժողովրդեան՝ պատմել որ ինչ արարն. և միաբանեցին ամենեքեան կացուցանել զնա թագաւոր, և թագաւորեաց զամս հինգ կամ վեց, ուշ եդեալ 'ի բարեկենդանութ̃ի ևեթ ժողովրդեանն ։ 3525. Հռով. ա. 125. և բ. 219.

ՀԵՐՈՆ ԱՌԱՋԻՆ

ԶԳեղոն պայազատեաց երիցագոյնն յեղբարս նորա Հերոն ։ Սորա սկիզբն թագաւորութ̃ն յոյժ գովելի էր, զոր և Սիմոնիդէս և Պինդարոս 'ի հակառակ մտեալ՝ տաղիւք պանծացուցին, այլ կատարածն ոչ հանգոյն սկզբանն եղև. և թագաւորեաց նա զամս մետասան ։ 3532. Հռով. բ. 225.

ԹՐԱՍԻԲՈՒՂ

Զհետ Հերոնի միւս եղբայր նորա յաջորդեալ, չարաչար ախտիւքն և անգթութ̃բ ատելի եղև ժողովրդեան. և թագաւորեալ զամ մի, մերժեցաւ 'ի թագաւորութ̃է և 'ի քաղաքէն ։ 3543. Հռով. բ. 227.

---

[1] 'Ի Վէպս Խորենացւոյ. Հռով. ա. 146.

ԱՄ ԱՌ·

ՄԻՋՈՑ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

Եւ յետ մեկնելոյ Թրասիբուղեայ կացին յազատուե՟ սիրակուսացիք, և ընաւ իսկ Սիկիլիա զամս իբր վաթսուն. և սահմանեցին 'ի տօնս տարեկանս զօր ազատուե՟ն։

ԱՐՇԱՒԱՆՔ ԱԹԵՆԱՑԻՈՑ Ի ՍԻՐԱԿՈՒՍԱ

'Ի ժամանակին յայնմիկ աթենացիք դրդեալ յԱլկիբիադեայ, 'ի վեշտասաներորդ ամի պեղոպոնեսական մարտին, դիմեցին պատերազմաւ 'ի Սիրակուսա. և ձախողակի յետս ընդդէմքն պատահեցին նմ՟, որպ՟ յայտ է։ Հատ. Ե. 217։

ԴԻՈՆԻՍԻՈՍ ԵՐԷՑՆ

3598. Անուանի եղև սա յերկարատև իշխանուե՟ն' Թագաւորեալ զամս երեսուն և ութ, և առաւել ևս նորանշան գործովքն։ Հատ. Գ. 1-43։

ԴԻՈՆԻՍԻՈՍ ԿՐՏՍԵՐՆ

3632. Զերեցն Դիոնիսիոս յաջորդեաց կրտսերն. Դիոն կարևոր ազգական նորա ստիպեաց զՊղատոն գալ յարքունիս, և մտերմացաւ յոյժ ընդ նմա Թագաւորն, և խօսէր ընդ նմա յաճախ. այլ ոչ կացեալ 'ի հանճարեղ խրատս նորա, ետ զանձն 'ի չարաչար ախտս և յանօրէնուե՟ս' որ կցորդ են բռնաւորութեան։

3644. Եւ պաշարեաց զնա Դիոն, և նա փախուցեալ 'ի դղեկէն' անկաւ յԻտալիա։

Բայց Դիոնի սքանչելի առաքինուե՟ք էին. և զնա Կալիպպոս դաւաճանեաց 'ի տան։

3547. Յետ երեքտասան ամսոց, Իպպարինոս' եղբայր կըրտսերոյն Դիոնիսեայ' հալածեալ զԿալիպպոս, կալաւ զերկեամ մի զՍիրակուսա. և առ նովաւ աղմուկք մեծամեծք եղեն 'ի Սիկիլիա։

3654. 3657. Եւ Դիոնիսեայ զայն ժամանակ պարապոյ գտեալ, էառ անդրէն զԹագաւորութ՟ն' զոր յառաջ քան զամս տասն կորոյս։ Եւ ապա հալածեալ 'ի Տիմոլէոնէ, խոյս ետ 'ի Կորնթոս։ Հատր. Գ. 43-85։

ԱՄԱՐ.

ՄԻՒՍԱՆԳԱՄ ԱԶԱՏՈՒԹԻՒՆՆ

Տիմոլէոն ազատեալ զՍիրակուսա՝ կատարեաց զաւուրս իւր փառօք անզբաղապէս, սիրելի լեալ քաղաքայնոց և օտարաց, և մեծարեալ յամենեցունց։ 3658. Հատոր. Գ. 85-93։

ԱԳԱԹՈԿՂ

Եւ յետ սակաւ ժամանակի բռնակալեաց անդ Ագաթոկղ, և արար անլուր անգթութի̃ս. և յանդուգն խիզախեալ՝ որպէս դուն ուրեք պատմի 'ի վէպս, խաղաց պատերազմաւ յԱփրիկէ. և կալաւ զամուր ամուր քաղաքս, և հար աւար զա̃մ աշխարհն. և յետ բազում իրաց՝ մահու չարաւ կորեաւ, թագաւորեալ զամս քսան և ութ։ 3565.

ԴԱՐՁԵԱԼ ՄԻՒՍԱՆԳԱՄ ԱԶԱՏՈՒԹԻՒՆՆ

Եւ հանդարտեաց Սիրակուսա առ ժամանակ մի և բերկրէր 'ի ցանկալի ազատութե̃ն. այլ նեղեալ 'ի կարքեդոնացւոց՝ որ ոչ դադարէին խռովել զխաղաղութի̃ն նորա, կարդաց առ Պիւռոս. և երագ յաղթութի̃քն 'ի սկզբանն քաջայոյս լեալ, ապա վրէպ գտաւ 'ի յուսոյ. և Պիւռոս հապճեպ փախստեամբն յաւել զթշուառութի̃ն։ 3713. Հատ. Ճ. 166. Գ. 193։

ՀԵՐՈՆ ԵՐԿՐՈՐԴ

Առ սովաւ արդարև յանդորրու և 'ի բարեկենդանութե̃ եկաց Սիրակուսա. զի զերկարատև թագաւորութի̃ն գրեթէ անընդհատ խաղաղասիրու̃թ վարեաց։

ՀԵՐՈՆԻՄ

Սա հաղիւ կատարեաց զամ̃ թագաւորութե̃ն. և յետ վախճանի նորա եղեն աղմուկք մեծամեծք, և Սիրակուսա առաւ 'ի Մարկեղեայ։

Յայնմ հետէ ոչ ինչ յիշատակաց արժանի իրք եղեն 'ի Սիկիլիա մինչև ցնուաճել նորա 'ի սպառ։ Եւ թէպէտ կուսակիցք բռնաւորաց և օգնականք նոցա կարքեդոնացիք դեռ ևս պատերազմէին, այլ ոչ ընդերկարեաց մարտ նոցա. զի հասեալ հռոմայեցիք կալան բովանդակ զՍիկիլիա, որ կիսով մասամբ էր նոցա յառա-

ջագոյն՝ յաւուրց հաստատութեան դաշանց ուխտին խաղաղութեան առաջնոյ կարքեդոնական պատերազմին։ Եւ յայնժամ բաժանեցան զայն Հռոմայեցիք ընդ Հիերոնի, ըզկէսն ինքեանք կալան, և զկէսն թողին նմա. և այն 'ի նուաճել Սիրակուսայ յաւելաւ յիշխանութիւն նոցա։

ՅՕԴՈՒԱԾ Գ.

'Ի կարգ տեսչութեան Սիրակուսայ և 'ի բարս նոցա։

Կիկ. 'Ի Վէրր. յաղ. ցոր. Ժդ։ Հռոմայեցիք նուաճմամբն Սիրակուսայ՝ զՍիկիլիա լրիւ իւրովի մարզ կացուցին. այլ ոչ այնպէս բռնացան 'ի վերայ նորա, որպէս ապա 'ի վերայ կարքեդոնացւոց և սպանիացւոց՝ հարկս ծանունս պահանջելով իբր 'ի մրցանակ յաղթութեան իւրեանց և 'ի պատուհաս պարտութեան նոցա։ Սիկիլիա՝ նուաճեալ ընդ նոքօք՝ եկաց մնաց 'ի նախնի օրէնսն և յազատութիւնս, և որպէս թագաւորացն իւրոց հնազանդէր նոցա։ Եւ արժանի իսկ էր մարդասիրութեան և շնորհի. զի նա[2] յառաջ քան զամենայն օտար ազգս նիզակակից և բարեկամ եղև Հռոմայեցւոց, և նախ նա յաւել զփառս աշխարհակալութեան նոցա արտաքոյ Իտալիոյ, և նովաւ Հռոմայեցիք զփորձ առին բերկրութեան իշխելոյ օտար ազգաց։ Բազումք 'ի յաճախաւոր քաղաքաց Սիկիլիոյ մտադիւրագոյն և հաւատարիմ կային ընդ նոքօք, չքնաղ և զարմանալի սիրով։ Նա աստիճան գործեաց անցից նոցա յԱփրիկէ. և ոչ այնպէս դիւրաւ պարտէին զահաւոր զօրութիւն Կարքեդոնի, եթէ ոչ Սիկիլիա ամբարանոց անսպառելի և անքոյթ պատսպարան նաւատորմին նոցա լինէր։ Նմին իրի Սկիպիոն յառնուլն

---

[1] Զքաղաքս Սիկիլիոյ պայմանաւ յուխտ և 'ի բարեկամութիւն ընկալաք, թողուլ զնոսա 'ի նոյն յառաջին օրէնսն, զի որպէս յառաջ իշխանացն իւրեանց հնազանդէին, նոյնպէս և ժողովրդեան Հռոմայ հնազանդեսցին։

[2] Քան զամենայն օտար ազգս յառաջամատոյց եղև Սիկիլիա յուխտ բարեկամութեան ժողովրդեանն Հռոմայ. նա նախ մարզ եկաց աշխարհիս, որ փառքն են ինքնակալութեանս. նա հարցն մերոց ուսոյց՝ քանի՛ պերճ է իշխել ազգաց օտարաց։... Ընդ այն եղև ապա նախնեաց մերոց աստիճան աշխարհակալութեան յԱփրիկէ. զի ոչ այնպէս արագ ընկճէին հզօր զօրութիւնք Կարքեդոնի, եթէ ոչ նա օգնէր ցորենով և նաւատորմիս մերոյ պատրաստէր պատսպարան։ Նմին իրի Պ. Ափրիկեցին յաւերելն զԿարքեդոն, զքաղաքս Սիկիլիոյ չքնաղ պատկերօք և արձանօք զարդարեաց. զի որք ընդ յաղթութեան ժողովրդեանն Հռոմայ խնդային, կայցեն առ նոսա արձանք բազումք յաղթութեանն։

զԿարքեդոն և յաւերել՝ պարտ վարկաւ բազում ընտիր ընտիր պատկերս և անդրիս յաւարէն յղել 'ի զարդ քաղաքաց Սիկիլեայ՝ որպէս զի որք 'ի բոլոր սրտէ ուրախ լինէին ընդ յաղթութի̃ Հռոմայ, և յարգասիս յաղթութե̃ն վայելեսցեն, և կալցին 'ի յիշատակ արձանս պանծալիս ։

Երանելի էր Սիկիլիա ընդ Հռոմայեցւովք, եթէ ա̃մ իշխանք նորա նմանողք էին Կիկերոնի, տեղեակք օրինաց առաջնորդութե̃, և երկիւղածք 'ի կատարել զայնս ։ Գեղեցիկ իսկ ինքն ճառէ 'ի կշտամբանսն Վերրեայ, ջատագովեալ սիկիլիացւոց ․ Զի զդիս վկայ կոչելով, ասէ ․[1] Յա̃մ իշխանութի̃ս՝ յոր մինչև ցայժմ պատուեաց զիս ժողովուրդ Հռոմայ, որպէս 'ի սրբութե̃ կրօնից հրամայեալ՝ ջանացայ որպէս արժանն էր լնուլ զպարտս իմ ։ Գանձապետ կացի, ոչ որպէս պարգև կալեալ զիշխանութի̃ն՝ այլ որպէս աւանդ յանձնեալ 'ի խնամս և 'ի հաւատարմութի̃ իմ ․ և ապա յորժամ 'ի Սիկիլիա առաքեցայ 'ի գանձապետութի̃, համարէի որպէս յաշխարհաժողով տեսարանի յանդիման կացեալ ա̃մ ազգաց, և զամենեսին յիս ակնկառոյց ․ և զայս զմտաւ ածեալ՝ հրաժարեցի ոչ միայն յանօրէն ցանկութե̃ց, յորս ախտք չարաչարք զառածանեն, այլ և 'ի պատշաճից և որ կարևորքն կարծին ։ Եւ այժմ շինապետ կացեալ՝ երդնում 'ի դիս, զի ծանր է ինձ իշխանութի̃ս այս ․ և թէպէտ թուիցին ինձ փառք, այլ վայելքն և բերկրութի̃ չհաւասարեն հանապազորդ հոգոցն և անձկութե̃ց ․ քանզի ցանկամ ցուցանել զայն ոչ վայրապար կամ առ հարկի աւանդեալ ինձ, այլ կամաւ և իմաստութե̃ ։

Յոյժ 'ի բացեայ էին յիմաստից աստի կուսակալք հռոմայեցւոց ․ և առաւել քան զայլ ա̃մ գաւառս Սիկիլիա զփորձ էառ , որպէս սուղ ինչ յետոյ Կիկերոն յանդիմանէ զայն 'ի կշտամբուն Վերրեայ · զի ոչ ինչ ընդհատք էին նոքա 'ի բռնաւորաց , և [1] համարէին զխուրձսն և զտապար և զիշխանական սաստ հռովմէական ինքնակալութ՟են ոչ առ այլ ինչ կրել՝ բայց 'ի հարստահարել աշատութ՟ք զգաւառս , և յապականել զսահմանս կարգաց արդարու՟ե և համեստու՟ե , և որպէս զի մի՛ ինչք , մի՛ տունք , մի՛ կեանք , և մի՛ պատիւ ուրուք առաջի բռնութ՟են նոցա անկասկած կայցէ ։

---

[1] Անմահ դիք ... հաճեսցին կամք ձեր, և ժողովրդեանն Հռոմայ, հաստատել զցանկութի̃ և զյոյս իմ, զի այնպէս զկեանս իմ կատարեցից՝ որպէս ցարդ կեցի յիշխանութի̃ս, որ աւանդեցան ինձ 'ի ժողովրդենէն Հռոմայ, պարտս կրօնից զգործ պաշտամանցս համարեալ ։ Գանձապետ կացի, ոչ որպէս պարգև ընկալեալ զիշխանութի̃ն՝ այլ որպէս աւանդ և պաշտօն ։ Այնպէս կալայ զգանձապետութի̃ 'ի գաւառի, որպէս թէ յիս ամենեքին պշուցեալ հայէին ․ և որպէս 'ի տիեզերական տեսարանի գանձապետելով, հրաժարեցի 'ի սպառ յա̃մ հաճոյից ոչ միայն դժպատեհ ցանկութե̃ց այլ և բնականացն և կարևորաց ։ Եւ արդ շինապետ կամ ... և թէպէտ հաճոյ է ինձ պատիւ ժողովրդեանդ, այլ երդնում 'ի դիս՝ զի քան զբերկրութի̃ն յաւելուն ինձ հոգք և վաստակք, որպէս զի մի առ հարկի թուեսցի տուեալ ումեք 'ի խնդրողաց իշխանութի̃նդ, այլ ըստ պատշաճի և 'ի կամաց ժողովրդեանդ՝ արժանւոյն հասեալ ։

Արդ՝ որպէս յայսմ ամենայնէ յայտ է՝ եղև Սիրակուսա թատր իմն յարափոփոխ նորանշան կերպարանու՟եց , կամ մանաւանդ ծով ստէպ հողմակոծեալ և մրրկայոյզ , սակաւ երբէք հանդարտ և խաղաղ , և հանապազ կազմ և պատրաստ 'ի յարուցանել կոհակս լեռնաձևս ։ Ոչ յումեք 'ի հասարակապետու՟եց եղեն աղմուկք այսպէս յեղակարծք , խիտք , սաստիկք և այլատարազք ։ Մերթ անզգամ բռնաւորք և մերթ զգօն թագաւորք տիրէին նմա · էր զի 'ի կամս ազատութ՟ե անլուծ և ապերասան խառնաղանձին թողեալ , և էր զի հլութ՟ք հպատակէր սաստից օրինաց և իշխանու՟ե քանին ։ 'Ի խիստ գերու՟է 'ի ցանկալի ազատու՟ի , և որպէս 'ի վերնոտու՟է և 'ի մոլեգնութ՟է իմն 'ի զգաստու՟ի յուշ և 'ի հանդարտու՟ի փոփոխէր ։ Որպէս առ Դիոնիսօք՝ հարբն և որդւոյն , և առ Ագաթոկղիւ և Հերոնիմեաւ , որք անգթու՟քն ատելի և դժպհի եղեն ամենեցուն · և ընդ հակառակն՝ առ Գեղոնիւ և առ Դիոնիւ և առ Տիմոլեաւ , և յաւուրս Հերոնեանց՝ երիցոյն և կրտսերոյ , որ սիրելի էին ա՟մ ժողովրդեան , և մեծարեալ յամենեցունց ։

Արդ զի՞նչ այսմ ծայրայեղ անչափու՟եց պատճառք ։ Թէպէտև յողդողդ և յեղեղուկ բարս սիրակուսացւոցն՝ բնիկ տիպք նկարագրին նոցա՝ 'ի ներքս խառնէր , այլ տիրագոյն պատճառք՝ որպէս ինձ թուի՝ էին 'ի կարգ տեսչութ՟են նոցա ։ 'Ի յազնուապետութ՟է և 'ի ռամկապետութ՟է խառնեալ՝ բաժանէր 'ի ռամիկն և 'ի ծերակոյտն կամ յաւագանին ։ Եւ ոչ մէտ իմն 'ի միջի էր 'ի կշիռ հաւասարութե̃ երկոցունցն զօրութե̃. որով մերթ յայս և մերթ յայն կոյս հակեալ զառածանէր 'ի խիստ և յանագորոյն բռնաւորութի̃, կամ յանսանձ յանպայման և 'ի համարձակ ազատութի̃ ։ Եւ 'ի խռովել ա̃մ կարգաց պետութե̃ն, փառամոլք 'ի քաղաքայնոց պարապ գտանէին տիրապետելոյ. և կեսք առ 'ի յանկուցանել զժողովուրդն յիւրեանս և առ 'ի թեթևացուցանել զլուծն՝ հեզութե̃ իմաստութե̃ արդարութե̃ և սիրով վարէին զիշխանութի̃ն. իսկ չարաբարոյք զեղծանէին յանօրինագոյն ոճիրս բռնաւոր և անողորմ տիրապետութե̃, պատճառանօք անկորուստ պահելոյ զբռնակալ իշխանութի̃ն ընդդէմ հնարից քաղաքայնոցն՝ որք 'ի նախանձ ազատութե̃ զա̃մ նենգութի̃ և անօրէնութի̃ օրէնս համարէին ։

---

[1] Եւ ոչ ածեր զմտաւ , զի խուրձք և տապար և սաստ մեծի իշխանութեանդ , և ամենայն օրէն պատուոյդ ոչ տուան քեզ առ 'ի բռնանալ նոքօք , և կոխել զա՟մ խոչ արդարու՟ե և համեստու՟ե և պատշաճից , և յաւար հարկանել զինչս ամենեցուն , և զի մի՛ առաջի ագահութ՟ե քո և յանդգնու՟ե անկասկած կայցեն արարք ուրուք , կամ տուն փակեալ , կամ կեանք պատըսպարեալ , կամ պարկեշտու՟ի ուրուք յամրի ։ Կիկ . 'Ի Վերր ։

Դարձեալ և այլ կրճիմք էին տեսչութե̃ Սիրակուսայ և պատճառք ստէպ խռովուե̃ցն ։ Զի յիշէին հանապազ սիրակուսացիք զքաջայաղթ արութի̃ն ընդդէմ ահաւոր զօրութե̃ կարքեդոնացւոց, և զաշխարհակալութի̃ և զահարկութի̃ զինուց իւրեանց մինչև ցամուրս Կարքեդոնի, ոչ հարևանցի ինչ՝ որպէս յետոյ ընդդէմ աթենացւոց, այլ յերկարատև և ընդ բազում դարս. և այնքան խրոխտացեալ 'ի զօրութի̃ իւրեանց ընդ ծով նաւատորմաւն և բազում զօրօք, զի 'ի ժամանակի արշաւանացն Պարսից յԵլլադա՝ խնդրէին հաւասարել աթենացւոց կամ բաժանել ընդ նոսա զծովակալութի̃ ։ Եւ մեծութի̃ք՝ արգասիք վաճառաշահութե̃՝ յաւելուին զխրոխտութի̃ն նոցա և զամբարտաւանութի̃ և զսաստ իշխանական. հանդերձ սոքիմբք և մեղկէին զնոսա, և առ ա̃մ աշխատութի̃ և վաստակ տաղտուկս առնէին ։ Ճարտարախօսք տիրաբար իշխէին նոցա, և ա̃մ ժողովուրդն կախեալ կային զնոցանէ. սաստից ևեթ և փաղաքշանաց անսային ։ Եւ թէպէտ արդարասէրք էին 'ի բնէ և մարդասէրք և հեզք, այլ խռովարար ատենաբանիցն հրապուրանօք մղեալ զառածանէին 'ի կարի իսկ բռնութի̃ս և յանդգնութի̃ս, և երագ ստրջացեալ ապաշաւէին ։ 'Ի կալն ինքնիշխան՝ համարձակ ազատութե̃ն վաղ զեղծանէին յանձնահաճ կամս 'ի յախուռն բերումն և 'ի բռնութի̃, 'ի դէպ է ասել թէ և 'ի մոլեգնութի̃ ։ Իսկ 'ի նուաճելն ընդ լծով՝ վատք և վեհերոտք էին, նկունք և նուաստք մինչև 'ի ստրկութի̃ ։ Բայց 'ի հակառակս յունական բարուց և բնաւորութե̃ բռնի ստիպեալ ծնեալքն և սնեալք յազատութե̃, ոչ նախանձ չշիջանէր 'ի նոսա՝ այլ նուաղէր ևեթ, երբեք երբեք ընդոստնուին՝ որպէս յօրհասական թմբրութենէ սթափեալք, և զշղթայսն խզեալ, նոքօք՝ եթէ օրէն իցէ ասել՝ հարեալ սատակէին զշղթայիչսն զանիրաւս։

Հայեցեալ ևեթ 'ի կարգս պատմութեան սիրակուսացւոց՝ 'ի միտ առնումք, զի՝ որպէս Գալբա յետ ժամանակաց զՀռոմայեցւոց ասէր՝ և համարձակ ազատութեան և ստրկաբար ծառայութեան չկարէին տանել[1]։ Նմին իրի հմուտ առաջնորդաց էր 'ի միջասահմանին ունել զնոսա, և որպէս ազատս զնոսա թողեալ՝ իբր թէ սպասաւորել ևեթ նոցա 'ի խորհրդականութեան օգտակարացն, և արբանեկել 'ի գործ։ Քաջ գիտացին զայս թագաւորքն և իշխանք, զորոց ասացաքն, առ որովք Սիրակուսա եկաց խաղաղ և հանդարտ, հլու իշխանութեան և հնազանդ օրինաց։ Ապա ուրեմն աղմուկք և խռովութիւնք յանհմտութենէ առաջնորդաց քան 'ի յողդողդ բարուց ժողովրդեանն յաճախէին 'ի Սիրակուսա. զի իշխանք ոչ գիտէին զիշխեցելոցն զմիտս յանկուցանել յիւրեանս և որսալ զոգիսն, որ կարևորագոյն թագաւորաց և իշխանաց գիտութիւն է։

---

[1] Իշխելոց ես մարդկան՝ որք ոչ ձակ ազատութիւն կարեն տանել: կարի ծառայութիւն, և ոչ համար. Տակ. պատմ. ա. ժզ։

ԳԻՐՔ ՔՍԱՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ

ՇԱՐԱՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՅԱՋՈՐԴԱՑՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻ

Յերկուս պրակս զգիրս զայս բաժանեալ, յառաջնումն պատմեմք զիրս Միհրդատայ արքային պոնտացւոց, յերկրորդումն զթագաւորութեն Պտղոմեայ Լագեայ, և զԿղէոպատրայ երևելւոյն, յոր յանգի պատմութիւն Յունաց ։

ՊՐԱԿ ԱՌԱՋԻՆ

Ունի սա զմիջոց ժամանակի վաթսուն ամաց թագաւորութեն Միհրդատայ, և զերից ևս աւելի ամաց. յերեքհազար ութհարիւր ութսներորդ ամէ Ադամայ մինչև ցերեքհազար իննհարիւր քառասունևերրորդ ամն ։

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Թագաւորել Միհրդատայ յերկոտասանամենի 'ի Պոնտոս, և ունել զԿապադովկիա և զԲիւթանիա' հալածեալ անտի զթագաւորս. և Հռոմայեցւոց հաստատել զնոսա անդրէն. և յաղագս խորհելոյ Միհրդատայ 'ի միում աւուր զե̄ն Հռոմայեցիս և զԻտալացիս, որ էին 'ի կողմն Ասիա ։ Նախկին պատերազմն Հռոմայեցւոց ընդ Միհրդատայ, վասն տիրելոյ նորա 'ի կողմն Ասիա և 'ի Յունաստան, և զԱթէնս ևս նուաճելոյ. և Սիւղղայ զօրավար լեալ պատերազմին, և պաշարել և առնուլ զԱթէնս. և երեքկին յաղթութե̄ն ընդդէմ զօրավարացն Միհրդատայ մեծաւ պատերազմաւ, և 'ի չորրորդումն ամ̄ պատերազմին ջնջանել 'ի խաղաղութի̄. և յաղագս մատենադարանին Աթենայ, և Արիստոտելի մատենիցն' զոր ետ Սիւղղա տանել 'ի Հռոմ ։

Սկիզբն պատմուե̄ Միհրդատայ Եւպատորի արքային պոնտացւոց, որ զամս իբր երեսուն ընդ Հռոմայեցիս ժուժկալեալ 'ի մարտի, եղև անուանի ։ Եւ էր նա յարքունի ազգէ, յորմէ թագաւորք բազումք ընդ բազում

ԱՄ ԱՇ· Ն·Ք·

ժամանակս յաջորդեցին 'ի Պոնտոս ։ Եւ առաջին 'ի նոցանէ՝ ըստ ոմանց 'ի վիպագրաց՝ եկաց Արտաւազ, մի յեօթանց իշխանացն՝ որք զՄոգն սպանին, և թագաւորեցուցին 'ի վերայ Պարսից զԴարեհ որդի Վշտասպեայ ։ և Դարեհ ետ նմա փոխարէն զՊոնտոս ։ Բայց ոչ ոք զԱրտաւազ ընդ եօթնեսին իշխանսն համարի, և երևի բազում իրօք՝ զի էր նա ինքն որդի Դարեհի Արտաբարզան, ոսոխն Քսերքսի 'ի գահակալութեան Պարսից, զոր թագաւորեցոյց 'ի Պոնտոս հայր նորա կամ եղբայր՝ 'ի սփոփութիւն տրտմութեան ընդ նախամեծար ընտրութիւն Քսերքսեայ ։ Եւ որդի 'ի հօրէ կալեալ զթագաւորութիւն մինչև ցեօթնևտասն ազգ ։ և վեշտասաներորդ թագաւոր եկաց Միհրդատ Եւպատոր, զորմէ խօսիմք ։

3880 · 124
Մեմն · 'ի
թղթ· Փոտ· լա·
Ապպ· 'ի Մի
հրդտ· 177 ։

Երկոտասան ամաց էր Միհրդատ 'ի թագաւորել իւրում ։ Մինչ չև մեռեալ էր հայր նորա, եցոյց զնա փոխանակ իւր, և խնամակալ նմա կացոյց զմայր նորա՝ թագաւորել ընդ նմա ։ Բայց Միհրդատ ընդ գահակալելն սպան զմայր իւր և զեղբայր ։ և որպէս սկսաւ նոյնպէս և կատարեաց զթագաւորութիւն իւր ։ Ոչ ինչ 'ի սկզբան թագաւորութեան նորա գործք պատմին ։ բայց միայն զի կաշառաբեկ արարեալ զմի 'ի զօրավարացն հռոմայեցւոց՝ կալաւ զՓռիւգիա, և ժառանգէր զայն ։ և յետ ոչ բազում ժամանակի բարձին զայն 'ի նմանէ հռոմայեցիք, յորմէ սկիզբն եղև թշնամութեան նորա ընդ նոսա ։

3913 · 91
Յուստին· լը·
ա · բ ։
Ստրաբ· ժբ,
340 ։
Պլուտար· 'ի
Սիղղ· 459 ։
Ապպ· 'ի Մի
հրդտ· 176 ։

Իբրև Արիարաթ արքայ կապադովկացւոց մեռաւ՝ սպան Միհրդատ զերկոսին որդիս նորա, ոչ խնայեալ 'ի մայր նոցա 'ի Լաւոդիկէ քոյր իւր ։ Եւ կալեալ զԿապադովկիա՝ կացոյց անդ զմի յորդւոց իւրոց՝ որ դեռ ևս մանուկ էր, և կոչեաց զնա Արիարաթ ։ և զԳորդիոս կարգեաց ոստիկան նմա, հազարապետ 'ի վերայ աշխարհին ։ Եւ զարհուրեցաւ Նիկոմեդէս արքայ բիւթանացւոց 'ի զօրանալ Միհրդատայ, թէ գուցէ ժամանակաւ և զաշխարհ իւր գրաւեսցէ ։ և գտեալ մանուկ մի ճարտար 'ի կեղծաւորութեան, համբաւեաց զնա երրորդ որդի Արիարաթայ ։ և զԼաւոդիկէ, զոր յետ առն նորա մեռանելոյ կին արար, ստիպեաց վկայել զնա որդի իւր ։ և առաքեաց զնա 'ի Հռոմ՝ օգնական 'ի թիկունս կալ նմա յատենի, և պատսպարան լինել խնդրուածոյ սուտ որդւոյն ։ Բայց ծերակոյտն իբրև լուաւ զդատաստանն, զերկոսին կողմանսն ևս դատապարտեաց, և հրովարտակաւ զկապադովկացիս ազատ կացոյց ։ Այլ նոքա ոչ յանձն առին անտէրունչ կալ ։ և հրաման ետ նոցա ծերակոյտն՝

ընտրել իւրեանց թագաւոր, և ընտրեցին զԱրիոբարզան՝ զայր ազնուական յազգայնոցն. և պատուէր տուաւ Սիղղայ, որ այն ինչ զիշխանութ՟ի ատենակալութ՟են կատարէր, ածել թագաւորեցուցանել զնա։ Բայց թէպէտ և զայս պատճառս առին հռոմայեցիք արշաւանացն, այլ կամէին նկուն առնել զՄիհրդատ, որ երթայր և զօրանայր և զանգիտեցուցանէր զնոսա։ Եւ կատարեաց Սիղղա 'ի միւսում ամի զպատուէրն. և հարեալ զբազումս 'ի կապադովկացւոց, և զբազմագոյնս ևս 'ի Հայոց՝ որ յօգնութ՟ի նոցա եկեալ էին, հալածեաց զԳորդիոս սուտ Արիարաթուն հանդերձ, և թագաւորեցոյց զԱրիոբարզան։ ԱՄ ԱՇԽՐ 3914 · 90

Մինչ դեռ Սիղղա բանակեալ էր առ Եփրատ գետով, եհաս առ նա Որոբազ՝ ազգաւ պարթև՝ հրեշտակ յԱրշակայ[1] արքայէ, կռել ուխտ բարեկամութ՟ե ընդ հռոմայեցիս։ Եւ հրամայեաց Սիղղա յընդունելն զնա՝ արկանել աթոռս երիս 'ի խորանին, մի Արիոբարզանայ՝ որ անդ էր, և միւս Որոբազայ, և 'ի մէջի զիւրն։ Վ՟ն որոյ բարկացեալ ապա թագաւորն Պարթևաց ընդ Որոբազ՝ թէ ընդէ՞ր խոնարհեցաւ առաջի խրոխտ հռոմայեցւոյն, ետ սպանանել զնա։ Աստ նախ Պարթևաց ընդ հռոմայեցիս եղեն իրք։

Միհրդատ ոչ իշխեաց յայնժամ հակառակ կալ թագաւորութ՟են Արիոբարզանայ. այլ ոխս մթերեալ պահէր 'ի սրտի ընդ հռոմայեցիս, և խնդրէր պարապ վրէժ խնդրելոյ 'ի նոցանէ։ Եւ խորհուրդ կալեալ առնել թիկունս հաստատութ՟ե, միաբանեաց նախ ընդ իւր զՏիգրան զմեծազօր արքայն Հայոց։ Զհայաստան աշխարհ կալան նախ պարսիկք, և 'ի նոցանէ առին զայն մակեդոնացիք. ապա յետ Աղեքսանդրի մեռանելոյ եղև մարզ աշխարհին Ասորւոց։ Եւ առ թագաւորութ՟բ Անտիոքոսի մեծի՝ Արտաշիաս և Զատրիադր զօրավարք առաքեցան անդր, որպէս թուի՝ 'ի կուսակալել։ Եւ 'ի պարտել Անտիոքոսի՝ միաբանեցին ընդ հռոմայեցիս, և հրովարտակաւ նոցա թագաւորեցին՝ բաժանեալ յիւրեանս զաշխարհն։ Եւ էր Տիգրան, զորմէ ասացաքն, յազգէ Արտաշիասայ. և կալաւ նա միահեծան զՀայս, և զինու զօրութ՟բ նուաճեաց աշխարհս բազումս շուրջանակի, և կանգնեաց թագաւորութ՟ի հզօր։ Եւ ետ նմա Միհրդատ զդուստր իւր Կղէոպատրա կնութ՟ե, և միաբանեաց զնա Ստրաբոն. Ժ. 531։

---

[1] Որ էր Միհրդատ երկրորդ.

ԱՄ.ԱՇ.Ն.Ք ընդ իւր ընդդէմ Հռոմայեցւոց. մինչև դաշինս կռել նոցա ընդ միմեանս, զի զա՟մ երկիրն առեալ պատերազմաւ կալցի Միհրդատ, և զգերին ա՟մ կահիւ Տիգրան:

3915. 89 Եւ սկիզբն արար գործոյ պատերազմին Տիգրան, հալածեալ զԱրիոբարզան 'ի Կապադովկիոյ՝ զոր Հռոմայեցիք եդուն նմա 'ի ժառանգութիւն, և կացոյց անդ զԱրիաբաթ որդի Միհրդատայ: 'Ի ժամանակին յայնմիկ ՝Նիկոմիդէս արքայ բիւթանացւոց մեռաւ. և թագաւորեաց անդրանիկն նորա համանուն հօր իւրոյ, որպէս անկ իսկ էր նմա թագաւորել: Բայց Միհրդատ յարոյց ընդդէմ նորա զՍոկրատ զեղբայր նորա կրտսեր, որ պատերազմաւ հալածեաց յաթոռոյ զեղբայր իւր: Եւ արքայքն երկոքին հալածեալք եկին 'ի Հռովմ՝ խնդրել օգնութիւն 'ի ծերակուտէն. և հաճոյ թուեցաւ ծերակուտին դարձուցանել զնոսա յաթոռ. և առաքեաց զԱկուիղիոս, և զԱլտինիոս թագաւորեցուցանել զնոսա: Եւ իբրև թագաւորեցուցին՝ խրախուսեցին զնոսա արշաւել յերկիր Միհրդատայ, և խոստանային զօրավիգն լինել նոցա. այլ նոքա ոչ իշխեցին տալ պատերազմ ընդ հզօր սահմանակցին: Բայց ՝Նիկոմիդէս ստիպեալ 'ի պատգամաւորացն իսկ՝ որոց խոստացեալ էր արծաթ բազում վասն թագաւորելոյ անդրէն, և 'ի պարտատեարցն ևս յասիական Հռոմայեցւոցն, յորոց գանձս բազումս յայն սակս 'ի փոխ առեալ էր, չկարաց 'ի ստէպ թախանձանաց նոցա հրաժարել. և ասպատակեալ յերկիր Միհրդատայ՝ զա՟մ արձակավայրն մինչև ցԱմաստրիս քաղաք ապականեաց, և դարձեալ աւարաւ՝ հատոյց զմասն ինչ պարտուցն:

Այլ ինչ զանխուլ էր 'ի Միհրդատայ՝ թէ յումմէ շարժեալ դրդեցաւ ՝Նիկոմիդէս արշաւել յերկիր իւր. և քաջ կարող էր հալածել զնա ունելով զօրս բազումս կազմ և պատրաստ, այլ ոչ խլրտեցաւ՝ որպէս զի վնասապարտք գտցին Հռոմայեցիք, և իրաւամբք տացէ ընդ նոսա պատերազմ: Եւ սկսաւ աղերսական յանդիմանութիւս յղել առ զօրավարս նոցա 'ի ձեռն հրեշտակաց, որոց առաջնորդ էր Պեղոպիդաս. և բողոքէր զՀռոմայեցւոց վասն դրժելոյ նոցա ուխտիցն եդելոց, և մանաւանդ զի ձեռն տային ՝Նիկոմիդեայ ոխերիմ թշնամւոյ իւրոյ: Խօսեցան և հրեշտակք ՝Նիկոմիդեայ, և բողոք կալան զՄիհրդատայ: Իսկ Հռոմայեցիք չև ևս կամեցեալ յայտ յանդիմանութ՟ թշնամի կամ բարեկամ լինել, ետուն տարտամ պատասխանի՝ թէ ժողովուրդ Հռոմայ ցանկայ ընդ խաղաղութ՟ի Միհրդատայ ընդ Նիկոմիդեայ ․ Բայց Միհրդատ չհանդարտեալ այնու բանիւ՝ խաղացոյց փութով զզօրս իւր 'ի Կապադովկիա , և վերստին հալածեալ անտի զԱրիոբարզան , թագաւորեցոյց զԱրիարաթ զորդի իւր որպէս միանգամ՟ն ։ Եւ առաքեաց հրեշտակս առ զօրավարս հռոմայեցւոց՝ տալ ընդ անձին պատասխանի , և դարձեալ բողոք ունել ։ Խօսեցաւ Պեղոպիդաս և ասէ ․ Միհրդատ զժողովուրդ Հռոմայ ընտրէ իրաւարար , և յղեաց նա հրեշտակս 'ի Հռոմ ։ Եւ յորդորէր զնոսա մի նախ քան զպատուէր ծերակուտին ձեռնարկել 'ի գործ , և մի յանդուգն մխել 'ի պատերազմ՝ որ մարթէր ածել 'ի վերայ նոցա չարիս ։ Ապա եթէ ոչ արասցեն նմա իրաւունս , անձամբ անձին կարող է առնել ։ Հռոմայեցիք ցասուցեալ ընդ խրոխտ համարձակութ՟ի նորա , ետուն պատասխանի՝ զի հանցէ Միհրդատ զզօրս իւր 'ի Կապադովկիոյ , և մի ևս նեղեսցէ զՆիկոմիդէս , և մի զԱրիոբարզան ։ Եւ Պեղոպիդայ հրաման ետուն վաղ մեկնել 'ի բանակէն , և մի ևս դառնալ անդրէն մինչև հնազանդեսցի Միհրդատ ։ Ըստ նմին օրինակի և զայլ հրեշտակս ընկալան հռոմայեցիք ։

Գրգռեցաւ ապա մարտ , և զօրավարք հռոմայեցւոց ոչ ևս մնային հրամանի ժողովրդեան կամ ծերակուտին ․ և Միհրդատայ կամք կատարեցան ։ Այլ նա 'ի բազում ժամ՟նակաց երկնեալ զպատերազմ՟ն՝ բազմացուցանէր նիզակակիցս , և միաբանեաց ընդ իւր ազգս բազումս ։ Էին 'ի բանակի նորա 'ի քսան և երկուց ազգաց զօրք այլալեզուք , և ընդ ամենեսին ընիկ բարբառով՟ն նոցա խօսէր համարձակ առանց սայթաքելոյ ։ Եւ զօրքն ամ՟ էին քսան և հինգ բիւրք հետևակաց , և չորք բիւրք հեծելոց , և կառք գերանդազէն հարիւր և երեսուն , և նաւք չորեքարիւր ։

Նախ քան զպատերազմ՟ն պատրաստեալ Միհրդատայ զզօրսն , խօսեցաւ ընդ նոսա բանիւք բազմօք առ 'ի խրախուսել զնոսա ընդդէմ հռոմայեցւոց , և ասէ ․ [1] Ոչ ևս ժամանակ է ընտրելոյ ընդ պատերազմ և ընդ խաղաղութ՟ի ․ հռոմայեցիք նախաձեռն առնեն 'ի մարտ , և ոչ տան պարապ խորհելոյ ․ ժամ է արդ պատերազմի և յաղթութ՟ե ․ և անշուշտ է մեզ յաղթութ՟ի , եթէ նովին քաջութ՟բ՝ որով բազում ուրեք և 'ի մօտոյ ընդ հռոմայեցւոց Յուստին. լը. գ-է.

---

[1] Համառօտեցի յայդ զխօսս Միհրդատայ , զոր Յուստինոս ամբողջ ածէ 'ի Տրոգոսէ Պոմպէոսէ ։ Մարթի [illegible] [illegible] բանից քաջի պատմագրին 'ի մէջ առնուլ ․ այլ ո՛չ , զի խորթեան մատենագրութեան նորա ։

իսկ պատերազմեցայք 'ի Լուսիթանիա և 'ի Կապադովկիա՝ բեկեալ զզօրս նոցա և հալածեալ, և աստ նոյնպէս պատերազմեսջիք: Ահա դէպ ժամանակ, և դիպողագոյն քան զայս չէք՝ մինչ 'ի միջերկրայս Իտալիոյ մոլեալ ասպատակէ պատերազմ, և Հռոմ 'ի համազգի պատերազմ պառակտի, և բանակ կիմբրացւոց զօրաց հասեալ 'ի Գերմանիոյ՝ հեղեղատէ զա̃մ Իտալիա: Արդ ժամանակ է ընկճելոյ զխրոխտ հասարակապետութիւն՝ որ մախայ ընդ փառս թագաւորաց, և երդուեալ իսկ է բառնալ զթագաւորութի̃ յա̃մ երկրէ: Յոյժ դիւրին է պատերազմս այսքան զոր ընդ ահագին անապատս սառնապատ Սկիւթիոյ արութ̃բ բազմաւ հարէք: Յերկիր բերրի ընդ բարեխառն երկնաւ երթայք պատերազմել, ուր քաղաքք ճոխք և բազմադանձք պատրաստեն ձեզ աւար: Ասիա մաշեալ անյագ զօշաքաղութ̃ բդեշխիցն, անողորմ խըստութ̃ հարկահանաց, և դժոխըմբեր անիրաւութ̃ դատաւորաց, գարշի յանուանէ իսկ հռոմայեցւոց, և ձեզ դէտակն կալեալ սպասէ որպէս ազատարարաց: Ո՛ հետ իմ եկա՛յք, ոչ 'ի պատերազմ՝ այլ յաներկեւան յաղթութ̃ և յաւարառութ̃[1]: Եւ ա̃մ զօրքն ձայնիւ ցնծութ̃բ ստէպ աղաղակաւ խրախուսէին քաջ և հաւատարիմ կալ:

Եւ կազմեցին հռոմայեցիք բանակս երիս զօրօքն՝ որ էին նոցա յայլ և այլ կողմանս փոքուն Ասիոյ. միումն առաջնորդէր Կասիոս կուսակալ կողմանցն պերգամացւոց, միւսումն Ակուիղիոս, և երրորդին Ոպպիոս փոխանակն բդեշխի՝ կուսակալ Պամփիղեայ: Եւ միոյ միոյ էին չորք բիւրք զօրաց ընդ հեծեալ և ընդ հետեւակ: Պարձեալ և Նիկոմիդեայ էին հինգ բիւրք հետեւակաց, և վեց հազար հեծեալ: Բայց անհրաման 'ի Հռոմայ, որպէս ասացաք, սկսան զպատերազմն. և անզգուշութ̃բ և անհմուտ առաջնորդութ̃բ նոցա՝ երեքին ես բանակք բեկան յայլ և այլ ճակատս, և Ոպպիոս և Ակուիղիոս գերեցան, և կրեցին զա̃մ նախատինս ։ Իսկ զԱկուիղիոս անհնարին թշնամանօք նախատակոծ արար Միհրդատ որպէս զառաջնորդ մարտին․ զի ետ հեծուցանել զնա յէշ, և իբրև 'ի հանդիսի անցուցանել զառաջեաւ զօրացն և 'ի տեսիլ նշաւակի ա̃մ ժողովրդեան, և բռնազբօսել զնա անձամբ զանձն յանուանէ քարոզել ։ Իսկ ետ վարել զնա հետի շղթայակապ ձեռամբ 'ի ձի, և արկանել ընդ բերան նորա կապար հալեալ․ և մեռաւ 'ի տանջանսն ։ Զսա միտիլինացիք չարաշուք նենգութ̃ մատնեցին Միհրդատայ 'ի ժամանակի հիւանդութ̃ն, յորժամ եկն առ նոսա հաստատել յառողջութ̃ ։ ԱՄ ԱՇԽ․Ե

---

[1] Այլ պատերազմ առաջի կայ. զի չէք քաղցրախառն օդ քան զասիականն, և ոչ երկիր արգաւանդ և ոչ քաղաքաց ցանկալի յաճախութ̃ն: 'ի տնախմբութ̃ն առաւել քան 'ի զինուորութ̃ն անցուցանիցէք զաւուրս, դիմեալք 'ի պատերազմ՝ դիւրագոյն արդեօք եթէ ճոխագոյն աւարաւ՝ ոչ գիտեմ:.... Ասիա սպառեալ մնայ, և իբր թէ ձայնէ զմեզ առ ինքն. այնքան ատելի են նմա հռոմայեցիք յափըշտակութ̃իք փոխանակաց բդեշխիցն, գրուածովք հարկահանացն (ա), և զըպարտութ̃իք: Յուստինոս:

(ա) Գրուածովք հարկահանաց յայտ առնէ [illegible] վաճառելն զինչս անձանց՝ որք զհարկն կամ զմուտս ոչ կարողանային, և հարկահանք յափշտակէին զկարասին նոցա և զստացուածս. իսկ զրպարտութ̃իք իմա զսուտ ամբաստանութիւն՝ որովք գրաւէին զինչս մեծատանց փոխանակ հարկաց կամ այլ պատճառանօք:

Բայց Միհրդատ վասն յանկուցանելոյ յինքն զսիրտ ժողովրդեանն 'ի համբաւ մարդասիրութ̃ իւրոյ՝ արձակեաց զա̃մ Յոյնս գերեալս, տուեալ նոցա և զպաշար ճանապարհին․ և գթութ̃ն այնուիկ եբաց զդրունս ա̃մ քաղաքաց, և յամենայն կողմանց գային ընդ առաջ նորա ձայնիւ ցնծութ̃, գովէին և օրհնէին զնա, և կարդային խնամող և հայր ժողովրդոց, ազատարար Ասիոյ, և զամենայն անուանս Դիոնիսի աստուածոյն տային նմա․ կարի նմանագոյն, զի քան զա̃մ թագաւորս ժամանակին արբեցող էր, յոր և պարծէրն իսկ անձնահաճութ̃, և մեծ փառս համարէր՝ զի արբեցութ̃ն ոչ զգլխէր ։

Դիոդ․ Ծոռն․ Վաղ․ 401 ։ Աթէն․ Ե․ 213 ։ Կիկ․ Դ Փլակ․ Կ ։

Պլուտարք․ Խրախճ․ Ա․ 624 ։

Սոքիմբք առաջնովք յաղթութ̃ք կալաւ զԲիւթանիա ընդ իւրով հալածեալ անտի զՆիկոմիդէս, և զՓռիւգիա և զՄիւսիա՝ զորս այն ինչ մարզ կացուցեալ էին Հռոմայեցիք, և զԼիկիա և զՊամփիլիա և զՊափլագոնիա և զայլ բազում գաւառս ։ Իսկ 'ի Ստրատոնիկիա քաղաք հանդիպեալ Մոնիմեայ օրիորդի, վասն չքնաղ կերպարանին էառ զնա ընդ իւր ։

3916 · 88 Ապպ․ 185․ Կիկ․ Մանիլ․ որ․ Է․

Հրաշէկ լեալ Միհրդատայ, զի Հռոմայեցիք և ա̃մ Իտալացիք՝ որ վասն իրաց ինչ էին 'ի փոքրն Ասիա՝ հնարս խորհէին գաղտ ընդդէմ իւր, յԵփեսոս քաղաքէ՝ ուր էրն՝ հրովարտակ արար լռելեայն առ գաւառապետս, և առ աւագանին ա̃մ քաղաքաց փոքուն Ասիոյ՝, կոտորել 'ի միում ժամանակեալ աւուր զամենեսին զնոսա, և մի 'ի կանայս խնայել, մի 'ի մանկունս և մի 'ի ծառայս․ և զդիակունս թողուլ անթաղ, և զինչս նոցա հատանել յարքունիս, կամ սպանողացն տալ․ և որ թաղեսցեն զնոսա կամ ապրեցուսցեն զոք 'ի նոցանէ՝ տուժեսցին

---

[1] Սա 'ի միում աւուր ընդ ա̃մ Ասիա յայնչափ քաղաքս պատգամաւ ևեթ և ազդարար գրով զա̃մ Հռոմայեցիս ետ սպանանել և գիշատել ։ Կիկ ։

ԱՄ ԱՌ. Ն. Ք. տոյժս ծանունս, և որք գուշակն լինին Թագուցելոյն՝ վարձս ընկալցին : Եւ գերեաց ազատութ̃ի խոստանալ՝ որ զտեարս իւրեանց սպանանիցեն, և պարտապանաց սպանողաց փոխատուացն իւրեանց՝ կէսոյ պարտեացն թողուլ : Արդ եթէ ընդ վէպս իրացն իսկ զարհուրեալ սոսկայ անձն, իսկ որպիսի՞ արհաւիրք եղեն 'ի գաւառն՝ յորժամ անգթութե̃ հրամանն կատարէր . Եւ սպանան ութ բիւր 'ի կոտորածին ընդ հռոմայեցի և ընդ իտալացի . են՝ որ գրեթէ կրկնապատիկ զսպանեալսն համարին :

Ապպ. 106 : Վել. պատեր. Նախն. ժզ. ժէ :

Ազդ եղև Միհրդատայ թէ են գանձք բազումք 'ի Կով, և առաքեալ եբարձ զայնոսիկ . և էին գանձքն Կղէօպատրայ եգիպտացւոց դշխոյին, որ մինչ պատերազմէրն 'ի փիւնիկէ ընդ որդւոյ իւրում Լաթիրայ՝ եդ զնոսա անդ յաւանդի . բայց յայնցանէ գտաւ անդ և ութ հարիւր քանքար, 'ի Հրէից բնակչաց փոքուն Ասիոյ տուեալ 'ի պահեստ վասն ահի պատերազմին :

Ապպ. 186 : Յովս. հնաւ. 402 :

Որք միանգամ 'ի համաշխարհական կոտորածէն Ասիոյ ապրեցան՝ անկան 'ի Հռոդոս, և ընկալան զնոսա հռոդացիք խնդութ̃՝ պատսպարեալ զնոսա յամրի . զի թէպէտ և եկեալ պաշարեաց զնոսա Միհրդատ, այլ վաղ մեկնեալ անտի մազապուր լինէր 'ի նաւամարտէն՝ յորում զբազումս 'ի նաւացն կորոյս :

Պլուտարք. 'ի Սիղղա. 458: Ապպ. 'ի Միհրդատ. 188 :

Միհրդատ յետ նուաճելոյ զփոքրն Ասիա, առաքեաց 'ի յունաստան զԱրքեղայոս զմի 'ի զօրավարաց իւրոց, և ընդ նմա երկոտասան բիւրս զօրաց : Եւ էառ նա զԱթէնս, և նստաւ անդ, և անտի պատուէր տայր զօրացն ընդ այն կողմն : Եւ որչափ ժամանակս կայր անդ՝ միաբանեաց զբազումս 'ի քաղաքաց և 'ի պետուե̃ց յունաստանի ընդ Միհրդատայ : Եւ զԴեղոս՝ զապստամբեալն յաթենացւոց՝ նուաճեալ հնազանդեցոյց նոցա . և զաւանդս սուրբս, զգանձս որ անդ 'ի պահեստի կային 'ի կղզւոջն, դարձոյց 'ի նոսա ընդ Արիստիոնի՝ զօրս 'ի ձեռն տուեալ նմա երկու հազար 'ի պահ արծաթոյն : Եւ Արիստիոն էր աթենացի, իմաստասէր յեպիկուրեանցն . և երկոքումբք հազարօքն կալաւ զ̃իմ իշխանութի յԱթէնս, և անագորոյն բռնութե̃ սպան զբազումս 'ի քաղաքայնոցն, և զբազումս մատնեաց 'ի ձեռս Միհրդատայ որպէս կուսակիցս հռոմայեցւոց :

5917 . 87 Մինչ դեռ այսոքիկ էին, առաքեցաւ Սիղղա 'ի վերայ Միհրդատայ . և չու արար փութով 'ի յունաստան հնգեքումբք լեգէոնօք, և գումարտակօք քանի մի, և հեծելովք : Եւ էր յայնժամ Միհրդատ 'ի Պերգամոն . բաշխեր բարեկամաց իւրոց գանձս և բարձս և այլ ազգի ազգի պարգևս ։

’Ի հասանել Սիղղայ ’ի յունաստան՝ բացին բնակիչք ա̃մ քաղաքաց առաջի նորա զդրունս, բայց միայն աթենացիք նուաճեալ ընդ լծով Արիստիոնի բռնաւորին՝ հակառակ կացին նմա, ոչ իւրեանց կամաւ ։ Իսկ Սիղղայ մտեալ յԱտտիկէ, և երկգնդեալ զզօրս իւր, կիսոցն հրաման ետ երթալ պաշարել զԱրիստիոն յԱթէնս, և զկէսս առեալ ընդ իւր խաղաց ’ի Պիրէոն ’ի նաւահանգիստն՝ որ էր որպէս միւս այլ քաղաք, և անդր անկեալ էր Արքեղայոս՝ յուսացեալ յամուրն, զի էին նմա քարապատուարք բարձրաբերձք իբր քառասուն կանգնաւ . շինուած հաստակառոյց՝ զոր կանգնեաց Պերիկղէս ’ի ժամանակի պեղոպոնեսական մարտին, յորժամ ա̃մ յոյս յաղթութե̃ ’ի նաւահանգստին էր, և ամրացոյց զայն ա̃մ ամրութե̃ք ։

Ոչ ինչ երկեաւ Սիղղա ’ի բարձրութե̃ պարսպացն . այլ զազգի ազգի կազմածս մեքենայիցն յառաջ մատուցեալ հարկանէր զնոսա, և ստէպ ’ի վերայ յարձակէր . և եթէ վայրիկ մի երկայնամտէր, առանց պատերազմի նուաճէր զամրոցն՝ որ ’ի նեղ մեծ կայր առ սովոյ ։ Այլ նա վաղվաղեալ դառնալ ’ի Հռոմ, և երկուցեալ՝ թէ գուցէ այլազգ ինչ իրք դիպիցին, յանձն էառ զամենայն վտանգ և զաշխատութի̃ և զծախս՝ զի փութով վճարեսցէ զպատերազմն ։ Թող զա̃մ սպառազինութի̃ և զկարասի մարտին, ’ի սպասաւորութի̃ ևեթ մեքենայիցն ջորիք երկու բիւր անդադար աշխատէին . և ’ի սպառել փայտից ’ի յաճախ նորոգումն մեքենայիցն՝ որ խորտակէին կամ խարխալեալ աւերէին ’ի ստուար ծանրութե̃ բեռանցն, և այրէին ’ի հրձգութե̃ թշնամեաց, ձեռն էարկ Սիղղա յանտառս սուրբս, և ետ հարկանել զչքնաղ ծառատունկս երկուստեք Ճանապարհացն Ակադեմեայ և Լիկէոնի, որպիսի արօտք ոչ գոյին յարձակավայրս, և ոչ ծառք գեղեցիկք իբրև զնոսա ։ Իսկ կործանեաց զպարիսպս բարձունս կցորդութե̃ Պիրէոնի ընդ քաղաքին, առ ’ի կանգնել աւերակօքն պատնէշս ։ Իսկ քանզի արծաթ բազում պիտոյ էր նմա վասն պատերազմին, և վասն յինքն յանկուցանելոյ զզօրսն և խրախուսելոյ զնոսա առատ պարգևօք, ձեռն էարկ ’ի գանձս անմատոյցս մեհենաց, և ետ բերել յԵպիդաւրեայ և յՈղիմպեայ զչքնաղ և զցանկալի նուէրս դիցն, և գրեաց ’ի Դեղփիս առ Ամփիկտիոնս և ասէ . Յղեալ առ իս զա̃մ գանձս առտուածոյդ՝ բարւոք և իմաստութեամբ գործիցէք, զի ապահովագոյն կացցեն առ իս. և եթէ հարկ լիցի ծախել ինչ յայնցանէ, յետ պատերազմին հատուցից: Եւ զԿափիս փոկլացի, զմի 'ի բարեկամաց իւրոց, արձակեաց 'ի Դեղփիս՝ բառնալ բերել զա՟մ գանձս կշռով: Նորա հասեալ 'ի Դեղփիս՝ երկեաւ ձեռն արկանել 'ի նուէրսն սուրբս, և ողբայր առաջի Ամփիկտիոնաց վասն հարկի հրամանին. և ոմանք 'ի մերձակայիցն յաւելին թէ ձայն Ապողոնի քնարին լսելի լինէր 'ի խորոց սրբութեանցն. և Կափիս հաւատացեալ այնմ, կամ առ յորդոր երկիւղածութեան գրեաց զայն առ Սիղղա: Իսկ Սիղղայ ծաղր արարեալ զդիւրահաւանութիւն նորա, ետ պատասխանի. Զարմանամ թէ չգիտիցես, զի երգ՝ խնդութեան է նշանակ, և ոչ բարկութեան և ցասման. առեալ բերջիր զգանձդ համարձակ, և լեր աներկիւղ՝ զի հաճոյ է աստուածոյն, և կամակար թողցէ զդոսա:

Պլուտարքոս աստ պատճառս առեալ, ցուցանէ զխտիրն ընդ նախնի զօրավարս հռոմայեցւոց և ընդ այնոսիկ՝ զորոց աստ խօսի: Նախնիք վաստակօք և եթ քաջութեան յաւագութիւն հասեալ, և հասարակաց բարւոյն միայն ուշ եդեալ, առանց վատ և անարժան հնարից իշխեցին և մեծարոյ էին զօրաց: Էին նոցա զօրք իմաստունք քաջակիրթք և հմուտք, որք առ գամ մի և անյապաղ կատարէին զպատուէր զօրավարացն: Արդարև իշխեցողք, ասէ Պլուտարքոս[1], վեհք և մեծախոհք մտօք, այլ անշուքք և համեստք կենօք, և ա՟մ պիտոյիցն իբրև զբաղումն: Ոչ ինչ աւելի քան զկարևոր և զարդար ծախս 'ի սպաս պաշտաման իւրեանց ծախէին 'ի գանձուց աշխարհին, առաւել ամօթ համարեալ շողոմել զզօրսն քան երկնչել 'ի թշնամեաց: Այլ այս ա՟մ յոյժ այլայլ գործէր 'ի ժամանակին, զորմէ խօսիմքս. զի զօրավարք հռոմայեցւոց՝ փառամոլք և զեղխք՝ հարկաւ որպէս գերիք էին զօրացն, և գնոց առնուին 'ի նոցանէ զպաստաւրութիւն՝ լցեալ զագահութիւն նոցա յորդ պարգևօք, և յաճախ ևս՝ ներելով անօրէնութեանց ծանունց, զարդար պատուհասին զանց արարեալ:

Միշտ իսկ կարօտ էր Սիղղա գանձուց առ 'ի յագեցուցանել զզօրսն, բայց մանաւանդ 'ի ժամանակին յայնմիկ առ 'ի կատարել զգործ պաշարմանն. զի յոյժ կարևոր համարէր զայն 'ի փառս և յապահովութիւն իւր: Բան զի կամէր առնուլ 'ի ձեռաց Միհրդատայ զքաղաքն , որ միայն մնայր նմա 'ի յունաստան խափան անցիցն հռոմայեցւոց յԱսիա , և բառնայր զամ̃ յոյս յաղթութ̃ · և Սիղղայ հարկ էր կորակոր դառնալ յԻտալիա , ուր ահաւորագոյն թշնամիք մնային նմա Մարիոս և կուսակիցք նորա ։ Դարձեալ զի խռուայր եւ ընդ Արիստիոնի բռնաւորին , որ զօրհանապազ բանիւք կսկծելեօք երգիծանէր զնա և զկին նորա զՄետելլա ։

---

[1] Իսկ նոքա արքայազունք սրտիւ, և 'ի ծախս սակաւապէտք էին:

Ոչ կարեմ ասել ո՛յք հզօրագոյնք և սաստկագոյնք գըտան , պաշարո՞ղք եթէ պաշարեալքն · քանզի երկուստեք զարմանալի քաջութ̃ անյողդողդք մարտնչէին ։ Պաշարեալքն ստէպ 'ի դուրս յարձակեալ , ճակատու պայմանաւ տային պատերազմ · և լինէր հարուած մեծ , և թիւ անկելոցն երկուստեք գրեթէ հաւասար ։ Բայց ոչ էր մարթ պաշարելոցն այնու զօրութ̃ զդէմ ունել , եթէ ոչ հասանէր նոցա ստէպ օգնութ̃ 'ի ծովէ ։

Անաստկարագոյն եղեն նոցա մատնիչք երկու՝ ստրուկք աթենացիք , որ էին 'ի Պիրէոն · քանզի միաբանեալ ընդ հռոմայեցիս , կամ առ յօժարութ̃ն ընդ նոսա , և կամ զի յառնուլ քաղաքին ապրեսցին , գրեալ 'ի գունտ կապարեայ զամ̃ որ ինչ 'ի ներքս անցք անցանէինն՝ ձգէին զայն պարսատկաւ առ հռոմայեցիս · և ամ̃ հանճարեղ խորհուրդք Արքեղայոսի , որ Պիրէոնի պահ ունէր , և Արիստիոն քաղաքին , 'ի դերև ելանէին ։ Խորհեցաւ ապա միահամուռ ամ̃ զօրութ̃ յարձակել 'ի թշնամիս , և մատնիչքն դարձեալ 'ի գնտակ կապարեայ ազդ արարին՝ թէ վաղիւ յայսմ ժամու անկցի հետևակազօրն 'ի պատնէշսդ , և այրուձին 'ի վերայ բանակիդ ։ Իսկ Սիղղա դարան նստուցեալ , եհար վանեաց զյարձակեալսն ։ Դարձեալ և նաւք ամբարաբերք յանցանելն գիշերայն 'ի քաղաքն , որ 'ի սով մեծ կայր , ըմբռնեցան մատնութ̃ ։ Բայց աթենացիք յայն ամ̃ վիշտս ոչ ինչ վհատեալ , առիւծաբար կռուէին ։ Զկէսս 'ի պարսպամերձ մեքենայից թշնամեացն այրէին հնարիւք , զայլս գետնափոր ականահատութ̃ ներքուստ 'ի վայր կործանեալ խորտակէին ։

Ոչ ինչ նուազ քան զթշնամիսն ճգնէին հռոմայեցիք · զի ական հատեալ ընդ երկրաւ մինչև 'ի պարիսպն , և զհողն 'ի ներքուստ 'ի բաց պեղեալ , 'ի մոյթս փայտեղէնս զհիմունսն կալան · և խանձ արկեալ և կուպր և ծծումբ և խծուծ բազում , մեկնեցան 'ի բաց ։ Իսկ իբրև նեցուկքն այրեցան , փլուզեալ նստաւ ահագին դղրդմամբ մասն մի մեծ պարսպին , և ընդ խրամատն լայն զիմէին 'ի ներքս հռոմայեցիք ։ Բայց մարտն յերկարեաց յերկոցունց կողմանց անպարտելի, մինչեւ հարկ եղեւ հռոմայեցւոց յետս ամփոփել. եւ 'ի վաղիւ անդր դարձան անդրէն 'ի նոյն տեղի ։ Բայց աթենացիք գիշերայն փութացեալ խրամնկարկատ արարին զպարիսպն, մահկաձեւ որմածեալ 'ի խոռեալ տեղւոջն. եւ անհնար եղեւ հռոմայեցւոց առնուլ զամուրն ։

Իսկ Սիղղայ վհատեալ յանյողդողդ դիմակալութենէ ամրականացն, խորհուրդ կալաւ՝ ոչ եւս 'ի վերայ յարձակել, այլ սովով նուաճել զՊիրեոն. եւ էր 'ի ներքս սով սաստիկ յոյժ, եւ չափ գարւոյ վաճառէր հարիւր դրամակշռոյ. եւ ոչ միայն զխոտ դալար, եւ զարմատս՝ որ շուրջ զամրոցաւն էին, այլ եւ զշաղիղ ձիոց եւ զմաշկ 'ի կօշկաց խարշեալ ուտէին ։ Իսկ մինչ ամենեքեան սովէին, բռնաւորն շուայտէր 'ի խրախճանս. եւ մատեան աւագանին եւ քուրմք, եւ անկեալ յոտս նորա աղաչէին՝ գթալ 'ի վերայ ժողովրդեանն, եւ խօսել ընդ Սիղղայ 'ի խաղաղութիւն. այլ նա տիգօք 'ի բաց վարեաց զնոսա ։

Իսկ իբրեւ յանհնարս եմուտ, ապա խնդրեաց դուլ առնել զինուց, եւ առաքեաց հրեշտակս առ Սիղղա ։ Նոքա եկեալ, փոխանակ կարեւոր հրեշտակուե՟ն եւ աղերսանաց՝ սկսան գովել եւ պանծացուցանել զԹեսեւս եւ զԵւմողպոս եւ զնահատակութ՟իս աթենացւոց ընդդէմ Մարաց. եւ Սիղղայ տաղտկացեալ՝ ոչ ետ նոցա այլ եւս բազմացուցանել զխօսսն, այլ ասէ. « Տեարք ճարտարախօսք, առեալ զգեղեցիկ ճառսդ՝ դարձայք 'ի տեղի ձեր, զի ես յԱթէնս ոչ 'ի լսել զնահատակութ՟իս նախնեացդ առաքեալ եմ, այլ 'ի պատուհասել զապստամբս ։

Մինչ դեռ հրեշտակքն յանդիման լինէին Սիղղայ, լրտեսք մտեալ 'ի քաղաքն՝ լուան զի խօսէին ծերք ոմանք 'ի Կերամիկոն.[1] թշնամանելով զբռնաւորն՝ զի ոչ կացուցանէր պահ կողման պարսպին, ընդ որ մարթէր թշնամեաց ելանել 'ի քաղաքն սանդղովք ։ Իսկ դարձեալ արանցն 'ի բանակն, պատմեցին Սիղղայի որ ինչ լուան ։ Իսկ հրեշտակքն դարձան ընդունայն. բայց Սիղղա ոչ անփոյթ արար զզրոյց լրտեսացն, այլ 'ի նմին գիշերի ել անձամբ զննել զտեղին. եւ տեսեալ զի արդարեւ դիւրամատոյց էր, հրաման ետ կանգնել սանդուղս. եւ յարձակեալ ընդ այն, կալաւ զպարիսպսն դիւրին պատերազմաւ, եւ եմուտ 'ի քաղաքն ։ Իսկ ոչ ետ հրձիգ առնել, այլ եթող զայն յաւար զօրականին. և գտան բազում ուրեք 'ի տունս խահագործեալ մարմինք մարդկան 'ի կերակուր: Այլ եղև նախճիր մեծ արեան: 'Ի վաղիւ անդր ետ Սիղղա 'ի ձայն քարոզի վաճառել զգերին, և քաղաքայնոցն ապրելոց 'ի սրոյ զօրականին շնորհեաց ազատութ՟ի: Այնօրին և զմիջնաբերդն պաշարեաց. ուր Արիստոն, և որ ընդ նմա 'ի ներքս ամրացեալ էին, վաղ ստիպեալք 'ի սովոյ և 'ի ծարաւոյ՝ անձնատուր եղեն. և բռնաւորն հանդերձ թիկնապահօքն, և որ իշխանք 'ի նմանէ կացեալ էին, 'ի մահ մատնեցան: ԱՄԱՌ. Ն.Ք

---

[1] 'Ի հրապարակին Աթենայ ։

Յետ ոչ բազում աւուրց կալաւ Սիղղա և զՊիրէոն, և այրեաց զա՟մ ամուրս նորա, և զզինարանն՝ որ էր Փիլոնի անուանի ճարտարապետին հրաշակերտ: Իսկ Արքեղայոս նաւատորմաւն փախեաւ 'ի Մունիքիա, 'ի միւս այլ նաւահանգիստ Ատտիկեայ:

Ա՟մ առաջիկայ չարաշշուկ եղև զինուցն Միհրդատայ: Տաքսիլ, մի 'ի զօրավարաց նորա, անցեալ ընդ Թրակիա և ընդ Մակեդոնիա՝ եհաս 'ի յունաստան բազմութ՟ տասն բիւրուք հետևակաց, բիւր հեծելովք, և իննսուն գերանդաւորն կառօք: Այլ Արքեղայոս եղբայր Տաքսիլեայ էր յայնժամ 'ի Մունիքեայ նաւահանգստին. ոչ հեռանայր 'ի ծովէ, և ոչ կամէր պատերազմել ընդ հռոմայեցիս, այլ յերկարաձգէր զգործ պատերազմին՝ զի սպառեսցին համբարք նոցա: Քաջ էր խորհուրդն, և կարծէին իսկ համբարք Սիղղայ, մինչև ստիպեալ 'ի սովոյ մեկնեցաւ յԱտտիկէ, և էանց 'ի դաշտավայրս Բէովտիոյ յերկիր բարի. և անդ եկն յարեցաւ 'ի նա Որտէնսիոս: Այլ համախմբեալ երկաքանչիւր զզօրսն, կալան յԱզատիա 'ի դաշտին լեառն մի պարարտ և ծառաւէտ, և առ ստիւք նորա խաղայր վտակ: Այլ իբրև բանակ կազմեցին, ետես զնոսա Թշնամին՝ զի սակաւք էին, քանզի էին միահամուռ հնգետասան հազար հետևակք և հինգ հարիւր հեծեալք, և ստիպեցին զԱրքեղայոս զօրապետք նորա դիմել 'ի պատերազմ, և մեծաւ Թախանձանօք հաւանեցուցին զնա: Այլ վաղվաղակի յառաջ խաղացեալ՝ ծածկեցին զդաշտն կառօք և երիվարօք, և բազմութ՟ զօրաց՝ որոց ոչ գոյր Թիւ. զի համախմբեալ զօրք երկուց եղբարցն, եղեն բանակ ահեղ. և աղմուկն և աղաղակ բազմաձայն ազգացն և բիւրաւոր զօրաց՝ որք պատրաստէին 'ի պատերազմ, և շուք և պերճութ՟ի կազմածոցն, և ա՟մ ինչ ահաւոր էր: Այլ շողին ոսկեճաճանչ և արծաթապատ ճոխ զինուցն, և մեգացի

3918 · 86
Պլուտարք. Ի
Սիղղ. 461:
Ապպ. 196:

և սկիւթացի վառատպանացն երփն պայծառ ընդ նշոյլս երկաթոյ և պղնձոյ խառնեալ, որպէս փայլատակմունք զաչս տեսողացն շլացուցանէին, և լնուէին արհաւրօք զոգիսն :

Զահի հարեալ հռոմայեցւոց, ամրացան 'ի պատնէշս իւրեանց. և ոչ կարացեալ Սիղղայ յորդորանօք և աղերսիւք քաջալերել զնոսա, և ոչ կամեցեալ բռնի զահաբեկեալսն մղել 'ի պատերազմ, հանդարտեաց երկայնամտելով դժոխըմբեր ձգամբ նախատանաց և երգիծանաց բարբարոսացն : Եւ այնպէս արհամարհեցաւ առաջի նոցա, զի և ոչ կարգաց պատերազմի զգուշանային. սակաւք յոյժ 'ի նոցանէ կացին մնացին 'ի պատնէշս, այլք ամենեքեան ցանկութ՟ աւարին դունդ դունդ ասպատակեալ գնային հեռի բազմօրեայ ճանապարհաւ. և շուրջանակի աւար հարեալ աւերեցին զքաղաքս :

Իսկ Սիղղա զայրանայր 'ի տեսանել զկորուստ քաղաքաց դաշնաւորացն առաջի աչաց իւրոց, զոր յարձակմամբ միով մարթէր խափանել. և խորհեցաւ հնարս, վաստակեցուցանել անհանգիստ զզօրսն 'ի ջրադարձս Կեփեայ փոքու գետոյ՝ առ որով բանակեալ էին, և 'ի պեղել խրամս լայնատարածս՝ պատճառանօք ամրութ՟. այլ 'ի միտս խորհէր, զի ընկճեալ 'ի ծանր վաստակոցն՝ յանձն առցեն զվտանգ մարտի : Եւ յաջողեցաւ խորհուրդն. զի զաւուրս երիս անհանգիստ աշխատեալ զօրացն, ապա իբրև անցանէր Սիղղա ըստ սովորութ՟ն այց առնել գործոյն, ձայն բարձեալ խնդրէին գնալ 'ի պատերազմ : Բայց Սիղղա ոչ դիւրահաւան եղև, այլ 'ի ստէպ թախանձել նոցա և 'ի յաւելուլ յեռանդն, ապա հրամայեաց զէն առնուլ, և խաղացոյց զնս՟ 'ի վերայ թշնամեաց:

Եւ խառնեցան ճակատքն առ Քերոնեաւ. բայց թշնամիք բազմութ՟ զօրաց կալեալ էին զմեծամուր սեպացեալ գագաթն Թուրիոնի լերին, որ ձգէր երկայնէր յահեկէ հռոմայեցւոց, և էր պատսպարան նոցա 'ի հարուածոց : Արք երկու քերոնացիք եկին առ Սիղղա, և խոստանային հալածել զթշնամիսն 'ի տեղւոջէ անտի ջոկատիւ միով փոքու ընտրելոց զօրաց. և ետ նոցա : Իսկ ինքն ճակատեցոյց զզօրս իւր, և զհեծելազօրն յաջ և յահեակ թև բաժանեաց, յաջումն ինքն կացեալ, և զձախոյ թևն տուեալ Մուրենայ : Եւ Գալբա և Որտենսիոս փոխանորդք նորա յերկրորդում կարգին զօրավարէին, Որտենսիոս 'ի ձախմէ յօգնութ՟ Մուրենայ, և Գալբա յաջմէ յօգնուն՟ Սիղղայ : Եւ երկայնէր զեզր այրուձին բարբարոսաց ընդ մեկնակազէն հետեւակս, և ոլորտանայր գայր 'ի բացէ պաշարել զերկրորդ կարգ Ճակատուն 'ի թիկանց. յայնժամ քերոնացիքն երկոքեան փոքու ջոկատիւն՝ որում զօրավարէր Իրտիոս՝ հասին կալան զգլուխ Թուրիոնի լերին անտես 'ի թշնամեաց. և յանկարծ արձանացեալ կացին ։ Իսկ բարբարոսքն զարհուրեալ և խուճապեալ՝ աճապարեցին 'ի փախուստ. և մղեալք 'ի միմեանց ընդ զառ 'ի վայր լերինն՝ գահավիժեալ անկանէին առաջի թշնամեաց, որք 'ի բարձանց հասեալ 'ի վերայ նոցա սուսեր յազդեր՝ հալածէին զնոսա. և կորեան անդ 'ի լերինն արք իբրև երեք հազար ։ Իսկ ապրեալքն 'ի նոցանէ, կէսք մատնեցան 'ի ձեռս Մուրենայ՝ որ այն ինչ Ճակատեալ գայր, և կալեալ զառաջս նոցա՝ արար կոտորած մեծ, և կէսք խառն 'ի խուռն 'ի բանակն դիմեալ՝ անկան 'ի կարգ Ճակատուն, և աղմկեալ խռովեցուցին զզօրս, և լցին խուճապաւ և արհաւրօք. և հարկ եղև զօրագլխաց անդրէն Ճակատ յարդարել, և մի 'ի գլխաւոր պատՃառաց պարտութե՟ մարտին եղև յապաղումն այն ։ Զայն աղմուկ խռովութեան պատեհ գտեալ Սիլլայ՝ յարձակեցաւ զօրուք 'ի վերայ նոցա, և սլացեալ ընդ միջոց երկուց բանակացն, արգել զաւերած գերանդազէն կառացն ։ Զի կառքս այս ընդ երկայն ասպարէզս զօրաւորք են՝ թափ և սաստկութի՟ առեալ շարժմամբն. իսկ յանձուկ միջոց՝ ուր չէք ընթացիցն ասպարէզ՝ անպիտանք են և անգործ, որպէս զփորձ առին յայնժամ բարբարոսքն ։ Զի այնպէս յամր և դանդաղ առաջին կառքն յարձակեալ գային, մինչև հռոմայեցւոց աղաղակաւ և մեծաձայն ծաղու յետս ընկրկեալ զնոսա անաշխատ՝ ձայն տային այլս յառաջ ածել, որպէս 'ի Հռոմ 'ի կառարշաւս կրկէսին սովորութի՟ էր ։

Իբրև գերանդազէն կառքն 'ի բաց վարեցան, ապա հարան ընդ միմեանս Ճակատքն. բարբարոսքն զերկայնաձիգ նիզակսն յառաջ մատուցանէին՝ մածեալ պնդեալ ընդ միմեանս, և վահանափակ պատսպարեալ անթափանց 'ի թշնամեաց. իսկ հռոմայեցիք զտէգս 'ի վայր եդեալ, և սուսերբ զնիզակս թշնամեաց 'ի բաց վարեալ, հուպ մատչէին 'ի նոսա՝ կռուել կատաղաբար ։ Իսկ 'ի տեսիլ յառաջամարտիցն եւս զայրանային, զի զբազմութի՟ ստրկաց արս հնգետասան հազար դարձուցեալ 'ի նոցանէ զօրավարք թագաւորին խոստմամբ ազատութե՟, ընդ սպառազէն հետեւակս կարգեալ էին 'ի Ճակատուն ։ Սոքա մեծաւ պնդութբ՟ և յանդգնութբ՟ կային առաջի հռոմա-

ԱՄ ԱՌ․Ն․Ք ծոյ հետեւակազօրացն հռոմայեցւոց անսասան․ զի այնպէս կարծր եւ ստուար էին գունդք նոցա, որ ոչ կարացին հռոմայեցիք հերձանել զնոսա կամ ընկրկել, մինչեւ մեկնակազէն հետեւակք՝ որ յետ կուսէ նոցա կային՝ նետիւք եւ պարսաքարօք խռովեցին զնոսա, եւ 'ի փախուստ դարձուցին։ Բայց Արքեղայոս զաջ թեւն յառաջ մատոյց, պատել զահեկաւն հռոմայեցւոց․ եւ Որտենսիոս զխուռն 'ի կողմանէ ածեալ մատուցանէր։ Իբրեւ զայն ետես Արքեղայոս, դարձոյց 'ի նա զերկու հազար այրուձին՝ զոր ածէր․ եւ Որտենսիոս երկուցեալ 'ի հարուածոյ բազմութե՟ հեծելագնդին, տակաւ 'ի լեառնն ընկրկէր․ քանզի հեռացեալ յոյժ 'ի բանակէն, 'ի վտանգի կայր պաշարելոյ 'ի թշնամեաց։ Բայց Սիղղա 'ի թիկունս եհաս նմա մասամբ աջոյ թեւին անխոնջ զօրօք․ եւ Արքեղայոս 'ի փոշւոյն՝ որ ելեալ դիզանէր՝ իրազեկ եղեւ, եւ թողեալ զՈրտենսիոս՝ դարձաւ յաջ թեւ, ուստի այն ինչ մեկնեալ էր Սիղղա, զի թերեւս յաղթեսցէ նոցա․ քանզի էին առանց զօրավարի։ Յայնժամ եւ Տաքսիլ եած 'ի վերայ Մուրենայ զհետեւակսն պղնձապատս․ եւ յաղաղակէ զօրացն երկուստեք՝ մերձակայ լերինք հնչէին․ եւ տարակուսեալ վարանէր Սիղղա թէ յո՛ դառնայցէ․ լաւ վարկաւ դառնալ 'ի տեղի՝ ուր էր զառաջինն, եւ պահել զաջոյ թեւն։ Իսկ զՈրտենսիոս չորիւք գումարտակօք յղեալ յօգնութի՟ Մուրենայ, ինքն մնացելովն եհաս յաջ թեւ, մինչ պատերազմէին անդ զօրքն ընդ Արքեղայոսի, եւ մարտն յերկոցունց կողմանց կայր անպարտելի։ Այլ իբրեւ տեսին զնա զօրքն, խրախուսեալ յերեւաց զօրավարին՝ հարին խորտակեցին զգունդս Արքեղայոսի, եւ ձիգ զհետ մտեալ փախստէիցն՝ հալածեցին զնոսա։

Զայն յաղթութի՟ մեծ կալեալ, եհաս ապա ստիպաւ յօգնութի՟ Մուրենայ, որ եւ նա յաղթօղ լեալ էր, եւ պարտեալ զՏաքսիլ։ Իսկ համախմբեալ զզօրսն երկոքեան 'ի միասին հալածեցին զփախստեայս․ եւ բազումք 'ի բարբարոսաց անկան 'ի Ճակատուն տեղւոջ, եւ բազմագոյնք 'ի փախստեն կոտորեցան դիմեալք 'ի բանակն․ եւ 'ի բազմաբիւր մարդկանէն՝ բիւր մի մնացին ապրեալք, փախուցեալ 'ի Քաղկիս։ Իսկ 'ի հռոմայեցւոց չորեքտասան արք կորեան, եւ 'ի նոցանէ եւս երկուքն դարձան ընդ երեկս․ զայս այսպէս գրէ Սիղղա 'ի գիրս յիշատակացն։

3919 ․ 85 Որ 'ի հռչակ մեծի յաղթութեանն՝ արար տօնս խաղուց երաժշտաց 'ի Թեբէ, եւ 'ի մերձակայ քաղաքաց յունաստանի ած մարտադիրս բաշխել զմրցանակսն․ զի ընդ թեբայցի յասուցեալ էր անհաշտելի ։ Նա զկէս երկրին նոցա առեալ նուիրեաց Պիւթեայն Ապողոնի և ողիմպիականն Արամազդայ, զի յեկամտիցն անտի նորոգեսցեն զա̃մ սպասն արծաթի՝ զոր եբարձ 'ի մեհենաց նոցա ։

Մինչդեռ այն ինչ կատարէին խաղքն, ազդ եղև զի Վալերիոս Փլակկոս՝ որ 'ի հակառակորդացն էր, զի 'ի ժամանակին յայնմիկ սաստիկ բորբոքէր հուր հակառակութեան Մարիոսի և Սիղղայ, եկաց բդեաշխ, և գայր հասանէր 'ի վերայ նորա զօրօք ընդ ծովն յոնիական՝ իբր 'ի վերայ Միհրդատայ դիմեալ ։ Նա չու արար վաղվաղակի 'ի Թեսաղիա, որպէս թէ ընդ առաջ նորա գնայր ․ այլ 'ի Մելիտեա[1] լուաւ համբաւ յա̃մ կողմանց, զի միւս ևս բանակ թագաւորին մեծ և հզօր քան զառաջինն ապատակեալ աւերէր զա̃մ երկիրն զկնի իւր ։ Քանզի Դորիղայոս եկեալ հասեալ 'ի Քաղկիս բազմութ̃բ նաւաց, ութսուն հազար սպառազէնս քաջ պատերազմօղս, զքաջակիրթս յա̃մ զօրացն Միհրդատայ, ած թափեաց 'ի Բէովտիա, և տիրեալ յաշխարհն՝ մնայր Սիղղայի, տալ ընդ նմա պատերազմ ։ Բայց թէպէտ և Արքեղայոս ջանայր շրջել զնա 'ի խորհրդոցն, պատմեալ նմա զա̃մ իրս պատերազմին՝ յոր այն ինչ պարտեալն էր, այլ ընդունայն եղեն խրատք նորա և աղերսական յանդիմանութի̃քն ։ Սակայն վաղ ծանեաւ Դորիղայոս, զի բարւոք և իմաստութ̃բ տայր զխորհուրդն ։

Զդաշտն Օրքոմենեայ ընտրեաց ասպարէզ մարտին ․ անդ Սիղղա փոս հրամայեաց հատանել աստի և անտի, զի մի 'ի լայնածաւալ դաշտին համարձակ կարասցէ խաղալ այրուձին թշնամեաց, այլ 'ի ճահիճսն անդր հեռասցին ։ Բայց բարբարոսքն դիմեալ ձիարձակ 'ի վերայ գործաւորացն՝ հալածեցին զնոսա, և զգունդս զօրաց՝ որ պահ ունէին նոցա՝ 'ի փախուստ դարձուցին ։

Իբրև զայն ետես Սիղղա, վազեալ 'ի ձիոյն և յափըշտակեալ զմի 'ի դրօշուց, ընդ մէջ փախստէիցն յարձակէր առ թշնամիս, և գոչէր ․ Ինձ, ո՛ հռոմայեցիք, փառք են այս մահ ․ բայց դուք որոց հարցանիցեն՝ թէ ո՞ւր թողէք զզօրավար ձեր, տո՛ւք պատասխանի՝ թէ յՕրքոմենոն ։ Իսկ զօրքն ամաչեցեալ 'ի կշտամբանացն, դարձան կատաղաբար 'ի հարուածս, և վանեցին զզօրս Արքեղայոսի ․ նոքա կարգաւորագոյն ևս ճակատեալ անդրէն դարձան, և վերստին վանեալ՝ յոլովք 'ի նոցանէ քան զառաջինսն կորեան ։

---

[1] Քաղաք 'ի Փթիովտիս յաշխարհին Թեսաղիոյ ։

'Ի վաղիւ անդր 'ի ծագել առաւօտուն էած Սիղղա զզօրս իւր մերձ 'ի բանակ թշնամեացն, կատարել ըղխրամսն. և յարձակեալ 'ի վերայ այնոցիկ, որ արտաքս ելեալ էին՝ նախաձեռն առնել մարտի և հալածել զգործաւորս, սաստկապէս հարեալ դարձոյց զնոսա 'ի փախուստ։ Եւ յաղմկէ փախստէիցն արհաւիրք անկան 'ի մնացեալ զօրսն. և ոչ ուրուք իշխեալ կալ 'ի պահ բանակին, եմուտ անդր Սիղղա խառն 'ի խուռն ընդ փախըստեայս, և կալաւ զայն։ Անդ էր տեսանել զճահիճսն ներկեալ յարիւն, և զծովակն լցեալ դիակամբք, և զբազում ամբոխ զօրաց թշնամեացն անկեալ յայլ և այլ ճակատս մարտին։ Իսկ Արքեղայոս 'ի լճին թաքուցեալ ընդ երկար, զերծաւ ապա 'ի Քաղկիս։ Իբրև այս ա̃մ գուժկան եհաս Միհրդատայ, զահի մեծի հարաւ. այլ ոչ վհատեցաւ այրն հնարագէտ. զօրաժողով լինէր, անդրէն զբանակն կազմէր։ Բայց կասկածեալ թէ գուցէ 'ի ձախողութ͞ե ժամանակին ապստամբութ͞ի կամ նենգ անձին իւրում գործիցի՝ որպէս միանգամն, յառաջագոյն զգուշացաւ՝ սպանեալ անգթութ͞բ զամենեսին յորոց խիթայրն, և ոչ 'ի կարևոր բարեկամսն խնայեալ։

Պլուտարքոս. 'ի Սիղղ. 466: և 'ի Լուկուլ. 493: Ապպ. 204:

Ոչ ինչ աւելի աջողեցաւ նմա յԱսիա, քան զօրավարաց նորա 'ի յունաստան։ Փիմբրիաս որ առաջնորդէր անդ զօրացն հռոմայեցւոց, եհար զընտիրս մնացելոց զօրաց նորա, և զփախստեայս հալածական տարաւ մինչև 'ի դրունս Պերգամայ՝ ուր նստէր Միհրդատ. որ փախուցեալ անտի ամրացաւ 'ի Պիտանա քաղաք ծովեզերեայ 'ի Տրովադա։ Անդր զհետ նորա հասեալ Փիմբրիաս պաշարեաց զքաղաքն ընդ ցամաք. այլ զի չէին նմա նաւք առ 'ի պաշարել զայն և ընդ ծով՝ առաքեաց առ Լուկուլլոս, զի էր նա յայնժամ նաւատորմուն հռոմայեցւոց 'ի մերձակայ ծովուն, և ասէ. Արդ ժամ է ստանալոյ քեզ պարծանս յաղթենական, ձերբակալ արարեալ զՄիհրդատ զանդերծանելին 'ի ձեռանէ քումմէ, և վճարել զմեծ և զկարևոր պատերազմս։ Բայց Փիմբրիաս և Լուկուլլոս էին հակառակ կողման կուսակիցք, և ոչ յանձն էառ Լուկուլլոս գործակից լինել նմա. և փախեաւ Միհրդատ ընդ ծով 'ի Միտիլինէ զերծեալ 'ի ձեռաց հռոմայեցւոց։ Սխալանք մեծ, որ ծանունց տուժից եղև նոցա պատճառ. որպէս պատահէ յաճախ՝ ուր հազարապետք և զօրավարք անմիաբանք իշխիցեն. որք զօգուտ աշխարհին ապախտ առնեն, զի մի հակառակորդացն յաւելցին փառք։

Եւ ապա Լուկուլլոս եհար զտորմիղ նաւացն Միհրդատայ, և երկիցս պարտեաց զնա մեծաւ յաղթութե̃ 'ի զարմացումն յոյժ ամենեցուն. զի պատերազմական արութեանց ոչ ակն ունէին 'ի նմանէ ։ Քանզի նա զառաջին հասակն 'ի հրահանգս ճարտարխօսութե̃ ետ, և 'ի ժամանակի գանձապետութե̃ն յԱսիա՝ ոչ ինչ պատերազմ մղեցաւ 'ի մարզն յայն. բայց բաւականութի̃ հանճարոյ նորա ոչ կարօտացաւ վարժից փորձոյն, որ ոչ ուսմամբ՝ այլ բազմամեայ ժամանակաւ աճողի։ Բայց զթերին փորձոյն յեղանակաւ իմն այլազգ ելից. զի ընդ ամենայն ճանապարհն և 'ի նաւարկել իւրում՝ մերթ զհմուտս հրահանգաց մարտի հարցանէր, և մերթ անձամբ զանձն կրթէր ։ Աստի դեռավարժ իւրոց պատերազմի մեկնեալ 'ի Հռոմայ, զօրավար քաջահմուտ յԱսիա հասանէր[1] ։ Սոցա նմանող լիցին և մեր արի մանկտին. զի այսպէս աւագ եղանին մարդիկ ։

Մինչ դեռ Սիղղա քաջայաղթ արութի̃ւ կանգնէր 'ի յունաստան, հակառակորդք նորա՝ որ հզօրացեալ էին յայնժամ 'ի Հռոմ՝ դատապարտեցին զնա որպէս թշնամի հասարակապետութե̃ ։ Եւ Կիննա և Կարբոն զա̃մ չարիս և անգթութի̃ւ գործէին ընդ արս լաւս մեծամեծս քաղաքին. մինչև բազմաց փախուցեալ յանտանելի բռնութե̃ն, ամփոփէին 'ի բանակն Սիղղայ որպէս 'ի նաւահանգիստ փրկութե̃. և 'ի սուղ ժամանակի ժողովեցան և եղեն առ նմա որպէս ծերակոյտ ատեան ։ Եւ Մետելլա կին նորա մազապուր լեալ որդւովքն, եկն պատմեաց նմա՝ զի թշնամիք այրեցին զտուն նորա, և զանդաստանսն փաղաղեցին. և աղաչէր՝ վաղ հասանել 'ի Հռոմ յօգնութի̃ մնացելոցն, որ կատաղութե̃ թշնամեաց կոխան լինէին ։ Իսկ Սիղղա 'ի տարակուսի մեծի կայր. հայեցեալ 'ի թշուառութի̃ հայրենեացն, ցանկայր վաղվաղել անդր յօգնութի̃. բայց և զգործն մեծ և զկարևոր թերի թողուլ, և մեկնել մինչ չև կատարեալ զպատերազմն Միհրդատայ, ոչ կամէր ։ Այլ մինչ դեռ վարանեալ կայր, եհաս առ նա վաճառական ոմն յԱրքեղայոսէ՝ խօսել ընդ նմա գաղտ, և յուսացուցանէր զնա 'ի խաղաղութ̃ի ։ Այլ յոյժ ուրախ լեալ ընդ այն Սիղղայ, փութայր գայր խօսել ընդ ինքեան իսկ ընդ զօրավարին ․ և յանդիման եղեն միմեանց առ ծովեզերբն մերձ 'ի Դեղիոն քաղաք փոքրիկ ։ Արքեղայոս, գիտելով զի հարկ էր Սիղղայ դառնալ յԻտալիա, յորդորէր զնա միաբանել ընդ Միհրդատայ, և առնուլ 'ի նմանէ արծաթ և զօրս և նաւս, և պատերազմել ընդ Կիննայ և ընդ կուսակիցս Մարիոսի ։ Նա 'ի սկզբանն ոչ ինչ զչարեալ ընդ խրատ նորա, ինքն իսկ զնա յորդորէր՝ մի ևս ծառայել խրոխտ և անգութ տեառնն, այլ թագաւորել 'ի գաւառս կուսակալութ̃ե իւրոյ ․ և խոստանայր բարեկամ և նիզակակից առնել զնա հռոմայեցւոց, եթէ տացէ 'ի ձեռս իւր զտորմիղ նաւացն Միհրդատայ, որոց հրամայէր ։ Իսկ 'ի մերժել Արքեղայոսի ցասմամբ զհրապոյրս նորա և յասել, Այ՞ս զմատնութ̃իդ զայդ առնիցեմ, յայնժամ Սիղղա՝ որպէս արդարև հռոմայեցի՝ իշխանական սաստիւ ասէ ․ Ապա եթէ դու սպայդ բարբարոսին, կամ մանաւանդ ստրուկ, վատութ̃ի համարիս մեկնել 'ի ծառայութենէ նորա, իսկ զիա՞րդ ժպրհեցար հրապուրել զայր հռոմայեցի՝ ապախտ առնել զօգուտ հայրենեաց ։ Կարծիցես թէ չիք խտիր ընդ իս և ընդ քեզ, կամ թէ մոռացա՞ր յումմէ պարտեցարն ․ ո՞չ դու այն ես, որ երկիցս 'ի ճակատու պատերազմի նկուն եղեր առաջի իմ, և 'ի վերջնումն փախուցեալ թաքեար 'ի մօրուտս Որքոմենեայ ։ Այլ Արքեղայոս զարհուրեալ 'ի սաստէն, ոչ ևս իշխէր խօսել ընդ նմա ։ Այլ յաղթեաց Սիղղա, և իշխանաբար պայմանս արար՝ 'ի բաց կալ Միհրդատայ յԱսիոյ և 'ի Պամփիղագոնիոյ, զԲիւթանիա դարձուցանել 'ի Նիկոմիդէս, և զԿապադովկիա յԱրիոբարզան, և տուժել զծախս պատերազմին երկու հազար քանքար, և տալ հռոմայեցւոց եօթանասուն նաւս պատերազմի ամենակազմս ․ և ինքն խոստանայր դարձուցանել 'ի նա զսահմանս բնիկ աշխարհին, և բարեկամ և նիզակակից առնել զնա հռոմայեցւոց ։ Հաճոյ թուեցան Արքեղայոսի պայմանքն ․ և վաղվաղակի սուրհանդակ արձակեալ, եցոյց զա̃մ Միհրդատայ ։ Այլ ել անտի Սիղղա գնալ յԷլլեսպոնտ, առեալ ընդ իւր և զԱրքեղայոս բազում մեծարանօք ։

---

[1] Ընդդէմ Միհրդատայ յղեալ 'ի ծերակուտէն, ոչ միայն ակնկալութե̃ ամենեցուն յաղթեաց քաջութե̃, այլ և փառաց նախնեացն ։ Եւ առաւել զարմանալի եղև այնու՝ զի զօրավարութե̃ պարծանաց ոչ էր 'ի նմանէ ակնկալութի̃. զի զմանկութի̃ 'ի ջանս ատենաբանութե̃, և զերկար ժամանակս գանձապետութե̃ն 'ի բաղում խաղաղութե̃ անցոյց յԱսիա, մինչ Մուրենա մղէր պատերազմ 'ի Պոնտոս ։ Այլ զարմանալի նորա հանճարոյն ընդարձակութի̃ ոչ կարօտացաւ անընդել հրահանգաց փորձոյն ։ Վասն որոյ 'ի ճանապարհին և 'ի նաւի մերթ զհմուտս հարցեալ, և մերթ զվէպս պատերազմաց ընթեռնլով, զօրավար քաջահմուտ եհաս յԱսիա՝ որ իւրոց պատերազմի անգէտ մեկնեալն էր 'ի Հռոմայ ։

Այլ հասին առ նա 'ի Լարիսսա պատգամաւորք Մի-

ԱՄ ԱՇ.Ն.Ք

հըրդատայ, և ցուցին զա՟մ պայմանսն հաճոյ և ընդունելի լեալ, բայց միայն զի 'ի Պափղագոնիոյ չառնոյր յանձն 'ի բաց կալ, և ոչ զեօթանասուն նաւսն պատերազմի թողուլ: Զչարեալ Սիղղայ վասն մերժելոյ պայմանացն, ասէ ցասմամբ. Իսկ զիա՞րդ. չկամիցի՞ Միհըրդատ թողուլ զՊափղագոնիա, և տալ զնաւսն պահանջեալս, որում պարտ էր իսկ գոհանալ և շնորհ ունել՝ եթէ զաջն ևեթ թողուլի 'ի նա, որով զտասն բիւր հռոմայեցիսն սպան: Արդ այժմ յարքունիս իւր 'ի Պերգամոն խաղաղ նստեալ, խորհի 'ի պատերազմ՝ զորոյ ոչ զփորձ առեալ է. այլ փոփոխեսցէ ընդ հուպ զբարբառ իւր յանցանելն իմում յԱսիա: Այսպիսի ոք խրոխտ էր Սիղղա. բայց այնու բանիւն ազդ առնէր Միհրդատայ, զի եթէ անձամբ 'ի պատերազմունսն լեալ էր՝ այլազգ խօսէր: Իսկ պատգամաւորքն զահի հարեալ 'ի բանից անտի, ոչ կարացին տալ պատասխանի և ոչ ինչ: Բայց Արքեղայոս աղաչեաց զնա և յանձն էառ երթալ հաւանեցուցանել Միհրդատայ զա՟մ պայմանսն, և գնաց: Իսկ Սիղղայ աւար հարեալ զա՟մ աշխարհն, դարձաւ 'ի Մակեդոնիա:

3920 · 84 Արքեղայոս դարձ արարեալ՝ եհաս նմա մերձ 'ի Փիլիպպէ. և յանձն առնոյր Միհրդատ զա՟մ դաշինսն, բայց ցանկայր խօսել ընդ նմա: Վասնզի երկնչէր 'ի Փիմբրիայ որոյ սպանեալ զՓլակկոս բդեաշխ՝ զորմէ վերագոյն ասացաք՝ եկաց առաջնորդ բանակին, և ստէպ տագնապաւ դայր հասանէր 'ի վերայ Միհրդատայ. և վասն այսորիկ խնդրէր Միհրդատ զբարեկամութիւն Սիղղայ: Յանդիման եղեն միմեանց 'ի Դարդանոն 'ի Տրովադա. էին ընդ Միհրդատայ երկերիւր նաւք պատերազմի, երկու բիւրք հետևակաց, և վեց հազար հեծեալ, և բազմութիւն գերանդաւորն կառաց. իսկ ընդ Սիղղայ չորք գումարտակք հետևակաց, և երկերիւր հեծեալ: Ընդ առաջ եղև նմա Միհրդատ, և աջ խաղաղութեան մատոյց. իսկ Սիղղա եհարց զնա՝ թէ առնուցո՞ւ յանձն զպայմանսն. և մինչ լուռ ևեթ կայր թագաւորն, յաւել և ասէ Սիղղա. Եթէ ո՞չ գիտես, Միհրդատ, զի աղաչաւորին անկ է խօսել, և յաղթականին լռել և լսել: Յայնժամ Միհըրդատայ սկսեալ պատասխանի առնել բանիւք բազմօք, զպատճառս մարտին 'ի դիմն և 'ի հռոմայեցիս արկանէր: Եւ լռեցոյց զնա Սիղղա, և զա՟մ բռնութիւնս և զանգթութիւնս նորա մի ըստ միոջէ յանդիմանեալ, եհարց դարձեալ՝ թէ առնուցո՞ւ յանձն զպայմանսն՝ որպէս Արքեղայոս եցոյց նմա ։ Իսկ Միհրդատ յոյժ զարմացեալ ընդ խրոխտ ամբարտաւանութի՟ նորա, յանձն էառ ․ և յայնժամ ընկալաւ Սիղղա զողջոյն նորա, և ած առ նա զԱրիոբարզան և զՆիկոմիդէս զթագաւորս, և հաշտեցոյց ընդ նմա ։ Այլ եւ Միհրդատ զեօթանասուն նաւսն սպառազէնս, և հինգ հարիւր աղեղնաւորս, և նաւարկեաց անդրէն ։

Բայց գիտէր Սիղղա զի ընդ ուխտ խաղաղութե՟ն չկամէին զօրքն ․ զի որ քան զա՟մ թագաւորս ոխերիմ թշնամին լեալ էր Հռոմայ, և 'ի միում աւուր կոտորեալ զտասն բիւր հռոմայեցիս՝ որ էին 'ի սփիւռս Ասիոյ, ոչ յանձն առնուին առնել ընդ նմա զայն քաղցրութի՟, եւ առաւել զպատիւն զայն, և բարեկամ և նիզակակից կարդալ զնա՝ մինչ դեռ արիւն համազգեաց իւրեանց ջերաջերմ 'ի ձեռս նորա ծխէր ։ Նմին իրի Սիղղա աղերսական բանիւք խելամուտ արար զնոսա, զի եթէ չէր յանձն առեալ զխաղաղութի՟ և մերժէր զՄիհրդատ, միաբանէր նա ընդ Փիմբրիայ ․ և 'ի գումարել զօրուե՟ երկուց թշնամեացն՝ հարկ էր նմա թողուլ զաշխարհակալութի՟ս իւր, կամ խիզախել 'ի մարտ ընդդէմ բազմաձեռն թշնամւոյ և երկուց զօրավարաց քաջաց, որ կարող էին զա՟մ յաղթութի՟ս նորա 'ի միում աւուր 'ի դերև հանել ։

Այս կատարած եղև առաջնոյ պատերազմին ընդդէմ Միհրդատայ, որ տևեաց զամս չորս ․ յորում ժամանակի կորոյս Սիղղա 'ի թշնամեաց աւելի քան զվեշտասան բիւր մարդիկ, և թափեաց զյունաստան և զՄակեդոնիա և զՅոնիա և զԱսիա և զայլ եւս բազում գաւառս՝ յորս տիրեալ էր Միհրդատ, և պակասեցոյց յոյժ զտորմիղ նաւաց նորա, և ամփոփեաց զնա 'ի սահմանս հայրենի թագաւորութե՟ն ։ Այլ քան զա՟մ իսկ այն զարմանք են՝ զի զերեամ ա՟մ համարձակութ՟բ պատրաստելով 'ի պատերազմ, մինչ զօրանային յԻտալիա հերձուածք Կիննայ և Մարիոսի, և 'ի պատերազմելոյ ընդ Միհրդատայ ոչ ձեռնթափ լինէր ։ Զի նախ զարտաքին թշնամին յաղթահարել պարտ համարէր, և ապա հնազանդել և պատուհասել զընտանին[1] ։ Այս յոյժ գովելի է արիունորա, զի չհզօր օգնականութի՟ն Միհրդատայ ընդդէմ Թշնամեաց իւրոյ չէառ յանձն, մինչ չև էր նորա ընկալեալ զդաշինս խաղաղութե՟:

---

[1] Ոչ ինչ 'ի գործս Սիղղայ պայծառագոյն թուի ինձ քան զայն, զի զերեամ 'ի զօրանալ երկպառակութե՟ն Կիննայ և Մարիոսի՝ համարձակ պատրաստէր ը՟դէմ նոցա 'ի պատերազմ, և ոչ 'ի սկսելոյն ձեռնթափ լինէր ․ քանզի պարտ համարէր ընկճել նախ զթշնամին, և ապա 'ի քաղաքայնոցն վրէժ խնդրել ․ և զի փարատել զարտաք-

Յետ ոչ բազում աւուրց խաղաց 'ի վերայ Փիմբրեայ, որ առ պարսպօք Թիւատիր քաղաքի 'ի Լիւդիա բանակեալ էր. և ինքն յանդիման նորա բանակ եհար, և պատնէշ ածէր շուրջանակի: Եւ զօրք Փիմբրեայ անզէն և անզրահ երթեալ ողջոյն տային և գիրկս արկանէին զօրացն Սիղղայ, և կամակար օգնական լինէին նոցա 'ի գործել զղակիշն: Իբրև ետես Փիմբրիաս զբարեկամու՟ի զօրաց իւրոյ ընդ նմա, և զի ոչ ակն ունէր Թողութե՟ վասն անհաշտ Թշնամութե՟ն Սիղղայ, հնարէր դաւաճանել զնա. և իբրև ոչ կարաց, չոգաւ զիւրովին:

Եւ արկ հարկ Սիղղա աշխարհին ասիացւոց երկու բիւր քանքար. և 'ի տունս իւրաքանչիւր բնակեցոյց ըզխեռ և զագահ զօրականսն յաւարհարու՟ի, զի որպէս 'ի քաղաքս նուաճեալս զհաճոյս կամաց իւրեանց առնէին: Եւ տանուտեարց իւրաքանչիւր հրամայեաց տալ հիւրոյն օր ըստ օրէ չորս դրամակշիռ առ այր. և նոցա, և բարեկամաց նոցա՝ որոց և խնդրեսցեն, պատրաստել առձիկ. իսկ զօրագլխաց օր ըստ օրէ յիսուն դրամակշիռ, և կրկին արկանելի՝ առտնին և 'ի հրապարակի:

Եւ կատարեալ զվրէժխնդրութի՟ն յԱսիա, դարձաւ յԵփեսոս բազմութ՟բ նաւացն, և եկն երեքօրեայ 'ի նաւահանգիստն Պիրէոնի: Եւ յաւագ խորհրդատոհմն նուիրեցաւ. և ստացաւ զմատենադարանն Ապելիկոնի, յորում էին մատենագրութի՟ք Արիստոտելի: Քանզի նա 'ի մեռանել իւրում աւանդեաց զայնոսիկ Թէոփրաստեայ միում յականաւոր աշակերտացն, և նա Նեղէոսի սկեպսացւոյ. և Սկեպսիս քաղաք է յԱսիա մերձ 'ի Պերգամոն: Եւ 'ի մեռանել Նեղէոսի անցին մատեանքն 'ի ձեռս ժառանգաց նորա արանց տգիտաց, որք փակեալ պահէին զնոսա յարկեղ: Իսկ իբրև Թագաւորք Պերգամայ սկսան ժողովել խնամով զգիրս 'ի մատենադարանի, քանզի և Սկեպսիս քաղաք էր ընդ իշխանութ՟բ նոցա, երկեան ժառանգք Նեղէոսի՝ Թէ զուցէ և զիւրեանցն բարձցեն, և առեալ ծածկեցին զնոսա 'ի նկուղ մի ստորերկրեայ. և կային անդ մատեանքն զամս իբր հարիւր և երեսուն, մինչև յետ բազում ազգաց զաւակն Նե-

Պլուտարք. 'ի Սիղ. 468. Ստրաբ. ԺԳ. 609: Աթէն. Ե. 214: Լայերտ. 'ի Թէոփր:

նոյն երկիւղ 'ի պարտել զօտարն, ապա ընտանւոյն յաղթէր: Վէլլ. Պատէրկ. Բ. Բ. Գ:

ԱՄԱՌ. ՆԹ. ղեայ չքաւորեալ 'ի վերջին կարօտութ՟, եհան վաճառեաց զայնոսիկ Ապեղիկոնի աթենացւոյ առն մեծատան, որ յամ՟ աշխարհէ ժողովէր գրեանս ցանկալիս 'ի մատենադարան իւր։ Այլ զի երկարութ՟ ժամանակաց և 'ի խոնաւոյ գետն ապականեալ, ետ գաղափարել զհաւասար նոցա. բայց էր 'ի բնագիրսն բազում ինչ թերի, զի էին 'ի նոսա փուտ և որդնակեր, և բազում ևս տողք ջնջագիրք. զորս գուշակեալ որպէս մարթէրն, լցին զթերի իմաստիցն և զբառից և զտառից, այլ ուրեք ուրեք յոյժ անարուեստ։ Աստի բազում ինչ 'ի մատեանսն Արիստոտելի դժուարիմաց լեալ, 'ի սկզբանէ և այսր աշխատ առնեն զմիտս իմաստնոց։ Արդ 'ի հասանել Սիղղայ յԱթէնս՝ այն ինչ մեռեալ էր Ապեղիկոն, և ստացաւ զմատենադարան նորա հանդերձ մատենիւքն Արիստոտելի, և զիւրն ճոխացոյց նորօք 'ի Հռոմ։ Այլ էր անդ յայնժամ Տիւրանիոն քերական անուանի, որ յոյժ ցանկայր մատենագրութեցն Արիստոտելի. և հրամանաւ դիւանապետին արար զօրինակ նոցա, յորմէ Անդրոնիկոս հռոդացի օրինակեալ հրատարակեաց զնոսա, և 'ի նմանէ զմեծի իմաստասիրին ընկալաք զմատենագրութիւնս։

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Միւսանգամ պատերազմի ընդդէմ Միհրդատայ՝ զօրավարութեամբ Մուրենայ, որ տևեաց զամս երիս. և հաշտութ՟ Միհրդատայ, և միաբանել նորա ընդ Սերտորեայ. և երրորդ անգամ պատերազմի ընդդէմ Միհրդատայ. և Լուկուղղեայ [illegible] յղեալ 'ի վերայ նորա, լուծանել զպաշարումն Կիւզիկեայ, և պարտել զզօրս նորա. և կատարեալ զյաղթութիւն՝ հալածել զնա 'ի Պոնտոս. և վասն աղէտաւոր մահուան քերցն Միհրդատայ և կնոջն, և անկանել նորա առ Տիգրան, որում զդուստր իւր տուեալ էր կնութեան. և Լուկուղղեայ ուղղութիւն յԱսիա։

3921. 83 Արշ. 213. Սիղղա 'ի դառնալ իւրում 'ի Հռոմ, եթող զՄուրենա 'ի վերայ Ասիոյ երկօքումբք Լեգէոնօքն Փիմբրեայ՝ վասն զգուշութ՟ երկրին։ Այս Մուրենա է հայր այնորիկ, վասն որոյ Կիկերոն զհրաշալի դատաստանութիւնն արար՝ որ յանուն նորա կոչի. և այն ինչ սկսանէր նա յայնժամ մտանել ընդ հօր իւրում 'ի պատերազմունս. 'Ի մեկնել գնալ Սիղղայ՝ դարձաւ Միհրդատ 'ի Պոնտոս, և խաղաց պատերազմաւ 'ի Կողքիս և 'ի Վոսփոր, որք ապստամբեալ էին։ Եւ խնդրեցին 'ի նմանէ Կողքեցիք թագաւորեցուցանել 'ի վերայ իւրեանց զորդի իւր զՄիհրդատ. և 'ի հաւանել նորա՝ իսկ և իսկ դարձան 'ի հնազանդութիւն։ Բայց Միհրդատ կասկած նենգութեան կալեալ զպատանւոյն՝ կոչեաց զնա առ ինքն, և հրամայեաց կապել զնա ոսկի շղթայիւք, և ապա եւս սպանանել։ Եւ էր նորա քաջայաղթ արութիւն գործեալ 'ի պատերազմին ընդդէմ Փիմբրեայ։ Տես ինձ դարձեալ քանի՜ կասկածոտ է գահասիրութիւն, և զի թագաւոր փառամոլ և յորդիմն թերահաւատ, երագամէտ է 'ի ծայրայեղ անօրէնութիւն, և առ խէթ մտաց կասկածանաց՝ 'ի կարևոր սիրելեաց չխնայէ։ Իսկ 'ի վերայ բնակչաց Բոսփորանի նաւատորմիղ մեծ կազմէր, և բանակ բազմամբոխ, մինչև կասկած տալ հռովմայեցւոց 'ի վերայ նոցա պատրաստելոյ։ Զի և զԿապադովկիա ոչ բովանդակ եթող յԱրիոբարզան, այլ խորեաց 'ի նմանէ. և խիթայր յԱրքեղայոսէ, զի ստիպեաց զնա 'ի խաղաղութիւն՝ որ էր նմա 'ի նախատինս և 'ի վնաս։ ԱՄ ԱՇ.Ն.Ք

Արքեղայոս իբրև իրազեկ եղև, զարհուրեալ յոսոխէն՝ առ Մուրենա ապաստանեցաւ. և ստիպէր զնա մեծաւ թախանձանօք ընդդէմ Միհրդատայ 'ի պատերազմ։ Եւ նա ցանկութեամբ փառաց յաղթանակին դիւրահաւան լեալ՝ ասպատակեաց 'ի Կապադովկիա, և կալաւ զԿոմանա զհզօր քաղաք աշխարհին։ Իսկ Միհրդատ հրեշտակս արարեալ, բողոք կալաւ վասն դրժելոյ ուխտին՝ զոր եդ ընդ հռոմայեցիս. և պատասխանի ետ նոցա Մուրենա, թէ ուխտին իսկ չեմ տեղեակ։ Զի ոչ ինչ գրով ետ Սիղղա Միհրդատայ, այլ զօմն բանիւք հաւաստարմացոյց։ Եւ ոչ դադարէր Մուրենա յաւարառութենէ, և ձմերեաց անդ։ Եւ արձակեաց Միհրդատ զհրեշտակսն 'ի Հռոմ, բողոքել առ Սիղղա և առ ծերակոյտն. և 3922 · 82 եկն պատուիրակ 'ի Հռոմայ առանց հրովարտակի, պատուիրել Մուրենայ հրապարակաւ՝ զի մի՛ նեղեսցէ զՄիհրդատ։ Այլ ամենեքին խաբէութիւն համարեցան զայն, զի և 'ի ծածուկ խօսեցաւ ընդ նմա այրն. և ոչ դադարեցուցանէր Մուրենա զասպատակն։ Եւ ել Միհրդատ զօրօք, անց ընդ Ալիս գետ, և պատերազմեալ ընդ Մուրենայ՝ պարտեաց զնա և հալածեաց 'ի Փռիւգիա, սպանեալ ամբոխ բազում 'ի զօրաց նորա։

Սիղղա, որ յայնժամ իշխանապետն էր, ոչ ևս երկայնամտեալ ընդ դրժել դաշանցն՝ զոր եդ ընդ Միհրդատայ, զի չև ևս դադարէր Մուրենա յասպատակելոյն, ԱՄ ԱՇ։ Ն.Ք. պատուէր խիստ յղեաց առ նա ընդ Կալլինեայ՝ թողուլ 'ի խաղաղութե՛ զՄիհրդատ, և հաշտեցուցանել զնա ընդ Արիոբարզանայ։ Նա լուաւ Մուրենա. և ետ Միհրդատ Արիոբարզանայ զմի յորդւոց իւրոց մանուկ չորեքամեայ 'ի պատանդ, և ոչ եթող զքաղաքսն՝ յորս կային 'ի նմանէ զօրք պահապանք, այլ ըստ ժամանակին խոստանայր դարձուցանել։ Նա արար ճաշ մեծ. և եդ մրցանակ՝ որ առաւելն շուայտեալ և արբեսցին, և որ յերգս և 'ի կատականս յաղթողք լինիցին՝ զամօթապարտ յաղթութե՛ն։ Կալլինիոս միայն չէառ յանձն զմրցումն զայն։ Այս կատարած եղև երկրորդի պատերազմին ընդդէմ Միհրդատայ, որ տևեաց զամս երիս, սուղ ինչ պակաս։ Նա դարձաւ Մուրենա 'ի Հռոմ, և յաղթանակեաց առանց մեծի քաջութե՛։

3926. 78 Բայց Միհրդատ ստիպեալ 'ի Սիղղայէ, դարձոյց զամ աշխարհն կապադովկացւոց յԱրիոբարզան. և 'ի նմին ամի մեռաւ Սիղղա, իսկ Միհրդատ հնարիւք իմն դարձեալ եհան զաշխարհն յԱրիոբարզանայ։ Զի Տիգրան արքայ կառոյց 'ի Հայաստան քաղաք մեծ 'ի հիմանց, և կոչեաց զայն յիւր անուն Տիգրանակերտ. և Միհրդատ՝ որ զդուստր իւր տուեալ էր նմա կնութե՛՝ յորդորեաց զնա առնուլ զԿապադովկիա, և փոխել զբնակիչս նորա 'ի նոր դաստակերտն և յանմարդի կողմանս աշխարհին իւրոյ։ Հաճոյ թուեցաւ Տիգրանայ, և ածեալ բնակեցոյց 'ի Հայաստան երեսուն բիւր մարդիկ։ Նա յայնմ հետէ յամ տեղեաց՝ ուր հասանէր պատերազմաւ, գաղթականս ածեալ՝ բազմամարդացուցանէր զաշխարհ իւր։

3928. 76
Ապպ. 216։
Պլուտարք. 'ի
Սերտոր։ 580.
581։

Ազդ եղև Միհրդատայ հռչակ համբաւոյն Սերտորիոսի, որ ահաւոր պատերազմօքն յարուցանէր 'ի վերայ հռոմայեցւոց 'ի Սպանիա, և հրեշտակս արար՝ միաբանել ընդ նմա ընդդէմ հասարակաց թշնամւոյն։ Զի որք մարդահաճոյք հաւասարեալ զնա Պիւռոսի, և զՍերտորիոս Աննիբաղայ, խրախուսէին զնա՝ թէ 'ի միաբանել քաջայաղթ և ամենահմուտ զօրավարին ընդ ամենազօր թագաւորին, և 'ի դիմել աստի և անտի 'ի վերայ հռոմայեցւոց, ոչ զօրէին նոքա կալ առաջի երկուց ահագին զօրուե՛ցն։ Նմին իրի յղեաց զհրեշտակսն 'ի Սպանիա նամականւով և պատուիրանաւ՝ խօսել ընդ Սերտորեայ. և խոստանայր նմա նաւս և արծաթ յօգնութի՛ պատերազմին, միայն զի կալցի անդրէն զգաւառս Ասիոյ՝ զորս ըստ հարկի իրաց ժամանակին եթող 'ի կռելն դաշինս ընդ Սիղղայ։

Եւ եկին հրեշտակքն առ Սերտորիոս. և ցուցին նմա զբանս Միհրդատայ. և կոչեաց Սերտորիոս զխորհրդականսն 'ի ժողով, զորս ծերակոյտն կոչէր, և հաճոյ թուեցան նոցա բանք Միհրդատայ. մանաւանդ զի առ ձեռն պատրաստ կային գանձքն և նաւք՝ զորս խոստանայր յօգնականութի̃, և ոչ դժուարին ինչ հրամանի մնայր 'ի գործ՝ զի և ոչ իշխանութի̃ էր նոցա խափանել զայն: Բայց Սերտորիոս մեծախոհութ̃, որպէս արդարև հռովմայեցի, չէառ յանձն կռել դաշինս 'ի նախատինս և 'ի վնաս հայրենեաց, և ոչ անիրաւութ̃ յաղթել իւրոց թշնամեաց: Եւ կոչեցեալ զհրեշտակս Միհրդատայ, ասէ. Կալցի Միհրդատ զԲիւթանիա և զԿապադովկիա, ոչ արգելում. զի դոքա միշտ իսկ ընդ թագաւորօք եղեն, և չեն անկ հռովմայեցւոց. այլ մտանել նմա 'ի փոքրն Ասիա՝ ուստի օրինաւոր ուխտիւք 'ի բաց եկաց, և որ արդ հռովմայեցւոց անկ է, ոչ հաւանիմ:

Իբրև լուաւ Միհրդատ զպատգամն, հիացեալ զարմացաւ. և որպէս պատմեն, ասաց ցբարեկամս իւր. Իսկ զինչ ոչ տացէ հրաման Սերտորիոս 'ի բազմէն յատեան ծերակուտին 'ի Հռոմ, եթէ արդ հալածեալ 'ի ծովեզր ատլանտականն Ովկիանու՝ սահման դնէ թագաւորութե̃ մերում, և սպառնայ պատերազմ 'ի կոխել մեր յԱսիա: Եւ ուխտ և դաշինս հաստատեցին, Սերտորիոսի տալ յօգնութի̃ Միհրդատայ զօրս և զմի 'ի զօրավարաց իւրոց՝ զի կալցի զԲիւթանիա և զԿապադովկիա, և Միհրդատայ տալ նմա փոխարէն երիս հազար քանքարս առ ժամայն, և քառասուն նաւս պատերազմի:

Եւ առաքեաց Սերտորիոս զօրօք յԱսիա զՄարիոս զմի 'ի հալածելոցն 'ի Հռոմայ ծերոց ծերակուտին, որ ընդ նմա իսկ մեկնեալն էր, և զոր յոյժ մեծարէրն Միհրդատ: Զի 'ի մտանել Մարիոսի 'ի քաղաքս խրձամբք և տապարօք զառաջաւորօք, զհետ նորա երթայր Միհրդատ, յօժարեալ երկրորդ լինել նմա, և համարել նիզակակից հզօր, թէպէտ և 'ի վայր քան զնա: Այնքան էր յայնժամ հռոմէականն մեծութի̃, զի և անուն հզօր պետութե̃ն մթացուցանէր զփառս և զզօրութի̃ մեծազօր թագաւորաց: Դարձեալ զի և օգուտ իսկ էր Միհրդատայ առնել այնպէս. քանզի Մարիոս որպէս 'ի հրամանէ ծերակուտին և ժողովրդեան Հռոմայ զքաղաքս բազում ազատէր 'ի ծանունց հարկաց՝ զորս եդ 'ի վերայ նոցա Սիղղա, և ասէր 'ի լուր ամենեցուն՝ թէ Սերտորեայ շնորհ է, զնմանէ գոհացարուք: Եւ այնու մարդա-

ԱՄԱՀ. Ն.Ք. սիրութ՟ն և անուամբն Սերտորեայ քան զօրութ՟ զինուցն աշխարհակալէր Միհրդատ ։

3929. 75 Ապպ. պտրզմ. Միհր. 175. 'Ի նմին ամի՝ Նիկոմիդէս արքայ բիւթանացւոց մեռաւ, և ժառանգեցոյց զթագաւորութիւն իւր հռոմայեցւոց. և յայնմ հետէ Բիւթանիա, որպէս յառաջ ասացաք, մարզ եկաց աշխարհին Հռոմոց ։ Յայնժամ խորհուրդ կալաւ Միհրդատ միւսանգամ տալ ընդ նոսա պատերազմ. և զայն ամ գրեթէ 'ի բուն՝ կազմեալ պատրաստէր զօրութ՟ մեծաւ. զի 'ի հեռանել Սիղղայ, մինչ դեռ աղմկէր աշխարհն Հռոմոց, զայն ժամ պատեհ վարկաւ ստանալոյ անդրէն զաշխարհսն կորուսեալս ։

Պլուտարք. 'ի Լուկուղ. 496. Բայց յառաջագոյն զփորձ առեալ, և թշուառութ՟ն խրատեալ, 'ի բաց արար 'ի բանակէն զամ՟ զէնս ոսկեհուռս և ականակապս, զի յայնմ հետէ համարէր զնոսա աւար յաղթականին, և ոչ զօրուն զինակրացն ։ Եւ ետ կռել սուսերս հռոմայեցիս, և վահանս ամուրս և բստուարս և պատրաստեաց երիվարս աշխոյժս և մարզիկս, և ոչ զարդարեալս. և երկոտասան բիւրս հետևակաց զինեալ և կրթեալ զօրէն հռոմայեցւոց, և վեշտասան հազար այրուձի սպառազէն, և հարիւր կառս գերանդազէնս երկայն գերանդեօք չորեքերիվարեանս ։ Կազմէր և բազմութ՟ նաւաց՝ ոչ ևս ոսկեճամուկ հովանոցօք փողփողեալ, այլ ազգի ազգի պահպանական և հարուածող զինուք ։ Այլ և զանձս բազումս պատրաստեաց 'ի թոշակ և 'ի պահպանութ՟ զօրաց ։ Եւ կալաւ նախ զՊամփլագոնիա և զԲիւթանիա ։ Եւ ասիացիք կողոպտեալ 'ի հարկահանաց և 'ի վաշխառուաց հռոմայեցւոց, վասն ազատելոյ 'ի հարստահարութ՟է նոցա՝ դարձեալ միաբանեցին ընդ նմա. ուստի շարժեալ դրդեցաւ երրորդ անգամ պատերազմն հռոմայեցւոց ընդ Միհրդատայ, որ տևեաց զամս իբր երկոտասան ։

3930. 74 Եւ առաքեցին հռոմայեցիք ընդդէմ նորա զԼուկուլլոս և զԿոտտաս բդեաշխս. Լուկուլլեայ տուեալ բաժին զԱսիա զԿիլիկիա և զԿապադովկիա, և Կոտտասայ զԲիւթանիա և զՊրոպոնտիս ։ Մինչ դեռ Լուկուլլոս զզօշաքաղութ՟ն և զբռնութ՟ հարկահանացն նուաճէր, և յապահովէր զաշխարհսն՝ ընդ որս անցանէրն, և հաստատէր զնոսա 'ի յոյս բարեաց, Կոտտասայ ժամանեալ՝ նախ քան զԼուկուլլոս, ժամ պատեհ համարեցաւ առնել միայնակ անուն քաջութ՟. և պատրաստեցաւ 'ի մարտ ։ Եւ 'ի լսել զգալուստ Լուկուլլեայ, և թէ ահա 'ի Փռիւգիա է, և ընդ հուպ հասցէ, առաւել փութայր 'ի պատեբազմ՟. և որպէս 'ի ձեռին ունելով զյաղթութի՟, չկամէր բաժանորդ առնել այնմ զիշխանակիցն ։ Բայց հարեալ ընդ ծով և ընդ ցամաք, կորոյս 'ի ծովամարտի նաւս վաթսուն՝ հանդերձ զօրօքն, և չորեքհազար այր ընտիր 'ի ցամաքի. և փախուցեալ ամրացաւ 'ի Քաղկեդոն, անկեալ յա՟մ յուսոյ օգնականութե՟ բայց եթէ Լուկուլլոս կամէր օգնել նմա ։ Իսկ սպայք՝ որ ընդ Լուկուլլեայ էին, զչարեալ ընդ յանդուգն յանձնապաստանութե՟ Կոտտայ՝ յորդորէին զԼուկուլլոս մտանել 'ի Պոնտոս, զի առանց զգուշութե՟ թողեալ էր զայն Միհրդատ, և ըզբնակչացն պատմէին թէ պատրաստ կան 'ի վտարանջել ։ Բայց Լուկուլլոս մեծախոհութբ՟ ետ պատասխանի, թէ ցանկալի և մեծ է ինձ՝ զմի ոք 'ի քաղաքայնոց ապրեցուցանել, քան նուաճել զա՟մ աշխարհս թշնամեաց. և անյիշաչարութբ՟ եհաս յօգնութի՟ իշխանակցին ա՟մ յաջողութբ՟ ։ Այս առաջին քաջութի՟ եղև Լուկուլլեայ, առաւելագոյն փառաց արժանի քան զայլ ամենայն պայծառ յաղթութիւնսն ։

ԱՄԱՌ․Ն․Ք

Բայց Միհրդատ քաջալերեալ կրկին յաղթութբ՟քն, խորհեցաւ պաշարել զԿիզիկոն քաղաք 'ի Պրոպոնտիս, վասն հզօրագոյն մարտնչելոյ բնակչացն զպատերազմ հռոմայեցւոց ։ Զի 'ի նուաճել զքաղաքն զայն՝ բանայր իւր ճանապարհ ընդ Բիւթանիա 'ի փոքրն Ասիա, որ կարևոր էր յոյժ առ դիւրագոյն և անվտանգ մղելոյ անդր զպատերազմ՟. նմին իրի խորհէր առնուլ զքաղաքն զայն ։ Եւ պաշարեաց զայն ընդ ցամաք երեսուն բիւր զօրօք, բաժանեալ զնոսա 'ի տասն առաջս. և չորեքարիւր նաւօք ընդ ծով ։ Անդր եհաս վաղվաղակի Լուկուլլոս, և կալաւ նախ զամրոցն՝ որ էր 'ի բլրի, կարևոր յոյժ 'ի տարուբերս համբարոց, և առ 'ի խափանել զթշնամեացն ։ Էին Լուկուլլեայ երեք բիւր հետևակք, և երկու հազար հինգ հարիւր հեծեալք. և 'ի բազմութե՟ զօրաց թըշնամւոյն ոչ ինչ զանգիտէր, այլ քաջայոյս ևս էր այնու՝ զի ամբոխին բազմութե՟ն պակասէին համբարք ։ Եւ խրախուսէր զզօրս իւր, և խոստանայր՝ ոչ յետ բազմաց ինչ աւուրց ստանալ առանց դոյզն արեան զյաղթութի՟ ։ Զի զայն համարէր պարծանս, և պատուական էին նմա կեանք զինուորացն ։

3931 . 73
Պլուտարք. 'ի
Լուկուլ. 497.
Ապպ. 219 ։

Յերկարեաց պաշարումն՟ քաղաքին և սաստկացաւ յոյժ. և հարկանէր զնա Միհրդատ յա՟մ կողմանց բիւր ազգի ազգի մեքենայիւքն ։ Ոչ ինչ նուազ և քաղաքացիքն դիմամարտէին զարմանալի քաջութբ՟, զա՟մ հնարս և զճար-

ԱՄԱՌ·Ն·Բ· տարութե՟ն 'ի կիր արկեալ առ 'ի վանել զթշնամին, և զմեքենայս նոցա զկէսս այրեալ, զայլս անպիտան արարեալ՝ խոյս ընդդէմ նոցա առարկանելով. քանզի յուսացեալ խրախուսէին 'ի Լուկուլլոս, որ վստահացոյց զն՟ա ընդ ազատու՟թ քաղաքին՝ եթէ նովին քաջու՟թ դիմակալեսցեն մինչ 'ի սպառ։ Որպէս եղեն իսկ. զի Լուկուլլոս ամրացեալ 'ի դիպող վայրի, առանց միահամուռ մարտի՝ յորմէ յոյժ զգուշանայր՝ անբաւ չարիս հասոյց զօրացն Միհրդատայ. քանզի արգել զպաշար նոցա, և որ զխոտոյ երթային՝ հասանէր 'ի վերայ նոցա, և հարկանէր զգունդս՝ զորս երբեք երբեք զօրահատոյց առնէր Միհրդատ։ Եւ համառօտ ասել, զա՟մ աջողութիւն և զդէպս յօգուտ արկեալ, այնպէս տկարացոյց զթշնամին, և արգել ամենևին զհամբար՝ ամրափակեալ զճանապարհս, զի սաստկացաւ սովն 'ի վերայ զօրացն յոյժ, մինչև խոտաճարակ լինել նոցա և շաղղակեր մարդկեղէն
3932. 72 մարմնոց։ Միհրդատ, որ քան զա՟մ զօրավարս ժամանակին խորագէտն համարէր, իբրև ետես[1] զի 'ի Լուկուլլեայ՝ որ ոչ 'ի բազում պատերազմունս մտեալ էր, խաբէր ստէպ կեղծ և պատիր շարժմամբք նորա, և առանց պատերազմի պարտէր 'ի նմանէ, յուսահատեալ յետ զերկեամ պաշարելոյ զքաղաքն՝ մեկնեցաւ կորակոր 'ի բաց. և փախեաւ ինքն ընդ ծով, և զօրավարք նորա ածին զզօրսն ընդ ցամաք 'ի Նիկոմիդիա։ Զհետ եղև նոցա Լուկուլլոս, և առ Գրանիկ գետով հասեալ՝ եհար 'ի նոցանէ երկուս բիւրս, և տարաւ գերի սաստիկ։ Յայնմ պատերազմի ասեն կորուսեալ Միհրդատայ իբր երեսուն բիւր մարդիկ, ընդ զօրական, ընդ սպասաւոր, և ընդ այլ ամբոխ բանակին։ Եւ յետ յաղթութե՟ն դարձաւ Լուկուլլոս 'ի Կիզիկոն, և անդ եկաց զաւուրս քանի մի. ուրախ լինէր ընդ փրկու՟թ քաղաքին՝ փառաւորեալ յամենեցունց. և ապա դիմեալ եկն 'ի ծովեզերս Հելլեսպոնտեայ, ժողովել նաւս և կազմել նաւատորմ։

Պլուտարք. 'ի Լուկ. 498։ Ապպ. 223։ Իսկ Միհրդատ լուծեալ զպաշարումն Կիզիկոնի՝ չոգաւ 'ի Նիկոմիդիա. և անտի նաւարկեաց 'ի Պոնտոս։ Եւ եթող զկէսս 'ի նաւացն յՀելլեսպոնտ, և բիւր մի յընտրելոյ զօրացն, և զերիս 'ի քաջ զօրավարաց ։ Եւ եհար զնոսա երկիցս Լուկուլլոս նաւատորմաւ հռոմայեցւոց[1], միանգամ 'ի Տենեդոն, և միւսանգամ 'ի Լեմնոս, մինչ պատրաստէին թշնամիք դիմել յԻտալիա, և ցծովեզերս Հռոմայ ածել աղմուկ և աւեր ։ Եւ 'ի կրկին հարուածոյն սպան գրեթէ զա͞մ բազմութի͞ն զօրաց նոցա, և 'ի վերջնումն կալաւ զերիս զօրավարսն՝ յորս էր Մարիոս մի 'ի ծերոց ծերակուտին, զոր Սերտորեայ յղեալ էր 'ի Սպանիոյ յօգնութի͞ն Միհրդատայ. և սպան զնա Լուկուլլոս, զի ոչ էր արժան զայր հռոմայեցի զաւագ ժողովրդեան ձաղել 'ի յաղթանակի ։ Միւսն 'ի նոցանէ դեղ առ անձամբ և մեռաւ. և մին եւեթ պահեցաւ 'ի շուք յաղթանակին ։ Լուկուլլոս ազատեալ զծովեզերս, ապա 'ի ներքսակողմն դարձոյց զզէնսն. և նախ զԲիւթանիա նուաճեաց, ապա զՊամփիւղագոնիա, և եհաս մինչև 'ի Պոնտոս, և մինչև 'ի միջերկրայս աշխարհին Միհրդատայ մղեաց զպատերազմն ։ 'Ի սկզբան արշաւանացն պակասեցին համբարքն, և հարկ եղև նմա ածել զհետ բանակին արս երեսուն հազար 'ի գաղատացւոց՝ բարձեալ իւրաքանչիւր գրիւ մի ցորեան ։ Այլ 'ի միջամուխ լինել յաշխարհն, և 'ի նուաճել քաղաքս և գաւառս, յաճախեաց առատութի͞ն ամենայն բարեաց. մինչև եզն մի վաճառէր դրամակշռոյ, և ստրուկ չորից դրամակշռոց ։

---

[1] Քանզի ա՟մ յարձակումն մարտին 'ի պարիսպս Կիզիկոնի մղէր, և համարէր զայն Միհրդատ գունդ Ասիոյ. զի եթէ բեկեալ խորտակէր զայն՝ համարձակ մտանէր յաշխարհն, նմին իրի զայս ա՟մ արար Լուկուլլոս, զի և հաւատարիմ նիզակակցացն քաղաքն պահեսցի, և բազմամբոխ զօրք թագաւորին յերկարաձգու՟թ պաշարմանն սպառեսցին։ Կիկ. Է. Մուրէն. ԼԳ։

Ոչ ինչ նուազ քան զաղէտս դառնութե͞ մարտին կրեաց Միհրդատ 'ի մրրկէ, 'ի նաւարկելն ընդ Սեաւ ծով. զի զապրեալսն 'ի պատերազմէ զօրս և նաւս, զոր յօգնութե͞ բնիկ աշխարհին ածէր, գրեթէ զա͞մ կորոյս անդ ։ Եւ մինչ դեռ անդրէն զօրաժողով լինէր ստիպաւ, վանել զմարտն՝ զորմէ կասկածէր, և ահա եհաս Լուկուլլոս ։ Որ ընդ հասանելն 'ի Պոնտոս՝ պաշարեաց զԱմիսոս և զԵւպատորիա զքաղաքս հզօրս աշխարհին, որ մերձ էին միմեանց ։ Եւ էր Եւպատորիա քաղաք նորակերտ, կոչեցեալ յանուն Միհրդատայ՝ որ Եւպատորն մականուանէր. ուր և բնակէր իսկ յաճախ, և խորհէր առնել զնա մայրաքաղաք աշխարհին ։ Եւ մինչ Լուկուլլոս պաշարէր զերկոսին քաղաքսն, զօրահաստոյց արար և 'ի Թեմիսկիրա՝ որ էր առ Թերմոդոն գետով քաղաք հզօր հանգոյն առաջնոյն։ Բայց սպայք նորա քրթմնջէին, զի ընդունայն դանդաղէր 'ի պաշարել զքաղաքս, և պարապ տայր Միհրդատայ բազմացուցանելոյ զզօրսն և ամրանալոյ. վասն որոյ պատասխանի արարեալ Լուկուղղոս, ասէ. Յայդ իսկ և ես դանդաղիմ, զի խրախուսեսցի Թըշնամին, և գումարեալ զօր բազում և յուսացեալ 'ի նոսա՝ ճակատեսցի 'ի պատերազմ, և մի խուսեսցէ յերեսաց մերոց։ Ո՞չ տեսանէք զանեզր զանսահման անապատզէնի նորա, ուր ոչ է հնար հետամուտ լինել և հասանել նմա։ Ոչ բազում ինչ աւուրց ճանապարհ է յանապատէդ 'ի Հայս. և Թագաւորէ անդ Տիգրան արքայից արքայ, որ հզօր զօրութ̃ զՊարթևս ընդ իւրև նուաճեաց, և զազգս Յունաց փոխեալ 'ի միջերկրայս Մարաց բնակեցոյց, կալաւ զԱսորիս և զՊաղեստին, և զազգն Սելևկեայ զԹագաւորս բարձեալ՝ զկանայս և զդստերս նոցա վարեաց 'ի գերութ̃։ Նա ինքն փեսայ է Միհրդատայ և հզօր նիզակակից. և կարծիցէ՞ք թէ անտես արասցէ զնա յապաւինել նորա առ ինքն, և ո՞չ համագունդ ընդ նմա մարտիցէ ընդդէմ մեր։ Իսկ 'ի փութալ մեր հալածել զՄիհրդատ, զուցէ զՏիգրան ստոյն յանձինս ձգիցեմք. զի նա 'ի բազում ժամանակաց պատճառս խնդրէ գրգռելոյ ընդ մեզ, և զի՞նչ պատճառք կայցեն գեղեցիկ և արդար և պատշաճ, քան օգնել աներոյ իւրում և Թագաւորի՝ որ յանհնարս անկեալ կայ։ Ընդէ՞ր մեզէն ձեռն տայցեմք Միհրդատայ, ցուցանելով նմա զօրավիգն, և բռնի վարեալ զնա առ Տիգրան, առ որ կարդալ վատութե̃ արդեօք Թուի նմա և անարժան մեծութե̃ իւրում։ Ո՞չ կարի իսկ լաւ իցէ Թոյլ տալ նմա խրախուսել և յուսալ 'ի զօրս իւր, զի ընդ Եգերացիս միայն և ընդ Տիբարս և ընդ կապադովկացիս լիցի մեզ պատերազմ, որոց բազում անգամ յաղթեցաք, քան խազախել 'ի վտանգ՝ յաւելեալ 'ի Թշնամիս և զՀայս և զՄարս։

---

[1] Նոյն ինքն զամենակալ զբազմամբոխ տորմիղ նաւացն, զոր զօրավարք Սերտորեայ անդադար մղեալ վարէին յԻտալիա, եհար և նուաճեաց ։ Կիկ. յաղ. Մանիլ. օրէն. իա ։ Իսկ թեթե՞ւ ձգամբք և դիւրին պատերազմաւ կարծիցես վճարեալ զնաւամարտն առ Տենեդեաւ, ուր նաւատորմ թշնամեացն երագսլացմամբ 'ի գոռ զօրավարացն վարեալ մղէր յԻտալիա՝ լի յուսով և արիութե͞ ։ Նոյն ջատ. Մուրէն. լգ ։

Մինչդեռ հռոմայեցիք 'ի վերայ երից քաղաքացն՝ զորոց ասացաք՝ մարտնչէին, Միհրդատ կազմեալ բանակ նոր՝ ընդ բանալ գարնայնոյն գրանիցն, չու արար 'ի պատերազմ։ Իսկ եթող Լուկուղղոս զԵւպատորիա և զԱմիսոս 'ի ձեռս Մուրենայ, որդւոյ այնորիկ՝ զորմէ յառաջ ասացաք։ Ոսմանէ վկայէ գովութ̃ Կիկերոն, զի շրջեալ ընդ Ասիա գաւառ բազմագանձ և գեղս, զե-

Թող հետս ագահութե՟ և զեղխութե՟[1]։ Իսկ 'ի մեծի պատերազմին բազում արուես գործեաց առանց զօրավարին․ իսկ զօրավարն առանց նորա և ոչ մի։ Իսկ խաղաց Լուկուլլոս ընդդէմ Միհրդատայ, մինչ բանակէր նա 'ի դաշտին Կաբիրեայ․ և յերկուս ճակատս յաղթեաց Միհրդատ, բայց յերրորդումն 'ի պարտու՟ի մատնեալ՝ 'ի փախուստ դարձաւ, և ոչ ոք էր ընդ նմա սպասաւոր կամ վահանակիր, և ոչ ձի յասպաստանէն։ Իսկ անագան տեսեալ զնա մի ոմն 'ի ներքինեացն, զի գնայր հետի ընդ փախստեայս, էջ յերիվարէն և հեծոյց զնա։ Իսկ մինչ հռոմայեցիք մերձ հասեալ՝ գրեթէ ունէին զնա, նոցին կամակարու՟ն փախեաւ․ զի ագահու՟ք զերծուցին 'ի ձեռաց զորսն, զոր 'ի բազմաց հետէ՝ բազում ձիգն և վըտանգս յանձն առեալ՝ մեծաւ պատերազմաւ հալածէին․ և Լուկուլլոս զմրցանակ ա՟մ յաղթու՟եցն կորոյս։ [2] Կիկերոն նմանեցուցանէ զՄիհրդատ Մեդեայ, որ անդստին 'ի Պոնտոսէ փախեաւ՝ հալածեալ 'ի հօրէ իւրմէ․ Քանզի պատմեն յօշեալ զդիակն եղբօր իւրոյ Աբսիրտեայ, և ցանեալ զճանապարհայն՝ ընդ որ հալածական գնայր առաջի հօր իւրոյ, զի առ սուգ ողորմ տեսլեանն և 'ի փութալ նորա ժողովել զցրուեալ անդամսն՝ դանդաղեսցի յընթացս։ Հանգոյն նմին և Միհրդատ 'ի փախչելն եթող 'ի վերայ ճանապարհին ոսկի և արծաթ բազում յոյժ և չքնաղ և ցանկալի իրս՝ զորս 'ի նախնեացն ժառանգեալ էր, և զորս յաւարէ պատերազմացն մթերեալ։ Իսկ մինչ զօրքն յաւար գանձուցն պատաղէին, ինքն թագաւորն զերծանէր 'ի ձեռաց։ Բայց զհայրն Մեդեայ տրտմու՟ի, իսկ զհռոմայեցիսն խնդու՟ի զհետ փախըստէին դանդաղեցոյց։

---

[1] Ընդ աշխարհն տախացուց ընդ բազմագանձ և ընդ զեղխ կանց, ոչ թողլով անդ հետս զօշաքաղութե՟ և զեղխութե՟ ։ 'ի մեծի պատերազմին բազում ինչ և մեծամեծ իրս առանց զօրավարին գործեաց, իսկ զօրավարն առանց նորա և ոչ ինչ։ ԿԻՒ․ Հռմ․ Մ–րէն․ Ն։

[2] Այնպէս Միհրդատ 'ի թագաւորութե՟ իւրմէ փախեաւ, որպէս զՄեդեայ փախուստն անդստին 'ի Պոնտոսէ պատմեն. զի հալածեալ 'ի հօրէ իւրմէ, զանդամս եղբօր իւրոյ ցան և ցիր զճանապարհայն արկանէր․ որպէս զի հօրն ժողովելով զնոսա տատի և անտի, և հայրենի ագուին դանդաղեսցի հետամուտ լինել։ Ըստ նմին օրինակի և Միհրդատ 'ի փախչել իւրում եթող զա՟մ բազմու՟ի ոսկւոյն և արծաթոյ և զչքնաղ ազգի ազգի իրաց՝ զորս 'ի նախնեաց ժառանգու՟է և զորս յաւարէ պատերազմի յա՟մ Ասիոյ մթերեալ էր յաշխարհ իւր 'ի Պոնտոս։ Եւ իբրև մերքն ա՟մ փութով զաւարաւն եղեն, ինքն թագաւորն զերծաւ 'ի ձեռաց։ Արդ զնա տրտմու՟ի, իսկ զնոսա խնդու՟ի յամեցոյց 'ի հալածել։ ԿԻՒ․ յաղ․ Մ–նիւ․ օրին․ իը։

Իսկ յետ յաղթութ՟են Լուկուլլոս կալաւ զԿաբիրիա քաղաք, և այլ բազում ամրոցս և բերդս. և եգիտ 'ի նոսա գանձս յոլովս, և արգելականս բազումս 'ի Յունաց, և 'ի թագաւորազանց 'ի կարևոր ազգականաց արքայի. որք 'ի բազում ժամանակաց հետէ 'ի թշուառութ՟ե բանտին կացեալ, և յայնժամ զազատութ՟ի գտեալ 'ի ձեռանէ Լուկուլլեայ, համարէին որպէս 'ի մեռելոց յառնել քան ազատել 'ի բանտէ։ Ընդ նոսին և Նիսա քոյր թագաւորին 'ի միում 'ի դղեկացն գերեցաւ, ըստ յաջողուածոյ բախտին. զի քորք նորա և կանայք Միհրդատայ, որք հեռի 'ի վտանգէն անկասկած կային յամրի, մահու չարաւ սպանան հրամանաւ Միհրդատայ, զոր ետ 'ի փախչել իւրում Բաքիդեայ միում 'ի ներքինեացն։

Էին ընդ նոսա և Հռոքսանէ և Ստատիրա քորք արքայի օրիորդք իբր քառասնամեայք, և երկու 'ի կանանցն՝ Բերենիկէ և Մոնիմէ՝ յոնիացիք. Մոնիմէ ընդ ա՟մ յունաստան համբաւէր զարմանալի ևս իմաստութ՟ն քան գեղեցկութ՟։ Որում Միհրդատ տարփացեալ, զա՟մ հնարս հնարէր ձգել զնա 'ի ցանկութ՟ի իւր. և 'ի միում նուագին յղեաց առ նա հնգետասան հազար ոսկի։ Բայց Մոնիմեայ հրաժարեալ մերժէր զպարգևս նորա, մինչև յանձն էառ Միհրդատ՝ տիկին և դշխոյ կացուցանել զնա, և ետ տանել նմա պսակ արքունի՝ որպէս 'ի կողմանսն յայնոսիկ անլոյծ օրէնք էին հարսանեաց թագաւորաց. Իսկ 'ի վերայ այսորիկ՝ դժկամակութ՟բ յանձն էառ Մոնիմէ, զիջեալ 'ի թախանձանս ընտանեացն՝ որք 'ի ձաձանչ թագին և 'ի պայծառութ՟է զօրութ՟են Միհրդատայ շլացան, զի էր յայնժամ յաղթող և փառաւորեալ։ Բայց Մոնիմէ ոչ ուրախ եղև յօրէ հարսանեացն և առ յապա, այլ հանապազ 'ի վիշտս կայր՝ ողբալով զչարաբաստ գեղեցկութ՟ն, որ փոխանակ հարսնութ՟ե գերի զնա արար, և փոխանակ վայելուչ բնակութ՟ե ընդ փեսային՝ բանտարգել արար զնա պահպանեալ յանձկի 'ի բարբարոսաց, ուր տարագիր 'ի ցանկալի գաւառացն Ելլադայ, երազէր զյոյս բարեաց՝ կորուսեալ զստոյգ և զհաւաստի բարութ՟ն՝ յոր վայելէր 'ի ցանկալի հայրենիսն։

Արդ իբրև եհաս Բաքիդ, և եցոյց տիկնացն զպատուէր Միհրդատայ, զի զօրինակ մահուն շնորհէր նոցա ընտրել՝ որ դիւրինն թուէր նոցա և արագավախճան, կորզեաց Մոնիմէ զապարօշն 'ի գլխոյ իւրմէ, և խեղդ ընդ անձն արկեալ՝ կախեցաւ. այլ 'ի ծանրութ՟է բեռինն ժապաւէնն խզեցաւ. ընդ որ տիկինն ցասուցեալ՝ արկ զայն 'ի բաց, և ասէ. Ո՛ չարաշուք պսակ, որ և ոչ զտխուր սպասդ մատուցեր ինձ. Եւ ետ զպարանոցն 'ի սուր Բաքիդեայ. ԱՄ ԱՇ. Ն.Ք.

Իսկ զԲերենիկէ՝ յառնուլ նորա զդեղ մահուն՝ աղաչեաց մայրն, զի և նա անդ էր, հաղորդ լինել բաժակին. և հաւանեցոյց զնա, և արբին երկաքանչիւր. Բայց թէպէտ և զմայրն՝ պառաւեալ և նուաղեալ 'ի բազում ամացն՝ պարտեաց կէս բաժակին, այլ ոչ կարաց յաղթել առոյգ զօրութեն Բերենիկեայ. և մինչ յերկար մաքառէր ընդ մահուն, ոչ սպասեալ Բաքիդեայ դեղոյն ազդեցութեն՝ խեղդամահ արար զնա.

Եւ զերկուց քերցն Միհրդատայ պատմեն, զի Հռոքսանէ անէծս և նզովս ցաւագինս կարդալով Միհրդատայ՝ եառ զդեղ մահու, իսկ Ստատիրա գոհանալով զնմանէ և շնորհս ունելով՝ զի 'ի կարևոր վտանգին ոչ ապախտ արար զնոսա, այլ օգնական եղև յազատօրէն մահ, զերծուցանելով զնոսա 'ի նախատանաց թշնամեաց.

Բայց Լուկուղղոս տրտմեցաւ յոյժ ընդ մահ նոցա, զի էր նա գթած և մարդասէր. Եւ խաղայր գնայր զհետ Միհրդատայ. այլ իբրև լուաւ, զի նա չորիւք օթևանօք յառաջեալ դիմէր 'ի Հայաստան առ փեսայն իւր Տիգրան, դարձ արար. և նուաճեալ զամենայն յազգաց և 'ի քաղաքաց՝ որ շուրջ բնակեալ էին, ապա յղեաց զԿղօդիոս առ Տիգրան՝ խնդրել 'ի նմանէ զՄիհրդատ. և ինքն դարձաւ յԱմիսոս՝ որ տակաւին պաշարեալ կայր. Քանզի Կալլիմաքոս, ճարտար քան զամենայն մարտա- 3934 · 70
յարդարս ժամանակին, պահ կալեալ քաղաքին՝ յերկարեցոյց զպաշարումն. Այլ իբրև ոչ ևս կարէր դիմակալել, հուր հարեալ 'ի քաղաքն՝ եմուտ 'ի նաւ մի պատրաստական, և փախեաւ. իսկ Լուկուղղոս գուն գործէր շիջուցանել զհրդեհն, այլ չեղև հնար. և 'ի յաճախութենէ տրտմութեանն ստիպէր մատնել զքաղաքն յաւար զօրացն՝ որք քան զոր հրոյն ոչ ինչ նուազ վնասակարք էին՝ անյագ ցանկութեամբ աւարառութեան, անսաստք զօրավարին. Բայց յաջողութեամբ անձրևոյ յոլովք 'ի շինուածոց ապրեցան. և զայրեցեալսն նորոգեաց Լուկուղղոս, և ապա մեկնեալ գնաց. Բայց Ամիսոս հատուած յաթենացւոցն բնակէր, որք 'ի վաղ ժամանակս փախուցեալ անդր 'ի խստութենէ Արիստիոնի՝ մինչ բռնակալէրն նա յԱթէնս, զբնիկ քաղաքացւոյ կարգ և պատիւ կալան.

Ապա մեկնեալ Լուկուղղեայ, չոգաւ յԱսիա. ասիացիք կեղեքեալ և հարստահարեալ 'ի վաշխառուաց և 'ի հարկահանաց, առ յոյժ կարօտութե՟ն՝ զուստերս և զդըստերս իւրեանց և զպատկերս և զդրօշեալս սուրբս դիցն քարոզիւ 'ի վաճառ անէին· և որք ոչն ձեռնհաս լինէին 'ի հատուցանել զսակ և զհարկ և զխափանած վաշխիցն, մատնէին 'ի ձեռս պարտատեարցն· և բազմաց այնպիսի անողորմ չարչարանս հասանէր կրել, զի զծառայութի՟ առայն ա՟մ չարեօք սփոփումն համարէին և խաղաղութի՟։ Իսկ պարտուց նոցա սկիզբն եղև 'ի տուգանացն երկուց բիւրուց քանքարաց, զոր արկ 'ի վերայ նոցա Սիղղա· և թէպէտ կրկնապատիկ հատուցաւ արծաթն, այլ հարկահանք զօշաքաղք վաշխս 'ի վերայ վաշխից յաւելեալ՝ պահանջէին 'ի նոցանէ վեց բիւր քանքար· և կրկնապատիկն ևս արծաթոյն՝ զոր հատուցին բնակիչք Ասիոյ՝ մնային նոցա պարտք։

Կարի յիրաւի ասէ Տակիտոս,[1] Թէ մի 'ի վաղեմի չարեաց էն վաշխք 'ի Հռոմ, և յաճախագոյն պատճառք խռովութե՟ց· այլ 'ի ժամանակին յայնմիկ անցեալ զանցեալ էին չարիքն քան զ՟ա՟մ չափ և պայման։ Զի էին վաշխք ամսօրեայք՝ մի առ հարիւր, և յայն սակս իսկ հարիւրորդք կոչէին կ՟մ ունկիական վաշխք, այսինքն երկոտասանորդք· զի ըստ ամիսս տարւոյ՝ երկոտասան առ հարիւր գումարէին վաշխքն։ Երկոտասան տախտակացն օրէնք չհրամայէին տոկոսիս աւելի քան զհարիւրորդն[2]· և օրէնքս այս վերստին հաստատեցան յերեքարիւրորդի իննսներորդի վեցերորդի ամի շինութե՟ն Հռոմայ, 'ի ձեռն երկուց հազարապետաց ժողովրդեան։ Ապա յետ տասն ամաց 'ի չորեքարիւրորդի վեցերորդի ամի շինու՟ե Հռոմայ՝ սահմանեցաւ կէս առաջնոց վաշխիցն, որ կիսունկիական կոչէր։ Ապա 'ի չորեքարիւրորդի մետասաներորդի ամի արգելան 'ի սպառ տոկոսիք, մի՛ բնաւ վաշխել։ Այլ այս ա՟մ օրինադրութի՟ք[3] ընդունայն եղեն· զօշաքաղութե՟ բուռն քան զօրէնս՝ յաղթեաց միշտ, և զ՟ա՟մ կարգս՝ որ առ հասարակապետութե՟բ և որ առ ինքնակալօքն եղան 'ի նուաճել զնա՝ 'ի դերև եհան։ Իսկ ոչ յեկեղեցւոյ օրինացն ակն ած, որ 'ի մասինս յայսմիկ ոչ զիջաւ, այլ զ՟ա՟մ վաշխս և զկարի նուազն խստիւ դատա-

Տակիտ. տարեգ. Զ. ԺԶ։ Լիւ. Է. ԺԶ։

---

[1] Վաշխիցն 'ի Հռոմ վաղեմի եղեռն, և յաճախ հերձուածոց և խռովութե՟ն առիթ. Տակ. տարեգ. Զ. ԺԶ։

[2] Մի առաւել քան զհարիւրորդն պահանջեսցին տոկոսիք։

[3] Բազում հրամանօք ատենի ամենայն ժողովրդեանն զառաջս կալան խարդախութե՟ց և զրկանաց· որք ստէպ ընկճեալ, չգիտեմ որպէս դարձեալ 'ի վեր երևէին։ Տակիտ. անդ։

պարտէ · զի զոր ինչ բնաւին խափանեաց՝ ինքն ոչ իշխէ ներել ։ Այս յայտ իսկ է, զի ուր և մոլին վաշխք՝ վաղվաղեաց զհետ նոցա կործանումն աշխարհին · որպէս ահա և յանկումն հասարակապետութեան հռոմայեցւոց յոյժ ձեռնտու եղեն. և 'ի վերայ ամենայն ազգաց իսկ, որ ընդ ձեռամբ նոցա էին, ածին ահագին չարիս ։ ԱՄ ԱՌ.Ն.Ք

Նմին իրի Լուկուլլոս հոգայր 'ի յանձանձել զիրս Ասիոյ՝ խափանել զանիրաւութիւն և զխստութիւն վաշխառուաց և հարկահանաց ։ Իսկ նոքա զանբաւ շահսն կորուսեալ՝ բողոք բարձին որպէս զրկեալք 'ի Լուկուլլեայ, և վարձեցին ատենաբանս բազումս ընդդէմ նորա · յուսացեալ մանաւանդ զի բազումք յաւագանւոյն Հռոմայ պարտապանք էին նոցա, որ բազում համարձակութիւն տային նոցա ։ Բայց Լուկուլլոս արհամարհեաց զբողոքս նոցա չքնաղ և զարմանալի արիութեամբ ։

ՅՕԴՈՒԱԾ Գ.

Լուկուլլեայ պատրաստութիւն մարտին ընդդէմ Տիգրանայ, և խաղալ 'ի վերայ նորա · և վասն սէգութեան և ծաղրալից յանդգնութեան Տիգրանայ, և պարտել նորա մեծաւ պատերազմաւ · և Լուկուլլեայ առնուլ մարտիւ զՏիգրանակերտ մայրաքաղաք հայաստանի, և միւսանգամ յաղթութիւն ընդդէմ Միհրդատայ և Տիգրանայ 'ի միասին · և վասն ստահակելոյ և ապստամբութեան զօրացն Լուկուլլեայ ։

Բայց Տիգրան, առ որ զհրեշտակն յղեաց Լուկուլլոս, 'ի սկզբան թագաւորութեան տկար էր յոյժ · այլ անընդհատ զարմանալի յաղթութեամբքն զօրացեալ, մինչև արքայից արքայ անուանեցաւ ։ Որ մեծին Սելևկեայ յաջորդացն յաղթեալ, և զտունն նորա գրեթէ կործանեալ, զգոռոզ Պարթևն բազում անգամ նուաճեալ, և զքաղաքս Յունաց լրիւն իւրեանց 'ի Մարս փոխեալ, զԱսորիս և զՊաղեստին կալեալ, և արաբացւոց Սկենիտաց օրէնսդիր լեալ, թագաւորէր զօրութեամբ, և սարսէին 'ի նմանէ ամենայն թագաւորք Ասիոյ, և ազգք և ազինք անկեալ երկիր պագանէին նմա՝ ըստ արևելից աշխարհին սովորութեան ։ Այս ևս քան զևս յաւելոյր 'ի հպարտութիւն անբաւ մեծութեամբքն, և փաղաքշայն անլռելի և անպայման գովութեամբք, և անդադար յաղթութեամբքն ։ 3934 · 70 Պլուտարք. 'ի Լուկ. 554 ։ Մէմ. խէ. ծէ. Ապպիան. 'ի Միհր. 228 ։

Սակայն յանդիման եղև նմա Կղօդիոս · և էր թագաւորն զգեցեալ ամենայն երևելի սպասուք 'ի ցոյց արքունական մեծաւալելոյ փառացն. Իսկ Ապպիոս 'ի հռոմէականն բնիկ գոռոզութ̃ի զիւրն յաւելեալ, որպէս արդարև հռոմայեցի զհրեշտակութ̃ին կատարեաց. Խօսեցաւ և եցոյց սուղ բանիւ զբողոք հռոմայեցւոց զՄիհրդատայ, և զհաւատարմութ̃ի նորա՝ զի առանց ̃իմ իրաւանց և պատճառանաց ելոյծ զդաշն խաղաղութ̃ե, և ապա ասէ. Գամ խնդրել զՄիհրդատ, որպէս անկ և վայել է յաղթանակին Լուկուղլեայ. Ոչ ինչ երկբայիմ զի տացես զդա, որ 'ի սկզբանէ բարեկամդ ես հռոմայեցւոց. ապա եթէ չկամիցիս տալ՝ կազմեա՛ց 'ի պատերազմ. այս հրաման է. Ընդ խրոխտ պատգամ̃ին ծանրացասու̃ին եղև Թագաւորն, այն՝ որ ոչն երբէք խիստս յումեքէ լուեալ էր, և որում կարգ և օրէնք կամք նորա էին և հաճոյքն. Եւ յաւել 'ի սրտմտութ̃ի յակնարկելն 'ի գիր Լուկուղլեայ, զի արքայ ևեթ կոչէր զնա, և ոչ արքայից արքայ՝ որպէս խստիւ պահանջէրն. յայն ամբարտաւանութ̃ի հասեալ, զի Թագաւորս 'ի սպաս իւր ունէր. զի յելանելն յարքունեաց՝ արքայք չորք երթային հետի առ երիվարաւ նորա, երկուք աստի և երկուք անտի. Եւ 'ի ճաշ նորա և 'ի սենեկի և ̃իմ ուրեք՝ մին 'ի նոցանէ կայր առ նմա 'ի սպաս անարգագոյն պաշտաման. ևս առաւել 'ի յանդիման լինել հրեշտակաց. Զի 'ի հանդէս փառաց և զօրութ̃ե իւրոյ առաջի օտար ազգաց՝ երկուստեք գահոյիցն կարգէր զնոսա 'ի ձև և 'ի կերպարանս անարգ ստրկաց. Ա՛ ամբարտաւանութ̃ի անհեթեթ և անհանդուրժելի. զի որ ճարտարանօք հպարտանայն՝ ոչ այնպէս դժոխըմբեր է, թէպէտ և խակու̃բն ոչ ինչ ընդհատ.

Արդ այնպիսու̃մն չէր մարթ հանդուրժել ընդ համարձակութիւն Ապպեայ. զի զամն քսանևհինգ Թագաւորեալ կամ մանաւանդ բռնաւորեալ գոռոզութ̃ե 'ի վերայ ժողովրդոց, նախ 'ի Ապպեայ լսէր զայն ազատ և համարձակ բարբառ. և պատասխանի տուեալ, ասէ. Միհրդատ աներ իմ է, և ոչ մատնեցից զկարևոր ընտանին 'ի ձաղանս յաղթանակին Լուկուղլեայ. իսկ եթէ հռոմայեցիք սպառնան տարապարտուց յիմ վերայ պատերազմ, գիտեմ և ես պատերազմել, և ստրջացին. Եւ ցասմամբ մեծաւ գրէր պատասխանի թղթոյն, վերնագրեալ ևեթ՝ ԱՌ ԼՈՒԿՈՒԼԼՈՍ, և ոչ ինչ մեծարանաց անուն յաւելեալ, զօրավար կամ որ ինչ անուանս կոչէին հռոմայեցիք. Եւ դարձաւ Ապպիոս, և Լուկուղլեայ լուեալ 'ի նմանէ զ̃իմ և զազդարարութ̃ի մարտին, եկն փութով 'ի Պոնտոս՝ ձեռն 'ի գործ առնել.

Թէպէտ և յանդուգն Թուէր պատերազմ՟ն, և յահաւոր զօրութ՟է Տիգրանայ զարհուրելին յուսացեալքն 'ի բազմութ՟ն` և ոչ 'ի քաջութ՟ն զօրաց և 'ի բարւոք առաջնորդութ՟ն զօրավարին։ Եւ կալաւ զՍինոպ քաղաք, և բնակչաց նորա և ամիսացւոց շնորհեաց ազատութ՟ն` կալ նոցա ինքնիշխան։ Իսկ Կոտտաս ոչ այսպէս արար. այլ 'ի յերկարաձգել պաշարմանն Արակլեայ` մատնութ՟բ կալեալ զայն, եհար աւար, և արար խստութ՟ն յոյժ ընդ բնակիչս նորա. և գրեթէ զամ՟ քաղաքն հրձիգ արար։ Եւ 'ի դառնալ նորա 'ի Հռոմ` բարւոք ընկալաւ զնա ծերակոյտն, և մեծարեաց զնա անուանեալ Պոնտացի` վասն նուաճելոյ նորա զՊոնտոս։ Այլ ապա իբրև հասին արակլեացիք, և բողոք կալեալ ցուցին ծերակուտին զչարիս զօշաքաղութ՟ն և զանգթութ՟ն Կոտտասայ սրտառուչ բանիւք` որ և զկարի խստասիրտս 'ի գութ ածէին, զկոճկէնն ևեթ 'ի բաց եառ 'ի նմանէ ծերակոյտն զպատմուճան աւագութ՟ն. այլ յոյժ 'ի վայր էր պատուհասն քան զանհնարին չարիսն` որ վկայեալ հաւատարիմ ցուցան։

Լուկուլլեայ Թողեալ զՄորենաս` զմի 'ի զօրավարաց իւրոց` 'ի Պոնտոս վեց հազար արամբք, ինքն այլովք զօրօքն` որ էին երկոտասան հազար հետևակ և երեք հազար հեծեալ, դիմեաց ընդ Կապադովկիա յԵփրատ գետ. և 'ի խոր ձմերանի անցեալ ընդ այն, և ապա ընդ Տիգրիս, եկն եհաս փոքր միւս ևս անդր 'ի Տիգրանակերտ քաղաք արքայանիստ` հալածել 'ի բնէ իւրում զՏիգրան, որ այն ինչ յաշխարհէն Ասորւոց անդր հասեալ էր։ Այլ ոչ ոք իշխէր խօսել ընդ նմա զԼուկուլլեայ, և ոչ զգալստենէ նորա, զի որ նախ ազդ արար զայն` մեծի սպասաւորութ՟ն հատուցում՟ն ընկալաւ մահ անողորմ։ Ոչ ումեք ունէին մատուցանել, բայց մարդահաճոյիցն` որք ասէին, թէ քաջութ՟բ մեծ գործէ Լուկուլլոս` եթէ յԵփեսոս ևեթ կացեալ մնասցէ, և ոչ անձապարեալ փախիցէ յԱսիոյ ընդ տեսիլ աւազակոյտ բազմութ՟ն զօրացս։ Եւ կարի իսկ քաջ, ասէ Պղուտարքոս. զի որպէս ոչ ամենեցուն բնութ՟ն է տանել բազում գինեբբուայ, այսպէս և ոչ ամենեցուն մտաց` բերել 'ի բարեբաստութ՟ն զիմաստութ՟ն, և ոչ զգլխել։

Բայց Տիգրան, որ յառաջագոյն չկամէր իսկ տեսանել զՄիհրդատ, և ոչ խօսել ընդ նմա, թէպէտ և ըզդուստր նորա ածեալ էր կնութ՟ն, այլ մեծաւ արհամարհանօք և խրոխտանօք հեռի յերեսաց իւրոց որպէս 'ի դիպահոջ 'ի պահ արկեալ էր 'ի տեղի մի տղմուտ և մղձկուտ , յետ պատգամաւորութե՟ն Կղօդեայ ետ ածել զնա ամենայն մեծարանօք և սիրով յարքունիս իւր ։ Անդ առանձինն ընդ միմեանս մերկացան զխէթս սրտից իւրեանց 'ի Թշուառութիւն մեծ բարեկամաց իւրեանց , զի զա՟մ փառս զնոքօք կացուցին ։ Յորոց մի էր և Մետրոդոր սկեպսացի , այր մեծավաստակ , և որ յոյժ մեծարոյ էր Միհրդատայ , մինչև կոչել նմա Թագաւորահայր ։ Զսա յառաջագոյն Միհրդատ հրեշտակ առաքեաց առ Տիգրան՝ խնդրել 'ի նմանէ օգնութ՟ն ընդդէմ Հռոմայեցւոց · և իբրև ետ զպատգամն , եհարց զնա Տիգրան · Դու զի՞նչ խրատ տաս առնել , Մետրոդորէ ։ Իսկ նա տարաժամ և տարապայման անկեղծութ՟բ պատասխանի ետ և ասէ · Որպէս պատգամաւոր Միհրդատայ՝ խրատ տամ օգնել նմա , որպէս խորհրդական՝ զգոյշ լինել ։ Եւ յանցեաւ Մետրոդոր յանցանս մահապարտութ՟ե , գոգցես մատնիչ լեալ ։ Եւ սպանաւ իսկ յիրազեկ լինել Միհրդատայ յարքայէն Հայոց ։

Բայց Լուկուլլոս դայր հասանէր , և որպէս զդուրս ապարանիցն բաղխէր · և զայն ոչ գիտէր Տիգրան , և չհաւատայր իսկ այնմ զաչացու յանդգնութ՟ե ։ Ապա Միհրբարզան՝ մտերիմ արքայի՝ յանձն առեալ զվտանգն , դուժկան եղև նմա ։ Եւ փոխարէն պատուէր ընկալաւ՝ վաղ հասանել սակաւ զօրօք , և ձերբակալ արարեալ ածել զԼուկուլլոս , իբր թէ զմի ոք 'ի ժողովրդենէ երթայր ունել ։ Եւ անկաւ Միհրբարզան , և առաւելք 'ի զօրացն անկան՝ ջգնեալք 'ի վերայ կործանարար հրամանին ։ Անագան յայնժամ Թշուառութ՟ն զգաստացաւ Թագաւորն՝ սթափեալ յարբեցութ՟ե ։ Միհրդատ բիւր հեծելովք երթեալ 'ի Պոնտոս՝ այլ ևս զօրս ժողովէր , գալ գումարել ընդ Տիգրանայ 'ի մտանել Լուկուլլոսի 'ի Հայաստան ։ Իսկ Տիգրան 'ի դաստակերտին իւրում կայր , հրաման տալ զօրաժողով լինել յա՟մ սահմանաց Թագաւորութ՟ե իւրոյ ։ Եւ յետ հարուածոյն երկուցեալ'ի Լուկուլլեայ մեկնեցաւ 'ի քաղաքէն 'ի լեառն Տաւրոս , և զօրացն ա՟մյն պատուէր ետ անդր առ ինքն ժողովել ։

Լուկուլլոս դիմեալ 'ի Տիգրանակերտ , նստեալ զնովաւ պաշարէր ։ Եւ էր քաղաքն լի ա՟մ մեծութ՟բ · քանզի բնակիչք նորա վասն հաճոյ լինելոյ Թագաւորին՝ ռամիկն և աւագանին զարդարեալ ճոխացուցանէին զայն ։ Վ՟մն իրի Լուկուլլոս նեղէր զքաղաքն , զի Թագաւորն չհանդուրժեալ ընդ առու՟մն նորա՝ մարտիւ գայցէ զայրագին վանել զնա · որպէս եղև իսկ ։ Բայց Միհրդատ սուրհանդակս զօր ա՟մ արձակէր առ Տիգրան, և զգուշայուցանէր զնա զօրաւոր թղթովք՝ մի՛ բնաւ դիմադրաւել ՚ի մարտ, այլ հեծելազնդաւն ևեթ խափանել զհամբարս Լուկուլլեայ ։ Եւ Տաքսիլեայ եկեալ ՚ի նմանէ ՚ի բանակն, մեծաւ թախանձանօք աղաչէր զնա հանապազ մի՛ դիմել ՚ի վերայ հռոմայեցւոց գոռ և անպարտելի զօրացն ։ Տիգրան ՚ի սկզբանն լսէր հեզութ՟բ խրատուց նորա, և հանդարտէր · այլ իբրև հասին գումարեցան առ նա բազմութ՟ն անթիւ զօրացն յայլ և այլ ազգաց և ՚ի լեռնաց, այնուհետև ոչ խնճոյք ևեթ թագաւորին, այլ և ատեան խորհրդոցն հնչէր ՚ի յանդուգն և ՚ի յոխորտ խիզախմանէ և ՚ի խուժադուժ սպառնալեաց ։ Եւ կամէին զօրքն զՏաքսիլ սպանանել, զի իշխեաց հակառակ կալ խրախուսողացն ՚ի պատերազմ · և զՄիհրդատ համարձակեալ ամբաստանէին, իբր թէ առ նախանձու խափանէր զթագաւորն ՚ի պատերազմէ՝ զի մի՛ մեծաւ յաղթութ՟ն փառաւորեսցի ։ Եւ վասն այնորիկ աճապարեալ Տիգրանայ, զի մի՛ Միհրդատ հասեալ բաժանորդ լիցի փառաց յաղթութ՟ն, դիմեաց ա՟մ զօրօքն ՚ի պատերազմ, և ասէր ցբարեկամս իւր · Ո՛ տայր փոխանակ Լուկուլլեայ զա՟մ զօրավարս հռոմայեցւոց մեզ յոսոխս ։ Զի ՚ի բազմութ՟ն զօրացն յուսացեալ, ոչ ինչ երկմտէր ընդ յաղթութիւնն ։ Զի էին նորա երկու բիւր աղեղնաւորք և պարսաւորք · հինգ բիւր և հինգ հազար հեծեալք, բիւր մի ՚ի նոցանէ և եօթն հազար զրահաւորք սպառազէնք · հնգետասան բիւր հետևակք ՚ի գունդս և ՚ի գումարտակս բաժանեալ · և ռահվիրայք և գործաւորք ՚ի կառուցումն կամրջաց, և ՚ի ցամաքեցուցանել զջուրս գետոց, և յայլ պէտս բանակին, որք իբր բիւրք երեք և հինգ հազար, որք զհետ զօրացն կարգեալ կազմեալ ըստուարագոյն ևս զբանակն երևեցուցանէին, և յաւելուր զօրութ՟ն և խրախոյս պատերազմողացն ։

Եւ իբրև էանց ընդ լեառն Տաւրոս, և երևեցան ա՟մ զօրք նորա ՚ի միասին յերեսս դաշտին, տեսիլն ևեթ ահարկու էր ։ Բայց Լուկուլլոս աներկիւղ բաժանեալ զզօրս իւր եթող զՄուրենա յանդիման քաղաքին վեց հազար հետևակօք · իսկ ինքն այլովք հետևակօքն՝ որ էին քսան և չորք գումարտակք, միահամուռ տասն կամ երկոտասան հազար այր, և ա՟մ հեծելազօրաւն, և աղեղնաւորօք և պարսաւորօք, արամբք որպէս թէ հազարաւ, խաղաց ընդդէմ Տիգրանայ, և բանակեցաւ ՚ի դաշտին, և էր առաջի նորա գետ մեծ ։

'Ի տեսիլ սակաւաձեան գնդին՝ ծիծաղեցաւ Թագաւորն, և փաղաքուշ սպասաւորացն պատճառս առեալ ծաղրածութեան, կէսք յայտնապէս կատակէին, այլք վիճակս արկանէին ընդ խաղ՝ թէ ո՞ զինչ առնուցու յաւարի. և զօրավարք և Թագաւորք՝ որ ընդ նմա երթային, խրախուսէին միայնակ զպատերազմն վճարել. և խնդրէին չմտանել արքայի 'ի մարտ։ Այլ ինքն իսկ Թագաւորն ախորժելի իմն հանճարաբանել կամելով, ասաց ընդ խաղ զհռչակաւորն բան, զի եթէ պատգամաւորք իցեն՝ բազումք են, իսկ եթէ թշնամիք՝ սակաւք։ Այլ այն օր այնպէս 'ի խաղ և 'ի ծաղր անցանէր։

'Ի վաղիւ անդր ընդ այգն յառաջ մատոյց Լուկուղլոս զզօրս իւր։ Այլ բանակէին թշնամիք յայն կոյս գետոյն յարևելից, և իջանէր գետն և խոտորէր յահեակ ընդ արևմուտս. և էր անդ հուն գետոյն ծանծաղ։ Լուկուղլոս անդր խորհեցաւ մատչել, և դարձոյց զզօրս իւր 'ի ձախակողմն, և 'ի վայր կոյս գետոյն ճեպէր։ Զայն իբրև ետես Տիգրան՝ համարեցաւ թէ փախիցեն, և կոչեցեալ առ ինքն զՏաքսիլ՝ ասէ ընդ հենգն. Հայեաց ընդ լեգէոնս հռոմայեցւոց անպարտելիս, տեսանես զի գնան փախստեայք։ Նա պատասխանի ետ և ասէ. Իղձիւք ցանկայի, տէր արքայ, զի բարեբաղդութեան քում, հարկին տեղի տայր. այլ սպառազինութիւն և ընթացք լեգէոնացդ ոչ թուին փախստելից։ Այն ինչ նորա բանքն 'ի բերան էին, խոտորեցոյց յանկարծ Լուկուղլոս զնախագնաց լեգէոնն, և դարձաւ արծուէնշանն յաջ կոյս, և ա՟մ լեգէոնախումբ զօրքն զհետ նորա խաղային ընդ գետն։ Անագան յայնժամ որպէս 'ի թմբրութէ զինւոյ սթափեալ Թագաւորն, գոչեաց կրկին և երեքկին. Այսպէս 'ի վերայ մեր դիմեալ գայ ամբոխդ։ Այլ խուճապաւ և բազում խռովութ՟ կազմեալ ճակատեցան անբաւ բազմութիւն զօրացն 'ի պատերազմ։ Թագաւորն 'ի միջին եկաց 'ի բուն բանակին. զձախոյ թևն ետ արքային Ադիաբենաց, և Թագաւորին Մարաց զաջոյ թևն, ուր և զերկաթապատ այրուձին մեծաւ մասամբ կացոյց։

Մինչ դեռ Լուկուղլոս պատրաստէր անցանել ընդ գետն, ոմանք 'ի զօրագլխացն ասէին դադարել զայն օր. զի օրն այն ընդ չարաբախտ աւուրս համարէր, զորս հռոմայեցիք սեաւ աւուրս կոչէին. զի 'ի նմին աւուր բեկան զօրք Կեպիոնի[1] 'ի կիմբրացւոց։ Այլ Լուկուղլոս ետ պատասխանի. Այլ ես բարեբաղդ արարից Հռոմայ զօրս զայս։ Այն օր վեցերորդ էր Հոկտեմբերի։ Եւ բանն այն եղև ապա հռչակաւոր։ Եւ իբրև զայն ասաց Լուկուլլոս, խրախուսեալ զզօրս իւր՝ անց ընդ գետն, նախայարձակ լինէր 'ի թշնամիսն։ Եւ էր ինքն վառեալ պողովատիկ վերտ պահպանակօք՝ յորոց նշոյլք լուսաճաճանչ հատանէին, և արկեալ զիւրև լօդիկ վերջաւորօք, և սուսեր մերկ 'ի ձեռին շողացուցանէր, յորդորելով զզօրսն փութալ մատչել 'ի թշնամիս, զի փոյթ և երագ յարձակմամբն՝ մի՛ մնասցէ նոցա ասպարէզ նետաձգութ՟ե. զի 'ի հեռուստ ևեթ սովոր էին նոքա նետիւք մարտնչել։ Եւ հայեցեալ ետես, զի հեծեալք սպառազէնք՝ յորս առաւել յուսացեալ էր Տիգրան՝ պատերազմէին առ ստորոտով միոյ 'ի բլրոյ, որոյ գագաթն սարահարթ չորեքարիւր ձողաչափ էր 'ի բարձրութ՟ի, ոչ յոյժ սեպացեալ և դժոխելանելի. և յուսացեալ յօգնականութ՟ի տեղւոյն, հրաման ետ անդէն հեծելոց թրակացւոց և գաղատացւոց անկանել 'ի թևէ 'ի վերայ այրուձիոյն թշնամեաց, և վանել սուսերօքն զնիզակս նոցա։ Զի ամրութ՟ի նոցա, մանաւանդ և ամ՟ զօրութ՟ի 'ի նիզակին էր, և առանց այնոցիկ չմարթէր նոցա պատերազմել ընդ թշնամիս, և ոչ պահ ունել անձանց. զի ծանր՝ և կարծր սպառազինութ՟բն զապեալ՝ ոչ կարէին խաղալ, և գրեթէ անշարժ կային։

---

[1] 'Ի բնագրին Պղուտարքեայ [illegible] [illegible] ընթերցեալ [illegible] [illegible] [illegible] զօրք Սկիպիոնի [illegible] [illegible] [illegible] զօրք Կեպիոնի։

Մինչ դեռ հեծեալքն երթային 'ի գործ հրամանին, ինքն երկոքումբք գումարտակօք հետևակօք դիմեաց 'ի բլուրն։ Եւ խրախուսեցին զհետ նորա զօրքն, տեսանելով զզօրավարն՝ զի հետի ընդ զառ'ի վերն յառաջընթաց լինէր հանդերձ սպառազինութ՟բն։ Եւ հասեալ 'ի կատար բլրին՝ ել եկաց 'ի բարձր սեպլին, և հայեցեալ ընդ կարգս և ընդ յօրինուած ճակատուն թշնամեաց, աղաղակէր. Անշուշտ է մեզ յաղթութ՟ի, արք զինուորակիցք իմ, անշուշտ է մեզ յաղթութ՟ի։ Եւ երկոքումբք գումարտակօքն 'ի վերայ սպառազէն այրուձիոյն դիմեալ, պատուէր տայր մի՛ տեգս 'ի բացէ 'ի կիր արկանել, այլ սուսերօքն մատուցեալ հարկանել զաղդր նոցա և ըղսրունսն՝ որ անզրահք էին։ Եւ առանց աշխատութ՟ե զօրացն, մինչ չև 'ի կռիւ եկեալ՝ կորակոր 'ի փախուստ դարձան հեծեալքն մռնչելով. և յաղթանդամ և դանդաղ երիվարօքն երթեալ անկան 'ի կարգս հետևակացն, առանց պատերազմելոյ և առանց ճօճելոյ զնիզակ։ Այլ 'ի փախչելն նոցա, մանաւանդ թէ ընդ դառնալն 'ի փախուստ, սկսաւ կոտորածն. զի և փախչել իսկ ոչ կարէին, արգելեալք յամրակուռ յանթափանց 'ի ստուար գնդաց իւրեանց ։ Իսկ խրոխտ և պերճ թագաւորն անդէն 'ի սկզբանն սակաւ արամբք խոյս ետ. և տեսեալ զորդին իւր զթշուառակից՝ եհան 'ի գլխոյ իւրմէ զպսակն և ետ նմա արտասուօք, և ընդ այլ ճանապարհ՝ յո և մարթէրն՝ խրատէր փախչել ։ Եւ ոչ իշխեաց արքայորդին դնել զպսակն 'ի գլուխ իւր, զի մի 'ի փախչելն ծանիցի. և ետ զայն միում 'ի հաւատարիմ սպասաւորացն, որ ապա գերեալ ածաւ առ Լուկուլլոս ։ Եւ անկան 'ի փախըստի աւելի քան զտասն բիւր հետևակս, և 'ի հեծելոց սակաւք ոմանք ապրեցան. իսկ 'ի հռոմայեցւոց հարիւր այր վիրաւորք եղեն, և մեռեալք հինգ. այս այսպէս պատմի ։ Բայց ոչ ուրեք նուազունք որպէս զսոսա ընդ այնչափ բազմութե՟ թշնամեաց ճակատեցան 'ի պատերազմ. զի քսանապատիկ և ևս աւելի քան զյաղթօղս յաղթեալքն էին ։ Քաջք և հմուտք 'ի զօրավարացն հռոմայեցւոց և յաճախագոյն 'ի պատերազմունս և 'ի ճակատամարտս մտեալք, այնու առաւել գովէին զԼուկուլլոս, զի զերկուս յաղթ և մեծազօր թագաւորս երկոքումբք հակառակօք պարտեաց, դանդաղանօք և ճեպով ։ Քանզի դանդաղելովն և յերկարաձգելով զգործ մարտին՝ վատնեաց զահեղ և զհզօր զօրութի՟ Միհրդատայ. իսկ զՏիգրան կործանեաց՝ յեղակարծումն 'ի վերայ հասեալ ։ Որպէս սակաւուց 'ի զօրավարաց եղև՝ դանդաղանօք գործ վճարել, և ճեպով յաջողել անվտանգ ։ Յայն սակս իսկ ոչ գտաւ Միհրդատ 'ի պատերազմին. քանզի կարծէր՝ զի զնոյն հնարս դանդաղանաց գործեսցէ Լուկուլլոս և ընդդէմ Տիգրանայ, որ ինչ հնարեցաւն ընդդէմ իւր. նմին իրի յամր գնայր և ոչ փութայր հասանել առ Տիգրան ։ Բայց հանդիպեալ զճանապարհայն Հայոց ոմանց՝ որք զարհուրեալ և խուճապեալ փախչէին, կասկած էառ. և ապա բազմաց ևս փախըստէից դիպեալ՝ զի գնային մերկ և խոց, իրազեկ եղև պարտութե՟ն, և խնդրէր զՏիգրան. զոր և եգիտ լքեալ յա՟մ զօրացն ողորմելի ։ Բայց անյիշաչարութ՟բ ոչ լեալ ոտնհար 'ի կարիս նորա՝ որպէս նա յիւրն, իջեալ յերիվարէն՝ ողբայր ընդ նմա զհասարակաց թշուառութ՟ն. և ետ նմա թիկնապահս և սպասաւորս, և մխիթարեալ քաջալերեաց զնա չվհատել ։ Ապաքէն Միհրդատ ոչ անագորոյն ոք էր, որպէս ահա տեսանի ։ Եւ երկոքին 'ի միասին դարձեալ զօրաժողով եղեն ։

Բայց 'ի Տիգրանակերտ աղմուկ մեծ էր . քանզի յարեան Յոյնք ընդդէմ Հայոց, և խնդրէին տալ զքաղաքն 'ի ձեռս Լուկուլլեայ ։ Ի զայրանալ խռովութե՟ն, և ահա եհաս անդր Լուկուլլոս . և 'ի դէպ ժամանակին յարձակեալ կալաւ զքաղաքն, և առ նա զա՟մ գանձս Տիգրանայ, և զգաստակերտն մատնեաց յաւար զօրացն . որք ընդ բազում մեծութի՟ւն՝ գտին և ութ հազար քանքար արծաթի դրամոց . և ետ իւրաքանչիւր նոցա Լուկուլլոս, բաց յաւարէն զոր առին, ութ հարիւր դրամակշիռ . այլ և ոչ այնու յագեցաւ ագահութի՟ նոցա ։ Այլ զժողովուրդս, զորս 'ի Գամրաց և 'ի Կիլիկեայ և յայլոց կողմանց բռնի ածեալ բնակեցոյց անդր Տիգրան, արձակեաց Լուկուլլոս դառնալ յիւրաքանչիւր գաւառս ։ Այլ երթային բազում ուրախութ՟բ չու մեծ . և 'ի սուղ ժամանակի զրեթէ անմարդի եղև Տիգրանակերտ, մի 'ի մեծամեծ քաղաքաց աշխարհի ։ Ստրոբ. ժա. 532. ժբ. 538.

Եթէ Լուկուլլոս իսկ և իսկ զկնի յաղթութե՟ն հետամուտ լինէր Տիգրանայ, և չտայր թոյլ նմա զօրաժողով լինել անդրէն, ձերբակալ առնէր կամ հալածէր զնա յաշխարհէն, և վճարէր զպատերազ՟մ ։ Այլ իբր զօրքն և քաղաքացիք զչարեալ՝ զի ոչ արար այնպէս, ամբաստանէին զնա . իբր ոչ անփոյթ լեալ, այլ կամաւ իսկ աբարեալ զայն, որպէս զի կարևոր զանձն ընծայեցուցէ, և յերկարեսցէ յիշխանութե՟ ։ Այլ առ 'ի վրէժխնդրութիւն՝ զայլ ոք փոխանակ նորա կացուցին, որպէս յետոյ ասասցուք ։ Դիոն. կաս. լե. 11.

Այլ յետ մեծի յաղթութե՟ն Լուկուլլեայ ընդդէմ Տիգրանայ՝ ազգք բազումք եկին հնազանդել նմա ։ Հրեշտակութի՟ առաքեալ և թագաւորն[1] Պարթևաց աղերսէր զնա յուխտ բարեկամութե՟ և նիզակակցութե՟ . և նա հաւանեալ՝ յղեաց անդրէն պատգամաւորս ։ Որոց հասեալ առ թագաւորն, գտին զնա տարակուսեալ՝ թէ յո՞ ձեռն տացէ . քանզի բանագնաց լեալ գաղտ առ Տիգրան, խնդրէր 'ի նմանէ զՄիջագետս՝ խոստանալով օգնականութի՟ ։ Այլ իբրև իրազեկ եղև Լուկուլլոս՝ խորհեցաւ թողուլ զՄիհրդատ և զՏիգրան, և դարձուցանել զզէնս իւր 'ի վերայ արքային Պարթևաց, ցանկալի յուսով անզուգական պարծանաց, զթագաւորս երիս՝ հզօրս ընդ տիեզերս՝ 'ի մի արշաւանս յերկիր կործանելոյ ։ Այլ իբրև զայն լուան զօրքն , ընդդէմ դարձան ․ և հարկ եղև նմա փոխել 'ի խորհրդոյն , և պատրաստէր ընդդէմ Տիգրանայ ։

---

[1] Որ էր Փրաատ * կոչեցեալ Աստուած ։
* Այլ 'ի համաժամայեցւոց պատմութե՟ն և նոյն ինքն Որոդէս փոխանակ Փրաատայ Սանատրուկ դնէ . ըստ Մովսէսի ։

'Ի յապաղել Լուկուղեայ՝ Միհրդատ և Տիգրան զօրաժողով լինէին անդադար ․ և առաքեցին խնդրել օգնուի̃ 'ի շրջակայ ազգաց , մանաւանդ 'ի Պարթևաց՝ որ մօտագոյնք էին և կարողք քան զամենեսեան օգնել նոցա 'ի կարևոր ժամանակին ։ Եւ գրեաց Միհրդատ առ թագաւորն Պարթևաց գիր , որ ընդ հատուկտիր բանս Սաղուստեայ պահի ․ ուստի մասն ինչ աւասիկ զօդեմք ։

ԵՒ ԱՅՍ Է ՊԱՏՃԷՆ ԹՂԹՈՅՆ, ԶՈՐ ԳՐԵԱՑ ՄԻՀՐԴԱՏ ԱՌ ԱՐՇԱԿ [1] ԱՐՔԱՅ ՊԱՐԹԵՒԱՑ ։

[2] Որք 'ի ժամանակի յաջողուե̃ 'ի նիզակակցուի̃ հրաւիրին , պարտ է նոցա խորհել՝ թէ ազատք իցեն կալ 'ի խաղաղութ̃ , և թէ իցէ՞ հրաւէրն 'ի փառս ։ Հնար էր քեզ կալ միշտ յանխռով խաղաղութ̃ , եթէ չէին ոսոխ հռոմայեցիք կազմք և ժամանք ընդդէմ քո , և անխիղճք յա̃մ անօրէնութ̃ս ։ Եթէ նոցա յաղթեսցես , մեծ եղիցին փառք քո ։ Թերևս դժպատեհ թուեսցի քեզ այս հրաւէր , նիզակակցել ընդ Տիգրանայ , և հզօր զօրութ̃ քով գումարել ընդ թշուառ թագաւորի ։ Այլ աղերսել համարձակիմ՝ զի երկու այս պատճառք , ցասումն ընդ Տիգրանայ՝ որ դեռ ևս ընդ քեզ պատերազմէրն , և վտանգ առաջիկայ մարտիս , ոչ հակառակք են խնդրուածոյս , այլ քաջ իմացեալ՝ պատսպարան և զօրավիգն ։ Քանզի Տիգրան ստրջացեալ արդ , յանձն առցէ զա̃մ պայմանս ․ իսկ ես , իշխեմ ասել , զի բաղդն 'ի կապտել յինէն զա̃մ՝

---

[1] Արշակ հասարակաց անուն էր Թագաւորացն ամենեցուն Պարթևաց ։

[2] Որք 'ի յաջողութ̃ հրաւիրին զօրավիգն 'ի պատերազմ , պարտին խորհել՝ թէ է՞ նոցա հնար 'ի խաղաղուե̃ կալ , կամ թէ իցէ՞ արդար և անվտանգ պատերազմն , փառս եթէ նախատինս ածիցէ ։ Մարթ էր քեզ յաւէժ 'ի խաղաղութեան կալ , եթէ ոչ թշնամիք անօրէնք կազմք կային ։ Առասցես անուն մեծ , եթէ զհռոմայեցիսն ընկճեսցես ։ Ոչ տարապարտ համարձակիմ խնդրել զնիզակակցուե̃ քո , և ոչ վայրապար զբարեբաղդուե̃ քո հաղորդս առնել թշուառուե̃ իմում ։ Ցասումն իսկ քո ընդ Տիգրան վ̃ն նորոգ պատերազմին , և իրաց իմոց ձախողուե̃ , որք թուին խափանել զքեզ , եթէ քաջ խորհիցիս՝ յորդոր լիցին քեզ ։ Քանզի Տիգրան յանցաւոր է , և ըստ հաճոյս քո յանձն առցէ զնիզակակցուե̃ ․ իսկ յինէն բաղում ինչ երարձ բաղդն , այլ զօրաւոր արար զիս 'ի խրատ ․ և որ բարեբաստիցն ցանկալին է , տկարութ̃ իմով տաց օրինակ՝ զի զգուշագոյն յարդարեսցես զիրս քո ։ Քանզի հռոմայեցւոց 'ի սկզբանէ և այսր նոյն գրգիռ պատերազմի է ընդ ա̃մ ազգս և ընդ ժողովուրդս և ընդ թագաւորս ․ իշխանուե̃ և գանձուց անյագ ցանկութիւն ։

արար զիս քաջ խորհրդական. և որ յոյժ ցանկալի է այնոցիկ՝ որք 'ի յաջողութե՟ն լիցեն, թշուառութ՟ իմով եղեց քեզ յօրինակ և 'ի խրատ զգուշութե՟ քան զիս։ Գիտեա քաջ, զի ա՟մ ազգաց և ժողովրդոց և թագաւորաց թըշնամի են հռոմայեցիք. փառասիրու՟ի անսահման աշխարհակալութե՟, և անյագ ագահութիւն, բուռն և վաղեմի գրգիռք, զինուորեն զնոսա ընդդէմ նոցա։

(Նա յետ այսորիկ 'ի կարգ արկեալ թուէ զթագաւորս և զիշխանս՝ զորս հալին հռոմայեցիք մի ըստ միոջէ, և զրազումն իրերօք. և պատմէ զառաջին յաղթութի՟ս իւր ընդդէմ հռոմայեցւոց, և զվերջին աղէտսն. և յաւելու)[1]։

Արդ աղէ՝ խորհեաց, եթէ 'ի պարտելս մերում՝ դու ամրագո՞յն առաջի հռոմայեցւոց կացցես, կամ թէ կարծիցես զի յիմում աշխարհիս սահմանեսցի աշխարհակալու՟ի նոցա։ Գիտեմ զի հզօր ես զօրօք և զինուք և գանձիւք, և գովլն իսկ ցանկալի՝ մեզ 'ի զօրավիգն, և հռոմայեցւոց յաւար։ Բայց խորհի Տիգրան չձգել զպատերազմն յաշխարհ իւր, այլ մեզէն ա՟մ զօրօք խմբել քաջ պատերազմօղօք մղել պատերազմ 'ի տար աշխարհ։ Արդ՝ եթէ յաղթեմք և եթէ յաղթիմք, հասանէ քեզ վտանգ մեծ։ Զգիտիցես զի հռոմայեցիք յովկիական ծովէ խափանեալ ընդ արեւմուտս, 'ի մեզ դարձուցին զզէնսն։ Նոքա անդստին 'ի սկզբանէ հաստատութե՟ իւրեանց զա՟մ ինչ յափշտակութ՟ ժառանգեցին, և զտուն և զկանայս և զերկիր և զտէրու՟ի։ Ամբոխ խառնադանջ, անաշխարհիկք, անազգիք, 'ի թշուառու՟ի մարդկան սահմանեալք, չարչարեն և աւերեն զազգս բարեկամս և զդաշնաւորս, զհեռաւորս և զշուրջ բնակեալս, զաղքատս և զհզօրս, և չիք 'ի մարդկայնոցս կամ յա՟ծայնոց ինչ խափան նոցա։ Ազգ որ ոչ ծառայէ՝ թշնամի է նոցա, եւս առաւել թագաւորք. քանզի սակաւք են յազգաց՝ որ անտերունչ կամիցին կալ և ազատ, այլ բազմաց սիրելի է ընդ արդար տերամբք կալ. և կասկածին նոքա զմէնջ, զի ոսոխք եմք նոցա, և կարողք խափանել զանիրաւութիս նոցա և վրէժ խնդրել։ Իսկ դու՝ որ տիրես Սելևկիոյ մեծագունին քաղաքաց, և զՊարսս ընդ ձեռամբ ունիս՝ զաշխարհ ճոխ և հզօր ընդ տիեզերս, յիմ ակն ունիցիս 'ի նոցանէ՝ բայց այժմ նենգութե̃, և առ յապա պատերազմի։ Նոքա ա̃մ ուրեք մղեն զզէնս, մանաւանդ ուր յոյս փարթամ աւարի առաջի կայցէ։ Նոքա յանդգնութ̃բ և խաբէութ̃բ և անդադար մարտիւ մեծացան։ Նոյնպէս և կորուսցեն զամենեսեան՝ եթէ ոչ ինքեանք կորիցեն. և կորուստ նոցա ոչ ինչ դժուարին է, եթէ դու 'ի կողմանցդ Միջագետաց, և մեք 'ի Հայաստանէ պաշարեսցուք զբանակ նոցա, արգելուլ զհամբար և զօգնականութ̃ի։ Յաղթութե̃ զինուց նոցա ցարդ ինքեանք թագաւորք եղէն պատճառք, զի ոչ միաբանեցին, և ոչ զգուշացան իմաստութ̃բ ընդդէմ հասարակաց թշնամեացն։ Եղիցին քեզ փառք յաւիտեան, եթէ պատսպարան լիցիս երկուց թագաւորաց մեծամեծաց, և զաւազակողս ազգաց նուաճեսցես։ Ի սոյն յորդորեմ և 'ի սոյն խրախուսեմ զքեզ, և զայս տամ քեզ խրատ. յանձն առ բաժանել ընդ մեզ զփառս յաղթութե̃ փրկաւէտ նիզակակցութ̃բ յաւեր և 'ի կործանումն հասարակաց թշնամւոյն, քան թողուլ նոցա ընդարձակել ևս զինքնակալութ̃ին 'ի կործանումն մեր։

---

[1] Արդ աղէ՝ խորհեաց, 'ի կործանել մեր՝ դու հզօրագո՞յն կացցես առաջի թշնամեաց, կամ թէ զրա՞ւ լիցի պատերազմին։ Ապաքէն զօրք և զէնք և գանձք բազում են քեզ, և գովլն իսկ ցանկալի ես մեզ 'ի նիզակակցու՟ի, և նոցա 'ի յափշտակու՟ի։ Բայց խորհի Տիգրան, առանց վտանգելոյ զբնիկ աշխարհն, զօրօք խմբել քաջ պատերազմօղօք 'ի տար աշխարհ թեթև աշխատութ՟ վճարել մեզէն զպատերազմն. ուր եթէ յաղթեմք և եթէ յաղթիմք՝ վտանգ է քեզ։ Եթէ ո՞չ գիտես, զի հռոմայեցիք խափանեալ յՈվկիանոսէ ընդ արեւմուտս՝ այժմ ըզզէնս իւրեանց դարձուցին. և զա՟մ ինչ 'ի սկզբանէ նախնեացն յափշտակութ՟ ունին, զտուն և զկանայս և զանդաստանս և զպետութիւն։ Խառնադանջ անաշխարհիկ և անազգի, ապականարարք աշխարհի. սպառեն բռնան զազգս. զդաշնաւոր և զբարեկամ, զհեռաւոր և զմերձաւոր, զաղքատ և զհզօր. և ոչ ինչ 'ի մարդկայնոց և ոչ յաստուածայնոցն ինչ խափան է նոցա։ Ամենայն որ ոչն հնազանդի՝ թըշ-

Այլ ոչ յորդորեցաւ Փրաատ, որպէս թուի, ընդունայն լեալ Միհրդատայ յուսոյն. և մնացին արքայք եր-

նամի է նոցա, ես առաւել պետութի̃ք. քանզի սակաւք են սիրողք անտէրնչութե̃, և բազմաց ընդ արդար տերամբք կալ հաճոյ է, և ըզմէնջ կասկածեն, զի 'ի դէպ ժամանակի լիցուք ոսոխք և վրէժխնդիրք։ Իսկ դու որ զՍելևկիա զձեռամբ ունիս՝ զհզօրագոյնն քաղաքաց, և զաշխարհն Պարսից մեծահարուստ, յիմ ակն ունիցիս 'ի նոցանէ, բայց զարդիս՝ նենգութե̃, և ապա՝ պատերազմի։ Հռոմայեցիք առ ամենեսին ձգեն զզէնս. մանաւանդ ուր աւար բազմագոյն կայցէ։ Նոքա յանդգնութ̃բ և խաբէութ̃բ մեծացան, և պատերազմ 'ի պատերազմ յաւելեալ՝ նովին և զամենեսեան կորուսցեն, եթէ ոչ ինքեանք կորիցեն։ Եւ կորուսանել զնոսա ոչ ինչ դժուարին է, եթէ դու 'ի Միջագետաց, և մեք 'ի Հայաստանէ պաշարեսցուք զբանակ նոցա, խափանել զհամբար և զօգնականութ̃ի։ Ցարդ յուլութ̃բ մերով յաջողեաց նոցա բաղդն. տուր անուն մեծ, թագաւորաց մեծամեծաց գոլով պատսպարան, և զաւազակողս ազգաց նուաճել։ Զայս խրատ տամ, 'ի սոյն յորդորեմ. մի քան զբաժանել զփառս յաղթութե̃ ընդ նիզակակից՝ լաւ համարիցիս միում ընդարձակել ինքնակալութ̃ 'ի կործանումն մեր։

կոքեան զօրօքն իւրեանց ։ Բայց Տիգրան հնարս խորհեցեալ առ 'ի կազմել նոր բանակ, կոչեաց առ ինքն զՄեգադատ, որ 'ի չորեքտասան ամաց հետէ 'ի վերայ Ասորւոցն կայր 'ի նմանէ, և պատուէր ետ նմա ածել ընդ իւր զա՟մ զօրս աշխարհին ։ Իսկ իբրև Ասորիք անօգնական մնացին, եկն Անտիոքոս Ասիացի՝ որդի Անտիոքոսի Եւսեբեայ, ժառանգ Սելեւկեանց թագաւորութե՟ն, և տիրեալ 'ի կողմանս աշխարհին՝ թագաւորեաց խաղաղութ՟ զամս չորս ։

ԱՄ ԱՇԽ. Ք.
Ապպ. յԱսոր. 118.
Յուստ. Խ. Բ.

Իսկ կազմեալ պատրաստեցան բանակք երկուց թագաւորացն, եօթն բիւր այրընտիր զօրք, զօրս Միհրդատ ըստ օրինակի հռոմայեցւոց հրահանգեալ էր · և յընդմիջել ամարայնոյն սկսաւ պատերազմ՟ն ։ Բայց թագաւորքն ա՟մ ուրեք խնդրէին զդիպող վայրս, և ածէին պատնէշս շուրջանակի, զի մի՛ յարձակեսցի 'ի նոսա Լուկուլլոս · և ա՟մ ջանք նորա առ 'ի ստիպել զնոսա 'ի մարտ ընդունայն եղեն · քանզի խորհէին նոքա առանց ճակատու պատերազմի սպառել տակաւ զզօրս նորա, և նեղեալ տագնապեցուցանել 'ի ջու, և խափանել զհամբարս նոցա, զի ստիպեալ 'ի սովոյ մեկնեսցին յաշխարհէն ։ Իսկ ա՟մ հնարիւք ոչ կարացեալ Լուկուլլեայ ձգել զնոսա 'ի ճակատամարտ, այլ ինչ հնարս խորհեցաւ, և յաջողեաց նմա ։ Էին կանայք և որդիք Տիգրանայ և գրեթէ ա՟մ գանձք նորա յԱրտաշատ, որ մայրաքաղաքն էր աշխարհին նախ քան զՏիգրանակերտ · և խաղաց անդր Լուկուլլոս ա՟մ զօրօք իւրովք ։ Խորհէր՝ զի ոչ հանդարտեսցէ Տիգրան 'ի վտանգել քաղաքին, որպէս և եղեն իսկ · զի չու արար վաղվաղակի Տիգրան զհետ Լուկուլլեայ խափանել զնա, և չորիւք օթիւք մեծամեծօք հասեալ զհետ նորա և անցեալ զնովաւ, եկն բանակեցաւ յայն կոյս Արածանւոյ՝ խափանել զանցս նորա, զի ընդ այն հարկ էր անցանել յԱրտաշատ ։ Բայց հռոմայեցիք աներկիւղ յերեսաց թշնամեաց և 'ի ձգանց նոցա անկասելի՝ անցին ընդ գետն · և եղև անդ ահեղ պատերազմ, և դարձեալ կալան հռոմայեցիք յաղթութի՟ մեծ ։ Էին 'ի բանակին Հայոց թագաւորք երեք, և յերիսն Միհրդատ վատագոյն գտաւ · զի 'ի յարձակել լեգէոնացն հռոմայեցւոց, երկուցեալ յերեսաց նոցա՝ ընդ առաջին փախըստեայս խոյս ետ, և արհաւրօք վհատեցոյց զզօրս · և այն իսկ յաւելաւ 'ի պատճառս պարտութե՟ մարտին ։

3936 · 68
Պլուտ. 'ի Լուկուլ. 513.

Իսկ յետ յաղթութե՟ն Լուկուլլոս խորհէր գնալ յառաջ յԱրտաշատ, և կատարել զպատերազմն · այլ քա-

Դիոն. Կաս. Լե. 3.

ղաքն այն հեռի էր՝ բազմօրեայ ճանապարհաւ ընդ հիւսիս, և ձմեռն ևս 'ի վերայ կայր և ձիւնաբերք և մրրիկք, և զօրքն նորա վաստակեալ 'ի խիստ պատերազմէն ոչ յանձն առին գնալ, զի ոչ սովոր էին սառամանեաց աշխարհին․ Եւ հարկ եղև Լուկուղղեայ դառնալ 'ի ջերմային գաւառս․ և անցեալ ընդ Տաւրոս լեառն, եմուտ 'ի Միջագետս․ և առեալ զՄծբին քաղաք ամուր, անդ հրամայեաց զօրացն ձմերել։

Ընդ աղմուկ ապստամբութեան սկսաւ համարձակել 'ի զօրս Լուկուղղեայ վասն խստութեան զօրավարին, 'ի ստահակութենէ զօրացն հռոմայեցւոց, և առաւել ևս 'ի բանսարկութենէ Կղոդեայ․ Քանզի սա՝ որ կշտամբութեամբքն Կիկերոնի ոսոխին նորա ծանօթ է ամենեցուն, ոչ ինչ նուազ կշտամբի և 'ի պատմագրաց, լի ամենայն չարաչար ախտիւք, նշաւակ զեղխութեամբ՝ զառածեալ մինչ 'ի մծղնէութիւն, զի և ընդ քեռն իւրում անկանէր ընդ կնոջ Լուկուղղեայ․ Հանդերձ սքեմիւք էր նա և ժպիրհ և խռովարար․ համառօտ իսկ ասել, մի 'ի չարանիւթից արանց՝ ծնեալ 'ի խռովել և 'ի կորուսանել զամենայն, ձախողակի կցորդութեամբ ճարտարութեան ընդ չարութեան, որպէս և աստանօր ցուցաւ․ Զի հակառակութեամբն ընդ Լուկուղղեայ բանսարկու լինէր, և ատելի առնէր զնա զօրացն, որպէս թէ ողորմելով նոցա վասն դառն աշխատութեանն, և կարեկից լինելով․ և ասէր հանապազ․ Այս քանի՞ ժամանակք են՝ զի ծառայէք թշուառութեամբ խիստ և ագահ զօրավարիդ 'ի տար աշխարհ առանց վարձուց և կալուածոց, մինչ զինուորակիցք ձեր զօրք Պոմպէի սակաւ ինչ աշխարհակալութեամբ մեծանան։ Եւ այսպիսի բանիւք և հեզութեամբ և ընտելասէր քաղցրութեամբ՝ զոր 'ի դէպ ժամանակի քաջ կեղծաւորէր, խոտորեցոյց զսիրտ զօրականին, և ոչ ևս հնազանդէին Լուկուղղեայ։

Յայնմ վայրի եկն եմուտ Միհրդատ 'ի Պոնտոս չորեքհազարաւ յիւրոց զօրացն, և այլ ևս չորիւք 'ի զօրացն Տիգրանայ․ և բազումք [2] 'ի բնակչաց աշխարհին

---

[1] Եւ զօրք մեր թէպէտ և զմայրաքաղաք թագաւորութեանն Տիգրանայ առեալ, և 'ի բազում պատերազմունս յաղթող լեալ, սակայն տարակայութեամբ վայրացն և ցանկութեամբ հայրենեացն տառապէին ։ Կիկ․ յաղ․ Մանիլ․ օրէն․ իէ։

[2] Միհրդատ հաստատեաց անդրէն զձեռն իւր զօրօք՝ որ յաշխարհէն իւրմէ ժողովեալ էին, և որք 'ի թագաւորաց և յազգաց գային առ նա խառն յօգնականութիւն ։ Զի միշտ գրեթէ, որպէս վկայք ժամանակաց վկայեն, ընդ թշուառութեան թագաւորի դիւրագործ են բազումք․ մանաւանդ թագաւորք և որք ընդ թագաւորօքն կան․ զի սուրբ իմն և մեծ է առաջի նոցա

յարեցան 'ի նա վասն ատելութե՟ն ընդ Հռոմայեցիս , զի հարստահարէին յոյժ 'ի նոցանէ , և առ գութ ընիկ Թագաւորին՝ որ 'ի գերապանծ քաղաքէն և 'ի մեծուէ՟ յայն թշուառու՟ի հասեալ էր ։ Վասնզի Թագաւոր թշուառացեալ աղետալի է , և բնաւորեալ իմն մարդկան մեծարել զյիշատակ և զանձն Թագաւորի ։ Միհրդատ զօրացեալ և ամրացեալ նորոգ օգնականութեամբն , և զօրօք՝ զոր շրջակայ ազգք և Թագաւորք յղէին՝ քաջալերեցաւ , և ամրագոյն պատրաստեցաւ ընդդէմ Հռոմայեցւոց ։[1] Եւ որ ոչ ևս յուսայր տեսանել զաշխարհ իւր , ոչ միայն կալաւ զայն անդրէն , այլ և 'ի պատերազմ խիզախեաց ընդ բազմայաղթ զօրս Հռոմայեցւոց , և հարեալ զգունդն Փաբեայ և հալածեալ , և զՏրիարիոս և զՍորնատ փոխանորդս Լուկուլլեայ 'ի կողմանս յայնոսիկ 'ի նեղ մեծ էարկ ։

Եւ թէպէտ Լուկուլլոս յորդորեաց զզօրս իւր դիմել 'ի ձմերոցացն յօգնու՟ի նոցա , այլ անազան եհաս ։ Վասնզի Տրիարիոս յանդուգն խիզախեալ 'ի մարտ , 'ի պարտու՟ի մատնեցաւ առաջի Միհրդատայ , և անկան 'ի նմանէ եօթն հազար այր · քան և չորք 'ի նոցանէ հազարապետք , և հարիւրապետք հարիւր և յիսուն[2] · որպիսի նախճիր դուն ուրեք դիպեալ էր Հռոմայեցւոց 'ի բազում ժամանակաց հետէ ։ Եւ 'ի սպառ խորտակէին՝ եթէ ոչ վիրաւորէր Միհրդատ 'ի ճակատամարտին , որով խռովեցան զօրք նորա , և Հռոմայեցիք պարապ գտեալ՝ փախեան ։ Իսկ Լուկուլլեայ հասեալ 'ի ճակատուն տեղի , եթող զդիակունս անկելոցն անթաղ , և առաւել այնու 'ի զայրացումն եած զզօրսն · որոց համարձակեալ յապստամբութ՟ի՝ անսաստէին , և ըմբոստացեալ արհամարհէին զնա ։ Զի թէպէտ վրան 'ի վրանէ շրջեալ՝ զմի մի 'ի նոցանէ աղաչէր և յորդորէր 'ի պատերազմ ընդդէմ Միհրդատայ և Տիգրանայ , նոքա անշարժ կացեալ՝ անզգամու՟բ տային պատասխանի , թէ Երթ միայնակ պատերազմեաց՝ որ միայն մեծանասդ յաւա՛րէ թշնամեաց ։

անուն Թագաւորի ։ Կիկ . յաղ . Մանիլ . օրէն . ի՟դ ։

[1] Վասն որոյ այնչափ ինչ արար 'ի պարտութե՟ն , որչափ 'ի ժամանակի զօրութե՟ իւրոյ չիշխէր ցանկալ ։ Զի 'ի թագաւորութ՟ե իւր 'ի վեր քան զո՟մ ակնկալու՟ի դարձաւ · և յոր ոչն յուսայր , զերկիրն՝ յորմէ հալածեալն էր՝ անդրէն կալեալ , ոչ անդ զկայ էառ , այլ և 'ի յաղթող և 'ի պերճ բանակ ձեր յարձակեցաւ ։ Կիկ . վասն Մանիլ . օրէն . ի՟ե ։

[2] Եւ այնքան աղէտք էին , զի և ոչ համբաւաբեր 'ի պատերազմէն յունկն Լուկուլլեայ զգոյժն հասոյց · այլ շշուկ համբաւոյն ։ Կիկ . անդ .

ՅՕԴՈՒԱԾ Դ.

'Ի դէպ ժամանակի խռովութեան զօրացն հռոմայեցւոց դառնալ Միհրդատայ 'ի թագաւորութիւն իւր. և վասն Պոմպէի յաջորդելոյ Լուկուղղեայ, և կանգնել բազում յաղթութիւնս ընդդէմ Միհրդատայ. և Միհրդատայ 'ի նանիր պատսպարել առ Տիգրան, որ յայնժամ ընդ որդւոյ իւրում պատերազմէր. դիմումն Պոմպէի 'ի Հայս 'ի վերայ Տիգրանայ, և անձնատուր լինել Տիգրանայ. Պոմպէի ընդունայն հետամուտ լինել Միհրդատայ, և եկեալ անդրէն յԱսորիս՝ նուաճել զաշխարհն, և բարձեալ զթագաւորութիւն Սելեւկեանց՝ դառնալ 'ի Պոնտոս. Փառնակայ ապստամբեցուցանել 'ի հօրէն զզօրսն, և անձնասպանութիւն Միհրդատայ, և թէ որպիսի ոք էր նա. արշաւել Պոմպէի յԱրաբիա և 'ի Հրէաստան, և առնուլ պատերազմաւ զԵրուսաղէմ. և նուաճեալ զամենայն քաղաքս պոնտացւոց, դառնալ 'ի Հռոմ, և յաղթանակել:

'Ի Հռոմ կային բդեաշխք Գլաբրիոն և Պիսոն: Իսկ կալեալ Գլաբրիոն զԲիւթանիա և զՊոնտոս, զերկիր կուսակալութեան Լուկուղղեայ. և զլեգէոնս Փիմբրեայ, որ էին ընդ զօրս Լուկուղղոսի, արձակեաց ծերակոյտն. և զայն ամ՟ լուեալ զօրաց նորա, ևս առաւել խեռեալ ստահակէին ընդդէմ զօրավարին: Բայց և ինքն Լուկուղղոս պատճառս տայր այնմ՝ խիստ և սաստիկ բարուքն, և մերթ ևս յոխորտանօք: Որ թէպէտ ընդ աւագ զօրավարս ժամանակին դասելի է, զի էին իսկ 'ի նմա գրեթէ ամ՟՝ որ ինչ անկ է քաջ զօրավարի, բայց մի ինչ թերի էր՝ որ և զայլ ամ՟ առաքինութիւնս աղարտէր, զողոքելն ասեմ և սիրելի լինել զօրացն: Դժուարամատոյց էր, և խիստ 'ի հրամայել, և անաչառ սաստիկ յոյժ՝ մինչև ատելի լինել ամենեցուն, անողոքելի 'ի պատուհասել զզօրսն, և ոչ 'ի դէպ ժամանակի պարգևօք կամ գովութ՟ կամ քաղցր և ժպիտ դիմօք յինքն յանկուցանէր զնոսա, կամ հեզահամբոյր քաղցրութ՟՝ որ քան զգովութ՟ և քան զպարգևս առաւել ամոքեն: Բայց զի և ինքն Լուկուղղոս սարտուցանէր զզօրսն՝ յայտ անտի իսկ է՝ զի նոքին հլու և հնազանդ եղեն Պոմպէի: Դիոն. կաս. լե. դ.

Արդ ծերակոյտն, որպէս յառաջագոյն գրեաց առ նա Լուկուղղոս՝ պարտեալ 'ի սպառ զՄիհրդատ և կործանեալ անկանգնելի, կացոյց պատուիրակս յուղղութ՟ իրաց աշխարհին պոնտացւոց՝ որպէս թէ նուաճեալ զայն:

Այլ իբրեւ հասին պատուիրակքն կարկեցան կացին. զի Լուկուլլոս ոչ թէ պնտացելոյ՝ այլ եւ զօրաց իւրոց ոչ իշխէր, զի արհամարհեալ էր առաջի նոցա։ Որք եւ առաւել համարձակեցան 'ի գալ հասանել Գղաբրիոնի բդեշխին. զի գիտացին 'ի նմանէ թէ ամբաստանէր Լուկուլլոս 'ի Հռոմ՝ դանդաղել 'ի գործ պատերազմին վասն յերկարելոյ իշխանութ̃են, եւ զի արձակէր ծերակոյտն զկէս զօրաց նորա, եւ այլոց հրաման տայր՝ մի եւս հնազանդել՝ նմա։ Եւ զրեթէ ա̃մ զօրքն թօթափեցան 'ի նմանէ. եւ զայն աղմուկ խռովութ̃ պատեհ գտեալ Միհրդատայ, կալաւ անդրէն զթագաւորութ̃ իւր, եւ արար աւեր բազում 'ի Կապադովկիա։ ԱՄ ԱՇ.Ն.Թ

Մինչ դեռ այս անցք անցանէին 'ի բանակին, բազում աղմուկ շփոթի լինէր 'ի Հռոմ վասն Լուկուլլեայ. եւ Պոմպէոս այն ինչ դարձեալ էր 'ի պատերազմէն՝ յորում զհէնս ծովամարտս եհար, իշխանութ̃ հզօր քան զօրինադրեալն առեալ 'ի ծերակուտէն։ Անդ Մանիլիոս՝ մի 'ի հազարապետաց ժողովրդեանն՝ հրովարտակ առաջի արար, զի Պոմպէոս սպարապետ կացեալ ա̃մ զօրաց, եւ կուսակալ գաւառաց՝ որ էին ընդ Լուկուլլեաւ, այլ եւ զԲիւթանիա կալեալ՝ որում Ակիլիոս իշխէր, տացէ պատերազմ ընդ Միհրդատայ եւ ընդ Տիգրանայ, եւ ա̃մ զօրութ̃ք ծովու հնազանդեսցին նմա, եւ առաջինն եւս իշխանութ̃ի նորա ընդդէմ ծովամարտ հինիցն մի բարձցի 'ի նմանէ՝ համդերձ ա̃մ պայմանօքն եւ ազատութ̃ք, իշխել նմա համարձակ ընդ ծովեզերս միջերկրականին մինչեւ ցերեսուն փարսախ հեռի 'ի ծովէ։ Եւ այն զի՞նչ էր, բայց եթէ զա̃մ հռոմէական ինքնակալութ̃ին արկանել ընդ իշխանութ̃ առն միոյ. զի զա̃մ գաւառս՝ որ յառաջնում հրովարտակին պակասէին՝ զՓռիւգիա, զԼիկայոնիա, զԳաղատիա, զԿապադովկիա, զԿիլիկիա, զվերինն Կողքիս եւ զՀայաստան յաւելուին տալ նմա երկրորդաւս, այլ եւ զա̃մ զօրութ̃ս՝ որովք Լուկուլլոս պարտեաց զերկոսին թագաւորսն զՄիհրդատ եւ զՏիգրան։ 3938. 68 Պլուտարք. 'Ի Պոմպ. 634։ Ապպ. 236։ Դիոն. Կասս. ԼԶ։

Բայց ծերակոյտն եւ ազատանին Հռոմայ հայեցեալ ընդ անիրաւութ̃ին եւ ընդ ապերախտութ̃ի՝ զի զրկէր Լու-

---

[1] 'Ի ժամանակի չարեացն եւ 'ի դառն աղէտս մարտին, Լուկուլլոս՝ որում թերեւս հնար էր դարման առնել վնասուն, հրամանաւ ձեռով զկէս զօրացն՝ որոց ժամանակ ծառայութ̃են լցեալ էր՝ արձակեաց, եւ զայլս 'ի ձեռս Գլաբրիոնի ետ. զի հաճոյ թուեցաւ ձեզ պահել զսահման ժամանակի իշխանութ̃են ըստ նախնի օրինաց։ Տիտ. ԻՂ։

կուլլոս 'ի փառաց մեծամեծ քաջութեան, և զի այլ ոք փոխանակ նորա զօրավար կարգեալ՝ զպատիւ յաղթանակին ժառանգէր 'ի նմանէ քան զառաջնորդութիւն զօրաց, զչարէին. այլ առաւել ևս դառն և դժոխըմբեր էր նոցա, ամբառնալ Պոմպէի յայն բարձրութիւն իշխանութեան՝ զոր համարէին բռնաւորութիւն նիւթեալ, նմին իրի յորդորէին զմիմեանս առանձինն և խրախուսէին՝ հակառակ կալ հրովարտակին, և մի լքանել զօրհասական ազատութիւնն։

Կեսար և Կիկերոն՝ հզօրք 'ի Հռոմ՝ պատսպարան եղեն Մանիլեայ, կամ մանաւանդ Պոմպէի, ամենայն զօրութեամբ իւրեանց։ Նա յայս սակս ատենաբանեաց Կիկերոն զհրաշալի ճառն վասն մանիլեան օրինաց։ Որ զկարևոր հարկ պատերազմին ցուցեալ նախ յերկուս գլուխս ճառին, ապա յերրորդումն ցուցանէ՝ զի միայն Պոմպէոս կարող էր յաջողութեամբ վճարել զայն։ Նմին իրի զամենայն կարևորս քաջ զօրավարի մի ըստ միոջէ 'ի կարգ արկեալ, յամենեսին 'ի նոսա ցուցանէ զՊոմպէոս գերազանցեալ· մանաւանդ 'ի լաւութեան, 'ի մարդասիրութեան, յուղիղ բարս, 'ի հաւատարմութեան, յանտես առնել զխուրն և 'ի սէր հասարակաց բարւոյն։ Նա յաւելու· Առաքինութիւնս այս այնչափ ևս առաւել կարևորք են, որչափ զի անուն հռոմայեցւոց հայհոյի և ատելի է[1] առ ազգս օտարս և առ նիզակակիցս զեղխութեամբ և զօշաքաղութեամբ և անլուր հարստահարութեամբ զօրավարաց մերոց և իշխանաց յղելոց առ նոսա։[2] Իսկ ընդ Պոմպէի զգօն և համեստ և անարատ բարսն հայեցեալ՝ համարին զնա իբր ոչ 'ի Հռոմայ առաքեալ, այլ յերկնից իջեալ՝ երանաւէտել զազգս։ Արդ հաւատան, թէ արդարև այնպիսիք՝ որպէս պատմին՝ եղեն նախնի հռոմայեցիք, ազնուականք, անտենչք շահու, և զի ընդ այնպիսի աւագանւոյն ոչ վայրապար ցանկային ազինք հնազանդել ժողովրդեան Հռոմայ քան հրամայել այլոց։

---

[1] Ոչ կարեմ ասել, ո՛ հռոմայեցիք, զիարդ ատելի եմք այլոց ազգաց վասն անիրաւութեան և զեղխութեան զօրավարացն, զորս յայսմ ամի յղեցաք առ նոսա։ անդ. իե։

[2] Վասն որոյ այժմ ամենեքին 'ի կողմանսն յայնոսիկ՝ ոչ որպէս 'ի քաղաքէ աստի զՊոմպէոս համարին երթեալ, այլ յերկնից իջեալ։ Այժմ հաւատան՝ թէ իցեն այսպիսիք երբեմն լեալ հռոմայեցիք, որ այլոց ազգաց չհաւատալի էր, և առասպելք թուէին նոցա պատմութիւնքն։ Այժմ պայծառութիւն ինքնակալութեան մերոյ ծագէ յաչս նոցա. արդ 'ի միտ առնուն՝ զի ոչ վայրապար նախնիք իւրեանց լաւ համարէին ծառայել ժողովրդեան Հռոմայ քան հրամայել այլոց. յորժամ այս ուղղութիւն էր աւագանւոյն մերոյ։ անդ. խա։

Եւ Պոմպէոս սիրելի էր յոյժ ժողովրդեան . և առ ահի ատելի լինելոյ նոցա լռեցին գրեթէ ամենեքեան աւագք ծերակուտին զգօնք , որք 'ի սկզբանն քաջութեան խորհրդով խրախուսէին : Եւ հրովարտակն հաստատեցաւ յա̃մ ցեղից . և Պոմպէոս՝ մինչ ոչն էր 'ի Հռոմ՝ տիրապետեաց կալաւ զա̃մ իշխանու̃ն , զոր Սիղղա զինուք բռնակալեաց՝ անողորմ մարտիւ ընդ համազգիսն : ԱՄԱՌ․ ՆՔ

Եւ մի ոք կարծեսցէ , ասէ ոմն 'ի հանճարեղ վիպագրաց , թէ Կեսար և Կեկերոն յօգուտ աշխարհին ջանահնար եղեն 'ի հաստատել զօրէնսն : Կեսար , այր փառամոլ և ձեռներէց , սպաս առնէր ժողովրդեան՝ որ հզօրագոյն էր յայնժամ քան զծերակոյտն , զի 'ի նոյն աւագութ̃ի բացցէ իւր ուղի , և սովորեցուցանէր զհռոմայեցիս տալ արտաքոյ օրինաց անսահման իշխանութիւնս : Դարձեալ և զշնորհս և զշքեղ փառս յաճախէր Պոմպէի , զի ատելի արասցէ զնա դիւրատաղտուկ ամբոխին : Այսպէս Կեսար 'ի բարձրացուցանել զՊոմպէոս , պեղէր նմա խորխորատ 'ի կործանումն : Դիոն. Կաս. ԼԷ. 10.

Եւ ոչ Կիկերոն այլ ինչ խնդրէր քան զփառս իւր . զի հզօրագոյն 'ի նմա ախտն՝ էր իշխանասիրութ̃ի , ոչ անօրէնութ̃ և բռնութ̃ տիրապետելով հասարակապետութ̃ե , այլ հաւանեցուցանելով . նմին իրի ոչ միայն զօրավիգն իւր խնդրէր զիշխանութ̃ի Պոմպէի , այլ և կամէր ցուցանել ժողովրդեան և ազատանւոյն՝ որք իբր 'ի կրկին հասարակապետութ̃իս բաժանեալ էին , զի յոր կոյս ինքն յաւելցի՝ անդր հակէր զնժարն : Եւ սովին հնարիւք ընդ երկոսին կողմանս ընդելանէր , մերթ յայս կոյս ձեռն տուեալ և մերթ յայն :

Մինչ դեռ Պոմպէոս 'ի Կիլիկիա էր՝ այն ինչ վճարեալ զնաւամարտն ընդ հէնս ծովու , եհաս նմա նամականի՝ յորում էին աւետաւոր հրամանք ժողովրդեանն : Եւ յերանել զնա բարեկամացն և յուրախ լինել ընդ նմա՝ ինքն զյօնս քռստեալ , զազդր հարեալ , իբր թէ ծանրաբեռնէր իշխանութ̃ն , դժկամակեալ՝ ասէր . Ո՛վ դիք , քանի վաստակք հասանեն . ո՞չ լաւ էր ինձ կալ անշուք և աննշան . և ո՞չ լիցի ինձ դուլ 'ի պատերազմէ , մինչև 'ի սպա՞ռ կրիցեմ զսպառազինութ̃ի , և ո՞չ երբէք զերծայց 'ի հալածանաց նախանձու՝ բնակել բերկրութ̃ 'ի գեղջ ընդ կնոջ իմում և ընդ որդիս : Նարբա՛նք սովորականք փառասիրացն , մանաւանդ առաւել զառածելոյ ախտիւն . որք թէպէտ և զանձինս խաբեսցեն , սակայն դժուարաւ զայլս . զի ոչ թէ դիւրահաւան են նո- 3938 . 66 Պլուտարք . 'ի Պոմպ. 634. Դիոն. Կաս. ԼԸ. 11. Ապպ. 138.

ցա մարդիկ ։ Բարեկամք Պոմպէի , և մտերիմքն իսկ , ոչ ժոյժ ունէին ընդ կեղծիսն ․ զի գիտէին ամենեքեան՝ թէ փառամոլութ՟ն և իշխանասիրութ՟ , և մանաւանդ հակառակութ՟ն ընդ Լուկուլլեայ , յոյժ ուրախ լեալ բերկրէր յանձն իւր ընդ ցանկալի փառս նորոյ աւագութ՟ն ․ որպէս բազում անգամ մերկացաւ գործովք զխորհուրդս մտացն ։

Ընդ հասանել 'ի գաւառ իշխանութ՟ն իւրոյ , պատուէր ետ՝ մի ևս ումեք հնազանդել Լուկուլլեայ ․ և 'ի չուառնելն դարձոյց զա՟մ հրամանս նորա , զկէսս արձակեաց 'ի պատժոց՝ յոր 'ի նմանէ դատապարտեալ էին , զայլոց զվարձս խափանեաց , և ա՟մ իրօք ջանայր ցուցանել կուսակցաց Լուկուլլեայ , զի ոչ ինչ զօրութ՟ի և իշխանութ՟ի էր նորա՝ ընդ որում միաբանեալն էին ։ Որպէս և Ստրաբոնի մայրենի հաւոյն զչարեալ վասն սպանանելոյ Միհրդատայ զբազումս յազգականաց իւրոց , և 'ի վրէժ անգթութ՟ն նորա՝ միաբանեալ ընդ Լուկուլլեայ , հնգետասան քաղաքս 'ի Կապադովկիա տուեալ էր նմա ․ և Լուկուլլեայ փառաւորեալ զնա , և խոստացեալ վարձս ըստ մեծի վաստակոցն հատուցանել նմա ։ Իսկ Պոմպէի ոչ միայն չպահեալ զօրինաւոր և զարդար խոստմունս՝ զոր յօգուտ ևեթ աշխարհին նախորդ իւր արարեալ էր , այլ և ցուցանէր սպառսպուռ ջնջել զամենեսեան , և թըշնամի համարէր զամենեսին՝ որոց իրք ինչ լեալ էին ընդ Լուկուլլեայ ։ Սովորութ՟ի է յաջորդելոց յիշխանութ՟ի արհամարհել զվաստակս նախորդացն , առ յիւրեանս դրաւելոյ զփառս ․ այլ ոչ կարծեմ թէ եհաս ոք 'ի չափ Պոմպէի դժոխըմբեր արհամարհանացն ։ Զմեծամեծ առաքինութ՟իս նորա և զանթիւ աշխարհակալութ՟իւն պանծացուցանեն , այլ այս վատ և ատելի նախանձ նսեմացուցանէ , և բնաւ իսկ խաւարեցուցանէ զա՟մ պայծառութ՟ի նոցա ։ Զայս սկիզբն արար Պոմպէոս իշխանութ՟ են ։

Ստրաբ․ ժբ․ 557 ։

Իսկ 'ի բողոքել Լուկուլլեայ դառնապէս , բարեկամք երկոցունցն յորդորեցին զնոսա գալ առ միմեանս 'ի հաշտութ՟ի ։ Իսկ ցածութ՟ք համեստաբար յանդիման եղեալ նոցա միմեանց , զա՟մ մեծարանս և զբարեկամութ՟ի առնէին շըթամբք , որում սովոր է աւագանին ։ Այլ վաղ մերկացան սիրտք նոցա , և տակաւ զայրացան բանք 'ի թըշնամանս , և սկսաւ Պոմպէոս կշտամբել զագահութ՟ի Լուկուլլեայ , և նա զփառամոլութ՟ի Պոմպէի ․ և երկոցունցն իսկ կշտամբանք իրաւացի էին ։ Իսկ զայրագին ևս թըշնամացեալ մեկնեցան 'ի միմեանց ։

Իսկ դարձաւ Լուկուլլոս 'ի Հռոմ, ածեալ ընդ իւր մատեանս բազումս՝ զորս 'ի նուաճելոց աշխարհաց ժողովեալ էր, և կանգնեաց մատենադարան 'ի պէտս ա՟մ իմաստնոց, և բանասիրաց՝ որք յաճախէին առ նա, և մեծարանօք և մարդասիրութ՟ ընդունէր զնոսա ։ Իսկ բազում հակառակութ՟ տուան Լուկուլլեայ փառք յաղթանակին ։

Սա էած 'ի Հռոմ զբալ, որ ցայն վայր անծանօթ էր յԵւրոպա, որ և 'ի կերասեայ քաղաքէ կապադովկացւոց՝ ուստի ածաւն՝ Կեռաս անուանեցաւ ։ Պլն. ԺԵ. ԻԵ.

Պոմպէոս միաբանեաց ընդ հռոմայեցիս նախ զՓրաատ արքայ Պարթևաց՝ զանուանեալն Աստուած, զոր վերագոյն յիշատակեցաք ․ և եդ ընդ նմա ուխտ նիզակակցութ՟ 'ի մարտ և 'ի դիմակալութ՟ ։ Իսկ զՄիհրդատ հրաւիրեաց 'ի խաղաղութ՟, այլ նա յուսացեալ 'ի բարեկամութ՟ և յօգնականութ՟ Փրաատայ՝ մերժեաց զայն ․ բայց իբրև լուաւ՝ զի Պոմպէի միաբանեալ էր զնա ընդ իւր, առաքեաց խօսել ընդ նմա ․ այլ 'ի ստիպել զնա Պոմպէի նախ քան զա՟մ 'ի բաց դնել զզէնս, և զդասալիքս փախստեայս արձակել առ ինքն, մտաբերեցին զօրք նորա յապստամբութ՟ ․ քանզի բազումք էին 'ի նոսա դասալիքք, որ և ոչ հանդուրժէին լսել զմատնելն 'ի ձեռս Պոմպէի ․ և ոչ այլք յանձն առնուին 'ի զինուորակցացն օգնականութե՟ անկեալ տկարանալ ։ Իսկ Միհրդատ առ 'ի հանդարտել զնոսա, պատճառեցաւ իբր թէ լրտեսս յղեալ զհրեշտակսն՝ դիտել զբանակ հռոմայեցւոց ․ և երդուաւ չառնել խաղաղութ՟ ընդ հռոմայեցիս, ոչ այնու պայմանօք, և ոչ ըստ այլ ա՟մ պայմանաց ։

Իսկ բաժանեաց Պոմպէոս զնաւատորմն 'ի պահ զգուշութ՟ ընդ ա՟մ կողմանս ծովուն ընդ Վոսփոր և ընդ Փիւնիկէ, և ինքն խաղաց ընդ ցամաք 'ի վերայ Միհրդատայ, որում էին դեռ ևս երեք բիւր հետևակք, և երկու կամ երեք հազար հեծեալ, որովք չիշխէր 'ի ճակատամարտ ։ Իսկ էր նա բանակեալ յամուր և յանմատոյց լերին ․ այլ 'ի հասանել անդր Պոմպէի՝ մեկնեցաւ անտի, համարեալ զլեառնն անջրդի ։ Բայց Պոմպէոս գուշակեալ 'ի դալարւոյն և յայլոց նշանաց՝ զի էին անդ աղբերք ջուրց, հրամայեաց պեղել 'ի տեղւոջն գուբս գուբս, և վաղվաղակի յորդեաց ջուր զօրացն ։ Իսկ զարմանայր Պոմպէոս, զի զայնչափ ժամանակս անփոյթ լեալ Միհրդատայ և ոչ հետազօտեալ՝ անգէտ եղև մեծի և կարևոր օգնականութեն՟ ։ Իսկ փութացեալ զհետ նորա բանակեցաւ զնովաւ, շուրջ ածեալ պարիսպ հզօր՝ խիտ առ խիտ աշտարակօք՝ ամրացեալ հարիւր և յիսուն ասպարէզ շրջաբերմամբ. և Միհրդատ առ ահի կամ արհամարհանաց թող ետ նմա։ Խորհէր Պոմպէոս ածել սով 'ի վերայ զօրաց նորա, և յայն կարօտութ̃ի հասոյց զնոսա՝ զի զշաղիղ գրաստուցն ուտէին, յերիվարս ևեթ խնայեալ։ Իսկ այսպէս զաւուրս քառասուն և հինգ կամ յիսուն ժուժկալեալ, ապա հրամայեաց Միհրդատ կոտորել զամենեսին զհիւանդս և զվիրաւորս և զանպիտանս, և ինքն գիշերագնաց փախստեայ լինէր ընտրելովք զօրօքն։

Որում Պոմպէոս հետամուտ լեալ և հասեալ առ Եփրատ գետով՝ բանակեցաւ մերձ առ նա. և կասկածեալ՝ թէ գուցէ աճապարեալ Միհրդատայ անցցէ ընդ գետն և փախիցէ, ել գիշերայն 'ի բանակէն, և ճակատու պայմանաւ խաղացոյց զզօրս իւր առ թշնամիսն, զի զայն գիշեր պատաղեցուցեալ զնոսա՝ 'ի վաղիւն մատիցէ 'ի կռիւ։ Բայց սպայք ծերք մեծաւ աղերսական թախանձանօք հաւանեցուցին զնա գիշերախառն յարձակել 'ի թշնամիս. զի և ոչ աղջամղջին գիշեր էր, այլ 'ի լուսնակի ա̃մ ինչ երևէր, և ճանաչէին զօրքն զմիմեանս։ Իսկ ոչ կարաց Պոմպէոս խափանել զխրախոյս զօրացն, և յարձակեցոյց զնոսա 'ի թշնամիս։ Իսկ խուժադուժքն ոչ իշխեցին կալ առաջի նոցա, այլ զարհուրեալ 'ի փախուստ դարձան. և արարին հռոմայեցիք կոտորած մեծ, և արկին 'ի նոցանէ բիւր մի 'ի ճակատուն տեղւոջ, և տիրեցին ա̃մ բանակին։ Միհրդատ 'ի սկզբան ճակատամարտին ութ հարիւր հեծելովք սուսեր 'ի ձեռին ընդ մէջ զօրացն հռոմայեցւոց էանց. բայց ապա հեծեալքն այսր անդր ցրուեցան, և մնաց ինքն միայնակ, և երկու արք ընդ նմա յիւրոցն, և Իպսիկրատէ մի 'ի կանանցն այրասիրտ և գոռ պատերազմող՝ որ յայն սակս իսկ կոչէր Իպսիկրատէս, կանացի անուանն յարական փոխեալ։ Որ յայնժամ հեծեալ 'ի պարսիկ երիվար, և առնապէս վառեալ պարսկայնով սպառազինութ̃, երթայր զհետ Միհրդատայ 'ի տարժանաւոր յերկար արշաւանսն, և սպասաւորէր նմա, և ինքնին դարմանէր զերիվար նորա, մինչև հասին յամուրն՝ ուր էին գանձք թագաւորին և ա̃մ կահ ցանկալի։ Անդ բաշխեալ Միհրդատայ որոց անդր եկին զզգեստս մեծագինս, և բարեկամացն մատոյց դեղ մահու, զի որ կամիցին՝ զերծցին մահուամբ 'ի ձեռաց թշնամեաց։

Իսկ ոչ ուստեք յուսացեալ օգնականութ̃ բայց միայն 'ի Տիգրանայ, առաքեաց խնդրեաց 'ի նմանէ հրաման՝ պատսպարել առ նմա, և զի ձեռն տացէ 'ի կանգնումն սպառսպուռ կործանման իւրոց աշխարհին ։ Բայց Տիգրան պատերազմէր յայնժամ ընդ որդւոյ իւրում. և կալեալ զհրեշտակս Միհրդատայ՝ եդ 'ի բանտի. և զգին եհատ գլխոյ նորա, տալ հարիւր քանքար՝ որ ոք կալցի զնա կամ սպանցէ, բարուրս 'ի վերայ եդեալ՝ իբր թէ նորա զինուորեալ էր զորդին ընդդէմ իւր, այլ 'ի ծածուկ՝ սպաս առնէր հռոմայեցւոց, որպէս յայտնեսցի ընդ հուպ ։

Պլուտարք. 'ի Պոմպ. 636. Ապպ. 242. Դիոն. կրն. ԼԷ. 15.

Եւ յետ յաղթութեան Պոմպէոս չու արար զօրօք, խաղաց 'ի մեծն Հայս 'ի վերայ Տիգրանայ, մինչ պատերազմէր նա ընդ որդւոյ իւրում համանուան ։ Որպէս յառաջ ասացաք, Տիգրան արքայ Հայոց ածեալ էր իւր կնութեան զԿղէոպատրա դուստր Միհրդատայ ։ Եւ ծնան 'ի նմանէ երեք որդիք, և սպան զերկոսին տարապարտուց, և երրորդն մազապուր զերծաւ յանգթութենէ խուժադուժ հօրն առ Փրաատ արքայ Պարթևաց աներ իւր. Եւ Փրաատ ած զնա 'ի Հայաստան զօրօք բազմօք, և պաշարեցին զԱրտաշատ ։ Եւ էր քաղաքն ամուր և կազմ ամենայն կարևորօք 'ի տոկ յերկարաձիգ պաշարման. և եթող անդ Փրաատ զկէսս 'ի զօրացն, և զայլս առեալ դարձաւ յաշխարհ իւր ։ Եւ Տիգրան արքայ դիմեալ 'ի վերայ որդւոյ իւրոյ, եհար հալածեաց զնա յաշխարհէն ։ Եւ երթայր նա պատսպարել առ Միհրդատ հաւ իւր, և զճանապարհայն զգոյժ առեալ պարտութեան նորա, և անկեալ 'ի յուսոյ, խորհուրդ կալաւ ապաւինել 'ի հռոմայեցիս ։ Եւ եկն 'ի բանակն առ Պոմպէոս, խնդրել օգնութիւն. և Պոմպէոս ընկալաւ զնա փառօք, և ուրախ եղև ընդ գալուստ նորա. զի վասն արշաւանացն 'ի Հայաստան զայնպիսի ոք առաջնորդ խնդրէր. և առաջնորդեալ 'ի նմանէ՝ խաղաց դէպ ուղիղ յԱրտաշատ ։

Ազդ եղև Տիգրանայ, և զարհուրեալ չիշխեաց 'ի պատերազմ ընդդէմ հզօր բանակին, այլ 'ի մեծախոհութեան և 'ի գթութեան Պոմպէի խորհեցաւ ապաստանել. ետ 'ի ձեռս նորա զհրեշտակս Միհրդատայ, և ինքն զհետ նոցա երթեալ՝ եմուտ առանց զգուշութեան 'ի բանակն, յանձն առնել 'ի նա և 'ի հռոմայեցիս զանձն և զթագաւորութիւն իւր, և ասէ. 'Ի հաւատարմութիւն քո քան ամենայն հռոմայեցւոց յուսացեալ, եկի առ քեզ. և որ ինչ արասցես ընդ իս, հաճոյ է ։ Ոչ է ամօթ՝ զպարտութիւն յանձն առնուլ առաջի անյաղթելւոյն, և ոչ վատութիւն՝ հնազանդել այնմ, զոր գեր 'ի վերոյ ամենեցուն կացոյց բաղդն[1] ։ Բայց 'ի մտանել նորա 'ի բանակն՝ ընդ առաջ եղեն նմա նուիրակք երկու Պոմպէի, և ազդ արարին իջանել յերիվարէն և հետի մտանել, զի ոչ էր օրէն օտարի գնալ հեծեալ ընդ բանակ հռոմայեցւոց ։ Իսկ Թագաւորն լուաւ նոցա, և զսուսեր ևս մերկացեալ՝ ետ ցնուիրակսն . և մատուցեալ առ Պոմպէոս, հանէր զթագն 'ի գլխոյ իւրմէ՝ արկանել զայն յոտս նորա, և խոնարհէր վատութե̃ փարել զծնգովքն ։ Բայց Պոմպէոս ընդ առաջ երթեալ՝ ոչ թոյլ ետ նմա, և կալեալ զձեռանէ՝ ած զնա 'ի խորան իւր, և բազմեցոյց ընդ աջմէ իւրմէ, և զորդի նորա 'ի ձախմէ . և յապաղեաց առ վաղիւն լսել նմա, և զայն օր հրաւիրեաց զնոսա երեկոյին յընթրիս ։ Բայց Տիգրան հրաժարեալ՝ չառնոյր յանձն սեղանակից լինել հօրն . ընդ որ յոյժ զչարեցաւ Պոմպէոս, զի և ոչ 'ի տեսանել նորա զհայրն՝ մեծարեաց զնա, այլ որպէս յօտար ոք հայէր 'ի նա ։ Սակայն Պոմպէոս 'ի դատել զհայրն, ոչ անտես արար զորդին . զի վեց հազար քանքար տուգանս արկ հօրն, այլ և զծախս տարապարտ մարտին տուժել, և 'ի բաց կալ յա̃մ երկրէն՝ որ էր նմա յայս կոյս Եփրատայ, և որպէս 'ի սկզբանէն՝ թագաւորել 'ի մեծն Հայս . իսկ որդւոյ նորա առ կենդանութ̃ հօրն ունել զԿորդուաց և զԾոփաց աշխարհն՝ սահմանակալ Հայաստանի, և 'ի մեռանել հօրն միահեծան զա̃մ աշխարհն ժառանգել ։ Այլ և զգանձս՝ որ էին յաշխարհին Ծոփաց՝ հօրն հրամայեաց ունել, զի բաւական լիցի ձեռն նորա 'ի հատուցանել հռոմայեցւոց զհարկն՝ զոր արկ 'ի վերայ նորա ։

Հաճ և հաւան գտաւ հայրն ընդ իրաւունսն՝ զոր արար Պոմպէոս, թողլով նմա զթագաւորութի̃ն . այլ որդին ոչ ևս, զի 'ի մեծէ յուսոյն վրէպ գտաւ . և այնքան զչարեալ՝ զի խորհէր իսկ գաղտագնաց լինել, և յարուցանել աղմուկս անդրէն ։ Բայց Պոմպէի կասկած կալեալ, եդ զնա 'ի դիպահոջ . և 'ի չհաւանել նորա թողուլ զգանձս աշխարհին Ծոփաց, արկ զնա 'ի բանտ ։ Իսկ իրազեկ լեալ՝ զի զաղտագունդ մանկտին Հայոց գրգռէր 'ի պատերազմ, և զՊարթևս ջանայր միաբանել, հրամայեաց պահել զնա 'ի ձաղանս յաղթանակին ընդ այլս ։

---

[1] Նոյն հետայն և ինքն աղաչաւոր երթեալ, զանձն և զթագաւորութի̃ իւր 'ի նա ապաստան արար, և ասէ . Ոչ յոք 'ի հռոմայեցւոց կամ յայլոց ազգաց յուսացեալ եմ, բայց 'ի քեզ միայն . և որ ինչ արասցես ընդ իս բարի կամ չար, հաճոյ է ինձ ։ Ոչ է վատութի̃ նկուն լինել յանյաղթելւոյն, և ոչ նախատինք՝ հնազանդել այնմ, զոր բաղդն գեր 'ի վերոյ ամենեցուն կացոյց ։ Վէլլ. Պատէրք. Բ. ԼԷ ։

ԱՄ ԱՇ.Ն.Ք.

Յետ ոչ բազում ժամանակի Փրաատ արքայ Պարթևաց աներ նորա առաքեաց խնդրել զնա 'ի Պոմպէէ, և զի մի՛ յայս կոյս Եփրատայ ընդարձակեսցէ զաշխարհակալութիւն ։ Որում Պոմպէոս պատասխանի ետ՝ թէ հօրն անկ է հոգ Տիգրանայ, և ոչ աներոյ ․ իսկ ինձ արդարութիւն և իրաւունք հատեն սահման, և ոչ յումեքէ ընկալայց օրէնս ։ Եւ առեալ Տիգրանայ զգանձս աշխարհին Ծոփաց, հատոյց զվեց հազար քանքարն հռոմայեցւոց, և բաշխէր պարգևս զօրաց նոցա յիսուն դրամակշիռ իւրաքանչիւր զինուորի, հազար հարիւրապետացն, և հազարապետաց բիւր ․ վասն որոյ փոխարէն առատ պարգևացն՝ կոչեցաւ բարեկամ և նիզակակից հռոմայեցւոց ։ Երևելի էր այն նմա, եթէ ոչ անարժան վատութեքն աղարտէր զառատութիւն ։ Եւ զԱրիոբարզան կացոյց Պոմպէոս 'ի վերայ ա՟մ Կապադովկիոյ ․ և յաւել տալ նմա զաշխարհն Ծոփաց և զԿորդուաց, որ սահմանեալ էին որդւոյն Տիգրանայ ։

Եւ զա՟մ իրս աշխարհին Հայոց ուղղեալ, ապա խաղաց ընդ կողմն հիւսիսոյ զհետ Միհրդատայ ։ Ընդ առաջ եղեն նմա զԿուր գետով Վիրք և Աղուանք, ազգք հզօրք բնակեալք ընդ Սևաւ և ընդ կասբիականն ծով, և կամէին կալեալ խափանել զնա ․ այլ եհար զնոսա Պոմպէոս, և խոնարհեցոյց զԱղուանս 'ի խաղաղութիւն ․ և կացեալ զժամանակ ձմերայնոյն առ նոսա, ապա ընդ գարնայնոյն բանալ դրանցն՝ դիմեաց 'ի Վիրս ։ Եւ էր ազգն զօր պատերազմող անպարտելի ․ զոր ոչ Մարք և ոչ պարսիկն և ոչ մակեդոնացիք կարացին ծառայեցուցանել, միահեծան զհետ միմեանց կալեալ զԱսիա ։ Բայց Պոմպէոս մեծաւ աշխատութեամբ ընկճեալ զնոսա, խոնարհեցոյց 'ի խաղաղութիւն ։ Եւ ետ թագաւորն Վրաց տանել նմա մահիճս ոսկեղէնս, և սեղան նոյնպէս, և գահոյս ձոյլ ոսկի ․ և աղաչէր ընդունել զպարգևսն առհաւատչեայ բարեկամութեան ։ Եւ ետ զնոսա Պոմպէոս գանձապետացն, 'ի գանձս հասարակաց ։ Նա և զեգերացիս նուաճեաց, և զՈղթակ թագաւոր նոցա կալաւ, զոր ձաղեացն իսկ 'ի յաղթանակին ։ Եւ դարձաւ անդրէն 'ի վերայ Աղուանից՝ խնդրել 'ի նոցանէ վրէժ, զի 'ի պատերազմել իւրում ընդ Վիրս և ընդ եգերացիս՝ նոքա դարձեալ զէն առին ։

Պլուտարք. 'ի Պոմպ. 637 ։
Դիոն. կտր. ԼԷ. 28 ։
Ապպ. 242 ։

3919 ․ 65

Եւ էր զօրագլուխ զօրացն Աղուանից Կոսիս եղբայր արքային Որոյզի ։ Սա 'ի խառնել մարտին՝ խնդրէր զՊոմպէոս, և դիմեալ 'ի նա՝ արձակեաց զգեղարդն ։

Բայց Պոմպէի հասեալ 'ի վերայ նորա, և հարեալ կորովութ̅բ, թափ հանեալ ընդ նա զնիզակն, դիաթաւալ առ աթուր երիվարին արկ զնա յերկիր։ Եւ խորտակեցան զօրք Աղուանից, և խոնարհեցաւ դարձեալ Որոյդ արքայ 'ի խաղաղութ̅ն որպէս 'ի հերուն, և ետ տանել հռոմայեցւոց պարգևս մեծամեծս, և զորդիս իւր պատանդ 'ի հաւատարմութ̅ն ուխտի դաշանցն։

Միհրդատ զժամանակ ձմերայնոյն անցուցեալ 'ի Դիոսկուրիաս քաղաք, որ էր յեզր Սեաւ ծովուն՝ ընդ հիւսիս և ընդ արևելս, 'ի հասանել գարնայնոյն չու արար 'ի կիմերեանն Վոսփոր ընդ ազգս Սկիւթաց, յորոց կէսք կամակար, այլք ահիւ ետուն նմա անցս։ Իսկ կիմերեանն Վոսփոր, որ է քերսոնականն Սկիւթիա, էր յայնժամ մարզ աշխարհին Միհրդատայ. և ետ զայն 'ի հասոյթ միում յորդւոցն, որում անուն էր Մաքարէս։ Եւ 'ի պաշարել հռոմայեցւոց զՍինոպ քաղաք, և 'ի ծովակալել նաւատորմաւ զեւքսինեանն Պոնտոս՝ որ բաժանէ ընդ Սինոպ և ընդ աշխարհ նորա, Մաքարէս 'ի նեղ անկեալ՝ արար ընդ նոսա խաղաղութ̅ն, և մինչև ցայնժամ պահէր զուխտն։ Բայց երկուցեալ յերեսաց հօրն, զի հակառակ կամաց նորա առնէր, յղեաց հրեշտակս ընդ առաջ նորա՝ աղերսել զնա 'ի հաշտութ̅ն, որպէս 'ի հարկէ իրաց ժամանակին ակամայ բռնադատեալ։ Այլ 'ի մերժել հօրն զաղերս նորա, խորհուրդ կալաւ փախչել ընդ ծով. և կալեալ 'ի նաւաց Միհրդատայ՝ որ պահէին զճանապարհ նորա, չոքաւ զիւրովին զի մի 'ի ձեռս հօրն մատնեսցի։

Ապպ. յԱ-
սոր. 133։
Յուստ. Խ. Է։

Պոմպէի կատարեալ զպատերազմն հիւսիսոյ, և ոչ ևս յուսացեալ հասանել զհետ Միհրդատայ՝ որ 'ի տար աշխարհ փախուցեալ էր, դարձաւ զօրօքն ընդ հարաւ. և զճանապարհայն նուաճեաց զԴարեհ արքայ Մարաց, և զԱնտիոքոս արքայ Կոմագենաց. և հասեալ կալաւ զա̃մ Ասորիս։ Եւ Սկաւրոս նուաճեաց զտորին Ասորիս և զԴամասկոս, և Գաբինիոս զայլ ա̃մ երկիրն մինչև ցՏիգրիս. սոքա փոխանակ Պոմպէի զօրավարք երթեալ էին 'ի կողմանսն յայնոսիկ։ Իսկ Անտիոքոս Ասիացի որդի Անտիոքոսի Եւսեբեայ՝ ժառանգ թագաւորութ̅ն Սելևկեանց, որ 'ի չորից ամաց հետէ հրամանաւ Լուկուլեայ թագաւորէր 'ի մի կողմն աշխարհին, տիրեալ անդ 'ի մեկնել անտի Տիգրանայ, եկն առ Պոմպէոս՝ խնդրել 'ի ձեռն նորա ժառանգել զհայրենի թագաւորութիւն։ Այլ ոչ լուաւ նմա Պոմպէոս, և մերժեալ զնա յա̃մ

աշխարհէն՝ մարզ կացոյց զայն Հռոմոց ։ Արդ Տիգրանայ՝ ԱՄԱՌՆ.
որ զայնչափ չարիսն հասոյց Հռոմայեցւոց երկայն ժամանակաց պատերազմաւն՝ թողեալ զհայաստան, զԱնտիոքոս՝ որոյ ոչ ինչ մեղուցեալ էր՝ տարապարտուց զըրկէր յիշխանութենէն, պատճառելով իբր թէ զԱսորիս 'ի Տիգրանայ կալան Հռոմայեցիք, և չէր պարտ նոցա 'ի բաց կալ յաշխարհակալութենէն, և թէ Անտիոքոս այր վեհերոտ էր և ապիկար 'ի պահել զաշխարհն, և ոչ կամէին Հռոմայեցիք թողուլ զերկիրն հանապազ յոտնակոխ հէնիցն Հրէից և արաբացւոց ։ Այսու պատճառանօք մերժեալ Անտիոքոս 'ի թագաւորութենէ, իբրև զմի ոք 'ի ժողովրդենէ կեայր. և դադարեաց 'ի նա Սելևկեանցն թագաւորութիւն յԱսիա, տևեալ զամս իբր երկերիւր և 3939. 65
յիսուն ։

Մինչ դեռ հռոմայեցիք պատերազմէին յԱսիա, յարեաւ աղմուկ մեծ յԵգիպտոս ։ Զի աղեքսանդրացիք ոչ ևս հանդուրժեալ ընդ թագաւորութեամբ Աղեքսանդրի՝ ապստամբեցին, և հալածեալ զնա թագաւորեցուցին զՊտղոմէոս Աւլետ ։ Զայս սորա երկարապատում արասցուք ։

Բայց Պոմպէի երթեալ 'ի Դամասկոս, ուղղեաց զիրս Պլուտար. Ի
եգիպտացւոց և զՀրէից ։ Անդր եկին հասին առ նա 'ի Պոմպ. 638.
միասին թագաւորք երկոտասան մեծարել զնա ։

'Ի սմին ժամանակի, մինչ սոսկալի հայրասպանութիւնք և եղբայրասպանութիւնք վասն բարձանձնութեան գործէին, եղև չքնաղ և զարմանալի իմն մրցումն սիրոյ և մեծարանաց հօր ընդ որդւոյ ։ Զի Արիոբարզան արքայ Կապադովկացւոց հրաժարեալ կամակար 'ի թագաւորութենէ առ սէր որդւոյն, եդ զթագն 'ի գլուխ նորա յանդիման Պոմպէի ։ Իսկ որդին բազում արտասուօք անկեղծութեամբ տրտմեալ ընդ որ այլք ուրախ լինէին, անդ միայն անսաստէր հօրն[1] ։ Այս երկիցս անգամ եղև 'ի Կապադովկիա վէճ աղնուական, որպէս զԱրիարաթեանցն յիւրում տեղւոջն պատմեսցուք ։

Բայց Պոմպէոս խորհեցաւ դառնալ անդրէն 'ի Պոնտոս և 'ի Կապադովկիա, և նուաճել զայլ ևս ամուր ամուր քաղաքս Միհրդատայ. և կալաւ գրեթէ զամենայն քաղաքս, և ապա չոգաւ յԱմիսս քաղաք 'ի Պոնտոս ձմերել ։

Ստրատոնիկէ, մի 'ի կանանց Միհրդատայ, եթող

---

[1] Իբր ոչ լինէր վախճան չքնաղ մարտին, եթէ ոչ սաստ Պոմպէի կամաց հօրն օգնէր. Վաղ. Մաք.

ԱՄ. ԱՇ. Ն. Ք. Պոմպէի զամրոցն 'ի Վոսփոր՝ որում ինքն պահ ունէր, հանդերձ գանձիւքն՝ որ անդ ծածկեալ էին, զի տացէ միայն իւր զՔսիփարէս՝ եթէ անկցի 'ի ձեռս նորա. Պոմպէոս ոչ ինչ 'ի պարգեւաց նորա ընկալաւ, բայց որ ինչ 'ի զարդս մեհենաց պատկանէրն. Իսկ իբրեւ լուաւ Միհրդատ որ ինչ արարն Ստրատոնիկէ, եւ զի վաղվաղակի անձնատուր եղեւ, մատնիչ զնա համարեցաւ, եւ առ վրէժ քինու սպան զՔսիփարէս յանդիման մօրն՝ որ յայնմ կողմանէ նեղցին տեսանէր զողորմ տեսիլն.

'Ի Կային կամ 'ի Նորն անուանեալ քաղաք, որ էր հզօրագոյն քան զա̃մ քաղաքս Պոնտոսի, եդ Միհրդատ 'ի պահեստի զյոլովս 'ի գանձուցն եւ զա̃մ ցանկալի իրս, համարեալ զամուրն անառիկ. Բայց առաջի հռոմայեցւոց ոչ ինչ դժուարին եղեւ առ առնուլ. եւ կալաւ զայն Պոմպէոս, եւ զա̃մ որ ինչ էրն 'ի նմա. Իսկ եգիտ անդ դպիրս յիշատակաց Միհրդատայ զգաղտնեաց, որովք քաջ ճանաչէր որպիսի ոք էրն. 'Ի միում յայնցանէ նշանակէր զանուանս՝ որոց դեղ մահու արբուցեալ էր, յորս էր եւ Արիարաթ որդի իւր, եւ Ալկէոս սարդիկեցի՝ որ 'ի ձիընթացս յաղթեաց նմա. Գոգցես իմն երկնչէր՝ թէ գուցէ ծածկեսցին առ յապայս անօրէնութիւնք իւր, եւ վասն որոյ գործեացն զայնս. ո՛ զառանցեալ միտք. Գտան անդ

Պլին. իե. է. եւ գիրք Միհրդատայ բժշկականք, զորս Պոմպէոս ետ յեղուլ 'ի լատին բարբառ Լինէոսի ումեմն քաջ քերականի, որ էր ազատեալն նորա. Զի հանդերձ այլովք զարմանալի յոլովութ̃քն, եւ բժշկականին հմուտ էր Միհրդատ. եւ նա եգիտ զանդեղայն հրաշալի՝ որ յանուն նորա կոչեցաւ, եւ յոյժ ընդունելի եղեւ բժշկաց. որ եւ ցարդ 'ի կիր արկեալ, եւ օգուտ բազում գործի նովաւ.

3940. 64 Պոմպէոս 'ի ձմերելն յԱսպիս՝ ուղղեաց զիրս աշխար-

Յոս. պատմ. հին որպէս մարթէրն ըստ ժամանակին, եւ գարնայնոյն

Նախն. ժդ. է. եկն դարձեալ յԱսորիս՝ կարգս հաստատել եւ անդ. Իսկ

Պլուտարք. 'ի Պոմպ. 639. էր յայնժամ Միհրդատ դարձեալ 'ի Վոսփոր, բայց ոչ

Դիոն. Կաս. լէ. 34. զհետ եղեւ նմա Պոմպէոս. զի հարկ էր պատել զօրօք

Ապպ. 246. ընդ Սեաւ ծով, եւ անցանել ընդ ազգս խուժադուժս եւ ընդ անապատս, ընդ բազմավտանգ կորստական ճանապարհ. այլ 'ի պահ եւեթ զգուշութ̃ կացոյց զնաւատորմ̃ն, եւ արգել զա̃մ նաւս ամբարաբերս Միհրդատայ, եւ խորհէր սովով 'ի նեղ արկանել զնա, զի եւ 'ի մեկնել իւրում ասէր. Ահաւորագոյն քան զլեգէոնս հռոմայեցւոց թշնամիս Միհրդատայ թողում զսով եւ զկարօտութի̃.

Բայց յԱսորիս ճեպեցոյց զնա մոլեգին եւ անափառ տենչ աշխարհակալելոյ մինչև ցծովն Կարմիր ։ Զի յԱփրիկէ և 'ի Սպանիա աստի և անտի Միջերկրականին կրձին մինչև յարևմտեանն Ովկիան ածեալ զգէնս հռոմայեցւոց, և յԱղուանս մինչև ցծովն Կասպից, խորհէր 'ի լուսմն փառացն՝ հասանել ցծովն Կարմիր ։ Եւ հասեալ յԱսորիս, կացոյց ազատ զԱնտիոք և զՍելևկիա քաղաքս առ Որոնտ գետով. և դիմեաց 'ի Դամասկոս՝ հասանել անտի 'ի վերայ արաբացւոց, և ապա մինչև 'ի ծով մղել զյաղթութիւն ։ Այլ դէպք յեղակարծ խափանեցին զա̃մ, և հարկ եղև նմա դառնալ 'ի Պոնտոս ։

Զի յառաջագոյն հրեշտակք հասին 'ի Միհրդատայ՝ խնդրել զխաղաղութիւն, և զի կալցի նա անկորուստ զհայրենի թագաւորութիւն որպէս զՏիգրան, և լիցի հարկատու հռոմայեցւոց՝ թողեալ 'ի նոսա զա̃մ աշխարհակալութիւնս իւր ։ Եւ պատասխանի ետ Պոմպէոս, զի և Միհրդատ անձամբ եկեսցէ առ ինքն որպէս զՏիգրան ։ Բայց նա չէառ յանձն զվատութիւն, այլ զօրդիս իւր ասէր յղել և զկարևոր բարեկամս ։ Եւ Պոմպէի չհաւանեալ, դադարեցին պատգամաւորութիւնք. և միւսանգամ պատրաստէր Միհրդատ մեծաւ ևս պատերազմաւ ։ Ազդ եղև Պոմպէի, և հարկ համարեցաւ դառնալ 'ի Պոնտոս՝ ականատես լինել իրացն 'ի մօտոյ. նմին իրի եկն յԱմիսոս, որ էր յառաջ մայրաքաղաք աշխարհին, կալ անդ առ ժամանակ մի ։ Անդ յիրաւի պատուհասեալ 'ի դից, ասէ Պլուտարքոս, մեծամեծս սխալեաց փառամոլութե̃՝ որով եպերի յամենեցունց ։ Զի որով ստգտանէրն զԼուկուլլոս և բամբասէր զնա առաջի ամենեցուն, զի չև զպատերազմն վճարեալ՝ մարզս կարգէր, պարգևս բաշխէր, բարձ և պատիւ շնորհէր, և որ ինչ յետ կատարեալ յաղթութեան պարտ էր առնել՝ նախ քան զյաղթութիւնն առնէր, զնոյն և ինքն արար անձահապէս. մարզպետս կացուցեալ, և 'ի մարզս զաշխարհն Միհրդատայ բաժանեալ, իբր թէ վճարեալ էր պատերազմն ։ Բայց տակաւին կենդանի էր Միհրդատ ահաւոր թշնամին, ամենահնարն և անվհատելի 'ի դժնդակ արկածից, որ պարտութիւն իսկ թուէր յաւելուլ 'ի խրախոյս և 'ի զօրութի ։ Զի և յայնժամ մինչ կարծէրն կործանեալ անկանգնելի, նա զօրաժողով լինէր գրոհ տալ ահագին յարձակմամբ մինչ 'ի միջերկրեայս աշխարհին Հռոմոց ։

Պոմպէոս 'ի բաշխել վարձս քաջաց՝ զփոքրն Հայս և զբազումս 'ի շրջակայ քաղաքաց և 'ի գաւառաց ետ Դէիոտարոսի, որ էր իշխան գաղատացւոց, և յա̃մ պատերազմին հաւատարիմ եկաց ընդ հռոմայեցիս. նմին իրի և թագաւոր յայնմ հետէ ետ նմա Պոմպէոս կոչել. Սա ինքն է Դէոտարոս՝ որ շնորհապարտ մտօք մինչև 'ի սպառ կուսակից կացեալ Պոմպէի, և մտանեալ 'ի ցասումն Կեսարու, ճարտարխօսութ՟ն Կիկերոնի ապրեցաւ.

Սա և զԱրքեղայոս քրմապետ կացոյց Լուսնի՝ մեծի դիցն կոմանացւոց 'ի Պոնտոս, և իշխան երկրին՝ յորում բնակէին պաշտօնատարք դիցուհւոյն, արք իբրև վեց հազար. Այս Արքեղայոս, որպէս յառաջ ասացաք, էր որդի այնորիկ՝ որ 'ի նախնում պատերազմին Միհրդատայ ընդ հռոմայեցիս զօրավարեաց զօրաց նորա 'ի յունաստան, և ապա անարգեալ 'ի նմանէ՝ որդւովն հանդերձ առ հռոմայեցիսն հատուածեցաւ. Եւ երկոքեան հաւատարիմ կացին ընդ նոսա մինչ 'ի սպառ, և զօրավիգն եղեն նոցա 'ի պատերազմունսն յԱսիա. և 'ի մեռանել հօրն՝ կացուցին հռոմայեցիք զորդի նորա փոխանակ նորա քրմապետ և իշխան 'ի Կոմանա, 'ի վարձ երկաքանչիւրոցն.

Մինչ դեռ Պոմպէոս 'ի Պոնտոս էր, Արետաս արքայ Ապառաժն Արաբիոյ պարապ առեալ՝ արշաւէր յԱսորիս, և նեղէր զբնակիչս աշխարհին. Եւ դարձեալ գայր Պոմպէոս, և զճանապարհայն եգիտ զգլխակունս հռոմայեցւոց անկելոց 'ի պատերազմին՝ յորում պարտեցաւ Տրիարիոս, և արար նոցա յուղարկաւորութ՟ի մեծաւ հանդերձանօք, որով սիրելի եղև զօրացն. Եւ յառաջ անցեալ գնայր յԱսորիս վասն պատերազմին Արաբիոյ, բայց համբաւ կարևոր հասեալ՝ խափանեաց զնա.

Իսկ Միհրդատ ոչ ևս յուսացեալ 'ի խաղաղութ՟ի՝ յորմէ հետէ մերժեաց Պոմպէոս զաղերս նորա, և 'ի բազմաց ևս յիւրայոցն լքեալ, ոչ ինչ վհատեցաւ. այլ խորհէր խաղալ ընդ Պոնոնիա, հատանել անցանել ընդ Ալպեան լերինս, և անդր յԻտալիա յարձակել 'ի վերայ հռոմայեցւոց, որպէս արարն Աննիբաղ. Խորհուրդ յանդուգն և անհանճար, յոր հնացեալ ոխութ՟ի և խելայեղ յուսահատութ՟ի մղէր զնա. Սկիւթացիք, որ շուրջ զնովաւ բնակեալ էին, գումարեալ բազմութ՟բ ընդ զօրս նորա՝ ստուարացուցին յոյժ զբանակն. Եւ առ գաղղիացիս հրեշտակս արար՝ յորդորել զնոսա, գալ գումարել ընդ իւր 'ի մտանել իւրում յԱլպեան լերինս. Կիրք բռնագոյնք դիւրահաւանք են, և սաստիկ ցանկութ՟ի՝ դիւրապատիր 'ի յոյս. Միհրդատ յուսացեալ ակն ունէր, զի թերևս ծառայապստամբ պատերազմն յԻտալիա և 'ի

Սիկիլիա չև ևս 'ի սպառ շիջեալ՝ արծարծեսցի յերևել իւրում անդ, և դարձեալ վաղվաղակի հէնք ծովակալեսցեն և յարուսցեն անդրէն 'ի վերայ Հռոմայեցւոց պատերազմ, և ազգք հարստահարեալք 'ի զօշաքաղ և յանագորոյն կուսակալաց և 'ի զօրավարաց՝ խրախուսեսցին նովաւ ընկենուլ զլուծն, ընդ որով հեծէին 'ի բազում ժամանակաց ։ Զայս այսպէս զմտաւ ածէր Միհրդատ ։ ԱՄԱՌ: Ն.Ք.

Բայց էր առաջի նորա ճանապարհ աւելի քան զբիւր ասպարէզս, և աշխարհք բազումք՝ որ այժմ կոչին փոքրն Սկիւթիա, Պոդոլիա, Մոլդաւիա, Վալաքիա, Տրանսիլուանիա, Ունգարիա, Ստիրիա, Կարինթիա, Տիրոլ և Լոմպարտիա ․ և գետք մեծամեծք Բորիսթէն, Դանուբ և Պաթոս ։ Իսկ զօրայն զմտաւ ածեալ զդժնդակ և զբազմավտանգ չուն՝ այնպէս զարհուրեցան, զի առ 'ի խափանել զխորհուրդ նորա՝ միաբանեալ թագաւորեցուցին զՓառնակ զորդի նորա փոխանակ նորա ․ և նա ինքն էր առաջնորդ ապստամբութեն ։ Եւ իբրև ետես Միհրդատ զի ամենեքին թողլին զնա, և ոչ 'ի ձեռաց որդւոյ իւրոյ կարէր ապրել, խոյս ետ 'ի կողմն ապարանիցն, և դեղ մահու արբուցեալ կանանց և հարճից իւրոց, և դստերացն՝ որ ընդ նմա էին, ապա և ինքն արբ ։ Բայց դառնութե թունիցն ոչ ինչ ազդելով 'ի նա, ձեռն ձգեաց 'ի սուսեր ․ և ոչ սուսերբն կարացեալ զանձն 'ի մահ վիրաւորել, ձայն ետ միում 'ի զինուորաց գաղղիացւոց կատարել զհարուածն ։ Բայց Դիոն յորդւոյ իսկ իւրմէ ասէ զնա սպանեալ ։

Եւ թագաւորեաց նա զամս վաթսուն, և մեռաւ ամաց եօթանասուն և երկուց ։ Յահի մեծի կասկածանաց անկանելոյ 'ի ձեռս Հռոմայեցւոց և ձաղելոյ 'ի յաղթանակի՝ կրէր ընդ իւր հանապազ զդեղ մահու, զի յանհնարին վտանգին՝ նովաւ ապրեսցի 'ի ձեռաց նոցա ։ Եւ յայնժամ խիթացեալ թէ գուցէ մատնեսցի յորդւոյ իւրմէ 'ի ձեռս Պոմպէի, կալաւ զօրհասական խորհուրդն, և աճապարեաց 'ի կատարումն, այլ ոչ զրաւեցաւ 'ի կենաց ․ զի որպէս պատմեն, զդեղթափն զոր եգիտ՝ առնոյր ստէպ, և այնու ոչ ազդէր 'ի նա դաժանութի թունից ։ Բայց այս այլոց առասպելք թուին, և անհնարին նովին միով անդեղայիւ զազգի ազգի թոյնս ջրել ։ 5941. 65

Մինչ դեռ Պոմպէոս յԵրիքով էր յերկիրն պաղեստինացւոց, զի վասն հակառակութեցն Հիւրկանեայ և Արիստաբուղեայ՝ զորոց այլուր ասացաք՝ անդր երթեալ էր, հասին առ նա սուրհանդակք յաշխարհէն պոնտացուց համբաւաբերք մահուն Միհրդատայ, ածեալ նամականի 'ի զօրավարաց կողմանցն, և տեգք նիզակաց նոցա սարդենեօք պսակեալ էին, որ յաղթութե̃ և մեծի աւետեաց նշանակ էր. և զօրքն ա̃մ ցանկութ̃բ մեծաւ սպասեալ միայն լսել զաւետիսն. Իսկ զի այն ինչ զբանակ հարկանէին, և չև ևս զբեմն կանգնեալ էին՝ ուստի զօրավարն ընդ զօրսն խօսէր, առ 'ի չդանդաղելոյ 'ի կազմել զայն դալարուով՝ որպէս սովորն էին, առ ձեպ ժամանակին զհամետս գրաստուցն առ խուռն 'ի մի վայր կուտեցին, և եղ անդր Պոմպէոս 'ի վարկպարագի բեմն, և ծանոյց նոցա զմահ Միհրդատայ, և զօրինակ անձնասպանութե̃ն, և զի Փառնակ որդի նորա աշխարհաւն հանդերձ նուաճէր 'ի հռոմայեցիս, և զզրաւ երկարատև դժնդակ պատերազմին. Իսկ ուրախ եղեն ընդ նմա զօրքն ամենայն.

Այս վախճան եղև Միհրդատայ, այնմ՝ զորմէ ասէ ոմն 'ի վիպագրաց[1], թէ դժուարին է լսել զնմանէ, և խօսել՝ ևս դժուարին. գոռ 'ի մարտ պատերազմի, և արիութ̃բ զարմանալի, սակաւ երբէք օգնականութ̃բ բաղդին մեծ երևեալ՝ այլ անսասան քաջութ̃բն միշտ, արդարև զօրավար հանճարովն և խորհրդականութ̃բ, իսկ քաջայանդուգն կորովի բազկաւ՝ զինուոր. միւս այլ Աննիբաղ ատելութ̃բն ընդ հռոմայեցիս.

Խնդ. ակն. դէմ. գ. գ: Թագաւոր մեծ յետ Աղեքսանդրի զնա լեալ ասէ Կիկերոն. զի որպէս յայտ է՝ ոչ ոք 'ի թագաւորաց հզօրագոյն քան զնա ոսոխ եկաց հռոմայեցւոց. Ապաքէն էին 'ի նմա բազում ինչ զարմանալի, միտք լայնախորհուրդ 'ի բովանդակել զա̃մ, հանճար գերազանց՝ բաւական առ կարի դժուարինս, արիութ̃ի՝ անսասան 'ի դժնդակ արկածից, ճարտարմտութ̃ի և համարձակութ̃ի ամենահնար. որով յետ սպառսպուռ բեկման՝ վաղվաղակի հզօր ևս երևէր և աճաւոր. Այլ ոչ կարծեմ՝ թէ ընդ քաջ զօրավարս համարելի իցէ, զի և գործք պատերազմաց նորա՝ որպէս ինձ թուին՝ ոչ զկատարեալ զօրավարի տան զցոյց. Ապաքէն 'ի սկզբանն կանգնեաց յաղթութ̃իս մեծամեծս, այլ ընդդէմ վատ և անհմուտ զօրավարաց. իսկ իբրև Սիղղա և Լուկուլլոս և Պոմպէոս անցին 'ի ճակատ, ոչ ևս նոյնպէս. զի ընդդէմ նոցա ոչ յոյժ զարմանալի ցու-

---

[1] Այր՝ զորմէ ոչ է մարթ լռել, և ոչ խօսել՝ 'ի հարևանցի. գոռ պատերազմող, զարմանալի քաջութ̃բ. երբեմն բաղդիւ, միշտ արիութ̃բն մեծ. զօրավար խորհրդականութ̃բ, բազկաւ զինուոր, ատելութ̃բն ընդ հռոմայեցիս միւս այլ Աննիբաղ: Վէլլ. Պատէրլ. բ. ժը:

ԱՄ ԱՇ.Ն.Ք

յաւ ճարտարութե՟ յընտրել զդիպող տեղի ճակատուն, և ոչ արագամիտ յանակնկալ արկածս, և ոչ արի 'ի վըտանգս և 'ի սաստկացեալ պատերազմի ։ Բայց թէպէտ և էին նմա առաքինութ՟ք քաջի զօրավարի, սակայն ատելի էր անթիւ սպանութ՟քն՝ որովք շաղախեաց զթագաւորութ՟ի իւր, և անագորոյն խժդժութ՟ն՝ որով ոչ 'ի մայրն խնայէր, ոչ 'ի կանայս, ոչ յորդիս, և ոչ 'ի բարեկամս, փոխանակեալ զամենեսին ընդ անյագ փառամոլութե՟ն ։

5941. 63
Յով. պատմ.
Նախն. ժդ. ։ և
Պատ. Հր. ա.
Է ։
Պլուտարք. 'ի
Պոմպ. 641.
Ապպ. 250.
Դիոն. Կաս.
ԼԷ. 35.

Պոմպէոս հասեալ յԱսորիս՝ խաղաց դէպ ուղիղ 'ի Դամասկոս, չու առնել անտի յԱրաբիա 'ի պատերազմ ։ Բայց Արետաս արքայ արաբացւոց, իբրև ետես զնա եկեալ հասեալ զօրօք յաշխարհ իւր, հրեշտակս առաքեալ՝ հնազանդեցաւ նմա ։ Իսկ վասն խռովութեան հրէաստանի յապաղեալ առ ժամանակ մի՝ ապա դարձաւ յԱսորիս. և անտի չու արար 'ի Պոնտոս ։ Իսկ հասեալ յԱմիսոս՝ եգիտ անդ զդիակն Միհրդատայ յղեալ առ ինքն 'ի Փառնակայ յորդւոյ նորա, իբր զի տեսցէ զթըշնամին մեռեալ՝ որ զայնչափ վիշտս և զաշխատութ՟ի հասոյց նմա ։ Այլ և նուէրս մեծամեծս յղէր նմա Փառնակ, վասն գտանելոյ շնորհս առաջի նորա. և ընկալաւ զայնոսիկ Պոմպէոս ։ Բայց զդիակն Միհրդատայ թագաւորապէս մեծարեալ, զի սահման թշնամութե՟ն զմահն համարեցաւ, առաքեաց զայն 'ի Սինոպ քաղաք՝ թաղել 'ի շիրիմս հարց իւրոց թագաւորացն պոնտացւոց, զի 'ի բազում ժամանակաց հետէ անդ էին գերեզմանք նոցա. և զմեռելոյթսն ըստ արքունական շքոյ հրամայեաց ։

'Ի սոյն արշաւանս՝ կալաւ և զամ՟ քաղաքս, որ դեռ ևս էին 'ի ձեռս կուսակալացն Միհրդատայ. և ուրեք ուրեք եգիտ մեծութ՟ս բազում յոյժ, մանաւանդ 'ի Տեղաւրա՝ ուր էին բազում ինչ կահք ցանկալիք Միհրդատայ, և զարդք մեծագինք, և զինարան մեծ. ուր գտան բաժակք եղեգնաքար յեռեալ յոսկի՝ երկու հազարք, և բիւր ազգի ազգի սպասք սեղանոյ, կահք և կարասի, և անօթք պատերազմի առնազէնք և ասպազէնք, զորոց հազիւ յաւուրս երեսուն կարաց ունել զհամար գանձապետ բանակին ։

Իսկ ետ Պոմպէոս Փառնակայ զՎոսփոր փոխանակ հայրասպանութե՟ն, և կացոյց զնա բարեկամ և նիզակակից հռոմայեցւոց, և դարձաւ յԱսիա՝ ձմերել յԵփեսոս ։ Անդ բաշխեաց մրցանակս զօրացն՝ միում միում հազար և հինգ հարիւր դրամակշիռ, և սպայից ըստ իւրաքանչիւր կարգի ։ Իսկ ամ՟ պարգևքն, զոր յաւարէ

ԱՄ ԱՌ.Ն.Ք Թշնամեացն բաշխեաց զօրականին, գումարէին 'ի վեշտասան հազար քանքար. Նաեւ յաւել երկու բիւր քանքարս ածել ընդ իւր 'ի Հռոմ՝ 'ի գանձս աշխարհին.

3943. 61 Նաեւ յաղթանակեաց մեծաւ երեւելի սպառուք զաւուրս երկու. եւ ածէր առաջի իւր գերի արս երեքարիւր քսանեւ չորս յաւագաց անտի, յորս էին եւ Արիստաբուղ արքայ Հրէաստանի՝ հանդերձ Անտիգոնեաւ որդւովն իւրով, Ողթակ արքայ Եգերացւոց, Տիգրան որդի մեծին Տիգրանայ արքային Հայոց, եւ քոյր Միհրդատայ եւ հնգեքին որդիք նորա եւ դստերք երկու, եւ փոխանակ նորա զգահոյսն եւ զգաւազան արքունի, եւ զպատկեր նորա կիսակ՝ ութ կանգնաւ 'ի բարձրութիւն, պատկեր ոսկի հսկայաձեւ.

ՊՐԱԿ ԵՐԿՐՈՐԴ

Ժամանակ իրացս՝ որ 'ի սմա պատմին՝ ամք երեսուն եւ հինգ, 'ի սկզբանէ թագաւորութեան Պտղոմեայ Աւլետի՝ մինչեւ ցմահ Կղէոպատրայ, յոր դադարէ թագաւորութիւն Եգիպտացւոց. յերեքհազար ինն հարիւր երեսուն եւ իններորդ ամէն թուականութեան աշխարհի՝ մինչեւ ցամն երեքհազար ինն հարիւր եօթանասուն եւ չորրորդ.

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Պտղոմեայ Աւլետէ, որ թագաւորէր զհետ Աղեքսանդրի յԵգիպտոս, բարեկամ եւ նիզակակից լինել ընդ հռոմայեցիս 'ի ձեռն Կեսարու եւ Պոմպէի, գանձս տուեալ բազումս. եւ հարկս ծանունս նորին իբր արկանել 'ի վերայ ժողովրդեան. եւ ժողովրդեանն հալածել զնա, եւ թագաւորեցուցանել զԲերենիկէ դուստր նորա. եւ նորա երթեալ 'ի Հռոմ, եւ բազում գանձիւք յինքն արկանել զաւագանին վասն դառնալոյ յաթոռ իւր. եւ վասն հակառակ հրամանի Սիբիլեայն. եւ Գաբինեայ արհամարհեալ զպատգամն՝ զինու զօրութեամբ դարձուցանել զնա յաթոռն, եւ թագաւորել նորա մինչեւ ցմահ. եւ երեւելոյն Աղեքսանդրայ դատեր նորա յաջորդել նմա եղբարբն հանդերձ ժառանգաւ.

3939. 65 ԶՊտղոմեայ, եթէ որպէս թագաւորեաց յԵգիպտոս, յառաջագոյն պատմեցաք[1]. Զի Աղեքսանդր նախորդ նորա հալածեալ 'ի ժողովրդենէ՝ փախեաւ 'ի Տիւրոս, և անդ յետ ոչ բազում ժամանակի մեռաւ. Եւ զի ոչ գոյր նորա որդի, և ոչ այլ ոք հարազատ ժառանգ, եթող նա զԹագաւորութիւն իւր 'ի հռոմայեցիս. Այլ ոչ հաճոյ թուեցաւ ծերակուտին՝ ունել յայնժամ զաշխարհն թողեալ նմա կտակաւ, սակս պատճառացն՝ զոր ասացաք. Բայց ոչ 'ի սպառ հրաժարեալ յիրաւանցն, խորհուրդ կալաւ ժառանգել զմասն ինչ հրիտակին, և արձակեաց պատգամաւորս 'ի Տիւրոս՝ խնդրել զգանձս, զոր Աղեքսանդր եթող անդ 'ի մեռանել իւրում.

---

[1] Հատ. Դ. 779.

Արդ իրաւունք հռոմայեցւոց ոչ եղծանէին, և Թագաւորութիւն Պտղոմեայ խարխուլ էր՝ ցորչափ նոցա իրաւունք հաստատուն կային, եթէ ոչ հնարիւք իմն հրաժարեցուցանէր զնոսա. Եւ քանզի Թագաւորք եգիպտացւոց ամենեքին բարեկամք և նիզակակիցք լինէին հռոմայեցւոց, նովին պատճառանօք նիզակակցութեան մարթէր Պտղոմեայ առնուլ 'ի նոցանէ հաստատութիւն Թագաւորութեան. այլ որչափ կարևոր էր նմա նիզակակցութիւն, նոյնչափ և դժուարաստանալի. Զի յիշատակ նորոգ կտակին Աղեքսանդրի դեռ ևս անմոռաց էր. և որպէս զի աններելի են Թագաւորաց անպատեհքն նոցին պայմանի, քան փաստակարագոյնքն՝ որ յաճախ անտես լինին, կոչմամբ անուանն Փողար՝ զոր յիրէն կալաւ՝ յոյժ նախատելի էր առաջի եգիպտացւոց և հռոմայեցւոց. Բայց թէպէտ և նա ոչ ինչ վհատեցաւ, և ոչ կասեցաւ 'ի խորհրդոյն, այլ ամենայն հնարք նորա 'ի նանիր եղեն. և թերևս 'ի սպառ նանրանային, եթէ ոչ Յուլիոս Կեսար բդեաշխ կայր յայնժամ 'ի Հռոմ. Քանզի սա փառամոլութեան զամենայն ինչ օրէն համարէր 'ի կատարումն ցանկութեան, և անբաւ պարտուց էր պարտապան. և իբրև գիտաց զխորհուրդ Թագաւորին, զի գանձիւք կամէր ստանալ՝ զոր ոչն կարէր իրաւամբք, վաճառեաց նմա զնիզակակցութիւն ժողովրդեանն Հռոմայ ծանրագնի որչափ մարթէրն. Եւ կալաւ զգինն՝ քանքարս իբրև վեց հազար, բաժանել ընդ Պոմպէի. զի կարօտ էր օգնականութեան նորա առ 'ի հաւանեցուցանել զամբոխն. Այն սակի գնեաց Թագաւորն զԹիկունս և զնիզակակցութիւն հռոմայեցւոց. Եւ թէպէտ կրկնապատիկն և աւելի ևս ամի ամի եկամուտք էին նմա յաշխարհէն, այլ վասն առժամայն հատուցանելոյ զարծաթն՝ յաւել հարկս ծանունս 'ի վերայ ժողովրդեան. Նոքա կանխաւ զչարեալ, զի զԿիպրոս՝ որ 'ի վաղ ժամանակաց էր վիճակ Եգիպտոսի՝ ոչ պահանջեաց 'ի հռոմայեցւոց, և ոչ պատերազմաւ վրէժ խնդրեաց 'ի

Սուէտ. Դ.
Յուլիոս Կես.
ծդ:
Դիոն. Կաս.
լԹ. 97.
Ստրաբ. ժէ.
796.

նոցանէ, առաւել ևս յայնժամ 'ի խիստ հարկացն դառնացեալ՝ յարեան 'ի վերայ նորա զայրագին, մինչև փախստեամբ մազապուր լինել նմա ։ Եւ այնպէս գաղտագնաց եղև, զի կարծիք եղեն թէ կորեաւ, կամ թէ կամաւ պատճառէր զայն ժողովրդն. և Թագաւորեցուցին զԲերինիկէ դուստր նորա զանդրանիկն յերից, զի երկոքին ուստերքն դեռ ևս մանկունք էին ։

Պլուտարք. 'ի Կատ. Ուտ. 776.

Իսկ Պտղոմէոս երթայր 'ի Հռոմ, և հասեալ 'ի Հռոդոս՝ լուաւ զի կանխագոյն հասեալ էր անդր Կատոն, այն՝ որ յետ մահուն Ուտիկեցի անուանեալ կոչի 'ի վէպս ։ Եւ զի ցանկայր խօսել ընդ նմա վասն իրաց իւրոց՝ ազդ արար նմա վաղվաղակի զգալուստ իւր. կարծէր զի ոչ դանդաղեսցի գալ առ ինքն ։ Այլ տես ինձ զմեծախոհութի՟, կամ մանաւանդ զխրոխտութի՟ն Հռոմայեցւոյն, որ ետ տանել նմա պատասխանի, զի եթէ խօսել կամիցի՝ ինքնին եկեսցէ ։ Եւ եկն առ նա Պտղոմէոս, և 'ի մտանել նորա 'ի ներքս՝ և ոչ յոտն եկաց Կատոն, այլ իբրև զմի ոք 'ի ժողովրդենէ ողջունեալ զնա՝ բազմեցոյց ։ Իսկ Թագաւորն թէպէտ և ընդ արհամարհանսն դժուարէր, բայց զարմանայր ընդ միտս՝ թէ որպէս պերճութի՟ն այն և ամբարտաւանութի՟ ընդ անպաճոյճ պարզութե՟ն և համեստութե՟ զգեստուցն և ամ՟ սպասուց կցորդէր ։ Եւ ևս առաւել՝ զի անգոսնէր զնա Կատոն, վասն թողլոյ նորա զգեղեցիկ և զցանկալի երկիր թագաւորութե՟ իւրոյ, և երթալ մատնել զանձն մնափառութե՟ և անյագ զօշաքաղութե՟ աւագանւոյն Հռոմայ, և բիւր նախատինս յանձն առնուլ ։ Եւ ասէր՝ զի եթէ զԵգիպտոս լրիւ իւրով վաճառեսցես, սակայն ամ՟ գանձիւքն ագահութե՟ նոցա ոչ լցցի ։ Եւ խրատ տայր նմա դառնալ յԵգիպտոս, և իրաւախոհ լինել ընդ ժողովրդեանն. և յանձն առնոյր երթալ ընդ նմա, եթէ կամիցի, և լինել միջնորդ և բարեխօս ։ Զայս ամ՟ իբրև լուաւ Թագաւորն, զարթեաւ որպէս 'ի քնոյ. և զմտաւ ածեալ զիմաստուն բանս նորա՝ ստրջանայր ընդ մեկնել իւր յաշխարհէն, և խորհէր դառնալ յետս ։ Բայց բարեկամքն, որ ընդ նմա էին, խոտորեցուցին զնա 'ի խրատուցն Կատոնի, կաշառեալք 'ի Պոմպէէ՝ ածել զնա 'ի Հռոմ. և թէ վասն ինչ պատճառանաց, յայտ է ։ Բայց զիղջ եղև յոյժ Պտղոմեայ 'ի հասանելն 'ի Հռոմ, և 'ի դրանէ 'ի դուռն որպէս դռեհիկ ոք շրջել յաղերս ։

Դիոն. լթ. գդ. Պլուտ. ճժ. ժ.

Բայց Կեսար՝ յոր Պտղոմէոս յուսացեալն էր՝ ոչ էր յայնժամ 'ի Հռոմ, այլ 'ի Գաղղիա տայր պատերազմ ։

Եւ ընկալաւ զնա առ իւր Պոմպէոս, և հոգայր զա՟մ պէտս նորա։ Ոչ 'ի վերայ արծաթոյն՝ զոր ետ Պտղոմէոս ցԿեսար՝ բաժանել ընդ նմա, յաւել հաստատել զնա 'ի բարեկամութ՟ին օգնականութ՟եքն 'ի պատերազմին Միհրդատայ, և 'ի հրեական մարտին երիվարս ութ հազար յիւրոց գանձուցն պատրաստեալ։ Արդ բողոք կալեալ Պտղոմեայ յատեան ծերակուտին զժողովրդենէ վասն ապստամբութ՟են, խնդրէր հնազանդեցուցանել զնոսա ընդ իւրև ըստ ուխտի նիզակակցութ՟են։ Եւ կուսակիցք Պոմպէի պատսպարան եղեն խնդրուածոյն. և պատուէր տուաւ Լենտուլեայ բդեշխի, որում Կիլիկիա՝ բաժանեալ յԵգիպտոսէ ծովեզերբն ևեթ Ասորւոց՝ հասեալ էր վիճակաւ, դարձուցանել զնա յաթոռ իւր։

ԱՄԱՌՆ. Ք.
ԿԻԿ. ընտ. ա.
ա-է։
'Ի ՊԻՍՈՆ. ԽԶ.
'Ի ԿԻՆ. ԻԳ.

Մինչ չև լցեալ էին աւուրք իշխանութ՟ե Լենտուլեայ, 3947 · 57 այդ եղև յԵգիպտոս՝ զի Պտղոմէոս կենդանի կայր 'ի Հռոմ, և առաքեցին եգիպտացիք աղերսաւորս ըստ օրինի 'ի Հռոմ՝ պատասխանի առնել ծերակուտին վասն ապստամբութ՟ե իւրեանց։ Եւ էին որք առաքեցանն՝ աւելի քան զարս հարիւր. և առաջնորդ նոցա Դիոն իմաստասէր անուանի, որում էին 'ի Հռոմ բարեկամք յաւազացն։ Իբրև իրազեկ եղև Պտղոմէոս, հնարեալ գաւով զբազումս 'ի հրեշտակացն ետ կորուսանել. էր զոր սրով, և էր զոր դեղով. և զորս ոչ կաշառել և ոչ սպանանելն կարաց, զնոսա այնպէս զարհուրեցուցեալ, զի և ոչ իշխեցին պատասխանի առնել յատենի, և ոչ զսպանութ՟եցն բողոք ունել։ Բայց անգթութ՟ե գործն ծանուցաւ ամենեցուն, և 'ի վերայ արհամարհութ՟են՝ ատելի ևս եղև. և առատաբաշխ պարգևք նորա 'ի կաշառել զչքաւորագոյնս և զզօշաքաղս 'ի ծերակուտէն՝ համարձակ յայտնեցան, մինչև ընդ ա՟մ քաղաքն զայնմանէ ճառս արկեալ խօսել ամենեցուն։ Բայց լաւք 'ի ծերակուտէն զչարեցան ընդ յայտնի անօրէնութիւնն և ընդ ժպիրհ յանդգնութ՟ին. և մի 'ի նոցանէ, Փաւոնիոս իմաստասէր ստոյիկեան, յառաջ եկաց ոսոխ Պտղոմեայ. և ըստ բողոքոյ նորա հրաման եղև կոչել զԴիոն, զի ճշմարտագոյնս փաստասցէն 'ի նմանէ զա՟մ։ Բայց կուսակիցք Թագաւորին Պոմպէոս և Լենտուլոս, և կաշառեալքն 'ի նմանէ և փոխատուք 'ի կաշառել զայլս, այնպէս համարձակ օգնական լինէին նմա, զի ընաւ և յանդիման լինել ատենին ոչ իշխեաց Դիոն։ Եւ ապա Պտղոմէոս և զնա ինքն ետ սպանանել. և թէպէտ սպանողն ածաւ 'ի դատաստան, բայց Թագաւորն անպարտ արձակեցաւ՝ որպէս

ԱՄԱՀ. ՆՔ ոչ տարապարտ սպանեալ զայրն. Իսկ ապա զի ոչ ևս ինչ գոյր նմա գործել անձամբ 'ի Հռոմ, կամ երկուցեալ՝ թէ գուցէ 'ի յամելն անդ նախատինս կրեսցէ, զի ատելի իսկ էր ամենեցուն, յետ ոչ բազում աւուրց խոյս ետ յԵփեսոս, և ամրացեալ 'ի մեհեան աստուածուհւոյն՝ մնայր ելից իրացն. Զի 'ի Հռոմ աղմուկ մեծ յարեաւ վասն դատաստանի նորա. և Կատոն մի 'ի հազարապետաց ժողովրդեան, պատանի բուռն և ճարտարախօս, բազում անգամ ոսոխ կացեալ ընդդէմ Պտղոմէի և Լենտուլեայ խօսեցաւ, և հաճոյ եղև յոյժ ժողովըրդեան, և ամենեքին գովէին զբանս նորա.

3948. 56 Նա և այլ իմն հնարս 'ի միտ արկեալ, մնայր յաջորդելոյ նորոց բդեշխից. և իբրև լցաւ ժամանակ իշխանութեան Լենտուլեայ, եգոյց ժողովրդեան պատգամ 'ի Սիբիղլայէ՝ զի ասէր. 'Ի կարդալ առ ձեզ եգիպտացւոց արքային, լերուք նմա բարեկամք՝ այլ մի՛ զօրօք ձեռնտու, զի մի՛ հասցէ ձեզ վիշտ բազում և վտանգ. Օրէնք էին զպատգամս ցուցանել նախ ծերակուտին, և հրամանաւ նորա հրատարակել. բայց Կատոն երկուցեալ՝ թէ գուցէ կուսակիցք թագաւորին խափանեսցեն զհակառակ պատգամն, կացոյց յանդիման ժողովրդեան զքրմուհիս աւանդապահս մեհենական մատենիցն. և իշխանութեամբ հազարապետութեան՝ անհրաման 'ի ծերակուտէն՝ պատուիրեաց նոցա մեկնել 'ի լուր ամենեցուն զպատգամն գտեալ 'ի գիրսն.

'Ի բանից անտի գոգցես շանթահարեալ եղեն Պտղոմէոս և Լենտուլոս. զի պատգամ Սիբիղլային բացայայտ էր, և ըստ այնմ յանկուծ թշնամեաց՝ ազգողական ռամկին. Լենտուլեայ, քանզի լցեալ էին աւուրք իշխանութեան, կացեալ փոխանակ բդեշխի՝ մեկնեցաւ գնաց 'ի տեղի իւր, զի մի՛ տեսցէ զնախատինս եղծման հրովարտակին՝ զոր ինքն ետ առնել 'ի դարձուցման Պտղոմեայ յաթոռն. Իսկ ոչ վայրապար կասկածէր. զի յետ ոչ բազում աւուրց՝ Մարկեղլինոս մի 'ի նորոց բդեշխիցն, ոխերիմ թշնամի Պոմպէի, եհան յատեան ծերակուտին զպատգամն. և հաստատեցաւ 'ի խորհրդեանն՝ զգոյշ լինել հրամանին, և մի՛ մատնել զաշխարհն 'ի վտանգ՝ բռնի թագաւորեցուցեալ զարքայն եգիպտացւոց. Այլ ոչ այնպէս պարզամիտ ոք էր 'ի ծերակուտին կամ անմիտ՝ 'ի հաւատալ պատգամին, որ ըստ պատշաճի իրաց ժամանակին ստայօդեալ էր, և խորամանկ քաղաքավարութեան գիւտք. Բայց զի 'ի ժողով դիւրահաւան և նանրահաւատ ամենևին հրատարակեալ հաստատեցաւ, ոչ եւս մարթ էր ծերակուտին այլազգ խորհել։

Յարկածից աստի հարկ եղև Պտղոմեայ փոխել զմեքենայսն։ Խորհեցաւ զի Լենտուլեայ բազում էին թըշնամիք 'ի Հռոմ, և թողեալ զհրովարտակն՝ զոր նայն ետ առնել 'ի հաստատուն իւր, խնդրէր 'ի ձեռն Ամմոնեայ՝ զոր Լենտուլեայ փոխանակ իւր թողեալ էր 'ի Հռոմ՝ յանձն առնել զկատարումն գործոյն 'ի Պոմպէոս. զի որովհետև չէր մարթ բռնի կատարել ընդդէմ Սիբիղայ պատգամին, խորհէր իմաստութեամբ զանուն Պոմպէի ընդ զօրութեան փոխանակել։ Իսկ Պոմպէոս յայնժամ 'ի բուն ծայր փառացն էր հասեալ յաղթութեամբն՝ որով կործանեաց զՄիհրդատ զմեծն և զհզօր արքայն՝ որպիսի ոչ եկաց յԱսիա յետ Աղեքսանդրի։

Եհաս խորհուրդն յատեան ծերակուտին. ատեանն պառակտեցաւ, և սաստկացան վէճք, և 'ի հակառակութիւնս կարծեաց բազում ժողովք լինէին ընդունայն։ Բայց Կիկերոն կուսակից եկաց միշտ Լենտուլեայ՝ մտերիմ բարեկամին, որ 'ի կալ իւրում բդեաշխ՝ յոյժ աշխատ եղև 'ի դարձուցանել զնա յաքսորանացն։ Այլ զի՞նչ սպաս կարէր մատուցանել նմա յանհնարին վարանսն. և յի՞նչ ձեռնհաս էր Լենտուլոս առանց զօրու ընդդէմ հզօր պետութեան, զի Սիբիղային պատգամն խափանէր զզօրութիւն։ Ռամկին և անհանճարոյ էր այս խորհուրդ, և որ ոչն գիտէն ճարտարամտել՝ զի պատգամն խափանէր չտալ ևեթ զօրս 'ի թիկունս արքային եգիպտացւոց, այլ մարթէր Լենտուլեայ թողուլ զնա ուրեք մերձ 'ի սահմանս Եգիպտոսի որպէս 'ի պահ, և հզօր բանակաւ երթալ պաշարել զԱղեքսանդրիա, և առեալ զքաղաքն պատերազմաւ՝ թողուլ 'ի վերայ զօր բազում պահապան նմա, և ապա արձակել զՊտղոմէոս՝ որ երթեալ մտանէր անդր անխափան առանց զինուց և զօրաց։ Զայս խրատ ետ Լենտուլեայ Կիկերոն. և զի մի ոք յերկուացի, զնորին իսկ զբանսն ածից 'ի թղթոյն՝ զոր գրեաց յայնժամ առ Լենտուլոս. ասէ. Իշխանդ Կիլիկեայ և Կիպրոսի, անկ է քեզ խորհել յոր ինչ ձեռնհաս իցես և յաջողեսցիս։ Եթէ վստահ իցես նուաճել զԱղեքսանդրիա և զայլ սահմանս Եգիպտոսի, ապաքէն փառք են քեզ և աշխարհիս՝ խաղալ քեզ անդր նաւատորմաւդ և զօրօք քո, թողեալ զարքայն եգիպտացւոց 'ի Պտղոմայիս կամ ուրեք 'ի մօտակայ տեղեաց. զի զապստամբութիւն ցածուսցես, և պահ հզօր յայն կողմանս

ԿԻԻ. ՇԿԴ. Ա. Ե.

ԱՄԱՀ.Ն.Բ. կացուցես, և ապա մնացէ ա. իւր Թագաւորն անվտանգ. Այսպէս[1] և զհրաման ծերակուտին կատարեսցես, զոր 'ի սկզբանն ետ 'ի դարձուցանել զնա յաթոռն, և մնացէ անդր Թագաւորն առանց օգնականութե՟ զօրաց՝ որպէս երկիւղածացն Թուի պատգամ Սիբիղային. Այս խորագէտ հնարք, դժպատեհ ուղղութե՟ն և արդարութե՟ յոր պարծէրն Կիկերոն՝ ոչ էր կարծելի զգօն ատենակալէն 'ի կարևոր դատաստանին. այլ նա զխորամանկեալ պատգամ Սիբիղային՝ որ ինչ էրն՝ այնպէս համարեցաւ.

Բայց Լենտուլեայ հայեցեալ յանհնարին դժուարութի՟ գործոյն՝ ոչ իշխեաց յայն, և արար ըստ խրատուն Կիկերոնի՝ զոր 'ի վերջ կոյս Թղթոյն յաւելեալ ասէ. Ըստ ելից իրացն դատեսցին զքեն ամենեքեան. տես զի իցե՟ս աներկեան զյաջողուէ՟, ապա թէ ոչ՝ լաւ իցէ քեզ չառնել ձեռն 'ի գործ[2].

3949. 55 Ապպ. 'Ա-սոր. 120: 'ի Պարթ. 134: Գաբինիոս, որ փոխանակ բդեշխի կուսակալ կայր յԱսորիս, արիագոյն և յանդգնագոյն գտաւ. Զի թէպէտ և խիստ օրէնք էին փոխանակի բդեշխից մի՛ ելանել ըստ մարզս կուսակալութե՟ իւրեանց, և մի՛ առանց պատուիրանի ծերակուտին տալ ընդ ումեք պատերազմ, և ոչ ընդ ազգս՝ որ շուրջ բնակեալ էին, չու արար նա գնալ յօգնութի՟ Միհրդատայ արքային Պարթևաց, զի հալածէր զնա եղբայր նորա յաշխարհէն Մարաց՝ որ նմա հասեալ էր բաժին. Իբրև անց նա ընդ Եփրատ բանակաւն, և ահա եհաս առ նա Պտղոմէոս նամականաւ 'ի Պոմպէոսէ, որ Գաբինեայ բարեկամ էր և խնամակալ, և դեռևս կարգեալ բդեաշխ առաջիկայ ամին. և աղաչէր 'ի թղթին զԳաբինիոս՝ օգնական լինել խնդրուածոյ Թագաւորին 'ի դարձուցանել զնա յաթոռ իւր. Բազմավտանգ էր գործն, այլ փառք Պոմպէի, ևս առաւել՝ ցանկութի՟ բազում շահից, գրգռեցին զնա. և Անտոնիոս՝ որ պարապ խնդրէր քաջութե՟, և հաճել զՊտղոմէոս՝ որ աղաչանօքն ողոքէր զփառասիրութի՟ նորա, աղերսական Թախանձանօք հաստատեաց զնա 'ի նոյն խորհուրդ. Սա ինքն է Մարկոս Անտոնիոս, որ ապա ընդ կրտսերոյն Կեսարու և ընդ Լեպիդեայ երկրորդի եկաց

Պլուտ. 'Ան-տոն. 916:

---

[1] Այսպէս կացուցես զնա անդրէն՝ ըստ առաջին հրամանի ծերակուտին. և առանց բազմութե՟ զօրաց դարձցի՝ որպէս երկիւղածացն Թուի պատգամ լեալ 'ի Սիբիղայէն.

[2] Ըստ ելից իրացն լիցի զքէն դատաստան, որպէս տեսանեմք ... Մեզ այսպէս Թուի. եթէ վստահ իցես նուաճել զաշխարհն, մի՛ յապաղեր. իսկ եթէ երկմտես, դադարեա՛ 'ի ջանիցդ.

յետապետական իշխանութ՟ ։ Եւ ածէր զնա Գաբինիոս ընդ իւր յԱսորիս, զօրավար այրուձիոյն կացուցեալ զնա ։ Քանի վտանգաւոր էր գործն, ըստ նմին սակի յաճախէր Գաբինիոս զգինս օգնականութե՟ն ։ Իսկ Պտղոմէոս ոչ ագահեալ յինչս առ 'ի հաւանեցուցանել զնա, յանձն էառ տալ նմա և զօրաց նորա բիւր քանքար, զառաւելագոյն մասն առժամայն, և զմնացեալն 'ի ժառանգել իւրում զաթոռն ։ Եւ Գաբինիոս յօժարեալ հաւանեցաւ ։

Ընդ այն ամ՟ ժամանակս թագաւորէր յԵգիպտոս Բերենիկէ ։ 'Ի գահակալել նորա՝ առաքեցին եգիպտացիք հրեշտակս յԱսորիս առ Անտիոքոս Ասիացի, տալ նմա զԲերենիկէ և զարքայութիւն, զի էր նա ըստ մայրենի ազգին 'ի Սելինայ մերձաւորագոյն ուստր ժառանգ թագաւորութե՟ն. այլ մինչ չև պատգամաւորացն հասեալ յԱսորիս՝ մեռաւ Անտիոքոս, և դարձան յետս ։ Եւ ապա լուեալ զի Սելևկոս Կիբիոսակտոս եղբայր նորա տակաւին կենդանի էր՝ առաքեցին առ նա եգիպտացիք, և յանձն առ հաւանեցաւ ընդ հրաւէրն ։ Բայց էր նա այր վատթար, և 'ի մթերս ևեթ գանձուց խորհէր ։ Եւ նախ քան զամ՟ զդիակն մեծին Աղեքսանդրի ետ փոխադրել 'ի տապան ապակի, և եբարձ զարկղն ոսկեձոյլ՝ յորում կայրն 'ի սկզբանէ ։ Վասն այսր և այլ բազում այսպիսի գործոց՝ ատելի եղև Բերենիկեայ և ամ՟ ժողովրդեան. և յետ սակաւ միոյ ետ Բերենիկէ խեղդամահ առնել զնա ։ Եւ եկաց նա վերջին թագաւոր յազգէ Սելևկեանց ։ Ապա Բերենիկէ ամուսնացաւ ընդ Արքեղայոսի քրմապետին Կոմանայ պոնտացւոց, որ ասէր զանձնէ լինել որդի մեծին Միհրդատայ, այլ էր աւագ զօրավարին նորա որդի ։

Ստրաբ. ժբ ։ 536. և ժէ. 794 ։
Դիոն. լթ. 115 ։
Կիկ. 'ի Պիս. խթ.

Գաբինիոս անցեալ անդրէն ընդ Եփրատ, դիմեաց ընդ Պաղեստին յԵգիպտոս ։ Առաւել քան զամ՟ գործս պատերազմին՝ երկիւղալի էր նմա ճանապարհն մինչև ցՊեղուս. զի հարկ էր անցանել ընդ թանձրախոր աւազուտս ընդ երկիր ծարաւուտ և բնաւ անջրդի առ Սերբոնիդեաւ մօրիւն ։ Բայց Անտոնիոս յառաջ խաղացեալ այրուձիովն, և ոչ միայն զկիրճս, այլ և զՊեղուս կալեալ զդուռն Եգիպտոսի յայնմ կողմանէ, և զպահակապանս նորա գերեալ, արար ճանապարհ անվտանգ զօրացն՝ որ զհետ գային, և անշուշտ առհաւատչեայ յաղթութե՟ն ետ Գաբինեայ ։ Բայց փառասիրութ՟ Անտոնիոսի եղև 'ի փրկութ՟ թշնամեաց. զի Պտղոմէոս 'ի մտա-

Պլուտ. յԱնտ. 916 ։

նեն 'ի Պեղուս՝ կամէր ոխակալութ̃ և վրէժխնդրութ̃ 'ի սուր սուսերի կոտորել զա̃մ եգիպտացիս․ և Անտոնիոս ընդդէմ եկաց, և արգել զնա 'ի խորհրդոյն, զի անգթութե̃ գործն նմա իսկ 'ի նախատինս էր։ Եւ յա̃մ ճակատամարտս և 'ի կռիւս ոչ միայն արի ցուցաւ Անտոնիոս, այլ և զա̃մ ինչ որպէս զքաջ զօրավար գործեաց։

Իբրև ազդ եղև Գաբինեայ յաղթութ̃ին Անտոնիոսի, խաղաց ներքսագոյն յԵգիպտոս։ Եւ էին աւուրք ձմերայնոյ, և ջուրք Նեղոսի նուաղեալ յոյժ, և դիպողագոյն ժամանակ յաղթուե̃։ Արքեղայոս այր քաջ և ճարտար, զա̃մ գուն գործեաց 'ի պահ աշխարհին․ և հզօրապէս զդէմ ունէր թշնամեաց։ Այլ իբրև ել նա 'ի քաղաքէն գնալ ընդդէմ հռոմայեցւոց, և եհաս 'ի տեղի բանակելոյ՝ ուր պարտ էր պեղել զերկիրն և պատնէշ ածել, եգիպտացիք անձնդիւրք և պարապորդք ուսեալ՝ բողոք բարձեալ խնդրէին վարձկանս 'ի գանձուց աշխարհին աշխատեցուցանել 'ի գործն։ Արդ այսպիսի զօրք զի՞նչ 'ի պատերազմի կարիցեն գործել, բայց նոյնհետայն 'ի փախուստ դառնալ, որպէս և դարձանն իսկ, և Արքեղայոս անկաւ 'ի ճակատամարտին՝ արիաբար պատերազմեալ։ Բայց Անտոնիոս գտեալ զդի նորա 'ի ճակատուն տեղւոջ՝ պատեաց զնա 'ի ծիրանիս, և շքով մեծաւ յուղարկաւորեաց զնա․ զի բարեկամ նորա էր և ասպընջական։ Եւ եթող համբաւ մեծ յԱղեքսանդրիա, և հռոմայեցիք ամենեքեան՝ որ ընդ նմա էին 'ի պատերազմին՝ ծանեան զմեծ քաջուի̃ նորա և զմեծախոհուի̃։

Եւ վաղվաղակի նուաճեալ հնազանդեցաւ Եգիպտոս․ և եմուտ ժառանգեաց Պտղոմէոս զաշխարհ իւր։ Բայց Գաբինիոս եթող առ նմա գունդս զօրաց հռոմայեցւոց 'ի պահ զգուշուե̃՝ մինչև հաստատեսցի 'ի թագաւորութ̃ի իւր։ Եւ զօրքն յԱղեքսանդրիա ուսեալ 'ի բարս և 'ի սովորութ̃ի երկրին, ետուն զանձինս 'ի զեղխուի̃ և 'ի մեղկուի̃ որ անդ յաճախագոյն էին քան յա̃մ քաղաքս։ Եւ ետ Պտղոմէոս սպանանել զԲերենիկէ դուստր իւր, փոխանակ զի թագաւորեաց 'ի ժամանակի աքսորանաց իւրոց․ ապա և զա̃մ ճոխս քաղաքին՝ որ ընդ հակառակորդս իւր միաբանեալ էին՝ սպան, և զինչս նոցա գրաւեաց 'ի հասուցումն գանձուցն՝ զոր խոստացաւ Գաբինեայ վասն օգնականութե̃ն 'ի դարձ̃ իւր։ Եւ Դ․ե․ք․ ա․ դկ․
ընդ այն ա̃մ չարիս լուռ եղեալ եգիպտացիք, ապա 'ի սպանանել վայրապար միոյ 'ի զինուորաց հռոմայեցւոց զկատու մի, ոչ 'ի Գաբինեայ զանգիտեալ և ոչ 'ի Պըտ-

ԱՄ ԱՇ. Ն. Ք.

ղոմեայ՝ գեղ գեղ պատառեցին զնա անդէն 'ի վրէժխնդրութիւն նախատանաց դիցն, զի և զկատու ընդ դիսն պաշտէին ։

Կիկ. Հռաբ. Պոստ. Պտղոմեայ ոչ ինչ այլ գործք պատմին. բայց իբրև հաստատեցաւ թագաւորութիւն նորա, Հռաբիրիոս Պոստումիոս ասպետ հռոմայեցի եկն խնդրել 'ի նմանէ զփոխն. զի Պտղոմէոս 'ի նմանէ և 'ի ձեռն նորա էառ զմեծ մասն արծաթոյն 'ի Հռոմ ։ Եւ տայ պատասխանի թագաւորն. Ոչ գոյ ինձ 'ի հատուցանել, բայց եթէ քո յանձն առեալ զհոգ եկամտից աշխարհիս՝ տակաւ հատուցես ։ Եւ նա յանձն էառ, զի մի՛ զամենայն արծաթն կորուսցէ ։ Ապա թագաւորն բարուրս 'ի վերայ նորա եդեալ՝ արկ զնա 'ի բանտ, ոչ խնայեալ 'ի մտերիմ և 'ի վաղեմի բարեկամին Կեսարու, և ոչ զայն զմտաւ ածեալ՝ զի Պոմպէոս յեղանակաւ իմն երաշխաւոր եղև պարտեացն, քանզի յանդիման նորա և նորին միջնորդութեամբն ընկալաւ զարծաթն և զգրաւսն ետ 'ի միում ուրեք յամարաստան ապարանից մերձ յԱլբա ։

3951. 55 Բայց Հռաբիրեայ յաջողութիւն մեծ լեալ ազատել 'ի բանտէ, թշուառագոյն քան զոր եկն՝ դառնայր յԵգիպտոսէ ։ Եւ ոչ այս միայն, այլ և ընդ ժամանել իւր 'ի Հռոմ՝ ածաւ 'ի դատաստան որպէս ձեռնտու լեալ Պտղոմեայ արծաթով 'ի կաշառել զծերակոյտն, և անարգեալ զպատիւ ասպետութեան պաշտամամբն՝ զոր կալաւ յԵգիպտոս, և որպէս բաժանորդ լեալ կաշառոյն Գաբինեայ համախոհութեամբ ընդ նմա ։ Զատագովութիւն նորա՝ արարեալ 'ի Կիկերոնէ՝ պահի անկորուստ, արձան յաւէժական ապերախտութեան և նենգութեան անարժան թագաւորին ։

3953. 51 Եւ Պտղոմէոս Աւլետ յետ դառնալոյ յաթոռ իւր զամս իբր չորս կալեալ խաղաղութեամբ զԵգիպտոս, մեռաւ. և եթող ուստերս երկու, և երկուս դստերս ։ Եւ ետ կտակաւ զթագաւորութիւն երիցու որդւոյ իւրում և անդրանիկ դստեր, զի ըստ սովորութեան ազգատոհմին ամուսնացեալ ընդ միմեանս՝ 'ի միասին թագաւորեսցեն ։ Եւ զի չև ևս յարբունս հասեալ էին, զի դուստրն՝ որ երիցագոյն էր հասակաւ՝ էին ամք եօթնևտասն, յանձն առնէր զնոսա 'ի խնամս ծերակուտին Հռոմայ ։ Սա է անուանին Կղէոպատրա, զորոյ առաջի կայ մեզ կարգել զպատմութիւն ։ Եւ կացուցին հռոմայեցիք զՊոմպէոս ոստիկան արքայի մանկանն, որ յետ ոչ բազում ամաց ետ զնա սպանանել նենգաւ ։ Եւտրոպ. Զ.

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Պոթէին և Աքիլղաս իշխանք արքայի հալածեն զԿղէոպատրա, և զօրաժողով նորա վասն թագաւորելոյ անդրէն. պարտաւորի Պոմպէոս ՚ի Փարսաղիա, և խուսեալ յԵգիպտոս, և դաւաճանական մահ նորա. Կեսարու, որ հալածէր զնա, հասեալ յԱղեքսանդրիա և լսեալ զմահ նորա՝ սուգ առնուլ, և վասն հաշտեցուցանելոյ զքոյր ընդ եղբօր՝ կոչեցեալ զԿղէոպատրա, և ապա տարփալ նմա. աղմուկք խռովեցին յԱղեքսանդրիա, և պատերազմունք Եգիպտացւոց ընդ Կեսարու, և գրեթէ յամենայն ճակատս զօրանալ նորա. և վասն արքային Եգիպտացւոց նաւամարտի գետահեղձ լինելոյ ՚ի փախստի. և հնազանդել Եգիպտացւոց Կեսարու, և թագաւորեցուցանել նորա զԿղէոպատրա ընդ կրտսեր եղբօրն ՚ի միասին, և դառնալ ՚ի Հռոմ.

3956. 48
Պլուտարք. ՚ի Պոմպ. 656։ ՚ի Կեսար. 730։ Ապպ. քաղաք. մարտ. Բ. 480։ Կես. քաղաք. մարտ.։ Դիոն. ԽԲ. 200.

Զսկզբանէ Թագաւորութեան Կղէոպատրայ և եղբօր նորա դոյզն ինչ պատմի։ Մինչ դեռ Թագաւորն մանուկ էր, Պոթին ներքինի՝ դայեակ նորա, և Աքիլղաս զօրավար նորա ոստիկանութեամբ յանձանձէին զնա։ Որք թերևս վասն իշխելոյ ամենայն իրաց աշխարհին, բարձին ՚ի Կղէոպատրայ՝ որպէս ՚ի հրամանէ Թագաւորին՝ զիշխանութիւն Եգիպտոսի, զոր կտակաւ եթող նմա և եղբօր նորա Պտղոմէոս։ Կղէոպատրա զրկեալ՝ չոգաւ յԱսորիս և ՚ի Պաղեստին, զօր գումարել, խնդրել վրէժ պատերազմաւ։ Եւ էր յայնժամ Պտղոմէոս ամաց երեքտասանից։

՚Ի սմին ժամանակի, մինչ պատերազմէր Կղէոպատրա ընդ եղբօր իւրում, Պոմպէոս ՚ի պարտութեան մատնեալ ՚ի Փարսաղիա՝ դիմեաց յԵգիպտոս, գտանել անդ ՚ի նեղութեան ամուր ապաւինի բաց և պատրաստ. զի խնամակալ լեալ Պտղոմեայ Աւղետի հօր Թագաւորին՝ դարձոյց զնա յաթոռ, և յուսացեալ ակն ունէր զդարձ փոխարինին յորդւոյ նորա ընդունել հզօր օգնականութեամբ։ Եւ ՚ի հասանել նորա անդր՝ էր Պտղոմէոս բանակեալ ՚ի ծովեզրն ընդ Պեղուս և ընդ Կասիոն լեառն, և Կղէոպատրա մերձ անդր զօրօքն։ Իբրև մօտ եղև Պոմպէոս ՚ի ծովեզրն, առաքեալ խնդրեաց հրաման ՚ի Պտղոմեայ՝ զի իջեալ ՚ի նաւէ մտցէ յաշխարհ նորա։

Խորհեցան Պոթին և Աքիլղաս իշխանք ընդ Թէոդոտեայ հռետորի՝ որ վարժապետն էր Թագաւորին, և ընդ այլս ոմանս, թէ զինչ պատասխանի տացեն։ Եւ մնայր Պոմպէոս ելից խորհրդոյն, յանձն առեալ լինել ծառը երեցունց անարժան արանցն՝ որք իշխէին Թագաւորին, քան ապաւինել 'ի Կեսար յաներ իւր, 'ի վեհագոյնն հռոմայեցւոց ։ Եւ եղեն հերձուածք . կէսք ասէին ընդունել զնա, այլք՝ պատուէր տալ զի այլուր պատսպարեսցի ։ Բայց Թէոդոտ ընդ այս և ընդ այն չհաւանեալ, զա՟մ զօրութի՟ ճարտարխօսութե՟ն 'ի գործ եարկ առ 'ի ցուցանել՝ թէ չգոյր հնար, բայց եթէ սպանանել զնա . ասէ . Զի եթէ ընկալցուք զդա, ոչ ներեսցէ մեզ Կեսար, զի թշնամւոյ նորա ձեռնտու լինիմք . ապա եթէ առանց օգնականութե՟ զդա արձակեսցուք, 'ի յաղթել թշնամեացն՝ վրէժ խնդրեսցէ 'ի մէնջ ։ Չիք ապա խորհուրդ աներկեան՝ բայց կորուսանել զդա, և լինել բարեկամ Կեսարու, և յերկիւղէ դորա ապրել ։ Եւ զառակն ևս 'ի վերայ ածէր, զի դի ոչ ևս խածանէ ։

Յաղթեաց այս քան խորհրդի որպէս արդարև քաջ և անվտանգ, և դահիճք կարգեցան Աքիլլաս և Սեպտիմիոս սպայ հռոմայեցի՝ որ կայր 'ի ծառայութ՟ի արքային եգիպտացւոց, և այլք ոմանք ։ Եւ չոքան մակուկաւ իջուցանել զՊոմպէոս, իբր թէ նաւք մեծամեծք ոչ կարէին հուպ լինել անդր 'ի ցամաք . և Պտղոմէոս առ ծովեզերբն կայր զօրօքն որպէս 'ի պատիւ ։ Սեպտիմիոս ձեռն ետ Պոմպէի նենգաւ՝ տէր իւր զնա կոչելով, և հրաւիրէր առ արքայ բարեկամ իւր և որպէս առ սան և որդի ։ Իսկ Պոմպէոս դարձեալ առ Կոռնելիա կին իւր՝ որ անդստին իսկ ողբայր զմահ նորա, յիշեաց զբան Սոփոկղի և ասէ . Որ յապարանս բռնաւորի մտանէ՝ գերի է նմա, թէպէտ և ազատ ոք իցէ ։ Եւ էջ 'ի կուրն . և իբրև մատեան 'ի ցամաք, սրախողխող արարին զնա յանդիման Թագաւորին ։ Եւ հատեալ զգլուխ նորա, արկին զիրանն 'ի ծովեզրն անթաղ . բայց մի ոմն ձերբազատ նորա, ձեռնտուութե՟ հռոմայեցւոյ ուրումն ծերունւոյ՝ որ դիպաւ անդ, արար նմա խարոյկ աղքատին, և ծածկեաց զաճիւն նորա բեկորովք նաւու, որ անդ 'ի ծովեզրն խորտակեալ քայքայեալ էր ։ Անդ էր տեսանել զանպատմելի ողբումն Կոռնելեայ ընդ ողորմ տեսիլ խողխողելոյ առնն ։ Եւ որ ընդ նմա 'ի նաւին էին և յերկուս յայլ նաւս, 'ի տեսիլ սպանման նորա ճիչ բարձեալ, մինչև հնչէր ծովեզրն 'ի ձայնէ ողբոց նոցա, և առեալ զխարիսխ՝ փախեան . և հողմն աջողակ շնչեալ՝ վարեաց զնոսա յանդունդս, և եգիպտացիք՝ որ զհետ նոցա պարզէին զառագաստս՝ դադարեցին ։

Եւ ահա եհաս Կեսար յԵգիպտոս, զի կասկածէր՝

անդր Պոմպէի անկեալ. այն ունէր գտանել զնա կենդանի, և առ ձեպ ճանապարհին առեալ էր ընդ իւր ութ հարիւր ևեթ հեծեալ, և երեք հազար երկերիւր հետևակ. իսկ զբազմութի̃ զօրացն թողեալ էր 'ի յունաստան և 'ի փոքրն Ասիա առ զօրավարս իւր, և պատուէր տըւեալ նոցա՝ 'ի դէպ ժամանակի յաղթութե̃ն հնազանդել զա̃մ գաւառսն. Իսկ ինքն յուսացեալ 'ի համբաւ իւր՝ և 'ի յաղթութի̃ն 'ի Փարսաղիա, և ա̃մ ուրեք զանձն յամրի վարկուցեալ, դոյզն գնդաւ նաւարկէր անկասկած յԱղեքսանդրիա. բայց մազապուր եղև 'ի մեծէ վտանգէ յանդգնութե̃ն.

Եւ 'ի հասանելն անդր լուաւ զհամբաւ մահուն Պոմպէի, և էր քաղաքն ա̃մ աղմկեալ. Իսկ Թէոդոտ որպէս հաճոյ ինչ առնելով նմա, ած առ նա զգլուխ Պոմպէի. այլ իբրև ետես զայն Կեսար, սոսկացեալ՝ դարձոյց զաչս իւր 'ի բաց, և արտասուեաց. Եւ ապա ա̃մ օրինաւոր կարգօք ետ թաղել զնա. և 'ի պատիւ և 'ի մեծարանս անուան նորա ընդունէր սիրով և մեծապարգև մեծարէր զա̃մ կուսակիցս նորա՝ որ էին յայնժամ յԵգիպտոս. Եւ 'ի Հռոմ գրէր առ բարեկամս իւր, թէ խնդութ̃ի մեծ ունիմ, և վայելեմ յարգասիս յաղթութ̃ե իմոյ, շնորհելով կեանս և բարերարելով հանապազ քաղաքակցաց իմոց՝ որք զէն առին 'ի վերայ իմ.

Բայց յԱղեքսանդրիա օր ըստ օրէ զայրանային աղմուկք, և յաճախէին արիւնհեղութիք. զի էր քաղաքն անտէրունչ, և կարգք և օրէնք բարձեալ էին. Եւ իբրև ետես Կեսար, զի սակաւ գնդաւն չկարէր հնազանդեցուցանել զստահակ և զխռովայոյզ ամբոխն, պատուէր առաքեաց յԱսիա առ լեգէոնս զօրացն՝ զորս եթող անդ, վաղ հասանել առ ինքն. Զի ինքն ոչ կարէր մեկնել յԵգիպտոսէ վասն տարևորական ընդդիմակ հողմոցն, որք ընդ ամենայն ժամանակս Շնիկ աստեղն երևելոյ տևէին, և յԱղեքսանդրիոյ անդր խափանէին զնաւագնացութ̃ի, կշիռ 'ի հիւսիսոյ շնչեալ. Եւ 'ի պարապոյ ժամանակին պահանջէր 'ի Պտղոմեայ զպարտսն, և քննեալ հետազօտէր զպատճառս դրգռութ̃ե նորա ընդ Կղէոպատրայ. Զի յառաջնումն նուագի բդեշխութե̃ն Կեսարու, որպէս յառաջ ասացաք, յինքն էարկ զնա Պտղոմէոս՝ խոստացեալ նմա վեց հազար քանքար, և 'ի ձեռն նորա

---

1 Իսկ Կեսար յուսացեալ 'ի համբաւ քաջութե̃ցն, ոչ ինչ երկմտեաց ջու տանել տկար ձեւամբ. և ա̃մ ուրեք յանկասկածի զանձն վարկանէր. Կէ.

դարձաւ յաթոռ իւր, և բարեկամ և նիզակակից եղև հռոմայեցւոց ։ Բայց զարծաթն ոչ բովանդակ հատոյց, գրաւ տուեալ ընդ պարտեացն ։ Արդ զայն պարտս խնդրէր Կեսար 'ի ռոճիկ զօրացն, և խստիւ պահանջէր ։ Եւ Պոթինն հազարապետ արքայի խորամանկ հնարիւք յաւելեալ 'ի խստութ̃ի նորա, կողոպտէր զմեհեանս և առնոյր զա̃մ ոսկին և արծաթ գտեալ 'ի նոսա, և արքայի և մեծամեծաց նորա յանօթս խեցեղէնս և 'ի փայտեղէնս տայր պատրաստել կերակուր, բանսարկեալ՝ իբր թէ զա̃մ սպաս ոսկի և արծաթի եբարձ Կեսար, և հաւանական քուէքն չարացուցանէր 'ի վերայ նորա զամբոխն ։ Բայց մանաւանդ ընդ իշխանական ձոխութ̃ին Կեսարու զայրանային եգիպտացիք, մինչև զէն առնուլ, թէ ընդէ՞ր իշխեաց նա լինել դատաւոր ընդ Պտղոմէոս և ընդ Կղէոպատրա, կոչեցեալ զնոսա յատեան ։ Բայց թէ իւ իշխեսցեն, ասասցուք ընդ հուպ ։

Արդ իբրև հրաման ետ նոցա արձակել զզօրս և գալ յանդիման լինել առաջի իւր 'ի դատաստան, բողոք բարձին եգիպտացիք որպէս ընդ եղեռն թշնամանաց թագաւորին՝ որ ինքնիշխանն էր և գեր 'ի վերոյ ամենեցուն, և ոչ ընդ դատաստանաւ ուրուք անկեալ ։ Իսկ նա զկտակն Պտղոմեայ 'ի մէջ ածէր, զի նա յանձն արար զորդիս իւր ծերակուտին, և ժողովրդեան Հռոմայ. և ա̃մ իշխանութ̃ի նոցա էր 'ի ձեռս բդեշխին, և նովին իշխանութեամբն լինէր իրաւարար ։ Եւ զի անկ էր նմա ոստիկանութ̃ն իրաւ առնել նոցա, և որպէս սպասաւոր ևեթ կտակին խաղաղութիւն առնել 'ի մէջ նոցա ։ Եւ սովին պատճառանօք զիջաւ ամբոխն, և ածաւ դատաստանն առաջի Կեսարու, և կացին երկուստեք դատաւորք ։

Բայց Կղէոպատրա գիտէր իւ պարտէրն Կեսար, և ողոքիչ քան զա̃մ փաստաբանս համարեցաւ զգեղ իւր յատենին ։ Յղեաց առ նա և ասէ. Գիտեմ զի դատաւորք նենգեն ինձ, տուր հրաման զի ինքնին յանդիման եղէց յատենի ։ Իսկ Պղուտարքոս նմին իսկ Կեսարու ասէ ստիպեալ զնա գալ անձամբ 'ի պատասխանատուութ̃ի ։ Եւ էառ նա ընդ իւր 'ի բարեկամացն զԱպողոդոր սիկիլիացի միայն, և մտեալ 'ի նաւակ մի՝ մատեաւ մինչև 'ի ստորոտս պարսպաց դղեկին Աղեքսանդրիոյ 'ի խոր գիշերի ։ Եւ վասն զի չէր մարթ յանծանօթս մտանել նմա 'ի քաղաքն, հնարիւք խաբէութ̃ե ծածկեցաւ 'ի պատատ հանդերձանւոյ, և Ապողոդորայ պատեալ զնա և կապեալ փոկով՝ եբարձ յուս իւր, և ած ընդ դուռն դղե-

ԱՄ ԱՇ. Ն. Ք. կին մինչև յապարանս Կեսարու. որում ոչ անհաճոյ թուեցան հնարք խաբէուե՟ն, և տեսիլ չքնաղ կերպարանին յաջողեաց զա՟մ՝ որում ցանկայրն Կղէոպատրա։

՚Ի վաղիւ անդր առաքեաց Կեսար առ Պտղոմէոս, և ստիպէր զնա՝ առնուլ անդրէն յինքն զԿղէոպատրա, և հաշտել ընդ նմա։ Ուխտաց Պտղոմէոս զակնառուի՟ դատաւորին, և իրազեկ լեալ զի յապարանս նորա էր Կղէոպատրա և ՚ի սենեակ նորա, ել արտաքս զայրագին, և ՚ի փողոցամիջի ձգեալ ՚ի գլխոյ իւրմէ զպսակն՝ պատառեաց և ընկէց զայն յերկիր, և ողբայր կականաւ զմատնութիւնն, և պատմէր մի ըստ միոջէ զա՟մ ամբոխին՝ որ խռնեալ դիզանայր։ Դղրդեցաւ անդէն քաղաքն ա՟մ. և դիմեաց խաժամուժն զհետ նորա յապարանս Կեսարու կատաղեալ մոլեգին, որպէս պատահէ յաճախ յայնպիսի դէպս։ Եւ կալան զինուորք հռոմայեցիք թիկնապահք Կեսարու զՊտղոմէոս. բայց այլք ՚ի զօրացն անիրազեկք ցրուեալ էին ընդ քաղաքն մեծ և ընդարձակ. և փոքր միւս ևս՝ և մատնէր Կեսար սրտմտուե՟ խուժանին, և դէշ դէշ պատառէին զնա. այլ նա հնարագիտութ՟ ՚ի բարձանց ապարանիցն երևեցաւ նոցա՝ կացեալ յամբի, և քաջալերեաց զնոսա, և խոստացաւ ըստ ցանկուե՟ նոցա տալ վճիռ. և յուսովն այնուիկ ցածոյց զեգիպտացիս։

Եւ ՚ի վաղիւ անդր ած յատեան ժողովրդեան զՊտղոմէոս և զԿղէոպատրա. և հրամայեալ ընթեռնուլ զկտակն Աւլետի, ապա որպէս խնամակալ և իրաւարար սահմանեաց Պտղոմեայ և Կղէոպատրայ թագաւորել ՚ի միասին յԵգիպտոս ըստ հրամանի կտակին, և կրտսերոյ եղբօր նոցա ընդ Արսինոյեայ կրտսերոյ քեռն թագաւորել ՚ի Կիպրոս, առ ողոքելոյ զժողովուրդն յաւելեալ զայս շնորհ. զի Կիպրոս էր ժառանգուի՟ հռոմայեցւոց, այլ երկեաւ նա ՚ի մոլեգնուէ՟ աղեքսանդրացւոց, և վասն ազատելոյ ՚ի վտանգէն՝ շնորհեաց զայն նոցա։

3957. 47 Հաճոյ թուեցաւ ամենեցուն վճիռն, և ուրախ եղեն. բայց Պոթին, որ գրգռեացն զԿղէոպատրա ընդ թագաւորին և ետ հալածել զնա, յիրաւի կասկածէր՝ զի ՚ի կորուստ իւր լիցի հաշտութի՟ նոցա։ Եւ առ ՚ի խափանել զվճիռ Կեսարու, դարձեալ բանսարկեալ՝ ՚ի հակառակուի՟ և ՚ի նախանձ գրգռէր զամբոխն, իբր թէ բռնի ետ Կեսար զվճիռն, և ընդ հուպ փոխեսցէ. զի խորհի նա զԿղէոպատրա միայնակ թագաւորեցուցանել։ Եւ յայսմանէ զարհուրէին եգիպտացիք, չառեալ յանձն կալ ընդ կնաւ, և տալ 'ի ձեռս կնոջ զի̃մ իշխանութի̃ն : Իսկ իբրև ետես Պոթին' զի միաբանէր ժողովուրդն ընդ իւր, կոչեաց զԱքիղաս հանդերձ զօրօքն 'ի Պեղուսեայ, հալածել զԿեսար յԱղեքսանդրիոյ : Իսկ 'ի հասանել զօրացն' դարձեալ խռովեցաւ ա̃մ քաղաքն : Աքիղաս երկոքումբ բիւրուք ընտիր զօրօքն արհամարհեալ զսակաւաձեռն զօրս Կեսարու, խորհէր հասանել հարկանել զնոսա միանգամայն . բայց Կեսարու կարգեալ և բաժանեալ զզօրս իւր 'ի կիցս փողոցաց և 'ի մուտս թաղից' որ էին ընդ ձեռամբ իւրով, դիւրաւ զդէմ կալաւ բազմութեան նոցա :

Իսկ իբրև ոչ կարէին բռնադատել զնա, փոխեալ զմեքենայսն' դիմեցին 'ի նաւահանգիստն, աւար առնուլ զնաւատորմ նորա, և արգելուլ զնա 'ի ցամաքի անօգնական 'ի ծովէ և առանց պաշարոյ : Բայց Կեսար և զայն ևս խորհուրդ նոցա արգել' հրձիգ արարեալ զտորմիղ նաւաց նոցա, և կալեալ զաշտարակն Փարոսի, և անդ զօրս կացուցեալ . որով անարգել և անվտանգ կալաւ զծով, ապա թէ ոչ' անշուշտ հասանէր նմա կորուստ : 'Ի բորբոքեալ նաւացն ոմանք 'ի ծովեզր նաւահանգստին վարեցան, և 'ի նոցանէ խանձ անկեալ 'ի տունս ծովեզերեայս, և անտի ընդ ա̃մ կողմն այն քաղաքին' որ կոչէր Բրուքիոն' հրդեհն ճարակեցաւ : Իսկ 'ի հրայրեացն անդ կիզաւ հռչակաւոր մատենադարանն, յորում էին յայնժամ չորեքհարիւր հազար մատեանք' ջանիւք թագաւորաց բազմաց ժողովեալ : Աւա՜ղ բանասիրականին անգիւտ տուժիցն :

Կեսար 'ի վտանգաւոր մարտէն' որ սաստկանայր 'ի վերայ նորա' զարհուրեալ, պատուէր արար յա̃մ մօտակայ աշխարհս' զօրս 'ի թիկունս հասուցանել : Գրեաց և առ Դոմետիոս Կալուինոս' զոր 'ի փոքրն Ասիա զօրավար կացուցեալ էր, և եցոյց զմօտալուտ վտանգն . և վաղվաղակի զօրահատոյց արար Դոմետ լեգէոնս կրկին, զմին ընդ ծով և զմիւսն ընդ ցամաք . և եկին հասին 'ի դէպ ժամանակի երթեալքն ընդ ծով, իսկ ցամաքայինքն տարաժամ հասին յետ վախճանի մարտին : Միհրդատ պերգամացի առաւել քան զամենեսին զօրավիգն եղև Կեսարու' յղեալ 'ի նմանէ յԱսորիս և 'ի Կիլիկիա, և ածեալ զօրս բազումս, որովք յաղթեաց պատերազմին, որպէս ասասցուք :

Մինչ դեռ Կեսար սպասեալ մնայր օգնականութե̃ն, ամրացոյց զկողմն քաղաքին' յորում կայր, զի մի կանխեացէ Թշնամին բազմաձեռն զօրօք ստիպել զնա 'ի պատերազմ. և ած շուրջանակի պարիսպս՝ խիտ առ խիտ մարտկոցօք և աշտարակօք. և էին ապարանքն արքունի 'ի շրջապատի անդ, և մերձ նմին տեսարանն՝ որ եղև նմա յամրոց, և ճանապարհն՝ որ երթայր 'ի նաւահանգիստն. Եւ Պտղոմէոս էր ընդ ձեռամբ Կեսարու. բայց Պոթինն՝ ոստիկան նորա և հազարապետ աշխարհին՝ համախոհ էր Աքիղասայ, և ազդ առնէր նմա զա՟մ, և խրախուսէր զնա սաստկացուցանել զպատերազմն 'ի վերայ Կեսարու. Ըմբռնեցան Թուղթք նորա, և յայտնեցաւ դաւն. և Կեսար ետ սպանանել զնա.

Իսկ Գանիմեդէս, միւս այլ 'ի ներքինեաց դրանն, դաստիարակ Արսինոյեայ կրտսերոյ քեռ Թագաւորին, երկուցեալ՝ թէ գուցէ և ինքն 'ի մահ մատնեսցի, զի և նա դաւակից էր, եառ ընդ իւր զԱրսինոյէ և փախեաւ 'ի բանակն եգիպտացւոց. Նոքա իբրև տեսին զքոյր արքային, զի ոչ ոք էր առ նոսա Թագաւորազն, յոյժ ուրախ լեալ՝ 'ի ձեռն քարոզի դշխոյ զնա հռչակեցուցին. Բայց Գանիմեդէս դարմանակալ լեալ Աքիղայ, չարախօսէր զնմանէ՝ թէ կամաւ զնաւատորմն եթող Կեսարու հրձիգ առնել. և զնա մատնեալ 'ի մահ տարապարտ՝ ինքն սպարապետ եկաց զօրացն, և հազարապետ 'ի վերայ ա՟մ իրաց աշխարհին. Եւ որպէս Թուի՝ էր 'ի նմա ա՟մ՝ որ ինչ կարևորն է յառաջնորդութ՟ի, բաց 'ի լաւութ՟է՝ որ 'ի բազմաց առ ոչ ինչ գրի. Զի էր նա կորովամիտ և ճարտար, որ և բազմահնար դաւովք խուճապեցոյց զԿեսար 'ի պատերազմին յայնմիկ. Զի և զջուր ըմպելոյ՝ որ յայն կողմն քաղաքին հոսէր՝ դառնացոյց, և փոքր միւս ևս՝ և երաշտի կորուսանէր զնա. Քանզի յԱղեքսանդրիա ոչ գոյր ջուր ըմպելոյ բաց 'ի Նեղոսէ. զի էին 'ի տունս իւրաքանչիւր գուբք[1], և ամի ամի 'ի յորդել գետոյն՝ յառատագոյն զեղմանն գայր մտանէր 'ի քաղաքն ընդ առու ձեռագործ 'ի ջրանցս, և ընդ կաղմեալ սահանս բաշխէին ջուրք 'ի գուբս, որ էին ջրամբարք քաղաքին. և անդ տակաւ յստակէին յարբումն տանց. իսկ ամբոխին անդստին 'ի հոսանաց գետոյն ըմպէր ջուր պղտոր և վնասակար, զի ոչ էին աղբերք 'ի քաղաքին. Բայց գբոցն հաղորդուն էր ընդ միմեանս. և միանգամ լցեալ՝ զա՟մն ողջոյն ոչ սպառէին. Եւ 'ի տունս իւրաքանչիւր էին նոյա բերանք որպէս ջրհորոց, ուստի զջուրսն հանէին սափորօք կամ դուլիւք ։ Արդ զջրանցս գրոց կողման քաղաքին, ուր էին Կեսար, ելից Գանիմեդէս ․ և հնարիւք ջուր 'ի ծովէ գնացուցեալ 'ի գուբսն, զա՟մ ամբարեալ ջուրս դառնացոյց ։ Զայն իբրև զգացին զօրք Կեսարու, ամբոխ արարեալ՝ բողոք բարձին ․ և հարկ էր նմա մեկնել 'ի տեղւոջէ անտի 'ի վնաս մեծ, այլ նա հնարագիտութ՟ ետ պեղել ջրհորս 'ի տեղւոջն, և եգիտ աղբիւրս ջուրց 'ի լիութիւն բաւականի՝ փոխանակ ջուրցն դառնութեան ։

---

[1] Են և արդ յԱղէքսանդրիա համ- որպէս անդ առըէն 'ի հող ժամանակի. գոյն տայասցին գուբք, և ամի ամի լնան Թիլենոթ.

Այդ եղև Կեսարու՝ զի լեգէոն զօրացն, զոր Դոմետ առաքէր ընդ ծով, հասին 'ի ծովեզերս Լիբիոյ՝ որ ոչ ինչ կարի հեռի էր անտի, և գնաց ընդ առաջ բազմութ՟ նաւացն՝ ածել զնոսա անվտանգ յԱղեքսանդրիա ։ Իրազեկ լեալ և Գանիմեդէս, նաւուք եգիպտացւովք՝ որչափ 'ի ձեռս եկին, ել հարկանել զնա 'ի դարձին ։ Այլ յաղթող լեալ Կեսարու 'ի նաւամարտին, եմոյծ զլեգէոնն անվտանգ 'ի նաւահանգիստն ․ և եթէ ոչ գիշեր 'ի վերայ հասանէր, ոչ ապրէին նաւք թշնամեաց ։ Գանիմեդէս առ 'ի կանգնել զկորանսն, ետ ածել նաւս՝ որչափ մարթէր 'ի բերանոյ Նեղոս գետոյ ․ և կազմեալ նոր նաւատորմ, եկն եմուտ 'ի նաւահանգիստ անդր, միւսանգամ տալ նաւամարտ ։ Աղեքսանդրացիք ելեալ բազմութ՟ 'ի շրջակայ տանիս 'ի զնին մարտին, ահիւ և դողութ՟ ձեռս յերկինս համբարձեալ՝ պաղատէին առ դիս վասն յաղթութե՟ ։ Իսկ հռոմայեցւոց սպառասպուռ կորուստ առաջի կայր ․ զի ոչ ևս ընդ ցամաք կամ ընդ ծով գոյր նոցա օգնականութ՟ եթէ անդ պարտէին ․ այլ յայնմ ևս ճակատու յաղթեաց Կեսար ․ և զօրավիգն յաղթութե՟ն եղեն հռոդացիք՝ ազգ պատերազմող և հմուտ 'ի նաւատականութ՟ ։ Այլ յետ մարտին իջուցեալ զզօրս իւր 'ի Փարոս կղզի, խորհեցաւ 'ի դէպ ժամանակի յաջողութե՟ն նուաճել և զայն, և զԵօթնասպարեզն ևս ունել զնեղուցն կցորդութ՟ նորա ընդ ցամաք ։ Այլ յետ բազում յաղթութե՟ցն հալածական վարեցաւ, և անկան 'ի նմանէ արք աւելի քան զութ հարիւր, և ինքն մազապուր եղև 'ի փախստին ։ Զի նաւն՝ յոր փութայր անկանել՝ ընկղմէր առ խուռն բազմութ՟ ապաւինելոցն անդր, և արկ նա զանձն 'ի ծով, և անց 'ի լող 'ի մի 'ի մերձակայ նաւաց բազում աշխատութ՟ ․ զի միով բազկաւն լողայր, միւսովն 'ի վեր կալեալ զթուղթս կարևորս՝ առ անթաց պահել ։

Իբրև տեսին աղեքսանդրացիք, զի թշնամիք յաւելուծին պարտուցն 'ի խրախոյս, խորհեցան առնել խաղաղութիւն. կամ այնպէս կեղծաւորեալ՝ առաքեցին առ Կեսար՝ խնդրել 'ի նմանէ զՊտղոմէոս, զի թէ եկեսցէ՝ հանդարտեսցեն 'ի խաղաղութիւն։ Բայց Կեսարու գիտելով զխորամանկ նենգաւորութիւն նոցա, ոչ դիւրահաւան լինէր. այլ զի ոչ ինչ դոյր վտանգ 'ի տալ նոցա զթագաւորն՝ յանձն առեալ հաւանեցաւ, զի եթէ դրժեսցեն բանիցն՝ վրէժս սաստիկս խնդրեսցէ։ Եւ յորդորէր զՊտղոմէոս՝ խրատել 'ի դէպ ժամանակին զժողովուրդն յուղղութիւն և 'ի խաղաղութիւն, և խափանել զչարիս՝ զոր տարապարտ պատերազմաւն ածին 'ի վերայ աշխարհին. և մի ապերախտ լինել շնորհի ազատութեանն, որպէս յուսացեալ՝ արձակէր զնա, և մի բարեացն՝ զոր արար ընդ հօր նորա։ Իսկ թագաւորն[1] կրթեալ վաղագոյն 'ի դաստիարակացն 'ի կեղծաւորութիւն և 'ի խաբէութիւն, աղաչէր արտասուօք զԿեսար՝ մի զրկել զնա յերեսաց իւրոց, որպէս քան ըզփառս արքայութեան ցանկալի համարեալ զայն։ Այլ վաղ յայտնեցան նենգաւոր արտասուքն և կեղծիք սրտին. զի ընդ հասանել առ զօրս իւր՝ սաստկացոյց զպատերազմն, և նաւատորմ եգիպտացւոց խափանէր զամբարաբեր նաւս։ Նմին իրի վերստին խառնեցաւ նաւամարտ առ Կանոպեաւ, և յայնմ ևս յաղթեաց Կեսար։ 'Ի մէջ մարտին և Միհրդատ պերգամացի հասանէր զօրօք յօգնութիւն Կեսարու. զի էր նա առաքեալ յԱսորիս և 'ի Կիլիկիա՝ ժողովել և ածել զօրս որչափ գտանիցէ. որ և փութով և իմաստութեամբ կատարեալ զգործն, հասոյց զօր բազում։

Յով. պատմ. Նախն. ժդ. ժէ։ Եւ Անտիպատրոս եդովմայեցի զօրավիգն եղև երեք հազարաւ եբրայեցւովք, և զիշխանս Արաբիոյ և զստորին Ասորւոց և զքաղաքս ազատս փիւնիկեցւոց և Ասորւոց միաբանեալ յօգնականութիւն։ Եւ եկն Միհրդատ, և Անտիպատրոս ընդ նմա, յԵգիպտոս. և հասեալ 'ի Պեղուս էառ զայն պատերազմաւ, քաջութեամբ Անտիպատրեայ. զի նա նախայարձակ լեալ 'ի խրամատն՝ ել 'ի պարիսպսըն, և զօրքն ամենայն զհետ նորա խրախուսեալ՝ առին զքաղաքն։

Անտի ընդ Նիլոս հարկ էր անցանել յԱղեքսանդրիա, և Հրեայք բնակիչք երկրին պահէին զնամ կիրճս, և արգելեալ մնայր բանակն, եթէ ոչ վասն Անտիպատրեայ և Հիւրկանեայ՝ յորմէ նամականի 'ի ձեռին ունէր Անտիպատրոս, հաւանեալ միաբանէին նոքա ընդ Կեսարու։ Եւ 'ի համբաւել միաբանութեան նոցա՝ յաւելան և Հրեայք Մեմփիացիք 'ի Կեսար. և աստի և անտի ելից Միհրդատ զպէտս պաշարոյ զօրականին։ Եւ իբրև մերձ եղեն 'ի Դելտա, ասպատակ արար Պտղոմէոս՝ չտալ նոցա անցս ընդ Նեղոս. և եղև անդ պատերազմ։ Միհրդատ զկէսս 'ի զօրացն ինքն ածէր, կիսոյն առաջնորդ կացուցեալ զԱնտիպատրոս։ Եւ իբրև գունդն Միհրդատայ բեկեալ անդէն 'ի փախուստ դառնայր, Անտիպատրոս հարեալ զդիմամարտս իւր՝ եհաս առ նա յօգնութիւն։ Սաստկացաւ անդրէն պատերազմն, և 'ի փախուստ դարձան թշնամիք. և Միհրդատ և Անտիպատրոս զհետ մտեալ՝ գործեցին նախճիր մեծ. և կալան զճակատուն տեղի, և աւար հարին զբանակ նոցա, և զապրեալսն հալածական դարձուցին ընդ Նեղոս։

---

[1] Միրտ արքայազինն ուսեալ 'ի հրահանգս խաբէութեան, և ոչ 'ի բարուց իւրայնոցն օտարացեալ, աղաչէր արտասուօք զԿեսար մի արձակել զնա, իբր թէ գառն էր նմա զրկել յերեսաց Կեսարու քան 'ի թագաւորութենէ։ Հիրտ. յաղ. պատերազմ. Աղեք.

Յայնժամ Պտղոմէոս միահամուռ ամ՟ զօրօքն խաղաց 'ի վերայ յաղթականայ, անդր և Կեսար դիմեաց յօգնութիւն իւրոցն. և ընդ հասանել նորա՝ սկիզբն եղև մեծի պատերազմին, և կալաւ Կեսար զկատարեալ յաղթութիւն։ Իսկ Պտղոմէոս յաճապարել փոքու մակուկաւ 'ի փախուստ, հեղձաւ 'ի Նեղոս. և Աղեքսանդրիա և ամ՟ Եգիպտոս հնազանդեցան Կեսարու։

Եւ եմուտ Կեսար յԱղեքսանդրիա 'ի կէս յունուարի. և անարգել անխափան թագաւորեցոյց զԿղէոպատրա ընդ կրտսերոյ եղբօր նորա Պտղոմեայ 'ի միասին. այլ գրեթէ միայնակ զնա թագաւորեցուցանէր, զի Պտղոմեայ չև ևս էին ամք մետասան։ Եւ սոյդ իսկ պատճառք մեծի այսր պատերազմի եղեն տռփանք Կեսարու ընդ նմա. յորմէ ծնաւ իսկ որդի զԿեսարիոն, զոր սպան Օգոստոս 'ի նուաճելն զԱղեքսանդրիա։ Եւ վասն նորին իսկ տռփանացն յերկարեաց յԵգիպտոս քան զկարևոր ժամանակն։ Զի զամ՟ ինչ արարեալ և կատարեալ յամսեանն յունուարի, 'ի վերջ կոյս ապրիլի մեկնեցաւ յԵգիպտոսէ. քանզի ասէ զնմանէ Ապպիանոս զինն ամիս կացեալ յԵգիպտոս, և եկն նա անդր 'ի կատարած յուլիսի առաջնոյ ամին։

Եւ զամ՟ գիշերս էր 'ի խնճոյս ընդ Կղէոպատրայ. և ընդ նմա նաւարկեալ ընդ Նեղոս, շրջեցաւ նաւատորմաւ մեծաւ ընդ ամ՟ աշխարհն։ Կամէր և յԵթովպիա մտանել, այլ զօրք նորա հրաժարեցին. և 'ի Հռոմ խոր-

Սուէտ. 'ի
Յուլիոս ծբ.

հեր ածել զնա 'ի կնութիւն իւր , և յատենի ժողովրդեան օրինադրել՝ զի իցեն ազատ հռոմայեցիք ածել կին զո ոք և որչափ զոք կամիցին ։ Զայս Մարիոս Կիննա հազարապետ ժողովրդեան յետ մահու նորա խոստովան եղև ․ զի ինքն իսկ 'ի հարկեցուցող թախանձանաց նորա հանդերձեալ էր ատենախօսել 'ի հաստատութիւն օրինացն ։

Իսկ զԱրսինոյէ գերեալ 'ի պատերազմին , ած 'ի Հռոմ․ և շղթայակապ ձաղեալ զնա 'ի յաղթանակին , ապա իսկ և իսկ ազատեաց զնա ։ Այլ չեթող նմա դառնալ յԵգիպտոս , թէ գուցէ դարձեալ խռովութիւն ինչ լինիցի , և խախտեսցին կարգք՝ զորս եդ ։ Նա ընտրեաց Արսինոյէ բնակել յԱսիա , կամ 'ի ժամանակի ևեթ պատերազմին Փիլիպպեայ բնակէր անդ ․ զի անդ եգիտ զնա Անտոնիոս յետ մարտին , և սպան զնա վասն թախանձանաց քեռ նորա Կղէոպատրայ ։

Մինչ չև մեկնեալ էր Կեսար յԱղեքսանդրիոյ , փոխանակ օգնականութեան՝ զոր ետուն նմա Հրեայք , յաւել հաստատել զամենայն օրէնս ազատութեան նոցա ․ և կոթող կանգնեալ՝ արձանագրեաց 'ի նմա զայն ամենայն , և զհրովարտակն հաստատութեան ։

Ապա այնուհետև հարկ եղև Կեսարու մեկնել յԵգիպտոսէ վասն պատերազմին Փառնակայ արքայի , որ թագաւորէր 'ի կիմերեանն Վոսփոր ․ և էր նա որդի Միհրդատայ՝ որ վերջին թագաւոր եկաց 'ի Պոնտոս ։ Զնա եհար Կեսար մեծաւ պատերազմաւ մերձ 'ի Զելա քաղաք Կապադովկիոյ , և բեկեալ զամենայն բանակ նորա , հալածեաց զնա յաշխարհէն պոնտացւոց ։ Զերագունի յաղթութեան այսր պատերազմի առ մի ոմն 'ի բարեկամաց իւրոց գրելով , երիւք բառիւք յայտ արարեալ ասէ ․ Եկի , տեսի , յաղթեցի ։ Պղուտարք․ 'ի Կես․ 731 ։

ԱՄԱՌ.Ն.Ք

ՅՕԴՈՒԱԾ Գ.

Ոչ Կղեոպատրայ սիրուէր եղբայր իւր սպանեալ, մատնէ. և 'ի մեռանել Կեսարու՝ Անտոնիոս և Լեպիդոս և հրաւէրն Կեսար Ոկտաւիանոս կան եռապետք, և Կղեոպատրա մտանէ ընդ նոսա. Երթ նորա առ Անտոնիոս 'ի Տարսոն, և 'ի ցանկութիւն իւր յեղել զնա և ածել յԱղեքսանդրիա. Անտոնեայ երթն 'ի Հռոմ, և հարսանիքն ընդ Ոկտաւեայ, և անդրէն 'ի Կղեոպատրա դարձումն. և յետ արշաւանացն դառնալ մտանել յաղթանակաւ յԱղեքսանդրիա, և կարգել զհանդէս թագաւորութեան Կղեոպատրայ և որդւոց նորա. Գրգռել նորա ընդ Կեսարու, և արշաւել զՈկտաւիա. ըստ նաւամարտմանցն Ակտի և անդի, և Կղեոպատրայ ելանել զհետ Անտոնեայ. և Հաւան նաւամարտէն առ Եհրեա, և փախուստն Կղեոպատրայ, և Անտոնեայ գնալ զհետ նորա. Կեսարու կատարեալ զյաղթութիւն, և առա գնալ 'ի վերայ քաղաքին Աղեքսանդրացւոց, և նոցա վաղ անձնատուր լինելն. ըստ այն մահ Անտոնեայ և Կղեոպատրայ, և խառնել Եգիպտոսի ընդ մարզս աշխարհին Հռոմայ։

Իսկ յետ պատերազմին աղեքսանդրացւոց՝ Թագաւո-
րեցոյց Կեսար զԿղեոպատրա, և առ ձև օրինացն գա-
հակից նմա արար զեղբայր նորա՝ որում չև ևս էին ամք
մետասան. և մինչև ցարբունս նորա միապետեաց Կղեո-
պատրա։ Ապա թէրևս եղև նա ամաց հնգետասանից, և 3961 . 43
անկ էր նմա ըստ օրինաց ունել ինքնիշխան զկէս Թագա- Յով. պատմ.
ւորութե̃ն, արբոյց նմա դեղ մահու, և միահեծան կալաւ Նախն. ԺԷ. Ե։
զաշխարհն։ Պորփ. 226.

'Ի ժամանակին յայնմիկ սպանաւ Կեսար 'ի Հռոմ
դաւաճանութ̃բ. և դաւաճանացն առաջնորդք էին Բրու-
տոս և Կասիոս. և կացին եռապետք Անտոնիոս և Լե-
պիդոս և Ոկտաւիանոս Կեսար, 'ի վրէժխնդրութ̃ի մա-
հուն Կեսարու։ Միաբանեաց ընդ նոսա և Կղեոպատրա
մտադիւրագոյն։ Իսկ ետ 'ի ձեռս Ալիենոսի փոխանակի Ապպ.Փ.576.
բդեշխին Դոլապելլայ չորս լեգէոնս՝ որ էին 'ի զօրացն Փ. 623 . Է .
Պոմպէի և Կրասոսի, և Կեսարու զնոսա թողեալ էր 675:
յԵգիպտոս վասն զգուշութ̃ե երկրին։ Իսկ նաւատորմ
ամենակազմ հանէր ընդ ծով, այլ մրրիկք խափանեցին
զնոսն։ Իսկ գերեաց Կասիոս զզօրեսին լեգէոնսն, և ստէպ 3962 . 42
Թախանձէր զԿղեոպատրա յօգնականութ̃ի, այլ նա հրա-
ժարեաց մինչև 'ի սպառ։ Իսկ յետ ոչ բազում աւուրց
չու արար բազմութ̃բ նաւաց՝ երթալ յօգնութ̃ի Անտոնիոսի

ԱՄ ԱՇ· Ն·Ք և Ոկտաւիանոսի, և 'ի խիստ մրրկէ զբազումս 'ի նաւացն կորոյս, և ինքն հիւանդացեալ՝ դարձաւ յԵգիպտոս ։

5963 · 41 Իսկ յետ պարտութեան Կասիոսի և Բրուտոսի 'ի Փիլիպպէ, Անտոնիոս եկաց յԱսիա հաստատել զիշխանութիւն եռապետութեան ։ Իսկ փայլին առ նա թագաւորք և իշխանք արևելից բազումք, և հրեշտակք յամենայն կողմանց 'ի պատիւ նորա ։ Իսկ իրազեկ լեալ զի կուսակալք փիւնիկեցւոց աշխարհին՝ որ էր մերձ եգիպտացւոց՝ օգնական եղեն Կասիոսի ընդդէմ Դոլաբելլայ, կոչեաց զԿղէոպատրա՝ տալ համար զկուսակալաց իւրոց ․ և յղեաց առ նա զմի 'ի զօրավարացն՝ ստիպել զնա գալ առ ինքն 'ի Կիլիկիա, զի անդր գնայր առնել աշխարհաժողով։ Այլ այս գործ նորա՝ հանդերձ յարակցելովք այնմ իրօք՝ աղետաբեր եղև նմա յոյժ, և 'ի ծայր չարեաց հասոյց զնա ։ Յանկութիւն նորա ընդ Կղէոպատրայ զարթոյց զծածկեալ և զթմբրեալ 'ի նմա ախտս, և դրդուեալ մոլեգնեցոյց ․ և զառկայծեալ նշոյլս պարկեշտութեան և առաքինութեան նորա 'ի սպառ նուաղեցուցեալ շիջոյց ։

Պլուտ· յԱնտոն· 926։
Դիոն· ԽԸ· 371։
Ապպ· քաղաք· հարդ· Ե· 671։

Կղէոպատրայ զփորձ առեալ զօրութեան գեղոյ իւրոյ 'ի Յուլիոս Կեսար, յուսացաւ դիւրագոյն և զնա գերել․ զի զԿեսար 'ի մատաղ տիս տարփեցոյց մինչ դեռ անփորձ էր իրաց աշխարհի, իսկ 'ի սա մատչէր 'ի հասակի՝ յորում ընդ առոյգ գեղոյ կցորդին կորովք կանացի մտաց 'ի յանձանձել և 'ի ճարտարել մեծամեծս․ զի էր յայնժամ Կղէոպատրա ամաց քսանևհնգից ։ Իսկ պատրաստեալ պարգևս մեծագինս, և գանձս բազումս, և հանդերձս և զարդս բազմագոյնս, ևս առաւել վստահ յանձն 'ի հրապոյրս և 'ի գեղ իւր՝ յողոքիչս քան զզարդ և զոսկի, երթայր առ Անտոնիոս ։

Իսկ զճանապարհայն նամականի առեալ 'ի նմանէ և 'ի բարեկամաց նորա՝ որք էին 'ի Տարսոն, զի ճեպէին զնա, ծիծաղեցաւ և գնայր հանդարտ ։ Իսկ անցեալ ընդ ծով Պամփիլեայ, եմուտ 'ի Կիդնոս, և ընդ վեր կոյս գետոյն նաւարկեալ, ել 'ի Տարսոն ։ Իսկ էին կազմածք նաւուն պերճք և շքեղք, որպիսի ոչ եղեն երբեք ․ խելքն վարեալ ոսկեհուռ, առագաստք ծիրանի, թիակք արծաթապատք, և պաղպաջունք ոսկեթել 'ի վերնայարկ նաւուն կանգնեալ, յորում էր դշխոյն զգեցեալ 'ի ձև Աստղկան, և շուրջ զնովաւ նաժիշտք նորա օրիորդք գեղեցիկք, կեսք 'ի կերպ Ներեանցն այլք 'ի կերպարանս Շնորհաց ։ Իսկ փոխանակ փողոց հնչէին սրինգք և շեփորք և տաւիղք և այլ համագոյն սոցին նուագարանք՝

զերգս սիրոյ նուագելով։ Եւ թիոցն յարմարաւոր չափով շարժումն՝ ներդաշնակագոյն զմիաբանութ՟ն երգոցն գործէր։ Եւ բուրումն անուշից խնկոց 'ի նաւէ անտի ծխեալ ծաւալէր ընդ երեսս գետոյն, և 'ի գետեզերս յայս և յայն կոյս, ուր անբաւ բազմութ՟ն մարդկան խռնեալ էին 'ի նորահրաշ տեսիլն։

Լու եղև գալուստ նորա, և ելին ընդ առաջ ամենայն տարս՟ացիք· մինչև Անտոնիոսի, որ նստեալ յատենի՝ լսէր զաղերս ժողովրդեան, մնաց միայնակ ընդ պայլիկմն և ընդ սպասաւորս։ Եւ համբաւն հնչէր թէ Աստղիկն ծփեալ գայ առ Դիոնիսոս 'ի բարօրութ՟ի ազգաց Ասիոյ։ Ընդ իջանել նորա 'ի նաւէ՝ յղեաց Անտոնիոս հարցանել զողջունէ նորա, և հրաւիրել զնա յընթրիս։ Իսկ նա պատասխանի ետ հրաւիրակացն, զի ինքն եկեսցէ 'ի սեղան իւր, զի ընդ խորանօք առ եզերբ գետոյն տայր պատրաստել ընթրիս· և ոչ հրաժարեաց Անտոնիոս։ Եւ էին ըսպասք սեղանոյն ճոխք անպատմելի· և առաւել ընդ գեղ բազմաջահեան աշտանակացն զարմանայր, և ընդ ճարտար կարգաւորութ՟ի նոցա, որոց պայծառութ՟ի՝ միջօրեայ ակնապարար 'ի խոր գիշերի գործէր։

Եւ ապա Անտոնիոս հրաւիրեաց զնա առ վաղիւն փոխարէն 'ի ճաշ։ Եւ թէպէտ յոյժ ջանացաւ յաղթել նմա ըստ ճոխութ՟է և ըստ յօրինուածոյ սեղանոյն, այլ զպարտութ՟ի խոստովանեցաւ՝ նախ քան զդշխոյն ինքնին զիւրոց կոչնոյն զգձձութ՟ի և զգեղջկութ՟ի ծաղր առնելով առ ճոխութ՟բ և առ ազնուականութեամբ նորայոյն։ Իսկ դշխոյն յանհեդեդ կատականս նորա, որ զինուորականք էին մանաւանդ և ոչ արքունականք, համարձակագոյն զիւրն յաւելոյր· այլ հանճարեղ և ախորժ բանիւք՝ առանց կծանելոյ զնա։ Զի շնորհք և վայելչութ՟ի բանից նորա՝ հանդերձ քաղցրութ՟բն և զուարթութ՟բ՝ առաւել քան զգեղ դիմաց նորա հրապուրէին, և 'ի միտս և 'ի սրտի թողուին խայթ սաստիկ· մանաւանդ զի և քաղցրալուր և դաշնակաւոր բարբառովն զմայլեցուցանէր զունկնդիրս։

Իսկ զամբաստանութ՟եցն, ոչ ինչ խնդիրք եղեն, զի բարուրք իսկ էին։ Եւ այնպէս կախարդեալ զսիրտ Անտոնեայ յինքն պարուրեաց, զի ոչ ինչ կարէր նա ժխտել նմա· և վասն թախանձանաց նորա սպան զԱրսինոյէ զքոյր նորա, որ 'ի Միլետոս 'ի մեհեան Արտեմեայ դիցն ապաստանեալ յամրի կայր։

Հանապազօր խրախճանք, և ճաշք զճաշս գլէին· գոգցես իմն ընդ անձին մրցէր դշխոյն, և յաղթէր անձին։ Աթէն · դ · 147 ։

'Ի միում նուագին մինչ Անտոնիոս ընդ ճոխուի̃ համափիւռ սպասուցն զարմացեալ կայր, մանաւանդ ընդ բազմութի̃ ականակապ և ճարտարագործ ոսկի բաժակացն, հայեցեալ ընդ այն Կղէոպատրայ՝ արհամարհելով իմ̃ն զայն ա̃մ պարգևեաց նմա։ Եւ 'ի վաղիւ անդր մեծագանձ ևս պատրաստեաց սեղան․ և Անտոնիոս ըստ հանապազօր սովորութե̃ն ած ընդ իւր խրախճանակիցս բազումս, զա̃մ աւագ սպայս․ և ետ նոցա Կղէոպատրա զա̃մ անօթս և զսպասս ոսկի և արծաթի՝ որ էին 'ի վերայ սեղանոյն։

'Ի միում 'ի կոչնոցս, որպէս թուի, դիպաւ պատմեալն 'ի Պլինեայ, զոր 'ի նմանէ առեալ պատմէ Մակրոբիոս։ Զի 'ի ծաղր առնել Կղէոպատրայ ըստ սովորութե̃ իւրում զկոչունս Անտոնիոսի որպէս գծուծս և անյարդարս, զչարեալ Անտոնիոսի և դժգմեալ ասէ․ Եւ զի՞նչ ևս մարթ իցէ ծախել, ասէ՝ ասա։ Իսկ դշխոյն դաշն ձայնիւ ասէ․ Սեստերտս հազար բիւր 'ի մի ճաշ։ Եւ նա ասէ․ Ո՞չ ապաքէն բանք իցեն։ Իսկ նա գրաւ եդ, և զՓղանկոս կացուցին դատաւոր․ և դարձան 'ի վաղիւ անդր 'ի ճաշ։ Էր սեղան մեծ պատրաստեալ, այլ ոչ ինչ կարի առաւել քան զայլ աւուրցն։ Անտոնիոսի համարելով զծախսն՝ ստէպ զգինս իւրացն հարցանէր, և աներկեան ընդ յաղթութիւնն՝ ծաղր արարեալ ասէր․ Յոյժ տակաւին 'ի բացէ եմք։ Իսկ դշխոյն․ Մնա վայրկեան մի, տակաւին սկիզբն է ճաշոյ․ ես ինքն զհազար բիւրսն ճաշակեցից։ Ածաւ սեղան երկրորդ[1], և բաժակ ևեթ լի քացախով՝ որպէս պատուէր տուեալ էր սպասաւորացն․ և Անտոնեայ զարմացեալ ընդ նորանշան սպաս սեղանոյն, ոչ կարէր կալ 'ի վերայ իրացն։ Էին Կղէոպատրայ գինդք երկու մարգարիտք չքնաղք յականջսն, անգիւտք ընդ տիեզերս, և գինք միոյ՝ հազար բիւր սեստերտ։ Յայնցանէ առեալ զմին արկ 'ի քացախն․ և 'ի լուծանել[2] մարգարտին, արբ զբաժակն։

---

[1] Զի առ նախնիս ընդ սպասս կերակրոց փոխէին սեղանս։

[2] Քացախ եթէ զա̃մ ինչ խիստ լուծանէ․ Վասն որոյ սահմանէ զայն Պլինիոս Հիւթ ամենայաղթ․ լգ․ Գ։ Զայս ոչ ինքն Կղէոպատրա հանճարեաց, այլ նախ քան զնա յամօք նմին Կլօդիոս որդի Եսոպեայ խաղացերգակի առնէր սփէդ, ըմպել զմարգարիտ լուծեալ առ մեծագնութե̃ սեղանոյ․

Ըզ չքնաղ մարգարիտ յունկանէն Մետելլայ
Առ և լոյծ 'ի քացախ շռայլին Եսոփայ.
Եւ սեստերտս հարիւր բիւր
'Ի մի ումպ կերակրիւր։
ՈՀՐԱՏ․ ԵՐԳԻԾ․ Բ․ Գ․ 239։

Իսկ իբրև 'ի միւսն ¹ ևս արկանէր զձեռն՝ արգել զնա Փղանկոս, ցուցեալ զնա յաղթող և զԱնտոնիոս պարտեալ։ Այլ յոյժ անիրաւեաց, զի չեթող դշխոյին կրկին ժառանգել զգերապանծ զանհամեմատ փառսն 'ի մի ումպ զհարիւր բիւրսն ճաշակելոյ։ ԱՄԱՌ․Ն․Բ

Բայց Անտոնիոս խեռայր ընդ Կեսարու. և մինչ Փուլուիա կին նորա ջանահնար լինէր 'ի Հռոմ վասն նորա, և զօրք Պարթևաց մտանէին յԱսորիս, ինքն անփոյթ լեալ, երթեալ զհետ Կղէոպատրայ յԱղեքսանդրիա, անդ ընդ նմա պարապէր 'ի խաղս 'ի զբօսանս և 'ի հեշտութիս. և հանապազօր ընթրիս տային միմեանց, զանձս սաստիկս անհնարինս ծախեալ. որպէս է գուշակել և յիրացս՝ զոր աւասիկ զօդեմք։ Պատանի ոմն հելլէն եկեալ յԱղեքսանդրիա 'ի բժշկականին յուսումն, 'ի հռչակ համբաւոյ կոչնոց նոցա՝ ցանկացաւ ականատես լինել իրացն։ Իսկ մտեալ 'ի խոհակերոց անդր Անտոնիոսի, ընդ ազգի ազգի խորտիկս ետես և կինճս ութ՝ ողջոյն 'ի խորովս արկեալ, և ասէ. Բազմէ, քանի՛ ամբոխ կոչնականաց ճաշիցեն։ Ծիծաղեցաւ խոհակերն և ասէ. Ոչ որպէս կարծեսդ՝ այնչափ բազում կոչնականք են, ընդ բնաւ թէ իցեն՝ անձինք երկոտասան։ Այլ հարկ է ըստ ժամանակին զազգի ազգի խահիցն զեփոյս պատրաստել, զի ժամ 'ի ժամ խահրեալ անհամոքսին վասն ճաշաժամուն ոչ սահմանելոյ. զի մերթ հասանէ պատրաստել սեղան, և մերթ դարձեալ յապաղէ 'ի զրուցատրութիս. վասն որոյ բազմապատիկ պատրաստեմք ճաշ, ոչ գուշակելով զժամանակն։ 3964 · 40 Պլու․ յԱնտոն․ 928։

Բայց Կղէոպատրայ երկուցեալ՝ թէ գուցէ գաղտագնաց լիցի Անտոնիոս, չհեռացուցանէր զնա յաչաց իւրոց, և ոչ մեկնէր 'ի նմանէ զտիւ և զգիշեր, այլ զբաղեցուցանէր զնա հանապազ, և արգելեալ պահէր 'ի շըղթայսն. յորս և 'ի տապեղուլունս զբօսնոյր ընդ նմա, և 'ի հրահանգս մարտի միշտ առ ընթեր կայր։ Իսկ ուշ եդեալ՝ թարթափեցուցանէր զնա հանապազ, և ոչ տայր նմա պարապ 'ի տաղտկութի։

Եղև օր մի, զի Անտոնիոս ձուկն որսայր կարթիւ ընդ Կղէոպատրայ. և ոչ ինչ ըմբռնել կարացեալ՝ դժկամակէր, զի անաջողակ և անբաղդ թուէր յաչս նորա։ Իսկ պատուէր ետ ձկնորսաց ոմանց, զի մխիրճ հարեալ ան-

---

[1] Զմարգարիտս զայս Աստղկանն 'ի Հռոմ և հատեալ զայն ընդ մէջ, [illegible] Կեսար, զի 'ի [illegible] տանելի էր մեծ յոյժ, էր 'ի գինս ա[illegible] յԱղեքսանդրեայ՝ ածեալ ընդ իւր [illegible]։ Պլին․ անդ։

ԱՄԱՇ. Ն.Ք. տեսաբար անցուցեն 'ի կարթ իւր ձկունս մեծամեծս յորսոց իւրեանց. և արարին ձկնորսքն որպէս հրամայեաց նոցա Անտոնիոս, և ձգէր ձկունս ստուարս կրկին և երեքկին։ Իրազգաց եղև հնարիցն եգիպտուհին. և մեր 'ի վերոյ զարմացեալ ընդ բարեբաղդութիւն նորա, իսկ 'ի ծածուկ պատմեաց զիրսն բարեկամաց իւրոց, և հրաւիրեաց զնոսա առ վաղիւ 'ի զնին հանդոյն իմն խաղոյ. և եկին։ Իսկ իբրև ելին 'ի նաւակսն ձկնորսականս, և ընկէց Անտոնիոս զկարթն, պատուիրեաց Կղէոպատրա միում յիւրոցն՝ աճապարել նախ քան զլուղորդս նորա 'ի ծով, և հարկանել 'ի կարթ նորա ձուկն մեծ աղծեալ, 'ի պոնտականացն՝ որ ածէին 'ի վաճառ։ Իսկ իբրև զգաց Անտոնիոս զցնցումն կարթին, ձգեաց զայն 'ի վեր. և 'ի տեսիլ աղկեր ձկանն՝ զքրքիջ բարձեալ ամենեքեան ծիծաղէին։ Իսկ ասէ ցնա Կղէոպատրա. Թող այսր, զօրավարդ, 'ի թագաւորս և 'ի դշխոյս Փարոսի և Կանոպայ զկարթդ. քեզ զքաղաքս և զաշխարհս և զթագաւորս անկ է որսալ։

Մինչ դեռ Անտոնիոս 'ի զբօսանս կայր և 'ի մանկական խաղսն, ազդ եղեն աշխարհակալութիւքն Լաբիենոսի պարթևական զօրօք, և որպէս 'ի խոր քնոյ ընդոստուցեալ՝ չու արար ընդդէմ նորա։ Այլ զճանապարհայն լուեալ զգոյժ մահուն Փուլուիայ՝ դարձաւ 'ի Հռոմ, և հաշտեցաւ ընդ կրտսերոյն Կեսարու, և առ զքոյր նորա զՕկտաւիա կնութեան զայրին Մարկեղեայ կին ժրագլուխ։ Թուէր զի թերևս յամուսնանալն ընդ նմա՝ մոռասցի
3965. 39 զԿղէոպատրա. այլ 'ի գնալ իւրում ընդդէմ Պարթևաց՝ մոլեգին ևս վառեցաւ տռփումն նորա, կախարդեալ իմն 'ի սէր եգիպտուհւոյն։

3966. 38 [illegible] Բայց Կղէոպատրա թէպէտ և սաստկապէս հարեալ ախտիւն, 'ի կարի իսկ արբեցութեան հեշտութեանցն՝ չէթող զյանկութիւն բանասիրութեան և գիտութեանց. և փոխանակ բազմահռչակ աղեքսանդրեան մատենադարանին՝ որ ամօք ինչ յառաջ հրկեզ եղև, որպէս ասացաք, կառոյց նոր. և ոչ սակաւ ձեռնտու եղև նմա Անտոնիոս 'ի յօրինել անդ զգրեանս, պարգևեալ նմա զմատենադարանս՝ որ էին 'ի Պերգամոն, ուր էին աւելի քան զքսան բիւր մատեանս։ Իսկ ոչ առ 'ի զարդ և եթ մթերէր զգիրս, այլ 'ի պէտս իւր. զի սակաւք էին 'ի բարբարոս ազգաց՝ ընդ որս թարգմանաւ հարկ լինէր նմա խօսել, այլ ընդ բազումս ընիկ բարբառովն նոցա խօսէր, ընդ եթովպացիս, ընդ Տրոգղոդիտս, ընդ եբրայեցիս, ընդ արաբացիս, ընդ Ասորիս, ընդ Մարս և ընդ Պարթևս։ Իսկ ոչ այս-

Պլուտ. յԱնտոն. 927.

չափ միայն, այլ և 'ի լեզուս այլոց ազգաց խօսէր. իսկ ԱՄ ԱՌ.Ն.Ք
որ յառաջ քան զնա թագաւորք կային յԵգիպտոս՝ հազիւ զբարբառ եգիպտացւոց ուսեալ, և կէսք զմակեդոնականն իսկ զբնիկ բարբառ իւրեանց մոռացան.

Եւ յոյժ նախանձէր Կղէոպատրա ընդ ամուսնութ՟ն Անտոնիոսի ընդ Ոկտաւիոյ, զի համարէր զողացեալ յիւրմէ զամուսինն. Եւ հարկ եղև Անտոնիոսի առատ պարգևօք զիջուցանել զնա. և ետ նմա զՓիւնիկէ, և զստորին Ասորիս, զԿիպրոս և ընդարձակ սահմանս 'ի Կիլիկիա, և զկողմն ինչ Հրէաստանի և զԱրաբիոյ. Ընդ որ յոյժ զայրացան հռոմայեցիք վասն հատանելոյ բազում սահմանաց յաշխարհէն նոցա մեծամեծ պարգևօքն, զի և յառաջագոյն գժգմեալ էին ընդ Անտոնիոսի՝ վասն առաւելազանց սպաս առնելոյ նորա տիկնոջն այլազգւոյ.

Եւ զերկեամ մի Անտոնիոս ստէպ դարձ արարեալ 'ի Հռոմ, և երբեք երբեք 'ի Պարթևս և 'ի Հայս արշաւեալ, ոչ ինչ քաջութ՟ս արար. Բայց 'ի միում նուագին 'ի մի 'ի գաւառաց հայաստանի աւար հարին զօրքն զմեհեան Անահտայ դիցն՝ որ յոյժ էր հռչակաւոր, և զպատկեր նորա ոսկեձոյլ խորտակեցին, և մեծացան նովաւ բազումք մեծութ՟ն յոյժ. Յորոց մի ոմն 'ի ծերոց զօրացն՝ բնակեալ 'ի Բոնոնիա քաղաք Իտալիոյ՝ ընկալաւ 'ի միում աւուրց զՕգոստոս 'ի տուն իւր, և ընթրիս ետ նմա. Եւ մինչ դեռ ուտէին՝ եհարց կայսրն. Եթէ ճշմարիտ իցէ, զի որ նախ ձգեաց զձեռն 'ի պատկեր Անահտայ՝ ասեն զնա կուրացեալ և անդամալոյծ գրաւեալ 'ի կենաց. Իսկ նա ծիծաղեալ, ասէ.[1] Եթէ այդպէս էր՝ չկարէի արդ զՕգոստոս հիւրընկալել, իմ իսկ ձեռն արկեալ նախ 'ի պատկերն և յաջողեալ. Զի որ ինչ է իմ, նովաւ ունիմ զամ՟. և զընթրիս զայս, տէր արքայ, 'ի միջէ յոտից նորա պատրաստեցի.

Անտոնիոս զամ՟ ինչ 'ի կողմանսն յայնոսիկ յապահովեալ, դարձ արար զօրօքն. և առ ցանկութ՟ վաղագոյն 3969. 35
հասանելոյ առ Կղէոպատրա՝ ստէպ տագնապաւ չու արարեալ 'ի կարևոր ձմերայնի ընդ հոծ ձիւնաբերս, ութ հազար այր կորոյս զճանապարհայն. և սակաւուք ոմամբք եհաս 'ի Փիւնիկէ. Եւ մնայր անդ Կղէոպատրայ, և 'ի յամել նորա՝ հոգացեալ տրտմէր և ծիւրէր անձկանօք, մինչև եհաս նա՝ ածեալ հանդերձս զօրացն և արծաթ բազում յոյժ.

Պլուտ. յԱնտոն. 939.

---

[1] Նա պատասխանի ետ. 'ի միոջէ 'ի բարձից նորա զընթրիս զայս պատրաստեցի. ես ինքն եմ. և զամենայն ինչ յաւարէ անտի ունիմ.

'Ի նմին ժամանակի Ոկտաւիա մեկնեալ 'ի Հռոմայ գալ առ Անտոնիոս, եհաս յԱթենս։ Իսկ Կղէոպատրայ գիտացեալ՝ զի գայր նա դարձուցանել յինքն զսիրտ Անտոնիոսի, կասկածէր թէ գուցէ պարապ գտեալ՝ ցածուն և ցանկալի և մեղմատեսիլ գեղովն և առաքինութ՟բն և իմաստութ՟բ և զգօն բարուքն որսասցի զայր իւր, և յինքն պարուրեսցէ զսիրտ նորա, և պատճառէր խօթանալ առ սէր Անտոնիոսի մինչև ցմահ, և հիւծէր զմարմին իւր անսուաղութ՟բ։ Իսկ 'ի մտանել Անտոնիոսի առ նա՝ պշուցեալ հայէր անքթիթ 'ի դէմս նորա, և 'ի մեկնել նորա թալկանայր և նուաղէր. և ստէպ արտասուեալ առաջի նորա՝ սրբէր արագ զարտասուսն և ծածկէր, իբր զի մի՛ գիտասցէ զաղէտս իւր և զախտն։ Իսկ Անտոնիոս՝ որ զահի հարեալ երկնչէր զի մի՛ զդշխոյն դառնացուսցէ, գրեաց առ Ոկտաւիա՝ մնալ յԱթենս և մի՛ այսր անցանել, պատճառանօք առաջիկայ մարտին։ Քանզի պատրաստէր ընդդէմ Պարթևաց, ստիպեալ յարքայէն Մարաց՝ որ խոստանայր լինել նմա զօրավիգն։

Իսկ առաքինի տիկինն զանիրաւութ՟ն անտես արարեալ, յղեալ առ նա հարցանէր՝ թէ ո՞ւր կամիս զի առաքեցից զնուէրս, քանզի չհրամայես անձամբ ածել առ քեզ։ Իսկ ոչ այնու 'ի գութ խանդաղատեցաւ Անտոնիոս. և Կղէոպատրա ոչ միայն արգել չտեսանել նմա զՈկտաւիա, այլ և ոչ զնուէրս նորա ընդունել։ Իսկ Ոկտաւիա ստիպեալ դարձաւ 'ի Հռոմ ունայն. բայց միայն յաւել պարտաւոր առնել զԱնտոնիոս, որում ցանկայրն իսկ Կեսար վասն համարձակելոյ ընդ նմա զթշնամութ՟ն։

'Ի դառնալ Ոկտաւիայ 'ի Հռոմ, զչարեալ յոյժ Կեսարու ընդ նախատինս նորա՝ հրամայեաց նմա ելանել 'ի տանէ Անտոնիոսի, և բնակել առանձին։ Նա պատասխանի ետ և ասէ. Ոչ մեկնեցայց 'ի տանէ առն իմոյ. և եթէ վասն իմ իցէ պատերազմդ, հանդարտեաց և մի՛ ընդ իս հոգասցիս։ Իսկ եկաց անդ 'ի սպաս որպէս ընդ առն իւրում. և սնուցանէր խնամով և առատութ՟բ զորդիս նորա, ոչ միայն զծնեալսն յիւրմէ՝ այլ և զորս 'ի Փուլուիայ ծնեալն էր։ Քանի՛ ինչ 'ի մէջ է ընդ Ոկտաւիա և ընդ Կղէոպատրա. մին մերժեալ և նախատեալ՝ արգոյ և պատուական է, միւսն 'ի մեծութ՟ն և 'ի ճոխութ՟ն անարգ և գարշելի։

Ոչ ինչ 'ի հնարից եթող Կղէոպատրա 'ի կաշկանդել զԱնտոնիոս 'ի ցանկութ՟ն իւր. արտասուս, ողոքանս, բողոք և սպառնալիս, զամ՟ 'ի կիր արկ։ Իսկ զամենեսին զմերձակայս և զմտերիմս Անտոնիոսի յինքն էարկ պարգևօք. և մարդահաճոյք խիստ և ամարդի ցուցանէին Թողուլ զԿղէոպատրա 'ի վիշտս, զի նմա հաւասար էր մահու՝ բաժանել 'ի միայն սիրելւոյն, իբր Թէ նորա ոգին զնմանէ կախեալ էր։ Եւ մեղկեալ լուծին զսիրտ Անտոնիոսի՝ դառնալ վաղ յԱղէքսանդրիա, զի մի՛ դուցէ անձին արասցէ դշխոյն, և յապաղեաց 'ի գարունն զպատերազմն Մարաց։ Այլ և յայնժամ դժուարէր մեկնել յեգիպտոսէ, և Թողուլ զտարփալին. նմին իրի եկն նա ընդ իւր մինչև յեզր գետոյն Եփրատայ։ ԱՄ ԱՇ. Ն. Ք. 3970. 34

Անտոնիոս մատնութ՟ե և զինուք նուաճեալ զՀայաստան, և առեալ աւար բազում, դարձաւ յԱղէքսանդրիա յաղԹանակաւ, վարեալ առաջի կառացն զԹագաւորն Հայոց կապեալ ոսկի շղԹայիւք, և ածեալ զնա առ Կղէոպատրա, որ յոյժ զուարճացաւ տեսանելով զԹագաւորն գերի յոտս իւր։ Եւ պարապեալ 'ի ծանունց աշխատու՟Էց, զբօսնոյր 'ի խնջոյս և 'ի խրախճանս ընդ Կղէոպատրայ զցայգ և զցերեկ։ Եւ 'ի միում նուագին, յարբեցու՟Թե Անտոնիոսի, խնդրեաց 'ի նմանէ փառամոլ դշխոյն զՀռոմէական ինքնակալու՟Թին. և նա ոչ ամաչեաց խոստանալ նմա զայն[1]։ Եւ մինչ պատրաստէր միւսանգամ չու առնել 'ի պատերազմ՝ արար զՀանդէս Թագաւորու՟Ե Կղէոպատրայ և որդւոց նորա, առ 'ի յաւելուլ զնա 'ի սէր, և զբոլորանուէր սիրոյն տալ զառհաւատչեայ։ Եւ կանգնեաց բարձրագահոյս ոսկեձոյլ յապարանս իւր, աստիճանօք արծաԹեօք, և բազմեցաւ 'ի նմա զգեցեալ ծիրանիս ասղնեգործեալ ոսկեԹել, և կոճկէն՝ քարամբք պատուականօք, և դաշոյն պարսիկ յազդեր իւրում, և պատեան նորա և երախակալ ականակուռ. Թագ 'ի գլուխ և գաւազան ոսկի 'ի ձեռին, որպէս զի ա՟մ սպասքն իցեն վայելուչ առն դշխոյին եգիպտացւոց։ Եւ նստաւ ընդ աջմէ նորա Կղէոպատրա՝ զգեցեալ կերպասս պայծառս 'ի կերպ Իսեայ դիցամօր եգիպտացւոց, ցանկացեալ կրել զՀանդերձս և զանուն նորա։ Եւ յաստիճանս գահոյից բազմեալ էին յաԹոռ Կեսարիոն որդի նորա ծնեալ 'ի Յուլիոսէ, և Աղէքսանդր և Պտղոմէոս ծնեալք յԱնտոնիոսէ։ Եւ 'ի բազմել նոցա յիւրաքանչիւր աԹոռ, Անտոնիոս 'ի լուր ա՟մ ժողովրդեանն, քանզի դրունք արքունեացն բացան և 'ի ներքս խռնեցաւ ամբոխն, Հրամամն ետ քարոզել զԿղէոպատրա թագաւոր եգիպտացւոց և կիպրացւոց և լիբէացւոց և ստորին Ասորւոց, և զԿեսարիոն որդի նորա ընդ նմա. և զերկուս որդիս իւր արքայից արքայս. և խոստացեալ նոցա ընդարձակագոյն տէրութ̃ի, սահմանէր Աղեքսանդրի անդրանկան իւրում զՀայաստան և զաշխարհն Մարաց, և զՊարթևացն՝ յորժամ նուաճեսցէ. և Պտղոմեայ կրտսերոյ իւրում զԱսորիս և զՓիւնիկէ և զԿիլիկիա. Եւ զգեցեալ էին երկոքեան զկերպ բնակչաց աշխարհացն, որոց թագաւոր կարգեցան. Ապա երեքեան 'ի միասին յոտն կացին յաթոռոյն. և մատուցեալ 'ի գահոյս Անտոնիոսի, և 'ի ծունր իջեալ համբուրեցին զաջ նորա և զԿղէոպատրայ. Եւ կարգեցան նոցա սպասաւորք ըստ իւրաքանչիւր իշխանութ̃են պայմանի, և գունդք թիկնապահք յազնուականաց աշխարհին իւրեանց.

---

[1] Դշխոյն եգիպտացի յարբեցեալ զօրավարէն վարձ զեղխուԹեանցն զՀռոմէականն խնդրեաց զինքնակալուԹիւն, և խոստացաւ Անտոնիոս։ Փլոր․․․։ Դ. ԺԱ։

Եւ կանխեալ չու արար Անտոնիոս 'ի Հայաստան ընդդէմ Պարթևաց. և 'ի հասանել յեզր Երասխայ, լուեալ զհամբաւ չարեացն՝ զոր խորհէին 'ի վերայ նորա 'ի Հռոմ՝ զտեղի եառ, և ձեռնթափ եղև 'ի պատերազմէն. Եւ վաղվաղակի զօրահատոյց արարեալ՝ զԿանիդիոս վեշտասան լեգէոնօք արձակեաց 'ի կողմն յոնիական ծովուն, և ապա փութացեալ եկն եհաս առ նա յԵփեսոս, ուստի կարէր զդէմ ունել Կեսարու 'ի համարձակել մարտին՝ որպէս կասկածէրն.

Էր ընդ նմա և Կղէոպատրա, որ եղև իսկ 'ի կորուստ նորա. Խրատ տային նմա բարեկամքն արձակել զնա յԱղեքսանդրիա, մինչև ելք իրացն յայտնեսցին. այլ Կղէոպատրայ կասկածեալ՝ թէ գուցէ Անտոնիոս աղաչանօք Ոկտաւիայ հաշտեսցի ընդ Կեսարու, կաշառաբեկ արար զԿանիդիոս, և նա օգնական եղեալ նմա՝ խօսեցաւ ընդ Անտոնիոսի, թէ ոչ է արժան արձակել զԿղէոպատրա՝ որ զօրավիգն է քեզ, և ոչ խորհուրդ քաջ, զի 'ի մեկնել նորա վհատեսցին զօրք եգիպտացիք բազմութ̃ի նաւամարտիցդ. Դարձեալ և ոչ պակաս ինչ է Կղէոպատրայ իմաստութ̃ի և հանճար քան այլոց թագաւորաց և իշխանաց՝ որ պատերազմակից են քեզ. զի այս քանի ժամանակք են յորմէ հետէ վարէր նա զԵգիպտոս զաշխարհ մեծ, և բազում ժամանակս իսկ լեալ ընդ քեզ՝ ուսաւ յանձանձել իմաստութ̃բ և ճարտարութ̃բ զիրս կարևորս և դժուարինս. Եւ ոչ կարաց Անտոնիոս մերժել զաղերսն, որ հրապուրէր զանձնասիրութ̃ի նորա և զցանկութ̃ի.

Եւ չու արար յԵփեսոսէ Կղէոպատրաւ հանդերձ 'ի Սամոս, ուր էր զօրաժողով մեծի մասին զօրացն. և անդ պարապէին 'ի շուայտութե՟ և 'ի հեշտութե՟, ոչ ինչ նուազ շուայլեալ քան յԱղեքսանդրիա։ Եւ Թագաւորք՝ որք ընդ նոսա էին՝ վատնէին զա՟մ գանձս իւրեանց վասն հաճոյ լինելոյ նոցա, և յաւելլին կարի յոյժ զգեղխութիս կոչնոց նոցա։ ԱՄԱՌ. Ն.Բ.

Ընդ 'ի միում նուագին, որպէս կարծեմ, դիպաւ պատմեալն 'ի Պլինեայ։ Զի թէպէտ Կղէոպատրա սէր սաստիկ ցուցանէր առ Անտոնիոս, այլ նա խելամուտ գոլով կեղծաւոր բարուց նորա՝ զի յա՟մ անօրէնութիս ձեռնհաս էր, չգիտեմ յինչ պատճառանաց կասկած կալաւ զնմանէ՝ իբր թէ կամէր դեղակուր առնել զնա, և ոչ ինչ ուտէր՝ մինչ չև ուրուք զճաշակ առեալ։ Եւ Կղէոպատրայ զգացեալ զայն, զի և ոչ հնար էր յայտնի կասկածանացն ծածկել, նորաքանչ իմն հնարիւք փարատեաց զտարապարտ երկիւղ նորա, և եցոյց զի թէ արդարև կամէր մեղանչել նմա՝ ա՟մ զգուշութիք ընդունայն էին։ Պլին. խռ. Ֆ.

Զի ետ թունաւորել զծայրս ծաղկանց՝ որովք պսակեալ բազմէին 'ի սեղան ինքն և Անտոնիոս ըստ վաղնջուց սովորութե՟. և 'ի զուարթանալ կոչնոցն՝ իբրև ընդ գինիս մտին, հրաւիրեաց Կղէոպատրա զԱնտոնիոս զուրախութե՟ նուագն ծաղկամբք ըմպել։ Եւ ոչ ընդդէմ դարձաւ Անտոնիոս. այլ կորզեալ մատամբք 'ի ծայրից ծաղկանց պսակին, արկ 'ի բաժակն լի գինեաւ. և իբրև կամէր ըմպել՝ արգել Կղէոպատրա զձեռն նորա, և ասէ. Ահա դեղատուն՝ յորմէ այնքան զգուշանայիր. եթէ մարթ էր ինձ կեալ առանց քոյ, տես զի դէպք և հնարք չպակասէին ինձ։ Եւ ետ ածել զոք մահապարտ, և արբուցանել նմա զբաժակն. և մեռաւ անդէն մահապարտն։

Եւ 'ի Սամոսէ չու արարին յԱթէնս. և եղեն անդ աւուրս բազումս դարձեալ 'ի նոյն զեղխութիս։ Ոչ ինչ խնայեաց անդ Կղէոպատրա առ 'ի հաճոյ լինել և մեծարոյ առաջի աթենացւոց, որպէս լեալ էր Ոկտաւիա զա՟մ ժամանակս՝ զորս եկաց յԱթէնս. այլ ա՟մ ջանք նորա ընդունայն եղեն, և վեր 'ի վերոյ մեծարեցաւ. զի հրեշտակս ևեթ 'ի ստիպելոյ Անտոնիոսի յղեցին առ նա աթենացիք, և առաջնորդ նոցա եկաց ինքն Անտոնիոս՝ զքաղաքացւոց պատիւ առեալ։

Կայիոս Սոսիոս և Դոմետիոս Ահենոբարբոս՝ նոր ընդեաշխք՝ համարձակ կուսակից լեալ Անտոնիոսի, չու արարեալ 'ի Հռոմայ չոքան առ նա։ Իսկ Կեսար ոչ ար- 3972. 32 Պլու. յԱնտոն. 912.

գել զնոսա, և ոչ զհետ եղև նոցա, այլ համբաւեաց հրամանաւ իւրով երթեալ զնոսա առ Անտոնիոս. և հրաման ետ ամենեցուն հրապարակաւ, զի ո՛ր ո՛ք յո՛ր կողմն և կամիցի՝ ընդ նմա միաբանեսցէ։ Եւ այսպէս տիրապետեաց ՚ի Հռոմ. և որ ինչ օգուտ թուէր նմա ընդդէմ Անտոնիոսի՝ հրամայէր և առնէր։

Իրազեկ լեալ Անտոնեայ, ժողովեաց զա՟մ զօրագլուխս ՚ի խորհուրդ. և հաստատեցաւ՝ ազդ առնել պատերազմ ընդդէմ Կեսարու, և արձակել զՕկտաւիա ՚ի կնու՟է. և արար այնպէս։ Եւ այնպէս կազմ և պատրաստ էր ՚ի պատերազմ, զի եթէ ոչ դանդաղէր դիմել ՚ի վերայ Կեսարու՝ ունէր անշուշտ զյաղթութի՟. զի չև ևս թշնամին կազմեալ էր ընդդէմ նորա, ոչ ընդ ծով և ոչ ընդ ցամաք։ Բայց հրապոյրք հեշտութե՟ յաղթեցին, և յապաղեաց զգործ պատերազմին զամ մի ՚ի կորուստ իւր. զի ժամ առեալ Կեսար կազմեալ պատրաստեցաւ ամենայն զօրութեամբ։

Հրեշտակացն, որք եկին ՚ի Հռոմ՝ ածել զապահարզանն Օկտաւիայ, պատուէր առեալ էր յԱնտոնիոսէ՝ հրաման տալ նմա ելանել ՚ի տանէ որդւովքն հանդերձ. իսկ յանսաստել նորա՝ հալածել զնա, և զծնեալն ևեթ ՚ի Փուլուիայ կնոջէն զորդի իւր թողուլ ՚ի տան։ Յոյժ դառն էին Օկտաւիայ նախատինքս այս առթեալ ՚ի նախանձորդէն. այլ նորա նահանջեալ զսրտմտութի՟ն՝ խօսեցաւ ընդ հրեշտակսն արտասուօք, և հնազանդեալ անօրէն հրամանին՝ ել ՚ի տանէն որդւովքն։ Եւ զամբոխն՝ որ եկեալ խառնէին ՚ի վրէժխնդրութի՟՝ ցածուցանէր, և աղօթէր զԿեսար. խօսէր ընդ նոսա և ասէր. Ոչ արժան ոչ պատեհ է փառաց հռոմէականի չնչին վէճդ այդ. կանանց է այդ կագ, և դժպատեհ հռոմայեցւոյ ՚ի վրէժխնդրու՟ե։ Տրտմութի՟ է ինձ յոյժ՝ պատճառք գոլ մարտի, որ առ ՚ի հաշտեցուցանել զԱնտոնիոս ընդ Կեսարու եղէ նմա կնու՟ե։ Բայց աղերսանացն ընդդէմն պատահեցին. զի ժողովուրդն, զարմացեալ ընդ առաքինու՟ի նորա, յաւել կարեկից լինել նմա և ատել զԱնտոնիոս։ Մանաւանդ վասն կտակին՝ որ Եստեայ կուսանացն էր աւանդեալ ՚ի ծածուկ, բայց Տիտիոս և Պղանկոս՝ երբեմն բդեաշխք՝ յայտնեցին զայն։ Զի նոքա տաղտկացեալ յամբարտաւանու՟է Կղէոպատրայ և ՚ի մեղկու՟է Անտոնիոսի՝ եկին առ Կեսար. և զի վկայք էին կտակին, և գիտէին զգաղտնիսն, պատմեցին զա՟մ Կեսարու։ Բայց Եստեանք ոչ յանձն առին տալ զգիր կտակին վասն աւանդապահ զգուշութե̃ օրինաց, առանց ստիպելոյ 'ի ժողովրդենէ. Ապա ածին զայն 'ի մեծ հրապարակն, ուր ամ̃ ժողովուրդն եկեալ էր, և ընթերցան առաջին նոցա զայս երիս պրակս. նախ՝ զի Անտոնիոս յայտ առնէր զԿեսարիոն որդի հարազատ Յուլիոսի Կեսարու. երկրորդ՝ զի կացուցանէր ժառանգ զորդիս իւր զծնեալս 'ի Կղէոպատրայ, և կոչէր զնոսա արքայից արքայս. և երրորդ՝ պատուիրէր, 'ի մեռանել իւրում 'ի Հռոմ՝ զդի իւր ածել հանդիսիւ ընդ քաղաքն, և ապա ընդ երեկս եդեալ 'ի մահիճս շքեղս՝ յղել առ Կղէոպատրա, որում զամ̃ հոգ յուղարկաւորութե̃ն և թաղման յանձն առնէր.

Ոմանք 'ի պատմագրաց զկտակս զայս կեղծեալ ասեն Կեսարու, վասն առաւել ատելի առնելոյ զԱնտոնիոս ժողովրդեան. Ոչ է զիա՞րդ որ քաջն գիտէր՝ թէ քանի վրէժխնդիր է ժողովուրդ Հռոմայ օրինաց և իրաւանց իւրոց, յանձն առնէր նմա զկտակն՝ յորում զայնոսիկ արհամարհեալ աղարտէր.

Իբրև պատրաստեաց Կեսար բանակ և նաւատորմ հզօր ընդդէմ թշնամւոյն, ազդ արար և ինքն պատերազմ. Բայց 'ի հրովարտակի ժողովրդեանն ետ դնել ընդդէմ Կղէոպատրայ զպատերազմն, և ոչ ընդդէմ Անտոնիոսի, թէպէտ և 'ի վերայ նորա գումարէր. Եւ խորագէտ քաղաքավարութբ̃ զայս այսպէս արար, ոչ կամելով կշտամբել զնա որպէս զպատերազմող ընդդէմ հայրենեաց, և գրգռել զկուսակիցս նորա՝ որ բազումք էին և հզօրք և ահաւորք. զի եթէ զԱնտոնիոս յանուանէ դնէր 'ի հրովարտակին, ամենեքին նոքա թշնամիք աշխարհին յանդիմանէին.

Անտոնիոս դարձաւ յԱթենայ 'ի Սամոս, ուր տորմիղ նաւացն ժողովեալ էր. որ էին հինգ հարիւր նաւք պատերազմիկք յաղթք ամրակառոյցք և բազմայարկք, և աշտարակք բարձրաբերձք յառաջս և 'ի խելս նոցա, որովք շինուածք հոյակապք 'ի մէջ ալեաց, կամ որպէս կղզիք ծովածուփք երևէին. Այլ առանց բազմութեան նաւաստեաց ոչ վարէին ծանրադանդաղ մեքենայքն. իսկ Անտոնիոս առ 'ի չգոյէ նոցա՝ ժողովեալ ելից 'ի նաւս արս հողագործս, կրպակաւորս, ջորեպանս, և խառն 'ի խուռն յամ̃ կարգաց անհմուտս, աղմկարարս մանաւանդ, և ոչ 'ի գործ արքանեկութեան նաւացն պիտանիս. Իսկ զօրք յամ̃ բազմութե̃ նաւացն էին քսան բիւրք հետևակաց և երկոտասան հազար հեծեալք. և արքայք Լիբէից, Կիլիկիոյ, Կապադովկիոյ, Պափլագոնիոյ և

ԱՄ.ԱՇ. Ն.Ք Կոմագենացն և Թրակացւոց էին անդ. և թագաւորք Պոնտոսի, Հրէաստանի, Լիկայոնիոյ, Գաղատիոյ և Մարաց զօրավիգն էին զօրօք.

Բայց վայելուչ էր տեսիլ չուոյ բազմութե̃ նաւացն 'ի պարզել նոցա զառագաստս. Այլ պերճութե̃ նաւուն Կղէոպատրայ ոչ գոյր ինչ հանգոյն. զի ոսկեհուռ փողփողէր, ծիրանածաւալ առագաստիւն խորշս առեալ, և բազմաճեմուկ դրօշուցն ծածանեալ 'ի հողմոց. և փողք 'ի նմա և այլ պատերազմական նուագաց գործիք հնչէին երգս ուրախութե̃ և յաղթական նուագս. Զհետ գայր Անտոնիոս ոչ ինչ նուազ զարդարեալ նաւաւ։ Իսկ դշխոյն[1] արբեցեալ բարեբաստուք̃ և մեծուք̃, և զառանցեալ փառամոլուք̃, յանդուգն սպառնայր աւերել ընդ հուպ զԿապիտոլ, և պատրաստէր անարգ գնդաւ ներքինեացն զհռոմէական պետութի̃ն կործանել անկանգնելի. Իսկ թշնամեացն չուք սակաւ, և զօրութի̃ բազում էր. Զի էին Կեսարու երկերիւր և յիսուն նաւք, և զօրք ութ բիւր հետեւակք, և հեծեալք հաւասար թշնամեացն. Բայց ամ̃ զօրքն նորա էին ընտիրք, և նաւաստիք հմուտք. և նաւք նորա ոչ իբրեւ զթշնամեացն մեծամեծք էին, բայց թեթեւուք̃ն աջողակք 'ի մարտ. և զօրաժողով զօրաց նորա էր 'ի Բրունդուս. Եւ եկն եհաս Անտոնիոս մինչև 'ի Կորկիւրա. բայց զի ժամանակն էր անագան, և զի ձմեռն ևս 'ի վերայ կայր, երկուստեք նահանջեալ՝ արձակեցին զզօրսն 'ի ձմերոցս, և զնաւս յապահով նաւահանգիստս, մ̃ալ գարնայնոյ.

3973. 31. Եւ ընդ հասանել գարնայնոյն, չու արարին ընդ ծով և ընդ ցամաք. և մտին տորմիղքն երկոքեան 'ի ծոց Ամբրակեայ յԵպիրոս. Բայց և հմուտք 'ի զօրագլխացն Անտոնիոսի խրատ տային՝ մի խիզախել 'ի նաւամարտ, այլ զԿղէոպատրա արձակեալ յԵգիպտոս՝ հասանել 'ի Թրակիա կամ 'ի Մակեդոնիա, և պատերազմել ընդ ցամաք. զի առէին թէ երկրախումբ զօրքդ՝ ընտիրք և բազում յոյժ քան զթշնամիս՝ տան զառհաւատչեայ յաղթութե̃. իսկ նաւատորմդ, թէպէտ և բազմահոյլ, այլ նաւաստեացն անհմտուք̃ կասկածելի է. Բայց Անտոնիոս

---

[1] Չէր երբեմն 'ի ճահ զկեկուբեան բաժակ
'Ի հին մթերոց ածել 'ի ճաշակ,
Մինչ վայրենացեալ դշխոյն պատրաստէր
Սուգ Կապիտոլին և Հռոմայ աւեր,
Փիծ և ժանտ նախրաւն յանդգնեալ անսաստ,
Յաջողակ բաղդին արբեցեալ 'ի բաստ։

Հորատ. Տաղերգ. ա. լէ. 5.

'ի բազմաց հետէ անլուր էր խրատուց բարեաց, զհաճոյս եւեթ Կղէոպատրայ առնելով։ Իսկ գոռոզ դշխոյն, որ ըստ աչս դատէր զա՟մ, համարէր անպարտելի զնաւատորմ իւր, եւ որպէս թէ չկարիցեն նաւք թշնամեաց մատչել 'ի նոսա անխորտակելի․ եւ զի դարձեալ 'ի ձախողել մարտին՝ դիւրաւ զերծանէր ընդ ծով քան ընդ ցամաք, զօրացաւ խորհուրդ նորա քան զա՟մ զօրավարացն։

Յամսեանն Սեպտեմբերի, որ օր երկրորդ էր ամսոյն, եղեւ նաւամարտ 'ի մուտս Ամբրակեայ ծոցոյն՝ մերձ յԱկտիոն քաղաք յանդիման երկուց բանակացն, որ աստի եւ անտի 'ի հիւսիսոյ եւ 'ի հարաւոյ կրձին ճակատեալ կային 'ի զնին մարտին։ Եւ մնայր մարտն յերկոցունց կողմանց անպարտելի, եւ երկոցունցն իսկ յաջողէր մինչեւ ցմեկնել Կղէոպատրայ։ Զի նա զարհուրեալ յաղմկէ մարտին, յորում ա՟մ ինչ յաւելուին արհաւիրս կնոջ, փախեաւ ինքնահալած․ եւ ա՟մ գունդն նորա եգիպտացի՝ նաւք վաթսուն բարձրակողք՝ խոյս ետուն ընդ նմա, առագաստ ձգտեալ ընդ Պելոպոնէս։ Տեսեալ զնա Անտոնիոսի՝ զի գնայր փախստեայ, մոռացաւ զանձն եւ զա՟մ ինչ, եւ փութացաւ զհետ նորա, թողեալ Կեսարու զյաղթութ՟ին՝ վասն որոյ ցայն վայր պատերազմէրն։ Այլ եւ ոչ յայնժամ դիւրաւ յաղթեաց Կեսար․ զի տակաւին նաւք Անտոնիոսի այնու քաջութ՟ մարտնչէին, զի զմիջաւուրբ սկսեալ պատերազմ՟ն՝ գիշերայն կատարէր, եւ զօրք Կեսարու զայն գիշեր 'ի նաւս դադարէին։

'Ի վաղիւ անդր Կեսար յետ կատարելոյ զյաղթութ՟ին՝ զօրահատոյց արար զհետ Անտոնիոսի եւ Կղէոպատրայ․ այլ երթելոցն յուսահատեալ հասանել նոցա, զի հեռի էին յոյժ, դարձան 'ի նաւատորմիղն։ Անտոնիոս 'ի պարառաջ նաւին՝ յորում էր Կղէոպատրա՝ անցեալ նստէր յառաջակողմ՟ն, արմունկ 'ի ծունկս, եւ ձեռս յերեսս, կորացեալ յամօթոյ եւ 'ի տրտմութ՟է, յիշելով դառն տխրութ՟ զանօրէնութ՟իւն, եւ զոր նոքօք յանձն ձգեաց զթշուառութ՟իւն։ Եւ յայնմ տխրութ՟ այնպէս զաւուրս երիս կացեալ՝ մինչեւ հասին 'ի Տենար[1], ոչ ետես եւ ոչ խօսեցաւ ընդ Կղէոպատրայ․ ապա յետ երից աւուրցն եկին առ միմեանս, եւ որպէս հանապազն կային 'ի միասին։

Բայց Անտոնեայ ցամաքային զօրք դեռեւս ամբողջ կային, լեգէոնք ութեւտասն, եւ քսանեւերկու հազար հեծեալք, ընդ Կանիդեաւ զօրավարաւ․ եւ մարթէր նոքօք

---

[1] Հրուանդան 'ի Լակոնիա։

ԱՄ ԱՇ. ՆՔ. զդէմ ունել Կեսարու, և նեղութի̃ բազում հասուցանել նմա։ Բայց զօրագլուխք զօրացն թողին զնոսա, և զօրքն անձնատուր եղեն 'ի Կեսար, որ թևատարած ընկալաւ զնոսա։

Իսկ Կղէոպատրայ մեկնեալ 'ի Տենարայ, երթայր յԱղէքսանդրիա. և Անտոնիոս 'ի Լիբիա, ուր զօրս բազումս թողեալ էր՝ պահել զելս սահմանացն։ Եւ իբրև էջ անդր 'ի նաւէ, և գիտաց զի Սկարպոս զօրավար նոցա է ընդ Կեսարու, 'ի խոր խոցեալ յանակնկալ չարեացն՝ կամէր գնալ զիւրովին, և հազիւ արգելին զնա բարեկամքն։ Եւ ոչ գոյր նմա ապաստան, բայց երթալ զհետ Կղէոպատրայ յԱղէքսանդրիա, ուր նա ինքն հասեալ էր։ Բայց Կղէոպատրայ 'ի մտել 'ի նաւահանգիստ անդր՝ կասկածեալ թէ գուցէ ոչ ընկալցին զնա աղէքսանդրացիք վասն պարտուե̃ն, հրամայեաց պսակազարդ զնաւսն յօրինել 'ի նշան յաղթուե̃։ Եւ 'ի մտանելն 'ի քաղաքն՝ ետ սպանանել զա̃մ մեծամեծս աշխարհին, զորոց կասկածէրն՝ թէ գուցէ ապստամբեսցեն 'ի յայտնել պարտութե̃ նորա։ Արդ մինչ դեռ նա զպանուի̃ն առնէր, եհաս առ նա Անտոնիոս։

3974. 30 Խորհեցաւ ապա նոր իմ̃ն տարակարծ հնարս առ 'ի խուսել 'ի ձեռաց Կեսարու, քանզի գիտէր թէ հասցէ նա զհետ իւր յԵգիպտոս։ Խորհուրդ կալաւ փոխել զնաւս իւր 'ի միջերկրականէն 'ի Կարմիր ծով ընդ նեղուցն՝ որոյ լայնուե̃ էր վեց հարիւր ասպարէզ, և բառնալ զա̃մ գանձս իւր 'ի նոսա, և յայլ նաւս՝ որ էին նմա անդ։ Բայց արաբացիք բնակեալք 'ի ծովեզրն հրձիգ արարին զա̃մ նաւս նորա՝ որ էին 'ի ծով̃ն Կարմիր, և խափանեցին զխորհուրդ նորա։ Եւ շրջեալ զխորհուրդն՝ եդ 'ի մտի յինքն յանկուցանել զյաղթողն, և մատնել 'ի ձեռս նորա զԱնտոնիոս՝ յորմէ թշուառուե̃ք ցրտացուցին զսէր նորա։ Այսպիսի ոք էր Կղէոպատրա. զմոլեգին տռփում̃ն նորա ընկձէր փառամոլուե̃. և զթագաւորուե̃ քան զամուսինն լաւ համարեալ, խորհէր զկեանս նորա ընդ այնմ փոխանակել. Այլ առաջի նորա կեղծաւորեալ, հաւանեցոյց նմա հրեշտակս արձակել առ Կեսար՝ խօսել 'ի խաղաղուե̃. և յաւել ընդ հրեշտակս նորա զիւրսն, պատուէր տուեալ նոցա ուրոյն յերեսաց իւրոց պատգամաւորել։

Եկեալ հրեշտակացն Անտոնեայ, և ոչ զերեսս տեսին Կեսարու. իսկ դշխոյին հրեշտակքն պատգամս հաճոյս դարձուցին։ Զի ցանկայր յոյժ Կեսար զեռամբ ածել զնա 'ի շուք յաղթանակին, և զգանձս նորա 'ի հատուցումն պարտուցն 'ի ծախս պատերազմին ։ Նմին իբր յոյս մեծ առաջի դնէր՝ եթէ տացէ զԱնտոնիոս 'ի ձեռս իւր ։

Բայց Անտոնիոս յետ դարձին 'ի Լիբիոյ, խոյս տուեալ բնակէր յամարաստան ապարանսն՝ զոր առ Նեղոս գետով կառոյց, և անդ կենցաղէր ընդ երկոսին բարեկամս իւր՝ որք եկին զհետ նորա ։ Թուէր 'ի միայնութեան անդ մտադիւրութիւն լսել զխրատս հանճարեղս զերկուց իմաստասիրացն ․ այլ ոչ կարացին նոքա խլել 'ի սրտէ նորա զսէր Կղէոպատրայ՝ զպատճառ ամենայն չարեացն, և վայրիկ մի դադարեալ ախտն՝ անդրէն բռնակալեաց ։ Եւ դարձեալ Անտոնիոս յԱղեքսանդրիա, ետ զանձն անդրէն 'ի հրապոյրս և յողողանս Կղէոպատրայ ․ և ըստ հաճոյից նորա հրեշտակս արար միւսանգամ առ Կեսար՝ խնդրել 'ի նմանէ զկեանս, յանձն առեալ զվատութիւն՝ կեալ յԱթէնս իբրև զմի ոք յամբոխէն, միայն զի զթագաւորութիւն Եգիպտոսի թողցէ 'ի Կղէոպատրա և յորդիս նորա ։ Եւ իբրև դարձեալ մերժեաց Կեսար զհրեշտակս նորա, այնուհետև Անտոնիոս արհամարհեալ զչարիս՝ յոր անկեալ դնէր, և զերկիւղ առաջիկայիցն, թողու 'ի սպառ 'ի շուայտութիւն և 'ի հեշտութիւնս ․ և փոխանակաւ զմիմեանս հրաւիրէին հանապազօր 'ի կոչունս, մեծածախս 'ի նախանձ իրերաց պատրաստեալ սեղանս՝ վատնելով զգանձս ։ Բայց Կղէոպատրայ նախատես լեալ հանդերձելոց չարեաց՝ պատրաստէր ազգի ազգի դեղս թունաւորս, և փորձէր զոյժ և զզօրութիւն նոցա 'ի բանտարգելս մահապարտս, թէ իւ դիւրագոյն մեռանիցի ։ Եւ զփորձ առեալ գիտաց՝ զի հզօրագոյնք վաղ սպանանէին, այլ դժնդակ ցաւովք ․ իսկ մեղմագոյնք հանդարտեամբ, այլ յամր ։ Եւ զխածուածս ևս թունաւոր կենդանեաց փորձեալ, զազգս ազգս օձից հրամանն տայր արկանել 'ի վերայ մահապարտաց առաջի իւր ։ Եւ 'ի բազում փորձոյ ուսաւ, զի քարբին խածուած ոչ 'ի վերայ ածէր ցնցումն և պրկումն, և ոչ խիթս, այլ նիրհ և թմբրութիւն, և դոյզն ինչ քիրտն 'ի դէմս և անզգայութիւն, և առանց ցաւոց սպանանէր ․ և հարեալքն 'ի նմանէ դժուարարթունք և անյարիրք որպէս զխոր քնով անկեալ դնէին ։ Զայս դեղ մահացու ընտրեաց Կղէոպատրա ։

Բայց 'ի փարատել զկասկած և զտրտմութիւն Անտոնիոսի, առաւել ևս յայնժամ փայփայէր զնա ․ զի և զօր ծննդեան իւրոյ ըստ հարկի ժամանակին ոչ տօնախմբեալ, զնորայն շքով մեծաւ կատարեաց՝ առաւել քան զա՟մ նուագս շռայլեալ․ որպէս զի բազումք 'ի կոչնականացն աղքատք, մեծատունք 'ի խնջոյիցն մեկնեցան ։

Իսկ Կեսար կարեւոր համարեալ անթերի առնել ըզյաղթութի՟ն, ընդ հասանել գարնայնոյն՝ անց յԱսորիս, և եկն եկաց յանդիման Պեղուսեայ ։ Խօսեցաւ ընդ քաղաքին բանալ նմա զդրունս․ և Սելեւկոս՝ որ անդ 'ի Կղէոպատրայ վերակացու կայր, պատուէր 'ի նմանէ 'ի ծածուկ ընկալեալ՝ ետ զքաղաքն առանց պաշարելոյ ։ Նա 'ի համբաւել մատնութե՟ն ընդ քաղաքն, Կղէոպատրա՝ առ 'ի քերել յանձնէ զխասմն՝ մատնեաց 'ի ձեռս Անտոնիոսի զկին և զորդիս Սելեւկեայ, սպանանել զնոսա 'ի վրէժ մատնութե՟ն ։ Հրէշ այլանդակ, և դժնէագոյն անօրէնութի՟ք կցորդեալ 'ի նմա, լրբութի՟ առանց ա՟մ ամօթոյ, նենգութի՟, անիրաւութի՟, անգթութի՟, և լրու՟մն ա՟մ չարեացն՝ կեղծաւոր բարեկամութի՟, որով զգուէրն և փայփայէր սիրատարփ զոր թշնամւոյն մատնելոց էր ։ Յայս վայր մղեալ զառածեցոյց զնա փառամոլութիւն, բռնագոյն քան զա՟մ՝ ախտս նորա ։

Առ մեհենին Իսեայ կառուցեալ էր նորա շիրիմս և դամբարանս գերապանծս գեղով և ճոխութե՟ և հոյակապ բարձրութե՟ ։ Նա անդր հրամայեաց ածել զա՟մ կահ ցանկալի զոսկի և զարծաթ, զականս պատուականս, զոպնիազ, զփղոսկր, զխունկս և զազգի ազգի փայտս անուշահոտս, որպէս խարոյկ պատրաստեալ իւր յայրու՟մն, ա՟մ գանձիւքն հանդերձ ։ Վասն որոյ Կեսար յոյժ երկուցեալ՝ թէ գուցէ առ յուսահատութե՟ն յաճիւն դարձուսցէ զա՟մ, ստէպ պատգամաւորօք յուսացուցանէր զնա 'ի քաղցրութի՟ և 'ի մարդասիրութի՟, և դայր մերձենայր շտապաւ 'ի քաղաքն ։ Նա հասեալ բանակեցաւ 'ի Ձիընթացսն, տիրել վաղվաղակի քաղաքին համախոհութե՟ Կղէոպատրայ՝ յոր առաւել յուսայր քան 'ի բանակ իւր ։

Իսկ Անտոնիոս ոչ ինչ կասկածեալ զդաւոյն, և ոչ ունկն դնելով այնոցիկ՝ որ գուշակն լինէին, կազմէր 'ի հզօր դիմամարտ ։ Նա սաստիկ յարձակմամբ զպաշարողսն հարեալ, և զհեծելագունդն՝ որ ընդդէմ նորա դայր՝ հալածեալ մինչև 'ի բանակետղն, դարձաւ յաղթութե՟ 'ի քաղաքն ։ Նա էր այն օրհասական զօրութե՟ն ճիգն, որով սպառեցաւ ա՟մ ոյժ նորա և ցանկութի՟ փառաց յայնմ արութե՟ն ։ Զի յետ այնորիկ փոխանակ յօգուտ արկանելոյ զյաղթութի՟ն, և փութով պնդութե՟

'ի պահ անձին զգուշանալոյ 'ի Կղէոպատրայ՝ որ մատնէրն զնա, նա սպառազէն եկն անկաւ առ ոտս նորա, և զձեռսն համբուրէր. և հնչէին նոյնհետայն արքունիքն ձայնիւ ցնծութեան, զի լուծաւ պաշարումն քաղաքին. և Կղէոպատրա առ 'ի զբաղեցուցանել զնա՝ յոր միայն ջանայր, ետ պատրաստել ընթրիս ամենայն առատութեամբ. և կատարեցին 'ի միասին զայն տիւ և զկէս գիշերոյն ։

'Ի վաղիւ անդր խորհեցաւ Անտոնիոս դիմել 'ի վերայ Կեսարու ընդ ծով և ընդ ցամաք, և ճակատեցոյց զզօրս իւր 'ի բարձունս քաղաքին, և անտի դիտէր զնաւատորմին՝ որ դիմեալ գնայր 'ի նաւահանգստէն 'ի վերայ նաւացն Կեսարու, և կացեալ միտ դնէր ելից մարտին ։ Այլ իբրև ետես զպարառաջ նաւուն Կղէոպատրայ խոնարհեալ զդրօշն 'ի մօտելն առ Կեսար, և զնաւատորմին նուաճելն 'ի նա, կարկեալ եկաց ։ Իսկ զգաստացեալ խելամուտ լինէր անագան խրատուց բարեկամացն յաղագս նենգութեան դշխոյին ։ Իսկ յանհնարին վտանգին խորհեցեալ նորանշան քաջութեամբ առնել անուն մեծ, ձայն տայր Կեսարու 'ի մենամարտ ։ Այլ նա պատասխանի ետ . զի թէ 'ի կենաց տաղտկացեալ է, մարթի և այլազգ մեռանել նմա ։ Իսկ Անտոնիոս ծաղր լեալ 'ի նմանէ և մատնեալ 'ի Կղէոպատրայ՝ եմուտ անդրէն 'ի քաղաքն, և անդ թօթափեցան 'ի նմանէ հեծեալք . և ինքն լի կատաղութեամբ յուսահատեալ դիմեաց յարքունիսն, առ վրէժ քինու սպանանել զԿղէոպատրա, այլ ոչ եգիտ զնա ։ Զի խորամանկ դշխոյին յառաջագոյն գուշակութեամբ ամրացեալ էր յերեսաց սրտմտութեան նորա, խոյս տուեալ 'ի շիրիմս թագաւորացն եգիպտացւոց՝ որ հզօր պարսպօք շուրջ պատեալ էին, և զդրունսն ետ ամրափակել. և հասոյց լուր առ Անտոնիոս՝ թէ Կղէոպատրայ լաւ համարեալ զմահ պատուական քան զամօթալի գերութիւն, չոքաւ զիւրովին 'ի շիրիմս հարց իւրոց, թաղել անդ ընդ նոսա ։ Իսկ նորա դիւրահաւան լեալ, և ոչ ինչ հոգացեալ ստուգել զհամբաւն՝ ընդ որ պարտ էր նմա կասկածել յետ յայտնելոյ նենգութեան դշխոյին, և յիշատակաւ մահու նորա 'ի մոլեգին սրտմտութենէն յեղեալ 'ի խոր տրտմութիւն, կամէր մեռանել զհետ նորա ։ Իսկ մտեալ կատաղաբար 'ի սենեակ իւր ընդ միում 'ի ստրկացն, մերկացաւ զզրահսն, և հրամայեաց ձգել զդաշոյն 'ի կող իւր ։ Այլ հաւատարիմ տիրասէր և տիրամեծար ստրկին յանձն ձգեալ զսուրն, անկաւ առ ոտս նորա մեռեալ ։ Զայն իբրև ետես Անտոնիոս, յաւել 'ի խրախոյս . եդ սուսեր ընդ պորտով, և անկաւ յերկիր 'ի նախճիր արեան իւրոյ և գերւոյն : Եւ ահա եհաս մի ոմն 'ի սպայից Կղէոպատրայ, գայր ազդ առնել նմա՝ զի դեռ ևս Կղէոպատրա կենդանի էր : Նա 'ի լսել զանուն Կղէոպատրայ՝ ոգի էառ . և իբրև գիտաց զի Կղէոպատրա կենդանի է, թոյլ ետ պատել զվէրսն, և հրամայեաց ածել զինքն յամուրն՝ ուր էր նա պատսպարեալ : Եւ չէառ նա յանձն բանալ ըզդրունսն առ 'ի մուծանել զնա, քանզի երկեաւ՝ թէ գուցէ դաւ ինչ գործեսցեն . այլ ել 'ի պատուհանն, և արկ շղթայս և պարանս 'ի բարձանցն, և կապեցին զԱնտոնիոս, և ձգէր զնա 'ի վեր Կղէոպատրա ընդ երկուս նաժիշտսն՝ զորս միայն ածեալ էր ընդ իւր 'ի շիրիմսն : Անդ էր տեսանել ողորմ տեսիլ . զի Անտոնիոս արիւնաշաղախ կախեալ ընդ օդս, և մածեալ մահ 'ի դէմս նորա, դարձուցանէր զառկայծեալ աչս իւր 'ի Կղէոպատրա, և ըզթուլացեալ բազուկսն տարածանէր իբր պաղատելով ժողովել զշունչս յետին . և Կղէոպատրայ կարկառեալ ընդ պատուհանն, և ձգտեալ ձեռօք ձգէր ուժգին զպարանն . և որք 'ի վայրն կային, ոչ կարացեալ օգնել նմա՝ ձայնիւ մեծաւ խրախոյս տային :

Եւ ձգեալ զնա առ ինքն կողմնեցոյց, և պատառէր զհանդերձս իւր, բաղխէր զկուրծս և ցտէր, և անկեալ 'ի վերայ երեսաց նորա՝ ջնջէր երեսօք իւրովք զարիւնն, և տէր իւր կոչէր զնա և թագաւոր և փեսայ տարփալի . և 'ի կոծելն կականաւ՝ փոքրէր զհերս նորա, որով հեթանոսք նանրահաւատք համարէին դիւրել զվիշտս բռնամահ վախճանելոցն : Անտոնիոս իբրև անձին զգաց, տեսանելով զգութ և զսէր Կղէոպատրայ՝ սփոփեաց զնա, և ասէ . Բարեբաղդ 'ի գիրկս քո մեռանիմ, և ոչ ամօթ համարիմ զպարտուն̃ . զի ոչ է վատուն̃ հռոմայեցւոյ 'ի համազգւոյն յաղթել : Եւ ապա խրատ ետ նմա ապրեցուցանել զանձն և զաշխարհ իւր առանց վատութե̃, և զգոյշ լինել 'ի նենգութենէ իւրոցն, և 'ի հռոմայեցւոց սպասաւորացն Կեսարու, բայց միայն 'ի Պրոկուլէոս վստահ լինել : Եւ վախճանեալ զբանս իւր մեռաւ :

Յայնմ վայրի և Պրոկուլէոս եհաս, առաքեալ 'ի Կեսարէ . և 'ի լուր աղէտիցն՝ զոր պատմէին նմա, և 'ի տեսիլ արիւնաներկ սուսերին՝ զոր ցուցին, ոչ կարաց բռնանել զարտասուս : Պատուէր տուեալ էր նմա հնարել՝ կենդանւոյն ունել զԿղէոպատրա . այլ Կղէոպատրա չէառ յանձն անձնատուր լինել, և ոչ 'ի ներքս թոյլ ետ նմա մտանել, այլ մատուցեալ խօսէր ընդ նմա ընդ հերձս ամրափակ դրանցն՝ յերկար զբանիւք անկեալ, և խնդրէր թողուլ զթագաւորութի՟ն որդւոց իւրոց. և Պրոկուլէոս յուսացուցանէր զնա, և յորդորէր զա՟մ որ ինչ և խնդրէրն՝ յանձն առնել 'ի Կեսար։ Եւ զել և զմուտ ամրոցն դիտեալ, դարձաւ առ Կեսար՝ պատմել նմա զա՟մ. և Կեսար նոյնհետայն առաքեաց զԳալլոս, խօսել դարձեալ ընդ Կղէոպատրայ։ Եւ մատեաւ Գալլոս 'ի դրունսն խօսել ընդ նմա հանգոյն Պրոկուլեայ. և պատճառանօք յերկարէր զզրոյցսն, մինչև Պրոկուլէոս յետոյ կողմանէ սանդուղս 'ի պարիսպն մատուցեալ՝ եմուտ 'ի ներքս ընդ պատուհանն ընդ որ զԱնտոնիոս 'ի վեր ձգեցին. և երկոքումբք սպայիւք՝ որ էին զհետ նորա՝ էջ 'ի դրունսն, ուր Կղէոպատրա խօսէր ընդ Գալլոսի։ Եւ մի 'ի նաժշտացն՝ որ ընդ նմա էին՝ տեսեալ զնա և յիմարեալ ահիւ, գոչէր զհետ Կղէոպատրայ. Եղո՛ւկ, մատնեցար 'ի ձեռս թշնամեաց։ Եւ Կղէոպատրայ յետ կոյս դարձեալ՝ իբրև ետես զՊրոկուլէոս, արկ զձեռն 'ի դաշոյն՝ զոր կրէր հանապազ ընդ մէջ, և կամէր երթալ զիւրովին։ Բայց Պրոկուլեայ աճապարեալ՝ կալաւ զնա 'ի մէջ բազկացն, և ասէ. Դարձո՛ զձեռն քո, մի՛ մեղանչեր անձին քում, և մի՛ Կեսարու՝ չթողացուցանելով նմա ըղդէպ ժամանակ հեզութե՟ և գթութե՟։ Եւ կորզեաց զդաշոյն 'ի ձեռաց նորա, և զհանդերձսն թօթափէր՝ թէ գուցէ մահացու ինչ դեղ ծածկեալ ունիցի։ Եւ յղեաց Կեսար զԵպափրոդիտ զմի յազատելոց ծառայից իւրոց, պատուէր տուեալ զգուշանալ ա՟մ խնամով՝ զի մի Կղէոպատրա անձին առնիցէ, և զա՟մ մեծարանս և զշնորհս ըստ ցանկութե՟ նորա առնել նմա. և Պրոկուլեայ պատուիրէր հարցանել ցնա թէ զի՞նչ խնդրեսցէ։ Եւ ինքն պատրաստեալ մտանել յԱղեքսանդրիա, զի ոչ ևս ոք կարէր ընդդիմանալ նմա, եկն եգիտ զդրունս քաղաքին 'ի բաց, և զժողովուրդն ահաբեկեալ 'ի վարանս երկիւղի և յուսոյ։ Եւ մտանէր 'ի քաղաքն խօսելով ընդ Արէոսի ումեմ՟ն իմաստասիրի՝ յեցեալ 'ի նա ընտանեբար, հրապարակացոյց զմեծարանսն առնելով։ Եւ եղեւ յարքունիս՝ ետ գահոյս արկանել, և բազմեցաւ յատենի. և հրամայեաց ժողովրդեանն յառնել, քանզի յերկիր խոնարհեալ կային առաջի նորա, և ասէ. Վասն Աղեքսանդրի մեծին՝ որ հիմնարկեաց զթագաւորութի՟դ, և վասն գեղեցիկ քաղաքիդ, և վասն Արէոսի քաղաքակցին ձերոյ քաջի առն և բազմագիտի, ներեալ լիցի ձեզ։

Իսկ Պրոկուլէոս կատարեաց զպատուէր հրամանին

Կեսարու. և ոչ ինչ խնդրէր Կղէոպատրա, բայց միայն յուղարկաւորել զԱնտոնիոս. և յանձն առ հաւանեցաւ Կեսար: Եւ Կղէոպատրայ մեծաւ շքով և ա՟մ առատութ՟բ եգիպտական օրինօք յուղարկաւորեալ զնա, ետ զմռսել զդի նորա արևելային ազնիւ խնկօք, և թաղեաց զնա 'ի շիրիմս թագաւորացն եգիպտացւոց:

Ոչ փութացաւ Կեսար այց առնել Կղէոպատրայ՝ մինչ դեռ 'ի սաստիկ սուգ համակեալ էր, այլ յապաղեալ մինչև 'ի դէպ ժամանակ, և հարցեալ իսկ զնա՝ ապա եկն առ նա, ծածկելով մեծարանօքն զխորհուրդս իւր: Եւ էր նա ընկողմանեալ յանկողնի անշուք և անպաճոյճ, զգեցեալ պարեգօտ լոկ: Եւ իբրև ետես զԿեսար՝ յարեաւ գնաց ընդ առաջ, և անկանէր յոտս նորա այլանդակ, գիսախռիւ, խուճապեալ դիմօք և արիւնառուշտ, կերկերեալ ձայնիւ, և սորեալ աչօք 'ի բազում լալեացն, և կուրծք նորա կապուտակեալ և վիրալից. այլ տակաւին առկայծէր բնաւորականն գեղ նորա, և կցորդ նմին սէգ խրոխտուի՟ն. և յայնմ թշուառութեան և 'ի խոր տրտմութ՟ն և 'ի վհատութ՟ն՝ ճառագայթք և փայլատակունք ի՟մն որպէս 'ի բալաձիգ ամպոց յաչաց նորա և 'ի բոլոր կերպարանացն ցոլանային: Եւ թէպէտ և էր կիսամեռ, այլ յուսայր ձգել 'ի սէր իւր զպատանեակն յաղթող, որպէս զՅուլիոս և զԱնտոնիոս: Էին 'ի սենեկի նորա կենդանագիր պատկերք բազումք Յուլիոսի. և ցուցեալ զնոսա Օկտաւեայ, ասէ. Ահա՝ որ ընկալան զքեզ իւր յորդեգիրս և 'ի յաջորդ յինքնակալութիւն Հռոմայ, և յորմէ եսն ընկալայ զթագաւորութ՟ի: Եւ հանեալ 'ի ծոցոյ իւրմէ զնամականին Յուլեայ՝ համբուրեաց, և ասէ. Ահա ցանկալի գրաւականք սիրոյ նորա: Եւ զգորովականսն 'ի նոցանէ ընթերցեալ, ողորմելի գեղձմամբք զհայեցուածսն մեղմեղէր: Այլ 'ի զուր ա՟մ հրապոյրքն եղեն. զի ոչ ևս որպէս յառոյգ մանկութ՟ն կախարդէր գեղոյն զտեսողս, և կամ զի փառասիրութ՟ի հզօրագոյն էր յՕկտաւիոս, և ոչ մեղկեցաւ 'ի տեսոյ և 'ի բանից նորա. այլ քաջալերեալ յուսացոյց զնա 'ի բարութ՟ի: Եւ Կղէոպատրայ գիտացեալ զանհրապոյր միտս նորա, գուշակեաց զչարիսն. բայց ծածկեալ զտրտմութ՟ն, և փոխեալ զբարբառ իւր, գոհանայր զնմանէ վասն մեծարանացն՝ զոր 'ի ձեռն Պրոկուլեայ արար ընդ իւր, և զոր անձամբ յաւել. և փոխարէն եթող 'ի նա մատգիւր զա՟մ գանձս թագաւորացն եգիպտացւոց, և տայր նմա զգիր համարոյ ա՟մ կահիցն և ականց պատուականաց և զա̃մ գանձուցն ։ Բայց Սելեւկոս մի 'ի գանձաւորաց նորա, որ անդ կայր, ամբաստանեաց զնմանէ՝ զի չյայտնէր զա̃մ, այլ զցանկալիս յընչիցն խորէր ։ Ընդ որ յոյժ սրտմտեալ Կղէոպատրայ, և կափահարեալ զնա, դարձաւ 'ի կեսար և ասէ ․ Արժա՞ն ինչ իցէ, զի մինչ դու այց առնես ինձ հիքիս 'ի սփոփումն, ծառայք իմ ամբաստան լիցին զինէն առաջի քո, զի զարդս ինչ կնոջականս առ իս կալայ, ոչ 'ի պաճուճանս հիքիս՝ այլ առ դոյզն ինչ նուէր քեռ քո Ոկտաւիայ, և Լիւիայ հարսին քում, որպէս զի աղերսանօք նոցա գթասցիս 'ի թշուառացեալս յիս ։

Եւ յոյժ ուրախ լինէր Կեսար ընդ բանս նորա, կարծեալ 'ի մտի՝ թէ երկիւղ մահուն տայր բարբառել նմա զայն ա̃մ ։ Եւ եթող 'ի նա զա̃մ զարդսն՝ զոր առ իւր պահեալ էր, առնել որ ինչ և կամիցի ․ և վստահացուցեալ զնա՝ առաւել քան զա̃մ ակնկալութ̃ի առնել ընդ նմա գութ և շնորհս, մեկնեցաւ 'ի նմանէ՝ որպէս թէ պատրեալ զնա ․ այլ ինքն 'ի նմանէ պատրեցաւ ։ Քանզի Կղէոպատրայ ոչ ինչ յերկուացեալ՝ զի 'ի շուք յաղթանակին պահէր զնա Կեսար, եդ 'ի մտի մահուամբ զերծանել 'ի ձաղանացն ։ Բայց պահ զգուշութ̃ե կայր 'ի վերայ նորա, և պահապանք իբրև 'ի պատիւ շրջէին ընդ նմա ուր և երթայր ․ և ժամանակն կարճէր, և մերձենայր դարձ Կեսարու ։ Եւ առ 'ի բառնալ զա̃մ կասկած, առաքեաց խնդրեաց 'ի նմանէ հրաման՝ երթալ զվերջին սպասն մատուցանել գամբանին Անտոնեայ, և հրաժարել 'ի նմանէ ։ Եւ հրաման ետ Կեսար ․ և երթեալ Կղէոպատրայ լայր 'ի վերայ գերեզմանի նորա, և որպէս ընդ կենդանւոյ խօսէր ընդ նմա, և խոստանայր տալ ընդ հուպ զտոյգ առհաւատչեայ սիրոյն ։ Եւ զայս ողբովք և հառաչանօք արարեալ, ապա ծաղկօք ետ սփռել զգերեզմանաւն, և դարձաւ 'ի սենեակ իւր ։ Եւ մտեալ 'ի բաղանիս, և 'ի բաղանեացն ելն 'ի սեղան, ճաշ մեծ հրամայեալ պատրաստել ։ Եւ յարուցեալ 'ի սեղանոյ՝ գրեաց թուղթ առ Կեսար ․ և հանեալ արտաքս զամենեան՝ եառ ընդ իւր զերկոսին նաժիշտսն միայն, և փակեալ զդուրս սենեկին՝ նստաւ 'ի բազմականին, և խընդրեաց զկողով թզոյն՝ զոր ուրումն 'ի գեղջկաց այն ինչ բերեալ էր ։ Եւ եդ զայն առ ինքն, և ընկողմանեալ յանկողինսն որպէս նիրհեալ, արկ զբազուկ իւր 'ի կողով թզոյն, և քարբ՝ 'ի նմա ծածկեալ՝ եհար զնա ․ և նոյնհետայն թոյնք 'ի սիրտն ծաւալեցան, և մեռաւ անշշունչ տուանց ցաւոց ։ Օ՜ի թէպէտ պահապանացն պատուէր տուեալ էր յուզել քննել զա՟մ, և ապա մուծանել, այլ մի 'ի հաւատարիմ ծառայից նորա 'ի շինականութ՟ե կերպարանս ծպտեալ, ճարտար կեղծաւորութ՟բ անկասկածելի արար զկողով պտղոյն՝ թէ գուցէ 'ի նմա խաբէութիւն, և թողլին մուծանել զայն 'ի ներքս. և ընդունայն եղև ա՟մ զգուշութ՟ի Կեսարու ։

Իսկ իբրև ընթերցաւ նա զթուղթն, գիտաց զխորհուրդ Կղէոպատրայ. քանզի խնդրէր հրաման տալ թաղել զնա առ Անտոնիոսի 'ի նոյն դամբան ։ Իսկ փութացեալ յղեաց զերկուս 'ի սպայիցն՝ ժամանել խափանել զնա. այլ 'ի զուր ճեպէին, և գտին զնա մեռեալ ։ Օ՜ի սեգ դշխոյն, և քան զսեգս սիգազգոյնն, չհանդուրժէր 'ի կառս յաղթողին լծել. և իբրև եդ 'ի մտի մեռանել, յես դժընդակմն եղև բաւական, և անկարեկիր անխռով աչօք հայէր 'ի քարբն՝ մինչ զմահացու թոյնմն հեղոյր նա յերակս իւր [1] ։

Իսկ մեռաւ Կղէոպատրա ամաց երեսուն և ինուց, թագաւորեալ զամս քսան և երկու յետ մեռանելոյ հօր իւրոյ ։ Իսկ 'ի կործանել անդրեացն Անտոնիոսի, Կղէոպատրայ անդրիքն կանգուն պահեցան. զի Արքիբիոս, որ 'ի ծառայութ՟ե նորա լեալ էր, մատոյց Կեսարու հազար քանքար, զի մի և զայնս կործանեսցեն ։ Իսկ յետ մեռանելոյ Կղէոպատրայ՝ եկաց Եգիպտոս մարզ աշխարհին Հռոմոց, և կուսակալք հռոմայեցիք կային անդ ։ Արդ ա՟մ ժամանակք թագաւորութեան Պտղոմեանցն յԵգիպտոս՝ յետ մահու Աղեքսանդրի մեծին՝ ժողովին ամք երկերիւր իննսուն և երեք, յերեք հազար վեց հարիւր ութսներորդէ առաջնմէ ամէ թուականութ՟ե աշխարհի մինչև ցերեք հազար ինն հարիւր եօթանասուն և չորրորդ ամն ։

---

[1] Անխուճապ դիմօք մտանել անդրէն
Իշխեալ յարքունիսն 'ի զգետնեալն արդէն,
Եւ զդժնեայ սողունսն առեալ անվեհեր,
Ընդ մարմինն ըղթուխ թոյնսն ծաւալէր,
Անյոյս 'ի կենաց՝ լեալ ամեհագոյն.
Զի զլարէր, և ոչ յանձն առնոյր դշխոյն,
Յանդուլթ լիբուրնեանց իբր անարգ ոք կին,
Վարիլ առ 'ի շուք պերճ յաղթանակին ։

ՈՀՐԱՏ. ՏԱՂԵՐԳ. Ա. ԼԷ ։

ՎԵՐՋԱԲԱՆ ՀՆԱԽՕՍ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՍ

Ահա ցայս վայր երրեակ հզօր ինքնակալութի՟ք, (Թողեալ անդր զնախնի եգիպտացւոցն, և զայլոց ինքնուրոյն անկցորդ պետութե՟ց), կործանմամբ միմեանց յաջորդեցին իրերաց ընդ բազմահոլով դարս, մինչև 'ի սպառ անհետացան: Նախ բաբելացւոցն, երկրորդ Մարացն և Պարսից, և ապա մակեդոնացւոցն, և որ զհետ Աղեքսանդրի կացին Թագաւորք: Մնայ չորրորդ ինքնակալութի՟ հռոմէականն, որ զմեծ մասն նոցա եկուլ, և որ և ևս ընդարձակեալ զսահմանս իւր, և զամենեսեան զինուք նուաճեալ, ապա և ինքն որպէս 'ի ծուէնս պատառեալ՝ բաժանեցաւ, և յարեան կացին 'ի նմանէ գրեթէ ամ՟ պետութի՟ք՝ որ արդ ընդ Ասիա և ընդ Եւրոպա և ընդ Ափրիկէ տիրեն: Ահա՝ ճշգրտիւ ասացեալ՝ համառօտագիծ պատկեր դարուց և ժամանակաց, փառաց և զօրութե՟ ամ՟ պետութե՟ց երկրի, և բնաւ ամ՟ պարծանաց և զարմանալեաց մեծութե՟ մարդկան: Աստ համայնք պատշաճ զուգութք՟ կցորդին. գեղեցիկ հանճար և կիրթ ախորժակք ընդ կորովի խոհականութե՟, չքնաղ բարեմասնութի՟ ճարտարխօսութե՟ 'ի բուն ծայր կատարմանն հասեալ՝ անպայլայլակ 'ի բնականէն և 'ի ճշմարտէն, փառք զինուց ընդ արուեստից և գիտութե՟ց, աշխարհակալ քաջութի՟ ընդ ներհուն քաղաքավարութե՟: Աստ խուռն 'ի վեր երևին արք աւագք յամ՟ կարգէ. Թագաւորք հզօրք՝ պսակեալք փառօք, զօրավարք քաջք, աշխարհակալք անուանիք, զգօն ատենակալք, հանճարեղ իմաստասէրք, և օրէնսդիրք զարմանալիք: Բայց վայելուչ է տեսանել 'ի դարս դարս և 'ի տեղիս տեղիս՝ սեփականագոյն նոցա զջերմ՟ նախանձ արդարութե՟, զսերտ հայրենասիրութի՟, զազնուական անտեսութիւն իւրաքանչիւր օգտին, զվեհ արհամարհութի՟ մեծութե՟ց, և զսէր աղքատութե՟, յորմէ զարհուրեալ սասանիմք՝ քան զզօրութի՟ մարդոյ գեր 'ի վերոյ վարկուցեալ զայն: Այսքան է մերս խոկում՟ և դատաստան:

Այլ 'ի պայծառ առաքինութի՟ս, ընդ որս մեքն հիանամք՝ զմայլեալք 'ի տեսիլ նոցա, ոչ ինչ գտանէ ամենադատաւորն՝ որ միայն ուղիղ դատի զամ՟, բայց վատութի՟, նուաստախոհութի՟, սնափառութի՟ և ամբարտաւանութի՟. և մինչ ջանահնար լինին մարդիկ մշտնջենաւորել

զտէրութ՟ն 'ի զաւակի իւրեանց , և հիմնել թագաւորութ՟նս , և հնարել ճակատագրել զնոսա յանմահութ՟ն ա՟ծ յերկնից յաթոռոյ իւրմէ կործանէ զա՟մ խորհուրդս նոցա , և զամբարտաւանութ՟ն նոցա վարէ 'ի կատարումն կամաց իւրոց՝ որ անհասաբար 'ի վեր են քան զա՟մ միտս ։ Ինքն միայն գիտէ զգործս և զխորհուրդս իւր , և ա՟մ
Սիր . լթ . 25 ։ յաւիտեանք մերկապարանոց կան առաջի նորա . « Որ յաւիտենից մինչև յաւիտեանս հայի » . և բաղդ և սահման պետութ՟եց կնքեալ են առ նմա . և յա՟մ աղմուկսն, զորս պատմեցաք , ոչ ինչ վայրապար պատահեցին դէպք ։
Դան . Բ ։ Ապաքէն օրինակաւ մեծի և ահագին պատկերին , զոր ետես Նաբուգոդոնոսոր , որոյ գլուխն յոսկւոյ սրբոյ , և լանջքն և բազուկք արծաթիք էին , մէջք նորա և բարձք պղնձիք , և սրունք երկաթիք , այլ ոտքն՝ կէս յերկաթոյ և կէս 'ի խեցւոյ , եցոյց ա՟ծ զչորեսին հզօր պետութ՟նս , ժողովեալ 'ի նոսա զա՟մ փառս , զմեծութ՟ն , զզօրութ՟ն և զիշխանութ՟ն , որպէս ակներև տեսաք ։ Եւ ի՟բ կործանէ ամենակալն զհսկայաձև պատկերն , ի՟բ ջաղջախեալ 'ի փոշի դարձուցանէ ։ « Վէմ փոքրիկ առանց ձեռին հատեալ, եհար զպատկերն . և առ հասարակ մանրեցան խեցին և երկաթ , պղինձն և արծաթ և ոսկին , և եղեն իբրև զփոշի կալոյ ամարայնոյ . և առ զնոսա սաստկութ՟ն հողմոյ , և տեղի ոչ գտանէր նոցա ։ Եւ վէմն որ եհար զպատկերն՝ եղև լեառն մեծ և ելից զա՟մ երկիր » ։

Արդ զելս այսր հրաշալի դանիէլեան գուշակութ՟ե , եթէ ոչ լիով՝ այլ ըստ մասին տեսանեմք յայտնապէս կատարեալ ։ Զի վէմն փոքրիկ առանց ձեռին մարդոյ 'ի լեռնէն հատեալ՝ այն ինքն է , որ էջն յերկնից , և մարմնացաւ յանարատ արգանդի Կուսին առանց կցորդութ՟ե առն ։ Որոյ տիպք նկարագրին ըստ ազգատոհմին , ըստ արտաքին կերպարանացն , ըստ վարդապետութ՟են , ըստ աշակերտացն , և համայն ասացեալ՝ ըստ ա՟մի որ ինչ պատկանէին նմա , էին պարզութ՟ն , աղքատութ՟ն , և խոնարհութ՟ն այնքան՝ մինչև զա՟ծափայլ ճաճանչ պայծառ սքանչելեացն ծածկել յաչաց ամբարտաւան Հրէից , և զակներև ցոյցս ա՟ծութ՟են 'ի խորագնին պշուցեալ աչաց դիւաց ։

Սոյն տկարութ՟բ և խոնարհ ձևով տիեզերակալեաց
Յայտն . Զ . 2 ։ փրկիչն . վասն որոյ ասէ այլ մարգարէ . « Ելն յաղթողն զի յաղթեսցէ » ։ Եւ յայն իսկ առաքեցաւ . « Զի յարուսցէ երկնից թագաւորութ՟ն՝ որ յաւիտեանս ոչ եղծանիցի , և թագաւորութ՟ն նորա ազգի այլում ոչ մնաս-

ցէ, (որպէս մնացին այլոցն՝ զորոց ցայս վայր ասացաք), և մանրեսցէ և հոսեսցէ զա՟մ թագաւորութի՟ս, և ինքն կացցէ յաւիտեանս „: Իշխանութե՟ն հիմնողի այսր թագաւորութե՟ ոչ գոյ չափ և սահման և վախճան. թագաւորք՝ սանձացեալք զօրութ՟բ՝ և ոչ 'ի կշիռ համեմատութե՟ գայցեն ընդ նմա. զի նոքա ոչ իշխեն կամաց մարդկան, որ տիրապետն է թագաւորել: Ժողովուրդք նոցա ազատօրէն խոնարհին զա՟մ որ ինչ հաճոյ իցէ, և անքաւ իրք անհրաման 'ի նոցանէ գործին, և 'ի վեր իսկ են քան զգիտութի՟ նոցա և զզօրութի՟: Խորհուրդք նոցա ցրին և 'ի դերև ելանեն, և բազմաց առ կենդանութ՟բ իսկ նոցա. և ա՟մ մեծութիւն նոցա ընդ նոսա վախճանի, եթէ ոչ արագավախճան ևս լիցի: Իսկ նմա “ Տուաւ ա՟մ իշխանութի՟ յերկինս և յերկրի „: Նա մանաւանդ իշխէ մտաց և սրտից. և չիք ինչ՝ որ ոչ հրամանաւ նորա կամ ներելովն գործիցի. ա՟մ ինչ իմաստութ՟բ նորա և զօրութ՟բ ուղղին, և ա՟մ ինչ իւրև կամ միջնորդաւ 'ի գործ կամաց նորա արքանեկեն.

'Ի շարժել բնաւից ընդ տիեզերս, և 'ի փոփոխել անցանել արագ արագ աշխարհաց և պետութեանց, մինչ ազգք մարդկան զբաղեալ յընդունայն տեսիլն՝ անզգայաբար սահլին ընդ հոսանս նոցա, անդ հրամանք աներևոյթ և ծածուկ խորհրդոցն ա՟յ գործին, և յաւիտենից կեանք մեր սահմանին: 'Ի լրումն ևեթ համարոյ ընտրելոց տևեն ժամանակք, և օր ըստ օրէ աճէ և բազմանայ թիւ նոցա. 'ի բովանդակել նորա մահուամբ կրտսերագունի ընտրելոյն՝ ապա եկեսցէ կատարած, “ յորժամ տացէ 'ի ձեռս Հ՟ր զթագաւորութիւն ա՟յ և հօր, և յորժամ խափանեսցէ զամենայն իշխանութի՟ս և զամենայն պետութի՟ և զզօրութիւն „:

Ա. Կոր. ԺԵ. 24:

Լիցի և մեզ ամենեցուն մասն և վիճակ յերանելի արքայութե՟ն, ուր օրէնք՝ ճշմարտութի՟, թագաւոր՝ սէրն, և ժամանակ՝ յաւիտեանքն են. Եղիցի եղիցի.

ԳԻՐՔ ՔՍԱՆ ԵՒ ԵՐՐՈՐԴ

ՑԱՂԱԳՍ ԱՐՈՒԵՍՏԻՑ ԵՒ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Ամենայնօգուտ գէտք արուեստից և գիտութեանց ծառայարգելք։

Զինչ են վէպք արուեստից և գիտութեանց և քաջաց ճարտարացն և գիտնոց, եթէ ոչ պատմութիւն հանճարոյ մարդկան, ոչ ինչ 'ի վայր քան զվէպս թագաւորաց և դիւցազանց՝ զորս կարծիք մարդկան 'ի ծայր բարձրութեան փառաց կացուցին։ Այլ զայս ասեմք, ոչ առ աղարտել զխտիր կարգաց և զպայմանաց, և վեր 'ի վայր հարեալ դղորդել զաստիճանս՝ զոր Աստուած եդ 'ի մարդիկ. զի նա կացոյց 'ի վերայ մեր զիշխանս և զթագաւորս և զպետս աշխարհաց, աւանդապահս տէրութեան իւրոյ. և յետ նոցա զզօրավարս, զհազարապետս, զդատաւորս, և զամենեսեան՝ որ նոցա 'ի յանձանձանս իւրաց աշխարհի արքանեկին։ Եւ պատիւ՝ զոր ընծայեմք նոցա, և իշխանութիւն զոր ունին, անկ իսկ է նոցա. զի Աստուածախնամ տեսչութիւն ամբարձ զնոսա յայն կարգ, և հրամայիմք հպատակել նոցա և հնազանդել, և մեծարել զնոսա որպէս զփոխանորդս Աստուծոյ։

Բայց է և այլ իմն կարգ, 'ի նմին վերնախնամ տեսչութենէ զետեղեալ, որ զառաջինն անեղծ պահելով կարգ մեծութեան՝ միւս այլ հաստատեաց ամենեւին զանազանեալ։ Զի աստ պատիւ ոչ ազգին և ոչ մեծութեանն է, ոչ իշխանութեան, և ոչ բարձի, այլ միայն վաստակոց և գիտութեան։ Բայց դարձեալ և աստ նոյն ինքն սահմանէ զկայս, բաշխելով իշխանաբար զմիտս և զհանճար՝ ում և որպէս կամի, ոչ ազգի և ոչ երեսաց ակն առեալ։ Զազգի ազգի իմաստունս ժողովեալ կացուցանէ 'ի նոր իմն պետութիւն աշխարհի, զամենայն դարս և զաշխարհս 'ի մի կցորդեալ։

ոչ զհասակ խտրէ, ոչ զսեռ, ոչ զպայման և ոչ զգաւառ ։ Զի աստ անազգին ընդ ազնուականին, և ռամիկն ընդ թագաւորին հաւասար են, և յաճախ ևս քան զնոսա գերագանց ։

Կարևորագոյն օրէնք և օրինաւոր պայման անկապուտ փառաց յայսմ բանասիրական կարգի է՝ գոհացող լինել իւրաքանչիւր աստիճանաւն, և մի՛ չարակնել ընդ փառս այլոց, այլ հայել 'ի նա իբրև 'ի վաստակակից իւր՝ յաստուածախնամ տեսչութենէն կարգեալ որպէս զինքն 'ի զարգացումն և յերախտիս հասարակաց, և շնորհապարտ մտօք խոստովանել զտուիչն հանճարոյ և վասն որոյ ետուն զայն ։ Զի ո՞վ ոք 'ի գիտնագունիցն կարիցէ պարծել՝ իբր իւրովի ունելով զուշիմութիւն և զարագամտութիւն, զճարտարութիւն 'ի հնարս և 'ի գիւտս, զգեղ և զաշխոյժս մտաց և զխելամտութիւն. իսկ եթէ յայլմէ զայս ամենայն շնորհս ընկալաւ, չէ օրէն նմա հպարտանալ, և ոչ ըստ հաճոյս կամաց 'ի փառս ևեթ և 'ի համբաւ անձին վարել նոքօք ։

Զոր օրինակ խնամակալութիւն կացուցանէ զթագաւորս 'ի բարեկենդանութիւն ժողովրդոց, այսպէս և զբազմաստեղն հանճարոյն տեսակս բաշխէ 'ի կենցաղօգտութիւն ։ Այլ որպէս 'ի թագաւորս լինին յափշտակողք և բռնաւորք՝ որք առ 'ի մեծանալ հարստահարեն զայլս, ըստ նմին օրինակի իցեն և 'ի գիտնոց բռնաւորք մտօք՝ եթէ 'ի դէպ իցէ ասել զայս, որք չարակնեն ընդ յաջողութիւն այլոց, տրտմին ընդ համբաւ օտարաց, անգոսնեն զվաստակս նոցա, զանձինս ևեթ մեծարգեն, և միայնակ իշխել կամին ։ Ախտ եպերելի, որ աճէ նախատինս գիտնոց ։ Եւ թէպէտ յաճախ զնովին բանիւք գայցեմ՝ ոչ աւելի ինչ ասեմ, զի 'ի բանասիրական կարգիս փառք անկապուտ է կենցաղօգուտն երկասիրութեան և ոչ առանձինն. և սովաւ քան զտիեզերապետութիւն զկարգն զայն իշխեմ վերադասել ։ Աշխարհակալութեանց, որք զմեծ մասն մատենից պատմագրացն գրաւեն և գերահրաշք թուին, միշտ իսկ գրեթէ կցորդ են աւերածք աշխարհաց, կործանումն քաղաքաց և կոտորած մարդկան ։ Գերապանծ դիւցազունքն վաղ ժամանակաց զո՞վ ոք լաւագոյն յարդարեցին, և քանի՞ զոք երանելի ։ Ապաքէն քաղաքս և պետութիւնս յօգուտ ապագայ մարդկան կանգնեցին, այլ տուժիւք զրահեղեղ արեան ժամանակակցացն ։ Եւ օգուտ իսկ նոցա տեղեաւ և ժամանակաւ չափեալ. զի զի՞նչ շահ արդեացս, զի կացին Նեբրովթ և Կիւրոս և Աղեքսանդր ։ Այն ամենայն անուանք մեծամեծք, և յաղթութ̃իք՝ որ ընդ ժամանակս ժամանակս եղեն զարմանալիք, և թագաւորք և աշխարհակալք և ո̃մ հրաշակերտք նոցա գործք և խորհուրդք վսեմք, զարդիս ոչ ինչ են. ցնորք էին, և անցին. ծուխք, և պակասեցին։

Այլ գտողք արուեստից և գիտութ̃եց՝ յաւիտենից վաստակեցին, և յարգասիս երկոց և ճարտարութ̃ե նոցա արդ և մեք վայելեմք. 'ի հեռաստանէ զպէտս մեր պաճարեալ, և զո̃մ դիւրութիւն կենաց պատրաստեցին մեզ, և զո̃մ արարածս դարձուցին 'ի սպասաւորութ̃ի պիտոյից մերոց, և զանարգասաւոր նիւթս ածին 'ի պիտանութ̃ի։ Մեծութ̃իս ցանկալիս յանդնդոց երկրի և 'ի խորոց ջուրց ուսուցին վերբերել. և կարի առաւել մեծ՝ բացին մեզ զգանձս ո̃մ գիտութ̃եց, և հանին զմեզ 'ի բարձրագոյն հմտութ̃իս կարևորագոյնս և վայելչականս մարդոյ։ Նոքին առ ձեռն և առաջի աչաց որ ինչ 'ի դէպ են բարգաւաճութ̃ե մտաց, և բարուց ուղղութ̃ե, և որ յարդարեն լաւ քաղաքացիս, աւագորեար քաջ, և թագաւոր բարի։

Ահա փոքր 'ի շատէ արգասիքն, զոր հայթայթեցին մեզ գտիչք և կատարիչք արուեստից և գիտութ̃եց։ Այլ առ 'ի քաջ խելամուտ լինել մեծաց և կարևոր կենցաղօգտութ̃եցն, անցցուք մտօք 'ի տղայութ̃ի աշխարհի 'ի գալս տխմարութ̃ե, յորում բնութ̃իս մեր՝ դատակընքեալ քրտամբք երեսաց ուտել զհաց՝ անօգնական և առանց գործեաց ստիպէր առ քաղցի գործել զերկիր, և առ պատսպարութ̃ի՝ հիւղս և յարկս ծածկութ̃ե կազմել, և հանդերձս առ 'ի ցրտոյ և յանձրևաց պահպանութ̃ի, և համառօտ ասացեալ՝ ճարտարել զո̃մ պէտս կենաց։ Քանի՜ աշխատութ̃ի, քանի՜ հողք և վարանք ոչ առաջի կային նմա. այլ արդ զի այս ո̃մ բարձան, ոչ բարւոք 'ի միտ առնումք թէ քանի՜ շնորհապարտ եմք ճարտարացն և վաստակաւորաց՝ որք նախ զփորձ առին զարուեստից, և կենցաղօգուտ տաժանաւոր գիւտիւքն եղեն խուզարկուք։ Նոցա ճարտարութ̃են և վաստակովք բնակեմք յանդորր և զգենումք, և քաղաքք և պարիսպք և տունք և տաճարք են մեզ։ Նոցա օգնականութ̃են վարեմք զերկիր, տունս կազմեմք, գործեմք բեհեզս և հանդերձս, և կոփեմք զպղինձ և զերկաթ։ Եւ եթէ 'ի պիտանին և 'ի կարևորն և զախորժելին 'ի դէպ իցէ յաւելուլ, նոքա ուսուցին զձեռս մեր 'ի վրձին, 'ի գրոց, և 'ի քանդակ, և յո̃մ գործի։ Ահա պարգևք և կենցաղօգտութ̃իք հաստատունք յարակայք մշտնջենաւորք, մինչ աճեցականք, և յա՟մ ժամանակի առ ա՟մ ազգս և առ իւրաքանչիւր ոք օգտակարք, և դարուց 'ի դարս ընդ աշխարհի տևականք։ Զինչ հանգոյն այսմ բնաւ ա՟մ աշխարհակալք գործեցին. այլ մեք ընդ նոսա յաճախ զարմանամք ընդ դիւցազունս արինահեղս, և դուն ուրեք զարուեստագիտացն յիշեմք զերախտիս։

Այլ 'ի վեր ևս հանցուք զպարտուպատշաճ գոհութին և զփառս, 'ի տուիչն այնոցիկ, և որ միայն կարողն է տալ։ Զայս ճշմարտութի և հեթանոսք խոստովան եղեն, և Կիկերոն վկայէ համարձակ՝ զի յա՟յ ընկալան մարդիկ որ ինչ զնոցա բարեկենդանութի միախուռն ընդունին։ «Դիտասցէ, ասէ, ա՟մ մարդ՝ զի որ ինչ արտաքին դիւրութիքն են, և այն պարգև դիցն է»։ Յաղ. բն. դից. Գ. ձզ։ Համարձակագոյն ևս և Պլինիոս 'ի բնախօսել զհրաշալի ախտաբոյժ զօրութեց բուսոց և խոտոց իմաստասիրէ, զոր և 'ի բազում այլ յառաւելահրաշ իրս յարմարել ոչ ինչ է տարադէպ. զի ասէ[1]. «Անշնորհակալուք և ապերախտք պարգևացն ա՟յ են, որք մարդկան տան զպարծանս։ Բ. յաղբ։ իէ. տ. Բ. Գ։ Ապաքէն դէպք ետուն զյաջողութի դիւտից, այլ դէպք ինքնին աստուած է. զի և սովաւ՝ որպէս բնութե՟ն՝ զա՟ծ է իմանալ»։

Զի զոր օրինակ՝ եթէ ոք 'ի գործածս ոսկւոյ և արծաթոյ երկաթոյ և պղնձոյ և արճճոյ հայեցեալ, և դարձեալ հայիցի յանարգ նիւթն նոցա՝ որ յալս երկրի ծածկեալ կայ, և զբեհեզ նուրբ և բարակաման կամ զխոշորն իսկ և զխարազնագոյն համեմատեսցէ ընդ վուշն և ընդ կանեփ, և զազգի ազգի ասուեայս ընդ կտուրս խաշին, և զչքնաղ գեղ մետաքսեից ընդ զազիր որդանն տգեղութի, խոստովանեսցի՝ թէ արդարև մարդ իւրովի հանճարովն չէր բաւական հրաշալի գիւտիցն։ Ապաքէն, որպէս ասէ Պլինիոս, բազում իրաց գիւտք՝ բաղդին և դիպուածոց թուին լինել արդասիք. այլ ո՞ չտեսանիցէ, զի ա՟ծ 'ի հանդէս շնորհակալութե մերոյ զբարերարութիւն սքօղէ պատահարօք. ընդ որովք միտք՝ աղօտ ինչ նշուլիւք հաւատոյ լուսաւորեալ՝ տեսանեն ակներև ըզձեռն բարերար, որ լնու զմեզ պարգևօքն։ Յայտնագոյն ևս խնամք ա՟յ երևին 'ի բազում գիւտս արդիս. զի որ ամենեւին դիւրահնարքն թուին, ընդ այնչափ յաւիտենամս ծածկեալ էին 'ի հանճարոյ և 'ի խուզարկութ՟ե բազմաց պարապելոց 'ի վարժս և 'ի զարգացում՟ն արուեստից, մինչև հաճեցաւ ա՟ծ բանալ զաչս նոցա առ 'ի տեսանել զծածկեալսն ։ Ընդ որս 'ի դէպ է թուել և զգիւտ աղօրեաց, զջրաղացիցն և զհողմաղացից, որոց կենցաղօգուտ գիւտք՝ ոչ բազում ժամանակ է զի գտան ։ Նոյն 'ի պղինձ քանդակագործելով, զիա՞րդ ոչ խորհեցան զքանդակեալն տպաւորել 'ի թղթի՝ և 'ի վայրկեան ժամանակի հանել 'ի գիր զբազմաժամանակեայ փորագրութ՟ի գրոցին ։ Զի արուեստ տպագրութ՟ե երեքարիւր ամք են՝ յորմէ հետէ գտաւ, և ոչ աւելի ։ Զնոյն է ասել և զփոշւոյ հրազինացն, որ ոչն գոյր առ նախնի աշխարհակալօք, առ 'ի կարճել զյերկարաժամանակեայ պաշարում՟ն քաղաքայ ։ Ասեղն շփեալ ընդ խանդուամանդ, և շրջադարձ յաւանցս հաստատեալ 'ի տփի՝ գործի բևեռացոյց կենցաղօգուտ յոյժ, եգիտ նոր աշխարհ, և զազգս և զազինս կցորդէ ընդ միմեանս տուրևառիկ վաճառացն շահաւէտութ՟ե ։ Արդ մարդիկ, որք զա՟մ զօրութ՟իս խանդուամանդին գիտէին, զիա՞րդ կարևորագունին զայնչափ բազում ժամանակս չեղեն խելամուտ ։

---

[1] Զորս եթէ 'ի մարդկանէ հնարեալ համարեսցի ոք, ապաշնորհ դիցն պարգևաց գտանի... Ո՞ր ընդ այն յերկուասցի. զի ըստ դիպուածոյ գտաւ,... այլ դիպուածն, որ բազում ինչ 'ի կենցաղս եգիտ, է ինքն ա՟ծ. զնոյն կրելով զանուն, որով նոյն ինքն մայր և վարդապետ ա՟մ իրաց կոչի բնութին։ Պլին։

Արդ կիսոց 'ի գիւտիցն անհնարին դժուարութ՟ին, որ անդուշակելիք գոլով՝ հասակակիցք են գոգցես մարդկութ՟ես, և կիսոյն առ ձեռն պատրաստ դիւրութ՟ին, որ զրեթէ ակներև կալով՝ յետ դարուց բազմաց գտան, հարկ է՝ որպէս ինձ թուի՝ խոստովանել զերկաքանչիւրն տնօրինեալ յԱ՟ծէն, որ անքաւ իմաստութ՟բն և զօրութ՟բ վարէ զտիեզերս ։

Ապաքէն տգէտք եմք, եթէ ոչ բնաւին՝ սակայն բազում խորհրդոց զանազան խնամոցն ա՟յ 'ի յայտնել ըղգաղտնիս բնութ՟ե ․ այլ ոչ եթէ առ տգիտութ՟ե մերոյ խնամակալութ՟ի նորա նուազ պաշտելի է ։ Ինչ ինչ 'ի խորհրդոց նորա 'ի գիւտս իրիք իրիք նշմարեալ, զնոյն և զայլոցն իրատիմք իմաստասիրել ։ Կոլոմբոս 'ի խնդիր նոր աշխարհաց՝ դիմեաց առ իշխանս, և թուէր յաչս նոցա մոլել ․ զի յիմարութ՟ե խոկ թուէր խորհուրդն ։ Այլ նա որպէս 'ի բնէ ունելով միտութ՟ի յայն, յորդաբորբ անշիջանելի տենչիւն ստիպէր՝ անընկճելի յա՟մ խափանաց և յա՟մ աղերսակամ յանդիմանութ՟ե ։ Արդ ո՞ զյանդուգն խորհուրդն ազդեաց 'ի նա, ո՞ զանյողդողդ հաստատութ՟ին ետ նմա, այլ ա՟ծ՝ որ 'ի յաւիտենից սահմանեաց քարոզել աւետարանի որդւոյ իւրոյ յազգս նորոյ աշխարհին։ Գիւտ կողմնացոյց գործւոյն յաջողեաց ընդ խորհուրդ նորա․ զի ժամանակ մեծի իրացն սահմանեալ էր յԱստուծոյ, և վայրկեան մի կանխել կամ յապաղել չէր հնար։ Նմին իրի զայնչափ ժամանակս ծածկեալ, ապա արագ յաջողէր մեծաւ արիութեամբն։

Զայսոսիկ զեկուցանել կարեւոր վարկայ բազմաց՝ որ զգիրս զայս յակն արկանիցեն, արդ այժմ եկից 'ի ճառն։ Ի գիրս երիս խօսեցայց զարուեստից և զգիտութեանց․ յառաջնումն զերկրագործութենէ, զվաճառականութենէ, զճարտարապետութենէ, զքանդակագործութենէ, զնկարչութենէ և զերաժշտութենէ․ յերկրորդումն զհրահանգաց մարտի, և որ ինչ անկ են 'ի զօրաժողով, 'ի պահպանութիւն զօրաց, 'ի ճակատամարտ, և 'ի պաշարումն քաղաքաց ընդ ծով և ընդ ցամաք․ իսկ յերրորդումն, յոր զկայ առցէ մատենագրութիւնս, աւարտաբանեալ զարուեստից և զգիտութեանց՝ որ պատկանաւորագոյն են հանճարոյ, զքերականութենէ, զբանաստեղծութենէ, զվիպասանութենէ, զճարտարխօսութենէ և զիմաստասիրութենէ, և զմասանց նոցա։ Այլ աստստին խոստովանիմ համարձակ, որպէս 'ի սկզբանն և այժմ, զի բուռն հարկանեմ զճառից իրաց՝ որ բազում մասամբք անծանօթ են ինձ․ վասն որոյ դարձեալ ներել մաղթեմ, զի որպէս միշտն՝ ազատօրէն 'ի կիր առից առ 'ի յայլոց զնպաստս, որ առաջիկայիցս 'ի դէպ գայցեն․ զի առաւել ես աստ կարօտ եմ օգնականութեան։ Բայց թէպէտ և վտանգ առաջի կայ ինձ կորուսանելոյ զփառս ինքնագիր մատենագրի, հրաժարեմ մտադիւր 'ի փառացն՝ առ 'ի հաճոյս և յօգուտ ընթեռնլեացն։ Մի ոք խնդրեսցէ աստի ներհուն հմտութիւն, հայելով 'ի վերնագիր ճառիցս․ զի ոչ գիտնոց պատրաստեմ ուսումն, այլ որ ինչ յարուեստս իւրաքանչիւր բազմութեան ընթերցողաց պատշաճ է 'ի գիտութիւն։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՑԱՂԱԳՍ ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ

ՊՐԱԿ ԱՌԱՋԻՆ

Յաղագս զի 'ի վաղ ժամանակաց էր երկրագործութիւն. և կենցաղօգտութիւն նորա, և զի յոյժ մեծարգէր առ հինսն. և թէ քանի՛ կարևոր է յարգել զայն, և չար մեծ՝ ապախտ առնելն։

'Ի գլուխ արուեստից արժան համարիմ կարգել զերկրագործութ՟ի, որ հնութ՟բն և կենցաղօգտութ՟բ յաղթէ բնաւից։ Հասակակից աշխարհի զսա 'ի դէպ է ասել. զի անդ ուրեմն յեդեմական դրախտին ծնաւ այս արուեստ, մինչդեռ Ադամ նորաստեղծեալ՝ զցանկալի Ծննդ. բ. 15։ գանձ անմեղութ՟են ունէր զկորստականն։ Զի եդ զնա Ա՟ծ 'ի դրախտին փափկութ՟ե գործել զերկիր. ոչ ծանր և տաժանաւոր ձգելով ակօս, այլ դիւրին և ախորժական՝ առ 'ի զբօսանս և առ 'ի հուպ նկատել 'ի բերս երկրի զիմաստութ՟ի և զառատութ՟ի արարչին։

Այլ մեղք տապալեցին զկարգն, և ած զնովաւ Ա՟ծ զդատակնիք աղետիցն, քրտամբք երեսաց ուտել զհաց, և զզբօսանսն դարձոյց 'ի պատուհաս, և եդ 'ի վերայ նորա աշխատութ՟ի խիստ. որում անփորձ մնայր, եթէ հանապազորդէր յանգիտութ՟են չարի։ Այլ փոխանակ զի ապստամբեաց յԱ՟յ, և երկիր ստունգանեալ և անսաստեալ հրամանի նորա՝ փուշ և տատասկ բուսոյց։ Պարտ էր այնուհետև բռնի հանել 'ի նմանէ զհարկն՝ որում անարժան եղև մարդ ապերախտութ՟բն, և ամի ամի աշխատութ՟բ առնել զնա պտղաբեր 'ի մունդս՝ զոր յառաջ ձրի և անջան մատուցանէր։ Տես ինձ ցո՛ր վայր սկիզբն երկրագործութ՟ե 'ի վեր ելանէ. և զի որ պատուհասն տուաւ յԱ՟յ, նոյն դարձեալ մեծաւ գթութ՟բ նորա եղև մայր և դայեակ ազգի մարդկան։ Զի սա արդարև աղբիւր է անկապուտ ընչից, և արժանայարգ մեծութ՟եց՝ որ ոչ 'ի կարծիս ևեթ մարդոյ ունին գոյութ՟ի, այլ բաւեն 'ի լիութ՟ի կարևորացն և 'ի բարեկենդանութ՟ի իսկ, և ունևորք նոցին ոչ ինչ կարօտին օտար ազգաց, այլ նոքա ինքեանց են կարօտք. և որ առատագոյն եկամուտքն են պետութ՟ե, և նոյն զպակասութ՟ի բնաւից այլոցն։ Սպառեսցին բովք ոսկեհանք և արծաթահանք, և կորիցեն տեսակք նոցա, թաղեալ կայցէ մարգարիտ և գոհար ակն յանդունդս երկրի և ծովու, խափանեսցին երթևեկք վաճառուց ը՟ ազգս շուրջ բնակեալս, և բնաւ ամ՟ արուեստք՝ 'ի դեղ և 'ի յօրինուած ևեթ պիտանացուք՝ բարձցին. այլ արգասաւորութ՟ի երկրի լցցէ զամ՟ի զտեղի. նա տացէ առատ զպէտս հասարակաց, նա և զբնակիչս իւր մնուցէ, և զվերամարտիկս իւր զզօրս։

Ապա ուրեմն ոչ է զարմանալի՝ զի երկրագործութ՟ի առ հինսն մեծարեալ պատուէր, այլ զարմանք այն իսկ են՝ զի չպատուի այժմ, և զի կարևորագոյնն յարուեստից և անհրաժեշտն արհամարհի։ Աստ որոյ հանճարեղք 'ի թագաւորաց և հազարապետք իմաստունք, որպէս ասացաւ 'ի պատմութ՟ես, խնամ մեծ կալան 'ի զարգացումն երկրագործութ՟ե՝ ձեռն տալով և խրախոյս։ Յասորեստան և 'ի Պարսս նախարարք՝ որոց երկիր քաջ մշակեալ էր՝ վարձս 'ի թագաւորէն ընդունէին, իսկ որոց խոպանն էր՝ պատուհաս։ Նումա մի յիմաստնագոյն թագաւորաց առաջնոց, որ քաջ գիտաց զպարտս իշխանութ՟են և ելից անթերի, լարաբաժին արարեալ զամ՟ սահմանս Հռոմայ՝ առնոյր համարս խիստս յերկրագործացն. կոչէր առաջի իւր զժիրս, գովէր զնոսա և խրախուսէր, և զհեղգսն կշտամբէր։ Կալուածք անդոց, ասէ վիպագիրն, համարէին յայնժամ քան զամ՟ մեծութ՟իս արդար և օրինաւոր, և գեր 'ի վերոյ քան զշահ պատերազմաց՝ որ կարճատևք են։ Անկոս, որ չորրորդ թագաւոր եկաց 'ի Հռոմ, նախանձաւոր եղեւ առաքինութ՟եցն Նումայ՝ նախ զերկրագործութ՟ի 'ի դից և զկրօնասիրութ՟ի, և ապա զմշակութ՟ի և զհովուութ՟ի հրամայէր ժողովրդեան։ Այս նախանձ ընդերկար տևեաց առ Հռոմայեցիս. և մինչև 'ի ժամանակս յետինս զհեղգս յանդիմանեալ կշտամբէին համարակալք[1]։ Զի ուսեալ գիտէին յանսխալ փորձոյ՝ թէ երկրագործութ՟ի, և դարման խաշանց՝ որ կից է նմին և նորին մասն, են աշխարհի աղբիւրք գանձուց և առատութ՟ե անսպառք և աներկևանք։ Երկրագործութ՟ի ոչ ուրեք որպէս առ եգիպտացիս յարգեցաւ, զի էր առաջնորդութ՟ե աշխարհին նոցա և քաղաքավա-

Դիւան. աշխ. հնախօս. հատ. Է. 135. Դ 177։

---

[1] Անմշակուն անդոց կշտամբելի 'ի համարակալաց նախատինք էին։ Պլին. ժը. ա։

րութե՟ն կարևոր մասն. և աշխարհ քան զնոցայն բնակաւեալ ճոխ և հզօր ոչ եղև։ Զի զօրութի՟ն աշխարհի ոչ յընդարձակութեան սահմանացն է, այլ 'ի բազմութեան բնակչացն և 'ի կենցաղօգուտ վաստակս նոցա։ Յոյժ զարմանք են, զի անձուկ սահման երկրին աւետեաց զիա՞րդ զայն անթիւ բազմութի՟ն բնակչաց յինքեան բերեալ տածեր, բայց եթէ երկրին քաջ մշակութե՟ն։

Որ ինչ զճոխութե՟է քաղաքաց բազմաց Սիկիլիոյ, և մանաւանդ զանբաւ գանձուցն Սիրակուսայ, զհոյակապ շինուածոց նորա, զամենակալ զհզօր նաւատորմացն, և զյաճախագունդ բանակացն որ ինչ պատմին, չհաւատալի թուեր, եթէ ոչ միաբան վկայէին ա՟մ նախնի մատենագիրք։ Արդ ուստի՞ զայնչափ զանհեթեթ ծախս հայթայթեր Սիկիլիա, եթէ ոչ անդստին յերկրէն՝ զարմանալի ճարտար մշակութե՟ն։ Ի մշակականին փոյթ նոցա բարւոք 'ի միտ առնումք 'ի խնամոցն, որով Հերոն երկրորդ՝ մի 'ի հզօր թագաւորաց Սիրակուսայ՝ արար զայնմանէ գիրս, յորում հանճարեղ խրատս և օրէնս գերազանցս 'ի պահել և յաւելուլ զարգասաւորութի՟ երկրի աւանդեր։

Եւ ոչ Հերոն միայն[1], այլ և այլք 'ի թագաւորաց ոչ ամօթ համարեցան ազնուականութե՟ և իշխանութե՟ իւրեանց՝ աւանդել յետնոց զօրէնս մշակութե՟, քաջ խելամուտ լեալ պիտանութե՟ և արժանեաց նորա. որպէս Ատտաղոս Փիլոմետոր թագաւոր պերգամացւոց, և Արքեղայոս արքայ կապադովկացւոց։ Եւ զարմանամ զի Պղատոն, Քսենոփոն, Արիստոտէլ, և այլք յիմաստասիրաց զառաջնորդութե՟ ճառագրեալ՝ ոչ զանց արարին զնովաւ, որ նորին կարևոր մասն է. այլ ո՞ 'ի կարգս նոցա կարծեր զՄագոն զօրավար կարքեդոնացի։ Երևի բազում ճշգրտիւ գրեալ նորա զայնմանէ. զի յառնուլ Կարքեդոնի՝ գտան գիրք նորա քսանևութ մատեանք, և պատուեցան. զի հրաման ետ ծերակոյտն յեղուլ զայնս 'ի լատին բարբառ, և Սիղանոս մի յաւագաց ատենակալացն յանձն
Վարր. Գեղջ. ա. ա։ էառ թարգմանել։ Վաղագոյն և Կասիոսի Դիոնիսեայ ուտիկեցւոյ 'ի կարքեդոնացի բարբառոյ 'ի յոյն փոխեալ էր զայն։

Վաղագոյն Կատոն համարակալ զմշակութե՟ գիրսն ետ։ Զի՛ չև ևս յայնժամ զեղծեալ էր Հռոմ, և սէր նախնի պարզութ՟են չև շիջեալ 'ի սպառ . զի դեռ ևս բերկրութ՟բ և զարմացմամբ յիշէին զաւուրսն՝ [1] յորս աւագանին գրեթէ զա՟մ ժամանակս 'ի դաշտս բնակէր, զի ինքնին զիւրաքանչիւր երկիր գործէին՝ առանց ցանկանալոյ ագահութ՟բ և անիրաւութ՟բ օտար անդոց, և զի բազումք 'ի մաճէ և յարօրոյ 'ի բդեշխութ՟ի և յիշխանապետութ՟ի կոչեցեալ լինէին : 'Ի բարենշան աւուրսն, ասէ Պլինիոս [2], երկիր պանծացեալ՝ մշակելով յաշխարհակալ և 'ի յաղթող բազկաց, թուէր ճգնել յառատ պտղաբերութ՟ի . խմա՝ զի նոքա արք զարմանալիք, միապէս քաջք էին 'ի զէն և յարօր, 'ի հերկել զերկիր և յաշխարհակալել, և մտադիւրագոյն ժրութ՟բ քաջ արգասաւոր զվաստակս առնէին :

---

[1] Փոյթ մեծ եղև և այլոց ազգաց զմշակութե՟ օրինագրել։ Պլին. ժը. գ։

Ապաքէն և 'ի փորձոյ վկայեալ՝ այր ազնուական և հանճարեղ աջողագոյն խելամտագոյն և ճարտարագոյն է յարուեստս, և ախորժակաւ ևս գործէ, և առաւել հնարագիտութ՟բ, և բազում ինչ խուզարկութ՟բ և փորձով գտանէ գիւտս . իսկ գռեհիկն կայ և մնայ ծառայաբար յուսեալն և 'ի նախկին կրթութ՟են : Ոչ ինչ ընդունուցանէ զմիտս նորա, և ոչ իւիք քան զսովորականն զգօնանայ ճարտարել . յետ բազմահոլով ամաց աշխատութ՟ե՝ նոյն իսկ է, և ոչ ընաւ զարգանայ յարուեստն :

Սոքա արք աւագք ոչ վասն այլ իրիք գրեցին զերկրագործութ՟է, բայց զի կարևորութ՟ե նորա խելամուտ եղեն, բազմաց 'ի նոցանէ և զփորձ առեալ արուեստին : Յայտ է ամենեցուն՝ թէ քանի սիրելի էին Կատոնի շինական կեանք, և զկարգ մտադիւրութ՟բ կրթեցաւ յայն, յորդորեալ մանաւանդ 'ի նախանձ Կուրիոսի աւագ հռոմայեցւոյ, որոյ երիցս յաղթանակեալ էր . զի էին կալուածք նորա մերձ 'ի վիճակս Կատոնի, և անդր երթայր ստէպ Կատոն և շրջէր : Եւ հայեցեալ [3] յարտ նորա

Պլուտարք. 'Ի Կատ. 337:

---

[1] 'Ի վաղ ժամանակս յարօրոյ 'ի բդեշխութ՟ի կոչէին : . . . Եւ որք առաքեցանն, գտին զԱտիլիոս՝ զի սերմանէր իւրովի : . . . Զիւրաքանչիւր անդս քաջ մշակէին, օտարին անդոյ ոչ նախանձեալ : Կիկ. Ռոսկ. Ծ:

[2] Եւ ի՞ւ քաջաբերք էին . զի զօրավարացն ձեռօք մշակեալ լինէին յայնժամ անդաստանք, և երկիր բերկրէր իմն գոգցես պսակազարդ խոփովն և յաղթող արօրադրաւ . զի կամ նովին քաջութ՟բ սերմանէին՝ որով պատերազմէինն, կամ նովին ժրութ՟բ գործէին զերկիր՝ որով ճակատ յարդարէինն, և կամ զի արդոյ ձեռաց բարւոք յաջողէ ա՟մ, զի ժրագոյնք իսկ են : Պլին. ժը. գ :

[3] Ըզսա, ըզԿամիլ, և ըզթաղկահեր զաջողակն 'ի մարտ
Ած ըզԿուրիոս, կեանք անինչ, տընակ և հայրենին արտ :
Հորատ. տաղերգ. ա. ժբ. 41 :

փոքրիկ և 'ի վարկպարազի անակն, զարմանայր ընդ այրն մեծ՝ որ վեհ քան զա̃մ հռոմայեցիսն էր, և նուաճող ազգաց գոռ պատերազմողաց, որ զՊիւռոս հալածեաց յԻտալիոյ, և մշակէր զածու փոքր, և յետ բազում այնչափ յաղթանակացն՝ բնակէր 'ի գծուծ տան. և զայն ես ածեալ զմտաւ՝ զի անդր եկին առ նա հրեշտակք սամնիտացիք [1], մինչ առ հրովն նստէր յեփոյս ընդոյն, և մատուցին նմա զանձս բազումս. իսկ նա հանճարով ետ պատասխանի՝ թէ չեն կարօտ ոսկւոյ, որ սովին անպաճոյճ կերակրմանօքս շատանան. և թէ ցանկալի է ինձ յաղթել ունևորաց ոսկւոյ, քան ունել զայն: Զայսոսիկ զմտաւ ածելով դառնայր Կատոն յիւրան. և դարձեալ այց առնէր տան իւրոյ և անդոց և ստրկաց և ա̃մ ծախուց, և զաւելորդն կարճէր, և յաւելոյր յաշխատսիրութի̃. և անդստին 'ի մանկութե̃ զարմանալի էր ծանօթիւն: Աղերեայ Փլակկոսի, որ էր մի յազնուականագունիցն և 'ի հզօրագունից հռոմայեցւոց, էին անդաստանք կից յարտորայս Կատոնի. և ստրուկքն պատմէին ստէպ զկենցաղ դրացւոյն և զվաստակ նորա յանդս. զի ընդ առաւօտս երթայր շուրջ յաւանս 'ի փաստաբանութի̃ և 'ի ջատագովութի̃ յինքն ապաստանելոցն, և դառնայր յանդ իւր. և 'ի ձմերայնի գծուծ գրգլեկաւ, իսկ յամառայնի մերկ գոգցես ընդ ծառայս իւր վաստակէր. և ապա բազմեալ ընդ նոսա 'ի սեղան՝ զնոյն հաց ճաշակէր ընդ նոսա, և զնոյն բաժակ ըմպէր [2]: Արդ տես ինձ քանի սիրողք էին նախնի հռոմայեցիք անպաճոյճ պարզութե̃ և աղքատութե̃ և ձեռագործի: Զարմանալի է ինձ յոյժ ընթեռ-
Վարրոն. գ. ա: նուլ 'ի գիրս Վարրոնի զհանճարեղ և զիմաստուն կշտամբանան, զոր ոմն 'ի ծերակուտէն Հռոմայ առնէ Ապպիոսի Կղոդեայ վասն հոյակապ ամարաստան ապարանիցն, համեմատեալ զայն ընդ աղքատին կալուածն՝ յորում կային. ասէ. Չէն աստ պատկերք և անդրիք, ոչ որմք ատաղձագործք հատուածոյք, և ոչ յարկք տախտակամած դրուագեալք. այլ որ ինչ երկրագործութե̃ 'ի դէպ էն, և այգւոյ մշակութե̃, և դարմանոյ անդէոյ:

---

[1] Կուրիոսի, մինչ առ հրովն նստէր, կշիռ մեծ ոսկւոյ սամնիտացիք մատուցեալ՝ մերժեցան 'ի նմանէ, զի ասէր. Ոչ զժառանգութիւն ոսկւոյ՝ այլ իշխել ժառանգողացն զայն, պարծանս համարիմ: Զայս այսպէս Կիկերոն 'ի Գիրսն Ծերութեան տայ բարբառել Կատոնի. Ծ:

[2] Յիշեմ աստ զգեղեցիկ արարուած կրտսերոյն Պլինեայ. որ զի յորմէ գինւոյն տայր ազատելոց իւրոց [illegible] ըմպել. 'ի ցուցանել նմա ոմանց [illegible] ծառայոցն՝ ասէ. Ոչ ազատեալքն իմ 'ի գինւոյ իմմէ ըմպեն, այլ ես 'ի նոցունցն: Պլին. Բ. Զ.

Առ քեզ մ՟ ինչ ոսկեհուռ և արծաթափայլ և կճեայք են. ոչ անդաստանք և ոչ այգեստանք 'ի մշակութ՟ի, ոչ արջառ և ոչ խաշն. ոչ խոտ 'ի մարգի, ոչ կութք 'ի հնձանս, և ոչ հունձք 'ի շտեմարանս. արդ իցէ՞ դա կալուած, կամ նմանիցի՞ հայրենւոյդ և պապենւոյ:

'Ի մտանել այսր զեղխութ՟ե 'ի Հռոմ, չմարթէր այնուհետև որպէս յառաջն մշակել անդոց, և զնոյն պտղաբերել[1]: Զի զի՞նչ 'ի տորկաց և յանարգ վարձկանաց, որք բռնի գործէին զերկիր, պարտ էր ակն ունել: Զայս վրիպակ մեծ և հակառակ հասարակաց մտաց եպերեն ամենեքին՝ որք 'ի յետին ժամանակս մատենագրեցին զայսմանէ առ հռոմայեցիս: Զի առ բարւոք մշակութ՟ի երկրի՝ հարկ է ախորժելով և մտադիւրութ՟ե զնովին գալ, և առ այս՝ հարկ է ունել անտի զօգուտ և զշահ:

Ապա առ 'ի յարգել զմ՟ երկիր տէրութ՟են, որ պիտանի իսկ է քան զսահմանս ընդարձակել, կարևոր է բաշխել 'ի տանուտեարս՝ որ շուրջ 'ի գեղս և յաւանս բնակեն՝ վիճակս իւրաքանչիւր, զի մտադիւրագոյն զիւրն զայն զցանկալի երկիրն մշակեսցէ. զի ընտանեացն փոյթ լիցի զայնմանէ, և սիրեսցեն զայն, և կացցեն անդ, և մի կարասցեն մեկնել յերկրէն: Իսկ վարձկանք՝ զի ոչ զիւրեանցն վարեն զերկիր՝ թերահոգք առդնին, և ակամայ վաստակեն: Պարտ է տանուտեարց՝[2] որոց կալուածք իցեն՝ մտադիւրագոյն զմշակութ՟ի անդոցն թողուլ 'ի ձեռս միոյ ազգատոհմի, որդի 'ի հօրէ յաջորդել, զի յոյժ առաւել կապին ոգիք նոցա ընդ երկրին. և որով իւրաքանչիւրոյն օգուտ գործի, նոյն և աշխարհին օգուտ է:

Այլ յորժամ երկրագործն կամ վարձկան ճարտարութ՟ե իւրով և մտադիւրութ՟ե յաւելու զշահս, որ տերանցն իսկ է յօգուտ, չէ արժան՝ ասէ Կիկերոն՝[3] ըստ նմին չափոյ յաւելուլ զսակն, այլ ըստ արդասաւորութ՟ե երկրին՝ զոր գործէ, և որ ինչ ըստ արդար չափոյ կշռիցին սակ և վարձք։ Զի ծանրացուցանել և յաւելուլ բեռն ՚ի վերայ քաջ վաստակաւորաց՝ այնպէս է, որպէս պատուհասել և խափանել զճարտարութի՟ զոր ա՟մ բարգաւաճեալ ազինք պարտ համարեցան խրախուսել պարգևօք և նախանձու։

---

[1] Արդ այժմ ոտք պարտեալք, ձեռք դատապարտեալք, և ճակատք դրոշմեալք զնոյն անդաստանս վարեն: . . . Եւ զարմանամք՝ զի ոչ զնոյն պտղաբերութ՟ի գործեն ստրուկքդ՝ որ ինչ զօրավարքն գործէին: Պլին. ժը. գ:

[2] Լուայ 'ի Ղուկիոսէ Կոլումեայ, զի ասէր քաջաբերս լինել զանդս տանուտեառն՝ որոյ իցեն մշակք բնիկք, որպէս ընդածինք՝ 'ի վիճակս հայրենիս, և 'ի խանձարրոց ընտանեցեալք: Կոլում. ա. է:

[3] Զսակ երկրագործին, ոչ ըստ այլ մեծութ՟եցն՝ եթէ իցեն նմա՝ պարտ է յաւելուլ, այլ ըստ չափոյ և ըստ զօրութ՟ե երկրագործութ՟են՝ որչափ ձեռնհաս է և զօրէ. և որչափ ինչ գործել կարիցէ կամ պարտիցի: Կիկ. 'Ի Վէր. յաղ. գոր: ճշթ:

Հանդերձ այլովքն և այս պատճառք են անպտղութե՟ երկրի, զի մշակութի՟ չհամարի յարուեստ ուսանելի օրինօք և կարգօք և խելամտութ՟բ. այլ ա՟մ ոք ըստ մտի և ըստ սովորութե՟ գործէ, ոչ ոք ճարտարամտէ, ոչ ոք խուզարկէ և յաւելու օրէնս փորձիւն [1]։ Կոլում. ա. ա՟։ Այլազգ խորհէին հինք. զի նոցա երեք ինչ կարևոր թուէր առ քաջ երկրագործութիւն։ Նախ՝ յօժարութի՟, զի պարտ է սիրով և մտադիւրութ՟բ և բերկրութ՟բ որպէս առ ՚ի զբօսանս գործել զերկիր։ Երկրորդ՝ բաւականութի՟ առ ՚ի ծախս կարևորս ՚ի պարարտութի՟ երկրին, ՚ի հերկ, և որ ինչ յարգասաւորութի՟ նորա պիտոյ են. յորմէ բազումք նուազ գտանին։ Եւ երրորդ՝ գիտութի՟ քաջահմուտ ա՟մ օրինաց մշակութե՟, զի առանց այսր՝ առաջինքն անպիտանք են. և ոչ անպիտանք միայն, այլ և յոյժ վնասակարք տանուտեառնն, և պատճառք տրտմութե՟, ՚ի տեսանել՝ զի արդիւնք ոչ հաւասարեն ծախուցն և յուսոյն. և ընդէ՞ր, զի առանց գիտութե՟ և անխտիր ծախեցան։ Յայսոսիկ ՚ի դէպ է յաւելուլ և չորրորդ ի՟ն, զոր և նախնիք ոչ անյիշատակ առնեն. զփորձն ասեմ, որ յա՟մ արուեստս իշխէ գեր ՚ի վերոյ քան զա՟մ օրէնս, և ուսուցանէ զվրիպակս եւս յօգուտ արկանել. զի բազում այն է՝ որ սխալանօք յաջողի հմտութի՟ [2]։

Յոյժ առաւել քան այժմս արգոյ էր առ նախնիս երկրագործութի՟. և վկայէ բազմութի՟ և ազնուականութի՟ մատենագրողացն զայնմանէ։ Վարրոն մատենագիրս յիսուն ՚ի Յունաց եւեթ յիշատակէ. և ինքն իսկ գրեաց, և յետ նորա Կոլումել։ Երեքին սոքա ՚ի Լատինաց, Կատոն և Վարրոն և Կոլումել, կարի ճշգրտիւ զա՟մ մասանց արուեստին ճառեցին. և ոչ զուր և ընդունայն լինի համեմատել զօրէնս և զհրահանգս աւանդեալս ՚ի նոցանէ ընդ այժմու մշակութե՟։

---

[1] Պարտիմք զայլոյն ՚ի կիր առնել, և այլազգ ինչ մեզէն յաւելուլ ՚ի փորձ։ Վարրոն. ա. ծէ։

[2] Փորձ և կրթութի՟ իշխեն յարուեստս. և չիք գիտութի՟ յոր վրիպակք ոչ ուսուցանիցեն. զի ՚ի ձախողել ուրուք սխալանօքն՝ զգուշասցի ՚ի վրիպակէն. և զարահետ ճանապարհն լուսաւորեսցէ հրահանգ։ Կոլում. ա՟ռ։

Կոլումել, որ առ Տիբերիւ եկաց, ճարտար և աղէտալի ողբովք աւաղէ վասն արհամարհելոյ յայնժամ ամենեցունց զերկրագործութիւն, և ոչ պիտոյ համարելոյ հրահանգս 'ի գործ արուեստին ։ Տեսանեմ, ասէ, 'ի Հռոմ դպրոցս իմաստասիրութեան, ճարտարխօսութեան, երկրաչափութեան և երաժշտութեան. և մեծ ևս զարմանք՝ խահամոքս ախորժարարս գրգռիչս որկորստութեան, և յօրինիչս վարսից՝ որ զգանգուրսն գործեն. իսկ դպրոց մշակականին ոչ ուրեք ։ Սակայն զամենեքումբք զնոքօք մարթէր զանց առնել¹, զի առանց սնոտի արուեստիցդ եկաց Հռոմ 'ի պայծառութեան՝ ժամանակս բազումս. իսկ զերկրագործութիւն զանց առնել չէ հնար, զի նովաւ իսկ կեամք ։ տ. յ—ԿԷ.

Պարծեալ և են վայելչագոյն և արդարագոյն ժառանգութիւնքն պահիցին և յաւելցին ։ Պատերազմաւ. մթերելով զկապուտ կողոպուտ ներկեալ արեամբ մարդկան, և 'ի տնանկութիւն զբիւրաւորս հասուցանելով ։ Իսկ վաճառականութեամբ. տարաշխարհիկ լեալ, մտանեալ 'ի վտանգ մրմռեալ ալեաց և հողմոց, և սահեալ նժդեհութեամբ յերկիր անծանօթ առ 'ի շահ ։ Այլ թերևս սեղանաւորութեամբ² և փոխատուութեամբ, որ ատելի և վնասակարք են՝ որոց օգնելն իսկ թուին ։ Ու պարտ իցէ ինչ համեմատել ընդ սոսա զիմաստութիւն և զանմեղ վաստակս երկրագործութեան, զոր խանգարումն ևեթ բարուց եդ արհամարհ, և արհամարհութիւնն ամուլ և անբեր ։ Թուի բազմաց թէ այժմու անպտղութիւն երկրի՝ սակաւաբեր յոյժ քան զառաջինն ժամանակսն՝ իցէ յանհարթութենէ օդոց և եղանակաց, կամ 'ի հողոյն իսկ այլայլմանէ, որ 'ի բազում ժամանակաց անդադար 'ի վար արկանելով անօրեալ և ազազեալ՝ ոչ ևս նովին զօրութեամբ և առատութեամբ պտղաբերիցէ ։ Այլ այս ոչ ճշմարտիւ կարծի. զի որում արարիչն մշտնջենաւոր ետ զարգասաւորութիւն, ոչ 'ի դէպ է նմա դառնալ յամլութիւն՝ իբր ախտիւ հիւանդութեան. և որ 'ի տեառնէն զաստուածակերպ զանծերանալի մանկութիւնն ընկալաւ, որով կոչեցաւն իսկ մայր հասարակաց՝ զի ծնաւ և ծնանի հանապազ զէքս ամենայն, զնմանէ չիք կասկածել՝ թէ զառամիցի և ծերանայցէ հանգոյն մարդոյ ։ Ոչ յանհարթութենէ օդոց, և ոչ 'ի

---

[1] Առանց սնոտի արուեստիցդ... եղեն և լիցին քաղաքք 'ի բարեկենդանութեան. այլ առանց երկրագործութեան չէ հնար մարդկան կեալ և սնանել, այն յայտ է ամենեցուն ։

[2] Մի թէ փոխատուութիւնն, ատելի և որոց օգնելն թուի ։

բազմամեայ աշխատութե՟ն երկիրս մեր անբեր է ․ այլ առ հեղգութե՟ մերոյ , 'ի մերմէ թերութե՟ս ․ Անձանց մեղ դիցուք , զի 'ի ձեռս ստրկաց լքանեմք զանդս՝ զոր առ նախնեօք մերովք ազնուականագոյնք մշակէին ․

Կարի հանճարաբար իմաստասիրէ զայս Կոլումել , և փոքր իրայն իսկ վկայէ ․ Զի ահա , հանդերձ այլովքն , և Քանաան էր երկիր բերրի և արգաւանդ 'ի ժառանգել զայն իսրայելացւոց՝ յետ բնակելոյ անդ քանանացւոցն զամս աւելի քան զեօթն հարիւր ․ և ամք իբր հազար 'ի վերայ անցին մինչև ցգերութի՟ն բաբելացւոց , և յետ այնորիկ իսկ 'ի նմին արգասաւորութե՟ն կայր առանց ծերութե՟ և հիւծութե՟ ․ իսկ զի յետ բազում ժամանակաց գրեթէ յամլութի՟ ասի դարձեալ , ապա քաջ իմաստասիրէ Կոլումել՝ զի ոչ եթէ[1] երկիրն ծերացեալ և պակասեալ է 'ի զօրութե՟ , այլ զի ամայի թողեալ է և խոպանացեալ ․ Այսպէս և քաջ արգասաւորութի՟ տեղեաց տեղեաց , որ վեր 'ի վայր յիշին 'ի վէպս , էր 'ի ջանից տերանցն 'ի մշակութի՟ երկրի և այգեաց և 'ի դարման անդեոց , զորոց ժամ է ասել կարճառօտիւ ․

ՊՐԱԿ ԵՐԿՐՈՐԴ

Յաղագս մշակութե՟ երկրի , և թէ ոյք յաշխարհաց 'ի հին ժամանակս առատութե՟ ցորենոյ եղեն առաւելք ․

Զճառս մշակութե՟ երկրի 'ի կարևորագոյնս ամփոփեմք մասն՝ յարդիւնս ցորենոյ ․ Այն աշխարհք համբաւեալք առատութե՟ ցորենոյ՝ Թրակիա , Սարդինիա , Սիկիլիա , Եգիպտոս , և Ափրիկէ ․

Բիւզանդիա ևեթ քաղաք Թրակիոյ ամի ամի տայր աթենացւոց քառասուն բիւր կեղթ ցորենոյ ․ որպէս վկայէ Դեմոսթենէս ․ Եւ ունէր կեղթն գրիւս վեց , և յաւուրս նորա վաճառէր հնգից դրամակշռոց ․ Հանդերձ այսու , և այլոց քաղաքաց բազմաց և աշխարհաց մատակարարէր Թրակիա ցորեան ․ արդ տես ինձ քանի բերրի հարկ էր նմա լինել ․

Դեմոսթ. ընդդէմ Լեպ. 546. 'ի փոր. 946.

Կատոն[2] համարակալն , այն որ վասն զգօնութե՟ն իմաստուն անուանեցաւ, ոչ վայրապար կոչէ զՍիկիլիա շտեմարան և մայր և դայեակ Հռոմայ ։ Զի անտի երթայր յառաջագոյն 'ի Հռոմ դրեթէ ա̃մ ցորեան 'ի կերակուր ժողովրդեան և զօրացն ։ Նոյն և 'ի Սարդինիոյ ածէր անդր ցորեան բազում, որպէս ցուցանէ Լիւիոս ։

---

[1] Այսպէս ուրեմն ոչ 'ի պարապսելոյ՝ որպէս ոմանց թուեցաւ , և ոչ 'ի ծերութե՟ , այլ առ հեղգութե՟ մերոյ ճշգիւ պտղաբերեն անդք ․ Կոլում. բ. Է.

[2] Կատոն իմաստունն շտեմարան աշխարհին կոչեաց , և դայեակ ժողովրդեան Հռոմայ զՍիկիլիա․․․

Չիք ոք որ ոչ գիտիցէ զառատ պտղաբերութի̃ ցորենոյ երկրին Եգիպտացւոց՝ շահեկանութի̃ն Նեղոսի, որ միջակաբար ողողեալ պարարտացուցանէ զնա[1] ։ Օգոստոս 'ի կացուցանել զաշխարհն մարզ Հռոմոց, հոգ և խնամ կալաւ զձորոյ և զջրադարձից բարեբար գետոյն՝ որ յանփոյթ առնելոյ Թագաւորացն Եգիպտացւոց խըցեալ էին սկաւ, և ետ պեղել զայն զօրացն ։ Նոյն ամի ամի գայր 'ի Հռոմ երկու հազար բիւր գրիւ ցորենոյ, և առանց այնր հասանէր վտանգ սովոյ. որպէս եղեն իսկ առ Օգոստեաւ ։ Զի ոչ մնաց ցորեան 'ի քաղաքին աւելի քան զերից աւուրց 'ի պարէն ժողովրդեանն. և կայսրն առ յոյժ գթութե̃ն եդ 'ի մտի՝ դեղ առնուլ անձամբ և մեռանել, եթէ ոչ նաւատորմին ամբարաբեր յառաջ քան զերիս աւուրսն հասցէ ։ Որ և եհաս 'ի դէպ ժամանակի 'ի փրկութի̃ ժողովրդեանն և Թագաւորին ։ Եւ զմաստուն զգուշութե̃ հռոմայեցւոց առ 'ի պահել 'ի վտանգէն, ասասցուք ընդ հուպ ։ ՍԷՔՍ. ԱՒՐԷԼ յաղթ. 'ի հռմ.

Ոչ ինչ նուազ քան զԵգիպտոս պտղաբերէր Ափրիկէ. ՊԼԻՆ. ԺԸ. Է. զի անդ 'ի մի 'ի գաւառաց՝ գրիւ ցորենոյ բերէր հարիւր և յիսուն, և հատ ցորենոյ մինչև հասկս չորեքհարիւր, որպէս գրեն առ Օգոստոս և առ Ներոն կուսակալք աշխարհին 'ի նոցանէ կացեալք. այլ այս ոչ յաճախ պատահէր, որպէս թուի ։ Նոյն ինքն Պլինիոս՝ գրող այսոցիկ՝ վկայէ, զի 'ի Բէովտիա և յԵգիպտոս ցորենահատն բերէր սովորաբար հարիւր հասկս. և անդ 'ի դէպ տեղւոջ զվերնախնամ տեսչութի̃ն տայ նկատել, զի յա̃մ բուսոց զստածողն մարդկան և զկարևորագոյնն հոգացաւ բեղնաւորագոյն պատրաստել ։ 'Ի Հռոմ, որպէս ասացի, ա̃մ ցորեանն 'ի կերակուր 'ի Սիկիլիոյ և 'ի Սարդինիոյ ածէր յառաջագոյն. այլ 'ի նուաճել Հռոմայեցւոց զԿարքեդոն և զԱղեքսանդրիա, լիագոյն շտեմարանք եղեն նոցա Ափրիկէ և Եգիպտոս ։ Եւ գային ամ յամէ տորմիղք նաւաց ակաղձեալք ցորենով, 'ի կե-

---

Ամենայն պէտք մեր 'ի Սիկիլիոյ լնուին, որպէս եթէ բերք երկրին ոչ վասն բնակչացն ծնանէին, այլ 'ի տուն մեր մթերիցին ։ ԿԻԿԵՐՈՆ 'Ի ՎԷՐՐԷՍ Գ. Է ։

[1] Ընդ Նեղոս որպէս մշակ աշխարհին է ։ ՊԼԻՆ ։

րակուր տիեզերական ժողովրդեանն ։ Նաև 'ի նուազել միոյն հնձոց 'ի լիութենէ բաւականին, միւսն զթերին լնոյր պարենից մայրաքաղաքին տիեզերաց ։ Վասն որոյ և
Լիւ․ լա․ ճ։ յոյժ դիւրագին էր ցորեան 'ի Հռոմ, մինչև գրիւ ցորե-
լե․ կէ։ խգ․ ը նոյ վաճառէր երբեմն երկուց դանգաց կամ փողոց ։ Ծովեզր Ափրիկեայ՝ երկիր արգաւանդ 'ի բերս ցորենոյ՝ էր մասն փարթամ մեծութեցն Կարքեդոնի ։ Լեպտիս միայն քաղաք՝ բնակեալ յաւազուտն փոքր՝ հարկէր նմա օր ըստ օրէ մէն մի տաղանդ ․ և 'ի պատերազմին Փիլիպպեայ՝ հրեշտակք կարքեդոնացւոց հարիւր բիւր գրիւ ցորենոյ, և յիսուն բիւր գարւոյ հասուցին յօգնութիւն հռոմայեցւոց ․ նոյնչափ և հրեշտակք Մասինիսայ ։

Նոյն և 'ի Կոստանդնուպոլիս՝ յետ փոխելոյ անդր աթոռոյ ինքնակալութեան՝ զարմանալի կարգ էր, որպէս 'ի Հռոմ, հայթայթելոյ անբաւ բազմութեան բնակչացն պա-
Սոկրատ․ բ․ ժգ ։ րէնս ։ Զի ինքնակալն Կոստանդին տայր օր ըստ օրէ բաշխել ժողովրդեանն իբրև ութ բիւր գրիւ ցորենոյ՝ որ գայրն յԱղեքսանդրիոյ, պարէնս վաթսուն և չորից բիւրուց ոմանց ․ զի գրիւն հռոմէական ութից ոմանց առ-
Եղիան․ 'ի Սևեր ։ օրեայ պարէն էր ։ 'Ի մեռանել Սեւերոսի Սեպտիմեայ ինքնակալի՝ էին յամբարանոյս հասարակաց 'ի Հռոմ մթերք եօթն ամաց ցորենոյ, աւուրն եօթանասուն և հինգ հազար գրիւ 'ի պարէն վաթսուն բիւր մարդկան ։ Տես ինձ զնախահոգ զգուշութիւն վասն ամացն անպտղութեան ։

Բայց յաշխարհաց աստի էին և այլք բազումք առա-
Կիկ․ Վերր․ յաղ․ ցոր․ ճժբ․ ճժգ ։ տաբերք ցորենոյ ։ Յարտավար երկիր սերմանէր սովորաբար կեղթ մի ցորենոյ ․ և ունէր կեղթ գրիւս վեց, և
Պլին․ ժը․ է ։ գրիւ լտերս իբր քսան ։ 'Ի Տեսարանն բնութեան դնի չափ սերման սերմանելոյ յարտավար երկիր՝ հարիւր և քսան լիտր ցորենոյ, որ հաւասար գտանի ։ Առատագոյն բերք արտավար երկրի էր տասն ընդ միոյ, և ութ ընդ միոյ սովորականն և շահեկան ։ Զայս ինչ Կիկերոն 'ի Ջատագովութեան սիկիլիացւոց ընդդէմ Վերրեսի մանրապատում առնէ, վասն որոյ հարկ էր նմա տեղեակ լինել իրացն ․ և խօսի զլեոնտացւոց երկրէն, որ էր յարգաւանդագունից անդաստանացն Սիկիլիոյ ։ Գրիւ ցորենոյ, որ քան զմերն չորրորդ մասամբ փոքր էր, վաճառէր ծանրագին երից սեստերտայ, կամ եօթն և կէս փողոյ ։ Այժմու մերս քոռ երկոտասան գրիւ է, և հասարակ գինք նորա՝ տասն լիրայ ․ որով գրիւն մեր արժէ վեշտասան փող, սուղ ինչ աւելի ․ և գտանի ծանրագին երկպատիկ հռոմէականին ։

Որ ինչ 'ի Կիկերոնէ առեալ եդաք զցորենոյ, զգինս և զչափ սերման արտավար երկրի և զարգասեաց նորա, մի՛ ոք յօրէնս հաստատունս կալցի զայն. զի ըստ աշխարհաց և ըստ տեղեաց և ըստ ժամանակաց՝ այլ և այլ չափք էին ։

Հինք պէս պէս կասուէին զցորեան. կէսք կամնասայլիւ, Պլին. ԺԸ. Լ: այլք սմբակակոխ ընթադրեալ ձիոց, և կէսք գաւազանաւ ծեծէին զորայն, որպէս և այժմ բազում ուրեք ։ Իսկ առ 'ի պահել ընդերկար զցորեան՝ այլ և այլ հնարք էին նոցա, մանաւանդ 'ի գուբս գետնափորս ամբարել զորայն անկաս, շուրջանակի յարդիւ պատսպարեալ 'ի խոնաւոյ, և ամրափակեալ զբերան գբոյն անթափանց օդոյ ։ Իսկ այնպէս զամս յիսուն անապական պահէր, որպէս վկայէ Վարրոն ։ Ա. յու. ԾԷ.

ՊՐԱԿ ԵՐՐՈՐԴ

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Յաղագս այգեգործութ՟ե, և ազնիւ գինեաց յունաստանի և Իտալիոյ ։

Ոչ ինչ նուազ խնամս երևի կալեալ մարդկան 'ի մշակութ՟ի այգւոյ քան ցորենոյ. Թէպէտ և անագան հնարեցաւ այգեգործութ՟ի ։ Աստուածային գիրք յետ ջրհեղեղին ցուցանեն զգինի գտեալ. “Իսկ սկսաւ, ասէ, Նոյ Ծննդ. Թ. 20: այր հողագործ զերկիր գործել, և տնկեաց այգի„ ։ Որ թէպէտ և յառաջագոյն ծանօթ էր պտղոյն, այլ ոչ գինեաւ ։ Նոյ տնկեաց այգեստանս, և զպէտս խաղողոյ եգիտ. և հնձանահարեալ, և զխաղմուզն շտեմարանեալ, քաղցրութ՟ե նորա պատրեցաւ՝ չև ևս զփորձ առեալ զօրութ՟էն. զի “Արբ, ասէ, 'ի գինւոյն և արբեցաւ„ ։ Հեթանոսք նախագտակ գինւոյ համարեցան զՆոյին՝ ոչ քաջ ծանուցեալ զնա, և յարբեցութ՟է Նոյի պատճառս առեալ՝ ստեղծին զնա աստուած զեղխութ՟ե և գինեհարութ՟ե ։ 'Ի սփռել ապա որդւոց Նոյի ընդ աշխարհ, ածին ընդ իւրեանս զորթ, և ուսուցին որդւոց իւրեանց զպէտս գինւոյ ։ Ասիա նախ զերկրութ՟ե պարգևին առեալ զճաշակ, ճաշակեցոյց զայն ընդ հուպ Եւրոպայ Եւսեբ. Է. և Ափրիկեայ ։ Յաւուրս պատերազմին Տրովադայ լինէին տարուբերք գինւոյ ընդ այլ վաճառս, որպէս 'ի Հոմերոնի գրոցն յայտ է ։

Պահէին յայնժամ զգինի 'ի թակոյս և 'ի տիկս. որպէս և ցայժմ ուրեք ուրեք պահի առ նուազութե՟ փայտի։ Գաղղիացիք բնակեալք առ Պադոս գետով, ասի թէ նոքա գտին զկենցաղօգուտ հնարսն 'ի կարասս փայտակերտս պահելոյ զգինի, ամրափակեալ զնոսա, և պարանդեալ կապանօք զբռնութիւն նորա։ Յայնմհետէ դիւրացաւ և պահելն և կրել զգինի, քան յորժամ 'ի խեցեղէն դիւրաբեկ անօթսն պահէին, և 'ի տիկս՝ որ պատառէինն և բորբոսէին։

Ոդիս. Թ. 197: Օ Մարոնեայ Թրակացւոց քաղաքին յիշէ Հոմերոս զգինին հռչակաւոր, որ քսանապատիկ խառնեալ ջրով պահէր զզօրութի՟ն. բայց Թրակացիք անապակ ըմպէին զայն։ Ապաքէն աստի յայնքան վայրենութե՟ ազգն այն
Պլին. ժդ. դ. զուածանէր[1]։ Պատմէ Պլինիոս, զի յաւուրս իւր Մուկիոս՝[2] այն որ երիցս բդեաշխ եկաց՝ անձամբ 'ի Թրակիա փորձեաց զՀոմերի ասացեալն, 'ի մի չափ գինւոյ ութսուն ջուր խառնեալ, քառապատիկ հելլէն քերթողին ասացուածոյ։

Նոյն մատենագիր և զազգս ազգս հռչակաւոր գինեաց Իտալիոյ յիշատակէ զանուանեալ ոպիմեանսն, զի յաւուրց բդեշխութե՟ Ոպիմեայ՝ ամբարեալ պահէին մինչև յիւր ժամանակս իբր յերկերիւր ամաց հետէ, որ այնուհետև անգինք էին հնութե՟ն։ Նա որպէս պատմեն, սակաւիկ մի 'ի նոցանէ ընդ այլ գինիս խառնեալ, յաւելուին հրաշալի զօրութի՟ և քաղցրութի՟։ Բայց թէպէտ[3] և յոյժ համբաւելին ոպիմեան գինիք, և որ առ Անիկեաւ բդեշխիւն 'ի պահ եդեալք՝ զի և այնք հռչակին, այլ Կիկերոն հարիւր ամաւ և ևս յառաջ քան զմատենագրել Պլինեայ՝ խօսէ զնոսա որպէս զառամեալս և անըմպելի։

Յունաստան աշխարհ և Իտալիա 'ի վերայ բազմապատիկ պարծանացն և ազնիւ գինեաւն գերապանծք եղեն։ 'Ի յունաստան, հանդերձ այլովք բազմօք, և կիպրոսեանն և Լեսբեայն և Քիոյ հռչակաւորք էին, որպէս ցարդ ևս հռչակի կիպրոսեանն։ Ովրատիոս զԼեսբեայն յաճախ յիշատակէ [1] օգտակար և ախորժահամ գոլ. Բայց Քիայն յաղթէր ամենեցուն, և ստուերացուցանէր զփառս այլոցն. մինչև բնակչաց կղզւոյն այնորիկ համարել նախատնկողս այգւոյ, և ուսուցիչս պիտոյից նորա։ Այս ա̃մ ազգք [2] գինեաց յոյժ ցանկալի և մեծագինք էին, մինչև 'ի ժամանակս տղայութեան Լուկուլլեայ 'ի մեծահաց կոչունս 'ի Հռոմ՝ վերջին ևեթ նուագն մատռուակէր յայնցանէ. և ազնուութիւն նոցա առաւել 'ի քաղցր և յախորժահամ ճաշակմն էր։ Աթէն. ա. 26.

---

[1] Ընդ բաժակն ուրախարար
Խառնել Թրակաց է պայքար։
Ովր. քաղերգ. ա. իէ։

[2] Սա է անուանին Մուկիոս, որ զօրավիգն եղեւ Վեսպասիանոսի 'ի հիմնալ ինքնակալութե՟։

[3] Ազնիւք են և այնք, ոչ ժխտեմ, այլ յոյժ ծերացեալք. և կորուսեալ է նոցա զցանկալին քաղցրութի՟, և զմրկցուցիչք են։ Կիկ. 'ի Բրուտ. մձէ։

Հռոմուլեայ յայն սակս համարի Պլինիոս պատուիրեալ կաթամբ առնել զքաւուի̃, և Նումայ արգելեալ՝ չհեղուլ գինի 'ի խարոյկ մեռելոց առ 'ի պատիւ, զի չև ևս յայնժամ յաճախեալ էին այգեստանք յԻտալիա, այլ ապա բազմացան։ Եւ որպէս հաւանագոյն թուի, զայս ևս շնորհ 'ի յունաստանէ ընկալաւ Իտալիա 'ի գինեէտ աշխարհէն, որպէս յետոյ զհրահանգս արուեստից և գիտութեանց։ Պլին. ժդ. ժէ.

Յաւուրս Կամիլլեայ՝ [3] ցանկութք գինւոյն Իտալիոյ անդր վերստին յարձակեցան գաղղիացիք. զի ախորժահամ ճաշակն զմայլեցուցիչ քմաց նոցա՝ ձգեաց զնոսա 'ի հայրենեացն։

Յա̃մ տեղեաց համբաւելոց ազնիւ գինւոյն՝ երկու երիր մասն էին գաւառք Իտալիոյ։ Սաղնջական [4] սովորութիւն էր բնակչաց աշխարհին, և է իսկ ցարդ, յենուլ զորթ 'ի ծառս՝ [5] մանաւանդ 'ի կաղամախ՝ յորս ուռք մինչ 'ի գագաթունսն պատաղին, քաջ վայելուչ և հաճոյ աչաց 'ի տեսանել. և բազում ուրեք խէչ և նեցուկս ներքոյ հաստատեալ։ Երկիրն եւեթ Կապուայ մատուցանէր զՄասիկայն, և զկաղենեանն, զփորմեանն, զկէկուպեանն և զփաղերնեան գինիս, զորս Ովրատիոս[1] ներբողէ 'ի տաղս իւր։ Ապաքէն արգասաւորու՟ն երկրին և մարմանդ վայրք էին պատճառք ազնուու՟ն գինւոյն, այլ ոչ է մարթ ժխտել՝ զի առաւել ևս 'ի նոյն նպաստամատոյցք լինէին փոյթ և ճարտարու՟ն այգեգործացն, որք ա՟մ խնամով և մտադիւրու՟ք պարապէին 'ի մշակու՟թի։ Եւ յայտ այս յայնմանէ է, զի յաւուրս Պլինեայ՝ իբր հարիւր ամաւ յետոյ քան զՈվրատիոս՝ այն[2] բազմահռչակ ազգ ազգ գինեացն խառնելի եղէն յանխնամակալու՟է և 'ի տգիտու՟է այգեգործացն, որք 'ի յոյս և 'ի հրապոյրս շահու՝ խնդրէին կուտս յոլովս և ոչ ըլաւն։

---

[1] Աստ զԼէսբեանն ընդ հովանեաւ
Արբցես զանմեղ զբաժակ.
Ովր. Փաղէրֆ. ա. ծէ. 21։

[2] Այնքան էր մեծարգի գինին յունաստանի, զի 'ի կոչունս մեն մի նուագ մատռուակէր։ . . . Լ. Լուկուլլոս մինչ դեռ մանուկն էր, 'ի բազմախորտիկ ճաշս 'ի տան հօր իւրոյ ոչ առաւել քան զմի նուագ ետես մատռուակեալ 'ի գինւոյ յունաստանի։ Պլին. 'ի Վարր. ժդ. ժէ։

[3] Գաղղիացիք, որպէս համբաւի, 'ի քաղցրութէ պտղոց, և մանաւանդ նորաճաշակ գինւոյն ըզմայլեցուցիչ ախորժականն ձգեալ հասին անցին ընդ լերինս Ալպեայ։ Ե. ԼԳ.

[4] 'Ի դաշտս Կամպանիոյ ընդ կաղամախս ամուսնաւորեն զորթս. որ զամուսնոջն գիրկս արկեալ կամակոր բազկօք, մինչ 'ի գագաթն ընդ ուղէշս նոցա 'ի վեր սողոսկին ծնգակապ բարունակօքն։ Պլին. ժդ. ա։

[5] 'Ի [illegible] Ովրա- [illegible]

Զամուսնածիգ այգին ուռոյն 'ի ճապաղ,
Մերթ հարսնածէ առ բարձրուղէշ կաղամախ։
Վէրէրֆ. բ։

Պլին. ժդ. գ. Պլինիոս բազում օրինակօք ցուցանէ զխտիր պտղաբերու՟է երկրի ըստ քաջ և ըստ յոռի մշակու՟թե՟ն։ Եւ հանդերձ այլովքն զքերականի ուրումն երևելւոյ, որ յաւուրս Տիբերի և Կղօդեայ եկաց, պատմէ զիրս։ Զի ստացաւ նա դիւրագին զայգի խոպանացեալ 'ի բազմաժամանակեայ անմշակու՟է, և ջանիւ մեծաւ և ճարտար մշակու՟թք 'ի սակաւ ամս արար սքանչելի փոփոխու՟մն։ Ընդ որոյ մախացեալ ընդ նորանշան պտղաբերու՟թին 'ի մէջ ամուլ և անբեր այգեստանեայց՝ որ շուրջ զնովաւ այգեգործքն բնակեալ էին, առ 'ի ծածկել զհեղգու՟թի և զտգիտու՟ն իւրեանց՝ ամբաստանէին զնա 'ի մոգու՟ն և 'ի դիւթու՟թի։

Աթէն. ա. 26. Յա՟մ գինեաց ասէ Կամպանիոյ՝ Փաղերնեայն առա

Եւ ուրեք այրի կոչէ զծառս 'ի ցամաքել որթոյն յեցելոյ 'ի նոսա.
Եւ մերթ այրեաց ծառոց կցորդ
Տնկագործէ առ ընթեր զորթ.
Տաղերգ. դ. Ե. 30։

Եւ այլ ուրեք ամուրի կոչէ, առ որում չէ փնջեալ էր որթ։
Սօսն 'ի բաց ամուրի
Հալածէ ըզկնձնի։
Տաղերգ. Բ. ԺԵ. 4։

[1] Դու զկեկուպեանն ըմպես ըզհոյզ,
Եւ զի՛ հնձանըս կաղենեան ճմլեալ ողկոյզ.
Ոչ փաղերնեան որթք յիմ բաժակ
Եւ ոչ փորմեան խառնեն բլուրքըն զանապակ։
Տաղերգ. Ա. Ի. 9։

[2] Որ արդ անկաւ հեղգու՟ք մշակացն։ . . . Զի հոգովք և մշակու՟ք լինէր այն։ Եւ այն ևս բարձաւ այգեգործացն յանցանօք. զի յառատութեն կթոցն ջանան և ոչ յազնուու՟է։ Պլին. ժդ. Ը։

ւել ցանկալի էր․ զի էր բարկ և սաստիկ, և յառաջ քան զամս տասն ոչ էր ըմպելի։ Եւ ամոքէին մեղու զխըստութիւն և զսաստկութիւն նորա, կամ 'ի Քիոյն գինւոյ խառնէին յայն, և փոխէր 'ի գինի ազնիւ։ Ապաքէն 'ի մասինս յայսմիկ հաւատարիմք են կիրթ և զգայուն ախորժակք բարեկեցիկ հռոմայեցւոցն յետին ժամանակաց, որք 'ի խրախուսնս կոչնոց ոչ ինչ յախորժելեաց և 'ի ցանկալեաց զգայութեանց թերի թողլին։ Դին և այլ ազգք փաղերնեան գինւոյ քաղցունք և մեղմագոյնք, այլ ոչ նոյնպէս ցանկալիք։

Նախնիք, հմուտք ազնուութեան գինւոյ, ոչ անգիտացան և զնմանակարութիւնս նորա։ Թողում զԶաղեւկեայ օրէնսն, որ լոկրացւոց բնակելոց մերձ 'ի Զեփիւրիոն մահու չափ արգել մի ումեք ըմպել գինի՝ բայց միայն հիւանդաց։ Մասիլիացիք և միլետացիք ներողագոյն և չափաւորագոյն եդեալ օրէնս, կանանց և եթ արգելին զայն․ և առ նախնի հռոմայեցիս ազատագունդ մանկտւոյն՝ յերեսնամենից և 'ի խոնարհ՝ արգելեալ էին գիներբուք․ իսկ կանանց՝[1] ամենեւին իսկ, վասն դիւրաւ զառածանելոյ զեղխութեան նոցա 'ի խորս անօրէնութեանց։ Սենեկա ողբայ դառնապէս, զի յաւուրս իւր գրեթէ առ հասարակ լուծանէին օրէնքս այս, և ասէ[2]․ Բնութիւն նոյն է նոցա տկար և փափուկ, իսկ բարք ոչ ևս նոյն՝ այլ յեղափոխեալ․ հաւասար արանց հզօրաց գինեհարբին, զգիշերս հանեն ընդ նոսա 'ի խրախուսնս, և անապակ 'ի ձեռին՝ ձայն տան նոցա 'ի գիներբուս, և մրցին յաղթել նոցա։

Աթէն. Ժ. 429.

Ոչ վայրապար արդեօք Ինքնակալն Դոմետիանոս վասն այգեաց զհրովարտակն արար․ զի զեղանէին հնձանք գինւով, և ցորեան ոչ գոյր․ և գիտաց նա զի յառաւել խնամակալութենէ միոյն՝ միւսոյն անխնամ լինէր մշակութիւն, և վասն այսորիկ արգել մի ևս ուրեք յԻտալիա նոր այգի տնկել․ և 'ի մարզս աշխարհին խլել զորթս, և մի աւելի քան զկէսս այգեստանեաց թողուլ։ Փիլոստրատ յաւելու իսկ՝ թէ համօրէն զամենայն այգիս հրաման ետ խլել, կամ զաշխարհին և եթ ասիացւոց․ զի ասէ, թէ ապստամբութեանց՝ որ ուրեք ուրեք 'ի քաղաքաց դիպէին՝ գինին համարէր առիթ։ Նմին իրի առաքեցին առ նա ասիացիք

Սուետոն. Ի Դոմետ. Է.

Փիլոստ. յԱպոլ. Զ. ԽԷ։

---

[1] Կանայք հռոմայեցիք ոչ ըմպէին երբեմն գինի, թէ գուցէ յանպատեհս սահեսցին․ զի 'ի զեղխութեան հօրն Դիոնիսեայ յանարժան Աստղիկն գոյղն անցք էին։ Վալեր. Մաքս. Բ. Ա։

[2] Ոչ ինչ ընդհատ տքնին, ոչ նուազ արբենան, և ձայն տան արանց 'ի գիներբուս։ Սենեկ. Թղթ. ՂԵ։

զՍկոպելլիանոս, որ 'ի Զմիւռնա վարժապետն էր ճարտարխօսութե̃. և հզօր աղերսանօք հրաման էառ նա ոչ միայն մշակելոյ անդրէն զայգիս, այլ և զի որ հեղգայցենն՝ տուժեսցին ։ Բայց այլ ինչ կարծի լեալ հաւաստի պատճառք փոխելոյ հրովարտակին. զի գտան տոմսակք ընդ քաղաքն, գրեալ 'ի նոսա 'ի կրկին տողս հելլենս այս իմաստ. Թէ և հուպ առ արմ̃ն կերիցես զիս, բերից զբաւականն 'ի նուէր զոհին Կեսարու ։ Սուետ. Դոմետ.

Բայց որպէս Թիլլըմն ասէ, Թուի Թէ հրովարտակն այն եկաց 'ի կողմանս արևմտից 'ի մեծ մասն աշխարհին մինչև ցաւուրս Պրոբոսի, զամս իբր երկերիւր ։ Իսկ Պրոբոս կայսր յետ բազում պատերազմացն, ընդ ա̃մ աշխարհ ինքնակալութե̃ իւրոյ հաստատեալ զխաղաղութի̃՝ պարապեցուցանէր զզօրսն 'ի գործ կենցաղօգուտ, զի մի̃ պարապորդք կացեալ՝ զեղծիցին, և ձրի զռոճիկն կերիցեն ։ Նա որպէս երբեմն Հաննիբաղ ելից զԱփրիկէ ձիթաստանօք, զի մի̃ զօրքն անգործ մնացեալ՝ յապստամբութի̃ մտաբերեսցեն, ըստ նմին օրինակի և Պրոբոս աշխատեցոյց զզօրականն 'ի տնկել այգիս ընդ դարևանդս 'ի Գաղղիա և 'ի Պանոնիա և 'ի Մեսիա և յայլ բազում տեղիս ։ Նա ամենեցուն հրաման ետ, գաղղիացւոց և պանոնիացւոց և սպանիացւոց, տնկել այգեստանս որչափ և կամիցին. զի հրաման Դոմետիանոսի ոչ էր հասարակաց ամենեցուն ։

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Պտղաբերութի̃ այգեաց յաւուրս Կոլումելլայ ։

Մինչ չև վախճանեալ զճառս այգեգործութե̃, ասացից 'ի Կոլումելլայ համառօտիւ յաղագս պտղաբերութե̃ այգեստանաց ժամանակին. զի ինչ ինչ մանրամասնաբար նշանակէ՝ որ ինձ Թուին արժանի գրոց յիշատակի, և յաւելու ճիշդ զհաշիւ ելի և մտի եօթանց արտավարաց՝ առ 'ի ցուցանել զայգեգործութի̃ շահաւէտ և արդասաւոր քան զայլ ա̃մ իրաց մշակութի̃, և քան զցորենոյ ։ Որ Թերևս 'ի ժամանակին յայնմիկ այնպէս էր, այլ արդ ոչ նոյնպիսի, գէԹ ըստ հասարակաց կարծեաց ։ Իցեն այսմ պատճառք, արկածք օդոց կողմանցս՝ վնասակարք այգեաց, սառամանիք, անձրևք և դօս, յորոց զերծ են ջերմն նահանգք ։ Դարձեալ և 'ի գինս կարասից վասն ամայն առատութե՟ առաւելագոյն մասն շահից ծախի. և մաքս դարձեալ նուազէ յոյժ զշահս գինւոյ: Նա՛ և հինք իսկ ոչ ամենեքեան զկարծիս Կոլումելլայ ունին: Ապաքէն և[1] Կատոն զայգեստանս շահաւէտագոյն վարկանէր, այլ որ ազնիւ և առատ բերեն գինի, զորոց և արդ գնոյն է ասել: Այլ բազումք շահաւէտ ևս զմարգագետին համարէին, զտոյժս մշակութե՟ այգեաց առաւել քան զշահս պտղաբերութե՟ն վարկուցեալ:

ԾԱԽՔ ԿԱՐԵՒՈՐՔ ԵՕԹՆ ԱՐՏԱՎԱՐ ԱՅԳԵՍՏԱՆԻ

	ՍԵՍՏԵՐՏՔ
Որ են այսոքիկ.	
Ա. Գինք ստրկի 'ի մշակել զեօթն արտավար այգեստան, առ որ մի ոք բաւական է.	8000
Բ. Գինք եօթն արտավար երկրի.	7000
Գ. Գինք խեչակացն, և այլ ծախք կարևորք 'ի մշակութ՟ի եօթն արտավար երկրին.	14000
Երեքին միահամուռ.	29000
Դ. Դարձեալ և զշահ քսանևինն հազար սեստերտից յաւելեալ՝ վեց առ հարիւր, զի զերկեամ մի մինչև 'ի պտղաբերել երկրին մնայ արծաթն անգործ.	3480
Լինին համագումար.	32480

ՊՏՂԱԲԵՐՈՒԹԻՒՆ ԵՕԹՆ ԱՐՏԱՎԱՐ ԱՅԳԵՍՏԱՆԻ

Եօթն արտավար այգեստան պտղաբերէ ամի ամի վեց հազար երեքարիւր սեստերտս. և յայտ է այսպէս:

Տիկն տանի մարս քսան, և դիւրագին քան զերեքարիւր սեստերտս ոչ վաճառի. իսկ արտավար գետին բերէ յամի նուազութե՟ երիս տիկս[2], որ արժեն սեստերտս ինն հարիւր. ապա ուրեմն եօթն արտավար բերեն սեստերտս վեց հազար և երեք հարիւր: Որդ շահք ա՟մ ծախուցն երեսուն և երկու հազար չորեքհարիւր և ութսուն սեստերտից, համարեալ վեց առ հարիւր 'ի տարւոջ, գումարին հազար ինն հարիւր քառասուն և ութ սեստերտք, սուղ ինչ աւելի. իսկ շահք տարեւորական արդասեաց եօթն արտավար այգեստանի են վեց հազար և երեքարիւր սեստերտք, որ գտանի առաւել յոյժ քան զմիւսն. և այն ըստ նուազ պտղաբերութե՟ն, զոր և Կոլումելն կամի ցուցանել.

---

[1] Ապաքէն Կատոն շահեկանագոյն դատի զայգեստան առատաբեր ազնիւ գինւոյ: ... Այլք շահաւէտ ևս զմարգագետին համարին: ... Եւ են՝ որք զծախս այգեստանեաց առաւել քան զշահն վարկանին: Վառր. յղ. մղ. ա. Է:

[2] Կոլումել զայգեստանացն Սենեկայ ասէ, թէ արտավար երկիր բերէր ութ տիկս: Գ. Գ: Իսկ Վառրոն, թէ էին ժողմանք՝ որք տային և հնգետասան տիկս արտավար երկիր ածէր: Ժ. Է:

'Ի վերայ այսր և զտաշտաթաղիցն յաւելու շահս. Այս տաշտաթաղ է բարունակ կամ ուռ որթոյ թաղեալ յերկիր և արմատացեալ յաճումն: Արդ յարտավար երկիր ամի ամի աճէն ածք տաշտաթաղք բիւր մի և աւելի, որ արժէին սեստերտս երեք հազար. ապա տաշտաթաղք եօթանց արտավարաց բերէին երկու բիւր և հազար սեստերտս: Այս զայս Կոլումել ըստ նուազագոյն շահեկանուե՟ տաշտաթաղիցն դնէ, զի զկրկնապատիկն ամի ամի շահէր՝ որպէս վկայէ իսկ ինքն: Այս խօսի նա զայգեստանաց Իտալիոյ, և ոչ զգաւառացն:

Արդ եթէ գինւոյն և տաշտաթաղիցն շահք 'ի վերայ միմեանց դնիցին, լինին եկամուտք տարեւորք եօթանց արտավարացն քսանևեօթն հազար և երեքարիւր.

Բայց այժմ 'ի տաշտաթաղից ոչ ինչ շահք են. զի յայնժամ 'ի բազում գաւառս նուազութ՟ի յոյժ էր այգեաց, և վասն հռչակեալ համբաւոյ գինւոյն Իտալիոյ՝ անդր ընթանային յոմ՟ կողմանց առնուլ ածս յորթոց աշխարհին, առ 'ի տնկել այգեստանս բարեբերս յերկիր՝ ուր չև ևս տնկեալ էին, կամ անշահք տնկեալ.

ԳՐԱԿ ՉՈՐՐՈՐԴ

Յաղագս անդէորդութե՟.

Անդէորդութի՟ որպէս ասացաք՝ մասն էր երկրագործուե՟, և մասն կարեւոր[1]. ոչ միայն զի անդեայք առատ աղբովն պարարտացուցեալ զերկիր՝ պահեն և յաւելուն զարգասաւորուի՟ նորա, այլ և զի երկախառնեն 'ի մշակութիւն՝ զտարժանաւոր մասն աշխատութե՟ն տարեալ. Այսր աղագաւ[2] զարջառ՝ զաշխատակից մարդոյ յերկրագործութ՟՝ յոյժ խնամքին նախնիք , և զսպանողս նորա մահապարտ առնէին որպէս զմարդասպանս , իբր զի սպանութ՟ նորա՝ մարդկան գործէր վնաս , որոյ սնունդ և կեանք կարօտ են օգնականութե՟ նորա ։

---

[1] Անդէորդութիւն անդատին 'ի հեկանագոյն մասն: անդ: սկզբանէ մասն է մշակուե՟, և շա.

[2] Զարջառ զբաղմաշխատ օգնա.

Որչափ 'ի սկիզբն ժամանակաց ոք 'ի վեր ելանիցէ , յաճախագոյն առ ա՟մ ազգս զշահաւէտութ՟ գարմանոյ անդեոցն գտանէ ։ Թողեալ անդր զԱբրահամ՝ որոյ բազմութ՟ խաշանցն և արջառոց յամենայն հովուացն յայտ է , և զԼաբան զԹոռն եղբօր նորա ՝Նաքովրայ , զՅոբայ իսկ զմեծութիւն առաւել յանդեայս կացուցանէն գիրք ․ զի էին , ասէ , խաշինք նորա եօթն հազար , ուղտք երեք հազար , լուծք եզանց հինգ հարիւր , և էշք մատակք արօտականք հինգ հարիւր ։ Յոբ․ ա․ 3 ։

Սովաւ երկիրն աւետեաց , թէպէտ և անձուկ , մեծացուցանէր զիշխանս և զանհնարին բազմութ՟ բնակչացն աւելի քան զերեքարիւր բիւրս հանդերձ կանամբք և մանկտւով ։ Աքաաբ արքայ Իսրայելի նուաճեալ զմովաբացիս , ամի ամի առնոյր 'ի նոցանէ հարկս հարիւր հազար մաքեաց , և հարիւր հազար խոյոց գեղմնաւորաց ։ Դ․ Թագ․ Գ․ 4․ Արդ սոքա 'ի սուղ ժամանակի աճեցեալ և բազմացեալ՝ զո՞ր առատութ՟ ոչ ածէին աշխարհին ։ Դարձեալ գիրք 'ի ցուցանել զՈզիա արքայ ամենևին կատարեալ յառաջնորդութ՟ աշխարհի , զայն ևս յաւելուն՝ զի անասուն բազում էր նորա 'ի Սեփեղա և 'ի դաշտին , և այգեգործք 'ի լերինն և 'ի Կարմեղոս․ և զի շինեաց նա աշտարակս յանապատին և զօրացոյց 'ի բնակութ՟ հօտին և հովուաց՝ պատսպարել նոցա անդ , և փորեաց ջրհորս բազումս ։ Բ․ Մնաց․ ԻԶ․ 10 ։ Դաստակերտք գծուծք , այլ ոչ ինչ նուազ քան զհոյակապ ապարանս գովելիք ։ Չէ՞ արդեօք խնամք մշակութե՟ և հովուութե՟ մեծացուցին զթագաւորութ՟ նորա , հաւասարեալ փարթամագունիցն 'ի թագաւորաց Յուդայ ։ Բայց գիրք յաւելուն և զպատճառն , “ Քանզի սիրէր , ասէ , զերկրագործութ՟ „ ․ կամ ճիշդ ըստ եբրայականին ասացեալ , “ քանզի սիրէր զերկիր „ ։ Իմա , զի բերկրէր նովաւ , թերևս և ինքնին մշակէր ․ զի 'ի յարգի կացուցանէր զերկրագործութ՟ , խելամուտ գոլով կարևորութե՟ նորա ․ գիտէր զի երկիր խնամով և մտադիւրութ՟ մշակեալ՝ էր աղբիւր աներկեան մեծութե՟ց իշխանաց և ժողովրդոց ։ Նմին իրի և զխնամակալութիւն զայն համա-

---

կան մշակին՝ այնպէս յարգէին նախնիք ․ զի զսպանողս նորա մահապարտ առնէին որպէս զսպանողս քաղաքակցացն ։ Կոլում․ Զ․ յ—ջբ ։

րէր կարեւոր պարտս թագաւորի, թէպէտ և 'ի բազմաց արհամարհեալ·

Բ. Մնաց. ԼԲ. 29. Այլ զԵզեկիայ զբարեպաշտ արքայէ ասեն գիրք, թէ եղև նմա պատրաստութի՟ խաշանց և արջառոց բազում, և թէ ետ նմա Տ՟ր ստացուածս բազումս յոյժ։ Զի զայլ ա՟մ շահաւէտութի՟ նոցա 'ի բաց թողեալ, 'ի կթոց եւեթ խաշանցն շահ բազում յոյժ հարկ էր գանձել աշխարհին առ անթիւ բազմութե՟ նոցա։ Վասն այնորիկ իսկ կտուրք խաշանցն խնջոյիւք կատարէին։

Նոյն և առ հեթանոսս անդստին 'ի վաղ ժամանակաց՝ թագաւորաց մեծութիւնք էին հօտք և նախիրք, որպէս զԼատինայն և զՈդիսեայ Վիրգիլ և Հոմեր վիպեն. Այլ առ Հռոմայեցիսն նոյնպէս. և օրէնք էին նոցա հինաւանդ, տուժս փոխանակ արծաթոյ առնուլ արջառ և ոչխարս։

Արդ յայսքան շահաւէտութի՟ անդէորդութե՟ հայեցեալ՝ մի ոք զարմասցի, զի Վարրոն՝ այր մեծիմաստ՝ արժան համարեցաւ ա՟մ ճշգրտիւ և հաւաստեաւ գրել զէրէոց պիտանեաց գեղջէից յերկրագործութի՟, կամ 'ի մնունդ, կամ 'ի բեռնակրութե՟ և 'ի դիւրութե՟ նոցա։ Որ նախ զհօտից խաշանց ճառէ և զխոզից, և ապա զնախրաց արջառոց զիշոց զձիոց և զուղտուց. և յես տրուպն հանգուցանէ զճառս իւր, յերամս աղաւնեաց, տատրակաց, հաւուց և սագաց, և այլոց սոցին սակի կենդանեաց։

Կոլումել. Գ. յառաջ. Է. Հանգոյն նմին և Կոլումել մանրամասնաբար զայսցանէ ճառէ. և Կատոն համարակալ հարևանցի զմանէ։ Սա հարցեալ՝ թէ իւ վաղ և անվրէպ մեծասցի գեղջեայն, ասէ. Անդէորդութե՟, զի սա խնամով և ճարտար հովուին հայթայթէ շահս անբաւ։

Այլ կարի իսկ քաջ. զի անդեայք յար 'ի կարևոր սպասու կան մարդկան, և պիտանութի՟ նոցա ոչ ընդ կեանսն վախճանի։ Նոքա բաժանեն ընդ մարդոյ, մանաւանդ թէ բնաւ իսկ բառնան 'ի նմանէ զաշխատութե՟ երկրագործութե՟ն, և առանց նոցա երկիր արգաւանդ՝ ամուլ և անբեր է։ Նոքա զբեռինս կրեն 'ի տուն, և զշեղջս մեծութե՟ց նորա 'ի բացէ յապահովէն ընդ յարկաւ, և զնա ինքն բարձեալ բերեն։ Այլ բազումք ևս մատուցանեն 'ի սեղան նորա կաթն և կոգի և պանիր՝ կերակուրս ստածիչս, և խորտիկս ազնիւս. և զասր 'ի նիւթ անսպառ ազգի ազգի կերպասուցն 'ի պէտս հանդերձից, և բազում այլ ինչ 'ի դիւրութե՟ կենաց։

Ապա ուրեմն անդաստան ծածկեալ հասկօք և որթովք և հօտիւք՝ արդարև զանձարան մեծուե՟ց է, ցանկալի և պատուական քան զՊերուվիայն՝ ուստի ոսկին և արծաթն հատանի։ Զի նովաւ ևեթ չապրէր մարդ 'ի սովոյ 'ի ծարաւոյ և 'ի ցրտոյ. իսկ աստ բնակեալ յերկիր բարի՝ տեսանէ շուրջ զիւրև ժողովեալ զա՟մ ինչ իւր, և յածու փոքրիկ՝ ժառանգէ զփարթամ և զարդար մեծուի՟ս. զորս թէպէտ և առատաբաշխ ձեռինն ա՟յ դաւանէ պարգևս, յորմէ զա՟մն ընկալաւ, սակայն և որպէս յարգասիս երկոց իւրոց բերկրի 'ի նոսա։

ՊՐԱԿ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Անմեղ և բերկրալի կենցաղ գեղջկեաց և մշակաց։

Ոչ զեկամուտս միայն և զշահ մատուցանէ երկրագործուի՟, և ոչ այն կարևորագոյն նորայն է յոլովուի՟։ Որք միանգամ զգեղջէից կենացն գրեցին, ամենեքին ներբողեն զայն որպէս արդարև իմաստուե՟ և երանուե՟ կեանս՝ որ ածէ զմարդ յարդարութ՟ի 'ի ժուժկալութ՟ի 'ի զգաստուի՟ և յանկեղծուի՟, և բնաւ ամենևին առաքինի առնէ, և պարսպէ յախտից չարաց՝ ամրացուցեալ զնա 'ի սահմանս պարտուցն և հանապազորդ անպարապելի աշխատուե՟ն։ [1] Զեղխութ՟ի ագահուի՟ անիրաւուի՟ բռնուի՟ և փառամոլուի՟՝ մեծուե՟ցն կցորդք անանջրպետք՝ 'ի քաղաքս մեծամեծս իջևանին, ուր ճարակ և պատեհք են նոցա. անապատական խիստ և աշխատաւոր կեանք՝ ախտից այսոցիկ անասպնջականք են։ Աստի պատճառս առին քերթողք այլաբանել, թէ արդարութ՟են դիցուհին Աստրէա՝ 'ի մեկնել իւրում յաշխարհէ՝ անդ 'ի գիւղս զվերջին օթևանս կալաւ։

'Ի գիրս Կատոնի է օրինակ աղօթից երկրագործաց, յոր երևին հետք ցանկալի աւանդից նախնեացն՝ որք զամենայն ինչ ա՟յ ընծայէին, և յա՟մ պէտս կենցաղոյս առ նա կարգային՝ որ տնօրինեն զա՟մ, և որում հնազանդին ա՟մ ինչ ։ Ոչ անհաճոյ վարկանիմ ընթերցողաց ածել անտի մասն ինչ ոչ սակաւ . 'ի սոլիտաւրիղեան կամ ըստ այլոց 'ի սովետաւրիղեան տօնին, յորում աւուր գեղջկեցն շուրջ եկեալ զիւրաքանչիւր անդաստանաւն՝ քաւութ՟իս առնէին և զոհս մատուցանէին դից, անդ մաղթեր աղօթականն այսպէս . « Զքեզ աղաչեմ և 'ի քէն խնդրեմ, ո՛ հայրդ Արէս, օգնական մեր լեր . լո՛ւր ինձ և ընտանեաց իմոց և ծառայից՝ որ յանդաստանիս 'ի վիճակի իմում և 'ի կալուածս առ քեզ պաղատին. փարատեա 'ի մէնջ, արգել և հեռացո զա՟մ ախտս և զհիւանդութ՟իս՝ որ ծանօթ և որ անծանօթ, զաւեր և զմրրիկ, և զա՟մ արկածս և զվնասակարութ՟ի օդոյ . աճեցո և հասունացո զարմտիս մեր, զցորեան, զայգի և զծառս պտղաբերս . կեցո զհովիւս և զհօտս, և շնորհեա մեզ կեանս և առողջութիւն ինձ և ընտանեաց իմոց և ծառայից » ։ Ամաչեսցեն քրիստոնեայք և մանաւանդ տեարք անդաստանաց, որք ոչ փութան խնդրել յա՟յ զպտղաբերութ՟ի, և ամօթ համարին գոհանալ զնմանէ վասն պտղաբերութեանն ։ Զի և զճաշ աղօթիւք սկսանէին և կատարէին հեթանոսք . իսկ զարդիս գրեթէ առ հասարակ ամենեքին առանց օրհնութ՟ե ճաշեմք ։

---

[1] Զեղխուե՟ ծնանի 'ի քաղաքի. և զեղխութ՟ե կցորդ անմեկնելի է ագահուե՟, և յագահուե՟ բղխեալ շառաւիղէ յանդգնուի՟, և անտի ա՟մ ոճիրք և չարագործուի՟ք ծնանին։ ... 'Ի գեղջէիցն բարս, 'ի չորաբեկ պարէնս, յոյն խիստ և յանպաճոյճ կեանսն չարիքս այս ոչ ծնանին։ ... Որ ցանկուի՟ք տեղի գտցեն 'ի նոսա՝ որք 'ի գեղջ հանապազ բնակեն, և զերկիր գործեն. զի այս կենցաղ անլծորդելի է ցանկուե՟, և անքակ ընդ պատշաճն լծորդեալ։ ..., Իսկ անապատական կեանք պարկեշտութ՟ե և զգաստուե՟ և արդարուե՟ վարժապետ է։ Կիկ. Ռոսկ. լթ. հէ։

ա. է. ժբ. ա. ժբ. յ—զբ. Կոլումել զպարտուց տերանց առ մշակսն և զվիճակակալաց մանաւորաբար կարգէ խրատս լի արդարութ՟բ և մարդասիրութ՟բ ։ Քանզի ասէ . Խնամ լիցի զգեստուց նոցա, զի զկարեւորն առանց փափկութ՟ե զգեցցին առ 'ի հողմոց և 'ի ցրտոյ և յանձրեւաց պահպանութ՟ի ։ Զգոյշ լիցին տեարք, մի՛ թուլութ՟բ և մի՛ սաստիկ խստութ՟բ հրամայել, այլ ըստ արդար չափոյ . [1] երկեցուցանել զնոսա քան պատուհասել . առ ընթեր կալ նոցա հանապազ, և չտալ թոյլ չարեաց . զի իմաստութ՟ի այն է, խափանել զչարիս՝ քան զսաստ պատուհասին ածել զնոքօք . խնամ ունել հիւանդաց և լինել զա՟մ պէտս նոցա, որով յօժարագոյնք լիցին մշակք 'ի ծառայութ՟ի ։ Այսու օրինակաւ և ընդ գերիմն խրատէ վարել, զորս շղթայակապ սովոր էին վարել յերկրագործութ՟ի, և յոյժ խստանային առ նոսա տեարքն ։

Եւ զայն ոչ արժան համարիմ լռել, զոր 'ի խօսել զվիճակակալաց՝ ասէ . Խնամակալութ՟ի բնակեցոյց զայր ընդ կնոջ յօգնականութիւն միմեանց . նմին իրի զերկաքանչիւրոցն սահմանեաց զգործս ։ Մ՛իւսն արտաքոյ կրել ցուրտ և տօթ, գնալ ճանապարհ հեռի, վաստակել 'ի խաղաղութե̃ և 'ի պատերազմի 'ի մշակութի̃ կամ 'ի զինուորութի̃, և զա̃մ գործ կորովութե̃ և աշխատութե̃ գործել. իսկ զմիւսն անձեռնհաս այսոցիկ՝ սահմանեաց յառտնին իւրս, և ըստ պայմանի պաշտամանն՝ առ 'ի մտադրութի̃ և 'ի զգուշութի̃՝ երկչոտ քան զայրն արար. զի երկիւղ մտադիր է և զգոյշ ։ Իսկ զայրն, որում գրեթէ հանապազ արտաքոյ տանն հասանէին վաստակք, և հարկ է նմա ստէպ վանել զանիրաւութի̃, արիագոյն վիճակեցոյց ։ Վասն որոյ յա̃մ ժամանակի [1] առ Յոյնս և առ Հռոմայեցիս՝ կանանց անկ էր տանտիկնութի̃, իսկ արք զարտաքինսն վճարեալ գործս՝ առանց ա̃մ հոգոյ մտանէին 'ի տուն հանգչել անզբաղ ։ Զոր Ովրատիոս [2] քաջ վայելուչ նկարագրէ 'ի միում 'ի տաղիցն, ասէ. Իսկ պարկեշտ տիկին նորա որպէս զսաբինացին և զապուլեցիս արևակէզ՝ զառտնին իւրայ և զմանկանցն խնամ ունի. և 'ի մակաղատեղ զխաշինսն ածեալ՝ կթէ զկաթն, և հուր կազմեալ պատրաստէ 'ի դառնալ վաստակելոյ առնն 'ի տուն, և զնորահաս գինին մատռուակէ նմա, և սպասաւորէ 'ի սեղան խորտիկս առանց գնոյ տնասունս.

---

[1] Քանզի դիւրիւ գործէին չարիս ։

Երկրագործութի̃ այնքան ճոխ և գեղեցիկ իմաստս մատուցանէ քերթողին, զի նախնիք 'ի խօսելն զայնմանէ՝ գեղեցկագոյն յոյժ զճառսն յարդարեն ։ Երանի՛ գեղջկաց, ասէ Վիրգիլիոս, թէ գիտիցեն միայն զբաղդ իւրեանց [3] ։ Զի երկիր նոցա անվրդով 'ի զինուց և 'ի պատերագմանց՝ առատ պտղաբերէ պարզ և ընտել կերակուր, իրաւացի հատուցումն վաստակոց նոցա ։ Ընդ ա̃մ ուրեք անխռով խաղաղութի̃, և ուղղութի̃ սրտի առանց ա̃մ նենգութե̃ և խաբէութե̃ ։ Ընդ ազգի ազգի մեծութի̃ք արդարք, և անդորր բերկրալի 'ի բարեբեր երկրին, դաշտք ընդարձակք և գեղեցիկք, անձաւք զովացիկք, վտակք ականակիտք, և նսեմաստուեր անտառք՝ որք ընդ հովանեաւ 'ի նինջ հրաւիրեն, և քաղցրալուր բառաչք արջառոց ։ Ընդ և գունդ պատանեաց աշխատասէրք, 'ի տակաւապէտ և 'ի զգաստ կեանս սովորեալք, և առաւել զարմանալիք երկիւղած մեծարանօք դիցն և ծնողաց ։ Համառօտ իսկ ասել . արդարութի̃ 'ի մեկնելն յաշխարհէ, անդ առ նոսա կալաւ զվերջինն օթեւան ։

---

[1] Զի և առ Յոյնս, և առ Հռոմայեցիս 'ի նախնեաց մինչև ցմեզ, տանտիկնոց անկ է գրեթէ ա̃մ առտնին վաստակ. իսկ տանուտեարք յարտաքնոց վաստակոցն 'ի հանգիստ առանց ա̃մ հոգոց դառնան 'ի տուն առ թերափս իւրեանց ։

[2] Եւ մանաւանդ եթէ պարկեշտ ամուսին
Խնամէ զմանկունսըն ցանկալիս առտընին,
Սաբինուհւոյ համգոյն տիկնոջ, և կամ ժիր
Ապուլեցւոյն տօթկէզ հարսին զուգակիր,
'Ի վաղեմի փայտից կազմէ դիւրարծարծ,
Ըղձարոյկ սուրբ վաստակելոյ առն 'ի դարձ,
Եւ զկշտապինդ խաշն 'ի ցախեայ ցանկապատ
'Ի յոյր ըստեանցըն մակաղէ կիթս առատ.
Բացեալ ըղձաղցըր զամանոր մօր գինւոյն,
Եւ պատրաստէ 'ի ճաշ խորտիկս ընդասուն ։
ՈՀՐԱՏ. ՀԷՐԷՐԴ. Բ. 39.

[3] Ո՛վ երջանիկք յոյժ, թէ մշակք
Բաղդին իւրեանց լիցեն գիտակք.
Այց ճաշ գիւղին տայ շնորհապարտ,
'Ի խաղմարար զինուց զերծ արտ ։ …

Կիկերոն 'ի Ճառս ծերութե̃ գեղեցիկ նկարագրութի̃ տակաւ պտղահասութե̃ ցորենոյ և խաղողոյ՝ յայտ առնէ զախորժակս իւր առ շինական կեանս, և խրատ ընծայէ՝ մի̃ հարևանցի հայել 'ի հրաշս պտղաբերութե̃ցն, որք տարևորական սովորութ̃ն ոչ ինչ զարմանալի թուին ։ Ոչ եթէ պատմութ̃ին եւեթ այնքան բերկրալի է, քանի̃ ևս արդիւնք իւրացն հրաշալի բնազնին մտաց, 'ի տեսանել որ ինչ անցք անցանեն ընդ որթն և ընդ ցորեան՝ մինչև յամփոփել պտղոց նոցա 'ի շտեմարանս ։ Զնոյն իմա և զայլոց մեծութե̃ց, զոր ամի ամի բերէ երկիր ։

Սովլին իսկ և աւագանւոյն, և պարապելոց 'ի ծանր և 'ի կարևոր իրս, քաղցր և զուարճալի և ցանկալի է բնակութի̃ գեղջ ։ Քանզի խոնջք և պարտասեալք 'ի հանապազօր հոգոց և 'ի յանձանձանաց իրաց, զՀորատեայն հառաչէն .[1] Ե՛րբ տեսից զքեզ, գիւղ ցանկալի, Երբ

Այլ է անդորր անդ անկասկած,
Խաղաղութի̃ համատարած .
Կենցաղ անփորձ խաբէութեան,
Փարթամ 'ի յինչըս բազմազան .
Անձաւք և լիճք ականակիտք
Եւ դաշտք Տեմպեայ հովանախիտք .
Ի բառաչող անդանոր կով,
Եւ քաղցրախորժ նինջ ընդ ծառով .
Անդ գազանաց որջք և անտառք,
Եւ ժիրաժիր մանկտւոյ պարք,
Սովորք 'ի կեանըս խստամբեր,
Դից և ծնողաց պաշտօնասէր .
Արդարութիւն զվերջին զիւր հետ,
'Ի գնալն յերկրէ առ նոսա եդ ։

Վիրգ . Մշակ . Բ . 458 ։

---

[1] Ե՛րբ իցէ ինձ, գիւղդ իմ, ըզքեզ տեսանել,
Ե՛րբ ըզնախնեացըն մատենիւք թաւալել .

իցէ ինձ փարատել 'ի քեզ զա̃մ հոգ և զվարանս , մերթ 'ի նախնեացն գիրս պարապեալ , մերթ անզբաղ և մերթ քաղցր 'ի քուն լեալ ։ Եւ արդարև անդ է անապակ բերկրութի̃ . զի ըստ նորին իսկ դարձեալ քերթողի [1] գեղեցիկ իմաստիցն , անդ գոգցես 'ի գերութե̃ ազատեալ՝ տիրեմք անձանց , որ է տիրապէս կեալ և թագաւորել ։ Եւ որպէս խօսակից լեալ ընդ ծառս՝ պահանջեմք 'ի նոցանէ զհամար սակաւապտղութե̃ն , և զբողոք նոցա թուիմք լսել զյորդութե̃ անձրևաց , կամ զտապոյ խորշակի , և կամ զսառամանեաց , որպէս ձևացուցանէ Ովրատիոս [2] ։

Բայց զայս , որպէս 'ի Ճառիցս իսկ յայտ է , ոչ զբազմաքիրտն և զտաժանաւոր հողագործութե̃ն ասեմք՝ յոր բնութիւնս մեր դատապարտեցաւ , այլ զբերկրալւոյն և զզուարճալի մշակութե̃ն՝ հանգոյն պայմանի նախաստեղծ բնութե̃ս և կամաց արարչին , որ անդէն 'ի ստեղծանելն զմարդ՝ սահմանեաց նմա զայն ։ Որ թուի զեդեմական դրախտին աղօտ իմն բերել զնմանութի̃ , և զնշմարանս երանելի պարզմտութե̃ն և անմեղութե̃ նախաստեղծիցն . որպէս և յա̃մ ժամանակի քան զամենայն ինչ բերկրալի թուեցաւ սա իշխանաց և թագաւորաց հզօրաց ։ Աւելորդ համարիմ ասել զկախաղանաւոր բուրաստանացն , որ էին զարդք Բաբելոնի ։ Եւ ոչ զայն հարկ է պատմել , զոր կրասերն Կիւրոս ասաց ցԼիւսանդր 'ի զարմանալ նորա ընդ գեղ և ընդ յօրինուած դրախտին նորա . ասէ . Ես ցուցի զօրինակ դորա , ես զկարգ դորա յօրինեցի , և բազումք 'ի ծառոց այտի ձեռատունկք իմ են ։

Ցանկալի է մարդկան հանապազ 'ի գեղջ բնակել . այլ յայնմանէ վերջացեալք՝ հնարեցան պատրանօք իմն սփոփել զցանկութի̃ն , գոգցես զգիւղ 'ի քաղաքս փոխեալ . ոչ Կիկ. յաղ. ծեր. ձթ.

Մերթ 'ի ննջիւն և մերթ յանդորր անզբաղ
Քաղցր 'ի մոռաց զհոգոցս ածեալ ըզկենցաղ:

Ովրատ. Երգիծ. Բ. Զ. 60:

1 Դու անտառաց պետ և շինին,
Զիս անձնիշխան կացուցողին:

Ովրատ. Թուղթ. Ա. ԺԴ. 1:

Զինչ ես. որդ կեամ, իշխեմ այժմիկ.
Ընդ լքանելն զայդոսիկ:

Անդ. Ա. Ժ. 8:

2 Ոչ որթք բեկտեալ 'ի կարկտէ,
Եւ զնա երկիր ոչ պատրէ.
Ոչ զանձրևաց ծառք զուղխից,
Եւ ոչ զաստեղց ջերմակիծ
Կամ ըղձմերայ խստաշունչ
Զունին բողոք և տրտունջ:

Ովրատ. Տաղերգ. Գ. Ա. 30:

պարզ և անշուք բնական ևեթ գեղովն՝ առանց օգնականուե̃ արուեստի, այլ յօրինեալ և պատշաճեալ և 'ի գեղ ածեալ, և իբր շպարեալ ։ Զցանկալի և զքնաղ զակնապարար և զմայլելի բուրաստանացն ասեմ. զորոց գեղեցկութի̃ և զճոխութի̃ և զառատութի̃, զբուրմունս հոտոյն անուշից, և զերփն երանգոյն և զխառնուած և զհատուածաձևս չէ հնար բանիւ յանդիման կացուցանել ։ Ուր յանայլայլելի և յանփոփոխելի կարգ յաջորդութե̃ ծաղկանցն հայեցեալ, զնոյն ասեմ և զպտղոց, թուի տեսողաց՝ թէ երկիր առ հաճոյ լինել մշակողին՝ հնարիցի մշտնջենաւորել զբերսն, ըստ յեղանակաց տալով հարկս[1] ։ Որդ քանի իմաստս ընազնին մտաց ոչ ընծայիցէ այս, մանաւանդ բարեպաշտից ։

Պլինեայ խոստովանեալ՝ զի ճարտարութբ̃ բանից չէ հնար յանդիման կացուցանել զանբաւ առատութիւն և զբիւր ազգի ազգի զքանչելի գեղ և զճոխութի̃ բնուե̃ն, որ իբր ընդ խաղ սփռեալ է 'ի պարտէզս, կամ առ 'ի զօշոտել զաչս տեսողաց, յաւելու ազդ առնել զխտիրն՝ զոր եդ խնամակալութի̃ ընդ ծառս և ընդ ծաղկունս ։ Զի զծառս[2] և զթուփս, որ սահմանեալ են 'ի կերակրել պտղովն զմարդիկ, և զփայտ 'ի շինուած տանց և նաւաց մատուցանել, երկարակեացս արար յամս յոլովս և 'ի դարս. իսկ զծաղկունս և զբուրմունս ախորժականս առօրեայ և առժամեայս արար, յայտ իմն արարեալ՝ զի պերճագոյնք վաղանցիկք և դիւրաթառամք են ։ Պայծառագոյն զիմաստս զայս ընծայէ Մալէրպ յեղերերգութիւն վաղամեռիկ չքնաղագեղ օրիորդին .

Ըզկենցաղ վարդից կենցաղեալ վարդն այն ,
Ոչ յերկարակեաց քան ըզվաղորդայն ։

Երկրագործութեան և այս օգտակարագոյն առաւելութի̃ է, զի քան զա̃մ արուեստս պատապարան է կրօնից ա̃ծպաշտութե̃ և ուղղուե̃ բարւոյ ։ Նմին իրի ասէ Կիկերոն, թէ գեղջէիցն կենցաղ յոյժ հպաւոր է իմաստնոյն կենաց . զի գեղջուկք գործով իմաստասիրեն ։

---

[1] Ո՛վ մարդասիրուե̃ բնութե̃ն, որ զբիւր ազգի ազգի զախորժականս ծնանի 'ի սնունդ մեր, ոչ միանգամայն 'ի միում յեղանակի, որպէս զի և նորութբ̃ն և առատութբ̃ բերկրեսցուք ։ Կիկ. յղ. բն. ձլա ։

[2] Զի զնոսա առ 'ի պէտս և 'ի սնունդ ծնաւ, նմին իրի երկարակեացս արար ընդ դարս և ընդ ամրիս. իսկ զծաղիկս և զբուրմունս՝ առօրեայս առ 'ի խրատ արդեօք մարդկան, զի գեղածաղիկքն պայծառացեալք վաղաթարշամք են ։ Պլին. ժա. ա̃ ։

Արդ այժմ հանգուսցուք ուստի սկսաքն զսակաւամանեայ ճառս երկրագործուե̃։ Ապաքէն քան զա̃մ պարապմունս, որ ոչ անընդմէջ բերեն յա̃ծ և յարդարուի̃, անմեղագոյն է երկրագործութի̃. և որպէս ասացի իսկ, այն էր նախաստեղծին զբաղումն յարդարութե̃՝ մինչ չև ստունգանեալ պատուիրանին, և նոյն դարձեալ յապաշխարութե̃ մասին եղաւ նմա ։ Այսպէս յերկոսին իսկ կեանսն, նախ քան զանկումն և յետ անկմանն զսա սահմանեաց նմա ա̃ծ, և նովին իսկ զաւակի նորա ։ Բայց սնափառութի̃ քան զա̃մ գործս անարգ և նուաստ զայն կացոյց. և մինչ անպիտանք յարուեստից և 'ի զեղխուի̃ և 'ի զրգանս ևեթ պիտանացուքն խնամին, 'ի լիութի̃ և 'ի բարեկենդանութի̃ այլոց վաստակաւորքն անխնամ 'ի թշուառութե̃ կեան ։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՅԱՂԱԳՍ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ՊՐԱԿ ԱՌԱՋԻՆ

Թէ քանի՛ պատուական և շահաւէտ է վաճառականութիւն ։

'Ի դէպ է և ոչ աւելի իմն՝ զվաճառականուի̃ կոչել հիմն անխախտելի քաղաքաժողով միաբանութե̃, և կարևորագոյն կապ կցորդուե̃ մարդկան՝ որոշելոց աշխարհաւ և պայմանաւ կենաց ։ Սովաւ ա̃մ երկիր է իբրև քաղաք մի, և աշխարհ ա̃մ՝ միակ ազգատոհմ ։ Սա ընդ տիեզերս առատութբ̃, և զմեծուի̃ս ուրուք ուրուք յազգաց՝ հասարակաց առնէ ամենեցուն ։ Չիք կողմն երկրի ամուլ, կամ ամլութի̃ն չքաւոր. 'ի ծագաց երկրի պէտք նորա 'ի դէպ ժամանակի հասանեն, և եկամուտ բերովքն լի եղեալ՝ զարմանայ, զի զայնոսիկ յիւրմէ չունէր, և ճոխանայ բիւրազգի դիւրութբ̃ք՝ որ զբարեկենդանութի̃ մարդկան յօրինեն, և որ ոչ 'ի գիտութի̃ նորա հասեալ էին ։ Սովաւ ընդ ծով և ընդ գետս նաւարկեալ մարդիկ, զարմանալի իմն վերնախնամ տեսչութբ̃ ընդ միմեանս հաղորդին՝ ուսեալք զբռնաւորագոյն [1] տարերս նուաճել, զծով և զհողմն, և վարել զնաւս 'ի ծովս և 'ի գետս ։ Այսու օրինակաւ կցորդեաց ա՟ծ ընդ միմեանս զազգս հեռաւորս, հանդոյն իմն կապոյ կցորդութեան անուանից մարմնոյ ջրօք և ներդիւք ։ Ահա փոքր 'ի շատէ ճաշակ իմն կենցաղօգտութեց վաճառաշահութե . յոր թէ ոք խորագնին յաւելցի, զո՞ր հրաշս ոչ գտցէ ։ Այլ զի այս ոչ է մեզ անկ, ինչ մի շատ համարիմք 'ի ցոյց տկարութե միանգամայն և մեծութե մարդոյ յուշ առնել ։

---

[1] Զբռնաւորագոյնսն 'ի տարերց՝ նին. զծով և զհողմ. Նուաստակագորս ծնաւ բնութին, նուաճեմք իսկ. նին գիտութբ̃ ։ Պլին. բն. պտմ. բ. ճծէ ։

Նախ 'ի կատար բարձրութեն տեսցուք զնա յաթոռ թագաւորութե 'ի հոյակապ ապարանս բնակեալ, շուրջ պատեալ արքունական փառօք, մեծարեալ և երկրպագեալ գոգցես յամբոխէ աւագանւոյն՝ որ ահիւ սարսեն յերեսաց նորա . զեղուն զնովաւ գանձք և բերկրութիք, և պար առեալ պահպանի 'ի զօրաց բազմաց՝ որ ակնարկութե հրամանաց նորա սպասեն . ահա ծայր մեծութե մարդոյ ։ Բայց և թագաւոր մեծազօր և ահաւոր, 'ի բառնալ վաճառականութե՝ թողեալ 'ի ճարտարութի իւր և 'ի զօրութի, զի՞նչ իցէ իւրև ։ Լքեալ ամայի, մերկացեալ յա՟մ երևելի շքոյ, որ ոչ անձին նորա է՝ այլ օտար 'ի նմանէ, դառնայ անօգնական 'ի թշուառութի և 'ի կարօտութի՝ յորում ծնաւն իսկ . համառօտ ասել, ոչ ևս ինչ է ։

Արդ և 'ի ստորական բաղդին տեսցուք զնա ։ Պատսպարեալ յանձուկ տան, հացիւ և գինեաւ և դոյզն աղպէտաւ շատացեալ, անպաճոյճս զգեցեալ, և զառտնին պէտս դիւրութե կենացն հազիւ հայթայթէ ։ Ո՛չ միայնութի, ո՛չ անօգնական ամայութի լքեալ յա՟մ մարդկանէ, այլ յերևմանն . զի որ այնպէսն կարծիցէ, յոյժ խաբի ։ Տիեզերք ա՟մ խնամ ունին նմա, ձեռք բիւրաւորաց վաստակեն 'ի ծածկել զնա, 'ի զգեցուցանել և 'ի կերակրել ։ Վասն նորա գործարանք կանգնեալ, և ընուն շտեմարանք ցորենով, և հնձանք զեղուն գինեաւ, և ազգի ազգի հրահալք 'ի բովուց բազմավտանգ աշխատութե հատանին ։ Եւ որ ինչ 'ի բարեկենդանութի նորա պատկանին, 'ի տար աշխարհաց ընդ մրրկածուփ ալիս բերին նմա ։ Ահա նպաստք՝ զոր վաճառականութի՛ն, մանաւանդ թէ վերնախնամ տեսչութի՝ միշտ խնամակալ պիտոյից մարդկան՝ վաճառականութեն պատրաստէ իւրաքանչիւրոց . նպաստք, որ քաջ իմացեալ՝ սքանչելիք են . ընդ որս պարտ էր ցանկ զարմանալ, և առ յոյժ շնորհապարտութե՝ զմարգարէին գոչել . “ Տէր, ո՞վ է մարդ՝ զի յիշես դու զնա „ ։

Այլ զի՞նչ վաճառաշահիցն երախտիք իցեն. ապաքէն առ ագահութե̃ և ոչ վասն մեր վաստակին։ Բարւոք է. սակայն նուա՞զ ինչ այնու գործիցի մեզ օգուտ. Ա̃ծ, որ միայն 'ի չարէն հանէ զբարի, զկլխտոցն ագահուե̃ յօգուտ այլոց 'ի կիր արկանէ. վասն այսորիկ իսկ եդ 'ի մարդիկ զխտիրն զարմանալի, և ոչ հաւասար զմեծութիւնս բաշխեաց։ Եթէ ա̃մ մարդիկ բարեկեցիկք էին ճոխք և փարթամք, ո՞ 'ի նոցանէ գործէր զերկիր, 'ի քրեական մետաղս ո՞ խոնջէր, ո՞ զհամատարածն հատանէր անցանէր։ Բայց աղքատութի̃ և ագահուի̃ զթերին լնուն, և զտաժանաւոր վաստակսն յանձն առնուն զկենցաղօգուտս։ Որով ահա ա̃մ մարդիկ, չքաւորք և մեծատունք, հզօրք և տկարք, թագաւորն և ռամիկ կարօտ են միմեանց. ոչ աղքատն առանց օգնականութեան մեծատան կարող է կեալ, և ոչ մեծատունն առանց վաստակոց աղքատին։ Եւ վաճառականութի̃, 'ի ձեռն այլ և այլ ցանկուե̃ նոցա, հայթայթէ զա̃մ պէտս մարդկան և զդիւրութի̃ս։

ԳՐԱԿ ԵՐԿՐՈՐԴ

Յաղագս զի 'ի սկզբանէ աշխարհի էր վաճառականութիւն. և թէ
ո՛ր և յո՛ր քաղաքս առաւել բարգաւաճեաց։

Երևի ոչ ինչ կրտսեր լեալ ժամանակաւ վաճառականութի̃ քան զերկրագործուի̃. զի սկիզբն յառաջնական տուրևառից կալաւ, որպէս հարկ էր, յօգնելոյ մարդկան միմեանց պիտոյիւք և կարևորօք կենաց։ Ապաքէն Կային 'ի ցորենոյ և 'ի պտղոյ երկրին տայր Աբելի 'ի կերակուր, և Աբէլ փոխարէն տայր նմա մաշկ և ասր 'ի զգեստ, և 'ի կաթանէ խաշանցն, թերևս և խորտիկս։ Եւ Թոբէլ պարապեալ 'ի դարբնել զերկաթ և զպղինձ 'ի գործիս կարևորս կենաց հասարակաց, և 'ի զէնս ընդդէմ թըշնամեաց և գազանաց ամէհեաց, փոխանակէր արդեօք զգործածս իւր ընդ ա՛յլ վաճառս կարևորս 'ի կերակուր 'ի զգեստ և 'ի բնակութիւն։ Այսպէս մերձ ընդ մերձ սփռեալ վաճառականուի̃ ընդ քաղաքս և ընդ աշխարհս մօտաւորս, ապա և 'ի հեռաւորս անց ընդ ծով. և յետ ջրհեղեղին տարածեցաւ առ հասարակ ընդ տիեզերս։

Յիշին վաճառականք հինք 'ի սուրբ գիրս Իսմայելացիքն և Մադիանացիք, որոց վաճառեցաւ Յովսէփ յեղբարցն. զի գային նոքա 'ի Գաղաադէ ուղտերամակօք՝ ըն- Ծնն. լէ. 25։

խնկովք ստաշխամբ և ռետնիւ, իջուցանել յԵգիպտոս, զի գնային ընդ վաճառքն այն 'ի պատասն գնոյ՝ զորս խնամով մեծաւ և յոլով ծախիւք զմռսէին եգիպտացիք ։

'Ի ժամանակս դիւցազանց[1] յաւուրս պատերազմին Տրովադայ, որպէս աւանդէ Հոմերոս, սովորու՟ն էր վաճառ ընդ վաճառոյ փոխանակել 'ի հայթայթանս պիտոյից կենաց ։ Որով հաւաստի է, ասէ Պլինիոս, զի առ հարկի և ոչ առ ագահութե՟ տուրևառքն գործէին ։ 'Ի վերջ կոյս եօթներորդ գրոց Իլիականին, 'ի հասանել նաւաց ոմանց՝ խուռն ընթանան զօրքն գնել գինի, բերելով պղինձ և երկաթ, կաշի, եզինս և ստրուկս ։ Չիք 'ի վէպս նախ քան զեգիպտացիսն և զփիւնիկեցիս նաւարկողք յիշատակեալ ։ Երևի երկուց մերձաւոր ազգացն զվաճառականու՟ն ծովու բաժանեալ յիւրեանս . եգիպտացւոց կալեալ զարևելեսն ընդ ծո՟վն Կարմիր, և փիւնիկեցւոց զարևմուտսն ընդ միջերկրական ծով ։ Առասպելապատում մատենագրաց ասացեալքն զՈսիրեայ, որ է Դիոնիսոսն Յունաց, թէ գնաց նա պատերազմաւ նուաճել զՀնդիկս՝ զորս Սեսոստր յետոյ նուաճեաց, պատճառս տան կարծելոյ՝ զի վաճառականու՟ն մեծ էր եգիպտացւոց ընդ Հնդիկս ։

Բայց փիւնիկեցւոց վաճառականութ՟ի յաճախագոյն էր քան զեգիպտացւոցն յարևմուտս . վասն որոյ ոչ ինչ են զարմանք՝ զի մատենագիրք Յունաց և լատինացւոց առաւել զնոսա պանծացուցանեն, և զի Հերոդոտ զնոցանէ ասէ՝ թէ ածէին զվաճառս Եգիպտոսի և զԱսորեստանի, և թէ զա՟մ վաճառականու՟ն աշխարհացն նաքա ունէին, որպէս թէ եգիպտացիք անբաժք էին . և զի նոքա համարէին նախագտակք վաճառականութե՟ և նաւարկութե՟, որ մանաւանդ եգիպտացւոց պարծանքն են ։ Հրոդ. ա. ա. Այլ այն հաւաստի է, զի փիւնիկեցիք քան զա՟մ ազգս հմուտք էին նախնոյ վաճառականութե՟ն . և 'ի նոսա յայտնագոյն երևի՝ յոր մեծութ՟ի փառաց և զօրութե՟ և ճոխութե՟ հնար է հասանել ազգի 'ի ձեռն վաճառաշահութե՟ ։ 'Ի ծայրս ծովեզերաց բնակեալ էր ազգն այն, և Տիւրոս իսկ բնակէր յերկիր անբեր, այն՝ որում և բերրի և արգաւանդ երկրի ոչ բաւէին բերք մեծի բազմութե՟ բնակչայն՝ զորս նախկին յաջողութիւնք վաճառականութեանն ձգեցին անդր ։ Այլ երկոքումբք յոլովութեամբք զթերին լցին . զի անձուկ երկրին նոցա էին նաւահանգիստք ընդարձակք , մանաւանդ որ առ մեծաւ քաղաքաւն նոցա էր . և զի յոյժ հանճարեղք էին 'ի վաճառաշահ , վասն որոյ և համարեցան գտակք վաճառականութեան ընդ ծով , մանաւանդ 'ի տար աշխարհս նաւարկութեան ։ Երկոքումբք այսոքիւք փիւնիկեցիք յաջողեալ 'ի սուղ ժամանակի կալան զծով և զվաճառականութիւն ։ Փայտս ընտիրս Լիբանան և այլ մերձակայ լերինք մատուցանէին նոցա 'ի կառուցումն նաւաց , և վաղվաղակի նաւատորմք բազմութեան վաճառական նաւաց ելին ընդ ծով, դիմագրաւեալ նաւարկել յաշխարհս անծանօթս 'ի վաճառաշահութիւն ։ Եւ ոչ 'ի ծովեզերս միայն և 'ի նաւահանգիստս միջերկրականին նաւեցին , այլ և յովկիականն ծովամուխ լեալ ընդ տարթեսեան կամ ընդ կալպեան նեղուցն , յաջ և յահեակ տարածեցան ։ Եւ 'ի բազմանալ մարդկանն յոյժ յամբոխէ եկաց , զորս ցանկութիւն շահու և յոյս անշուշտ մեծութեանցն ձգէին անդր , հարկ եղև ժողովրդոց բազմաց գաղթել . ընդ որս և Կարքեդոն հատուած երթեալ գերահամբաւեալն , որ փիւնիկեցի հանճարոյն վաճառաշահութեամբ՝ ոչ ինչ ստորև եկաց քան զՏիւրոս , իսկ լայնածաւալ աշխարհակալութեանն և պատերազմական շահատակութեանցն փառօք գերազանցեաց ։

---

[1] Յերանելի դարուն՝ յորում վաճառք ընդ վաճառս փոխանակէին, որպէս և առ տրովայւովք ըստ Հոմերոսի վկայութե՟ն սովորու՟ն էր, զի տուրևառք՝ որպէս կարծեմ՝ վասն պարենից կենաց հնարեցան ։ Կէսք՝ ասէ՝ ընդ արջառակաշւոյ, այլք ընդ երկաթոյ և ընդ աւարաց պատերազմի առնուին վաճառս ։ Պլին. լէ. ա ։

Յայն գերապանծ փառս և իշխանութիւն ամբարձին զՏիւրոս վաճառականութիւն և նաւարկութիւն , զի առասպելք արդեօք թուէին արտաքնոց մատենագրացն վէպք զնմանէ՝ եթէ ոչ մարգարէիցն առաւել քան զնոսա ասացեալ էր ։ Նկարագրէ հոյակապ նաւու տայ զկերպարան նորա Եզեկիէլ . ասէ . “ Մայրք 'ի Սանիրայ լեռնէ շինեցան քեզ պահանգք , և տախտակք նոճիք 'ի Լիբանանէ առան՝ առնել քեզ կայմս եղևնափայտեայս . 'ի Բասանէ արարին զղեկս նաւաց քոց , և զմեհեանս քո շինեցին 'ի փղոսկրեայ . ապարանս անտառախիտս 'ի կղզեաց քետիմացւոց ։ Բեհեզ ընդ դիպակի գործեցաւ քեզ 'ի պաստառս . յԵգիպտոսէ արկանելիք քեզ 'ի փառս , և հանդերձ ծիրանի և կապուտակ 'ի կղզեացն յելիմացւոց եղեն 'ի զարդ պաճուճանաց քոց ։ Եւ իշխանք քո բնակիչք սիդոնացւոց , և եղեն արադացիք նաւավարք քո . և իմաստունք քո , Տիւրոս , որ եղեն 'ի քեզ՝ նոքա եղեն քեզ նաւապետք և ծերքն մատենագէտք , և իմաստունք նոցա՝ որ էին 'ի քեզ , նոքա զօրացուցանէին զխորհուրդս

Եզեկ . ԻԷ . 5-10 ։

քո . և ա՟մ նաւք ծովուն և նաւավարք նոցա եղեն քեզ , երթալ յարևմուտս արևմտից ։ Լիդացիք և Լիբէացիք Թիկունք զօրուն քո՝ արք ընտիրք պատերազմողք , որք կախեցին զվահանս և զսաղաւարտս իւրեանց 'ի քեզ . և նոքա փառաւորեցին զքեզ ,, ։

Սոքիմբք այլաբանեալ՝ ցուցանէ մարգարէն զհզօր իշխանութիւն Տիւրոսի , և ևս առաւել՝ նկարագրելով զիւրաքանչիւրս 'ի վաճառակից ազգացն , որով վաճառք ա՟մ աշխարհի անդր թուին ժողովեալ , և ազգք և ազինք Եզ. 12-24 ։ հարկատուք նմա քան դաշնաւորք . " Կարքեդոնացիք , ասէ , վաճառականք քո 'ի բազմութ՟է ա՟մ զօրութ՟ե քո . զարծաթ և զոսկի զպղինձ և զերկաթ և զանագ և զկապար ետուն 'ի վաճառս քո ։ Յոյնք , և ա՟մ որ շուրջ զնովաւ էին , մարդավաճառք քո , և անօթս պղնձիս ետուն 'ի վաճառս քո ։ Եւ 'ի տանէ [1] Թորգոմայ ձիովք և հեծելովք և ջորւովք լցին զվաճառս քո ։ Որդիքն հռոդացւոց վաճառականք քո , յաճախեցին 'ի կղզեաց զվաճառս քո ժանեօք փղոսկրէիւք , և երթևեկացն մարդիկ տայիր 'ի գինս ։ Եւ վաճառք քո բազմացեալք յաղխամաղխէ քումմէ . յԱփեկայ ստաշխն , և երփն երփն նարօտուց 'ի Թարշշայ , և Հռամովթ և Կարքովթ լցին զվաճառս քո ։ Հրէաստան և որդիքն Իսրայելի վաճառականք քո . ցորենով և խնկովք և կասեաւ և ընտիր ընտիր մեղու և իւղով և ռետամբ լցին զաղխամաղխեայ վաճառաց քոց ։ Դամասկոս վաճառականք քո 'ի բազում աղխի և 'ի բազում զօրութենէ քումմէ . գինի 'ի Քեղբոնայ , և ասր 'ի Միլետեայ ։ Դան և Յաւան 'ի Մեովզէնայ բերէին քեզ գինի 'ի վաճառս քո . յԱսելայ երկաթ գործեալ , անիւս պատրաստեալս 'ի վաճառս քո ։ Դեդանացիք [2] վաճառականք քո . ածէին կառս ընտիրս ջորւովք հանդերձ ։ Արաբացիք [3] և ա՟մ իշխանք Կեդարու և նոքա վաճառականք ընդ ձեռամբ քով . ուղտս և խոյս և որոջս վաճառէին 'ի քեզ ։ Սաբա և Հռեգմա [4] , և նոքա վաճառականք քո . իւղս անուշունս և ականս պատուականս և ոսկի ետուն 'ի վաճառս քո ։ Խառան և Քանան և Դադան , և նոքա վաճառականք քո . Սաբա և Ասուր և Քաղման վաճառականք քո , որք բերէին քեզ վաճառս ընդ Մաքղիմ և ընդ Գալլիմ, հիր և կարմիր և կապուտակ, և երփն երփն նարօտուց, և գանձս ընտիրս վանդակեալս չուանօք 'ի նաւս նոճիս՝ որովք էր վաճառն քո, նաւք 'ի բազմութեան վաճառաց քոց. և 'ի յաճախութեան աղխամաղխի քո լցար ծանրացար յոյժ „։

---

[1] 'Ի Կապադովկիոյ . ուր երիվարք երկրին այնորիկ էին գերազանցք . և ընտիրք յայնցանէ և ջորւոյ [illegible] գոյին ։

[2] Այլք բնակեալ յԱրաբիա ։

[3] Արաբացիք բնակիչք Անապատին . և Կեդար սահմանակից նորա ։

[4] Սաբա և Հռեգմա այլք բնակեալք յԵրջանիկն Արաբիա , ուստի և խնկոց անուշից պանծալիք 'ի հնումն .

Արդ զսահմանս ազգացս այսոցիկ, զորս յիշատակէ Եզեկիէլ, ոչ է մեզ անկ քննել և որոշել. այլ այս յայտ է 'ի թուելոյ մարգարէին տնօրինմամբ հոգւոյն զամենայն ազգս վաճառակիցս Տիւրոսի, զի էին սահմանք վաճառականութեան նորա 'ի ծագաց մինչև ցծագս երկրի, ցոր վայր գիտութեան մարդկան հասանէր յայնժամ։ Նմին իրի պանծայր որպէս մայրաքաղաք ամենայն ազգաց, և իբրև դշխոյ ծովու։ Վայելուչ նկարագրէ Եսայի զամբարտաւանութիւն նորա պսակաւն ճոխութեան, և զի փառաւորք Եսայ. իգ. 8.
երկրի էին առգնողք նորա՝ որոց 'ի նմանէ էին շահավաճառքն, և զի վաճառականք նորա հաւասարք թագաւորաց պերճանային՝ հզօրք 'ի վերայ իշխանութեան մաքառել ընդ նոսա։ “Իսկ ո՞, ասէ, խորհեցաւ զայս 'ի վերայ Տիւրոսի. միթէ 'ի վա՞յր ինչ ոք էր, կամ տկար ոք. նա՝ վաճառականք նորա փառաւորք քանանացւոց, և առգնողք նորա իշխանք երկրի „։

Զկործանումն նախնոյն Տիւրոսի 'ի Նաբուքոդոնոսորայ՝ յետ պաշարելոյ զամս երեքտասան, և զկանգնել երկրորդին յառաջագոյն պատմեցաք, և զվաղ ծովակալել նորա անդրէն, և զյաջողութիւն վաճառաշահութեանն պայծառ քան զառաջինն, մինչև Աղեքսանդրի մեծին նուաճեալ զնա պատերազմաւ՝ խափանեաց զնաւարկութիւն և զվաճառականութիւն նորա. որք անտի փոխեցան յԱղեքսանդրիա, որպէս ասասցուք ընդ հուպ։ Արդ մինչ դեռ ընդ նախնին Տիւրոս և ընդ երկրորդն այս վրդովմունք անցանէին, Կարքեդոն՝ գերապանծ քան զամենայն գաղթականս նորա՝ պայծառանայր։ Վաճառաշահութիւնք ծնաւ, նովին և բարգաւաճեաց, և զօրացաւ նովաւ պայքարել ընդ հռոմայեցիս զտիեզերակալութեան։ Բարեմասին հասեալ քան զՏիւրոս տեղեաւն, կշիռ 'ի միջի երկուց ծագաց միջերկրականին բնակէր, և ծովեզերբ Ափրիկեայ շուրջ զնովաւ՝ երկիր ընդարձակ և բերրի՝ մատուցանէին նմա ցորեան զկարևորն առատութեամբ։ Հանդերձ սոքիմբք և ազգն այն բնակեալ յԱփրիկէ, 'ի կիր արկեալ զընական կորովամտութիւն 'ի վաճառաշահութիւն և 'ի նաւարկութիւն զոր 'ի Փիւնիկեայ առ, 'ի ծայր նաւաստականութեան եհաս.

զի ոչ ոք յա՟մ ազգաց հաւասարէր նմա, որպէս վկայէ Ղ. 494։ Պողիբիոս։ Արդ այնքան զօրացեալ, զի 'ի սկզբան երրորդի պատերազմին ընդ Հռոմայեցիս՝ որ եղև նմա 'ի կործանումն, եօթանասուն բիւր մարդիկ բնակէին 'ի Կարքեդոն, և միայն յԱփրիկէ էին ընդ նովաւ երեքարիւր քաղաք։ Նա տիրէր ոչ միայն երկրին՝ որ էր ընդ աւազուտն մեծ և ընդ արձանսն Հերակլեայ, այլ անդր ևս քան զնոսա ընդ հարաւ, ուր Աննոն կարքեդոնացի կառոյց քաղաքս բազումս, և բնակեցոյց գաղթականս։ Նա 'ի Սպանիա՝ զոր գրեթէ լրիւն իւրով կալան կարքեդոնացիք՝ Աստրուբաղ զհետ Համկարայ հօր Աննիբաղայ կացեալ իշխան, կառոյց զԿարթագինէ զմի 'ի հռաչակաւոր քաղաքաց ժամանակին։ Նոյն և Սիկիլիա մեծաւ մասամբ և Սարդինիա եղեն ընդ իշխանութ՟բ նոցա։ Նաև պահէին երկոքին գերապանծ մատեանքն յիշատակագիրք ազգին, յորս պատմէր նաւարկութ՟ի Աննոնի՝ որ թագաւոր կարքեդոնացւոցն անուանեալ՝ և Իմիլկոնի, բազում ինչ մարթէր ուսանել անտի յետնոց։ Զի Աննոն զնաւարկութ՟ի իւր ընդ ովկիանոսն ծով անդր քան զարձանսն Հերակլեայ ընդ արևմտեան ծովեզր Ափրիկեայ, և Իմիլկոն զիւրն ընդ արևմտական ծովեզր Եւրոպայ պատուիրանաւ աւագանւոյն Կարքեդոնի արարեալ, մատենագրեցին. այլ ժամանակաւ եղծան գիրքն։

Ազգն այն ոչ 'ի ձիգն և ոչ 'ի ծախս խնայէր առ 'ի կատարումն վաճառականութ՟ե և նաւարկութ՟ե, 'ի նոյն ուշ եդեալ, և թողեալ զայլ ա՟մ արուեստս և զգիտութ՟ս։ Ոչ ոք զպարծանաց հանճարոյ թէկն ածէր 'ի Կարքեդոն, ոչ ոք բանաստեղծութ՟ե պարապէր, ոչ ոք ճարտարխօսութ՟ե, և ոչ իմաստասիրութ՟ե։ Մանկտին 'ի տղայ տիոց այլ ինչ ոչ ուսէր, բայց հաշիւ, վաճառս, նաև և ծովագնացութ՟ի։ Զքաջութ՟ի վաճառականութ՟ե որդի 'ի հօրէ ժառանգէին որպէս զմասն ընտիր հայրենի ընչիցն. և 'ի փորձ հարցն զիւրաքանչիւր ճարակ մնայ յաւելուլին. վասն որոյ ոչ ինչ են զարմանք, զի օր ըստ օրէ երագ յառաջխաղացութ՟բ ճարտարագոյնք լինէին։ Նա յայն ճոխութ՟ի և 'ի զօրութ՟ի ամբարձաւ Կարքեդոն, զի հռոմայեցին երկոքումբք դժնդակ և բազմավտանգ պատերազմօք, միանգամ զամս քսանևերիս, և երկրորդ անգամ զեօթնևտասն ամ աշխատեալ, հազիւ պարտեալ զոսոխն։ Նա 'ի յաղթելն իսկ գիտաց՝ զի ոչ այլազգ կարէր նուաճել զնա 'ի սպառ և ընդ լծով արկանել, բայց բառնալով 'ի նմանէ զվաճառականութ՟ի՝ որ ընդ այնչափ ժամանակս ձիգս պատսպարան եղեալ էր նմա ընդդէմ մեծազօր հասարակապետութեան, և որ յետ այնորիկ մարթերն լինել ։

Կարքեդոն քան զամենայն ժամանակս հզօր էր ընդ ծով, 'ի պաշարել Աղեքսանդրի զՏիւրոս մայրաքաղաք նորա · յայնժամ սկսաւ բաղդ նորա խոնարհել ։ Փառասիրութիւն կործանեաց զԿարքեդոն · չար եղև նմա, զի 'ի խաղաղաւէտ վաճառական կենացն տաղտկացեալ՝ զվաճառաշահութեան փառսն ընդ փառս զինուց փոխանակեաց ։ Քաղաքն, լեալ բնակաւէտ վաճառականութեամբ, ամայանայր 'ի ստէպ զօրաժողովս ։ Նաւաստիք, որք զվաճառս և զվաճառականս նորա բարձեալ տանէին, եղեն կարասեկիրք բանակացն · և քաջ և հմուտ վաճառականք նորա՝ եղեն սպայք և զօրավարք, և պայծառացուցին իսկ զփառս նորա առ սակաւ մի ժամանակ, այլ վաղ 'ի վերայ եհաս սպառասպուռ կործանումն ։

Յետ նուաճելոյ Աղեքսանդրի մեծին զՏիւրոս, և 'ի կառուցանել նոյնհետայն զԱղեքսանդրիա, կերպարանափոխ եղև վաճառականութիւն ։ Ապաքէն քան զդաստակերտն զայն ոչ ինչ մեծ և ազնուական, և ոչ իմաստուն և կենցաղօգուտ ինչ խորհեցաւ աշխարհակալն այն ։ Ոչ գոյր դիպողագոյն քան զայն տեղի յասպնջականութիւն վաճառաց արևելից և արևմտից · զի աստի ընդ ծովն Կարմիր էր համարձակ երթևեկ յԱսիա և յամենայն արևելս, և ընդ նոյն դարձեալ և ընդ Նեղոս գետ՝ յընդարձակ և 'ի ճոխ գաւառս Եթովպիոյ · և յայլ կողմանս Ափրիկեայ և յԵւրոպա ընդ միջերկրականն ծով · և 'ի միջերկրեայս Եգիպտոսի ոչ միայն ընդ Նեղոս և ընդ ջրադարձս նորա երթայր, այլ և կարաւանաց ընդ ցամաք աներկեւան ճանապարհ էր, ամենայն դիւրութեամբ ածել զվաճառսն ։

Վասն որոյ անդ 'ի դէպ վարկաւ Աղեքսանդր կառուցանել զքաղաքն և զնաւահանգիստ, որոց հանգոյն սակաւք եղեն յաշխարհի ։ Զի զՓարոս կղզի՝ անջատ 'ի ցամաքէ՝ կցորդեաց և արար ընդարձակ նաւահանգիստ, երկուստէք ունելով մուտս յերթևեկ նաւաց, ուր տարաշխարհիկք յամենայն կողմանց գային մտանէին, և համաշխարհիկք ելանէին անտի անդադար՝ բարձեալ տանելով զվաճառականս, որք ընդ ամենայն ծանօթ երկիր ածէին զվաճառսն ։ Բայց Աղեքսանդր ոչ ինչ յերկարակեաց եղև յետ այնորիկ, և ոչ ետես զբարգաւաճութիւն և զպայծառութիւն դաստակերտին՝ յոր էած զնա վաճառականութիւն ։ Պտղոմեանք յետ մահու նորա վիճակեալ զԵգիպտոս, խնամ կալան 'ի զարգացումն նորածնեալ վաճառականութե՟ն յԱղեքսանդրիա· և 'ի սուղ ժամանակի այնպէս հաստատեալ ընդարձակեցաւ, մինչև անյիշատակ լինել Տիւրոսի և Կարքեդոնի, որք ընդ բազում ժամանակս զվաճառականութե՟ ա՟մ ազգաց յիւրեանս ժողովէին։ Աբեն. Ն. 203։ Առաւել քան զա՟մ թագաւորս Եգիպտոսի Եղբայրասէրն Պտղոմէոս ձեռնտու եղև 'ի զարգացումն նորա։ Զբազմամբոխ տորմիղս վաճառական նաւաց նորա 'ի թիւ արկեալ, զարմանալի իմն նկարագրէ Աթենէոս։ Զի ընդ աւելի քան զհարիւրեքսան նաւս թիաւորս մեծակառոյցս՝ էին նմա այլ ևս աւելի քան զչորեքհազարս 'ի սպաս աշխարհին և 'ի յաջողութ՟ի վաճառականութ՟ե։ Զի ժառանգէր նա ինքնակալութ՟ի մեծ, տարածեալ զսահմանս եգիպտական պետութե՟ն մինչև յԱփրիկէ և յԵթովպիա և յԱսորիս, և մինչև յայն կոյս ծովուն՝ կալեալ զԿիլիկիա զՊամփիւլիա զԼիկիա և զԿարիա և զԿիւկլադեայ կղզիսն, միահամուռ իբրև չորեքհազար քաղաքս։ Եւ վասն բարեկենդանութ՟ե բնակչաց նոցա՝ խորհեցաւ ձգել անդր յարևելից 'ի ձեռն վաճառականութ՟ե զմեծութ՟իս և զա՟մ պէտս կենաց։ Եւ առ դիւրութ՟ի ճանապարհին՝ կանգնեաց քաղաք յեզր Կարմիր ծովուն յարևմտից, և 'ի Կոպտեայ մինչև 'ի ծով անդր ածեալ գետ՝ կառոյց առ նովաւ օթևանս 'ի հանգիստ վաճառականաց և ճանապարհորդաց, որպէս յիւրում տեղւոջն[1] ասացաք։

Սովին դիւրութ՟ք երթևեկաց վաճառաց յԱղեքսանդրիա՝ յաճախեցին ընդ ա՟մ Եգիպտոս մեծութ՟իք բազում յոյժ, Կիլլէր. — Սարաֆ. ԺԷ. 798։ որպէս զի 'ի մաքսէ ելի և մտի յԱղեքսանդրիա ամի ամի ժողովէր աւելի քան երեք հազար եօթն հարիւր բիւր լիրայ· և բազմագոյնք 'ի Պտղոմեանց խնայողք էին 'ի հատանել զմաքս։

Բազմահռչակք 'ի քաղաքս վաճառաշահս եղեն 'ի հնումն՝ վկայեալ յամենեցունց՝ Տիւրոս, Կարքեդոն և Աղեքսանդրիա։ Եղեն և Կորնթոս և Հռոդոս և Մասիլիա, և այլք 'ի քաղաքաց ճարտարք 'ի վաճառականութ՟ի, այլ ոչ հանդոյն առաջնոյն համբաւեալք։

---

[1] Հատ. Դ. 214։

ՊՐԱԿ ԵՐՐՈՐԴ

Յաղագս այլ և այլ աղխամաղխից վաճառաց։

՚Ի բանն, զոր յԵզեկիէլէ ածի վասն Տիւրոսի, եր գրեթէ ա՟մ ազգ վաճառաց՝ որովք ՚ի հնումն շահավաճառք լինէին. ոսկի, արծաթ, երկաթ, պղինձ, անագ, կապար, ականք պատուականք և մարգարիտ, բեհեզ, դիպակ, ծիրանի, հիր և կարմիր և կապուտակ, փղոսկր, մայր և նոճի, իւղք անուշունք, ռետին, ստաշխն և ա՟մ խունկ, գերի, ուղտ, ձի և ջորի, և անդեայք, ցորեան և գինի, և ա՟մ աղխամաղխ ցանկալի։ Այլ ես զհրահալիցն սուղ ինչ ասացից, զերկաթոյ զպղնձոյ զոսկւոյ և զարծաթոյ, և զմարգարտէ և զծիրանւոյ և զմետաքսէ, զՊլինիոս բնախօս կալեալ առաջնորդ զորոց խօսեցաւն։ Առից բազում ինչ և ՚ի հանճարեղ խելամտութենէ մատենագրին բնախօսութեն ոսկւոյ և արծաթոյ, որ յերեսներորդ գրոցն Պլինեայ քաղուած տպագրեալ ՚ի Լոնդինոն։

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Մետաղոց երկաթոյ։

Հրահալելեացն պիտառութի, մանաւանդ երկաթոյ և պղնձոյ, գրեթէ հասակակից է աշխարհի. ընդ այն չիք յերկուանալ։ Բայց զոսկւոյ և զարծաթոյ ոչ ինչ փոյթ երևի լեալ ՚ի սկզբանն, որպէս թուի. զի առաջինքն բնակիչք երկրի, որպէս պարտ իսկ է նորոց գաղթականաց, ՚ի հայթայթանս կարևորացն ևեթ պիտոյից պարապեցին, ՚ի կառուցումն տան, ՚ի հերկել զերկիր, և ՚ի դարբնել գործիս կարևորս հատանելոյ փայտ և քարինս, և ՚ի սպաս ա՟մ գործոյից։ Եւ գործիք առանց երկաթոյ կամ պղնձոյ կամ պողովատի զիա՞րդ կազմին. նմին իրի նախ զայնոսիկ հարկ էր խնդրել. և որք մերձ ՚ի ծով ուրեք գտան բնակեալ, ոչ դանդաղեցին յարգել զայնս։ Անդր յա՟մ կողմանց գային ՚ի խնդիր. և երկիր նոցա, ամուլն թուեցեալ և անբեր, եղև նոցա կալուած արգաւանդ և բերրի։ Ոչ ինչ պակասէր նոցա՝ ժաւանդութե՟ այնր ևեթ վաճառոյն․ և քծուար երկաթոյ էր նոյա փոխանակ ոսկւոյ՝ 'ի լնուլ զա՟մ պէտս նոցա, և 'ի յարդարել զնոցայն բարեկենդանութի՟։

Յանկալի էր գիտել՝ ո՛ւր արդեօք, երբ կամ ո՛րպէս և կամ ո՛ զհրահալելին եգիտ։ Զի զիա՞րդ մարթէր գուշակել զկենցաղօգտութի՟ մանրամաղ փոշւոյն, որ անտեսաքար յալս երկրի թաղեալ կայր՝ աննման և անհամեմատ կազմելոց անօտի սպասուցն։ Դիպաց արդասիս համարել զայն՝ կարի մեծարանք են բախտին․ կարևորութի՟ և անհրաժեշտ հարկ գործեացն, որ նոքօք պատրաստին, ո՞չ արդեօք արժանի էին օժանդակուե՟ և պարգևի վերնախնամ տեսչութե՟ն։ Ար թէպէտ և զքանչելիս բարերարութե՟ն սովոր է քօղարկել, և բախտի և դիպաց արդասիս կարծեցուցանել, սակայն աչք երկիւղածք և խորագնինք արտաքին դիմօքն ոչ պատրին, այլ քօղախնդրեալ հոլանեն զբարութիւն և զառատութի՟ նորա, այնչափ առաւել զարմանալի և արժանի գոհութե՟ որչափ աղօտն երևի։ Զայս ճշմարտութի՟ և հեթանոսք խոստովան եղեն, որպէս յառաջ ասացաք։

Բայց դու տե՛ս ինձ, զի կարևորագոյնն քան զա՟մ հրահալելիս երկաթ, յաճախագոյն է և դիւրագիւտ և առատ, և ծանծաղագոյն թաղեալ ընդ հողով[1]։

Իսկ քանզի Պլինիոս սակաւ ինչ ասէ զնախնեացն հնարից 'ի գուշակել զբովս, և թէ որպէս զհանածոյսն զգտելին, հարկ է յարդեաց լնուլ զթերին առ սուղ ինչ հմտութի՟ ընթերցողաց՝ թէ զիա՞րդ այժմ գուշակին բովք, և թէ որպէս բրածոյքն մաքրեալ և ձուլին․ յորոց է ինչ, զոր և նախնիք նոյնպէս գործէին։

Պլին․ լդ․ ծդ․ և ծէ․

Հանածոյն՝ յորմէ երկաթն կլկլի, զոր արուեստագէտքն կոչեն գուղձ երկաթոյ, այլ և այլ խորուե՟ թաղեալ կայ 'ի բովս, քարաձև 'ի չափ բուան, և մերթ որպէս զաւազ։ Մթերեալ զնիւթն առ 'ի ձուլել, լուանան զայն և արկանեն 'ի հրաբորբոք քրայս հալոցաց։ Իսկ 'ի լուծանել գղձոյն և փրփրաձև զաղբղբուկն 'ի վեր դիզանել, բանան զծորան հալոցին, և որպէս հրահոսանս լի՟ն սաստիկս ծորէ 'ի կաղապարս այլաձևս՝ առ 'ի ձուլել սան և կամ այլ անօթս։ Իսկ կամ ձուլեալ 'ի քձուարս ստուարս՝ որ շանթք երկաթոյ կոչին՝ ըստ այլ և այլ չափոյ և ծանրութե՟ 'ի կշիռ երկուց և երից հազարաց լտերց , կամ ևս աւելի , ածեն 'ի դարբնոց՝ կռել և դարբնել ընդ ջրընկեց յաղթ ուռամբ ։

---

[1] Երկաթահանք դիւրապատրաստ ա՟մ ուրեք գտանին։․․․ Քան զա՟մ բովս հրահալից երկաթահանք առատաձեռն են։ Պլին․ լդ․ ծդ։

Պողովատ է ազգ ինչ երկաթոյ զտեալ և մաքրեալ 'ի հուր , սպիտակագոյն , սերտ , ողորկ և նուրբ . և է կարծր քան զա՟մ հրահալելիս՝ քաջ զտեալ և ջրդեղեալ ։ Եւ ջրդեղեն զայն՝ շանթացուցեալ և մխեալ 'ի ջուր [1] ցուրտ . բայց ձեռագիտին հմտութե՟ն է գիտել զչափ ջերմութե՟ պողովատին , յորում պարտ է 'ի բաց առնուլ զայն 'ի հրոյ ։

Սուսեր ուրուք կամ զածելի սուր տեսեալ՝ կարծիցէ՞ 'ի կօշտոյ հողոյ գործեալ զայն կամ յարջնատեսակ խճէ ։ Քանի՞ խոտոր է ընդ անկերպարան նիւթն և ընդ ողորկ լուսափայլ գործիսն . ցայս վայր ճարտարութի՟ մարդոյ եհաս ։[2] Ռէօմիւր կարևոր իմն ազգ առնէ զերկաթոյ . զի թէպէտ և հազիւ լուծանի սա 'ի հուր , մանաւանդ զի և չլուծանի իսկ որպէս զոսկին և զարծաթ և զպղինձն և զանագ և զկապար , այլ կատարելագոյն քան զամենեսին զնոսա ձուլի՝ ընդմտեալ 'ի խնդրունս կաղապարին , և ճշգրիտ զտիպ կերպարանացն առեալ ։

ՅՕԴՈՒԱԾ Բ.

[illegible] պղնձոյ ։

Պղինձ է հրահալելի կարծր , չոր , և ծանր . որ որպէս զայլ հրահալս հատանի 'ի բովուց , քարաձև կամ փոշետեսակ հանգոյն երկաթոյ գոյացեալ ։ Նախ քան զհալելն զայն՝ քաջ զհողն 'ի բաց լուանան , և ապա 'ի բովս հրով մեծաւ հալեալ՝ հեղուն 'ի կաղապարս ։ Այս է հասարակ պղինձն , միանգամ մուծեալ 'ի ձուլարան ։ Իսկ [3] առ 'ի զտել զայն և փայլեցուցանել՝ պարտ է կրկին և վերստին ձուլել , զի 'ի յաճախն հալել՝ ևս առաւել սրբի 'ի խոշոր մասանց . և սա է արոյրն , որ է փայլուն և զուտ պղինձ ։

Պղինձն կարմիր է 'ի բնէ . իսկ շէկն պղնձաքարիւ գործի ։ Եւ պղնձաքար, որ կաղամինեան կամ կադմեան քարն կոչի,[1] է հանածոյ գուղձ հրահալելի, որով պղնձագործք շինեն զկարմիր պղինձն ։ Զի որպէս զաղիւս քաջ եփեալ զայն 'ի հուր, խառնեն յարոյր կամ 'ի կարմիր պղինձ, և շինի ։ Ապա պղինձն շիկակարմիր խառն է 'ի կարմիր պղնձոյ և 'ի պղնձաքարէ ․ և չափ պղնձաքարին է ըստ ազնուութե՟ն պղնձոյն, տասն չափ կամ քսան կամ աւելի ևս մինչև ցյիսուն առ հարիւր ․ և կոչի սա ծխեալ պղինձ ։

---

[1] Կէսք զհրահալն 'ի լիճ մխեն շառաչմամբ ,
Հեծէ սալլիցըն քարանձաւն ընդ բռամբ ։
Վիրգ . Են . Ը . 450 ։

[2] 'Ի Գէր․ [illegible] 1726 ։ զի որչափ հալի . յաւելու յազնուութի . Պլին . ԼԴ . Է ։

[3] Դարձեալ միւսանգամ հալեն .

Է և այլ պղինձ արուեստագործ՝ խառնեալ 'ի հրահալելեաց բազմաց ․ որպէս 'ի պղնձաձոյլ անդրիս գեղեցիկս խառն է ըստ կիսոյ մասին պղինձ կարմիր ընդ պղնձոյ ծխելոյ ․ և յաճախ ևս խառնի պղինձ ընդ անագի ևս և ընդ կապարի վասն դիւրագնութե՟ ։ Իսկ Զոյլն կոչեցեալ՝ է խառնուած պղնձոյ, որ քանակաւ խառնիցն որոշի 'ի պղնձոյ անդրեաց ։

Ձուլագործութ՟ի է արուեստ վաղեմի ․ և յա՟մ ժամանակս էին անօթք և բազում այլ գործածք ձուլածոյք ցանկալիք ։ Յեղանելն իսրայելացւոց յԵգիպտոսէ՝ այնքան յաճախեալ էր արուեստն, զի յանապատին անպատրաստք զկերպարանաւոր պատկերն կանգնեցին զորթն ձուլածոյ ․ և ապա արարին զծո՟վն պղնձի և զա՟մ անօթս սպասուց խորանին վկայութե՟, և ապա զտաճարին ։ Յաճախ ևս 'ի միմեանսայար կռածոյ թիթղամբք դրօշէին անդրիս ։ Գիւտ ձուլածոյ և կռածոյ պատկերացս, որպէս և կռապաշտութե՟ն սկիզբն, եղև յարևելս ․ անտի անց 'ի յունաստան, և 'ի ծայր արուեստին հասին Հելլենք ։

Անուանի քան զա՟մ պղինձս և մեծարգի առ Յոյնս է կորնթեանն, զորմէ այլուր եղէն մեզ բանք, և դեղեանն ։ Կիկերոն[2] 'ի միում ուրեք յատենաբանութե՟ց զերկոսեան 'ի միասին յարէ ․ ուր յիշէ և զանուանեալ ինքնեփ անօթն, յորում դոյզն ինչ հրով որպէս թէ ինքնին եփէր խաշ ․ և այնչափ մեծագանձ անօթն այն վաճառեցաւ, զի անցաւորաց զգինսն լուեալ 'ի ձայն քարոզին՝ համարէին ագարակս 'ի վաճառ ածեալ ։

Զպղինձ յառաջ քան զերկաթ ասեն 'ի կիր արկեալ

---

[1] Դեղի երանգ պղնձոյն, որպէս ասացաքն, և զտի 'ի հուր ։ Լինի և 'ի պղնձաքարէ, զոր կադմեան քարն կոչեն ։ Պլին․ լդ․ ա ։

[2] Լցեալ զապարանսն կորնթեան և դեղեան անօթովք, յորս է և ինքնեփն այն դեռ ևս վաճառեալ այնչափ մեծագնի, զի անցաւորք զսակ գնոյն լուեալ՝ կալուածս երկրի համարէին 'ի վաճառ ածեալ ։ Կիկ․ 'Ի Ռոսկ․ Ամեր․ ծլգ ։

'ի կազմած զինուց. ապաքէն դրամք՝ նախ քան զոսկիսն և զարծաթիս՝ պղնձիք էին, գէթ 'ի Հռոմ. և էին 'ի սկզբանն ձոյլք պղնձոյ այլակշիռք անտիպ և աննշան՝ յարգունք ըստ կշռոյ. վասն որոյ ստէպ 'ի սակ վաճառաց՝ պղնձոյ և կշռոյ բանք լինին։ Սերուիոս վեցերորդ արքայ Հռոմայ 'ի ձև և 'ի տիպ ած զդրամս. և զի[1] այնց ժամանակաց մեծութիք էին անդեայք, արջառ և ոչխար և խոզ, զձև նոցա կամ զդէմս 'ի նախատիպ դրամն ետ դրոշմել, վասն այնորիկ կոչեցան պախրէ։ Իսկ արծաթի դրամ յաւուրս բդեշխութեան Փաբիոսի և Ոգուլնեայ, հինգ ամաւ յառաջ քան զնախկին պատերազմն կարքեդոնական, 'ի չորեքարիւրորդի ութսներորդի հինգերորդի ամի շինութեան Հռոմայ մուծաւ անդր։ Յառաջին Պլին. լգ. ա։
անուանն 'ի նիւթոյն յորջորջեալ պղինձ՝ պահեցաւ առ Հռոմայեցիս. վասն որոյ դրամք 'ի կշիռ լտեր՝ կոչէին առ նոսա, մանաւանդ 'ի սկզբանն, ծանր պղինձ. և զանձարանն՝ պղնձարան, զի յառաջ պղինձ և եթ մտանէր անդր. և փոխն՝ պղինձ օտար. և բազում այլ ևս հանգոյն սոցին 'ի նիւթոյն յորջորջմանց անուանք։

ՅՕԴՈՒԱԾ Գ.

[illegible] ոսկեհանաց։

Երեակ ազգք են ոսկեհանաց առ մեօք, ասէ Պլինիոս. կէսք 'ի գետոց ժողովեն, այլք 'ի խորոց երկրի պեղեն, և այլք յաւերակաց լերանց՝ հերձեալ զնոսա և տապալեալ։ լգ. դ։

Ա. ՅԱՂԱԳՍ ՈՍԿԵՀԱՆ ԳԵՏՈՑ

Հատս մանունս ոսկւոյ բերեալ արկանեն յեզերս գետք. որպէս 'ի Սպանիա Տագոս, Պաթոս յԻտալիա, 'ի Թրակիա Հեբրոս, Պակտողոս յԱսիա, և 'ի Հնդիկս Գանգէս։ Նաև է[2] քան զա͞մ ոսկի ազնիւ որ 'ի գետոցն ժողովեալ. զի ընդ քարուտս և ընդ աւազուտս բազում շրջածութեն զտի և փայլէ ։ Եւ ոչ սոքա միայն, այլ և աստ 'ի Գաղղիա էին գետք ոսկեբուղխք ։ Ըստ որոյ ասէ Դիոդոր՝ բնութեն նախապատիւ արարեալ զաշխարհն, պարգևելով նմա զոսկին առ ձեռն պատրաստ 'ի գիւտ, առանց բազմախոնջ արուեստից ։ Զի խառն ընդ աւազս բերէին ալիք ։ և բնակչաց աշխարհին զաւազն քաջ 'ի բաց լուացեալ, և զոսկին հանեալ ձուլէին 'ի քառամանեակս, յապարանջանս, 'ի գօտի, և յայլ զարդս ։ Հանգոյն սոցին՝ գետք են և այժմ յաշխարհիս, Հռենոս, Հռոդանոս, Գարոննէ և Բաղցը գետն՝ որ ընդ Սեկուանեայն անցանէ, Կեսա և Գարդոն՝ որ 'ի Գեբեննեանց լերանցն գան, և Ոսկեբերն՝ որ բղխէ 'ի Պիրենեայ, և այլք 'ի գետոց ։ Բայց սակաւ ինչ ժողովի 'ի սոցունց, հազիւ ամօրեայ պարէն վաստակաւորաց գեղջկիցն հայթայթեալ ։ Դէպ լինի յաւուրս ինչ ժողովել նոցա աւելի քան զերկուս լիրայս ։ բայց և յայլ աւուրս տուժին, գրեթէ ոչ ինչ գտեալ ։

---

[1] Սերուիոս արքայ տպաւորեաց զդրամս. յառաջ քան զայն անհարթ դրամով վարէր Հռոմ, որպէս աւանդէ Տիմէոս. և նախ 'ի պատկեր անդեոց տպաւորեալ, վասն այսորիկ կոչեցաւ պախրէ։ Պլին. լգ. գ։

[2] Չիք ոսկի ազնիւ որպէս զմաքրեալն և զլղկեալ շրջածութ͞ն։ Պլինի..։

Բ. ՅԱՂԱԳՍ ՈՍԿԵՀԱՆ ԵՐԿՐԻ

Որ յերկրէ ոսկեհանքն պեղեն զոսկի, խնդրեն զհողն անուանեալ գաղղիարէն Սաննա ։ զի 'ի գունոյ նորա և 'ի սողոխիցն՝ որ ծխին 'ի նմանէ, գուշակեն հմուտք արուեստին՝ զի է անդ ոսկի ։

Ի գտանել զերակ ոսկւոյն, զջուրն 'ի բաց դարձուցանեն ։ և բազուկ 'ի գործ արկեալ՝ պեղեն զպատուական հողն, և ածեալ արկանեն յաւազան ։ Եւ հոսեցուցանեն անդր ջուր յատակ ընդ ծորան նուրբ կամ ստուար ըստ քանակի հողոյն ։ և Ճանկիւ երկաթեաւ բռնութե հոսանացն օգնեալ՝ խառնեն և քրքրեն զհողն, մինչև սիկն ևեթ 'ի յատակ աւազանին մնայ աւազ սեաւ՝ յորում է ոսկին ։ Ապա զսիկն զայն դնեն 'ի տաշտ մեծ փայտեայ, խոր 'ի մէջն չորս կամ հինգ գծաչափ ։ և ստէպ լուացմամբ և ուժգին տատանմամբ մնայ փոշի ոսկւոյն զուտ ։

Զայս [2] այսպէս առնեն այժմ 'ի Կիլէ, այսպէս և առ Պլինեաւ առնէին ։ զի ասէ ։ Ոսկեհանք նախ զհողն՝ զնշանակ ոսկւոյն՝ 'ի բաց պեղեն, անդ է երակն ։ Եւ 'ի լուանալ զաւազն, որ ինչ 'ի մրրոյն 'ի յատակն իջանէ տատանմամբ՝ քամեն ։

Պլին. լգ. դ ։

---

[1] 'Ի Գիրս յիշատակաց Գիտնոց Ճեմարայն. 1718 ։

[2] Տես 'ի Բառարանի Հնախօսութեան ։

Եւ զի ծանծաղագոյն՝ առանց զխորս պեղելոյ գտանի ոսկին, թէպէտ և սակաւ ուրեք. որպէս պատմէ Պղինիոս՝ յառաջ քան զսակաւ ժամանակս առ ինքնակալութեամբն Ներոնի գտեալ առատ 'ի Դաղմատիա, ոչ ինչ պակաս քան զյիսուն լիտր յաւուրն։ Բայց յաճախ 'ի խորոց պեղի, ուր ոսկեհանք գետնափոր ական գործեալ՝ գտանեն զոսկին 'ի քարինս և 'ի խիճս կռուեալ։ Եւ յաջ և յահեակ ընդ երակս ոսկւոյն բրեն, նեցուկս ընդ խարխուլ յատակաւն եդեալ։ Եւ զգուղձն բրածոյ կամ զոսկխածին քարն՝ որ հանքն կոչի՝ փշրեալ և լեսեալ և յաձիւն լուծեալ, լուանան և հալեն. և որ նախ 'ի հալոցէն ելանէ ոսկին՝ դեռ ևս արծաթ համարի, զի է միշտ խառն ընդ արծաթոյ։

Զաղտն կամ զաղբղբուկն՝ որ փրփրաձև յերեսան դիզանի 'ի քրայս, ոչ ոսկւոյն միայն՝ այլ և ա̄մ հալականաց, ոչ 'ի բաց ընկենուն. այլ լեսեալ զայն անդրէն և 'ի կիր դարձուցեալ, ընտրեն և զմնացորդ մասունս ոսկւոյն։ Իսկ հալոցն 'ի կաւանման սպիտակ հողոյ թրծի, զի սա միայն բաւնուէ հրոյն և փքոցն և յորձանաց հրահալելւոյն տոկայ։

Բայց բէն աղնիւ 'ի հրահալելիս է ոսկի, այլ գիւտ նորա տաժանաւոր. նմին իրի գերիք և մահապարտք վարէին 'ի բովս, ընչաքաղցութե̄ խստասիրտս յի̄մ ժամանակի արարեալ զոսկեմոլսն։ Իսկ հիքացեալքն, որպէս Դիոդոր պատմէ, զցայգ և զցերեկ անդադար խոնջէին շղթայակապք. և անագորոյն տեարքն առ 'ի բառնալ 'ի նոցանէ զա̄մ յոյս ազատութե̄ և կաշառաբեկ առնելոյ զպահապանսն՝ կացուցանէին 'ի վերայ նոցա զինուորս այլալեզուս, զի մի խօսել կարասցեն ընդ նոսա, թէ գուցէ միաբանեսցին 'ի նենգութի̄։ Դիոդ. գ։

Գ. ՑԱՂԱԳՍ ՈՍԿԵՀԱՆ ԼԵՐԱՆՑ

Եւ այլազգ գիւտ ոսկւոյ 'ի բլրոց և 'ի լերանց, որպիսիք բազումք են 'ի Սպանիա[1]։ Լերինք անջրդիք և անարգասաւորք՝ որպէս զտոյժս ամլութե̄ն՝ հատուցանեն զոսկի։ Պլին. լգ. դ։

Յաջմէ և յահեկէ ական մեծ հատեալ, մտանեն 'ի ծոց լերինն ջահիւք և լապտերօք. զի լոյս ոչ ծագէ անդր, այլ 'ի մշտագիշէր խաւարի խոնջին , և է զի բազմամսեայ ժամանակաւ յամեն անդ ։ Եւ յածել 'ի խորս զբրածն՝ խարխլի երկիրն և փլանի , մերթ ևս զհէք գործաւորսն կորուսեալ . վասն որոյ ասէ Պլինիոս .[1] Ոչ այնպէս ժպիրհք են և յանդգունք , որք յարևելս դիմեալ գնան 'ի խորս ծովու զմարգարիտն խնդրել , որպէս որք զոսկին պեղեն յերկրէ . զի ագահութի̃ մեր բազմավտանգ քան զծով արար զերկիր ։ Ս՛մին իրի պարտ է և աստ , որպէս և յայլ բովսն՝ զորոց ասացաք , հաստարանս 'ի խոռոչ լերինն ուրեք ուրեք կանգնել կամարակապս ամրակառոյցս ։ Զի և ժայռք մեծամեծք ընդ առաջ ելանեն , զորս հարկ է հերձուլ հրով կամ քացախով . և զի մի 'ի ծխոյն և 'ի գոլորշւոյ գործաւորքն հեղձանիցին , ստիպին՝ մանաւանդ 'ի խորս՝ մուրճ և դուր 'ի գործ արկանել , և զանհեթեթ ժայռսն հերձեալ 'ի հատորս ստուարս՝ ձեռն 'ի ձեռանէ և ուս յուսոյ փոփոխմամբ կրել ընդ գետնափոր ուղին արտաքս . յոր զաւուրս բազումս զտիւ և զգիշեր աշխատին ։ Եւ լոյս յետկուսէ ևեթ կացեալքն տեսանեն . իսկ 'ի ներքս 'ի նշոյլ լապտերաց վաստակին գործաւորքն ։ Բայց եթէ երկայնագունից և կարծր ժայռից դիպիցին , խոտորին յաջ կամ յահեակ , և կամակոր ական հատանեն ։

---

[1] Լերինք Սպանիոյ անջրդիք և ըէք այսմ արգասեաց բռնադատին ստերջք. որոց ոչ ինչ են բերք՝ բեր- լինել։ Պլին.

Եւ իբրև կատարի գործն , և 'ի խորս լերինն զգետնափոր շաւիղսն հասուցանեն , ապա հատանեն 'ի ներքուստ զնեցուկս կամարացն , որ է գուշակ մօտալուտ կործանմանն ։ Եւ յիջանել կամարին և 'ի սկսանել փլուզմանն՝ իրազեկ լեալ նախ որ 'ի վերայ լերինն 'ի պահուկայ , վաղվաղակի 'ի ձայն բարբառոյ կամ 'ի փող պղնձի ազդ առնէ 'ի բաց կալ գործաւորացն , և ինքն փութացեալ մեկնի 'ի բաց ։ Եւ լեառնն խոռոչացեալ անկանի ահեղ դղորդմամբ ։ Իսկ գործաւորքն՝ որպէս յաղթողք՝ աներկիւղ 'ի զնին կան աւերածոյ բնութեանն . բայց չև ևս հանեալ է ոսկին[2] ։ Զի ոչ թէ վստահք 'ի գիւտ ոսկւոյն՝ ձեռնարկեն պեղել , այլ յոյս ևեթ և ցանկութե̃ վարէ զնոսա յաշխատութիւն և 'ի վտանգ ։

Մ՛նայ մեծ ևս և ծանրագոյն վտանգ . 'ի մերձակայ լերանց բարձանց ածել անդր ջուր՝ պատեալ ընդ երկայն ճանապարհ , և սաստիկ 'ի վերայ փլատակացն հոսեցուցանել՝ վասն զցանկալի հրահանն ընտրելոյ ։ Նմին իբր տեղէն առուս բարձր կամ խոնարհ ըստ խորոց և ըստ բարձանց երկրին, որ քան զա̃մ գործածման դժուարին է ։ Զի հարկ է հարթաչափ գործեաւ ճիշդ զչափ առնուլ վայրացն՝ ընդ որս ուղխ զերթն առնիցէ մինչև 'ի ցածագոյն փլուզեալ լեառնն, որպէս զի ջրոյն սրընթաց վայրէկութք գերփեալ վարեսցի ոսկին · յայն սակս իսկ 'ի բարձանց ածեն զջուրն, արուեստագործ ջրմղօք ընդ առապարս զառնութի հոսմանցն պահեալ անվատնելի ։ Քանզի հարթեն զխորտուբորտ քարաժայռսն կատարս՝ որ խոչ անկանին, և ակօսաձև հետս 'ի նոսա հատեալ՝ տախտակս յամփոփումն և յանընդհատ հոսումն ջուրցն զետեղեն ։ Ժողովեալ ապա զջուրս 'ի նկատելոց շրջակայ լերանց բարձանց, տեղէն աւազանս ընդարձակս երկերիւր քառակուսի ոտնաչափ 'ի լայնութի, և տասն 'ի խորութի, և փողրակս հինգ՝ ստուարս երեք կամ չորս քառակուսի ոտնաչափ՝ գործեն 'ի ժողով ջուրցն յայլ և այլ կողմանց ։ Եւ 'ի լնուլ լճին բանան զխիցս, և յուղխահոս ջուրցն սաստկութենէ մինչև վէմք ստուարք հոլովեալ մղին ։

---

[1] Յոյժ Վաստակաւոր արարք զերկիր, մինչև զմարգարիտ յանդունդս ծովու խնդրել՝ նուազագոյն թուի յանդգնուե̃ ։ Պլին ։

[2] Որպէս յաղթողք 'ի զնին կան աւերածոյ բնութեան . այլ չև ևս գտեալ է ոսկին ։ Պլին ։

Նա և առ ստորոտով ոսկեհան լերինն 'ի դիւրի այլ գործած ։ Պեղեն խրամս ագուգայս ուղխիցն, ընդ որս անցեալ անկանին 'ի ծով ։ Այլ վասն չկորնչելոյ ոսկւոյն խառն ընդ ջուրսն, տարածանեն ուրեք ուրեք թուփս իմն* նման խնկունւոյ՝ ոստախիտ ևս, յոր իբրև 'ի վարմս կլռուի ոսկին ։ Եւ տախտակօք երկուստեք զխրամն փակեն, զի մի արտաքս զեղուցուն ջուրք · և ընդ առապարս դժուարինս կառուցանեն ջրառուս փայտաշամբք ընդօդս, ընդ որ երթեալ խառնին ջուրքն յաւազուտս ովկիանոս ծովուն, ուստի ոչ ինչ կարի հեռի են բովք ։

Զոսկի 'ի ստորոտից լերանց հանեալ՝ ոչ ևս պարտ է հրով փորձել, զի է զուտ 'ի բնէ · և գտանի 'ի քծուարս ստուարս և 'ի մանունս, որպէս և 'ի խորս ուրեք երկրի 'ի բովս ։ Իսկ զոստս խնկունեացն վայրի ժողովեալ խնամով և ցամաքեցուցեալ այրեն, և զմոխիրն լուանան 'ի վերայ դալար խոտոյ, ուր զնստեալ ոսկին դիւրաւ ժողովի ։

Պլինեայ հետազօտեալ բազում պատճառս ածէ պատուականութեան ոսկւոյ քան զայլ հրահանգելիս ։ Զի յա̃մ հրահանգից սա միայն է անծախելի 'ի հուր, կամ թէ յուժ սակաւ ինչ ծախի 'ի նմանէ, և 'ի փայտակոյտս բոլորեալս և 'ի բոցածաւալ հրդեհս ամենածախս՝ պահի անկորուստ։ Նա աւանիկ և ազնուագոյն յաճախ այրեցմամբն գործի, որպէս ասեն, և փորձի հրով. զի ոչ է ոսկի ազնիւ եթէ ոչ զգոյն հրոյ առեալ, զոր ոսկերիչք ոսկի ոփազայ կամ կեփազեայ կոչեն։ Այս է զարմանալի, զի զոր ածուխք կիզիչք չգործեն, պայծառ[1] բոց յարդի լուծանէ և զտէ զնա, դոյզն ինչ կապար խառնեալ 'ի նմա։ Դարձեալ զի և 'ի կիր ածեալ ոսկի՝ գրեթէ ոչ ինչ մաշի, կամ յոյժ նուազ քան զայլ հրահալելիս. զի արծաթն և պղինձ և անագ աղտեղեն զձեռս, և ձգեն գիծ թուխ, որ է նշանակ մաշելոյ նոցա և դիւրավատնելի գոլոյ։

---

* Զթուփս զայս կոչեն լատինք Ulex զի յինէ, և ոչ է նոյն փշփշեն՝ որ 'ի ուռկաս. առ Պլինիոս Եւր հարեան ծառոյ իջէ ։

Դարձեալ յամենայն հրահալելեաց ոսկին և եթ չժանգահարի, և ոչ ինչ զգեղ նորա եղծանէ կամ թեթևացուցանէ զկշիռն։ Այս 'ի նիւթականացս զարմանալի իմն սա միայն 'ի ջուր, 'ի հող, 'ի ժահ և 'ի գերեզմանս ընդ յամայր ամս պահի անեղծ անժանգ և անաղտ որպէս և էն։ Դտանին դրոշմանք ոսկի՝ ամաց աւելի քան երկուց հազարաց, որ թուին նորոգ հատեալ։ Այլ՝[2] զի և մաշեցուցիչ զօրութեան աղին և քացախոյ, որ զամենայն ինչ ընկճեալ լուծանեն, զդէմ ունի ոսկի։

Չիք 'ի հալականս տարածուն քան զոսկի և բազմաբաշխ ազգի ազգի օրինակաւ[3]։ Զի ունկի ոսկւոյ ծաւալի յեօթն հարիւր և 'ի յիսուն թիթղունս, և ևս աւելի՝ եթէ պէտք լիցին, և թիթեղն իւրաքանչիւր չորս մատնաչափ 'ի լայնութեան և յերկայնութեան։ Ապաքէն և 'ի Պլինեայ ասացեալս զարմանալի է, այլ տեսցուք ստորև ըզճարտարութիւն այժմու ոսկերչաց և յայսմ մասին առաւելեալ յոյժ քան զառաջնոցն, որպէս և 'ի բազում այլ իրս։

Հանդերձ սոքիմբք և նիւթի ոսկին և անկանի որպէս զասր. և առանց ասու իսկ և մետաքսի համակ ոսկեթել, կամ խառն ընդ նոսա դիպակ գործի։ Տարկուինիոս երէց 'ի յաղթանակելն իւրում էր զգեցեալ պատմուճան ոսկեթել։ Այս Ագրիպպինա մայր Ներոնի 'ի տեսիլ նաւամարտին, զոր արար ինքնակալն Կղօդիոս այր նորա, յանդիման եղև ժողովրդեան համակ ոսկեթել պատմուճանաւ։

---

[1] Զնոյն առնէ և Ստրաբոն, և յաւելու զպատճառն. Դիւրագոյն, ասէ, հալի ոսկի 'ի բոց յարդի. զի բոց թոյլ և դիւրամաշ համեմատի առ հլուն և դիւրահալ. իսկ ածուխ բազումս ծախէ, կարի լուծեալ սաստկութեամբն և կորուսեալ։ Ստրաբ. Գ. 146։

[2] Ընդդիմակայք ամենայաղթ հիւթոյ աղին և քացախոյ։ Պլին։

[3] Չիք ինչ տարածուն քան զոսկի և բազմաբաշխ. զի ունկի ոսկւոյ ծաւալի աւելի քան յեօթնհարիւր և 'ի յիսուն թիթղունս. և թիթղանցն լայնութեան չորից մատանց, նոյն և երկայնութիւն։ Պլին։

Առասպելք արդեօք թուէին զնրբութ՟է և զկակղու՟է ոսկւոյ և արծաթոյ ասացեալքն, եթէ ոչ փորձն հանապազ վկայէր։ Յաղագս այսորիկ որ ինչ 'ի գիրս յիշատակաց կաճառոյն գիտութ՟եց ասացեալն է՝ ածից անփոփոխ։

Յ-Գ. 1713.

Ոսկեթելն է թել արծաթի ոսկեզօծեալ, որպէս ամենեցուն յայտ է. զի զձող արծաթի պատեալ ոսկի թիթղամբ՝ ձգեն ընդ կորզան, և ելանէ թել. և մինչև 'ի սպառ երկայնեալ՝ մ՟այ ոսկեզօծ։ Սովորականն չափ ձողոյն է քան և երկու լիտր և կէս, հնգետասան գծաչափ տրամագիծ նորա, և երկայնու՟ի նորա առ քանևերկու մատնաչափ։ Արդ քան և երկու մատնաչափ ձողս այս, որպէս ցուցանէ Ռէոմիւր, ձգեալ ընդ թելհան գործի՝ երկայնի 13963224 մատնաչափ, կամ 1163602 ոտնաչափ. վեց հարիւր երեսուն և չորս հազար վեց հարիւր յիսուն և երկիցս բազմապատկեալ, ասպարէզս իբր հազար յիսնհարիւր քառասուն. հարիւր ձող առ ասպարէզ հաշուեալ։ Իսկ մինչ չև զմետաքսին ածեալ՝ տափեն զգլանաձև ոսկեթելն, որով դարձեալ ոչ ինչ նուազ քան զեօթներորդ մասն երկայնի, քան և երկու մատնաչափ երկայնու՟էն յաւելեալ ցերկու հազար երկերիւրևքսան ասպարէզ։ Մարթի փոխանակ եօթներորդ մասին և չորիր մասամբ երկայնել 'ի տափելն, որով լինի երկայնու՟ի նորա երկու հազար չորեքարիւր ասպարէզ։ Թէպէտ և կարի զարմանք իրք այս թուիցին, բայց է ևս զարմանալի ինչ։

Ձողն արծաթի քան և երկու և կէս կշիռ լտեր, երկայնութ՟ի նորա՝ քան և երկու մատնաչափ, պատի ոսկւով ոչ ինչ աւելի քան զկշիռ ունկւոյ. և յերկայնել թելին, ապաքէն անօսրի ոսկին՝ այլ մ՟այ թելն ոսկեզօծ. և յերկայնել ձողոյն ընդ թելհանն ցերկու հազար չորեքարիւր ասպարէզս, երկայնի և ոսկին 'ի միասին ընդ արծաթոյն։ Արդ տես ինձ, զի ունկի ոսկւոյն՝ պատեալ զարծաթի ձողովն քան և երկու և կէս լտեր՝ քանի՞ նրբի ընդ այնչափ երկայնութ՟ի արծաթոյն։ Յաւելու և զայն Ռէոմիւր, զի զօծումն ոսկւոյն գտանի ուրեք ուրեք երկպատիկ թանձր. և հաշիւ արարեալ ըստ անօսրագոյն մասին, գտանէ զթանձրութ՟ի ոսկւոյն՝ հարիւր և հինգ բիւրորդ մասն գծի։ Նրբութիւն անհաս, հանգոյն երկրաչափականին անբաւաբաշխ մասին․ այլ աստ արդիւնք իւրաց առաջի կան՝ ներգործեալ գործարանօք, որ որչափ և ճարտարագործք իցեն՝ սակայն Թանձունք են ։ Իսկ եթէ այսօրինակ անհասք են մտաց և շլացուցիչք, որչափ ևս առաւել՝ որ առ ա̃յ անբաժանելի անօսունքն են ։

ՅԱՂԱԳՍ ԲԱԶՄԱԳՈՒՆԻ ԱԿԱՆ

Պլին․ լգ․ դ․ ։ Զայսոսիկ 'ի Պլինեայ առեալ գրեմ ։ Յա̃մ ազգս ոսկւոյ՝ խառն է արծաթ, աւելի կամ նուազ․ մերթ տասներորդ մասն, մերթ իններորդ, և մերթ ութերորդ ։ Բայց 'ի Գաղղիա է տեղի ոսկեհան, ուր խառնուրդ արծաթոյ գտանի երեսներորդ մասն ոսկւոյն, որ ազնուագոյնն է քան զա̃մ ոսկի, և կոչի ալբիկրատեան․ զի Ալբիկրատ էր յառաջ տեղի 'ի Գաղղիա մօտ 'ի Տարբէ ։ Են և այլ բազում բովք 'ի Գաղղիա, յորոց կէսք սպառեցան, և կէսք լքեալ Թողան ։ Զոմանս յայնցանէ յիշէ Ստրաբոն, և մանաւանդ զտարբեանսն․ զորոց ասէ՝ Թէ յոյժ արգաւանդք էին ոսկւով, ուր մինչ չև 'ի խորս զականահատութ̃ին ածեալ՝ գտանէին հատք ոսկւոյ լի բռամբ, և ոչ բազում ինչ հրոյ պէտք էին առ 'ի մաքրել զայնս․ զի և բազում հատք ոսկւոյ և փշրանք էին 'ի նոսա, զորս ոչ իսկ հարկ էր զտել ։ դ․ 190 ։

Յաւելու Պլինիոս․ Արդ ոսկի, որոյ հինգերորդ մասն է արծաթ, կոչի բազմագունի ակն․ մարթէր կոչել զայն և ոսկի սպիտակ, վասն լս̃նագոյնն գոլոյ և շէկ ։ Երեւի պատուականագոյն լեալ սա առ նախնիս․ զի Հոմերոս զարքունիս Մենելաւեայ նկարագրէ պայծառափայլ ոսկւով և բազմագունի ակամբ, արծաթով և փղոսկրիւ ։ Եւ բազմագունի ականն այս ինչ է յոլովութ̃ի, զի 'ի լոյս ճրագի փայլէ առաւել յոյժ քան զոսկի և քան զարծաթ ։ Ոդէ․․ դ․ 71 ։

ՅՕԴՈՒԱԾ Դ․

Զբովոյ արծաթոյ ։

Պլին․ լգ․ է․ ։ Է ինչ բազում՝ որով արծաթահանք նման են ոսկեհանից ։ Զի պեղեն զերկիր, և յաջ և յահեակ գետնափոր ական հատանեն ընդ երակ արծաթոյն ։ Սա ոչ 'ի տեսիլ գունոյն զայս գիւտին ծնանի, զի ոչ է աստ փայլուսն և նշոյլ որպէս յոյլս 'ի բովուց . այլ գուղձ արծաթոյն մերթ խարտեաշ է և մերթ գորշ, և յաճախ փորձիւքն ճանաչեն զայն գործաւորք ։

Հրով զտի և արծաթ, սակաւ ինչ կապար 'ի նմա խառնեալ, կամ զգուղձ անագին՝ [1] որ գրեթէ ա՟մ ուրեք 'ի միասին ընդ արծաթոյ գտանի 'ի բովս, և հուր ընտրէ զնոսա՝ զկէսն 'ի կապար կամ յանագ լուծեալ, և զմիւս կէսն յարծաթ՝ որ թեթևութ՟ն վերոյ կայ որպէս իւղ 'ի ջուր ։

Էին գրեթէ յա՟մ գաւառս ինքնակալութե՟ հռոմայեցւոց արծաթահանք, յԻտալիա մերձ 'ի Վերկեղ, 'ի Սարդինիա բազում ուրեք, 'ի Գաղղիա ուրեք ուրեք, այլ և յԱնգղիա, և յԱլսատիա՝ ուր Ստրասպուրգն յայն սակս կոչէր Արծաթի քաղաք, և Կոլմարն անուանեալ Արծաթահանք, և 'ի Դաղմատիա, և 'ի Պանոնիա՝ որ արդ կոչի Ունգարիա, և 'ի Սպանիա, և 'ի Լուսիտանիա՝ ուստի ելանէր արծաթ ընտիր ։ Պլինիոս երեքարիւր ամաւ և ևս յետոյ քան զԱննիբաղ գրէ զարմանալի ինչ [2], թէ պեղեալքն 'ի նմանէ փոսք կան և մնան ցարդ 'ի Սպանիա 'ի բովս, և կոչին յանուն գտողացն զբովսն կարքեդոնացւոց ։ Մի 'ի նոցանէ՝ Բեբուղն կոչեցեալ՝ կայ մինչև ցայսօր, ուստի գայր Աննիբաղայ հանապազօր երեքարիւր լիտր արծաթոյ . զոր ապա ազգ ակկիտացիք [3] և ևս պեղեցին՝ յառաջ ածեալ զբրածն ընդ մէջ լերինն հազար և հինգ հարիւր քայլ, զցայգ և զցերեկ վաստակեալ փոխանակաւ ըստ վառման իւրաքանչիւր լապտերին, և քամեալ զջուրսն 'ի բաց ։ Գտանի և ծանծաղագոյն յերեսս երկրի երակ արծաթոյ ։ Իսկ զսպառել երակին դիւրաւ գուշակեին հինք՝ գտանելով 'ի սպառուածին պաղլեղ, ուր և դադարէին 'ի պեղելոյ ։ Այլ զարդիս, ասէ նոյն ինքն Պլինիոս, ծանուցաւ՝ զի յետ պաղլեղին յաջորդէ երակ պղնձոյ սպիտակ, որով դարձեալ գուշակի սպառուած երակի արծաթոյն ։

Ոչ իսկ է մարթ ըստ վայելչոյն արժանեաց զարմանալ ընդ չքնաղ գիւտ հրահալելեացն, զորոց ցայս վայր ասացաք ։ Զի՞նչ քան զոսկին և քան զարծաթ ծածկագոյն ընդ տիեզերս . Թաղեալ կայր 'ի խորս 'ի մէջ ապառաժ վիմաց որպէս անպիտան, և զպատուական հրահալիցն մասունս՝ խառնեալ ընդ օտար իրս անզննելի և անընտրելի՝ անհնարին թուէր մարդկեղէն ճարտարութե̃ն հանել 'ի հողոյ, և ձուլել միատարր, և զտել և ածել 'ի սպաս պիտոյից իւրոց։ Սակայն եգիտ զայն, և յայն կատարումն իսկ մտադիւրութե̃ արուեստին հասոյց, զի թուի իմն ձոյլ 'ի սկզբանէ ստեղծեալ ոսկին և արծաթ՝ երևելի աչաց որպէս զքարինս 'ի վերայ երկրի։ Այլ մարդ ինքնին բաւական էր 'ի հրաշալի գիւտն։ Կիկերոն¹ յայտնի իսկ ասէ. 'Ի զուր ստեղծեալ էր ա̃յ յոլով երկրի զոսկին և զարծաթ, զպղինձ և զերկաթ, եթէ ոչ ուսուցանէր մարդոյ հասանել 'ի խորս՝ ուր պատուական հրահանելիքն ծածկեալ կան։

---

[1] Գուղձ անագին, որ կոչի Կասիտերա, է բրածոյն խառն և անկերպարան՝ [illegible] հրահալն կոչի ։

[2] Զորս էր դեռևս Աննիբաղ 'ի գալ խորամ պատերազմել զՍագունտոն ։

[3] Ազգք բնակեալք 'ի Մուրկիա և 'ի Վալենտիա, որ էին 'ի սահմանս Կարթագինեայ ։

ՅՕԴՈՒԱԾ Ե.

Յաղագս զի ոսկեհանք և արծաթահանք էին աղբիւր
առատ մեծութե̃ց նախնեաց։

Ոչ է հարկ ասել, զի 'ի բովուց ոսկւոյ և արծաթոյ քանի՛ եկամուտք դոյզն ինչ ջանիւ յաճախէին տէրանցն, թագաւորաց և ժողովրդոց։

Դիոդ. ժզ. Փիլիպպեայ հօր մեծին Աղեքսանդրի էին շուրջ զՊիւդնաւ 'ի Մակեդոնիա ոսկեհանք, ուստի հատանէր ամի ամի հազար քանքար։ Նոյն նման և 'ի Թեսաղիա և 'ի Թրակիա բովք ոսկւոյ և արծաթոյ, որք մինչև 'ի վախճան իշխանութե̃ն Մակեդոնացւոց² կային՝ որպէս երևի, զի հռոմայեցիք 'ի պարտելն զՊերսևս՝ թափեցին 'ի ձեռաց նոցա զբովս։

Նոյն և աթենացւոց արծաթահանք յԱտտիկէ 'ի Լաւրիոն, և մանաւանդ 'ի Թրակիա՝ ուստի յոլով եկամուտ էր նոցա։ Նա զբազումս 'ի քաղաքայնոցն յիշէ Քսենոփոն մեծացեալս նոքօք. զի Իպպոնիկեայ վեց հարիւր ստրուկք էին, և Նիկիասայ՝ որ 'ի Սիկիլիա սպանաւ՝ հազար։ Նա որք 'ի վարձու ունէին զբովս նոյա, 'ի վերայ ա̃մ ծախուցն՝ հատուցանէին Իպպոնիկեայ օր ըստ օրէ յիսուն լիրայ, դանկ առ գերի զաւուրն տալով վարձ,

---

[1] Ընդունայն զոսկին և զարծաթ, զպղինձ և զերկաթ ստեղծեալ էր ա̃յ, եթէ ոչ ուսուցանէր և զգիւտ երակաց նոցա։ Կիկ. ընէ. ա. ճժշ։

[2] Նա զմակեդոնական բովուցն խորհէին բառնալ զկալուածս, ուստի եկամուտք բազում յոյժ էին։ Լիւ. խե. ծը։

ըստ նմին համեմատութեն և ՚Սիկիլիայ. որ հարուստ եկամուտք էին ։

՚Նոյն մատենագիր ՚ի հնարս յաւելուածոյ եկամտից՝ խրատս հանճարեղս տայ աթենացւոց, և յորդորէ զնոսա յարգել մանաւանդ զվաճառականութի, և խրախոյս և ձեռն տալ պարապելոցն ՚ի նոյն՝ եկաց և քաղաքայնոց, խնամ ունել յապահովութի նոցա, և պատրաստել նաւս ՚ի տարուբերս վաճառուց, զվաճառաշահ իւրաքանչիւրոց՝ համարեալ աշխարհին մեծութի և զօրութի ։ Եւ զհրահալելեաց յերկար ճառէ. և յորդորէ հասարակապետութեն ինքնին ՚ի շահ աշխարհին վարել զնաւս, ոչ ինչ փնասակար վարկուցեալ զայն ժողովրդեան. զի երկաքանչիւրոյն մարթէր մեծանալ նոքօք. քանզի ոչ եթէ բովք գործաւորացն պակասէին, այլ գործաւորք բովուց ։

Քան զնաւս ատտիկեցւոց աշխարհին և զթրակացւոց՝ շահաւետագոյն յոյժ էին սպանիականքն ։ Զորս բնակչաց աշխարհին անփոյթ արարեալ էր, և նախ տիւրացիք շահեցան նոքօք, և յետ նոցա կարքեդոնացիք ։ Զի սոքա ընդ կոխելն ՚ի Սպանիա՝ գիտացին, զի էին նոցա աղբիւր անսպառ մեծութեց բովքն ։ ՚Ի միոջէն ևեթ, որպէս գրէ Պլինիոս, գայր Աննիբաղայ օր ըստ օրէ երեքարիւր լտր արծաթոյ, կամ երկոտասան հազար և վեց հարիւր լիրայ, հաշուեալ ութսուն և չորս դենար առ լտր մի՝ ըստ նորին Պլինեայ այլուր բանիցն ։ ԼԳ. Դ. ԼԳ. Ե.

Ստրաբոն ՚ի Պողիբեայ առեալ ասէ, թէ չորք բիւրք գործաւորք յաւուրս նորա խոնջէին ՚ի բովս մերձ ՚ի Կարթագինէ. և գայր անտի հռոմայեցւոց հանապազօր քսանև հինգ հազար դրամակշիռ ։ Յիշէն ՚ի վէպս արք, որոց շահք անբաւք ՚ի բովոյն առասպելք թուին. զՊտղոմեայ ումեմնէ, որ յաւուրս Պոմպէի իշխէր յԱսորիս, պատմէ Վարրոն՝ թէ ութ հազարաց ասպետաց ռոճիկ տայր. և կոչնականք հանապազօր ՚ի սեղան նորա էին ոգիք հազար, և իւրաքանչիւր նոցա բաժակ ոսկի ՚ի մի մի նուագս փոփոխէր ։ Բազմահարուստ քան զնա Պիթիոս բիւթանացին՝ ետ պարգև Դարեհի զսօսն և զորթ ոսկեձոյլ, զորս պանծացուցանեն վէպք. և զօրացն Քսերքսի տայր ճաշ մեծ հարիւր և եօթանասուն բիւրուց արանց, և ռոճիկ հնգամսեայ հանդերձ ամ կարևորօքն նոցա ետ ։ Եւ ուստի՞ էին նոցա անբաւ գանձքն, բայց ՚ի ժառանգութէ բովուց ոսկւոյ և արծաթոյ ։ Եւ որ ինչ Պլուտարքոս պատմէ ածեալ ՚ի Հռոմ ՚ի շուք յաղթանակին Պա-

Պող. Գ. 167.

Պլին. ՚ի Վարրոնէ. ԼԳ. Ժ.
Երոդ. Է. ԽԷ.

ղոսի Եմիլեայ և Լուկուլլոսի և այլոց յաղթողաց, յոյժ զարմանալի են ։

Այլ այս ամ ոչ ինչ է առ անթիւ յաճախութիւն ոսկւոյն և արծաթոյ՝ զոր Դաւիթ և Սողոմոն գանձեցին, և ծախեցին 'ի կազմած և 'ի զարդ տաճարին Երուսաղեմի ։ Այն անբաւ գանձք, ընդ որոց թիւ և ընդ համար ապշին միտք, էին ըստ մասին արդասիք վաճառականութեանն՝ զոր սկսաւ Դաւիթ առնել ընդ Արաբիա, ընդ Պարսս, և ընդ Հնդիկս, ընդ կրկին նաւահանգիստն՝ զորս կառոյց յԵդովմ և 'ի Գասիոնգաբեր յերկիր Եդովմայ յեզր Կարմիր ծովուն, և զոր Սողոմոն ևս քան զևս մեծացոյց. զի 'ի միում նուագին ածին նաւք նորա չորեքհարիւր և յիսուն տաղանդ ոսկւոյ ։ Ընծուկ երկրին հրէաստանի յաւուրս Սողոմոնի էին եկամուտք՝ վեցհարիւր վաթսունևվեց տաղանդ ոսկւոյ. թող զայլ եկամուտսն ։ Արդ ուստի այնքան անհնարին գանձ ոսկւոյն մթերէր, եթէ ոչ անդստին յայնց ժամանակաց պեղէին բովք բազումք. և այն զի չև ևս յայնժամ Մեքսիկայն և Պերուվիայ բովքն գտեալ էին ։

Բ. Մնաց. Ը. 18. Թ. 13 ։

ՅՕԴՈՒԱԾ Զ.

Յաղագս դրամոց և դրոշմածաց ։

Վաճառականութիւն 'ի սկզբանէ փոխանակութիւն վաճառաց գործէր, որպէս և 'ի Հոմերոսի գիրսն է տեսանել. այլ դժուարութիւն իրին վաղ ծանուցաւ 'ի փորձոյ յազգս ազգս վաճառաց՝ որոց գինք 'ի վայր անկանէին հատմամբ և տրոհմամբ, և հարկ եղև վաճառականաց յաճախել տակաւ զհալականս՝ որք հատմամբ ոչ յոռանան և ոչ թերանան ։ Վասն որոյ յաւուրց անտի Աբրահամու, և յառաջ իսկ արդեօք, մտին 'ի տուրևառս ոսկի և արծաթ. թերևս և պղինձ իսկ 'ի դիւրագին վաճառս ։ Այլ վասն նենգութեան 'ի կշիռն և 'ի նիւթն սպրդելոյ, օրէնք և իշխանութիւն հասարակաց 'ի ներքս մտին յապահովութիւն վաճառականութեան՝ տալ հրահալին յարգ և արժէս կնքով ։ Աստի հնարեցաւ դրամս հատանել, և դրոշմել 'ի նոսա զանուանս հատանողացն, զպատկերս թագաւորաց, զժամանակ իշխանութեան բդեշխից, և հանգոյն սոցին տիպս ։

Հելլենք նկարագիրս խորհրդականս զնշան իւրաքանչիւր գաւառի, որ էին որպէս կնիք նոցա, դրոշմէին 'ի դրամս ։ Դեղփացիք զդելփին, աթենացիք զբու՝ զհաւ դիցամօրն իւրեանց Աթենասայ, զնշանակ տքնութեան, բէովտացիք զԴիոնիսոս ողկոյզ 'ի ձեռին և բաժակ մեծ՝ 'ի նշանակ առատութեան և ցանկալի բնակութեան աշխարհին իւրեանց, մակեդոնացիք ասպար՝ 'ի նշանակ ուժոյ և քաջութեան զօրաց իւրեանց, հռոդացիք զպատկեր արեգական՝ որում նուիրեալն իսկ էր հսկայաձև անդրին նոցա հռչակաւոր ։ Ըստ այսմ իշխանք իւրաքանչիւր զփառս աշխարհին իւրեանց, կամ զպարծանս քաղաքաց, ցանկային տպաւորել 'ի դրամս ։

Նոյն դրամակոփք խաբեբայք յա̅մ ժամանակի և յա̅մ տեղիս ։ Աչիւ արծաթոյն [1], զոր նախ տուժեցան կարքեդոնացիք հռոմայեցւոց՝ յետ երկրորդի պունիկեան մարտին, գտաւ խառն ընդ չորից մասին, և 'ի քրայս փորձեալ ծանուցաւ. և զպակասորդ հարկին լցին, արծաթ 'ի փոխ առեալ 'ի Հռոմ ։ Անտոնիոս յեռապետութեան 'ի կարևոր ժամանակին՝ երկաթ ընդ արծաթոյ խառն ետ հարկանել դրամս ։ Պլին. լգ. Գ.

Դրամակոփք պղինձ ընդ արծաթոյ խառնէին, և մերթ 'ի կշիռն նենգէին. զի արդար կշիռն, որպէս նշանակէ Պլինիոս, էր իննսուն և վեց կամ հարիւր դենար՝ առ լիտր ոսկւոյ և արծաթոյ * ։ Մարիոս Գրատիդիանոս, ազգական մեծին Մարիոսի, 'ի դատաւորութեան իւրում 'ի Հռոմ, կարգս հանճարեղս վասն դրամոց եդ՝ առ 'ի խափանել զբազում զեղծմունս ։ Եւ ժողովուրդն սիրող այսորիկ բարեկարգութեանց, անդրիս յա̅մ թաղս քաղաքին կանգնեաց նմա 'ի շնորհակալութիւն ։ Սա ինքն է Մարիոս [2], զոր Սիղղա 'ի ձեռաց և յոտից և յաչաց արար անպիտան 'ի ձեռն Կատիլինայ, 'ի վրէժ անդթութեանց եղբօր նորա ։ Փլուտ. Գ. ԻԱ. Սենեկ. Բարկ. Գ. ԺԸ.

Բայց թէպէտ և զդժուարութիւն փոխանակութեան վաճառաց քաջ դիւրացուցին նախնիք ոսկի և արծաթի դրամովքն՝ որ եղեն գինք ա̅մ իրաց, և 'ի բազմաշխատ յընդունայն բեռնակրութ՟է զերծան, այլ տակաւին պակասէր նոցա մեծ իմն դիւրութ՟ի՝ որ ապա իմաստութ՟բ հնարեցաւ, մուրհակն դրամափոխութ՟ե՝ որով վայրաց 'ի վայրս փոխին գանձք ։

---

[1] Նախ զայն ամ կարքեդոնացիք ածին արծաթ 'ի Հռոմ տոյժս. զոր գանձապետաց խոտան համարեալ՝ ոչ ընկալան ։ Եւ իբրև փորձեալ, և չորից մասամբ պակասեալ գտաւ, դրամս 'ի փոխ առեալ կարքեդոնացւոց 'ի Հռոմ՝ լցին զթերին ։ Լիւ. լբ. Ե.

* [illegible] 287 ։

[2] Զմարիոսի, որում ժողովուրդն անդրիս յաճախաւորս 'ի քաղաքին կանգնեաց, և առ որ ժողովուրդ Հռովմայ խնկով և գինեաւ պաղատէր, հրամայեաց Սիղղա խորտակել զբարձն, և զաչսն խլել, և հատանել զձեռս, և որպէս ըստ թուոյ վիրացն բազում մահուամբ սպանեալ զնա՝ յամր և մի ըստ միոջէ զա̅մ անդամսն յօշել ։ Սենեկ ։

Դժուարին է գիտել ստոյգ՝ թէ իւ զանազանի դրամ 'ի դրոշմածոյ լոկոյ. բազումք բազում ինչ կարծեցին, այլ հաւանագոյն այս թուի ։ Դրամ է կոտորակ հրահալելոյ՝ զպատկեր թագաւորի կամ զգիր 'ի մի դէմսն բերելով, և 'ի միւսումն կնիք անփոփոխ. զի որով յարգումն է՝ պարտի դիւրածանօթ լինել, զի յարգեսցի ։ Որպէս հռոմայեցիք զդէմս Յանոսի 'ի մի կողմն, և 'ի միւսումն զցռուկ պատերազմիկ նաւու դրոշմեցին նախ 'ի դրամս * ։ Զոր Սերուիոսի Տուղղեայ փոխեալ՝ ընդ ցռկին եդ պախրէ, ուստի կոչեցաւ իսկ դրամն պախրէ ։ Ապա փոխանակ Յանոսի եդաւ կին սպառազէն, և ստորագիր 'ի նմա ՀՌՈՄ. և 'ի միւսում կողման՝ կառք լծեալ յերկուց կամ 'ի չորից երիվարաց, յորմէ երկձի և քառաձի դրամքն կոչեցան. և դրամք յաղթականք՝ յորս զՅաղթութ՟ե դիմն դրոշմէին ։ Այս ա՟մ ընդ դրամս համարին, որպէս և որք զնշանակն տասին X կրեն զդենարի՝ որ է տասն փող. և զլիւն L նշանակ լտեր, և զսէ S նշանակ կիսոյ, զի «էմի» նշանակէ կէս ըստ հռոմայեցի բարբառոյ, որովք կշիռ կամ արժէք դրամոյն ճանաչին ։

Պլին. լգ. գ.

Իսկ դրոշմածաց 'ի ներքին կողմն բազմաց երևելի պատահարք դրոշմին. կողմանք նոցա են երկոքին դէմքն, որ կոչին ճակատ և ներքնակողմն. երեսք կոչին միջոցք երկուց կողմանցն. ոլորտ կամ շրջանակ՝ եզերք նոցա, և ստորև՝ խոնարհագոյն մասնն բաժանեալ գծիւ, յորոյ վերայ պատկերքն կան ։ Պատկեր և գիր զանազանին 'ի նմա. զի պատկեր՝ դրոշմն է, իսկ գիր՝ արձանագրութ՟ին, մանաւանդ 'ի շրջանակին գրեալն ։

Առ սակաւ ինչ հմտութ՟ի դրոշմածաց՝ պարտ է ուսանել թէ ուստի և յի՞նչ պէտս հնարեցան, ո՞ր վաղեմիքն են և ո՞ր արդիք, ո՞ր յունականքն և ո՞յք հռոմէականք, զի՞նչ նախնոյն և զի՞նչ կրտսերագոյն ինքնակալութ՟ե՟ն են դրոշմածք, և ո՞ր մեծամեծքն կամ փոքունք պղնձիք, և կամ զի՞նչ կարգ դրոշմածացն առ հնախօսս իմանի ։ Զորս ոչ անկ է ինձ ասել. այլ Յուբերտի Հօր 'ի կարգէ Յիսուսեանց յաղագս դրոշմածոց գիրքն զայս ա՟մ ունին տալ բաւականապէս, որոց ոչ 'ի խորս գիտութ՟ե՟ն հասա-

---

* Եւ այս դարձեալ հակառակ Բաւոյ ասացելոյն յէջ 277 ։

նել կամիցին ։ Բայց զայս ազդ առնեմ մանկտւոյն՝ որ պատմութե̃ բազմահմուտ լինել ցանկան, զի այն առանց գիտութե̃ դրոշմածոց անհնարին է ։ Զի զպատմութի̃ ոչ 'ի մատեանս ևեթ է ուսանել . քանզի մատեանք ոչ զա̃մ ինչ պատմեն, և ոչ ա̃մ ինչ պատմեալքն 'ի նոյանէ ճշմարիտք են . այլ վկայք նոցա են արձանագիրք, որպէս որ 'ի դրոշմածսն են, յորս խորամանկութի̃ և տգիտութի̃ տեղի ոչ ունին ։ 'Ի նոսա է ուսանել բազում ինչ կարևոր և ցանկալի, որ այլուր ոչ գոն ։ Թիյլըմոն, երկիւղած և հանճարեղ գրիչ յիշատակարանաց պատմութե̃ ինքնակալացն, տայ զապացոյցն և զօրինակ՝ թէ յինչ զդրոշմածոց գիտութի̃ պարտ է 'ի կիր արկանել ։

Զնոյն իմն և զարձանագրելոյ վիմաց, որք քան ըզդրոշմածս պղնձիս առաւելուն կարծրութբ̃ն և խոր քանդակաւ՝ որով կան և մնան անեղծ . իսկ դրոշմածք դիւրեղծանելիք են 'ի չփմանէ և 'ի ժանգոյ, բայց բազմութբ̃ն և ազգի ազգի զանազանութբ̃ պիտանեգոյնք գիտնոց ։ Արձանագրաց և բանասիրաց կաճառոյն Ճեմարանին արքունի, յաւուրս նախորդին մերոյ արքային կանգնեալ և պայծառ նորոգեալ 'ի զարգացումն հնոց և արդի իրաց հմտութե̃, պատսպարան է ոչ միայն արձանագրութե̃ և դրոշմածոցն կիրթ ախորժակաց՝ որ յինքնազարդ պարզութե̃ն են, այլ և բնաւ ա̃մ մասանց հանճարոյ՝ որոց ուսուցիչք են մանաւանդ նախնեացն մատեանք, յորս փութով մեծաւ պարապէ նա ։ Ոչ զա̃մ ինչ իշխեմ ասել համարձակ զկաճառոյն, որում և ես յօդացեալ գտայ՝ 'ի նորոգ պայծառութե̃ն հրաւիրեալ անդր յեղակարծ առանց թեկն ածելոյ, որպէս վայելէ իսկ իմաստնոյն կաճառաց ըստ իս ։ Ո՞ տայր ինձ արժանաւոր լինել այնմ, և լնուլ անթերի զպարտս կաճառակցի, յորմէ վերջացեալ գտանիմ ։

ՅՕԴՈՒԱԾ Է.

Զմարգարտէ ։

Մարգարիտ է նիւթ կարծր սպիտակ և փայլուն, գոյացեալ 'ի խեցեմորթի ։ Կիժմակն պատենաւէն, յորում մարգարիտն գոյանայ, եռապատիկ և քառապատիկ մեծ է քան զհասարակ խեցեմորթս . և կոչի գաղտակրայ կամ մարգարտածին ։ Մէն մի 'ի նոյանէ ծնանի տասն կամ երկոտասան մարգարիտս. բայց վկայէ զայսմանէ ոմն 'ի մատենագրաց, հարիւր և յիսուն մարգարիտս՝ ընդ ընտիր և ընդ հասարակ՝ 'ի միում գաղտակրի տեսեալ։ Ընտրելագոյնք նախ յերևան գան, այլք խորագոյն 'ի խեփորն ծածկին։

Հինք 'ի ծովն հնդկաց որսային զմարգարտածին գաղտակրայն. ուր և արդ գտանին որսորդք, և 'ի ծովս Ամերիկայ, և ուրեք ուրեք յԵւրոպա։ Որոց չուան ընդ անթովք պարաւանդեալ, և զծայր չուանին կապեալ 'ի նաւակն, մխրճ հարեալ, ճախր առեալ 'ի խորս՝ թափեն 'ի վիմաց զոստրէս, և 'ի կողով արկեալ, արագ դարձիւք 'ի վեր կրեն։ Եւ որսոյն սահմանեալ ժամանակ է։ Եւ դնեն զնոսա յաւազի, ուր 'ի սաստիկ տապոյ արեգական նեխեալ ժիժմակացն՝ խեփորքն բանին, և երևին մարգարիտքն. ապա այնուհետև պարտ է լուանալ զնոսա և ցամաքեցուցանել։

Գոհար ակն 'ի հատանելն 'ի վիմէ տգեղ է, և ճարտարութ̃ք մարդկան առնու զփայլ. ուրուական ծնանի 'ի բնէ, և արուեստ յղկէ զնա և 'ի կատարումն ածէ. իսկ մարգարիտ նովին փայլուն և պայծառ ջրովն՝ ծնանի, որով պատուականն է. յանդունդս ծովու յղկեալ և զօրկեալ կայ, բովանդակէ բնութ̃ի զգործն՝ մինչ չև 'ի գաղտակրէն հանեալ։

Մարգարիտ ազնիւ՝ [2] ըստ Պլինեայ՝ է սպիտակն և լուսաւոր, ստուար, բոլորշի, ողորկ և ծանր, որ չքնաղագիւտն է։
Թ. ԼԵ. Պլինիոս, և ըստ նմանէ բազում այլ մատենագիրք, ցնորս համարին զթուեցեալն ոմանց՝ թէ մարգարիտք 'ի ցօղոյ գոյանայցեն, կամ թէ չև 'ի ծովէ հանեալ՝ լղծք իցեն, և զի յօդոյ կարծրանան, և թէ յորոտմանէ վատեալ և վիժին։

Են ինչ իրք, որ զի դժուարագիւտք են և վտանգաւկենաց ստանալի, այնու ևեթ գերապանծք թուին [3]։ Բայց պա՞րտ էր ինչ մարդոյ այնքան արհամարհել ըզկեանս, մինչև պատուական քան զայն՝ զանդնդասոյզ խեցին համարել։ Եթէ 'ի գիւտ իմաստութ̃է առաջի կայր աշխատութիւնն՝ որ կրի 'ի գիւտ միոյ չքնաղ և մեծ մարգար-

---

[1] Ջուր ասի առ ազնագործս [illegible] մարգարտին, որ 'ի ջրոյ համարի գոյացեալ։ Վասն որոյ գիտեմք Կղէոպատրայ մարգարտեայք անգինք ասին լեալ ըստ ջրոյն և ըստ մեծութ̃ն։

[2] Ամենայն ազնուութ̃ի նորա 'ի սպիտակութ̃ն է և 'ի մեծութ̃ն, 'ի ձևն բոլորշի, յողորկութ̃ն և 'ի կշիռն, որ չքնաղագիւտք են։ Պլին. Թ. ԼԵ։

[3] Որ մահուչափ վտանգաւն գտանին՝ ցանկալի են։ Պլին. անդ։

տի, (և զոր զմարգարտէն ասեմ՝ զնոյն իմա՛ և զոսկւոյ և զարծաթոյ և զականց), արժան էր վասն անկշռելի գանձուն վտանգ յանձն առնուլ, ոչ միանգամ՝ այլ բազում։ Մեծ է ապաքէն իմաստութի̅ քան զա̅մ ինչս, և մարգարիտ տրուպ քան զա̅մ մեծութի̅ս. այլ մարդկան զիմաստութի̅ ապախտ արարեալ, զա̅մ ջան յանձն առնուն վասն միոյ մարգարտի։

ՅՕԴՈՒԱԾ Ը.

Զծիրանւոյ.

Շահավաճառ մեծ առ նախնիս էին կերպասք ծիրաներկք, մանաւանդ ներկուածք տիւրացւոց՝ որք ճարտարութ̅բ իւրեանց և հմտութ̅բ 'ի ծայրագոյն կատարումն ածին զչքնաղ երանգն։ Ծիրանի մրցէր ընդ ոսկին իսկ դժուարագիւտ 'ի հնումն, և էր օրէն պատւոյ բարձր աւագութե̅ց՝ պաճեալ 'ի զգեստ աշխարհակալաց[1], թագաւորաց, ծերակուտին, բդեշխից, իշխանապետաց, և ինքնակալաց, և որոց յաղթանակէինն 'ի Հռոմ։

Պլն. Թ. ԼԵ. ԼԶ. Արիստ. յաղ. կենդ. Ե. ԺԵ.

Այս է ծիրանի ներկ կարմիր խառն 'ի գոյն մանուշակի՝ գոյացեալ 'ի խղունջն ժիժմակ[2], ուստի և կենդանին կոչի ծիրանի։ Բազում ինչ արդի մատենագիրք գրեցին յաղագս այսր ներկոյ՝ որ յոյժ պատուական էր առ նախնիս, այլ չև ևս իսկն ծիրանաներկ հիւթոյն ծանուցաւ։ Բազում ինչ և Արիստոտէլ և Պլինիոս աւանդեցին կարևորս, այլ քրքրեն մանաւանդ զմիտս խնդրողաց, և ոչ հանգուցանեն։ Զի Պլինիոս, յերկարագոյն յաղագս խառնման ծիրանաներկոյն գրեալ, 'ի սակաւ տողս յաղագս ծիրանւոյ ամփոփէ զբանսն. որ թերևս յայնժամ բաւական էին առ 'ի տալ զկերպարան ընդելական իրին, այլ արդ վասն բազմաժամանակեայ խափանածոյն, յոյժ նուաղ և անբաւական է։

Զազգս ազգս ծիրանածին խեցեմորթից՝ յերկուս սեռս ժողովէ Պլինիոս. զմանունսն 'ի մի սեռ փողաձև խղունջնաց, և զայլսն կոչէ կոնքեղս ծիրանիս։

---

[1] Երանգ վայելչագեղ յոյժ, նըսեմ, կարմրափայլ, սեաւ արիւնագեղ, նշանակ թագաւորի. յայտնիչ տէրանց, և անսխալ գուշակ երեսաց իշխանի: Կասիոդ. Ա. Վարրոն. Թուղթ. Բ:

[2] Վասն որոյ հռոմայեցիք զզգեստս ծիրանիս խղունջնաներկս կոչեն Conchiliatae vestes.

Յուլ. Պոլք. Ա. Դ. Կասիոդ. Ա. Վարր. Բղբ. Ի. Ոմանք 'ի մատենագրաց աւանդեն՝ ըստ դիպուածոյ իմն գտեալ տիւրացւոց զծիրանաներկն ։ Քանզի շուն սովեալ եգիտ յեզր ծովու զկոնքեղ, եբեկ և եկեր, և ծիրանաներկեաց զբերան իւր ։ և տեսողացն զարմացեալ, և նախանձ բերեալ, առին զայն 'ի սպաս պիտոյից ։

Պլին. Թ. ԼԶ. ԼԷ. Անուանի էր գետուլեան [1] ծիրանին յԱփրիկէ, և լակոնեանն [2] յԵւրոպա ։ այլ տիւրականն յԱսիա յաղթէր ամենեցուն, մանաւանդ ձանձախարիթն՝ այսինքն է կրկնաներկ ծիրանին, որոյ լիտր հազար դենարաց վաճառէր 'ի Հռոմ ։

Խխունջն փողաձև որոշի 'ի կոքղոյն ծիրանւոյ՝ խեցւոյն ևեթ ստուարութբ̃ն, և այլազգ որսացմամբն և խառնութբ̃ դեղոյն ։ զի զկոքղին ծիրանի 'ի խորոց ծովու որսան, իսկ զխխունջն թափեն 'ի ժայռից և 'ի վիմաց՝ յորս կառուցին ։ Օ փողաձև խխունջնացն ևեթ ասացուք աստ, առեալ ինչ ինչ 'ի բազմահմուտ Ռէոմիւրի ճառիցն ։

Աշխատութբ̃ բազմաւ առնուին 'ի նոցանէ զներկն ։ 'ի բեկանել զկարծր պատեան նոցա առ շրթամբքն մերձ 'ի գլուխ ժիժմնկին, և 'ի բառնալ 'ի բաց զբեկորսն, երևի երակ նուրբ՝ որպէս կոչեն զայն նախնիք, պարուտակ փոքրիկ ծիրանաներկոյն ։ և անդէն իսկ 'ի պարուտակին ճմլեալ ներկն՝ որոշեալ գունովն 'ի մսոյ կենդանւոյն ։ Արիստոտէլ և Պլինիոս ասեն սպիտակ գոլ զայն ։ բայց է սպիտակ խարտեշագոյն ։ Պարուտակն այն ոչ յամ խխունջն հաւասար է, այլ սովորաբար գծաչափ 'ի լայնութի, սուղ ինչ աւելի կամ նուազ, և երկու կամ երեք գծաչափ յերկայնութի ։ զոր հանեալ 'ի խեցւոյն, քամեին 'ի նմանէ զներկն ։ Արդ զմիոյ միոյ ուրոյն հանելով, հարկ էր առ դոյզն ինչ ներկ յերկար վաստակել ։ զի նուազ քան զկաթիլ մի յիւրաքանչիւրսն գտանէր ։ վասն որոյ ոչ ինչ են զարմանք՝ զի մեծագին էր առ նախնիս ազնիւ ծիրանին ։ Ապաքէն Արիստոտէլ և Պլինիոս ոչ հարկ համարին զմանունց խխունջնաց ուրոյն զմիոյ միոյ ժողովել զպարուտակս ծիրանաներկոյն, այլ 'ի միասին աղալ յանդանի՝ որով արագ վճարի գործն ։ և Մխորովլոս զմնաւ ա՟մ ծիրանածին խեցեմորթաց թուի ասել զայս. այլ յոյժ դժուարին է այսու օրինակաւ զգունագեղ ծիրանին քամել, զի այլագունի յեռացուցանելն զայն 'ի ջուր ընդ կղկղանս ժիժմակին մոյգ կանաչագոյն, որ խառնեալ 'ի ջուրն՝ ապականէ զգոյն ծիրանւոյն. զի բազում է յոյժ քան զծիրանաներկ հիւթն:

---

[1] Ոչ տիպք տիւրենեան, արծաթ կամ պատկերք,
Եւ ոչ գետուլեան ձորձք ծիրանաներկ ։
Ոհրատ. Թղթ. Բ. Բ. 180 ։

[2] Եւ ոչ պարկեշտ աղախին
Ինձ լակոնեան ծիրանիս
Դատեալ նիւթէ առ ոտին ։
Ոհր. Տաղերգ. Բ. ԺԸ. 8 ։

Եւ ոչ յընտրել զպարուտակմն վճարեր աշխատութ՟ին. այլ արկանէին ապա զայնս 'ի սան մեծ 'ի ջուր, և զաւուրս տասն հուր մեղմ ներքոյ մատուցանէին. ոչ առ 'ի տալ նմա զգոյն ծիրանի, զի վաղ առնու զգոյն՝ որպէս 'ի յաճախ փորձոյ ճշմարտեալ գիտեմ, ասէ Ռէոմիւր, այլ առ 'ի մաքրել 'ի բաց զմասունս մարմնոյ ժիժմակացն և զպարուտակս ծիրանաներկոյն. որ այլազգ չմարթի առանց կորուսանելոյ ինչ 'ի ծիրանւոյն՝ բայց լուծեալ զնոսա 'ի ջուր ջերմ, և 'ի դիզանել նոցա փրփրաձև յերեսս ջրոյն՝ խնամով 'ի բաց բարձեալ: Սի և այսու օրինակաւ աչա զծիրանաներկն գործէին նախնիք. և որպէս թուի՝ արուեստս այս ոչ կորեաւ 'ի սպառ, կամ թէ յառաջ քան զամս իբր յիսուն վերստին գտաւ յարքունի կաճառոյն անգղիացւոց. զի և ծիրանածին խեցեմորթք՝ 'ի սեաւէ փողաձև խղունջնաց՝ գտանին յաճախութե՟ 'ի ծովեզերս Անգղիոյ: Ի անգղիացւոյ ուրումն որ յաղագս այսր գիւտի տուեալ տեղեկութ՟իս՝ գտցեն խնդրօղք յօրագիրս Գաղղիոյ: Յամն. 1686.

Գտանի և միւս այլ ազգ ծիրանածին փողաձև խըղունջնաց 'ի ծովեզերս Պիկտաւիոյ, որ թուի լինել մի 'ի նկարագրելոցն 'ի Պլինեայ: Մեծամեծք սորա երկոտասան կամ երեքտասան գծաչափ երկայնք են, և միջագիծ լայնագոյն շրջապատի նոցա՝ եօթն կամ ութ գծաչափ. և են միախեցիք գալարաձև 'ի շեշտումն անկեալ՝ որպէս 'ի մերոց աստի կողինջն պարտիզաց, այլ ծովայինն սուղ ինչ երկայնաձև քան զնա գալարի:

Յօրագիրս գիտնոց յաղագս երփներանգ այլագունութե՟ ծիրանաներկոյն գտանի ասացեալ. զի եթէ փոխանակ 'ի փրփուր լուծանելոյ զծիրանեկիր պարուտակմն, որպէս առնէին հինք 'ի կազմել զծիրանաներկն, հերձցէ ոք զնոսա, և զհեղուկն քերելով առցէ, կերպաս կտաւի կամ մետաքսեայ և ասուեայ՝ խարտեաշագոյն ներկի նովաւ. և ապա 'ի մեղմ տապ արեգական, որպէս 'ի վաղորդայն ամարայնի՝ երփն երփն 'ի սուղ ժամս այլագունի, նախ 'ի դեղնագոյն կանաչ, ապա 'ի գոյն կիտրոնի, ապա 'ի պայծառ կանաչ, ապա 'ի մոյգ, յետոյ 'ի մանու- Ան.

շակագոյն , և ապա 'ի ծիրանի ազնիւ . ուստի 'ի դեղնութէն մինչև յերփնագեղ ծիրանին ընդ ա՟մ աստիճանս կանաչոյ անցանէ : Զբազմապատիկ զննութի՟ս Ռէոմիւրի յաղագս այսր այլագունութեան զցանկալիս թողում անդր 'ի բաց , զի մի 'ի կարգէ բանիցս ստերիւրեցայց :

Արիստոտելի և Պլինեայ բազում ուրեք զծիրանւոյ և զծիրանածին խղունջնոց խօսեցեալ , էր աղագաւ՝ ոչ գիտեմ՝ լաւէն զզարմանալի զերփնագունել ներկոյն մինչև 'ի ծիրանեգոյնն . Թերևս զի ոչ անձամբ զփորձ առեալ էր նոցա , այլ 'ի հարևանցի յիշատակաց ունեալ , նմին իրի ոչ ճառեցին զիրաց՝ որ 'ի սովորական ներկուած ծիրանւոյն չպատահէր . զի անդ խառնեալ հիւթոյն 'ի կաթսայն ընդ ջուրս բազումս , անդէն փոխի 'ի ծիրանի :

'Ի հազարերորդի յեօթնհարիւրորդի տասներորդի ամի՝ 'ի նաւարկել Ռէոմիւրի ընդ ծովեզերս Բիկտաւեայ , խնդրեալ յափն ծովուն զկոնքեղս փողաձևս՝ որ 'ի տեղի տալ ալեացն երևէին , եգիտ անակնկալ այլ իմն ազգ ծիրանւոյ , որ ա՟մ իրօք հաւասարի թուի՝ անծանօթ լեալ նախնեաց , թէպէտ և սեռիւ նոյն ընդ նոցայն : Եւ հայեցեալ ետես՝ զի խղնջունքն այն երամովին ժողովէին զվիմօք և 'ի փոսս յաւազի , ուստի մարթ էր բռնալիր ժողովել զնոսա , որք այլուր ցան և ցիր կային : Ետես դարձեալ՝ զի անդ 'ի փոսս և զվիմօքն սփռեալ կային հատք մանունք ձուաձևք . երկայնութի՟ նոցա՝ երեք գծաչափ լի , և թանձրութի՟ սուղ ինչ աւելի քան զգծաչափ : Եւ էր 'ի նոսա հիւթ սպիտակ խարտեշագոյն . զոր առեալ քամեաց 'ի թեւս շապկացն , և թուէր կտաւն աղտեղեալ և ուրեք ուրեք դեղնեալ : Ապա 'ի տեսիլ այլոց իրաց զբաղեալ, մոռացաւ զայն. և իբրև սուղ ինչ քառորդժամու 'ի վերայ եանց , ակնարկեալ յանկարծ 'ի թեւսն՝ կարմնայր . զի ուրանօր զհատոմն եբեկ՝ էր ներկեալ չքնաղ ծիրանի : Եւ 'ի դիպաց աստի յորդորեալ, բազում և այլ ինչ փորձեաց , որոց վէպք հրաշապատումք են : Արդ տես ինձ , զի զանձ են աշխարհի արք այսպիսիք հանճարեղք՝ որոց 'ի բնէ իղձ և միտումն է 'ի ցանկալի գիւտս իրաց բնութե՟ : Բայց զհատոմն կոչէ Ռէոմիւր ձուս ծիրանւոյ , և յոյժ դիւրագոյն ասէ քամել 'ի նոցանէ ծիրանւոյ քան 'ի խղնջունեաց նախնեացն : Զի ժողովեալ զձուսն և քաջ լուացեալ յաղտոյն 'ի ջուր ծովու , զի մի ընդ ներկն խառնեալ աղտք այլագունեսցեն զայն , պարտ է արկանել 'ի կտաւ , և մզել զհիւթն՝ երկուստեք զտտունս կտաւին 'ի ներհակ կոյս ոլորեալ , որպէս մզի հաղարջ՝ առնել անտի սառուցիկ ուտելի ։ Դիւրագոյն ևս 'ի մամուլ փոքրիկ զհամ զհիւթն 'ի սուղ ժամանակի մարթ է քամել։ Իսկ առ 'ի խղունջնաց առնուլ զծիրանին՝ քանի ժամանակաց և խնամոց պէտք էին, տեսաք յառաջագոյն ։

Էր առ նախնիս և որդան կարմիրն գունագեղ, ոչ ինչ տրուպ քան զծիրանին գեղով և փայլմամբ. զորս Կուինտիլիանոս[1] համադասէ յաւաղելն զգեղխութի ժամանակին, զի ծնողք զգեցուցանէին մանկանցն 'ի խանձարուրս զկարմիր և զծիրանի, անդստին ուսուցանելով զնոսա 'ի շուք և 'ի պերճութի ։ Պլինիոս զսա քան զծիրանին շքեղ համարի 'ի զարդ, և անմեղ ևս՝ առանց վտանգի կենաց հայթայթելոյն[2] ։ Արդ զկարմրոյ ասեն սերմն գոլ ծառոյ՝ յազգէ մշտադալար կաղնեաց, այլ ծանուցաւ՝ զի է ելունդն գնտաձև կարմիր, 'ի չափ փոքրիկ ոլոռան, գոյացեալ 'ի տերևս թփոյ յազգէ մշտադալար կաղնեաց, որ կոչի սղոցի փշուտ կաղնատու կարմրոյ ։ Եւ աճէ ելունդն այն 'ի խածուածոյ փոքրիկ որդան՝ որ անդ ձու ածէ, և կոչեն արաբացիք զհատն զայն ՔԷՐՄԷԶ ։ 'Ի Նարբոնեանն Գաղղիա և յԱվկիտանիա գտանին հատքս այս առատ. և կոպելլինեան գետոյն ջուր քաջ յարմար է 'ի ներկ կարմրոյն ։

Կրկին ազգք են կարմրոյ. գաղղիական կամ կոպելլինեան, կազմեալ 'ի հատիցն՝ յորոց ասացի. և Հոլլանդեանն, որոյ դեղ ներկոյն յարևելեան Հնդկաց ածի ։ Օ դեղոյս զայսմանէ գրիչք տարաձայն են. կէսք որդն համարին զայն, այլք հատ ծառոյ ։ Յորմէ հետէ սա գտաւ՝ դուն ուրեք 'ի կիր ածի միւսն. զի սա առաւել պայծառ է և փայլուն. իսկ միւսն նսեմ, նմանագոյն հռովմէական ծիրանւոյն ։ Այլ է նորա առաւելութի, զի ոչ այլագունի 'ի ջրոյ. իսկ հոլլանդեանն թխանայ անդէն ։

Պլն. իզ. է ։

---

[1] Ի՞մ ոչ ցանկացի 'ի զարգանալն՝ որ 'ի ծիրանիսն խանձարրապատի. որ մինչ չև զառաջին բարբառն թոթովեալ՝ զկարմիրն ճանաչէ, և զծիրանին հարցանէ ։ Կուին. ա. է ։

[2] Գաղղիացին բնակեալ անդր քան զԱլպեան լերինսն զՏիւրականն և զծիրանին և զերփն երփն երանգոց խոտովք ներկէ. և ոչ յանդունդս ծովու 'ի խեցիս խնդրէ... գտանել՝ որով հարսն սիղեխոյն հաճոյ լիցի. և սիղեխն դալանեսցի ամուսնոյ. կացեալ 'ի ցամաքի իբրև զմիրգս ժողովէ զայն ։ Պլին ։

ՅՕԴՈՒԱԾ Թ.

Զմետաքսեայ կերպասուց։

'Ի ՃԵՌՆԱՐԿԱԳԻՐ ԱՐՀԵՍՏԱԳԻՐ. ՃԵՄ. ՀԱՏ. Ի. Որպէս Մայիստէլ ասէ 'ի Ճառին, յորմէ բազում ինչ առաջի կայ մեզ 'ի կիր առնուլ, մետաքսն՝ որպէս ոչ սակաւք յիրաց՝ ընդ բազմահոլով դարս գրեթէ յամ Ասիա և յԱփրիկէ և բազում ուրեք յԵւրոպա 'ի գործ ածեալ, չև ևս ճանաչէր որ ինչ էրն։ Զի ազգք՝ առ որս եղանէր մետաքսն՝ անմատոյցք էին օտարաց, կամ կարի շահասէրք, և երկնչէին՝ թէ գուցէ յափշտակեսցեն այլք զշահավաճառ իւրեանց։ 'Ի դժուարութենէ աստի գիտելոյ զուստն զպատուական ազանւոյն, 'ի բազում կարծիս պառակտեցան վաղեմի մատենագիրք։

Գ. 106. Որպէս Հերոդոտոս նկարագրէ զազնիւ և զնրբաթել գեղմն, համարեալ զայն բերս ծառոյ աշխարհին Հնդկաց՝ որ 'ի ժամանակին յայնմիկ հեռագոյն էր յաշխարհս ծանօթս արևելից, երևի զնոյն կարծիս կալեալ հնոց զմետաքսէ։ Զի թերևս խնդրակք երթեալ, և 'ի հարևանցի տեսանելով զծառս լի խոզակօք շերամացն, ուր որդունքն այն 'ի սաղարթս ծառոց ծրտեալ զձուս՝ անդ մնանին և յոստս նոցա կենդանասերին, այլ ընդ այլոյ զխոզակսն բժուժս գեղմանն համարեցան։

ՏՂ. ԲՈՅՍԻ. Գ. Բ. Գուցէ և Թէոփրաստ ըստ կեղակարծ վկայութեան նոցա համարեալ, դասակարգէ ուրոյն ազգ ծառոց գեղմնաբերաց։ Երևի 'ի սոյն կարծիս և Վիրգիլեայ անկեալ, որով ասէն.

Եւ երբ Չենք 'ի սաղարթայ
ՄՇԱԿ. Բ. 121. Ըզգեղմըն նուրբ գզեն 'ի բայ։

ԱՐԻՍՏ. Ե. ՅԱՂ. ԿԵՆԴ. ԺԹ. Արիստոտէլ հայր բնախօսաց, ճշգրտագոյն տայ զկերպարան շերամոյն։ Զի զազգի ազգի թրթրոց ասացեալ, ապա որդն իմն եղջերաւոր նկարագրէ, և կոչէ զնա շերամ յետ մտիցն 'ի խոզակն. և եղանէ, ասէ, անտի զկնի վեց ամսոց թիթեռն թևաւոր։

ՊԼԻՆ. ԺԱ. ԻԲ. ԻԳ. Պլինիոս իբր չորեքարիւր ամօք յետոյ քան զԱրիստոտէլ՝ մերձ ունելով զնորայն յաղագս կենդանեաց գիրսն, զնոյն 'ի նմանէ առեալ գրէ անփոփոխ յիւրում բնախօսութեան։ Եւ ընդ շերամն համարի ոչ միայն զորդն կարծեցեալ նիւթիչ կուլային մետաքսին, այլ և այլ ազգս որդանց որ անդ 'ի Կով կղզւոջ ծնանին, և բժուժս կազմեն, յորոց կանայք երկրին զմետաքսն նիւթեալ՝ կերպասս բարակամանս գեղեցիկս գործեն ։

Պաւսանիաս ամօք ինչ յետոյ քան զՊլինիոս, ասէ զչերամ գոլ որդն հնդիկ, և թէ Յոյնք Սեր կոչէին զայն. և յայնմանէ Ճ՛ենք՝ Սերք անուանեցան, զի առ նոսա ծնանէր չերամն՝ որպէս ապա ծանուցաւ ։

Արդ որդնս այս մետաքսագործ ոչ այնչափ զարմանալի է պատուական նիւթովն՝ զոր 'ի հիւսս կերպասուց ընծայէ, որչափ ազգի ազգի կերպարանափոխութիւն, նախ քան զծածկելն 'ի մետաքսեայ ագնիւ բոյնն՝ զոր ինքնին նիւթէ, և յետ ծածկելոյն 'ի նմա ։ Հատ փոքրիկ, կամ սերմն, ստուարացեալ փոխի յորդն սպիտակ խարտեշագոյն. և ապա աճեալ զիւրև զբժուժն, 'ի ներքս անդ կերպարանի 'ի բակլայ գորշ՝ անշարժ ամենևին կացեալ որպէս անկենդան ։ Ելանէ ապա թիթեռն, ծակ գործեալ ընդ մետաքսեայ տապանն. և ճշմարտիւ ապա մեռանի, պատրաստեալ սերմանս առ վերակենցաղ կեանս՝ յոր ամարայնոյ ջերոտ օդոցն և տօթոյն օգնականութեամբ յառնէ ։ Զայլակերպութիւնս նորա ճոխ և ճշգրիտ նկարագրեալ գտցեն խնդրողք յառաջնումն մատենի Տեսարանին բնութեան ։

Արդ 'ի բունոյ աստի՝ յոր ծածկի չերամն, և զոր բժուժն կոչեմք, ելանեն ազգ ազգ մետաքսից 'ի շուք և 'ի զեղխութիւն մեծատանց, և 'ի հայթայթանս կենաց աղքատաց՝ որ նիւթենն զայն, և զաղբն գործեն, և ստայնանկեն ։ 'Ի մի մի 'ի բժժոց գտանի աւելի քան զհնգհարիւր ոտնաչափ թել մետաքսեայ՝ երկկղի մածեալ, որով ամենայն երկայնութիւն նորա լինի առ երկու հազար ոտնաչափ ։ Ո՜վ սքանչելիք. յանօսր և 'ի նուրբ նիւթոյն՝ որ հազիւ զննի աչաց՝ գործին կերպասք սերտք և տոկունք մետաքսեայքն պայծառք և գեղեցիկք և փափուկք ։ Սան որոյ չէն ինչ զարմանք՝ զի 'ի վաղ ժամանակս վաճառաշահ մեծ սովաւ գործէր, և զի առ չքնաղագիւտ սակաւութենն ծանրագին էր ։ Ինքնակալն Աւրելիանոս,[1] որպէս պատմէ Վոպիսկոս, 'ի թախանձել տիկնոջն՝ առնել իւր հանդերձ մետաքսեայ, ասէ. Քա՛ւ լիցի ինձ կշռել ոսկի ընդ ասղանւոյ ։ Զի լիտր մետաքսին էր յայնժամ լտեր ոսկւոյ ։

---

[1] Հանդերձ մետաքսեայ ոչ զգեցաւ, և ոչ այլում զգեցոյց: Եւ տիկնոջ իւրում, 'ի խնդրել նորա արկանելի ևեթ մետաքսեայ ծիրանի, ասէ. Քա՛ւ լիցի ինձ ոսկի ընդ թելանեայ կշռել: Զի էր յայնժամ լիտր մետաքսի լտեր ոսկւոյ: Վոպիսկ. յԱւրել:

Պրոկ. դպր. Վանդալ. Անագան ուրեմն մուծան շերամք յԵւրոպա, և ապա յաճախեաց մետաքսն ։ Պրոկոպիոս վիպագիր առ Յուստինեաւ ինքնակալաւ 'ի մէջ հինգերորդ դարուն ածէ զժամանակն, և զպարծանսն ընծայէ երկուց միանձանց. որք 'ի Հնդկաց աշխարհէն հասեալ 'ի Կոստանդնուպօլիս, և լուեալ զի վարանէր ինքնակալն վասն հարկի խափանելոյ մետաքսից վաճառակցութե ընդ Պարսս, յանդիման եղեն նմա, և քան զդարձուցանել յԵթովպիա զվաճառականութն, որպէս խորհէր, դիւրագոյն ցուցին նմա հնարս՝ նոցին հռոմայեցւոց ուսուցանել զարուեստ մետաքսագործութե ։ Եւ ինքնակալն խելամուտ լեալ հնարաւորութե իւրն, հաւանեցաւ բանից նոցա. և 'ի Սերինդ քաղաք, ուստի եկեալն էին, արձակեաց զնոսա անդրէն 'ի խնդիր ձուոց շերամոյ. զի կենդանի զորդունսն ածել չէր հնար, որպէս ասէին ։ Նոքա դարձեալ 'ի Կոստանդնուպօլիս, և ածեալ 'ի Սերինդեայ զձուս՝ թաղեցին յաղբ. և 'ի ծնանել շերամոցն՝ սնուցին զնոսա տերևովք սպիտակ թթենւոյ, և զամ հնարս մետաքսագործութե յաջողութե փորձոյն ցուցին ինքնակալին, որպէս ցանկայրն ։ Եւ սկսաւ յաճախել մետաքս, և տարածեցաւ ընդ գաւառս Եւրոպայ. և գործարանք կառուցան յԱթէնս, 'ի Թեբէ, և 'ի Կորնթոս. և Ռոգեր արքայ Սիկիլիոյ, յամին իբր հազար հարիւր և երեսուն, կանգնեաց գործարան 'ի Պանորմոն ։ Յայնմ հետէ կացին մետաքսագործք 'ի կղզւոջ անդ և 'ի Կալաբրիա, որպէս բաժինք աւարին՝ զոր էառ նա 'ի քաղաքաց անտի Յունաց, նուաճեալ զնոսա 'ի պատերազմին Երուսաղէմի ։ Ապա 'ի Սիկիլիոյ և 'ի Կալաբրիոյ և յայլ կողմանս Իտալիոյ և Սպանիոյ եանց բոյծ շերամոյ, և նիւթութն և անկուած մետաքսին. և կերպասս մետաքսահիւսս սկըսան գործել գաղղիացիք, մանաւանդ 'ի կողմանս հարաւոյ՝ ուր բարգաւաճ են թթենիք ։ Եւ յամին հազարերորդի չորեքհարիւրորդի եօթանասներորդի Լուդովիկոս մետասաներորդ կառոյց գործարանս մետաքսէից 'ի Տուրոն. և գործաւորք կոչեցան անդր նախ զառաջինն 'ի գենուացւոց, 'ի Վենետաց, 'ի փլորենտացւոց և 'ի Յունաց ։ Զայնու ժամանակաւ և յաւագանւոյն սակաւք զգենուին մետաքսեայս. և նախ Հենրիկոս երկրորդ արկ զուրպայս մետաքսեայս 'ի հարսանիս քեռ իւրոյ. իսկ այժմ յաճախեաց մետաքս, այլ յաճախութն ոչ ինչ նուազ սքանչելիք բնութե՟ն են ։ Արդ՝ կարացի՞ն ցարդ տարազագործք ճարտարք հնարագիտութե՟ն որդանն հաւասարել․ եւ նիւթիցե՞ն համգոյն նմին բարակման, սերտ, հաւասարագործ, փայլուն եւ ձիգ ։ Ոչէ՞ ինչ նոցա ազնուագոյն նիւթ առ ՚ի պերճ եւս անկուած կերպասուց ։ Յելամո՞ւտք իցեն, ո՛րպէս զհիւթ սաղարթաց փոխէ յոսկեթելն ։ Արդ՝ պատմեսցեն, զիա՞րդ տարր լոյծ ընդ ելանել յօդս՝ սերտեալ երկարաձգի անծայր․ կամ ուստի՞ որդն զգացեալ՝ կազմէ իւր ձմերոց պատ ՚ի պատ անհամար թելիւքն՝ զոր հանէ յիւրմէ, եւ սպասեալ մնայ ՚ի մեծագին տապանին թեւազգեաց յարութե՟ն, որ նախ անթռիչ ծնեալն էր ։ Զայսոսիկ նոր մեկնիչն Յոբայ խելամտէ ՚ի բանն " Ո՞վ ետ կանանց իմաստութիւն ոստայնանկութե՟ն „ ։ Յ․ բ․ լը․ 36 ։

ՅՈՐԴՈՐԱԿ

Ապա ուրեմն վաճառականութե՟ն կարեւոր մասն է առաջնորդականին, եւ աղբիւր մեծութե՟ց եւ առատութե՟ն աշխարհի, եւ պարտ է թագաւորաց եւ իշխանաց երիցագոյն խնամ ունել այնմ ։ Ապաքէն հռոմայեցիք անփոյթ արարին զայն, եւ շլացեալք ՚ի փառս զինուց՝ նուաստու՟ի համարէին միտ դնել առեւտրոց եւ վաճառականք լինել, որք ՚ի տիեզերակալութիւն ակն եդեալ էին, որպէս թէ անկ էր նոցա իշխել ազգաց եւ ազանց ։ Իսկ երկուց այսոցիկ ջանից, աշխարհակալութե՟ն եւ վաճառաշահութե՟ն, ՚ի միասին յազգի միում պատահել՝ անհնարին թուի ։ Զի մին զհետ իւր հարկաւ ձգէ զաղմուկ եւ զվրդով եւ զամայու՟ի, եւ խռովէ զաշխարհ․ իսկ միւսն խաղաղութ՟ի խնդրէ եւ անդորր ։ Ոչ ինչ փոյթ է մեզ քննել՝ թէ իմաստութեա՞մբ հռոմայեցիք ապախտ արարին զվաճառաշահ, կամ թէ ազգ պատերազմող բախտաւորագո՞յն իցէ․ այլ զայս եւեթ ասեմք, զի թագաւոր ժողովրդասէր եւ ցանկացող առատու՟ե աշխարհին ոչ ինչ ՚ի ջանից թերի առնէ ՚ի զարգացումն վաճառականութեան, եւ յաջողի իսկ դիւրաւ յայն ։ Ոչ ոք երկբայեսցի ընդ ասացեալն ստէպ, զի առ զարգացումն վաճառականութե՟ն խնդրի ազատու՟ի եւ պաշտպանու՟ի․ ազատութ՟ի ըստ չափոյ պայմանի, զի մի նեղեսցին վաճառականք ՚ի ծանունց եւ ՚ի դժուարակիր օրինաց՝ որ յաճախ առ ոչ ինչ են պիտանացու․ իսկ պաշտպանութ՟ի՝ օգնելով նոցա ՚ի պիտոյս ։ ԶՊտղոմեայ փիլադելփեայ պատմեցաք որչափ ինչ գանձս ծախեաց 'ի զարգացումն վաճառականութեան յԵգիպտոս, և որպէս յաջողութեամբ խնամոցն յաճախեաց իւր փառս ։ Թագաւոր իմաստուն և բարեսէր ոչ յայլ ինչ զիշխանութիւն 'ի գործ արկանէ, յիրս վաճառականութեան, բայց 'ի պատուհասել խստիւ զնենգութիւն և զհաւատադրժութիւն ․ իսկ զամենայն շահ Թողու ժողովրդեանն՝ որ վաստակէն, շատ համարեալ իւր՝ որ յեկամտից մեծութեանցն յոլովին շահք ։

Այն են և վաճառականութեան անպատեհութիւնք և վտանգք ։ Ոսկի, արծաթ, գոհար ակն, մարգարիտ, բեհեզ ազնիւ և բարակաման, կարևորագոյն այնորիկ մասունք, տածեն զխնասակար արուեստիցն հոյլս՝ 'ի մեղկել և 'ի զեղծուցանել զազգս ․ իբր թէ մերժէր յաշխարհաց քրիստոնէից վաճառաշահ սպառուց զեղխութեան և ունայն պերճանաց, մեղկութեան և շռայլութեան ։ Այլ չէք հնար ․ ցորչափ ցանկութիւն իշխէ 'ի մարդիկ՝ ամենայն իրօք զեղծիցին, և լաւագոյնօքն իսկ ։ Չար է զեղծումն, այլ ոչ վասն այնորիկ ինքնաբուն բարին խափանելի ։ Զսոյն իմա և զամենայն արուեստից, զորոց առաջի կայ մեզ ասել ։

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

ՑԱՂԱԳՍ ԱԶԱՏԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԻՑ, ԵՒ ՄՐՑԱՆԱԿՔ ՃԱՐՏԱՐԱՑՆ

Արդ այժմ եկեսցուք 'ի ճառս ազատական արուեստից՝ որ հակառակ մեքենականացն կալան զկոչումն, ազնուականագոյնք գոլով և հպաւորք հանճարոյ. և գլխաւորք 'ի նոցանէ են ճարտարապետութ̃ի, քանդակագործութ̃ի, նկար և երաժշտութ̃ի:

Արուեստք և գիտութ̃իք ընդ ժամանակս ժամանակս բարեբաստաբար փայլեալ պայծառանան. այլ որպէս ոք 'ի մատենագրաց ասէ[1], փայլումն և պայծառութ̃ի նոցա վաղ մթանայ, և սուղ տևէ կատարելութ̃ի նոցա: Գեղարուեստք առաւել քան ա̃մ ուրեք տևեցին յԵլլադա. զի ըստ անձկագոյն սահմանի՝ յաւուրցն Պերիկղեայ մինչև ցմահ առաջնոյ յաջորդացն Աղեքսանդրի՝ ժողովին ամք երկերիւր յերկարաձգելոյ նոցա անդ, յորում ժամանակի կացին ճարտարք բազումք ըստ իւրաքանչիւր արուեստից:

Ապաքէն փառք և մրցանակք և նախանձ զօրաւորք մեծ եղեն 'ի կացուցանել զարսն անուանիս: Զի զո՞ր եռանդն ոչ ածէին գեղեցիկ օրէնք քաղաքաց բազմաց Ելլադայ, հանել յամենաժողով մրցութ̃իս 'ի ճակատ զճարտարս յարուեստագիտաց, և տալ մրցանակս յաղթողաց յանդիման ա̃մ ժողովրդեանն՝ որ ընդ յաղթութ̃ի նոցա ծափս հարկանէին:

Հելլէնք, որպէս ասասցուք իսկ ընդ հուպ, պարտ վարկան զանուանիս զՊողիգնոտ ոչ ինչ նուազ քան զԼիկուրգոս և զՍողոն մեծարել, շքով մեծաւ ընկալեալ զնա 'ի քաղաքս՝ յորս նկարք նորա կային. և հրովարտակաւ Ամփիկտիոնացն ապահարկ արարին զնա ընդ ա̃մ տեղիս՝ ուր և երթայցէ: Եւ թագաւորք հզօրք յա̃մ ժամանակի զո՞ր մեծարանս ոչ արարին ճարտար ձեռագիտաց: Աղեքսանդր մեծն և Դեմետր Պաշարիչն մոռացեալ զփառս թագաւորութեան՝ որպէս պատմեցաքն, և ընտանեցեալ ընդ Ապեղէս և ընդ Պրոտոգենէս ընդ ճարտար նկարիչսն, 'ի գործարանս նոցա յաճախէին՝ 'ի պատիւ չքնաղ հանճարոյ և գերազանց վաստակոց զարմանալի արանցն։ Կարոլոս հինգերորդ, մի 'ի հզօր ինքնակալաց՝ որ զհետ մեծին Կարոլոսի կացին յարևմուտս, զՏիտիանոս կացոյց կոմս, և ոսկի բանալեաւ և բազում այլ ևս օրինօք պատուոյ փառաւորեաց զնա, յայտ արարեալ՝ թէ քանի՛ պատուական համարէր զնկարչութիւն։ Եւ Փրանկիսկոս նախնին, արժանի նախանձաւոր նորա յիրս խաղաղութեան և պատերազմի, յաւել յոյժ քան զնա. և զԼէոնարդեայ վինչեցւոյ, որ 'ի վերայ բազկաց իւրոց աւանդէր զհոգին, ասէր ցիւրսն. Մի՛ ինչ զարմանայք թէ յոյժ մեծարեմ զնկարիչս ճարտար. զի իշխանս որպէս զձեզ բազումս 'ի միում աւուր հնար է ինձ կացուցանել, այլ ո՛չ է յարուցանել միւս այլ Լէոնարդ.

---

[1] Եւ եթէ զմիջոցս ժամանակացն քննեսցէ ոք, զնոյն և ընդ քերթողս և ընդ անդրիաստեղծս և ընդ նկարիչս և ընդ քանդակագործս գտանէ լինել, և զծայրագոյն կատարումն արուեստից յանձուկ սահման ժամանակի փակեալ: Պատէրք. ա. ծէ:

Հոխսուֆ. 'ի Տիտիանոս։

Վազար. 'ի Լէոնար. Վինչ։

Թագաւորք՝ որ այսպէս բանիւք և գործովք՝ զճարտարացն քաջութիւն գովեալ պատուեն, ոչ ինչ նուազ գործեն անձանց փառս. Ապաքէն արուեստք մեծարեալ 'ի թագաւորաց[1] յաւելուն 'ի շուք և յազնուականութիւն, և փայլեալ պայծառանան. այլ տան զորիտուրն փոխարէն, ազնուացուցեալ գոգցես զմեծարիչսն, և անմահացուցեալ զանուն նոցա և զքաջութիւն՝ ձեռակերտօքն, որ կան և մնան յամայր ամս.

Պատերկուղոս, յորմէ 'ի վեր այսր առեալ ասացաք զկատարելութիւն արուեստից գոլ կարճատև, յաւելու և այլ իմն ճշմարտութիւն վկայեալ 'ի փորձոյ վաղնջուց և արդի ժամանակաց. զի արք աւագք յամենայն կարգի՝ յարուեստս, 'ի գիտութեան, 'ի քաղաքավարութեան և 'ի պատերազմի, բազում այն է՝ զի ժամանակակիցք հանդիպին[2]. Որպէս յԱղեքսանդրա 'ի ժամանակի՝ յորում պայծառանային Ապեղէս, Պրաքսիտեղ, Լիւսիպպոս, և այլք համարուեստք նոցա, զայնու ժամանակաւ կացին և անուանի իմաստասէրքն, և ճարտարախօսք հզօրք, և քերթողք վեհք, Սոկրատ, Պղատոն, Արիստոտէլ, Դեմոսթենէս, Իսոկրատ, Թուկիդիդէս, Քսենոփոն, Եսքիղոս, Եւրիպ-

---

[1] Յաղագս նկարչութեան, որ երբեմն ազնուական արուեստն էր՝ ցանկալի թագաւորաց և ժողովրդոց, և զորս միանգամ հաճոյ թուէր նմա աւանդել յետնոց՝ փառաւորէր։ Պլինիոս. լե. Է.

[2] Յոյժ զարմանք են, զի հանճարք գերազանցք ամենայն արուեստից միօրինակ 'ի միում անձուկ ժամանակի հանդիպին։

դէս, Սոփոկղ, Արիստոփան, Մենանդր, և այլք բազումք՝ արք աւագք, և զօրավարք քաջք ։ Եւ զի՞նչ ևս ասացից ․ զնոյն և առ Օգոստեաւ տեսանեմք ․ և յաւուրս մեծին Լուդովիկեայ քանի՜ ամբոխ արանց մեծամեծաց յա՟մ կարգի կացեալ, որոց անուանք և քաջութի՟ք և ձեռակերտք անմահ պահեսցեն զյիշատակ պանծալի Թագաւորութ՟են ։

Կատարելութ՟ե իրաց սահմանեալ գոգցես ժամանակք են, յորս հանճար իմն համափիւռ յա՟մ արուեստս ծաւալի 'ի միում ուրեք յաշխարհաց ․ զիա՛րդ և կամ ընդէ՛ր, ոչ գիտեմ ․ Թերևս զի արուեստից և հանճարոյն տեսակք զմիմեանց ունին, և զի յա՟մ իրս հանճարոյ նոյն ընտրող ախորժակք են կատարելութ՟ե ։ Զի յորժամ առանց դարմանոյ թողեալ կայցեն հանճարք, 'ի զարթնուլ կիրթ ախորժակաց՝ իրերօք օգնեալ փայլեն նորասքանչ ։ Այլ այն իսկ աւաղելի է, զի ծայրագոյն կատարումն արուեստից և գիտութ՟եց՝ գուժկանք են անկման նոցա ․ զի յորժամ անսասանքն թուիցին, յայնժամ մերձ են 'ի կործանումն ․ քանզի այսպէս անկայուն և յեղյեղուկ է բաղդ մարդկայնոցս բնաւից իրաց ։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՅԱՂԱԳՍ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Սկիզբն և զարգացումն և կատարումն ճարտարապետութ՟են ։

Զհետ մշակութ՟ե չյապաղեաց արդեօք կառուցումն տանց, որով ճարտարապետութ՟ի ոչ յոյժ կրտսեր գտանի քան զերկրագործութ՟ի ․ նմին իրի Թեոդորետոս զերկրագործութ՟ի երէց քոյր ճարտարապետութ՟ե կոչէ ։ Ջերմակիծ տապ ամառայնի, և ձմեռայնոյ խիստ սառամանիք, հեղեղք անձրևաց և բռնաշունչ հողմք վաղ ստիպեցին զմարդիկ պատսպարել ընդ յարկաւ, և կազմել տեղի ապաւինի յերեսաց անհարթութ՟ե օդոց ։ Ցու․ Նախ․ Դ․ 359 ։

Այլ 'ի սկզբանն հիւղս գծուծս անարուեստս կազմեցին յոստոց ծառոց վարկպարազի յարկեալ ։ Յաւուրս Սոկրատեայ էր յԱթէնս տեսարան ցանկալի վաղեմի Վիտ․ Է․ Ը ։

հնութե՟ն կաւակերտ յարկ Արիսպագին. և 'ի Հռոմ 'ի մեհեան Կապիտոլին' հիւղ Հռոմուլեայ խոզանաւ ծածկեալ։

Ապա փայտակերտք յաջորդեալ' զսեանցն և զհեծանաց ետուն զօրինակ. և սիւնք սկիզբն 'ի ծառոց կալան, զի 'ի մայթ յարկաց բունք 'ի կիր արկանէին։ Իսկ հեծան, որպէս յանուանէն իսկ յայտ է, է գերան ստուար' հեծեալ 'ի սիւնս ընդ յարկաւն։

Յակաւ 'ի կազմածոյ տանց կրթեցան գործաւորք 'ի հնարագիտութի՟, և ձեռք նոցա 'ի ճարտարութի՟. և փոխանակ դիւրակործան հիւղից' յորս 'ի սկզբանն պատըսպարէին, որմս հաստահիմունս աղիւսեայս և քարեկիրս կանգնեցին, յարկածածուկս գերանօք և կղմինդրօք։ Ապա մտադիւրութի՟ արուեստին և յաճախ փորձ ած զնոսա 'ի գիտութի՟ ստոյգ կարգաց համեմատութե՟ն ընդ որ 'ի բնէ ախորժէ մարդ, և արարիչն եդ 'ի նա զանայլայլակ օրէնսն' զի յա՟մի պահեսցէ զկարգ։ Նմին իրի ասէ Օգոստինոս. Շինուած' որոյ մասունք համեմատ են, և պատշաճ զետեղեալ, նովին չափակցութե՟ն հաճոյ և ախորժելի է աչաց. իսկ եթէ խառն 'ի խուռն, և պատուհանացն ոմն մեծ և ոմն փոքր, կէսք 'ի վեր և կէսք 'ի վայր, նովին իսկ անկարգութե՟ն տգեղ է, և դրժէ աչաց[1]։ Զայս այսպէս իմաստասիրէ ս՟բ հայրն։

Այսպէս ճարտարապետութի՟ ոտն ոտն յառաջ խաղացեալ' եկն յայս կատարումն 'ի ձեռն ճարտարաց. զի 'ի սկզբան կարևորացն և եթ առ կեանս խնամ ունէր, ամրութե՟, օգտի և դիւրութե՟. զի պարտ է տան լինել հաստատուն, օգտակար' առողջութե՟ օդոյն, և առ ա՟մ դիւրութի՟ բնակչացն դիպող։ Ճարտարապետութի՟ աշխատ եղև 'ի յօրինուածն և 'ի վայելչութի՟, օգնականութե՟ այլոց արուեստից։ Նաև ապա յաւելան շուք և պերճութի՟ և մեծագործութի՟, գովելիք ըստ տեղւոյն. այլ զեղխութի՟ վաղ զեղծաւ նոքօք։

Ծննդ. դ. 17։ Նախկին շինուած աւանդեալ 'ի պատմութե՟ է դաստակերտն Կայենի, զոր յետ եղբայրասպանութե՟ն և անիծիցն յո՟յ շինեաց, որպէս գիրք պատմեն. որով 'ի միտ առնումք երբ և ուր սկիզբն եղև ճարտարապետութե՟։ Նաև որդիք Կայենի, որ գրեթէ ա՟մ արուեստից եղեն գտակք՝ որպէս վկայեն դարձեալ գիրք, զարգացուցին յոյժ զարուեստն։ Զայս 'ի դէպ է կարծել. քանզի յետ ջրհեղեղին մինչ չև բաժանեալ ազգի մարդկան և ընդ երեսս երկրի սփռեալ՝ խորհեցան զմեծակառոյց ամբարտակն կանգնել առ 'ի պարծանս, որ զմեծասաստ բարկութեն իսկ ած 'ի վերայ նոցա։ Ապա ուրեմն յԱսիա եղեն խանձարուրք ճարտարապետութե. անդ ծնաւ, անդ զարգացաւ, և անտի տարածեցաւ ընդ տիեզերս։

---

[1] Նաև զնորին իսկ շինուածոյ զմասունս քաջ զննեալ, եթէ տեսանիցեմք զմի 'ի դրանցն 'ի կողմանէ, և զմիւս այլ ոչ կէսն 'ի մէջն, չախորժեմք. զի և 'ի շինուածս առանց հարկի անյարմարութի մասանցն անիրաւի իմն աչաց։ Օգոստ. կարգ. բն. Թ։

Բաբիլոն և Նինուէ, քաղաքք մեծակառոյցք և ընդարձակք՝ որպիսիք ոչ գոն այլք 'ի վէպս, դաստակերտք էին Նեբրովթայ՝ թոռին Քամայ՝ նախնոյ աշխարհակալին։ Եւ թէպէտ ոչ կարծեմ թէ 'ի սկզբանն այնպէս հրաշակերտք էին՝ որպէս եղեն ապա 'ի զարմացումն աշխարհի, այլ մեծամեծք և լայնատարածք էին, որպէս է գուշակել և յանուանց [1] քաղաքացն՝ որք 'ի տիպ մայրաքաղաքին կառուցան յայնժամ։

Շինուած հռչակաւոր եգիպտական բրգանցն, և լճին մերիսեան և բաւիղն, և բազմութեն մեհենացն, և կոթողք՝ որ մինչև ցարդ զարդք են և զարմացումն Հռոմայ, ցուցանեն քանի փոյթ և զարգացումն էր եգիպտացւոց 'ի ճարտարապետութի։

Այլ ոչ Ասիա և ոչ Եգիպտոս 'ի կատարումն ածին զարուեստն. գերապանծ շինուածք նոցա անհեթեթ մեծութեն արդեօք՝ քան պատշաճ և համեմատ յօրինուածովն անուանի եղեն։ Պերսեպօլեայ աւերակացն պատկերք յայտ առնեն, զի թագաւորք Պարսից՝ բազմահարուստք պանծացեալք 'ի վէպս՝ ոչ ճարտար արուեստագէտս 'ի վարձու կալան։ Սակայն այս որպէս և է, յանուանց իսկ երից գլխաւոր կարգաց ճարտարապետութե երևի, զի եթէ ոչ գտողք արուեստին՝ այլ կատարողք եղեն Հելլէնք, և նոքա զօրէնս ճարտարապետութե սահմանեցին, և զօրինակս ետուն։ Զնոյն և զայլ ամենայն արուեստից ասեմք, գրեթէ և զամ գիտութեց։ Զի ոչ զօրաւորք ևեթ քաջք, այլ և իմաստասէրք յամ կարգաց, բանաստեղծք, ճարտարախօսք, երկրաչափք, նկարիչք, քանդակագործք, ճարտարապետք, և բնաւ ամ արուեստից բանականաց ճարտարք կային 'ի յունաստան. և արդ իսկ հարկ է անդր ընթանալ որպէս 'ի դպրոց կիրթ ախորժակաց 'ի զարգացումն ամ արուեստից։

---

[1] Որէփ, որ Ռաաբովթայն յեբրայական. Բ.Հ.Ռ. ընդարձակ քաղաք. Դասե-նէն 'ի հայ, երկայն քաղաք. Ուա. Տոն, քաղաք մեծ։

Աւա՜ղ, զի ոչ ինչ յաղագս ճարտարապետութ՟ե առ 'ի Յունաց հասին մեզ մատեանք. այլ փոխան մատենից ձեռակերտք նախնի ճարտարացն ցարդ կանգուն կան, և ընդ գեղ նոցա՝ վկայեալ յամենեցունց՝ զարմանան հմուտք արուեստին յերկուց հազարաց ամաց հետէ։ Որք գեր 'ի վերոյ իսկ են քան զա՟մ օրէնս արուեստին, զոր թէ թողուին գրով. զի յա՟մի իսկ լաւ է փորձն քան զգիտութիւն[1]։

Արդ առ 'ի չգոյէ յոյն մատենագրի՝ զՎիտրուվիոս լատին գրիչ կալայց առաջնորդ։ Սա Յուլիոսի Կեսարու և Օգոստեայ ճարտարապետ էր, ժամանակակից նոցա կացեալ ըստ հասարակաց կարծեաց. վասն որոյ զընտրու՟ի մատենագրութե՟ն և զքաջութ՟ի մատենագրին ոչ է հարկ ասել. յոյր սակս և քննաբանք ընդ առաջինս 'ի նախնի հանճարեղացն դասեն զնա։ Պարծեալ զի և 'ի համբաւատենչ դարուն եկաց սա, յորում էին ա՟մ իրաց կիրթ ախորժակք, և ինքնակալն Օգոստոս ջանայր պայծառացուցանել զՀռոմ մեծակառոյց շինուածովք համեմատ մեծու՟ե և փառաց ինքնակալութեանն. վասն որոյ ասէրն իսկ՝ թէ աղիւսակերտ զՀռոմ ընկալեալ, թողում գրեթէ համակ քարաշէն[2]։ Կարօտ էի այսպիսում հմուտ առաջնորդի 'ի ճառել զիրաց՝ որ ընաւ անծանօթ են ինձ։ Բազում ուրեք և Պերոլ լիցի ինձ զօրավիգն ներքնագրոշ՟մ բանիւքն 'ի թարգմանութեան գրոցն Վիտրուվեայ, և Շամպռէ հանճարեղ տեսութ՟իքն 'ի Բաղդատութ՟ի հին և արդի ճարտարապետու՟ե, զոր յոյժ գովեն հմուտք արուեստին. և Ֆլիպիէն դարձեալ յօրէնս ճարտարապետու՟ե, այլովքն հանդերձ։

Որպէս այժմ, և 'ի հնումն երրեակ ազգ էին ճարտարապետու՟ե. քաղաքական, զինուորական, և նաւական։ Քաղաքականին է տալ զօրէնս ա՟մ շինուածոց հասարակաց, և տանց իւրաքանչիւրոց, 'ի բնակութ՟ի քաղաքայնոց 'ի խաղաղութ՟ե. զինուորականին՝ ամրացուցանել զքաղաքս, և զա՟մ կազմածս պատերազմի կանգնել. իսկ նաւականին՝ կառուցանել նաւս, և որ ինչ կցորդք են նմին և հետևորդք։ Զերկոցունց զայսցանէ յետոյ ատասցուք, աստ զքաղաքականէն եւեթ ճառեալ. և նախ զայլ և այլ կարգաց նորա առ հասարակ ։

---

[1] Գործոց յա՟մ իսկ իրս առաւել օգնէ փորձ քան զպատուէրս։ ԿՈՒԻՆՏԻԼ.

[2] ԶՀռոմ, մինչ չև համեմատ փառաց ինքնակալութե՟ն զարդարեալ էր, և էր անպատսպար 'ի հեղեղաց և 'ի հրկիզութ՟ե, պայծառացոյց յոյժ. վասն որոյ իրաւամբք պարծէր՝ թէ աղիւսեայ ընկալեալ զայն՝ եթող քարաշէն. ՍՈՒԷՏ. ՕԳՈՍՏ. ԻԸ։

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Յաղագս երից կարգաց ճարտարապետութեան Յունաց, և երկուցն ևս՝ որ ՚ի նոցա յաւելան ։

Հարկ ազգի ազգի շինուածոց ստիպեաց զճարտարապետս՝ սահմանել այլևայլ համեմատութիւնս ըստ պատշաճի մեծութեան նոցա, կամ ամրութեան, կամ վայելչութեան և գեղոյ, որպէս կամէինն առնել. և ըստ զանազան համեմատութեանցն այլևայլ կարգս սահմանեցին ։

ԿԱՐԳ առ ճարտարապետս նշանակէ զյօրինուած, զչափ, զհամեմատութիւն և զդասակարգութիւն սեանց, որ ՚ի զարդ և ՚ի հաստատութիւն մեծակառոյց շինուածոց կանգնին. թէպէտ բոլորաձևք իցեն, թէպէտ անկիւնաւորք ։

Երրեակ կարգք են յունական ճարտարապետութեան. դորացին, յոնիականն, և կորնթեան ։ Սոքա են որպէս ծաղիկք և լրութիւն ամենայն կարգաց, յորս չիք ինչ թերի ՚ի գեղեցկութեանց և ՚ի կարևոր մասանց ճարտարապետութեան ։ Զի երրեակ ազգ են շինուածոց. ամուր, միջակ և վայելչական. և սոքա բովանդակին յերեսին ՚ի կարգս յայսոսիկ ։ Են և այլ կրկին կարգք լատինականք նուաստագոյնք և յոյժ ՚ի վայր ազնուութեամբ, տոսկեանն և խառն ։

Ա. ՅԱՂԱԳՍ ԴՈՐԱՑԻՈՑ ԿԱՐԳԻՆ

Զդորականն կարգ արժան է համարել նախկին կերպարանաւոր ձև ճարտարապետութեան, և իբր անդրանիկ ծնունդ նորա, որով կառուցան նախ մեհեանք և պալատք ։ Անյայտ իսկ է վաղեմի սկզբանն նորա ժամանակ, բայց Վիտրուվիոս Դորայ ումեմն աքայեցւոց արքայի ասէ ճարտարեալ զայն, որ հաւատարիմ թուի. և թերևս ՚ի նմանէ իսկ՝ յորմէ դորացին անուանեցաւ ազգ ։ Դ. Ա. Սա կալեալ զՊեղոպոնէս, կանգնեաց մեհեան մեծակառոյց յԱրգոս՝ դիցուհւոյն Հերայ. և այն եղև նախատիպ դորական կարգին ։ Եւ ազգք՝ որ շուրջ բնակեալ էին՝ ըստ նմին օրինակի կառուցին մեհեանս բազումս. յորս անուանի եղև յողիմպիացւոցն կանգնեալն Դիայ, որ անտի իսկ կոչեցաւ ողիմպիական ։

Կարգս այս ամրութեան որոշեալ զանազանի յայլոց․ վասն որոյ 'ի հսկայագործ մեծակառոյց շինուածս պատկանի, 'ի դրունս պարսպաց և քաղաքաց, 'ի բակս մեհենաց, 'ի հրապարակս, և յայլ այսպիսի տեղիս․ որոց ոչ վայելչութիւնք զարդուց են անկ, այլ անդ հաստատաշինած և հսկայաձև այս կարգ զարմանալի է՝ առնացի ինքնազարդ գեղովն, որ այն իսկ է վսեմն․

Բ. ՅԱՂԱԳՍ ՅՈՆԻԱԿԱՆ ԿԱՐԳԻՆ

Ճարտարապետութիւն զկերպարանաւոր շինուածսն զդորացի բազմահաչակ մեհեանս կառուցեալ, ոչ զկայ եառանդ․ այլ նախանձաւորութիւն շրջակայ ազգաց և ևս զարգացեալ, վաղ 'ի կատարումն եհաս․ Նախ յոնիացիք նախանձաւոր լեալ դորացւոց, 'ի պարծանաց գլխոյն վերջացեալք, ջանահնար եղեն կատարելութեամբ յաղթել դորացն․ Հայեցեալ 'ի կերպարանս առն, օրինակ իմն 'ի Հերակլեայն՝ 'ի նախատիպ դորականին, զի էր այն կարի յաղթ և հսկայաձև՝ անպատկան 'ի ձև տաճարի և 'ի յանդիմանութիւն երկնաւորացն, հնարեցան այլ կարգ վայելչագոյն և ազնուագոյն՝ 'ի տիպ կերպարանաց կնոջ, գեղեցկութեանն փոյթ կալեալ քան ամրութեան շինուածոյն, և զարդս բազում յաւելեալ յայն․ Գեղապանծ 'ի մեհեանս հռչակաւորս՝ որ 'ի յոնիացւոցն կառուցեալ, է կրտսերագոյնն քան զամենեսեան և անուանի ընդ ամ երկիր տաճարն Արտեմեայ, զորմէ ընդ հուպ լիցին մեզ բանք․

Գ. ՅԱՂԱԳՍ ԿՈՐՆԹԵԱՆ ԿԱՐԳԻՆ

Կորնթացիք ճարտարեցին զայս կարգ, որ է բուն ծայր արուեստին․ Թէպէտ և ոչ է յայտ ստուգիւ ժամանակ սկզբան նորա, և ոչ թէ երբ եկաց Կալլիմաքոս, որում Վիտրուվիոս զպարծանս գիւտին ընծայէ, այլ յաղթութեամբ յօրինուածոյն գուշակի՝ 'ի ժամանակի ճոխութեան և պայծառութեան Կորնթոսի սկսեալ, իսկ և իսկ զհետ յոնիական կարգին՝ որում յար և նման է, խոյակօք և եթ սեանցն որոշեալ․ Դիպաց իմն գործ է գիւտս այս․ զի Կալլիմաքեայ առ շիրմաւ ուրեք յուղւոջ տեսեալ կողով 'ի վերայ ակքանի, ընդ պատահական կարգ սաղարթացն՝ որ զկողովաւն ընձիւղէին՝ զարմանայր․ Եւ իցէ ինչ սաղարթապատ կողովն ընդ խոյակս սեանց և ընդ յաղթ շինուածս, այլ նա զտեսեալն ձեւացոյց 'ի սիւնս 'ի Կորընթոս, սահմանեալ և կացուցեալ զհամեմատութիւն և զյօրինուած կորնթեան կարգին. Այլ կոչեցին աթենացիք զԿալիմաքոս ճարտարարուեստ՝ վասն վայելուչ և ճարտար զքարինս քանդակելոյ. Իսկ Պլինիոս և Պաւսանիաս կոչեն զնա արուեստաղեղծ, զի յղկէր և ղորկէր անդադար զձեռակերտսն, և ոչ կարէր զմիտս իւր հաճել· զի չհաւասարէր գործն ընդ տիպս կերպարանաց գեղոյ և վսեմութեան, որ 'ի միտս նորա էին.

Դ· ՅԱՂԱԳՍ ՏՈՍԿԵԱՆ Կ՟Մ ԵՏՐՈՒՐԱՑՒՈՑ ԿԱՐԳԻՆ

Այս կարգ համարի հնարեալ 'ի Տոսկիա, ուստի և զանունն կալաւ. Քան զա՟մ կարգս սա պարզագոյն է և անպաճոյճ, և անհարթ իսկ. վասն որոյ սակաւ ուրեք վարի 'ի գիւղս՝ ուր միոյ եւեթ կարգի պէտք իցեն, կամ 'ի մեծամեծ շինուածս՝ որպէս 'ի թատերս շուրջ տեսանելիս, և յայլ այսպիսի շինուածս.

Զտոսկեանն կարգ պարտ է, ասէ Րանդրուէ, առանց հեծանի կանգնել, զի թերեւս լիցի ախորժելի. Այլ յօրինակ ածէ զսիւնն Տրայիանոսի, զմեծագործութիւն հռոմայեցւոց նշխար պանծալի, որ և ցարդ պահի յանմահ յիշատակ ինքնակալին առաւել քան զկիպագրացն մատեանս. Զշիրիմն զայս, եթէ այսպէս հաճոյ թուեսցի ումեք կոչել զայն, կանգնեցին նմա ծերակոյտն և ժողովուրդ Հռոմայ փոխանակ մեծամեծ վաստակոց նորա 'ի վերայ աշխարհին, զորս 'ի յիշատակ անմոռաց՝ զուգատև հռոմէական պետութեան՝ ետուն քանդակել 'ի վիմի ամենապերճ ոճով. Այլ հանճարեղ վիպլին՝ ճարտարապետութե՟ պատմիչ լեալ, ոչ յանձն առ հելլէն կարգօք զհռոմայեցին պանծացուցանել, թէպէտ և գեր 'ի վերոյ և քան զմնիկմն յաճախեալ էին այնոքիկ յԻտալիա, զի մի պարծանաց նորահրաշ արձանին Հելլէնն լիցի բաժանորդ, և զի յայտ լիցի՝ թէ չիք ինչ պարզ և անշուք, որ ոչ գայցէ արուեստիւ 'ի կատարումն. Նմին իրի 'ի տոսկեան կարգէ առեալ զսիւնն, որ ցայնժամ 'ի դեղջուկ և յանհարթ շինուածս կանգնէր, յանկերպարան նիւթոյն արար ըղպերճն և զվսեմ քան զա՟մ հրաշակերտս. և ժամանակին խնայեալ յայն, կայ մնայ ցարդ 'ի Հռոմ ամբողջ 'ի մէջ անթիւ կործանելոց արձանաց. Զարմանք մեծ. Տիտոսի և Մարկեղեայ թատերքն մեծակառոյցք, բաղանիքն Դիոկղետիանոսի և Կարակալլայ և Անտոնինեայ, խրոխտ ամբարտակն գերեզմանին Ադրիանոսի, Եօթնագօտին Սևերեայ, և շիրիմն Օգոստոսի, և այլ ևս շինուածք անկործանելիք վաղափուլք և դիւրակործանք եղեն, և հազիւ նախնի կերպարանաց նոցա ձևք նշմարին. իսկ որ անկայունն թուէր սիւնն Տրայիանոսի, կայ մնայ ցարդ անկործան ։

Ե. ՅԱՂԱԳՍ ԽԱՌՆ ԿԱՐԳԻՆ

Զկարգս զայս հռոմայեցիք յաւելին. և բերէ սա զյոնիականին և զկորնթեան կարգացն զնմանութ՟ե՝ խառնեալ 'ի նոցունց, յորմէ և խառն կոչի. այլ քան զկորընթեանն զարդարուն է ։ Վիտրուվիոս՝ հայր ճարտարապետաց՝ զայսմանէ ոչ ինչ տայ ծանօթս ։ Բայց Շանպռէ կշտամբէ զգեղծ ախորժակս արդեաց ոմանց, որք զայլ և այլ կարգս բաղադրեալ խառնեն՝ չհայեցեալ յօրինակս գերազանց և անզուգական հելլէն ճարտարապետութ՟ե, և թողեալ զարահետ ճանապարհն՝ զոր վեհագոյն վարժապետքն հորդեցին, զարտուղի գնան՝ յանդուգն վարեալ զհետ յոռի հնարից արուեստին, որ 'ի կարգսն սպրդեալ եմուտ՝ պատճառանօք իբր 'ի նոցանէ խառնեալ ։

ՅԱՂԱԳՍ ԳՈԹԱՑԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Գոթականն ճարտարապետութիւն օտար է 'ի նախնեացն օրինաց համեմատութ՟ե, և արուեստակեալ խըռկեալ զարդուք ։ Զսա Գութք 'ի հիւսիսոյ ածին. և զանազանի սա 'ի հին և 'ի նոր ։ Հինն՝ բուն իսկ ածեալն 'ի Գոթաց 'ի հինգերորդ դարու, ըստ որում կառուցան հաստաշինուածք խառն 'ի խուռն և ստուարք. իսկ նորոյն շինուածք, վայելչագոյնք և պարզագոյնք և յարդարունք, երկայնամիտ վաստակօքն զարմանալի են. որ և յաճախեալ կացին ընդ երկար, մանաւանդ յԻտալիա ։ Ընդ որ յիրաւի է զարմանալ, զի Իտալիա՝ լի ընտիր արձանօք՝ թողեալ զհետս գերազանց ճարտարապետութ՟ե զվկայեալն հնութ՟բ և մշտնջենաւորութ՟բ և բազմութ՟բ, ընկալաւ զօտարն զխուժադուժ խառն 'ի խուռն զանկարգ և զտգեղ ճարտարապետութ՟ին ։ Այլ ոչ 'ի սպառ մնացեալ 'ի մոլորութ՟են՝ ինքն նախ դարձաւ 'ի հինն, որ միայն 'ի կիր ածի արդ յամ՟ տեղիս ։ Գոթականն նոր յերեքտասաներորդ դարու մուծաւ , և տևեաց մինչև ցվեշտասաներորդն՝ յորում նորոգեցաւ նախնին ճարտարապետութիւն ։ Նմանայն հայրապետական հին եկեղեցիք՝ գոթացի ճարտարապետեալ են . և են իսկ վաղեմիք յեկեղեցեաց ընիկ գոթականք , ամրակառոյցք և գեղեցիկք , ընդ որս և արդ քաջք 'ի ճարտարապետաց զարմանան վասն նշմարելոյ 'ի նոսա համեմատութեանցն ։ 'Ի հմտութեան մանկտւոյ յամի ուշ կալեալ , յաւելից զհնգեցունց ասացելոց կարգացս ճարտարապետութեան զպատկերն զհետ մեկնութեան ճարտարապետական բառից , զոր յանձն եառ Ռամիս՝ կաճառորդ Ճեմարանին գիտութեանց , և վարժապետ և քարտուղար 'ի ճարտարապետութեան Ճեմարանին , յօրինել վասն այսր իմոյ մատենիս , հարևանցի տալով գիտութիւն՝ որպէս ես իսկ աղաչեցի զնա համառօտել յոյժ ։

ՅՕԴՈՒԱԾ Դ.

Բացատրութեան ճարտարապետական անուանց մասին խորաժանշէոր հնգեցունց կարգացն ։

Հելլէն կարգացն մասունք էին սիւնք և վերնախարիսխ . յաւելլին հռոմայեցիք և պատուանդանս ընդ սեամբք առաւելագունիցն 'ի կարգաց առ 'ի բարձրութեան ։

ՍԻՒՆ է մայթ բոլորշի 'ի հաստատութեան կամ 'ի զարդշինուածոյ ։ Նու մասունք սեան են՝ խարիսխ , բուն , և խոյակ ։ Բայց դորական կարգին՝ սիւնս անխարիսխս կանգնէին հռոմայեցիք ։

ԽԱՐԻՍԽ է մասն սեան , որ 'ի ներքոյ բնին կայ 'ի վերայ պատուանդանի կամ 'ի գետնի ։ Նու նորա մասունք են Գլխումն՝ հարթաձև քառակուսի , և Ոտնեակք՝ որք զստորոտ բնին պարունակեն առ ամրութեան . և մանեկայն ստուարագոյնք կոչին Գնուրք , և նուրբք Կոճք . և անլոյն 'ի միջի փոքրքն կոչի Օմակ կամ Գնուակ ։

ԲՈՒՆ սեանն է մասն բոլորշի հարթ՝ 'ի խարսխէն և 'ի վեր մինչև ցխոյակն , առ փոքր փոքր անձկացեալ ։ Ոմանք 'ի ճարտարապետաց ստուարագոյն քան զստորոտն օրինադրեն առնել զբունն յերրորդում մասին բարձրութեան . այլ այս չէր առ նախնիս ։ Այլք 'ի ստորոտէ ցերիր մասն բարձրութեան օրինադրեն հաւասար առնել , և անտի և 'ի վեր տակաւ ամփոփել ։ Իսկ այլք անդստին 'ի ստորէ և 'ի վեր ամփոփել ։

ԽՈՅԱԿՆ է գլուխ սեան յեցեալ 'ի բունն ։

ՔՈՎԹԱՐՆ կամ ՎԵՐՆԱԽԱՐԻՍԽ է վերին մասն սեանցըն, և են 'ի նմա՝ Հեծան, Գօտի, և Քիւ ։

ՀԵԾԱՆ է իբր գերան յեցեալ 'ի խոյակն ։

ԳՕՏԻ է միջոց հեծանին և քիւոյ, իբր ձեղուն շինուածոյն ։

ՔԻՒ է կատար յօրինուածոյ սեանցն, ծնօտ զծնօտիւ ընդարձակեալ, իբր առ 'ի ծածկել 'ի հոսանաց տանեաց զա՟մ զկարգն ։

ՊԱՏՈՒԱՆԴԱՆ է խոնարհագոյն մասն յօրինուածոյ սեան քառակուսի, և երրեակ մասունք են նորա. Ներքնախարիսխն՝ որ կայ 'ի գետնի, Խորանարդն՝ յեցեալ 'ի ներքնախարիսխն, և Ծնօտն՝ պսակ պատուանդանին, յոր վերայ կանգնի սիւնն ։

'Ի համեմատութ՟ի սեանց ընդ վերնախարիսխս և ընդ պատուանդանս՝ ոչ միաբանին Ճարտարապետք ։ Վինեօլ այսպէս սահմանէ. առ 'ի կանգնել զկարգ 'ի յայտնի ինչ բարձրութ՟ն, պարտ է բաժանել զբարձրութ՟ին յիննետասն մասունս, և տալ զերկոտասան մասն բնին հանդերձ խարսխաւն և խոյակաւ, զերիս վերնախարսխին, և չորս պատուանդանին ։ Իսկ առանց պատուանդանի, բաժանեալ զբարձրութ՟ին 'ի հնգետասան մասունս՝ տալ զերկոտասանն սեան, և զերիս վերնախարսխին ։

Ըստ չափոյ ստորոտի բնին ամենայն մասունք կարգացն պատշաճին. այլ ոչ յա՟մ կարգս նոյն համեմատութ՟ի է նորա ընդ բարձրութ՟ն սեանն ։ Կէս միջագծի ստորոտին է չափն, որով զմանր մասունս կարգացն չափեն ։ Զսա բազումք 'ի Ճարտարապետաց բաժանեն յերեսուն մասն, որով ամբողջ միջագծին լինին մասունք վաթսուն. զորս 'ի դէպ է կոչել մանրամասունս ։

Այլ և այլ համեմատութ՟ք բարձրութ՟ն սեանցն ընդ միջագիծս ստորոտիցն, և խարսխաց նոցա ընդ խոյակս և ընդ վերնախարիսխս, որոշեն հնգեակ կարգք Ճարտարապետութ՟ն. այլ առաւել 'ի խոյակս երևի խտիր զանազանութ՟ն, բաց 'ի տոսկեան կարգէն՝ զոր այլ ընդ այլս ընդ դորականին մարթ է առնուլ, 'ի խոյակն ևեթ հայեցեալ ։ Զի խոյակք երկուց այսոցիկ կարգաց մանեկաձև շրջանակօք աւարտին, և է 'ի վերայ նոցա թակաղակն վէմ քառակուսի հարթաձև ։ Այլ գօտւոյն դիւրագոյն որոշին. զի տոսկեան կարգին հարթ և պարզ է, իսկ դորացւոյն՝ զարդարեալ եռաքանդակ շերտաձև գրուագօքն՝ որք զկերպարանս ծայրից մարդակաց բերեն, իրր 'ի կազմած ձեղուան յեցելոց զհեծանաւն. Այս գործականին յատուկ զարդ է, այլոց կարգաց պարզ ունելով զգօտին.

Յոնիականին խոյակ եղջերաձեւօքն դիւրաւ ճանաչի, որ ընդ Թակաղակաւն գալարաձեւ արտաքս պարուրին.

Կորնթականին խոյակ յօրինի երկկարգեան ութ ութ տերեւովք, եւ ութ փոքրիկ եղջերօք՝ որ 'ի միջոյ տերեւոցն բուսեալ.

Իսկ խառն կարգաց խոյակք 'ի կորնթացւոյն եւ 'ի յոնիականէն բաղկանան. կրկին կարգք ութ ութ տերեւոց, եւ չորք եղջերաձեւք մեծք ընդ Թակաղակաւն արտաքս ոլորեալ.

Առ 'ի նշանակել զն̃մ, որ ինչ յատուկք են իւրաքանչիւր կարգի, հարկ էր մեզ 'ի բաց ելանել յառաջադրութենէս. Պիւաշ, կաճառորդ ճեմարանին գիտութե̃ց, յանձն էառ գծագրել զառաջիկայս պատկեր կարգաց ճարտարապետութեան.

ՅՕԴՈՒԱԾ Դ.

Թէ որք 'ի հին ժամանակս անուանի ճարտարապետք եղեն, եւ զինչ երեւելի շինուածս.

Ոչ ճառս ստուար մատենից համառօտել, ընտրանաւ որ ինչ 'ի հմտուն ընթեռնլեաց անկ են եւ ցանկալի նոցա՝ գրեմք, ոչ 'ի բաց թողեալ եւ որ ինչ 'ի հռոմէական վէպսն պատկանին, որպէս յառաջ ասացաք.

Սուրբ գիրք 'ի պատմել զյօրինուած խորանին վկայութե̃, եւ զերուսաղեմեան տաճարին՝ որ զնա փոխանակեաց, պարծանս իմն ընծայեն ճարտարապետութե̃ զայն՝ զի ինքն ա̃ծ ճարտարապետեաց զերկոսին հոյակապ կերտուածսն, եւ ա̃ծային աջո̃վ որպէս թէ գծագրեալ զօրինակն ետ Մովսէսի եւ Դաւթի, զի ըստ այնմ օրինակի արասցեն գործաւորքն. Եւ ոչ այսչափ միայն, այլ եւ զի յար եւ նման գործեսցեն՝ ելից ա̃ծեղէն հոգւո̃վ զԲեսելիէլ, կացուցանել զնա ճարտարապետ խորանին. իմա, որպէս յայտնագոյնս յաւելուն գիրք, զի " Ելից զնա ա̃ծեղէն հոգւով իմաստութե̃, եւ հանճարոյ եւ գիտութե̃ ա̃մ գործոյ, խելամուտ լինել եւ ճարտարապետել, գործել զոսկին եւ զարծաթ եւ զպղինձ, զկապուտակն եւ զծիրանին եւ զկարմիրն մանեալ, եւ զականակապն 'ի լրութի գոր-

Ելից. իե. 8. Ա Մնաց. իը. 19.

Ելից. լա. 1.

ծոյն, և զՀիւսնուն փայտից գործել ըստ ա̅մ գործոյ »: Եւ զԵղիաբ օգնական ետ նմա, և զնա ելից իմաստութեամբ. և զամենեցունց իսկ զգործաւորացն ասէ. "Եւ 'ի սիրտ ա̅մ իմաստնոյ ետու զիմաստութի̅, և արասցեն զա̅մ զոր միանգամ պատուիրեցի քեզ »: Եւ զՔիրամայ, զոր առ Սողոմոն 'ի շինուած տաճարին, յաւելուն
Գ. Թագ. Է. 14: գիրք՝ թէ էր նա "Ճարտարապետ պղնձոյ, և լի արուեստիւ և իմաստութ̅ և գիտութ̅, գործել զա̅մ գործ պղընձոյ »: Արդ յայտ է 'ի բանից աստի, մանաւանդ զոր յԵլից գրոցն ածաք, զի գիտութի̅ և ճարտարութի̅ և հանճար ճարտարաց ոչ 'ի նոցանէ է, այլ յա̅յ. զոր սակաւք 'ի միտ առնուն, և բազումք այն են՝ որ զեղծանին նոքօք: Եւ մանաւանդ յոյժ մեկուսի էին 'ի սուրբ մատծուէ̅ աստի հեթանոսք, զորոց առաջի կայ մեզ ասել:

Զհռչակաւոր շինուածոց Բաբելոնի և զեգիպտականացն ճարտար գործածոց աղիւսոյ՝ ուրեք ուրեք ասացաք. և արդ թողեալ զայնոսիկ, յաւելցուք որ ինչ զնո-
Վիտրուվ. Բ. Ը. ցանէ աւանդէ Վիտրուվիոս քաջ ճարտարապետն: Ինք, ասէ, բազում յոյժ 'ի կիր արկանէին զաղիւս 'ի շինուածս, զի աղիւսեայն երկարատև է քան զքարորմն: Նմին իրի 'ի բազում քաղաքս շինուածք հասարակաց, և տունք իւրաքանչիւրոց, և արքունիք, աղիւսեայք էին: Որում ընդ այլ բազում շինուածս յօրինակ ածեալ զարքունիս Մաւսոլեայ արքային Կարիոյ, ասէ. 'Ի քաղաքին Ալիկառնասացւոց՝ արքունեաց մեծազօր արքային Մաւսոլեայ պատուարքն աղիւսեայք են, թէպէտ և պալատն պրոկոնեսեան վիմօք շուրջանակի զարդարեալ. և կան ցարդ[1] ամբողջ և անեղծ, ծեփեալ բռով ողորկ հանգոյն ապակւոյ: Եւ ո՞չ արդեօք ճոխագոյն զպատուարսն կարէր կառուցանել թագաւորն հզօր և կիրթ յընտրութի̅ գեղոյ ճարտարապետութեան, որպէս վկայեն հոյակապ շինուածքն՝ որովք պայծառացոյց զիւր քաղաքն:

Ա. ՅԱՂԱԳՍ ԵՓԵՍԱՑՒՈՑ ՄԵՀԵՆԻՆ

Պլին. ԼԶ. ԺԴ: Մի յեօթն հրաշիցն համարեալ, մեհեանն Արտեմեայ՝ որ յԵփեսոս, յաւել պարծանս մեծ ճարտարապետին Կտեսիփոնի, զոր այլք Քերսիփրոն կոչեն: Նա զօրինակ մեհենին ետ, այլ ինքն 'ի կատարած գործոյն ոչ բաւեալ, և ոչ որդի նորա Մետագենէս, այլք 'ի ճարտարապետաց զհետ նոցա աշխատ եղեն 'ի գործ մեծակառոյց շինուածոյն զամս երկերիւր և քսան. և Ճարտարապետեր Կտեսիփոն յառաջ քան զվաթսներորդ ողոմպիադն: Վիտրուվիոս զձևոյ մեհենին ասէ՝ թէ էր երկկարգեան. իմա զի էին շուրջ զնովաւ կրկին կարգ սեանց, որպէս բակ զբակիւ: Երկայնութ̃ի մեհենին էր եօթանասուն և մի ձողաչափ, լայնութիւն նորա աւելի քան զերեսուն և վեց: Էին 'ի նմա սիւնք կճեայք՝ հարիւր քսան և եօթն, վաթսունն ոտնաչափ 'ի բարձրութ̃ի, նուէրք հարիւր քսան և եօթն թագաւորաց: Երեսուն և վեց 'ի սեանց անտի քանդակեալ էին 'ի Ճարտարաց ժամանակին: Սկոպաս, մի յանուանի քանդակագործաց՝ որ կային 'ի յունաստան, զմի 'ի սեանց անտի քանդակեաց. և էր այն գեղեցկագոյն զարդ հոյակապ մեհենին, որում Ասիա լրիւ իւրով օգնական եղև 'ի շինուած նորա և 'ի պայծառութ̃ի:

---

[1] 'Ի Մաւսոլեայ ցՎիտրուվիոս են ամօք աւելի քան երեքհարիւր և յիսուն:

Վիտրուվիոս պատմէ զկէսս 'ի քարանց շինուածոյ մեհենին գտեալ այսպէս. որ թէպէտ և առասպելք իցեն, այլ կամիմ և ոչ զայն լռել: Էր, ասէ, Պիքսոդոր ոմն հովիւ, և արածէր 'ի սահմանս Եփեսոսի զխաշինս 'ի ժամանակի՝ յորժամ եփեսացիք խորհէին ածել 'ի Փարոսէ և 'ի Պրոկոնեսայ և յայլոց տեղեաց քարինս 'ի կազմած Արտեմեայ մեհենին: Եւ յաւուր միում մինչ էր նա ընդ խաշինսն, յոգորել այծից երկուց և 'ի դիմել յիրեարս, տարադէպ սահեալ եղջերացն՝ անցին զմիմեամբք, և հարան եղջերբ միոյն ընդ հանդիպակաց ժայռն, և բեկաւ հատոր 'ի վիմէն: Իսկ հովուին տեսեալ զվէմն պայծառ՝ եթող զխաշինսն 'ի լերին անդ, և փութացեալ ած զայն յԵփեսոս, մինչ եփեսացիք վարանեալ էին՝ թէ ուստի քարինս ածիցեն: Եւ պատմեն փառաւորեալ նոցա զհովիւն, և փոխեալ զանուն նորա յԵւանգեղոս՝ որ թարգմանի աւետաբեր: Եւ դատաւոր քաղաքին, ասէ Վիտրուվիոս, ելանէ ցարդ ամիս յամսոյ զոհել նմա 'ի տեղւոջն. և որ ոչն ելանիցէ, տուգանք 'ի վերայ կան: Ժ. Բ.

Չէր բաւական գտանել զքարինսն. այլ հարկ էր 'ի կոփելն զնոսա ածել 'ի մեհեան անդր բազում աշխատութ̃բ և վտանգաւ: Սմին իրի արար Կտեսիփոն կազմած 'ի դիւրութ̃ի բեռնակրութ̃ն, և Մետագենէս որդի նորա այլ կազմած՝ 'ի բեռնակրութիւն հեծանաց սեանցն: Զնկարագիր երկուց կազմածոցս Վիտրուվիոս ետ մեզ գրով. Նոյն ինքն և զկատարած մեհենին պատմէ լեալ 'ի ձեռն Դեմետրի ուրումն սպասաւորի Արտեմեայ՝ որպէս կոչէ զնա, և Պիոնի եփեսացւոյ, յոնիական յորի- Է. յառաջ-Բ.

նուածով. այլ զժամանակն ոչ գրէ յորում կացին երկոքին ճարտարապետքն ։

Երկերիւր ամաց զվաստակն 'ի միում աւուր եղծ այլանդակ յիմարութ̃ի Հերոստրատեայ ուրումն ։ Քանզի սա՝ որպէս ամենեցուն է յայտնի՝ անմահ ցանկացեալ թողուլ յիշատակ, խանձ էարկ անդր, և գերահռչակ մեհեանն հրկիզեալ յաճիւն դարձաւ ։ Եւ էր օրն այն՝ յորում Աղեքսանդր մեծն ծնաւ. յորմէ վկայագրի ուրումն անձոռնի ասացուածն՝ թէ Արտեմիս աւընթեր կալով Ողիմպիայ 'ի մանկաբարձութ̃ի, չեհաս յօգնութ̃ի իւրում մեհենին ։

Սա ինքն Աղեքսանդր, անյագ 'ի փառասիրել, խոստացաւ եփեսացւոց զա̃մ ծախս վերստին շինուածոյ մեհենին, զի իւր միայնոյ տացին փառքն, և անունն ևեթ նորա դրոշմեսցի յարձանագիր մեհենին ։ Այլ ոչ յանձն առեալ զայն եփեսացւոց, և ոչ իշխեալ մերժել համարձակ զխնդիր նորա, շողոմիւք հաճեցին զնա ասելով. Ոչ վայելէ դից արձան միմեանց կանգնել ։ Եւ մեծակառոյց քան զառաջինն շինեցաւ մեհեանն ։

Բ. ՈՐ ԻՆՉ ՇԻՆՈՒԱԾՔ ԿԱՌՈՒՑԵԱԼ ՅԱԹԷՆՍ՝ ՄԱՆԱՒԱՆԴ ԱՌ ՊԵՐԻԿՂԵԱՒ

Երեւելի շինուածոց՝ որ էին յԱթէնս՝ եթէ զամենեցունց մի ըստ միոջէ կամիցիմք ասել, յանհունս վարեսցի բանս. այլ զգլխաւորէն ևեթ, և որ 'ի մեծութ̃ի և յիշխանութ̃ի աթենացւոց զօրավիգն մեծ եղև, զՊիրէոնի նաւահանգստէն ասասցուք ։

'Նեպ. 'ի Թեմիս. Զ ։
Պլուտարք. 'ի Թեմիս. Զ. 121 ։
Թուկիդ. Ա. 62 ։
Պաւսան. Ա. Ա ։

Յառաջ քան զաւուրս Թեմիստոկլի Պիրէոն էր աւան փոքր. և ոչ դոյր աթենացւոց 'ի ժամանակին յայնմիկ այլ նաւահանգիստ, բայց միայն փաղերեանն նեղ և անձուկ ։ Թեմիստոկլի խորհեցեալ զա̃մ զօրութիւնս աթենացւոց դարձուցանել 'ի ծով, և զի չէր հնար մեծի այնմ խորհրդոյ յաջողել առանց յապահով ապաստանի յօգնախումբ նաւաց, դարձոյց զաչս իւր 'ի Պիրէոն՝ յոր էին 'ի բնէ նաւահանգիստք երեք յարակիցք 'ի նմին ծոցի ։ Եւ աշխատեցոյց անդ գործաւորս անդադար, և քաջ ամրացոյց զայն, և արար հանդրուան նաւատորմից բազմաց ։ Եւ էր նաւահանգիստն այն հեռի 'ի քաղաքէն քառասուն ասպարիզաւ ։ Եւ այն իսկ բարեպատեհ էր աթենացւոց, ասէ Պլուտարքոս. զի որ 'ի նաւահանգիստս լինին յաճախ ապերասանութ̃ք, 'ի բաց կայն 'ի քաղաքէն. և Աթէնք Պիրէոնի և Պիրէոն Աթենայ համանէին յօգնութե՟, առանց խանգարելոյ բարեկարգութե՟ քաղաքին։ Պաւսանիաս մեհեանս բազումս ասէ լեալ 'ի Պիրէոն. զի էր այն մասն քաղաքին աթենացւոց, և իբր միւս այլ Աթէնք։

Զնոսա Պերիկղէս կցորդեաց մեծաւ պատուարաւն, որում էր երկայնութի՟ քառասուն ասպարիզաց. և եղև այն 'ի զարդ և 'ի պատսպարութի՟ Պիրէոնի և քաղաքին, և կոչէր՝ երկայն պատուար։ Դեմետր փաղերացի յիշխանութե՟ն իւրում յԱթէնս՝ յաւել ամրացուցանել և զարդարել զՊիրէոն։ Զինարանն, զոր կառոյց անդ, ընդ չքնաղ շինուածս յունաստանի համարի. և վերակացու շինուածոյն կացոյց նա զՓիլոն զականաւորն 'ի ճարտարապետս ժամանակին. և յաջողեցաւ գործն 'ի ձեռս նորա ըստ համբաւոյ ճարտարութե՟ նորա։ Իսկ այնու ճշգիւ և ընտիր և յստակ բանիւք ետ զհամար գործոյն յանդիման ամ՟ ժողովրդեան, զի աթենացիք՝ համճարեղ ընտրողք 'ի մասինս յայսմիկ՝ յար և նման ճարտարապետութե՟ն գովեցին զճարտարխօսութի՟ նորա, և ոչ ինչ նուազ զարմացան ընդ համճար նորա քան ընդ արուեստն[1]։ Իսկ 'ի շինուած հոյակապ մեհենին Դեմետրի և Պերսեփոնեայ յԻւղևսիս, զորմէ յետոյ ասասցուք, հաձնեցեալ առնել փոփոխութիւն՝ նմա յանձն արարին զգործն։

Կիկ. յղ. ճրտ. ա. Է։

Եկից անդրէն 'ի Պերիկղէս։ Յաւուրս երկար և պանծալի իշխանութե՟ նորա՝ ճոխացան Աթէնք մեհենօք և բազմակամարակապ գաւթօք և անդրեօք 'ի հիացումն ազգաց շուրջանակի, ոչ ինչ նուազ պայծառացեալ մեծագործ շինուածովքն քան պատերազմական արութե՟ք։ 'Ի հասանել Պերիկղեայ յիշխանութի՟ն, մթերեալ պահէին գանձք՝ որ յամ՟ քաղաքաց յունաստանի գային 'ի ռոճիկ զօրաց և 'ի կազմած նաւատորմի ընդդէմ Պարսից։ Խորհեցաւ նա, զի 'ի գանձուց անտի զաւելորդն քան զպիտոյս ամրութե՟ քաղաքին չմարթէր յօգտակարագոյն ինչ 'ի կիր արկանել՝ քան 'ի յօրինուած և 'ի պայծառութի՟ քաղաքին, որ փառքն էր և պատսպարան այլոցն ամենեցուն։

Պղուտ. 'ի Պերիկղ. 158։

Արդ ես ոչ դատիմ՝ թէ յիրաւի կամ անիրաւ գործեայ Պերիկղէս, զի համարեցաւ իսկ նմա գործն 'ի յանցանս. և թէ արդեօք ըստ կամա՞ց տուողացն զհասարակաց գանձուն ծախէր. զի զայսմանէ այլուր ասացաք զինչ դատաստան արժան իցէ առնել։ Իսկ աստանօր տես ինձ, զի այր մի եռանդն ած ա՟մ արուեստից յԱթէնս, և զձեռն աջող ոչ եթող դատարկ, և այնքան նախանձ էարկ 'ի Ճարտարս ազգի ազգի արուեստիցն, զի 'ի հակառակ միտեալ միմեանց, և ուշ եդեալ յանմահ յիշատակ, ճգնէին յիւրաքանչիւր աւանդեալ գործն գերազանցել քան զշուք օրինակին գեղով և վայելչութ՟բ գործոյն։ Մի մի յայնցանէ թուէին վաստակք բազմամեայք և յոլովից Ճարտարապետաց յաջորդելոց գործ. սակայն ա՟մն առ իշխանութ՟բ միոյ ուրուք զարմանալի ի՟մն առին զկատարումն, և 'ի սուղ ժամանակի, քան որ առ այնպիսի դըժուարին վաստակոյն խնդրէր։ Եւ այլ յարգ դաստակերտիցն Պերիկղեայ, զոր այլուր 'ի հարևանցի ասացաք, և աստ 'ի Պլուտարքեայ առեալ ճշգրտագոյն գրեմք, իցէ թէ և նովին ազդոյ զօրութ՟բ։ Զի որ ինչ դիւրաւն և փութանակի գործին՝ դիւրեղծ է և վաղանցուկ ունին զշնորհսն, և ոչ լի զգեղեցկութ՟ին. այլ ժամանակ ընդ աշխատութ՟ե կցորդեալ՝ զտոկոսիս յապաղմանն հատուցանէ, և տայ գործոյն տևող զօրութ՟ի յաղթական դարուց։ Նմին իրի շինուածք Պերիկղեայ առաւել են զարմանալի, զի երագ կատարեալ և այսքան երկարատևք եղեն։ Զի անդէն 'ի ժամանակի շինութ՟են՝ վաղեմիք վայելչութ՟բն թուէին. և արդ իսկ, ասէ Պլուտարքոս, յետ ամաց իբր վեցհարիւրոց, դեռ ևս առոյգ թուին՝ որպէս այն ինչ կառուցեալ. զի զգեղ նորագործ վայելչութ՟են պահեն անվթար յեղծուածոյ ժամանակի, որպէս զօրութ՟ի իմն մշտանորոգ մանկութ՟ե և ոգի անծերանալի բերելով յինքեանս։

---

[1] Ոչ վայրապար պանծան Աթէնք ընդ զինարանն. զի և մեծածախ և վեհ յօրինուածոյն արժանի տեսանելոյ է։ Իսկ ճարտարապետ շինուածոյն Փիլոն այնու պերճախօսութե՟ ետ զհամարն յատենի, որպէս յայտ է, զի աթենացիք պերճախօսք ոչ ինչ նուազ զճարտարխօսութի՟ նորա քան զարուեստն գովեցին։ Վալ. Մաք. Ը. ԺԲ։

Եւ ապա 'ի համար արկեալ թուէ Պլուտարքոս մեհեանս բազումս և հոյակապ շինուածս, ձեռակերտս քաջահմուտ Ճարտարաց։ Յորոց Փիդիաս վերակացու եկաց շինուածոցն Պերիկղեայ, անուանին 'ի Ճարտարապետս ժամանակին, և վեհագոյն քանդակիչն և անդրիագործ. զորմէ ընդ հուպ 'ի Ճառս քանդակագործութ՟ե ասասցուք։

Գ· ՎԱՍՆ ՇԻՐՄԻՆ ՄԱՒՍՈԼԵԱՑ

Շիրիմ̃ հոյակապ, զոր կանգնեաց Արտեմիս առն իւրում Մաւսոլեայ արքային Կարիոյ, մի է 'ի հռչակաւոր շինուածոց՝ որ 'ի վաղ ժամանակս կառուցան, և ընդ եօթն հրաշակերտսն համարեալ ։ Պլինեայ որ ինչ զայսմանէ ասացեալ է, ածցուք ստորև 'ի Ճառս քանդակագործութեան ։

Դ· ՎԱՍՆ ՔԱՂԱՔԻՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԵԱՑ ԵՒ ԼԱՊՏԵՐԻՆ

Որպէս ամ̃ ինչ Աղեքսանդրի մեծամեծք են կամ ազնիւք կամ նորանշանք, այսպէս և քաղաքն՝ զոր յիւր անուն կառոյց յԵգիպտոս, 'ի ձեռն Դինոկրատայ ճարտարապետի ։ Զսմանէ զարմանալի ինչ պատմի․ զի էր սա մակեդոնացի, և յուսացեալ 'ի հանճար և 'ի մեծախոհութ̃ իւր՝ ել յաշխարհէն գնալ 'ի բանակն Աղեքսանդրի․ ընդելանէր յարել 'ի նա, և խորհուրդս հաճոյս առաջի առնել նմա ։ Առ և թուղթս ընծայութե̃ յազգականաց իւրոց և 'ի բարեկամաց առ մեծամեծս և առ գըլխաւորս աւագանւոյն, վասն դիւրամատոյց լինելոյ առ թագաւորն ։ Այլ 'ի յապաղել նոցա օր ըստ օրէ պատճառանօք պարապ գտանելոյ, անգոսնեալ զնոսա վասն դանդաղանացն՝ խորհուրդ կալաւ ինքնին յանդիման լինել արքային ։ Եւ էր նա յաղթահասակ, հաճոյ տեսլեամբ, և բարեհամբոյր․ և յուսացեալ 'ի կերպարանս իւր, փոխեաց զհանդերձսն, օծաւ իւղով, և պսակեալ սօսւով, և զահեակ ուսովն արկեալ զմորթ առիւծու, և լախտ 'ի ձեռին, մատեաւ 'ի գահոյս՝ յորում թագաւորն բազմեալ դատաստան առնէր ։ Նոր տեսիլն փարատեցոյց զամբոխն․ և թագաւորին տեսեալ զնա՝ զարմացաւ, և կոչեցեալ զնա առ ինքն, եհարց՝ թէ դու ո՞վ ես ։ Եւ նա ասէ․ Դինոկրատ ճարտարապետ մակեդոնացի, զամ̃ առաջի առնել խորհուրդ՝ որ վայելէ մեծութե̃ արքայի․ Եւ յունկնդիր լինել նմա թագաւորին, խոստանայր կոփել զլեառնն Աթոս հսկայաձև, 'ի ձախոյ ձեռին շինել քաղաք մեծ, և յաջում̃ բաժակ՝ ընդ որ իջանիցեն գետք 'ի լեռնէ անտի անկանել 'ի ծով ։ Հաճոյ թուեցաւ Աղեքսանդրի անճոռնի խորհուրդն․ եհարց զնա և ասէ․ Իսկ իցե̃ն անդաստանք զքաղաքաւն՝ տալ նմա ցորեան 'ի կերակուր ։ Դինոկրատ ասէ ․ Ոչ, այլ ընդ ծով հարկ է ածել ցորեան ։ Յայնժամ ասէ Թագաւորն ․ Քաջ է խորհուրդդ, այլ տեղին տարադէպ ։ Նա կալաւ զնա առ իւր, զի ասէր՝ թէ ճարտարութ̅եդ քով լիցիս ինձ յայլ գործ պիտանի ։ Որպէս և եղև իսկ ․ զի իբրև չու առնէր Աղեքսանդր յԵգիպտոս, տեսեալ անդ ուրեք նաւահանգիստ ապահով և դիւրամատոյց, և շուրջ զնովաւ անդաստանս բերրիս ՚ի դիպող տեղւոջ մերձ ՚ի Նեղոս, հրամայեաց Դինոկրատայ շինել անդ քաղաք, որ և կոչեցաւ յանուն նորա Աղեքսանդրիա ։ Ճարտարապետին քաջութ̅ի արուեստագիտութ̅են և առատութ̅ի Թագաւորին ՚ի հակառակ մնեալ ՚ի պայծառութ̅ի քաղաքին, զն̅մ ձիգն գործեցին առ ՚ի դասել զայն ընդ մեծակաւոյց Ստրաբ. ժէ. 791. հրաշակերտ քաղաքս աշխարհի ։ Նա էր քաղաքն պատեալ ընդարձակ պարսպաւ, խիտ առ խիտ ամրացեալ աշտարակօք ․ և նաւահանգիստ ՚ի նմա, և ջրմուղք և աղբերք, առուք զուարճալիք, տունք ՚ի բնակութ̅ի անհամարք, հրապարակք և շինուածք հոյակապք, կրկեսք և տեսարանք, մեհեանք և պալատք մեծաշէնք բազում յոյժ՝ իբր երիր մասն քաղաքին ։ Նա եղև Աղեքսանդրիա միջակէտ վաճառականութ̅ե արևելից և արևմտից, որպէս այլուր ասացաք ։

Յետ սակաւ ժամանակի մերձ ՚ի քաղաքն յայն կառուցեալ շինուած երևելի, առաւել հռչակեցոյց զհամբաւ նորա ․ և շինուածն էր լապտեր կղզւոյն Փարոսի ։ Կանգնեցին ՚ի նաւահանգստի աշտարակք ՚ի պահ ամրութ̅ե, և լուսատու նաւարկելոց գիշերայն ընդ ծով, զի հուր վառէր ՚ի նմա ։ Աշտարակքն այն էին ՚ի սկզբան վարկպարազի շինուածք ․ Եղբայրասէրն Պտղոմէոս կառոյց նախ ՚ի Փարոս կղզւոջ հոյակապ և մեծակառոյց, Ստրաբ. անդ ։ որ յոմանց ընդ եօթանեսին հրաշակերտս իսկ համարի ․ Պլին. լզ. ժբ. և ծախեաց ՚ի շինուած նորա ութ հարիւր քանքար ։

Նա էր կղզին այն հեռի ՚ի ցամաքէ եօթն ասպարիզաւ, և ՚ի նմա հրուանդան կամ ժայռ՝ յոր ալիքն խորտակէին ։ ՚Ի վերայ նորա ետ Պտղոմէոս կառուցանել զաշտարակն ՚ի սպիտակ կճոյ հրաշակերտ, բազմայարկ կամարակապ, նմանեալ որ ՚ի Բաբելոն ությարկեան աշտարակին ։ Ճարտարապետ շինուածոյն կացեալ Սօստրատ անուանի, արձանագիր ՚ի վերայ աշտարակին եդ․ ՍՈՍՏՐԱՏ ԿՆԻԴԱՑԻ ԴԵՔՍԻՓԱՆԵԱՑ ՈՐԴԻ․ ԴԻՑՆ ՊԱՀՊԱՆԱՑ ՎԱՍՆ ՆԱՒՈՐԴԱՑ ։ Գտցեն խնդրողք յաղագս արձանագրիս ՚ի պատմութ̅ե եղբայրասիրին ասացեալ ։

Ոմն 'ի մատենագրաց, յառաջ քան զամս իբր վեցհարիւր, վասն աշտարակին Փարոսի ասէ՝ թէ ցաւուրս իւր կայր. և համարի յերեքհարիւր կանգնոյ զբարձրութիւն նորա։ 'Ի ձեռագիր մատենի մեկնութեան գրոցն Պուկլիանոսի, զոր Իսահակ Սոփոս յիշատակէ, մեծութիւն աշտարակին Փարոսի ոչ ինչ ընդհատ 'ի բրգանցն Եգիպտոսի աւանդի. և թէ էր այն քառակուսի, և կողմանք իւրաքանչիւր իբր ասպարիզաւ յերկայնութիւն. և զի 'ի գագաթանէ նորա նշմարէր ցհարիւր մղոն հեռի։ Աւէտարհագ. Նոր։ Պամպ. Մեւ. 205։

Յետ սակաւ ժամանակի աշտարակն այն յանուն կղզւոյն Փարոս կոչեցաւ, յորմէ և այլ աշտարակք նաւահանգստից։ Իսկ ապա կղզին, ուր էր աշտարակն կառուցեալ, եղև ցամաք կղզի. զի դշխոյն Կղէոպատրա կցորդեաց զայն ընդ ցամաքի, թումբ կանգնեալ, և անտի 'ի կղզին կամուրջ արկեալ։ Իսկ կենցաղօգուտ գործոյն Ճարտարապետ կացուցեալ զԴեքսիփան կիպրացի, ետ նմա 'ի վարձ իշխանութիւն մեծ, և 'ի վերայ այլ շինուածոց իւրոց եդ զնա։ Այլ կեսք զՊտղոմեայ եղբայրասիրէ զայսօսիկ պատմեն։

Ահա երևի բազում իրօք, եթէ զիարդ Ճարտարապետք քաջք պատուեալ մեծարէին առ հինս։ Օր և հռոդացիք Դիոգնեայ քաղաքակցին իւրեանց ռոճիկ և դարման կարգեցին փոխանակ կազմածոց մեքենայիցն պատերազմի՝ զորս ճարտարեաց։ Իսկ Կաղիաս Ճարտարապետ տարաշխարհիկ եկեալ 'ի Հռոդոս, և փոքու կազմածով փորձ փորձեալ, խոստանայր բառնալ մեծագունիւն զայլ բեռինս ծանունս, և յաղթել այլ մեքենագործաց։ Իսկ Դիոգնեայ անհնարին զիրսն վարկուցեալ, համարձակ խոստովան եղև զտգիտութիւն։ Վասն որոյ հռոդացւոց բարձեալ 'ի նմանէ զռոճիկն՝ ետուն Կաղիասայ, Ճարտարապետոյն զնա համարեալ։ Այլ իբրև Դեմետր Պաշարիչն մատուցանէր 'ի պարիսպն Հռոդոսի զքաղաքաւէր կազմածն ահաւոր՝ 'ի պաշարել զքաղաքն, և կոչեցին քաղաքացիքն զԿաղիաս 'ի գործ արկանել զիւր կազմածն, նա անբաւական 'ի բարձումն ահագին բեռինն ասաց լինել զայն. և հռոդացւոց 'ի միտ առեալ զմեղանսն ծանունս ապաշնորհ ապերախտութեան՝ զոր ընդ քաղաքայնոյն իւրեանց արարին, եկեալ աղաչէին զնա մեծաւ թախանձանօք օգնել հայրենեացն 'ի կարևոր վտանգին։ Նա զառաջինն մերժեաց զնոսա՝ կացեալ անողոքելի. այլ իբրև քուրմքն ևս հանդերձ ազատագունդ մանկտւովն եկին արտասուօք աղերսել զնա յօգնութիւն, զիջաւ յողորմ Վիտրուվ. Ժ. ԺԶ։

տեսիլն ։ Այլ դիւրին իմն եգիտ հնարս, զի մի զսատակչական կազմածն հուպ 'ի պարիսպսն մատուցեն թշնամիք ․ քանզի ետ ողողանել զերկիրն՝ ընդ որ հարկ էր նոցա ածել զկազմածն, և անպիտան արար զայն ։ Այլ հարկ եղև Դեմետրի բառնալ զպաշարումն և խօսել ընդ հռոդացիս 'ի խաղաղուե̃ ․ Այլ փառաւորեցաւ Դիոգնէս, և յաւելաւ նմա ռոճիկ կրկին 'ի քաղաքայնոցն ։

Ե․ ՅԱՂԱԳՍ ՉՈՐԻՑ ԱԿԱՆԱՒՈՐ ՄԵՀԵՆԱՑՆ ԵԼԼԱԴԱՑ

Է. յառաջ ։ 'Ի բազում մեհեանս յունաստանի էին չորք, այս է Վիտրովիոս, վիմարդեայք, գերազարդք, զարմանալիք արուեստագիտացն, և իբր կանոնք և նախատիպք երից Ճարտարապետական կարգացն ։ Մի 'ի նոցանէ մեհեանն Արտեմեայ դիցն յԷփեսոս, միւսն Ապողոնին 'ի Միլետոս, երկաքանչիւրն յոնիական կարգաւ Ճարտարապետեալ ․ երրորդ Դեմետրեայն և Պերսեփոնեայ յԷլեւսիս, զոր Իկտինոս դորականաւն կառոյց կարգաւ, լայն և ընդարձակ՝ որ տանէր երիս բիւրս մարդկան, զի առաւել ևս բազմուե̃ տանէր 'ի քաղաքաժողով Թափօր Ելեւսինեան տօնիցն ։ 'Ի բակ մեհենին ոչ գոյին սիւնք 'ի սկզբանէ, վասն ընդարձակի զոհիցն ․ բայց Փիլոն յաւուրս իշխանուԹե̃ Դեմետրի փաղերացւոյ յԱթէնս, յաւել կանգնեաց սիւնս զառաջեաւ մեհենին 'ի շուք շինուածոյն ։ Իսկ չորրորդն՝ ողիմպեանն Արամազդայ յԱթէնս, կորնթեան կարգաւ Ճարտարապետեալ ։ Պիսիստրատ զհիմն նորա արկ ․ այլ 'ի մեռանել նորա դատարկացաւ գործ շինուածոյն վասն խռովուԹե̃ց աշխարհին ։

Երոդ. Ը. ԿԵ ։
Ստրաբ. Թ.
395 ։

Վիտր. առջ ։
Լիւ. ԽԱ. Ի ։

Ապա յետ ամաց աւելի քան երեքարիւրոց՝ Անտիոքոս Եպիփան արքայ Ասորւոց յանձն էառ կատարել 'ի գանձուց իւրոց զխմբարան մեհենին մեծ յոյժ, և զսիւնս գաւթին կանգնել ․ և կացոյց Ճարտարապետ գործոյն մեծի զԿոսսուտիոս հռոմայեցի զականաւորն ․ որ և փառաւորեցաւ յոյժ, զի մեծագործուե̃ այնր մեհենի սակաւք հաւասարեցին ։ Սա յառաջնոցն գտաւ 'ի հռոմայեցիս՝ որք յունական կարգաւ շինուածս Ճարտարապետեցին ։

'Ի դէպ իսկ է, և ոչ օտար 'ի մերմէ առաջարկուԹե̃ս, ասել աստ և զշինուածոց ինչ Հռոմայ ․ քանզի բազումք յայնցանէ 'ի Յունաց Ճարտարապետեցան ։

Դ· ՈՐ ԻՆՉ 'Ի ՀՌՈՄ ԵՐԵՒԵԼԻ ՇԻՆՈՒԱԾՔ

Եթէ արդարեւ անկցորդք էին ետրուրացիքն ընդ Յոյնս 'ի հնարել իւրեանց զկարգն՝ որ ցարդ յանուն աշխարհին նոցա կոչի տոսկեան, ճարտարապետութիւն ոչ ինչ անագանեալ գտանի յԻտալիա քան 'ի յունաստան։ Շիրիմն, զոր Պորսեննա արքայ Ետրուրիոյ կանգնեաց իւր հուպ 'ի Կղուսիոն, վկայէ՝ զի էին անդ յայնժամ հմուտք արուեստին։ Եւ շիրիմն էր գործ քարկոփ բաւղակաձեւ շինեալ, ըստ բաւղին՝ զոր Տետաղոս կառոյց 'ի Կրետէ, եթէ իցէ ճշգրիտ նկարագրեալն Վարրոնի՝ զոր ածէ Պլինիոս։

Տարկուինիոս երէց, փոքր ինչ յառաջ քան զնա, կառոյց 'ի Հռոմ շինուածս մեծամեծս. զի սա նախ քարորմով զՀռոմ պարսպեաց. և ինքն զհիմունս մեհենին կապիտոլեանն Արամազդայ արկ, զոր թոռն նորա Տարկուինիոս Գոռոզն կատարեաց յոլով գանձիւք, գործաւորս ճարտարս յԵտրուրիոյ ածեալ։ Եւ ոչ հռոմայեցիք 'ի բաց կային յաշխատութենէն. զի թէպէտ և[1] ծանր և տաժանաւոր էր նոցա գործն 'ի ժամանակի պատերազմի, այլ թեթեւ թուէր նոցա, զի ուրախ լինէին՝ պարծանս համարեալ վաստակել 'ի կառուցումն մեհենաց դիցն։

Նոյն ինքն Տարկուինիոս արար և այլ երկուս շինուածս[2]. որք թէպէտ անշուք թուին, այլ աշխատելիս և բազմածախք էին. որոց, ասէ Լիւիոս, մեծագործութեան հանդերձ ժմ արդի կատարելութիւն հաւասարել ոչ կարաց։

Մի 'ի շինուածոց անտի են գետնափոր առուք աղբանոցացն, լուալիք ժահից և աղտեղութեանց քաղաքին. զի և մասն շինուածոյն՝ որ կայ ցարդ՝ յոյժ զարմանալի է մեծագործութեամբ, և ծախիւք անբաւ գանձուցն կարեւորաց այնմ։ Զի կամարակապքն այն՝ որ 'ի ծայրից քաղաքին ածեալ ձգէին մինչև 'ի Տիբեր՝ եթէ ոչ կարի ստուարք և ամուրք էին, ոչ կային անսասան զայնչափ դարս ընդ անհեթեթ բեւամբք լայնատարր փողոցացն Հռոմայ, ընդ որս սայլք ծանրաբեռնք աղխաղխեալք երթեւեկէին անդադար։

---

[1] Ոչ թեթեւ վաստակ 'ի զինուորութեն յաւելեալ, սակայն ոչ ծանր թուէր ժողովրդեանն 'ի կառուցումն մեհենաց դիցն իւրովի վաստակել։ Լիւ. ա. ծզ։

[2] Որ յետ այնորիկ և 'ի գժուարագոյն գործս, որ նուաստքն թուին, վաստակեաց. փողոցս շուրջանակի գործեալ, և ական ստորերկրեայ ընդարձակ լուալիս ժահից քաղաքին։ Եւ երկուց այսոցիկ շինուածոց՝ արդի մեծագործութիւն չև ևս կարաց հաւասարել։

Պլին. լզ. ժ. Սկաւրոս 'ի շինապետութե՟ն իւրում 'ի Հռոմ, 'ի կազմած ամսօրեայ թատեր՝ արար երեքարիւր և վաթսուն սիւնս կճեայս, յորոց բազումք էին երեսուն և ութ ոտնաչափ 'ի բարձրութ՟ի։ Իսկ 'ի կատարել խաղուցն, առ 'ի փոխադրել զայնսիկ 'ի տուն իւր, ետ տոյժս վերակացուի լուալեացն, վասն ծանունց բեռանցն վնասակար լինելոյ 'ի կամարսն։ Արդ յաւուրց նախնոյն Տարկուինեայ՝ զամս իբր ութհարիւր՝ անսասան կայր շինուածն այն, և յայնժամ ուժգին դղրդմանն տոկաց անդրդուելի։

Առուքս այս օգնէին յոյժ 'ի մաքրութ՟ի տանց և փողոցաց, և 'ի ստածող անապականութ՟ի օդոց. զի ուղխ խառնեալ յեօթն վտակաց թողեալ անդր սուէպ, 'ի վայրկեան ժամանակի լուացեալ զա՟մ աղտեղութ՟ի՝ ընդ գետնափոր ականն ածեալ թափէր 'ի Տիբեր։

Այս վաստակք, թէպէտ և ծածկեալ ընդ երկրաւ անտես 'ի խաւարի, քան զհոյակապ ապարանս գովելի են արդարախոհացն։ Զի այնոքիկ վայելեն մեծութ՟ե թագաւորի՝ այլ ոչ ինչ պարծանք են նմա, ճարտարապետին ևեթ գոգցես յաճախեալ փառս. իսկ այսոքիկ զհանճարեղ ընտրութ՟ի նորա յայտ առնեն, զի ոչ շլացեալ 'ի մոտի պայծառութ՟է՝ յօգուտ աշխարհին և ոչ 'ի փառս իւր ջանի, յետնոցն ևս ցանկացեալ բարերարել՝ յաւէժ զվաստակսն թողլով. որ վայելչական թագաւորի փառաւորութ՟ին է։

'Ի հալածել Տարկուինեանց 'ի Հռոմայ, և 'ի բառնալ միահեծան տէրութ՟են, ժողովուրդն կալեալ անդրէն զիշխանութ՟ի՝ ջանայր ընդարձակել ևեթ զսահմանսն. և 'ի կցորդել հռոմայեցւոց ընդ Յոյնս՝ սկսան կառուցանել շինուածս ևս հոյակապս և պատշաճագոյնս։ Զի հռոմայեցիք զգեղակատարն ճարտարապետութ՟ի 'ի Յունաց ուսան. յառաջ քան զայն շինուածք նոցա ամրութ՟են ևեթ և յաղթ մեծութ՟են գովելիք էին, և յա՟մ

Պլին. լե. է. կարգաց տօսկեանն ևեթ ծանօթ էր նոցա։ Սպառսպուռ գոգցես տղէտք էին քանդակագործութ՟ե. և ոչ զկիճ 'ի գործ արկանէին, կամ զի չգիտէին յղկել զայն, և կոփել սիւնս և այլ քանդակս, որք պայծառութ՟են և ճարտար արուեստիւ ձոխ և պերճ յօրինեն զշինուածս։

Այլ 'ի բուն պայծառութ՟ին ածաւ ճարտարապետու-

թի՟ 'ի Հռոմ 'ի վերջին աւուրս հասարակապետութե՟ և առ ինքնակալօք, 'ի տիրել զեղխութե՟ ։ Յայնժամ կառուցան բազմութի՟ հոյակապ մեծակառոյց շինուածոյն, որ ցարդ ևս զարդք են Հռոմայ. ամենադիցն տաճարն, բաղանիքն, կրկէսն շուրջ տեսանելի՝ որ Կոլիսէոնն կոչեցաւ, ջրմուղքն, արահետքն և սիւնքն Տրայիանոսի և Անտոնինեայ ։ Կամուրջն ևեթ հոյակապ, զոր արկ Տրայիանոս զԴանուբ գետով, բաւական էր անմահ առնել զյիշատակ նորա ։ Խարիսխք քսան բառնային զկամարս նորա. միոյ միոյ վաթսուն ոտնաչափ էր թանձրութի՟, և Դիոն. կը.
հարիւր և յիսուն բարձրութի՟՝ առանց հիման. հարիւր և 776.
եօթանասուն ոտնաչափ հեռի էին 'ի միմեանց, որով գտանի լայնութի՟ գետոյն իննսունևհինգ ձողաչափ՝ ուր անձկագոյն հունն էր յա՟մ աշխարհին ։ Նմին իրի և սրընթաց էր յոյժ անդ և խորայատակ, դժուարայաղթ ճարտարութե՟ մարդկան. զի անհնարին իսկ էր թումբս ջրարգելս կանգնել 'ի հիմնարկութի՟ խարսխացն. վասն որոյ նիւթ բազում 'ի յատակ գետոյն խառն 'ի խուռն ամացեալ՝ լի արկին, կառուցանել 'ի նմա զխարիսխսն, և զա՟մ շինուածն ամբառնալ ։ Զկամուրջս զայս Տրայիանոս արկ ընդդէմ բարբարոսաց ։ Իսկ Ադրիանոս յաջորդ նորա 'ի հակառակէն զանգիտեալ՝ թէ գուցէ բարբարոսք արշաւեսցեն ընդ այն յերկիր իւր, փլոյց զկամուրջն ։ Ապողոդորայ դամասկացւոյ ճարտարապետեալ էր զայն, որ և այլ բազում շինուածս հրամանաւ Տրայիանոսի կառոյց. և զթշուառ վախճան մահու ընկալաւ ։

Զի Ադրիանոս ինքնակալ ետ կանգնել տաճար Հռո- Դիոն. կթ.
մայ և Աստղկան, և զպատկերս նոցա բազմեալս 'ի գա- 789.
հոյս աստ անդ զետեղել ։ Ինքն իսկ թերևս և զչափ և զօրինակ մեհենին ետ, զի յա՟մ արուեստս և 'ի գիտութի՟ս կամէր գերազանցել. և 'ի կատարել շինուածոյ մեհենին, յղեաց զձև նորա առ Ապողոդոր ։ Զի նա յառաջագոյն, մինչ հրամանաւ Տրայիանոսի շինուած կանգնէր, 'ի խորհրդակից լինել նմա Ադրիանոսի՝ մերժեաց զնա արհամարհանօք որպէս զտգէտ արուեստին ։ Նմին իրի Ադրիանոս առ 'ի կշտամբել զնա, և ցուցանել նմա՝ զի կարող էր առանց նորա քաջ ճարտարապետել, յղեաց առ նա զօրինակ մեհենին, պատուէր տուեալ ասել որ ինչ թուէրն նմա ։ Ապողոդոր զգաց զերգիծանսն, այլ անկեղծութե՟ իւրով գովեաց զգեղ զվայելչութի՟ և զմեծագործութի՟ շինուածոյն, յաւել. Իսկ զի հրաման է ինձ ասել զթուեցեալսն, ոչ լռեցից և զթերիսն. զի 'ի յոյն

յառնել զնոյն՝ Ջաղխեցի զլուխ նորա, վասն խորանի յարկից անհամեմատ խոնարհութ՟են ։ Յայնժամ ՚ի միտ առեալ ինքնակալին զմեծ և զանուղղելի վրիպակն, յոյժ տրտմեցաւ. բայց Ճարտարապետն մահուամբ ելոյծ զպատուհաս ազատ համարձակութ՟են, որ թերևս աւելի քան զդէպն խիստ էր և ոչ ըստ ակնածութ՟ե ։

Սուետ. ՚ի Նէ-րոն. լա ։ Ընդ մեծագործ շինուածս Հռոմայ ոչ ՚ի թիւ արկի զանուանեալ Ոսկեզօծ պալատն Ներոնի, որում թերևս չիք հաւասար ըստ ընդարձակութ՟են, և ըստ գեղեցկութ՟ե պարտիզացն, և անթիւ բազմակամարակապ վայելուչ գաւթացն, և մեծածախ յօրինուածոյն. ուր ոսկի և մարգարիտ և գոհար ակն, և որ ինչ ազնիւ և ցանկալի, ա՟մ ուրեք փողփողէին ։ Այլ խղճեմ անուանել մեծագործ զկառուցեալն յափշտակութ՟բք, և զծեփեալն արեամբ քաղաքացեացն. վասն որոյ ասէ զնմանէ Սուետոնիոս՝ շինուածքն վնասակարագոյն լեալ քան այլ ա՟մ իրք ։

Կիկ. պաշտօնց. բ. կ ։ Եթէ Կիկերոնի լուիցուք, կարի խիստ են զայսմանէ դատաստանք նորա. զի նա ՚ի հասարակաց ծախուց զօգտակարն և եթ համարի արժանի գովութ՟ե, որպէս զպարիսպս և զբերդս, զզինարանս, զնաւահանգիստս, զջրմուղս, զարահետս, և զհանգոյն սոցին շինուածս ։ Մ՟նչև զթատերսն իսկ եպերէ, և զկամարակապ ձեմելիս, և զնորակերտ մեհեանս. և զՊերիկղէս դատապարտ առնէ վասն առաւելազանց ծախուցն յայնպիսի շինուածս ։

Կիկ. պաշտօ-նից. ա. ճլթ ։ Նոյն ինքն և խրատս հանճարեղս տայ վասն տանց. զի որպէս յա՟մի՝ և ՚ի մասինս յայսմիկ խտիր է ընդ իշխանին և ընդ ռամիկ ։ Աւագանին, ասէ, բնակեսցէ յապարանս պատուով[1] առ ՚ի շուք իշխանութ՟են. այլ մի քաջութ՟ի նորա ՚ի փառս ապարանիցն սահմանեսցի ։ Մի տուն զտանուտէրն, այլ տանուտէր զտունն փառաւոր արասցէ ։ Եւ խրատէ զմեծամեծս՝ որ շինիցեն ապարանս, մի շռայլել ՚ի մեծագործութ՟ի՝ յօրինակ չար և ապականիչ քաղաքայնոցն. քանզի հնարին բազումք և փառասիրեն հաւասարել իշխանաց, և գերազանցել ևս ։ Յաճախութ՟ի ապարանից համարին քաղաքաց ՚ի փառս, այլ եթէ քաջ միտ դնիցեմք՝ եպերելի իսկ են. զի զեղծուցանեն զքաղաքացիս, ստիպեալ զնոսա հանապաղ 'ի զեղխութիւն և 'ի պերճութիւն մեծագին կահից և երևելի սպասուց՝ որ հոյակապ ապարանիցն պիտին, և կործանեն զազգատոհմս բազումս :

---

[1] Շուք առնէ իշխանութ՟ն տունն, և մի տունն խնդրեսցի իշխանութ՟ն. մի տուն զտանուտէրն, այլ տանուտէր զտունն պատուեսցէ... Զգոյշ լեր, մանաւանդ եթէ քեզէն շինիցես տուն, մի շռայլել ՚ի ծախս և ՚ի մեծագործութ՟ն. զի յոլով են յօրինակէ այսի չարիք ։ Քանզի բազումք, մանաւանդ ՚ի մասինս յայսմիկ, ջանան նմանող լինել իշխանաց ։

Կատոն 'ի գիրս գեղջկիցն կենաց՝ ընծայէ խրատ հանճարեղ. քաջ խորհել 'ի շինելն զտուն, և դուն ուրեք ձեռն 'ի գործ առնել. այլ 'ի տնկելն փութալ անյապաղ 'ի գործ [1] ,

Ի շինուածս՝ խնամոց զգուշութեան պետք են : Յառաջին ժամանակս, ասէ Վիտրուվիոս, խիստ և արդար օրէնք էին Ճարտարապետաց յԵփեսոս, 'ի հիմնարկել զշինուածս հասարակաց՝ ցուցանել յառաջագոյն զծախսն, և ըստ նմին սակի կատարել զշինուածն՝ յընչից իւրեանց, և ապա 'ի կատարել շինուածոյն առնուլ զվարձս. որով փառաւորէին առաջի ամենեցուն, եթէ ըստ սակին համեմատէին ծախքն : Իսկ եթէ չորրորդ մասամբ ևս քան զսակարկեալն յաւելուին ծախք, 'ի հասարակաց գանձուց լնոյր յաւելուածն. ապա եթէ աւելի ևս, Ճարտարապետն տուժէր „ : Իսկ յաւելու Վիտրուվիոս. Ո՜ տայր թէ օրէնքս այս կային և 'ի Հռոմ 'ի շինուածս հասարակաց և իւրաքանչիւրոց. զի սակաւուց յայնժամ հասանէր կործանումն : Վիտրուվիոս. Ժ:

Հանճարեղ իմաստ, յորում տեսանի գերապանծ նկարագիր Վիտրուվեայ և ուղղութիւն նորա, որ յամենայն իսկ գլխոյն փայլէ ակներև, ոչ ինչ նուազ քան զքաջ հմտութիւն յաճախելովն նմա փառս : Իսկ ինքն առանց ամենայն զօշաքաղութեան Ճարտարապետէր ազնուական մեծախոհութեամբ, որպիսիք սակաւք են յոյժ յարուեստագիտացն [2] : Ոչ 'ի շահ արծաթոյ, այլ վասն քաջ անուան վաստակէր. յուսուցչացն խրատեալ, որպէս ասէ իսկ ինքն, թէ պարտ է Ճարտարապետին հրաւիրիլ 'ի գործ. և չէ մարթ նմա առանց ամօթոյ խնդրել զայն՝ որով շահասիրութեան տայ կարծիս. զի ոչ ընկալուչք պարգևաց, այլ պարգևիչքն խնդրին : Դարձեալ և այնչափ բազում հմտութիւնս խնդրէ 'ի Ճար- ա. Է.

---

[1] Յերկար խորհել, և ապա արժան է ձեռնարկել 'ի շինուած. իսկ 'ի տնկելն՝ պարտ է փութալ 'ի գործ :

[2] Այլ ես, Կեսար, ոչ ինչս ջանացայ մթերել արուեստիւս, այլ ընտրեցի զաղքատութիւն հանդերձ բարի անուամբ՝ քան զմեծութիւն չարահամբաւութեամբ : Այլք 'ի Ճարտարապետաց խնդրեն և ցանկան Ճարտարապետել. այլ ես 'ի վարժապետաց իմոց ուսայ, զի ոչ աղաչել՝ այլ վասն աղաչանաց պարտ է յանձն առնուլ զհոգն. զի յամօթոյ կեղակարծ խնդրուածոյն՝ ազնիւ երփնն հարկանիցի : Քանզի պարգևիչք և ոչ պարգևաց ընդունողք խնդրին : Վիտրուվ:

տարապետէն, որ զարմանալի իմն թուի։ Նախ զի իցէ հանճարեղ և վաստակասէր. զի ոչ հանճար առանց վաստակոց, և ոչ վաստակք առանց հանճարոյ կատարեն քաջ արուեստագէտս։ Կարեւոր համարի նմա գիտել զձեւագրութիւն, գոլ հմուտ յերկրաչափութիւն, տեղեակ տեսաբանութեան, վարժ 'ի թուաբանութիւն, ներհուն յիմաստասիրութիւն, խելամուտ պատմութեան, և երաժշտութեան մի՛ անտեղեակ, և բժշկութեան և օրէնսգիտութեան և աստեղաբաշխութեան ունել փոքր 'ի շատէ գիտութիւն։ Եւ ապա ցուցանէ մի ըստ միոջէ յոր ինչ գիտութիւնքն այն պիտանի են ճարտարապետին։ Եւ հասեալ յիմաստասիրութիւն, բաց 'ի բնաբանականացն բազմադէմ հմտութեանց՝ որ կարեւոր են արուեստին՝ նկատէ զայն և ըստ բարոյականի մասին, և ասէ. Եւ վարժք իմաստասիրութեան օգնեն 'ի կատարել զճարտարապետն. զի պարտ է նմա լինել մեծախոհ և արի՝ առանց յանդգնութեան, արդար և հաւատարիմ, և մեկնեալ յամենայն ագահութենէ. զի առանց հաւատարմութեան և լաւութեան ոչ ինչ գործ բարւոք գործի։ Ապա զգոյշ լիցի 'ի զօշաքաղութենէ, և քան զմեծութիւնս՝ խնդրեսցէ զպատիւ և զանուն բարի, ոչ ինչ դժպատեհ պատուական արուեստին գործելով, որպէս խրատէ իմաստասիրութիւն։

Ոչ 'ի միտս եկն Վիտրովեայ ճարտարխօսութեան եւս կարեւորութիւն, ուրով մարթի 'ի բազում դէպս պաշտպանել ճարտարապետին. որպէս է տեսանել զայս 'ի հանճարաբանութեանն, զոր աւանդէ Պլուտարքոս։ Զի 'ի խորհել աթենացւոց շինուած մեծ կառուցանել, ճարտարապետք երկու յանդիման եղեն ժողովրդեան՝ յանձն առնուլ զգործն։ Մին անհմուտ արուեստին, այլ ճարտարախօս, ճառում բանիւք եցոյց զօրինակ շինուածոյն՝ զոր 'ի մտի ունէր, և կախարդեալ շլացոյց զամենայն ատեանն։ Իսկ միւսն ճարտարապետ քաջ, այլ նիւաղ 'ի ճարտարախօսութենէ, ասէ. Արք աթենացիք, նա ճարտար խօսեցաւ, իսկ ես ճարտարապետեցից [1]։

Օրէնք. հասարակ. 802։

Սուղ ինչ նկարագրաւս հմտութեան և բարուց այնորիկ, որ յամենեցունց յարուեստագիտացն վկայեալ՝ անուանի 'ի ճարտարապետս եկաց վարդապետութեամբ և գործով, 'ի դէպ վարկայ զճառս ճարտարապետութեան վախճանել։

---

[1] Արք աթենացիք, որպէս սա ճառեաց՝ ես արարից։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՅԱՂԱԳՍ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Յաղագս ազգի ազգի քանդակաց ։

Քանդակագործութիւն ձեւագրութեամբ և հաստատուն նիւթով զզգալեացս էից տայ զնմանութիւն ։ Այս նիւթք են փայտ, քար, կիճ, փղոսկր, ազգ ազգ հրահալելեաց՝ ոսկի արծաթ պղինձ և այլն, և գոհար ականք՝ ակատ այլովքն հանդերձ. և քանդակին բարձր կամ 'ի խոր ։ Ձուլագործութիւն ևս մասն է քանդակագործութեան, և է կրկին. կաղմել տիպս նմանութեան 'ի մոմոյ, և ձուլել զնոյնս յամենայն ազգի ազգի հրահալից ։ Արդ զայս ամենայն ընդ քանդակագործութեամբ իմանամք ։

Քանդակագործաց բազում վէճք եղեն ընդ նկարչաց վասն նախապատուութեան. նոցա տեւականութեամբ պանծացեալ, սոցա գեղոցն խառնութեամբ ճշգրտատիպ երանգովքն ։ Արդ թողեալ զվէճս զայս դժուարալոյծ, համարիմ զքանդակ և զնկար հարազատ քորս, և զպարծանս նոցա հասարակաց, և զերկոսին որպէս նոյն և մի արուեստ, որոց ողի և կանոն ձեւագրութիւն է, թէպէտ և նիւթն այլ, և այլազգ վաստակն ։

Դժուարին է, և ոչ կարեւոր ինչ, հետազօտել ընդ խաւար վաղեմի դարուց՝ թէ ո՞յք գտիչք եղեն քանդակագործութեան ։ Այլ հասակակից իսկ է սա աշխարհի. և եթէ օրէն իցէ ասել, ինքն արարիչն եղև հայր անդրիագործաց. որ 'ի ստեղծանել զեղեալս ամենայն՝ ապա զմարմին մարդոյն խնամով ևս կերպարանէր, յօժարագոյն գոգցես 'ի գեղ և 'ի լրութիւն նորին աշխատեալ ։

Յայնժամ զգլուխ գործոց ամենազօր ձեռինն աւարտեալ, ապա յետ ժամանակաց հաճեցաւ 'ի քանդակագործաց յաւէտ իմն սպասաւորել 'ի կազմած տապանակի ուխտին, զորոյ ինքն ետ զօրինակն Մովսէսի. Ահա դարձեալ աստանօր երկրորդեմ, որ ինչ զսքանչելարուեստ ճարտարապետէն՝ զոր ընտրեացն՝ ասէ. “ Ահաւադիկ յանուանէ կոչեցեալ է իմ զԲեսելիէլ. և լցուցից զնա ամենայն հոգւով իմաստութեան և հանճարոյ, և գիտութեան

Ելից. լա.

ա̃մ գործոյ խելամուտ լինել և ճարտարապետել. գործել զոսկին և զարծաթ և զպղինձ. զկապուտակն և զծիրանին և զկարմիրն մանեալ, և զականակապն 'ի լրութ̃ի գործոյն. և զհիւսնութ̃ի փայտից, գործել ըստ ա̃մ գործոյ ": Թուի ինձ թէ զՄովսէս խօսիցի, զազդելոյ 'ի նա զօրէնսն վասն ժողովրդեանն: Հանգոյն այսմ և զգործաւորաց շինուածոյ տաճարին Երուսաղեմի և զքանդակագործաց նորա խօսի:

Զինչ քան զայսպիսի ազնիւ պաշտօն՝ յոր սահմանեցաւն քանդակագործութ̃ի՝ պանծալի էր նմա, եթէ հաւատարմութ̃ք պաշտէր զայն. այլ նա վաղագոյն յոյժ քան զշինուած տաճարին և զտապանակի ուխտին՝ 'ի պաշտօն կռոցն նուիրեցաւ, և ելից զտիեզերս դրօշելովք դից յերկրպագութ̃ի ազգաց: Զի, որպէս գիրք ասեն, 'ի յաճախութ̃ի ամպարիշտ պաշտամանն օգնեաց յոյժ և ճարտարացն արուեստգիտութ̃ի. զի տեսիլ հրաշակերտ գործածոցն զօշոտեալ զաչս տեսողաց՝ կախարդէր զմիտս, և լինէր բազմութ̃են 'ի դարանակալութ̃ի և 'ի գայթակղութ̃ի:

Թուղթ Երեմ: 'Ի համաշխարհական մոլորութ̃է աստի զգուշացուցանէ Երեմիա զՀրեայս, յասելն. "Տեսանիցիք դուք յերկրին բաբելացւոց՝ դիս արծաթեղէնս, ոսկեղէնս, փայտեղէնս և քարեղէնս, 'ի վերայ ուսոց իւրեանց բարձեալ բերիցեն՝ ահս արկանել հեթանոսաց. զգոյշ լինիջիք, գուցէ և դուք նմանիցիք այլազգեացն՝ երկնչել 'ի նոցանէ: Իբրև տեսանէք ամբոխ բազում յայս կոյս յայն կոյս՝ զի խաղայցեն և երկիր պագանիցեն նոցա յետուստ և յառաջուստ, բայց դուք միայն զայս եդեալ ունիցիք 'ի մտի, (զի յերկրի գերութ̃ե՝ յոր պանդխտեալն էին՝ չկարէին ասել զայն համարձակ, այլ 'ի մտի), եթէ քեզ միայն տէր պարտ է երկիր պագանել, որ արարիչդ ես ամենայնի ":

Ապաքէն քանդակագործութ̃ի ոչ ինչ նուազ և 'ի զեղծումն բարուց հրապուրիչ գտաւ՝ մերկանդամ պատկերօքն և ծանակ տեսլեամբք, որպէս հեթանոսք իսկ վկայեն: Զայս կանխեալ ազդ առնեմք, զի գիտասցեն ընթերցողք՝ թէ զազնուութ̃ի արուեստին գովեմք, և ոչ զխառնավար զեղծումն նորա:

Պլին. լԶ. ծԲ: Քանդակագործք 'ի սկզբան 'ի կաւոյ գործէին անդրիս, և զի ձուլածոյից ևս՝ կաղապարս և նախատիպս կաւակերտս առնէին, նմին իրի Պրաքսիտեղէս անդրիագործ զձուլածոյս զդրօշեալս և զքանդակս առ հասարակ

ԱՄ ԱՌ․ 'ի կաւեղէն ստեղծուածոց ծնեալս ասէր ։ Պատմեն՝ Դեմարատայ հօր նախնոյն Տարկուինեայ 'ի փախչել իւրում 'ի Կորնթոսէ յԵտրուրիա՝ ածեալ ընդ իւր բազմութ՟ն ճարտարաց անդրիագործաց, և զախորժակս քանդակագործութ՟ե մուծեալ անդր․ ուստի ապա ընդ ամենայն Իտալիա տարածեցաւ ։ Խեցեղէնք կանգնեցան անդ 'ի սկզբան պատկերք դից, որոց ա՟մ զարդ էր երանգն կարմիր ածեալ զնոքօք ։ Նման որոյ ասէ Պլինիոս [1]․ Մի՛ ոք ամօթ համարեսցի զգործ մարդկանն, որ սրտի մտօք զայնպիսի դիմն պաշտէին․ զի ոչ խնդրէին նոքա ոսկի և արծաթ, ոչ վասն անձանց և ոչ դիցն ։ Յորինաւ զպատկեր Արամազդայ, զոր երէցն Տարկուինիոս կացոյց յՈրմզդական մեհենին, կոչէ․

Խեցեղէնն այն, և չև ևս
'ի ձոյլ ոսկի պղծեալ Զևս ։

3820 Անագան մտին 'ի Հռոմ դրօշեալք ոսկեզօծք, որպէս ժամանակն իսկ յայտ է, 'ի հիւպատոջն Կուռնելեայ Կեթեգեայ և Բեբեայ Տամփիլեայ, 'ի հինգհարիւրորդի եօթանասներորդի առաջնում ամի թուականութեանն Հռոմայ, կամ զերկեամ մի յետոյ [2]։

Պլին․ լ՟ե․ ծ՟է․ ժ՟զ․ ի․ լ՟ը․ ՟է․ Պաւս․ ՟ը․ Ապա պատկերք գաճեայք և մոմեղէնք հնարեցան․ որոց հայր համարի Լիւսիստրատ սիկիոնացի՝ եղբայր Լիւսիպպեայ ։ Նախնիք գրեթէ յա՟մ փայտից գործէին անդրի․ էր 'ի Սիկիոն պատկեր Ապողոնի 'ի տօսախէ, և Արտեմեայ յԵփեսոս մայրի՝ ըստ ոմանց, որպէս և յարկ մեհենին էր 'ի մայրւոյ ։ Զկիտրոնի, զնոճի, զարմաւենի, զձիթենի, զոսնիաւ, զփայտ որթոյ, և յա՟մ իսկ սեռից անփուտ և անցեցակեր ծառոց դրօշէին պատկերս ։ Այլ յաճախեցին վաղվաղակի և յանկալի եղեն ամենեցուն կճեայք ։ Դիպենոս և Սկիւղիս կրետացիք համարին ճարտարք առաջինք՝ որք դրօշեցին զկիճ 'ի Սիկիոն, զի անդ բազում ժամանակս եղև դպրոց և օթևան արուեստից ։ 3424 Եւ կացին նոքա 'ի յիսներորդում ողիմպիադին, սուղ ինչ յառաջ քան զթագաւորել Կիւրոսի 'ի Պարսս ։

---

[1] Գերապանծք էին յայնժամ պատկերքս այս․ և մի՛ գժպհի ումեք թուեսցի, զի զայնպիսի դիմն պաշտեցին․ քանզի ոսկի և արծաթ և ոչ դից գործէին յայնժամ ։ Պլին ։

[2] Ակիլիոս Գլաբրիոն յերկպետութ՟ն՝ անդրի ոսկեզօծ Գլաբրիոնի հօր իւրում հաստատեաց․ այն առաջին անդրի ոսկեզօծ յԻտալիա կանգնեցաւ ։ Լիւ ։

ԱՄ ԱՇ. 3464 Բոպաղ և Աթենիս եղբարք անդրիագործք պայծառացեալ յաւուրս Իպոնաքսեայ քերթողի, իբր 'ի վաթսներորդի ողիմպիադին, զանգեղեայ քերթողին դրօշեցին զկերպարան 'ի ծաղր տեսողաց: Եւ նորա 'ի քէն վրիժու քան խանդիւ քերթողականաւ վառեալ՝ արար գաւն երգիծանս, մինչև 'ի խեղդ մատբերել նոցա յամօթոյ և 'ի զայրանալոյ, որպէս պատմէն: Այլ ոչ է հաւատարիմ պատմութիս այս, զի են ձեռագործք նոցա յետ այնորիկ դրօշեալք:

'Ի սկզբան անդ դրօշէին Ճարտարք 'ի կիճ սպիտակ, որ 'ի Փարոս կղզւոյ հատանի. և ասի՝ թէ ընդ հատորովք քարանցն՝ գտանէին ձեք ինքնադրոյք Սիղենեայ և Պանայ, և վիշապ ձկան և այլոց կիտից: Ապա յասպիս և պորփիւր 'ի գործ ածեալ, որ առաւել 'ի քարահատս Ասիայ գտանէին, վաղ յաճախեցին գրեթէ յա̃մ տեղիս: Եւ ապա գտաւ արուեստ հատանելոյ զվէմ 'ի նուրբ թիթղունս, վասն որոց ապարանից մորմարապատ յօրինելոյ. և ասի հնարեալ 'ի Կարիա: Հնագոյն քան զա̃մ ապարանս գտանի Մաւսոլեայ արքայի պալատն յԱղիկառնաս մորմարապատ դրուագեալ որմովք, որ էր զարդ մեծ ապարանիցն:

Եւ զփղոսկր 'ի վաղ ժամանակաց վարէին Յոյնք 'ի
Ոդիս. Դ. 73: քանդակս. զոր և Հոմերոս յիշատակէ, այն՝ որ զփղոյ ինչ ուրեք ոչ խօսի: Ի վաղեմի ոսկեղէն ձուլագործութե̃ ոսկւոյ և արծաթոյ ոչ է մարթ գիտել ճշգրտիւ: Դիքն Լաբանայ, զորս գողացաւ Ռաքէլ, ձուլածոյք արդեօք էին. և զինդքն և ապարանջանք, զորս ծառայն Աբրահամու ետ Ռեբեկայ, ոսկեձոյլք: Եւ իսրայելացւոց տեսեալ էր արդեօք յԵգիպտոս պատկերս ձուլածոյս, զի ը̃ նմին նմանութե̃ ձուլեցին զորթն յոսկւոյ, և զօձն պղնձի: Եւ առ ա̃մ ազգս արևելից էին յայնժամ դիք ձուլածոյք, վասն որոյ սպառնալեօք մահու արգելոյր ա̃ծ ժողովրդեան իւրում՝ մի ըստ նմանութե̃ նոցա առնել: Եւ 'ի կազմած խորանին վկայութե̃՝ ոչ եթէ նոր ինչ զձուլեն հնարեցան գործաւորք, այլ 'ի լրութի̃ գործոյն շնորհքն ա̃յ օգնէին: Դարձեալ և զսպասս տաճարին պատ-
Բ. Մնաց. Դ. 17: մէն գիրք ձուլեալ Սողոմոնի մերձ յԵրիքով, զի էր անդ երկիրն թանձր և կաւուտ. որով երևի՝ զի ըստ այժմուցս գործէին և հինք զձոյլս ստուարս:

Պլին. ԼԴ: ԼԵ. ԺԴ: Յանկալի էր թէ ոք 'ի յոյն կամ 'ի լատին մատենագրաց նկարագրէր զօրինակ ձուլագործութե̃ նախնեաց:
Վիտրուվ. Ի. Է: Թուի 'ի բանից Պլինեայ՝ զի և 'ի քարեղէն կաղապարս

ձուլէին. քանզի մերձ 'ի լիճն Վոլսինեան և ուրեք ուրեք 'ի կողմանս Իտալիոյ էր ազգ քարանց անվասնելի 'ի հուր, որպէս ասէ Վիտրուվիոս, ուստի կաղմէին հինք կաղապարս 'ի ձոյլ։ Նաև խառնուածովք հրահալից, այլակերպութ̃ք երանգոցն այլ և այլ կիրս և զգացմունս յանդիման առնէին յանդրիս։

Պէսպէս էին քանդակք 'ի հրահալելիս և 'ի գոհար ականս, է որ բարձր և է որ խոր քանդակեալ. յերկոսին իսկ ճարտարք էին նախնիք. և ցարդ իսկ քանդակք նոցա՝ զարմանալի յոյժ թուին արուեստագիտացն։ Իսկ զփորագրութե̃ց նոցա 'ի քարինս, որպէս յականս գեղեցիկ և 'ի վանակն, յորոց բազումս է տեսանել 'ի թանգարանն արքունի, վկայեն թէ չիք իբրև զնախնի ճարտարացն քաջարուեստ։

Թէպէտ և յա̃մ քարինս պատուականս գտանին քանդակք, այլ ճարտարագոյն յեղնգնաքարն՝ որ է ազգ ինչ ակատին դիմահար, և 'ի բուստն. զի երկոքին ևս յարմարագոյնք են 'ի քանդակ, կարծունք գոլով և ողորկք, և յստակ ընծայեն զտիպս. և զի երփներանգ ևս գտանի եղնգնաքար, խաւ 'ի խաւ այլագոյն ածեալ, զբարձր քանդակաց յայլ գոյն զենթակայն գործէին, և զդրոշուածն 'ի նմա յայլ։ 'Ի գոհար ականս և 'ի վանեայս դրոշաւ ադամանդեաւ քանդակէին հինք, որով և արդիքս։

Գերահամբաւեալ գոհար ակնն մատանւոյն Պողիկրատայ սամոսացւոյ բռնաւորին, որ 'ի ծով ընկեցեալ՝ նորանշան յաջողութ̃ք գտաւ անդրէն, և համարէր լինել 'ի Հռոմ յաւուրս Պլինեայ, էր ըստ ոմանց սարդիոն, և ըստ այլոց՝ զմրուխտ։ Հանդոյն նմին և Պիւռոսին համբաւէր ակն, յորում էին Ապողոն քնարաւն, և ինն Մուսայք անձնիւր նշանօքն ինքնեղք անձեռագործք։ Քանդակագործութ̃ի առաւել 'ի բաժակս յաճախեաց. և էին բաժակք ճարտարագործք ցանկալիք 'ի տեսանել, մեծագինք յոյժ և ըստ նիւթոյն ազնուութե̃ն։ Պլին. Լէ. ա։

Փորագրութ̃ի փայտի և պղնձոյ պատսպարան մեծ եղև կենդանագրաց առ մշտնջենաւորութ̃ի. զի սովաւ նոյն և մի պատկեր բազմանայ 'ի տիպս իբր անթուելի, և 'ի տար աշխարհ հանճար արուեստագիտին տարածանի, որ յառաջ նորին ձեռագործաւն ևեթ ճանաչէր։ Զարմանք են, զի որպէս նախնիք՝ որ զճարտար քանդակսն 'ի կարծր քարինս և յակն վանի գործէին՝ չկարացին գտանել զայս գեղեցիկ հնարս. որ ապա յետ դիւտի տպա-

գրութե՟ գտաւ, որպէս 'ի կարգ անկեալ ըստ նմին նմանութե՟ : Զի տպագրութի՟ պատկերաց և գրոց 'ի վերջ կոյս հնգետասաներորդ դարուն հնարեցաւ 'ի ձեռն Սրփեւրեայ ուրումն 'ի Փլորենտիա :

Զնախնեացն քանդակագործութե՟ զիւրս կարեւորս համառօտեցաք · մնայ ասել և յաղագս ճարտարաց՝ որք անուանի եղեն յարուեստն :

ՅՕԴՈՒԱԾ Բ·

Յաղագս որք ճարտար և անուանի քանդակագործքն կացին 'ի հին ժամանակս :

Թէպէտ և յԱսիա և յԵգիպտոս ծնաւ քանդակագործութի՟, բայց արդարև Հելլենք պայծառացուցեալ զայն ածին 'ի փառս : Թողեալ 'ի բաց զառաջին ուրուական գործածս տղայութե՟ արուեստին, կացին ապա 'ի յունաստան՝ մանաւանդ յաւուրցն Պերիկղեայ և այսր՝ ամբոխ [1] ճարտարաց, որք 'ի հակառակ մտեալ՝ փառաւորեցին զարուեստն անթիւ ձեռակերտօքն, ընդ որս զարմացան և զարմասցին ազգք յաւիտեան :

Ատտիկէ բերրի կճոյ, և ևս բազմաբեր կորովի հանճարոյ արուեստից, լցաւ վաղվաղակի անհամար անդրեօք [2] : Զերեւելագոյնս 'ի քաջաց ճարտարացն և զգերահամբաւեալսն աստանօր դիցուք · անուանիք քան զամենեսին եղեն Փիդիաս, Պոլիկլետ, Միւռոն, Լիսիպպոս, Պրաքսիտելէս և Սկոպաս : Եւ միւս այլ ևս 'ի վերոյ, բայց յայլում մասին, զՍոկրատ ասեմ զհռչակաւորն · զի ոչ 'ի դէպ է զքանդակագործութեն խորել զփառս՝ արտաքսեալ 'ի դասէ համբակաց նորա զմեծ իմաստասէրն, որ նախ քան զիմաստասիրութի՟ համարուեստ հօրն անդրիագործ էր : Դիոգ. լաէրտ. 'ի Սոկր : Նորա համարէին ձեռակերտք անդրիք երեցունց Շնորհացն, որ 'ի միջնաբերդն Աթենայ պահէին զգուշութե՟ : Անդրիքս այս ոչ մերկանդամք էին, որպէս սովորութիւն էր դրօշել զնոսա, այլ

---

[1] Արուեստս բազումս 'ի կրթութե՟ մտաց և մարմնոյ ճարտարեաց քաջահմուտն քան զամենայն ազինս Հելլէնն : Լեւ. ըթ. է :

[2] Այսպիսեօք գեղայօրէն զարդարեալ ձեռակերտօք, առատութե՟ բնիկ կճոյն և հանճարով ճարտարացն : Լեւ. ըղ. ժզ : Կիճք հատանէին 'ի պենտելիկեան լեռնէ, որ է յԱտտիկէ :

ԱՄ ԱՌ. ծածկեալ հանդերձիւ . որով անդստին 'ի մանուկ տիոյն յայտնէր ճարտարին միտում՟ յառաքինութի՟ : Որ և ասէր իսկ՝ անդրիագործութ՟ նախակրթեալ զանձն յիմաստասիրութի՟ . և թէ որ՟պս քանդակագործութի՟ զնիւթ 'ի կերպարանս ածէ՝ զաւելորդսն քերեալ մասունս , այսպէս իմաստասիրութի՟ կրթէ զսիրտ յառաքինութի՟ զթերութիւնս յապաւեալ:

ՓԻԴԻԱՍ

Բազում իրօք արժան է 'ի գլուխ քանդակագործաց 3556 զՓիդիաս դասել: Արդ սա էր աթենացի, և պայծառացաւ յութսներորդի երրորդի ողիմպիադին 'ի բարեբախտ աւուրսն, յորս զհետ յաղթութե՟ցն ընդդէմ Պարսից՝ առատութի՟ դուստր խաղաղութե՟ և մայր գեղարուեստից ծաղկեցուցանէր զազգի ազգի հանճարս խնամովք Պերիկղեայ : Փիդիաս ոչ որպէս զայլս յարուեստագիտաց զձեռինն ևեթ գործի գիտէր շարժել , այլ միտք նորա ճոխացեալ էին ա՟մ գիտութե՟ք՝ որ պիտանի են քանդակագործի , որպէս վէպք և առասպելք , բանաստեղծութի՟ , երկրաչափութի՟ և տեսաբանութի՟ : Որպէս տեսաբանութե՟ն պիտանութի՟ ցուցաւ 'ի դէպս իմն , զոր արժանի համարիմ գրոցս յիշատակի : Զի սմա և Աղկամենեայ յանձնեցաւ դրօշել պատկեր Աթենասայ , որպէս զի զընտիրն յերկոցունցն կանգնեսցեն 'ի բարձու սեան: Եւ իբրև կատարեցան անդրիքն , եդան 'ի տեսիլ ժողովրդեան . և Աղկամենեայն զարմանալի 'ի մօտոյ երեւեալ՝ հաճոյ թուեցաւ ամենեցուն , իսկ Փիդիայն անհեթեթ . զի էր բերանն մեծաբաց , և ռնգունքն թուէին կարկամեալ , և ա՟մ կերպարանն խիստ իմն և անհարթ . և ծաղր առնէին զանդրին և զանդրիագործն : Իսկ Փիդիաս ասէ . Կանգնեցէք զանդրիսդ 'ի տեղւոջն : Եւ իբրև կանգնեցին զԱղկամենեայն , ոչ ևս երևէր ինչ . իսկ ընդ Փիդիայն Աթենասայ վեհ և վսեմ տեսիլն զմայլեալ՝ ոչ յագէին տեսողք : Եւ զընտրութի՟ն , զոր ոսոխն յափշտակեաց , հատուցին Փիդիայ : Եւ դարձաւ Աղկամենէս կորակոր ամօթով , զղջացեալ ընդ տգիտութի՟ իւր օրինաց տեսաբանութե՟ :

Որ յառաջ քան զժամանակս զայս անդրիք հռչակաւորք պատմին , հնութե՟ն ևեթ պանծալի են և ոչ ճարտար արուեստին : Զի Փիդիաս ետ Յունաց զախորժակս ընականին գեղոյ, և ուսոյց նոցա այնմ նմանել[1]. վասն որոյ ձեւակերտք նոցա վաղվաղակի յամենեցունց պատուեցան: Քան զճարտարութիւն ձեւակերտացն Փիդիայ՝ բազմութիւն առաւել զարմանալի է. զի թիւ նոցա աւանդեալ 'ի մատենագրաց՝ չհաւատալի թուի. թերեւս սա միայն զերագութիւն ընդ անթերի լրութեան կցորդեաց:

Պաւս. յԱտտիկ. 62: Դ Բեւ-Լ. 548:

Ստադիւրագոյն, որպէս կարծեմ, աշխատ եղեւ 'ի վէմն՝ որ 'ի բանակն Պարսից գտաւ յետ ճակատու մարաթոնական պատերազմին, ուր պարտեցան Պարսք 'ի սպառ. ոյք աներկեան յուսով յաղթութեան՝ ածէին ըղվէմն կանգնել ախոյեան: Եւ զայն դրօշեաց Փիդիաս 'ի պատկեր դիցն Նեմեսեայ, որոյ էր կործանել և պատուհասել զամբարտաւանութիւն ժպիրհ մարդկան: Յունական ատելութիւն ընդ այլազգիս, և քաղցր բերկրութիւն վրէժխնդրութեան հայրենեաց խրախուսէին ապաքէն զհանճար քանդակագործին, և յաւելուին զձեւսն նորա և զգրչին ճարտարութիւն: Եւ յաւարէն՝ զոր առին պղատացիք 'ի Պարսից՝ արար Փիդիաս պատկեր Աթենասայ փայտակերտ ոսկեզօծ, այլ զդէմս նորա և զթաթս ձեռացն և ոտից 'ի պենտեղեան կճոյ:

Քաջութիւն հանճարոյն Փիդիայ 'ի դրօշեալս դիցն գերազանցէր. զի այնպէս վեհ և վսեմ միտք էին նմա, որ զտիպս և զնմանութիւն նոցա ոչ յերեւելիս խնդրէր, ասէ Կիկերոն[2], այլ կորովի հանճարովն զկերպարան ստոյգ գեղեցկին 'ի միտսն նկարեալ՝ յայն պշնոյր, և այն էր նմա կանոն և օրինակ՝ ուղղիչ արուեստին և ձեռին նորա:

Պերիկղէս թողեալ զա̃մ ճարտարապետս, զնա կացոյց առաջնորդ և վերակացու հասարակաց շինուածոց: 'Ի կատարել շինուածոյ Կուսաստանին, մեծակառոյց այնր մեհենին Աթենասայ՝ ընդ որ զմայլին ուղեւորք, զի արդ եւս կան և պահին մնացուածք նորա, խորհեցաւ Պերիկղէս առնել նաւակատիս, և կանգնել անդ զպատկեր Աթենասայ: Զոր Փիդիայ յանձն առեալ դրօշել, գեր 'ի վերոյ քան զա̃մ ձեռակերտս իւր արար զայն յոսկւոյ և 'ի փղոսկրէ, քսան և վեց կանգուն 'ի բարձրութիւն: Զայնու ժամանակաւ փղոսկր չքնաղագիւտ և ցանկալի էր քան զկիձ ազնիւ․ վասն այնորիկ կամեցան աթենացիք փղոսկրեայ առնել զանդրին ։

---

[1] Կուինտեայ Որտենսեայ հանճար պատանւոյն, որպէս զձեռագործն Փիդիայ անդրին, ընդ երեսն հաճոյ թուեցաւ: Կիկ. յաղ. Բրուտոյ. ճառք. միը:

[2] Փիդիայ 'ի դրօշելն զպատկեր Որմզդի և զԱթենասայ, ոչ գոյր օրինակ առաջի. այլ գեղեցկութեան չքնաղ կերպարան էր 'ի միտս նորա, յոր յառեալ և պշուցեալ՝ 'ի նոյն նմանութիւն զարուեստն ուղղէր: Կիկ. ճառք. Բ:

Բայց թէպէտ և յոյժ մեծագին էր նորահրաշ պատկերին նիւթն, այլ քան զնիւթն գերագոյն արուեստն ։ 'Ի վերայ վահանին Աթենասայ քանդակեաց զպատերազմն աթենացւոց ընդ Ամազոնս, և 'ի ներքոյ՝ զհսկայիցն ընդ դիս, 'ի կօշիկսն՝ զձիայլուցն ընդ Լապիթայս, և 'ի պատուանդանին՝ զՊանդորայ ծնունդն և որ ինչ զնմանէ առասպելք ։ Զանդրիս զայս Կիկերոն, Պլինիոս, Պլուտարքոս, Պաւսանիաս և այլք բազումք 'ի նախնի աւագ մատենագրաց՝ քաջ ընտրողք և ականատես վկայք՝ յիշատակեն ։ Որոց աներկբայելի է վկայութիւն, զի էր պատկերն այն մի 'ի հրաշալի ձեռակերտաց ։ Պլին․ լԶ․ Է։

'Ի պատուանդանի պատկերին պատմեն դրոշմեալ Փիդիայ զանուն իւր, ասէ Պլուտարքոս․ բայց Պաւսանիաս լռէ զայս ։ Իսկ Կիկերոն [1] հերքէ իսկ զայն յասելն․ Դ Պէր․ 160։ Ոչ զի չէր օրէն Փիդիայ դրոշմել զանուն իւր յանդրին, զկենդանագիրն յասպար անդր քանդակեաց ․ Յաւելու Պլուտարքոս, ալևոր ճաղատ դրոշմեալ նորա զանձն՝ երկոքումբք ձեռօք բառնալով վէմ մեծ․ և զՊերիկղէս ընդ Ամազոնս 'ի կռուի, զկէս դիմացն բազկաւն ծածկեալ՝ ձգելով զգեղարդն ։

Ամենեցուն իսկ ճարտարաց ցանկալի էր արձանագրել զանուն իւրեանց 'ի ձեռագործսն, առ 'ի լինել կցորդ անմահութեան՝ զոր հայթայթէին այլոց ։ Միւռոն [2] անդրիագործ անուանի յազդր պատկերին Ապողոնի դրոշմեաց զանուն իւր մանր աննշմարելի, յանմահ յիշատակ ։ Պլին․ լԶ․ Է․ Եւ Պլինիոս պատմէ, զի Սաւրոս և Բատրակոս ճարտարապետք սպարտացիք ձրի 'ի Հռոմ կառուցին մեհեանս․ անդ, ուր յետոյ Ոկտաւիա զսրահսն արար շուրջանակի․ և խնդրէին զանուն և եթ իւրեանց արձանագրել 'ի նոսա, որ ազնուականութեան նոցա դոյզն ինչ հատուցումն էր ։ Այլ թուի ինձ այնպէս, զի որք 'ի ժամանակին յայնմիկ ճարտարացն ինչ տային դրօշել՝ գուն գործէին զի մի և նոքա ընդ իւրեանս գովեալ մեծարեսցին 'ի յետնոց․ նմին իրի չետուն նոցա թոյլ ։ Իսկ նոքա ճարտար հնարագիտութեամբ բազմութիւն գորտոց և մողեսաց այսր անդր 'ի խարխուս և 'ի խոյակս սեանց քանդակեցին առ 'ի զարդ, որ էին անուանցն նոցա նշանակք. զի Սաւրոս 'ի յոյն բարբառ նշանակէ մողէս, և Բատրակոս՝ գորտ։

---

[1] Փիդիաս եդ զպատկեր իւր յասպար Աթենասայ, զի զանունն արձանագրել չէր օրէն ։ Տուսկ․ ա․ լէ ։

[2] Պատկեր Ապողոնի չքնաղագեղ․ յազդր նորա արծաթի տառիւք մանր դրոշմեալ անուն Միւռոնի ։ Կիկ․ Վէր․ դ․ անդէ․ ղէ ։

Այլ ոչ ա՟մ ուրեք 'ի յունաստան էին օրէնքս այս, որպէս տեսցի ստորև 'ի նոյն ինքն 'ի Փիդիաս. Թերևս աթենացւոց պահեալ էին։ Լիցէ այս որ ինչ և է, բայց Փիդիայ 'ի յանցանս համարեցաւ՝ զի զկենդանագիրս զերկոսին յասպարն Աթենասայ եդ։ Եւ ոչ այսչափ միայն, այլ և Մենոն մի յաշակերտաց նորա դատախազ կացեալ՝ ամբաստան եղև զնմանէ, խորեալ յոսկւոյն 'ի քառասուն և 'ի չորից տաղանդաց՝ որ 'ի գործ պատկերին Աթենասայ տուաւ նմա։ Բայց Պերիկղեայ յառաջագոյն կասկածանօք խրատ տուեալ էր Փիդիայ, վեր 'ի վերոյ 'ի պատկեր անդր յեռուլ զոսկին, որպէս զի դիւրաւ 'ի բաց առնուլ կարասցէ և կշռել զայն։ Կշռեցաւ ոսկին, և գտան քառասուն և չորք տաղանդք, և չարախօսն յամօթ եղև։ Բայց Փիդիայ ածեալ զմտաւ՝ զի ոչ էր բաւական անմեղութ՟ի փրկելոյ զնա 'ի մախանաց սուխացն և 'ի դաւանաց թշնամեացն Պերիկղեայ՝ որք յարուցին 'ի վերայ նորա զդատաստանն, փախուցեալ ամրացաւ յԷղիս։

Պլուտ. 'ի Պերիկղ. 169։

Ընդ հնարս իմն եգիտ 'ի վրէժխնդրութ՟ի անիրաւութեան և ապերախտութ՟ե աթենացւոց, որ ներելի էր, և Թերևս օրինաւոր իսկ ճարտարի, եթէ երբէք ներեսցի խնդրել զվրէժ քինու։ Զի խորհեցաւ ա՟մ ճարտարութ՟ե արուեստին առնել անդրի եղխացւոց, խաւարեցուցանելով զփառս պատկերին Աթենասայ՝ զոր աթենացիք որպէս ճարտար քան զա՟մ ձեռակերտս նորա ունէին։ Եւ արար իսկ. զի ողիմպիական պատկերն Արամազդայ՝ հրաշք իմն եղեն արուեստին, մինչև յիրաւի ընդ եօթանեսին հրաշակերտսն համարել։ Առ անթերի լրութ՟ի գործոյն՝ ոչ ինչ հնարս եթող. և մինչ չև քաջ աւարտեալ զայն՝ եդ 'ի տեսիլ և 'ի դատաստան ամբոխին, և ինքն յետոյ դրանն ծածկեալ լսէր զխօսս նոցա։ Ումեմն ունչն թուէր ստուար, այլում դէմքն երկայն, և այլոց այլ ինչ թերի. և որ ինչ իրաւացի ստգտանէինն, ուղղեաց. ածեալ զմտաւ, ասէ Ղուկիանոս՝ որ զայս պատմութ՟իս ետ մեզ, զի առաւել տեսանեն աչք քան զակն. և այս խրատ յոյժ պիտանի է առ ա՟մ արուեստագէտս։ Անդրիս այս գործեալ յոսկւոյ և 'ի փղոսկրէ, վաթսուն ոտնաչափ 'ի բարձրութ՟ի, և ըստ նմին չափոյ համեմատութ՟ե ստուարութ՟ի նորա, եղև անհասանելի ա՟մ ճարտարաց՝ որ յետ

Ղուկիան. յղ. պատկ. 31։

այնորիկ կային: Ոչ ոք 'ի նոցանէ իշխեաց խորհել անգամ հաւասարել այնմ, զի ասէ Պլինիոս. Բաց յՈղիմպեայն Արամազդայ՝ որում ոչ ոք բերէ նախանձ: Եւ Կուինտիլիանոս ասէ. Գեղ նորա յորդորագոյնս 'ի կրօնս Լէ. Է:
առնէր զազգս, զի զմեծվայելչութիւն դիցն բերէր զկերպարանս: Եւ տեսողք հիացեալ՝ ասէին ցմիմեանս. Ժբ. Ճ:
Ուրեմն իջեալ յերկնից Արամազդ՝ երեւեցաւ Փիդիայ, կամ անդր վերացաւ Փիդիաս նկատել զդէմս նորա: Եւ ինքն Փիդիաս հարցեալ՝ թէ ուստի՞ զտիպս կերպա- Վաղ. Մաքս.
րանաց ողիմպիական պատկերին Արամազդայ էառ, Գ. Է:
զհրաշալի զերրեակ տողսն* Հոմերոսի յուշ առնէր, ուր քերթողն զմեծվայելչութիւն աստուածոյն վսեմ նկարագրէ. որով յայտ առնէր զնոյն խանդ քերթողին յինքն ազդեալ:

Եւ էր ստորագիր 'ի ներքոյ պատկերին, ՓԻԴԻԱՍ Ա- Պաւսան. Ը.
ԹԵՆԱՑԻ ՔԱՐՄԵԱՑ ՈՐԴԻ ԱՐԱՐ ԶԻՍ: Իբր թէ պար- 303:
ծէր Արամազդ ընդ դրօշելն 'ի Փիդիայ, և յայտ իմն արարեալ զայն արձանագրաւն՝ կշտամբէր լռելեայն ըղտարապարտ նախանձ աթենացւոց, զի ոչ թողին գերապանծ ճարտարին զանուն իւր կամ զպատկեր դրոշմել յանդրին Աթենասայ:

Որմզդական պատկերիս Պաւսանիաս ականատես լեալ, և մանր զննեալ զայն, երկարապատում զհրաշազան նկարագիր նորա եթող. զոր Հայրն Քետուայէն յաւելեալ 'ի ճառն յաղագս Փիդիայ, ընթերցաւ զայն 'ի ճեմարանիս մերում արձանագրական կաճառոյս, և զօրինակն ետ ինձ. յորմէ քաղում ինչ առեալ գրեցի զգերահռչակ անդրիագործէն:

Անդրիս այս արար լրումն փառացն Փիդիայ, և ետ նմա անուն՝ զոր ոչ կարացին կապտել 'ի նմանէ այս երկու հազար ամք: Եւ գլուխ գործոց նորա՝ նոյն եղև և վերջին. և գործարան նորա եկաց մնաց ժամանակս բազումս, և ընթանային անդր ուղևորք՝ տեսանել զայն:
Եւ 'ի փառս յիշատակի անուան նորա, կացուցին եղի- Պաւսան. Ը.
ասցիք զզաւակ նորա 'ի սպաս հրաշակերտ պատկերին՝ 'ի 313:
սրբել զայն և պահել անեղծ զգեղ նորա:

* Զորս աստ 'ի նախնեաց առնեմ թարգմանեալ:
Եւ կապուտակային յօնօքն ակնարկեաց Զրուանեանն,
Եւ սքանչելի աստուածային վարսքն շարժեցան յանմահ
գլխոյ Թագաւորին:
Եւ մեծապէս շարժեցաւ տատանեցաւ Ողիմպոս:
Եղ. Ա. 528:

ԱՄ ԱՌ.

ՊՈՂԻԿԼԵՏ

Պլին. լճ. է. 3772 Սա պեղոպոնեսացի էր, 'ի Սիկիոն քաղաքէ. և եկաց յութսներորդի եօթներորդի ողիմպիադին։ Աշակերտեալ առ ոտս Ագեղատեայ, եղև վարժապետ ճարտարաց բազմաց երևելեաց, յորոց մի էր և Միւռոն՝ զորմէ ասասցուք ընդ հուպ։ Արար նա անդրիս բազումս պղնձիս, որք անուանի եղեն յոյժ. և էր մի յայնցանէ պատանի գեղեցիկ պսակաւոր, որ վաճառեցաւ հարիւր քանքարաց։ Այլ Նիզակակիրն[1] պատկերաւն առաւել հռչակեցաւ, այնպէս համեմատ 'ի նմա զձև մարմնոյ պատշաճեալ՝ մինչև կոչել նմա Կանոն[2]. զի քանդակիչք յամ կողմանց ընթանային՝ ուսանել 'ի նմա զօրէնս գեղազանցութեն արուեստին։ Պողիկլետ ամենեցուն վկայութբ 'ի ծայրագոյն կատարումն հասոյց զքանդակագործութիւն, որպէս Փիդիաս եած զայն 'ի փառս[3]. Սա պատուիրանաւ աթենացւոց դրօշեաց անդրի, և որ ինչ ոք և ստգտանէրն 'ի նմա՝ ուղղեալ փոփոխէր ըստ հաճոյս նոցա. և միւս այլ անդրի ըստ իւրում հանճարոյն և ըստ կարգաց արուեստին գործեալ, ած զերկաքանչիւրն 'ի տեսիլ ժողովրդեան։ Եւ 'ի խոտել ամենեցուն զառաջինն և 'ի զարմանալ ընդ միւսն, ասէ. Այդ զոր խոտէքդ՝ շինած ձեր է, իսկ ընդ որ զարմանայքդ՝ իմ։

ՄԻՒՌՈՆ

Սորա սակաւ իրք պատմին. էր աթենացի բնիկ կամ անուանեալ, զի բնակիչք Ելևթերիոյ՝ ուր ծնեալն իսկ էր՝ յաթենացիս համարեցան։ 3560 Եւ եկաց նա յութսներորդի չորրորդի ողիմպիադին, և ձեռակերտօքն անուանի եղև յոյժ. մանաւանդ պղնձի արջառովն, յոր բազում հրաշազան արձանագիրք հելլէնք յօրինեալ կան 'ի չորրորդ գիրս ծաղկաքաղին։

---

[1] Նիզակակիրք կոչէին Թիկնապահք արքային Պարսից։

[2] Արար նա և զԿանոնն անուանեալ յարուեստագիտացն, որք 'ի նմանէ զտիպս արուեստին առնուին որպէս յօրինաց. և համարի նոյն ինքն կերտուած արուեստին գրեալ զարուեստն։ Պլին։

[3] Սա համարի լրացուցիչ արուեստին. և այնպէս քաջակիրթ 'ի քանդակագործութեն, որպէս Փիդիաս հնարող նորին։ Պլին։

ԱՄ ԱՌ.

ԼԻՒՍԻՊՊՈՍ

Պլին. լդ. ը։ 36,6.

Սա սիկիոնացի էր, և եկաց յաւուրս մեծին Աղեքսանդրի 'ի հարիւրորդի երեքտասաներորդի ողիմպիադին։ Դարբին էր 'ի մանկութենէ, այլ գերագոյն հանճարովն վաղ յազնուագոյն և յարժանին իւր ամբարձաւ յարուեստ. և վարժապետ իւր կոչէր [1] զՆիզակակիրն Պողիկլետայ։ Բայց նկարիչն Եւպոմպոս եցոյց նմա վարժապետ վեհագոյն և բնաւ անսխալական. քանզի հարցեալ 'ի նմանէ՝ թէ ո՛ւմ [2] 'ի նախնի ճարտարաց պարտիցէ նմանել և հետևել, ասէ. Բնութե՟ն, և ոչ այլ ումեք։ Եւ յայնմ հետէ բնականին աշակերտեալ, վարժիւք նորին զարգացաւ յոյժ։

Էր նա կարի աջողաձեռն, և քան զա՟մ նախնի ճարտարացն առաւելան ձեռակերտք նորա. զի էին աւելի քան զվեց հարիւր։ Յորոց մի էր և առնապատկերն, որ 'ի բաղանեաց ելեալ՝ սրբէր. անդրի հրաշագեղ, զոր Ագրիպպաս առաջի բաղանեացն իւրոց կանգնեաց 'ի Հռոմ։ Յոր [3] Տիբերի հաճեցեալ յոյժ, 'ի հասանելն յինքնակալութի՟ ոչ կարաց յաղթել ցանկութե՟ն, և էառ զայն, մինչ դեռ ևս թագաւորեալ՝ տիրէր ըղձիցն, և զօրէր սանձել զնոսա. և ած կացոյց զայն 'ի սենեկի իւրում, այլ անդրի գեղեցիկ 'ի տեղի նորա կանգնեալ. Բայց ժողովուրդն, թէպէտ և երկնչէր 'ի նմանէ, 'ի հրապարակամէջ քաղաքին բողոք բարձեալ խնդրեաց դարձուցանել զանդրին. և հարկ եղև ինքնակալին լսել նմա՝ առ 'ի ցածուցանելոյ զամբոխն, թէպէտ և ցանկալի էր յոյժ նմա անդրին։

Անդրիս բազումս արար Լիւսիպպոս Աղեքսանդրի ըստ այլ և այլ հասակի, սկսեալ 'ի մանկութենէ։ Եւ այն յայտ է, [4] զի արգել Աղեքսանդր՝ մի ումեք բաց 'ի Լիւսիպպեայ դրօշել զանդրի իւր, և Ապելլեայ միայն հրաման ետ նկարել զինքն ։ Քանզի գիտէր, ասէ Կիկերոն, թէ ընդ անմահ յիշատակ Ճարտարացն՝ յաւերժասցի անուն իւր․ զի ոչ եթէ առ շնորհս ինչ նոցա արար զհրովարտակն, այլ 'ի փառս իւր [1] ։

---

[1] Զնիզակակիրն Պողիկլետայ վարժապետ իւր կոչէր Լիւսիպպոս։ Կիկ. 'ի Բրուտ. 290։

[2] Հարցեալ 'ի Լիւսիպպեայ՝ թէ ո՛ւմ յառաջնոցն լիցի նմանող, եցոյց ամբոխ բազում և ասէ. Բնութեանն նմանեաց, մի արուեստաւորի։ Պլինի.

[3] Յոյժ հաճոյ Տիբերեայ իշխանին. որոյ ոչ հանդուրժեալ, թէպէտ և 'ի սկզբան թագաւորութե՟ն իշխէր ցանկութե՟ն, ած զայն 'ի սենեակ իւր, այլ անդրի 'ի տեղի նորա եդեալ. Պլին.

[4] Նոյն ինքն արքայն հրովարտակաւ արար արգել,
Մի զնա ումեք բաց յԱպելեայ նկարագրել.

Այս էր մի 'ի պատկերացն Աղեքսանդրի չքնաղագեղ՝ ցանկալի յոյժ և հաճոյ Ներոնի, անդրի պղնձի ։ [2] Իսկ Ներոն, որ ընդ փայլունն և եթ զարմանայր՝ անկիրթ յախորժակս, ետ օծանել զայն ոսկւով ։ Այս մեծագին զարդուն զա̃մ Ճարտարութի̃ արուեստին ծածկեալ, խանգարեաց զանդրին ։ Յորմէ ապա հարկ եղև քերել զոսկին 'ի բաց, և ոչ այնու զառաջին գեղն և զյարգ կալաւ․ զի հետք և սպիք օծութե̃ ոսկւոյն կային 'ի նմա ։ Հանդոյն այսմ յոռի ախորժակաց թուի ինձ նոցայն, որք զցանկալի զանգին պարզութի̃ նախնեացն ընդ թիթեղն սեթևեթեալ իմաստից փոխանակեն ։

Բազում ինչ ասեն յաւելեալ Լիւսիպպեայ 'ի կատարումն անդրիագործութե̃ Ճարտարագոյն քան զառաջինսն զհերս քանդակելով, և փոքրագոյն դրօշելով զգլուխն և զիրանն նրբաւարտ, որպէս զի բարձրագոյն անդրին երևեսցի ։ Վասն որոյ ասէր Լիւսիպպոս [3], թէ այլք յանդրիագործաց դրօշեցին՝ որպէս էնն իսկ՝ զմարդիկ, այլ ես՝ որպէս երևինն․ այս ինքն ըստ ա̃մ գեղեցկութե̃ն յանդիման առնելով, որպէս ինձ թուի ։ Կարևոր քան զա̃մ ինչ 'ի քանդակն, որպէս և 'ի նկար, է հետևումն և նմանութի̃ բնութե̃․ և որպէս ասացաք՝ Լիւսիպպոս կանոն և վարժապետ իւր կալաւ զբնութի̃ն ։ Բայց արուեստն ոչ զկայ առնու աստ, առանց օտարանալոյ 'ի բնականէն՝ յաւելու 'ի նա շնորհս և վայելչութի̃՝ ոչ փոխեալ զայն՝ այլ գեղեցկացուցեալ, և հաճոյ ևս ընծայեալ աչաց և ցանկալի ։ Վասն որոյ [4] Դեմետր անդրիագործ Ճարտար՝

Իւ մի այլում ըղձոխ քաջին Աղեքսանդրի,
Բայց Լիւսիպպեայ պղնձաձոյլ դրօշել անդրի ։
Աէրոփ․ Բոսդ․ Ե․ Ա․ 239 ։

---

[1] Զի ոչ եթէ առ շնորհս ինչ Ապելլեայ կամէր Աղեքսանդր 'ի նմանէ և եթ նկարիլ, և 'ի Լիւսիպպեայ միայնոյ դրօշիլ․ այլ զի գիտէր թէ արուեստին Ճարտարութի̃ն և ինքն ընդ նոսա փառաւորէր ։ Կիկ․ Թուղթ․ ընտ․ Ե․ ԺԲ ։

[2] Զանդրին զայն ետ օծանել ոսկւով ինքնակալն Ներոն, զի յոյժ հաճոյ էր նմա ։ Ապա 'ի կորնչել գեղոյ արուեստին մեծագնութե̃ն՝ 'ի բաց առաւ ոսկին․ և պատուականագոյն համարի արդ, թէպէտ և խորացեալ սպիօք օծութե̃ ոսկւոյն և հետովք կռուանաց նորա ։ Պլին ։

[3] Ասէր յաճախ, նոքա դրօշեցին զմարդիկ՝ որպէս էնն, իսկ ես՝ որպէս տեսողացն երևին ։

[4] Դեմետրիոս կարի Ճշգրտութե̃ն եղև ստգտանելի, նմանութե̃ քան գեղեցկութեան սիրող լեալ ։ Կուին․ Ա․ Ճ ։

ստգտանելի եղև, զի կարի երկիւղածուք հետևէր բնութեան. ԱՄ ԱՌ.
ուշ կալեալ 'ի նմանութիւն քան 'ի գեղ, յորմէ զգուշացաւ Լիւսիպպոս:

ՊՐԱՔՍԻՏԵՂԷՍ

'Ի հարիւրորդի չորրորդի ողիմպիադին եկաց. մի՛ ոք 364օ.
զսա այլ ընդ այլս առցէ ընդ միւսումն, որ պայծառացաւ յաւուրս Պոմպէի ոսկերիչ ճարտար. զի Պրաքսիտեղէսս այս էր 'ի քաջաց անդրիագործաց, և գործէր մանաւանդ 'ի կիր՝ յոր աջողաձեռն իսկ էր:

Զճարտարագոյնն 'ի բազմութենէ ձեռակերտաց նո- Պ.... ա.34.
րա չէր մարթ ընտրել, եթէ ոչ ինքն իսկ առնէր զընտրութիւն. և ընտրութեան յեղանակ նորանշան իմն է: Վասն զի Փրինէ պոռնիկ հռչակաւոր սիրեցեալ յոյժ 'ի նմանէ՝ ստէպ թախանձանօք խնդրէր զմի 'ի ձեռակերտաց նորա, որ ամենևին կատարեալն թուէր նմա և 'ի վեր քան զայլսն ամենայն. և ոչ կարէր Պրաքսիտեղէս մերժել զնա, այլ զընտրութիւն օր 'ի յօր արկանէր, թերևս զի և ինքն երկբայէր, կամ զի խորհէր յապաղանօք զերծանել յուժգին և 'ի հարկեցուցիչ թախանձանաց նորա: Այլ նմանեացն Փրինեայ ոչ պակասէն հնարք և ճարտարութիւն. որով գողացաւ նա զընտրութիւն Պրաքսիտեղեայ: Զի 'ի միում աւուրց մինչ ընդ նմայն էր, խրատեալ ծառայն նորա՝ եհաս առ նա շնչասպառ գոյժ 'ի բերան, և ասէ. Հրդեհ 'ի գործարանն անկաւ, և կէսք 'ի ձեռակերտաց քոց այրեցան, չգիտեմ զո՞ր ինչ ապրեցուցանել: Զայն իբրև լուաւ Պրաքսիտեղէս յայլս խելս լեալ ասէ. Ո՜հ, եղուկ ինձ, Պայն իմ և Երոսն իմ եթէ յանկարծ այրեցան: Յայնժամ Փրինէ ասէ. Մի՛ ինչ կասկածեր, չիք ինչ այրեցեալ. ծանեայ զոր խնդրէի: Եւ ոչ ևս կարաց Պրաքսիտեղէս պատասխանել. և էառ նա զԵրոսն զդրօշեալ դիցն տռփանաց, և կանգնեաց
զայն 'ի Թեսպիէս քաղաք Բեովտիոյ 'ի գաւառ իւր. Կիկ. Դ Վէրր.
ուր և 'ի յետին ժամանակս գնային բազումք տեսանել ՅՂ. անդր. Դ:
զայն: Մումմիոս 'ի բառնալ անտի անդրիս բազումս և յղել 'ի Հռոմ, խղճեաց առնուլ զայն. զի էր նուիրեալ դիցն: Իսկ Երոսն Մերբեայ՝ զոր Կիկերոն յիշատակէ՝ դրօշեալ 'ի Պրաքսիտեղեայ, այլ է 'ի սմանէ:

Զարմանալի իմն զառաջնոյն, որպէս կարծեմ, պատմէ Աթէն. 'ի յիշատակագրին. զոր և գրեմ անփոփոխ: Սա մինչ պատանին էր, ուղեկից լեալ Փուայ՝ որ հրամանաւ արքունի գնայր յԻտալիա, հասին 'ի Տիկինոն քաղաք։ Ընդ բազում ինչ չքնաղագիւտ 'ի մեծի սրահին Իսապելլայ հանոյ իշխանին Մանտուայ խնամաբար զետեղեալ կային։ Նա ետես անդ Թու հրաշալի իմն, զանդրի Նէրոսի 'ի քուն՝ 'ի սպեդեան [1] քարէ պատուականէ, զոր Միքայէլի Պոնարոթթեայ ականաւորին դրօշեալ էր. այն՝ որ յաւուրս իւր նորոգ 'ի կենդանութիւն ած զնկարչութի՟, զքանդակ և զճարտարապետութի՟ զթողեալսն անխնամ 'ի բազում ժամանակաց։ Նա Փուայ լուեալ զհրաշակերտ անդրոյն, խնդրեաց տեսանել զայն. և ամենեքին՝ որ ընդ նմայն էին, և ինքն իսկ Թու՝ որ քաջակիրթն էր յընտրութի՟, քննեալ և զննեալ վկայեցին՝ թէ 'ի վեր է քան զա՟մ գովուի։ Նա մինչ դեռ զարմացեալ կային, հրաւիրեցան տեսանել այլ անդրի Նէրոսի՝ պատեալ 'ի կերպաս մետաքսեայ. անդրի վաղեմի, վկայեալ 'ի համճարեղ [2] արձանագրացն՝ որով Հելլենք ընդ հակառակս միմեանց դրուատեն զայն. և էր դեռ ևս հողամած՝ որպէս այն ինչ պեղեալ յերկրէ։ Նա ա՟մ բազմութե՟ն համեմատեալ զայն ընդ միւսու՟մն, ամաչեցին ընդ կարծիս իւրեանց. զի թուէր վաղեմին այն կենդանի, իսկ միւսն վէմ անհարթ։ Յայնժամ ոմանք յընտանեացն պատմեցին, զի անդրիագործն, որ էր այր անկեղծ՝ որպիսիք սակաւք են 'ի քաջաց ճարտարացն, 'ի պարգևել զձեռակերտ իւր Իսապելլայ՝ տեսեալ զմիւսն, խնդրեաց 'ի նմանէ՝ զհետ իւրու՟մն ցուցանել զայն ամենեցուն, որպէս զի քաջ խելամուտ լիցին արուեստագէտք՝ թէ քանի՞ դեռ 'ի վերոյ են յայնս նախնիք քան զորդիս։

Փէլ. 'Ի Մէտայէլ Պօն. Լուրեք զի և ճարտարագոյնք յարուեստագիտաց խաբին՛, որպէս նոյն ինքն Պոնարոթթի եցոյց։ Զի դրօշեաց նա միւս այլ անդրի Նէրոսի, և ած զայն 'ի Հռոմ. և բեկեալ զմի 'ի բազկաց նորա՝ կալաւ առ իւր, իսկ զիրանն թաղեաց 'ի տեղւոջ՝ զոր հանդերձեալ էին պեղել։ Նա իբրև գտաւ անդրին, զարմացան ընդ այն հմուտք արուեստին. և ծանր գնոց եառ զայն՝ որպէս աւանդ վաղեմի՝ սեպուհ ո՟մն ծիրանաւոր։ Յայնժամ անդրիագործն ելոյծ զպատրանսն, ցուցեալ զբազուկ պատկերին՝ զոր առ իւր ունէր։ Քաջ վայելուչ է ընդ այսքան ճարտարութե՟՝ որ և զարուեստագէտսն պատրէր նմանութ՟ նախնեացն, կցորդել այնքան համեստութի՟՝ մինչև զկորակոր պարտութ՟ի յանձն առնուլ առաջի նոցա, որպէս արար Պոնարոթթի։

---

[1] Սպէդիա քաղաք 'ի ծովեզր Գէնովայ։

[2] Արձանագիրք յ[illegible] իբր տասն և երկու կան 'ի [illegible] գիրս Ծաղկաքաղին։

Հանգոյն այսմ խաբէութե՟ և 'ի գրաւորականն պատմի լեալ. Յովսէփ Սկալիգեր ճարտարագոյն 'ի քննաբանս իւրոյ ժամանակին, պարծէր լինել անսխալ յընտրութիւն բանից նախնեաց։ Վեցեակ տողք նորագիւտք համբաւեալ յայնժամ յածէին, տաղաչափեալ այս իմաստք 'ի լատին բարբառ.

Թէ կարէին կեղերջական ողբք և եղեր,
Ըզմահացուցաց թշուառութիւն բուժել, ո՛ տէր,
Լալիս ոսկւով և ոչ այլ ինչ շահել պարտ էր։
Այլ այդոքիկ ոչ առաւել դեղք են ցաւոց,
Քան 'ի դարձումըն մեռելոյ ձայնարկուաց կոծ.
Արկածք ըզխրատ խնդրեն 'ի ճար, ոչ արտօսր հոծ։

Այս տողք զարմանալիք 'ի ընիկ բարբառն, յար և նման կերպարանաց բանից նախնեաց, այնպէս շլացուցին զմիտս առնն, զի 'ի մեկնութե՟ն Սարրոնի ածէ զայն 'ի ներքս որպէս հատուած 'ի բանից Տրապեայ՝ նորոգգտեալ 'ի հին ձեռագիր մատենի։ Եւ Տրապէաս քերթող կատակերգակ եկաց 'ի վեցհարիւրորդի ամի հիմնարկութե՟ Հռոմայ։ Իսկ յօրինող տողիցն էր Մուրետոս, որ զայն խաղ արար Սկալիգերի ոսոխին իւրում և նախանձորդի։

Պրաքսիտեղեայ հարկ էր և 'ի սիրեցեալն իւր 'ի Փրինէ զվաստակ ձեռաց իւրոց 'ի գործ արկանել, որում սրտիւն գերեալ էր։ Մի 'ի պատկերաց նորա կանգնեցաւ ապա 'ի Դեղփիս ընդ անդրիս Արքիդամայ արքային սպարտացւոց և Փիլիպպեայ արքային մակեդոնացւոց։ Ո՛ ամօթ. եթէ վասն մեծութեցն պատուէր, արժանի էր այնմ Փրինէ. զի էին նմա անբաւ գանձք։ Որովք լրբեալ, (զի զի՞նչ այլ 'ի դէպ իցէ կոչել զայն,) խնդրեաց կանգնել վերստին զԹեբէ յընչից իւրոց, զի արձանագիր եւեթ դիցի 'ի նմա, թէ Աղեքսանդր կործանեաց զԹեբէ, և Փրինէ վերստին կանգնեաց։ Աթէն. ժգ. 591։

'Ի Պրաքսիտեղեայ խնդրեցին կովացիք առնել պատկեր Աստղկան. և դրօշեաց անդրիս երկու հաւասարագինս, զի զմին 'ի նոցանէ ընտրեսցեն։ Եւ էր մին մերկ, միւսն զգեցեալ, և մերկն գեղեցկագոյն յոյժ. բայց կովացիք զմիւսն ընտրեցին իմաստութ՟բ, անպատեհ համա- Պլին. լզ. Ե։

րեալ և հակառակ համեստութե՟ և պատկառանաց՝ մուծանել 'ի քաղաք իւրեանց զմերկանդամ պատկերն 'ի զեղծումն և յապականութի՟ բարուց ։ Ամաչեցեն քրիստոնեայք, հայեցեալ յողջախոհութի՟ հեթանոսացն ։ Բայց կնիդացւոց ոչ ինչ փոյթ եղև լաւութե՟, և զթողեալն 'ի կովացւոց կալան խնդութ՟ զպատկեր Աստղկանն. որ եղև տպա պարծանք Կնիդեայ, ուր 'ի տար աշխարհաց գային 'ի տեսիլ պատկերին, զի ճարտարագոյն 'ի ձեռակերտս Պրաքսիտեղեայ համարէր այն ։ Նիկոմիդեայ արքային բիւթանացւոց այնքան մեծարեալ զպատկերն, զի ընդ բազմագանձ պարտուց կնիդացւոց՝ զայն միայն խնդրէր. այլ նոքա նախատինս համարեցան տալ զայն, և յանձն առին զաղքատութի՟ քան վաճառել մեծագնի զպարծանս և զգանձ իւրեանց ։

ՍԿՈՊԱՍ

Պլին. լզ. ե։ Վիտրուվ. է. յառաջաբ։ Երկոքումբք գերազանցեաց Սկոպաս, ճարտարապետութ՟ և քանդակագործութ՟ ։ Որ նա ընիկ փարոսացի, և պայծառացաւ յութսներորդի եօթներորդի ողիմպիադին ։ 'Ի գործուածս նորա՝ պատկեր Աստղկանն ճարտարագոյն էր, և քան զբազմահռչակ Աստղիկն Պրաքսիտեղեայ գերագոյն համարեալ ։ Որ և ածաւ 'ի Հռոմ. այլ յաճախութի՟ ճարտար անդրեաց՝ որովք լի էր քաղաքն[1], ասէ Պլինիոս, նսեմացոյց զփառս նորա. մանաւանդ զի անպարապելի պատաղումն՝ և մարդք պատերազմաց չտան թոյլ 'ի հետաքրքրութի՟ չքնաղից, առ որ խնդրի պարապ և անգործութի՟ և տեղի խաղաղ և անխռով 'ի խելամտութի՟ գեղոյ նոյա ։

Անդ. ժգ. Սիւնն 'ի նմանէ կանգնեալ 'ի մեհենին Արտեմեայ եփեսացւոց, զորմէ յառաջագոյն ասացաք, քան զայլոց ամենեցուն ճարտարայն անուանի եղև ։ Բազում վաստակեաց նա և 'ի գեղ և 'ի զարդ հռչակաւոր շիրմին, զոր դշխոյն Արտեմիս կանգնեաց առն իւրում Մաւսողեայ յԱլիկառնաս, և որ յեօթն հրաշակերտսն թուեցաւ մեծութ՟ն և ազնիւ յօրինուածով՟, և բազում և ճարտար քանդակօքն՝ որովք զարդարեալն էր. և ոսոխք երևելիք բաժանեցան ընդ Սկոպայ զփառս շիրմին ։ Զպլինեայն նկարագիր մասին միոյ հոյակապ շինուածոյս պաշտելի ցայս վայր . զի 'ի քանդակագործութեան քան 'ի ճարտարապետութեան պատկանի :

---

[1] 'Ի Հռոմ բազմութի՟ անդրեաց անտես արար զայն. մանաւանդ զի ամբոխ գործոց և պատերազմաց 'ի բաց տանին զմիտս յախորժակաց անտի. զի պարապելոց 'ի խոր լռութե՟ է զարմացումն այն ։ Պլին ։

Երկայնութիւն շիրմին էր վաթսուն և երեք ոտնաչափ 'ի հարաւոյ 'ի հիւսիս, և լայնութիւն նորա սուղ ինչ նուազ. շրջապատն չորեքարիւր մետասան ոտնաչափ[1], իսկ բարձրութիւն նորա՝ երեսուն և վեց, կիսով աւելի. և սիւնք երեսուն և վեց շուրջանակի : Զարևելից կողմն Սկոպաս յանձն առ, զհարաւակողմն Տիմոթէոս, զարևմտեանն Լէոքարոս, և Բրիաքսիս զհիւսիսի. սոքա էին քանդակագործք անուանիք ժամանակին : Բայց թէպէտ և Արտեմիս նախ քան զկատարումն շինուածոյն մեռաւ, այլ ճարտարքն ամօթ համարեցան թերի լքանել զգործն : Եւ է ցարդ յերկբայս՝ թէ ո՞ր 'ի նոցանէ ճարտարագոյն էր քանդակն, ասէ Պլինիոս : Յաւելաւ 'ի նոսա և Պիւթիս, արարեալ բուրգն 'ի վերայ շիրմին, և 'ի վերայ բրգանն՝ կառս լծեալ 'ի չորից երիվարաց, գործ քարկռի : Զշիրիմն զայս կղազոմենեանն Անաքսագորայ տեսեալ՝ ասաց անհանճար իմաստակութեան . Ահա արծաթ բազում վիմատառեալ :

Մինչ չև աւարտեալ զճառս զայս, մնայ ասել զչքնաղ մրցութիւն՝ յոր յետ մահուն իւրեանց ածան անդրիագործքն երկոքին երևելագոյնք, Փիդիաս և Պողիկլետ, Շինուած մեհենին Արտեմեայ յԵփեսոս, որպէս յառաջագոյն ասացաք, յերկարաձգեցաւ ընդ բազմահոլով պարագայս ամաց : Ընդ այն ժամանակս . զոր Պլինիոս ճշգրտիւ ոչ նշանակէ, խնդրէին եփեսացիք կանգնել անդ պատկերս Ամազոնաց, որպէս թուի՝ չորս : Եւ կային դրօշեալք բազումք 'ի ճարտարաց, յորոց կէսք մեռեալ այլք կենդանի էին : Վայելէր իսկ 'ի վեհափառ մեհենին զգերակատարսն կանգնել . Նմին իրի դատաւորս ընտրութեան կացուցին զանդրիագործս ճարտարս ժամանակին : Եւ վասն զի հրապոյրք անձնասիրութեան առաջի կային, և իւրաքանչիւր ոք զանձն նախադասէր, և երկրորդ զճարտարագոյն թուեցեալն, նմին իրի որոց երկրորդականքն յաւելան քուէայք՝ նոքա կալան զյաղթութիւն : Եւ եղև Պողիկլետ յաղթող ամենեցուն, Փիդիաս երկրորդ, Կտեսիղաս և Կիղոն՝ երրորդ և չորրորդ : Դիոդ. Սիկել. [illegible] Պլին. ԼԴ. Ը :

Հանգոյն այսմ և այլ դէպք բազում ժամանակօք յառաջ դիպան : Զհետ պատերազմին Սաղամինայ զօրա- Պաւսան. Դ. Թիէրշ. 120 :

---

[1] Թուի՝ թէ էր ոտն [illegible], և [illegible]

մարք Յունաց, քանզի սովորութիւն էր յայնժամ գրել 'ի քարտի ո՛ ումեք և նշանաւոր թուէր լեալ 'ի մարտին, ամենեքեան նախ զանուն իւրեանց եդին, ապա զԹեմիստոկղեայ. և քաջ քան զամենեսեան ցուցաւ Թեմիստոկղ։

Զնախնի անդրիագործս հարևանցի 'ի կարգ արկեալ, զերևելագոյնս ևեթ՝ որպէս յայտ է՝ համառօտիւ յիշատակեցաք, ծաղկաքաղ առնելով. զի են և այլ ճարտարք բազումք անուանիք, զորովք զանց արարաք, զի մի՛ կարի ստուարասցին գիրքս։

Կիկերոն գովէ յոյժ զՍիղանեայ երևելւոյ անդրիագործի զպղնձաձոյլ Սափփոյն, զպատկեր ամենակատար, զոր երարձ Վերրէս յատենէ Սիրակուսայ։ Նորին Սիղանեայ ձուլեալ անդրի պղնձի զպատկեր Ապողոդորայ պատմէ Պլինիոս։ Նա էր Ապողոդոր համարուեստ նորա, այր խիստ, և բարկացող ընդ անձին իսկ. որ զձեռակերտս իւր խորտակէր[1] ցասմամբ, չկարացեալ ածել զնոսա 'ի լրումն արուեստին՝ զոր 'ի միտսն կերպարանէր։ Արդ զնորին զայրոյթ այնպէս կենդանի ած Սիղանիոն 'ի տեսիլ, զի ոչ Ապողոդոր 'ի պատկերն, այլ բարկութիւն ինքնին երևէր։ Նոյն ինքն Պլինիոս և զԼաւոկոոնեայն
Պլին. լԶ. Ե։ ներբողէ զպատկեր, որ էր յապարանս Տիտոսի ինքնակալին. և համարի զայն գեր քան զամենայն նկարս և զանդրիս։ Երից ճարտարաց հռոդացւոց, որ են Ագեսանդր, Պողիդոր և Աթենոդոր, 'ի միասին դրօշեալ էր զայն. անդստին 'ի միոջէ վիմէ զհայրն, և զմանկունս, և զօձս՝
Ենէ-ի. Բ. որ գալարեալ ճաղպատէին զնոքօք։ Գերազանց արդարև, եթէ հրաշալի նկարագրին Վիրգիլեայ աղօտ իմն նմանէր։

Մնայ զմիոյ միոյ զերևելեաց ճարտարացս տալ զնկարագիր, որպէս նոքա զդէս և զմարդիկ ճշգրիտ նկարագրեցին։ 'Ի Կուինտիլեայ և 'ի Կիկերոնէ, որ զարմանալի նկարիչքն են բնաւորութեան և կերպարանաց բարուց, առից զբանս. այլ բնիկ գեղովն զիմաստս նոցա բերել՝ յոյժ դժուարին է։ Կուինտիլեայ ազգս ազգս նկարչութեան զանազանեալ, յաւելու ապա զնոյն զանազանութիւն և 'ի քանդակս։ Զի առաջին անդրիագործք յիշատակեալք, Կաղոն և Եգեսիաս, խիստս քանդակէին ըստ տոսկեան ախորժակաց. զհետ նոցա եկաց Կաղամիս, և ձեռակերտք նորա փափկագոյնք էին. և ապա Միւռոնայն գողտր և բնական։ Իսկ Պողիկլետ յաւել զկանոն և զվայելչութի՟, վասն որոյ բազումք սմա տան զնախապատուութի՟ն. այլ որպէս զի չիք ինչ անթերի, ըստգտանին և ձեռագործք սորա անազդողականք գոլ։ Գեղեցիկս արդարև դրօշեաց զմարդիկ, և քան զնախատիպսն վայելուչ, այլ մեծվայելչուե՟ դիցն չեղև հասու։ Զսմանէ ասեն, թէ 'ի դրօշել զհասակ կորովի՝ յողդողդէին ձեռք նորա ճարտարք. Նմին իրի զմատաղ մանկութի՟ գրեթէ յա՟մ ձեռակերտսն 'ի դէմս ածէ։ Զթերին Պողիկլետայ լցին Փիդիաս և Աղկամենէս. զի զՓիդիայ ասեն՝ թէ զդիս քաջ դրօշէր քան զմարդիկ։ Նա մանաւանդ 'ի քանդակել զփղոսկր՝ ոչ ոք հաւասարեաց ճարտարուե՟ նորա. որում բաւական են 'ի հաւաստիս Աթենասայ պատկերն՝ զոր արար աթենացւոց, և ողիմպիականն Դիայ. որոյ գեղոյն յաւել ի՟ն յորդորել զազգս 'ի կրօնս, զմեծվայելչութի՟ դիցն համանման դրօշեալ։ Լիւսիպպոս և Պրաքսիտեղէս բնուե՟ն քաջ նմանահանք համարին. իսկ Դեմետր ստգտանի՝ առաւել 'ի նմանութի՟ ուշ եդեալ քան 'ի գեղն։

---

[1] Սիղանիոն դրօշեաց զԱպողոդոր զհամարուեստ իւր զանդրիագործ. որ քան զամենայն ճարտարս մտադիր էր արուեստին և ոխերիմ դատաւոր անձին, որ և զճարտար ձեռակերտս իւր խորտակէր, չկարացեալ զամենայն ցանկութիւն արուեստին յագեցուցանել։

Կիկերոնի համառօտագոյն զնախնեաց ոմանց անձանօթից ճարտարաց խօսեցեալ, ասէ. Խիստք և անզգեղեայք են Կանաքոսի դրօշուածքն, Կաղամեայն թէպէտ և խիստ՝ այլ ոչ որպէս զԿանաքոսին. Միւռոն օտարանայ 'ի բնութենէ, թէպէտ և գեղեցիկք են ձեռագործք նորա։ Գեր 'ի վերոյ ամենեցուն Պողիկլետ, թուի ինձ 'ի ծայր արուեստին հասեալ։ 'Ի Բրուտ. Հ։

Զքանդակագործութի՟, որպէս բազում անգամ ասացաք, Հելլէնք հասուցին 'ի գերածայր կատարելութի՟։ Հռոմէական մեծութիւնն՝ որ կործանմամբ յաջորդացն Աղեքսանդրի հանդերձեալ էր կանգնել, եկաց ընդերկար 'ի գեղջուկ պարզուե՟ն առ իշխանապետօքն և առ ըդեշխիւք, որք զկարևորս ևեթ պատերազմի և զառ 'ի կեանս պիտանացու արուեստս յարգեալ 'ի գործ արկանէին։ Անագան մտին 'ի Հռոմ ախորժակք անդրեաց և ազգի ազգի քանդակաց, յորժամ Մարկեղոս և Սկիպիոն և Փլամինիոս և Պօղոս Էմիլիոս և Մումիոս ածեալ ցուցին քաղաքայնոցն՝ որ ինչ 'ի Սիրակուսա, յԱսիա, 'ի Մակեդոնիա, 'ի Կորնթոս, յԱքայիա և 'ի Էտովլիա կային գեղեցիկ գործածք արուեստին։ Զարմացաւ Հռոմ 'ի տեսիլ գեղանկար կճեայ և պղնձի պատկերացն, և ամենայնի որ ինչ 'ի շուք մեհենաց և հասարակայ չինուածոց պատկանաւորք էին ։ Ցանկացաւ խելամուտ լինել գեղոյ նոցա, և կիրթ յընտրութի՟ ճարտարութե՟ն, և գիտել զյարգ նոցա․ և հանճարն այն յաւելաւ 'ի քաջութի՟ նորա, այլ վնասակար եղև նմա՝ զեղծման լեալ պատճառք ։ Մումմիոս 'ի նուաճելն զԿորնթոս՝ որպէս պատմեցաք յառաջագոյն՝ անդրիս բազում ձեռակերտս հնոց ճարտարաց և նկարագործ պատկերս յղեաց 'ի Հռոմ, սպառնայր տարողացն՝ տուժել 'ի նոցանէ այլս, եթէ ինչ կորիցէ կամ եղծցի զճանապարհայն ։ Այլ այն թանձր[1] տգիտութի՟, ասէ վկայագիրն, յոյժ լաւ էր քան զկարծեցեալ գիտութիւնն՝ որ զհետ եկն ։ Ո՛ նորանշան տկարութե՟ մարդկան․ հա՛րկ ինչ իցէ անմեղութե՟ լինել անմեկին 'ի տգիտութե՟, և չիցէ՞ մարթ զգիտութի՟ս և զախորժակս որ են բարիք 'ի բնէ՝ ստանալ առանց ապականութեան բարուց․ որում պատճառք, է ուրեք՝ զի արուեստքն համարին, այլ տարապարտուց ։

Զքնաղիցն տենչ վաղ զառածաւ յանչափութի՟․ և այր հակառակընկերէն ջանահնար լինէին շքեղազարդել զապարանս և զամարաստանս իւրեանց ։ Կուսակալութիւն նուաճելոց աշխարհաց ձեռնտու օգնական լինէր խորհրդոց նոցա ։ Մինչ չև զեղծեալ էին բարք, չէր օրէն մարզպետաց գնել ինչ 'ի ժողովրդոց՝ որոց իշխանս կացուցանէր զնոսա ծերակոյտն ։ Զի ուր վաճառականին չիցէ ազատութի՟ վաճառել որքան վաճառքն արժեն, ոչ է այն շահավաճառ՝ այլ յափշտակութի՟, ասէ Կիկերոն ։ Արդ հրաշակերտք աւագ ճարտարացն անգինք են[2]․ քանզի վարկ և ցանկութի՟ գնողացն, կամ որպէս ասէ Սենեկա՝ մոլութի՟ տենչողացն սակ հատանէ նոցա[3] ։ Իսկ կուսակալք, և լաւքն 'ի նոցանէ, խոստանաւ զմեծագին կերտուածսն գնէին․ և յոլովք իսկ բռնի յափշտակէին զնոսա ։

Կիկ․ 'ի Վեր․ յաղ․ անդր․

Այժմ հաւաստիս տան մեզ զՎերրեայ կուսակալին Սիկիլիոյ զիրսն, որում էին և այլք նմանիք, թէպէտ և սա անօրինագոյն քան զայլսն եհաս յանհնարին ժպրհութիւն ։ Զորմէ ասէ Կիկերոն՝ . Չգիտեմ զի՞նչ կոչեցից զայն . մոլութիւն, թէ ախտ, թէ յիմարութիւն, թէ աւազակութիւն ։ Նա չգտանէ հաւասարի կոչումն ։ Ոչ պատշաճիցն ցանկութիւն, ոչ փառասիրութիւն, և ոչ երկիւղ օրինաց խափանէին զնա ։ 'Ի Սիկիլիա որպէս աշխարհակալ վարէր զիշխանութիւն . և ոչ ինչ 'ի չքնաղ և 'ի ցանկալի անդրեաց, մեծ կամ փոքր, ապրէր 'ի յափշտակութենէ նորա ։ Համառօտ ասել, յաւելու Կիկերոն[2], բազումք եղեն դիքն գերեալք յափշտակութեամբ նորա 'ի Սիրակուսա, քան զամբոխ մարդկանն՝ Մարկեղեայ յաղթութեամբն գերեալ ։

---

[1] Այլ գիտեմ՝ զի ոչ երկբայիս, Վինկկլէ, թէ լաւ էր աշխարհիս կալ մնալ ագէտ կորնթական ճարտարութեցն՝ քան այսպէս կրթել յընտրութի՟ այնոցիկ, և զի անիմաստութի՟ն այնքան զայս իմաստութիս վայելչագոյն զարդ է աշխարհիս ։ Պոսէէլ․ ա․ ծգ ։

[2] Ըստ չափոյ ցանկութե՟ արժէին իրքս այս․ քանզի դժուարին է սակ հատանել նոցա, եթէ ոչ զեղխութե՟ սահմանք հատանիցին ։ 'Ի Վեր․ յաղ․ անդր․ Ժդ ։

[3] Կորնթականքն առ մոլութե՟ սակաւուց յաճախագինք ։ յաղ․ կարճ․ կեն․ Ժբ ։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՑԱՂԱԳՍ ՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Թէ ուստի՛ և որպէս նկարչութեանն սկիզբն ։

Համագոյն ընդ արուեստից և նկարչութիւն 'ի սկզբանն անհարթ և անկերպարան էր ։ 'Ի շրջագիծ ստուերէ առն ծնաւ արուեստս այս, ուստի և քանդակն ։ Վասն որոյ նախծին ստուերագիր նկարչութեան գծիւք ոմամբ աւարտէր . և 'ի յաճախել գծիցն՝ ստեղծաւ գծագիր պատկերն . յոր ապա երանգն յաւելաւ ։ Նա երանգն 'ի սկզբանէ անխառն յիւրաքանչիւր պատկերս մի գոյն էր . վասն որոյ այն տարազ նկարչութեան Մոնոքրոմա կոչեցաւ, որ թարգմանի միագոյն ։ Ապա 'ի զարգանալ արուեստին՝ չորեքդեղեան նկարն խառն 'ի չորից երանգոց մուծաւ, զորմէ յետոյ ասասցուք ։ Ոչ հետազօտեմ զհնութիւն արուեստիս, որոյ եգիպտացիք պարծին գտօղք լեալ, և իցէ թերևս այնպէս . այլ ոչ նոքա ածին զայն 'ի շուք և 'ի փառս ։ Պլինիոս զճարտարս ազգի ազգի արուեստից և զճարտարագործ նկարս 'ի համար արկեալ, ոչ զոք յեգիպտացւոց յիշէ ։ Ապա ուրեմն յՀելլադա, 'ի Կորըն- Պլին. լե. գ ։

---

[1] Եկից արդ 'ի փոյթ նորա՝ որպէս ինքն անուանէ, զոր բարեկամք նորա ախտ և անզգայութիւն կոչեն, սիկիլիացիք աւազակութիւն . իսկ ես չգիտեմ զի՞նչ կոչեցից ։ Ան . ա ։

[2] Համարեա թէ բազումք 'ի դաւ սորա պակասեցին դիք 'ի Սիրակուսա, քան յաղթութեան Մարկեղեայ մարդիկ ։ Ան . Ճլա ։

թոս 'ի Սիկիոն յԱթէնս և յայլ քաղաքս աշխարհին , զարգացաւ նկարչութի̃ ։ Երևի արուեստս այս կրտսեր գոլ քան զքանդակագործութի̃ . զի Հոմերոս զանդրիս բազում ուրեք յիշատակէ և զբարձրևխոր քանդակս , և զփորագիրս . իսկ գծագիր կամ դեղանկար պատկեր ոչ ուրեք ։

Ի բազում ինչ՝ յորս երկոքին սոքա կցորդին . այլ 'ի նմանութի̃ բնութե̃ , յոր երկաքանչիւր նկրտին , ընդ այլ և այլ շաւիղ հասանեն ։ Քանդակագործութի̃ դրօշուածով 'ի նիւթ , նկարչութի̃ երանգօք 'ի տաստակի . ապաքէն գրոց 'ի ձեռին ճարտար քանդակողի գրեթէ զնոյն ազդէ , որ ինչ վրձին 'ի ձեռին նկարչի ։ Ես խտրեմ ընդ երկոսին , և ոչ զմին քան զմիւսն մեծարեմ . այլ զի՞նչ առաւել զարմանալի կայցէ քան դոյզն շարժմամբ գրչի ճարտարին՝ վիմի և պղնձոյ առնուլ զկենդանութի̃ , և դեղեալ վրձնաւ 'ի պաստառի՝ գծիւք ումամբք և լուսոյ ընդ ստուերի խառնմամբ հանել զբնութի̃ 'ի տաստակի[1] ։ Արամազդ 'ի փիդիայ նկարեալ , ասէ Սենեկա , շանթս թուի արձակել . իսկ Աթենաս՝ կամի իմն խրատել զտեսողս , այլ լռէ առ պատկառանաց ։ Ո՜ ախորժ ձեռնածութի̃ և բերկրալի խաբէութի̃ . որ առանց մոլորեցուցանելոյ ստէ , և պատրանօք զգայութե̃ց զմիտս կրթէ ։

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Յաղագս այլևայլ մասանց նկարչութեան , և յաղագս ճշմարտութեան 'ի նկարս ։

Նկարչութի̃ գծիւք և երանգօք յանդիման առնէ զերևելիքս 'ի տաստակի ։ Եթէ բազում ինչ իցեն 'ի միասին , և թէ մի ինչ նկարեալն , կոչի անխտիր պատկեր . և երեք ինչ 'ի նմա զանազանին՝ յօրինուած , գծագրութի̃ և ներկուած . առանց այսոցիկ ոչ ոք է քաջ նկարիչ ։

'Ի յօրինուածն՝ որ է առաջին մասն նկարչութե̃՝ երկու ինչ են , գիւտ և կարգ ։ Գիւտ է ընտրութի̃ մասանց իրին՝ զոր նկարիչն խորհի նկարել ։ Գիւտիցն՝ են որ պարզ վիպասանականք են , և են՝ որ առակաւորք ։ Այլասանականք ա՟մ մասամբք տան պարզապէս զտեսութիւն իրաց· ոչ միայն զվէպս ճշմարիտս և զառասպելեալս, այլ և զնկարագիր մարդկան, զքաղաքաց, զկենդանեաց և զա՟մ իսկ իրաց արուեստականաց և բնականաց։ Իսկ առակաւորն բոլոր կամ ըստ մասին այլ ինչ երևեալ, և այլ ինչ ցուցանէ· որպէս զրպարտութիւնն յԱպեղեայ նկարեալ՝ զոր ստորագրէ Ղուկիանոս, և եդից զայն ստորև։ Հանգոյն սմին և Հերակղէսն, և յաջմէ և յահեկէ նորա Աստղիկն և Աթենաս, որ բարոյական բերեն իմաստս· զի անդ դիքն ցուցանեն զհրապոյրս հեշտուե՟, և զառաքինուե՟ յորդորմունս։

---

[1] Փիդիայ չէր տեսեալ զԱրամազդ , այլ ամպայարոյց նկարեաց զնա . և ոչ զԱթենաս երևեալ նմա , այլ արժանի արուեստին հանճարոյն նկատեալ 'ի միտս զդիս՝ ընծայեաց զնոսա 'ի տեսիլ ։ ՍԵՆԷԿ. ՀԻՃ. Ե. ԻԳ ։

Լռեն բազում պատկառանօք , և սպասեն իբր թէ ահա պատասխանիցեն ։ Լոնկ ։

Կարգաւորութի՟ օգնէ յոյժ 'ի կատարելութիւն և 'ի յարգ նկարուն· զի թէպէտ և իրքն զարմանալի իցեն, և գիւտքն հանճարեղ, և ճշգրիտ նմանութի՟ն, այլ առանց կարգաւորուե՟ թերի է գործն։ Յարմար դասաւորութի՟ ախորժելի ընծայէ զայն· և յափշտակէ զուշ և զմիտս, ճարտար և քաջարուեստ դրութ՟ յիւրաքանչիւր բնիկ կայս զձևսն զետեղեալ։ Արդ այս յարմարական դրուե՟ կոչի կարգաւորութի՟։

Գծագրութի՟ իբր մասն նկարչուե՟ է շրջագրութի՟ ձևոց իրացն ըստ չափոյ և ըստ համեմատութե՟· և անկ է սա անխտիր նկարչին և քանդակագործի և ճարտարապետի և փորագրի, և բնաւ ա՟մ ճարտարաց՝ որոց պարտ է գեղոյ և չափակցութե՟ ուշ ունել։ Բազում ինչ խնդրին 'ի գծագրուե՟· ճշգրտութի՟, ընտիր ախորժակք, վայելչութի՟, նկարագիր, զանազանութի՟, կենդանութի՟ և ընդօրինակութի՟։ Այնչափ ինչ 'ի հարևանցի յաղագս նկարչութե՟ դնեմք, որով կարասցեն ընթերցողք իմանալ որ ինչ զնախնեացն նկարչութ՟է առաջի կայ մեզ ասել, և գիտակաւ ուղիղ դատաստան արասցեն։

Ճշգրտութի՟ 'ի նկարս է անսխալ չափ գծագրութե՟ն· առ որ կարևոր է ճիշդ համեմատութի՟, և հմտութի՟ կազմութե՟ մարդկեղէն մարմնոյ և անդամոց նորա։

Ախորժակք ըստ բնաւորուե՟ կամ ըստ վարժից նկարչին են, և վարժարանաց իւրաքանչիւր այլևայլ ախորժակք գծագրուե՟։ Յորմէ հետէ գեղարուեստք նորոգեցան յԵւրոպա, ընտրելագոյն հռոմէական ախորժակք համարին վասն նախնոյն նմանութե՟։ Ապա նախնեացն ախորժակ գծագրուե՟ ընտրելագոյն է։

Վայելչութիւն գծագրուե՟ է գեղեցկացուցանել զնախատիպն հանդերձ բնականութե՟։ Զայսմանէ լիով ստորև ասասցուք, զի է կարևորագոյն մասն։

Նկարագիր է յատուկ և առանձնաւոր նշանակ ընտրութե՟ ազգի ազգի իրաց, և իւրաքանչիւր նոցա տիպք նկարագրին այլևայլ յեղանակաւ նկարուն խոտրին ։

Զանազանութի՟ է ՚ի միում պատկերի այլևայլ գիծք և ներպարանք անձանց ըստ իւրաքանչիւր պատշաճի ։ Ճարտար նկարիչ նկատող է բազմադիմի բնութե՟ն, և զներպարան և զգործս միոյ միոյ՝ պէսպէս նկարէ ։ Զոր օրինակ անբաւ ազգ են տրտմութե՟ և ուրախութե՟. և քաջ նկարիչ ըստ հասակի, ըստ բնութե՟ և ըստ բարուց ազգաց և անձանց, և ըստ այլբիւր ազգի ազգի պայմանաց զանազանէ զայն, և զկարի յաճախեալն նկար՝ նորահրաշ գործէ ։

Կենդանութի՟ ՚ի նկարս նոյն ընդ կիրս համարի, այլ զանազանեալ է. զի կենդանութի՟ ցուցանէ հասարակաբար զներպարանս իրաց ըստ յատուկ նկարագրին՝ որ ինչ ձևացուցանէ նկարիչն ըստ պատշաճի պատկերին. իսկ կիրք են տիպք յուզման սրտի ՚ի դէմս գծագրեալ՝ հանդերձ շարժուածովք մարմնոյ. վասն որոյ ա՟մ կիրք բերեն զկենդանութի՟, այլ ոչ միշտ կենդանութի՟ զկիրս ։

Ընդօրինակութի՟ է արուեստ յանդիման առնելոյ զիրս՝ որ են ՚ի գիւրի, ըստ զանազանութե՟ նոցա այլևայլ հեռաւորութե՟ն ՚ի ձև և ՚ի գոյն ։ Կրկին է ընդօրինակութի՟, գծային և օդային. գծայնոյն է կարճել ըստ ճշգրիտ չափոյ զգիծս պատկերին, իսկ օդայնոյն՝ աղօտացուցանել ըստ ճշգրիտ աստիճանի զգոյնսն ։ Աստիճան գունոց ՚ի նկարս իմանի աղօտ և պայծառ լոյս, կամ ստուեր, կամ գոյն պատկերին՝ ըստ այլևայլ հեռաւորութե՟ն ։ Բերոլ տարապարտ նախանձախնդրութե՟ արգեաց՝ հնարի ցուցանել զընդօրինակութի՟ անծանօթ լեալ առաջնոց. և ապացոյց ածէ զսիւնն Տրայիանոսի, որ ոչ ըստ օրինաց ընդօրինակութե՟ շինեալ է[1] ։ Բայց Սալիէ համառօտ և գեղեցիկ ճառիւ ցուցանէ բազում վկայութե՟ք՝ զի չէր այն նոցա անծանօթ, այլ մանաւանդ ճարտար արուեստիւ պատրէին զաչս ՚ի նկարս իւրեանց, յեղանակեալ զչափ և զձև և զերանգս, գիտելով զաստկութի՟ և զպայծառութի՟ նոցա յաւելուլ և նուազել ։ Իսկ ՚ի սիւնն Տրայիանոսի ոչ առ տգիտութե՟ կարգաց արուեստին չպահին ճշգրիտ օրէնք ընդօրինակութե՟, այլ զի քաջք ՚ի ճարտարաց սովոր են և քան զօրէնսն զգօնանալ առ ՚ի հասանել անվրէպ յուշ նպատակին ։ Փիլ համարի խնայեալ ճարտարին յաչս տեսողաց՝ գեր քան զօրէնս արուեստին ճարտարուբ՟, և վասն դիւրատես և դիւրաւնին առնելոյ զայն՝ չայլայլեալ զաստիճանսն ։

---

[1] ՚Ի Գիրս յիշատակաց արձանագրութեանց ճեմարանին ։ Հատ. Ը ։

Ներկուածն այլ է 'ի գունոյ․ զի գունով կենդանի երևին տեսողաց իրք, իսկ ներկուած է մի յէացուցիչ մասանց նկարչութե՟ որով նկարիչն ընիկ գունովքն նկարէ զամ՟, խառնեալ արուեստիւ զպարզ երանգս 'ի դեղատախտակին ։ Նա է սա կարևորագոյն մասն․ զի ուսուցանէ զհրաշս խառնուածոյ լուսոյ ընդ ստուերի, որով բարձր և խոր նկարքն երևին ։ Յերկարագոյն մեկնէ զայս Պլինիոս․ որ յաղագս գծուծ և անկերպարան սկզբան նկարչութե՟ն խօսեցեալ՝ յաւելու ապա[1], զի ժամանակն և փորձ օգնեցին նմա 'ի զարգացումն, և ճարտարեաց երփներկ դեղովք զլոյսն և զստուեր՝ որ զմիմեանս երևեցուցանեն, և 'ի գործ էարկ զպայծառաղօտն՝ որ է ծայր և կատարումն արուեստի ներկուածոյն ։ Որ ոչ է սա լոյս, այլ իբր միջոց լուսոյ և ստուերի՝ որք խառնին 'ի նկարն ։ Վասն որոյ Հելլէնք կոչեն զայն աստիճան․ զի զոր օրինակ յերաժշտուե՟ բիւր ազգի ազգի ձայնիցն աստիճանաց ելևէջք են՝ որ անզգալապէս համաձայնին ընդ միմեանս 'ի յարմարուե՟ երգոց, այսպէս և 'ի նկարս է պայծառուե՟ իմ՟ և աստիճանք աղօտութե՟ գրեթէ անզգալի, որք ըստ բնական գունոց իրացն, և ըստ տեղեաց դիպաւորութե՟ փոփոխին ։ Սովին յարմարական բաշխմամբ լուսոյ և ստուերի կախարդեն նկարիչք զզգայութ՟իս, և իբր աճպարար ձեռնածուք պատրեն զտեսողս՝ նենգ գործեալ աչաց, հրաշալի արուեստիւ խառնելով զերփն գունոց և զկիսագոյնս և զամ՟ աղօտս երանգոց, որ կարևոր են առ աստիճանս գունոց իրացն․ որպէս զի և ոչ բնութ՟ին ճարտարագոյն խառնէ զերփն երանգոցն քան զնկարս նոցա ։

Այս են նկարչութե՟ն ողջ հրապոյրք՝ որով զօշոտեալ յինքն ձգէ զաչս, զտգիտաց և զգիտնոց և զձեռագիտաց իսկ արուեստին ։ Ո գեղանկար ուրուք պատկեր տեսեալ՝ չկարէ զանց առնել առ նովաւ, այլ ստիպի առ վայր մի զկայ առնուլ, զարմանալ և զմայլել 'ի պատրանսն ։ Ապա ճշգրիտ նկար այն է՝ որ խաբէուբ՟ իմ՟ կոչէ առ ինքն զտեսողս․ և բռնի ձգիմք 'ի նա ազդեցութե՟ն, որպէս թէ ունիցի ինչ ասել. Եւ ՚ի մտանելն տանա՝ ախորժեմք ընդ գեղեցիկ ընտրութ՟ին, և ընդ նոր տեսիլն, ընդ վէպսն, ընդ առասպելսն, ընդ հանճարեղ ստեղծման, և ընդ առակաւոր նկարս՝ որոց իմաստիցն գուշակութ՟բ բերկրիմք, կամ զդժուարահաս նսեմութ՟ին ստգտանեմք։

---

[1] Մինչև զարգացաւ արուեստն, լոյս և ստուերս հնարեալ՝ երփն երփն երանգոցն զիրեարս ցուցանելով ։ Յաւելաւ ապա պայծառն, որ ոչ է լոյս՝ այլ միջոց լուսոյն և ստուերի․ վասն որոյ կոչեցաւ աստիճան․ Պլին․ լե․ է ։

Եւ ոչ այսչափ միայն, այլ որպէս Արիստոտել ասէ ՚ի քերթողականին, և զհրէշս և զմեռեալս և զօրհասականս՝ յորս հայել ոչ իշխեմք, կամ սոսկմամբ թէ հայիցիմք, զնոսա ՚ի նկարս ախորժեմք տեսանել. և ՚ի նմանագոյնս նախատիպին առաւել ևս անյագ պշնումք. Անմեղ մանկանցն կոտորած ապաքէն արհաւիրս գործէր ականատեսից մոլեգնելոց դահճացն, որ զտղայս ՚ի գիրկս արիւնաթաթաւ մարցն խողխողէին. այլ ՚ի նկար Պռեւնայ եղերական տեսիլն զորով ևեթ ածեալ՝ ՚ի գութ խանդաղատէ, ոչ ինչ դժնդակ ՚ի միտս մեր թողլով։ Քանզի գիտեմք, զի ոչ աւելի քան զհաճոյս մեր յաճախէ նկարիչն զտրտմութ՟ի, և զի վեր ՚ի վերոյ թախիծք՝ ընդ անտես լինել պատկերին՝ անցանեն. իսկ ականատեսք իրացն ոչ կարեն ամոքել և ոչ կարճել զտրտմութ՟ի։

Այլ առաւել քան զամ՟ ինչ խնդրի ՚ի նկարս ճշմարտութ՟ի, որ լրումն է արուեստին[1]։ Չիք ինչ բարի, չիք ինչ հաճոյ, առանց ճշմարտութ՟ե. և ամ՟ արուեստք նմանողականք ՚ի կրթութ՟ի են և ՚ի զուարճութ՟ի, հաւատարմութ՟բ զէս յանդիման ածեալ։ Վասն որոյ ոչ ինչ անախորժ ընթերցողացն վարկուցեալ, յաւելումք ծայրաքաղ առնել ՚ի Փիլայ համառօտ ճառէն յաղագս ճշմարտութ՟ե՝ որ ՚ի նկարս, և մանաւանդ ՚ի թղթոյն՝ որ յետոյ նորա յաւելեալ է; զոր Կէ առ հարցուած տիկնոջ ուրումն գրէ պատասխանի։

ՅԱՂԱԳՍ ԹԷ ԶԻՆՉ Է ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ ՚Ի ՆԿԱՐՍ

Բայց թէպէտ և նմանութ՟ի է նկար, և կեղծիք պատկերքն, այլ անթերի զնկարագիր իրաց ածեալ՝ ճշմարիտք կոչին։ Երրեակ է ճշմարտութ՟ի ՚ի նկարս. պարզ, յօդուածոյ, և խառն կամ կատարեալ։

Պարզն, որ բուն ճշմարիտն կոչի, է անխառն և անփոփոխ նմանութ՟ի բնական կրից և իրաց. ըստ նախատալին՝ զոր ընտրէ նկարիչն, և ըստ առաջին երևմանն. որպէս զի ներկուածոյ մարմնոյն՝ ճշմարտիւ թուել մարմին, և հանդերձիցն՝ կերպաս պէսպէս, և իրաց իւրաքանչիւր ճշգրիտ զնկարագիրն բերել։

---

[1] Պատկերք աննմանք ճշմարտին՝ խոտանք են։ Վիտր. Է. Ե։

Ճշմարտութիւն յօդուածոյ զայլեայլ կատարելութիւնս՝ որոց չմարթի ՚ի միասին պատահել՝ յօդէ ՚ի մի, ՚ի բազում նախատպաց ժողովեալ, և մանաւանդ ըստ նախնեաց օրինակի։

Իսկ խառնն՝ ՚ի պարզէն և ՚ի յօդելոյն խառնեալ՝ զլրումն արուեստին բաղադրութեան գործէ, և զկատարեալ նմանութիւն գեղոյ բնութեան։ Վասն որոյ ՚ի դէպ է ասել՝ թէ ճարտարութիւն նկարչին է ըստ քաջութեան ՚ի պարզ և ՚ի յօդուածոյ ճշմարտութիւնս, և ըստ ներկուռ աջողութեան՝ ՚ի խառնել զայնս։ Սովաւ կցորդին կարծեցեալ հակառակքն, նմանութիւն բնութեան և ՚ի բնականին նմանութեան սահմանի ոչ առնուլ զկայ. յաւելուլ ՚ի գեղ բնութեան առ ՚ի հաւասարել նմա, և զթերութիւնս նորա ուղղել՝ վասն առաւել ընդօստուցանելոյ զտեսողս։

Պարզ ճշմարիտն գործէ զկիրս և զկենդանութիւն. յօդեալն ընտրէ արուեստիւ որ ինչ ՚ի գեղ և ՚ի յոյզս կրից պատկանին, այլ անդստին ՚ի պարզ ճշմարտէն առեալ. որ թէպէտ ըստ մասին ինչ աղքատ է, այլ ըստ բոլորին ճոխ։ Եթէ յօդուածոյն ոչ պահեսցէ զպարզն, այլ ընկղմեսցէ զայն, և զյաւելեալսն ևեթ յիւրմէ երևեցուսցէ, օտարանայ արուեստն ՚ի բնականէն, և ոչ զբնութիւն՝ այլ զանձն յանդիման առնէ, փոխանակեալ ՚ի տեղի նորա. և պատրէ զյոյս տեսողացն, և ոչ զաչս. և զհաղբանս չկարէ ծածկել, այլ նշաւակէ։

Իսկ ՚ի հակառակէն՝ պարզն, որ ունի ճշմարտիւ զկիրս և զկենդանութիւն՝ այլ ոչ միշտ զազնուութիւն զճշգրտութիւն և զվայելչութիւն այլոցն, եթէ իցէ ամայի ՚ի յօդելոյն՝ որ ազնիւն է և կատարեալ, ոչ լիցի հաճոյ՝ բայց եթէ վայելուչ իցէ և անթերի. և պակասէ ՚ի նկարն՝ որ ինչ ՚ի նախատիպն թերի իցէ։

Ապա յօդուածոյն յաւելու ՚ի նախատիպն զպակասորդն՝ որում մարթէր չպակասել, և որ գոյ իսկ յայլս բազումս. և յօդէ ՚ի մի՝ զորս բնութիւն միշտ իսկ գոգցես բաշխէ ՚ի բազումս։ Յօդեալս այս գրեթէ ոչ ինչ ընդհատ ՚ի բուն ճշմարտէն հարազատ է. զի ոչ ինչ ստեղծանէ, այլ ընտրէ յամենեցունց։ Խելամուտ է ամենայնի՝ որ ինչ հաճոյն է և օգտակար և կենդանացուցիչ պատկերին. և որ կարի դժուարագէտն ինչ իցէ, ոչ զերծանի ՚ի նմանէ ։ Հարևանցի դիպուածոյ՝ կայուա̃մն տայ նկարագրաւ. և բիւրազգի դեղովք յօրինի, որպէս զի կանոնաւոր գոլով չիցէ ընաւ միակերպ։ Վասն որոյ երկոքին սոքա ընդ միմեանս խառնեալ՝ հրաշալի̃ ունին զօրութի̃. զի անդ է անթերի նմանութի̃ ա̃մի՝ որ ինչ իմաստնագոյն և ազդողագոյն և կատարելագոյն ինչ է յերկս ։ Ճշմարտատիպ է ա̃մ, զի է ա̃մն ճշմարիտ. և հրաշալի ա̃մ, զի դուն ուրեք նմանն տեսանի ։ Ազդէ ա̃մ, զի ազդողականքն ընտրեալ են իրք. և ոչ ինչ արուեստակեալ 'ի նմա թուի, զի ընդ զարմանալին և ընդ կատարեալն՝ բնականն ընտրեալ է ։ Զքնաղս այս ճշմարտատիպ յաճախակի և քան զճշմարիտն թուի ճշմարտագոյն. զի պարզ ճշմարիտն 'ի ներքս խառնեալ՝ պատրէ զաչս տեսողաց, ծածկէ զբազում թերութիս, և երևի առանց դիտելոյ ։ Արդ յերրորդս յայս ճշմարտութե̃ չև ևս ոք ժամանեաց. այլ որ հպաւորագոյնն մատեաւ՝ գտաւ ճարտարագոյն ։

Սոքիմբք, որ ինչ ցայս վայր զկարևոր մասանց նկարչութե̃ ասացաք, դիւրիմաց լիցի ընթերցողաց առաջիկայս համառօտ պատմութի̃ նկարչաց ։ Ճարտարք արուեստին միաբան վկայեն, զի չև ևս եկաց ոք նկարիչ ամենևին անթերի. զի կէսք հանճարեղ 'ի գիւտսն եղեն, այլք քաջ 'ի գծագիրն, ոմանք 'ի ներկուածն աջող, կէսք 'ի կենդանութի̃ն, և այլք դարձեալ 'ի գեղն և 'ի վայելչութի̃. ոչ ոք զա̃մ մասունս արուեստին բովանդակեաց. այլ այս ա̃մ ճարտարութիք, և այլքն ևս լռեցեալքն յոլովք, 'ի բազումս բաշխեալ եղեն, ճարտարագունիցն զառաւելագոյնս յայնցանէ 'ի մի կցորդեալ ։

Յոյժ կարևոր է գիտել, յոր ինչ իւրաքանչիւր ոք 'ի բնէ ունիցի միտումն. զի հանճար մարդոյ 'ի մի սահմանի արուեստ, և ոչ 'ի մին բովանդակ՝ այլ 'ի մասն ինչ նորա, յոր միայն գերազանցէ ։ Իսկ որ անդր ևս ձգտին, 'ի վայր քան զմինլքոր ձեռագէտսն գտանին[1] ։ Բազում ինչ յաւելու արուեստ 'ի հանճարն, այլ զթերին մասանց նորա լնուլ ոչ ունի. հանճարով գործի ա̃մ, և է հանճար բաւականութիւն մարդոյ 'ի բնէ բարւոք և աջող գործելոյ ինչ՝ զոր այլք բազում աշխատութ̃բ և յոռի գործեն[2] ։ Է, որ առանց օրինաց արուեստին՝ հաճոյ աչաց նկարէ. և է՝ որ օրինօքն հանդերձ անհաճոյ, զի բարեմասին ոչ եհաս՝ ունելոյ զհանճար արուեստին։ Քանզի սա հուր է, և զմիտս նկարչին գեր 'ի վեր ամբառնայ, և շունչ իմն և հոգի 'ի նկարսն խառնէ, և է որպէս խանդ քերթողի։

---

[1] Գլուխ արուեստից յիրաւի ասացաւ պատշաճն. զի ոչ սա առանց արուեստի, և ոչ արուեստ բաւական է տալ ինքնին զայնոյն ։ Կուինտիլիանոս. ժա. դ ։

[2] Յոմանս ճարտարութի̃ առանց վայելչութե̃, յայլս թերութիքն իսկ վայելուչք են ։ Կիկ. ժա. դ ։

Բայց թէպէտ և չիք նկարիչ ոմն մասամբք կատարեալ, այլ յոլովք 'ի ձեռակերտաց քաջաց ճարտարացն համարին կատարեալ յազգս իւրեանց, ըստ տկար բնութեանս պայմանի։ Եւ հաւաստիք կատարելութեան նոցա են, զի ազդեն վաղվաղակի 'ի տեսողս 'ի տգէտս և 'ի գիտունս. բայց[1] տգէտք զուարճանան ևեթ, իսկ գիտունք խելամուտ լինին պատճառացն։ Ի քերթութիւնս և 'ի նկարս՝ զգայութեան դատաստան անժխտելի է. զի ահա 'ի լուր ողբերգութեան կամ 'ի տեսիլ պատկերի՝ յարտասուս շարժիմք, առանց քննելոյ թէ իցէ՞ն արժանի արտասուաց իրքն նկարագրեալ 'ի քերթողէն կամ 'ի նկարչէն, և կամ թէ ողջ զնկարագիրն ածիցէ՞ն. չև մտաբերեալ 'ի քնին՝ զգայութիւք զչափ առնումք։ Զգացմամբն՝ որով հեծեմք 'ի տեսանել զմայր յուղարկաւոր որդւոյ 'ի գերեզման, նովին 'ի տեսարանի կամ 'ի պատկերի զճշգրիտ նմանութիւն աղետիցն տեսեալ՝ արտասուեմք[2]։ Սմին իրի և ամբոխն կարէ առնել դատաստան արդար զքերթածաց և զնկարուց։ Զի, որպէս ասէ Կիկերոն, ոմն մարդիկ ընդաբոյս զգացմամբն՝ առանց գիտելոյ զօրէնս արուեստից՝ ընտրեն զգործսն, որ քաջարուեստն իցէ և որ անարուեստ։

Եւ մի ոք զարմասցի զի զնկարչութիւն ընդ քերթողութեան հաւասարեմք. քանզի Սիմոնիդեայ հանճարեղ ասացուածն ամենեցուն է յայտնի՝ թէ նկար է համր քերթութիւն, և քերթութիւն նկար խօսուն։ Իսկ թէ ո՞ յերկուցն քաջ ևս յանդիման առնիցէ զիրս, և կատարելագոյն զնկարագիրն տացէ, ոչ քննեմք՝ անստերիւր կալեալ զառաջադրութիւնս։ Այլ զայսմանէ քաջ ճառէ մատենագիր ոմն 'ի Քննողական տեսութիւնս բանաստեղծութեան և նկարչութեան, յորմէ բազում ինչ առեալ ասացաք։ Զայս միայն յաւելումք. զի որովհետև նկարն միակ գործ յանդիման առնէ, և զվայրկեան ժամանակի տեսիլ, չէ մարթ նկարչին զկանխագոյն և զհետագայ հանգամանս իրայն ազդողականս 'ի ներքս ածել, ևս առաւել զայլևայլ կիրս և զխօսս՝ որ յաւելուն յոյժ զկենդանութի․ իսկ քերթողն ազատ է յերկաքանչիւրն և համարձակ, և ընդարձակէ զայնս ըստ պատշաճի ։

---

[1] Հմուտք խելամուտ լինին արուեստին, տգէտք զմայլին միայն։ Կուինտ. Թ. Դ։

[2] Եւ մի ոք զարմասցի՝ զի և տգէտ ամբոխն զայսօրինակ ստգտանէ. զի որպէս յամի, և ըստ մեծ և չհաւատալի զօրութեան է բնութեան. և ամենեքեան զանխուլ ազդեցութեամբ՝ առանց գիտութեան արուեստին և պատճառացն՝ ընտրեն զուղիղն և զթիւր յարուեստս և 'ի պատճառս։ Կիկ. Ճրտ. Գ. ճղէ։

Մինչ չև 'ի պատմութի նկարչացն մատուցեալ, մնայ մեզ զպէսպէս նկարուց տալ համառօտ տեղեկութի ։

ՅՕԴՈՒԱԾ Գ․

Յաղագս ազգի ազգի նկարչութեան ։

Յառաջ քան զգիւտ իւղազանգ ներկոյն՝ նկարիչք 'ի ծեփ տամուկ կամ ջրազանգ դեղովք նկարէին ։ Նկար 'ի ծեփ տամուկ այն է, որ ջրով թրմեալ ներկովք՝ 'ի վերայ այն ինչ քսեցոյ ծեփոյ նկարի, որպէս յորմս և 'ի գմբեթայարկս նկարին պատկերք․ յորս ներկոյն ընդ քսոյ զանգեալ՝ ընդ նմա կեայ, և ընդ նմա եղծանի ։ Որմք մեհենին Դիոսկուրացւոց [1] յԱթէնս ջրազանգ ներկով նկարեալ էին 'ի Պողիգնոտեայ և 'ի Միկոնեայ յաւուրս պեղոպոնեսեան մարտին․ և Պաւսանիաս մինչև յիւր ժամանակն ասէ պահեալ զնոսա, ամօք իբր Պաւս․ լԹ․ Ճ։ վեցհարիւրովք յետոյ քան զՊողիգնոտ ։ Այլ Ճարտար նկարիչք դուն ուրեք նկարէին 'ի ծեփ, ասէ Պլինիոս, զի մի՛ վաստակք նոցա արգելցին 'ի տունս ումանց, և առ 'ի չմատնելոյ 'ի Ճարակ հրդեհին զհրաշակերտս իւրեանց յանդիւտ կորուստ․ այլ 'ի կրելիս վաստակէին, զոր յարկածս հրայրեցաց մարթ էր ապրեցուցանել յայլ տեղի ։ Ձեռագործք Ճարտար նկարչացն, ասէ Պլինիոս [2], հսկէին գոգցես յապարանս և 'ի մեհեանս և 'ի քաղաքս՝ զի 'ի շրջուկ խռովութե պատրաստ գտցին 'ի զերծումն․ և նկարիչ քաջ որպէս արդարև հասարակաց մեծութի էր, և զանձ աշխարհին ։

Իսկ ջրազանգ կոչին նկարք, որ 'ի սօսինձ կամ 'ի խէժ թացեալ ներկովք նկարին ։

Իւղազանգ դեղոց նկարք անծանօթ էին առ հինս, և եմոյծ զայն նկարիչ ումն բեղգացի Յովհաննէս Այքեան, որ յաճախ ևս բրուգացի կոչի, կացեալ 'ի սկիզբն հն֊

---

[1] Դիոսկուրացիք անուանին Կաստոր և Պողիդևկէս որդիք Դիոսյ ։

[2] Ամենայն արուեստք նոցա հսկէին 'ի քաղաքս, և նկարիչ՝ հասարակաց էր ամ երկրի ։

գետասաներորդ դարու։ Այս գիւտ՝ այնչափ ժամանակս անյայտ՝ ոչ այլ ինչ էր, բայց զանգանել զներկս յիւղ ընկուզի կամ կտաւի. այլ օգուտ մեծ գործեաց սա նկարչութեան։ Զի սովաւ երփն երփն երանգոյն քաջ խառնեալ յիրեարս՝ մեղմ և փափուկ և հաճոյ աչաց զներկուածսն առնէ, և նուրբ և ողորկ զամենայն զնկարն, որ այլազգ չմարթի։ Իւղաթուրմ դեղովք յորմս, 'ի տախտակի, 'ի պաստառի, 'ի վիմի, և յազգի ազգի հալականս գործին նկարք։

Նախնիք[1] 'ի տախտակս սպիտակեալս կաւճով նկարէին, որպէս պատմեն. ուստի առ հռոմայեցիս դեղանկար պատկերք՝ տախտակք կոչեցան. իսկ 'ի պաստառս նկարել՝ որպէս այժմ, չէ ինչ վաղնջական գիւտ։ Պլինեայ լե. է. 'ի համար արկեալ զազգս ազգս ներկոց՝ զոր յաւուրս իւր նկարիչք 'ի կիր արկանէին, յաւելու և ասէ. Հայեցեալ յերփն երփն երանգոյս և ներկուածոյ՝ յոյժ զարմանամ ընդ ճարտարութիւն նախնեացն և ընդ սակաւապիտութիւն[2]. զի նոքա չորիւք եւեթ պարզ և սկզբնական գունովք նկարեալ թողին զանմահ ձեռագործսն, ընդ որս և արդ աքանչանամք։ Զսպիտակն եւեթ Մելեայ, զդեղինն Աթենայ, զկարմիրն Սինոպայ և զսեաւ պարզ 'ի գործ արկին. այլ ճարտարութեամբ արուեստին Ապեղէս և Մելանթիոս, վեհագոյնք նկարչաց ամենեցուն, ճարտարեցին զհրաշալի նկարսն՝ որոց ոչ բաւէին մեծութիւնք քաղաքաց 'ի գինս։ Սակայն կատարելագոյնք լինէին վաստակք նոցա, եթէ 'ի քառեակ գոյնսն յաւելուլին և յաճախեալքն երկոքին երանգք ակնահաճոյք՝ խաժն կամ կապոյտ երկնագոյն, և դալարագեղ կանաչն։

Էր առ նախնիս և այլ ազգ նկարչութեան յաճախեալ Պլին. լե. է. յոյժ յաւուրս Պլինեայ, Այրեցականն[3]. յոր փոխանակ ներկոյ՝ մոմ 'ի կիր արկանէին, և վրձին դուն ուրեք կամ բնաւ իսկ ոչ. այլ ճարտարութեամբ արուեստին էր 'ի պատրաստել գունագոյն զմոմն, և 'ի փայտ կամ 'ի փղոսկր արծնել նովաւ։

Մանրանկարն պարզ և անօսր ջրազանգ դեղովք նկարի, խիժիւ առանց իւղոյ։ Եւ որոշի յայլոց նկարուց կարի նրբութ՟ն, և 'ի մօտոյ ունելով զտեսիլն, զի մանունք ևեթ նկարին նովաւ պատկերք 'ի մագաղաթի կամ 'ի վերայ թիթղանց փղոսկրեից։

---

[1] Պատուէր ետ Ներոն իշխան՝ նկարել իւր պատկեր հսկայաձև հարիւր և քսան ոտնաչափ 'ի պաստառի, որ մինչև ցայնժամ անծանօթ էր։ Պլին. լե. է։

[2] Չորիւք եւեթ երանգօք զանմահական գործսն թողին ... Ապեղէս և Մելանթիոս ... գերապայծառք 'ի նկարիչս. որոց մին մի նկար արժէր զգանձս քաղաքաց։

[3] Թէ ո՛ նախ զարծնելն կամ զմոմով նկարել հնարեցաւ՝ չէ յայտ։ Պլին...։

Է և զանգուածով նկարն մեծարգի և փափուկ յոյժ. և զանգուածն է երփն երփն ներկոց զանգեալ 'ի խեժ, և լեսեալ 'ի միասին կամ ուրոյն, և որպէս գծրիչ կապարեայ ձողաձև գործեալ, որով նկարեն 'ի թղթի կամ 'ի մագաղաթի։

Նկարի և յապակի խուղաղանգ դեղովք, որպէս 'ի յասպիսն, և յայլ ազնիւ քարինս. այլ գեղեցկագոյն յապակւոջն է, յորում թափանցիկ 'ի յետուստ երփն երանգոցն տեսանի։ Էր երբեմն և արուեստ տարրացուցանելոյ յապակւոջ զներկս, որպէս է տեսանել 'ի սուրբ մատրանն և յայլ եկեղեցիս. այլ արդ կորուսեալ ասի արուեստն այն։

Է և գրակոնտիկոնն նկար 'ի գունաւոր ապակւոյ՝ որ խառնի հաւասար յանագէ և 'ի կապարէ, լուծեալ հրով 'ի կիր, և յաւելեալ յայն ներկս հրահալս ուրոյն՝ որ ինչ գոյն և կամք իցեն։ Գրակոնտիկոն ասին և որ հանածոյ ներկովք գործին նկարքն, թրծեալ 'ի հուր։ Ապիկին և փաւենտեան խեցեղէնք, և կճիճք ապիկանք, և սոքա տեսակք են գրակոնտիկոնի, որով և 'ի վաղ ժամանակս բռէին զխեցեղէնս. զի յաւուրց Պորսեննայ արքային ետրուրացւոց՝ գործէին յԷտրուրիա անօթք բազումք բռեալք նկարէնք։

Միւսիոնն կամ յախճապակ մանրամասն յօրինեալ նկար, է կիտուած 'ի մանունց յերփնագոյն և յայլաձև խճից՝ յեռեալ 'ի ծեփ խառնուածոյ 'ի կրոյ և 'ի փոշւոյ սպիտակ կճոյ։ Յախճապակեայք 'ի սկզբանէ յօրինէին ձեղունք և յատակք նկարակերպք. ապա և զորմս սկսան նկարիչք յախճապակել, և մանրամասին ազգի ազգի յօրինուածով զմեհեանս և զապարանս պճնեցին, 'ի գործ արկեալ զապակի և զգրակոնտիկոն մանրեալ 'ի խիճս այլաչափս յերփնագոյնս՝ որ փայլմամբն և հրաշազան զորկութ՟ հաճոյ աչաց թուին 'ի հեռուստ, և յանհարթութ՟է օդոց անճխասելիք են իբրև զկիճ։ Վասն որոյ յախճապակն քան զա՟մ ազգս նկարուց 'ի մասինս յայսմիկ գերազանցէ. զի նոքա եղծանին ժամանակաւ և ծախին, իսկ սա յաւելու հնութ՟ն 'ի գեղեցկութ՟ի, և յերկարակեաց է, գրեթէ և անմահ։ 'Ի Հռոմ և բազում այլ ուրեք յԻտալիա գտանին մնացուածք մանրախիճ նկարուց նախնի ճարտարացն. այլ եթէ ոք սոքիմբք դատաստան արասցէ զնախնեացն նկարչուէ, սխալէ։ Զի կոպիճք և խիճք ապակւոյ, որովք զյախճապակեայ պատկերսն նկարեցին, չմարթեն հաւասարել գեղոյ և վայելչուէ որ վրձնաւ ճարտարին տպաւորին 'ի նկարս։ ԱՄ ԱՀ·

ՅՕԴՈՒԱԾ Դ.

Երեւելագունից նկարչաց, որ կային 'ի յունաստան, համառօտ պատմութիւն։

Ասասցուք այժմ զնկարչաց՝ որ առաւել անուանիքն եղեն, առանց խնդրելոյ՝ թէ ո՞յք նախ զվրձին արկին 'ի գործ։ Զսոցանէ Պլինիոս 'ի բնապատումն իւր գիրս պատմէ. ուստի մեծաւ մասամբ առնումք զպատմութիւն։ Պլին. Ը. Ը. Գ. Լ. Միանգամ զեկուցումն շատ լիցի, զի մի՛ վէր 'ի վայր զմատենագրին անունն յեղյեղեսցուք։

ՓԻԴԻԱՍ ԵՒ ՊԱՆԵՆՈՍ

Փիդիաս յութսներորդի չորրորդի ողիմպիադին եկաց, նախ նկարիչ, և ապա քանդակագործ։ Նկարեաց յԱթէնս զերեւելոյն Պերիկղեայ զպատկերն, որ ողիմպիականն կոչեցաւ վասն վսեմ և շանթաձիգ ճարտարխօսուէն։ Զսմանէ լիով ասացաք 'ի ճառս քանդակագործութէ։ 4560.

Պայծառանայր և Պանենոս եղբայր նորա 'ի նկարիչս ժամանակին. և նկարեաց նա զմարաթոնական բազմահռչակ մարտին զպատկեր, յորում աթենացիք ճակատու պատերազմի խորտակեցին զՊարսս։ Եւ էին զօրավարք երկաքանչիւր կողմանց 'ի պատկերի անդ ըստ բնական չափոյ հասակի, և համանմանք նախատպացն։

ՊՈՂԻԳՆՈՏ

Որդի և աշակերտ Ագղաւոփոնի Թասոսացի. եկաց 'ի յիններորդի ողիմպիադին։ Թասոս է կղզի 'ի հիւսիսոյ եգէական ծովուն։ Սա եմոյծ վայելչութի 'ի նկարս, և զարգացոյց յոյժ զարուեստն, զի յառաջքան զնա ըստ կենդանութէ մասին թերի էր։ Անդրիս սկսեալ ձուլել, ապա 'ի նկարչուի ձեռն էարկ. և 'ի բազում մասին գերազանցեաց։ 3582.

ԱՄ ԱՌ. Քան զա՟մ նկարս նորա պատուեցաւ ըստ ա՟մ մասանց արուեստին պատկերն, զոր նկարեաց յԱթէնս 'ի սրահն անուանեալ Նկարէն[1], զդէպս երեւելիս պատերազմին Տրովադայ յանդիման ածելով: Այլ ընդ ցանկալի և ընդ մեծարգի վաստակոցն չէառ վարձս, զարմանալի ազնուականութե՟. զի որք 'ի ձեռացն արուեստէ կեան՝ սակաւք 'ի նոցանէ գտանին այսպիսիք: Վասն որոյ Ամփիկտիոնքն, ատենակալք ա՟մ յունաստանի, հրովարտակ արարեալ շնորհակալութե՟ 'ի դիմաց ա՟մ ազգին՝ հրաման ետուն, ընդ ա՟մ քաղաքս՝ յոր և երթայցէ՝ 'ի գանձուց հասարակաց կեալ նմա, և յա՟մ հարկաց աշխարհին 'ի բաց արձակել: Իսկ Միկոն նկարիչ յայլ կողմն գաւթին նկարեալ պատկեր, և յազնուականութե՟ Պողիգնոտեայ վերջացեալ, զի թերևս և չքաւորագոյն էր, էառ արծաթ 'ի վարձս. և հակառակաւն զհամարուեստին յաւել զփառս:

ԱՊՈՂԻԴՈՐ

3596. Եկաց յԱթէնս յիննսներորդի երրորդի ողիմպիադին: Սա հնարեցաւ զկենդանութի՟ և զկատարեալ գեղեցկութի՟ նկարուց, ոչ միայն գծագրութե՟ն ճշգրտութե՟՝ այլ և ճարտար ներկուածոյն, և քաջ բաշխմամբ լուսոյն և ստուերին, և պայծառ ընդ աղօտ խառնուածոյն. որով յաւել զօրութի՟ և վայելչութի՟ 'ի նկարս. Յառաջ քան զնա, ասէ Պլինիոս, չգտանէր պատկեր՝ որ զտեսողացն յինքն ձգէր զաչս. զի ճարտար նկարուց է՝ պշուցանել զտեսողս, ձգել զնոսա առ իւրեանս, և զարմացուցանել:

Պլին. Թղթ. Հ. Գ. Կրտսերն Պլինիոս 'ի հնուենցն Կորնթոսի գծերոյ ուրումն պատկեր կանգուն յոտին քաջ նկարագրէ, զոր իւր իսկ գնոց առեալ էր. և 'ի կատարած գեղեցիկ նկարագրին ասէ. Եւ ա՟մ մասամբք ճարտար, զարուեստագիտացն պշուցանելով զաչս, զտգիտացն զուարճացուցանելով:

ԶԵՒՔՍԻՍ

3564. Բնիկ արակլացի[2], վարժեալ 'ի նկարչութի՟ յութսներորդի հինգերորդի ողիմպիադին: Ոմանէ ասէ Պլինիոս¹, թէ զդրունս նկարչութե̃ եգիտ բացեալ ջանիւ և ճարտարութե̃ Ապողոդորայ վարժապետին իւրոյ, և անաշխատ եմուտ ընդ այն. և զվրձինն, որ այն ինչ խրախուսէր, մղեաց յանզուգական փառս: Դրունս նկարչութե̃ իմա զհմտութի̃ երանգոյն և զաստիճանաց պայծառութեան. որ լրումն է արուեստին, և թերի էր այն: Ապողոդոր բազում ինչ և մեծամեծս եգիտ, այլ ոչ միշտ հնարագիւտք 'ի կատարումն ածեն զգիւտսն: Զեւքսիս հրահանգօք վարժապետին յաւել քան զնա յերկոսին ազնուագոյն մասունս արուեստին: Վասն որոյ Ապողոդոր զչարեալ ընդ գողացիկ փառս աշակերտին, կշտամբեաց զնա դառն երգիծական տաղիւ՝ որպէս զյափշտակող, իբր թէ գողացեալ զարուեստ նորա՝ որպէս իւրո̃ պերճանայր նովաւ: Այլ ոչ կասեցաւ այնու աշակերտն 'ի նմանութե̃ վարդապետին. նա մանաւանդ յաւել 'ի ճիգն՝ զիւրև իսկ գերազանցել որպէս զվարժապետաւն: Իսկ քաջ յաջողեցաւ ճարտար նկարուքն, փառաւորեալ և մեծացեալ յոյժ: Այլ եթէ զարմանալի ինչ պարտ իցէ ասել, սնափառէր նոքօք մանկաբար, և հրապարակացոյց առնէր զանձն սիգալով, մանաւանդ 'ի հանդէսս երեւելիս. որպէս յողիմպիական տօնս խաղուց յանդիման ամ̃ յունաստանի ծիրանազգեաց երևեալ, և 'ի վերայ կերպասուցն զանուն իւր ոսկեգիր դրոշմեալ:

---

[1] Սրահն այն կամ պէսպէս նկարուցն և զարդուց խուցեայ Նկարէն:

[2] Արակլեա ըստ [illegible] [illegible] մատենագիրք, է յայս. նէ Արակլեայ

Իսկ իբրև մեծացաւ յոյժ՝ ձրի զնկարսն բաշխէր, պատճառս ամբարտաւանագոյնս ածեալ՝ թէ զի անգինք են², յայն սակս տամ ձրի: Զոր լաւ ևս էր թէ այլք ասէին: Հանգոյն այսմ և արձանագիրն՝ զոր 'ի ներքոյ պատկերի ըմբշին եդ, ընդ որ յոյժ հաճեցեալ զարմանայր, և գովէր զայն հանապազ որպէս ճարտարագոյն 'ի նկարս իւր և անզուգական: Իսկ արձանագրին իմաստ այս էր, հելլէն չափաւ.

³ Զարմանահրաշ ըմբշիս 'ի տես
Մոխրդ դու մրցիս ընդ վայր.
Յաչաղել զայն այս՝ կարես,
Այլ 'ի նմանել ես ապիկար:

բազումք էին. Երեւի հաւանագոյն Մակեդոնիայն գոլ. կամ Հերակլեանն մերձ 'ի Կրետէն:

[1] Ընդ դրունս՝ զոր եբաց Ապողոդոր՝ եմուտ Զեւքսիս … և զբաջայանդուգն զվրձինն ած 'ի մեծ փառս:

[2] Խորհեցաւ ապա զձեռագործս իւր բաշխել այլոց որպէս անգինս:

[3] Այսպէս յառաջագոյն է զիմաստս այս պատմել նկարչութե̃ նախնեաց, առեալ զայն յերեսներորդ հինգերորդ Բնապատմական գրոյն Պլինեայ. և ըստ յարմարական թարգմանութեան տնէ և ըն-

Պղուտարք. յղ. փառ. Աթէն. 346. Բայց 'ի գիրս Պլուտարքեայ զնկարուց Ապողոդորի է ասացեալ հելլէն տողն. և ունի այսպէս

Եպերել ոք քան թէ նմանել է կարող.

Զեւքսեայ բազումք էին ոսոխք, և երևելիք 'ի նոցանէ Տիմանթէս և Պարրաս, որ և յամենաժողով տօնս խաղուց՝ ուր նկարչացն մրցանակք բաշխէին, 'ի վէճ եկաց ընդ նմա։ Զեւքսեայ ողկոյզս խաղողոյ այնպէս ճարտար նկարեալ, զի 'ի դնելն զայն 'ի տեսիլ՝ իջին անդր թռչունք կտցել զհատս խաղողոյն. վասն որոյ ուրախ լեալ, և վստահ իսկ 'ի յաղթութիւնն՝ համարելով զայն անկապուտ և անկասկածելի, ձայն տայր ոսոխին՝ զիւրն 'ի մէջ մատուցանել. և Պարրաս ած վաղվաղակի զնըկարն աքօղեալ նուրբ բեհեզիւ։ Ասէ Զեւքսիս. 'Ի բաց առ զքօղդ, զի ճարտար նկարդ երևեսցի։ Այլ քօղն իսկ էր նկարեալ։ Յայնժամ Զեւքսեայ զպարտութիւն յանձն առեալ՝ ասէ. Ես զթռչունս պատրեցի, իսկ Պարրաս զիս՝ զայր նկարիչ։

Նոյն ինքն նկարեաց կողով խաղողոյ 'ի ձեռին մանկան, յոր իջին թռչունք. և անտի իմաստասիրեաց, զի թէպէտ և ողկոյզքն քաջ նկարեալ էին, այլ եթէ ոչ անարուեստ նկարեալ էր մանուկն՝ խրտնուլին արդեօք 'ի նմանէ թռչունք։

Զսմանէ ասէ Կուինտիլիանոս[1], զի որ ինչ կերպարանս և նկարագիր դիցն և դիւցազանց ետ՝ ըստ նմին օրինակի նկարէին նախնի նկարիչք. վասն որոյ օրէնսդիր նկարչաց կոչեցաւ։ Եւ Փեստոս պատմէ՝ զի յետ ամենայն վաստակոցն զկենդանագիր պառաւոյ նկարեալ, և 'ի տեսիլ նորա 'ի բազում ծաղուէն նուաղեալ, մեռաւ։ Զարմանք են, զի զայս Վերրիոս Փլակկոս միայն, և 'ի նմանէ Փեստոս առեալ գրէ. որ թէպէտ և դժուարահաւատալի դէպք են, ասէ Փիլ, սակայն և այլ ուրեք պատմի այս դիպեալ։

թին ընտրանն։ Յամին 1725 տպագրեալ է 'ի Լոնդոնոն գիրս այս. յորում և են բազում ինչ հանճարեղ 'ի նիւր ատի։

[1] Այնպէս զամ ինչ նկարէր, մինչև օրէնսդիր կոչեցաւ. զի ըզդիցն և զդիւցազանց պատկերս, որպէս նոյն կերպարանեաց, ըստ նմին օրինակի պարտ համարէին այլք նկարել։

ՊԱՐՐԱՍ

Սա էր եփեսացի, որդի և աշակերտ Եւենորայ, ոսոխ Զեւքսեայ, որպէս ասացաք։ Եւ համարէին երկոքին սոքա ճարտարագոյնք 'ի նկարիչս ժամանակին, որ էր նկարչութե՟ն դար բարենշան։ Կուինտիլիանոս[1] ասէ զնոցանէ՝ թէ զնկարչութի՟ մերձ 'ի ծայր կատարելութե՟ ածին, Պարրաս ըստ գծագրուե՟ն, Զեւքսիս ըստ ներկուածոյն։

Պլինիոս զնկարագիր և զներբող Պարրասայ կատարեալ ըստ ա՟մ մասին ընծայէ։ Եւ եթէ հաւատարիմ իցեն բանք նորա, սա ինքն Պարրաս եմոյծ զճշգրիտ չափակցութի՟ և զհամեմատութի՟, և արար զդէմս կենդանիս փափուկս և սիրալիրս, զյօրինուածս վարսից վայելուչս, զգեղ և զշուք դիմաց և անձին. և վկայութ՟ քաջաց ճարտարաց՝ զաւարտումն և զծիրս պատկերաց, յոր առաւելաւ քան զա՟մ նախնիս, և յետնոցն հաւասար գտաւ։ Զի համարի զայս Պլինիոս դժուարագոյն և կարևորագոյն մասն նկարչութե՟, ասէ. Թէպէտ և ճարտարութի՟ մեծ է զտարածութի՟ մարմնոյ քաջ նկարել, այլ բազումք 'ի մասինս յայսմիկ յաջողեցան[2]. իսկ ծրագրել զայնս, և նահանջեցուցանել յաչաց, և տակաւ աղօտացուցմամբ լուսոյ եզերացն՝ զաներևոյթսն տալ գուշակել, լրումն և ծայր արուեստին է։

Պարրաս ուսաւ զնկարչութի՟ 'ի Սոկրատայ. որում այնպիսի ոք աշակերտ ոչ նուազ գործէ փառս։ Քսենոփոն սուղ իմն հանճարեղ զրուցատրութի՟ պահեաց մեզ. ուր Սոկրատ, որ 'ի մանկութեանն անդրիագործն էր, տայ Պարրասայ խրատս՝ որովք երևի քաջ հմտութիւն նորա օրինաց նկարչութե՟։ Յիշ. Սոկ. Գ. 780.

Պարրաս վկայութ՟ ամենեցուն՝ գերազանցէր 'ի մասին բարուց և կրից. և այս 'ի միում 'ի նկարուց նորա երևի, որով հռչակեալ համբաւեցաւ։ Եւ էր նկարն կենդանագիր ժողովրդեան Աթենայ. և ա՟մ տիպք նկարագրին ուշիմք և հանճարեղք, և զանսպառելի հարստութի՟ մտաց ճարտարին երևեցուցանէին ։ Զի ոչ ինչ 'ի բարուց[1] ազգին 'ի բաց թողեալ, երևեցուցանէր զնա յեղամիտ, բարկացող, անիրաւ և յողդողդ, և ընդ հակառակն՝ մարդասէր, ողորմած և դիւրագորով. հանդերձ սոքիմբք և վայրագ, խրոխտ, պերճ և ամեհի, և ընդ հակառակն՝ վատ, երկչոտ և փախստեայ ։ Ահա նկարագիր յար և նման նախատպին, այլ զբազմադիմի կերպարանսն զիրդ մարթէր նկարչին յօդել 'ի մի ։ Աստ են հրաշք արուեստին ․ երևի թէ առակաւորք էին գիւտք նկարուն ։

---

[1] Զեւքսիս և Պարրաս յաւելին բազում ինչ յարուեստն, զի Զեւքսեայ զօրէնս լուսոյ և զստուերին ասի հնարեալ, և Պարրասայ 'ի գծագրին քաջ խելամուտ լեալ։ Կուինտ. ժբ. ժ։

[2] Քանզի եզերաց ձևոցն պարտ է պարուրել, և յաւարտեալն անդ զայլս 'ի մասանցն տալ գուշակել. և զաներևոյթսն ցուցանել։

Պլին. լե. ճ ։ Աթէն. ժբ. 543 ։ Եղիան. թ. ժա ։ Զնոյն ինքն զՊարրաս բազումք 'ի մատենագրաց նկարագրեն[2] ․ զի էր նա ընդարձակամիտ և ամենահնար, ոչ ոք յանդուգն որպէս զնա, կամ մանաւանդ խրոխտ ․ որպէս ոմանք 'ի քաջաց ճարտարաց իրաւացի փառօքն զառածանին ։ Զգենոյր ծիրանիս, և պսակ ոսկի կրէր 'ի գլուխ իւր, և եղէգն 'ի ձեռին մեծագին յօժ, և ագանէր կօշիկս ոսկեփոկս շքեղս, և յոտից մինչև ցգլուխ պերճ և պայծառ փերևերտեալ շրջէր ։ Եւ անձամբ անձին տայր անուանս պարծանաց և քնքշանաց, կոչելով զանձն 'ի ստորագիրս նկարուցն անպատկառապէս՝ գիրգ և կայտառ և գեղեցիկ, և կատարիչ արուեստին, զաւակ Ապողոնի, և պատկերահան դից ։ Որպէս և 'ի ներքոյ Հերակլեայ պատկերին գրեաց, թէ համանման նախատպին զտեսեալն ստէպ յանուրջս նկարեցի ։ Եւ 'ի վերայ ամ՝ ամբարհաւաճուեն և մնափառուեն՝ պարծէր ևս յառաքինուի, առաքինի զանձն կոչելով, և ոչ գոնեայ որպէս Պուղոս կոչէ զանձն առաքինասէր ։

Յայտ դժպհի եղև փառամոլութեն Պարրասայ պարտութիւնն, 'ի պայքարելն ընդ Տիմանթեայ 'ի Սամոս ։ Մրցանակ առաջի կայր յաղթողին, և առաջարկութի պատկերին և մրցանացն էր ցասումն Այասայ ընդ Յոյնս՝ թէ ընդէր զզէնս Աքիլլեայ ետուն ցՈդիսևս ։ Ընդ վկայութք բազմութեն Տիմանթէս կալաւ զյաղթութի ․ իսկ Պարրաս առ 'ի ծածկել զկորանսն և զպարտութի՝ հանճարաբանութբ իւն, մանաւանդ թէ խրոխտաբանութեամբ, ասէ ․ Աւաղ դիւցազինն քան ինձ, զի նա զայս երկրորդ անգամ 'ի տկարագունեն պարտեցաւ ։

---

[1] Եւ զժողովուրդն աթենացւոց նկարեաց, հանճարեալ 'ի գիւտսն ․ զի կամէր յանդիման առնել զնա՝ որպէս և էրն՝ յեղամիտ, բարկացող, անիրաւ և յողդողդ, և ընդ հակառակն՝ դիւրալուր, ներող, գթած, բարձրամիտ, մնափառ, վատ, վայրագ և խեռ ։ Պլին ։

[2] Արուեստագէտ հանճարեղ, այլ ոչ ոք յանդուգն քան զնա և յոխորտ պարծանօք արուեստին գտաւ ։ Պլին ։

ՊԱՄՓԻՂ

ՅԱմփիպօլիս քաղաքէ, որ է 'ի մէջ սահմանաց Մակեդոնիոյ և Թրակիոյ։ Սա նախ զգիտութիւնս զօդեաց ընդ նկարչութեան. և առաւել չափականացն մտադիր եղև, մանաւանդ համարողականին և երկրաչափութեան. զի համարէր առանց այնոցիկ թերի զնկարչութիւն։ Արդ այնպիսին ոչ արդեօք յամօթ առնէր զարուեստ իւր։ Առնոյր նա յաշակերտացն քանքարս տասն 'ի վարձս ամաց տասանց. ըստ սմին սակի Մեղանթիոս և Ապեղէս աշակերտեցան նմա։ Նախ 'ի Սիկիոն և ապա ընդ ա̅մ յունաստան վարժարս հաստատեաց, քաջ կրթել և ուսուցանել զազատազունդ մանկտին ցանկացող գեղարուեստից։ Նա և հրովարտակ առնել միաբան ա̅մ ազգաց Յունաց՝ զի մի ոք 'ի ստրկաց առցի 'ի վարժս, զի մի անարգեսցի և խանգարեսցի արուեստն։

'Ի բազում վարձուց աստի՝ զոր աշակերտք տային ուսուցչացն, և 'ի վարժարանաց՝ որ 'ի վարժս ազատազունդ մանկտւոյն կանգնէին, և 'ի մերժելոյ անտի ստրկաց, յայտ է՝ թէ քանի՛ փոյթ էր արուեստին, և որպիսի՛ նախանձ արուեստագիտացն ընդ միմեանս, և թէ քանի՛ յաջողէր երագ զարգանայր արուեստն։

Զեւքսիս, Պարրաս, Մեղանթիոս և Պամփիղ ժամանակակիցք համարին, կացեալ 'ի հարիւրորդի քսաներորդի հինգերորդի ողիմպիադին։ 3604.

ՏԻՄԱՆԹԷՍ

Կէսք սիկիոնացի զսա համարին, այլք կիւթնացի. և Կիւթնոս մի 'ի Կիւկլադայ կղզեացն է։ Սորա ճարտարութիւն 'ի գիւտսն էր, որ յոյժ չքնաղ և դժուարինն է, և ճգամբք կամ խրատիւք կամ վարժիւք ոչ ստացանի, այլ արգասիք են հանճարոյ և աշխոյժ մտաց, և գեղանշոյլ բոցոյն՝ որ վառէ զխանդ նկարչին, նոյն և զքերթողին։

Զիփիգինէն նկարեալ 'ի Տիմանթեայ, որ 'ի մատենագրաց բազմաց գովի, հրաշակերտ իմն արուեստին համարին ըստ գիւտիցն քաջք 'ի ճարտարաց։ Նա և մանաւանդ զմանէ իմանալի է[1] զասացեալն, թէ նկարք նորա առա- Պլին. լե. ժ. Կուինտ. Բ. ծԳ. Վաղ. Մաք. Ը. ծա.

---

[1] Յա̅մ նկարսն առաւել քան զնկարեալն յանդիման առնէ իւր. մեծ է յոյժ 'ի նոսա արուեստ, այլ հանճար մեծ ևս քան զարուեստն։ Պլին. լե. ծա։

ւել քան զերեւեալն տան իմանալ. և զի ծայրագոյն էր 'ի նոսա արուեստ, այլ հանճար գերածայր։ Զի թէպէտ և իւրն նկարեալ ցանկալի էր և մեծ և աղխողորմ և քաջագեղ 'ի նկար, այլ 'ի կերպ նկարուն էր յարգ նորա։ Զի անդ Իփիգինէ յոտին կայր առ բագնաւն՝ օրիորդ՝ մատաղ և անմեղ՝ պատրաստեալ 'ի զոհ վասն փրկուե՟ հայրենեացն. և շուրջ զնովաւ կային բազումք, ամենեքին 'ի գութ խանդաղատեալ՝ այլ ըստ անձնիւր պայմանի մի քան զմի ողորմագոյն[1]։ Բայց նկարչին ըզքուրմն Կալքաս տխրագին 'ի տեսիլ ածեալ, և տխրագոյն ևս զՈդիսևս, և քան զնոսա Մենելաւոս զհօրեղբայր օրիորդին լի տրտմութե՟՝ որչափ մարթէր զկիրս 'ի դէմս ածել, ապա զի ոչ ևս գոյին տիպք կերպարանաց տխրութե՟ առ 'ի յանդիման առնել զԱգամեմնեայ զհօր Իփիգինեայ զուգն, յոր մանաւանդ պարտ էր նմա գերազանցել, զընութին կոչեաց յօգնութի՟ արուեստին։ Զի չէ հնար հայել հօր 'ի զենումն դստերն. շատ է նմա հնազանդել կամաց դից, և տալ զնա 'ի զենումն, և ամենայն տրտմութի՟ օրէն է նմա։ Արդ նկարչին ոչ կարելով յանդիման առնել զծանրաթախիծ սուգ հօրն, քող արկ զերեսօք նորա, և եթող տեսողաց գուշակել զկիրսն։ Քաջ և հանճարեղ հնարք, որ և յաճախեաց փառս հնարագիտին. այլ չգիտեմ թէ ինքն Տիմանթէս հնարեցաւ զայն, եթէ յԵւրիպիդեայ էառ. զի նա յԻփիգինեայ ողբերգութե՟ն այսպէս տայ հրեշտակին պատմել. Իբր տեսեալ Ագամեմնոնի՝ զի զդուստրն ածէին 'ի զենումն յանտառն, յոգւոց եհան. և դարձուցեալ զերեսս իւր՝ ելաց, և ած ձորձ զերեսօքն։

'Ի մերոց ճարտար նկարչաց Պուսէն քաջ նմանող եղև այսմ 'ի պատկեր մահուն Գերմանիկեայ. զի զբազմաց սուգ և զտրտմութիւն որպէս մարթէրն նկարեալ, ապա մերձ 'ի մահիճս Գերմանիկեայ կացուցանէ տիկին աւարտահասակ շքեղահանդերձ, որ ձեռօքն ծածկելով զերեսս իւր, և ա՟մ կերպարանօքն զխոր տրտմութիւն 'ի դէմս ածեալ, յայտնապէս տայ գուշակել՝ զի զայր իւր ողբայ։

Ոչ կարեմ լռել և զարժանի յիշատակի զառակաւոր նկարն. և է նկար առակաւոր, որ նշանակաւ և խորհրդաւոր ձևով յայտնէ զճշմարիտն։ Իշխանն Քոնտեայ 'ի սրահին՝ որ 'ի Շանթիլէի՝ տայր նկարել զպատմութի հօր իւրոյ մեծի իշխանին Քոնտեայ, զհռչակեալն ընդ ամ Եւրոպա։ Այլ դժպատեհք առաջի կային. զի սորա 'ի մանկութե միաբանեալ ընդ թշնամիս՝ արուիս բազումս ընդդէմ հայրենեացն գործեալ էր, զորս չէր արժան պանծացուցանել. այլ էին 'ի նոսա ինչ ինչ գերապանծք, որպէս հասանել նորա յօգնութի Քանպրեայ և Վալենկենայ, և նահանջն նորա առաջի Արասսայ, զորս հայրամեծար որդւոյ չմարթէր անյիշատակ առնել յարձանագրութիս քաջացն հօրն։ Եւ քաջ եգիտ հնարս. զի ընդ իշխանուեն, և մօք կորովի և աշխոյժ էր քան զամենեսին՝ որ էին 'ի ժամանակին յայնմիկ։ Զի զվիպասանութեան Մուսայն, որ թէպէտ և առակաւոր իմն է՝ այլ ծանօթ ամենեցուն, ետ նկարել մատեան 'ի ձեռին՝ մակագրեալ Վարք իշխանին Քոնտեայ, և կորզէր թերթս թերթս 'ի մատենէն ընկենոյր յերկիր. և յընկեցեալսն գրեալ էին 'ի միումն՝ Օգնականութիւն Քանպրեայ, յայլում Օգնականուի Վալենկենայ, և 'ի միւս այլ՝ նահանջ առաջի Արասսայ, և այլ ամ արուիք նորա՝ զորս գործեաց 'ի Փլանդրիա. որ ամ մասամբք գովելիք են, բաց 'ի կամարէն՝ զոր կրէրն յայնժամ։ Այլ աւաղ, զի ոչ ըստ հանձարեղ և ըստ պարզ գիտոյն նկարեցաւ պատկերն։ Զի իշխանին Քոնտեայ զմեծ կերպարան իւրն հնարեալ՝ յարուեստն ապաստան արար, ներելով նկարչին՝ զվայելուչ պարզուին յոյժ այլայլել, և յաւելուլ զդէմս՝ որովք խուկի նկարն, և աւելի ինչ ոչ ցուցանէ՝ քան զոր յառաջ վսեմապէսն ցուցանէր։ Զայս 'ի Քննողական տեսուե բանաստեղծուե և նկարչութե առեալ պատմեցի։ ԱՄ ԱՃ.

---

[1] 'Ի զենումն Իփիգինեայ տխուր զԿալքաս նկարեաց, և տխրագոյն զՈդիսևս, և զՄենելաւեայ ա՟մ հնարիւք արուեստին յաւելեալ զթախիծ, իբրև սպառեցին կերպարանք կրից, ոչ կարացեալ ըզդէմս հօրն կենդանագրել, ծածկեաց զգլուխ նորա, և եթող իւրաքանչիւր 'ի միտս իւր գուշակել։ Կուինտ. Բ. ԺԳ։

ԱՊԵՂԷՍ

Գերահամբաւեալն 'ի նկարիչս Ապեղէս եկաց 'ի հարիւրորդի քսաներորդի երկրորդի ողիմպիադին, ծնեալ 'ի Կով[1], որդի Պիթեայ, աշակերտ Պամփիղեայ։ Այլ կոչի և եփեսացի, զի բնակէր յԵփեսոս, արդեօք և ըղքաղաքացւոյ ունէր պատիւ։ Պլին. լե. Ժ. 3672.

Սա առաւել քան զամ ճարտարս միանգամայն օժանդակեաց նկարչուե՟, ոչ միայն գերազանց նկարուքն՝ այլ և մատեանս երիս զկարևոր օրինաց արուեստին գրեալ, որ մինչև 'ի ժամանակս Պլինեայ կային. այլ աւա՜ղ, զի ոչ հասին առ մեզ: Շնորհք իմն էին 'ի նկարս նորա, և յայնմ էր ճարտարուի՟ նորա. շնորհս իմա զազատ իմն և զազնուական և զվայելուչ տարազ, որ ազդէ 'ի սիրտ և ընդոստուցանէ զտեսողս: Գովէր աննախանձ զհամարուեստիցն նկարս, զարմանայր ընդ այնս, և ըստ ամ՟ մասին զպարտուի՟ խոստովանէր. այլ ըստ վայելչուե՟ ըստգտանէր զամենեսին, և սեփականէր իւր անկապտելի զայնր մասին մրցանակ: Այս անկեղծ բարբառ, առանց ամբարհաւաճուե՟ և յանդգնուե՟, ներելի է արանց պիտանեաց վաստակաւորաց:

---

[1] Կով է կղզի 'ի ծովն Եգէական։

Արժանի համարիմ գրոցս յիշատակի և զնորօրինակ բարեկամուի՟ և զմտերմութի՟ Ապեղեայ ընդ Պրոտոգենեայ, որ 'ի ժամանակին յայնմիկ անուանի նկարիչն էր: Զի բնակէր նա 'ի Հռոդոս. և լուեալ Ապեղեայ զանունն նորա և զհամբաւ նկարուցն, ցանկայր ականատես լինել գեղոյ նոցա: Վասն որոյ երթեալ 'ի Հռոդոս, էջ 'ի տուն Պրոտոգենեայ. և ոչ ոք էր անդ, բայց կին մի պառաւ պահապան գործարանին, և 'ի վերայ փայտոտան հաստատեալ տաստակ՝ յորում չև ևս ինչ նկարեալ էր: Եհարց զնա աղախինն, թէ զինչ անուն է քո: Եւ նա ասէ. Ահա գրեմ զայն: Եւ թաթաւեալ զվրձինն, գծագրեաց նուրբ 'ի տաստակին: Եւ իբրև դարձաւ Պրոտոգենէս 'ի տուն, և լուաւ զիրսն 'ի կնոջէն, հայեցեալ զարմացմամբ ընդ նկարն՝ գուշակեաց անդէն զնկարիչն, և ասէ. Ապեղեայ է, և ոչ այլոյ ուրուք, նուրբ և ճարտար նկարդ: Եւ ներկեալ զվրձինն յայլ երանգ՝ նրբագոյն և ճարտարագոյն գծագրեաց զնովաւ, և պատուէր ետ պառաւոյն՝ զի եթէ դարձեալ եկեսցէ այրն, ցուցցէ նմա զնկարն և ասասցէ, թէ այրն՝ զոր խնդրես՝ նա նկարեաց զայդ: Եւ ոչ յամեալ Ապեղեայ 'ի դարձ, իբրև ետես զնկարն՝ ամաչեաց, պարտեալ յոսոխէն. և միւսանգամ առեալ զվրձինն, և այլ իմն երանգ խառնեալ, ընդ անջրպետ երկուց գծիցն ձգեաց միւս այլ յոյժ ճարտար և զարմանալի, զամ՟ նրբութիւն արուեստին 'ի գործ արկեալ: Զոր իբրև ետես Պրոտոգենէս՝ ծանեաւ, և ասէ. Արդ այժմ յաղթեցայ, բայց սիրելի է ինձ յաղթողն: Եւ ընթացեալ 'ի դուռն, եգիտ զԱպեղէս. և անդ եդին ընդ միմեանս ուխտ անլոյծ բարեկամութե՟, որ ընդ ճարտարս համարուեստս յոյժ դժուարադէպ է:

Եւ միաբանեցին թողուլ այնպէս զնկարն՝ յոր մրցեցան, և մի ձեռն արկանել 'ի կատարել զայն. գուշակեալ՝ զի յետինք զարմանալոց էին ընդ այն, մանաւանդ հմուտք արուեստին և ճարտարք, որպէս եղեն իսկ։ Այլ այս ցանկալի արձան երկուց վեհագունից նկարչացն այրեցաւ յառաջնումն նուագի հրակիզման ապարանիցն Օգոստեայ, ուր 'ի զնին ցանկացողայ եդեալ էր, և 'ի խուռն բազմութեան ընտիր և ճարտար նկարուց առաւել զարմանալի թուէր տախտակն այն՝ յորում երրեակ գծագիր նկարք նուրբք հազիւ նշմարէին, նովին իսկ պատուականագոյնք և զօշոտիչք աչաց կորովեաց։ Այսպէս է իմանալ զՊլինեայ ասացեալն. զի որ ասէն՝ թէ առեալ զվերձինն ձգեաց երանգով գիծ նուրբ 'ի տախտակին, ոչ պարզ զերկրաչափականն ասէ, այլ զնախագիծ պատկերի. զի զառաջինն իմանալ անտեղի է, ասէ Փիլ, և անհաւանելի որոց փոքր մի ինչ տեղեակք իցեն նկարչութ̃ե։

Ապաքէն ջանացող էր Ապելլէս 'ի նկարսն, այլ ոչ վաստակաբեկ առնէր զմիտսն, և ոչ առաւելազանց ջանիւ յերկշոտութ̃ի զառածանէր։ Զի ասէր զՊրոտոգենեայ՝ թէ՝ ամենևին հաւասար է ինձ, թերևս և առաւել քան զիս. այլ չթողու զվերջինն 'ի բաց՝ մինչև խանգարէ յաճախ զվաստակս իւր 'ի կամելն կատարել։ Յաւելու Պլինիոս. Կացցի այս խրատ անմոռաց, զի առաւելազանց ջան՝ բազում այն է՝ որ գործէ վնաս։

Այլ ոչ այսու զփոյթ նկարչաց խափանէ Ապելլէս. զի զհակառակն առնէր ինքն և ուսուցանէր։ Համապազօր, մինչ զբաղմունք ես 'ի վերայ կային, ոչ դադարէր. այլ կապարաւ կամ մելանաւ կամ վրձնաւ նկարէր, զի մի ձեռք զաջողութ̃ն և զճարտարութ̃ի կորուսցեն, և զի ես քան զես աջողեսցին 'ի նրբութ̃իս անեզրական արուեստին։ Առ մի ումն յաշակերտացն, որ զվաստակ իւր մատուցեալ առ նա 'ի քննութ̃ի՝ պատճառէր շտապաւ 'ի սուղ ինչ ժամանակի նկարեալ զայն, ասէ. Մինչ չև 'ի քէն լուեալ՝ գիտացի զայն, այլ զարմանամ՝ զի յայդչափ ժամանակի չկարացեր լաւ ես։ Իսկ առ այլ ումն, որ զպատկեր Հեղինեայ նկարեալ ականակուռ զարդուք՝

---

[1] Այլ փառս կալաւ անձին Ապելլէս, զի մինչ ընդ բազմաշխատ և ընդ բազմահոգ նկարն Պրոտոգենեայ զարմանային, ասէ. Ամենայն ինչ հաւասար է մեզ, թերևս և աւելի ինչ նմա. այլ ես միով իւիք յաւելում, զի նա զձեռն 'ի տախտակէն չկարէ առնուլ 'ի բաց։ Եւ խրատ արժանի յիշատակի ետ. զի առաւելազանցն փոյթ յաճախակի գործէ վնաս։ Պլին. լե. ճ։

եցոյց նմա, ասէ. Ոչ կարելով գեղեցիկ նկարել, ճոխ զնա արարեր ո՛վ դու:

Եւ որպէս անկեղծութ՟ առնէր դատաստան, նոյնպէս և զայլոցն լսէր: Զի 'ի կատարել զնկարս իւր՝ դնէր 'ի տեսիլ անցաւորաց, և ղօղեալ ընդ վարագուրաւ՝ ունկն դնէր խօսից նոցա, և որ ինչ ստգտանէինն՝ ուղղէր զթերին: Կարուակի ուրումն զմի 'ի կօշկաց պատկերին իրաւացի ստգտեալ, և 'ի վաղիւ անդր դարձեալ ընդ նոյն ճանապարհ՝ իբրև ետես ուղղեալ զթերին, յանդգնեցաւ յաջողութ՟ դատաստանին և զբարձմն ստգտանել՝ յորում ոչ ինչ էր թերի: Յայնժամ Ապեղեայ ելեալ արտաքս, խրատեաց զնա՝ կալ 'ի սահման արուեստին, և մի՛ քան զկօշիկն 'ի վեր ամբառնալ. ուստի յառակս եղև ասել, Մի՛ կարուակ քան զկօշիկն. այս է ասելն.

Կա՛ց 'ի սահման արուեստիդ ո՛ կօշկակար,
Մի՛ զքո վճիռ քան ըզկօշիկն ամբառնար:

Ապեղէս զճարտարս քաջս գովէր աննախանձ, և ոչ ամօթ համարէր մեծարել զնոսա քան զինքն ըստ առաւելութ՟ նոցա. որպէս զԱմփիոն 'ի մասին կարգաւորութ՟, և զԱսկղեպիոդոր ըստ ճշգրիտ գծագրութ՟ն: Իսկ որ ինչ զՊրոտոգենեայ արար դատաստան, յառաջագոյն ասացաք. այլ ոչ բանիւ լոկով ետ զդատաստանն: Զի ճարտարս այս նկարիչ Պրոտոգենէս 'ի հայրենիսն պատիւ ոչ ունէր, որպէս սովորութ՟ի է: Եւ յորժամ էրն ընդ նմա Ապեղէս 'ի Հռոդոս, եհարց զգինս նկարուցն. և լուեալ զի յոյժ խոտանաւ վաճառէր, ասէ. Տացես ինձ զմի մի յիսուն [1] քանքարաց, և վաճառեցից զդոսա որպէս զձեռագործս իմ: Եւ իբրև տեսին Հռոդացիք՝ զի արդարև տայր զգինսն, յայնժամ գիտացին զյարգ քաղաքացւոյն իւրեանց ճարտարի: Եւ Պրոտոգենեայ յօգուտ արկեալ զյաջողութ՟ի, ծանրագին զնկարսն վաճառէր:

Բայց Ապեղեայ ոչ 'ի ճարտարութ՟ և եթ արուեստին էր քաջութ՟ի, այլ և 'ի քաղաքականութ՟, և յընտրել զբարս. և հեզ և ողջ և ուշիմ բարուքն յոյժ սիրելի եղև մեծին Աղեքսանդրի. որ զկնջանէր գայր առ նա ստէպ, և բերկրէր զրուցատրութ՟բ նորա, և 'ի նկարելն նորա 'ի զնին կայր, և նախ քան զամենեսին տեսանէր զվաստակս գրչի նորա ։ Այլ ոչ ինչ են զարմանք՝ զի այնպէս կապեցաւ ոգին Աղեքսանդրի ընդ կիրթ և ախորժ և քաղցրաբարոյ նկարչին ․ զի Թագաւոր մանուկ յորդորագոյն բերի 'ի սէր այնպիսւոյն, որ ընդ բարութե՟ սրտի և հանճար գեղեցիկ և ձեռն ճարտար ունիցի ։ Մտերմութի՟ այսպիսի յաճախ պատահէ ընդ քաջազունս այլևայլ կարգի, որ և պարծանք են իշխանաց ։ Բայց Աղեքսանդր յոյժ մեծարէր զԱպեղէս, մինչև հրովարտակ արար՝ մի ումեք զպատկեր իւր նկարել բաց յԱպեղեայ ․ 'ի նմին հրովարտակի արգելոյր՝ մի և 'ի դրոշմածս զդէմս իւր տպաւորել ումեք բաց 'ի Պիրգոտեղեայ, և մի զպատկեր իւր ձուլել ումեք՝ բաց 'ի Լիւսիպպեայ ։

---

[1] Իբր [illegible] ոսկի [illegible], և [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible]:

Մի օմն յաւագաց դրանն Աղեքսանդրի կացեալ առ Ապեղեայ 'ի նկարելն՝ առնէր խնդիրս և խօսս թիւրս զնկարչութէ՟, որպէս սովոր են՝ որք զանծանօթիցն իւրեանց արուեստից ճառեն ։ Ապեղէս համարձակութե՟ն ընդ աւագանին, ասէ ․ Տեսանես զմանկունքս՝ որ զդեղս երանգոցդ խառնեն ․ մինչ չև քո խօսեցեալ էր՝ զարմանային ընդ քեզ, շլացեալք 'ի պայծառութի՟ ծիրանեացդ և ոսկեհուռ հանդերձից ․ այլ իբրև զանծանօթից քեզ իրացդ խօսել սկսար, արդ ծիծաղին զքև ։ Զայս Պլուտարքոս պատմէ ․ իսկ Պլինիոս[1] Աղեքսանդրի ասէ տուեալ զնոյն խրատ, այլ մեղմով՝ թէ զգուշագոյն խօսեաց առաջի գործաւորացդ ։ Այսքան համարձակութի՟ էր Ապեղեայ գեղեցիկ հանճարովն առաջի մեծասաստ Թագաւորին, որ 'ի ժամանակէն յայնմանէ զարմացուցանէրն և դողացուցանէր զաշխարհ ։ Այլ այլ ևս հաւաստիս սիրոյ և մեծարանաց եցոյց նմա Աղեքսանդր ։

Պլուտ. յաղ. բարէկամ. և հորդաճ. 58 ։

լե. ժ ։

Անկեղծ համարձակութի՟ Ապեղեայ դժպհի էր բազմաց 'ի զօրավարացն Աղեքսանդրի ․ և մի 'ի նոցանէ Պտողոմէոս, որում ապա աշխարհն Եգիպտացւոց ել բաժին ․ ընդ ակամբ հայէր յԱպեղէս ․ Էր աղագաւ, ոչ գիտեմ ։ Այլ որ ինչ և էինն պատճառք, Ապեղեայ 'ի մեռանել Աղեքսանդրի դիմեալ ընդ ծով 'ի քաղաք մի Ելլադայ, և ձախողակի վարեալ 'ի մրրկէ՝ անկաւ 'ի ծովեզերս Աղեքսանդրիոյ ․ և ոչ ընկալաւ զնա նոր արքայն, որպէս էրն իսկ կասկածելի ։ Հանդերձ այսու և խորամանկ թշնամիք խորհեցան արկանել զնա յորոգայթ, և հրապուրեցին զայր մի յաւագաց դրանն՝ հրաւիրել զնա յընթրիս իբրև 'ի թագաւորէն , որպէս զի ընդ ինքնակոչ համարձակութ՟ի ատելւոյն սրտմտեսցի թագաւորն , ոչ գիտելով զնենգութ՟ին ։ Որպէս և եղև իսկ . զի իբրև չոգաւ Ապելլէս 'ի կոչն , թագաւորն բարկացեալ ընդ յանդգնութ՟ի նորա՝ սաստեաց 'ի նա և ասէ . Ո՞ կոչեաց զքեզ այսր ։ Նա ցուցեալ զսպասաւորսն , ասէ . Ո՞ 'ի սոցանէ ժպրհեցոյց զքեզ , աղէ՝ ասա ։ Իսկ այրն հանճարեղ և ճարտար նկարիչն այսպէս 'ի վտանգէն զերծաւ ։ Առ ածուխ շիջեալ 'ի կրակարանէն , և գծագրեաց վաղվաղակի յորմն զպատկեր հրաւիրողին . և զարմացաւ թագաւորն , զնենգաւորին ծանուցեալ անդէն զդէմս . և հաշտեցաւ ընդ Ապելլեայ , և մեծապարգև մեծարեաց զնա ։

---

[1] Որ մինչ 'ի գործարանին բազում ինչ անգիտաբար ճառէր, լռեցոյց զնա քաղցրութե՟, և ասէ․ ծաղրեն մանկունքդ ներկարարք ։ Այսքան համարձակութիւն էր նմա և զօրութի՟ առաջի մեծասաստ Թագաւորին ։

Ղուկիան. յՂ. Կուլ. 563 ։ Բայց նախանձորդք նորա չև ևս հաշտք էին , այլ առաւել զայրացեալք ։ Յետ ոչ բազում աւուրց ամբաստանեցաւ առաջի Պտղոմեայ , թէ ձեռն նորա էր ընդ Թէոդոտեայ 'ի տիրանենգ դաւաճանութ՟են[1] , որ յայտնեցաւ 'ի Տիւրոս ։ Նա չարախօսն էր Անտիփիլոս նկարիչ անուանի . բայց ամենևին չէր նման ամբաստանութ՟ին , զի Ապելլեայ ոչ 'ի Տիւրոս լեալ էր , և ոչ զԹէոդոտ տեսեալ , և ոչ 'ի բարուց կամ ըստ պայմանի կենացն կասկածելի ոք էր 'ի դաւաճանութ՟ի . իսկ չարախօսն , քանզի համարուեստ նորա էր՝ այլ յոյժ 'ի վայր քան զնա արուեստիւն և համբաւաւ , կարի իսկ կասկածելի էր 'ի մախանս ։ Բայց Պտղոմէոս առանց հարցափորձի և քննութ՟ե , որպէս յաճախ պատահէ , վնասապարտ դատեալ զԱպելլէս՝ կշտամբեաց զնա իբր ապերախտ և նենգաւոր , և դատապարտեաց զնա 'ի մահ . այլ մի ոմն 'ի դաւակցաց ողորմեալ ընդ սպանութ՟ի անմեղին՝ որ ածէրն 'ի մահ , յանձն առ զմեղանս , և խոստովան եղև զի չէր Ապելլէս ընդ խորհուրդս նոցա ։ Իսկ թագաւորն ամաչեցեալ ընդ դիւրահաւանութ՟ի իւր , դարձաւ անդրէն 'ի բարեկամութ՟ի . և փոխանակ զրպարտութ՟են պարգևեաց նմա հարիւր քանքար , և զԱնտիփիլոս ետ նմա 'ի ստրկութ՟ի ։

Ապելլէս իբրև դարձաւ յԵփեսոս , 'ի վրէժխնդրութ՟ի թշնամեացն արար զգերապանծ պատկերն Զրպարտութ՟ե , որոյ յօրինուածն է այս ։ Յաջմէ կողմանէ նստեալ իշխան հզօր և մեծաշուք , և ականջք նորա մեծամեծք որպէս զՄինդայն, աջ կարկառեալ առ Զրպարտութ՟ն իբր 'ի հրաւէր . և [1] տիկնայք երկու յաջմէ և յահեկէ իշխանին, մին Տգիտութ՟ի և միւսն Կասկած ։ Իսկ յառաջ մատչի Զրպարտութ՟ի՝ կին գեղեցիկ, բուռն իմն և զայրագին 'ի դէմս և 'ի գնացս՝ որպէս սրտմտեալ և կատաղեալ . ջահ 'ի միում ձեռին՝ բորբոքել հերձուածս և գժտութ՟իս, և միւսովն կալեալ զհերաց պատանւոյ 'ի քարշ ձգելով, որ զձեռս իւր յերկինս ամբարձեալ՝ զդիս կարդայ յօգնութ՟ի ։ Իսկ առաջի կնոջն գնայ այր մի հիւծ և նիհար, դէմք 'ի գոյն դալկան և սրակն, այլ սքողէ զաչսն, այն ինքն է Նախանձ ։ Իսկ երկու այլ կանայք առնմա 'ի գրգիռ և 'ի հրապոյր, որք զգեղ և զշպար նորա յօրինեն . որք 'ի սեթևեթեալ կերպարանացն իմանին Խորամանկութ՟ի և Նենգ ։ Զհետ ամենեցուն Զեղջ սեւազգեաց, պատառեալ զհանդերձս, կորակոր արտասուալից հայելով յետս 'ի Ճշմարտութ՟ն՝ որ գայ 'ի հեռուստ լուսափիւռ ։

---

[1] Ղուկիանոս ստգտանէ զայս անհետեւեալ սխալմամբ ըստ ժամանակագրութեան ։

Այս է մեծի նկարչին վրէժխնդրութ՟ն հանճարեղ և օգտակար ։ Արդեօք վասն էր նմա անդէն յԵգիպտոս նկարել կամ 'ի տեսիլ ածել զպատկերն . զի ականջքն անհեդեդք, և աջն կարկառեալ առ Զրպարտութ՟ն 'ի հրաւէր, այլովքն հանդերձ, նշանակք կասկածանաց և դիւրահաւանութ՟ե, թշնամանելին զիշխան երկրին, և դիւրամատոյց նենգութ՟ե և համարձակիչ չարախօսաց յանդիմանելին զնա ։

Ընդ նկարս Ապեղեայ թուէ Պլինիոս և զԱնտիգոնեայ [2] զկենդանագիրն հռչակաւոր . զի Անտիգոնոս միականի էր, և առ 'ի ծածկել զտգեղութ՟ի նորա՝ նկարեաց զնա Ապեղէս զդէմս 'ի մի կողմն դարձուցեալ ։ Իսկ ասի Ապեղեայ նախ զդիմակիսեանն գտեալ զնկար ։

Արար նա բազում կենդանագիրս Աղեքսանդրի, յորոց մին համարի ընդ ճարտարագոյն նկարս նորա . և էր նկարեալ 'ի զարդ մեհենին Արտեմեայ եփեսացւոց շանթ 'ի ձեռին ։ Պլինեայ տեսեալ իսկ էր զայն, և վկայէ զի արդարև աջն շանթընկէց թուէր 'ի դուրս կարկառեալ . վասն որոյ ասէր իսկ ինքն թագաւորն՝ թէ ոչ մի է Աղեքսանդր, այլ երկու . մի՝ փիլիպպեան անյաղթ, և միւս ևս՝ Ապեղեայն աննման ։

---

[1] Այսոքիկ ըստ քերթողական ոճոյ վերացական անուանց հելլէն բառբառոյ ոգեղինեալ են ։

[2] Դէմք ողջոյն երևին 'ի նկարագրի . բայց Ապեղէս զպատկեր Անտիգոնեայ 'ի կողմանէ երևեցոյց . առ 'ի ծածկել զկոյր ական տգեղութ՟ն ։ Կուինտ. բ. ժգ.

Միւս ա՛յլ նկար Ապեղեայ յիշատակէ Պլինիոս, որ զարմանալի իմն թուի թէ էր, նկարեալ առ 'ի հանդէս մրցութեան նկարչաց, պատկեր ձիոյ ։ Եւ պատմէ, զի իրազեկ լեալ Ապեղեայ՝ թէ միաբանեալ են դատաւորք տալ միում յոսոխաց նորա զմրցանակն, յատենէ մարդկան բողոքեաց յատեան անբանից [1], որ անաչառագոյնք են, թէպէտ և համերք ։ Եւ ետ բերել անդր երիվարս, և զնկարս ոսոխացն ածել առաջի նոցա, և կային անշարժ կենդանիքն . իսկ ընդ տեսանել զԱպեղեայն՝ սկսան խրխնջել ։

Ճարտարագոյն 'ի նկարս Ապեղեայ համարի պատկեր Աստղկանն՝ կոչեցեալ Անադիոմէն, որ թարգմանի հանեալ 'ի ջրոյ ։ [2] Յոլովք 'ի Ճարտար քերթողաց տաղիւ ներբողեցին զայն . և քերթուածն թէպէտ յաղթեաց նկարուն, այլ պանծացոյց զայն ։ Նկարէր և ա՛յլ պատկեր Աստղկան 'ի հայրենիս իւր 'ի Կով, զորմէ ինքն իսկ և ձեռահմուտք արուեստին վկայէին՝ թէ յաղթէր առաջնումն . այլ մախացաւ մահ, և չեթող կատարել զայն . և ոչ յետ նորա իշխեաց ոք արկանել գրիչ 'ի նկարած Ճարտարին ։ Զսա կամ զմիւսն գնոց եառ Օգոստոս 'ի Կովացւոց անտի, թողացուցեալ նոցա հարիւր քանքար 'ի հարկէն՝ զոր տային հռոմայեցւոց ։ Եւ թէ իցէ վերջինս այս, որպէս հաւաստի թուի, նոյն արկածք առաջնոյն և սմա հասին, և չար ևս ։ Զի առ կենդանութեամբն իսկ Օգոստեայ եղծաւ ստորին մասն նորա 'ի խոնաւոյ . և խնդրեաց Օգոստոս նորոգել զայն, այլ ոչ ոք իշխեաց 'ի նոյն . որով առաւել յաճախեցին փառք և [3] համբաւ նկարչին ։ Ապա զհրաշազանս զայս պատկեր, յոր երկիւղածութեան կամ երկչոտութեան ոչ ոք իշխէր ձեռն արկանել, բոտոտք և ուտիճք կայտառեալ 'ի փայտն, ծախեցին ։ 'Ի ժամանակին յայնմիկ թագաւորէր Ներոն . և փոխանակ այնորիկ ա՛յլ պատկեր եդ, զՏորոթէի ուրումն անծանօթի նկարչի գործ ։

Ստր-բ . ժդ . 657 .

Յաւելու Պլինիոս, զի այն ամ չքնաղ նկարք, ընդ որս հմուտք արուեստին զարմանային, էին նկարեալ չորիւք պարզ երանգովքն՝ զորոց ասացաք ։

Ապեղեայ աշակերտք բազումք եղեն, որք զգիւտս հնարից նորա 'ի գործ արկին . այլ է ինչ, ասէ Պլինիոս, որում չեղեն հասու. զխառնումն ասեմ ջնարակին ծեփոյ, որով զնկարսն օծանէր՝ առ տոկալոյ նոցա ընդ երկար յարոյգ զօրութեն : Երրակի նպաստէր ջնարակն. մի, զի զերփն երփն երանգոցն զդեղս ողորկեալ՝ հաճոյ աչաց հարթ և անօսր երևեցուցանէր, զորոյ զթերին ընու արդ խուղն *. և միւս ևս, զի յաղտոյ և 'ի փոշւոյ պահէր զնկարս. հանդերձ սոքիմբք և խնայէր յաչս տեսողաց՝ զի մի շլասցին [1], որպէս ապակեաւ զփայլումն և զսաստկութի գունոյն մեղմեալ :

---

[1] Յորոց ատենէ առ չորքոտանիս համերս բողոքեաց ։

[2] Որ 'ի հելլէն տաղից պարտեալ, պայծառացաւ նոքօք ։

[3] Եւ եղծումն իսկ գործոյն եղև Ճարտարին 'ի փառս ։

ԱՐԻՍՏԻԴԷՍ

Որք ժամանակակից Ապեղեայ կացին նկարիչքն, մի յականաւորացն էր 'ի նցէ Արիստիդէս Թեբայի : Նկարք նր թէպէտ և ոչ որպէս զԱպեղեայն ազնիւք և վայելուչք էին, այլ սա նախ [2] հանճարով և ջանիւ եգիտ զստոյգ օրէնս զոգիսն նկարելոյ, զզգացմունս ասեմ սրտի : Եւ էր նորա առաւելութի 'ի նկարել զկիրս սաստիկս և հզօրս, միանգամայն և զգործականս. այլ 'ի ներկուածն խիստ իմն և դժնեայ էր : Պլին. լե. ժ :

Սորա է հրաշալի նկարն մօր վիրաւորելոյ սրով 'ի կուրծս՝ յառնուլ քաղաքի, և մանկան նորա առ մայրենի ստեամբքն սողալոյ 'ի ծուծ կաթին [3] : Զայս ա̃մ 'ի Պլինեայ առեալ գրեմ : Ուր 'ի դէմս կնոջն 'ի տագնապ մահուն ա̃մ գութ գորովոյ և աղէտք ծնելասէր յանձանձանաց տեսանին : Հոգայ իմն ընդ վտանգ որդւոյն, և խիթայ՝ զի մի 'ի խնդիր կաթին՝ յարիւն թաթաւիցի : Աստանօր Պլինեայ թուի զվրձին 'ի ձեռս առեալ նկարել քան պատմել : Աղեքսանդր՝ սիրող չքնաղից՝ տարփացեալ պատկերին, 'ի Թեբայ՝ ուր էրն՝ ետ ածել զայն 'ի Պելլա քաղաք ծննդեան իւրոյ, կամ ուր համբաւէրն ծնեալ :

Նկարեաց սա և զպատերազմն Յունաց ընդ Պարսս, 'ի միում տաստակի անձինս իբր հարիւր, սակ արկեալ ընդ Մնասոնի բռնաւորի՝ որ իշխէրն յայնժամ յԵղա-

---

* [illegible]

[1] Զի մի փայլումն երանգոցն բթացուցէ զաչս . . . և զի մի պայծառութի գունոյն խիստ ինչ ազդիցէ : Պլին :

[2] Սա նախ նկարեաց զոգիս, և զա̃մ զգացմունս 'ի տեսիլ ած : Պլին :

[3] Էր սորա նկարեալ մանուկ 'ի սող առ ստինս մօր վիրաւորելոյ 'ի մահ յառման քաղաքի. և թուի իմն զգալ մօրն և սոսկալ՝ զի մի մանուկն առ չգիտ կաթին զարիւն դիիցէ :

տիս 'ի փոկկիս, հազար դրամակշիռ առ անձն մի։ Դիոնիսեայ սպանդարամետին պատկերն, զորմէ այլուր ասացաք, համարէր ճարտարագոյն 'ի նկարս Արիստիդեայ. և եգիտ զայն Մումմիոս 'ի Կորնթոս՝ յառնուլ պատերազմաւ զքաղաքն։ Նա զնուաղումն մարմնոյ և զհոգւոյ այնպէս ճարտար նկարէր, զի Ատտալոս՝ որ քաջակիրթն էր յընտրութի իրայն՝ առանց ընդ բանս ածելոյ ետ հարիւր քանքար ընդ միում 'ի նկարուցն։ Անբաւ մեծութիքն ևեթ Ատտալեայ, որ յառակս իսկ եղեն, հաւատարիմ արասցեն զգինս զայս անհեդեդ։

ՊՐՈՏՈԳԵՆԷՍ

'Ի Կաւնայ քաղաքէ, որ էր 'ի հարաւային ծովեզր Հռոդոսի՝ ընդ իշխանութե հռոդացւոց, անտի էր Պրոտոգենէս. և 'ի սկզբանն նաւս ևեթ նկարելով, եկեաց ժամանակս բազումս 'ի վերջին աղքատութե։ Այլ այն իսկ թերևս եղև նմա յօգուտ. զի աղքատութի մղէ զբազումս[1] 'ի ձիգն, և է քոյր մանաւանդ թէ մայր հանճարոյ։ Նա ապա նկարուքն իւրովք զարմացոյց յԱթէնս զժողովուրդն իմաստնագոյն։

Պլին. լԵ. Ժ։ Աէլ. Պէսլ. ԺԲ. լԱ։ Պլուտ. 'ի Դէմետր. 898։ Հռչակաւոր 'ի նկարս նորա է Յալիսն. որսորդ քաջ, որդի կամ թոռն արեգական, հիմնադիր Հռոդոսի։ Քան զամ ինչ զարմանալի էր 'ի պատկերի անդ լորձնն ծորեալ ընդ երախս ասպականւոյն, զորմէ լիով ասացաք[2] 'ի պատմել զպաշարումն Հռոդոսի։

Իր միւս ևս հռչակաւոր նկար Պրոտոգենեայ՝ նոխազոտն Պայն յեցեալ 'ի սիւն, զոր 'ի ժամանակի պաշարմանն Հռոդոսի նկարէր անդ. վասն որոյ ասէին ընդ սուսերբ նկարեալ զայն։ Ստրաբ. ԺԴ. 658։ 'Ի վերայ սեանն յառաջագոյն դարեալ կայր կաքաւ. այլ յածել զնկարն 'ի տեսիլ, հայեցեալ՝ զի կաքաւոյն ևեթ ուշ ունէին մարդիկն, և թողեալ զՊայն՝ որ առաւել զարմանալին էր, ընդ միւսն այն զարմանային, և զի կաքաւս ևս ընտելացուցեալ ածէին անդր, որք 'ի տեսիլ պատկերի կաքաւոյն պատրեալ՝ կրկչային, զայրացաւ ընդ տգիտութի նոցա. և համարեալ զայն նախատինս, խնդրեաց 'ի վերակացուաց մեհենին՝ ուր պատկերն այն նուիրեալ էր՝ միւսանգամ ձեռնարկել 'ի կատարումն նորա · և իբրև հրաման ետուն, եղծ զկաքաւն ։

---

[1] Իմաստութիւն և աղքատութիւն, չգիտեմ զիարդ, քոյրք են միմեանց. Պետրոնիոս։

[2] Հատ. Գ. 122։

Նկարեաց և զմտերմին իւրոյ Արիստոտելի զմայրն ։ Իսկ իմաստասէրն անուանի, որ զնմ ժամանակս կենաց իւրոյ 'ի զարգացումն գիտութեանց և գեղարուեստից ձգնեալ էր, յոյժ մեծարէր զհանճար Պրոտոգենեայ, և ցանկայր յարժանաւորագոյն ինչ 'ի կիր արկանել զայն՝ քան 'ի նկար որսորդաց և Պայից և կենդանագրաց · և ձգէր զվրձին նորա 'ի ճակատամարտս և յաշխարհակալութիս Աղէքսանդրի քաջադէպս 'ի նկար՝ վասն մեծութե իմացուածոյն, և ազնուական կրից, և բազմակերպ պատահարաց, և անմահ յիշատակին ։ Այլ բնաւորական ախորժակք նորա, և միտումն 'ի հանդարտն և 'ի գեղեցիկն, դարձան 'ի սովորականն · միայն զկենդանագիր Աղէքսանդրի ըստ խնդրոյ իմաստասիրին նկարեաց, ոչ 'ի ճակատամարտի ։ Բայց զճարտարս քաջս յախորժակայն իւրեանց և յազատ բերմանէ հանճարոյն դարձուցանել՝ վտանգ է ։

ՊԱՒՍԻԱՍ

Սիկիոնացի էր · և անուանի եղև առաւել 'ի մասին, Պլին. լե. ժա։
որ այրեցականն կոչի՝ վասն հրով զգոյնսն դրոշմելոյ 'ի փայտ և 'ի փղոսկր ։ 'Ի Պամփիղեայ ուսեալ զարուեստն, գեր 'ի վերոյ եղև քան զնա · սա նախ զառաստաղս և զկամարս արձնեաց այրեցական նկարուք, և բազում երևելի գործք եղեն սորա ։ Պաւսանիաս յիշէ զմի 'ի նկա- Պաւսան. խա.
րուց սորա, պատկեր կնոջ արբեցելոյ՝ կարի ճարտար · 34.
որոյ տեսք կարմրութեան դիմացն երևէին ընդ բաժակ գինւոյն՝ զոր ըմպէր ։

Գղիկերա[1] կին պռնիկ սիկիոնացի՝ քաղաքակից Պաւսիայ՝ էր ճարտար 'ի յօրինել պսակս, մինչև հնարիչ արուեստին համարէր ։ Առ սէր սորա և 'ի նմանութիւն՝ սկսաւ Պաւսիաս նկարել ծաղիկս ։ Բայց վայելուչ էր անդ տեսանել զարուեստին ընդ բնութե մրցումն · զի երկաքանչիւր ախոյանաբար ձգնէին յաղթել միմեանց, և մնայր մարտն գոգցես անպարտելի ։

---

[1] Սիրեաց 'ի մանկութե զԳղիկերա քաղաքակից իւր, զգտիչ պսակաց · և 'ի նմանութե նորա մրցեալ՝ բիւր ազգի ազգի այլակերպութբ ծաղկանց զարգացոյց զարուեստն․․ Նկարուք ջանացեալ յօրինուածոց նորա նմանել · և նորա ձայն տուեալ, և ձիգն 'ի ձիգն յաւելեալ, անդ արուեստին ընդ բնութե մրցումն գործէր ։ Պլին. լե. ժա։ խա. Դ ։

Պաւսիաս առաւել ՚ի Սիկիոն եկեաց ՚ի բնիկ քաղաք իւր, որ էր որպէս [1] մայր և դայեակ նկարչաց և նկարչութե՟ ։ Այլ ՚ի յետին ժամանակս ընդ ծանր պարտեօք անկաւ քաղաքն, և եդ ՚ի գրաւ զամ՟ նկարագործ պատկերս՝ զհասարակացն և զիւրաքանչիւրոց՝ ընդ գանձուց մեծաց. և Սկաւրոս ուրջու Սիղղայ՝ որ զմայր նորա Մետելլա էած կնութե՟, ցանկացեալ անմահ թողուլ զյիշատակ շինապետութե՟ իւրոյ՝ հատոյց փոխատուաց ամենայն զպարտս սիկիոնացւոց, և առեալ ՚ի ձեռաց նոցա զամ՟ նկարս անուանի ճարտարացն, ընդ որս և զՊաւսիայն, ած ՚ի Հռոմ. և զետեղեաց զնոսա ՚ի հռչակաւոր յիւրում տեսարանին՝ զոր կառոյց բարձր եռաստիճան, երեքարիւր և վաթսուն հոյակապ սեամբք՝ որոց բարձրութիւն էր երեսուն և ութ ոտնաչափ, և զարդարեաց զայն կճեայ և պղնձի անդրեօք, և վայելչի նկարուք քաջաց ճարտարաց ։ Նա զայն ամ՟ առժամանակեայ յօրինէր մինչև ՚ի յանկ ելանել խաղուցն ։ Պլին. լէ. ծէ. Սամն որոյ ասէ Պլինիոս՝ թէ շինապետութի՟ նորա աւերեաց զբարս և ՚ի սպառ կործանեաց ։ Նա ոչ անդ զետեղէ զբանն, այլ յառաջ ածեալ՝ վնասակարագոյն ես ասէ լեալ Հռոմայ զշինապետութի՟ նորա, քան զանգութ դատակնիք տարագրութե՟ն՝ զոր յօրայն նորա Սիղղա ետ, զբիւրաւոր քաղաքացիսն կորուսանելով ։

Անուանի է ՚ի նկարիչս և ՆԻԿԻԱՍ աթենացի, որոյ էին բազում նկարք երևելիք. և մի յայնցանէ էր իջումն Պլուտ. Բարոյ. 1093 ։ Ոդիսեայ ՚ի դժոխս, որ Նեկիայն կոչէր ։ Ատտաղոս, կամ ըստ Պլուտարքեայ՝ Պտղոմէոս, մատոյց ՚ի գինս այնր վաթսուն քանքար, որ չհաւատալի թուի. բայց նա չէառ յանձն վաճառել զայն, այլ հայրենեացն ետ ՚ի պարգև ։ Այնու մտադիւրութ՟բ պարապէր ՚ի նկարել զայն, զի և զժամ աւուրն մոռանայր, և զծառայն հարցանէր՝ թէ ճաշեցի՞ այսօր ։ [2] Պրաքսիտեղեայ հարցեալ՝ թէ զո՞ր ՚ի գործելոց իւրոց անդրեաց ընտրելագոյն համարէր, ասաց. Յոր Նիկիասայ ձեռն եդեալ է ։ Զի նա ազնիւ բռով զանդրիս նորա կճեայս ծեփեալ պայծառացուցանէր, և զայն յայտ արար բանիւն ։

---

[1] Եւ հայրենիք գոգցես նկարչութե՟ եղև ընդ երկար քաղաքն այն ։- Պլին ։

[2] Սա է Նիկիաս, վասն որոյ Պրաքսիտեղէս հարցեալ թէ զո՞ր ՚ի գործելոց իւրոց անդրեաց ընտիր համարէր, ետ պատասխանի. Յորս Նիկիաս եդ զձեռն ։ Զի յոյժ մեծարգէր զծեփ բռոյ նորա ։ Պլին. լէ. ծա ։

Են և այլք բազումք նկարիչք ճարտարք, զորովք լռութ̃բ զանց առնեմք. զի ոչ այնպէս անուանիք և երեւելիք են որպէս զվերոյ ասացեալքս, որք զայնպիսի փառս յաճախեցին յունաստանի։ Այլ աւա՛ղ, զի ոչ հասին առ մեզ գործք նոցա, յորս մարթէր ականատեսիւ դատել զճարտարութ̃ի նոցա։ Ապաքէն զնախնեացն քանդակագործութ̃ի մարթ է ընդ արդեացս համեմատել, զի պահին իսկ ցարդ ճարտարագոյնք 'ի հելլէն քանդակաց, հրաշակերտք վաղ ժամանակացն։ Հռոմայեցիք և 'ի կարի պայծառութ̃ե իւրեանց յաւուրս Օգոստեայ՝ 'ի մասին ևեթ քաջ առաջնորդութ̃ե գային 'ի հաւասարութ̃ի ընդ Յոյնս. իսկ յարուեստս, մանաւանդ 'ի քանդակագործութ̃ե, աշակերտէին նոցա։ Վասն որոյ ասէ Վիրգիլիոս.

Կոփեսցեն այլք ըղկենդանի դէմս 'ի վէմ,
Ձուլեսցեն քաջ շնչօղ պղինձըս գիտեմ.
Գծագրեսցեն ցըպով ըղծիրս եթերաց,
Գուշեսցեն զարփից ելս, իցեն գոռ դատասաց.
Իսկ դու իշխել աշխարհի կա՛լ քեզ պահեստ,
Հռոմայեցիդ դու, այդ լիցի քո արհեստ։ ՎԻՐԳ. ԵՆԷ. Զ. 847։

Որ ինչ զՊոնարոթեայ վերագոյն ասացաք, զի զԵրոսն Պրաքսիտեղեայ 'ի վեր քան զիւրն եդ՝ զպարտութ̃ի խոստովանեալ համարձակ, անտի իսկ յայտ է զի և այժմ Հռոմ՝ որպէս 'ի սկզբանէն՝ զմրցանակ քանդակագործութ̃ե թողու Հելլենաց։

Այլ ոչ նոյնպէս և զճարտարութ̃է նախնի նկարչացն մարթ է դատել, զի պատմութ̃ք լոկով խնդիրն ոչ լուծանի. հարկ էր առ ուղիղ դատաստան՝ օրինակս առաջի ունել, այլ չեն 'ի միջի։ Կան 'ի Հռոմ նշխարք վաղեմի յախճապակեայ պատկերաց, այլ դեղանկարք յոյժ սակաւ, և այնոքիկ խանգարեալ։ Դարձեալ և որ կանն, և որ 'ի Հռոմ յորմն նկարեալ պատկերք, բազում ժամանակօք կրտսեր են քան զՀելլենացն անուանի նկարիչս։ Հանդերձ այսու ա̃միւ ոչ է մարթ ժխտել, զի զօրաւոր էին յոյժ նախաժամանն կարծիք 'ի պարծանս նախնեաց և ը̃ նկարչութ̃ե մասին։ Ընդատին յաւուրց Կրասոսի, որպէս Կիկերոն 'ի գիրսն ճարտարխօսութ̃ե տայ բարբառել նմա, 'ի նկարս նախնի ճարտարաց անյագ պշնուին տեսողք, իսկ 'ի յետնոյն արագ յագէին։ Զի 'ի նոցայն՝ ընտրութ̃ի գծագրութ̃են և կենդանութ̃ին զմայլեցուցանէր զհմուտս.

իսկ 'ի սոցայս ոչ այլ ինչ էր , բայց միայն երփն ներկուածոյն ։ Չգիտեմ, ասէ [1] , զիա՞րդ որ անդէն 'ի սկզբանն ընդոստուցանէին պայծառութ՟ն զտեսողս , որով ցանկալի իսկ են , ապա արագ յագեցուցեալ տաղտկացուցանէին ։ Որպիսի այժմու նկարքս են . զի՛նչ քան զայնոսիկ պայծառ և պերճ կայցէ . քանի՛ գունագեղք են և երփներանգք , և քան զնախնեացն 'ի մասինս յայսմիկ գերազանցք ։ Այլ սոքա 'ի սկզբանն և եթ զօշոտէին զաչս , և ոչ ընդ երկար ակնկառոյց կամք 'ի նոսա . իսկ 'ի նախնիսն պշնումք անյագ , թէպէտ և պարզք և թանձունք յՈւէս.. 104. են ըստ ներկուածոյն ։ Զպատճառն լռէ Կիկերոն . բայց Դիոնեսիոս աղիկառնացի , որ 'ի նմին ժամանակի եկաց յաւուրս Օգոստեայ , յաւելու զայն ։ Նախնիք , ասէ , ճարտարք էին 'ի գծագրութ՟ին , և հմուտք գեղոյ և զօրութ՟ե կենդանութ՟են , թէպէտ և ներկուած նոցա պարզ էր և ոչ բազմագունի . այլ արդ նկարիչք 'ի ներկուածս և 'ի ստուերսն գերազանցեալ , 'ի գծագրին յոյժ ստորև մնան , և ոչ 'ի նկարս կրից այնչափ ինչ աջողակք են ։ Արդ յերկուց աստի վկայութ՟եց 'ի միտ առնումք , զի ոչ ինչ նուազ ճարտարք էին նախնիք 'ի նկարչութ՟ե քան 'ի քանդակագործութ՟ե , յոր ամենեցուն վկայութ՟բ գերազանցէին ։ Այլ զի մի՛ աւելի ինչ ասասցուք , երևի հնոց գէթ 'ի մասին գծագրութ՟ե , և 'ի խառնել զաղօտ ընդ պայծառն , և 'ի կենդանութ՟ին , և 'ի յօրինուած , հաւասար ճարտարագունիցն 'ի յետնոց գերածայրեալ , այլ 'ի ներկուածն ստորև յոյժ մնացեալ ։

Չկարեմ փախճանել զճառս նկարչութ՟ե և քանդակագործութ՟ե՝ առանց ողբալոյ զեղծումն ճարտարացն նուաւ 'ի սկզբանէ և այսր ։ Ամենայն իսկ արուեստք , այլ մանաւանդ սոքա պատուականագոյնք և զարմանալիք , հրաշակերտք՝ 'ի քանդակ գրչին կենագործելով զվէմ և զպղինձ , և ճարտար խառնութ՟բ գեղոց զէքս կենդանագրելով , սոքա մանաւանդ պարտին արբանեկել առաքինութ՟ե , յորոց 'ի զարգացումն և 'ի փառս սահմանեաց զնոսա ճարտարապետն և տուիչ ամ՟ արուեստից ած՟ ։ 'Ի սոյն և հեթանոսք արժան համարէին 'ի գործ արկանել զքանդակ և զնկար, նուիրեալ զնոսա 'ի պատկեր արանց աւագաց, և 'ի կենդանագրել զառաքինութիւնս նոցա [1]: Փաբիոս, Սկիպիոն, և այլք 'ի հռոմայեցւոց երևելիք, 'ի պատկերս հարցն հայեցեալ՝ յորդորեալ խրախուսէին յառաքինութիւն, ըստ նոյին իսկ վկայելոյ: Իբր ոչ եթէ մոմոյն, կամ որ նովաւն գործէր պատկերին էր զօրութիւն՝ որ ազդէր 'ի սիրտ նոցա զարիական խրախոյսն. այլ տեսիլ աւագ արանցն և առաքինութիւնք նոցա, զորս պատկերքն յաւերժ յիշատակաւ յուշ ածէին՝ յորդորէին զնոսա 'ի նախանձ նմանութեան: Պատկերքն այն, ասէ Պոլիբիոս զմոմեղինաց կիսակ անդրեացն, յաշխարհախումբ տօնս 'ի դահլիճ աւագանւոյն Հռոմայ, և 'ի դամբանական կայուրդս նոցա 'ի տեսիլ ածեալ, եռանդն սաստիկ ածէին մանկտւոյն, որպէս այն թէ ինքնին քաջազունքն վերկենդանացեալ՝ ձայնիւ բարբառոյ խրախուսէին զնոսա զհետ իւրեանց: Վ. 495.

---

[1] Չգիտեմ ընդէ՞ր որ զզգայութիւնս մեր զուարճացուցանէին , և ուժգին 'ի սկզբանն յուզէին , արագայագ տաղտկացեալք 'ի նոցունց մեկնիմք 'ի բաց ։ Քանի՛ առաւել գունագեղք և երփներանգք 'ի նոր նկարս քան 'ի հինսն կան . բայց թէպէտև 'ի սկզբանն պարեն զմեզ . այլ ոչ ընդ երկար զուարճացուցանեն . իսկ 'ի վաղեմի պատկերս յանշուք և յաղաւաղ տեսիլն զմայլիմք ։ Կիկ . ճարտ . Գ . ՂԸ ։

Ագրիպպաս [2], որ զդուստրն Օգոստեայ ած կնութեան, պերճ ատենաբանութեամբ ըստ արժանի իւրում նախապատիւ աւագութեան քան զամենայն հռոմայեցիս՝ եցոյց բազում հաւաստեաւ, ասէ Պլինիոս, թէ քանի օգտակարագոյն էր աշխարհին զպատկերս ճարտարս վաղեմիս կանգնել ակն յանդիման 'ի քաղաքին՝ առ 'ի յորդոր մանկտւոյ 'ի գեղեցիկ նախանձ. որով շահաւետագոյնք լինէին, քան թէ 'ի գիւղս վտարեալ 'ի պարտէզս և 'ի զբօսարանս ոմանց:

Ապաքէն անդրիագործք և նկարիչք, ասէ Արիստոտել, դիւրագոյն և ազդողագոյն կրթեն զբարս քան իմաստասէրք. զի են պատկերք՝ որք որպէս զբարոյականս գեղեցիկ իմաստս զօրաւորք են առ 'ի զմիտս ածել 'ի զգաստութիւն: Կնոջ ումեմն պոռնկի, որպէս պատմէ սուրբն Գրիգոր Նազիանզացին, դէպ եղև 'ի տեղւոջ ուրեք՝ ուր 'ի խորհուրդս պղծութեան երթեալ էր՝ տեսանել զպատկեր Պողեմոնի իմաստասիրի, որոյ սքանչելի փոփոխութեամբ բարուցն յոյժ հռչակեալ էր , և 'ի տեսիլ պատկերին՝ յինքն եկեալ զգաստացաւ ։ Նոյն Կեդրենոս պատմէ , զի մի 'ի Թագաւորացն Բուլղարաց 'ի տեսիլ պատկերի մեծի աւուր դատաստանին՝ յորդորեցաւ յապաշխարութ՟ի ։ Զի յոյժ զօրաւոր է տեսիլ աչաց քան զլուր ականջաց [1], և կարի ազդողագոյնք են քան զխօսս պատկերք կենդանատիպք։ Նոյն սուրբն Գրիգոր Նիւսացին խոստովանի՝ չկարացեալ ժոյժ ունել արտասուացն 'ի տեսիլ իրիք պատկերի ։

---

[1] Բազում անգամ լուեալ է իմ 'ի Մաքսիմեայ, 'ի Սկիպիոնէ, և յայլոց քաղաքայնոց մերոց յերևելեաց արանց, զի 'ի պատկերս նախնեաց հայեցեալ՝ խրախուսէին յեռանդն առաքինութեան: Իբր ոչ եթէ մոմոյն կամ պատկերին էր զօրութիւնն, այլ յիշատակ քաջութեանց նոցա զեռանդն 'ի սիրտս վեհից արանցն արծարծանէր անշէջ՝ մինչև առաքինութեան նոցա համբաւոյ նոցին և փառացն հաւասարէր: Սաղուստ. յուգուրթ. հրտ. Յառաջաբ:

[2] Է նորա ատենաբանութիւն պերճ, արժանի նախամեծար քաղաքացւոյ, վասն 'ի հրապարակի կանգնելոյ զամենայն պատկերս. զի օգտակարագոյն այն էր, քան թէ 'ի գիւղս տարագիր առնել. Պլին. լե. դ:

Այս ազդեցութ՟ի պատկերաց զօրաւորագոյն 'ի չարն է քան 'ի բարին . զի առաքինութ՟ի [2] եկամուտ է 'ի մեզ , և ախտք չարք բնակաւորք ։ Առանց հրապուրանաց իսկ և օրինակաց չարաց , թէպէտ և ոչ ուրեք սոքա պակասեն , միտեմք՝ մանաւանդ թէ մղեալ զառածանիմք 'ի չարն . իսկ զի՞նչ ևս , եթէ քանդակագործութ՟ի ա՟մ՝ հնարիւք արուեստին , և նկարչութ՟ի բնաւ կենդանութե՟բ երանգոցն արծարծեսցեն 'ի մեզ զինքնաբորբոք ախտն ։ Զո՞ր աւեր և ապականութ՟ի ոչ գործիցեն 'ի միտս մանկտւոյ մերկանդամ անպատեհ պատկերքն , յորս անդրիագործք և նկարիչք համարձակեն զգրիչսն ։ Այսոքիկ [3] թերևս արուեստին յաճախեսցեն փառս , այլ ճարտարին նախատինս յաւիտենից ։

Թողեալ զքրիստոնէական օրէնս , որ 'ի ցոփ քանդակացն և 'ի նկարուց գարշին , հեթանոսացն իսկ իմաստունք խաւարամածք գրեթէ նոյն խստութե՟բ արգելուն զայնս ։ Քղք. Է. ԺԷ։ Արիստոտէլ 'ի գիրսն հասարակապետութ՟ե կարևորագոյն պարտս զգուշութ՟ե սահմանէ դատաւորաց , չթողուլ 'ի քաղաքս այնպիսի ինչ անդրի կամ պատկեր 'ի հրապոյրս ախտից և 'ի զեղծումն բարուց մանկտւոյն [4] ։ Սենեկա եպերէ իսկ զնկարչութ՟ի և զքանդակագործութ՟ի , և զազատական անունն կապտէ 'ի նոցունց՝ վասն սպասաւորելոյ նոցա ախտից ։ Պլինիոս բնախօս , այն որ 'ի գեղ գործոց նախնի Ճարտարացն զմայլէր , զի ոմն յականաւոր նկարչաց եպերէ վասն դժպատեհ և եղեռնական ցոփութ՟են՝ որով նկարէր 'ի Հռոմ ։ Զի ասէ . Արեղլիոս պայծառացաւ 'ի Հռոմ , այլ ապիրատութ՟բ մեծաւ զեղծոյց զարհեստն ։ Պլին. լե. ժ ։ Նա և խրատացի ցասմամբ կշտամբէ զքանդակագործս՝ որ զամօթալիսն[1] 'ի բաժակս և յըմպանակս քանդակէին , կամելով իմն անդստին 'ի պղծութ՟եցն ըմպել . որպէս թէ արբեցութ՟ի ինքնին ոչ ածէր զնոսա 'ի զեղխութ՟ի , և հարկ էր յաւելուլ հրապոյրս 'ի գրգռել զայն ։

---

[1] Դանդաղագոյն յուզէ զոգիս լուր ունկան,
Քան որ աննենգ աչաց գան իրք յերևան ։
Ոհր. Արհ. Քերթ. 180 ։

Այնպէս 'ի զգայարանս ազդէ նկար , զի և զօրութ՟ե ճառից յաղթէ ։ Կոսինփ ։

[2] 'Ի վատթարն միտեմք . զի և առաջնորդք և ընկերք ոչ պակասեն , և իրն ինքնին անառաջնորդ և անընկեր զարգանայ , և ոչ զառ 'ի վայր ևեթ 'ի չարիս է ուղին՝ այլ և զառ 'ի թափ ։ Սենեկ. Թղթ. ՂԷ ։

[3] Մի աստ պատմուճս 'ի պղղծուն կրթեսցի վասն մերկանդամ նկարեալ մարմնոցն գեղոյ , որ զարուեստն պատուէ , այլ զճարտարն անարգէ ։ Սէրմն. Ագուստին. Թղթ. ԺԱ. Է ։

[4] Զի և ոչ յաղատական արուեստս համարիմ զնկարս և զանդրիս , զկճեայս և զայլ սպասս զեղխութ՟ե ։ Սենեկ. Թղթ. ՁԸ ։

Քերթողք իսկ զդժպատեհ իրս զայս եպերէին , զի ասէ Պրոպերտիոս . Զարմանամ զի վասն հասարակաց կանգնին մեհեանք պարկեշտութ՟ե , և 'ի տունս իւրաքանչիւր կան միան պատկերք անհամեստք՝ որք զօրիորդայն ապականեն զոգիս ։ Պրոպերտ. Բ. Եղեր. Զ ։ Զի ընդ խայծիւ հեշտ տեսլեան ծածկեն զմահացու թոյնն՝ որ 'ի սիրտն ժամանէ , և հրապուրեն զտեսողս 'ի պղծութ՟ի ։ Նա վախճանեալ զբանսն , ասէ . Այսպիսի ինչ անպատեհ չգործէր առ նախնիս . ոչ որմք ապարանից նոցա նկարեալ էին պիղծ ձեռամբ , և ոչ զեղեռն այնու պատուեալ 'ի տեսիլ ածէին ։ Զնորին իսկ զգեղեցիկ տողսն արժան համարիմ երկրորդել , զի ասէ .

Պարկեշտութեան կանգնել մեհեան օրիորդացըն
զի՞նչ շահ ,
Թէ ամենայն՝ զոր ախորժեն՝ տիկնայց օրէն է և
ճահ ։
Ձեռն՝ որ նախկին լիրբ և լպիրշ նկարագրեալ
ըզպատկերս ,
Տեսիլ տգեղ 'ի տուն համեստ ած կանգնեցոյց
ըզխոհերս ,
՛Նա՝ նա պղծեաց զօրիորդայն աչս ամօթխած և
անբիծ ,
՛Նա հրապուրեաց գոլ պղծութեան իւրոյ զհանուրս գիտակից ։

---

[1] Պղծութ՟իս յանօթան քանդակեալ , որպէս այն թէ արբեցու՟ե չէր բաւական ածել 'ի զեղխութի ։.. Այսպէս անդստին 'ի զեղխութ՟ ըմպէն զգինի , և զարբեցութ՟ի վարձիւք գրգռեն ։ Պլին. լե. ժ ։

Ա՜հ, հեծութիւնք ըզհետ նորա յոլորտս երկրի
 պատեսցին,
Որ ընդ զուարթ տեսլեամբն ըզկադ ծածկեաց
 հնարիւք արուեստին ։
Ոչ առաստաղք սեթեւեթեալ ոսկիմբք երբեմն
 ձեւովք ։
Այլ ոչ ոճիր եղեռնագործ նկարագրեալ կայր
 զորմովք ։

Արդ եթէ կոչեսցիք՝ որպէս յառաջ ասացաք՝ յերկուց պատկերաց Աստղկան, զորոց շատ է ասել՝ թէ Պրաքսիտեղեայ դրօշուածք էին, մին սքօղեալ և միւսն մերկ, զքօղաւորն ընտրեցին վասն համեստութեան և պատկառանաց՝ թէպէտ և յոյժ նուաստ էր քան զմիւսն, զինչ ևս յաւելցուք առ այս ։ Մեծ դատապարտութիւն առաջի կայ մեզ՝ եթէ ամօթ համարիցիմք օրինակիս այսմիկ նմանել ։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՑԱՂԱԳՍ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ

Երաժշտականն արուեստ ընդարձակագոյն յոյժ էր ՚ի վաղ ժամանակս քան զոր թուի մեզ ։ զի ընդ յարմարութեամբ երգոց երաժշտականաց, և ընդ երգեցութեամբ այնոցիկ ձայնիւ և նուագարանօք, որովք արդ աւարտի երաժշտականն արուեստ, յայնժամ և զքերթողականն բովանդակէր, հիւսել տաղս ազգի ազգի, և զյարմարաւորմն յերգ արկանել ։ և զկայթողականն կամ զշարժուածոց արուեստ՝ որ զքայլափոխս ոտին կրթէ և զշարժուածս կաքաւոյն և զընթանալոյ և զարտասանութեան ։ Դարձեալ բովանդակէր և զարուեստ յօրինելոյ և գրելոյ խազիւք զեղանակ պարզ առոգանութեան, ուղղել նոքօք զհնչումն ձայնին, և զչափ և զժամանակ շարժուածոցն, որ առ նախնիս սովորական արուեստն էր, և արդ բնաւ անծանօթ ։ Այս ամենայն զանազանեալ մասունք, որ իրապէս կցորդին ընդ միմեանս, ՚ի սկզբանն էին նոյն և մի արուեստ, և միոյ ճարտարի գործ ։ յետոյ եղեն բաժանմունքս այս, մանաւանդ քերթողականին՝ որ յայլ իմն կարգ ուրոյն զատաւ ։

Զայս ի՟մ մասանց երաժշտականին ասասցուք աստ կարճ՝ 'ի կարճոյ, բաց 'ի յօրինուածոյ տաղից՝ զորմէ յետոյ յիւրում տեղւոջն լիցին բանք։ Այլ սկսցուք 'ի բուն երաժշտութ՟էն, որ ինչ այժմ իմանի։

ՊՐԱԿ ԱՌԱՋԻՆ

Յաղագս բնոյն երաժշտութեան։

Երաժշտութեանն արուեստ ուսուցանէ զազգս ազգս հնչմանց, որովք կազմի եղանակ և յարմարութիւն երգոց։

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Յաղագս սկզբան և հրաշալի զօրութ՟եց երաժշտութ՟ե։

Ոմանց թուեցաւ ասել՝ 'ի թռչնոց անտի ուսեալ մարդկան զերգս, որպէս թէ ճռուողելովն նոցա և զգայլայլիկն գեղգեղելով ուսուցեալ զազգս ազգս ոլորակացն և զելևէջս ձայնից՝ թէ քանի՛ ախորժ են ունկան։ Բայց այլ վեհագոյն վարդապետ է մարդկան, որում ևեթ շնորհապարտք են։

Հնարք երաժշտութ՟է, և կարևոր մասին նորա գուսանական գործեացն, պարգևք են ա՟յ՝ որպէս զի՟մ արուեստից գիտս։ Սա 'ի պարգև բարբառոյն, որ ինքնին իսկ պատուականն է, յաւելու եռանդն և կենդանութ՟ի՝ զկիրս հոգւոյն բացայայտագոյն ցուցեալ։ Զի 'ի հոգեխաղաղ լինել մարդոյ և յափշտակել 'ի զմայլական տեսիլ, ոչ ևս սովորականն բարբառ բաւէ խանդիցն. այլ արտաբերեալ իմն յանձնէ, և 'ի բերումն կրիցն թողեալ, զօրացուցանէ զբարբառն, և յորդեալ ձայնիւ կրկնէ և երեքկնէ. և զի՟մ ճիգն իւր նուազ և տկար համարեալ, առնու զօրավիգն զգործիս՝ որ օգնեն նմա բազմակերպ և երկար և անհատական հնչմամբ, յորմէ մարդկայինս վերջացեալ գտանի ձայն։

Աստի սկիզբն կալեալ երաժշտութ՟է, և սովաւ եղև ցանկալի և պատուական. որով ճահաւորագոյն 'ի պաշտամունս կրօնից պատկանի, զի սա միայն ազդէ 'ի հոգի զջերմեռանդն իմաստս՝ որ յափշտակեալ վերամբառնան զնա, և յորդորեն 'ի գոհութ՟ի և 'ի սէր, և են արժանի հիացման նորա և զմայլման, որովք զփորձ առնու զերանութ՟ե՟ն՝ պարծելով իմ՟ն յուրախութ՟ի իւր և 'ի բարեբաղդութ՟ի, որպէս առնէ Դաւիթ յա՟մ ա՟ծային երգսն, պաշտել և օրհնել զա՟ծ, գոհանալ զնմանէ, գովել զմեծութ՟ի նորա, և պատմել զսքանչելիսն։

Արդ 'ի տղայութ՟ե աշխարհի 'ի ժամանակի անմեղութ՟ե՟ն՝ այս էր երաժշտութ՟ե գործ, մինչդեռ պարզ, բնական և անարուեստ էր, և չև ևս յերկիւրեալ. և արդեօք ազգն Սեթայ՝ աւանդապահ ճշմարիտ կրօնից՝ պահեաց զայն անարատ։ Այլ ամպարիշտք գերեալք ըզգայութ՟եցն և ախտից, առ ամոքելոյ զխիղճս կենցաղոյս, և քաղցրացուցանելոյ զվտարանդութ՟ի՟ն, և առ 'ի սփոփումն թշուառութ՟եցն յօժարագոյն զբաղեալք 'ի բերկրութ՟իս երաժշտութ՟ե, առաւել եղեն մօտադիր 'ի զարգացուցանել զայն և յերկիւրել յարուեստ, և որ ինչ խուզողաբար հնարէինն՝ հաստատէին յօրէնս, և յանհատութ՟ի երգոցն և 'ի զօրավիգն և 'ի զանազանութ՟ի՝ ճարտարէին գործիս։

Ծն. դ. 21. Բանզի գիրք զսկիզբն այսր երաժշտութ՟ե ընծայեն ազգին Կայենի անարգելոյն. զի 'ի ծննդոց անտի նորին իսկ ամպարշտայն նահապետի էր Յովբաղ, որ եցոյց զերգս և զքնար։ Նմին իրի երաժշտութ՟ի յախտաւոր իրս յաճախեաց. զի բարբքէ զախտս և ազնուացուցանէ, և ողոքս և ազդողագոյնս գործէ զնոսա յաւելուածով բերկրութ՟ե՟ն, և զհոգին գերի առնէ զգայութ՟եցն, և 'ի լսելիսն ամփոփեալ պարուրէ զնա, և յաւելու զցանկութ՟ի նորա 'ի խնդրել արտաքոյ իւր սփոփանս, և զխորշումն 'ի խորհրդոց պիտանեաց և 'ի խելամտութ՟է ճշմարտութ՟ե։ Զեղծումն երաժշտութ՟ե զրեթէ ժամանակակից եղև հնարիցն, և բազումք գտան նմանողք Յովբաղայ քան Դաւթի։ Իբր ոչ եթէ երաժշտութ՟ի

Ցուց. երժշ. 1146։ վնասակար ինչ է. զի որպէս ասէ Պլուտարքոս, ոչ ոք՝ որ միտս ունիցի՝ խոտեսցէ զգիտութիս վասն զեղծանելոյ նոքօք ոմանց. այլ ախտամոլութ՟ե զեղծանելեացն է վնասն։

Երաժշտութ՟ի յա՟մ ժամանակի, առ խուժադուժ և առ կիրթ ազինս ախորժելի եղև։ Ընդաբոյս իսկ է[1] մարդկան ախորժ և իղձ յերգս և 'ի յարմարուն նուագաց, որք 'ի բարեբաստութե յաւելուն զուրախութի, և սփոփեն 'ի վիշտս զտրտմութի: Չիք արուեստաւոր, որ զանմեղանչականս զայս սփոփումն ոչ 'ի կիր արկանիցէ. զի և գոյզն մրմունջ մռայցուցանէ նմա զոգցես զվաստակսն: Բումբիւնք յարմարաւորք, որով դարբինք զշանթացեալ երկաթն թոպեն 'ի սալի, թեթևացուցանեն իմն նոցա զծանունց ուռանցն զբեռինս: Նաւ զթիավարացն իսկ զտարժանաւոր աշխատութին դիւրէ թևճակացն բազմութեան ներդաշնակաւոր և միօրինակ շարժումն: Զերաժշտական գործիս քաջ 'ի կիր արկանէին նախնիք որպէս զարդիս և 'ի խրախոյս զօրաց 'ի պատերազմի: Կուինտիլիանոս 'ի համբաւ զօրութեցն հռոմայեցւոց ոչ սակաւ օգնական համարի լեալ զգալարափողսն և զշեփորս, որ պատերազմական նուագօքն խրախուսէին զլէգէոնսն [1]:

---

[1] Երաժշտութ՟ի երևի 'ի բնութ՟է իսկ պարգևեալ՝ առ 'ի դիւրել զվաստակս. զի և զթիավարս նուագ յորդորէ. և ոչ միայն 'ի գործ՝ յոր բազմաց ջանք 'ի միջէ նախերգակ զուարթ ձայնէ յարմարին, այլ և իւրաքանչիւրոց ար և պէտ վաստակք վարկպարազի նուագաւ սփոփին։ Կուինտ. ա. ժ։

Նա ամ ազգս, որպէս ասացաք, յարգէր երաժշտութի. այլ առաւել առ Հելլէնս, որք գերաստիճան բարձրացուցին զայն մեծարգելոյն: Պարծանք էին արանց [2] աւագաց քաջ երաժիշտս գոլ, և նախատելի՝ աներաժըշտութի: Ոչ ոք 'ի քաջացն Հելլէնաց առաւել քան զԵպամինոնդ յաւել փառս Ելլադայ. արդ ընդ այնպիսւոյն առաքինութիմն համարէր արուեստաբարն կաքաւել և քաջ երգել նուագարանօք [3]: Յառաջ քան զամս ոչ սակաւ, Թեմիստոկղի 'ի խնջոյս ուրեք հրաժարեալ 'ի քնարահարութէ՝ անգոսնեցաւ, և համարեցաւ նմա այն 'ի նախատինս. զի տգիտութի երաժշտութե համարէր յայնժամ անկրթութի:

Նմին իրի երևելիք յիմաստասիրաց՝ որք յաղագս քաղաքականութե աւանդեցին գիրս, որպէս Պղատոն և

---

[1] Ասեն՝ մեծամեծ զօրավարաց փող և սրինգ հնչեցուցեալ, և զպարտուցւոց բանակն երաժշտական եղանակօք խրախուսեալ: Եւ զինչ այլ փողք և եղջերեայք 'ի զօրս մեր գործիցեն. զի ըստ ազդողագոյն նուագաց նոցա յաճախեն հռոմէական փառք պատերազմի քան զայլոցն: Կուինտ. ա. ժ:

[2] Զկատարեալ գիտութի յաղէյարմար և 'ի ձայնաւոր նուագս վարկանէին Հելլէնք: Նմին իրի Եպամինոնդ, իշխան Ելլադայ՝ ըստ իս, քաջ երգէր քնարաւ որպէս պատմեն: Եւ Թեմիստոկղ ամօք ինչ յառաջ քան զնա 'ի խնջոյս ուրեք հրաժարեալ 'ի քնարահարութէ, տխմար համարեցաւ: Ապա ուրեմն երաժիշտք 'ի յունաստան պայծառացան, և զերաժըշտութի ամենեքին ուսանէին. և որ ոչն գիտէր՝ տխմար համարէր: Կիկ. տուսկ. ա. բ:

[3] Ընդ առաքինութիս Եպամինոնդայ համարին աջողապէսն կաքաւել, և քաջ նուագել սրնգաւ: Կ. Նեպ. 'ի յառաջաբ:

Արիստոտէլ, պատուիրելով պատուիրեն մարզել զմանկտին յերաժշտութ՟ի. որ և դաստիարակութ՟ե Յունաց կարևոր մասն էր։ Եւ ոչ միայն պիտանի է սա քերթողականին մասին առոգանութ՟ե, որ զերկարս և զսուղս վանկից ուսուցանէ, և զչափ տողից՝ ըստ թուոյ և ըստ յանգի, և մանաւանդ զոլորակս բառից, այլ համարէին հինք և կրթել նովաւ մանկտւոյն, ներդաշնակելով իմն մասանց հոգւոյն 'ի յօժարութ՟ի պատշաճիցն. զի ասէ Պլուտարքոս. Ոչ ինչ ազդոյ քան զերաժշտութ՟ի՝ առ 'ի յորդորել յա՟մ ժամանակի յա՟մ գործս առաքինութ՟ե, մանաւանդ 'ի վտանգ մարտի։

Պլւտ. Երաժ. 1140։

Յոյժ այլազգ թուէր առ հռոմայեցիս 'ի բարենշան աւուրս հասարակապետութ՟ե. զի ամօթ իսկ էր առ նոսա երաժշտել, որպէս յայտ առնէ Նեպոս՝ ցուցանելով զներհակակիր ախորժակս ազգաց 'ի բազում իրս։ Սալուստեայ զտիկնոջ ուրումն հռոմայեցւոյ կշտամբելով զքաջ ճարտարութ՟ի յերգ և 'ի կաքաւ[1], իբր անպատեհ զգաստից և ազնուական կանանց, ցուցանէ որ ինչ համարէին առ հռոմայեցիս երաժշտութ՟ի։ Իսկ կաքաւ, բնաւ իսկ տարակարծ, եպերելի էր առ նոսա՝ որպէս անզգայելոց և արբեցելոց գործ[2]։ Այս խստութ՟ի էր նոցա 'ի սկզբանն, մինչև ապա 'ի հաղորդելն ընդ Յոյնս, և մանաւանդ 'ի յաճախել գանձուց նոցա և ճոխութ՟ե՝ յայն մեղկութ՟ի զառածեալ հասին, յոր ոչ ժամանեցին Յոյնք։

Հրաշալի զօրութ՟իս համարէին հինք ունել երաժշտութ՟ե, զրգել և հանդարտել զկիրս, զգօնացուցանել զսիրս, և զխուժադուժ և զվայրագ ազինս 'ի քաղաքականութ՟ի ածել։ Պիւթագորայ[3] տեսեալ զմանկտին 'ի համեստ ուրեք տան արբեցեալ, և փռիւգացի նուագաւ սրնգի գրգռեալ 'ի բռնաբարութ՟ի, հանդարտեցոյց զնա և 'ի զգաստութ՟ի էած՝ հրամայեալ երաժշտին փոխել զմոտն, և ծանունս նուագել՝ համբոյր ոտիցն չափմամբ։

Իգ. և Պղատ. Ե. Գ։

Հանգոյն այսմ պատմէ Գաղիանոս զԴամոնէ երաժշտէ միլետացւոյ, զի զմանկտին զինէհար մոլեգնեալ յերգ սրնգի փռիւգացի նուագաւ՝ ողոքեցոյց, խրատ տուեալ նուագածուին 'ի գործացի փոխել նուագ ։

---

[1] Ճարտարագոյն քան զոր զգաստից կանանց վայել է կայթել և նուագել։ Պտրղմ. Կատիլ։

[2] Ոչ ոք 'ի զգաստից, բայց եթէ յանկարծ անզգայեալ, կայթիցէ։ Կիկ. ճառ Մուրէնայ. ԺԳ։

[3] զՊիւթագորայ աւանդեն, զի 'ի միում ուրեք համեստ տան ըզմանկտին գրգռեալ 'ի բռնաբարել՝ ցածոյց, հրամայեալ քնարահարին փոխել զեղանակն 'ի համբոյր։ Կոյնտ. ա. ժ։

Դիոն Ոսկեբերան, և այլք ոմանք զՏիմոթեայ երաժշտէ պատմեն, թէ սրնգաւ զԱղեքսանդր մեծ յարոյց 'ի զէն, զպատերազմականն երգեալ խրոխտ նուագ ։ Հանգոյն իմն պատմէ և Պլուտարքոս զԱնտիգենեայ փողարէ, զի յարոյց զԱղեքսանդր 'ի խնջոյից․ որոյ զէն առեալ մոլեգնաբար՝ խառնէր զշաչիւն ընդ երգ սրնգին, և փոքր միւս ևս՝ դիմէր 'ի բազմականսն ։ Ճռ․ յաղ․ թագ․ Բաց․ Յղ․ բաղդ․ Աղէքս․ 335․

'Ի հրաշալի ազդեցութենէ երաժշտութեան, առաւելահրաշ և հաւատարմագոյն արկադացւոցն իրք թուին, որում Պողիբիոս վկայագիր հանճարեղ և ճշմարտախօս և արժանի ա՟մ հաւատարմութ՟ե վկայէ ։ Արդ զնորին իսկ զբանսն համառօտեցից հանդերձ ուշիմ խելամտութ՟բքն ։

Երաժշտութ՟ի, ասէ, կենցաղօգուտ գիտութ՟ի է․ այլ արկադացւոց ընաւ իսկ կարևոր ։ Սոքա թէպէտ և խստակեացք, այլ 'ի սկզբանէ հասարակապետութ՟ե իւրեանց մեծարեալ պատուեն զերաժշտութ՟ի․ ոչ միայն զտղայս 'ի նոյն մարզեալ արուեստ, այլ և զերիտասարդս մինչև ցերեսնամեայ հասակն 'ի նոյն պարապեցուցանեն ։ Ոչ ամօթ համարի առ նոսա համայն արուեստից տգիտութ՟ի, այլ չգիտել զերգս և 'ի դէպ ժամանակի չնուագել՝ նախատինք մեծ են ։ Դ․ 289․

Արդ ինձ թուի, յաւելու Պողիբիոս, զի օրէնդիրք նոցա ոչ վասն զեղխութ՟ե և մեղկութ՟ե եդին զօրէնս զայս՝ այլ առ ամոքել զվայրագ բարս նոցա, և զուարթացուցանել երաժշտութ՟բ զսևամաղձ տխրութ՟ի նոցա, յաւելեալ 'ի ցրտութ՟է օդոյ գրեթէ ա՟մ գաւառին Արկադիոյ ։ Զի կնիդացւոց ապախտ արարեալ զայն, որոց կարևորագոյն էր՝ վասն 'ի դժուարագոյն և յանմարդի կողմն աշխարհին բնակելոյ, յօդոյն և 'ի նահանգին ազդեցութ՟է այնպէս դժնեացեալ վայրենացան, զի երբէք ուրեք 'ի յունաստան ոչ գործեցին ոճիրքն յաճախեալք առ նոսա ։

Եւ վախճանեալ Պողիբեայ զբանս իւր, երկու ինչ ածէ պատճառս ճառիցն ։ Մի՝ զի ազգք բնակեալք յԱրկադիա մի զվարժս երաժշտութ՟ե զբօսանս ինչ աւելորդս համարեալ մտահաճութ՟բ, թերի արասցեն զկրթութիւն ։ Եւ միւս ևս՝ զի կնիդացիք նախամեծար արասցեն զերաժշտութ՟ի, եթէ տացէ նոցա ա՟ծ (տես ինձ զիմաստս վկայագրին) պարապել 'ի գիտութ՟իս՝ որ 'ի քաղաքականութ՟ի ածեն զազգս․ որպէս զի լիցի նոցա այսպէս մերկանալ զվայրագութ՟ի ։

Թուի ինձ, զի չէք յիմ նախնի մատենագիրս հանգոյն այսմ ներբող երաժշտութ՟ն. և զի որ ներբողէն՝ որպիսի ոք իցէ, ոչ ինչ հարկ է ասել։ Յաւելեալ և որ ինչ երկոքին ջահքն իմաստասիրութ՟ն Պղատոն և Արիստոտէլ առեն զայնմանէ, յորդորելով ստէպ յուսում՟ն յայն՝ վեր 'ի վայր զշահաւէտութիւնս նորա յեղանակեալ, զի՞նչ հաւատարմագոյն և պանծալի քան զայսպիսի վկայութ՟իս կայցէ։ Այլ զի մի ոք վկայութ՟ե արանցն աւագաց պատրեսցի, ասասցուք զո՛ր իմանայցեն երաժշտութ՟ի։ Համախոհ նոցին Կուինտիլիանոս մեկնէ զիմաստս նոցա՝ քաջ ներբողելով զերաժշտութ՟ի, ասէ. Թէպէտ և յայտ է յօրինակացս՝ թէ զո՛ր երաժշտութ՟ի գովեմ, այլ յայտնագոյն ասացից։ Ոչ սա՝ որ 'ի տեսարանս մեր հնչէ արդ, տափական խենեշ եղանակօքն ոչ սակաւ օգնեալ առ 'ի շիջուցանել 'ի սպառ եթէ կայծակն ինչ զօրութ՟ե և առաքինութեան մնայր 'ի մեզ, այլ զոր արք լաւք և արիք յերգս ներբողականս համանմանիցն իւրեանց 'ի կիր արկանէին։ Եւ ոչ զնուագարանսն ասեմ զվնասակարս, որոց նուագք մեղկք լուծանեն զոգիս և յեղուն 'ի պղծութ՟ի, և յորոց գարշի ազնուական անձն. այլ զցանկալի արուեստն՝ որ յարմարութեամբ երգոց ազդէ 'ի սիրտ, և դրդէ զկիրս կամ հանդարտէ որպէս վայելէ և պիտոյ։ Կուինտ. ա. Է։

Արդ զայս երաժշտութ՟ի մեծ իմաստասէրքն և հանճարեղ օրէնսդիրք Յունաց մեծարէին. զի սա զվայրենութ՟ի ընտելացուցանէ, և ամոքէ զխստութ՟ի և զբրտութիւն, կրթէ զբարս, և 'ի գիտութ՟ի հրահանգէ զոգիս, համբոյրս ժողովասէրս առնէ զմարդիկ, և մերժէ 'ի բաց զիմ ախտս՝ որ բերեն յանգթութ՟ի և 'ի տմարդութ՟ի և յանզգամութ՟ի։ Եւ ոչ ոգւոյն միայն՝ այլ և մարմնոյ օգտակարագոյն է սա 'ի բուժում՟ն ախտից։

Առասպելք թուին որ ինչ զզօրութ՟ե սորա 'ի խածածս փաղիժից պատմի. բայց անժխտելի վկայու՟իք հաւատարիմ առնեն զայն։ Փաղիժ է սարդ ութոտանի և ութաչեայ. և գտանի յԱպուլիա 'ի կողմանս Տարենտոնի, ուստի առ ա՛յլ ազգս ապուլեան կամ տարենտեան սարդ կոչի։ Է և բազում ա՛յլ ուրեք յԻտալիա, և 'ի Կորսիկա կղզւոջ։ Խածած նորա յետ սակաւ միոյ ցաւէ դառնակսկիծ. և իբրև ժամք ինչ 'ի վերայ անցանեն, ընդարմանայ։ Իսկ հարուածեալն ծանրաթախիծ հեղձամղձուկ լինի, թողանան շարժք երակացն, աչքն ցնորեալ՝ այլ ընդ այլս տեսանեն. և անզգայեալ կարկամեալ՝ մեռանի, եթէ թողցի անդարման։ Բայց դեղք և ստեղանիք բժշկաց ոչ օգնեն, եթէ ոչ երաժշտութիւն ձեռն տացէ։ Զի մինչ հարուածեալն անկեալ դնի անշարժ և անզգայ, փոփոխէ զմատն նուագածուն՝ մինչև հնչումն ձայնին և եղանակն յարմարեսցի ախտին հիւանդութեն։ Եւ սկսանի հիւանդն խլրտել, և 'ի հանգիստս նուագացն՝ նախ զմատունսն շարժէ, ապա զբազուկսն, ապա զոտսն, և ապա տակաւ զմարմինն ողջոյն. մինչև յառնէ իսկ և սկսանի կայթել, առ փոքր փոքր սթափեալ և զօրացեալ։ Են որ ժամս վեց կայթեն անդադար։ Եւ ապա դնի 'ի մահիճս. և 'ի հանգչել յաշխատութենն, դարձեալ նուագածուն զնոյն մատն հարեալ՝ յարուցանէ զնա անդրէն 'ի կաքաւ. և այսպէս զաւուրս վեց կամ եօթն հանապազորդէ, մինչև վաստակաբեկ լեալ՝ ոչ ևս կարասցէ կայթել. որ է նշանակ բժշկութեն։ Զի ցորչափ զօրութին 'ի թոյնն կայցէ, չդադարէ 'ի կայթելոյ 'ի հնչումն ձայնին, մինչև նուաղեալ մեռանի։ Իսկ իբրև վաստակաբեկ լինի հիւանդն, տակաւ 'ի միտս եկեալ զգաստանայ՝ որպէս 'ի խոր քնոյ զարթուցեալ, ոչ ինչ 'ի կրից ախտին և ոչ զկայթման յիշելով։ Իրք նորանշան, այլ հաւաստիք. զորոյ զպատճառն բժշկաց անկ է քննախօսել։

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Յաղագս թէ ոյք երաժշտութեն և նուագարանաց եղեն գտիչք, և ոյք զարգացուցին։

Արտաքնոցն վիպագիրք կարևորագոյն օրինաց երաժշտութեն գտակ կեսք զառասպելեալն իւրեանց զՀերմէս համարին, այլք զԱպողոն, և ոմանք զԱրամազդ. Պլուտ. երաժ.
յայտ արարեալ՝ զի կենցաղօգուտ արուեստին գիւտ՝ 1835.
աստուածոյն անկ էր, և զի ոչ ումեք 'ի մարդկանէ արժան է տալ զփառսն։

'Ի Պլուտարքեայ՝ որ ինչ յաղագս երաժշտութեն ճառէ, և 'ի հանճարեղ մեկնութենէ և 'ի յաւելուածոյն Պիւռէթեայ, 'ի կիր առից զառաւելագոյն մասն առաջիկայ պատմութես զճարտարաց երաժշտականին. զհնագունիցն և եթ ճառելով, որ յառասպելս ծանօթքն են, առանց հայելոյ 'ի կարգ ժամանակին։

ԱՄՓԻՈՆ

Սորա ասի գտեալ զքնար կամ զտաւիղ․ զի սորա սուղ ինչ 'ի միմեանց զանազանին, որպէս յետոյ ասասցուք․ Նմին իրի մատենագիրք այլ ընդ այլոյ վարեն զսոսա ստէպ ։

Կառուցումն Թեբայիդայ 'ի ձայն քնարին Ամփիոնի՝ երևի յետոյ քան զՀոմերոս առասպելեալ, վասն որոյ ոչ ինչ ծանօթս տայ զայնմանէ․ զի թէ տեղեակ էր առասպելին, յաւելուր արդեօք զայն 'ի սեթևեթ իւրոյ քերթուածոյն ։

Ժամանակակիցք Ամփիոնի կային Լինոս և Անթէս և Պիերիոս, և Փիլամոն՝ որոյ որդին Թամիրիս էր քաղցրաձայն քան զա՟մ երգիչս ժամանակին․ որ և ընդ Մուսայից 'ի վէճ կացեալ՝ 'ի վրէժ ժպրհութե՟ն կուրացաւ․ և 'ի ձայնէն և 'ի մտաց անկեալ, և զքնարահարութե՟ն ևս մոռացաւ զարուեստ ։

ՈՐՓԷՈՍ

Վաղ քան զտրովական պատերազմ՟, յաւուրց Արգոնաւտացն անուանի էր սա, և 'ի թիւս նոցին․ և աշակերտեցաւ Լինոսի ընդ Հերակլեայ 'ի վարժս երաժշտութե՟ ։ Որ ինչ զսմանէ վիպին՝ ծանօթ են ամենեցուն ։

ՅԱԳՆԻՍ

Համարի սա երիցագոյն յերգ սրնգի․ սորա որդի էր Մարսիաս, որում ընծայեն այլք զհնարս սրնգի, և որ ընդ Ապողոնի 'ի վէճ եկաց, և յաղթեալ նմա ձայնիւ՝ յաղթեցաւ 'ի նմանէ քնարաւ, և կենդանւոյն մորթեզերծ եղև ։

ՈՂԻՒՄՊ

Ս··իտ··· ։ Երկու եղեն Ողիւմպք, անուանիք երկաքանչիւր յերգ սրնգի ։ Երիցագոյնն միւսացի՝ եկաց նախ քան զտրովական պատերազմ՟, աշակերտեալ Մարսիայ․ էր նա և յաղերախս Ճարտար ։ Միւսն փռիւգացի էր, և եկաց ժամանակակից Մինդայ ։

ԱՄ ԱՇ.

ԴԵՄՈԴՈԿ ԵՒ ՓԵՄԻՈՍ

Զսոսա Հոմերոս բազում ուրեք յՈդիսականին գովէ ։ Դեմոդոկեայ էին քերթուածք կրկին . մի՝ յառումն Տրովադայ , և միւս ևս՝ 'ի հարսանիս Աստղկան ընդ Հեփեստեայ . զորս Հոմերոս տայ նմա երգել առ Ալկինեայ արքային փէակեաց յանդիման Ոդիսեայ ։ Եւ զՓեմիոս որպէս ա̃ծարեալ զոմն երգիչ 'ի ներքս ածէ . որոյ զտաղս իւր յերգ և 'ի քնար արկեալ՝ խրախացուցանէ զկոչունսն , և զհալածիչսն Պենելոպեայ զանգաղեցուցեալ յամեցուցանէ ։ Պլուտ ։

Գրիչ վարուցն Հոմերի , որ կարծի Երոդոտ , ասէ զՓեմեայ՝ թէ բնակէր 'ի Զմիւռնա , և թէ անդ ըզմանկտին մարզէր 'ի քերականութ̃ի և յերաժշտութ̃ի , և ամուսնացաւ անդ ընդ Կրիթեայ՝ որոյ 'ի պոռնկութենէ ծնեալ էր զՀոմերոս . և Փեմեայ որդիացուցեալ իւր զնա , խնամով դաստիարակեաց ։

ՏԵՐՊԱՆԴՐ

Թէ ո́ւր և ե́րբ երաժիշտս այս եկաց , չմիաբանին պատմիչք ։ Եւսեբիոս յերեսներորդի երրորդի ողիմպիադին կացուցանէ զսա . բայց եթէ արդարև՝ որպէս պատմեն՝ սա ինքն նախ 'ի կարնիական խաղս զերաժշտական տաղից տարաւ զմրցանակն , հարկ է՝ զի իցէ երիցագոյն . քանզի խաղքս այս 'ի քսաներորդի չորրորդի ողիմպիադին սահմանեցան 'ի Սպարտա ։ 3556. Աթէն. ժդ. 635. 3328.

Սոյն յաղթութ̃ք 'ի մրցմունս տաղից երաժշտականաց փառաւորեալ Տերպանդր , առաւել ևս յայլ նուագս 'ի նմին մասին պայծառացաւ ։ Բազում ուրեք յիշատակի աղմուկ սպարտացւոցն , զոր քաղցր երգովքն և քնարաւ ցածոյց Տերպանդր ։ Նա և չորեքկին 'ի Պիւթեան խաղս կալաւ մրցանակ ։ Երևի՝ զի յաւուրս սորա և նախնոյն Ողիմպեայ քառեակ կամ հնգեակ լարք էին քնարին , և սոքա անփոփոխ կալան զայն 'ի սկզբանն , Ճարտար մատամբքն և եթ լեալ անուանի . այլ ապա յաւելլին երկաքանչիւր կատարելագործել զայն , մանաւանդ Տերպանդր՝ որ մինչև ցեօթն զլարս քնարին յաւել ։ Բայց զչարեցան ընդ այն սպարտացիք , զի խիստ օրէնք էին առ նոսա՝ մի́ ինչ փոփոխումն և նորաձևութ̃ի առնել նախնեացն երաժշտութ̃ե ։ Պլուտարքոս ասէ տուգանեալ պարետաց Պլուտ. 1146։ Լուկն. [illegible] 238.

ԱՄ ԱՇ· զՏերպանդր ընդ միոյ լարի՝ զոր 'ի սովորական քնարին յաւել, և զքնար նորա կախեալ զբեւեռէ ։ Ապա վաղագոյն իսկ էին լարք վեց քնարին ։

Պլուտ. Երաժ. 1192 ։ Որպէս է գուշակել 'ի բանիցն Պլուտարքեայ, Տերպանդր յօրինէր նախ տաղս քնարերգականս չափաւ՝ պատկանաւորս յերգ և 'ի քնար, և ապա յեղանակէր զտաղսն՝ յարմարեալ ըստ խաղից քնարին, և յետոյ զեղանակն խաղիւք 'ի վերայ տաղից քերթուածոյն նշանակէր, մերթ ևս 'ի Հոմերոնի քերթածոյն տաղս 'ի կիր առեալ յայն. և ապա 'ի տօնս խաղուց ինքնին կամ այլ ոք նուագէր զայնս ։

'Ի քառեակ մեծամեծ տօնս խաղուց Ելլադայ, մանաւանդ 'ի պիւթեանսն, բաշխէին մրցանակք քերթութեան և երաժշտութեան. զի գրեթէ միշտ կցորդէին սոքա, և քերթողականն վեց մասն մեծ պիթիական խաղուցն էր ։ Նոյն կարգ էր և յայլ բազում քաղաքս աշխարհին, յորս հռչակաւ և առաջի բազմութեան հանդիսատեսաց կատարէին խաղք ։

ՓՐԻՆԻՍ

Միտիլինեցի, 'ի մայրաքաղաքէ կղզւոյն Լեսբեայ ։
Վարժապետ վեհագոյն 'ի վարժս քնարերգութեան կալաւ
զԱրիստոկղ, որ էր յաշակերտաց երևելւոյն Տերպան-
դրեայ ։ Սա նախ առաջին զքնարահարութեան ասի տա-
րեալ մրցանակ 'ի համաթենական խաղսն, որ հռչակե-
3547. ցան յԱթէնս յամին չորրորդի ութսներորդի ողոմպիա-
դին ։ Այլ ընդ Տիմոթեայ երաժշտի մրցեալ, պարտեցաւ ։

Սա ինքն Փրինիս եղև սկզբնապատճառ փոփոխման նախնոյ երաժշտութեան ըստ քնարականին. զի յեօթն աղեաց երկուս այլ ևս յաւել, և զեղանակին իսկ զյօրինուածս փոփոխեաց, եղծեալ զնախնին վսեմ և զարիական պարզութիւն. վասն որոյ Արիստոփան յԱմպսն եպերէ զնա, զի անդ Արդարութիւն զվաղեմի մանկտւոյն կրթութենէ ասէ. Երթային 'ի միասին առ քնարահարն ... և զՊալլասայ զահաւորին ուսանէին զերգս կամ այլ ինչ նուագ, եղանակեալ ըստ նախնեացն երգոց յարմարութեան ։ Եւ եթէ ոք 'ի նոցանէ կատակէր յերգսն, կամ թէ զձայնն բեկբեկէր ըստ արդի ոլորակաց Փրինեայ, խստիւ պատուհասէր ։

Պլուտ. յԱ- գիս. 799 ։ Յաշխարհախումբ խաղս 'ի Սպարտա, 'ի յանդիման լինել Փրինեայ ինն աղի քնարաւ, Եկպրեպէս պարէտ զերկուս 'ի լարիցն հատանել հրամայեաց, նմա յընտիր արարեալ 'ի բարձանցն կամ 'ի նուաստից խզել։ Յետ ոչ բազում ժամանակաց և Տիմոթեայ երաժշտի զնոյն 'ի կարնիական խաղս հրաման ետուն պարէտք։

ՏԻՄՈԹԷՈՍ

'Ի Միլետոն քաղաք Յոնիոյ 'ի Կարիա, յերրորդում ամի ութսներորդի երրորդի ոլիմպիադին ծնաւ Տիմոթէոս՝ քերթող և երաժիշտ քաջ, ժամանակակից Եւրիպիդեայ և Փիլիպպեայ մակեդոնացւոյ. և էր Ճարտարագոյն 'ի քնարերգականն և յերկդունենին տաղս։

Երաժշտականին մանաւանդ, և քնարահարուե՟ փոյթ կալաւ. այլ 'ի սկզբանն չյաջողեալ, ծաղր եղև ամբոխին։ Եւ մինչ վհատէրն յարկածից անտի, և խորհէր ձեռնթափ լինել՝ որպէս ոչ ունելով այնմ բաւականուի՟, դարձոյց զմիտս նորա Եւրիպիդէս 'ի ձախողակի խորհրդոյն, և քաջալերեալ յուսացոյց զնա 'ի յաջողութ՟ի մեծ։ Պլուտարքոս 'ի պատմել զիրս զայս, օրինակ 'ի ներքս ածեալ զԿիմոն, զԹեմիստոկղ, և զԴեմոսթենէս՝ զի և նոքա այսպէս խրատուք քաջալերեցան, բարւոք ազդ առնէ՝ զի սպաս մեծ աշխարհին մատուցանեն, որ զմանկտին համձարեղ և ուշիմ խրախուսեն չվհատել ընդ վրիպումն սխալոտ հասակին, և ընդ ձախողութիւն նախկին հանդիսից արուեստին։ Պլուտար. 'Ի Երաժշ. 795։

Ոչ խաբեցան խորհուրդք Եւրիպիդեայ, և ոչ վրէպ գտաւ նա 'ի յուսոյ. զի Տիմոթէոս քան զա՟մ Ճարտարս ժամանակին գերազանցեաց 'ի քնարերգուի՟։ Եւ յաւել 'ի կատարումն քնարին յինն լարսն՝ որ էին յառաջ, այլ ևս լարս չորս՝ ըստ Պաւսանիայ, կամ ըստ Սուիդայ երկուս՝ զտասներորդն և զմետասաներորդ։ Օ այսմանէ այլափոխս տան պատմիչք, և բազումք ևս հակառակ միմեանց։ Պաւս. Գ՟. 183։ Սուիդ. 'Ի Տիմոթ.

Ոչ ամենեցուն հաճոյ թուեցաւ նորաձեւութ՟ին. և ետուն սպարտացիք հրովարտակաւ դատակնիք, զոր Բոյետիոս հասոյց մեզ, գրեալ ըստ դժոխալուր ընիկ նոցա բարբառոյն՝ գրեթէ զա՟մ Ս 'ի Ռ փոխելով. և այս իմաստք են հրովարտակին. Տիմոթէոս միլետացի եկեալ 'ի քաղաքս մեր, քանզի արհամարհեաց զառ 'ի նախնեացն երաժըշտութ՟ի և զվաղեմին քնար, և զհնչմունս նորա և զլարս սորա բազմացոյց, և ընդ նախնի պարզ և ընդել եղանա- յԵրաժ. ա. ա։

կացն փոխանակեաց բազմաձայնս, և զգունաւորն[1] եմոյծ 'ի նոսա զեղանակ, և զի անհամեստս երգեաց զՍեմեղեայ զերկունս, առ 'ի խափանել զչարիս նորաձեւութե̃ցն զեղծիչս բարուց, արքայք և պարէտք յայտ յանդիման կշտամբեալ զնա, հրամայեցաք դարձուցանել զքնարն յեօթնաղի՝ զյաւելուածս լարիցն խզեալ. այլովքն հանդերձ։

Ծբ. 636։ Զայս և Աթենէոս պատմէ. և յաւելու, զի մինչ հանդերձեալ էին ըստ հրովարտակին հատանել զյաւելեալ լարսն, տեսեալ անդ Տիմոթեայ անդրի Ապողոնի փոքրիկ՝ քնար տասնաղի 'ի ձեռին, եցոյց զայն դատաւորացն, և անպարտ արձակեցաւ։

Կուինտ. Բ. Գ. 'Ի հռչակ համբաւոյ նորա գային առ նա բազումք յաշակերտութի̃. և պատմեն զի կրկին առնոյր վարձս յայնցանէ, որք նախ այլուր աշակերտեալ էին յերգ. սրնգի կամ քնարի. զի ասէր. Վարժապետ քաջ յաջորդեալ թերավարժին, կրկին ունի աշխատանս. մի, հանել 'ի մտաց աշակերտին զնախ ուսեալսն՝ որ դժուարագոյնն է, և ապա այլազգ ուսուցանել։

ԱՐՔԻՂՈՔ

Սա և 'ի քերթութե̃ և յերաժշտութե̃ եղև անուանի. վասն որոյ յետոյ 'ի Ճառս քերթողաց զնմանէ ասասցուք։ Այլ աստ ըստ երաժշտականի մասին՝ զայն միայն յ̃մ բանիցն Պլուտարքեայ բերեմք, յորում նմա ընծայեալ զնուագումն մեծավերջ տաղից, յաւելու՝ թէ կէսք 'ի տողից անտի՝ արտասանէին ևեթ ընդ նուագարանս, իսկ կէսք երգէին։ Ապա ուրեմն, ասէ Պիւռէթ, 'ի մեծավերջ տաղից էին արտասանականք՝ ընթեռնլիք միայն, էին և նուագականք։ Այլ այն իսկ դժուարահաս թուի, զի և ընդ արտասանականսն յարմարէին քնար և այլ ևս նուագարանք, բարբուտ կամ աղեբախ. և ո՞րպէս յարմարութի̃ն այն գործէր։ Ամենայն իրօք հաւանելի թուի, զի քնարահարն ոչ միայն ըստ աստիճանի ձայնի քերթողին կամ դերասանին նովին մատամբ զուգաձայնէր, այլ և ըստ ոլորակաց առոգանութե̃ բառիցն՝ որ խաղիւք իսկ գրէին՝ զելևէջս ձայնին յեղանակէր, ճիշդ ըղթիւ ոտիցն և զյանգս տաղին՝ որում կցորդէրն՝ նուագեալ. և նուագարանին կցորդութի̃ն, թէպէտ և 'ի թիւ տաղքն արտասանեալ, յոյժ ազդու գործելին և հոգեշարժ ։ Իսկ ընդ նուագականսն ամենևին զուգաձայնէր արուեստական գործին, զնոյն հնչմունս զերաժշտական քերթողին նուագեալ ։

---

[1] Ձայնանէ յետոյ [illegible]։

ԱՐԻՍՏՈՔՍԵՆ

Ծնեալ 'ի Տարենտոն քաղաք Իտալիոյ, որդի Մնե- Սուիդաս ։
սեայ երաժշտի, վարժ յերաժշտութ̃ի և յիմաստասիրութ̃ի ։ Նախ հօր իւրում աշակերտեցաւ, ապա պիւթագորեանն Քսենոփիլեայ, և ապա Արիստոտելի. աշակերտակից լեալ Թէոփրաստեայ ։ Որով յայտ է, զի Արիստոքսեն եկաց յաւուրս Աղեքսանդրի մեծի, և ընդ յաջորդս նորա ձգեալ զկեանս ։

'Ի չորեքարիւր յիսուններից մատենից նորա, զոր պատմէ Սուիդաս, երրեակ գիրք երաժշտական նախակրթութ̃եցն կան արդ, հնագոյնք քան զն̃մ՝ որ յաղագս երաժշտութ̃ե ճառք հասին առ մեզ 'ի նախնեաց ։ Պնդագոյնս հակառակ եկաց նա պիւթագորեան օրինացն
երաժշտութ̃ե ։ Քանզի Պիւթագոր ստոյգ և անյեղլի Հերակլէտ ։
օրէնս խորհեցաւ հաստատել յն̃մ գիտութիւնս և յարուեստս, նմին իրի և զօրէնս երաժշտութ̃ե կամէր 'ի վկայութենէ և 'ի համեմատութենէ սխալոտ զգայութ̃եցս 'ի բաց առնուլ, և արկանել ընդ բանին ևեթ դատաստանաւ. ոչ ըստ հեշտի ունկան դաշնակելով նուագս, զի համարէր զնա անձնական և վրիպական, այլ ըստ անփոփոխ թուոց համեմատութ̃ե ։ Իսկ Արիստոքսեն հակառակ նմին 'ի թուական և 'ի բանական համեմատութ̃ին հարկ համարէր զունկանն յաւելուլ դատաստան, որոյ է ուղղել զերգս և զնուագս ։ Նա բազում այլ իրօք հերքեաց զպիւթագորեան կարգաւորութ̃ին ։

Պղուտարքոս 'ի ճառին երաժշտութեան այսպէս տայ բարբառել Սոտերիկեայ, միում 'ի խօսակցացն՝ զորս 'ի ներքս ածէ. Պարտ է զգայութ̃ե և բանին ընկերել 'ի դատումն մասանց երաժշտութ̃ե. որպէս զի մի նոքա կարի աժխոյժութ̃ երագեսցեն քան զսա, և մի սա կարի յուլութ̃ դանդաղեալ տարաժամեսցէ ։ Արդ 'ի զգայարանս յայս, 'ի լսելիսն ասեմ, երեք ինչ միանգամայն հարկ է զի ազդիցեն. ձայնն, ամանակն կամ չափ, և տառքն. որոց անհատաբար յառաջ խաղացմամբ՝ իմանին եղանակն և ոտք և բառք ։ Նա զի զգայարանաց զերեսին զոսա բաժանել և ուրոյն զմի մի հետազօտել ոչ է կար, ապա հոգւոյն արդեօք կամ բանին անկ է ընտրել զնուագաւոր և զարտանուագ ծաւալումն ձայնին և թուոյն և բառից ։

ՅՕԴՈՒԱԾ Գ.

Յաղագս նախնոյն պարզ ձեւոյ և արեւելեան երաժշտութե՟ . և թէ երբ և որպէս զեղծումն նորա ։

Քանզի երաժշտութի՟ 'ի բնէ խուրձ և սեփականագոյն յա՟ծայինն պաշտամունս և յուղղումն բարուց սահմանեալ էր, զվսեմն և զպարզ նախապատիւ առնէին հինք . որք և կային յերկար 'ի ձայնականն և յարուեստական նուագս ։ Ողիւմպ և Տերպանդր և աշակերտք նոցա, առանց բազմաղի քնարաց և բազմաձայն եղանակաց, երիւք կամ քառեակ լարիւք և պարզ նուագօք զմայլեցուցանէին զքաջակիրթ ախորժակս, ասէ Պլուտարքոս ։

'Ի նմին պարզութ՟, որպէս էր յաւուրս Տերպանդրեայ քնարն, եկաց ժամանակս ինչ, և չէր օրէն ումեք ըստ հաճոյս քնարերգել, և փոփոխել ինչ 'ի դաշնակն կամ 'ի յանգս . այլ զերգոց նախնեաց զիւրաքանչիւր աստիճան ձայնին և զնկարագիր անփոփոխ պահէին . վասն որոյ կոչեցան եղանակքն այն օրէնք, որպէս կանոնք և օրինակք երաժշտութ՟ ։

Իսկ իբրև մուծան թիւք յերկգռնենին, և զբազմութ՟ ձայնից եմուծ 'ի սրինգն Լասոս . և Տիմոթէոս յաւել զլարս քնարին, և Փրինիս և Մենալիպպիս և Փիլոքսեն զնորաձեւութիւն, կերպարանափոխ եղև նախնին երաժշտութի՟ ։ Քերթողք կատակերգուք, մանաւանդ Փերեկրատ և Արիստոփան, ողբս տխուրս յաճախաւորս 'ի վերայ այսորիկ յօրինեն . երաժշտութի՟ 'ի քերթուածս նոցա դիմառնաբար սրտառուչ և դառնագին բողոքէ զերաժշտաց, որք թիւրեալ ապականեցին զնա 'ի սպառ ։

Պլուտարքոս ողբայ 'ի վեր և 'ի վայր 'ի գիրս իւր, զի ընդ արիական, ազնիւ, աստուածային, վեհ և վսեմ երաժշտութե՟ նախնեաց զթատերականն փոխանակեցին
Խոր-խճ. Է. 704 ։ յետինք, որ մեղկէ և զեղծուցանէ զոգիս ։ Մերթ վկայութբ՟ Պղատոնի ցուցանէ զերաժշտութի՟ մայր միաբանութեան, պատշաճից, և վայելչութե՟ . և ոչ 'ի բերկրութի՟ ևեթ և 'ի հեշտ ունկան տուեալ 'ի դէմ, այլ 'ի

յօրինուած և 'ի յարմարութիւն զօրութե՟ց հոգւոյն՝ որ ստէպ մոլորութ՟քն և ախտիւք ազդել : Իսկ մերթ խրատէ , զի ամ՟ զգուշութ՟ի չէ բաւական ընդդէմ հրապուրանաց զեղծ և յոռի երաժշտու՟ե . և զհնարս պահպանութ՟են 'ի զեղծմանէ անտի մերձ դնէ : Ի՛ զի զխնէշ երաժշտութ՟ի և զերգս ցոփս և զփցունս ապականիչս ասէ լինել բարուց , և թէ պարտ է երաժշտայ և քերթողաց՝ երգել զիմաստունս և զառաքինիս : Իսկ է՝ զի վկայութ՟ք Պինդարոսի երաժշտու՟ի իմն 'ի ներքս ածէ վսեմ և գեղայարմար , 'ի դիցն ազդեալ 'ի Կադմոս , աննման նորոյս հրապուրող մեղկ և գիրգ երաժշտու՟ե՝ որ գրաւեալ ունի զլսելիս : Յայտնագոյն ևս յիննևտասներորդ գիրս խրախճանացն ճշգրտաբանեալ ասէ . Այժմու երաժշտութիւնս այս զեղծ վնասակար եղև ամ՟ արուեստից՝ որոց է ինչ ընդ նմա , և մանաւանդ կաքաւոյն : Քանզի սա 'ի նախնի յածայլին երգոց լուծեալ զհարսանիսն , և ընդ ցուցս գաւեհիկս խառնաղանձս զուգեալ , իշխէ 'ի տեսարանս մեր , և ածէ անհեթեթ զարմացումս , բռնաւորաբար նուաճեալ զխոտան զերաժշտութիւն : Այլ առաջի հանճարեղ և իմաստուն ա՟ծարեալ մարդկան արհամարհեալ են ամ՟ փառք նորա : Արդ զոր Պղուտարքոս յաղագս իւրոյ ժամանակին երաժշտութ՟են և տեսարանաց ասէ , առաւել զայն ընթերցողք 'ի մերս : Իսկ մի՞ ոք զարմասցի՝ թէ նա անդստին յայնմ ժամանակէ ողբայ զզեղծումն նորին և զյոռու՟ի . զի վաղագոյն քան զնա Պղատոն և Արիստոտէլ և աշակերտք նոցա ողբային զայն , 'ի ժամանակի՝ յորում գեղարուեստք զարգացեալ 'ի կատարումն ածէին , և ազգի ազգի գիտութեանցն և արուեստից ճարտարք բազումք պայծառանային : Արդ 'ի բարգաւաճել ճարտարխօսութ՟ե , բանաստեղծութ՟ե , նկարչու՟ե և քանդակագործու՟ե , ո՞րպէս մարթէր եղծանել երաժշտութ՟ե՝ որում ոչ ինչ նուազ փոյթ էր զարգացմանն : Բայց վնասակար յոյժ եղև նմա կարևոր կցորդութ՟ի նորա ընդ բանաստեղծու՟ե . և 'ի դէպ է ասել , զի սոքա քորք երկոքին նմանաբաղդք եղեն միմեանց : Զի 'ի սկզբանն բնականին ևեթ գեղոյ քաջ նմանութ՟ք , ոչ յայլ ինչ ուշ ունէին՝ բայց 'ի կրթել հանդերձ զուարճութ՟ք , և եռանդն ածել բարեպաշտութ՟ե և կենցաղօգուտ երկասիրու՟ե . վասն որոյ և բացատրութ՟ս և դարձուածս , թիւս և յանգս պատկանաւորս 'ի կիր արկանէին : Մանաւանդ երաժշտու՟ի , անյեղլի 'ի պարզութ՟են՝ միշտ վեհ և վայելուչ , ոչ ելանէր ըստ սահման՝ զոր ճարտարրքն եդին նմա, մանաւանդ իմաստասէրք և օրէնսդիրք՝ յորոց բազումք քերթողք էին միանգամայն և երաժիշտք։ Նոյն թատերք, և պաշտամունք դից ոմանց՝ որպէս սպանդարամետականքն, տապալեցին ապա զիմաստուն կարգսն. և երկգունենին հնարեցաւ քերթութի̃, համարձակ յասացուածն և 'ի չափ ոտից և յիմաստս, որում պիտոյ եղև երաժշտութի̃՝ համեմատ նմին, վասն որոյ և հեռի 'ի վեհ պարզութէ̃ նախնոյն։ Ուստի լարիցն յօլովութի̃, և յաւելուած և նուազութի̃ և սեթևեթք յաճախեալ, զհմուտս արուեստին և զքաջակիրթ ընտրողս ստիպեցին յիրաւացի ողբս։

ՅՕԴՈՒԱԾ Դ.

Յաղագս ազգի ազգի և բազմայեղանակ նախնեաց երաժշտութեան, և գրելոյ նոցա ըստ խազից։

Սուղ ինչ զնախնոյն երաժշտութենէ առ հասարակ ասասցուք, տալ աղօտ զկերպարանս իրին։ Գիտելի է, զի երրեակ ազգ են միաբանութեան երգոց. ձայնական, արուեստական, և յերկուցն խառն. երեքին իսկ էին և առ նախնիս։ Գիտելի է դարձեալ՝ զի 'ի սկզբանն երրեակ ձայնք էին երաժշտութե̃, միով միով աստիճանաւ որոշեալք 'ի միմեանց. բամբն 'ի նոցանէ կոչէր դորական, զիլն՝ լիւդական, իսկ միջակ երկոցունցն՝ փռիւգացի. որով դորականն երկոքումբք աստիճանօք կամ միով աւագ երրորդաւ խոտրէր 'ի լիւդացւոյն։ Ապա խտիր երկակ աստիճանացն բաժանեալ 'ի կիսաձայնս, երկու այլ ևս ստեղծան ձայնք կիսաբոլորք՝ եւողականն և յոնիական. առաջինն ընդ մէջ փռիւգացւոյն և լիւդացւոյն, երկրորդն ընդ մէջ դորականին և փռիւգացւոյն։ Յաւելան ապա այլ ևս ձայնք՝ յառաջնոց հնգիցն կալեալ զյորջորջումն, յաւելմամբ ճոխ և ստոր մասնկանցն՝ ըստ բարձրութե̃ ձայնին և ըստ նուաստութե̃, որպէս մակդորականն և մակոնիականն, այլովքն հանդերձ. և ստորադորականն և ստորոնիականն, և այլն։

'Ի շարականս ուրեք այժմու հասարակ երգոց Լատինաց 'ի վերջ կոյս ժամագրոց՝ գտանին 'ի տարորոշ յայսոսիկ ձայնս վերածեալ այլևայլ աստիճանք եկեղեցական երգոց նոցա. առաջին և երկրորդ աստիճանք 'ի դորականն, երրորդն և չորրորդ 'ի փռիւգացին, և այլք 'ի լուղականն և 'ի կիսաձայն նորա ։ Եւ նուագին եկեղեցական երգք նոցա յարաձայն եղանակաւ, որ Թաւագոյնն է և պատշաճ յաստուածային պաշտամունս ։

Արդ դարձեալ յառաջին բաժանումն եկեսցուք ։ Առձայնական երգոց միաբանութիւն բազմաց պիտոյին ձայնք, զի միութիւն ոչ է կար զբարձր և զնուաստ աստիճանս միանգամայն հնչել ։ Զի յերգակցել բազմաց՝ մերթ ամենեքին 'ի մի աստիճան նուագէին, որ համաձայնութիւն կոչէր. և մերթ՝ կէսք յութեակն, և այլք 'ի մակութեակն, որ կոչէր հակաձայնութիւն ։ Երեւի և երրորդ իմն ազգ երգոց միաբանութեան լեալ առ նախնիս, երրորդ աստիճանաւն երգակցել ։

Նոյն և արուեստական երգոց միաբանութեան զանազանութիւն էր առ նախնիս, այս ինքն նուագարանաց բազմաց մարթէր երգակցել համաձայնութեամբ, ութեկաւն, և երրորդ աստիճանաւ ։ Ամենայն ազգի ազգի յարմարութիւք երգոց գործին յերկուս լարս հաւասարս ըստ նիւթոյն ըստ Թանձրութեան և ըստ ձգման, համեմատութեամբ ևեթ երկայնութեան նոցա առ միմեանս ։ Զոր օրինակ եթէ հաւասար իցեն երկայնութեամբ, նոյն ձայն է նոցա. եթէ որպէս մի առ երկու ունիցին, յութեակն համաձայնին. եթէ երկու առ երիս, 'ի հնգեակն. իսկ եթէ որպէս չորք առ հինգ, յաւագ երրորդն. նոյնպէս իմա և զայլոցն ։

Էին առ հինս՝ որպէս և այժմ՝ նուագարանք ինչ, յորս մի ոք միայնակ յարմարէր զմիաբանութիւն երգոց. որպէս կրկնակ սրինգն և քնար ։ Եւ էր կրկնակ սրինգն յերկուց սրնգաց կցեալ, և փողք երկու 'ի մի ծագ աւարտէին ։ Ոմանց միաչափք էին փողք, և ոմանց այլաչափք, ըստ երկայնութեանն ըստ միջագծին և ըստ ստուարութեանն ։ Համաչափիցն նոյն ձայն էր. իսկ այլաչափք տարաձայնս հնչէին, իմն սուր և իմն Թաւ ։ Միաբանութիւն համաչափիցն կցելոց կամ ըստ համաձայնութեան էր՝ նովին մատնփոխութեամբ երաժշտին 'ի ծակտի երկաքանչիւր սրնգացն, և կամ ըստ երրորդ աստիճանի՝ այլազգ զմատունսն փոփոխելով ։ Իսկ այլաչափիցն էին կրկին ևեթ դաշնակք ձայնից, ըստ ութեկի կամ ըստ երրակի համեմատութեան սրնգացն կցելոց. զի ըստ երկուցն ևս համեմատութեանց, յար և նման յերկաքանչիւր սրնգան մատանցն փոփոխելով, հարկ էր յարմարութեան երգոյն ըստ ութերորդ կամ ըստ երրորդ աստիճանի գործել ։

Իսկ քնար աստանօր կոչեմք զամենայն նուագարանս՝ որոց լարք ձգին ընդ դատարկ, որպիսիք բազումք էին սանախնիս զանազանեալք ձևով և մեծութեամբ և լարիցն թուով. որոց և անուանք այլեայլ էին, թէպէտ և յաճախ այլ ընդ այլոյ անուանեալք: Գլխաւորք յայնցանէ էին՝ փանդիռն և տաւիղ՝ որ և կրիայ կոչէր, զի էր խարխուխ նորա նման պատենի կրայի, յորմէ զձև քնարին առեն առեալ, և վին նուագարան եռանկիւնի՝ զոր սաղմոսարանն կոչեմք:

Թելից քնարին, որպէս ասացաք, բազում փոփոխմունք եղեն: Զի յաւուրս Ողիմպեայ և Տերպանդրի էին երրեակ լարք. որովք նոքա բազմաձայնս քան զբազմաղի քնարացն յարդարէին նուագս ճարտար արուեստիւն, ասէ Պլուտարքոս: Ապա միւս ևս յաւելեալ լար, Երաժ. 1037:
քառալին¹ կազմեցաւ քնար կատարեալ. և պէսպէս համաձայնութք չորից լարիցն երրեակ ազգք եղանակաց կային, յարաձայնն, գունաւորն և ներդաշնակ: Յարաձայնն էր հասարակ և սովորական երաժշտութին. գունաւորն փափկագոյն՝ նուաղ ձայնիւն, գոլով կիսաձայն. և վասն գունաւոր խաղիւն նշանակելոյ՝ եղանակն իսկ գունաւոր կոչեցաւ, որում նման է այժմուս կոչեցեալն յերաժշտաց Բ մեղմ. իսկ ներդաշնակն հակառակ գունաւորին բարձրանայր կէս ատիճան, զոր փշիւ նշանակէին որպէս և այժմ: Յարաձայնին երգոց յառաջատութե անմարթ էր սուղ քան զաւագ կիսաբոլոր ատիճանս ունել խտիրս. գունաւորին յարմարու փոքումբք կիսաբոլորիւքն յօրինէր. իսկ ներդաշնակին մարթ էր քառորդօք յարմարել:

Երաւ. Սէգ. Ժ. Է. Մակրոբեայ զայսցանէ խօսելով, ասէ. Ներդաշնակն խափանեցաւ արդ առ դժուարութեն. գունաւորն վասն մեղկ և կնատագոյն երաժշտութեն խոտի. իսկ 'ի միջասահմանին երկոցունցն կայ յարաձայնն:

Ապա միւս ևս յաւելաւ լար 'ի քնարն, և եղև հնգալին. այլ առաւել ևս յաճախեաց եօթնալին քնար, և քան զայլսն անուանի եղև: Չէին 'ի նմա եօթն ձայնք երաժշտութե, այլ պակասէր ութեակն. և ելից զթերին Է. ԾԷ: Սիմոնիդէս, որպէս ասէ Պլինիոս, յաւելեալ զութերորդն լար 'ի քնարն:

Պլուտարք. յԵրաժշ. 1141: Զհետ բազում ժամանակաց Տիմոթէոս միլետացի, որ եկաց յաւուրս Փիլիպպեայ արքային մակեդոնացւոց

---

[1] Զի ինչ յիմաստից Ողոտեայ այլ Տաւիղի, ձայն հանձարեղն յաղագս բաալք հերն Սանտպանի մենեալ և այլագ աալք երգարանին 'ի լոյս ելին:

'ի հարիւրորդի ութերորդի ողիմպիադին, բազմացոյց զլարս քնարին, որպէս ասացաք, մինչև ցմետասան. յոր ապա յաւելան այլ ևս լարք: Երեքաղեանն և քառաղի քնարք անյարմարք էին 'ի միաբանութիւն երգոց. 'ի հնգաղեանն մարթ էր նուագել կրկին աստիճանաւ ըստ մակեռակ համաձայնութե: Ըստ յոլովել լարից քնարին՝ դիւրացաւ յարմարութիւն եղանակաց 'ի բազմաստիճան համաձայնութի. այլ այն իսկ խնդրելի է, թէ արդեօք նախնիք արկին 'ի գործ զդիւրութին զայն:

Յամաց իբր երկերիւրոց յուզի խնդիրս այս յաղագս նախնոյն երաժշտութե, թէ արդեօք Հելլէնք և Հռոմք գիտացին զհակերգակն կամ զբազմաստիճան ներդաշնակութին. վասն որոյ և յոլով ճառք գրեցան աստի և անտի, այլ չթողացուցանէ առաջադրութի գործոյս ձեռն արկել 'ի լուծումն դժուարին հակաճառութես, յոր չեմ իսկ բաւական:

Ոչ աւելորդ համարիմ և զխազից նախնեացն տալ տեղեկութի: Երաժշտականն կարգաւորութի առ հասարակ որոշէր առ նոսա յութևտասն հնչմունս. որոց միում միում այլ և այլ անուանք էին, և նշանակք իւրաքանչիւր ձայնիցն խազք՝ կազմեալ 'ի սկզբնատառից անուանց իւրաքանչիւրոցն յութևտասն հնչմանց երաժշտական կարգաւորութեն առ հասարակ: Երդ զխազս զայսոսիկ 'ի ձայնական և 'ի գործիական երաժշտութիս նշանակէին 'ի վերայ բառիցն 'ի կրկին տողս. 'ի վերնումն զեղանակ երգոյն, և զկցորդն 'ի ներքնումն. տողիցն ստուարութիւն էր որպէս զսովորական տառից գրութե: Են ձեռագիր մատեանք հելլէնք, յորս երկեակ ազգք խազից գրեալ կան որպէս ասացաքս. ուստի հանեան Կալլիոպայն[1] և Նեմեսեայն և Ապողոնին երգք, և Դարձ միոյ 'ի տաղիցն Պինդարոսի: Զայս ամ՟ երգս հանդերձ Հին և Նոր խազիւքն 'ի լոյս ած Պիւռէթ[2]: Սոքիմբք հնագիր խազիւք գրէին երգք երաժշտականք մինչև ցմետասաներորդ դար. յորում ժամանակի Գուիդոն արետինացի եգիտ զնորաձև այժմուս գրութի 'ի բազում յայլևայլ տողս զխազսն զետեղեալ, տեղեաւն զաստիճանսն յայտ առնելով: Խազքս այս 'ի սկզբան էին կէտք աննշանակք ժամանակի. այլ Յովհաննէս Մեօռս լուտետիացի, որ եկաց յաւուրս յամն 1350: Յովհաննու արքային, այլանիշս հնարեցաւ առնել զնո-

Մարփուրն. խզ դէչ. հարատն. Փէուլ.

---

[1] Դիոնիսեայ ասացեալ անծանօթ քերթողի են երգքս այս:

[2] 'Ի գիրս յիշատակաց բանաւորաբեան ճեմարանին:

սա զանազան ձեւովք՝ բոլորական և սեւով և ճանկիւ և կրկնակ ճանկիւքն, և այլ ևս բազմակերպ նշանօք, զորս ըստ ամ Եւրոպա 'ի կիր արկանեն երաժիշտք ։

ՅՕԴՈՒԱԾ Ե.

Թէ արդի երաժշտութիւն և նախնեացն ո՛ր քան զո՛ր գերագոյն իցէ ։

Բազմահռչակ այս վէճ զհնոյն և զարդեաց՝ սաստիկ կրէ հակառակութիւն. զի եթէ նախնի երաժշտաց հակերգական ներդաշնակութիւն իցէ լեալ անծանօթ, անշուշտ կարծի արդեաց ունել զմրցանակն ։ Այլ ինձ երկբայելի են կարծիքն, թէպէտ և հաւաստի համարիցի վարկածն. զի չիցէ՞ արդեօք նախնեաց ածեալ զերաժշտութիւն այլով ամենայնիւ յայն կատարումն՝ յոր արդիք չժամանեն, որպէս յայլս արուեստից է տեսանել ։ Ոչ հաստատուն ասեմ զայս. այլ եթէ արդարև ածեալ իցեն, որպէս մարթի իսկ, ապա հակերգութեանն ևեթ գերազանցիցեն արդիք քան զնախնիս ։ Նկարիչք ճարտարք հինք, Ապեղէս և այլք, քառեակ ներկովք նկարէին. այլ զայն Պլինիոս ոչ միայն չհամարի թերութիւն քաջութեան և համբաւոյ նոցա, այլ և յոյժ առաւել զարմանալի, զի յետինք՝ հանդերձ երփնագոյն բազմազգի նորագիւտ դեղովք երանգոցն՝ յոյժ քան զնոսա ստորև մնացին ։

Ապա հարկ է և հանդերձ այնու 'ի քննութիւն իրացն մատչել, թէ արդարև յետինք քան զնախնիս գերազանցիցեն. այլ անլուծանելի թուի խնդիրս, զի ոչ է սա հանգոյն քանդակագործութեան ։ Քանզի անդ ձեռակերտք ճարտարացն նախնեաց և արդեաց առաջի կան, և ըստ այնոցիկ առնի դատաստան, զհին անդրիս և զբարձրաւոր քանդակս՝ որ կան և պահին՝ համեմատեալ ընդ այժմուս. որպէս արար Պոնարոթթի՝ ըստ նախապատուութեան իմոյ բանիս, և անկեղծ մտօք յանձն եառ զպարտութիւն ։ Իսկ երաժշտական վաստակք նախնեաց չկան 'ի միջի 'ի վկայութիւն գերազանցութեան նոցա, որպէս զի զփորձ առեալ՝ դատիցիմք թէ էին արդարև կատարեալ որպէս զայժմուս. զի հրաշալի վէպք նուագաց նոցա, որ աւանդին, չեն ինչ անժխտելի հաւաստիք ։ Կան իսկ մատեանք հելլենք և լատինք, որ աւանդեն զօրէնս արուեստին. այլ այնոքիկ զգործականին չտան հաւաստիս ։ Մեկնեն զարուեստն և դիւրահաս առնեն մտաց, այլ ըստ օրէնսն և ընդ գործ բազում է ասպարէզ։ Զի և ոչ քերթողականին կանոնաց ճառք ցուցանեն զարդի քերթողս քան զնախնիս գերազանց։

'Ի վարանս անլուծանելի խնդրոյս են կարծիք նախաժամանք նպաստամատոյց հնոցն, որ՝ որպէս թուի՝ գէթ յերկրայս թողուն զվէճն։ Ապաքէն Հելլենք զարմանալի էին 'ի հանճար արուեստից. և նորահրաշ յաջողու՟ք զարգացուցեալ զայնս, զյոլովս յայնցանէ 'ի ծայրագոյն կատարումն հասուցին, որպէս զճարտարապետութ՟ի, զքանդակագործու՟ի, զնկարչու՟ի, այլովքն հանդերձ. և չմարթի կապտել 'ի նոցանէ զպարծանս։ Արդ քան զայս ա՟մ արուեստս յառաջագոյն յաճախեալ առ նոսա զարգանայր երաժշտութիւն. զի ոչ որպէս յայլս արուեստից սակաւք ոմանք պարապէին յայն, այլ ամենեքին՝ որ ոչ անխնամ և անկիրթ թողեալ լինէին. քանզի երաժշտութ՟ի կարևոր մասն էր դաստիարակութեան մանկտւոյն։ Նաև 'ի հանդէս տօնից և 'ի զոհս ա՟մ ուրեք խառնէր երաժշտութիւն. և մանաւանդ 'ի խնջոյս՝ որ առանց երգոց և նուագաց ոչ կատարէր, այլ նոքօք զուարթանայր, և նոքին քաղցրայուցանէին զճաշակս։ Լինէին և հանդէսք մրցից երաժշտաց, և քաջացն բաշխէին մրցանակք։ Իսկ 'ի պարս և յողբերգութիս իշխէր երաժշտու՟ի. և եթէ այլ ա՟մ մասունք տեսարանին յայն պերճութ՟ի և 'ի կատարումն հասեալ էին յԱթէնս՝ որպէս ամենեցուն է յայտնի, մ՟իթէ յամենայնէն երաժշտութիւն ևեթ ապախտ լեալ էր։[1] Մարթէր ատտիկեցի կիրթ և փափուկ ունկան, որ և զհնչումն բառից 'ի գրոյցս խտրէր, լինել անխտիր 'ի ներդաշնակութ՟ի ձայնի և նուագարանաց՝ որ պարուցն կարևորագոյն մասն էր, և ախորժագոյն և յաճախագոյն զբօսանք աթենացւոց։ Արդ ես ոչ կարծեմ թէ Հելլենն, ազգ զբօսասէր, սնեալ և կրթեալ յախորժակս երգոց երաժշտականաց, հանդերձ ա՟մ օժանդակու՟քն՝ զորոց ասացաք, և հնարագէտ հանճարեղ ճարտարութ՟ն յա՟մ արուեստս՝ որ ծանօթք էին նոցա, յերաժշտականին ևեթ լիցէ յետնեալ։ Զայս այսպէս կարգաբանեալ իմաստասիրեմ, առանց նախապատիւ առնելոյ զհինս քան զարդիս։

Բայց զեբրայեցւոցն երգեցողաց չև ևս ինչ ասացաք՝ թէ յոր զարգացումն ածին զձայնականն և զարուեստական երաժշտութ՟ի, զի մ՟ի զսրբազանն և զա՟ծային խառնեսցուք ընդ արտաքնոցն դիցանուէր երաժշտութի̃ն՝ և ա̃մ պղծութի̃ք ։ Ոչ աւելի իմ̃ է ասել՝ թէ երգիչք, յորս սուրբ գիրք [1] հանճար իմ̃ ա̃ծային և ներշնչութի̃ ասեն լեալ, ոչ 'ի յօրինել սաղմոս մարգարէականս՝ այլ 'ի նուագել զայնոսիկ հոգեշարժ վառեալ խանդիւ, նոքա զարուեստ երգոցն ածեալ հասուցին՝ ուր հասուցանելն մարթէր ։ Զի ուր ա̃մ ինչ համեմատ էր մեծվայելչութե̃ն ա̃յ՝ որ երգոցն էր պատճառ, մանաւանդ թէ և արարիչ, զի ինքն երգիչս իւր և պաշտօնեայս պատրաստէր, և որպէս կամէրն՝ տայր նուագել զօրհնութի̃ս իւր, էր անդ ապաքէն և երաժշտութի̃ վէհ և վսեմ և աղնուական ։ Յոյժ զարմանալի էր ա̃ծադիր կարգ ղևտացւոցն 'ի վեհափառ պաշտամանն ։ Չորք հազարք բաժանեալք 'ի պարս, և իւրաքանչիւրոց պարագլուխք էին, և գործ և ժամ պաշտամանն սահմանեալ ։ Նման ինչ հրաշափառ հանդիսիս կարգաւորութե̃ տեսանի 'ի բաշխելն Դաւթի զաստիճանս ա̃ծային երգոց 'ի պաշտօնեայս՝ յածել հնչակաւ զտապանակն ուխտին տ̃ն 'ի տանէն Աբեդդարայ 'ի քաղաք իւր 'ի Սիոն ։ Զի զա̃մ բազմութի̃ երաժշտացն յերիս պարս բաժանեաց . միումն զքաջահնչող ծնծղայսն հարկանել, որ քաջայարմար ընդ ձայն փողոց յառաջընթաց քահանայիցն խառնէին, և որոց երբեք երբեք սուր և ազդող զօղանջիւքն ընդոստուցեալ ժողովրդեանն՝ անզգօս խորհրդով կային 'ի հանդիսին . միւսումն պարու զբարձր նուագսն երգել այլով նուագարանաւ . և երրորդին նուաստագունիւքն կցորդել բարձր նուագացն, լեալ զօրավիգն նոցա և համաձայնեալ միշտ ընդ նոսա . զի երկաքանչիւրոցն մի ոք էր երգապետ ։

---

[1] Ատտիկեցւոյն փափուկ և երկիւղած լսելիք։ Կիկ.

ա. Մնաց. իգ. 5 ։

ա. Մնաց. ժե. 19. 21 ։

Արդ յայտ է, զի ղևտացւոցն բազմութե̃ սահմանեալ ազգէ յազգ 'ի նոյն պաշտօն, և 'ի հանճարեղ վարժապետաց մարզեալ, և 'ի փորձ իրին կրթեալ հանապազ և ընդերկար, հարկաւ քաջահմուտք լինէին յերաժշտութի̃, և ա̃մ գեղոյ և փափկութե̃ նորա խելամուտք՝ զամենայն աւուրս կենաց իւրեանց 'ի նոյն պարապեալ ։

Ահա երաժշտութե̃ն բնիկ սահման . չիք աղնուագոյն երգ՝ քան որ 'ի սպաս հանապազորդ պաշտաման և օրհնութեան փառացն ա̃յ նուագեալ, որ ստեղծն և վարէ զտիեզերս ։ Եւ այս պաշտօն սուրբ՝ պահի հաւատացելոց որդւոց նորա, որպէս ասէ . « Օրհնութիւն նմա յամենայն սրբոց նորա » ։

---

[1] Եւ Քոնիաս իշխան 'ի վերայ երգոցն . վասն զի էր հանճարեղ ։ ա. Մնաց. ժե. 22 ։ Եւ եղև թիւ ն̃ց հանդերձ եղբարբքն իւրեանց, որք ուսեալ էին զերգսն տ̃ն, ամենեքեան հանճարեղքն երկերիւր և ութսուն և ութ ։ ա. Մնաց. իե. 7 ։

ՊՐԱԿ ԵՐԿՐՈՐԴ

Որ ինչ նախնոյ երաժշտութեան օժանդակք ։

Արդ այժմ ասասցուք զմասանց նախնոյն երաժշտութեան, որ առ մեօք անծանօթք են։ Բազում ուրեք խառն զնոցանէ ճառեմք, զի կցորդութիւն յոյժ է նոցա ընդ միմեանս, եւ 'ի բաժանելն զնոսա՝ հարկ է ստէպ զնոյն բանիւք գալ։ Բազում ինչ աստ 'ի կիր առցուք 'ի քննողական տեսութեանցն Պոյի 'ի բանաստեղծութիւն եւ 'ի նկարչութիւն ։

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Յաղագս նուագաւոր դերասանութեան, որ խազիւք գրէր ։

'Ի թատերանս նախնեաց էր արտասանութիւն իմն ներդաշնակաւոր եւ խազիւք գրեալ, որ ոչ էր երաժշտական երգ։ Այս են 'ի լատին մատենագրաց ասացեալ երգքն կամ տաղք, զորս ոչ միշտ նուագս իմանալի է, այլ եղանակ իմն արտասանութեան կամ ընթերցման ։

Արտասանութիւն՝ ըստ Սրենայ՝ ոլորակօք կազմէր . վասն որոյ հարկ էր գրել զայն խազիւք նշանակօք այլեւայլ ոլորակացն ։ Սոքա 'ի սկզբանն էին երեք . շեշտ, բութ, պարոյկ . եւ ապա բազմացան մինչեւ ցտասն նշանս այլաձեւս, զորոց զանուանսն եւ զձեւ առ հին քերականս է տեսանել։ Ոլորակն է անխախտ կանոն, որով ելեւէջ ձայնին ուղղի յարտասանել զվանկս իւրաքանչիւր ։ Ոլորակացն աստիճանս ընդ վերծանութեան միանգամայն ուսանէին հինք, վասն որոյ ամենեցուն ծանօթ էին խազքն ։

Բայց յոլորակէն էր եւ ամանակ հելլենականին եւ լատին բարբառոյ, իմա երկար եւ սուղ վանկս . զի սղին[1] մի ամանակ էր, եւ երկարին երկու ։ Այս համեմատութեան երկարուե̃ և սղուե̃ վանկից այնպէս հաստատուն էր առ նոսա, որպէս այժմ երաժշտական խաղիցն: Զի որպէս կրկին սեաւք հաւասար են ամանակաւ ընդ միոյ սպիտակի առ արդի երաժիշտս, այսպէս առ նախնիս կրկին վանկք սուղք համաչափք էին ընդ մի երկար: Նմին իրի երաժիշտք հելլէնք և հռոմայեցիք յարկանել զքերթածս 'ի նուագ՝ ըստ քանակի վանկիցն յարմարէին զչափն, դրոշմեալ 'ի վերայ նոցա զխազս:

---

[1] Զոր եւ մանկունք իսկ գիտեն, զի երկարն ունի ամանակս կրկին, իսկ սուղն մի ։ Կուինտ . Թ . Է ։

Աստանօր կարևոր համարիմ ազդ առնել, զի լաւ է թէ երաժիշտք մեր՝ որք զեղանակս օրհներգութեանց և զաղմոսաց յարմարեն՝ գիտիցեն զլատին բարբառ, և զքանակ առոգանութ̃ե բառից: Զի առ այսր տգիտութ̃ե, բազում ուրեք 'ի սուղ վանկս՝ յորս պարտն էր երագել՝ զկայ առեալ յամեն որպէս յերկարսն, որ վրիպակ մեծ է և հակառակ օրինաց երաժշտութ̃ե:

Որպէս ասացաք, 'ի տեսարանս նախնեաց նուագաւոր էր արտասանութի̃, և խաղիւք աստիճանք ձայնիցն սահմանեալ: 'Ի բազում վկայութեանց՝ զՍիկերոնին ևեթ ածից, զժամանակակցէն իւրմէ և զմտերիմ բարեկամէն զՌոսկեայ զասացեալն: Զի էր Ռոսկիոս, որպէս ամենեցուն է յայտնի, հռչակեալ յոյժ ճարտարուե̃ մեծաարուեստին և բարուցն լաւութ̃ե. և այնպէս զամենեցուն զմիտս յինքն պարուրեալ, զի թէ և անարուեստս երգէր և ոչ որպէս յարն, ասէին թէ անփոյթ առնէ կամ թէ խօթ է: Եւ քաջաց ճարտարաց [1] ազգի ազգի արուեստից մեծ ևս գովուի ոչ գոյր ընծայել՝ քան կոչել զնոսա Ռոսկիոս յազգս իւրեանց: Արդ Սիկերոն ուրանօր օրինադրէ ճարտարախօսին՝ մեղմագոյն 'ի ծերութեանն արտասանել, յապացոյց և յօրինակ ածէ զՌոսկիոս. զի նա ասէր, թէ 'ի ծերանալն դաշն արտասանեցից, և վասն լսելի լինելոյ ձայնին՝ թուլագոյն ասէր ըղնուագարանն տալ հարկանել: Որպէս և արար իսկ. զի դարձեալ Սիկերոն յայլում մատենի՝ զոր յետոյ գրեաց՝ ասէ 'ի դէմս Ատտիկեայ, թէ մեղմացոյց Ռոսկիոս զարտասանութ̃ին, պատուէր տուեալ երաժշտին իւրում աղօտաձայն հնչեցուցանել զնուագարանն:

Թէպէտ և թատրերգութ̃ն ոչ էին գեղգեղք, ոչ կիսաձայնք ելևէջից, ոչ երկար թրթռմունք, և ոչ այլ ձևք երաժշտական երգոց, և պարզաբար իսկ ասել՝ երգն այն էր արտասանութիւն հանգոյն իմն այժմուս, բայց ներդաշնակաւոր. զի նուաստն կցորդեալ նմա անընդհատ հնչումն՝ ապաքէն համեմատ էր հնչման արտասանողին։ Անտեղի թուի մեզ այս և չհաւատալի, այլ է ճշմարիտ. և որ էն՝ անհնարին ցուցանել զայն փաստիւք 'ի զուր է։ Այլ թէ որպիսի ինչ ներդաշնակութ̃ի խոնարհագոյն հնչմանն անընդհատ կցորդութ̃ ընդ դերասանին յօրինէր, ոչ է մարթ ասել՝ բայց գուշակութ̃. զի թերևս հնչումն այն ուրեք ուրեք երկարս գործէր 'ի լուր դերասանին 'ի փոփոխել նորա զաստիճանսն, յորս դժուարին էր ելևէջ ձայնիցն. որով զնոյն օգնութիւն մատուցանէր նմա, որ ինչ երաժիշտն Գրակկեայ յարտասանել նորա՝ զյարմարաւոր աստիճանսն ըստ ժամանակին նուագարանաւն ազդ առնելով։

---

[1] Եւ յետ այնորիկ ընդ բազում ժամանակս որ կատարեալ ոք լինէր յարուեստին՝ Ռոսկիոս զնա կոչէին ըստ իւրումն պայմանի: Կիկ. յղ. ճարտ. ձիդ:

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Յաղագս թէ զինչ որ 'ի թատերս դաշնակաւոր շարժուածն էր, խաղէոյ գրելէ։

Ոչ զաստիճանս ևեթ արտասանութ̃ ուղղէր երաժշտութ̃ի, այլ և զշարժուածս։ Զարուեստս զայս կոչէին Հելլէնք և Հռոմայեցիք կայթս. և սահմանէ զայն Պղատոն, նմանութ̃ի ա̃մ ձևոց և շարժուածոց մարդոյ։ Ապա ոչ է պարտ ամփոփել զկայթիցն նշանակութիւն 'ի կաքաւն. զի էր արուեստն այն ընդարձակագոյն յոյժ, ըստ Պղատոնի, ոչ միայն զսթափութիւն և զբարեձև շարժմունս ուսուցանելով, և զկաքաւոյն արուեստաւոր ձևս, այլ և զդերասանիցն և զճարտասանից, և զնմանեցուցչացն համբախաղից՝ զորոց ասասցուք ընդ հուպ։ Յաւ. օրէն. է. 814։

Կուինտիլիանոս[1] խրատէ տալ զմանկունս 'ի վարժս կայթից առ ժամանակ մի, մինչև ուսցին 'ի վայելուչ և 'ի սթափ շարժմունս արտասանութ̃, այլ մի̃ 'ի կաքաւ՝ յորմէ մեկուսի պարտ է լինել շարժուածոց ճարտարախօսին։ Իսկ յաւելու՝ զի 'ի վաղ ժամանակաց էր արուեստն այն, և մինչև ցաւուրս իւր անեպերելի։

Բայց Մակրոբիոս յատենաբանութ̃ կրտսերոյն Սկիպիոնի Ափրիկեցւոյն աւանդէ հատուած ինչ, յորում զպարագլին եպերէ նա զայս սովորութիւն ։ [1] Մանկտին մեր, ասէ, 'ի դպրոց կատակերգուաց գնան ուսանել երգս [2], զոր նախնիքն մեր նախատինս ազնուականաց համարէին ։ Երթան անդր անպատկառ, և է տեսանել անդ պատանիս և օրիորդս 'ի մէջ զեղծ և նշաւակ մարդկան ։ Արդ այնպիսւոյ առն իմաստնոյ վկայութիւն հզօր է 'ի մասին յայսմիկ, և բազում ինչ տայ 'ի միտ առնուլ ։

---

[1] Արուեստս այս մինչև 'ի մեզ եհաս անստգիւտ. այլ ըստ իս՝ քան զարբունն անդր ոչ է պարտ ձգել զայն, և ոչ 'ի նոյն իսկ յերկարել. զի ճարտարախօսին ոչ կաքաւաձև զշարժմունսն յարմարել կամիմ, այլ կրթել 'ի վարժից անտի։ Կուինտ. ա. ժա̃։

Արդ այս որպէս և իցէ, բայց նախնեաց փոյթ մեծ էր քաջակիրթ շարժուածոյ 'ի թատերս և 'ի ճառս. վասն որոյ Դեմոսթենեայն ճիգն ամենեցուն յայտնի է ։ [3] Ռոսկիոս և Կիկերոն 'ի վէճ եկեալ մրցէին ընդ միմեանս՝ թէ ո՛ զնոյն իմաստ քաջ ևս և բազմայեղանակ արուեստիւն կարիցէ բացատրել, Ռոսկիոս շարժուածովն և Կիկերոն բանիւ. և որպէս Թուլի՝ զշարադրեալն և զարտասանեալ 'ի Կիկերոնէ զնոյն առեալ ձևացուցանէր Ռոսկիոս շարժուածովք ։ Եւ 'ի տալ ատենին զվճիռն, դարձեալ Կիկերոն փոփոխէր զբառս և զդարձուածս բանին՝ առանց զիմաստն տկարացուցանելոյ. և Ռոսկեայ հարկ էր դարձեալ այլովք շարժուածովք զնոյն իմաստս բերել՝ առանց նուազելոյ զօրութեան համր արտասանութեան ։

ՅՕԴՈՒԱԾ Գ.

Թէ որպէս 'ի թատերս այլ ոք արտասանէր և այլ ոք զշարժուածսն առնէր ։

Ոչ ինչ զարմանալի թուեսցին ասացեալքս զՌոսկեայ, որոց գիտիցեն՝ զի 'ի թատերս հռովմայեցւոց՝ այլ ոմն արտասանէր, և այլ ոմն զշարժուածսն առնէր. որ դժուարահաս թուի մեզ և յոյժ անտեղի՝ օտարութեամբն 'ի մերմէ սովորութենէս ։ Զսկիզբն այսր սովորութեան պատմէ Լիւիոս, զի [4] Անդրոնիկոս քերթող անուանի, որ նախ 'ի

---

[1] 'Ի վարժս կատակերգուաց գնան ուսանել երգս, զոր նախնիքն մեր ազնուականաց դժպատեհ համարէին. 'ի վարժս ասեմ կաքաւչացն, օրիորդք և մանկունք անմեղք 'ի մէջ լկտեաց ։ Մակրոբ. Սատուրն. Բ. Է ։

[2] Բանին կատակերգուացն բանք, երգ աստ զեղանակաւորսն իմանալի է ։

[3] Յայտ իսկ է, զի Կիկերոն մրցէր յաճախ ընդ կատակերգուին՝ թէ զնոյն իմաստս նա՞ շարժուածովքն բազմայեղանակ յայտնել կարիցէ, թէ ինքն ճոխ ճարտարխօսութեամբ պէսպէս բացատրել ։ Մակրոբ. Սատուրն. Բ. Ժ ։

[4] Լիւիոս Անդրոնիկոս, 'ի դերասանել զատաղս իւր՝ որպէս և ա-

Հռոմ զարուեստաւոր քերթութիւն եհան 'ի թատր, յամին հինգհարիւրորդի չորեքտասաներորդի շինութեան քաղաքին, յետ իբր հարիւր և քսան ամաց 'ի մտանելոյ անդր թատրերգութեան, մինչ դերասանէր 'ի տեսարանի՝ որպէս սովորութիւն էր յայնժամ թատրերգակ քերթողաց անձամբ զքերթածս իւրեանց արտասանել, քանզի օրէն էր ժողովրդեան՝ որ ինչ հաճոյ թուէրն նմա՝ տալ կրկնել դերասանին Միւսանգամն աղաղակելով, ցայնվայր ստէպեցին զնա՝ մինչև կերկերեցաւ ձայն նորա։ Եւ իբրև ոչ ևս կարէր արտասանել, հրամանաւ ժողովրդեան կացոյց առ նուագածուին զմի 'ի ստրկաց՝ երգել զքերթուածն, և ինքն յարտասանել նորա՝ զնոյն զառաջին շարժմունսն առնէր։ Եւ սթափագոյն յոյժ գտաւ՝ զամենայն զուշ և զօրութիւն իւր 'ի շարժուածսն ժողովեալ, թողլով զփոյթ և զմտադրութիւն արտասանութեան յայլ ոք։ Եւ յառաջ ածեալ Լիւեայ զբանսն, ասէ. Աստի ըսկիզբն եղև դերասանութեան յերկուս ոմանս բաժանելոյ, և ըստ ձևացուցչին շարժուածոցն 'ի դէպ արտասանելոյ։ Եւ 'ի յաճախել սովորութեան, արդ դերասանք զզրուցատրութիւնս ևեթ անձամբ արտասանեն։ Զայս։ և Վաղերիոս Մաքսիմոս պատմէ, և բազումք 'ի մատենագրաց վկայեն այսմ։

Ապա արտասանութիւն և շարժուածք յերկուս դէմս բաժանէր յաճախ. և երաժշտականին անյեղլի կանոնօք ուղղէր միոյն հնչումն ձայնին, և միւսոյն շարժուած ձեւոյն և բոլոր անձին։ Ծաղր թուի մեզ երկուց դիմաց զմիոյ գործ վճարել 'ի տեսարանի, միումն շարժելով անբարբառ, և միւսումն՝ զձեռս 'ի վերայ լանջաց եդեալ՝ բարացուցական ձայնիւ խօսելով։ Բայց գիտելի է՝ զի թատերք առաջնոցն ընդարձակագոյն յոյժ էին, և դերասանք անդ դիմակաւորք, որով ոչ էր զգալի հեռաւորաց 'ի շարժուած շրթանց նոցա և 'ի տիպս կերպարանացն՝ թէ խօսիցեն կամ թէ լռիցեն։ Եւ ոչ ինչ երկբայելի է, զի զգուսանս (իմա զդերասանս) նմանաձայնս ձևացուց-

---

մնեցուն իսկ սովորութիւն էր յայնժամ, ստիպեալ 'ի կրկնել յաճախ՝ իբրև կերկերեցաւ, հրաման առեալ՝ կացոյց մանուկ մի առ նուագածուին՝ երգել, որպէս պատմեն. և ինքն ժրագոյն զերգն ձևացուցանէր շարժմամբք՝ ոչ միտ եդեալ արտասանութեան։ Աստի սկիզբն եղև դերասանացն ձեռամբ երգելոյ, զզրուցատրութիւնս ևեթ անձամբ արտասանեալ: Լիւ. Է. Բ։

Սա (Լիւիոս Անդրոնիկոս) 'ի դերասանել զքերթուած իւր՝ ստիպեալ 'ի ժողովրդենէ կրկնել յաճախ, կերկերեցաւ ձայն նորա, և մանկանն և նուագածուին համաձայնութեամբ՝ լռելեայն զշարժմունսն առնէր։ Վաղ. Մաք. Բ. Դ։

չացն ընտրելին ըստ կարի, և էր գուսանացն տեղի բարձրաւանդակ ստորև խաղետեղն ։

Այլ որպէս երաժշտութի՛ 'ի նոյն և 'ի մի չափ յանգէր թուովք զերգեցկին զխօսս և զձևացուցչին շարժուած ։ Զայս Օգոստինոս որպէս յայտնի ինչ թատերականաց ամենեցուն յիշատակեալ, ոչ ևս բացատրէ ։ Արդ թէպէտ և դժուարահաս է թէ որպէս 'ի թատերս նախնեաց երկու դէմք զմի ոք երևեցուցանէին, այլ իրքն հաւաստի են ։ Յայտ է՝ զի ներչափական բաղխումն ըղթիւսն ազդէր, որում ամենեքին յարմարէին՝ դերասանն և ձևացուցիչն և պարն և նուագարանք ։ Կուինտիլիանոս ասէ[1] թէ յար և նման երգոց չափականք են և շարժուածք, և թէ պարտ է ձևացուցչաց ըստ նշանաց ոտիցն կամ ըստ բաղխմանն՝ որ զչափն ազդէ՝ զշարժմունսն առնել, նովին ճշդութ եղանակողացն ։ Եղանակողս ասէ զդերասանսն, և զնուագածուս՝ որ համաձայնէին նոցա ։ Ղուկիան. Դ. Կաք. 931 ։ Առ ձևացուցչին կայր ոտն երկաթաղէն կօշկօք, և բախէր ոտամբ 'ի տախտակամած տեսարանին ։ Նա արդեօք զչափն ազդ առնէր, որում ամենեքին հետևէին ։

Յամենակիրթ ախորժակացն հռոմայեցւոց 'ի թատրերգութիւնս, (զնոյն և զՅունաց ասեմ,) և յանբաւգանձուցն՝ զոր ծախէին յայն, 'ի դէպ է կարծել՝ թէ 'ի կատարումն հասուցին զարուեստն ամ մասամբք, և թէ արտասանութե՛ն բաժանումն 'ի շարժուածոց ոչ անհաճոյ ինչ էր 'ի տեսանել ։

Առ հռոմայեցիս, որ ոչ չափաւ զշարժմունսն առնէր գուսանն՝ ծաղր լինէր, որպէս այն՝ որ ոչ ներկուռն առոգանէր[2] ։ Ամբոխն իսկ սովորեալ 'ի տեսարանս՝ այնպէս քաջակիրթ էր լսելեօք, զի և զոլորակս և զոտս ըստգտանէր 'ի կրկնելն յաճախ, որք արուեստիւ և չափով 'ի կիր արկեալ՝ քաղցրալուրք էին[3] ։

Գանձք, զոր նախնիք ծախէին 'ի տեսարանս, չհաւատալի թուին ։ Զի աթենացիք 'ի տեսիլ երից ողբերգութեցն Սոփոկլի առաւել քան 'ի պեղոպոնեսական պատերազմն գանձս ծախեցին ։ և զո՞ր ծախս հռոմայեցիք ոչ առնէին 'ի կառուցանել Թատերս, և շուրջ տեսանելեաց տեղիս, և 'ի վարձս դերասանաց ։ Եսովպոս ողբերգակ անուանի՝ ժամանակակից Կիկերոնի, այր շռայլ և վատնող՝ որպէս վկայեն Ովրատիոս և Պլինիոս, 'ի մեռանելն եթող որդւոյ իւրում 'ի ժառանգութ՟ի երկերիւր և յիսուն բիւր լիրայ 'ի կատակերգութ՟ե շահեալ ։ Իսկ Ռոսկեայ էին ամի ամի եկամուտք եօթանասուն և հինգ հազար լիրայ, որպէս Կիկերոն մտերիմ բարեկամ նորա 'ի ջատագովելն զնա 'ի միում 'ի փաստաբանութ՟եցն [1] ասէ, թէ մարթէր Ռոսկեայ մթերել յամս տասն՝ եօթանասուն և հինգ բիւր լիրայ արդարութ՟բ, եթէ կամէր․ այլ նա արհամարհեաց զշահն զայն ։ Զնոյն շահէր և ըստ Պլինեայ [2], եօթանասուն և հինգ բիւր լիրայ 'ի տարւոջ, եթէ փոխանակ հինգ հարիւրոց սեստերտիցն՝ որպէս է 'ի բնագրին՝ ընթերցցի վեցհարիւր, որպէս Հայրն Արտուէն համարի ուղիղ ։ Վկայէ Մակրոբիոս, զի էին Ռոսկեայ [3] օր ըստ օրէ 'ի հասարակաց գանձուց հինգ հարիւր լիրայ նմա միայնոյ, որ յաւելու քան զառաջինն ։ Եւ Յուլիոս Կեսար ետ աւելի քան զվաթսուն հազար լիրայ Լաբերեայ քերթողի, զի ինքնին զիւր քերթուածն 'ի տեսարանի երգեսցէ ։

---

[1] Այլ և շարժմանց մարմնոյ ամանակք են, և երաժշտական համեմատութի՛ որպէս զթիւս նուագաց ազդմամբ ոտին՝ նոյնպէս և զկայթիցն ցուցանէ ։ Կուինտ ։

[2] Դերասանն, եթէ շարժուած ինչ առանց թուոյ կամ վանկ մի 'ի տաղիցն երկարագոյն կամ սղագոյն գործիցէ, ծաղր լինի և 'ի շչիւն ։ Կիկ. 'ի հռչ. Գ ։

[3] Թէպէտ և մեղմ և փափուկ են յերգս ոլորակքն և ոտք քան զհարթն և զթաւս, այլ 'ի յաճախելն նոցա ոչ միայն քաջակիրթք՝ այլ և ամբոխն բողոքէ ։ Կիկ. ճարտար. Գ. ՂԾ ։

Ովրատ․ Երգիծ․ Գ։
Պլին․ Ժ․ Ծա։

Մակր․ Սատուրն․ Բ․ Է․

Զայսոսիկ փոքր 'ի շատէ ասացաք, առ 'ի ցուցանել թէ քանի թատերասէրք էին Հռոմայեցիք ։ Արդ ազգ՝ որ զա՟մ ինչ տայր փոխանակ Թատերաց, որ զուարճալի մանաւանդ թէ և կարևոր քան զա՟մ պարապումն զայն համարէր, և ամենևին իսկ կիրթ և փափուկ ախորժակս պանծայր ունել, որում և բառ մի ոչ քաջոլորակի առոգանեալ, կամ անարուեստ ուրեք ձայնին ելևէջ, կամ անյարմար բանիցն շարժուած դժպհի թուէր, որպէս երկայնամտեալ ներէր այլում զխօսս և այլում զձևս 'ի թատերսն առնել՝ եթէ անախորժ ինչ էր այն 'ի տեսանել և 'ի լսել ։ Զի որ այնչափ կարևոր համարէին զթատերսն և յաճախէին 'ի նոսա, ապաքէն և 'ի կատարումն ածեալ էին զայն ըստ ա՟մ մասին ։

Եւ այն ա՟մ երաժշտութ՟են էին պարծանք, որ և 'ի թատերգութ՟իս իշխէր․ զի մինչև անդր իշխանութ՟ի նորա և սահմանք ընդարձակէին երբեմն, խառնելով ընդ բանաստեղծութեան. Նա զդերասանին զեղանակ և զձևս շարժուածոցն ուղղէր, կրթէր զձայն նորա, և ընդ նուագարանացն հնչմունս խառնեալ՝ յարմարէր քաղցր ներդաշնակութիւն.

---

[1] 'Ի տասն ամն մարթ էր նմա սեստերտոս վեցհարիւր հազար արդարութ՟բ շահել, այլ ոչ կամեցաւ ։ 'Ի Ռոսկ․ Կոմ․ ԻԳ ։

[2] Զի առ նախնիսք մերովք Ռոսկիոս դերասան ամի ամի քսան բիւր սեստերտոս առի թէ շահէր ։ Պլ․ Է․ ԼԹ ։

[3] Այնքան հաճոյ լեալ, զի ռոճիկ օր ըստ օրէ 'ի հասարակաց գանձուց ելանէր նմա միայնոյ հազար դենար․ առանց խմբակից ընկերաց ։ Մակր․ Սատուրն․ Բ․ Ժ ։

Կիկերոնի զհնոց հելլէն քերթողաց խօսելով, որ զերգս և զձև տաղից հնարեցին, ասէ՝ թէ երաժիշտք նոյնք և քերթողք էին. Զի ՚ի վաղ ժամանակս քերթողք ՚ի յունաստան իւրովի զքերթուածս իւրեանց արտասանէին ՚ի տեսարանի. Իսկ առ հռոմայեցիս այլ իմն արուեստ էր թատերական արտասանութեան եղանակին յարմարումն. ՚Ի վերնագիրս կատակերգութեանցն Տերենտեայ՝ ընդ անուան քերթողին, և պարագլխի գուսանացն, և նուագայարդարին անունն արձանագրեալ կայ. Յարդարել նուագս կոչէ և Կիկերոն զթատրերգութիւն յօրինել զեղանակ. Զի ասէ ուրեք զՌոսկեայ, թէ ինչ ինչ անյարմար իմաստից քերթածին եղանակէր անփոյթութեամբ, որպէս ստուերս իմն ՚ի շարժուածսն արկեալ՝ առ ՚ի պայծառագոյն երևեցուցանել զհետևեալսն. և ապա յաւելու. Այսմ աջող ճարտարութեան ոչ կատակերգուք միայն՝ այլ և քերթողք, և որք զնուագս արտասանութեան յարդարէին, խելամուտ լեալ՝ յօգուտ ՚ի կիր արկանէին զայն. Քանզի նուագայարդարք ելևէջս գործէին կամաւ յարտասանելն, և պէսպէս դաշնակս արուեստաբար խառնէին, զիջուցանելով ուրեք ուրեք ըստ խաղից ըզձայնն, թէպէտ և իմաստքն չպահանջէին, որպէս զի ապա յամբառնալ ձայնին՝ ուր ՚ի դէպն էր՝ առաւել ընդոստուցէ զունկնդիրս[1].

Կիկ. յղ. ճառ. տուսկ. գ. ճհէ.

ՅՕԴՈՒԱԾ Դ.

Յաղագս հտպտաց կամ մնջկատակաց.

՚Ի լրումն մասանց նախնոյն երաժշտութեան մնայ մեզ յաւելուլ զարմանալի իմն քան զասացեալքս և չքնաղ արուեստ, թէպէտ և ոչ օգտակարագոյն և առաւել գովելի, զհտպտացն ասեմ.

---

[1] Եւ ոչ քերթողք և նուագայարդարք դանդաղեցին քան զդերասանս ՚ի գիտութեան, զի և սոքա երկաքանչիւր մերթ նուաղեն և մերթ յորդեն զձայնն, սոսկ և թաւ, պէս պէս և բազմայեղանակ գործեն. Կիկ. ճարտ. գ. ճ.

Հինք զարուեստ շարժուածոյ ընդ երաժշտական օրէնօք կանոնեալ՝ ոչ անդ զկայ առին, այլ և յայն կատարումն ածին զայն՝ մինչև կատակերգուաց իշխել զամենայն ազգի ազգի թատրերգուէս ձևացուցանել անբարբառ. վասն որոյ կոչէին նմանեցուցիչք կամ միջկատակք, զի զամենայն ինչ միջիկ առանց բարբառոյ նմանական ձևովք յայտ առնէին, ըստ կայթողական արուեստին օրինաց։ Որպէս Սուիդաս և Զոսիմոս աւանդեն, արուեստս այս հնարեցաւ 'ի Հռոմ առ Օգոստոս կայսերաւ. վասն որոյ ասէ Ղուկիանոս՝ թէ Սոկրատ 'ի խանձարուրսն ետես զկայթն։ Զոսիմոս զհնարս արուեստիս ընդ պատճառս ապականութեան բարուցն հռոմայեցւոց և թշուառութեան աշխարհին 'ի համար ածէ։ Իսկ հնարագիւտք եղեն Պիղատոս և Բաթիղոս, անուանիք յոյժ առ հռոմայեցիս. Պիղատոս յողբերգականն քաջագոյն էր, Բաթիղոս 'ի կատակերգականն։ Սուիդ. յԱթէնոդ. Զոս. Ա. Ղուկ. յաղա. 923.

Իսկ այն իսկ առաւել զարմանք են, զի կատակադուսանքս այս համերք 'ի ձևացուցանելն անօգնականք էին և 'ի դիմացն շարժուածոց. զի որպէս զայլ դուսանս դիմակաւորք ելանէին 'ի թատերս։ 'Ի սկզբանն տեսիլս ինչ արդեօք քաջայայտս յողբերգութենէ և 'ի կատակերգութենէ ձևացուցանէին դիւրիմացս տեսողացն, և ապա տակաւ ձեռն արկին յամբողջ քերթուածս։ Իսկ զի շարժուածովք և եթ անբարբառ յայտնէին զիմաստս, հարկ էր նկարագրութենէ նոցա տպաւորագոյն ևս լինել և կենդանագոյն յոյժ քան զայլոց կատակերգուացն։ Վասն որոյ Կասիոդորոս ասէ զնոցանէ.[1] Նոքա, որոց պերճախօս ձեռացն՝ լեզուք իմն էին 'ի ծայրս մատանցն. արք լուռք և բազմախօսք, և որ վէպս երկայնս անբարբառ պատմէին. զնոսա Պոլիմնէ ուսոյց Մուսայն երաժշտապետ, յայտ իմն արարեալ՝ զի ոչ բարբառք և եթ յօդաւորք թարգման են մտաց։

Կերպարանութիւնք միջկատակացն, թէպէտ և համերք, այլախորժելի յոյժ և զմայլեցուցիչք էին տեսողաց, որպէս թուի. զի երէցն Սենեկա հայր կրտսերոյն, պարապեալ 'ի զգօնագոյն և 'ի պատուականագոյն ըստ այնմ ժամանակի պարապումն, խոստովանի զցանկումն իւր առ համրախաղիցն նկարագրութիւնս։ Իսկ Ղուկիանոս ա- Սենեկ. 'ի հակաճառ. Է. Ղուկ. 940. 948.

---

[1] Կայթողացն պերճախօս ձեռք, և մատունք բազմալեզու, բարձրաբարբառ լռութիւն և միջիկ զրոյց, զոր Պոլիմնեայ ասեն հնարեալ Մուսային, յայտ արարեալ՝ զի հնար է մարդկան անբարբառ զոր կամին յայտնել։ Կասիոդ. Վար. 'Ի Բղբ. Դ. ծա.

աէ զնոցանէ․ զի որպէս զայլ կատակերգուս յորդորէին զարտօսր։ Նաև զԹագաւորէ ումեմնէ ծովեզերաց եւքսինեանն Պոնտոսի պատմէ, զի եկեալ 'ի Հռոմ յաւուրս Ներոնի խնդրէր 'ի Նմանէ մեծաւ Թախանձանօք զմի ոք 'ի մնջկատակաց, զորս 'ի Թատերսն տեսեալ էր, զի առ ամենայն ազգս լիցի իւր Թարգման։ Զի ասէր՝ Թէ փոխանակ խուռն բազմութեան Թարգմանացն տալոյ ռոճիկս վասն այլալեզու ազանց՝ որ շուրջ զինև բնակեալ են, դովաւ ընդ ամենեսին խօսեցայց։

Այլ այն յայտ է, զի համրախաղն անդէն 'ի հնարելն հաճոյ Թուեցաւ հռոմայեցւոց, մինչև 'ի հեռաւոր մարզս իշխանութեան նոցա վաղ տարածեալ, և զուգաթև ընդ տէրութեան նոցա եկաց։ Նաև 'ի վէպս կայսերաց նոցա յաճախագոյն մնջկատակաց լինին յիշատակք քան զանուանի ճարտարախօսացն։

Արուեստս այս՝ որպէս ասացաք՝ հնարեցաւ յաւուրս Օգոստեայ, որում և հաճոյ եղև յոյժ, և Բաթիլոս սիրելի էր յոյժ Մեկենայ։ Բայց 'ի սկզբան ինքնակալութեան Տիբերի՝ արգել ծերակոյտն, մի ումեք յաւագաց մտանել 'ի տունս մնջկատակաց, և մի ասպետաց հռոմայեցւոց 'ի քաղաքամիջի գնալ ընդ նոսա[1]։ Նաև յետ ոչ բազում ամաց հալածեցան մնջկատակք 'ի Հռոմայ․ զի 'ի խաղս նոցա խռնեալ ամբոխին, կէսք միումն, այլք այլում ջատագով մտանէին․ և լինէր հերձուած 'ի դասակցութեան անտի։ Որոց և գրատս այլակերպս արկեալ զիւրեամբք հանգոյն կառամարտիցն 'ի կրկէսս, յայն սակս իսկ կէսք Կապուտակք կոչէին, այլք Կանաչք։ Նաև ամբոխն պառակտեալ ընդ նոսա, և ամենայն պառակք կըրկէսին՝ որոց բազում ուրեք 'ի հռոմայեցւոց պատմութեան յիշատակք լինին, կուսակից լեալ այլևայլ գնդից մնջկատակացն, բազմավտանգ խռովութիւնս յարուցանէին ստէպ 'ի Հռոմ։

Կոռնէլ. Վար. ա. ճ.

Դարձեալ և յաւուրս Ներոնի և առ այլովք ինքնակալօք հալածեցան մնջկատակք 'ի Հռոմայ, այլ վաղ դառնային անդրէն․ զի ժողովուրդն ցանկայր նոցա, և ինքնակալացն ըստ հարկի իրաց ժամանակին կամեցեալ սիրելի լինել նմա՝ հաճէին զնա։ Նմին իրի իսկ զհալածեալսն 'ի Դոմետիանոսէ՝ դարձոյց յաջորդ նորա Ներուաս, որ մի յիմաստնագոյն կայսերացն էր։ Եւ մերթ ժողովրդեանն իսկ տաղտկացեալ 'ի չարեաց հերձուածոցն, խնդրէր հալածել զնոսա՝ որպէս զդարձ նոցա թախանձէր։ Նման որոյ կրտսերն Պլինիոս ասէ առ Տրայիանոս։ Ոչ նուազ ամբոխիւ խնդրեցին 'ի քէն բառնալ զհոպլիտան, քան 'ի հօրէ քումմէ դարձուցանել զնոսա։ Են չարիք և անկարգութիւնք, զորս անդէն ընդ ծնանելն նոցա հարկ է խափանել. զի ժամ առեալ յաճումն և 'ի հաստատութիւն բռնանան, և յամ հնարից լինին ապստամբք։

---

[1] Մի ոք աւագանւոյն 'ի տունս մնջկատակաց մտցէ, և մի յելանելն նոցա արտաքս՝ ասպետք հռոմայեցիք երթիցեն զնոքօք։ Տակիտ. տարեգ. Ա. ՀԷ.

ԳԻՐՔ ՔՍԱՆ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ

ՑԱՂԱԳՍ ԶԻՆՈՒՈՐՈՒԹԵԱՆ

Մինչև ցայս վայր ասացաք զարուեստից՝ որ զվայելչուն և զդիւրուն կենաց մարդկան յարդարեն։ Երկիր մշակեալ խնամովք նոցա և վաստակօք, ընու զնոսա ա՟մ բարութ՟բ. վաճառականութ՟ի ՚ի ծագաց երկրի ածէ որոց ինչ կարօտինն. վարէ զնոսա յալս երկրի և յանդունդս ծովու, ոչ ՚ի հայթայթանս ճոխութ՟ե միայն և պաճուճանաց, այլ անբաւ նպաստից և գործեաց՝ որ զհամապազորդ պէտս նոցա հարկանեն։ Տունք կառուցեալ, և քանդակ և նկար ՚ի հակառակ մտեալ՝ զարդարեն զնոսա. և երաժշտութ՟ի ՚ի լրումն հաճութ՟ե և խնդութեան բնակչացն՝ մատուցեալ զբաղեցուցանէ զնոսա քաղցր երգովքն, սփոփեալ զնոսա ՚ի տաժանակիր վաստակոցն, և ՚ի մոռացօնս ածեալ զվիշտս նոցա և զաղէտս՝ եթէ ունիցին։ Օ ի՞նչ այլ ևս ցանկալի կայցէ մարդոյ. երանելի էր, եթէ չխափանէր ՚ի վայելից բարեացս՝ զորս մեծաւ աշխատութ՟ք եգիտ։ Այլ ագահութ՟ի և փառամոլութիւն ընդդէմ միմեանց գրգռեալ զմարդիկ, աղմկեն զհասարակաց բարեբաստութ՟ի։ Անիրաւութ՟ի զինուորեալ զօրութ՟բ, յաւարէ այլոց մեծանայ. իսկ որ արդար ցանկութ՟բ և չափաւոր ժառանգութ՟բն շատացեալ՝ զօրութ՟ի հակառակ զօրութ՟ե ոչ պատրաստեսցէ, վաղ կոխան լինի այլոց։ Վտանգ է նմա ՚ի նախանձուէ շրջաբնակ ազգաց և ՚ի թշնամեաց, զի յարիցեն ՚ի վերայ նորա՝ խռովել զխաղաղութ՟ին, ապականել զերկիրն, ըզտունս այրել, յափշտակել զինչս, և վարել զնա ՚ի գերութ՟ի։ Ապա զինուց և զօրաց պէտք են նմա, զի դիմամարտեալ բռնութ՟ե՝ պահ կալցի աշխարհին։ Տեսցուք զնա յառաջիկայս ամբարձեալ ՚ի վսեմ գիտութիս. բայց գիտութ՟իք[1], դստերք խաղաղութ՟ե և թշնամիք խռովութ՟ե, ընդ շաչել զինուց՝ զարհուրեալ կարկին, եթէ ոչ զինուորութ՟ի պաշտպանեսցէ, և ընդ վահանաւ իւրով պատըսպարեսցէ զնոսա, զի նովաւ կայկայի խաղաղու՟ի ։ Նմին իրի կարևոր[1] է մարդկան պատերազմ, զի է պատսպարան խաղաղութ՟ե և հանգստեան, վանելով զբռնութ՟ի, և պահ ունելով արդարութ՟ե ։ Ահա ըստ այսմ մասին անկ է ինձ ճառել զնմանէ. և անցից վեր 'ի վերոյ համառօտիւ ընդ ա՟մ մասունս պատերազմական հրահանգաց, որ թագաւորաց և իշխանաց է յատուկ գիտուն, և առ որ խնդրի հանճար բազմապատիկ՝ դժուարադէպ 'ի միում անձին ։

---

[1] Այս ա՟մ գիտութիք մեր գերաղանցք… ընդ հովանեաւ զինուորական զօրութ՟ն պատսպարեալ ամրանան. ընդ գուժել խռովութ՟ե՝ նոյնհետայն արուեստք մեր լռեն. Կիկ. ՚ի Մուր. իբ.

Եւ արդ քանզի զզինուորութ՟է եգիպտացւոց և զկարքեդոնացւոց և զասորեստանեայց և զՊարսից այլուր ասացաք, զնոցանէ դուն ուրեք յիշատակ արարեալ՝ առաւել զՅունաց ճառեցից, մանաւանդ զսպարտացւոց և զաթենացւոց՝ որ քան զա՟մ ազգս Եղլադայ քաջք և իրաց պատերազմի հմուտք էին, որպէս ամենեքին վկայեն ։ Իսկ զհռոմայեցւոց տարակուսեալ թէ ասացից և թէ լռեցից, զի նոցա իրք անպատկանաւոր իմում թուին առաջադրութ՟ե, պարտ վարկայ և զնոցին զինուորութ՟է կից ընդ այլոց ազգացն ճառել. որպէս զի միանգամայն 'ի տեսիլ ածեալ՝ ցուցից զկերպարանս նախնեացն մարտի դէթ ընդ աղօտ ։ Ցայս կէտ եդի համառօտ ճառիս, անդր ես ոչ խիզախեալ՝ զմտաւ ածելով զեփեսացւոյ իմաստասիրին իրս. այն որ ճոռոմախօս քան զա՟մ ժամանակակիցս իւր համբաւեալ, յատենախօսելն երբեմն լու 'ի լու Աննիբաղայ՝ ճառս երկայնս յաղագս քաջի զօրավարի յօրինէր ։ Ընդ որ ա՟մ ատեանն ծափս հարեալ՝ իբրև խնդրեցին վկայութ՟ի յԱննիբաղայ, նա զինուորականաւն համարձակութ՟բ ասէ. Ոև ես այդպիսւոյ ձամարտակութ՟ե բանս լուեալ էր իմ ։ Արդ և ինձ վտանգ էր ընդ նովին կշտամբանօք անկանելոյ, եթէ կամէի զզինուորական հրահանգաց առ հմուտս արուեստին վարդապետել, որ զա՟մ զկեանս իմ 'ի բանասիրութ՟ի պարապեալ եմ ։

---

[1] Պատերազմել օրէն է առ 'ի կեալ անվնաս 'ի խաղաղութ՟ե ։ Կիկ. յաղ. պաշտօնէ. ա. լէ ։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Զխորհուրդ պատերազմի և զազդարարու՟ն, զընտրութ՟ի զօրավարի և զսպայիցն, զզօրաժողով, զպարէնս և զթոշակ զօրականին և զսպառազինու՟ն, զչու և զբանակել նոցա, և որ ինչ անկ են 'ի ճակատամարտ, զայս ամ՟ 'ի գլուխս յայս բովանդակեսցուք:

ՑՕԴՈՒԱԾ Ա.

Յաղագս խորհրդոյ պատերազմի:

Չիք ճշմարտութ՟ի ընդունելի քան զայն, զի առանց արդար և իրաւացի պատճառի ոչ է օրէն տալ պատերազմ. և չիք օրինազանցութ՟ի յաճախեալ քան զանիրաւ պատերազմ: Ապաքէն պատերազմ, առ զօշաքաղութ՟ե և աշխարհակալութ՟ե գործեալ, համարի յամենեցունց աւազակութ՟ի.[1] և կարի իմաստութ՟բ հէնն այն ետ Աղեքսանդրի զպատասխանին, որ ամենեցուն է յայտնի. և սկիւթացին յիրաւի ասաց ցաշխարհաւերն, թէ հի՞մ գաս աղմկել տարապարտ զխաղաղու՟ն ազգաց անմեղաց. և ո՞չ 'ի խորս անտառաց և յանապատս բնակեալ ազգք կարիցեն անգիտանալ ո՛ իցես, և ուստի՛ եկեալ[2]:

Յուստ. Ը. Գ: *Զինչ ընդհատ էր 'ի հինից և յելուզակաց Փիլիպպոս[3], որ 'ի թագաւորաց Թրակիոյ յերկուց եղբարց հրաւիրեալ, փոխանակ իրաւարար լինելոյ 'ի մէջ նոցա՝ զերկոսին ևս հալածեաց յաշխարհէն իւրեանց: Ո՞չ ապաքէն և այլ ևս աշխարհակալութ՟իք նորա, թէպէտ և ոչ ըստ սմին օրինակի յայտ յանդիման անօրէնութ՟ք գոր-*

---

[1] Պատերազմել ընդ սահմանակիցս, ... և ցանկութ՟ք ևեթ աշխարհակալութ՟ե հարկանել և նուաճել զազգս տարապարտուց, զի՞նչ իցէ, բայց աւազակութ՟ի մեծ: Օգոստ. յղ. քաղաքին այ. Դ. Զ:

[2] Զի՞ կայ մեր և քո. զերկրաւ քով մեք ոչ քերեցաք. և ո՛չ բնակիչք ընդարձակ անտառաց կարասցեն անգիտանալ ո՛ իցես և ուստի՛ եկեալ: Կուրտ. Է. Ը:

[3] Փիլիպպոս ըստ իւրոց բարուցն որպէս 'ի պատերազմ եկեալ 'ի դատաստան՝ ճակատու պայմանաւ յեղակարծում 'ի վերայ եղբարցն անկանէր յելուզակաբար անօրէնութ՟ք, և ո՛չ որպէս դատաւոր. և կապտէր յերկոցունցն զթագաւորութ՟ի:

ծեալ, բայց ամենայնն յափշտակութ̃իւք էին և անիրաւուե̃ ստացուածք, որում ոչ ինչ 'ի հնարից յաղթութե̃ անպատեհ թուէր ։ Ապա արդարութ̃ի և հարկ պատերազմի կարևոր օրէնք են քաղաքավարուե̃ և առաջնորդութեան ։ Յուսփ. անդ։

'Ի միահեծան պետութ̃իս՝ թագաւորին է սովորաբար ընտրութ̃ի մարտի. որ և սա զարքունական երկիւղալի առնէ զիշխանութ̃ի ։ Զի եթէ առանց հարկի և արդարութե̃՝ ձախողակի 'ի պատերազմ մտաբերիցէ, տացէ համարս ընդ ա̃մ եղեռնունց՝ որ գործին 'ի նմա, և ընդ աղէտից՝ զոր զհետ իւր ձգէ պատերազմ, ընդ աւերանացն՝ որ կցորդ են նմա, և ընդ արեանհեղութեանցն ։ Ո՛ արհաւիրք, ո՛ սոսկալի համար ։ Բայց խորհրդականք զօրաւիգն են նմա, եթէ իցեն արք հանճարեղք յառաջ ածեալ 'ի պատիւն, իմաստունք և հմուտք, նախանձախնդիրք և սիրողք հայրենեաց, անտենչք փառաց և անզօշաքաղք, և մանաւանդ անկեղծք՝ մեկնեալք յա̃մ մարդահաճութենէ ։ 'Ի խորհել Դարեհի արքայի տալ պատերազմ ընդ Սկիւթս, զուր ջանացաւ Արտաւան եղբայր նորա շրջել զմիտս նորա յանիրաւ և 'ի տարապարտ մարտէն. զի թէպէտ և դիպող պատճառս 'ի մէջ մատուցանէր, այլ ոչ կարաց յաղթել շողոմից և փաղաքուշ հրապուրանաց մարդահաճոյից սպասաւորացն ։ Նաև ոչ զՔսերքսէս զորդի նորա յարշաւանացն 'ի յունաստան կարաց կասեցուցանել. զի 'ի յայտնել Քսերքսի կանխաւ զկամս իւր, որ վրիպակ մեծ էր, ոչ ոք իշխեաց հակառակ կալ այնմ. և առ ձև օրինաց կատարեցաւ խորհուրդն ։ Վասն որոյ յոյժ տրտմեցաւ խորհրդականն հանճարեղ և ազատախօս, զի երկոքին իսկ անդիտանային՝ թէ քանի[1] աղէտք են չդնել չափ ցանկութե̃, և ստացուածոյքն չյագենալ՝ առաւելագունին միշտ ցանկալով. զի անտի ծնանին գրեթէ ա̃մ պատերազմունք ։ Հրոդ. Դ. ՁԳ. Է. ԺԳ.

'Ի հասարակապետութ̃ի Յունաց՝ ատեան ժողովրդեանն տայր զվճիռ պատերազմի. որ բազում չարեաց պատճառք էին ։ Ապաքէն 'ի Սպարտա իշխանութ̃ի աւագանւոյն և մանաւանդ պարետացն, և յԱթէնս՝ Արիսպագին և ժողովոյ չորեքարիւրոցն, որոց անկ էր խորհել և զխորհուրդն առաջարկել, 'ի կշիռ ունէին զյեղամտութ̃ի և զանխորհրդութ̃ի ամբոխին. այլ այն իսկ չէր բաւական ։ Յերկուս ծայրայեղ մոլորութիւնս բաժանեալ էին աթենացիք, 'ի շտապել և 'ի դանդաղել. հակառակ առաջնումն սահմանէին օրէնք՝ յետ երից աւուրց քաջ քննութեան հաստատել 'ի պատերազմ. բայց 'ի փիլիպպեան պատերազմունսն տեսաք, զի Դեմոսթենէս բողոք ունէր դարձեալ զհեղգութենէ նոցա, որով թշնամին զօրանայր ։ Արդ այսմ դանդաղութեան հասարակապետութեանցն պատճառք այն իսկ են, զի ժողովուրդն յիւրաքանչիւր խորհուրդս և 'ի խնդիր շահու կամ պատաղեալ, և ոչ ինչ փոյթ է նոցա միաբանել 'ի մի խորհուրդ՝ ցորչափ չիցեն 'ի վերայ հասեալ վտանգք ։ Վասն որոյ 'ի նուաճել Փիլիպպոսի զՈղատիա, Դեմոսթենէս զարհուրեալ 'ի մօտալուտ վտանգէն՝ որ 'ի վերայ աշխարհին կայր, ետ խափանել զօրէնսն զայն, և վաղվաղակի տալ զվճիռ մարտի ։

---

[1] Զոր և կարի իսկ չար է, սովորել հոգւոյն զառաւելն միշտ քան զոր ունին խնդրել։

Կարի առաւել իմաստութեամբ և հանճարով քննէր և հաստատէր 'ի Հռոմ խորհուրդ պատերազմի. զի թէպէտ և ժողովրդեանն անկ էր դատաստանն, այլ իշխանութիւն ծերակուտին հզօր էր, և յիւրս կարևորս գրեթէ մշտայաղթ. և յոյժ զգուշանայրն, մանաւանդ 'ի սկզբան հասարակապետութեանն, մի տարապարտուց տալ պատերազմ ։ Համբաւ հաւատարմութեան, ուղղութեան, արդարութեան, հեզութեան և անզօշաքաղութեան, ոչ սակաւ քան զզօրութիւն զինուց օգնեաց նոցա յաշխարհակալութիւն. և համարէին օգնական նոցա դիք[1] 'ի հատուցումն արդարութեան և հաւատարմութեան նոցա ։ Եւ այն իսկ զարմանալի էր[2], զի զամենայն գործս իւրեանց 'ի կրօնս հաստատէին, նովաւ սկսեալ և կատարեալ զամենայն ։

Չգոյր զօրականին խրախոյս հզօր 'ի պատերազմ՝ քան զարդարութիւն և զհարկ մարտին, որով աներկմիտ վստահք լինէին յօգնականութիւն դիցն, իբր թէ դիք՝ ոսոխք և վրէժխնդիրք անիրաւութեան՝ համագունդ ընդ նոսա կռուէին ընդդէմ թշնամեաց, տարապարտ մարտուցելոց հաւատադրժից ստերդմանց ։

---

[1] Երկիւղածութիւն և հաւատարմութիւն օգնական են դիք. որով ժողովուրդ Հռոմայ յայս ծայր բարձրութեան եհաս ։ Լիւ. խդ. ա ։

[2] Նախնիքն ձեր օրինադրեցին զամենայն զմեծամեծս աստուածովք սկըսանել և նոքօք կատարել ։ Լիւ. խե. իէ ։

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Յաղագս ազդարարութեան մարտի :

Ըստ օրինացն ուղղութե՟ և արդարութե՟ զոր ասացաք[1], ոչ էր պարտ ձեռն 'ի գործ առնել մարտի՝ մինչ չև բողոքեալ առ թշնամիս 'ի ձեռն հրեշտակաց, և պահանջեալ զիրաւունս, ցուցանելով զխնամս : Զի օրէնք են բնութե՟, մինչ չև համարձակեալ զթշնամութի՟ մեղմով և իրաւախոհութե՟ զփորձ առնուլ. դեղ է օրհասական պատերազմ, պարտ է զայն ամ՟ նախ 'ի կիր արկանել. մարդասիրութե՟ն պահանջեն օրէնք՝ տեղի տալ զգաստութե՟ և սորջանաց, և պարապ 'ի լուծութե՟ն երկբայութեանց, և փարատելոյ զկասկածանս՝ որ թերևս վայրապար առեալ իցեն, և քաջ քննեալ՝ գտանիցին տարապարտք :

Այս սովորութի՟ 'ի վաղ ժամանակաց առ ամ՟ ազգս Յունաց պահէր : [2] Պողինիկեայ մինչ չև պաշարեալ զԹեբէ, զՏիդէոս առ եղբայր իւր Եթեոկղ առաքէր՝ հնարել իրաւախոհ լինել ընդ նմա : Եւ որպէս 'ի Հոմերոսի գիրսն է տեսանել, Յոյնք մինչ չև ինչ գործեալ թշնամութե՟ ընդ տրովացիս՝ զՈդիսեւս և զՄենեղաւոս պատգամաւորս յղեն առ նոսա, դարձուցանել զՀեղինէ. զոր և Երոդոտ նոյնպէս պատմէ : Եւ հանգոյն սմին յոլով են օրինակք 'ի վէպս Յունաց : Իլիակ. Գ. 205 : Ա. ՃԺԷ :

Ապաքէն որ յեղակարծ 'ի վերայ հասցեն թշնամեաց, ոչ տալով նոցա պարապ պատրաստելոյ 'ի դիմամարտ, գրեթէ անշուշտ ստանան զյաղթութի՟. այլ այս անազդ և անզգաստ պատերազմ յանիրաւութի՟ և յանօրէնութի՟ համարէր, և յիրաւի իսկ : Սովաւ ետողացիք անուանարկ եղեն, ասէ Պողիբիոս, և ատելի որպէս հէնք և աւազակք. զի զօշաքաղութիւն, և ոչ այլ ինչ էին նոցա օրէնք պատերազմի և խաղաղութե՟. և ամ՟ ինչ առ 'ի շահ ձոխութե՟ և մեծութե՟ օրինաւոր թուէր նոցա, և ոչ ինչ Գ. 331 :

---

[1] Յորմէ յայտ է, զի չէք պատերազմ արդար՝ բայց որ հարկաւն մղի, և յառաջագոյն ազդմամբ : Կիկ. յաղ. պաշտմ. Ա : ԼԸ :

[2] Յաղթեաց խորհուրդն, հետաղօտել նախ մեղմով
Առ փորձ եղբօրն մուտս յաշխարհն ապահով :
Յօժար 'ի գործն եա զանձն յանդուգն Տիդեւս :
Ստաշ. Թէբ. ԺԱ :

խողձէին ընդդէմ օրինաց ա՟մ ազգաց ասպատակել յանկարծ 'ի սահմանակիցսն՝ որոց ոչ ինչ գոյր 'ի մտի վնաս , և անկասկածք յամրի կային պատսպարեալ 'ի դաշինսն ։

Լիւ. ա. լԲ։ Ոչ ինչ պակաս քան զՀելլենս օրինապահք էին Հռոմայեցիք 'ի հրատարակել զպատերազմն , որպէս օրինադրեաց Անկոս Մարկիոս չորրորդ թագաւոր նոցա ։ Քարոզ մարտին՝ որ կոչէր ազդարար՝ վարշամակ կտաւի ածեալ 'ի գլուխ , և երթեալ կացեալ յեզերս սահմանաց ազգացն՝ ընդ որս էր պատերազմն , 'ի ձայն բարձր զբոզոք ժողովրդեանն Հռոմայ յայտ առնէր , և զհատուցումն՝ զոր ընդ անիրաւութեն պահանջէին . և ահագին նզովիւք 'ի վերայ իւր և ա՟մ ժողովրդեան ազգին՝ կոչէր վկայ զԱրամազդ , և ասէր . Եթէ յանիրաւի կամ տարապարտ զամ յերեսաց ժողովրդեան Հռոմայ խնդրել զհատուցումն , աստուած մեծ , մի լիցի ինձ ողջամբ 'ի հայրենիս իմ դառնալ ։ Եւ զնոյն՝ բառիցն և եթ փոփոխմամբ՝ ստէպ յեղանակէր , ում և պատահէրն , և 'ի մուտս քաղաքին և 'ի քաղաքամիջի անդ ։ Եւ եթէ ցաւուրս երեսուն և երիս ոչ յանձն առնուին լինել իրաւախոհ , դարձեալ 'ի լուր ամենեցուն գոչէր . Արամազդ և Հերա և Կուիրինէ[1] , աստուածք երկնից և երկրի և սանդարամետաց , լուարուք ։ Զձեզ ունիմ վկայ անիրաւութեան ժողովրդեանս , որ ոչ յանձն առնուն զարդարութիւն . և ծերակոյտ Հռոմայ արասցէ իրաւունս ։

'Ի դառնալ ազդարարին 'ի Հռոմ , ժողով գումարէր . և 'ի հաւանել բազմաց 'ի պատերազմ՝ դառնայր քարոզն առ թշնամիս , և լու 'ի լու ոչ սակաւուց քան զերիս ոմանս զվճիռ պատերազմին հրատարակէր . և ապա ընկենոյր զնիզակն յերկիր թշնամեաց 'ի նշանակ պատերազմի ։

Այս սովորութիւն եկաց առ Հռոմայեցիս ժամանակս բազումս ։ Որք 'ի յառնելն 'ի պատերազմ ընդդէմ Փիլիպպեայ և Անտիոքոսի , հարցին զքուրմս ատենակալս խորհրդոյ պատերազմի՝ թէ պա՞րտ իցէ նոցին իսկ ազդ առնել զայն , թէ 'ի սահմանակալ նոցա քաղաքի հրատարակել շատ իցէ ։ Յաւուրս բարութեան Հռոմայ 'ի նախատինս համարէր ծածկանօք ինչ կամ նենգաւ կամ խորագիտութե՟ իսկ գործել . բարձր 'ի գլուխ յայնժամ առ թշնամիսն գնային , թողեալ զվատ և զանարժան խորամանկութիւնս 'ի կարքեդոնացին և 'ի նմանիս նորա , որք փառս համարէին դաւել զթշնամին, քան բարձր բազկաւ յաղթել նոցա[1]։

---

[1] Կուիրինոս կոչէին զՀռոմուլոս ։

Քարոզք պատերազմի և ազդարարք մեծարէին առ նախնիս, որպէս սրբազանք դիցն պաշտօնեայք. և ընդ իրաւունս ազգաց և ընդ կարևոր և անհրաժեշտ պարտս համարէր առ նոսա ազդարարութ՟ի մարտի. զի ոչ էին յայնժամ յայտարարքն մեր նախազեկոյց հրովարտակք, որ զիրաւացի կամ զտարապարտ բողոք երկուց կողմանցն և զիրաւունս մարտին յայտ առնէին։ Քանզի այսօրիկ յետոյ եղան փոխանակ վսեմ արարողութ՟ե նախնեացն՝ հռչակաւ զա՟ծային զմեծվայելչութ՟ին կարդալոյ վկայ և վրէժխնդիր անիրաւութեան տարապարտուց և վայրապար մարտուցելոյն։ Է և այլ քաղաքավարական պատճառ, վասն որոյ կարևո՛ր են յայտարար հրովարտակքս ըստ պատշաճի այժմու իրաց թագաւորացս եւրոպացւոց, որք արենակիցք են միմեանց, և նիզակակիցք 'ի վրէժխնդրութ՟ի և 'ի դիմամարտ։ Վասն որոյ որ հրատարակէն զպատերազմ, զգուշանայ իմաստութ՟ե՝ զի մի՛ և զնիզակակիցս թշնամւոյն համախուռն ընդդէմ իւր ձգեսցէ. յայն սակս այժմ հրովարտակքս սահմանեցան փոխանակ նախնի արարողու՟եցն՝ զոր ասացաք։ Է զի և զայն իսկ յայտ առնեն սովաւ թագաւորք, վասն որոյ անազդ յառնեն 'ի պատերազմ։

Իրաւացի կամ տարապարտ ասացաք զբողոք հրովարտակին. զի պետութ՟եց և թագաւորաց դրգռելոյ ընդ միմեանս ոչ պակասեն պատճառանք 'ի ծածկել զանիրաւութ՟ի։ 'Ի դէպ է նոցա միոյ ուրուք յատենակալաց Լատինի ասացեալն. որ 'ի խորհել նոցա՝ թէ զի՞նչ պատասխանի տացեն հռոմայեցւոց, որոց կասկած ապստամբութ՟ե առեալ զնոցանէ՝ կոչէին զնոսա, ասէ. Արք, թուի ինձ թէ ոչ է ժամանակս խորհելոյ՝ թէ զի՞նչ պատասխանի տացուք, այլ թէ զի՞նչ գործեսցուք. զի եթէ քաջ խորհեսցիմք զոր պարտն իցէ առնել, ոչ ինչ դժուարին լիցի բանիւք ցուցանել զայն։ Լի․ Ը․ Դ։

---

[1] Նախնիք, և նոցին նախանձաւորք, անարժան հռոմայեցւոց ըղհրեշտակութիւն զայն համարէին։ Զի ոչ դարանակալութ՟իք և գիշերամարտիւք, ... և փառս համարելով զդաւ քան զյայտնի զօրութ՟ի, մղէին պատերազմունս, այլ նախ քան զպատերազմն իսկ ազդ առնէին թշնամեաց։ Քանզի այս հռոմայեցւոյ է, և ոչ ափրիկեցի դաւոյ և հելլէն խորամանկութ՟ե, առ որս խաբել զթշնամին պարծանք էր քան յաղթել նմա զօրութ՟ե։ Լի․ ԽԲ․ ԽԷ։

ՅՕԴՈՒԱԾ Գ.

Յաղագս ընտրութե̃ն զօրավարին և սպայից.

Կարևոր է յոյժ Թագաւորի՝ լինել ինքնիշխան յընտրութ̃ զօրավարաց և սպայից, և պարծանք մեծ՝ եթէ զվկայեալսն քաջութ̃ և զվաստակաւորս ընտրեսցէ։ Սակաւ է ա̃մ փոյթ յընտրութիւնն յայն, որով յամբոխէն յառաջ ածեալ զոք հաւասարէ գոգցես ինքեան՝ աւանդեալ նմա զա̃մ իշխանութ̃ իւր և զփառս և զբաղդ աշխարհին։ Սովին նկարագրաւ քաջ ճանաչի Թագաւոր՝ թէ իցէ կարող յառաջնորդութ̃, և սովաւ յաջողէն զէնք նորա։ Մեծն Կիւրոս, և Փիլիպպոս, և նորին որդի Աղեքսանդր, ՚ի վաստակաւորս և ՚ի քաջահմուտ զօրավարս զառաջնորդութ̃ զօրաց իւրեանց ետուն։ Իսկ առ յաջորդօք նոցա ոչ նոյնպէս. այլ դաւ և համախոհութ̃ և ակնառութ̃ սիրելեաց իշխէին ընտրութ̃ն, մերժեալ զբեթէ միշտ զարժանաւորսն. որով կատարած մարտին հանգոյն սկսուածոյն լինէր։ Եւ այս ոչ ինչ պիտոյ է ածել օրինակս, զի լի են այնոքիւք վէպք։

Նոտ. Ն. 4Է։ Եկից արդ ՚ի հասարակապետութիւնս։ ՚Ի Սպարտա թագաւորայն երկոցունց ըստ իրաւանց իշխանութեանն անկ էր զօրավարել. և ՚ի վաղ ժամանակս անձամբ առաջնորդէին բանակաց։ Եւ յետ հերձուածոյն Կղէոմենի և Դեմարատայ եդան օրէնք՝ միում̃ եւեթ զօրավարել. և պահէին յայնմ հետէ օրէնքն այն, բայց միայն ՚ի նորանշան դէպս ինչ խափանեալ. Քանզի խելամուտ եղէն սպարտացիք, զի իշխանութիւն ՚ի բաժանելն տկարանայ. և զի յոյժ դժուարին է զօրավարաց երկուց յերկար միաբանել, և զի իրք մեծամեծք ՚ի ձեռն միոյ ուրուք՝ և ոչ այլազգ սովոր են յաջողել, և զի չիք չարաշշուկ վտանգ բանակի քան զբաժանում̃ առաջնորդութեանն։

Մեծ ևս վտանգ էր աթենացւոց, որք սահմանադրեալ օրինօք կացուցանէին զօրավարս տասն. զի ՚ի տասանց ցեղից՝ որ էին յԱթէնս՝ մի մի զօրավար կացեալ՝ փոխանակաւ օր ըստ օրէ հրամայէին։ Ժողովրդեան անկ էր ընտրութ̃ին, և ամի ամի այլք ընտրէին. վասն որոյ Փիլիպպեայ հանճարաբանելն՝ թէ Զարմանամ զի յԱթէնս ամի ամի տասն զօրավարք գտանէին պատրաստ, զի ես յա՟մ թագաւորութե՟ իմում զմի ոք հազիւ կարացի գտանել[1]։

Բայց նոքին իսկ աթենացիք զքաջս և զպիտանիս 'ի քաղաքայնոյն ընտրէին զօրավարս, մանաւանդ 'ի կարևոր վտանգս։ Յաւուրց Միլտիադեայ մինչև 'ի Դեմետր փաղերացին ընդ ա՟մ իբր երկերիւր՝ ամբոխ արանց աւագաց կացին յԱթէնս զօրավարք, որք 'ի ծայր անդր բարձրութե՟ զփառս հայրենեացն հասուցին. զի տեղի տայր յայնժամ նախանձ, և ա՟մ ոք ընդ օգուտ աշխարհին հոգայր։ Որպէս է տեսանել գեղեցիկ օրինակ յարշաւել Դարեհի 'ի վերայ նոցա պատերազմաւ։ Զի 'ի մեծի վտանգին անօգնականք էին առաջի աշխարհակոյտ անթիւ զօրացն. և 'ի տասանց զօրավարացն կէսք խորհէին 'ի պատերազմ, այլք մեկնել 'ի բաց։ Միլտիադ՝ գլուխ առաջնոցն՝ յինքն յանկոյց զմարտպետն, որում անկ էր յերկպառակել խորհրդոյ պատերազմին՝ տալ զվարկ, և սահմանել զվճիռն, և հաստատեցաւ խորհուրդ պատերազմին։ Եւ այլոց զօրավարաց գեր 'ի վերոյ ամենեցուն Միլտիադեայ քաջութե՟ն վկայելով, 'ի հասանել աւուրց իշխանութե՟ իւրեանց՝ տեղի տային նմա. և բազմահռչակ մարաթոնեան ճակատամարտն 'ի ժամանակին յայնմիկ մղեցաւ։ Երատ․ Զ․ ՃԹ․ ՃԺ։

Բայց էր երբեմն, զի հրապուրեալ ժողովուրդն յատենաբանից՝ ըստ հաճոյս նոցա զանարժանս մատուցանէր յաւագութ՟ի։ Որպէս Կղէոն անուանին ամենազօր իշխանութե՟ զօրավարեաց յամս առաջինս պեղոպոնեսեան մարտին, թէպէտ և էր այր խռովայոյզ, բուռն, ամեհի, անհանճար և անվաստակ։ 'Ի վաղ ժամանակս դուն ուրեք պատահէր այս յԱթէնս, այլ ապա յաճախեալ եղև մի 'ի գլխաւոր պատճառաց կործանման նորա։

Իմաստասէրն Անտիսթենէս, ընդ խաղ իմն հանճարեղ, եցոյց աթենացւոց զզեղծումն նոցա առ 'ի տալ անխտիր զբարձ և զպատիւ. զի յատենի կացեալ 'ի բեմասացութե՟ կերպի՝ խրատ տայր հրովարտակ առնել, զի և էշք որպէս զարջառս և զձիս վարեսցին յերկրագործութիւն։ Որում ետուն պատասխանի, թէ էշն չէ պիտանի յերկրագործութի. և նա ասէ. Իսկ ընդէ՞ր, չիք իսկ խտիր. զի ահա քաղաքացիք անմիտք իբրև զէշ՝ զօրավարք քաջահմուտք անդէն եղանին 'ի կացուցանել ձեր զնոսա 'ի գործ։ Դիոգ․ Լայէրտ․ յԱնտիս․ 369։

---

[1] Որ էր Պարմենիոն։

Ժողովրդեանն անկ էր և 'ի Հռոմ կացուցանել զօրավարս, որ էին բդեաշխքն և կուսակալք ։ Որոց տարեւոր էր իշխանութ՟ին, բայց յերկարէին երբեմն յիշխանութ՟են որպէս փոխանակ բդեշխի կամ կուսակալի ։ Այս փոփոխումն [1] զօրավարաց ամի ամի՝ խոչ մեծ էր յաղթութ՟ե․ զի անընդհատ մարտիւ յաջողէ յաղթութիւն․ Նմին իրի միապետութ՟ի գեր 'ի վերոյ է այսու, զի թագաւորք ազատաբար և մինչ 'ի սպառ իշխեն իրաց պատերազմի, և ըստ մտի գործեն զամ՟ առանց յումեքէ բռնադատելոյ ։ Իսկ առ Հռոմայեցիս [2], էր՝ զի անագան հասանէր բդեաշխն, և էր՝ զի վաղագոյն կոչ հասանէր նմա 'ի ժողով․ և յաջորդն թէպէտ և զամ՟ փոյթ 'ի մէջ առնոյր՝ ժամանել նախ քան զլրումն ժամանակի իշխանութ՟ե նախորդին, և խելամուտ լինել իրաց պատերազմին՝ որ նախ քան զամ՟ գործ մարտի հարկ է անհրաժեշտ, բայց ժամանակն անցանէր, և կորնչէր պատեհն յարձակելոյ 'ի թշնամիս ։ Եւ բազմաց ևս հասեալ յիշխանութ՟ի՝ գտանէին զիրսն եղծեալ վրիպակաւ նախորդին, և զզօրականն ըստ մասին դեռահաւաք և անփորձ 'ի պատերազմ, կամ զեղծեալ համարձակ ազատութ՟բ և անհրահանգ ։ [3] Ինչ ինչ յայսցանէ յուշ արար Փաբիոս Հռոմայեցւոց 'ի յորդորելն զնոսա ընտրել զոք՝ որ կարող իցէ կալ առաջի Աննիբաղայ ։

Սուղ ինչ տարեւորական իշխանութ՟ին, և զի չէր իսկ յայտ յերկարաձգել իշխանութեան նոցա քան զմի ամ՟ն, ապաքէն ստիպէին զքաջ զօրավարս զամ՟ ժամանակն յօգուտ 'ի կիր արկանել ։ Բայց և բազումք այն էին, որք անձապարեալ վախճան առնէին պատերազմին, ապախտ արարեալ զառաւելագոյն օգուտ աշխարհին, զի մի այլ որք յաջորդեալ՝ զվաստակս իւրեանց ժառանգեսցէ, ըզփառս կատարածի պատերազմին յափշտակեալ ։ Զի թէպէտ և ճշմարիտ նախանձ հայրենեաց, և մեծախոհութ՟՝ անտենչիկ իւրոյ շահուն, մեկուսի է 'ի խորհրդոց աստի, այլ գտանիցին այսպիսւոյ առաքինութեան օրինակք[1] ։ Մեծն իսկ Սկիպիոն երեցն բամբասի 'ի վատասրտութ՟ս յայս[2]. կատարեալն այն առաքինութիւն, անհրապոյր 'ի բուռն և 'ի յաղթանախանձ անձնասիրութ՟ աստի, եթէ չիցէ իսկ 'ի վեր քան զզօրութ՟ մարդկան, բայց չքնաղագիւտ է 'ի մարդիկ ։

---

[1] Տարաժամ դադարէ գործ պատերազմին, որոյ անընդհատ հանապազորդութ՟բն է յաջողութ՟ի․ զի մինչև ցաւանդել իշխանութ՟են, և ցտեղեկանալ յաջորդին՝ որ ինչ նախ քան զգործելն պարտ է ուսանել, բազում այն է՝ զի կորնչի պատեհութ՟ի ։ Լիւ․ խա․ ծէ ։

[2] Տարաժամ բդեաշխքն չոգան 'ի պատերազմ․ և վաղ 'ի ժողով կոչեցան, և անդէն 'ի յանձանձանս իրացն եւ ամ՟ն ։ … 'ի ձախողուն այլոյ յաջորդեցին, և ընկալան դեռակիրթ և անհրահանգ զզօրականն ։ Իսկ թագաւորք ոչ միայն ազատ են յամ՟ խափանածոյ, այլ արդարև տեարք իրացն և ժամանակին․ զհետ ձգեն զամ՟, և ոչ հետեւին ։ Լիւ․ Թ․ ծը ։

[3] Թէպէտ և զքաջահմուտն 'ի քաղաքայնոցս ընտրեսցուք զօրավար, այլ յանկարծ ընտրեալ, և տարեւոր իշխանութ՟բ սահմանեալ, կացցէ ընդդէմ հինաւուրց զօրավարի՝ որ մշտնջենաւոր ունի զիշխանութ՟ին, որ ոչ յանձուկ ժամանակի և 'ի պայմանի գրաւեալ, այլ ազատօրէն վարէ և տնօրինէ զամ՟ ըստ դիպս պատերազմին․ իսկ մեք մինչդեռ պատրաստիմքն, և այն ինչ ձեռն 'ի գործ առնեմք, պարունակի ամ՟ն ։ Լիւ․ իդ․ Է ։

Արդ թէպէտ և այս սուղ և անձուկ իշխանութ՟ ըրդեշխիցն յոյժ դժպատեհ էր, այլ առ ահի դժնդակագոյն չարեաց՝ հարկ էր յանձն առնուլ զայն, զի մի 'ի յերկարել նոցա յիշխանութ՟ն տիրելով 'ի վերայ ամ՟ զօրութ՟ց աշխարհին՝ զեան հասարակաց ազատութ՟ հասցէ ։ Որպէս յետ ժամանակաց, յորժամ հարկ իրաց պատերազմի, և տարակայութ՟ վայրաց, և այլ ևս պատճառք ստիպեցին զհռոմայեցիս յերկարաձգել զիշխանութիւն զօրավարացն ընդ բազում ամս, երկիւղն՝ յորմէ խիթային՝ պատահեաց. զի զօրավարք երկարատև իշխանութ՟ն բռնացան 'ի վերայ հայրենեացն ։ Առ որ մարթէր զՍիղղայի զՊոմպէին զԿեսարուն և զայլոց բազմաց օրինակս 'ի ներքս ածել ։

Քաջքն և վաստակաւորք ընտրէին 'ի Հռոմ 'ի զօրավարութ՟. և այս ընտրութ՟ դիւրին էր յոյժ հռոմայեցւոց և հարկ իսկ ։ Դիւրին էր, զի քաջ ճանաչէին զայնոսիկ՝ որ զիշխանութեանն թեկն ածէին. զի 'ի բազում պատերազմունս զինուորակիցք նոցա լեալ էին, և զնահատակութ՟ս նոցա տեսեալ, և պարապով քննեալ և համեմատեալ անձամբ և 'ի ձեռն զինուորակցացն զքաջս նոցա և զհանճար, զաջողաձեռնութ՟ և զբաւականութ՟ 'ի գործ բարձրագոյն իշխանութ՟ց ։ Արդ այս[2] տեղեկութ՟

---

[1] Եւ զնա ինքն զՍկիպիոն ստիպէր ակնկալութ՟ յաջորդին՝ որ գալոց էր յափշտակել զփառս կատարածի մարտին, զպատրաստեալն վաստակաւ և վտանգաւ այլոյ ։ Լիւիոս. Ը. ԼԷ ։

[2] Թէ ի՞նչ զօրութիւն և պատուպարան հասանելոյ 'ի բդեշխութ՟ թուիցին քեզ կամք զօրականին. որ բազմութիւն իսկ հզօր է, և առ իւրն ունելով շնորհս, և զի մեծ է վկայութ՟ զօրաց առաջի ժողովրդեան Հռոմայ յընտրութիւն բդեշխից ։ ... Զի է աղերս հզօր. ասել՝ թէ նա կեցոյց զիս 'ի վիրաց, նա մեծացոյց զիս աւարաւ, առաջնորդութ՟ նորա կալաք զբանակ թշնամւոյն և զդրօշս խլեցաք. և թէ հաւասար ընդ զինուորացն եբարձ զաշխատանս, և դարձեալ թէ հանդոյն քաջութ՟ն և բարեբաղդ էր ։ Զմր համբաւ և շնորհս այսոքիկ չյաւելուցուն ։ Կիկ. Ի. Մուրէն. ԼԸ.

վաստակոց հետամտելոյն իշխանութ՟ ձգէր զնոսա յընտրութ՟ի այնոցիկ՝ որոց աջողակութ՟են և արիութ՟ և գթասիրութ՟ե գիտակք էին յանցելոց պատերազմաց ։ Զի ասէին ․ նա 'ի վիրաւորել իմում խնամարկեաց , և աւարին բաժանորդ արար զիս ․ և թէ առաջնորդութ՟բ նորա կալաք զբանակ թշնամեաց , և յաղթութ՟իս կանգնեցաք , և թէ հաւասար ընդ զօրսն վաստակէր , և յար և նման քաջութ՟են էր և բարեբաղդ ։ Արդ այս վկայութիւք յոյժ զօրաւորք էին ։ Եւ ցանկութ՟ի իւրաքանչիւր օգտին հարկ առնէր ընտրողացն քննել և կշռել զվաստակս հետամտից իշխանութ՟են ․ զի բազմագոյնք 'ի նոցունց ընտրողաց հանդերձեալ էին զինուորել ընդ նոքօք , և փոյթ էր նոցա չդնել զկեանս իւրեանց և զփառս և զփրկութ՟ի հայրենեաց 'ի ձեռս արանց անպիտանից , յորս չէինն քաջայոյս ։ Զի ինքեանք իսկ զօրքն ընտրէին զզօրավարսն ․ և ոչ ինչ երկբայելի է յայսմ մասին դատաստան նոցա , 'ի փորձոյ իրացն վկայեալ՝ զի դուն ուրեք սխալէին ։ Զի և արդ զօրք ասպատակաւորք առանց ակնառութ՟ե զաջողակագոյնսն ընտրէին իւրեանց առաջնորդս ։ Այսպէս Մարիոս յականմայս Մետելլեայ զօրավարին իւրոյ ընտրեցաւ ․ այսպէս և Սկիպիոն Էմիլիանոս ընտրութ՟բ զօրականին նախապատուեցաւ ։

Հանդերձ այսու ամ՟ի ոչ միշտ ազնուականագոյն դիտումն հասարակաց օգտին ուղղէր զդատաստանն , այլ էր՝ զի դաւ և ճարտարութ՟ի յանկուցանելոյ զամբոխն և շողոմք և հրապոյրք 'ի ներքս խառնէին ։ Զոր օրինակ Տերենտիոս Վարրոն 'ի Հռոմ , և յԱթէնս Կղէոն ընտրեցան ․ զի ռամիկն միշտ է ռամիկ , իմա անխորհուրդ , յողդողդ , անձնակամակ և մոլի ։ Բայց ժողովուրդ Հռովմայ սակաւ ինչ ընդհատ էր յայլոց ժողովրդոց ․ զի 'ի բազում դէպս ցուցաւ զարմանալի հեզութ՟բ և իմաստութ՟բ , հլու աւագանւոյն խրատու , հրաժարեալ մեծախոհութ՟բ յըղձից կամ յատելութ՟է վասն հասարակաց բարւոյ , և յանձն առեալ եղծանել զվճիռ իւր՝ որով զապիկարս 'ի բարձումն ծանրաբեռն գործոյ պատերազմի ընտրեալ էր զօրավարս ։ Որպէս յորժամ զՓաբիոս եթող յիշխանութ՟են , 'ի ցուցանել նորա զանբաւականութ՟ի յաջորդացն ․ ուր գործն դժպատեհ՝ եղև 'ի փառս Փաբիոսի , զի զհայրենեացն խնդրէր նախանձ , վասն փրկութ՟ աշխարհին չխնայեալ զոգցես և 'ի համբաւ իւր[1] ։

Լիւ․ ԻԲ․ ԻԵ ։
ԻԶ․ ԻԷ ։

---

[1] Ժամանակն և հարկ պատերազմին և վտանգ ոչ ներէին զփորձն

Հռոմէական բանակին՝ 'ի համաչու լինել երկուց բըդեշխիցն՝ էին չորք լեգէոնք, զոյգ ընդ միոջն. և կոչէին առաջին և երկրորդ լեգէոն, և այլն, ըստ կարգի զօրաժողով լինելոյ նոցա։ Իաց 'ի կրկին գնդաց աստի էին երկաքանչիւր նիզակակից զօրք հետևակք նոյնչափ, և հեծեալք կրկնապատիկ։ Այլ յետ ընդունելոյ ազգաց Իտալիոյ հաւասար քաղաքայնոց Հռոմայ ազատութ̅ի, կերպարանափոխ եղեն կարգք զօրացն. զի բաց 'ի չորից լեգէոնաց բդեշխիցն, էին այլ ևս զօրք ընդ կուսակալօք և ընդ փոխանակօք բդեշխիցն, և ընդ այլովք զօրավարօք։

'Ի համաչու լինել բդեշխիցն՝ հաւասար էր նոցա իշխանութ̅ի, և որ ըստ օրէ փոխանակաւ իշխէին. որպէս 'ի պատերազմին Կաննեայ։ Այլ բազում ուրեք տեղի տային միմեանց, վասն գեր 'ի վերոյ միոյն քաջութ̅են. որպէս Ագրիպպաս Փուրիոս[1] Կուինտեայ Կապիտոլինեայ երևելւոյն ետ որ և ինքն ըստ մեծախոհութ̅ե իշխանակցին՝ յամ̅ի խորհրդակից իւր առնէր զնա և փառակից և հաւասար իւր։ Իսկ այլ երբեմն հազարապետք զօրաց, որ փոխանակ բդեշխիցն կային յայնժամ արք վեց, հասեալ յանհնարին վտանգ[2], և միայն արժանի հրամատարութ̅ե դատեալ զԿամիլլոս, մտադիւրագոյն թողին 'ի նա զամ̅ իշխանութ̅ի. ոչ ինչ յերկուացեալ, զարժանն քաջութ̅ե նորա հատուցանելով՝ անձանց իսկ յաճախել փառս։ Ընդ այնպիսի մեծախոհութ̅ի նոցա ծափս հարեալ ամենեցուն, և ձայն բարձեալ ասէին. Ոչ ևս պիտոյ է մեզ այսուհետև իշխանապետ, մինչ այսպիսիք

անտարացոյց ընդ քննութեամբ արկանել, և ոչ 'ի կասկած փառասիրութեան զբդեշխին։ Այլ մանաւանդ զմեծախոհութ̅ի նորա ամենեքին գովէին. զի գիտելով եթէ քանի կարօտ էր աշխարհն քաջահմուտ զօրավարի, ո՛չ ոք զանձն աներկբայապէս համարէր, յանձն առ փոխանակ բարեաց աշխարհին լինել նշաւակ մախանաց, եթէ երբեք լինէին մախացօղք։ Լիւ. իԳ. Թ։

[1] 'Ի հռոմէական բանակին երկուց բդեշխիցն հաւասար ունելով իշխանութ̅ի՝ Ագրիպպաս գերագոյն հրամատարութ̅ի իշխանակցին ետ, զի սա 'ի յանձանձանս կարևոր իրաց յոյժ օգտակարագոյն է. և մեծարեալն 'ի գործ փոխարինի հլուէ մեծարօղին՝ քաղցրութ̅ խորհրդակից իւր զնա առնէր և փառակից. հաւասարեալ իւր ընդնուաստագոյնն։ Լիւ. Գ. Հ.

[2] Իշխանակիցք նորա վկայէին՝ թէ նա միայն յահագին վտանգ մարտին կարող էր առաջնորդել, և զի յօժար էին ամենեքեան հնազանդել Կամիլլեայ, և ոչ նուաստութ̅ համարէին տեղի տալ փառաց նորա։ ... Եւ յոտն կացեալ ասեն մեծաձայն. ոչ ևս պիտոյ է իշխանապետ աշխարհիս՝ եթէ այսպիսիք են մեզ իշխանք համաչունչք, պատրաստք 'ի հնազանդել որպէս 'ի հրամայել, հասարակաց զփառս իւրեանց առնելով, և ոչ զհասարակացն սեփականել։ Լիւ. Զ. Զ.

են մեզ իշխանք միակամք միախորհուրդք, յօժարք 'ի հնազանդել որպէս 'ի հրամայել, հասարակաց թողլով զփառս, և ոչ սեփականեալ։

Նորանն՛ զօրաց՝ որոց լիցէ զօրավար հանգոյն Կատոնի, որպէս նկարագրէ զնա [1] Լիւիոս, որ իւրովի հոգայցի զա՟մ՝ խնամ կալեալ մեծի և փոքու, որ նախատեսեալ զա՟մ կարևորս զօրացն պատրաստեսցէ, որ ոչ միայն հրամայել՝ այլ և կատարել զհրամայեալսն գիտիցէ, որ յանձնէ օրինակ տացէ զօրացն խիստ և սաստիկ հրահանգաց, որ հաւասար ընդ տրուպս 'ի զինուորացն նքթեսցի և տքնեսցի և վաստակեսցի. և համայն ասացեալ՝ որ իշխանութ՟ն եւեթ ընդհատ իցէ 'ի զօրացն, և ըստ իշխանութ՟են պայմանի պատուոյն։ Յետ բդեշխիցն և կուսակալաց ընտրութ՟ե՝ ընտրէին և հազարապետք զօրաց քսանեչորք, վեց առ լեգէոն մի, յանձանձել փոխանակաւ զա՟մ իրս բանակին։ Որք 'ի վեց ամիս պատերազմին՝ [2] երկամենայք փոխանորդելով զմիմեանս, զոյգ զոյգ իշխէին 'ի լեգէոնս զօրացն միձակաւ։

Պ. Հ. Կ. 466։

Նոքին իսկ բդեաշխք 'ի սկզբանն կացուցին զհազարապետս. և բարւոք էր զօրավարացն ընտրել զայս՝ վասն յորդորագոյն լինելոյ նոցա յարբանեկութ՟ի։ [3] Ապա յետ ժամանակաց 'ի թուականութ՟են Հռոմայ երեքարիւրորդի իննսներորդի երրորդի՝ 'ի քսան և չորից հազարապետաց զվեցեսին կացոյց ժողովուրդն. և [4] յետ իբր յիսնեկի ամաց 'ի չորեքարիւրորդի քառասներորդի չորրորդի ամի Հռոմայ, զվեշտասանս 'ի նոյանէ կացոյց ժողովուրդն։ Այլ 'ի կարևոր պատերազմունս զիջեալ իմաստութ՟բ [5] հրաժարէր յիշխանութ՟էն, և 'ի բդեշխսն և 'ի կուսակալս Թողոյր զընտրութ՟ին. որպէս արար 'ի պատերազմին Պերսեայ արքային մակեդոնացւոց, ընդ որոյ ելս կատարածին յոյժ կասկածէր։

---

[1] Իսկ բդեաշխն քաջասիրտ և կորովամիտ զա՟մ ինչ զմեծ և զփոքր դիմագրաւեալ գործէր. ոչ միայն խորհէր զկարևորն և պատուիրէր, այլ և բազում ինչ իւրովի կատարէր. ոչ ումեք ծանր և խիստ ինչ քան անձին հրամայէր։ Սակաւապիտութ՟բ, տքնութ՟բ և աշխատութ՟բ ընդ տրուպ զինուորսն հաւասարէր. և ոչ ինչ խտիր էր ընդ նա և ընդ զօրսն. բայց միայն պատիւն և իշխանութ՟ի։ Լիւ. լը. ծը։

[2] Երկրորդի լեգէոնին Փուլուիոս էր հազարապետ զօրացն, որ յամիսս իշխանութ՟ն իւրոյ արձակեաց զլեգէոնն։ Լիւ. խ. խա։

[3] Հաճոյ եղև 'ի նմին ամի հազարապետս զօրաց առ լեգէոնս քուէիւք ընտրել, զի յառաջագոյն զօրավարքն ինքնին կացուցանէին զնոսա՝ որպէս այժմ զՌուփեանսն. ըստ որում վեցից Մանլիոս ընտրեցաւ։ Լիւ. է։

[4] Երկին իշխանութ՟ս 'ի նմին ամի կալաւ ժողովուրդն զիրաց պատերազմի. մի, կացուցանել հազարապետս վեշտասան առ չորս լեգէոնս՝ զոր յառաջ իշխանապետք և բդեաշխք կացուցանէին, գրեթէ և ոչ տեղի տուեալ կամաց ժողովրդեան։ Լիւ. թ. լ։

[5] Վճիռ արարեալ զի մի հազարապետք զօրաց քուէիւք ընտրեսցին զայն ամ, այլ բդեշխիցն և կուսակալաց խորհրդով և հրամանաւ։ Լիւ. խբ. լա։

'Ի քսան և 'ի չորից հազարապետաց աստի, չորեքտասանիցն պարտ էր ոչ ինչ պակաս քան զամս հինգ յառաջագոյն զինուորել, իսկ այլոց՝ զամս տասն։ Բազում իմաստութ՟ի եղեալ էր այս կարգ, զի խրախուսէին զօրքն 'ի յարգ սպայիցն, և քաջայոյս լինէին 'ի նոսա։ Եւ 'ի լեգէոնս իւրաքանչիւր հինօրեայք և հմուտք 'ի հազարապետաց խառն ընդ մանկագոյնս կային, որպէս զի վարժեալ կրթեսցեն զնոսա 'ի զօրավարութ՟ի։

Զօրագլուխք նիզակակից զօրաց էին 'ի դունդս իւրեանց որպէս հազարապետք 'ի լեգէոնս. և էին նոքա հռոմայեցիք, որպէս Թուի ակնարկել զայս Լիւիոսի յասելն. Զօրագլուխք նիզակակից զօրաց, և այլ հռոմայեցիք։ Զոր և յանուանց նոցա յայտնագոյն ես տայ գուշակել։ Այս իշխանութ՟ի հռոմայեցւոց, զի ինքեանք առաջնորդէին նիզակակից զօրաց՝ սպայս ևեթ 'ի նոցունց 'ի ձեռանէ կացուցեալ, հանճարեղ քաղաքավարութ՟ե գործ էր՝ առ 'ի հարկի ունելոյ զայլազգի զօրս, և պատսպարան մեծ յաղթութ՟ե մարտին, զի միաբան 'ի միոջէ հրամանէ ամ՟ զօրքն վարէին։

Լիւ. իգ. է.
իե. իզ. իա.
լգ. լզ.

Ասասցուք այժմ և զփոխանորդաց սպայից. սոքա յետ բդեշխիցն էին իշխանք ընդ հրամանաւ նոցա, որպէս այժմ զօրավարք փոխանորդք ընդ սպարապետաւն, կամ ընդ երիցագունիւ փոխանորդ զօրավարաւ՝ որ ամ՟ զօրացն հրամայէ. և որպէս Թուի՝ բդեաշխք կացուցանէին զփոխանորդս, և անդստին 'ի սկզբանէ հասարակապետութ՟ե հռոմայեցւոց կան զնոցանէ յիշատակք։ Զի 'ի ճակատամարտին՝ որ առ Հռեգիղոնաւ լճին, յամին երկերիւրորդի յիսներորդի հինգերորդի Թուականութ՟են Հռոմայ, Երմինիոս փոխանորդ առաքինացաւ քաջութ՟ի. և Փաբիոս Մաքսիմոս, որ հանճարեղ առաջնորդութ՟են ընդդէմ Աննիբաղայ անուանի եղև, ոչ ինչ նուաստութ՟ի համարեցաւ լինել փոխանորդ որդւոյ իւրոյ, 'ի կալ նորա բդեաշխ։ Առաջի բդեշխին երթային նուիրակք երկոտասան զհետ միմեանց. որոց մի և այս պաշտօն էր՝ վրէժխնդիր լինել զի ամ՟ ոք զպատշաճ մեծարանս նմա արասցէ։

Լիւ. բ. իա։
իգ. իդ։

Բայց Փաբիոս հայր բդեշխին հանդիպեալ որդւոյ իւրում, ոչ էջ յերիվարէն. և իբրև անց նա ը՟ մետասան նուիրակն, առ մետասաներորդն ազդ արար բդեաշխն կատարել զօրէնս. և նուիրակն գոչեաց անդէն՝ իջանել Փաբեայ յերիվարէն. Յայնժամ արդոյ ծերունին փութացեալ էջ 'ի ձիոյն, և ասէ ցորդին. Որդ խելամուտ եմ թէ գիտիցես որ ինչ եսդ. Նաև մեծն Սկիպիոն Ափրիկեցին, որպէս յայտ է, խնդրեաց կալ փոխանորդ եղբօր իւրոյ բդեշխի, և եբարձ զերկմտութիւն ծերակուտին 'ի կացուցանել զնա կուսակալ յունաստանի. Աւր. Մ. Ե.

Յայսմ ամի, տեսանի ակներև հռոմէականն հանճար խելամտութեան և տեւչութեան. զի ոչ ըստ դիպուածոյ յաջողեցին զէնք նոցա, այլ իմաստութեամբ և ճարտարութեամբ՝ որովք ամ կարգ առաջնորդութեան նոցա ուղղէր.

ՅՕԴՈՒԱԾ Դ.

Յաղագս զօրաժողովոյ.

Սպարտացիք, ազգ զօրական՝ քան ժողովուրդ, ոչ ինչ արուեստից և գիտութեանց փոյթ կալան, և ոչ վաճառականութեան պարապեալք. և զերկիր իսկ ոչ գործէին, թողեալ զմշակութիւն 'ի ստրուկս իւրեանց յեղոտացիս. Ամենայն օրէնք նոցա և կարգ և դաստիարակութիւն, և բնաւ իսկ սահմանադրութիւն հասարակապետութեան նոցա էր 'ի կազմել արս պատերազմողս, զի յայն նեթ օրէնադիրն նոցա ուշ ունէր, յոր և քաջ յաջողեցաւ. Զօրական ընտիր քան զնոսա չեղև երբեք. կիրթք էին յաշխատութիւն, բրտացեալք 'ի հրահանգս մարտի, հլու 'ի հնազանդութիւն և 'ի զգուշութիւն կարգաց, լի անվեհեր արիութեամբ, տենչողք համբաւոյ քաջութեան, և որք 'ի վերայ փառաց և օգտի աշխարհին փոխանակէին զանձինս. Երկու ազգ էին սպարտացւոց զօրաց. կէսք բնիկ սպարտացիք՝ բնակեալք անդէն 'ի Սպարտա, և կէսք լակեդեմոնացիք՝ շուրջ բնակեալք յաւանս. Առաջինքն էին ընտիրք աշխարհին, որոց անկ էր ամ աւագութիւն, գրեթէ ամենեքին իսկ կարողք 'ի զօրավարել. Որպիսի ոք Քսանթիպպոսն էր, որ 'ի թիկունս օգնականութեան կարքեդոնացւոց առաքեալ՝ արար զքանչելի փոփոխումն 'ի զօրս նոցա. և որպիսի ոք Գիլիպպոսն էր, որ զՍիրակուսա ապրեցոյց. և որպիսիք ոմանք երեքարիւրքն էին՝ Լեոնիդայ զօրքն, որք 'ի Թերմոպիլէ թումբ կացին յերկար ընդդէմ յորձանաց զօրացն Պարսից. Նաև էին յայնժամ ընիկ սպարտացիք ոգիք իբրև ութ հազար, Հրոդ. Է. 234. կամ սուղ ինչ աւելի։

Հասակ զինուորութե̃ նոցա էր յերեսնամենից մինչև ցվաթսուն, մանկագոյնք և ծերք քան զնոսա կային 'ի պահ քաղաքին. իսկ 'ի կարևոր վտանգս և ստրուկք զինուորէին։ 'Ի Ճակատամարտին Պղատեայ՝ էին զօրք սպարտացիք բիւր մի, հինգ հազար ընիկք, և լակեդեմոնացիք նոյնչափ։ Ընդ մի մի 'ի սպարտացւոց՝ էին եօթն եղօտացիք, միահամուռ՝ երեսուն և հինգ հազար, որք էին մեկնակազէնք։ Իսկ հեծեալք սակաւք էին յոյժ սպարտացւոց, և զօրք նաւամարտիկք օտար 'ի նոցանէ յայնժամ. զի անազան ապա ընդդէմ Լիկուրգեայ կարգացն ձեռն արկին 'ի ծովամարտ, և չեղեն իսկ նոցա բազմագունդ տորմիղք նաւաց։

Աթէնք ընդարձակագոյն յոյժ էր և բազմամարդ քան զՍպարտա. զի յաւուրս Դեմետրի փաղերացւոյ թիւ համարոյ ընիկ քաղաքայնոցն էր երկու բիւր, և եկացն յարելոյ 'ի նոսա՝ բի՛ւր մի, և չորք բիւրք ստրկաց։ Մանկտին աթենացի անդէն յութևտասնամենի 'ի մտանելն 'ի գիր համարոյ, ուխտ և դաշինս կռէին յանդիման ամենեցուն՝ սպասաւորել աշխարհին, և յա̃մ դէպս ա̃մ զօրութ̃ պատերազմել 'ի վերայ հայրենեաց մինչև ցվաթսուն ամ տիոցն։ 'Ի տասն ցեղից պետութե̃ն, մի մի գունդ զօրաժողով լինէին ըստ պիտոյից պատերազմի ընդ ծով կամ ընդ ցամաք. զի յանցանել ժամանակաց զօրացան յոյժ աթենացիք ընդ ծով։ Զօրք աթենացւոց 'ի սկզբան պեղոպոնեսեան մարտին՝ էին ըստ Թուկիդիդեայ երեքտասան հազար հետևակ սպառազէն, հազար վեց հարիւր աղեղնաւորք, և հեծեալք գրեթէ նոյնչափ. միահամուռ արք իբրև վեշտասան հազար. և նոյնչափ պահակապանք քաղաքին և միջնաբերդին և նաւահանգըստիցն, 'ի վայր և 'ի վեր քան զհասակն զինուորութե̃, և եկք բնակեալք յԱթէնս։ Իսկ նաւք պատերազմիկք էին նոցա յայնժամ երեք հարիւր. զորոց 'ի յաջորդում ասասցուք որ ինչ կարգաւորութի̃ էր 'ի նոսա։ Բ. 110.

Արդ զօրքս այս սպարտացւոց և աթենացւոց, թէպէտ և սակաւք էին թուով, այլ լի քաջութե̃, կիրթք 'ի պատերազմ, և անվեհերք անպարտելիք։ Զի ոչ խառն 'ի խուռն ժողովէին սրիկայք ոմանք թափառականք, անփոյթք զփառաց և զյաղթութե̃ մարտին, ոչ ինչ անտի օգուտ և ոչ 'ի պարտութե̃ն կրելով վնաս, որպէս վարձկանք մարտնչելով և խոտանաւ զկեանս վաճառելով, այլ էին ընտիրք յերկոցունց ազգացն գու պատերազմողաց 'ի վերայ երկրի․ զօրք՝ որոց զոգի 'ի բուռն եդեալ էր՝ 'ի յաղթել կամ 'ի մեռանել, որք հանապազ 'ի կռիւ և 'ի պատերազմ խրախուսէին՝ 'ի փառս ևեթ և յազատութի̄ հայրենեացն ուշ եդեալ, որք 'ի պատերազմի առաջի աչաց նկատէին զկանայս իւրեանց և զորդիս, և որոց կեանք 'ի զէնս և 'ի բազուկս իւրեանց հաստատեալ կային։ Այսպիսիք ժողովէին զօրք յԵլլադա․ ոչ ոք 'ի նոսա դասալիք, և ոչ պատուհաս այնպիսումն օրէնք սահմանէին․ զի ո՞վ ոք 'ի զօրականէն ինքնահալած մեկնէր 'ի տանէ իւրմէ և 'ի հայրենեացն։ Այսպիսիք էին և հռոմայեցիք, զորոց մնայ արդ ասել։

Առ նոսա բդեշխիցն անկ էր զօրաժողով լինել․ և քանզի բդեաշխք ամ յամէ փոփոխէին, ամի ամի լինէր զօրաժողով։ Յեօթնևտասնամենի մտանէին 'ի զինուորութի̄[1], և զինուորէին քաղաքացիք միայն յեօթնևտասնամենից և 'ի վեր․ բայց յանակնկալ դէպս, և 'ի կարևոր վտանգս, զկրտսերագոյնսն ևս զինուորէին։ Եղև զի և զստրուկս զինուորեցին, այլ նախ զմի մի 'ի նոցանէ հարցեալ՝ թէ զինուորիցի՞ն կամակար․ զի կասկածելի թուէր նոցա բռնի կամ մարթանօք կուտել զօրս։ Իր զի և զյանցաւորս և զպարտապանս բանտարգելս զինուորէին, այլ դուն ուրեք։

Արդ թէպէտ և զօրք հռոմայեցւոց էին քաղաքացիքն, բայց զաղքատս ոչ զինուորէին՝ այլ որոց ինչք առհաւատչեայք էին վրէժխնդրութե̄ նոցա 'ի վերայ հայրենեաց։ Առաւելք 'ի քաղաքայնոց անտի բնակէին 'ի դաշտս առ 'ի խնամս անդոց իւրեանց, և առ 'ի վարել անձամբ զիւրաքանչիւր կալուածս։ Եւ բնակչաց իսկ քաղաքին էին վիճակք անդոց 'ի մշակութի̄․ որով ա̃մ մանկտին սովոր էր 'ի խիստ վաստակս[2], 'ի տոկ արեգական և անձ-

---

[1] Ըստ օրինաց զօրաժողովոյ ըղհամբակս եօթնևտասն ամաց, և զոմանս 'ի կրտսերագունիցն գրեն։ Այլ առ 'ի չգոյէ աղքատաց, և առ հարկի, այլ ազգ արարին զօրաժողով. ութ հազար առոյգ մանկտի 'ի ստրկաց, հարցեալ զնոսա նախ՝ թէ կամիցի՞ն զինուորել, արծաթագինս հրապարակաւ զինեցին։ Լիւ․ իբ․ ծէ։

[2] Այլ հողագործ զօրականին զաւակն արի,
Կիրթ սաբինեան բրչաւ 'ի ձևել ըզկոշտ երկրի․
Եւ առ 'ի սպաս խիստ մօրն հատեալ կրել մայրի։
Ոհրատ․ տաղերգ․ Գ․ Զ․ 37։

Ոչ ինչ երկրոյիմ զի քաջագոյնք էն 'ի զէն երկրագործք բայօթեացք․ սնեալք յաշխատութե̄, տևողք 'ի տապ արեգական, անկարօտք հարեաց և սառամանեաց, գետնախշտի լինել և բացօթեայ 'ի դաշտս, և կեալ համեստ և ժուժկալ սակաւապէտ կենօք ։ Օտար էին 'ի նոցանէ գրգանք, և մարմինք նոցա բրտացեալ առ ամ՟ աշխատութ՟ն, և ըստ մշակական կենացն՝ կիրթք 'ի վարել զերկաթ, 'ի խրամ հատանել, և 'ի կրել բեռինս ծանունս ։ Քաջք միապէս 'ի մարտ և յերկրագործութ՟ն՝ զզէնսն միայն և զգործիս փոխէին 'ի զինուորելն ։ Մանկտին՝ որ կայր 'ի քաղաքին՝ ոչ ինչ քան զայլսն փափկասուն էր ․ հրահանգք հանապազորդք 'ի դաշտ Մարսին, քաջապինդ արշաւ և ձիընթացք, և առ քրտանցն լուացումն լող ընդ Տիբեր, դիպողագոյն նախակրթութի՟ւք էին 'ի պատերազմ․ և այնպիսում զօրականին հարկ էր անվեհեր լինել, զի որչափ ոք 'ի գրգանաց հեռի է՝ աներկեղագոյն է 'ի մահուանէ ։

Նախ քան զզօրաժողովն սահմանէին բդեաշխք զօրն հասակին զինուորութե՟ ժողովելոյ ։ Եւ 'ի հասանել աւուրն՝ ամենեքին 'ի մի վայր գային 'ի Կապիտոլին կամ յարիսական դաշտին ․ և հազարապետք զօրաց վիճակս արկանէին ցեղից մի ըստ միոջէ, և 'ի վիճակելոյն ընտրէին չորս չորս այր ըստ իւրաքանչիւր կարգի՝ հաւասարս հասակաւ և տիովք և զօրութե՟ ․ մինչև լնուլ թիւ քառից լեգէոնացն ։ Եւ յետ զօրաժողովոյն երդնուին ընտրեալքն առաջի բդեշխիցն կամ հազարապետաց՝ կազմել ըստ հրամանի բդեշխին, և մի անհրաման զզէնս 'ի բաց դնել, հնազանդել սպայից, և կատարել ըստ կարի զհրամանս նոցա, մի երբէք ընկրկել կամ 'ի փախուստ դառնալ, և մի դասալիք լինել ։ Եւ ոչ վէր 'ի վերոյ որպէս թարմատար արարողութի՟ յումպէտս գործեր այս, այլ բազում զգօնութե՟ որպէս զպաշտամունս կրօնից, հանդերձ ահագին նզովիւք՝ որ յոյժ ազդեցողք էին, և որպէս կարեւոր և անհրաժեշտ պարտ՝ առանց որոյ չէր օրէն զինուորաց տալ պատերազմ ընդ թշնամիս ։ Զայս կամ հանգոյն սմին երդումն մեծաւ իմաստութե՟ խնդրէին և Յոյնք և Հռոմայեցիք 'ի զօրացն ․ զի իւրաքանչիւր ոք չիշխէ կենաց ուրուք, այլ թագաւորն կամ պետութի՟ն՝

վանւոյ, անփորձք բաղանեաց, արգէտք գրգանաց, պարզամիտք, սակաւապէտք․ բրտացեալք 'ի տօկ ամ՟ վաստակոց, սովորեալք անդաստին 'ի գեղջէ կրել զերկաթ, խրամ հատանել և բառնալ բեռինս ։ . . . Նոքին և մարտիկք և երկրագործք էին, զաղգ զինուցն ևեթ փոփոխեալ։ Մանկտին զքիրտն արշաւանացն և զհողագործ աշխատութ՟ն լուանայր 'ի լող Տիբերի ։ Զգիտեմ զինչ աներկեղագոյն է 'ի մահուանէ՝ որ չյաճախէն 'ի գըրգանս ։ Վէգէտ․ հրահանգք զօրք․ ա․ գ՟ ։

յո̃յ առեալ զիշխանութիւն՝ տայ զէն 'ի ձեռս նոցա, և նոքա երդմամբն հաղորդ լեալ այնմ իշխանութեան՝ ձգէին սուր 'ի թշնամիս. և առանց այնր պարտապանք էին ա̃մ արեանցն հեղլոյ, և էին մարդասպանք՝ որչափ զոք սպանանէին 'ի թշնամեաց: 'Ի մակեդոնական պատերազմին ընդդէմ Պերսեայ, յարձակել բդեշխին [1] զմի 'ի լեգէոնացն՝ յորում էր և Կատոն համարակալ պատանի սպայ, նորա ցանկացեալ քաջ անուն ժառանգել՝ ոչ մեկնեցաւ ընդ լեգէոնին, այլ անդէն 'ի բանակին կայր: Կատոն որոյ գրեաց հայր նորա աղաչանս առ բդեաշխն, զի եթէ ներէր որդւոյ իւրում կալ մնալ ընդ զօրսն՝ միւսանգամ երդմնի առնել զնա. քանզի յառաջնումն երդմանէն լուծեալ, ոչ ևս կարէր մարտնչել ընդ թշնամիս: Նոյնպէս և որդւոյ իւրում գրեաց, և ազդ արար մի մարտնչել՝ մինչև նորոգեալ զերդումն: Հանգոյն այսմ և մեծն Կիւրոս գովեաց յոյժ զմի 'ի սպայիցն, որ 'ի կշռել զհարուածն 'ի թշնամին՝ ընդ կոչ յետադարձի փողոյն ամփոփեաց զձեռն իւր, իբր ոչ ևս ունելով իշխանութիւն հարկանելոյ: Արդ զի՞նչ ոչ գործիցեն սպայք և զօրք այսպիսիք, հպատակք և ակնածուք կամաց զօրավարին և զինուորական օրինաց:

Կիկ. պաշտա-մոյ. ա. լէ:

Քսէն. դաստ. Կիւր.

Իսկ յետ ուխտիցն՝ հազարապետք զօրացն հռոմայեցւոց ժամ և տեղի սահմանէին լեգէոնացն գալ 'ի մի վայր ժողովել: Իսկ 'ի համախմբել նոցա 'ի սահմանեալ աւուրն՝ զատանէին կրտսերագոյնք և անինչք 'ի մեկնակազէնս, միջահասակք յաշտենաւորս, քաջք և կորովիք 'ի պետս, և երիցագոյնք յերրորդական զօրս: Բդեշխիցն երկաքանչիւր էին կրկին լեգէոնք, այլ թիւ զօրաց լեգէոնացն ոչ միշտ նոյն էր. զի 'ի սկզբան էին երեք հազար այր, և ապա տակաւ աճեցին 'ի չորեքհազար, 'ի հինգ հազար, 'ի վեց հազար, և աւելի ևս: Այլ ըստ յաճախ սովորութեան՝ էին չորեքհազար երկերիւր հետևակք, և երեքարիւր հեծեալ, որպէս էր յաւուրս Պողիբեայ, առ որով զկայ առնումք:

Լեգէոնն բաժանէր յերիս գունդս՝ որք կոչէին աշտենաւորք, պետք և երրորդականք. առաջնոց երկեակ գընդացն էին հազար երկերիւր այր, իսկ երրորդին վեց հարիւր: Աշտենաւորք կային 'ի ճակատուն, պետք յերկրորդում կարգի, երրորդականք յերրորդումն՝ որք էին

---

[1] Մանուցիոս համարի զՊօղոս Էմ. կերանի ոմանք Պոպիլիոս կամ Պոմպիլիոս, Բեգետ և օրինակ գրոցն Կի- լիոս:

Երիցագոյնք հասակաւ պատերազմափորձք և կորովագոյնք, առ որս ծանունքն ևեթ կարևոր վտանգք հասանէին. ուստի յառակս եղև առ Լատինս՝ ասել ցծանունց վտանգաց, թէ իրք յերրորդականս հասին։ Այլ մի մի յերրեակ գնդացն բաժանէր 'ի տասն վաշտս, հարիւրևքսան այր առ վաշտ աշտէնաւորացն և պետաց. իսկ առ երրորդականացն՝ վաթսուն։ Այլ վաշտուց իւրաքանչիւր էին կրկին հարիւրեակք. հարիւրեակք 'ի սկզբանն առ Հռոմուլեաւ՝ 'ի հարիւրոց արանց կազմէին, ուստի և զանունն կալան. այլ ապա նուազեցին 'ի վաթսուն այր հարիւրեակք աշտէնաւորացն և պետաց, և յերեսուն երրորդականացն. և զօրագլուխք նոցա կոչէին հարիւրապետք։ Զկարգաց սոցա ասասցուք ընդ հուպ։

Բայց յերից գնդաց աստի էին և մեկնակազէն զօրք 'ի լեգէոնս իւրաքանչիւր, պէսպէս յորջորջեալք, որպէս Թոնընկեցքն և Կազմիկք, և 'ի յետին ժամանակս Աշտիկքն. և էին միահամուռ հազար երկերիւր այր, ոչ 'ի մի գունդ կազմեալ, այլ սփիւռ յերիս գունդսն՝ ուր և պիտոյ էր. և զէնք էին նոցա՝ սուսեր, աշտեայ, և վահանակ. և ընտրէին սոքա յառոյգ մանկտւոյ աջողակագոյնք։

Յաւուրց Յուլիոսի Կեսարու ոչ ևս երից կարգացս յիշատակք լինին՝ աշտէնաւորացն և պետաց և երրորդականաց, թէպէտ և յերրեակ կարգս յօրինէր ճակատն։ 'Ի տասն գումարտակս բաժանէր յայնժամ լեգէոնն, և գումարտակք իւրաքանչիւր էին փոքրիկ լեգէոնք. էին 'ի մի մի 'ի նոցանէ հարիւր և քսան աշտէնաւորք, և պետք նոյնչափ, վաթսուն երրորդականք, և հարիւրևքսան մեկնակազէնք. միահամուռ՝ չորեքարիւր ևքսան, որ է ճիշդ տասներորդ մասն լեգէոնին՝ յորում էին չորեքհազար երկերիւր հետևակք։

Այրուձի սակաւ էր հռոմայեցւոց, երեքարիւր հեծեալ առ չորեքհազար և առ աւելի ևս հետևակս. և բաժանէր 'ի տասն ջոկս, երեսուն հեծեալ առ ջոկ մի։ Հեծեալք 'ի փարթամագունից քաղաքայնոց ընտրէին. և յորոշմունս ժողովրդեանն Հռոմայ 'ի հարիւրեակս, զորս Սերուիոս Տուղղիոս որոշեաց, կային նոքա յութևտասն յաւագագոյն հարիւրեակս։ Սոքա են որք ապա 'ի վէպս կոչին ասպետք հռոմայեցիք, որոշեալք յայլ իմն կարգ միջին ընդ ծերակոյտն և ընդ ժողովուրդն. և էր նոցա ձի և դարման ձիոյն յաշխարհէն։ Մինչև ցպաշարումն Վէյաց՝ սոքա միայն էին հեծեալք 'ի զօրս հռո-

Լիւ. ա. խգ.
ե. է։

մայեցւոց. յայնժամ որոց էին մեծութի̃ւք կարեւորք հեծելազին՝ այլ ոչ էր նոցա երիվար յաշխարհէն՝ որով չմարթէր նոցա խառնել յայրուձին կամ ընդ ասպետս, յառաջամատոյց եղեն կազմել իւրեանց երիվար, և յաւելուլ 'ի նոսա. և հրաման եղև նոցա: Եւ յայնմհետէ եղեն կրկին կարգք ասպետաց 'ի հռոմէական բանակին. ընտիր ասպետքն՝ որոց էր ձիանն յաշխարհէն, և Թարմատարք՝ որ ինքեանք ինքեանց կազմէին երիվարս, որոց ոչ պատիւ և ոչ ազատութի̃ւք այլոց ասպետացն էին [1]. Բայց դարման ձիոյ 'ի գանձուց հասարակաց եկաց մնաց նշանակ ասպետացն հռոմայեցւոց. և 'ի կամել համարակալաց ընկենուլ զոք 'ի կարգէ ասպետաց, 'ի բաց առնուլին զձին:

Բաց 'ի քաղաքայնոց՝ յորոց կազմէին լեգէոնք, էին 'ի հռոմէական բանակին և նիզակակից զօրք յազգաց Իտալիոյ նուաճելոյ, զորս ինքնօրէն ազիկամի թողեալ՝ բայց միայն զօրապահանջ կացուցեալ էին. և տային նոքա հետևակս հաւասար հետևակաց հռոմայեցւոց, և հեծեալս կրկնապատիկ: 'Ի նիզակակից զօրաց կայտառք և կորովիք՝ ընտրեալք 'ի հեծելոց և 'ի հետևակաց՝ մերձ կային բդեշխին, որք տարակարգքն կոչէին կամ ինքնակամք, երիր մասն այրուձիոյն և հինգերիր հետևակացն. իսկ այլք յաջ և յահեակ բաժանէին, 'ի միջին կալով սովորաբար հռոմայեցւոց:

Արդ յայսմ ա̃մէ յայտ է, զի բանակն հռոմէական կազմէր 'ի ընտիր և 'ի նիզակակից զօրաց. այլ յամին վեցերորդի երկրորդի կարքեդոնական պատերազմին՝ զինուորեցին վարձկանս հռոմայեցիք, որոց ընդ ա̃մ ժամանակս հասարակապետութե̃ ոչ երբեք կամ դուն ուրեք զօրս 'ի վարձու կալեալ էր [2]: Եւ վարձեալքն էին Կելտիբերք, յորոց մեծ կէս բանակին Սկիպիոնի կազմէր 'ի Սպանիա: Վրիպակ մեծ՝ որ եղև նմա 'ի մահ, և փոքր մի ևս՝ և կորուսանէր Հռոմ զՍպանիա, և զինքնակալութի̃ն իսկ: Վասն որոյ իմաստութ̃բ ազդ առնէ Լիւիոս [3] զօրավարաց հռոմայեցւոց խրատել օրինակաւն, զի մի՛ քան զբնիկ զօրսն յաւելցեն զայլազգիս ։ Ապստամբութե̃ այլազգի զօրականին բազում անգամ Կարքեդոն յափն կորստեան ժամանեաց, որպէս յայտ է․ զի գրեթէ ա̃մ զօրք նորա վարձկանք էին, որ էր սխալ մեծ զինուորական օրինաց ։ Այս խառնուրդ այլազգի խուժադուժ զօրաց, 'ի բազմանալ նոցա քան զբնիկ զօրականն, եղև 'ի սպառսպուռ կործանումն հռոմէական ինքնակալութեան յարևմուտս ։

---

[1] Յայս որոշման յայտնապէս ակնարկէ Մագոն 'ի խօսելն յատենի աւագանւոյն կարքեդոնացւոց զոսկի մատանեացն, զի ասէ. Ոչ ոք այլ՝ բայց միայն ասպետք, և 'ի նոցանէ աւագք կրեն զօրէն պատուոյն: Լիւ. իգ. ժբ: Արդ այս աւագ ասպետք են ընտիրն, որոց երիվարք էին յաշխարհէն:

[2] Արժանի է այս յիշատակի. զի հռոմայեցիք՝ որոց ոչ երբեք զօրս 'ի վարձու կալեալ էր՝ յայնժամ զԿելտիբերս զինուորեցին: Լիւ. իդ. խթ:

[3] Զայս առաջի աչաց ունելով 'ի խրատ՝ զգոյշ լիցին զօրավարք հռոմայեցւոց, մի յօգնութի̃ օտա-

Հարկ է արդ և զկարգաց հարիւրապետացն ասել ։ Վաշտուց իւրաքանչիւր էին կրկին հարիւրեակք, որպէս ասացաք, վասն որոյ և կրկին հարիւրապետք․ և որ առաջնումն հարիւրեկի առաջնոյ վաշտուն երրորդականացն իշխէր՝ որ սուինաւորքն ևս կոչէին՝ նախապատիւ քան զա̃մ հարիւրապետսն էր, և մտանէր 'ի խորհուրդ ընդ բդեաշխն և ընդ աւագ սպայս ։ Նա կոչէր առաջին սուինապետ աւագ, յորոշումն 'ի կրտսերոյն՝ որ երկրորդումն հարիւրեկի այնր վաշտուն իշխէր ։ Նոյնպէս և այլոց հարիւրեկացն․ զի հարիւրապետն՝ որ իշխէր հարիւրեկի երկրորդի վաշտուն երրորդականացն՝ կոչէր երկրորդ սուինապետ, նոյնպէս և այլոցն մինչև ցտասներորդն՝ որ կոչէր տասներորդ սուինապետ ։ Նոյն կարգ էր և աշտէնաւորացն և պետաց․ զի սոցա առաջին հարիւրապետն կոչէր առաջին պետ, երկրորդին՝ երկրորդ պետ, նոյնպէս և այլոցն մինչև ցտասներորդն ։ Հանգոյն սոցա և աշտէնաւորացն՝ առաջին և երկրորդ աշտէնաւոր, և այլն ։

Հարիւրապետքս այս ոչ ըստ երիցութեան ևեթ՝ այլ ըստ քաջութե̃ ամբառնային 'ի ստորին կարգէ 'ի վեր ։ Այս զանազանութի̃ աստիճանաց և կարգաց պատուոյ՝ յորս քաջքն և վաստակաւորք վկայեալք 'ի վեր մատչէին՝ եռանդն անհնարին աճէր զօրացն, և զամենեսին 'ի ձիգն և 'ի կարգի ունէր․ զի և սինլքոր զօրականին մարթէր լինել հարիւրապետ, և ընդ աստիճանս հարիւրապետութե̃ մինչև 'ի բարձրագոյն աւագութի̃ս հասանել ։ Այս ակնկալութի̃ և յոյս սփոփէր զնոսա 'ի խիստ վաստակսն և խրախուսէր, կարճէր զխալանս և զվհատութի̃, և արիագոյնս պատրաստէր զնոսա 'ի մարտ․ և այսպէս զօրքն լինէին անպարտելի ։ Յոյժ վրէժխնդիրք էին սպայք 'ի պահել զկարգս աստիճանացս այսոցիկ ա-

---

րաց ապաստան լինել՝ այլ առաւել զիւրեանցն կողմ և զբնիկ զօրութիւն կալցին 'ի բանակի ։ Լիւ. ին. ձ ։

ւորութե՟. առ այս ածից օրինակ իմն ոչ ինչ անպատկանաւոր ճառիցս զօրաժողովս, և որ յաճախէ փառս հռոմէական զօրականին՝ թէ զիարդ զգօնութի՟ և իմաստութի՟ փառաւորէին ։

Լիւ. խէ. ւ. ււ. 'Ի ժամանակի՝ յորում խորհէին հռոմայեցիք խաղալ պատերազմաւ ընդդէմ Պերսեայ, որ վերջին թագաւոր եկաց մակեդոնացւոց, ընդ բազում պատրաստութի՟ յաղթութե՟՝ պատուէր ետ ծերակոյտն բդեշխին, որում յանձն էր գործ պատերազմին, ընտրել յառաջնոց հարիւրապետաց և 'ի զօրականաց՝ զօրս և կամձրն, 'ի յինամենից և 'ի խոնարհ ։ Յայնժամ քսանևերեք հարիւրապետք՝ յառաջնոց սունապետաց՝ յայտ արարին հրաժարել 'ի պատերազմէ, եթէ ոչ նոյն կարգ տացի նոցա՝ յոր յառաջին պատերազմունսն կացեալ էին ։ Դատաստանն ածաւ յատեան ժողովրդեան. և Պոպիլիոս՝ որ զերկեամ մի յառաջ բդեշխ կացեալ էր՝ խօսեցաւ զաղերս հարիւրապետացն, և բդեշխն զիւրն ։ Իսկ ապա մի 'ի հարիւրապետացն, որոց առ ժողովուրդն բողոքեալ էր, հրաման առեալ՝ խօսեցաւ և ասէ. Արք, ես եմ Լիգուստինոս, կրուստումինեան 'ի ցեղէ, սաբինացի. հայր իմ եթող ինձ արտավարի միոյ երկիր, և հիւղ փոքրիկ՝ յոր ծնեալ և սնեալ և արդ բնակեմ ։ Իսկ 'ի հասնել իմում յարբունս, զդուստր եղբօր իւրոյ ետ ինձ կնութե՟ [1]. որ ոչ ինչ երբէր օժիտս՝ բայց միայն ազատութի՟, պարկեշտութի՟, և բեղնաւորութի՟՝ մեծատանց իսկ բաւական ։ Են ինձ որդիք վեց, և դստերք երկու հարսնացեալք. 'ի վեցեցունց որդւոց իմոց չորք զայրական զգեստն զպատմուճան, երկուք դեռ զմանկականն կրեն ։ Զինուորեցայ առ Սուլպիկեաւ և առ Աւրելեաւ բդեշխիւ, և զերկեամ մի 'ի խառն զօրականին կացի 'ի մակեդոնական պատերազմին ընդդէմ Փիլիպպեայ. յամին երրորդի Փլամինինոս փոխանակ քաջութե՟ իմոյ կացոյց զիս զօրապետ հարիւրեկի յետնոյ վաշտուն աշտէնաւորաց ։ Ապա ինքնակամ 'ի Սպանիա զինուորեցայ Կատոնի. և զօրավարն արդարակորով արժան համարեցաւ կացուցանել զիս 'ի վերայ առաջնոյ վաշտուն աշտէնաւորաց ։ Իսկ 'ի պատերազմին ընդդէմ ետողացւոց և Անտիոքոսի զնոյն կարգ 'ի վաշտու պետացն կալայ. և յայլ բազում պատերազմունս մտեալ, 'ի սակաւ ամ՝

---

[1] Հայր իմ զդուստր եղբօր իւրոյ ետ ինձ կնութե՟. որ ոչ ինչ երբէր ընդ իւր, բայց միայն ազատութի՟, պատկառանս, և բեղնաւորութի՟՝ ճոխիցն իսկ բաւական ։

չորիցս սուինապետ կացի, երեսուն և չորիցս առի մրցանակ 'ի զօրավարաց, և պսակս վեց քաղաքականս [1], զքսան և երկու ամ եղէ 'ի պատերազմի, և եմ արդ յիսնամեայ : Եթէ չև էին լցեալ ամք զինուորութ՟ն իմոյ, և չև ծերութիւն արձակէր զիս 'ի բաց, փոխանակեալ ընդ իմ զորդիս չորս՝ ազատ լինէի 'ի հարկէ ծառայութեան : Զայսուիկ աղերս մատուցանեմ. այլ ես ցորչափ զօրաժողովք կարող վարկանիցին զիս 'ի զէն, ոչ հրաժարեցայց 'ի զինուորելոյ : Կացուսցեն զիս հազարապետք յոր կարգ և հաճոյ իցէ, այս նոցա անկ է. իսկ ինձ՝ մի ումեք ստորև կալ քաջութ՟բ՝ որպէս մինչև ցայժմ ոչ կացի, վկայեն ինձ զօրավարք՝ ընդ որովք զինուորեցայ, և ա՟մ զինուորակիցք իմ : Իսկ ձեզ, ո՛ հարիւրապետք, թէպէտ և բողոք ունիցիք, այլ որպէս 'ի մանկութ՟է ոչ ինչ հակառակ իշխանութեան աւագանւոյն և ծերակուտին գործեցէք՝ արժան է և 'ի դմին հասակիդ հնազանդել ծերակուտին և բդեշխից, և պատուական համարել զա՟մ կարգ՝ յորում կարէք սպասաւորել հայրենեաց :

Իսկ իբրև լռեաց նա 'ի խօսելոյ, գովեալ զնա բդեշխին յանդիման ժողովրդեան՝ եւ յատենէն, և ած զնա 'ի ծերակոյտն. և մատուցանէ նմա շնորհակալութի յայտնապէս 'ի մեծափառ ժողովոյն : Իսկ հազարապետք զօրացն կացուցին զնա, 'ի պատիւ և 'ի վարձ արիական համարձակութ՟ն և նախանձուն, աւագ սուինապետ յառաջնումն լէգէոնի : Իսկ այլք 'ի հարիւրապետաց դադարեալ 'ի բողոքելոյ, ոչ ևս հրաժարեցին 'ի զինուորութ՟է : Ոչ ինչ տպաւորագոյն քան զայսպիսի գործս զհռոմէական բարուցն նկարագիր 'ի դէմս ածէ. ո՛վ իմաստութ՟ն, արդարութ՟ն, ազնուականութ՟ն և մեծախոհութ՟ն զօրականին, որ առանց ամօթոյ խոստովանի զաղքատութ՟ի, և զպանծալի վաստակս առանց սնափառութեան : Զյամառի տարապարտ յանպատկանաւորն փառասիրութ՟ի. ցածութ՟բ զիրաւունսն ցուցեալ, հրաժարէ յայնմանէ. ուսուցանէ ամենեցուն՝ որ ապա գալոց են ազգք՝ մի անսաստել հայրենեաց, փոխանակել զանձին օգուտ ընդ աշխարհին. և յորդորեալ հաւանեցուցանէ 'ի նոյն զաղերսակիցս իւր ընկերս : Քանի՛ հզօր է օրինակ. է ուրեք՝ զի մի ոք լաւ զամենեսեան ածէ յուղղութ՟ի :

---

[1] Քաղաքական կոչէր պսակն այն՝ որ 'ի Հռոմ կեցուցանելոյ զոք 'ի քաղաքացւոց պարգևէր :

ՅՕԴՈՒԱԾ Ժ.

Յաղագս կազմութեանց պատերազմի։

Ասացուք արդ վասն պաշարոյ և թոշակի զօրականին, և զինուց, և այլոց կազմութեանց՝ զորս անկ է պատրաստել զօրավարի նախ քան զելս մարտին։

Ա. ՎԱՍՆ ՊԱՇԱՐՈՑ

Կարգ պատրաստութեան պաշարոյ հռոմայեցւոց քան զՅունացն ծանօթագոյն է. և գանձապետին անկ էր այս հոգ։ Զափ ցորենոյն՝ զոր տային յաւուրեայ ռոճիկ զինուորի՝ գրեթէ նոյն էր առ հռոմայեցիս և առ Յոյնս, կապիճ մի կամ ութերորդ մասն հռոմէական գրուոյ, և էր վեց գրիւն կեղթ մի։ Նոյնչափ էր և առօրեայ ռոճիկ ստրկաց։ Ապա ռոճիկ ամսօրեայ հետևակ զինուորի հռոմայեցւոյ՝ էին չորք գրիւք ցորենոյ, կամ երեսուն և երկու կապիճք. աւուրն կապիճ մի, սուղ ինչ աւելի. նոյն և հետևակ զինուորի նիզակակից զօրացն։ Սօէղ. 'ի Պօղ։

Հեծելազին հռոմայեցւոյ ռոճիկ առօրեայ էր կրկին կեղթ ցորենոյ, կամ երկոտասան գրիւ. զի էին նմա սպասաւորք երկու, որոց լինէին ռոճիկք 'ի միասին իննսուն և վեց կապիճ, սուղ ինչ աւելի քան զկապիճ մի աւուրն պարէն առ այր։ Էին նմա երիվարք երկու, վասն իւր և վասն կարաւոյն և պաշարոյ. և նոցա դարման ամսօրեայ էր եօթն կեղթ գարւոյ, կամ քառասուն և երկու գրիւ. աւուր պարէն երկոցունց ձիոց՝ գրիւ մի և կապիճ, սուղ ինչ աւելի։ Բայց հարկ էր հեծելոց ունել եկամուտ վասն անհրաժեշտ ծախուց 'ի ժամանակի պատերազմին. վասն որոյ դէպ լինէր, զի և քաղաքացիք ոմանք՝ պատրիկք 'ի տոհմէ՝ ընդ հետևակս զինուորէին առ չքաւորութեան[1]։ Իսկ հեծելոց նիզակակցաց ռոճիկ ամսական՝ էր կեղթ մի և երիր մասն, որ է ութ գրիւ ցորենոյ. զի էին նոցա իւրաքանչիւր երիվար մի, և սպասաւոր մի. և ձիոյն դարման, հինգ կեղթ գարւոյ՝ որ է երեսուն գրիւ, աւուրն գրիւ մի։ Չափ ցորենոյ 'ի հռոդսպայիցն յաւելուր ընդ թոշակի նոցա, զորմէ ստորև ասասցուք։ Իր՝ զի և կրկին տային զռոճիկ զօրականին 'ի պատիւ և 'ի մրցանակ քաջութեան, որպէս բազում ուրեք վկայէ Լիւիոս [1]։

---

[1] Զհեծելագնդին զօրապետէն ասէ զՏարկուիտեայ, որ պատրիկն էր յազգէ, և ընդ հետևակս առ չքաւորութեան զինուորեալ. այլ 'ի մարտի քան զամ մանկտին հռոմայեցի գեր 'ի վերոյ համարէր։ Լիւ. Գ. ԻԷ։

Զպաշար ցորենոյ, զոր զանձապետացն անկ էր պատրաստել՝ որպէս ասացաք, բառնային 'ի նաւս կամ 'ի սայլս և կամ 'ի գրաստս, բայց զառժամանակեայ զբաժինն իւրաքանչիւր ոք 'ի հետևակաց յուս իւր կրէր, որով նուազէր յոյժ կարասին։ Ամսօրեայ ռոճիկ զինուորի, որ էին չորք գրիւք ցորենոյ, էր բեռն ծանր. թող զայլ ամենայն կարասին՝ զոր կրէին։ Արդ էր զի բառնային [2] զօրքն չորս գրիւս, այլ դուն ուրեք արդեօք 'ի պնդագոյն չու բանակին, կամ յարշաւել ուրեք փութանակի յերկիր թշնամւոյ. իսկ սովորաբար երկոտասան կամ հնգետասան, կամ թէ աւելի՝ քան աւուրց ցորեան թուի թէ բառնային, և այն օր ըստ օրէ նուազէր առօրեայ պարէնիցն ճաշակմամբ։

Այլ ընդէր ցորեան տային զօրականին պաշար, և ոչ նկանակս։ Թերևս այս սովորութիւն 'ի քաղաքէն անց 'ի բանակն. զի 'ի քաղաքի բաշխէին հասարակաց ցորեան, և ոչ նկանակս. և դարձեալ՝ զի թեթևագոյն յոյժ էր ցորեան քան զհաց, զի ըստ Պլինեայ [3] գրիւ ցորենոյ յաւելու ճիշդ երիր մասամբ 'ի հաց պաշարոյ. որ յաւելուած մեծ է բեռին։ Իսկ ընդ հակառակն՝ անհնարին խոչ էր զօրաց պատրաստել զիւրաքանչիւր հաց, աղալ զցորեանն և եփել զայն. և թէպէտ ըստ վրանս 'ի միասին գործէին, սակայն և այն յոյժ դժուարին թուի։ Բայց առ ուղիղ դատելոյ՝ հարկ է փոխել մտօք 'ի վաղ ժամանակս, և 'ի տար աշխարհս, և յայլազգի սովորութիւնս։ Զի զօրականին հռոմայեցւոց աղալ զցորեանն և եփել զայն՝ հանապազօր առտնին սովորութիւն էր. և դարձեալ ազգի ազգի համադամս ալերբն իւրաքանչիւր ոք կազմէր, բաց 'ի սովորական հացէն՝ առնելով փոխինդ ախորժաճաշակ, և ընդ կաթին խառնեալ զայն, և համեմեալ նուշաւ զունդս․ կամ առժամայն բլիթ 'ի տապակի գործեր 'ի բոց հրոյ կամ 'ի գաղախի, որով հինք մեծարէին զհիւրս, և զոր ցարդ իսկ առնեն արևելեայք, և յոյժ ախորժելի է նոցա այն քան զգերմանկ հացն։

---

[1] Զօրացն՝ որ հասին յօգնութիւն՝ կրկին ցորեան անպակաս, և առ ժամն մեն մի եզն պարգևէր ռոճիկ։ Լիւ. է։ Սպանիացւոց կրկին զպարէնն հրամայէր։ Լիւ. խգ։

[2] Յաւուրն տասներորդի զօրավարութեն չու արարեալ խաղաց գնաց բդեաշխն, պատուէր տուեալ զօրականին բառնալ ընդ իւրեանս ամսօրեայ պարէն։ Լիւ. խգ. է։ Ակուիլացիք ասեն. Ոչ ինչ գիտեմք, և ոչ ինչ ունիմք ասել, բայց զի երեսնօրեայ պաշար ցորենոյ տուաւ զօրացն։ Լիւ. խգ. ե։

[3] Յետ ազգի ազգի հացս զինուորաց՝ երրորդ մասն յաւելու 'ի կշիռ ցորենոյն։ Պլին. ժը. է։

Լիւ․ Գ․ ԽԷ․ Բայց էր՝ զի և նկանակս բաշխէին զօրաց։ Կուինտիոս Կինկինատ իշխանապետ կացեալ 'ի պատերազմին ընդդէմ եկուացւոց, պատուէր ետ ամ՟ մանկտւոյն զինուորական հասակին ժողովել 'ի դաշտ Արիսի նախ քան ընդմտանել արևու՝ բարձեալ իւրաքանչիւր նկանակս պաշար հինգօրեայ, և ցիցս երկոտասան․ իսկ ծերոց քաղաքայնոց գործել նկանակս վասն մանկտւոյն՝ 'ի պատրաստել նոցա զզէնսն և զցիցս։ Աւել ևս 'ի ծովամարտի զպատրաստութիս զայս առնէին, զի դժուարագոյն էր 'ի նաւի եփել նկանակս քան 'ի ցամաքի[1]։ Իսկ յայլ ժամանակս զինուորացն ինքնին զիւրաքանչիւր ցորեան աղացեալ փոքրիկ երկանաւ՝ զոր ընդ իւրեանս ածէին, կամ 'ի քարի լոսեալ, առնէին նկանակս․ ոչ 'ի փռան եփելով, այլ 'ի հուր կամ 'ի գաղախի։ Ընդ ցորենոյ յաւելուին տալ զինուորաց և աղ, և ունդս, և պանիր, և ճարպ իսկ և միս խոզենի։

Պլուտարք․ 'ի Կատ․ 336։ Ըստ պարենի զօրացն էր և ըմպելին, զի հազիւ երբեք ըմպէին գինի։ Կատոն երէցն միշտ իսկ ըմպէր ջուր, իսկ 'ի տօթի խառնեալ քացախով, և այն էր հասարակաց ըմպելի։ Պարտ էր զօրաց ընդ իւրաքանչիւր կարասին բառնալ անօթով յըմպելւոյ անտի։ Ինքնակալն Պեսկեննիոս արգել զօրացն՝ մի՛ այլ ինչ ըմպել բաց յըմպելւոյ անտի․ Սպարտիանոս։ զի պատուէր ետ, ասէ մատենագիրն, մի՛ ումեք ըմպել գինի, այլ քացախով ամենեցուն շատանալ։ Նա՝ և ամենեցունն ասելով՝ Թուի անսահմանաբար և զսպայս ընդ խուռն զօրացն 'ի ներքս փակել։ Ըմպելիս այս արագ զպասքումն զովացուցանէր, և բժշկէր զդառնութիւն ջուրցն՝ զոր ըմպէին զճանապարհայն։ Եւ է քացախն զովացուցիչ, որպէս ասէ Իպոկրատ, նմին իրի Հատուբ․ Ճ․ 14։ և հնձողացն և մշակաց տային զայն յըմպելումն։ Արիս- Տնտես․ ա․ Ե։ տոտէլ զկարքեդոնացւոց ասէ, թէ 'ի ժամանակի պատերազմի հրաժարէին 'ի գինւոյ։

---

[1] Ծովամարտիցն զօրաց տասնօրեայ ածել պարէնս 'ի նաւ, նկանակ եփեալ։ Լիւ․ ԻԱ․ ԽԲ։ Երեսնօրեայ պաշարաւ նկանակօք իջին 'ի նաւս։ Լիւ․ ԻԴ․

Տեղեկագունիցն իրաց պատերազմի ապաքէն դժուարահաս քան զա՟մ ինչ 'ի վէպս նախնեաց թուի պատրաստութ՟ի պաշարոյն, և ոչ տարապարտ ։ Զի ոչ Յունաց և ոչ Հռոմայեցւոց յիշին ամբարանոցք խոտոյ և պարենից և ամբարապետք, և կամ ամբարք զհետ բանակին աղխաղխեալք ։ Անթիւ բազմութե՟ զօրացն Քսերքսեայ արքային Պարսից, միահամուռ ընդ անպիտան ամբոխին՝ զոր զհետն առեալ տանէր՝ աւելի քան զհինգ հարիւր բիւր, պիտոյ էին՝ ըստ համարոյ հաշուին Հերոդոտեայ՝ Է. ճձէ. Է. վաթսուն բիւր գրիւ ցորենոյ յաւօրեայ պարէն ։ Արդ ուստի՞ էր նմա այնչափ բազմութե՟ն հասուցանել ցորեան, այլովքն հանդերձ ։

Բայց յուշ լիցի, զի նոյն ինքն Հերոդոտ այլուր ասէ զՔսերքսեայ՝ թէ քառեամ պատրաստէր 'ի պատերազմն ։ Եւ տորմիղ նաւաց՝ լի ցորենով և այլովք պարէնիւք՝ զծովեզերբքն գայր զհետ բանակին, և հետ զհետէ այլք հասանէին՝ ընուլ զկարօտութ՟ի զօրացն ։ Եւ յՀելլեսպոնտեայ մինչև ցծովն Յունաց և ցՍաղամիս կարճ էր 'ի միջի ճանապարհն, և ոչ ինչ յերկարեաց արշաւանն քան զամ մի ։ Դարձեալ զի և նորանշան իմն էր և անտարացոյց արշաւանն այն, ուստի ոչ ինչ մարթի գուշակել ։ Իսկ 'ի պատերազմունս Յունաց ընդ միմեանս՝ սակաւաւոր էին զօրք և սակաւապէտք ուսեալք, և 'ի բնիկ աշխարհէն չհեռանային 'ի բաց, և գրեթէ միշտ անդր դառնային 'ի ձմերել ։ Որով ոչ ինչ դժուարին էր նոցա գտանել պարէնս առատութ՟բ, մանաւանդ աթենացւոց՝ որք ծովակալէին ։

Զնոյն է իմանալ և զՀռոմայեցւոց. զի դիւրագոյն յոյժ էր նոցա հայթայթել պարէն սզօրաց, քան յոգունց յազգաց եւրոպացւոց ։ Զի զօրք նոցա սակաւք էին, և այրուձի՝ եւս սակաւագոյն. լեգէոն չորեքարիւր հետևակաց՝ էր հաւասար վեցից կամ եօթանց այժմու գընդացս հարիւրաւորաց. և երեքարիւր հեծեալք էին նոցա, հաւասար մերոց կրկին գումարտակաց հեծելոց ։ Որով բանակ բդեշխին, միահամուռ հետևակք իբր վեշտասան հազար՝ ընդ բնիկ և ընդ նիզակակից, էր գրեթէ հաւասար քսանևհնգից այժմու հետևակագնդաց հարիւրաւորաց, և այրուձին ոչ ինչ աւելի էր քան զութ կամ զինն գումարտակս հեծելոց. իսկ այժմ առ քսան և հինգ գունդս հետևակաց հարիւրաւորս՝ աւելի են մեզ հեծեալք քան զքառասուն գումարտակս ։ Տես ինձ քանի՞ նուազ պիտէր նոցա խոտ և պարէն ։ Եւ ոչ յայնժամ հրաշէն անօթոյն սպառազինութ՟իք կային , որոց չորեքհազար կամ հինգ հազար ձիոց պէտք են 'ի ձգել . և ոչ հացարարաց բազմութ՟ին և թոնրոց և ամբարաբեր սայլից քառաձիոց ։

Պարձեալ և սակաւապիտութ՟ի նոցա , զի կարևորօքն և եթ շատէին , կարճէր զամբոխ սպասաւորաց և զձիոց և զկահուց , որք արդ սպառեն զամբարս , զզօրս սովեցուցանեն , դանդաղեցուցանեն զգործ պատերազմի , և յաւելուն խոչ անպարտելի ։ Եւ ոչ զօրքն միայն , այլ և սպայք և զօրագլուխք նոյն սակաւապիտութ՟ե կային ։ Նա՛ և ինքնակալք իշխեցողք տիեզերաց , Տրայիանոս , Ադրիանոս[1], Պեսկեննիոս[2], Աղեքսանդր Սեւերոս[3], Պրոբոս , Յուլիանոս[4], և այլք բազումք առանց զեղխութ՟ե կային , և էր նոցա բաւական խիւս կամ ոլեան ոսնակաւ միով , և պատառիկ մի պանրոյ կամ ճարպոյ խոզենւոյ , փառս համարեալ հաւասարել ընդ տրուպ զինուորս ։ Եւ ոչ հարկ է ասել՝ թէ զիարդ ազգս էին օրինակք նոցա , և քանի հզօր 'ի կարճել զաւելորդ կարասի բանակին , և 'ի յորդորել զզօրս 'ի ժուժկալութ՟ի , և 'ի բացէ առնել զա՟մ զեղխութ՟ի և զշուք ։ Ապա ոչ վայրապար ազդ առնեն առընթերագրեալ մատենագիրքդ , զի նոքին իսկ ինքնակալք յայտնապէս 'ի տեսիլ ա՟մ զօրացն հրապարակաւ , կամ առ վրանօքն , կամ բացեալ զփեղկս խորանէն , և կամ առ կայմս խորանացն ճաշէին ։ Զի էր տեսիլն այն 'ի յորդոր և 'ի խրատ և 'ի խրախոյս քաջալերութ՟ե զօրացն , և գծուծ ճաշն նմանութ՟բ արքունւոյն ազնուանայր ։

Արդ զբանակս Յունաց և զհռոմայեցւոց , զերիս բիւրս ընդ սպայ և ընդ զինուոր , զարս կորովիս , ժուժկալս , պատերազմողս և բիրտս յա՟մ աշխատութ՟իս , համեմատեալ ընդ տասն բիւրս մեր , և ընդ յոլով կարասին՝ զոր զհետ իւրեանց աղխաղխեալ տանին , իցէ՞ ոք զօրավար՝ որոյ իցեն միտք և գոյզն ինչ իմաստութ՟ի՝ և ոչ զառաջինն ընտրեսցէ ։ Այսպիսի զօրօք նահանջեցին Յոյնք զզօրութ՟իս արևելից , և հռոմայեցիք յաղթեցին տիեզերաց և զա՟մ ազգս նուաճեցին. Իցէ՞ թէ նոյն գովելի սովորութ՟ի անդրէն դառնայր, և յառնէր ոք զօրավար գեր 'ի վերոյ քաջ կորովամիտ և ցանկացող ճըշմարիտ փառաց, որ խելամուտ լինէր՝ թէ քանի՞ պարծանք են գոլ առատ ազնուական և վեհ մտօք և բազկաւ, և լիաձեռն բաշխել զարծաթ 'ի խրախոյս զօրաց, և 'ի նպաստ սպայից՝ որոց չիցեն ինչք ըստ ազգին և ըստ քաջութ՟ն, և այլով ամենայնիւ՝ ոչ անշուք և անինչ որպէս զնախնի տիեզերակալս, զի այն առաքինութ՟ի 'ի վեր է քան զայժմու ժամանակիս զօրութ՟ի, այլ համեստ և ազնուական պարկեշտութ՟ք կեալ. զի թերևս օրինակաւ իւրով՝ որ հզօրն է յիշխանս՝ զհետ իւր ձգէր զա՟մ զօրավարս, և ուղղէր զթիւր և զվնասակար ախորժակս համազգեաց:

---

[1] Զկերակուր զինուորացն կամակար հրապարակաւ ճաշակէր . զճարպ խոզենի . զպանիր . և զքացախ ըմպելի ։ Սպարտիան ։

[2] Յա՟մ արշաւանսն զնոյն կերակուր զինուորացն առնոյր առ վրանաւն ։ Սպարտիան .

[3] Բացեալ զփեղկս խորանին ճաշէր և ընթրիս ուտէր , զզինուորական կերակուրն 'ի տեսիլ և 'ի խնդութ՟ե ա՟մց առեալ ։ Լամբրիդ ։

[4] Եւ ինքնակալն ոչ խորտիկս համադամս ըստ արքունական պայմանի , այլ առ կայմս խորանին ճաշ վարկպարազի գոյզն ինչ խիւս համդերձեն , որ և սինլքոր զօրականին առաւել տաղտկալի է ։ Ամմիան . իե ։

'Ի կազմութ՟ի պաշարոց առաւելագոյն խնամս կալան յա՟մ ժամանակի զօրավարք, որպէս և պարտն է: Ասացուածն Կատոնի՝ թէ պատերազմ զպատերազմ կերակրէ, յերկիր առատ և առ սակաւաւոր զօրս 'ի դէպ ելանէ. իսկ հելլէն առակն ամենևին իսկ ճշմարիտ է, թէ պատերազմ չտայ 'ի ժամու ըստ հրամանի զկերակուր: Հարկ է կազմ լինել պաշարաւ, առօրէիւն և վ՟ն առաջիկայ ժամանակին: Կամբիւս ընդ կարևոր խրատուն և զայս ետ որդւոյ իւրում Կիւրոսի, որ ապա անուանին եղև, մի՛ երբէք ելանել 'ի պատերազմ՝ մինչ չև քաջ տեղեկացեալ թէ իցեն համբարք 'ի լիութիւն զօրացն պատրաստեալ: Եւ Պօղոս Եմիլիոս ոչ յանձն առ չու առնել 'ի Մակեդոնիա, մինչ չև հաւաստեալ զազատ երթևեկ պարենից: Եթէ Կամբիւս և Դարեհ այսմ զգոյշ լինէին՝ ոչ զզօրս իւրեանց մին յԵթովպիա, միւսն 'ի Սկիւթս, մատնէին 'ի կորուստ: Եւ Աղեքսանդրի կորնչէր ճամբարն 'ի սովոյ, եթէ ոչ Մեմնոնի քաջին քան զա՟մ զօրավարս ժամանակին արհամարհէր խորհուրդն, որ խրատ տայր ապականել զա՟մ երկիրն 'ի փոքրն Ասիա՝ ընդ որ հարկ էր Աղեքսանդրի անցանել: Եւ Աննիբաղայ՝ նախ քան զճակատամարտն Կաննեայ՝ նուազ քան զտասն աւուր համբարք մնային, և յեօթնեակս ինչ յերկարաձգել մարտին՝ յանհնարինս հասանէր: Եւ նախ քան զճակատամարտն Փարսաղեայ կորնչէր 'ի սովոյ Կեսար, եթէ խորհէր Պոմպէոս կամ թէ կարէր յերկարել այլ ևս տասն, կամ երկոտասան աւուրս: Զի է սով թշնամի, զոր քաջութ՟ի և արիութ՟ի զօրավարաց և զօրաց ոչ պարտեն, և զոր բազմութ՟ի գնդաց և ևս զօրացուցանեն:

Բ․ ՅԱՂԱԳՍ ԹՈՇԱԿԻ ԶՕՐԱԿԱՆԻՆ

Յոյնք 'ի սկզբանէ իւրեանց թոշակօք զինուորէին․ և ոչ ինչ են զարմանք․ քանզի նոքին իսկ քաղաքացիք, որոց հասանէր վտանգն, միաբանէին 'ի պահ ընչից իւրեանց և ընտանեաց և կենաց։ Յաղքատութե՟ն, յորում Սպարտա ընդերկար ժամանակս պինդ եկաց, 'ի դէպ է կարծել՝ թէ չտայր զօրացն թոշակ։ Յորչափ սպարտացիք կային 'ի յունաստան՝ յաշխարհէն ելանէր նոցա դարման 'ի ճաշէ հասարակաց, և հանդերձ ամի ամի․ և միս ևս ընդ ռոճկին բաշխէր, և բաշխօղ 'ի վերայ ռոճկաց կարգեալ կայր։ Այլ իշխանութ՟ին այն էր նախատելի․ վասն որոյ Ագեսիղայոս, որպէս յառաջագոյն պատմեցաք, առ 'ի պատժել զԼիւսանդր՝ 'ի գործ պաշտամանս այսօրիկ կացոյց զնա, որ 'ի մեծամեծ աւագութ՟իս կացեալն էր։ Արդ սովին ռոճկաւ 'ի ժամանակս պատերազմի շատանային սպարտացիք, լիացեալք ուստէք ուստէք աւարառութ՟ն։ Իսկ իբրև Լիւսանդր եմուծ անդրէն 'ի Սպարտա զոսկին և զարծաթ՟, և կանգնեաց անդ գանձ հասարակաց, հարկ էր այնուհետև տալ թոշակ սպարտացւոց զօրաց՝ յարշաւել նոցա ստէպ 'ի փոքրն Ասիա արտաքոյ քան զաշխարհ իւրեանց։ Ահա և ըստ խնդրոյ նորին իսկ Լիւսանդրի յաւել կրտսերն Կիւրոս զվարձ նաւաստեաց պատերազմիկ նաւացն սպարտացւոց՝ զոր տային պարսիկք, և փոխանակ երից դանգացն հրամայեաց չորս, որով բազումք 'ի նաւաստեաց աթենացւոց անցին առ նոսա։ Զօրութ՟ի Սպարտայ ոչ էր ընդ ծով․ թէպէտ և յարևելից և 'ի հարաւոյ բախէին զնա ալիք, այլ ծովեզերք նորա ոչ էին դիպող 'ի նաւակայս․ միայն 'ի Կիթիոն էր նորա նաւահանգիստ, և այն անձուկ և անանդորր․ վասն որոյ և նաւք սակաւք էին նմա, և նաւաստիք գրեթէ ամենեքին օտարք։ Որ ինչ ցամաքային զօրացն տայր թոշակ, ոչ է յայտ հաւաստեաւ․ և ոչ այն իսկ՝ թէ էր ռոճիկ կարգեալ զօրաց նորա ծովու և ցամաքի։

Պերիկղէս նախ կարգեաց թոշակ զօրացն աթենացւոց, զի յառաջ ձրի զինուորէին։ Ոչ միայն փոյթ հաճոյ լինելոյ ժողովրդեան, այլ և կարևորագոյն հարկ ստիպէր զնա 'ի նորաձևութ՟ին յայն։ Զի պատերազմէր 'ի տար աշխարհ, 'ի Թրակիա, 'ի Խերսոն, 'ի կղզիս և 'ի Յոնիա զամիս բազումս, ուր առանց նեղելոյ և խուելոյ զինվակակիցս՝ անհնար էր քաղաքացւոց անթօշակ զինուորել այնչափ ժամանակս, հեռի ՚ի ստացուածոց իւրեանց և ՚ի պաշարանաց կենաց. զի առաւելք ՚ի նոցանէ արուեստաւորք էին, որով անգոսնէին իսկ զնոսա սպարտացիք։ Արդ Պերիկլէս զիրաւացի թօշակն հատոյց նոցա որպէս դատաւոր արդար քան որպէս իշխան ժողովրդասէր, այլ իմաստուն քաղաքավարութե՟ կանխեալ քան զցանկու՟ն ժողովրդեանն ՚ի գործ՝ զոր հարկն պահանջելոց էր։

Զօրական թօշակ նաւաստեաց էր երեք դանկ, որ է կէս դրամակշիռ. ցամաքային զօրացն՝ չորք դանկք, իսկ հեծելոցն՝ դրամակշիռ մի։ Եւ վասն ծախուց պատերազմին հայթայթելոյ այս բարեյարմար կարգ էր։ Ի տասանց ցեղիցն աթենացւոց, քանզի չորեքին հին և աւագ ցեղք տակաւ յաւելեալ էին ՚ի տասն, ՚ի հատուցումն հարկին առան ըստ ցեղից հարիւր և քսան այր՝ միահամուռ հազար և երկերիւր, և ՚ի չորս գունդս յերեքարիւրեակս բաժանեցան, և ՚ի դասս քսան՝ որոց մի մի դարձեալ յերկուս որոշէին, ՚ի փարթամս և ՚ի փարթամագոյնս։ Արդ սոքա տային զհարկն, և մանաւանդ փարթամագոյնք. զի ՚ի յեղակարծ և ՚ի ստիպող հարկի զօրաժողով լինելոյ կամ նաւատորմիղ կազմելոյ, բաշխէին տոյժք ծախուցն ՚ի նոսա ըստ իւրաքանչիւր եկամտից. փարթամագոյնք առ ժամայն զհարկն հատուցանէին առ վաղագոյն սպասաւորու՟ի հայրենեաց, իսկ այլոց շնորհէր ժամանակ ՚ի հատուցումն իւրաքանչիւր բաժնի։

Յիրացն Լամաքոսի, որ ընդ Նիկիայ զօրավար առաքեցաւ ՚ի պաշարումն Սիրակուսայ, երևի թէ զօրավարք աթենացւոց առանց թօշակի զինուորէին։ Զի ասէ Պլուտարքոս, թէ Լամաքոս անինչ էր և ոչ իբրև զայլս ձեռնհաս ՚ի ծախս մարտին, և յղեաց առ ժողովուրդն զհաշիւ ծախուց աւուրն պարենի, և զհանդերձիցն, և զկօշկացն եւս։

Պլուտարք. ՚ի Նիկ. 533։

Հռոմայեցիք ՚ի սկզբան հասարակապետութե՟ն ձրի զինուորէին առանց թօշակի. այլ յայնժամ ոչ ՚ի տար աշխարհս և ոչ երկայնժամանակեայ էին նոցա պատերազմունք, և ընդ դադարել մարտին դառնային զօրքն ՚ի տունս իւրեանց՝ ՚ի խնամս արարոց և անդոց և տան։ Իսկ ՚ի չորեքարիւրորդի քառասներորդի ամի հիմնարկութե՟ն Հռոմայ, ՚ի յերկարաձգել պաշարման քաղաքին Վէայ, որ և ընդ ժամանակ ձմերայնոյն տևեաց անընդհատ՝ որպէս ոչ էր սովորութի՟, ծերակոյտն ինքնին[1] առանց աղերսանաց՝ հրամայեաց զօրացն յաշխարհէն արծաթ բաւական ՚ի Թօշակ զինուորութե՟ն : Այս պատուէր ծերակուտին, ախորժելի ևս կամակար առատութեամբն, ցոյց զամենեսին խնդութ՟բ. և այր քաղաքացի խրախուսէր հեղուլ զարիւն իւր և փոխանակել ըզկեանս ՚ի վերայ բարերար հայրենեացն : Աստանօր զնոյն իմաստութի՟ ՚ի կիր արկ ծերակոյտն ՚ի Հռոմ, զոր Պերիկղէս յԱթէնս : Զի զօրացն գաղտ սկսեալ շշնջել՝ ապա համարձակէին ՚ի տրտունջ, բողոք բարձեալ վասն յերկարաձգելոյ պաշարմանն՝ որով հարկ էր նոցա հեռի յընտանեացն ձմերել, և յերկար տարակայութ՟բ իւրեանց խոպանանային անդք նոցա առանց մշակութե՟, և ոչ ևս պտղաբերէր երկիրն զկեանս նոցա : Սմին իրի ծերակոյտն իմաստութ՟բ արար զպատուէրն, շնորհելով կամակար՝ զոր հարկն ուժգին առնլոց էր ՚ի ձեռն աղերսական կշտամբանաց միոյ ուրուք ՚ի հազարապետաց ժողովրդեանն, ժառանգելով նորա զփառս շնորհին :

Լիւ. դ. կ:
ըդ. խէ:
Դիոն. ալիկ.
հռով. հնխտ.
747:
Պլուտ. ՚ի Պօղ.
Ե. Գւ. 275:

Առ ՚ի մթերս արծաթոյն՝ եդան բաժք քաղաքայնոց ըստ իւրաքանչիւր ձեռին բաւականի. և ծերակուտին օրինակ ձգեաց զամենեսին զհետ, թէպէտ և հազարապետք ժողովրդեան հակառակ կային : Ոչ ոք ազատ եղև ՚ի հարկէն, և ոչ իղձք և քրմապետք. զի նոցա զամս ինչ ինքնօրէն իշխանութ՟բ իւրեանց ապահարկ լեալ, ապա դատապարտեցան ՚ի գանձապետաց՝ հատուցանել զխափանած հարկն. և յատեան ժողովրդեանն բողոքեալ, անտի ևս ելին պարտաւոր : Իսկ ՚ի կատարել մարտին, եթէ առ և աւար բազում էր ՚ի թշնամեաց, մասն ինչ հատուցանէին անտի հարկատուացն : Զքնաղ և զարմանալի հաւատարմութի՟ : Այս հարկ եկաց մնաց մինչև ցյաղթանակ Պօղոսի Էմիլեայ, որ զՄակեդոնիա նուաճեալ՝ այնչափ մեծութիս եբեր անտի ՚ի գանձս աշխարհին, զի ՚ի դէպ թուեցաւ բառնալ այնուհետև զհարկն զայն :

---

[1] Յաւելու ապա ՚ի դէպ ժամանակի յաւագանւոյն առ ամբոխն շնորհ. զի առանց աղերսանաց ժողովրդեան և հազարապետաց՝ պատուէր ետ ծերակոյտն առնուլ թոշակ զինուորաց յաշխարհէն. զի յառաջ իւրաքանչիւր իւրովք թոշակօք զինուորէր : Զիք ինչ ՚ի վէպս այնու խնդութ՟բ ընկալեալ ՚ի ժողովրդենէ. զի ՚ի խորհրդարանն խուռն ընթացեալ, և զելելոցն առեալ զաջ, իսկապէս հարս զնոսա կոչելով, խրախուսէին ՚ի վերայ այնպիսւոյ բարերար հայրենեաց դնել զկեանս և զարիւն. յորչափ և գոյն զօրութի մարթ ՚ի նոսա : Լիւ. դ. ծթ :

Զօրայն զկէս ամ զինուորեալ, դուն ուրեք աւելի, զբոլոր ամին առնուլին զթոշակ, որպէս բազում ուրեք վկայէ Լիւիոս. և բաշխէր նոցա թոշակն 'ի կատարել գործոյ պատերազմին, և մերթ 'ի կատարել ամսեանն վեցերորդի: Զայս ամ զհետեւակայն ասացաք. նոյն և հեծելոց շնորհեցաւ զերեամ մի յետոյ անդէն 'ի պաշարման Վէյոց[1]: Երիվարք 'ի գանձուց աշխարհին կազմէին նոցա. այլ 'ի կարեւոր ժամանակի կամակար առատութ̅ յանձն առնուլին ինքեանք կազմել:

Թոշակ զօրականին ըստ ժամանակաց փոփոխեցաւ. 'ի սկզբանն էին ասարք երեք կամ երեք փողք առ հետեւակ, սուղ ինչ աւելի. և էր տասն ասար դենար մի, և դենարն հաւասար դրամակշռոյ Յունաց 'ի կշիռ և 'ի Պլին. լգ. գ:
յարգ: Այլ յամին հինգհարիւրորդի երեսներորդի վեցերորդի առ իշխանապետութեամբն Փաբեայ՝ յաւելաւ արժէք դենարոյն ցվեշտասան ասար, և յայնժամ 'ի թոշակ զօրականին փոխանակ երից փողոցն սահմանեցաւ հինգ: Եւ մի՛ ոք ընդ վարձուցն նուազութ̅ի զարմասցի· զի և պարէնք դիւրագինք էին յայնժամ: Յաւուրս Պո- Բ. 103.
ղիբեայ, որպէս ինքն իսկ վկայէ, գրիւ ցորենոյ վաճառէր յԻտալիա չորից դանգաց, իսկ գրիւ գարւոյ՝ երկուց. և էր գրիւ ցորենոյ ութօրեայ պարէն զինուորի:
Յուլիոս Կեսար վասն յանկուցանելոյ յինքն զսիրտ զօ- Սուէտ. 'ի
րականին՝ յաւել 'ի թոշակ նոցա նոյնչափ, փոխանակ Յուլ. ԻԶ.
հինգ փողոց՝ սահմանեալ տասն: Եւ առ այլովք ևս ինքնակալօք եղեն փոփոխմունք, զորս ոչ է մեզ անկ մանրապատում առնել: Պողիբիոս զթոշակ հետեւակաց նշանակեալ՝ սուղ ինչ աւելի քան զերիս փողս, ապա և զհարիւրապետացն յաւելու՝ վեց փող և կէս, և զհեծելոյն տասն փող:

Արդ առօրեայ թոշակի հետեւակ զօրականին լինի համագումարն տարեկան՝ հարիւր լիրայ, համարեալ աւուրն հինգ փող՝ որպէս էր սովորական թոշակն յաւուրս Պողիբեայ. թող զսակ ցորենոյն աւուր աւուր, և զայլ պարէնսն: Աստանօր համարիմ տարւոյ ամիս երկոտասան, և ամսոյ երեսուն օր, որ միահամուռ լինին աւուրք երեք հարիւր և վաթսուն. զի 'ի թոշակ զօրականին ըստ այսմ հաշուէր ամն, որպէս է դուշակել. և 'ի կրկնապատկել Յուլեայ զթոշակն, եղև գումարն տարեկան երկերիւր վրայ ։ Այլ անդստին 'ի նմին գումարէ զզգեստ և զէնք և խորանք նոցա կազմէին, որպէս Տակիտոս ակնարկէ յասելն ․ Նա՝ և զինուորութ̃ին իսկ դառն և զվաջան ․ զի հոգւոյ և մարմնոյ ասարք երկու սակ հատանէին, և զէն և հանդերձ և վրան անդստին 'ի նմանէ ։ Պոլիբիոս յաւելու և զցորեանն ․ ասէ ․ Ոչ ցորեան, ոչ հանդերձ, և ոչ զէնք ձրի են զինուորի ․ այլ 'ի սակէ թոշակին հատանէ զայնս գանձապետն ։

---

[1] Սահմանեցաւ այրուձիոյն արծաթ 'ի թոշակ. յայնժամ սկսան հեծեալք՝ իւրաքանչիւր երիվարաւն զինուորել: Լիւ. Ե. Է:

Իսկ աւագ սպայք, բդեաշխք և փոխանորդք նոցա և զօրավարացն, կուսակալք և փոխանորդք նոցա, և գանձապետք, ձրի առ 'ի փառս ևեթ վաստակէին, որպէս երևի ․ այլ զկարևոր և զանհրաժեշտ ծախս միայն 'ի գործ պաշտաման նոցա հայթայթէր աշխարհն, հանդերձս, խորանս, ձի և ջորի, և զամ̃ կահ զինուորական ։ Էին նոցա սորուկք թուով այսչափ, և ոչ աւելի ․ զի չէր օրէն նոցա բազմացուցանել զսորուկս, բայց միայն լնուլ զթիւ պակասելոցն ։ Ընդ գաւառս ընդ որս անցանէին՝ բուտ ևեթ երիվարացն և փայտ առնուին 'ի բնակչաց ․ էին՝ որք և զայն չառնուին, նախանձաւորք լեալ նախնեացն անխառն ազնուականութ̃ե ։ Որպէս Կիկերոն գրէ զանձնէ առ Ատտիկոս բարեկամ իւր ․ [1] Ոչ ոք յիս, կամ 'ի փոխանորդս իմ, կամ 'ի գանձապետս, կամ 'ի մի ոք 'ի սպայից ծախէ ինչ ․ ոչ զբուտ և ոչ զփայտ առնում, զոր յուլեան օրէնք հրամայեն ․ այլ քառեակ անկողինս իմոցն և յարկ, և նոքին յաճախ բնակեն 'ի վրանս ։ Հռոմէական տեսչութ̃են կարևոր օրէնք էին՝ զօրավարաց և իշխանաց մի ծանրանալ առ նիզակակիցս ․ և սովին հանճարեղ և մարդասէր օրինօք մեծարոյ և սիրելի էր ամենեցուն իշխանութ̃ի նոցա, և 'ի դէպ իսկ է ասել՝ թէ առաւել այնու քան զօրութ̃բ զինուց տիեզերակալեցին ։

Պէրր․ յաղ․ ընտր․ Թ․

խք․ ա․ Զյուլեան օրինացն՝ յաղագս որ ինչ 'ի նիզակակցաց մերթեր պահանջել՝ յանուանէ նշանակէ Յուլիոս զեղծիչն, զՊոստումիոս ․ որում նմանողք բազումք լեալ՝ բռնացան քան զնա ։ Զի սա մինչ չև հասեալ էր յիշխանութ̃ի՝ երթեալ 'ի Պրենեստ, և ոչ որպէս կամէրն՝ մեծարեալ 'ի քաղաքայնոց, ընդ ակամբ հայէր 'ի նոսա ․ և իբրև բդեաշխ եկաց, խորհեցաւ խնդրել զվրէժ ։ Յու

---

[1] Ոչ ոք ծախէ ինչ յիս, և ոչ 'ի փոխանորդս իմ, և ոչ 'ի գանձապետս ․ գիտեա, զի ոչ միայն ըզխոտ կամ զոր յուլեան օրէնքն հրամայեն՝ չառնումք, այլ և զփայտ իսկ ․ բայց միայն քառեակ անկողինս ընդ յարկաւ, և ոչ այլ ինչ ․ յաճախ և անյարկ իսկ ընդ խորանաւ կամք ․ Ե ․ ժզ ։

'ի չու առնել ընդ այն 'ի մարզ իւր՝ ազդ արար նոցա, զի իշխան երկրին եկեսցէ ընդ առաջ իւր, և զի պատրաստեսցեն իւր օթևան 'ի գանձուց հասարակաց, և գրաստս 'ի չու: Յառաջ քան զնա, ասէ Լիւիոս, ոչ ոք յաւագաց ծանրացաւ ումեք 'ի նիզակակցաց, և ոչ ոք ստիպեաց զնոսա 'ի ծախս. գրաստ և խորան և ա՟մ կահ կարևոր 'ի զօրավարութե՟ կազմէր նոցա յաշխարհէն, զի մի՟ ինչ 'ի նիզակակցաց պահանջեսցեն: Եւ քանզի պատուական էր յայնժամ հիւրընկալութե՟ և յաճախեալ, առ բարեկամս իւրեանց ագանէին. և 'ի դառնալ իւրեանց 'ի Հռոմ, եթէ ոք յասպնջականացն գայր անդր՝ սիրով զնա փոխարէն հիւրընկալէին: Եւ յորժամ փոխանորդք զօրավարաց ստիպաւ ուրեք արշաւէին, 'ի քաղաքս՝ ընդ որ անցանէինն՝ պատուէր երթայր, երիվար ևեթ կազմել նոցա և ոչ ինչ աւելի: Արդ եթէ բդեշխին իրաւացի բողոք ինչ էր զպրենեստացւոց, ոչ էր անկ նմա զեղծանել իշխանութե՟ն, և 'ի կիր արկանել զայն 'ի վրէժխնդրութիւն:[1] Վարի համեստութե՟ նոցա կամ երկչոտլութե՟, որով ոչ կալան բողոք առ ժողովուրդն Հռոմայ, համարձակեաց ապագայից իշխանաց ծանրացուցանել օր ըստ օրէ զլուծ նոցա, իբր թէ միոյն անպատուհաս անօրէնութե՟՝ հաւանութեանն Հռոմայ նշանակ էր, և օրէն այլոց առնելոյ զնոյն: Ոչ այսպէս արարին նախնիք նոցա, և ոչ տուժիւք նիզակակցացն խնդրէին մեծանալ, այլ օգնական և պաշտպան լինէին նոցա: Նոքա վարձս սպասաւորութե՟ հայրենեաց զփառս քաջութե՟ցն համարէին. և յետ մեծամեծ յաղթութե՟ց և պայծառ յաղթանակաց, վախճանէին զկեանս իւրեանց յաղքատութե՟՝ յորում կէինն իսկ. որպէս է տեսանել զայս յաճախ 'ի վէպս Յունաց և Հռոմայեցւոց:

Գ. ՑԱՂԱԳՍ ԶԻՆՈՒՑ ՆԱԽՆԵԱՑՆ

Ոչ զա՟մ ազգի ազգի զինուց առաջի կայ մեզ ասել, այլ ըստ սովորութե՟ մերում՝ զՅունացն և զՀռոմայեցւոց, որոց բազում ինչ նոյն է 'ի մասինս յայսմիկ: Զի Հռոմայեցիք զբազումս յայնցանէ ընկալան յետրուրացւոց և յազգաց Յունաց բնակելոց յԻտալիա: Տարկուինիոս երէցն՝ ընիկ կորնթացի՝ եմուծ 'ի Հռոմ զէնս բազումս յունականս, որպէս վկայէ Փլորոս[1]: Պղնձի էին զէնք 'ի սկզբանէ, և ապա հնարեցան երկաթիք. վասն որոյ քերթողք այլ ընդ այլոյ կոչեն զերկաքանչիւրն անխտիր: Սպառազինութիւնք Յունաց, և մ̃ր իսկ ազգաց, էին 'ի վաղ ժամանակս՝ սաղաւարտ, զրահք, վահան և նիզակ կամ սուսեր. վարէին և աղեղն և պարսատիկ:

---

[1] Թէպէտ և իրաւացի էր ցասումն բդեշխին, չէր օրէն նմա զիշխանութեն 'ի վրէժխնդրութե՟ 'ի կիր արկանել. և համեստ կամ երկչոտլութե՟ պրենեստացւոց, որպէս հաւանելով միումն, օրէնս արար իշխանացն ծանունս և օր ըստ օրէ տալ հրամանս: Լի.:

ՍԱՂԱՒԱՐՏ էր զէն պահպանական՝ որ պարածածկէր զգլուխ հանդերձ պարանոցաւ, սովորաբար յերկաթոյ կամ 'ի պղնձոյ կազմեալ 'ի տիպ գլխոյ. և էր յառաջոյ բաց՝ ոչ պատսպարելով զդէմս. բայց էին և սաղաւարտք, մանաւանդ յունականք, որոց էին վահանակք երեսաց իջուցիկք: Եւ 'ի վերայ սաղաւարտից էին դրօշուածք առիւծու, ընձու, արծուոյ, կամ այլոց 'ի կենդանեաց. և ցցունք առ 'ի զարդ, որ տատանեալ 'ի հողմոյ՝ պայծառ զդէմն յօրինէին:

ԶՐԱՀՔ 'ի սկզբանն կազմէին յերկաթոյ կամ 'ի պղնձոյ, լանջապահ և թիկնապահ տախտակք որպէս և այժմ, օղիւք ընդ միմեանս աղխեալ 'ի կողս: Բայց Աղեքսանդր զլանջապանակն միայն եթող, զի առ վտանգին վիրաւորելոյ 'ի թիկանց՝ մի 'ի փախուստ դարձցին զօրքն: Էին և 'ի կարծր հրահալից զրահք, յորս ոչ ինչ երգլծանէին զէնք: Զոյլոս՝ դարբին զրահից ճարտար՝ Պաշարողին Դեմետրի արար զրահս երկու 'ի կարծր հրահալելոյ, և 'ի փորձ ամրութե̃ նոցա՝ ետ արձակել 'ի նոսա նետս 'ի բաղստրէ ոչ ինչ 'ի հեռուստ քան զքսան և վեց քայլ: Եւ մ̃ծ զօրութ̃բ նետն ձգեալ, հազիւ գծեաց 'ի զրահն և եթող 'ի նմա հետս: Էին և զրահք կտաւիք և կաճեայք առ բազումս յազգաց, որպէս վարապանք բազմակղէք, որ զդէմ ունէին հարուածոցն, և զզօրութի նոցա բեկանէին: Այսպիսի էր պարգևեալն յԱմասեայ ցսպարտացիս, գործուած զարմանահրաշ, ձևովք ազգի ազգի կենդանեաց յօրինեալ ոսկեթելք: Եւ այն առաւել զարմանք էին 'ի նմա, զի մի մի 'ի թելիցն նրբից յերեքարիւր և 'ի վաթսուն նրբագոյն թելից ոլորեալ էին ակներև:

Պողիէն. Հնարք. Դ̃:

Պլուտ. 'ի Դեմետր. 898.

Հերոդ. Գ̃. ԽԷ:

Էր և ճօշ զրահ կաշեայ. ուստի առ հռոմայեցիս լօռիկա կոչէր զրահն, զի լօռում 'ի բարբառ նոցա է կաշի կամ փոկ ։ Լեգէոնականացն հռոմայեցւոց էին զրահք 'ի փոկոց, որովք զիրանն պատէին յանթէ ցգօտին ։ Ունէին և զրահս մաշկեայս պատեալ երկաթի թիթղամբք իբր թեփիւք, կամ օղիւք երկաթեօք շղթայագործ աղխաղխեալ, զոր վէրտն կոչեմք ։ Զրահն յունական խափանէր յոյժ զշարժմունս և զերագուի և զոյժ զօրականին, իսկ պարանն կաշեայ ածեալ զիրանաւ հռոմայեցւոց զօրացն՝ թողոյր զնոսա ազատս 'ի շարժել, և պատսպարեալ որպէս զգեստ՝ պահէր զնոսա 'ի նետից ։

---

[1] Տարկուինիոս երէցն ... ընիկ տալական արուեստս խառնեաց: 'ի Կորնթոսէ, ըհանճար հեղլէն յէ. Փլոր. Ա: Է:

ՎԱՀԱՆ կամ ԱՍՊԱՐ էր զէն պահպանական անձին. և էին ազգ ազգ վահանաց ։ Կէսք երկայնաձև և անարգիլ պարածածուկ բոլոր անձին, զոր լատինք կոչեն ՍՔՈ՛ՒՏՈՒՄ. որպիսիք էին եգիպտացւոցն՝ զորոց խօսի Քսենոփոն ։ Եւ սպարտացւոցն ասպարք եթէ ոչ մեծամեծք էին, չէր մարթ բարձեալ բերել 'ի վերայ նոցա զանկեալս 'ի մարտի. վասն որոյ սպարտուհին զպանծալի պատուէրն տայր որդւոյն 'ի յուղարկելն զնա 'ի պատերազմ, թէ Դովաւ կամ 'ի վերայ դորա ։ Զի նախատինք մեծ էին անվահան 'ի պատերազմէ դառնալ. Թերևս զի կարծիս տայր վատութեան, իբր 'ի բաց ընկեցեալ զնոյն՝ առ երագագոյն անձնապուր փախուստ ։ Վասն որոյ Եպամինոնդ վիրաւորեալ 'ի մահ՝ 'ի հռչակաւոր Ճակատամարտին առ Մանտինեաւ, և ածեալ 'ի խորանն, հարցանէր ստէպ անձկանօք՝ թէ զերծա՞ւ վահանն իմ ։

Դաստ. Կիւր. Է, 187.

Միւս ևս ազգ վահանի, զոր լատինք կոչեն ԿԼԻ՛ՊԷՈՒՍ, շփոթի բազում ուրեք ընդ առաջնումն, այլ այլ է յայնմանէ. զի 'ի հանդէս համարոյն՝ զոր տայ առնել Սերուիոս Տուղղիոս, առաջնում դասուն զայս և երկրորդումն զայն ազգ վահանաց տայ 'ի ձեռս ։ Եւ էր առաջինն քառակուսի երկայն, իսկ երկրորդն բոլորշի և կարճագոյն. և երկոքին էին առ հռոմայեցիս անդստին յաւուրց թագաւորացն, բայց յետ պաշարման Վէյաց յաճախեաց առ նոսա քառակուսին[1] ։ Իսկ մակեդոնացիք զբոլորաձեւն կալան, բայց 'ի յետին ժամանակս երեւի փոփոխումն ինչ լեալ[2] ։ Ասպար լեգէոնականացն հռոմայեցւոց էր կոր կղմինտրաձև. երկայնութիւն նորա՝ ըստ Պողիբեայ՝ չորս ոտնաչափ, իսկ լայնութիւն երկու և կէս ։

---

[1] Վահան բոլորշի 'ի կիր արկանէին յառաջ հռոմայեցիք. այլ 'ի յաւելուլ վարձկանացն՝ զքառակուսի ընդ բոլորշւոյ փոխանակեցին ։ Լիւ. Ը. Է.

[2] Մակեդոնացւոց զէնք և վահան բոլորշի և նիզակ. իսկ հռոմայեցւոյն ասպար քառակուսի պարածածուկ բոլոր անձին ։ Լիւ. Թ. ԺԹ ։

Վահանքս այս փայտեղէնք էին յառաջագոյն, որպէս Պղուտարքոս 'ի վարս Կամիղղեայ ասէ. այլ Կամիղղոս երկաթապատս զնոսա արար անվնասելս 'ի բռնութենէ հարուածոց։

Էր և վահանակն, զոր կոչեն լատինք բառմա, բոլորշի, թեթև և կարճ քան զքառակուսի ասպարն՝ զոր սպառազէն հետևակք կրէին, իսկ սա մեկնակազէն զօրացն էր և այրուձիոյն։

Էր և միւս այլ, որ կոչէր բէլտա, գրեթէ յար և նման կոչեցելումն չէտրա, վահանակ թեթև, 'ի ձև կէս լուսնի կիսաբոլոր։

ՍՈՒՍԵՐԱՑ բազում յոյժ տեսակք էին, այլաձևք յոյժ 'ի միմեանց, զորս ոչ կարեմ թուել մի ըստ միոջէ. այլ զայն գիտելի է, զի էին և սուսերք երկայնք և բթածայրք՝ որ 'ի սայր ևեթ շեշտակի հարկանէին, որպէս գաղղիացւոյն[1] դաշոյնք, զորոց ընդ հուպ ասասցուք։ Էին և սուսերք կարճք ամրագոյնք՝ որ 'ի սուր և 'ի սայր հարկանէին, որպիսիք էին դաշնակք սպանիացւոյն, յորոց և հռոմայեցիք կալան, և աջողակագոյն 'ի կիր արկին զայն. որովք զբազուկս թիկամբն հետ 'ի վայր արկանէին, և զգլուխս յիրանաց 'ի բաց ընկենուլին, և մեծաբաց զվէրս 'ի թշնամիս գործէին[2]։

Պէսպէս սովորութ՟ի էր նախնեաց ածելոյ զսուսեր. հռոմայեցիք սովորաբար յաջոյ ազդերն կրէին, թերևս զի մի խափան լիցի աջողաբար ասպարելոյ, քանզի 'ի ձախմէ տանէին զվահան. այլ յարձանս ուրեք են զինուորք հռոմայեցիք, որոց 'ի ձախոյ ազդերն ածեալ է զսուսեր։ Գիտելի է զի Յոյնք և հռոմայեցիք, ազգք պատերազմողք քան զա՟մ ազգս, արտաքոյ պատերազմի ոչ կրէին սուր. և ոչ երբէք մենամարտէին։

ՆԻԶԱԿ գրեթէ առ ա՟մ ազգս վարէր. որ յաւուրց ինքնակալացն հռոմայեցւոց գտանին յարձանս նիզակք, երկայնութ՟ի նոցա գրեթէ վեց և կէս ոտնաչափ է համդերձ տիգաւն։ Իսկ մակեդոնականն յոյժ երկայնաձիգ էր. որում եթէ ոչ հինք առ հասարակ վկայէին, չէր մարթ հաւատալ՝ թէ մարթէր զզէնն զայն 'ի գործ արկանել. զի էր երկայնութիւն նորա վեշտասան կանգուն , աւելի քան զչորս ձողաչափս ։

---

[1] Գաղղիացւոցն և սպանիացւոց ասպարք գրեթէ համաձևք էին, այլ սուսերք այլաձևք. գաղղիացւոցն երկայնք և բթածայրք, իսկ սպանիացւոց, որք 'ի սուր քան թէ 'ի սայր սուսերի հարկանէին զթըշնամիս, կարճք և սրածայրք և աջողակագոյնք էին։ Լիւ. իբ. խզ։

[2] Սպանիացի դաշնակաւ քըշտեալ զմարմինս, զբազուկսն 'ի բաց ընկեցեալ, զգլուխս յիրանացն հատեալ, զընդերսն փեռեկեալ, և զօտարին անշքութ՟ի վիրացն տեսլին։ Լիւ. լա. լդ։

ԱՂԵՂՆ և ՆԵՏՔ անդստին 'ի վաղ ժամանակաց էին գրեթէ առ ա̃մ ազգս . բայց Կրետացիք յոյժ քաջաձիգք էին ։ Հռոմայեցւոց 'ի սկզբան հասարակապետութեան ոչ ուրեք պատմի 'ի կիր առեալ զաղեղն , այլ ապա յետ ժամանակաց . և որպէս թուի , յօգնական գունդս ևեթ նոցա կային աղեղնաւորք ։

Այլ ՊԱՐՍԱՏԻԿՆ էր զէն մարտացու յաճախեալ առ ազգս բազումս ։ Բնակիչք Բաղէարեան կղզեացն կարի քաջք էին 'ի պարսաքարել . և յոյժ խնամով մարզէին զորդիս իւրեանց յայն , զհացին նախաճաշոյն մրցանակ եդեալ դիպեցուցանելոյ զքարն 'ի նպատակն ։ Ուստի բազումք 'ի բանակս կարքեդոնացւոց և հռոմայեցւոց զինուորեալ , զօրավիգն մեծ լինէին 'ի յաղթութիւն ։ Այլ զինակցաց քաղաքաց ինչ Աքայիոյ , զեգիոնացւոց , ըզպատրացւոց և զդիմացւոց ասէ Լիւիոս[1], թէ աջողակագոյնք էին յոյժ 'ի պարսաքարել հեռի ևս և կորովագոյն և դիպող քան զԲաղէարացն բնակիչս , 'ի կէտ դիմաց՝ յոր դիտէինն՝ անվրէպ դիպեցուցեալ . և այնու բռնութ̃ քարն սլանայր , զի վահան և սաղաւարտ ոչ զօրէին զդէմ ունել թափոյ նորա . և ճարտարագոյնք իսկ էին 'ի պարսաւորաց՝ որք և 'ի մազէ ոչ վրիպէին , որպէս ա̃ծային գիրք վկայեն ։ Այլ էր զի փոխանակ քարի գունդս կապարեայս 'ի պարսատիկն արկանէին հեռաձիգս յոյժ ։

Վէգէտ. հրահ. զօրք. Ա. ԺԶ։

Դատ. Ի. ԺԶ.

ԳԵՂԱՐԴԱՆ կրկին ազգք էին . մին աշտեայ , զոր լատինն կոչէ պիլա , նետ սլաքաձև , երկայնութիւն բնոյ նորա սովորաբար երեք ոտնաչափ , ստուարութիւն նորա մատնաչափ մի . և սլաքին երկայնութիւն չորս մատնաչափ , և քաջասուր՝ 'ի մի հարուած հերձանէր զա̃մ անընդդիմարգել ։ Այլ վարէին զայն մեկենակաղէն զօրք[2], որոց յաջումն էին աշտեայք հեռաձիգք . իսկ ուր հարկ էր 'ի մօտոյ կռուել , փոխէին զնոսա 'ի ձախ՝ առ 'ի ձգել զսուսեր . և միում միում եօթն աշտեայք էին , ասէ Լիւիոս[3]։ Միւս եւ ազգ գեղարդան էր սուինն , զոր լատինն կոչէ PÍLUM , ստուար եւ ամուր քան զաշտէայն [1] . եւ ձգէին զայն ընգէմնակամք մինչ չեւ խառնեալ էր մարտն . այլ 'ի չժամանել ունել ասպարէզ 'ի միջի , ընկեցեալ զնոսա յերկիր՝ սուսեր 'ի ձեռին 'ի թշնամիսն անկանէին ։

---

[1] Հեռագոյն և դիպողագոյն և կորովի ևս քան զԲաղէարեան պարսաւորս պարսաքարէին ... ոչ միայն 'ի կառավին թշնամեաց դիպեցուցեալ , այլ և ուր նկատէինն 'ի դէմսն ։ Լիւ. ԺԹ. ԻԲ ։

[2] Եւ 'ի մօտէն սուսերահար 'ի վաշտկացն սպանանէին . զի է վաշտկին վահան եռոտնաչափ բոլորշի , և յաջումն աշտեայ՝ զոր 'ի հեռուստ ձգէ ... զի թէ հարկ լինի 'ի մօտոյ կռուել , զաշտեայն 'ի ձախ փոխեալ բուռն հարկանէ 'ի սուսեր ։ Լիւ. ԼԸ. ԻԱ ։

[3] Նոյա վահանք կարճք քան զայրուձիոյն տուան , և միում մի-

Հեծելազօրն եւ գրեթէ նոյն զէնք էին որ ինչ հետեւակացն . սաղաւարտ , զրահք , սուր եւ նիզակ , եւ վահան փոքրիկ եւ թեթեւ ։ Յաւուրց տրովական մարտին , որպէս 'ի հոմերական գիրսն է տեսանել , արք աւագք ասպարակրաւ միով հեծեալք 'ի կառս ամենակազմ՝ խաղային 'ի պատերազմ , դիւրաբար հերձանելով զգունդս թշնամեաց , եւ 'ի բարձուէ կառացն աջողակի մարտնչելով ։ Այլ խոչք կրկին վաղ խափանեցին զհեծելութիւն կառացն . մի , զի ընդ ցանկապատս եւ ընդ խոխոմս եւ ընդ փոսս արգելեալ կասէին կառքն . եւ միւս եւս , զի 'ի խոցել ձիոցն՝ մատնէին կառամարտիկքն 'ի ձեռս թշնամեաց անզերծանելի ։

Ապա հնարեցան գերանդաւոր կառք . զորս կարգեալ 'ի ճակատուն՝ նոքօք նախ աղմկէին զռազմ թշնամեաց ։ Այս տարազ մարտի յաճախեաց անդէն առ ա̅մ ազգս արեւելից , որպէս անշուշտ զօրավիգն յաղթութե̅ . այլ աջողակագոյնք 'ի զէնս Յոյնք եւ հռոմայեցիք ոչ 'ի կիր առին զայն , ակներեւ զփորձ առեալ՝ զի գոչիւն դիմամարտից , եւ նետք մեկնակազէն զօրաց , եւ մանաւանդ անհարթութի̅ երկրին , անպիտան զա̅մ սպառազինութիւն կառացն գործէր , յաճախ եւս վնասակար ։

Ազգք արեւելից եւ ափրիկեցիք , առ որս էին փիղք , խորհեցան պիտանի առնել 'ի մարտ զգազանսն հլուս եւ ահագինս հուժկու եւ յաղթ մարմնով ։ Որք եւ մարզեալ եւ 'ի քաջ վարչաց մղեալ , եղեն նպաստ մեծ 'ի կռիւ ։ Յուս նոցա հեծանէր փղապանն , եւ կարգեալք սովորաբար 'ի ճակատուն , դիմեալ քակտէին զռազմն ամբակուռս անընդդիմակաց յարձակմամբ . եւ անարգել իրանօքն զգունդս ողջոյն բեկանէին , աղմուկ եւ արհաւիրս արկեալ ընդ ա̅մ ։ Առ եւս պիտանութիւն գազանացն՝ աշտարակս 'ի թիկունս նոցա կանգնեցին մարտկոցս կրելիս , յորս ընտիրք 'ի զօրաց ամրացեալ՝ աջողաբար նետաձիգ լինէին անտի 'ի թշնամիս , եւ վանէին զնոսա 'ի

ում նետք եօթն երկայնք չորս ոտնաչափ . եւ սլաք նետիցն որպէս վաշտիկ զօրականին աշտէիցն էր ։ Լիւ. իզ. Ե̅ ։

[1] Զէնք հռոմայեցւոցն՝ վահան ... եւ սուին , ոչ սակաւ քան զաշտեայն հաստատախոյ , եւ արագավազ քան զնետ ։ Լիւ. Թ̅ . ծԲ̅ ։

սպառ ։ Այս յերկարեաց այս սովորութի՟ յազգս, զորոց ասացաք . և 'ի նոցանէ անցին առ այլս, որոց դառն աղետիւք զփորձ առեալ էր՝ թէ քանի՛ հզօր պատսպարան էր յաղթութե՟ փղակոյտն ։ Աղեքսանդր յետ նուաճելոյ զազգս՝ որ էին ընդ ձեռամբ Պարսից, և աշխարհակալելոյ զՀնդիկս, ապա սկսաւ մղել փիղս 'ի պատերազմունս ։ Իսկ յաջորդք նորա 'ի մարտս պատերազմացն ընդ միմեանս՝ յաճախեցին զգազանսն ։ Պիւռոս երաստս փղաց անցոյց յԻտալիա . և 'ի նմանէ և յՀննիբաղայ ուսան Հռոմայեցիք զպիտանութի՟ գազանացն 'ի մարտի, և նախ ընդդէմ Փիլիպպեայ 'ի գործ արկին զնոսա [1] ։

Այլ ընդ հզօր օգնականութե՟ն և վնասակարութի՟ք էին փղաց, որովք տակաւ խոտեցան ։ Զի զօրավարաց զփորձ առեալ, պատուէր տային զօրականին բանալ առաջի նոցա ճանապարհ, և անպիտան լինէր զօրութիւն գազանացն ։ Այս ոչ անպիտան միայն, այլ և յահեղ գոչմանէ զօրաց թշնամեաց, և 'ի տարափոյ նետից և քարանց՝ զորս աղեղնաւորք և պարսաւորք տեղային ա՟մ ուստեք, խուճապեալ գազանացն և վայրենացեալ կատաղէին, և յաճախ յիւրեանց բանակն գործէին նախճիրս՝ փոխանակ 'ի թշնամիսն գործելոյ ։ Հարկ էր այնուհետև փղապանացն առ 'ի խափանել զչարիսն՝ զբեւեռ երկաթի հարստել 'ի կառափն նոցա, որով անդէն անկեալ սատակէին ։ Լիւ. ԻԷ. ԽԹ.

Ուղտերամակք բաց 'ի բեռնակրութէ՟ և առ այլ ինչ պիտանի էին 'ի մարտի, և այս դիւրութի՟ էր նոցա՝ զի յանջրդուղջ ընդ աւազուտ երկիր տանէին ծարաւոյ ։ Կիւրոս ընդդէմ Կրեսեայ բազում երամակս ուղտուց ած 'ի պատերազմ, և եղէն նմա զօրավիգն 'ի յաղթութի՟ն . զի ձիանն թշնամեաց 'ի հոտոյ նոցա խրտուցեալ, խռովէին զբանակն ։ Այս է տեսանել 'ի գիրս Լիւիոսի աղեղնաւորս արաբացիս յուղտս աշտանակեալ, սուսեր երկայնաձիգ վեցոտնաչափ 'ի ձեռին, առ 'ի բարձանց դրաստուցն հասուցանել հարուածս 'ի թշնամիս ։ Իր զի և երկուք ոմանք աղեղնաւորք արաբացիք թեկն 'ի թեկն 'ի մի ուղտ հեծանէին, հետամտիցն նետաձիգ լինելով և 'ի փախստի ։ Վեգետ. Գ. ԻԴ. Քուէնտ. Կուրտէ. Կիւր. Ը. Լիւ. ԼԷ. Ի.

Այլ ոչ փիղ և ոչ ուղտ հաւասարէ օգնականութեան ձիոյ 'ի մարտի . զի սա 'ի պատերազմ գոգցես ծնեալ է, և կերպարանքն իսկ և պարանոցին բարձրավիզ խրոխտութեամբ և գնացք նորա թուին պատերազմողի, որպէս 'ի հրաշազան նկարագրին 'ի գիրսն Յոբայ է տեսանել. Ի բազումս յազգաց հեծեալք և երիվարք նոցա երկաթապատք զրահաւորք էին. և այս են պատենազէն այրուձին. Դժուարահաս թուի, թէ որպէս 'ի վաղ ժամանակս անհամետ և առանց ասպատանգաց և սռնապանի ձիավարէին առ ամ՟ ազգս հեծեալք. Դաստիարակութ՟ի և հրահանգք և վարժք լնուին զթերին օգնականութ՟ն այնոցիկ, և ոչ թուէր ինչ նոցա թէ պակասիցի. Էին իսկ հեծեալք՝ որպէս Նումիդացիք՝ որք անսանձ ձիավարէին, ձայնիւ լոկով կամ գարշապարաւ կամ մտրակաւ յառաջ և ընդ կրունկն մղեալ զերիվարն, կամ կասեցուցեալ, կամ յաջ և յահեակ դարձուցեալ, ըստ հրահանգաց մարզիկ երիվարի. Էր զի և նժոյգ 'ի ձեռանէ ածէին, 'ի միջէն 'ի միւսն վազելով 'ի խառն իսկ մարտին, զի խոնջեալն արծարծանիցի. Նումիդացիքս այսուքիկ և Պարթևք յորժամ թուէինն ահաբեկք փախստեայք, յայնժամ ահաւորագոյնք էին. զի յանկարծ անդրէն դարձեալ, արդնընկէցք նետաձիգք յեղակարծումն 'ի վերայ թշնամեաց սաստիկ ևս յարձակէին. լթ. 29.

---

[1] Իջ բդեաշխն 'ի ճակատ առաջին նախադնաց դրօշուց կարգելոյ փղացն, զորս անդ նախ Հռոմայեցիք առին յօգնականութիւն՝ զսակաւն գերեալս 'ի կարքեդոնական մարտին . Լիւ . ԼԱ . ԼԶ ։

Զկարևորագոյնս 'ի կազմածոյ մարտի նախնեաց ահա ասացաք. Յամ՟ ժամանակի զօրավարք քաջք խնամ մեծ կալան սպառազինութ՟ զօրականին. ոչ ինչ փոյթ էր նոցա թէ ոսկի և արծաթի շողայցեն զէնք. զսնոտի ճաճանչն մեղկ և զեղխ ազգաց թողեալ, Պարսից և նոցին նմանեաց, այլ իմն պայծառագոյն խնդրէին փայլումն, որ ահարկու ևս էր և ճահաւորագոյն պատերազմողի, զպողովատին ասեմ և զպղնձոյ. Եւ ոչ 'ի փայլումն և եթ, այլ մանաւանդ 'ի տարազ զինուցն զօրավարք քաջք մտադիր լինէին. Ո՞չ զարմացի ընդ ճարտարութ՟ի Կիւրոսի, որոյ եկեալ առ Կիաքսար քեռի իւր՝ փոխեաց զսպառազինութ՟ի զօրացն. Քսէն. դաստ. Կիւր. ը. 40. Զի բազումք 'ի նոցանէ աղեղնաւորք և աշտէնաւորք 'ի հեռուստ և եթ մարտնչելով՝ դիւրապարտելիք էին յամբոխէ թշնամեաց. որոց Կիւրոս զգեցոյց զրահս, և վահան և սուսեր կամ սակր ետ 'ի ձեռս նոցա, զի 'ի մօտոյ կարասցեն տալ պատերազմ և խառնել ընդ թշնամիս 'ի կռիւ, անպիտան առնելով զամբոխ բազմութ՟ն նոցա.

---

[1] Իսկ մակեդոնացւոցն ճակատ ոչ նոյնպիսի. մարտիկք և երիվարք ոչ ոսկւով և ճամկաւոր զգեստուք, այլ երկաթով և պղնձով փայլատակեալ: Կուրտ. գ. Գ:

Իփիկրատ, անուանի զօրավար աթենացւոց, և նա բազում ինչ 'ի զինուց զօրացն փոփոխեաց, զվահան, զնիզակ, զսուսեր և զզրահս։ Ըստ նմին օրինակի և Փիլոպեմէն, որպէս յիւրում տեղւոջն ասացաք, բազում ինչ փոփոխումն արար 'ի զէնս աքայեցւոց, զի յառաջ քան զնա բազում իրօք թերի էին․ որով ոչ սակաւ զօրացան նոքա 'ի յաղթութ՟ի ամենայն թշնամեացն։ Հանգոյն սոցին եղէն և այլք բազումք, զորս եթէ մի ըստ միոջէ 'ի համար արկցուք՝ երկարին ճառքս։ Այլ դու տես ինձ քանի՛ ամուր պատսպարան է բանակի զօրավար քաջ, որ ա՟մի հոգ կալեալ՝ զթերին կարեւորացն լնու․ և քանի՛ վտանգ է յա՟մ կանխակալ սովորութիւնս պնդ կալ, և յա՟մ նորաձեւու՟է զանգիտել։ Ոչ ոք յազգաց յերկչոտ զգուշութ՟է աստի հեռի էր քան զհռոմայեցիս․ որոց հետազօտեալ՝ որ ինչ պիտանեգոյն առ շրջաբնակ ազգս և առ թշնամիսն գտանէին, 'ի կիր առնուին զայն․ և բազմապատիկ փոփոխմամբք զօրացն և զինուց՝ կազմեցին զբանակ իւրեանց անպարտելի։ Պլուտարք․ 'ի Փիլոպ․ 360։

ՅՕԴՈՒԱԾ Զ․

Յաղագս յառաջախնամ զգուշութեանց զօրավարի։

Որ ինչ ցայսվայր վասն զօրաժողովոյ և թօշակի և զինուց և պարենից զօրականին ասացաք, նիւթական մասունք են պատերազմի․ կարեւորագոյն ևս մնան հոգք իմաստութ՟ե և ճարտարու՟ե զօրավարին պատկանաւորք։ Բազմահմուտք պատերազմական հրահանգաց ամենեքին պարտ համարեցան թագաւորի կամ զօրավարի՝ նախ քան զա՟մ խորհել յօրինակ պատերազմին, թէ արժա՞ն իցէ յարձակել՝ եթէ պահ ունել, որպէս զի ընտրողու՟ե յայս կամ յայն պատրաստիցի․ քաջ տեղեկանալ վայրաց աշխարհին՝ ուր գնայցէ 'ի պատերազմ․ գիտել թէ քանի՛ և որպիսի՛ զօրք իցեն թշնամեաց, և հնարել իրազեկ լինել՝ խորհրդոց նոցա, և կանխել ունել զառաջս նոցա, գուշակել զդէպս և զպատահարս մարտին՝ զի մի՛ յեղակարծ 'ի վերայ հասցեն, և գաղտնածածուկ պահել զա՟մ խորհուրդս անհետազօտելի։ Դուն ուրեք խորհուրդ պատերազմի գաղտնի պահեցաւ որպէս 'ի մերում այժմու պատերազմիս, որ ոչ փոքր պարծանք են աւագանւոյն։

'Ի վէպս Փիլիպպեայ ասացաք զհանճարեղ հնարից Աշ․ խդ․ ժը։

Պօղոսի Էմիլեայ վասն իրազեկ լինելոյ խորհրդոց Թշնամեաց նախ քան զճակատամարտն, որ եղև իսկ պատսպարան յաղթութե՟ն. զի ըստ պատրաստութե՟ն է յաղթութի՟ն ։ Կիւրոսի եկեալ առ Կիաքսար քեռի իւր, որ անկազմ և անպատրաստ կայր, տես ինձ ուստի՞ սկիզբն առար պատրաստութե՟ն ։ Զարմանալի իսկ են պատուէրքն՝ զորս նա ինքն տայր զօրացն նախ քան զչու առնել նոցա 'ի պատերազմ, և հոգք նորա 'ի խնամս ա՟մ պիտոյից նոցա ։ Հարկ էր նմա զաւուրս հնգետասան գնալ ընդ երկիր աւերեալ՝ ուր ոչ զօրաց և ոչ գրաստուց գտանէր ճարակ. պատուէր տայ բառնալ զօրացն պաշար քսան աւուր, և փոխանակ կարասւոյն՝ կապել զայն 'ի բեռինս հաւասարս, և մի՛ աղխաղխել անկողինս և վերմակս 'ի հանգիստ քնոյ, զորոց զթերին լնոյր աշխատութ՟ի ։ Եւ զի էր զօրացն ըմպելի գինի, երկուցեալ թէ գուցէ փոփոխութ՟ի ըմպելւոյ միանգամայն վնասակար լիցի նոցա, պատուիրեաց բառնալ և գինի սակաւ, և առ փոքր փոքր սովորել 'ի ջուր՝ մինչև 'ի սպառ հրաժարելոյ 'ի գինւոյ ։ Հրամայէր բառնալ և միս աղծեալ, և երկան աղալոյ ցորեան 'ի հաց, և դեղս վասն ախտացելոց. և դնել 'ի սայլս կարասեկլիս գերանդի և փայտատ երկմատենի, և 'ի մի մի գրաստուց սայլիցն՝ տապար և մանգաղ, և ա՟մ ազգի ազգի պիտոյիւքն կազմ լինել ։ Եւ ածէր ընդ իւր պայտառս և կարուակս և ազգի ազգի արուեստաւորս հանդերձ իւրաքանչիւր կազմածովք. և որ ոք պարէնս 'ի բանակն ածցէ՝ պատիւ և վարձս խոստանայր նոցա գտանել յիւրմէ և 'ի բարեկամաց իւրոց. և որ ոչ էին ձեռնհաս 'ի կազմել պաշար՝ խոստանայր օգնել նոցա ըստ կարի, եթէ յանձն առնուլին տալ գրաւ՝ խոստանալով գալ զհետ բանակին ։ Այս ամենախնամ հոգ, զոր փոքր 'ի շատէ ասացաք, չէ ինչ անճահ զօրավարի և թագաւորի իսկ՝ որպիսի ոք Կիւրոսն էր ։

Թուկ. Թ, Յատենաբանութե՟ն, զոր արար Պերիկղէս առ աթենացիս վասն պելոպոնեսեան մարտին, յայտ է՝ թէ քանի՛ հմուտ էր պատերազմական հրահանգաց, որ այնքան իմաստութ՟բ զիրս հասարակապետութե՟ն յանձանձէր, և թէ քանի՛ խոր և ընդարձակ էր յառաջատեսութ՟ի նորա ։ Զօրինակ մարտին ոչ առ մինուագ ճակատու, այլ զա՟մ պատերազմին մինչև 'ի սպառ պատրաստեալ կազմեաց, քաջ տեղեկացեալ նախ զօրուե՟ցն սպարտացւոց, և տեղեկացուցեալ զաթենացիս ։ Հաւանեցոյց նո՟ց կալ մնալ 'ի քաղաքին, և թողուլ յաւէր և յապականութ՟ի զանդաստանս իւրեանց, և մի դիմագրաւել 'ի մարտ ընդ յոլովաձեան թշնամիս, այլ խաղալ նաւատորմաւ աւար հարկանել զծովեզերս Պելոպոնեսեայ. Եր և խրատ տայր նոցա՝ մի ուրեք 'ի բացի տալ պատերազմ, և մի յանկալ երկրակալութե՟, որով անշուշտ ստանային զյաղթութի՟. այլ զի արհամարհեցին զխրատ նորա, և 'ի Սիկիլիա խաղացին պատերազմաւ, վասն այնորիկ կորեան.

Զի՞նչ քան զխորհուրդն Անիբաղայ քաջ և հանճարեղ, որ 'ի հռոմայեցիս անդէն 'ի բնին նոցա յարձակեցաւ. Զնոյն նա ինքն խրատ ետ և Անտիոքոսի. և զարհուրեալ խուճապէին արդեօք հռոմայեցիք՝ եթէ այնպէս առնէր. այլ Անտիոքոս ոչ ընդարձակամիտ ոք էր և ուշիմ, առ 'ի խելամուտ լինել կարևոր և իմաստուն խորհրդոյն. Իսկ Աղեքսանդր անդէն իսկ 'ի չուն կասէր արդեօք առ սովս, և ստիպէր դառնալ յաշխարհ իւր, եթէ ինքնին Դարեհ՝ որպէս յառաջ ասացաք՝ ապականեալ աւերէր զերկիր իւր, ընդ որ հարկ էր անցանել թշնամւոյն, և եթէ զօրահատոյց առնէր գունդ հզօր 'ի Մակեդոնիա՝ որպէս խրատ տայր նմա Մեմնոն զօրավար նորա, մի 'ի քաջագունիցն՝ որ կային 'ի վաղ ժամանակս. Արդ այս խորհուրդք այնոցիկ են՝ որ մեծախոհութ՟բ և հմտու՟բ գործեն, և ոչ վարկպարազի ինչ և առժամայն իմաստու՟բ ըստ դիպուածոյ պատահարաց. Պատերազմ, որ այսու իմաստութ՟բ կազմիցի, դուն ուրեք վրիպի 'ի յաղթութ՟է[1].

ՅՕԴՈՒԱԾ Է.

Չու և երթ զօրաց.

Սկիզբն և կատարած մարտի, և չու և դարձ զօրաց, պաշտամամբք կրօնից և միաբան զոհիւք լինէր առ նախնիս. Կամբիւս արքայ Պարսից, որպէս պատմեցաք, ընդ բազում խրատսն՝ զոր ետ որդւոյ իւրում Կիւրոսի յառաջնումն նուագին երթալոյ նորա 'ի պատերազմ, յերկարագոյն վասն այսր խօսեցաւ՝ չգործել ինչ երբէք մեծ կամ փոքր զիւրն կամ զայլոց ուրուք, առանց խնդրելոյ

Քսէն. դաստ. Կիւր. ա. ժե.

---

[1] Որ յաղթութե՟ ցանկայ, զզօրսն քաջ հրահանգեսցէ. որ յաջողութե՟ զինուց փափաքէ, արուեստիւ մարտիցէ և մի ըստ դիպուածոյ. Վէգետ. Գ. յառաջբ.

'ի դիցն պատգամ, և մինչ չև զոհ մատուցեալ նոցա ։ Նաև Կիւրոս պինդ կալաւ զխրատն. և ընդ հասանել յելս սահմանաց աշխարհին Պարսից՝ եզեն զոհս դից երկրին, նոյնպէս և դից աշխարհին Մարաց՝ 'ի հասանելն անդր, խնդրելով զօգնութիւն նոցա և զխնամս ։ Նման օրոյ ոչ ամօթ համարի վիպագիրն ասել զնմանէ ստէպ՝ թէ փոյթ էր 'ի լնուլ զամենայն պարտս կրօնից, և այնու վստահ լինէր 'ի յաղթութիւն ։ Նաև ինքն իսկ Քսենոփոն, իմաստասէրն և այր պատերազմող, ոչ ձեռնարկէր 'ի գործ ինչ կարևոր՝ մինչ չև հարցեալ զդիս ։ Նոյնպէս և դիւցազունքն Հոմերի երկիւղածութեամբ յամենայն կարիս և 'ի վտանգս դիմեալ անկանէին առ դիս ։ Նաև Աղեքսանդր մեծն ոչ անց յԵւրոպայ յԱսիա, եթէ ոչ նախ հրաման պատասխանւոյ ընկալաւ 'ի դից երկուց ևս աշխարհացն ։ Լիւ. խա. իա ։ Իսկ Աննիբաղ նախ քան զելանելն 'ի պատերազմ ընդդէմ հռոմայեցւոց, չոգաւ 'ի Կադիս կատարել զուխտ իւր Հերակլեայ, և վերստին ուխտիւք մաղթել օգնականութիւն առաջիկայ մարտին ։

Յոյժ երկիւղածք էին 'ի մասինս յայսմիկ Յոյնք. մինչև ոչ առնել չու 'ի պատերազմ առանց հաւահմայից և զոհարարաց և այլոց թարգմանաց կամաց դիցն. զի նախ քան զդիմագրաւելն 'ի մարտ՝ պարտ համարէին հարցանել զդիս ։ Առաւել քան զամենայն ազգս հռոմայեցիք ջերմագոյնք էին 'ի պաշտամունս դից, եթէ 'ի սկզբան պատերազմաց, և եթէ 'ի վտանգս՝ որ հասանէին, և եթէ յետ յաղթութեանն[1]. և զյաղթութիւն 'ի պաշտամունս ևեթ կրօնից վարկանէին ։ Որք թէպէտ և 'ի գործն վրիպէին, այլ յիմաստոմն ոչ ևս. և 'ի սովորութենէ աստի ամենայն ազգաց վկայեալ, ճանաչէր միշտ յաշխարհի գերաբուն էն ամենակալ տնօրէն աշխարհի, վարիչ ամենայն պատահարաց և պատերազմի, և ընդունող ուխտից և խնդրուածոց ։

ԵՐԹ ԶՕՐԱՑ

Իբրև ամենայն ինչ կազմ և պատրաստ լինէր, և 'ի սահմանեալ ժամն և 'ի տեղի ժողովելին զօրքն, ապա չու առնէին ։ Վասն չերկարելոյ զճառս՝ զհռոմայեցւոցն ևեթ ասասցուք, ըստ նմին համեմատութե՟ թողլով զայլոցն 'ի միտ առնուլ։

---

[1] Յաղագս այնր պատերազմի պաղատանք ընդ քաղաքն մատուցան և պաշտօն դիցն, զի բարի յաջողութիւն կատարեսցի մարտն սահմանեալ 'ի ժողովրդենէ Հռոմայ ։ Լիւ. խա. ծէ.

Քաղաքն երկիւղած, մանաւանդ 'ի սկզբանն մինչ դեռ այն ինչ ելանէր 'ի պատերազմ, պաղատանս մատուցանէր ։ անդ. լա. ի ։

Զարմանալի իսկ է, 'զի զայնչափ բեռն ծանր կրէին զօրքն 'ի չու առնելն ընդ իւրեանս։ Զի ոչ միայն զրահս, ասէ Կիկերոն[1], և վահան և սուսեր և սաղաւարտ, (մարթեր յաւելուլ և զգեղարդն), զորս ոչ որպէս բեռինս կրէին՝ այլ որպէս թիկունս և բազուկս և ձեռս, անդամս համարելով զինուորի զզէնսն, այլ և պարէնս հնգետասան աւուր բարձեալ տանէին, և մերթ աւելի ևս, և զսպաս ալխտոյիցն, և իւրաքանչիւր մէն մի ցից ոչ թեթև։ Վեգետիոս[2] յորդորէ կրթել զմանկտին զօրական 'ի կրել բեռն ծանրագոյն քան զքառասուն և հինգ լտերս բաց 'ի զինուցն 'ի սովորական չուն, որպէս զի 'ի դէպ և 'ի կարևոր ժամանակի՝ սովորեալ գտցին[3]։ Այս կարգ էր հնոց զօրացն հռոմայեցւոց։ Սովորական գնաց չուոյ զօրացն հռոմայեցւոց, ըստ Վեգետեայ[4], էր յաւուրն հարիւր և վաթսուն ասպարէզ։ Երիցս յամսեան հարկ էր հետևակաց և հեծելոց առ 'ի հրահանգս զայս չու առնել։ Հաշիւ արարեալ ճշգիւ որ ինչ յաղագս յեղակարծ արշաւանացն 'ի ժամանակի պաշարմանն Գերգովեայ գրէ Կեսար, գտանի 'ի քսան և 'ի չորս ժամու հինգ բիւր քայլ ճանապարհ արարեալ, բայց պնդագոյն չուով. արդ զկէսն և աւելի ևս 'ի բաց թողեալ, մնայ ուղղի սովորական չուոյ զօրացն, երկու բիւր քայլ։

Վէգէտ. ա. ԻԷ.
Կես. Գաղ. Է.

Զչուոյ զօրացն, որ յետ մահու կրտսերոյն Կիւրոսի

Արշ. Կիւր. Է. 427.

---

[1] Ահա աստի բանակքս մեր կալան զյորջորջումն։ Իսկ զինչ աշխատութի՟ և քանի՟ բեռն է նոցա. զի առաւել քան զկիսամսեայ պարէնս բարձեալ կրեն, և զիւրաքանչիւր պէտս, և զցից. զի զվահան զսուսեր և զսաղաւարտ ոչ առաւել ինչ բեռն համարի զօրականն մեր, քան զուս և զբազուկս և զձեռս։ Քանզի զվահանս անդամս կոչեն զինուորի. զորս այնպէս աջողակի կրեն, զի 'ի ստիպել հարկին անբեռն և սթափ զինուքն որպէս մերկանդամք մարտնչին։ Կիկ. Տուսկ. Բ. ԼԷ.

[2] Եւ 'ի բարձումն ևս բեռին մինչև 'ի լտերս վաթսուն 'ի զինուորական չուն՝ պարտ է կրթել ստէպ զմանկագոյնս, որոց 'ի դժուարին արշաւանս հասանէ հարկ ը՟ զէնսն և պարէնս կրել։ Վէգէտ. ա. ԺԹ.

[3] Այսպէս հուժկու հռոմայեցին
'ի հայրենի պատերազմին,
Ստանձնեալ ըզբեռըն ծանր 'ի չու,
Հասանէ կայ կազմ ճակատու
Յեղակարծում առ թշնամւոյ։
Վիրգ. Մշակ. Գ. 346.

[4] Չու զինուորական երկու բիւր քայլ 'ի հինգ ժամս ամառայինս պարտ է գնալ։ Վէգէտ. ա. Թ.

դարձան յետս նորահրաշ նահանջմամբն՝ որ գերապանծն է 'ի վէպս, զնոցա զաւուր գնացս կարգեալ դնէ Քսենոփոն ։ Արդ զաւելին և զնուազն աւուր աւուր հաւասար յամենեսին բաշխեալ՝ լինին աւուր գնացք վեց պարսիկ փարսախ, յոյժ աւելի քան զայժմու բանակացս չու․ այն զի և դժուարահաւատալի թուի թէ կարէին հինգ որպէս զոսա յերկար չու առնել ։ Բայց զի չափք նախնեաց զանազանին յոյժ, անտի թերևս այսքան խտիր զանազանութ՟ե իցէ ընդ արդի և ընդ նախնի զօրականին չու․ և կամ զի անդ ուրեմն բանակք յոյժ սակաւաւորք էին քան այժմ, և ոչ այսչափ աղխաղխեալ կահիւ և կարասւով, և զօրքն յայնժամ ուժեղք էին, և ամենևին այլազգ հրահանգ նոցա ։

Պլուտարք․ 'ի Փոք․ 175 ։

Ոդեաշխք, և իշխանապետք իսկ, գնային առաջի լեգէոնացն հետի, զի հզօրագոյն գունդք հռոմայեցւոց էին հետևակք, նմին իրի և զօրավարին պարտ էր կալ առ նոսա անմեկնելի ։ Իսկ եթէ ծերութ՟ի կամ տկարութ՟ի խափան լինէր իշխանապետին կրել զաշխատութ՟ին, նախ քան զչու առնելն 'ի պատերազմ՝ աղերսէր զժողովուրդն, և լինէր նմա հրաման՝ լուծանելով զհինաւանդ օրէնսն՝ հեծանել 'ի ձի[1] ։ Յուլիոս Կեսար, որպէս վկայէ Սուետոնիոս,[2] առաջնորդէր զօրացն անխոնջ՝ հետի և բացագլխով յարևու և յանձրևի, սակաւ երբէք հեծեալ 'ի ձի ։ Եւ Պլինիոս[3] ընդ գովութ՟ին Տրայիանոսի յաւելու և զայն, զի կանխաւ սովորեալ հետի առաջնորդել լեգէոնաց՝ առանց կառաց և անձի ընդ անհուն ասպարէզս, զնոյն և յետ ինքնակալութ՟են առնէր ։ Նոյն ինքն Յուլիոս Կեսար ընդ գետս 'ի լող անցանէր, կամ յեցեալ 'ի տիկ ։ Զի առ 'ի կարող լինելոյ 'ի ստիպել հարկին առնել զայն, և առ 'ի տոկալ աշխատութեց մարմնի, կրթէր մանկտին հռոմայեցի յարշաւահանդէսն և 'ի ձիընթացս, և ընդ քիրտն սաստիկ հարեալ յուժգին մրցանսն՝ արկանէր ապա զանձն 'ի Տիբեր, անցանել յայնկոյս 'ի լող ։ Եւ զօրք անփորձք պատերազմի, որ եկեալ յաւելուին 'ի լեգէոնս, կրթէին յառաջագոյն զամս քանի մի, ընտրեալ առողջքն և աջողակք և կորովիք ։ Եւ հրահանգեալ յաշխատութի̃ , յընթացս , և ՚ի վաստակս տակաւ ծանունս , որ ոք ՚ի նոցանէ ապիկար գտանէր ՚ի փորձն՝ արձակէր ՚ի բաց , և ՚ի կարողացն մնացելոց կազմէր գունդ ընտիր ։ Սովին արիական խիստ և կորովի կրթութբ̃ կազմեցան ՚ի Հռոմ , և վաղագոյն յոյժ ՚ի Սպարտա , և ՚ի Պարսս առ Կիւրոսիւ , զօրականք անխոնջք և անպարտելիք ։

---

[1] Իշխանապետն աղերս արար առ ժողովուրդն, զի լիցի նմա հրաման հեծանելոյ 'ի ձի․ Լիւ․ իդ․ ծդ ։

[2] Էր նա անխոնջ արժանի զարմանալոյ․ դուն ուրեք հեծեալ, այլ հետի առաջնորդէր զօրաց՝ բացա գլխով յարևու և յանձրևի Սուետ․ 'ի Յուլ․ Կէս ։

[3] Ընդ այն ժամ ուղին ածէր զլեգէոնս, ... ոչ 'ի կառս հեծեալ և ոչ 'ի ձի ։ Պլին․ 'ի Տրայ ։

ՅՕԴՈՒԱԾ Ը .

Յաղագս բանակ հարկանելոյ , և շաւիղ գործելոյ .

՚Ի չու առնել զօրացն , թէպէտ և ՚ի բնիկ սահմանս հարևանցի առ գիշեր մի դէպ լինէր երեկօթել , ամենայն կարգօք զբանակ հարկանէին . բայց միայն թերևս առանց ամրութեանցն , զորս յերկիր թշնամեաց ածէին շուրջանակի ։ Նմին իրի լատին մատենագիրք , բազում ուրեք փոխանակ ասելոյ յառաջնում կամ յերկրորդում աւուր չուոյ զօրացն , ասեն՝ յառաջին կամ յերկրորդ բանակետղն , և այլն . զի թէպէտ և վայրիկ մի ուրեք դադարէին , անդ հարկ էր նոցա բանակ հարկանել ։ Իսկ ուր զաւուրս քանի մի դադարէին , ասէին զկայ առեալ անդ ։

Արդ որք ՚ի բնիկ աշխարհին այսպէս զգոյշ կային , քանի՛ զգուշագոյնս պարտ էր նոցա կալ յերկիր թշնամեաց և յանդիման նոցին ։ Վաղնջուց սովորութբ̃ օրէնք էին առ նոսա , մի՛ դիմագրաւել ՚ի մարտ՝ մինչ չև զբանակ հարեալ . վասն որոյ Պօղոս Եմիլիոս , որպէս պատմեցաք , զխրախոյս զօրացն՝ որ խնդրէին դիմել ընդդէմ Պերսեայ՝ կասեցոյց և արգել , գրեթէ ոչ ա՛յլ ինչ ունելով պատճառս՝ բայց զի չև ևս զբանակետղն կազմեալ էր ։ ՚Ի գաղղիական պատերազմին՝ առաջնորդք զօրացն հռոմայեցւոց վնասապարտք համարեցան , այսմ հանճարեղ զգուշութե̃ անփոյթք լեալ[1] . և պարտութի̃ ճակատամարտին՝ որ յԱղիա՝ յանզգուշութենէ աստի թուեցաւ լեալ ։ Եւ վասն զի վրիպական է յաղթութի̃ , հռոմայեցիք առ արկածս պարտութե̃ պատրաստէին իրեանց ապաւէն . և բանակետղ ամուր խափանէր զյաղթուլթն թշնամւոյ, պատսպարէր զգունդս վանեալս, և խրախուսէր միւսանգամ 'ի մարտ յուսով յաղթութեան, և պարսպէր 'ի սպառսպուռ կոտորածէ: Զի եթէ ապաստանն այն չիցէ, բանակ ամենակազմ կայ 'ի վտանգի անապաւէն պարտութեան և համայնաջինջ կորստեան:

---

[1] Անդ հազարապետք զօրացն , շուրջանակի զակիշ ածեալ... Ճամինչ չև զբանակետղ առեալ , չև կառ յարդարէին ։ Լիւ . Ե . Ճ .

Բանակետղ հռոմայեցւոց էր քառակուսի, հակառակ Յունացն՝ որք բոլորշի գործէին: Ընդ բնիկ և ընդ օգնական զօրս բաժանէր գործ աշխատութեան[1]. և եթէ մերձ էր թշնամին, կէսք 'ի զօրացն զինուորեալ կային՝ յաշխատել այլոցն: Պեղէին նախ խրամս ըստ պատշաճ խորութեան, ոչ ինչ պակաս քան զութ ոտնաչափ 'ի լայնութեան, և քան զվեց 'ի խորութեան. իսկ բազում ուրեք տասն կամ երկոտասան ոտնաչափ, և էր ուրեք՝ զի մինչև ցհնգետասան և ցքսան ոտնաչափ լայն: Եւ զհողն պեղեալ 'ի խրամոյն արկեալ շուրջ զբանակաւն, որպէս զթումբ գործէին. և առ պնդագոյն ամրութիւն՝ խառնէին զուղձս դալարիս հատեալ ըստ պատկանաւոր ձևոյ և մեծութեան, և 'ի կատար թմբին ձողիս ածէին: Բայց զձողեացն՝ որովք ցցապատնէշն այն կազմէր՝ որ ինչ գրէ Պողիբիոս, ածից զայն այսր ամբողջ. զի թէպէտ և այլուր յառաջագոյն ասացաք, այլ և աստ 'ի բնիկ տեղւոջն հարկ է երկրորդել զայն: Պողիբիոս պատճառս այսր ճառից առնու զպատուէր Փլամինինեայ, 'ի հրամայել նորա զօրացն իւրոց հատանել ցիցս առ 'ի պէտս կարևոր ժամանակի:

Պօղիբ. ԺԷ. 754. Այս սովորութիւն, ասէ, առ հռոմայեցիս դիւրին է. իսկ առ Յոյնս կարի դժուարին: Զի սոքա հազիւ թէ գնալ կարեն. իսկ հռոմայեցիք վահան 'ի վերայ թիկանց, տէգ 'ի ձեռին, և զցիցն ևս բարձեալ կրեն: Եւ ցիցքն յոյժ այլազգ են 'ի Յունացն. քանզի Յոյնք ընտրեն զբունս քաջուղէշս և բազմոստս, իսկ հռոմայեցիք զերկուս կամ զերիս, կամ թէ աւելի՝ քառեակ ոստս 'ի մի և եթ կողմն թողուն, որով մարթի միում ումեք երկուս և երիս 'ի նոյանէ 'ի միասին կապեալ տանել. դարձեալ և առաւել սոքա պիտանացու լինին յամրութիւն, քանզի Յունացն դիւրաւ խլին. զի եթէ բունն տնկեալ զերծ և ազատ կայցէ, քանզի ոստախիտ և ամրոստ է, յերկուց կամ յերից արանց բառնի անաշխատ, և խրամատի պատնէշն՝ առանց խախտելոյ այլոց բնիցն շուրջանակի, զի և ոչ երկայնաձիւղք են առ 'ի զմիմեանց ունելոյ։ Իսկ Հռոմայեցւոցն ոչ այսպիսի․ զի նոցայցն ոստքն հիւսեալ ընդ միմեանս խառնին, և դժուարին իսկ է ընտրել զճաղկ՝ յորոց ոստքն ստեղնիցին, և ոչ ընդ ոստոմն ձեռս 'ի ներքս մարթի արկանել, և խլել զբունն․ քանզի խռկեալ և ոլորեալ ընդ միմեանս՝ չտան ուստեք անցս, զի և ծայրասուր գործեալ են խնամաբար։ Եւ ձեռս իսկ 'ի ներքս արկեալ, խլել զբունն դժուարին է․ նախ զի խոր յերկիր թաղեալ կան անդրդուելի․ և ապա՝ զի պնդագոյն ունին զմիմեանց ոստովքն, և չէ մարթ զմին ուրոյն 'ի բազմացն բառնալ, և երկուց և երից արանց չբաւէ ոյժ առ 'ի խլել զնոսա․ և եթէ խլեսցին իսկ ձգձգմամբ և տատանմամբ, դոյզն ինչ գործի խրամատ։ Ապա երիւք իրօք առաւելուն բունքս այս, զի ա͞մ ուրեք գտանին, զի դիւրաբարձք են, և զի գործեն զբանակաւ պատնէշ ամուր դժուարաբեկ։ Ընդ զայս ա͞մ ասացեալ Պողիբեայ, 'ի վերայ ածէ․ Քան զա͞մ զինուորական կարգս Հռոմայեցւոց այս ինձ առաւել թուի նախանձելի։

---

[1] Հռոմայեցիք զակիշ երեքկին ածէին, իսկ այլ զօրքն ակն ունէին մարտին: Լըբ.:

Կեսար ... ընդ ամենայն կողմանս բանակին պատնէշ ածել միում միում 'ի լէգէոնացն պատուէր ետ, և խրամ ըստ նմին ընդարձակութեան գործել. իսկ զայլ լէգէոնսն ազատս ընդդէմ թշնամեացն կացոյց 'ի պատերազմ: Կես. Քաղաք. Հռոմ. Ա:

Համաձև և համաչափ գործէր ա͞մ ուրեք բանակն, և կայր 'ի նմա նոյն, որպէս զի զօրացն ա͞մցն գիտելի լիցի իւրաքանչիւր տեղի խորանին։ Իսկ Յունացն այլազգ․ քանզի բանակեող ընտրէին զամրագոյն վայրս 'ի բնէ, որպէս զի մի աշխատ լինիցին 'ի պեղել խրամս շուրջանակի․ քանզի համարէին զինքնեղ ամրութ͞ին ապահովագոյն յոյժ քան զձեռագործն։ Ամին իրի հարկ էր ըստ տեղեաց փոփոխել զձև բանակին և զկայս, և լինէր շփոթ մեծ, և ոչ ոք 'ի զօրաց գտանէր զիւր կայեան, և ոչ ըղկողմն բնակութ͞ե զիւրոյ գնդին։ Պօլիբ․

Օձևոյ և զկայից բանակին Հռոմայեցւոց ուժգինս վիճին գիտունք վասն կարի դժուարութ͞եցն․ այլ մեք զՊողիբեայն նկարագիր առցուք, ուրեք ուրեք պարզաբանելով, և զթերին մասանցն ինչ յաւելլով։ Բայց նկարագիրս այս է ըստ բազմութ͞ե զօրաց միոյ ևեթ բդեշխի, զի էին յաւուրս Պողիբեայ միում կրկին լեգէոնք․ և լեգէոնն կազմէր 'ի չորեքհազար երկերիւր հետևակաց և յերեքարիւր հեծելոց․ և գունդք նիզակակիցք՝ որոց նոյնչափ հետևակք էին, իսկ հեծեալք սովորաբար կրկնապատիկ․ որ միահամուռ ընդ բնիկ և ընդ նիզակակից՝ լինին ութևտասն հազար վեցհարիւր այր։ Առ 'ի քաջ խելամուտ լինել կարգաւորութ͞ե բանակիս՝ յուշ ածցին Պօլիբ․ Զ․ 473․

յառաջագոյն ասացեալքս զայլևայլ մասանց հռովմէական լեգէոնացն ։

ՅՕԴՈՒԱԾ Թ.

'Ի Պոլիբեայ յաղագս ճարտարութեան հռովմէական բանակին տեղւոյ.

Զբանակետղն, ասէ, ընտրեալ մերձ 'ի ջրարբի և 'ի պաճարարօտ վայր, որոշէն զՊրետորիոնն կամ զվրանատեղի զօրավարին բարձրագոյն՝ ուստի կարասցէ տեսանել զա՟մ, և տալ պատուէր ։ Ընդ 'ի տեղւոջ խորանին (1) դրօշ կանգնեալ՝ չափեն զնովաւ քառակուսի, զչորեսին կողմանսն հեռի 'ի դրօշէն հարիւր ոտնաչափ, չորից արտաւարաց երկիր սահմանեալ բդեշխին ։ Իսկ շուրջ զխորանաւ նորա կանգնեն զբագինն՝ ուր զոհքն մատչին, և զատեանն՝ ուր առնին իրաւունք ։

Երկին լեգէոնք են բդեշխին, և միոյ լեգէոնի՝ վեց հազարապետք, երկոցունցն 'ի միասին՝ երկոտասան. որոց խորանք կանգնին 'ի մի կարգ ուղիղ զառաջեաւ խորանի զօրավարին, հեռի 'ի նմանէ յիսուն ոտնաչափ. և յանջրպետ անդր կան ձիանն, և դրասաք բեռնակիրք, և ա՟մ կարասին հազարապետաց ։ Իսկ դէմք խորանաց նոցա բացադարձ՝ յետկուսէ ընդ Պրետորիոնն դիտելով, և 'ի հանդիպոյ ընդ այլ ա՟մ բանակն, հեռի 'ի միմեանց՝ ընդարձակեալ ընդ երկայնութ՟ ճակատու լեգէոնացն (2) ։

Ապա՝ նախ քան զկայս լեգէոնացն՝ թողուն անջրպետ առաջի խորանաց հազարապետացն հարիւր ոտնաչափ, ընդ ամենայն լայնութիւն բանակին ճանապարհ ուղիղ՝ որ բաժանէ զբանակն 'ի վերին և 'ի ստորին կողմ՟ն (3) ։ Իսկ 'ի վայր քան զուղին կանգնին խորանք լեգէոնացն ։ Զանջրպետ խորանացն տրամատէ ընդ մէջ ուղի յիսուն ոտնաչափ լայն. որ և զերկայնութիւն բանակին բաժանէ ընդ մէջ ։ Ընդ երկուստեք զտեղի առեալ կան միակարգ այրուձին, երրորդականք, պետք և աշտենաւորք ։ Ընդ երրորդականսն և ընդ պետս անջրպետէ աստի և անտի ուղի ըստ նմին լայնութեան միջնոյն, նոյնպէս ընդ ամենայն երկայնութ՟ի միջոցին ձգեալ. և զայն հատանէ ընդ մէջ ուղի՝ հինգերորդն կոչեցեալ, զի յետ հինգերորդի վաշտուն անկանի ։ Իսկ զի մի մի 'ի չորեցունց կարգացս 'ի տասն յայլ կարգս բաժանէին, այրուձին 'ի տասն գումարտակս երեմնեակս, և այլքն երեքին 'ի տասն տասն վաշտս, հարիւր և քսան այր առ վաշտ մի, բայց միայն երրորդաւորացն վաթսուն այր, կայեան այրուձիոյն և երրորդականաց և պետացն և աշտենաւորաց էին ուրոյն 'ի միմեանց զատուցեալ. իւրաքանչիւր 'ի տասն կայս քառակուսի ընդ երկայնութ՟ին՝ զոր ասացաք։ Մի՛ 'ի կայից աստի էին հարիւր ոտնաչափ յերկայնութ՟ի և 'ի լայնութ՟ի. բայց երրորդականացն կայից յիսուն ոտնաչափ էր լայնութ՟ին առ սակաւուէ՟ թուոյ նոցա, որպէս ասացաք։

Վրանք եթէ այրուձիոյն և եթէ հետևակացն յար և նման միմեանց կանգնէին երեսք յուղիմն։ Նախ հեծեալք երկուց լեգէոնաց կարգեալ կան դէմ ընդ դէմ, անջրպետեալք յիսուն ոտնաչափ միջոցաւ՝ որ է ուղին միջին։ Եւ զի հեծեալք երկուց լեգէոնացն էին միահամուռ վեց հարիւր այրուձի, 'ի մի մի 'ի քառակուսի կայիցն աստի և անտի կային երեսուն հեծեալ (4). որ է տասներորդ մասն երեքհարիւրոցն։ Առ հեծելովքն բանակէին երրորդականքն, վաշտ մի առ ընթեր միոյ միոյ 'ի գումարտակացն հեծելոց ըստ նմին օրինակի, կիցք առ նոսա առ երի. և վաշտուց իւրաքանչիւր կայիցն լայնութիւն է կէս երկայնութեանն, զի երրորդականք քան զայլսն սակաւաւորք են (5)։

Դէմ յանդիման երրորդականացն աստի և անտի յիսուն ոտնաչափ խորոցաւ հեռի բանակէին պետք. և անջրպետէ ընդ մէջ խորոյն ընդ երկայն ուղի (6)։ Առ ընթեր պետացն բանակէին աշտենաւորք, կից առ նոսա հակադարձք (7)։ Այս էին կայեանք երկուց լեգէոնացն հռոմայեցւոց՝ յորոց կազմէր բանակն բդեշխին, որ էին ութ հազար չորեքհարիւր հետևակք, և վեցհարիւր հեծեալ. մնայ այժմ ասել զկայից նիզակակից զօրացն։ Հետևակք նոցա հաւասար էին հռոմայեցւոց, իսկ հեծեալք կրկնապատիկ։ Արդ զինքնակամն զտարակարգ զօրս 'ի բաց հանեալ, զհինգերորդ մասն հետևակաց՝ որ են հազար վեցհարիւր ութսուն այր, և զերիր մասն այրուձիոյն որ են չորեքհարիւր, մնան միահամուռ եօթն հազար հինգհարիւր և քսան այր՝ ընդ հեծեալ և ընդ հետևակ՝ որոց պարտ էր ունել կայեան 'ի բանակին։

Հանդէպ աշտենաւորացն հռոմայեցւոց յիսուն ոտնաչափ խորոցաւ հեռի, որ աստի և անտի գործէ այլ ուղի, բանակէին հեծեալք նիզակակիցք (8), յերկիր ընդարձակ աւելի քան զհարիւր երեսուներիս ոտնաչափս։ Եւ առ երի հեծելոյս ըստ նմին ուղղուէ՟ բանակէին հետեւակք ընդարձակեալ երկերիւր ոտնաչափ (9)։ 'Ի ճակատ վաշտուցն իւրաքանչիւր աստի և անտի կանգնին խորանք հարիւրապետացն ։ Զնոյն է իմանալ և զզօրագլխաց հեծելոցն, թէպէտ և լռէ զնոցանէ Պողիբիոս ։ Իսկ յետկոյս խորանաց հազարապետացն և երկուստեք Պրետորիոնին՝ զկէս տեղւոյն դրաւեն վաճառք (10), և զայլ կէսն գանձապետն և գանձք և համբարք (11)։

Յաջմէ և յահեկէ 'ի ծայրս խորանաց հազարապետացն 'ի վեր քան զնոսա, դէմ յանդիման Պրետորիոնին 'ի նոյն կարգ, բանակին տարակարգ հեծեալք (12. 13), և այլ ինքնակամ [1] այրուձին (14. 15). կիսոցն դէմք 'ի գանձետղն հային, այլոցն 'ի վաճառատեղին ։ Սոքա ոչ միայն 'ի բանակին մերձ առ բդեաշխն կան, այլ և 'ի չուն յաճախ ընկերեն նմա. և չհեռանան իսկ յոյժ 'ի նմանէ և 'ի գանձապետէն, զի արբանեկեն նոցա ։ Իսկ տարակարգ հետեւակք հռոմայեցիք, և ինքնակամ զինուորեալքն, կան յետ կուսէ այրուձիոյն՝ զորմէ ասացաք՝ 'ի նոյն կարգ (16). և հանդէպ հեծելոցն սպասաւորեն բդեշխին և գանձապետին ։

'Ի վեր քան զկայս այրուձիոյն և հետեւակացն, զոր ասացաք, ուղի հարիւր ոտնաչափ 'ի լայնութ̅ի ընդ ա̅մ ընդարձակու̅ի բանակին անջրպետէ. և 'ի վեր քան զուղին բանակին տարակարգ հեծեալք նիզակակիցք, դիտելով 'ի վաճառատեղին, և 'ի Պրետորիոնն, և 'ի գանձետղն 'ի կայան գանձապետին (17)։ Իսկ տարակարգ հետեւակք նիզակակիցք յետ կուսէ հեծելոցն իւրեանց բանակին, դէմք 'ի պատնէշսն 'ի վերջ բանակին (18)։ Եւ 'ի մնացեալ տեղին աստի և անտի կան այլազգի և նիզակակից զօրք յամեալք (19)։

Արդ այս ա̅մ կարգօք կազմէր բանակն քառակուսի. և փողոցք 'ի նմա և ա̅մ ինչ յար և նման քաղաքի կարգեալ, թուէր բանակետղն հայրենիք զօրացն, և վրանք տունք նոցա ։ Եւ էին վրանքն մաշկեայ, վասն որոյ բազում ուրեք առ մատենագիրս ասի ընդ մաշկաւ բնակել. և բազմաց 'ի զօրացն միաբանեալ՝ առնէին իւրեանց 'ի միասին վրան, վասն որոյ վրանակիցք կոչէին. և էին սովորաբար 'ի միում վրանի ութ կամ տասն զինուորք ։

---

[1] Սոքա էին կրկին հեծելագունդք ընտիրք, զորս բդեաշխք ինքնին ընտրէին, և որք ինքնակամ զինուորէին. և [illegible] [illegible] կային պրետորեան գու- [illegible]՝ որ առ ինքնակալսն ։ Ընդրեալսն այրուձի կամ հետեւակ՝ էին 'ի նիզակակցաց. իսկ ինքնակամք՝ կամաւոր զինուորեալսն զօրականք ծերք 'ի տաղարայնոց ։

Ընդ պատնէշն և ընդ խորանս անջրպետէ խորոց երկերիւր ոտնաչափ, և է անջրպետն այն յոյժ պիտանացու յելումուտ լեգէոնացն. զի գունդք իւրաքանչիւր ընդ առաջիկայ ուղին ելանեն անդր, առանց խռնելոյ ամենեցուն 'ի մի վայր՝ մղելով զիրեարս և առ ոտն կոխելով։ Դարձեալ և գրաստք, և ամ̃ աւարն առեալ 'ի Թշնամեաց, անդ զետեղին. և գիշերապահք անդ պահ ունին։ Դարձեալ, որ կարևորագոյնն է, ոչ հուր և ոչ նետ 'ի գիշերամարտի հասանէ 'ի զօրսն. կամ սակաւ երբէք. և այն ոչ ինչ ստնանէ նոցա վասն կարի տարակայութե̃ն, և զի ընդ վրանաւ պատսպարեալ կան։ Եթէ Սիփաքս և Ասդրուբաղ յԱփրիկէ այսպէս բանակէին՝ շուրջանակի թողեալ խորոց ընդարձակ, չէր մարթ Սկիպիոնի 'ի միում գիշերի հրձիգ առնել զամ̃ բանակ նոցա։ Ըստ նկարագրին Պողիբեայ ճիշդ հաշուեալ՝ գտանի չափ միոյ կողման քառակուսւոյ բանակին երկու հազար վեշտասան ոտն, որ է երեքարիւր երեսուն և վեց ձողաչափ. և ամ̃ երկիրն պատնիշափակ 4064256 ոտնաչափ, որ է 112896 քառակուսի ձողաչափ։

'Ի յաւելուլ զօրացն՝ ընդարձակէին զբանակետղն, առանց ձևոյն փոփոխութե̃։ Բայց Լիւիոս Սալինատոր բդեաշխ 'ի խառնել զօրացն՝ Ներոնի՝ իշխանակցին իւրոյ ընդ իւրսն, փոխանակ ընդարձակելոյ զբանակետղն՝ ըզզօրսն ամփոփեաց, զի առ փոքր մի ժամանակ կալոց էին անդ զօրքն՝ Ներոնի. և յայնմանէ խաբեցաւ Ասդրուբաղ։ Լիւիւս. ԻԷ. ԻԶ։ Խ. ԻԷ.

Պողիբիոս ոչ նշանակէ զկայս փոխանորդ զօրավարաց՝ որ յետ բդեշխին նախապատիւքն էին, և ոչ զկուսակալացն և զսպայից. այլ ոչ ինչ կարի հեռի 'ի Պրետորիոնէն, որպէս կարծեմ, բանակէին. զի ստէպ հարկ էր նոցա խորհրդակից լինել ընդ բդեշխին և ընդ հազարապետացն։ Նա ոչ զմուտս բանակին նշանակէ. բայց չորք դրունք էին ըստ Լիւեայ, զի ասէ. Առ չորեքումբք դրամբքն զզօրսն կազմեաց. զի 'ի տալ նշանին՝ յամենայն կողմանց յարձակեսցին։ Նա ապա զմին անուանէ տարակարգ, զերկրորդն աջակողմեան մեծ, զերրորդն ահեակ դուռն աւագ, իսկ զչորրորդն՝ գանձապետական. զորս այլք այլազգ անուանեն, և միաբանել զնոսա յոյժ դժուարին է։ Բայց տարակարգ կոչել զդուռնն, թուի վասն տարակարգ զօրացն առ նովաւ բանակելոյ. զի նոյն դարձեալ և պրետորական անուանէր, վասն մերձ 'ի Պրետորիոնն գոլոյ։ Իսկ հանդիպակաց դուռնն՝ որ 'ի միւս ծայր բանակին՝ կոչէր տասներորդ, զի մերձ 'ի տասներորդ վաշտս լեգէոնացն էր . և նոյն թուի կոչեցեալն 'ի Լիբեայ 'ի նմին տեղւոջ գանձապետական դուռնն։ Չերկարեմ զճառս 'ի մանրամասն քննութ՟ի այսոցիկ ։

Բայց յոյժ զարմանալի էր կարգ և յօրինուած և համեմատութ՟ի ա՟մ մասանց հռոմէական բանակին, զքաղաքի իմն բերելով զնմանութի քան թէ զկարաւանի զօրաց։ Խորան զօրավարին կանգնեալ 'ի բարձրաւանդակի 'ի մէջ բագնաց և պատկերաց դից՝ որ զաստուածութիւնն թուէին մերձ կացուցանել, շուրջ պար առեալ յաւագ սպայից՝ որ կազմ և պատրաստ կային 'ի լսել և առնել զպատուէրս նորա։ Ճանապարհք չորք մեծամեծք՝ որ 'ի չորս դրունս երթային, հատեալք 'ի բազմաց զուգահեռ ճանապարհաց . և խորանք տողաբար կարգեալ հաւասար տարակայութ՟ե 'ի միմեանց, և ամենայարդար չափակցութ՟ե։ Եւ մեծատարած լայնածաւալ բանակն՝ հանդերձ բազմադիմի մասամբքն, որ բազում աշխատութ՟ե և երկայն ժամանակաւ թուէրն գործեալ, 'ի մի և յերկուս ժամս կատարէր՝ որպէս յերկրէ յանկարծ վերբերեալ։ Այլ այս ա՟մ ոչ ինչ իսկ էր առ միւսոյն՝ որ հոգին է բանակին, զիմաստութ՟ն ասեմ զուշ և զզգաստութ՟ի զօրավարին, և զսպայիցն հլու՟ի, և զյօժարութ՟ի զօրականին 'ի լսել հրամանի զօրագլխացն, և զզինուորական խիստ և սաստիկ զաննման հրահանգսն, որովք հռոմայեցիք յաղթող եղեն ա՟մ ազգաց և տիեզերակալեցին։ Եւ եթէ ոչ ամենևին կատարեալ էր կարգ բանակի նոցա, ընդ այնչափ բազում դարս չպահէր անփոփոխ այնու յաջողութ՟ե, զի զբանակետղ նոցա գրեթէ երբէք ոչ նուաճեաց թշնամի։

Իսկ այժմ սովորութիւնս այս խափանեալ է, և ոչ ևս զակիշ ամուր շուրջ զբանակաւն ածի, որ առ հռոմայեցիս ընդ կարևորագոյն գիտութ՟ն և հրահանգս պատերազմի համարէր։ Ընդարձակատարած բազմութ՟ի յոյժ զօրաց այժմու բանակացս անպարփակելի թուի վասն անհնարին աշխատութ՟ե գործոյն։ Այլ ասացէք, որոց բանակք քան զմերսն բազմամբոխք էին, խրամ խորայատակ զբանակաւն պեղէին ա՟մ ուրեք, թէպէտ և մի օր կամ զգիշեր մի հասանէր զկայ ուրեք առնուլ, և բազում ուրեք ձողիս ևս շուրջանակի ածէին պատնէշ։ Եւ յաւելու Քսենոփոն՝ թէ ամբոխն իսկ բազմութ՟ե զօրացն դիւրացուցանէր զգործն ։ Քսէն. դաստ. Կիւր. ը. 80։

Վկայեն ամենեքին՝ զի ոչ ոք յազգաց ըստ ա՟մ մասին գիտութ՟ե և գործոյ իրաց պատերազմի գերազանցեաց քան զհռոմայեցիս. բայց մանաւանդ յարուեստ բանակելոյ և ճակատ յարդարելոյ՝ անհակառակաբար գեր 'ի վերոյ գտան: Ընդ որ և Պողիբիոս առաւել զարմանայ, արդարակորով դատաւորն յիրս պատերազմի, և որ բազում ժամանակս ականատես եղև գերազանց հրահանգաց զօրացն հռոմայեցւոց: Փիլիպպոս հայր Պերսեայ, և յառաջ քան զնա Պիւռոս, մտահաճք ընդ Յոյնս՝ արհամարհելով զայլ ա՟մ ազգս որպէս խուժադուժս, իբրև տեսին զկարգ և զօրոշմունս բանակին հռոմայեցւոց՝ հիացեալք, լի զարմացմամբ գոչէին. Չէ և չէ այդ յօրինուած բանակի բարբարոսաց:

Այլ քան զա՟մ կարգս նոցա զարմանալի է, և դժուարահաս վասն կարի մեկուսութ՟ե մերոյ 'ի բարուց նոցա, խստամբեր բնութ՟ի ազգին՝ անպարտելի յա՟մ ծանուց աշխատուե՟ց: Տես ինձ քանի հզօր է բարւոք դաստիարակութ՟ի, և 'ի մատաղ տիոց կրթութ՟ի: Առաւելք 'ի զօրաց անտի, թէպէտ և քաղաքացիք էին Հռոմայ, իւրովի զանդաստանս իւրեանց մշակէին, և 'ի ժամանակի խաղաղութ՟ե 'ի խիստ ևս աշխատութ՟ի կրթէին: Ձեռք նոցա սովորեալք 'ի փայտատ և 'ի բրիչ և 'ի ձգել զծանր արօրն, զգործիս ևեթ փոխէին, և թեթևագոյն զինուորականքն թուէին նոցա. որպէս զսպարտացւոցն ասեն՝ թէ 'ի պատերազմունս և 'ի բանակի առաւել դիւրական վարէին կեանս, այնպէս յայլ ա՟մ ժամանակս խիստ և սաստիկ կենցաղավարեալ:

Եւ մաքրութ՟ի իսկ անկարծելի պահէր 'ի հռոմէական բանակին. 'ի պողոտայն մեծ՝ որ երթայր 'ի Պրետորիոնն, քանզի 'ի յաճախ երթևեկելոյ ընդ այն սպայից և զօրաց առ պատուէր հրամանի զօրավարին՝ ստէպ փոշոտեալ պականէր, էին զինուորք կարգեալ 'ի սպաս՝ աւել ածել հանապազ 'ի ձմերայնի, և ջուր յամարայնի սրսկել առ 'ի ցածուցանել զփոշին:

ՅՕԴՈՒԱԾ Ժ.

Յաղագս սպասուց և հրահանգաց զօրականին և սպայից հռոմայեցւոց 'ի բանակին:

Եւ իբրև այսպէս յարդարեալ կազմի բանակն, ժողովեալ հազարապետք երդմնի առնեն զա՟մ այր՝ ըստ ա՟մ լեգէոնս՝ զազատ և զստրուկ: Եւ ամենեքին մի ըստ միոջէ երդնուն, չգողանալ ինչ գտեալ 'ի բանակին, այլ որ ինչ և գտանիցեն՝ ածել առ հազարապետսն ։ Բայց հանգոյն իմն և յառաջագոյն 'ի մտանելն 'ի զինուորութիւն՝ երդումն տան, զոր թողի ցայս վայր, որպէս զի երկրորդաւս ազդողագոյն առաջնոյն զօրութ՟ի ծանիցի ։ Աւլ. Գելլ. ԺԶ. Դ. Արդ երդնոյր անդ զօրականն, մի՛ ինչ միայնակ կամ ընդ այլս բառնալ 'ի բանակէն կամ շուրջանակի 'ի սահմանացն մինչև ցբիւր քայլ, այլ ածել առ բդեաշխն կամ առ տէր իրին՝ որ ինչ գտանէրն աւելի քան զգինս միոյ սեստերտի, բաց յիրաց՝ որ 'ի պայման երդմանն նշանակին ։ Իբր ոչ եթէ սահմանադրութ՟ք ութսուն ասպարիզացն անդր քան զայն օրէն էր գողութ՟ի . այլ որ ինչ ոք գտանէրն, ոչ էր նմա պարտ ածել առ բդեաշխն ։ Ընդ ներեալ իւր՝ 'Ի Ֆռոնտ. Դ. Ա. հրաման էր բառնալ և զպտուղ . բայց Փռոնտինն առ 'ի ցոյց հռոմէական ժուժկալութ՟ն՝ ածէ օրինակ իմն արժանի գրոյս յիշատակի . զի 'ի շրջափակ բանակին էր ծառ պտղալից, և առանց ուրուք ձեռն արկանելոյ յայն՝ 'ի վաղիւ անդր չու արար բանակն ։ Եւ զօրավարէր յայնժամ Սկաւրոս, որ և գրեացն զայս ։

Արդ յերդմանէ աստի յայտ է, թէ քանի՛ փոյթ և խստութ՟ի էր հռոմայեցւոց առ 'ի խափանել զզօրսն յա՟մ յափշտակութ՟է և 'ի բռնութ՟է . զի ահա ոչ միայն գողութ՟ի արգելեալ էր զօրականին աններելի, այլ և ոչ զգտեալն ըստ բախտի յուղւոջ՝ օրէն էր նմա 'ի կիր առնուլ ։ Որպէս և օրէնք իսկ ընդ գողս համարին, որ զայլոյ ինչ գտեալ՝ առ իւր ունիցի, թէպէտ գիտիցէ զտէրն և թէ անգիտանայցէ [1] ։

Սպարտիան. 'Ի Պեսկէն. Որպէս ասացաք, գողութ՟ի արգելեալ էր զօրականին աններելի . այս և առ ինքնակալօք ահագին օրինակաւ ցուցաւ ։ Զի միոյ ուրուք 'ի զինուորաց գողացեալ վառեակ 'ի գեղջկէից՝ մինչ ուտէր զայն ընդ ինն վրանակիցս իւր, ինքնակալն Պեսկեննիոս Նիգեր զտասնեսին ևս հրամայեաց 'ի մահ . և մեծաւ թախանձանօք ա՟մ բանակին հազիւ շնորհեալ նոցա զկեանսն՝ դատապարտեաց զնոսա 'ի տոյժս, տալ իւրաքանչիւր տասն տասն վառեակս գեղջկին, և դրօշմ աշխարհագրոյժ նախատանաց եհար 'ի նոսա՝ կրել զայն մինչև ցվախճան պատերազմին ։ Քանի՜ ոճիրք խստութ՟բս այսուիկ չխափանիցին ։ Քաջ վայելուչ է տեսանել բանակ այսպիսի բարեկարգ . այլ դժուա խոլր. զօրք հեթանոսացն հլուք և հրահանգք, իսկ մերքն պանծացեալք 'ի քրիստոնէութի՟՝ յափշտակողք և աներկիւղք յա՟յ և 'ի մարդկանէ. Ապաքէն շրջափակ բանակին էր պարիսպ ամուր ընդդէմ անկարգութե՟ և համարձակութե՟. բայց տեսցի ընդ հուպ, զի և անդէն 'ի չուն՝ հրահանգք խիստք էին նոցա պատնէշք շրջափակ.

---

[1] Որ զայլս ինչ անկեալ բարձցէ առ 'ի ժառանգութեն, պարտաւոր լիցի գողութ՟ն, եթէ գիտիցէ և թէ ոչ զտէրն ։ Սաբին. յօրէնս. գողոյ. Ե.

Զարմանալի իմն կարգ էր 'ի բանակին 'ի տունջեան և 'ի գիշերի, 'ի բարբառ պահանորդացն ձայն տալոյ միմեանց, 'ի գիշերապահս, և 'ի գունդս թիկնապահաց. որովք յամրի և 'ի խաղաղութե՟ կային զօրքն. Եւ առ ապահովագոյն պահպանութիւն, և առ պահապանացն դիւրութի՟, բաժանէին զգիշեր 'ի չորս ժամանակս կամ 'ի պահս, և զտիւ նոյնպէս. Իրաց իւրաքանչիւր սահմանեալ էր ժամ և տեղի, և ա՟մ ինչ կարգեալ և յերիւրեալ 'ի բանակին որպէս 'ի բարեկարգեալ տան.

Կրտսերն Սկիպիոն Ափրիկեցի, որպէս այլուր զանպաճոյճ կենաց նախնեացն և զսպասուց պիտոյից նոցա ասացաք, չներէր զինուորի այլ ինչ կահ՝ բայց միայն սան և շամփուր և պնակ փայտեայ. և ոչ աւելի ինչ գտաւ առ Եպամինոնդայ մեծի զօրավարին Թեբացւոյ [1]. Եւ ոչ նախնի զօրավարք հռոմայեցիք ճոխագոյնք էին. ոչ ինչ սպաս արծաթի գտանէր 'ի բանակին, բայց միայն վասն զոհից պատարագացն բաժակ մի և անօթ աղի [2], այլ և յասպազէնս նշողէր արծաթ. Առ 'ի ճաշ և յընթրիս լինէր նշան. և որպէս յառաջ ասացաք, բազումք յինքնակալաց հռոմայեցւոց յանդիման ամենեցուն, և յաճախ ևս 'ի բացի ճաշէին. և զՊեսկեննեայ ասի, թէ ոչ պատսպարէր ընդ յարկաւ յանձրևոյ [3]. Եւ այնպէս անպաճոյճ էր ճաշ ինքնակալացն և նախնի զօրավարաց [4], ասէ Աղեքսիոս Մաքսիմոս, մինչև հրապարակաւ ճաշէին համարձակ. զի խորտիկք նոցա ոչ այնպիսի ինչ էին՝ թէ հարկ էր ծածկել զնոսա յաչաց զինուորաց. այլ մանաւանդ ուրախ լեալ զարմանային զօրքն 'ի տեսանել՝ զի և տեարք իւրեանց ոչ զազնուագոյնս ճաշէին ։

---

[1] Եպամինոնդ զօրավար Թեբացւոց ամենևին ժուժկալ, առ որում ոչ գտաւ այլ ինչ կահ բայց միայն սան և շամփուր. Փրոնտին. Դ. Գ.

[2] Բաց 'ի ձիոց և յարանց և յարծաթոյ՝ որ առաւել յասպազէնն էր. զի 'ի ճաշ ա՟մ ուրեք սակաւապէտք էին զինուորք, այլն ա՟մ աւարն՝ որ առնլոց էր՝ զօրացն թողաւ. Լիւ. ԻԶ. ԾԷ.

[3] Նոյն ինքն յա՟մ արշաւանսն առաջի ամենեցուն զզինուորական կերակուրն առնոյր ... և ոչ յարկ ապաւինի խնդրէր 'ի պատսպարութ՟ի յանձրևոյ. Կապիտոլ.

[4] Այսքան անպաճոյճ էր նախնեացն ճաշ, առհաւատչեայ մարգասիրութե՟ և ժուժկալութե՟ նոցա. զի ոչ ինչ ամօթ էր արանց մեծամեծաց հրապարակաւ ճաշել. Ապաքէն չէին նոցա խորտիկք ազնիւք, թէ ամաչէին 'ի տեսանել զայն ժողովրդեան. Վաղ. Մաքս. Բ. Ե.

Նաև քան զա՟մ իսկ հրահանգս զօրացն հռոմայեցւոց այն զարմանալի էր, զի հանապազ զօրքն 'ի կրթութե՟ կային, եթէ 'ի բանակի և թէ արտաքոյ, և ոչ երբէք անգործ ։ Համբակ զօրականն երկիցս հանապազօր առնէր հրահանգս մարտի, և միանգամ երիցագոյնք, կրթելով յա՟մ շարժմունս և 'ի բնաւ մասունս պատերազմական արուեստին [1] ։ Նաև զզէնսն պարտ էր նոցա մաքրել և սրբել, զօրկ և փայլուն պահել [2] ։ Նաև գնային վարեալք զինուքն հանդերձ և ձողեօք ընդ ասպարէզս ձիգս, և յաճախ ևս՝ ընդ դժուարս և ընդ քարաժայռս, վարժեալք 'ի պահել զկարգ իւրեանց 'ի խառն և 'ի շփոթ բանակին, չկորուսանելով զդրօշն յաչաց ։ Նաև մարտ եդեալ կեղծիւք կռուէին ընդ միմեանս յանդիման սպայիցն և զօրավարաց և բդեշխին իսկ, որք մարտակից ևս լինել նոցա ոչ ամօթ համարէին ։ Իսկ 'ի ժամանակի խաղաղութե՟ վարէին 'ի վաստակս երևելիս յօգուտ աշխարհին, և զի մի թուլասցին ։ Որպէս արահետ ճանապարհքն, յայն սակս իսկ զինուորականք կոչեցեալ, արդասիք են այսր իմաստուն և պիտանի կարգի [3] ։

Արդ հնա՞ր ինչ էր 'ի հանապազօր անդուլ հրահանգսն մուտ գտանել անպատեհ զբաղմանցն, յորս ծախեալ սպառին ինչք և ժամանակ ։ Մոլեգին զակատումն 'ի խաղս, որ 'ի նախատինս մերոյ դարուս՝ տապալեաց զա՟մ ամրութի՟ բանակի, և զկարգս զինուորական հրահանգաց, առ հինսն քան զա՟մ հրէշս դժնդակ արդեօք թուէր և զարհուրական ։

---

[1] Ընդ. քանզի բանակետղն դատարկ էր, ստէպ հրամայէր զօրացն արշաւել, զի ուսցին համբակք դրօշուցն հետևել, և գիտել զիւրաքանչիւր կարգ 'ի ճակատուն ։ Լփս. իգ. ւէ ։

Յառաջնումն աւուր լեգէոնք ասպարէզս չորից մղոնաց զինուք արշաւեցին. յերկրորդումն աւուր զզէնսն յարդարել և սրբել առաջի խորանացն հրամայեաց. և յաւուրն երրորդի ընդ միմեանս որպէս 'ի ստոյգ մարտի հարան, և զբութ աշտեայսն ձգէին ։ Լփս. իղ. ծա ։

[2] Կէսք զսուսերսն սրէին, այլք զսաղաւարտսն և զվահանակ երեսաց և զասպարսն և զզրահս սրբէին ։ Լփս. խդ. ճ ։

[3] Զօրացն աշխատութե՟ հորդեալ արահետ ։ Կոռնփ. Բ. ծդ ։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Յաղագս ճակատամարտի։

Ժամ է ասել և զկարգաց յարձակման զօրացն Հռոմայեցւոց և Յունաց, և զճակատ յարդարելոյ։

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Թէ պատճառ մեծ յաղթութեան մարտին է զօրավարն։

Ըստ է պատերազմական քաջութեան լրումն. և ըստ այսմ դատէին հինք զքաջութիւն զօրավարի, եթէ բարւոք մղէր զճակատամարտ։ Զյաջողուած մարտի ոչ 'ի բազմութեան զօրաց վարկանէին, զի բազմութիւն աղմկէ յաճախ զբանակն, այլ յիմաստութեան և յարիութեան զօրավարին՝ որ առիթն է և առհաւատչեայ յաղթութեան։ Շունչ իմն և հոգի համարէր նա բանակին, զի նովաւ ուղղին ամենայն շարժմունք սորա, և ձայնի նորա հնազանդի ամենայն, և գրեթէ միշտ յուղիղ կամ 'ի թիւր առաջնորդութենէ նորա է յաղթութիւն կամ պարտութիւն։ Բարձեալ էր ամենայն յոյս կարքեդոնացւոց՝ 'ի հասանել առ նոսա Քսանթիպեայ սպարտացւոյ։ Նորա եկեալ և լուեալ զամենայն անցս պատերազմին, յանհմտութիւն զօրագլխացն կացոյց զձախողութիւն, և եցոյց զայն։ Ոչ եած նա ընդ իւր զօրս հետևակ կամ հեծեալ, այլ քաջ զօրավարութեամբն զամենայն ինչ վաղվաղակի կերպարանափոխ արար, և ծանուցաւ, զի հանճար միոյ հզօր է քան զբազուկս բազմաց։ Հռոմայեցիք երեքկին պարտութեամբն յԱննիբաղայ ուսան, թէ քանի՛ չարիք 'ի վրիպակ ընտրութենէ զօրավարին պատահեն։ Եւ զպատերազմն Պերսեայ, անհմտութեամբ երից բդեշխիցն զերեամ յերկարաձգեալ, Պօղոս Էմիլիոս 'ի սուղ ժամանակի նախ քան զկատարած ամին կատարեաց փառօք։ Յայսպիսի դէպս երևին՝ թէ քանի՛ խտիր է ընդ այր և ընդ այր։

Կարևորագոյն պարտք են զօրավարի, և իմաստութիւն և հանճար մեծ, խորհել թէ տացէ՞ ճակատամարտ եթէ ոչ տացէ. զի յերկուցն ևս անխորհրդութենէ հասանէ կորուստ ։ Մարդոնիոս երեսուն բիւրուքն չարաչար կորեաւ, վասն չլսելոյ խրատուն Արտաւազայ՝ որ խրատէր զնա մի՛ ելանել 'ի ճակատամարտ, և մի՛ երկաթով այլ արծաթով և ոսկւով ընդ Յոյնս մարտնչել ։ Եւ զօրավարք Դարեհի 'ի Գրանիկ ընդդէմ հանճարեղ խորհըրդոյն Մեմնոնի ետուն զճակատամարտն, որ զնախկին հարուածն ետ պարսկայնոյ պետութեան 'ի կործանումն ։ Եւ Վարրոնի անմիտ յանդգնութեան անսաստեալ աղերսանաց իշխանակցին և խրատուն Փաբիոսի, արկ զհասարակապետութիւնն 'ի չարաղէտ պատերազմն Կաննեայ ․ փոխանակ զի կործանումն անկանգնելի հասուցանէր թերևս Աննիբաղայ, եթէ եօթնեակս ինչ յապաղէր ։ Իսկ ընդ հակառակն Պերսէոս կորոյս զպատեհ, ոչ յօգուտ արկեալ զխրախոյս զօրականին ․ զի պարտ էր նմա սաստկացուցանել զմարտն ընդ հռոմայեցիս յետ պարտութեան այրուձիոյ նոցա, որով խռովեալ և զարհուրեալ էին զօրք նոցա ։ Եւ Կեսար կորնչէր արդեօք յետ ճակատամարտին՝ որ 'ի Դիւռաքիոն, եթէ Պոմպէոս յօգուտ 'ի կիր արկանէր զյաղթութիւն ։ Զի պատեհութիւնք են մեծամեծ գործոց, և պարտ է իմաստութեամբ անյողդողդ խորհրդով ժամանել ունել զդիպող վայրկեանն՝ որ անդարձ կորնչի ․ և այս ա՟մ զօրավարին հանճարոյ անկ է[1] ։ Բաժանեալ են հոգք և պարտք 'ի բանակին[2] ․ գլուխն հրամայէ, բազուկքն գործեն ։ ՙԱմն իրի Ոթոն ասէր ցզօրսն[3] ․ Դուք 'ի զէն և 'ի մարտ խրախուսեալ, թողէք յիս զխորհելն և առաջնորդել քաջութեան ձերոյ ։

ՅՕԴՈՒԱԾ Բ․

Յաղագս հարցանելոյ զդիս, և հրապարակախօսս առ զօրսն լինել նախ քան զճակատամարտն ։

'Ի ճակատամարտին մերձենալ պահուն՝ կարևորագոյն համարէին նախնիք հարցանել զկամս դից, և խընդրել զօգնութիւն 'ի նոցանէ ։ 'Ի թռիչս և 'ի կռիչս հաւուց, և յընդերս զոհից, և 'ի ճարակ դիցանուէր վառեկաց, և 'ի սոցին սակի իրս խնդրէին պատգամք. և զոհք և ուխտք և աղօթք դիցն մատչէին 'ի հաշտութի՟։ Բազումք 'ի զօրավարաց՝ մանաւանդ 'ի վաղ ժամանակս՝ զայսոսիկ անկեղծ և երկիւղած մտօք կատարէին, զառածեալք յանմիտ և 'ի ծաղրալից սնապաշտութի՟. իսկ այլոց արհամարհեալ զայնս 'ի սրտէ, կամ յայտնի իսկ հեգնէին. և ամպարիշտ ծաղուն նոցա համարէր պարտութի՟ն՝ որ 'ի տգիտութե՟ նոցա կամ 'ի յանդգնութե՟ պատահէրն։ Ոչ ոք 'ի թագաւորաց որպէս զմեծն Կիւրոս գտաւ երկիւղած. որ 'ի յարձակելն 'ի վերայ Կրեսեայ՝ առաջնորդէր նուագաց մարտին, և ա՟մ զօրն ձայնիւ մեծաւ զհետ կցէին, կարդալով զդիս զօրութե՟ց։ Պօղոս Եմիլիոս 'ի դիմելն 'ի վերայ Պերսեայ՝ եզեն Հերակլի արջառս քսան 'ի վերայ միմեանց, և ոչ 'ի միումն գտաւ նշան բարի. իսկ 'ի զենուլ միւս այլ, գուշակեաց 'ի նմա զյաղթութի՟։ Եւ ընդ հակառակն Եպամինոնդ, ոչ ինչ ընդհատ 'ի նմանէ քաջութ՟բն՝ այլ ոչ իբրև զնա նանրահաւատ, 'ի խափանելն զնա չարագոյժ հաւադիտացն 'ի լեւկտրեան ճակատամարտին, զՀոմերի տողն պատասխանի ետ՝ թէ Չիք հաւահմայ քաջ քան զպատերազմելն 'ի վերայ հայրենեաց։ Մի 'ի բդեշխից հռոմայեցւոց 'ի մտի եդեալ՝ 'ի հասանելն առ թշնամին ճակատ յարդարել, ընդ ա՟մ չուն փակեալ եկաց 'ի դեսպակին՝ զի մի՛ չարագուշակ ինչ տեսցէ նշան խափանիչ խորհրդոյն։ Միւս այլ ոմն յաւել քան զնա, և զվառեակս արկ 'ի ծով զի ոչ ճարակէին, և ասէ. Իսկ եթէ ոչ կամին ճաշակել, ապա արբցեն։ Այլ ամպարիշտք հանդոյն սոցին սակաւք էին, իսկ հակառակ նմին հաւատքն հզօրագոյնք։ Ապաքէն բազում ինչ 'ի պաշտամունսն մնոտի էր. այլ զոհք և ուխտք և աղօթք՝ զոր նախ քան զպատերազմն մատուցանէին՝ էին ցոյցք հաւատոյ մատուցողացն, զի ա՟ծախնամ տեսչութե՟ն է տալ զյաղթութի՟, որ յաջողէ զա՟մ։

---

[1] Եթէ վայրկ մի յապաղես 'ի դէպ ժամանակիս, որոյ պատեհութիւն երագ անցանէ, 'ի զուր ապա 'ի կորնչել նորա խնդրեսցես զայն ։ Լիւ․ իե․ լէ ։

[2] Բաժանեալ է ընդ զօրն և ընդ զօրավարս պաշտօնն ․ զօրականին անկ է խրախուսել 'ի մարտ, զօրավարք խնամովն և խորհրդով … օգնեն ։ Տակ․ պատմ․ Գ․ Ի ։

[3] Ձեզ անկ են զէնք և խրախոյս, ինձ խորհել և առաջնորդել քաջութեան ձերոյ ։ Անդ․ Ա․ պդ ։

Եւ 'ի կատարել ա՟ծայնոց պաշտամանցն, ապա մարդկօրինաբար խրախուսէր զզօրս զօրավարն։ Առ ամենայն ազգս սովորութի՟ էր՝ նախ քան զպատերազմն հրապարակախօսել առ զօրս, և կարի իմաստուն օրինադրեալ 'ի նպաստ մեծ յաղթութե՟։ Զի յորժամ յարձակել 'ի թշնամիս առաջի կայցէ, և կռուել ընդ նոսա, պարտ է մտալուտ երկիւղի մահուն պատճառս դիպող ընդդէմ գնել, որ բաւական իցեն՝ եթէ ոչ խլել 'ի սրտէ զտնկակից բնութե՟ս զարհաւիրման, գէթ մարտնչել ընդ նմա և յաղթել։ Արդ հայրենասիրութի՟, պարտք փոխանակելոյ զանձն 'ի վերայ աշխարհին, յիշատակ կանխակալ յաղթութե՟ցն, վրէժխնդրութի՟ փառաց ազգին, անիրաւութի՟ բուռն և անգութ թշնամւոյ, և վտանգ ծնողաց և կանանց և որդւոց զօրականին, այս ա՟մ և հանգոյն սոցին յորդորք յառաջ բերեալ 'ի սիրելի և 'ի մեծարոյ զօրավարէ՝ քաջալերեալ խրախուսեն զզօրս։ Զինուորականն ճարտարխօսութի՟ ոչ 'ի ճառսն է, այլ մանաւանդ յիշխանական 'ի պատկառեցուցիչ իմն կերպարանս բանիցն. ևս առաւել 'ի սիրելութե՟, որ գեր 'ի վերոյ անցեալ՝ լնու և զտեղի զօրութե՟[1]։ Քսեն. դաստ. Կիւր. գ. 84։ Զի ոչ եթէ 'ի ճառից անտի, որպէս ասէրն Կիւրոս, փոխի յանկարծ զօրականն, և վատն և երկչոտ՝ արի և խիզախ լինի, այլ ճառքն զարթուցանեն և խրախուսեն զբնաւորական արիութիւն, և յաւելուն 'ի նա նոր զօրութի՟ և ախոյժս։

Առ ուղիղ դատաստան առնելոյ զհասարակաց սովորութե՟ս ազգացն առաջնոց յա՟մ պատերազմունս հրապարակախօս լինելոյ առ զօրսն, պարտ է փոխել մտօք 'ի ժամանակսն մեր, և խելամուտ լինել բարուց և սովորութե՟ց նոցա։ Զի զօրք Յունաց և Հռոմայեցւոց էին նոքին իսկ քաղաքացիք, յորոց ոչ ինչ զանխուլ գործէր 'ի ժամանակի խաղաղութե՟. նմին իրի զօրավարն 'ի բանակին կամ 'ի ճակատուն տեղւոջ, որպէս գրեթէ առ ժողովուրդն ատենախօսէր։ Մեծարէր զզօրսն և 'ի վստահութի՟ և 'ի սէր յորդորէր զնոսա՝ յայտնելով նոցա զխորհուրդս իւր, և զհնարս գործոյն վասն որոյ այնպէսն գործէր. որով զօրքն որպէս 'ի վերայ անձանց մարտնչէին։ Զօրավարք և սպայք և զօրք 'ի տեսիլ եւեթ իրերաց քաջալերեալ խրախուսէին. զի ա՟մ ուրեք այսպէս է բազմութի՟, միմեանց եռանդն ածեն, յորդորին իրերօք. իւրաքանչիւրոք ջանայ արիանալ, այր զընկեր ստիպէ 'ի նախանձ, և զերկիւղ միոյն փարատէ քաջութի՟ այլոյ. իւրաքանչիւրոց յօժարութի՟ փոխի 'ի հասարակացն, և ելք իրացն այնմ զհետ գնան։

Ուր երբեմն կարևորագոյն հարկ դրդելոյ զյօժարութի՟ և զնախանձ զօրականին. որպէս 'ի չու առնել ճեպով ընդ դժուարս՝ առ 'ի զերծանել 'ի դժպատեհ ուստեք տեղւոջէ, կամ առ 'ի դիպողագոյն ուրեք փոխել, և յորժամ արիութե՟ պէտք էին, և անյողդողդ ժուժկալութե՟

---

[1] Զսէր փոխանակ զօրութե՟ն պատրաստեալ. Տիտ. յԱփրիկ. ԺԶ.

սովոյ և կարօտութե՟ կարեւորաց , կամ խստամբեր ճըդանց , և յորժամ իրք դժուարինք և բազմավտանգք կարեւորք 'ի յաղթութի՟ն առաջի կային , և յորժամ ըդկաց մնաց կոտորածի զօրացն հարկ էր մխիթարել քաջալերել և խրախուսել անդրէն 'ի մարտ , և եթէ հարկ լինէր նահանջել վտանգաւ մեծաւ առաջի թշնամեաց կամ ընդ երկիր նոցա , կամ թէ 'ի կատարած մարտին և 'ի գործ ինչ կարեւոր՝ արիական եւեթ ճիգն զօրացն պիտէր ։ Յայսոսիկ և 'ի հանգոյն սոյին դէպս հրապարակախօսէին զօրավարք առ զօրս , հետազօտելով զյօժարութի՟ նոցա յառաւել կամ 'ի նուազ խրախուսանացն , ցուցանելով նոցա վասն որոյ զայս ինչ կամ զայն խորհէին առնել , և յորդորելով զնոսա 'ի նոյն , առ 'ի ցածուցանել զշշունջս՝ որ զդժուարութի՟ւն յաճախեալ ստուարացուցանէին 'ի վհատութի՟ , քաջայոյս առնելով զնոսա յելս վտանգաց և 'ի յաջողութի՟ , և ուսուցանելով նոցա հնարս զգուշութե՟ և յորոց իրաց զգուշանալն պարտ էր ։ Կարեւոր էր զօրավարին փայփայել զզօրսն՝ յայտնելով նոցա զխորհուրդս իւր և զխէթս կասկածանաց և զհնարս յաջողութե՟ , զի հոգ 'ի մտի եդեալ՝ միաբանեսցեն ընդ իւր նովին խորհրդովք 'ի գործ ։ Զօրավարն 'ի մէջ զօրաց , որք որպէս զնա ինքն ոչ միայն անդամք էին նորին պետութեան՝ այլ և 'ի յանձանձանս իրաց աշխարհին հաղորդք , համարէր որպէս հայր յազգատոհմի իւրում ։

Ապաքէն դժուարին էր ձայնի զօրավարին լսելի լինել ամ՟ զօրացն . այլ բանակք Յունաց և Հռոմայեցւոց սակաւաւորք էին , որպէս յայտ է . զի Յունացն սովորաբար տասն կամ երկոտասան հազար արք էին , իսկ Հռոմայեցւոցն հազիւ երբեք կրկնապատիկն . այլ այս 'ի վաղ ժամանակս ։ Եւ զօրավարք հանգոյն ատենախօսաց 'ի բեմէ լսելի առնէին զձայն իւրեանց . բայց թէպէտ և ոչ ամենեքին զամ՟ ինչ լսէին , այլ ամ՟ ժողովուրդն՝ եթէ յԱթէնս և թէ 'ի Հռոմ՝ գիտէին զամ՟ , և խորհրդով նոցա ամ՟ ինչ սահմանէր , և ոչ ոք քրթմնջէր անգիտել զիրսն ։ Զի շատ իսկ էր՝ թէ աւագագոյնք և սպայք վաշտուց և գլխաւորք յիւրաքանչիւր խորանաց լսէին . 'ի նոցանէ ապա այլք տեղեկանային զամ՟ ։

'Ի դրօշուածս սեանն Տրայիանոսի՝ նա ինքն կացեալ 'ի հողաբլուր բեմի 'ի վեր քան զհասակաչափ մարդոյ , ատենախօսէ առ զօրսն . և կան զնովաւ աւագ սպայք շուրջ 'ի հողաբլրին , և ամբոխ զօրացն շրջափիւռ տարածեալ ։ Անհնարին բազմութի՟ մարդկան յանձուկ տեղւոջ ամփոփին յոտնկայս անզէն խռնեալ . զի յաճախագոյն 'ի բանակին ատենախօսէին զօրավարք առ զօրսն , մինչ անզէն 'ի խաղաղութե՟ն կային . դարձեալ և 'ի մանկութ՟է կրթէին 'ի դէպ ժամանակի բարձր բարբառով և յստակ խօսել :

Իսկ եթէ բազում յոյժ էր զօրն , և ժամ պատերազմին մերձեալ , ա՛յլ ի՟ն պարզ և ընդել օրինակաւ խօսէր ընդ զօրսն զօրավարն , ձիավարեալ ընդ կարգս բանակին՝ մերթ զոմանս մերթ զայլս խրախուսելով . որպէս Աղեքսանդր արար յԻսոս 'ի ճակատամարտին[1] . և Դարեհ առ Արբելաւ ա՛յլ ի՟ն ազգ՝[2] 'ի բարձուէ կառացն ատենախօսելով ընդ զօրսն , զաչս և զձեռս շուրջանակի առ սպայս և առ զօրսն ածեալ : Բայց թէպէտ և երկաքանչիւրոցն առ մերձակայս եւեթ լսելի լինէին ձայնք , այլ 'ի նոցանէ ընդ ա՟մ բանակն իմաստք ճառիցն ծաւալէին :

Յուստ. ԼԸ. ԴԷ. Յուստինոս , որ եկաց յաւուրս Օգոստեայ , քաջ վիպագիրն համառօտող գրոցն Տրոգեայ Պոմպէի , ածէ 'ի նմանէ զատենախօսութ՟ի Միհրդատայ ամբողջ . ընդ որ ոչ է պարտ զարմանալ վասն երկայնութե՟ն , զի ոչ 'ի ժամ պատերազմի խօսի զայն Միհրդատ , այլ յետ յաղթելոյ հռոմայեցւոց 'ի ճակատս բազումս՝ 'ի խորհելն միւսանգամ յարձակել 'ի վերայ նոցա՝ քաջալերէ զզօրս իւր :

Այն զօրք նորա իբր երեսուն բիւր , 'ի քսանևերկուց յայլալեզու ազգաց ժողովեալ , և զամենեցուն նոցա ըզբարբառ գիտէր Միհրդատ , և խօսէր ընդ նոսա անթարգման : Յուստինոս 'ի պատմել զատենախօսութի՟ն՝ 'ի մի վայր եւեթ ասէ ժողովեալ Միհրդատայ զզօրսն , և ոչ ինչ ա՛յլ յաւելու՝ թէ զիարդ ընդ քսանևերկու ազգսն խօսեցաւ . կրկնելով արդեօք զերկայն ճառսն յիւրաքանչիւր բարբառս , զոր ոչ կարծեմ , եթէ այլազգ : Իցէ թէ յայտնագոյնս պատմէր վիպագիրն , որով մարթէր գուշակել ինչ . բայց թուի առ համազգիսն եւեթ իւրովի խօսեցեալ , իսկ առ այլս թարգմանաւ զխորհուրդս և ըզկամս իւր ցուցեալ :

Լիւ. Լ. ԼԲ. Ըստ նմին օրինակի և Աննիբաղ , 'ի պատրաստելն ընդդէմ Սկիպիոնի յԱփրիկէ 'ի ճակատամարտ՝ պարտ վարկաւ խրախուսել զզօրսն . և ըստ ազգի ազգի բարբառոյ նոցա և բարուց և օրինաց և զինուց և հանդերձից , և ըստ այլևայլ ցանկութեան նոցա , պէսպէս յորդորանս մատուցանէր ։ Օգնական գնդաց խոստանալով վաղ զհատուցումն և յաւելուած թոշակի նոցա յաւարէ մարտին . զգաղղիացւոց զընդաբոյս զոխերիմ թշնամութիւնն ընդ հռոմայեցիս գրգռեալ . լիգուրացւոց , որ բնակէին յերկիր լեռնային յամուլ և յապալեր , զանդաստանս արգաւանդս Իտալիոյ՝ յաղթանակ քաջութե̃ նոցա ցուցեալ . մաւրիտանացւոց և նումիդացւոց զխիստ և զբռնաւոր տէրութ̃ին Մասինիսայ առաջի արարեալ , որում 'ի մարտեալն հնազանդելոց էին . Նաև այսպէս զազգս իւրաքանչիւր այլևայլ երկիւղիւ և յուսով յորդորէր . իսկ կարքեդոնացւոց զո̃մ ինչ սրտառուչ և յորդորող բանիւք[1] յանդիման առնէր , զվտանգ հայրենեացն , զթերափս , զշիրիմս հարցն , զերկիւղ և զարհաւիրս ծնողաց , զկանանց և զորդւոց , և զբաղդ Կարքեդոնի՝ որում մօտալուտ 'ի վերայ կայր կործանումն և ստրկութե̃ կամ իշխել տիեզերաց , ծայրագոյն առաջի դնելով յոյս և երկիւղ ։ Գեղեցիկ էր ճառն , այլ իբր բազմալեզու այլազգախառն զօրացն իմանալի . և զայն իսկ յաւելու Լիւիոս , զի ինքն Աննիբաղ առ կարքեդոնացիսն խօսեցաւ , և զօրավարաց ազգի ազգի զօրացն պատուէր ետ՝ զնոյն առ իւրաքանչիւր զօրսն խօսել ։

---

[1] Առաջի նախագնաց գրօշուցն երթայր Աղեքսանդր . . . և ընդ գունդս զօրացն ձիավարեալ , պէսպէս բանիւք ըստ պատշաճի իւրաքանչիւրոցն խօսէր ընդ նոսա : Կուրտ. Գ. Ժ.

[2] Դարեհ 'ի կառս բարձու զաջ և զահեակ զաչս և զձեռս շուրջանակի առ զօրսն ձգէր : Կուրտ. Դ. Ժ.

Նոր զի և զպայս ևեթ ժողովեալ զօրավարին , թելադրէր նոցա որ ինչ կամէրն խօսել ընդ զօրս , և արձակէր զնոսա յիւրաքանչիւր գունդս՝ պատմել որ ինչ լուանն , և խրախուսել զնոսա 'ի մարտ ։ Այսպէս Աղեքսանդր մեծն նախ քան զբազմահռչակ ճակատամարտն Արբեղայ արար , որպէս պատմէ Արրիանոս ։ Գ. 117.

ՅՕԴՈՒԱԾ Գ.

Յաղագս յօրինուածոյ ճակատուն , և ճակատամարտի ։

Ոչ միօրինակ ճակատ յարդարէին նախնիք , զի և չմարթէր իսկ . քանզի յօրինուած ճակատուն ըստ բնուազգի հանգամանաց փոփոխի : Բայց զհետևակազօրն սովորութ՟ի էր 'ի մէջի կացուցանել 'ի մի կամ 'ի բազում կարգս, և զայրուձին յաջ և յահեակ թևս բաժանել :

---

[1] Կարքեդոնացւոց զպարիսպս հայրենիս , զթերափս , զգերեզմանս հարցն , զծնօղս և զորդիս և զկանայս երկնչոտս , զկործանումն , և զստրկութի̃ կամ զտիեզերակալութի̃ , և ոչ ինչ ընդ մէջ երկիւղի և յուսոյ ցուցանէր ։

'Ի ճակատամարտին առ Թիմբրեաւ՝ ա՟մ զօրք Կրեսեայ հետևակք և հեծեալք կային 'ի մի կարգ, երեսուն այր 'ի խորութ՟ի. բայց յեգիպտացւոց զօրացն, որք էին արք իբրև երկոտասան հազար, կազմեալք յերկոտասան բիւրեակս 'ի գունդս ստուարս քառակուսիս՝ հարիւր այր յերկայնութ՟ի և նոյնչափ 'ի խորութ՟ի : Եւ ոչ կարաց Կրեսոս փոխել զկարգ նոցա, յոր սովորեալ էին. որով մեծ կէս մասն ընտրելոց զօրացն անպիտան եղեն, և այն իսկ ոչ փոքր պատճառ էր պարտուե՟ն : Գնդացն Պարսից սովորական խորութ՟ի էր քսանևչորից արանց. բայց Կիւրոսի ստիպեալ ընդարձակել զճակատն որչափ մարթէր՝ առ 'ի չպաշարելոյ 'ի թշնամեաց, եթող երկոտասան այր 'ի խորութ՟ի՝ երկայնեալ զկարգն. և կատարած մարտին յայտ է ամենեցուն :

Քսէն. դաս. Կիւր. Է. 158: Դիոդ. Է. 596: 'Ի լևկտրեան ճակատամարտին զօրք սպարտացւոց, ընդ բնիկ և ընդ նիզակակից՝ քսան և չորք հազար հետևակք և հազար վեց հարիւր հեծեալ, կազմեցան կացին երկոտասան այր 'ի խորութ՟ի. իսկ Թեբացիք հնգետասան այր, թէպէտ և ա՟մ զօրքն էին վեցհազար հետևակք, և չորեքհարիւր հեծեալ, որ թուի հակառակ կարգաց. բայց Եպամինոնդ խորհէր անկանել միանգամայն ա՟մ զօրութ՟բ ստուար գնդին 'ի փաղանգ սպարտացւոց, զի եթէ հերձանէր զայն՝ այլ ա՟մ զօրքն 'ի փախուստ դառնային, որպէս և եղեն իսկ :

Պողիբ. ԺԷ. 764. Ժը. 664. Զփաղանգն մակեդոնական, զհռչակաւորն առ հինսն, այլուր նկարագրեցաք[1]. զի 'ի տասն գնդաց կազմէր՝ ըստ Պողիբեայ, և գունդ իւրաքանչիւր 'ի հազար վեց հարիւր արանց. և կային հարիւր այր յերկայնութ՟ի, և վեշտասան 'ի թանձրութ՟ի : Բայց ըստ պիտոյից ժամանակին զկէս երկայնութե՟ն յաւելուին 'ի թանձրութ՟ի, կամ զթանձրութե՟ն յերկայնութ՟ի : Նոյն ինքն Պողիբիոս զհեծելոյն Պարսից ասէ՝ միոյ հեծելագնդի ունել ութ հարիւր այրուձի, և կալ նոցա ըստ սովորական կարգի՝ հարիւր այր յերկայնութ՟ի, և ութ 'ի խորութ՟ի : Իսկ հռոմայեցիք զհետևակազօրն յերիս կարգս կացուցանէին, ընդ երկար ժամանակս պինդ կալեալ զսովորութիս զայս : 'Ի բազում ճակատամարտից զմին ևեթ, որ 'ի Զամա լեալ Սկիպիոնի ընդ Աննիբաղայ, բաւական համարիմ առ 'ի տալ զճշգրիտ պատկեր յօրինուածոյ ճակատուն հռոմայեցւոց և կարքեդոնացւոց։ Սկիպիոն կացոյց զաշտենաւորս յառաջին կարգն, թողեալ անջրպետս ընդ գումարտակսն. և 'ի կարգ երկրորդ զպետսն, ոչ առ անջրպետս առաջնոյ կարգին զգումարտակս նոցա կացուցեալ՝ որպէս սովորութ՟ի էր հռոմայեցւոց, այլ զհետ գումարտակաց աշտենաւորայն՝ թողլով անջրպետս ըստ առաջնոյ կարգին անջրպետացն ուղղութ՟ե, վասն երաստից փղաց թշնամեացն տալոյ համարձակ անցս. և զերրորդականսն կացոյց յերրորդ կարգ՝ որպէս գունդ պահեստի։ Իսկ զայրուձին յաջ և յահեակ թև տարածեաց. զիտալացիսն 'ի ձախմէ, և 'ի վերայ նոցա կացոյց զԼելիոս. և զնումիդացիս յաջմէ, և 'ի վերայ նոցա զՄասինիսա։ Եւ յանջրպետս առաջնոյ կարգին եդ զմեկնակաղէն զօրս, պատուէր տուեալ նոցա նախաձեռն առնել մարտին. և եթէ վանեալք չհանդարտեսցեն կալ առաջի բռնութ՟ե փղացն՝ յետս ընկրկել, քաջարշաւացն ընդ ուղիղ անջրպետսն անկեալ 'ի վերջկոյս բանակին, իսկ որ պաշարիցին՝ ընդ կողմնակի անջրպետսն յաջ և յահեակ թև անկանել։

---

[1] Հատ. Գ. 209:

Իսկ պատսպարան բանակի թշնամեաց կային փիղք աւելի քան զութսուն 'ի ճակատու. զհետ նոցա կացոյց Աննիբաղ զվարձկան զայլազգի զօրսն իբր երկոտասան հազար՝ լիգուրացիս, գաղղիացիս, բաղէարացիս և մաւրիտանացիս. և զհետ նոցա յերկրորդ կարգ զափրիկեցիսն և զկարքեդոնացիս զընտիրս բանակին, անկանել 'ի վերայ թշնամեաց 'ի պարտասել նոցա և 'ի վաստակաբեկ լինել 'ի մարտէ. և յերրորդ կարգ, անդր քան զասպարէզ մի, կացոյց զգունդս՝ զօրս յԻտալիոյ ածեալ էր ընդ իւր, զի չվստահէր 'ի նոսա վասն բռնի 'ի հայրենեացն իւրեանց մեկնելոյ, թշնամիս մանաւանդ և ոչ նիզակակիցս համարեալ զնոսա։ 'Ի ձախում թևի կացոյց զայրուձին նումիդացի, և յաջմէ զմակեդոնականն։

Յանկալի էր թէ Պողիբիոս կամ Լիւիոս զթիւ զօրաց երկոցունց կողմանցն, և զթանձրութ՟ի ճակատուցն նշանակէին։ 'Ի վէպս ճակատամարտին Կաննեայ, որ եղև ամօք ինչ յառաջ քան զսա, ոչ յիշին աշտենաւորքն և պետք և երրորդականք, որովք երրեակ կարգք հռոմէական բանակին կազմէին. բայց երևի լռեալ զայն Լիւեայ որպէս սովոր ինչ և յայտնի ամենեցուն։

Սովորութ՟ի էր, մանաւանդ ոմանց յազգաց, 'ի դիմեծն առ թշնամիս զաղաղակ հարկանել, եւ սուր ընդ աւտար շլահել։ Զի շռինդն այն, խառն ընդ հնչմամբ փողոցն, ապշեցուցեալ իմն զնոսա՝ անպատրաստս առնէր երկիւղի վտանգին, եւ խրախուսեալ համարձակէր, 'ի յաղթութիւն եւեթ ուշ կալեալ՝ ընդդէմ մահու խիզախել։ Էր զի հանդարտ եւ անվրդով յարձակէին զօրքն 'ի ճակատամարտ, եւ էր զի 'ի մերձենալ առ թշնամիսն՝ սաստիկ յարձակմամբ 'ի վերայ նոցա անկանէին. վասն որոյ կրկին յարձակմանց արք աւագք տարախոհք գտան, որպէս տեսաք։ 'Ի ճակատամարտին Թերմոպիլեայ լրտես 'ի Քսերքսեայ առաքեալ, ետես զսպարտացիս՝ զի ըզհերսն սանդրէին, կազմելով 'ի պատերազմն բազմավտանգ քան զամենայն պատերազմունս, որպէս եւ յամենայն իսկ մարտս պատերազմաց սովորութիւն էր նոցա։ Այս քաջութիւն այնոցիկ է, որ զոգիս 'ի բուռն ունիցին 'ի յաղթել կամ 'ի մեռանել։ Հեր-դ. Է. 208.

Մեկնակազէնք նախաձեւն առնէին մարտին՝ արդնընկէց նետընկէց եւ քարաձիգ լինելով 'ի փիղս թշնամեաց, եթէ էին. եւ 'ի ձիանն եւ 'ի հետեւակազօրն, աղմկելով զնոսա. եւ ապա ընկրկեալ ընդ անջրպետս գնդացն՝ պատըսպարէին յետկոյս առաջնոյ կարգին, եւ անտի դարձեալ նետաձիգ լինէին ընդ վերոյ գագաթան յառաջակայ զօրացն։ Իսկ հռոմայեցւոց աշտենաւորքն նախ ձգէին զաշտեայս, եւ ապա խառնէին 'ի մարտ. եւ անդ էր տեսանել զարիութիւն զօրացն, եւ զնախճիրս՝ որ գործէին։ 'Ի հերձանելն զթշնամին եւ 'ի փախուստ դարձուցանել՝ վտանգ մեծ էր, եւ է իսկ միշտ, զհետ պնդել փախստէիցն՝ թողեալ զմնացորդս զօրաց. ուստի բազում պարտութիւնք տուին պատճառս, որպէս տեսաք. եւ յոյժ զգուշալի է վրիպակս այս, որչափ զի արիութիւն եւ քաջութիւն երեւի գոլ։ Լելիոս եւ Մասինիսա 'ի պատերազմին Զամայ 'ի խռովել եւ 'ի փախուստ դարձուցանել զթշնամիսն՝ ոչ յախուռն զհետ յարձակեցան, այլ վաղ դարձ արարեալ 'ի հալածելոյ զփախստեայս՝ խառնեցան 'ի բուռն բանակն. եւ անկեալ 'ի վերջապահս Աննիբաղայ, 'ի սուր սուսերի կոտորեցին զմեծ մասն փաղանգաց նորա։

Պլու-տար-ք. 'ի Լիկ-ւր-գ. 54. Լիկուրգոս օրինադրեաց իսկ, 'ի հալածել առ վայր մի զթշնամին վասն աներկեան յաղթութեան՝ ապա դադարել. եւ օրինացն կրկին պատճառք էին։ Մի, զի Հելլէնք ընդ Հելլէնս տային պատերազմ, եւ մարդասիրութիւն պարտ էր՝ մի մինչեւ 'ի սպառ հալածել զսահմանակիցս եւ զազգակիցս, որք փախստեամբն զպարտութիւն խոստովանէին.

Եւ միւս ևս, զի յուսովն այնուիկ երագ ընկրկէին թըշնամիք՝ առ 'ի փրկել զանձինս 'ի մահուանէ, և ոչ յամառեալ կային 'ի մարտ՝ չունելով յոյս ապաստանի ։

Սաստկագոյն յետկուսէ և 'ի թևէ հարկանի թշնամին, զրեթէ միշտ բերելով զյաղթութի՟. Նմին իրի յա՟մ պատերազմունս զօրավարք քաջք զգուշագոյն պատսպարին 'ի վտանգէ աստի ։

Ընդ սակաւուն այրուձիոյ հռոմայեցւոց բանակին յիրաւի է զարմանալ. զի երեքարիւր հեծեալ առ չորեքհազար և առ հինգհազար հետևակս կազմէին ։ Ապաքէն նոքա զսակաւն քաջ 'ի կիր արկանէին, զի հեծեալք մերթ իջեալ 'ի ձիոյ՝ հետի մարտնչէին, և երիվարք նոցա մարզիկք կային մնային անշարժք, և մերթ հետևակս մեկնակաղէնս 'ի գաւակ ձիոցն առեալ վարէին, անհնարին երագունս 'ի հեծնուլ և յիջանել, և մերթ սանձարձակ 'ի թշնամիսն յարձակէին անընդդիմակացք, այլ այն ա՟մ չէր բաւական. և Աննիբաղայ 'ի չորեսին ճակատամարտսն՝ բազմութի՟ այրուձիոյն եղև զօրավիգն 'ի յաղթութիւն ։ Հռոմայեցիք 'ի սկզբանն պատերազմէին ընդ ազգս սահմանակիցս յերկիր անտառախիտ, այգևէտ, և ընդ ձիթաստանս, մերձ յԱպեննեան լերինս, ուր հեծելոց չէր մարթ համարձակ և ընդարձակ ձիավարել ։ Նմին իրի և սահմանակից ազգաց սակաւք էին հեծեալք, և երկոքին կողմանք առանց այրուձիոյ ուսանէին տալ պատերազմ ։ Հռոմայեցւոց էին երեքարիւր հեծեալք առ լեգէոն մի, և նիզակակիցք զկրկնապատիկն տային, և այն սովորութ՟ եղև յորէնս ։ Լիւ. Թ. ԺԲ. ԻԷ. Դ. Ճ. Ա.

Պարսից ոչ գոյին հեծեալք մինչև ցԿիւրոս. նա ըզպէտս թերւոյն վաղ ծանեաւ, և 'ի սուղ ժամանակի կազմեաց այրուձի մեծ, որով մանաւանդ յաջողեցաւ յաշխարհակալել ։ Նոյն պէտք եղեն և հռոմայեցւոց 'ի դարձուցանել նոցա զզէնսն յարևելս, և 'ի տալ պատերազմ ընդ ազգս՝ որոց զօրութի՟ յայրուձին էր. և զայրուձի վարել յԱննիբաղայ ուսան հռոմայեցիք ։

Անկելանոցք և դարմանոցք վիրաւորաց չկային 'ի բանակս նախնեաց, այլ ոչ անխնամ արդեօք լինէին վիրաւորք ։ Հոմերոս բազում բժիշկս երևելիս ասէ լեալ 'ի բանակն Յունաց 'ի պաշարման Տրովադայ. իսկ բժիշկք յայնժամ և վիրաբոյժք էին, որպէս յայտ է ։ Կրտսերն Կիւրոս ընդ զօրսն և բժիշկս ճարտարս ած առ Կիաքսար քեռի իւր. և Կեսար բազում ուրեք 'ի գիրս յիշատակաց իւրոց նշանակէ, զի 'ի կատարել ճակատամարտին՝ ածէին Քսէն. Դաստ. Կիւր. Ա. 29.

վիրաւորք 'ի մերձակայ ուրեք 'ի քաղաքաց ։ Եւ բազում զօրավարք այց առնէին վիրաւորաց 'ի վրանս . որով երեւի՝ զի 'ի միում վրանի եօթն կամ ութ զինուորք ընակակիցք , քաղաքակիցք գոլով և դրացիք , միմեանց խնամարկէին ։

Լիւիոս բազում ուրեք յիշատակէ մուրհակս փրկանաց , զոր ազգք ընդ ազգս առնէին 'ի գրաւաթափ գերւոյն 'ի պատերազմունս ։ Լիւ. իբ. ծբ։ Լդ. ծկ։ լգ. խբ։ Զհետ ճակատամարտին Կաննեայ , Աննիբաղ տիրեալ փոքու բանակի հռոմայեցւոց՝ յանձն առ տալ նոցա զենիկ քաղաքայիս , զմի մի երեքհարիւր դահեկանաց չորեքձիոց՝ որ արժէր տասն դենար . իսկ զնիզակակիցս նոցա երկերիւրոց , և զստրուկս հարիւրոց ։ Հռոմայեցիք նուաճեալ զԵրետրիա քաղաք յԵւբիա՝ ուր էին պահակապանք մակեդոնացիք , սակ հատին փրկանաց նոցա երեքարիւր դահեկանս քառաձիս ։ Յօրինադրել հռոմայեցւոց չփրկել զգերիս՝ որ անձնատուր լինէին 'ի թշնամիսն , Աննիբաղ զգերեալսն վաճառեաց օտար ազգաց . և զբազումս յայնցանէ գնեցին աքայեցիք ։ Իսկ յորժամ հռոմայեցիք ազատ կացուցին զյունաստան , նոքա 'ի շնորհակալութե՟ պատիւ՝ դարձուցին 'ի նոսա զա՟մ գերիսն , հատուցեալ տերանց նոցա հինգհարիւր դենար ընդ միոյ միոյ . որ ըստ համարոյ հաշուին Պողիբեայ՝ լինին միահամուռ հարիւր քանքար , կամ տասն բիւր դահեկան . զի յԱքայիա եւեթ գտան հազար և երկերիւր գերի ։

Երեւի՝ ոչ լեալ սովորութի՟ առ նախնիս նամակադիր լինել 'ի պատերազմի . այլ յոյժ կարեւոր է առ 'ի տալ զաղտ պատուէր զօրավարաց՝ որ հեռի կայցեն , կամ Կէս. ճառք. գաղք. Ե։ արգելեալ ուրեք 'ի քաղաքի , և յայլ դէպս ։ Առ Կիկերոն , մինչ արգելեալ կայր նա 'ի բանակին՝ պաշարեալ 'ի գաղղիացւոց , գրով ազդ արար Կեսար զգալ հասանել իւր յօգնութիւն լեգէոնօք բազմօք . և յունարէն գրէր[1] , զի մի՛ յանկանելն 'ի ձեռս թշնամեաց՝ գիտասցեն զգալուստ նորա . թէպէտ և ոչ էր բաւական զգուշութի՟ն այն ։ Եւ ոչ հրամնշան ազդարարութիւնն , զորմէ այլուր ասացաք , յապահովագոյն ինչ էր . թող զդժուարութի՟ւն և զխոյս ։

Պլուտ. 'ի Կորէոլ. 217։ Ոչ 'ի դէպ է լռել և զարժանի յիշատակի զսովորութի՟ հռոմայեցւոց , զի 'ի կազմել կալ 'ի ճակատամարտ , զէն և ասպար 'ի ձեռին, և արկեալ զվարապանակ, առնէին կտակ անգիր, կացուցանելով իւրեանց ժառանգ՝ առաջի երից կամ չորից վկայից . որ աւ յափոյ կտակն կոչէր :

---

[1] Յղէ թուղթ գրեալ յոյն տառիւք , զի մի՛ յըմբռնելն՝ յայտնեսցին թշնամեաց խորհուրդք մեր ։

Փոքր 'ի շատէ զճակատամարտից ասացաք, ոչ իշխելով խորամուխ լինել 'ի ճառս՝ որ ոչ անկ են մեզ . արդ այժմ զմրցանակս յաղթութ̃եցն տեսցուք և զպատիժս պատուհասի պարտելոցն :

ՅՕԴՈՒԱԾ Դ.

Յաղագս պատժոյ և մրցանակաց, անուանոց և յաղթանակի :

Բազում ասաց Սողոն՝ թէ երկու են ուղղիչք մարդկան և դրդիչք 'ի գործ, երկիւղ և յոյս . և չիք բարեյարմար առաջնորդութ̃ի առանց վարձուց և պատուհասի . զի յանցանք համարձակին անպատուհաս, և առաքինութ̃ի առանց վարձուց և փառաց լքեալ թուլանայ : Արդ այս հաւաստի ևս է 'ի զինուորական առաջնորդութ̃ե . քանզի առաւելագոյն ունելով զօրաց համարձակութ̃ի, ամրագոյն և պնդագոյն կապանօք պարտ է կարգաց և հրահանգաց նոցա հարստել : Բայց մարթի երկոքումբքն ևս զեղծանել, մանաւանդ պատուհասիւ, և յանչափն զառածանել : Սովորութ̃ի էր կարքեդոնացւոց զզօրավարս պարտեալս 'ի մահ մատնել, որպէս թէ թշուառութիւն յանցումն էր, և չէր մարթ քաջ զօրավարի առանց սխալանաց 'ի պարտութ̃ի մատնել : Եւ ոչ աստ զկայ առնոյր խստութ̃ի նոցա, այլ և որ յանդգնութ̃ զյաղթութիւն ստանայր՝ զնա 'ի մահ դատապարտէին[1] : Առ գաղղիացիս 'ի ժամանակի զօրաժողովոյ՝ պարտ էր ամ̃ զինուորական հասակին 'ի սահմանեալ աւուր 'ի մի վայր ժողովել[2] . և որ յետ ամենեցուն հասանէրն՝ կըտտամահ լինէր : Ա՛նագորոյն խստութ̃ի :

Մարդասիրագոյնք էին Յոյնք, թէպէտ և 'ի հրահանգս զօրականին խիստք ևս : Զի յԱթէնս եթէ ոք չառնոյր յանձն զզինուորութիւն՝, որ ծանրագոյն յոյժ յանցանք Եւտ. 'ի Կոեիէ. 467.

---

[1] Առ կարքեդոնացիս, որպէս լսեմք, կախէին զփայտէ զօրավարք, որք յանդուգն խորհրդով յաջող զպատերազմն մղիցեն : Լիւ. ԼԸ. ԽԷ.

[2] Եւ այսպէս սկիզբն լինէր մարտին առ գաղղիացիս . զի օրէնք էին ամ̃ մանկտւոյն զինուորել 'ի մի վայր գալ . և որ յետ ամենեցուն հասանէրն՝ յանդիման բազմութ̃ն ամ̃ կտտանօք սպանանէր : Կէս. Յարփ. Գաղ. Ե̃.

էին քան զյապաղելն ժամս ինչ կամ վայրկեանս, արգելեալ մերժէր հրովարտակաւ և նզովիւք 'ի ժողովոց ժողովրդեան և 'ի մեհենաց դից։ Այլ վահանընկէց լեալ փախչել, կամ 'ի կայեցն 'ի բաց կալ, կամ դասալիք լինել, էր ոճիր մահապարտութ̃ե։ Նոյն օրէնք սպարտացւոց անլուծանելի՝ մի երբէք 'ի փախուստ դառնալ, և առաջի բազմաձեռն յոյժ թշնամւոյ, և մի մեկնել յիւրաքանչիւր կայից, և մի զէնընկէց լինել. և որ ոք յայսոսիկ յանցանէրն, լինէր 'ի նախատինս անքաւելի. և ոչ միայն յա̃մ աւագութ̃եց, և 'ի յանձանձանաց իւրաց աշխարհին, և 'ի ժողովոց և 'ի տեսարանաց 'ի բաց մերժեալ, այլ և տուրևառիւք ամուսնութ̃ե կցորդել ընդ նմա՝ նախատինք էին, և զա̃մ թշնամանս օրէն էր առնել նմա համարձակ։ Իսկ քաջացն, և զէն 'ի ձեռին վասն հայրենի յատակին անկելոցն, փառք և պատիւք մեծամեծք շնորհէին։ Լի էր յունաստան անդրեօք երևելեաց քաջայաղթ արանց, և շիրիմք նոցա հրաշազան արձանագրովք պայծառացեալ՝ որ զանուն նոցա և զյիշատակ անմահացուցանէին։ Զարմանալի իմ̃ խրախոյս արիութ̃ե և եռանդն ցանկութ̃ե պատուոյ և փառաց ածէր քաղաքայնոցն՝ սովորութ̃ի աթենացւոց, զի 'ի կատարած մարտին միաբան սպաս յուղարկաւորութ̃ե անկելոցն մատուցանէին, զոսկերոտին նոցա զաւուրս երիս եդեալ 'ի պատիւ 'ի տեսիլ ամենեցուն, որ ծաղիկս զնոքօք արկանէին, և խունկս ծխէին և բուրմունս իւղոց անուշից։ Եւ ապա ածէին զոսկերսն հանդիսիւ 'ի գերեզման, եդեալ յայլ և այլ դագաղս ըստ ցեղից՝ որ էին յԱթէնս. և ա̃մ ժողովուրդն զհետ երթայր երկիւղածութ̃ե։ Վեհ և վսեմ էր հանդէսն, նմանեալ պերճ յաղթանակի՝ քան տխուր յուղարկաւորութ̃ե։ Եւ ոչ այս միայն, այլ որ գեր 'ի վերոյ քան զասացեալքս է, յետ աւուրց մի ոմ̃ յաւագաց աթենացւոց 'ի լուր ա̃մ ժողովրդեան խօսէր ճառ դամբանական 'ի վերայ քաջացն անկելոց. որպէս յետ առաջնոյ պելոպոնեսեան մարտին մեծին Պերիկլեայ անկ եղև ճառել. և զճառ նորա Թուկիդիդէս պահեաց մեզ. և միւս ևս 'ի Պղատոնի գիրսն գտանի վասն նոյն նորին իրաց։ Եւ պատճառք գերեզմանական ճառիցս էին ներբող քաջութ̃ե արի զօրականին՝ որ զարիւնս իւրեանց հեղուին վասն հայրենեացն, յորդոր նախանձու քաղաքացւոցն 'ի նմանութ̃ի նոցա, և մխիթարութ̃ի ազգականացն՝ սփոփելով զսուգ նոցա անմահական պարծանօքն, ասելով ցծնողս անկելոցն. Ապաքէն

Թուկիդ. Բ. 121։

ոչ զայն աղօթէիք՝ զի 'ի հասարակաց դատակնքէ մահուն ազատք լիցին որդիք ձեր, այլ զի լիցին լաւք և պանծալիք. արդ լսելի եղեն աղօթք ձեր, և փառք Նոցա՝ որով մեծարին՝ սրբեսցեն արդ զարտասուս ձեր, և զհեծութիս ձեր դարձուսցեն 'ի ցնծութի: Եւ յաճախ ևս ճարտարախօսք զյորդորական խրախոյսն ձեռով իմն 'ի դիմաց անկելոցն՝ մանաւանդ նշանաւոր արանց՝ բարբառէին, իբր 'ի շիրմաց վերակենցաղս ածելով զնոսա 'ի յորդոր և 'ի սփոփումն ծնողացն:

Եւ ոչ 'ի լոկ ճառս և յանարգասաւոր ներբողս զկայ առնուին. այլ հասարակապետութիւնն՝ որպէս բազմագութ և բազմագորով մայր՝ ռոճիկ և դարման կարգէր ծերոց և այրեաց և որբոց կարօտելոց: Զի զորբս անկելոցն տածէր ըստ իւրաքանչիւր ազգին պայմանի մինչև ցհասակն զինուորական. և ապա յանդիման ամ ժողովրդեան ածեալ 'ի տեսարանի սպառազէնս, խառնէր ընդ զինուորս աշխարհին: Արդ զի՞նչ ևս 'ի դամբանական կացրդիս Թերի կայցէ. ահա գծուծ զօրականն և սինլքոր աթենացին հաւասարէր դիւցազանց և աշխարհակալաց: Իցե՞ն ինչ աղիողորմ և գորովագոյն քան զայս սպառք մեծարանաց, որ արդ քաջայաղթ զօրավարացն մերոց մատուցանին: Այսքիկ վառ և բորբոք պահէին հանապազ զարիութի ազգին, զմեծանձնութի, զեռանդն ցանկութե փառաց և զհայրենասէր նախանձ, որով Յոյնք աներկիւղ դիմագրաւէին ահագին վտանգաց, և մահու իսկ: Զի որպէս Թուկիդիդէս 'ի ճառս դամբանական պաշտամանցս ասէ. Ուր վաստակոց մրցանակք մեծամեծք առաջի կայցեն, անդ արք քաջք յարդարին[1]:

Եսքին. ընդդէմ. Կտեսիփ. 452.

Ոչ ինչ ներողագոյն էին հռոմայեցիք քան զՅոյնս 'ի պատուհասել զյանցուցեալսն 'ի զինուորական հրահանգս, և ոչ ժլատք 'ի վարձատրել զառաքինիս: Ըստ յանցանաց առնէին զպատուհասն, և ոչ զամ յանցանս մահուամբ պատուհասէին. այլ էր՝ զոր բանիւ լոկով արհամարհանաց, և էր՝ զոր աւարամասին չառնելով բաժանորդ, և մերթ 'ի բաց մերժելով զնոսա՝ որպէս անարժանս զինուորելոյ հայրենեաց, և ծառայեցուցեալ զնոսա յաճախ 'ի պատնէշս բանակին վարապանաւ լոկով, առանց կամարի գօտւոյն. և նախատինքն այն դառն էր նոցա քան զմահ, 'Ի ստահակել զօրացն Կեսարու և 'ի բողոք

Դիոն. Կաս. խր. 210.

---

[1] Զի որոց առաքինութեցն մրցանակք մեծամեծք առաջի կայցեն, նոքօք և արք քաջք առաքինանան:

բառնալ ամբոխիւ՝ զի արձակեսցէ զնոսա, Կեսար ոչ ինչ ետ նոցա պատասխանի՝ բայց միայն կուիրինացիս կոչեաց զնոսա, իբր հռոմայեցիս կոչելով զնոսա կամ քաղաքացիս՝ փոխանակ կոչելոյ զինուորակիցս, և հրաման ետ նոցա գնալ[1] ։ Այն բարբառ որպէս շանթ 'ի յերկնէ եհար զնոսա. և համարեալ զայն անհնարին նախատինս և թշնամանս, խոնարհեալ մեծաւ թախանձանօք և աղաքանօք աղերսէին, մինչև անդրէն ընկալան հրաման կալոյ 'ի զինուորութեան ։

Լիւ. Գ. ԻԹ. 'Ի ժամանակի յորժամ բանակն հռոմայեցւոց վրիպակաւ Մինուկեայ բդեշխի՝ որ զօրավարերն՝ պաշարեալ յեկուացւոց անտի մատնէր յաւար, Կինկիննատ իշխանապետ կացեալ պատերազմին՝ փութացեալ եհաս յօգնութիւն և ազատեաց զնա, և էառ զբանակ թշնամեաց լի մեծութե̃ք ։ Եւ պատժեաց զզօրս բդեշխին՝ ոչ հանելով նոցա յաւարէն մասն, և զՄինուկիոս լուծեալ յիշխանութ̃են՝ կացոյց զնա փոխանորդ. իսկ նա լուռ եղեալ հնազանդեցաւ անտրտունջ ։ Վասն որոյ ասէ վիպագիրն[2], թէ այնու հլութ̃բ հպատակէին յայնժամ լաւագունին իշխանութ̃ե, զի զօրքն բարերարութ̃են յիշողք լեալ քան նախատանացն՝ սահմանեցին իշխանապետին պսակ ոսկի 'ի կշիռ լտեր. և 'ի մեկնելն նորա՝ պաշտպան և փրկիչ զնա կարդային ։

Լիւ. ԻԲ. Ծ. ԻԳ. ԻԴ. ԻԵ. ԻԶ. Ա. Յետ Ճակատամարտին Կաննեայ, ուր չորք բիւրք հռոմայեցիք անկան, զինուորք իբր եօթն հազարք՝ որ էին 'ի կրկին բանակսն՝ յուսահատեալք անապաւէնք զէնընկեց լեալ, անձնատուր եղեն 'ի թշնամիս և գերեցան ։ Իսկ բիւր մի փախստեայք, և Վարրոն ընդ նոսա, այսր անդր ցրուեալ՝ եկին ապա ժողովեցան 'ի Կանուսիոն առ բդեաշխն ։ Իսկ գերեալքն և ազգականք նոցա թէպէտ և մեծաւ թախանձանօք աղերսէին զփրկանս, և Հռոմ կարօտ էր յոյժ զօրաց, այլ ծերակոյտն չէառ յանձն գրաւաթափ առնել զնոսա, զի վատութ̃բ անձնատուր եղեն թշնամեաց, և ոչ զզօրս բիւրսն առաջի աչաց տեսանելով սպանեալս՝ խրախուսեցին զէն 'ի ձեռին անկանել 'ի վերայ հայրենեաց ։ Իսկ բիւր մի փախստեայքն վտարեցան 'ի Սիկիլիա, չդառնալ յԻտալիա մինչև ցվախճան կարքեդոնական պատերազմին ։ Եւ թէպէտ թախանձէին նոքա զինուորել դարձեալ ընդդէմ թշնամեաց, և արեամբ իւրեանց լուանալ զնախատինս փախստեանն, այլ ծերակոյտն անողոքելի եկաց, ոչ վստահացեալ զպաշտպանութի աշխարհին 'ի զօրականս՝ որ լքին զզինուորակիցս իւրեանց 'ի պատերազմի ։ Ապա զիջեալ 'ի յոգնաթախանձ աղերս Մարկեղեայ փոխանակի բդեշխին՝ շնորհեաց նոցա զխնդիրն, այլ արգել մի կոխել յԻտալիա՝ ցորչափ անդ էին թշնամիք ։ Եւ զասպետս բանակին Կաննեայ վտարանդեալ 'ի Սիկիլիա, խստիւ պատուհասեցին . զի յետ ճակատամարտին 'ի հանդէս առնել համարակալաց զօրացն, բարձին յամենեցունց 'ի նոցանէ զերիվարս պատրաստեալս նոցա յաշխարհէն, որով անկանէին 'ի պատուոյ ասպետացն հռոմայեցւոց . և ա՟մ ամք զինուորութ՟է նոցա ընդունայն եղեն, և հարկ էր նոցա այլ ևս տասն ամ զինուորել իւրեանց երիվարօքն, որպէս եթէ այն ինչ զինուորէին . զի զտասն ամ պարտ էր ասպետաց զինուորել ։

---

[1] Դիւցազնն Յուլիոս բանիւ միով զապստամբութ̃ի զօրացն ցածոյց. կուիրինեանս զնոսա կոչելով որք 'ի սպասու էն նորա հրաժարէին ։ Տակիտ. Տար. Ա. ԽԲ ։

[2] Այնպէս յայնժամ լաւագունին իշխանութ̃ն հլութ̃բ հնազանդէին. զի զօրացն զբարերարութին յիշելով քան զնախատինսն՝ պսակ ոսկի 'ի կշիռ լտեր իշխանապետին սահմանեցին. և 'ի մեկնել գնալ նորա՝ ողջունէին զնա պաշտպան իւրեանց կոչելով ։ Լիւ ։

Լիւ. իբ. ծէ.
իդ. ժդ-ժզ.

Հաճոյ թուեցաւ ծերակուտին զինուորել ութ հազար ստրուկս, քան դիւրագին ևս փրկանաւորել զգերիս . և խոստացաւ ազատութիւն ստրկաց, եթէ արիաբար մարտիցեն ։ Որք և զերկեամ մի յառաջ քաջութ՟բ մեծաւ զինուորեալ, չև ևս յազատութիւն դարձեալ էին, լաւ համարեալ արժանի լինել բազմաբաղձ պարգևին՝ քան խնդրել զայն[1] ։ Եւ դէպք բարեպատեհ որպէս արգասիս քաջութ՟ե նոցա բերեալ մատուցանէին զազատութ՟ի . և զարմանալի արութ՟իս 'ի պատերազմին գործեցին, բաց 'ի չորից հազարացն՝ որք երկչոտ գտան . և յետ մարտին՝ ամենեցուն շնորհեցաւ ազատութ՟ի, և լցան անպատում խնդութ՟բ ։ Ապա Գրակքոս, որ զօրավարէրն նոցա, ասէ ցնոսա . Մինչև զամենեսեանդ նովին ազատութեան անուամբ կոչեցեալ՝ ոչ խտրեցի ընդ արիս և ընդ երկչոտս . այլ արդ ոչ է իրաւացի առնել անխտիր ։ Եւ երդմնի արար զամենեսին զվատասրտեալս, զի զա՟մ ժամանակս զինուորութ՟է իւրեանց յոտնկայս ճաշեսցեն 'ի պատիժ յանցանացն, բաց 'ի ժամանակէ խօթութեան . և հնազանդ եղեն նմա ա՟մ հլութ՟բ ։ Եւ քան զա՟մ պատիժս զինուորաց այս թեթև էր և քաղցր ։

---

[1] Վաղագոյն և 'ի միւսում ամի լաւ համարեցան լռելեայն արժանի լինել ազատութ՟ե, քան խնդրել զայն համարձակ ։

Արդ որ ինչ ցայսվայր ասացաք, գրեթէ ամ̃ն նախատանաց էր պատիժ. այլ էին և պատուհասք ծանունք
Պ-ղ. Զ. 481. մինչև ցսպանումն. որպէս բրածեծն[1], որ այսպիսի ինչ
Ծ. 78: էր. Հազարապետին նախ մեղմով իմ̃ն ընեալ գաւազանաւ զյանցաւորն, անդէն ա̃մ լեգէոնականք սկսանէին տեղալ զհարուածս բրօք և վիմօք. յորոց բազմագոյնք անդէն 'ի պատուհասին վախճանէին. Իսկ ապրեցելոցն՝ ոչ այն միայն էր պատուհաս, այլ և 'ի հայրենիսն ոչ ևս օրէն էր նոցա դառնալ, և ոչ ոք յազգականաց նոցա իշխէր ընդունել զնոսա 'ի տուն իւր. Այս պատուհաս էր պահապանաց՝ որ թերահոգ 'ի պահպանութ̃ին գտանէին. արդ տես զխիստ զգուշութ̃ի գիշերապահիցն, յորում էր ամրութ̃ի և փրկութ̃ի ա̃մ բանակին. Նոյն պատուհաս էր և ամենեցուն զօրաց և սպայից, որք 'ի բաց կային 'ի կայից իւրեանց. Պատերկուղոս[2] զմի ոմ̃ն 'ի սպայից լեգէոնացն ածէ յօրինակ, որ վասն վատ փախըստեանն 'ի պատերազմէ՝ բրածեծ եղև յաւուրս Անտոնիոսի և կրտսերոյն Կեսարու. Այլ այն իսկ առաւել են զարմանք, զի զնոյն պատուհաս կրէին և որք 'ի բանակին գողանային ինչ, դրժելով երդմանն՝ զոր 'ի զինուորելն երդնուին, որպէս ասացաք.

Իսկ եթէ ա̃մ լեգէոնն կամ գումարտակն յանցաւոր գտանէր, քանզի զա̃մ իսկ զգունդն չէր մարթ սպանանել՝ վիճակաւ տասանորդէին, և որում ումեք տասներորդն ելանէր վիճակ՝ սպանանէր. Այսպէս երկիւղի մահուն զարհուրեցուցեալ զամենեսին, և սակաւուց հասանէր մահ. Իսկ այլք դատապարտէին յա̃մ կեանս իւրեանց փոխանակ ցորենոյ ճաշակել գարի, և բանակել
Լիւ. Բ. ԾԹ: արտաքոյ պատնիշին 'ի վտանգ հինից թշնամեաց. Այսմ
Պլուտ. Կրաս. տասանորդական պատուհասի անդստին 'ի սկզբանէ հա-
548. սարակապետութ̃են ածէ Լիւիոս օրինակ. Իսկ Կրասոս 'ի կալ իւրում զօրավար լեգէոնացն՝ որ 'ի Սպարտակեայ հարեալ էին, նորոգեաց զնախնի սովորութ̃ին՝ որ խափանեալ էր՝ զտասանորդականն պատուհաս յանցաւոր զօրաց, օգուտ մեծ գործեալ. Զի 'ի թշնամանալից մահուանէն, ասէ Պլուտարքոս, և զի առաջի ա̃մ զօրացն կատարէր սպանումն, ամենեքին զարհուրեալ սասանէին.

---

[1] Պարտաւոր գտան 'ի բրածեծ լեգէոնքն, որք լքին զբդեաշխն. Կիկ. Փիլիպ. Գ. ԾԳ:

[2] Կալուինիոս Դոմիտիոս բդեաշխ կացեալ, և վիճակաւ կալեալ զՍպանիա, մեծ իմ̃ն և հանգոյն նախնեացն օրինակ ետ. զի զհարիւրապետ առաջնոյ հարիւրեկին զՎիբելլիոս վասն վատ փախստեանն բրածեծ արար. Պտէրկ. Բ. ԿԸ.

'Ի սոյն պատուհաս առ ինքնակալօք քրիստոնեայք դատապարտէին. զի չպաշտելն զկուռս, և զհաւատացեալս չհալածել, Թուէր ապստամբութ՟ի և ամպարշտութիւն մահապարտ։ Որպէս լեգէոնն Թեբացի պատուհասեցաւ առ Մաքսիմիանոսիւ. որ երիցս հետ զհետէ տասանորդեալ զարի զօրականսն 'ի մահ, անյողդողդ հաւատոց նոցա յաղթել ոչ կարաց։ Եւ որ Մաւրիկ զօրապետ նոցա և այլ ա՟մ սպայք գրեցին սուղ և զարմանալի, օրինակ զայս[1]. “Ինքնակալ քաջ, զօրականք քո՝ ծառայք ա՟յ, քեզ զզինուորութ՟ի՝ նմա զանմեղութ՟ի պարտիմք. հնազանդել քեզ հակառակ ա՟յ արարչին և տ՟ն մերոյ ոչ կարեմք. որ նոյն ինքն, եթէ կամիս և թէ ոչ, սակայն և տէր քո է„։ Եւ ա՟մ լեգէոնն կամակար 'ի մահ մատնեալ, խառնեցան 'ի գունդս հրեշտակաց՝ յանսպառ օրհնութ՟ի ա՟յ, տ՟ն զօրութ՟ց։

Թուղթ. Եւգերեայ. Լուգդոն առ Սեղ.

Սակաւք յաւուրս հասարակապետութ՟ե մատնէին 'ի մահ. զի աններելի մահապարտութ՟ի դասալիք եղելոցն և անհրաման մարտուցելոց[2], և խստութ՟ի հարց՝ որ և յորդիսն ոչ խնայէին, արկանէր յամենեսին իրաւացի երկիւղ. որով զգոյշ լինէին 'ի յանցանացն, և օրինաց զինուորական հրահանգաց պատկառ կային։

Խիստ իմն է պատուհաս արեան, և սոսկալի բնութ՟ս, այլ ոչ բնաւին եպերելի։ Ո՛չ ա՟մ իսկ պատուհաս ծանր անագորոյն իմն է. այլ զվնասակարութ՟ն ոմանց զտոյժս՝ օգտակարութ՟ն հասարակաց փոխարինէ[3]։ Պարտ է զօրավարի խստանալ երբեմն առ զօրսն, և պատուհասիւ զառաջս առնուլ ապստամբութ՟ե և զհամարձակ օրինազանցութ՟ե։ Ո՛չ աստ հեզութ՟ի անողորմութ՟ի է, որպէս թէ վիրաբոյժ ոք վրիպագութ ախտակցութ՟բ խնայեալ 'ի մի յանդամոց՝ թողուցու քաղցկեղին ընդ ա՟մ մարմինն ճարակել։ Այլ 'ի ցասմանէ և 'ի քինախնդրութ՟է պարտ է զգոյշ կալ. զի այնուհետև դեղք տարաժամք և ևս զայրացուցանեն զախտն[4]։

Յառաջնումն նուագի տասանորդական պատուհասին,

Լիւ. բ. ծէ. ը. լէ.

---

[1] Զինուորք եմք ինքնակալդ, այլ ծառայք ա՟յ. քեզ զինուորութ՟ի, նմա զանմեղութ՟ի պարտիմք. չկարեմք հնազանդել ինքնակալդ և ուրանալ զարարիչ մեր, և զքո իսկ՝ թէ կամիս և թէ ոչ։

[2] Մահապարտութ՟ե յանցանք էին առ հռոմայեցիս՝ մեկնել 'ի կայիցն, և սպանութ՟բ որդւոց իւրեանց զօրէնսն զայն սահմանեցին հարք։ Լիւ. իդ. լէ.

[3] Անագորոյն իմն է ա՟մ պատուհաս մեծ. այլ տոյժք ոմանց օգտիւ հասարակաց փոխարինին։ Տակ. Տարեգ. ժդ. խդ.

[4] Տարաժամ դեղով արծարծանէր զյանցանս։ Տակ.

զորմէ ասացաք, յոյժ ատելի եղեւ Ապպիոս զօրացն. մինչեւ յանձն առնուլ նոցա կոտորել 'ի թշնամեաց՝ քան պատերազմել վասն նորա եւ յաղթել ընդ նմա. զի էր նա խիստ անողոքելի։ Բայց Պապիրիոս յետ բազում ժամանակաց 'ի հանգոյն իմ̃ դէպս իմաստնագոյն գտաւ քան զնա [1]. զի իբրեւ զօրք նորա թողին զնա կամաւ եւ խափանեցին զյաղթութ̃ն առ 'ի թշնամանս նորա, խելամուտ եղեւ այրն քաջ վասն էր հասին չարիքն, եւ գիտաց զի պարտ էր մեղմել զխստութ̃ն եւ ամոքել զսաստն իշխանական. Նա արար այնպէս, եւ յաջողեցաւ. եւ հաճոյ եւ սիրելի լեալ զօրացն՝ կալաւ ապա յաղթութիւն մեծ։ Զի իմաստութ̃ի եւ արուեստ մեծ է՝ յօգուտ 'ի կիր արկանել զպատուհաս։

Հռոմայեցիք յաճախ եւս ակնկալութ̃ մրցանակին եւ փառաց յորդորէին զզօրս 'ի քաջութ̃ի։ Յառնուլ քաղաքի կամ 'ի ստանալ զյաղթութ̃ի՝ բաշխէին զօրավարք զօրաց զաւարն զարմանալի կարգօք, որպէս նկարագրէ զայն Պողիբիոս 'ի վէպս առման Կարթագինեայ։ Սովորութիւն է՝ ասէ՝ առ հռոմայեցիս, 'ի տալ զօրավարին նշան՝ սփռելին զօրքն ընդ քաղաքն առնել յաւարի, եւ յիւրաքանչիւր լեգէոնս ածեն զկապուտն։ Նա 'ի ձայն քարոզի վաճառեալ զաւարն, ապա հազարապետք բաշխեն զգինսն հաւասար. ոչ միայն ամ̃ կարգաց, այլ եւ կացելոյն 'ի պահ բանակին, եւ հիւանդաց, եւ ամենեցուն իսկ որ ինչ պատճառանօք եւ խափանեալ իցեն 'ի պատերազմէ։ Նա առ 'ի չխորամանկելոյ ինչ ումեք, նախ քան զպատերազմ̃ եւ յաւուր զօրաժողովոյ երդմ̃ի առնէին զամ̃ զօրսն՝ մի ինչ խորել յաւարէն, այլ զամ̃ կողոպուտն ածել հաւատարմութ̃։ Տես ինձ քանի կարգ, քանի փոյթ հրահանգաց, եւ քանի երկիւղածութ̃ արդարութ̃ 'ի մարտամբոխ բանակին եւ 'ի խուռն յաղթութ̃ն պահէին։

Ժ. 589.

Պարգեւս եւ յաւուր յաղթանակին զօրավարն բաշխէր զօրացն արծաթ, ըստ ժամանակաց աւելի կամ նուազ. որ մինչեւ 'ի քաղաքական պատերազմունսն 'ի պատշաճ չափուն եկաց։ Ընդ վարձս խառնէին յոլովակի եւ պատիւ՝ որ քան զարծաթ ցանկալի էր զօրացն, եւս առաւել սպայից · Յորժամ Դեկիոս հազարապետ ջոկատիւ զօրացն դիմագրաւեալ 'ի վտանգ մահու 'ի բլրին, փրկեաց զհ̃մ բանակն արութ̃բ' քան զոր արիագոյն ինչ 'ի վէպս ոչ պատմի, 'ի դառնալ նորա' գովեաց զնա բդեաշխն յանդիման հ̃մ զօրացն, և 'ի վերայ բազում պարգևաց ըստ զինուորական պայմանին' ետ նմա պսակ ոսկի, յիսուն լուծս եզանց, և միւս այլ եզն չքնաղ մեծութ̃բ և գեղով, սպիտակ ամենևին, և եղջիւրք նորա ոսկեզօծք ։ Իսկ զօրաց' որ ընդ նմա երթեալ էին' կրկին չափ ցորենոյ կարգեաց ռոճիկ ընդ հ̃մ ժամանակս զինուորութ̃ն նոցա, և պարգևեաց միում միում 'ի նոցանէ լուծ մի եզանց, և հանդերձս կրկին ։ Իսկ լեգէոնք ածին առ Դեկիոս 'ի շնորհակալութ̃ն պատիւ' պսակ 'ի դալարւոյ, որ էր նշանակ լուծանելոյ զպաշարում̃ն · զնոյն և զօրք նորա մատուցին նմա ։ Իսկ եզեն նա Մարսի զեզնն ոսկեղջիւր, և զհարիւր եզինն բաշխեաց զօրացն · և լեգէոնք ետուն իւրաքանչիւր նոցա լիտր մի ալեր, և կէս քսեստ գինւոյ ։ Լիւ. Է. լէ.

---

[1] Լքին զնա զօրքն, եւ կամաւ առ 'ի ստգիւտ զօրավարին՝ խափանեցին զյաղթութ̃ի.... Գիտաց հմուտ զօրավարն զխոչ յաղթութ̃ն, եւ զի պարտ էր ամոքել ըղբարոն, եւ 'ի խստութ̃ն խառնել հեզութ̃ի։ Լի̃.

Կալպուրնիոս Պիսոն, որ վասն առաքինութեանցն և յոյժ սակաւապիտութ̃ն կոչեցաւ զգաստ, մրցանակս պէսպէս բաշխեալ որոց նպաստամատոյց եղեն նմա 'ի յաղթութ̃ն մարտին Սիկիլիոյ, զքաջութ̃ն որդւոյն' որ առաւել քան զամենեսին արիացաւ անդ' պարտ վարկաւ վարձատրել յընչից իւրոց · Իսկ յանդիման ամենեցուն քարոզեաց զնա արժանի ոսկի պսակի, և պսակ 'ի կշիռ երից լտերց պատուիրեաց նմա 'ի կտակի իւրում · որպէս զօրավար սահմանեալ նմա զպատիւն, և որպէս հայր զգինս պսակին տուեալ ։ Վաղ. Մաքս. Դ. Գ.

Բայց պսակ ոսկի աւագ սպայից պահէր, և դուն ուրեք շնորհէր այլում ։ Էին և այլ բազում պսակք ըստ վաստակոց սահմանեալ · որպէս պաշարմանն դալարահիւս' զոր արդ յիշեցաք, գերազարդ քան զայլսն · և տային զայն ազատողաց 'ի պաշարմանէ զբանակն կամ զքաղաք · և քաղաքականն, որ պարգևէր փրկողաց ըզկեանս ուրուք 'ի քաղաքայնոցն, պսակ կաղնի առ յիշատակէ նախնոյ մարդկանն, որպէս ասի, որք կաղնով պարենաւորէին · և պարսպականն' զոր տային նախայարձակ ախոյանին 'ի պարիսպս, և որ նախ անդր 'ի վեր ելանէր, պսակ շերտաւոր' 'ի նմանութիւն մահարձանաց պարսպաց կազմեալ · և նաւականն 'ի նմանութ̃ն նաւացռկաց, զոր տային զօրավարաց նաւատորմի' 'ի ծովամարտի յաղթողաց · սակաւք ստացան զպսակս զայս ·

զոր և Ագրիպպաս կալաւ զմեծ պարծանսն, զորմէ ասէ Վիրգիլիոս.

Են. Ը. 683. Որ 'ի ճակատըն ճաճանչէ մրցանակ,
Յուկաձևիւքըն նաւային պերճ պսակ.

Բաց 'ի պսակաց աստի և յայլոց ումանց, տային զօրավարք քաջ զօրականին և սպայից սուսեր և վահան և այլ զէնս. և մերթ հանդերձս զինուորականս նշանաւորս. Իսկ 'ի վեր անդր տեսաք՝ ուրումն 'ի սպայից երեսունևչորիցս կալեալ մրցանակ 'ի զօրավարացն, և պսակս վեց քաղաքականս [1],

Պարգևքս այս և պսակք էին նոցա օրէնք պատուոյ, որովք 'ի խնդիր բարձի և աւագութեան՝ յաղթէին ոսոխացն, և 'ի քաղաքաժողով հանդէսս պճնեալ նոքօք երևէին. Իսկ զաւարն առեալ 'ի թշնամեաց զդրամբք տանց իւրեանց կախէին, և ոչ այլում տանուտեառն օրէն էր բառնալ զայն. Վասն որոյ գեղեցիկ ասէ Պլինիոս, թէպէտ և զնոյն զօրութիւն իմաստիցն չկարեմ բերել.
Պլին. ԼԵ. Բ. Տունք ինքնին, ասէ, և 'ի փոխել տերանցն՝ յաղթանակէին. և էր յորդոր հզօր, որմոյն հանապազ յանդիմանելով զվատ տանուտէրն 'ի մտանել նորա յայլոյ յաղթանակ. Այլ ինչ նուազ յորդորիչք էին գովութիւնքն՝ լու 'ի լու ամենայն բանակին 'ի քաջ զօրավարէն արիացելոյն աննախանձ ընծայեալ. Որպէս զԱգրիկողայոսէ ասէ Տակիտոս [2], զի ընդ ումեք երբէք ոչ նախանձէր, և ոչ խորհէր զփառս ուրուք. այլ հարիւրապետին և զօրավարին վկայ հաւատարիմ քաջութեանցն լինէր, և գովէր զնոսա.
Կես. Յարփ. Գաղ. Ե. Յարփ. Քաղ. Գ. Կեսար 'ի լսել զքաջութիւն Կիկերոնի եղբօր մեծի ճարտարախօսին, թէ զիարդ ընդդէմ բազմամբոխ զօրացն գաղղիացւոց պահ կալաւ բանակին, քարոզեաց 'ի լուր ամենեցուն զմեծ քաջութիւն նորա, և գովեաց զլեգէոնն առ հասարակ, մանաւանդ զհարիւրապետս գնդին և զհազարապետս՝ զորոց վկայէր Կիկերոն զքաջայաղթ արութիւնս. Իսկ այլ երբեմն Սկեւա՝ մի 'ի հարիւրապետաց՝ մեծաւ քաջութեամբ զօրավիգն եղև 'ի պահ միոյ 'ի բերդից. և վահան նորա ծակոտեալ յերկերիւր երեսնից հարուածոց նետից՝ ածաւ առ Կեսար. Որոյ հիա-

---

[1] Երեսուն և չորիցս առի մրցանակ 'ի զօրավարաց, և պսակս վեց քաղաքականս. Լիւ. ԽԲ. ԼԴ.

[2] Ոչ երբէք զքաջութիւնս այլոյ իւր սեփականեաց. այլ հարիւրապետին և զօրավարի աննախանձ վկայ արութեանցն լինէր. Տակիտ. յԱգրիկ. ԻԲ:

ցեալ ընդ այն, և զարմացեալ ընդ ահագին քաջութիւն նորա, պարգևեաց նմա առժամայն քսան բիւր սեստերտս, և յութերորդ կարգէ հարիւրապետաց յառաջինն անդէն ամբարձ զնա, և կացոյց առաջին սուինապետ, որ գերապատիւ իշխանութի՟ն էր՝ որպէս այլուր ասացաք, զի 'ի վեր քան զնա էին հազարապետք միայն և փոխանորդք զօրավարին և զօրավարն.

Ոչ գոյր խրախուսական քան զայս մրցանակ. բազում իմաստութեամբ սահմանեալ էին 'ի լեգէոնս աստիճանք պատւոյ և աւագութե՟, որ ոչ ազգի կամ մեծութեան շնորհէին՝ այլ քաջութե՟ և եթ, դուն ուրեք սխալեալ. Թէպէտ և տարակայութի՟ մեծ էր ընդ սինլքոր զօրականն և ընդ բդեաշխ, այլ բաց էին մուտք, և կուռ ճանապարհն, ընդ որ բազումք 'ի քաղաքայնոց ոտն ոտն յառաջ խաղացեալ 'ի բարձրագոյն աւագութի՟ն հասին. Արդ զո՞ր եռանդն ոչ աճէր այս զօրացն. զի յո՟մ ինչ ձեռնհաս էին մարդիկ առ նախանձ պատւոյ և փառաց.

Սուղ ինչ և վասն ախոյանացն և յաղթանակաց մնայ ասել։ Ախոյեան կամ նշան յաղթութե՟ 'ի սկզբանն էր կարկառ զինուց և աւարաց թշնամեաց՝ շեղջակուտեալ 'ի յաղթողաց 'ի ճակատուն տեղւոջ. ապա զնմանութի՟ այնորիկ սկսան կանգնել քարամբք կամ 'ի կճոյ։ Ոչ երբեք անփոյթ առնէին զայս յաղթողք, որպէս զպարտս իմն կրօնից դիցն նուիրելով. և ոչ ոք իշխէր կործանել զայն, այլ և ոչ 'ի խարխարելն՝ օրէն էր նորոգել։ Եւ զպատճառն յաւելու Պլուտարքոս, 'ի ցոյց գերապանծ իմաստից մարդասիրութե՟ նախնեաց։ Զի զմիանգամ եղծեալն 'ի ժամանակէ, ասէ, և զբարձեալն զնշան հակառակութե՟ և թշնամութե՟ պառակտելոց ազգաց՝ խուժ և դժնեայ ոխակալութե՟ էր վերստին կանգնել յանմահ յիշատակ վաղնջուց հերձուածոյն։ Սովին խորհրդով և նախնի Յոյնք փայտակերտս կանգնէին զնշանս յաղթութե՟, և ոչ 'ի վիմէ, զի մի՛ յաւերժ թշնամութի՟ն արձանասցի.

Պլուտ. խնդ. հռոմ. 272։ Դիոդ. գրք. ժդ. 154.

Հեռի էին յոյժ 'ի մարդասիրութ՟է աստի յաղթանակք հռոմայեցւոց, զորոց անկ է աստ ասել։ Զօրավարք և սպայք և զօրք առհասարակ ակնկալեալ մնային մրցանակին. մեծարանաց անունն տրիամբոս, այս ինքն է սպարապետ կամ ինքնակալ, շնորհեալ յաղթող զօրավարին, և աշխարհապաղատ մաղթանք, և զոհք և գոհութիւնք դիցն վասն յաղթութե՟ն կարգեալ 'ի Հռոմ սահմանեալ աւուրբք, յոյժ ցանկալի էին փառասիրութե՟

նոցա . այլ առաւել քան զա՟մ յաղթանակն ։ Բայց կըրկին էին յաղթանակք, մեծ և փոքր . փոքրն կոչէր օվացիօ, այսինքն ոչխարազեն . անդ զօրավարն ոչ 'ի կառս բազմեալ, ոչ 'ի հանդերձս յաղթանակի, և ոչ դափնային ածեալ պսակ, այլ հետի մտանէր 'ի քաղաքն, կամ ըստ այլոց՝ հեծեալ 'ի ձի, մրտենեաւ պսակաւ . և զհետ նորա գային զօրքն ։ Այս յաղթանակ անազդ պատերազմաց էր, և որ ընդդէմ սակաւաւոր ազգաց գործէին, կամ առանց մեծի բեկման թշնամեաց ։

Պատիւ յաղթանակի շնորհէր իշխանապետաց և բըդեշխից և կուսակալաց՝ որ զօրավարէինն . և ծերակուտին էր անկ շնորհել նոցա զայն խորհրդով ատենի ժողովըրդեան, ուր հերձուածք և հակառակութիւնք լինէին յաճախ ։ Սակայն բազումք հակառակ կամաց ծերակուտին յաղթանակէին հրամանաւ ժողովրդեան ։ Ապա եթէ յերկոցունցն ևս չլինէր նոցա հրաման, երթեալ յաղթանակէին յԱղբանոն լերին՝ որ ոչ ինչ կարի հեռի էր 'ի քաղաքէն ։ Ասի՝ թէ չէր օրէն յաղթանակել զօրավարի, եթէ պակաս քան զհինգ հազարս էին անկեալք թշնամեաց 'ի պատերազմին ։ Վաղ. Մաքս. բ. է.

Զօրավարին բաշխեալ զկէս աւարին 'ի զօրսն, և կատարեալ զայլ ա՟մ օրէնս, ապա խաղայր գայր մտանէր չուն 'ի քաղաքն ընդ յաղթական դուռնն ելանել 'ի Կապիտոլին ։ Առաջի երթային նուագածուք, զերաժշտական նուագսն հնչեցուցանելով . զհետ նոցա ցուլք 'ի զոհումն, նարօտիւք և ծաղկամբք պճնեալ, և բազմաց եղջերքն ոսկեզօծք ։ Իսկ ապա ա՟մ առ և աւարն 'ի հանդիսի անցանէր, կարգադրեալ քաջ արուեստիւ 'ի սայլս, կամ յուս շքեղաշուք մանկտւոյ բարձեալ ։ Ածէին և արձանագիրք անուանց պարտելոց ազգաց՝ ստուար տառիւք, և պատկերք քաղաքաց նուաճելոց ։ Էր զի և գազանք վայրենիք 'ի քաղաքաց առելոց, արջք, յովազք, առիւծունք և փիղք ածէին 'ի հանդիսին . Այլ քան զա՟մ ինչ ցանկալի էր տեսողաց, և զամենեցուն աչս յինքն ձգէր գունդ ազնուական գերւոյն՝ որ շղթայակապ առաջի յաղթականին կառացն ձգէին, սպայք ականաւորք, զօրավարք զօրաց, իշխանք և թագաւորք, հանդերձ կանամբք և որդւովք ։ Զհետ գայր բդեաշխն, (զի ստամնօր միոյ ուրուք վարկանիմ յաղթանակել,) բազմեալ 'ի շքեղ կառս՝ լծեալ 'ի չորից երիվարաց, զգեցեալ պերճ և շքեղ հանդերձս յաղթականս, պսակ դափնեայ 'ի գլուխ, և ոստ դափնի 'ի ձեռին . և յորդւոցն և ոմանք առ նմա բազմեալ։ Զհետ կառացն գայր ա̃մ բանակն. նախ այրուձին, և ապա հետևակազօրն. և ա̃մ զօրքն սարդիւ պսակեալ էին. և որոց յառաջագոյն և այլ պսակս և օրէնս պատուոյ ընկալեալ էր՝ անդ արկանէին զանձամբք։ Իսկ հնչէր յամենեցունց գովութ̃ի զօրավարին. բայց և հեգնութ̃իք և դառն երգիծանք զինուորական համարձակութբ̃ 'ի գովութ̃իմն երբեմն խառնէին, այլ ցնծութ̃ին և հանդէս բթացուցանէր զխայթն զկծեցուցիչ, և զդառնութ̃ին ամոքէր։

Յերասանակել բդեշխին զկառսն 'ի հրապարակէն 'ի Կապիտոլիոն՝ ածէին գերիքն 'ի բանտ, և անդէն սպանանէին, կամ արկանէին 'ի շղթայս՝ կալ 'ի կապանսն մինչև ցմահ։ Իսկ յաղթողն մտեալ 'ի մեհեան Կապիտոլին՝ աղօթս մատուցանէր դից. և էր աղօթիցն օրինակ այս, զոր արժան համարիմ աստանօր կարգել. «Գոհանամ զքէն, ամենակալ ամենամեծդ աստուած Արամազդ, գոհանամ զքէն աստուածուհիդ Հերա, գոհանամ և զձէնջ պահպանք և բնակք դղեկիս դիք, որ ընդ ձեռն իմ պահեցէք և ետուք յաջողութ̃ի հռոմէական հասարակապետութ̃ե մինչև ցայսօր և մինչև ցժամս յայս. զնոյն յայսմհետէ և առ յապա պահել և խնամել, և հովանի լինել նմա և օգնական, զձեզ աղաչեմ»։ Իսկ զկնի աղօթիցն զոհք մատչէին. և ճաշ մեծ պատրաստէր 'ի Կապիտոլին 'ի գանձուց հասարակաց կամ յընչից յաղթականին։ Գտցեն խնդրողք 'ի գիրս Պլուտարքեայ զմանրապատում նկարագիր յաղթանակին Պօղոսի Էմիլեայ։

Ռոլէն. Գ. Հռոմ.

Ապաքէն օր ցնծութ̃ե էր զօրավարաց օրն այն, և չէին ինչ զարմանք՝ զի զա̃մ ճիգն գործէին 'ի ստացումն ցանկալի պատուոյն և պայծառ փառացն։ Ոչ ինչ հրաշափառագոյն էր 'ի Հռոմ քան զմեծաշուք հանդէսն. այլ եղերական աղետալի տեսլեան գերւոյն, եթէ գոյր աղէտ 'ի սիրտ յաղթողին, պարտ էր մթագնել աղաւաղել զա̃մ շուք հանդիսին։ Ո՜ անագորոյն բերկրութ̃ի, ո՜ խժական խնդութ̃ի. ձգել առաջի կառացն զիշխանս և զթագաւորս, զդշխոյս և զտիկնայս, զմատաղ մանկունս և զտկար ալիս։ Իսկ վասն այսորիկ քանի՜ կեղծիս սիրոյ և խոստմունս սուտս և հրապոյրս նենգաւորս ոչ արար կրտսերն Կեսար՝ որ ապա Օգոստոս կոչեցաւ, առ 'ի ձգել զԿղեոպատրա ընդ իւր 'ի Հռոմ 'ի շուք յաղթանակին իւրոյ, և վասն անգութ բերկրութ̃են տեսանելոյ յոտս իւր 'ի նուաստ կերպի զմեծազօր դշխոյն. այլ ոչ կարաց ծածկել 'ի նմանէ զհաղամն. Արդ ինձ թուի, այսպիսի գործք և իմաստք ոչ վայելեն մարդոյ.

Ընդ մրցանակս զօրաց 'ի դէպ է յաւելուլ և զկարևորագոյնն, զգաղթականութիւն ասեմ. Զի իբրև սկսան հռոմայեցիք պատերազմել և ընդարձակել զաշխարհակալութիւն իւրեանց արտաքոյ Իտալիոյ, զազգս՝ որք կարի յամառութեամբ զդէմ ունէին նոցա՝ պատուհասեալ, գրաւէին զմասն երկրին նոցա. և տային հռոմայեցւոց կարօտելոց, մանաւանդ ծերոց զօրաց՝ որոց աւուրք զինուորութեան լցեալ էին. Եւ բնակէին նոքա անդ խաղաղութեամբ, պատշաճ եկամտիւքն 'ի լիութեան բարեկենդանութեան ընտանեացն. և տակաւ մեծացեալ, լինէին 'ի վեր քան զամենեսին 'ի քաղաքս՝ յորս երթային, և զաւագութիւնս և զբարձրագոյն պատիւս ունէին. Եւ Հռոմ այնու գաղթականօքն, որ հանճարեղ և խորագէտ քաղաքավարութեան նորա արգասիք էին, ոչ միայն վարձատրէր առատապէս զզօրականսն՝ այլ և 'ի ձեռն նոցա 'ի հնազանդութեան ունէր զազգս նուաճեալս, և կրթէր զնոսա 'ի բարս և 'ի հռոմէական տարազ. և տակաւ 'ի սովորութիւն և յօրէնս իւր ձգէր զնոսա.

Նոր իմն մրցանակ 'ի յետին ժամանակս սահմանեցաւ 'ի Գաղղիա, զորմէ աստ արժան է ասել.

ՅՕԴՈՒԱԾ Ե.

Յաղագս արքունի անկելանոցին հաստատման.

Ոչ առ Յոյնս, և ոչ առ հռոմայեցիս, և ոչ առ այլս յազգաց գտանէին լեալ դարմանոցք 'ի տածումն զինուորաց, որք 'ի բազմաժամանակեայ աշխատութեան կամ 'ի վիրաց պատերազմի ոչ ևս կարող էին զինուորել. Լուդովիկեայ չորեքտասաներորդի պահեցան այս պարծանք, լինել օրինակ այլոց թագաւորաց. որում Անգղիա արդէն նախանձաւոր գտաւ. 'Ի դէպ է ասել, զի 'ի բազում այնչափ մեծագործութեանցն՝ որովք փառաւորեաց նա զթագաւորութիւն իւր՝ ոչ ինչ հաւասարէ արքունի անկելանոցին. Ոչ բազում ժամանակք են, զի յաղագս այսորիկ 'ի լոյս ել մատեան իմն համեմատ մեծակառոյց շինուածոյն՝ գեղովն և բազմութեամբ պատկերացն և քաջ փորագրովք. որ զկառուցմանէ նորա, և զելից և զմտիցն, և զշինուածոյ նորա և զկարգաց, և զտեսչութենէ նորա՝

ըստ մարմնաւոր պիտոյից և ըստ հոգեւոր, զա̃մ ինչ մանրապատում ճառէ։ Այսպիսեացս շնորհապարտ գըտանիմք մատենագրաց, որոց պէտ արարեալ՝ աւանդեն յետնոց զստոյգ պատմութի̃ իրաց՝ որ արժանի են յիշատակի. այլ ես կարճ՝ ՝ի կարճոյ անցանեմ։

Անդ ա̃մ ինչ զմեծախոհութի̃ և զմեծագործութի̃ վեհափառ հիմնադրին ՝ի դէմս ածեն։ Անդ արձակութիւն հոյակապ շինուածոյն, բաւական առ ՝ի բնակութի̃ արանց իբր չորից հազարաց, ապշեցուցանէ զտեսողս. յորում արուեստ զա̃մ արտաքին շուք և պայծառութիւն ցանկալի աչաց՝ կցորդէ ընդ ա̃մ որ ինչ ՝ի ներքս ՝ի դիւրութի̃ կենաց և ՝ի պէտս կարևորքն են։ Անդ սպայք և զինուորք՝ որք առ ծերութեան կամ վասն վիրաց ոչ ևս կարող են վաստակել, և առ կարօտութե̃ անձեռնհասք ՝ի պաճարել զկեանս, քաջ պատերազմողքն յանդորր հանգստեան՝ ազատք յա̃մ հոգոց և յանձկութե̃ց, ունելով զբնակութի̃, զտածումն, զզգեստ և զդարման ՝ի հիւանդութե̃ և յառողջութե̃՝ ՝ի դէպ և ըստ պատշաճի իւրեանց պայմանին, գտանեն պատսպարան ամուր և շքեղ ապաւէն, զոր Լուդովիկոս մեծն բարեպաշտութե̃ և հայրագութ խնամո̃ն պատրաստեաց նոցա։

Այլ քանի՞ անբաւ ծախք պիտին ՝ի պահպանութի̃ մեծի տանն՝ ոչ է հարկ ասել. զի ամ ըստ ամէ հինգհարիւր գրիւ ցորենոյ, և երկուհազար երեքարիւր մար գինւոյ սպառին։ Կարգեալ ՝ի նմա կան բազմութի̃ բժշկաց, վիրաբուժից, դեղագործաց և սպասաւորաց. և ՝ի հիւանդանոցմն աղախնեն օրիորդք երեսունևհինգ ՝ի միաբանից Բարերարաց ժիրք, զարմանալի մաքրութե̃։ Եւ ուստի՞ եկամուտքն այն հայթայթին ՝ի ծախս այնքան պիտոյից և կարեաց։ Անհնարին թուի, և չէ իսկ մարթ ըստ արժան բաւականին զարմանալ ընդ իմաստութիւնն՝ որ զայն կարգ և սահման եդ, զի նոքին սպայք և զօրականք մտադիւր, և գողցես առանց նուազութե̃, հայթայթեն զպէտս պահպանութե̃ տեղւոյն, ուր մի̃այ նոցա յաւուր միում հանգչել յաշխատութե̃ցն։ Զի եկամուտք ա̃մ ծախուց տանն մթերին ՝ի սովորական և յանսովոր թոշակաց պատերազմի, դենարք երեք առ մի լիրայ. որ մասնաւոր դոյզն ինչ թուի, այլ միահամուռ ժողովի ՝ի գումար մեծ։ Ի պատերազմաւն՝ որ կատարեցաւ յամին 1714, յոր ամ ըստ ամէ ծախէր բիւրիցս բիւր լիրայ, մթերէին ըստ սակի երից դենարաց՝ ամի ամի հարիւր քսան և հինգ բիւր լիրայ։

Եւս զարմանալին մնայ ասել, զկենդանացուցիչն ամ կարգաց հաստատութեն, և որ առաւելագոյն յաճախէ փառս անուան Լուդովիկեայ մեծին։ Ոչ զեկեղեցին ասեմ հոյակապ, յոր գերահռչակ ճարտարապետքն և նկարիչք և քանդակագործք, Մանսար և Տգոթ, Լըփռաւտոն, Կուայփել և Կուսթու, զամ արուեստ իւրեանց թափեցին'ի յօրինուած վսեմ յիշատակին. այլ զհայրագութ խնամս և զքրիստոնէական փոյթ թագաւորին, որ 'ի հոգալ զժամանակեայ պէտս զօրացն և սպայից թագաւորապէս և լի առատութբ, ընդ նմին և զամ կրօնական նպաստս պատրաստեաց անդ 'ի պատսպարանին նոցա։ Ուր են զօրականք՝ որք առ տենչ շահու և փառաց զինուորեալ, քաջահմուտք յիրս պատերազմի՝ սպառսպուռ օտարք են կրօնից, լի նախանձու տիրասէրք և հաւատարիմք՝ այլ անփոյթք յուսումն առ ած պարտուցն։ Արդ քանի սփոփումն է նոցա, զի մերձ 'ի վախճան կենացն կան առ նոսա խնամոտ եղբայրասէր և ածարեալ պաշտօնեայք Քրիստոսի գիտունք, ուսուցիչք իրաց՝ զոր թերեւս չէր լուեալ նոցա 'ի կեանս իւրեանց։ Որով բազումք 'ի նոցանէ դառնակսկիծ սրտիւ յիշեն զաւուրս համարձակ և անկարգ կենացն, և սորջանօք և անկեղծ զղջմամբ շահին զվարձս ամ վաստակոցն, այլ և զաւաղելի ձգանց գերապանծ քաջութեցն՝ որ խոտորնակի դիտաւորութբն չհամարէին նոցա 'ի վաստակս։

Բարեշուք վայելչութբ ամ ինչ յեկեղեցւոջ անդ պաշտօնին. այլ վայելուչ ևս է տեսանել անդ յամենայն ժամու զտեսիլն, ընդ որ չիք ոք՝ որ ոչ 'ի փղձուկ հարեալ արտասուիցէ, տեսանելով զօրականս ալևորս, խեղս, կաղս, հաշմ և կոյր, զի անկեալ 'ի վերայ երեսաց առաջի տն զօրութեց, խոնարհեալ երկրպագանեն. և մշտամռունչ հեծութբ գոհանան զնմանէ՝ որ յայնչափ 'ի բազում վտանգաց ապրեցոյց զնոսա, և 'ի դրանց դժոխոց ազատեաց. և շնորհապարտ սրտիւ ջերմեռանդն տարածեալ զձեռս, զձայն բարձեալ, մաղթեն. Յիշեա, տէր, որ զսուրբ ապաստանս զայս պատրաստեաց, և ողորմեա նմա ըստ ողորմութեն՝ զոր արար ընդ մեզ։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Յաղագս պաշարման քաղաքաց ։

Ոչ ինչ նուազ քան 'ի ճակատամարտս ճարտարք էին նախնիք 'ի պաշարումն և 'ի պահ քաղաքաց ։ Զկրկին զայսոսիկ մասունս զինուորականին յայն կատարումն ածին , զի որպէս ամենեցուն յայտ է՝ գրեթէ ոչ ինչ թողին յետնոց 'ի յաւելուլ ։ Ազգի ազգի հրազինութիւնք՝ յետ գիւտի այրեցական փոշւոյն՝ բազում ինչ փոփոխեցին յիրս պատերազմի , մանաւանդ 'ի պաշարմունս քաղաքաց՝ որ ոչ ևս յերկարաձգին ․ այլ փոփոխմունքս այս՝ ոչ որպէս կարծինն՝ զարմանալիք են , և ոչ ինչ 'ի փառս և 'ի ճարտարութե̃ն զօրավարաց յաւելլին ։

'Ի կարգ բանիս յաղագս պաշարման՝ տեսցուք նախ համառօտիւ զամրութե̃ց նախնեացն , և ապա զկազմածոյ մեքենայից նոցա զգլխաւորացն՝ զորս 'ի պաշարումն քաղաքաց 'ի գործ արկանէին , և ապա զնուաճմանէ և զդիմամարտութ̃է քաղաքաց ։ Զայսմ ամենայնէ ճոխագոյն ճառէ Փիլոն յերկրորդումն և յերրորդումն մատենի մեկնութե̃ց գրոցն Պօղիբեայ ․ և մեք 'ի նմանէ 'ի կիր առնումք զճառս , կարօտեալ այնպիսումն առաջնորդի՝ որ գիտակն է արուեստին ճարտար և հմուտ ։

ՊՐԱԿ ԱՌԱՋԻՆ

Յաղագս ամրութեանց նախնեացն ։

Որչափ 'ի սկիզբն ժամանակաց ոք 'ի վեր ելցէ , նմանագոյնս գտանէ զամրութիս քաղաքաց առ Յոյնս և առ Հռոմայեցիս , խրամօք և պատուարօք և աշտարակօք ։ Վիտրուվիոս 'ի ճառել զշինուածոյ ամրոցաց իւրոյ ժամանակին , խրատէ զաշտարակս արտաքս քան զպարիսպն յառաջ մատուցանել , որպէս զի 'ի մօտել թշնամւոյն՝ յաջմէ և յահեկէ հարցի ընդ կողս ․ և բոլորաձև բազմանկիւնի կառուցանել , քանզի քառակուսին դիւրակործան է , 'ի կազմածոյ մարտի և 'ի խոյոց անդէն վաղվաղակի հարեալ անկեանցն և տապալեալ ։ Իսկ ընդ այլ Վիտրուվ. Ա. Է։

զգուշութ̃ի պատուիրէ և խրամատ 'ի ներքս 'ի պարիսպն առնել առ աշտարակօքն ըստ լայնուե̃ նոցա , և գերանս զխրամատին կամուրջ արկանել յանցս , առանց բևեռելոյ յորմն . որպէս զի 'ի տիրել թշնամւոյն 'ի մի կողմն պարսպացն , մարթ իցէ քաղաքայնոց բառնալ զփայտեայ կամուրջն , և չթողուլ նմա անցանել այսր կամ յաշտարակս ։

Յովսեփ. Ընդդէմ . Ապ . Յուրփ. հր. Ե. Դ. Պողիբ . Ժ . 601 ։ Ամուրք մեծամեծք նախնեաց էին 'ի բարձունս , կըրկին և երեքկին պարսպօք և խրամովք պատեալ ։ Յովսեպոս 'ի Բերոսէ առեալ պատմէ , զի Նաբուգոդոնոսոր երեքկին աղիւսեայ և բարձրաբերձ մեծամուր պարսպօք պատեալ ամրացոյց զԲաբիլոն . Պողիբիոս 'ի պատմել զպաշարումն Սիրինգայ մայրաքաղաքին Վրկանայ յԱնտիոքոսէ՝ ասէ , թէ էր շուրջ պատեալ երիւք խրամովք՝ որոց լայնութ̃ի քառասուն և հինգ ոտնաչափ էր , և խորութ̃ի աւելի քան զքսան և երկու . և առ ափամբք նոցա սատի և անտի պատնէշք կրկին , և անդր ևս՝ ամուր պատուար ։ Եւ շուրջ զԵրուսաղեմաւ երեքկին պատէր պարիսպ՝ որպէս Յովսեպոս նկարագրէ , բաց 'ի միջէ կողմանէն՝ ընդ որ պատուարաւ միով պարսպէր , յանմատուցից խորաձորոց ամրացեալ . և այլ ազգի ազգի ամրութիւք զմիմեամբք ածեալ , որք եթէ քաջ աւարտեալ էին՝ ասէ վիպագիրն , լինէր քաղաքն անառիկ ։ Եւ էր երկայնութ̃ի քարանց շինուածոյ պարսպացն երեսուն ոտնաչափ , և լայնութ̃ի հնգետասան , որով անպեղելի էր և անսասան 'ի հարուածոց մեքենայից . հանդերձ սոքիմբք և խիտ առ խիտ ստուարակարկատ հաստաշինած աշտարակօք էր ամրացեալ ։

Եւ քանզի նախնիք հողաբլուրս ոչ կանգնէին առ պարսպօք յամրութ̃ի , բազմավտանգ ևս էր յարձակումն . զի թէպէտ և 'ի վերայ պարսպացն ելանէր թշնամին , չև ևս տիրէր քաղաքին . այլ պարտ էր նմա և իջանել , սանդուղս անդրէն 'ի գործ արկեալ որպէս յելսն , և էր վըտանգ մեծ զօրականին 'ի վայրէջս ։ Բայց որպէս Վիտրովիոս վկայէ , չիք ինչ ամրագոյն քան զպարիսպս՝ որոց պատուարք և աշտարակք 'ի հողաբլուրս յեցեալ իցեն . զի ոչ խոյք , և ոչ ականահատութիք , և ոչ այլ ազգի ազգի մեքենայք սասանեցուցեն զայն ։ Վէ̃մ քաղաքք նախնեաց ամուրք աղիւսեայ պատուարօք ամրացեալ էին , այլ կէսք սնդակազմ անդրդուելի հողաբլրօք պարըսպեալ ։ Նոյն և առ նոսա թումբք դալարապատք խրձադէզք վանդակակապք , որոց ցցապատնէշ 'ի վերայ կանգ- Ա . Է .

նէին, և միւս այլ առ խրամաւն, և 'ի խրամին իսկ յոլովակի ածեալ ձողիս՝ առ 'ի խափանել զյարձակումն թըշնամեաց ։ Առնէին և որմն 'ի գերանաց խոտորնակի և ընդ երկայն զմիմեամբք ածեալ վանդակաձև անջրպետիւք, և զանջրպետսն լնուին հողով և քարամբք. որպիսիք էին պարիսպք Բիթորիգեայ քաղաքին, զոր նկարագրէ Կեսար յեօթներորդ գիրսն գաղղիական մարտին ։

Քաջայայտ ես զկերպարանս ամրութեան քաղաքաց Նախնեացն փաստուք 'ի խօսելն զնուաճմանէ և զդիմակալութենէ նոցա ։ Արդ թէպէտ և կարծին 'ի մասինս յայսմիկ գերազանցել արդիք, այլ ոչ ամենեցուն այս այսպէս թուի աներկբայելի. քանզի չէ իսկ մարթ համեմատել զերկաքանչիւրսն, վասն բնաւին այլազգ գոլոյ այժմ յարձակման և դիմակալութե ։ Զո՟մ՝ որ ինչ մարթերն՝ առին 'ի հնոց արդիք. բայց վասն հրազինաց հարկ եղեն սոցա և այլ ամրութ՟իք ։ Նոյն հանճար է և անդ և աստ. մերքս ոչ ինչ ճարտարեցին պիտանի Նախնեաց, զոր չիցէ նոցա ճարտարամտեալ. 'ի նոցանէ ուսան զլայնատարած խորայատակ խրամս, զատուարակարկատ պատուարս, զաշտարակս յամրունի պարսպաց, զձողիս, ըզպատնէշս հողաբլրոց և մարտկոցաց, և զթևոց պատըսպարութ՟ի. մանաւանդ զի այժմ ամրութ՟ի ըստ թևոցն քաջ պատսպարութ՟ե է, որ դիւրաւ մարթի հրազինօք. Զայսոսիկ վասն ճարտարացն և հանճարեղաց յաւելաք, որք զոյգ ընդ խելամտութ՟ե հրահանգաց մարտի Նախնեացն, և այժմուցս քաջահմուտք են ։

ՊՐԱԿ ԵՐԿՐՈՐԴ

Յաղագս կազմածոց Նինուեայեց մարտի ։

Կազմածք Նախնեացն սովորականք և քաջածանօթք, զորս 'ի պաշարմունս քաղաքաց 'ի գործ արկանէին, են կրիայն, բաբանն, բաղխոր, կուռնկն, խոյ, և մարտկոցք կրելիք ։

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Յաղագս կրիային.

Վիտրուվ. Ժ. Ի. Կրիայ էր տախտակամած մեքենայ մեծ՝ ստուար և ամուր. բարձրութիւն նորա մինչև 'ի հեծանսն վերինս՝ յորս յենոյր ծայրիւն՝ էր երկոտասան ոտնաչափ։ Խարիսխ նորա քառակուսի, կողմն իւրաքանչիւր քսանևհինգ ոտնաչափ, պատեալ բարձիւք յանեփ կաշւոյ, դեղեալ անխանձելի 'ի հրձգութեանց։ Նա էր ծանրադանդաղ կազմածն այն անուաշրջիկ, յեցեալ յանիւս չորս կամ յութ. և կոչէր կրիայ, զի էր ամուր և հզօր պատսպարան ընդդիմարգել մեծամեծաց արկելոց իրաց 'ի բարձանց, առ որով ծածկէին ստորև կացեալքն՝ որպէս կրիայ պատենիւն։ Այն և 'ի խրամս պիտանի էր յանցս, և 'ի քանդել զհիմունս պարսպաց. բայց ընդ խրամս հարկ էր զբազումս յայնցանէ 'ի միմեանս յարեալ կցորդել ամրակուռ 'ի մի կարգ։ ԺՆ. 507. Աղեքսանդր մեծն 'ի պաշարելն զԱղիկառնաս, որպէս պատմէ Դիոդոր սիկիլիացին, կրիայս երիս մատուցեալ առ կամուրջ զխրամով քաղաքին, և անցոյց խոյս ընդ այն՝ հարկանել զքաղաքն, և զպարիսպսն խրամատել։ Ստէպ առ մատենագիրս յիշի կազմածս այս. և ոչ ինչ երկբայելի է՝ զի բազում ազգի ազգի և այլաչափ կրիայք էին։ Թուի նոյն և խեցեմորթն կոչեցեալ կազմածն, զոր Կեսար 'ի պաշարման Մասիլեայ 'ի կիր արկ. այլ այն ցածագոյն յոյժ էր և երկայնաձիգ, զոր 'ի դէպ էր մանաւանդ կոչել սրահ փայտակերտ. զի էր երկայնութիւն նորա, որպէս թուի, հաւասար լայնութեան խրամին։ Նա մատոյց զայն Կեսար 'ի ստորոտս պարսպին, առ 'ի քանդել զայն և կործանել։ Բայց բազում ուրեք որոշէ նա զկազմածս զայս 'ի միւսմէն։

Կես. Քաղաք. Յարփ. Բ.

Են և այլ կազմածք բազումք 'ի պատսպարութիւն զօրաց, որպէս վանդակակապն և շերտափակն և այգին, և այլ պարսպամարտ մեքենայք, զորս տաղտուկ է նկարագրել. մարթ է կոչել զնոսա առ հասարակ պատսպարանս։

Թող զփայտակերտն, էր և այլ ինչ կրիայ կազմեալ 'ի զօրաց, զոր ընդ կազմածս պատերազմիկ մեքենայից 'ի դէպ է համարել։ Զի բազմութիւն զօրականաց մածեալ յիրեարս, քաջակիրթք զկղմինտրաձև զասպարսն մեծամեծս ունէին դէպ վերոյ կից առ միմեանս, գործելով յարկ ամրածածուկ անհերձանելի յա՟մ ձգանց ամրականացն։ Նա մերթ ՚ի վերայ ասպարափակ առաջնոյ կրային միւս ևս ամբարձեալ, հաւասարէին բարձրութե՟ն պարըսպաց պաշարելոյ քաղաքին։

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Վասն բաբանին և բաղխոտրի։

Զերկոսին ՚ի մի կցորդեմ. զի թէպէտ և զանազանին սոքա առ մատենագիրս, այլ բազում ուրեք ևս անխտիր վարին, և դժուարին է զխտիր զանազանութե՟ն նոցա սահմանել, զի երկոքին իսկ նետաձիգ և քարընկէց մեքենայք են։ Ըստ այլևայլ չափոյ մեծութե՟ն կազմեալ, ըստ նմին առաւել կամ նուազ ունէին զօրութի՟ն։ Կէսք ՚ի ճակատամարտի պիտանիք էին, վասն որոյ կազմածս պատերազմիկս ՚ի դէպ է կոչել զնոսա[1]. իսկ այլք պարսպամարտք, զի ՚ի պաշարումն քաղաքաց ՚ի գործ արկանէին։ Բաղխոտրն դանդաղագոյն և դժուարակրելի քան զբաբանն էր, որպէս կարծեմ. զի բազմաթիւ էին բաբանք ՚ի պատերազմունս քան զբաղխոտրն։ Լիւիոս ՚ի վիպել ԻԶ. ԽԷ.
զպաշարումն Կարթագինեայ՝ բաբանս իբր հարիւր և քսան մեծամեծս ասէ աւար առեալ, և երկերիւր և ութսուն մանունս, երեսուն և երեք բաղխոտր ստուար, և յիսուն և երկու փոքրիկ։ Նոյն խտիր դնէ և Յովսե- Ե. Զ.
պոս ՚ի պատմել զառումն Երուսաղեմի ՚ի հռոմայեցւոց, երեքարիւր զբաբանս թուեալ, և քառասուն բաղխոտր։

Զօրութի՟ն կազմածոցս այսոցիկ անհնարին թուի, այլ հա- Վէգ. Դ. Է.
ւատարիմք ՚ի մատենագրաց առ հասարակ վկայեն այնմ։ Վիտրուվ. ԺԹ.
Զի ՚ի բաղըստրէն նետք արձակեալք բուռն և արագ Յով. Տարք.
թափ անցանէին ընդ ա՟մ, ըստ Վեգետեայ. և Աթե- Հռ. Գ. ԺԷ.
նեաս պատմէ՝ Ագեսիստրատեայ կազմեալ բաղխոտր, երկու ոտնաչափ երկայն՝ սուղ ինչ աւելի, յորմէ նետք գնային հեռի ասպարէզս իբր չորս. և միւս այլ առ երեք ոտնաչափ յերկայնութե՟ն, ուստի ձգէին նետք հեռագոյն քան զչորս ասպարէզս։ Այլն և այլք կորովագոյնք, որ վէմս ծանունս քան զերեքարիւր լիտր՝ ձգէին հեռագոյն քան զասպարէզ մի։ Յովսեպոս զզարմանալի զօրութի՟ն

---

[1] Հնգետասաներորդի Լեգէոնին բաղխոտր յաղթ, մեծամեծ վիմօք զթշնամեացն փլոյց զճակատ։ Տակիտ. պատմ. Գ. ԻԳ.

կազմածոցս պատմելով, ասէ · Նետիւք և ուժով բաբանացն սատակէր ամբոխ բազում, և քարինք ձգեալք 'ի նոցանէ զմահարձանս պարսպաց տապալէին, և փլուզանէին զանկիւնս աշտարակաց · և ընդ թանձրախոր և ստուար փաղանգս վէմք թափ անցանէին · Անդ էր տեսանել յայնժմ գիշերի զբազմահրաշ զօրութ՟ի մեքենայիցն · զուրումն, որ առ Յովսեպայ կացեալ էր, հարեալ տանէր զգլուխն վէմ բաբանաքար՝ երիւք ասպարիզօք 'ի հեռուստ ձգեալ ·

ՅՕԴՈՒԱԾ Գ.

Յաղագս խոյին ·

Որ 'ի վաղ ժամանակաց 'ի գործ արկեալ խոյին՝ այլ և այլ ազգաց ընծայի գիւտ · զոր դժուարին է և ոչ կարևոր ինչ հետազօտել՝ թէ յումմէ՞ իցէ ճարտարեալ · Երկին ազգք էին խոյոց, կախաղանաւոր և անկախ · Կախաղանաւորն կազմէր հեծանաւ միով 'ի բնէ կաղնոյ ստտաքանց, որպէս զկայմ նաւի, երկայն և ստուար յոյժ · և 'ի ծայր գերանին էր ըստ մեծութ՟ե կազմածոյն երկաթաձոյլ գլուխ խոյոյ, յորմէ մեքենայն զանունն կալաւ, հարկանել նովաւ զպարիսպս՝ որպէս խոյ գլխովն ոգորելով · Իսկ ստուարութ՟ի կազմածոյն էր ըստ երկայնութ՟են · Վիտրուվիոս զգլուխ խոյին, զորմէ խօսի, համարի չորեքհազար տաղանդ · և չէ ինչ կարի · Իսկ ահագին գերանն այն 'ի կախ կայր և 'ի կշիռ որպէս զլուծ կշռոց, կալեալ շղթայիւ կամ ստուար պարանաւ յօդս՝ որպէս շինուած իմ՟ն փայտակերտ · Իսկ մր արկեալ 'ի խրամ՟ն, յառաջ մատուցանէին զայն գլանօք սաղապաձևմ, կամ անուօք բազմօք գնացուցեալ · Իսկ էր կազմածն պատեալ ազգի ազգի ծածկութիւք յերեսաց հրձգութ՟եց ամրականացն · Այս ազգ կազմածոց դիւրագոյն վարի 'ի գործ՝ դոյզն զօրութ՟բ շարժեալ, որպէս ամ՟ ինչ կախաղանաւոր դիւրաշարժ է, թէպէտ և յոյժ ծանր իցէ ·

Այլ իբր արդեօք զկազմածս զայս ընդ իւրեանս շըրջեցուցանէին, զի ոչ ամ՟ ուրեք ստուար և երկայնաձիգ անհեթեթ գերանքն գտանին · և չէր իսկ մարթ առանց մեքենայիցն այնոցիկ չու առնել բանակի · Փոլառ ոչ ինչ յաղագս այսր առ մատենագիրս գտեալ, վարկանի զգերան խոյին զետեղեալ 'ի նորաձև իմ՟ն սայլքառանիւ հաստաշինած, և յեցեալ խոնարհագոյն 'ի նեցուկ ամրակառոյց ընդ բոլոր շինուածոյն, անտեղիտալի ա̃մ բըռնութե̃, սերտեալ և պնդեալ երկաթի կարծր տախտակօք և պահանգօք ։

Այր և խոյ անկախ, որպէս է տեսանել 'ի սիւնն Տրայիանոսի. ուր յանդիման առնի պաշարել Տակաց զոմանս 'ի հռոմայեցւոց 'ի մի 'ի բերդից, և վարել անդր զխոյն զօրութ̃ բազկի, անպատսպար նշաւակ կալով նետից թըշնամեաց հանդերձ կազմածովն ։ Բայց կազմածս այս ոչ առ մեծ ինչ գործ պիտանացու էր ։ Իսկ խոյք՝ որ 'ի մարտկոցս կրելիս և 'ի կրայս զետեղեալք՝ կախաղանաւորք էին թէ ոչ, երկբայելի է. զի են պատճառք դիպաւորք աստի և անտի, զորս քննել ոչ է մեզ անկ ։

Զզարմանալիս խոյին յետոյ պատմեսցուք. և քանզի սա վնասակարագոյն էր պաշարելոյ քան զա̃մ կազմածս, բազում հնարս գտին ամրականք անպիտան առնելոյ զսա ։ Զի 'ի յարկ կազմածոյն և 'ի խարիսխն հուր հարկանէին, կիզուլ ընդ նոսա և զխոյն. և առ 'ի թուլացուցանել զհարուածս նորա, քուրձս ասուեայս ընդդէմ առարկանէին. և կազմածս առ խոյովք կանգնեալ՝ բեկանէին զոյժ նորա, կամ զհարուածն խոտորեցուցանէին յանկանել նորա թափով. և այլ ևս բազում հնարիւք խափանէին զզօրութի̃ նորա, որպէս է ինչ՝ զոր յառաջ ասացաք ։ Զարմանալի իմն գ̃րէէ ումեմնէ պատմի. զի 'ի պաշարման Յոտապատ քաղաքի՝ վէմ անհեթեթ ձգեալ ուժգին 'ի խոյն, հար 'ի բաց ընկէց զգլուխն 'ի գերանէն. և այրն 'ի վայր վազեալ 'ի պարսպաց, յափշտակեալ զայն աճ 'ի վեր. այլ 'ի նետից թշնամեաց եառ վէրս հինգ ։ Նա և եկաց կարեվէր 'ի վերայ պարըսպին արի նահատակն, մինչև հոսեալ սպառէր արիւնն և ոյժ. և կործանեալ անկաւ 'ի պարսպացն հանդերձ գըլխով խոյին՝ զոր 'ի գիրկս ունէր ։

Վէգէտ. Դ. ԻԳ.

Յովս. պատմ. հր. Գ. ԺԷ.

ՅՕԴՈՒԱԾ Դ.

Զմարտկոցաց կրելեաց ։

Վեգետիոս քաջ նկարագրէ զսոսա. Աշտարակք, ասէ, գնացականք՝ են շինուածք կազմեալք 'ի գերանաց և յամուր տախտակաց հանգոյն տան, և զգուշացեալ 'ի վտանգէ հրձգութե̃ ամրականացն անեփ կաշւով և քըր- Դ. ԺԷ.

ձովք ձարեօք ։ Համեմատ ընդարձակութեան խարսխին է բարձրութիւն նորա ․ զի ոմանց երեսուն քառակուսի ոտնաչափ է խարիսխն, և ոմանց քառասուն կամ յիսուն ․ և բարձրութիւն նոցա 'ի վեր քան զպարիսպս և քան զաշտարակս քաղաքաց ։ Սա թէպէտ կարի մեծ իցէ, մեքենական կարգօք յեցեալ յանիւս՝ դիւրաւ շրջագայի ։ Վտանգ է յոյժ քաղաքի՝ 'ի մատչել նորա հուպ 'ի պարիսպն ․ զի սանդուղք բազումք են 'ի նմա կարգ ըստ կարգէ վերելից, և բազում ազգի մարտացու կազմածք ։ 'Ի ներքնայարկին խոյ զետեղեալ կայ, որով խրամատէ զպարիսպս ․ և 'ի միջնում յարկին կամուրջ շարժական՝ կախեալ 'ի կրկին գերանաց, և խելք կամրջին վանդակեալ յուռեաց, որպէս զի մարթ իցէ՝ մատուցեալ 'ի քաղաքն՝ արկանել զայն 'ի պարիսպս, և անցեալ ընդ այն՝ տիրել քաղաքին ։ Իսկ 'ի վերնայարկին կան նիզակաւորք և նետողք, որք 'ի բարձուէ նետաձիգ լինին յամրականսն անդադար ։ Ամին իրի 'ի մատչել նորա՝ ոչ ևս յերկարէ քաղաքն դիմակալել ․ զի որոց ամենայն յոյս 'ի բարձրութիւն պարսպացն է, 'ի վեր ևս ամբառնալ յանկարծ թշնամւոյն՝ զի՞նչ ևս յոյս կայցէ նոցա ։

ՊՐԱԿ ԵՐՐՈՐԴ

Նուաճումն և պահ քաղաքաց ։

Զերկոցունցն խառն 'ի միասին ճառեմ առ ամփոփումն ընդարձակութեան ճառից, զկարևոր մասունս համառօտիւ հարեալ 'ի գրի ։

ՅՕԴՈՒԱԾ Ա․

Յաղագս շրջապատնէշ և ընդդիմապատնէշ ամրութեանց ։

'Ի պաշարել զքաղաքս հզօրս և զբազմամարդս՝ խրամ և պատնէշ շուրջանակի ընդդէմ ամրականացն ածէին, և միւս ևս արտաքուստ ընդդէմ եկելոցն յօգնութիւն քաղաքին ․ և այս են շրջապատնէշն և ընդդիմապատնէշ ․ և ինքեանք 'ի միջի բանակէին երկուց պատնիշացն, զշրջապատնէշն ընդդէմ քաղաքին կանգնեալ, զընդդիմապատնէշն ընդդէմ հինից արտաքնոց ։

Յերկարաձգել մարտին պաշարման, նստեալ պահէին զել և զմուտ քաղաքին՝ աղիւսեալս ածեալ պատուարս փոխանակ պատնիշացն, խիտ առ խիտ աշտարակօք ամրացեալ։ Որպէս զպաշարումն Պղատեայ 'ի սպարտացւոց և 'ի Թեբացւոց մանրապատում նկարագրեալ վկայէ Թուկիդիդէս։ Զի էին փոխանակ կրկին պատնիշացն ածեալ շուրջանակի պատուարք՝ վեշտասան ոտնաչափ հեռի 'ի միմեանց, և 'ի միջի բանակէին զօրքն 'ի վրանս. որպէս զի մի միայն պատուար ամուր խիտ աշտարակօք պատսպարէր զանջրպետն 'ի քաղաքայնոց և յարտաքնոց։ Իսկ վրանաց 'ի վրանս ընդ աշտարակսն ևեթ էին անցք, և բարձունք որմոցն ձողեօք ուռենեօք պատեալ, և խրամ աստի և անտի հատեալ. յորոց 'ի բրածոյն աղիւսք որմոցն արկեալ էին։ Յայս վայր Թուկիդիդէս յաղագս շրջապատի որմոցն՝ որ ոչ կարի ընդարձակագոյն պատէին, զի էր քաղաքն փոքրիկ։ Զպատմութ̃ի այսր մարտի պաշարման, կամ արգելանաց Պղատեայ, որ յոյժ անուանի է 'ի վէպս վաղ ժամանակաց, այլուր պատմեցաք լիով[1]. և զայն իսկ եթէ որպէս կէսք 'ի պահապանացն ընդ ամուր զգուշութ̃իւնն փախուցեալ զերծան։

Թուկիդ. Բ. 147.

Ընդարձակագոյն յոյժ բանակն հռոմայեցւոց շրջարբերէր զՆումանտեա, զի էր շրջապատ քաղաքին քսան և չորից ասպարիզաց։ Զոր Սկիպիոնի պաշարեալ, ած զնովաւ պատնէշ՝ որում հարկ էր զկրկնապատիկ շրջապատի քաղաքին գրաւել երկիր։ Իսկ 'ի կատարել այնր, միւս ևս ամրութ̃ի զգուշութ̃ե ընդդէմ քաղաքայնոցն հեռագոյն յառաջնոյն ետ կանգնել՝ պատուար Թանձր ութ ոտնաչափ, և բարձրութ̃ի նորա տասն. և խիտ առ խիտ ածեալ ձողիս զնովաւ, և աշտարակօք ամրացոյց զայն հեռի 'ի միմեանց հարիւր ոտնաչափ։ Անհնարին Թուին գործածքս այս բազմավաստակք, քանզի պարբերէր շրջապատնէշն այն քառասուն և ութ ասպարէզ, այլ̃ոմ իրօք հաւատարիմք են։ Արդ ժամ է ասել ընդպարսպամարտէ։

Ապպիան. յԻբեր. 306.

---

[1] Հռոմ. Բ. 123.

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Յաղագս յարձակելոյ յամրականս.

Թէպէտև զփողոցս յարկածածուկս, զպատ 'ի պատ խրամս, զգետնափոր ականահատութիւնս, և զայլ համագոյն սոցին հնարս դուն ուրեք և ոչ յայտնի գրեն պատմիչք, այլ ոչ ինչ երկբայելի է՝ զի և Յոյնք և Հռոմայեցիք 'ի գործ արկանէին զայնս. Զի զիա՞րդ մարթէր նախանի զօրավարաց, որք 'ի վերայ ա͞մ գերապանծ առաքինութեանցն՝ և խնայողք էին յոյժ յարիւն և 'ի կեանս զօրացն, մատչել 'ի քաղաքս և մարտնչել ընդ նոսա՝ առանց զգուշանալոյ 'ի սատակչական կազմածոց մեքենայից քաղաքայնոցն ամրականաց։ Բայց թէ և ա͞մ վիպագիրք լռէին, զի մարթէր նոցա 'ի պատմել զվերամարտութիւն քաղաքաց՝ թողուլ զայն 'ի բաց որպէս քաջայայտ ամենեցուն, սակայն ոչ 'ի դէպ էր կարծել՝ զօրավարաց այնպիսեաց քաջաց անգէտ կամ անփոյթ լեալ կարևոր և դիւրին հնարիցն, որ անաշխատ 'ի միտս անկանէր ամենեցուն մարտուցելոց ընդ քաղաքս. այլ են՝ որք յիշեն իսկ զայն. Զմին 'ի բազմաց ածից զՊողիբիոս, որ 'ի
Թ. 591. հատուկտրոյն 'ի պատմել զպաշարումն Եքինեայ 'ի Փիլիպպոսէ՝ ասէ 'ի կատարած նկարագրին, թէ առ 'ի պատսպարել 'ի նետից ամրականայն զզօրս՝ որ 'ի գործ պատնիշացն երթևեկէին, ած խրամս[1] 'ի բանակէն մինչև 'ի կրայս, և խրամքն յարկածածուկք էին.

Դիոդ.Ճ.818. Բազում ժամանակօք վաղ քան զՓիլիպպոս՝ Դեմետր Պաշարիչն զնոյն հնարս 'ի կիր արկ 'ի պաշարելն զՀռոդոս, զորմէ Դիոդոր սիկիլիացի ասէ. Սա՝ այր պատերազմող անուանի՝ կառոյց կրայս, և եբաց գետնափոր անցս կամ խրամս յարկածածուկս յերթևեկ զօրացն 'ի կազմածս խոյոց. և ետ գործել ուղի, ոչ ստորերկրեայ՝ այլ յարկածածուկ, զի անվտանգ ընդ այն երթիցեն զօրքն 'ի բանակէն յաշտարակսն և 'ի կրայս, և դարձցին այսրէն. Նա և էր երկայնութիւն ուղւոյն չորից ասպարիզաց, յոր ծովամարտիցն հրամայեցաւ աշխատել.

Ոչ ինչ զանխուլ էին ապա առ հինս ամրածածուկ անցք, առանց որոց անհնար էր նոցա մարտ դնել ընդ քաղաքս ։ Եւ զայն ոչ միօրինակ գործէին, այլ մերթ խրամ դէպ ուղիղ յամուրն ձգեալ, մերթ գետնափոր ական հատեալ ընդ երկրաւ, և մերթ անյարկ բազմապտոյտ՝ անվտանգ 'ի հալածչաց ։ Զորս մատենագիրք բազում ուրեք կոչեն թումբս, յորոց վերայ և զկազմածոն զետեղէին. և այսպէս գործէին զայնս ։ Սկսեալ զթումբն առ եզերբ խրամոյն յայս կոյս ոչ ինչ 'ի բացէ, առ բարձրաբերձ պատսպարանօքն ամրացեալք 'ի մեքենայից թշնամեաց՝ վաստակէին 'ի գործն ։ Եւ պատսպարանքն ոչ միշտ վանդակակապք էին կամ ցանկեալք յոստոց, այլ և պահպանակք յանեփ կաշւոյ կամ 'ի ստուարակարկատ կապերտէ, և առագաստք [1] հիւսեալք հաստ պարանաւ, կախեալք զբարձրաբերձ կանգնաւոր կայմից, յորս թափ հարուածոցն բեկանէր ։

---

[1] Խրամս կամ փողոցս յարկածածուկս. Նոյ երեայն պատնէշ, երեայն փոս կամ ծածուկս. Սուետոն զփողոցն նմա. Բրամ.

Եւ անդադար վաստակէին 'ի գործն մինչև ցբարձրութիւն առագաստիցն կախելոց, զորս ըստ ամբառնալ թմբին՝ 'ի վեր ձգէին ։ Եւ 'ի խորոցն դատարկ լի արկանէին քարինս և հող և զամենայն նիւթ. իսկ այլք հարթեալ կռէին զերկիրն, զի պնդակազմ կացցէ ընդ աշտարակօքն և ընդ մեքենայիւք՝ զորս կառուցանէին 'ի թմբին ։ Եւ յաշտարակաց անտի և 'ի նետակալ քարընկէց մեքենայիցն տեղային տարափս քարանց և նետից և ստուար գեղարդանց 'ի պատնէշս և յամրոցս քաղաքին ։

Զարմանալի իմն էր թումբն կանգնեալ յԱղեքսանդրէ մեծէ 'ի վէմն Խորիենեայ. զի համարէր վէմն այն անառիկ, և էր բարձրութիւն նորա երկուհազար հինգհարիւր ոտնաչափ, և աւելի քան զեօթն մղոն շրջապատ նորա ։ Եւ յամենայն կողմանց սեպացեալ էր, բայց միայն դոյզն ելք 'ի ժայռի հատեալ՝ հազիւ միոյ ուրուք գնալի. և խորաձորովք ամենուստ որպէս խրամովք ամրանայր անմատոյց, յորս հարկ էր լի արկանել յանցս ։ Յամենայն դժուարութեանց աստի ոչ վհատեցաւ Աղեքսանդր, որոյ արիութեան և բաղդի ոչ ինչ գոյր անհնարին ։ Հրաման ետ հատանել մայրս յանտառաց շուրջանակի, և արկանել 'ի խրամին յէջս. և զօրքն զտիւ և զգիշեր աշխատ լինէին 'ի լնուլ զխրամին ։ Բայց թէպէտ և ամենայն զօրքն փոխանակաւ վաստակէին, ոչ ինչ աւելի քան զերեսուն ոտնաչափ լնուին զօրն ցերեկ. իսկ զցայգ նուազ ևս, զի յոյժ դժուարին էր ։ Եւ 'ի յառաջանալ գործոյն և մերձ 'ի լնուլ, հարին

Արրիան. Գ. 180.

---

[1] Զայսու կիրառէ 'ի պաշարելն զՄասիլիա 'ի Կեսարու. Կեսար. քաղ. Գ.

ցիցս երկուստեք խրամոյն սակաւ ինչ հեռի 'ի միմեանց , արկեալ փոքրօք գերանս կողմանէ 'ի կողմն , 'ի բարձումն բեռանց 'ի վերայ եդելոց ։ Եւ կազմեցին որպէս յատակ իմն կամ կամուրջ վանդակեալ յուռեաց և յոստոց հիւսեալ , և ծածկեցին զայն հողով մինչև ցբարձրու՟ի ափանց խրամոյն , որպէս զի լիցի զօրացն մատչել համարձակ մինչև 'ի վէմս ։ Իսկ բարբարոսք , որ ծաղր առնէին զնոսա որպէս զրաջանս , իբրև նշաւակ եղեն նետից վաստակաւորացն 'ի Թմբէն՝ ամրացելոց առ պատսպարանօքն , սկըսան վհատել , և խնդրէին խօսել 'ի հաշտու՟ի ։ և վաղվաղակի ետուն զվէմս 'ի ձեռս Աղեքսանդրի ։

Ոչ ա՟մ ուրեք նոյն դժուարութ՟ի էր 'ի լնուլ զխրամս , բայց բազում զգուշութ՟ե և վաստակոց պէտք էին ։ վասն որոյ պատսպարէին զօրքն կրայիւք և այլովք կազմածովք ։ Եւ լնուին զխրամս քարամբք և բնովք ծառոց կամ ոստովք խառն ընդ հողոյ ։ զի հարկ էր պնդակազմ լինել երկրին վասն չխրելոյ ծանրաբեռն մեքենայիցն՝ զորս բառնայր , զի ոստք ևեթ չկային սեղմ և պնդակազմ ։ Իսկ զխրամս ջրալիցս ցամաքեցուցանէին ջրադարձիւք , կամ լիր ուրեք արկանէին ։ Բայց 'ի վաստակել նոցա , ոչ անգործ կային քաղաքացիք ։ այլ գետնափոր ական մինչև 'ի խրամն հատեալ , և զլիցս խրամոյն բարձեալ՝ ձեռանէ 'ի ձեռն կրէին 'ի քաղաքն , և ոչ յառաջանայր գործն ։ զի մինչ թշնամիք լնուին 'ի վերուստ , քաղաքացիքն 'ի ներքուստ 'ի բաց բառնային ։ Կամ մանաւանդ զանխլաբար պեղեալ զմասն ինչ երկրին , ապա մոյթ և նեցուկս ներքոյ դնէին՝ ծեփեալ նաւթիւ և ձիւթով , և 'ի խորշս յենարանացն փայտ չոր և ազգի ազգի լուցկիս դիւրաբորբոքս պատրաստեալ , խանձ 'ի ներքս արկանէին ։ Եւ իբրև նեցուկքն այրէին , նստէր խորափիտն հանդերձ կրայիւքն և խոյօք և մարտկօք ։

Պողիբ. Ժ. Է. Սովին հնարիւք և պաշարողք զպարիսպս քաղաքաց փլուզանէին ։ 'Ի պաշարել Դարեհի զՔաղկեդոն՝ ոչ ինչ փոյթ եղև քաղաքայնոց , զի էին պարիսպք քաղաքին հզօրք և քաղաքն ամենակազմ պաշարաւ ։ Իսկ Թագաւորն ոչ մատոյց զզօրս իւր 'ի պարիսպսն , և ոչ ըզդաշտս յապականութ՟ի եդ ։ այլ հանդարտ կայր՝ որպէս թէ մնալով օգնականութ՟ե զօրաց բազմաց ։ Եւ մինչ քաղաքացիք զամուրսն պահէին , նա հնգետասան ասպարիզաւ հեռի 'ի քաղաքէն փոս հատեալ՝ եած ական ընդ երկրաւ մինչև 'ի հրապարակն վաճառանոց , ուր ձիթաստանք տնկեալ էին ։ և յարմատոց ծառոցն գիտացեալ զօրաց զվայրն , հատին ընդ վերկոյս ակն , և ելեալ ընդ այն՝ կալան զքաղաքն , մինչդեռ քաղաքացիք պահ ունէին պարսպացն ։

Ըստ սմին օրինակի և Սերուիլիոս իշխանապետ կալաւ զՓիդենա քաղաք ․ զի ուստեք ուստեք առ 'ի խաբս զզօրսն յարձակեցուցեալ՝ 'ի ներքուստ առանցս հատանէր մինչև 'ի միջնաբերդն , և հանէր անդր զզօրսն ։ Եւ միւս այլ ոմն , քաջն Կամիլլոս , սոյն հնարիւք վախճան արար յերկարաձիգ պաշարման քաղաքին Վէաց ։ Խորհեցաւ գետնափոր անցս հատանել մինչև 'ի դղեակն ․ և առ հանապազորդութի գործոյն , և առ 'ի չպարտասելոյ գործաւորացն , բաժանեաց զնոսա 'ի վեց խումբս , որպէս զի փոխանակաւ զվեց ժամ իւրաքանչիւր վաստակեսցեն ։ Եւ զտիւ և զգիշեր ոչ դադարկանայր գործն , մինչև հասին 'ի դղեակն , և առաւ քաղաքն ։ Լիւ․ Դ․ ԻԲ․ Ե․ ԺԹ․

'Ի պաշարել Սիղղայ զԱթէնս՝ զարմանալի ճգամբք աստի և անտի հատանէին ստորերկրեայ ուղի ընդդէմ միմեանց , և ստէպ հանդիպեալ իրերաց՝ մարտ սաստիկ տային ընդ երկրաւ ։ Եւ հասեալ հռոմայեցւոց մինչև 'ի հիմն պարսպին՝ պեղեցին վիհ մեծ , և նեցուկս 'ի ներքոյ եդեալ , հուր հարին 'ի նոսա ․ և կործանեալ անկան պարիսպքն 'ի վիհն ահագին դղրդմամբ , և որք 'ի վերայ պարսպացն կային զօրքն կորեան ։ Ընդ մի և այս հնարք էին մարտնչելոյ ընդ ամուրս ։ Ապպ․ 'ի մարտ․ Միհրդ․ 193․

ՅՕԴՈՒԱԾ Գ․

Յաղագս խրամահարէից առնելոյ շղարիսպս ։

Բազում օրինակաւ պատսպարէին նախնիք զխրամատս պարսպաց ։ Էր՝ զի հատեալ մայրիս արկանէին առ նոքօք խիտ ընդ խիտ , զոստսն ընդ միմեանս խառնեալ, և հարստեալ զբունսն ընդ իրեարս կապանօք, որպէս զի չէր հնար բաժանել նոցա ․ և որպէս ցանկ իմն անթափանց գործեալ՝ կային յետ կուսէ նորա ամբոխ նիզակաւորաց և տիգաւորաց ։ Այլ երբեմն այնպէս արագ խրամատէին թշնամիք զպարիսպս ընդ յարկածածուկ խրամս, կամ ընդ գետնափոր ականահատութիս , կամ սաստիկ հարուածովք խոյոյ , զի անդէն քաղաքացիքն յանկարծ անպատսպար գտանէին ․ և 'ի հնարս դիւրինս ձեռնարկեալ, վասն պարապ առնելոյ 'ի խորհել՝ թէ զիարդ խրամակարկատ արասցեն, կուտէին դիզադէզ յերկիր և 'ի փլատակս պարսպին փայտ չոր և կիզանուտ նիւթս, և վառեալ բորբոքէին հրդեհ մեծ, ընդ որ անհնար էր թշնամեաց անցանել, և ոչ 'ի խրամատն հուպ լինել. Լիւ. խռ. 14. որպէս արարին զօրքն յԱղիարտ քաղաք 'ի Բէովտիա ընդդէմ հռոմայեցւոց.

Իսկ յաճախ ևս ամբառնային այլ պատուար 'ի ներքուստ, ոչ ուղիղ առ խրամատիւն՝ այլ մահկաբար 'ի ներքս խորացեալ, և ծայրիւքն 'ի սպառուած խրամատին ընդ պարիսպն 'ի համբոյր եկեալ. և առ պատուարաւն պեղէին խրամ լայնատարած և խորայատակ, զի հարկ լիցի թշնամեաց հանդերձ ա̅մ պարսպամարտ կազմածովքն որպէս յամուրս հզօրս մատչել անդր.

Ապպ. Պատ. Միհրտ. 194. Սիղղա հարուածովք խոյոց խրամատ մեծ գործեալ 'ի պարիսպս Պիրէոնի, անդր վաղվաղակի յարձակեցոյց զա̅մ բանակն, և եղև անդ սաստիկ պատերազմ, մինչև ստիպել նմա փոյթ հարկանել 'ի նահանջ։ Իսկ քաղաքայնոց պարապ գտեալ՝ կանգնեցին վաղվաղակի այլ պատուար առ խրամատիւն 'ի ներքուստ։ Իբրև զայն ետես Սիղղա, մատոյց յառաջ զկազմածսն՝ հարկանել զայն, զի դեռ ևս էր կանգնեալ և դիւրակործան առաջի բռնուե̅ մեքենայիցն. յոր անաշխատ յաղթեալ, միանգամայն և զզօրսն յարձակեցոյց։ Բայց անդ մարտ ահեղ և սաստիկ գրգռեալ, տկարացաւ Սիղղա. և ձեռնթափ լեալ, դարձաւ յետս։ Բազում են հանգոյն այսմ օրինակք 'ի վէպս։

ՅՕԴՈՒԱԾ Դ.

Հարուածս և պահ քաղաքաց 'ի հաղմածոց մեքենայից.

Պիտանեգոյնք 'ի պաշարմունս մեքենայք, որպէս յառաջ ասացաք, էին բաբան և բաղլիստր, կրիայ և խոյ և աշտարակք շարժականք. Որոց զօրութեան որ ոք քաջահմուտ լինել ցանկայ՝ ընթերցցի զնկարագրութիւնս պաշարման քաղաքաց, զոր յայսմ պատմութեան գրեցաք. որպէս զԼիլիբեայն 'ի Սիկիլիա 'ի հռոմայեցւոց, զԿարքեդոնին 'ի Սկիպիոնէ, զՍիրակուսայն յաթենացւոց և 'ի Մարկեղեայ, զՏիւրոսին յԱղեքսանդրէ, զՀռոդայն 'ի Պարսպամարտն Դեմետրեայ, և զԱթենայն 'ի Սիղղայ։ Այլ ես միւս այլ եղից աստանօր, ընտրեալ 'ի հանգամանաց նորա որ ինչ պատեհագոյն ինձ թուի առ 'ի տալ զկերպարանս պարսպամարտութ̃ե նախնեաց, թէ զիարդ զկազմածս 'ի կիր արկանէին. զԵրուսաղեմին առեալ զհռչակաւոր պաշարումն 'ի Տիտոսէ, զոր երկարապատում նկարագրէ Յովսեպոս ականատես պատմիչ.

Քաղաքն երուսաղեմացւոց երեքկին պարսպօք շրջապատեալ էր, ասէ. բայց միայն ընդ կողմն' ուր անկոխ ձորովք էր փակեալ, զմիակ շրջապարիսպն ունէր. Հրաման ետ Տիտոս նախ զծառաստունկս շուրջանակի հատանել, և կանգնել նոքօք թումբս. և ա̃մ զօրքն 'ի գործն զբաղեալ էին' պարածածկեալ վանդակակապ պատնիշօք. Բայց և ոչ Հրեայքն հեղգային 'ի դիմակալութ̃ի, այլ վաղվաղակի ծածկեցին զ'ի վերայ պարսպացն բազմութ̃բ մեքենայից. Եւ 'ի կատարել հողաբլրոցն' հրամայեաց Տիտոս դնել 'ի նոսա զխոյս, և զայլ մեքենայս յառաջ մատուցանել ընդդէմ յարձակման Հրէից, և յերից կողմանց զնախապարիսպն հարկանել. Իսկ Հրեայք հուր և նետս անդադար ձգէին 'ի կազմածս թշնամեաց, և յայնոսիկ' որք զխոյսն մղէին. և բազումք ևս 'ի դուրս յարձակէին' հրձիգ առնել զնոսա, և բազում աշխատութ̃բ վանէին 'ի բաց.

Բայց Տիտոս ետ կանգնել 'ի հողաբլուրսն աշտարակս երիս, եօթանասուն և հինգ ոտնաչափ 'ի բարձրութ̃ի' 'ի վեր քան զմարտկոցս և քան զպարիսպսն պաշարեալս. Եւ 'ի խոր գիշերին մին 'ի նոցանէ անկաւ. և արհաւիրք մեծ 'ի դղրդմանէն կալան զզօրսն. Եւ չարաչար նեղէին Հրեայք յաշտարակացն, զի անտի բազմութ̃ի դիւրաշարժ մեքենայից և նիզակաւորք և աղեղնաւորք անդադար նետս և սլաքս և քարինս տեղային 'ի նոսա. Եւ նոցա վարանեալ, զի ոչ հողաբլրօք հաւասարել կարէին բարձրութ̃ե աշտարակացն, և ոչ կործանել զնոսա վասն կարի ամրութ̃են, և ոչ հրձիգ առնել' զի երկաթապատք էին, անդր քան զնետընկէց փախեան, և ոչ ևս զյարձակումն խոյոցն արգելուին. Եւ իբրև ահագին կազմածքն անխափան յառաջ մատչէին, հարկ եղև նոցա յառաջնմէ պարսպէն տեղի տալ' դիմամարտեալ զաւուրս հնգետասան. Եւ հռոմայեցիք մտեալ ընդ խրամատն, բացին զդրունս պարսպացն, և ընկալան զա̃մ զօրսն 'ի ներքս. Իսկ միջնապարիսպն ոչ ինչ ընդերկար դիմակալեաց, այլ վաղվաղակի կալաւ զայն Տիտոս. նոյնպէս և զնոր քաղաքն. Բայց Հրեայք ձգամբ մեծաւ վանեցին 'ի բաց զհռոմայեցիս. և զաւուրս չորս Տիտոսի անդադար մարտ սաստիկ դնելով' նուաճեաց զայն անդրէն. Պատ. Հր. Է.

Այլ զերրորդ պարիսպն բազում աշխատութեամբ և արեանհեղութ՟ կալաւ, զի դաշին խաղաղութ՟ ապառում լեալ Հրեայք՝ պնդագոյնս դիմամարտէին, մոլեգնեալք և կատաղեալք յուսահատութ՟՝ քան արիութ՟ խրախուսեալք։ Եւ երկգնդեաց Տիտոս զզօրսն մերձ յԱնտոնիա ամրոցն, և հրամայեաց նոցա կազմել հողաբլուրս չորս, մէն մի իւրաքանչիւր լեգէոնի։ Բայց թէպէտ և զցայգ և զցերեկ գործէին անդադար, յետ հնգետասան և աւելի ևս աւուրց կատարեցան հողաբլուրքն, և ապա կանգնեցին 'ի վերայ նոցա զմեքենայս։ Էին 'ի քաղաքին առաջնորդք ապստամբացն Յովհաննէս և Շմաւոն. և ետ Յովհաննէս փորել զերկիրն 'ի ներքոյ մինչև ցհողաբլուրն՝ որ առ Անտոնեայ դղեկին էր, և նեցուկս ընդ գետնափորն կարգադրել, և ածեալ փայտ բազում օծեալ ձիւթով և կպրով՝ հուր 'ի ներքս մատուցանել։ Եւ իբրև մօյթքն վառեցան, նստաւ խորոփիտն ահագին թնդմամբ։ Եւ յետ երկուց աւուրց 'ի վերայ այլոց ևս հողաբլրոցն դիմէ Շմաւոն, յորս հռոմայեցիք զխոյսն կանգնեալ՝ հարկանէին զպարիսպն։ Եւ սպայք երեք, հանդերձ զօրօք՝ որոց հանգոյն նոցա զոգի 'ի բռին եդեալ էր, առեալ ղամբարս՝ յարձակեցան ընդ խումբս թշնամեաց աներկիւղ 'ի տիգաց նոցա և 'ի սուսերաց, և բորբոքեալ զմեքենայսն՝ դարձան յետս։ Եւ իբրև բոցն բարձրացաւ, դիմեցին անդր հռոմայեցիք 'ի բանակէն յօգնութ՟։ Իսկ Հրեայք 'ի պարսպէն արգելուին զնոսա նետիւք, զի էին նոցա բաբանք իբր երեքարիւր, և քառասուն բաղիստր. և բազում ամբոխիւ 'ի դուրս յարձակեալ՝ ոչ խնայելով յանձինս, ճակատ յօրինէին ընդ այնոսիկ՝ որք զբոցն գային շիջուցանել։ Նոքա զբաբանսն 'ի հրոյն հանել ջանային՝ մինչ վերնայարկք նոցա այրէին, իսկ Հրեայք անդէն 'ի մէջ բոցոյն մարտնչէին՝ արգելուլ զնոսա։ Անտի բոցն 'ի հողաբլուրս անց, և ոչ կարէին հռոմայեցիք խափանել զայն. և շրջապատեալ 'ի հրակիզմանէն, և յուսահատեալ յապրեցուցանելոյ զձեռագործսն, 'ի բանակն անդրէն դարձան։ Եւ ընդ աւերումն հողաբլրոցն սուգ առնուին, զի զայնչափ երկարաձիգ վաստակսն 'ի միում ժամու կորուսին. և բազումք այնք իսկ էին, որք ընդ լուծանել մեքենայիցն՝ յառմանէ քաղաքին վհատէին։

Բայց Տիտոս ոչ ինչ վհատեցաւ. այլ խորհուրդ առեալ ընդ զօրագլուխս, ասէր զբովանդակ քաղաքն պարսպաւ պատել, և ածել շուրջանակի խրամ, և բառնալ զա՟մ յոյս օգնականութ՟ն քաղաքին, և զհամբարոյ՝ որ սպաուէրն ։ Հաճոյ թուեցաւ ամենեցուն խորհուրդն այն ․ և ամ̃ զօրացն խրախուսեալ, զգործն անհնարին զարժանի հռոմայեցւոց զշինուածն մեծ՝ որ երից ամսոց թուէր աշխատութի̃, ածել պարիսպ ընդ երեսունևինն ասպարէզս շուրջ զքաղաքաւն, յերիս աւուրս սկսեալ և կատարեցին ։ Եւ իբրև քաղաքն պարսպաւն փակեցաւ, և յաշտարակսն՝ որ 'ի տեղիս տեղիս յամրուե̃ պարսպին կանգնեալ էին՝ պահապանք կային, միւսանգամ Տիտոս հողաբլուրս տայր կանգնել առ Անտոնեաւ ամրոցաւն՝ մեծամեծս քան զառաջինսն. և յաւուրս քսանևմի կատարեցան հողաբլուրքն, թէպէտ և յոյժ դժուարաւ մայրիք 'ի նիւթ շինուածոյն գտանէին ։

Իսկ Յովհաննէս Անտոնեայ ամրոցին պահ ունելով, 'ի հանդերձեալ վտանգէն՝ որ 'ի խրամատել պարսպին հասանէր նմա՝ զգուշանայր ․ և աճապարեալ նախ քան զմատուցանել բաբանացն 'ի հարուած՝ յարձակեցաւ ջահիւք, հրձիգ առնել զձեռագործս թշնամեաց ․ այլ վրիպեալ 'ի յուսոյն ընդ կրունկն դարձաւ ։ Եւ հռոմայեցիք յառաջ մատուցին զխոյսն, և անդադար զամրոցն հարկանելով՝ չկարացեալ խրամատել զայն, խորհուրդ կալան փորել զհիմունս նորա ․ և ասպարափակ գործեալ, քանզի Հրեայք վիրգս և քարինս հոսէին 'ի նոսա, անհնարին ճգամբք խախտեցին նգօք և բազկօք վէմս չորս 'ի հիմանէ աշտարակին ։ Ի հասանել գիշերոյ երկուստեք դադարեցին ․ բայց կողմն պարսպին, ընդ որով Յովհաննէսն գետնափոր ական հատեալ՝ զհողաբլուրս հռոմայեցւոցն փլուզ, 'ի բազում հարուածոց թշնամեաց խախտեալ՝ յանկարծ կործանեցաւ ․ և վաղվաղակի այլ պատուար 'ի ներքուստ կանգնեցին անդ Հրեայք ։ Իսկ հռոմայեցիք թէպէտ և յուսային դիւրաւ կործանել զնորաշէն պատուարն, բայց ոչ ոք իշխէր նախայարձակ լինել, երկուցեալ յոյժ զօրացն յանվեհեր համարձակութենէ Հրէից, և զի երբէք երբէք համարձակեալ՝ ոչ ինչ զօրեցին առնել ։ Բայց վերին տեսչութի̃ այլ ճանապարհ եբաց առաջի նոցա ․ քանզի ոմանք 'ի զօրացն, որք 'ի հողաբլուրսն կային, յերրորդում պահու գիշերոյն ելին լռելեայն ընդ աւերակս պարսպին մինչև յԱնտոնիա ամրոցն ․ և գտեալ զյառաջակաց պահապանսն 'ի քուն, խողխողեցին զնոսա սրով ։ Եւ կալեալ զպարիսպն՝ փող հարին, զի էր իսկ ընդ նոսա փող ․ և 'ի ձայնէ անտի ահաբեկեալ այլոց պահապանաց, որպէս 'ի բազմութենէ հռոմայեցւոց փախչէին ։ Յայն վայր եհաս Տիտոս ընդ կէսս 'ի զօրացն , և ընդ աւերակսն անդր ելեալ՝ հետամուտ լինէր փախստէիցն մինչև 'ի դրունս տաճարին . Ուր Հրեայք անհնարին քաջութե՟ զդէմ կալան , և պատերազմն սաստկացեալ՝ տևեաց աւելի քան զժամս տասն , մինչև կատաղութե՟ և յուսահատութե՟ Հրէից՝ որոց 'ի պարտելն կորուստ 'ի վերայ կայր՝ յաղթեցին քաջութե՟ և հմտութե՟ հռոմայեցւոց . և զԱնտոնիա ևեթ կալան հռոմայեցիք զամրոցն , թէպէտ և ոչ ա՟մ զօրօք պատերազմեալ .

Բազում և այլ յարձակմունք եղեն , զորս ոչ պատմեմք : Բայց ահագնագոյն 'ի խոյոցն , զոր Տիտոս ետ կազմել և կանգնել 'ի հողաբլուրսն , զվեց օր անդադար հարկանելով զորմ տաճարին՝ ոչ ինչ աւելի քան զայլսն զօրեաց յանսասանելի հաստատառոյց ամրութե՟ հոյակապ շինուածոյն : Եւ ոչ ևս յուսացեալ հռոմայեցւոց նզօք և կազմածովք զքաղաքն առնուլ, խորհուրդ կալան սանդղովք վերելակել . և վասն յեղակարծ հնարիցն ոչ ժամանեցին Հրեայք խափանել զկանգնումն սանդղոցն : Բայց դիմակալութիւն հանգոյն այնմ երբէք ուրեք չէր լեալ . զի զվերելեակս ընդ սանդուղսն յետս ընկենուին , և զահա հասեալս 'ի ծայր սանդղոցն՝ մինչ չև պատսպարեալ նոցա վահանաւն՝ սրախողխող առնէին , և զկէսս 'ի սանդղոց լի սպառազինօք 'ի վայր կործանէին . ուստի ոչ սակաւ հարուած հռոմայեցւոցն հասանէր : Իսկ ապրեալք վրէպք 'ի յուսոյ 'ի փախուստ դառնային . և Հրեայք ստէպ 'ի դուրս յարձակեալ մոլեգին կատաղութե՟ բազում նախճիրս գործէին 'ի հռոմայեցիս : Այլ յետոյ ապա կալաւ Տիտոս զտաճարն . և թէպէտ պատուէր սաստիկ հրամանի 'ի վերայ զօրացն եդ՝ խնայել յայն , այլ միոյ 'ի զինուորաց հուր արկեալ անդր՝ այրեցաւ տաճարն , գալով չափ տիրական բանին :

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Յաղագս նաւամարտութեան նախնեաց ։

Զնաւակռուոյ առաջնոյն, զնաւաց նոցա և զնաւամարտիկ զօրացն ինչ ինչ այլուր ասացաք .[1] ուր գտցեն խնդրողք զթողեալն աստի 'ի բաց ։

Յաղագս սկզբան նաւաստականութե՟ ոչ ինչ ունիմք ասել. բայց հին քան զա՟մ նաւս նոյեան տապանն պատմի, զորոյ ինքն ա՟ծ եցոյց զօրինակն զձև և զչափ, 'ի բնակութ՟ի ընտանեաց Նոյի և ա՟մ կենդանեաց երկրայնոց և օդականաց ։

Ոչ ինչ երևելի է, զի հանգոյն ա՟մ արուեստից և նաւաստականն 'ի սկզբան թերի և անկատար էր, վարելով ընդ ալիս դոյզն տախտակ, կամ լաստափայտ, կամ նաւակ, և կամ մակոյկ փոքրիկ ։ 'Ի լողալոյ ձկանց ընդ ջուր և յօդաթռիչ հաւուց երևի ուշ 'ի կուրծս անկեալ մարդկան, թևձակօք և առագաստիւք նմանել բնաւորական նախամասնութե՟ կենդանեացն ։ Բայց եթէ այսպէս իցէ, և եթէ այլազգ, տակաւ նաւակառութ՟ի 'ի կատարումն այսր եհաս ։

Կրկին ազգք էին նաւաց, բեռնբարձք 'ի վաճառականութ՟ի և 'ի բեռնակրութ՟ի, և պատերազմիկք՝ որ յաճախ եւս կոչէին երկայնք[2] ։ Բեռնակիրք փոքրագոյնք էին, և կոչէին անյարկք, զի ոչ գոյին նոցա յարկք, և ոչ յառաջս նոցա ցռուկք էին որպէս պատերազմայնոցն՝ առ 'ի հարկանել զնաւս թշնամեաց և խորտակել ։

Իսկ երկայնիցն պատերազմիկ նաւաց էին կրկին ազգք. կիսոցն մի կարգ թիակաց էր երկուստեք, այլոց բազում կարգք ։ Միակարգացն՝ էին ոմանց քսան թիակք, այլոց երեսուն, և կիսոց յիսուն կամ հարիւր իսկ. որք ըստ թուոյ թիոցն՝ քսանաւորք երեսնաւորք յիսնաւորք և հարիւրաւորք կոչէին. և չիք ինչ յաճախ առ Յոյն մատենագիրս քան զանուանս նաւացս այսոցիկ ։ Եւ թիավարք կային կէսք աստի և կէսք անտի ։

Իսկ բազմակարգ նաւաց՝ կիսոցն էին կրկին կարգք թիակաց, այլոց երրեակ, ոմանց քառեակ, կիսոց հնգեակ, և այլոց՝ ևս աւելի , որպէս տեսցի ստորև . և ըստ կարգաց թիակացն կոչէին՝ երկթիք , եռաթիք , քառաթիք , հնգաթիք , և այլն ։ Յորոց եռաթիք և հնգաթիք յաճախագոյն էին առ Նախնեօք 'ի ծովամարտս , և ստէպ յիշատակին 'ի վիպագրաց ։

---

[1] Հատոր. Բ. 589։

[2] Բոմիլկար եօթն հարիւր բեռնբարձ նաւօք, և հարիւր և երեսուն երկայնիւք չու արար ։ Լիւ. ԻԴ. ԼԶ.

Արդ Նախնի մատենագիրք պարզ և յայտնի որոշէն զկրկնակ ազգ նաւացս , զկէսս երեսնաթիս և յիսնաթիս կոչելով՝ այլովքն հանդերձ , որպէս փոքրագոյնս , և զկէսս եռակարգս , հնգկարգեանս , և այլն , որպէս մեծամեծս . և այս խտիր 'ի Նաւորդացն ևս բազմութենէ տեսցի ընդ հուպ ։ Բայց յետինքս այս ոչ միայն մեծութեամբն զանազանին , այլ և յոլովագոյն կարգօք թիակացն՝ զոր վկայէ յայտնապէս Լուկիոս . Հնգաթի հռոմէական , ասէ , բազմակարգ թիակօք զյորձանս հերձեալ ։ Եւ Վիրգիլիոս ասէ . Լէ. ւ. Են. Ե. 120.

Զոր եռակարգ վարեն արբունք դարդանեան ,
Համայն երրեակ կարգ թևձակացն ամբառնան ։

Ապա քաջայայտ է , զի էին առ հինս նաւք բազմակարգ թիակօք , երկկարգ , եռակարգ , քառակարգ , և հինգկարգեան , վեցկարգեան , մինչև ցերեսուն և ցքառասուն կարգ ։ Այլ սակաւք 'ի բազում կարգացն թիավարէին , առաւելագոյնք առ 'ի զարդ յօրինեալ ։

Բայց թէ զի՞նչ բազում կարգք թիակացն իցեն , և թէ ո՛րպէս կային 'ի միասին և վարէին , յոյժ դժուարին է գիտել . զորմէ առ գիտունս բազում վէճք յուզին , և որպէս հաւաստի թուի՝ մինչև 'ի սպառ վէճն այն կացցէ ։ Արդի ճարտարք և քաջահմուտք նաւաստականութե̃ անհնարին զիրս վարկանին . և արդարև անհնարին էր , եթէ ուղիղ 'ի վերայ միմեանց կային կարգքն . բայց այլազգ է տեսանել 'ի տրայիանեան սեանն , յորում երկթիոցն և եռաթիոց կարգք խոտորնակի իբր աստիճանաւ 'ի վեր ամբառնան ։ Եւ թէպէտ հզօր և անլուծանելի դժուարութի̃ք ընդդէմ բազմակարգ թիակացն առարկիցին , բնաւ իսկ և փաստք անժխտելիք զի՞նչ զօրեն ընդդէմ հաւաստի գործոյ , և իրաց՝ որում ա̃մ մատենագիրք հինք վկայեն ։

Արիստոփան 'ի Գորտոն. Մեկն.: Թուկիդ. Զ. 431. Թիավարք աստիճանաւ որոշէին , որպէս թուի . խոնարհագոյնքն կոչէին զնստականք , միջինքն լծականք , վերինքն նստականք . և յետնոցս ռոճիկ աւելի էր արդեօք քան զառաջնոցն , զի զերկայնածիգ և զծանրագոյն զվերնոյ կարգին թիակս վարէին ։ Պարծեալ և զթիավարացն խնդիր է, թէ արդեօք մի՞ն մի թի վարէին, թէ բազումք զմի՝ որպէս այժմ։ 'Ի Տրայիանեայ սեանն՝ յերկթիսն և յեռաթիս երևէին ստորի և անտի նստարանին մի մի թիավար, բայց 'ի մեծամեծ նաւս կարծին բազումք լեալ։ Այլ զայս քննութիւն արտաքոյ առաջադրութեանս մերոյ 'ի բաց թողումք, անստերիւր կալեալ զկարգ բանիս։

Աթենէոս նկարագրէ յաղթ և անհնարին մեծութեամբ նաւս երկուս Պտղոմեայ Հայրասիրի արքային եգիպտացւոց, յորոց միումն էին քառասուն կարգ թիոց, չորեքհարիւր և քսան ոտնաչափ երկայնութեան, և յիսուն և եօթն լայնութեան։ Եւ հազիւ զմեծամարմին անարդիւն շինուածն վարէին թիավարք չորեքհազար. և 'ի մեքենային իջուցանելոյ զայն 'ի ծով, սպառեալ ասէ մայրիս հնգաթիոց յիսնից։ Եւ զիա՞րդ մարթէր քառասուն կարգացն ևս թիավարել. այլ 'ի զարդ և եթ յօրինեալ էին։ Իսկ միւսոյ նաւին՝ որ անուանեալ կոչէր առագաստակիր, զի էին 'ի նմա անկողինք և սենեակք, էր երկայնութիւն երեքհարիւր երկոտասան ոտնաչափ և կէս, և քառասուն և հինգ ոտնաչափ լայնութեան յընդարձակագոյն մասին. իսկ բարձրութիւն նորա, հանդերձ վրանաւ վերնայարկին, իբր վաթսուն ոտնաչափ։ Յերիս կողմանս նաւուն, բաց յառաջակողմանէն, էին սրահք կրկին զմիմեամբք կառուցեալ՝ ընդարձակք յոյժ. և էր պալատ իմն գնայուն նաւն այն, զոր Պտղոմէոս կառոյց՝ ձեմել նովաւ ընդ Նեղոս հանդերձ ամենայն արքունեօքն։ Այլ զթիւ կարգի թիակաց սորա ոչ նշանակէ մատենագիրն։ Ե. 263. 206.

Միւս այլ նաւ նկարագրէ զՀերոնի երկրորդի արքային Սիրակուսայ, ճարտարապետեալ յերևելւոյն Արքիմեդեայ։ Եւ էին նորա քսան կարգք թիոց, և շինուած նորա զարմանալի։ Եւ զի նաւահանգիստք Սիկիլիոյ ոչ տանէին զայն, պարգևեաց զայն Հերոն Պտղոմեայ Հայրասիրի. և ետ տանել զայն յԱղեքսանդրիա։ Եւ թէպէտ խորագոյն յոյժ էր ջրշեղջ նորա, այլ մեքենայիւն զոր Արքիմեդ ճարտարեաց՝ մի ոք դատարկէր զամենայն։ Այլ այսոքիկ 'ի զարդ և եթ պիտանի էին, զորոց ոչ է մեզ անկ ճառել։ Եւ այլ նաւ հանգոյն սոցին, պատմէ Լիւիոս[1], կառուցեալ Փիլիպպոսի հօր Պերսեայ. որում էին վեշտասան կարգք թիոց, այլ հազիւ մարթէր շարժել զայն վասն անճոռնի մեծութեանն։

---

[1] Փիլիպպեայ ստիպեալ տալ և գոգցես անշարժ, որ վեշտասան զամ զնաւս իւր յարկածածուկս. կարգօք թիակաց վարէր. ԼԳ. Լ. այլև զարքունականն մեծամարմին

Պղուտարք. ՚ի Դեմետր. 897. Զարմանալի լինի թուելն որ ինչ Պղուտարքոս զՊաշարողին Դեմետրեայ զպատերազմիկ նաւացն ասէ. մանաւանդ զի խոստանայ զհաւաստին և ոչ աւելի ինչ պատմել։ Զի Դեմետր հմուտ արուեստից, որպէս ամենեցուն յայտ է, և հանճարեղ ՚ի հնարս պատերազմական մեքենայից, ետ կառուցանել նաւս բազումս՝ հնգետասան և վեշտասան կարգօք թիոց, ոչ առ ՚ի զարդ՝ այլ քաջադէպս ՚ի գործ պատերազմի և ՚ի պարսպամարտ. Որում ոչ հաւատացեալ Լիւսիմաքեայ ՚ի համբաւոյ, թէպէտ և թշնամի նորա էր, առաքեաց առ նա՝ զի հրամայեսցէ թիավարել զնաւսն առաջի իւր. և իբրև ետես զնոսա թեթև և սրընթաց սահարկեալ ընդ ալիս, կարկեալ եկաց անճառ հիացմամբ, և ընդ աչսն գոգցես թերահաւատէր։ Զի էին հրաշալիք գեղով և ճոխութք, և թեթևութքն և երագութք գերահրաշք քան հոյակապ մեծութեամբն։

Այլ մեք զծանօթիցն և զսովորականաց ևեթ ասասցուք, զեռաթիոցն ասեմ, զքառաթիոց և զհնգաթիոց, Թուկիդ. Ա. 8. և զպիտանութէ նոցա ՚ի ծովամարտս։ Հոմերոս ոչ ուրեք յիշատակէ նաւս բազմակարգ թիակօք. զի յետ տրովական մարտին հնարեցաւ այն, այլ ժամանակ հնարիցն չէ յայտ. Այլ կորնթացւոց նախ փոխեալ զհին ձև պատերազմիկ նաւաց, և եռակարգս կառուցեալ, թերևս և հնգկարգեանս։ ՚Ի նոցանէ սիրակուսացիք հատուած բնակեալ, նախանձաւորք եղեն՝ մանաւանդ յաւուրս երիցուն Դիոնիսեայ՝ ՚ի նմանութի ճարտարութեան բնիկ հայրենակցացն, և զանցուցին զնոքօք՝ զսկսեալն ՚ի նոցանէ ՚ի կատարումն աճեալ։ Զի ընդդէմ հինից կարքեդոնացւոցն հարկ եղև նոցա ամ ջանիւ մտադիր լինել նաւաստականութե. և հզօրագոյնք էին յայնժամ ՚ի ծովու Կարքեդոն և Սիրակուսա։

Յունաստան աշխարհ ՚ի մասինս յայսմիկ դանդաղեաց. քանզի խորհուրդ և դիտաւորութի Լիկուրգեայ էր խափանել զիւրսն ՚ի նաւաստականութե վասն երկուց իրաց, որ բազմահանճար քաղաքավարութե օրինաց նորա արժանի էին. Մի՝ առ ՚ի բաց առնել ՚ի նոցանէ զկցորդութի ընդ այլ ազգս, զի զբարս իւրեանց անխառն ՚ի նոյունսն անապակ կալցին, և մի խստութիւն օրինացն՝ զօրս եդ՝ թուլասցի. և երկրորդ անգամ, զի կամէր բառնալ ՚ի սպարտացւոց զամ յոյս և զցանկութի աշխարհակալութե և մեծութե, զի համարէր զփառասիրութիւն զայն կործանիչ պետութեց. Նմին իրի Սպարտայ սակաւք յոյժ էին 'ի սկզբանն նաւք ։ Հանդոյն իմ՟ն և աթենացւոցն . զի Թեմիստոկլէս նախ , յառաջատես լեալ 'ի հեռուստ վտանգին յերեսաց Պարսից , դարձոյց զզօրութ՟իս Աթենայ 'ի ծով . և այլովք պատճառանօք կազմեալ նաւատորմիղ մեծ՝ իմաստուն նախատեսութ՟ն կեցոյց զյունաստան , և պարծանս յաւիտենականս հայրենեացն ժառանգեցոյց , և ետ նմա զօրութ՟ի լինելոյ վաղ ընդ փոյթ 'ի վեր քան զա՟մ ազգս շուրջանակի ։

Հռոմայեցւոց ընդ հնգեակ դարս անծանօթք էին նաւք և նաւատորմիղք , եթէ իցէ Պողիբեայ վկայութ՟ին հաւատարիմ ։ Զի նոքա նուաճել և եթ ջանալով զազգս շուրջանակի , չէղէն այնմ կարօտ . և յանցանել նոցա 'ի Սիկիլիա՝ ոչ գոյր նոցա և ոչ նաւակ մի , այլ 'ի շրջակայ ազգաց առին յանօթ վասն անցի զօրացն ։ Բայց վաղ ծանեան , զի ոչ կարէին զդէմ ունել Կարքեդոնի՝ ցորչափ նա ծովապետէր . նմին իրի խորհեցան կազմել նաւատորմ , և 'ի վէճ գալ ընդ նոսա զծովակալութ՟է . Զի մի 'ի հնգաթիոց թշնամեացն յաւարի առեալ , անտի 'ի խորհուրդս յայս եկին . և ըստ այնմ օրինակի , կառուցին յառաջ քան զերկամեայ աւուրս՝ հարիւր հնգաթի , և եռաթիս քսան . և կրթեցին յարուեստ՝ որ ցայնժամ անծանօթ էր նոցա՝ նաւազս և թիավարս , և 'ի նախկին պատերազմի յաղթեցին կարքեդոնացւոց՝ որ քան զա՟մ ազգս երկրի հզօրք էին ընդ ծով , և հմուտք 'ի նաւաստականութիւն ։ Պօղիբ. Ա. 20.

Քսերքսեայ՝ 'ի չու առնել նաւատորմաւ յԱսիոյ յԵլլադա 'ի պատերազմ՝ էին աւելի քան զհազար երկերիւր եռաթիս , և 'ի միում միում 'ի նոցանէ աւելի քան զերկերիւրևերեսուն այր . և այլ նաւք երեքհազար , որոց երեսուն կամ յիսուն թիակք էին . և այլ նաւք բեռնբարձք , յորս 'ի միում միում էին արք ութսուն՝ աւելի կամ նուազ ։ Իսկ 'ի նաւս , զորս կազմեցին ազգք բնակեալք յԵւրոպա , էին 'ի միում միում երկերիւր այր ։ Նոյնչափ էին և 'ի նաւս , որ 'ի պեղոպոնեսական մարտին չու արարեալ յԱթենայ՝ խաղացին 'ի Սիրակուսա ։ Որովք յայտ է , զի արս իբր երկերիւր տանէին նաւքս այս ։ Ցանկալի էր թէ ոք 'ի վիպագրաց ճշգրտաբանէր , զի յերկերիւրոց արանցն՝ քանի՞ք նաւորդք էին սովորաբար , և որչափ թիավարք , և քանի՞ մարտիկք ։ Պլուտարքոս նշանակէ , զի աթենացւոց 'ի Սաղամինայ ճակատամարտին 'ի մի մի 'ի հարիւր և ութսուն պատերազմիկ նաւաց՝ յորոց կազմէր նաւատորմի՟ նոցա՝ էին մարտիկք Եւոդ. Է. 89. 'ի Թեմ՟. 117.

ութեւտասն, չորք աղեղնաւորք, այլք սպառազէնք. որ կարի սակաւք են.

Նեպ. Դ. Ե. ՅԷ. ՂԷ. Ճակատամարտս այս, որ առ Սաղամինաւ խմբեցաւ, է մի 'ի բազմահռչակ մարտից վաղ ժամանակաց, այլ մանրապատում զվէպս նորա ոչ ունիմք. Անդ աթենացիք պայծառացան անպարտելի արութ՟ք, և մանաւանդ զօրավար նոցա ճարտարութ՟բ և իմաստութ՟բ. զի բազում աշխատանօք յորդորեաց նա զՅոյնս՝ կալ մնալ 'ի նեղցին, ուր պարսկախումբ նաւատորմին բազմութ՟ի նաւացն անպիտան լինէր, և յապաղեաց 'ի մարտ մինչև հողմն հակառակ թշնամեաց ել.

Վերջին ճակատամարտն աթենացւոց 'ի նաւահանգիստն Սիրակուսայ՝ եղև նոցա 'ի կործանումն. Զի առաջի վտանգին 'ի ցռուկէ նաւաց թշնամեացն, զորոց տուժիւ մեծաւ զփորձ առեալ էին յառաջին ճակատուն, պատրաստեաց Նիկիաս խիղս երկաթիս առ 'ի կարթել զնոսա, և բեկանել զթափ հարուածոյն, և խառնել անդէն 'ի կռիւ որպէս 'ի ցամաքի. Բայց թշնամիք իրազեկ լեալ, ծածկեցին կաշւով զառաջակողմն նաւացն և զվերնայարկս, որպէս զի մի՛ դիւրաւ կուռեսցին 'ի նոսա ճանկք, և մի՛ խառնեսցի մարտն. Եւ մինչ նոցա հարուածքն աջողէին, և թանձրատարափ տեղային քարինք յաթենացիս, իսկ աթենացւոցն նետք և գեղարդունք տարադէպ անկանէին յալէծուփ տատանմանէ նաւացն. Անդ կանխակալ փառք նոցա և իշխանութ՟ի նաւակործեցան.

Պողիբիոս սուղ բանիւ գեղեցիկ նկարագրէ զնաւամարտն բարենշան հռոմայեցւոց, զսկիզբն յաղթութեց նոցա՝ որովք ծովակալեցին. Զնաւամարտն ասեմ առ Միլեաւ 'ի Սիկիլիա ընդդէմ կարքեդոնացւոց՝ զօրավարութ՟բ Դուիլեայ բդեշխի, զոր 'ի վէպս կարքեդոնացւոց պատմեցաք. Յայնմ մարտի զարմանալի իմն նորահնար մեքենայ յառաջս նաւացն հռոմայեցւոց էր 'ի բարձու, ագռաւն կոչեցեալ ազգ իմն կռնկանն մեքենայի՝ ճախարակօք ամբարձեալ, և առկախեալ պարանօք, ունելով 'ի ծայրին զագռաւն՝ սեպ երկաթի ծանր, զոր 'ի վերայ նաւաց թշնամեաց սաստիկ ընկեցեալ՝ ծակէին և կամ կարթէին զնոսա. Այս կազմած զօրավիգն եղև հռոմայեցւոց 'ի ստանալ զառաջին յաղթութ՟ին ընդ ծով.

Նոյն ինքն Պողիբիոս ճոխագոյն նկարագրէ և զնաւամարտն, որ մղեցաւ մերձ յԷկնոմ քաղաք Սիկիլիոյ. Հռոմայեցւոց զօրավարք էին Ատտիղիոս Հռեգուղ և Մանլիոս բդեշխք. և էին նոցա երեքարիւր նաւք յարկածածուկք, և չորեքտասան բիւր մարդիկ, 'ի մի մի 'ի նաւաց թիավարք երեքարիւր և մարտիկք հարիւրևքսան. Իսկ կարքեդոնացւոց զօրավարք էին Աննոն և Ամիլկար. և էին նոցա երեքարիւր և յիսուն նաւք, և աւելի քան զհնգետասան բիւր մարդիկ. Հռոմայեցիք խորհէին խաղալ պատերազմաւ յԱփրիկէ, և անդ տալ ճակատամարտ. իսկ կարքեդոնացիք ա՟մ ճգամբք խափանել ջանային զայն. Ամենայն ինչ կազմ էր 'ի պատերազմն. և էր յօրինուած բանակին հռոմայեցւոց նոր իմն. զի ոչ 'ի մի և ոչ 'ի բազում կարգս՝ որպէս յարն՝ կարգեցան կացին, այլ յա՟մ կողմանց ճակատ գործեալ՝ զի մի թըշնամին բազմու՟ք նաւացն պատեսցի զնոքօք. Կարծեալ զի զօրութ՟ի թշնամւոյն էր 'ի թեթևընթաց յերագաշարժ նաւսն, խոտորնակի նաւէին դժուարահերձ կարգաւ. Սմին իրի երկոքին վեցթիք բդեշխիցն Հռեգուղեայ և Մանլեայ՝ կից կացին 'ի ճակատու, և զհետ նոցա երկու կարգ նաւաց, որ կոչէին առաջին և երկրորդտորմիղք. և կարգքն երկոքեան տակաւ ընդարձակեալ մեկնէին, առաջք նաւացն բացադարձք 'ի միմեանց. Իսկ երկոքին տորմիղքն այսպէս կարգեալ 'ի ձև ցռկի կամ սեպաձև, ապա միւս ա՛յլ կարգ նաւաց՝ որ երրորդ նաւատորմն կոչէր՝ փակէր զանջրպետն, ճակատեալ առ թշնամիս. որով կազմէր յօրինուած ճակատուն եռանկիւնի, որպէս միակ գունդ՝ կազմեալ յերից նաւատորմացն, զի այսպէս կոչէին. Երրորդս այս կարգ կամ նաւատորմ 'ի քարշ ածէր զնաւս այրուձիոյն, որ էր գունդն երկրորդ. Իսկ չորրորդ նաւատորմն, կամ երկրորդականքն կոչեցեալ, զհետ գային 'ի վերջէ բանակին, ընդարձակեալ անդր ևս քան զերկոսին ծայրս յառաջընթաց կարգին. և այն էր գունդն երրորդ. Իսկ այսպէս էր յօրինուած բանակին սեպաձև կամ 'ի ձև ցռկի, սնամէջ 'ի ծայրն, խարիսխն հաստատուն, ամրակազմ բոլորովին, դիպող 'ի պատերազմ և դժուարաբեկ.

Անտի և կարքեդոնացիք ճակատեցուցին զնաւսն գրեթէ 'ի մի կարգ. Աննոն իշխէր աջում թևի, որ կազմէր յերագ և 'ի թեթև նաւաց, և էր 'ի խորս ծովու յառաջ անցեալ՝ առ 'ի պատել զհակառակամարտիւքն, և առաջք նաւացն 'ի նոսա հայէին. Իսկ ձախոյ թևն, որ էր չորիր մասն նաւատորմին, կորաձև առ երկրաւ կայր. Ամիլկար ծովապետ 'ի բնին և 'ի ձախում թևի հրամայէր. և հնարեցաւ մարթանօք բաժանել զնաւատորմ հռոմայեցւոց. Զի նոքա վստահացեալ 'ի յաղթութիւն վասն սփիւռ տարածութե՟ն նաւաց թշնամեացն, նախ 'ի բուռն յարձակեցան · որում Ամիլկար պատուէր ետ ընկրկել, որպէս տեղի տալով թշնամեաց, և պատրաստելով 'ի փախուստ ։ Իսկ հռոմայեցիք հալածէին զնոսա · ուստի առաջին և երկրորդ նաւատորմ՟ն, զորոց ասացաք, հեռանային յերրորդէն՝ որ զբեռնբարձ նաւսն զհետ ձգէր, և 'ի չորրորդէն՝ որում էին երրորդականքն օգնականք ։ Եւ իբրև հարուստ մի հեռացան՝ նշան ետ Ամիլկար, և դարձան կարքեդոնացիք, և դիմեցին առ հասարակ 'ի վերայ հետամտիցն ։ Եւ թէպէտ հզօրագոյնք էին թեթևընթաց նաւօքն՝ դիւրերագ յարձակմամբ և նահանջմամբ, բայց զօրուե՟ հռոմայեցւոց 'ի խառն մարտի, և ագռաւք նոցա՝ որովք կարթէին զնաւս թշնամեաց, և նախագնաց մարտակցութ՟ի բդեշխիցն՝ որոց առաջի ցանկային արութ՟իս կացուցանել, ոչ ինչ նուազ խրախուսէին զնոսա ։ Արդ այսպէս հռոմայեցիք խիզախք էին ։

Բայց Աննոն՝ զօրավար աջոյ թևին՝ դիմեաց 'ի վերայ նաւաց երրորդականացն, և խռովեալ աղմկեաց զնոսա · և որք կորանձև առ երկրաւն կային, նոքա ևս ճակատեալ անկան 'ի վերայ նաւաց՝ որք զայլսն զհետ ձգէին · Իսկ սոքա լուծեալ զպարանս, մատեան առ նոսա 'ի կռիւ · և յերիս տեղիս մխէր ճակատ ուրոյն 'ի միմեանց ։ Եւ զի երկուստեք գրեթէ հաւասար էին զօրուե՟ք, մնայր մարտն 'ի սկզբան անպարտելի · այլ ապա գունդն Ամիլկարայ ոչ ևս կարացեալ ժուժկալել՝ 'ի փախուստ դարձաւ · իսկ զգերեալ նաւսն յաւել Մանլիոս յիւրսն ։ Յայնժամ Հռեգուղ եհաս յօգնուե՟ երրորդականացն և բեռնբարձ նաւաց երկրորդ նաւատորմաւն, որ չև ևս հարեալ էր · և մինչ նա ընդ Աննոնի մարտնչէր, երրորդականքն՝ որք ահա անձնատուր լինէին՝ խրախուսեալ, դարձան զօրու՟ք 'ի պատերազմ ։ Եւ հարեալ կարքեդոնացւոց 'ի դիմաց և 'ի թիկանց, և ոչ կարացեալ կալ առաջի նոցա, փախստեայ գնացին ·

Մինչ դեռ այս իրք գործէին՝ եկն անդրէն Մանլիոս, և եգիտ զերրորդ նաւատորմ՟ն վարեալ 'ի ձախոյ թևէ կարքեդոնացւոց 'ի ցամաք կոյս · և զի բեռնբարձ նաւք և երրորդականք յապահովի կային, Հռեգուղ և Մանլիոս դիմեցին 'ի միասին ազատել զնա 'ի վտանգէ · զի գրեթէ պաշարեալ էր, և բեկանէր իսկ 'ի սպառ, եթէ ոչ կարքեդոնացիք երկուցեալ 'ի կարթիցն՝ թէ գուցէ խառնեսցի կռիւն, 'ի ծովափն ևեթ վարեալ զնոսա՝ դադարէին , ոչ իշխելով յարձակել 'ի վերայ նոցա ։ Եւ 'ի դէպ ժամու հասեալ Բդեշխիցն՝ պատեալ պաշարեցին զԿարքեդոնացիս , և առին 'ի նոցանէ յաւարի նաւս յիսուն հանդերձ ա՟մ կազմածովքն ։ Այս եղև վախճան նաւատորմին , որում յաղթեցին 'ի սպառ հռոմայեցիք ։ Եւ կորեան 'ի նոցանէ յայնմ մարտի քսանևչորք նաւք , իսկ 'ի կարքեդոնացւոց աւելի քան զերեսուն · բայց և ոչ մի 'ի պատերազմիկ նաւացն հռոմայեցւոց գերեցաւ , իսկ ինքեանք 'ի թշնամեաց գերի կալան նաւս վաթսունևչորս ։

Չև էր կազմեալ հռոմայեցւոց նաւատորմ հաւասար այսմ առանձինն վասն իւրեանց · և ոչ յաւուրս մեծազօր զօրութե՟ իւրեանց , որպէս վկայէ Պողիբիոս ։ Յառաջ քան զամս չորս՝ սպառսպուռ ագէտք էին նաւատականութե՟ , և արդ ահա նաւատորմիղ երեքարիւր և երեսուն յարկածածուկ նաւաց խաղացուցանէն ընդ ծով · ընդ որոց երագ ընթացմն հայեցեալ՝ թերևս ոչ ինչ մեծամեծք կարծիցեն , և ոչ բազմագունդ զօրաց տարողք , այլ ոչ արդարև կարծեն ։ Պողիբիոս կարևորագոյն ինչ յաւելու , զոր ոչ ոք այլ բացայայտակի ասէ · զի 'ի մի մի 'ի պատերազմիկ նաւաց կային երեքարիւր թիավարք , և հարիւրևքսան մարտիկք ։ Իսկ քանի ևս ընդարձակ տեղւոյ պէտք էին վասն կազմածոցն և սարուց , և 'ի շտեմարան պարենիցն , և յընդունարան ջուրց · զի որպէս Լիւիոս նշանակէ , էր զի քառասունևհինգ աւուրց , և մերթ աւելի ևս պաշար բառնային ։ ԻԹ. ԻԸ.

Երևի յագռաւուցն յաճախելոյ 'ի նաւամարտս առ 'ի կարթումն նաւաց , զի նախնեաց պատսպարան մեծ էր 'ի յաղթութի՟՝ գալ յիրեարս և խառնել 'ի կռիւ ։ Զի փոխանակ այժմուց ումբաձիգ հրազինութե՟ս՝ կրէին 'ի նաւս բաղխոտր և բաբան նետաձիգ և քարընկէց մեքենայս , որ արդարև աւերածս մեծամեծս գործէին՝ այլ ոչ 'ի հեռուստ , նմին իրի մօտել 'ի միմեանս ջանային · և յայսմ իսկ էր , և ոչ յայլ ինչ , արիութի՟ զօրականին ։

Նաւք երկաքանչիւր տորմղացն իսկ յայնմ մարտի՝ էին եռաթիք , կամ թէ աւելի՝ հնգաթիք · իսկ երկուց Բդեշխիցն վեցթի ։ Այլ 'ի մարտին , որ առ Միլեաւ , զօրապետին նաւն էր եօթնաթի · և զի զօրապետացն նաւք ոչ առ 'ի զարդ ինչ էին , այլ առաւել քան զայլ ա՟մ նաւս նշաւակք մարտի , այն յայտ իսկ է ։

ԿԱՏԱՐԵՑԱՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԱՏՈՐ
ՀՆԱԽՕՍՈՒԹԵԱՆՍ.

ՑԱՆԿ

ԳԼԽՈՑ ՄԱՏԵՆԻՍ

ԳԻՐՔ Ի

ՊՐԱԿ Ա. Համառօտութիւն պատմութեան Հրէից, յԱրիստաբուղեայ յորդւոյ Հիւրկանեայ մինչև ցթագաւորել Հերովդէ Մեծին Եդոմայեցւոյ. 3

ՅՕԴ. Ա. Յաղագս երկամեայ թագաւորութեան Արիստաբուղեայ առաջնոյ. 3

ՅՕԴ. Բ. Թագաւորել Աղեքսանդրի Յաննեայ զամս քսան և եօթն. 5

ՅՕԴ. Գ. Թագաւորել Աղեքսանդրայ կնոջ Աղեքսանդրի Յաննեայ. առ որով անդրանիկն նորա Հիւրկանոս քահանայապետէ. 8

ՅՐԴ. Դ. Թ՟գրել Արիստաբուղեայ երկրորդի զերիս ամ. 11

ՅՕԴ. Ե. Թ՟գրել Հիւրկանեայ երկրորդի զամս քսանևչորս. 16

ՅՕԴ. Զ. Թագաւորել Անտիգոնեայ զերեքեամ մ. 18

ՊՐԱԿ Բ. Համառօտութիւն պատմութեանն Պարթևաց 'ի սկզբանէ մինչև 'ի պարտութիւնն Կրասսոսի, և պարտութեանն Կրասսոսի երկարապատում վէպք. 21

ՊՐԱԿ Գ. Համառօտութ՟ պատմութ՟ թագաւորացն Կապադովկեցւոց, 'ի սկզբանէ թագաւորութ՟ն մինչև 'ի կալ նորա մարզ աշխարհին Հռոմայ. 50

ԳԻՐՔ ԻԱ

Առաջաբանութ՟ սիրակուսացւոց պատմութ՟ն. 62

ՊՐԱԿ Ա.

ՅՕԴ. Ա. Հերոնի երկրորդի սպարապետ ամ զօրացն կալ 'ի Սիրակուսա, և յետ սակաւ միոյ թագաւորել. և սկսեալ խաղաղութ՟ դնել ընդ Հռոմայեցիս 'ի սկիզբն առաջնոյ կարքեդոնական պատերազմին. 62

ՅՕԴ, Բ. Սան խաղաղասէր թագաւորութ՟ն Հերոնի, և զօրութ՟ նորա 'ի բարգաւաճել զերկրագործութ՟, և յօգուտ արկանել զճարտարութե̅ Արքիմեդեայ ազգականին իւրոյ, և տալ կազմել նմա մեքենայս բազումս ամրապահս. և վախճան նորա լի աւուրբք, և սուգ ժողովրդեանն: 67

ԳՐԱԿ Բ.

ՅՕԴ. Ա. Հերոնիմեայ թոռին Հերոնի պայազատել զհայրն, և չարաչար ախտիւքն և անգթութե̅ յանկալի առնել զհպատակս նորա, և մեռանել դաւաճանութե̅. և վասն դաւանազէտ մահու տիկնայն. և Իպոկրատեայ և Եպիկիդեայ բռնակալել 'ի Սիրակուսա, և ըստ օրինակին Հերոնիմեայ միաբանել ընդ կարքեդոնացիս: 78
ՅՕԴ. Բ. Վա՟ն Մարկեղեայ բդեշխի պաշարելոյ զՍիրակուսա, և կորստեամբ մեծաւ զօրացն և նաւաց յաղագս կազմածոյն Արքիմեդեայ՝ 'ի բաց կալ, և ունել զել և զմուտ քաղաքին, և առնուլ զայն մատնութե̅ քաղաքացւոցն. և յաղագս Արքիմեդեայ սպանուէն յանծանօթէ ումեմնէ 'ի զօրացն: 89

ԳՐԱԿ Գ.

ՅՕԴ. Ա. Գիւտ շիրմին Արքիմեդեայ 'ի Կիկերոնէ: 102
ՅՕԴ. Բ. Համառօտութե̅ պատմութե̅ Սիրակուսայ: 104
Գեղոն: 105
Հերոն առաջին: 105
Թրասիբուղ: 105
Միջոց ազատութեան: 106
Արշաւանք աթենացւոց 'ի Սիրակուսա: 106
Դիոնիսիոս երէցն: 106
Դիոնիսիոս կրտսերն: 106
Միւսանգամ ազատութիւնն: 107
Ագաթոկղ: 107
Դարձեալ միւսանգամ ազատութիւնն: 107
Հերոն երկրորդ: 107
Հերոնիմ: 107
ՅՕԴ. Գ. 'Ի կարգ տէրութե̅ն Սիրակուսայ և 'ի բարս նոցա: 108

ԳԻՐՔ ԻԲ

ՇԱՐԱՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՅԱՋՈՐԴԱՑՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻ

ՊՐԱԿ Ա.

ՅՕԴ. Ա. Թագաւորել Մեհրդատայ յերկոտասանամենի 'ի Պոնտոս, եւ առնել զԿապադովկիա եւ զԲիւթանիա՝ հալածել անտի զթագաւորս. եւ Հռոմայեցւոց հաստատել զնոսա անդրէն. եւ յաղագս կոտորելոյ Մեհրդատայ 'ի միում աւուր զամենայն հռոմայեցիս եւ զիտալացիս, որ էին 'ի կողմն Ասիա։ Նախկին պատերազմն Հռոմայեցւոց ընդ Մեհրդատայ, վասն տիրելոյ նր՟ 'ի կողմն Ասիա եւ 'ի յունաստան, եւ զԱթէնս եւս նուաճելոյ. եւ Սիղղայ զօրավար լեալ պատերազմին, եւ պաշարել եւ առնուլ զԱթէնս. եւ երեքկին յաղթութե̄ն ընդդէմ զօրավարացն Մեհրդատայ մեծապատերազմաւ, եւ 'ի չորրորդում ամի պատերազմին զիջանել 'ի խաղաղութե̄. եւ յաղագս մատենադարանին Աթենայ, եւ Արիստոտելի մատենիցն՝ զորս ետ Սիղղա տանել 'ի Հռոմ. 113

ՅՕԴ. Բ. Միւսանգամ պատերազմն ընդդէմ Մեհրդատայ՝ զօրավարութեամբ Մուրենայ, որ տեւեաց զամս երիս. եւ հաշտութե̄ Մեհրդատայ, եւ միաբանել նորա ընդ Սերտորեայ. եւ երրորդ անգամ պատերազմն ընդդէմ Մեհրդատայ. եւ Լուկուղլեայ [illegible] յղեալ 'ի վերայ նորա, լուծանել զպաշարումն Կիւզիկեայ, եւ պարտել զզօրս նորա. եւ կատարեալ զյաղթութիւնն՝ հալածել զնա 'ի Պոնտոս. եւ վասն աղէտաւոր մահուան քերցն Մեհրդատայ եւ կնոջն, եւ անկանել նորա առ Տիգրան, որում զդուստր իւր տուեալ էր կնութեան. եւ Լուկուղլեայ ուղղութե̄ք յԱսիա։ 136

ՅՕԴ. Գ. Լուկուղլեայ ազդարարութե̄ մարտին ընդդէմ Տիգրանայ, եւ խաղալ 'ի վերայ նորա. եւ վասն [illegible] եւ ծաղրալից յանդգնութեանն Տիգրանայ, եւ պարտել նորա մեծա պատերազմաւ. եւ Լուկուղլեայ առնուլ մարտիւ զՏիգրանակերտ մայրաքաղաք հայաստանի, եւ միանգամ յաղթութե̄ն ընդդէմ Մեհրդատայ եւ Տիգրանայ 'ի [illegible]. և զկնի տագնապելոյ և ապստամբութե զօրացն Լուկուղլեայ: 149

ՅՕԴ. Դ. 'Ի դէպ ժամանակի խռովութե զօրացն հռոմայեցւոց դառնալ Մեհրդատայ 'ի թագաւորութե իւր. և զկնի Պոմպէի յաջորդելոյ Լուկուղլեայ, և կանգնել բազում յաղթութեա ընդդէմ Մեհրդատայ. և Մեհրդատայ 'ի նանիր պատսպարել առ Տիգրան, որ յայնժամ ընդ որդւոյ իւրում պատերազմէր. դիմաւք Պոմպէի 'ի Հայս 'ի վերայ Տիգրանայ, և անձնատուր լինել Տիգրանայ. Պոմպէի ընդունայն հետամուտ լինել Մեհրդատայ, և եկեալ անդրէն յԱսորիս՝ նուաճել զաշխարհն, և բարձեալ զթագաւորութե Սելևկեանց՝ դառնալ 'ի Պոնտոս. Փառնակայ ապստամբեցուցանել 'ի հօրէն զզօրսն, և անձնասպանութե Մեհրդատայ, և թէ որպիսի՛ ոք էր նա. արշաւել Պոմպէի յԱրաբիա և 'ի Հրէաստան, և առնուլ պատերազմաւ զԵրուսաղէմ. և նուաճեալ զամենայն քաղաքս պոնտացւոց, դառնալ 'ի Հռոմ, և յաղթանակել: 164

ԴՐԱԿ Բ.

ՅՕԴ. Ա. Պտղոմեայ Աւլետէ, որ թագաւորէր զհետ Աղեքսանդրի յԵգիպտոս, բարեկամ և նիզակակից լինել ընդ հռոմայեցիս 'ի ձեռն Կեսարու և Պոմպէի, գանձս տալով բազումս. և հարկս ծանունս նմին իբր արկանել 'ի վերայ ժողովրդեան. և ժողովրդեանն հալածել զնա, և թագաւորեցուցանել զԲերենիկէ դուստր նորա. և նորա երթալ 'ի Հռոմ, և բազում գանձիւք յինքն արկանել զսենատականն զկնի դառնալոյ յաթոռ իւր. և զկնի հակառակ հրամանի Սեբեղայէն. և Գաբինեայ արհամարհեալ զպատգամն՝ զինու զօրութե դարձուցանել զնա յաթոռն, և թագաւորել նորա մինչև ցմահ. և երևելոյն Կղէոպատրայ դստեր նորա յաջորդել նմա եղբարբն հանդերձ մանկամբ: 182

ՅՕԴ. Բ. Պոթին և Աքիլաս իշխանք արքայի հալածէին զԿղէոպատրա, և զօրաժողով նորա զկնի թագաւորելոյ անդրէն. պարտութե Պոմպէի 'ի Փարսաղիա, և փախչել յԵգիպտոս, և դաւաճանամահ նորա. Կեսարու, որ հալածէրն զնա, հասեալ յԱղեքսանդրիա և լսել զմահ նորա՝ սուգ առնուլ, և զաւրն հաւանեցուցանելոյ զքոյր ընդ եղբօր՝ կոչեցեալ զԿղէոպատրա, և այլ պարծաւ նմա. աղմուկք խռովեցին յԱղեքսանդրիա, և պատերազմունք Եգիպտացւոց ընդ Կեսարու, և գրեթէ յամ ճակատս զօրանալ նորա. և զաւրն արքային Եգիպտացւոց նաւամարտին գետահեղձ լինելոյ 'ի ծովակէ. և հնազանդել Եգիպտացւոց Կեսարու, և թագաւորեցուցանել նորա զԿղէոպատրա ընդ կրտսեր եղբօրն 'ի միասին, և դառնալ 'ի Հռոմ. 192

ՃՁԴ. Գ. [illegible] Կղէոպատրայ կրտսեր եղբայր իւր սպանեալ, մաղետէ. և 'ի մեռանել Կեսարու՝ Անտոնիոս և Լեպիդոս և կրտսերն Կեսար Ոկտաւիանոս կան եռապետք, և Կղէոպատրա միաբանէ ընդ նոսա. երթ նորա առ Անտոնիոս 'ի Տարսոն, և 'ի ցանկաւթէ իւր ձգել զնա և ածել յԱղեքսանդրիա. Անտոնեայ երթն 'ի Հռոմ, և հարսանիքն ընդ Ոկտաւեայ, և անդրէն 'ի Կղէոպատրա դարձաւն. և յետ արշաւանացն դառնալ մտանել յաղթանակաւ յԱղեքսանդրիա, և կատարել զհանդէս թագաւորութէ Կղէոպատրայ և որդւոց նորա. գրգռել նորա ընդ Կեսարու, և արձակել զՈկտաւեա. յոր նաւամարտացն ասդի և անդի, և Կղէոպատրայ ելանել զհետ Անտոնեայ. և զաւրն նաւամարտին առ Ակտեաւ, և փախստեան Կղէոպատրայ, և Անտոնեայ գնալ զհետ նորա. Կեսարու կատարեալ զյաղթութիւն, և ապա գնալ 'ի վերայ քաղաքին Աղեքսանդրացւոց, և նոցա զաւր անձնատուր լինելն. կամաւ մահ Անտոնեայ և Կղէոպատրայ, և կալանել Եգիպտոսի ընդ մարզու աշխարհին Հռոմայեցւոց. 203

Վերջաբան հնախօս պատմութեանս. 227

ԳԻՐՔ ԻԲ

ՑԱՂԱԳՍ ԱՐՈՒԵՍՏԻՑ ԵՒ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Կենցաղօգուտ գիւտք արուեստից և գիտութեանց աստուածապարգևք. 230
ԳԼ. Ա. Ցաղագս երկրագործութեան. 236
ՊՐԱԿ Ա. Ցաղագս զի 'ի վաղ ժամանակաց էր երկրագործութիւն. և կենցաղօգտութիւն նորա, և զի յոյժ մեծարգէր առ հինսն. և թէ քանի՛ կարևոր է յարգել զայն, և [illegible] մեծ' [illegible] առնելն. 236
ՊՐԱԿ Բ. Ցաղագս մշակութեան երկրի, և թէ ո՛յք յաշխարհաց 'ի վաղ ժամանակս առատութեամբ ցորենոյ եղեն անուանիք. 244
ՊՐԱԿ Գ.
ՅՕԴ. Ա. Ցաղագս այգեգործութեան, և ազնիւ գինեաց յունաստանէ և Իտալիոյ. 247
ՅՕԴ. Բ. Պտղաբերութիւն այգեաց յաւուրս Կոլումելլայ. 252
ՊՐԱԿ Դ. Ցաղագս անդէորդութիւն. 254
ՊՐԱԿ Ե. Անմեղ և բերկրալի կենցաղ գեղջկէից և մշակաց. 257
ԳԼ. Բ. Ցաղագս վաճառականութեան. 263
ՊՐԱԿ Ա. Թէ քանի՛ պատուական և շահաւէտ է վաճառականութիւն. 263
ՊՐԱԿ Բ. Ցաղագս զի 'ի սկզբանէ աշխարհի էր վաճառականութիւն. և թէ ո՛ւր և յո՛ր քաղաքս առաւել բարգաւաճեաց. 265
ՊՐԱԿ Գ Ցաղագս ազգի ազգի աղխամաղխից վաճառաց. 273
ՅՕԴ. Ա. Օբովաց երկաթոյ. 273
ՅՕԴ. Բ. Օբովաց պղնձոյ. 275
ՅՕԴ. Գ. Օբովաց ոսկեհանաց. 277
Ա. Ցաղագս ոսկեհան գետոց. 277
Բ. Ցաղագս ոսկեհան երկրի. 278
Գ. Ցաղագս ոսկեհան լերանց. 279
Ցաղագս բազմագունի ական. 284
ՅՕԴ. Դ. Օբովաց արծաթոյ. 284
ՅՕԴ. Ե. Ցաղագս զի ոսկեհանք և արծաթահանք էին աղբիւր առատ մեծութեանց նախնեացն. 286

ՅՕԴ. Զ. Յաղագս դրամոց և դրոշմածաց. 288
ՅՕԴ. Է. Զմարգարտէ. 291
ՅՕԴ. Ը. Զծիրանւոյ. 295
ՅՕԴ. Թ. Զմետաքսեայ կերպասուց. 298
Յորդորակ. 301

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Յաղագս ազատական արուեստից, և մրցանակք ճարտարացն. 303
ԳԼ. Գ. Յաղագս ճարտարապետութեան. 305
ՅՕԴ. Ա. Սկիզբն և զարգացումն և կատարումն ճարտարապետութե. 305
ՅՕԴ. Բ. Յաղագս երից կարգաց ճարտարապետութե Յունաց, և երկուցն ևս՝ որ 'ի նոսա յաւելան. 309
Ա. Յաղագս դորացւոյ կարգին. 309
Բ. Յաղագս յոնիական կարգին. 210
Գ. Յաղագս կորնթեան կարգին. 310
Դ. Յաղագս տոսկեան կամ ետրուրացւոյ կարգին. 311
Ե. Յաղագս խառն կարգին. 312
Յաղագս գոթայի ճարտարապետութեան. 312
ՅՕԴ. Գ. Բացատրութի ճարտարապետական անուանց մասին իւրաքանչիւր հնգեցունց կարգացն. 313
ՅՕԴ. Դ. Թէ ոյք 'ի վաղ ժամանակս անուանի ճարտարապետք կային, և զինչ երևելի շինուածք. 315
Ա. Յաղագս եգիպտացւոց մեհենին. 316
Բ. Որ ինչ շինուածք կառուցեալ յԱթէնս, մանաւանդ առ Պերիկլեաւ. 318
Գ. Վասն շիրմին Մաւսողեայ. 321
Դ. Վասն քաղաքին Աղեքսանդրեայ և լապտերին. 321
Ե. Յաղագս երից ականաւոր մեհենացն Պեստայ. 324
Զ. Որ ինչ 'ի Հռոմ երևելի շինուածք. 325
ԳԼ. Դ. Յաղագս քանդակագործութեան. 331
ՅՕԴ. Ա. Յաղագս ազգի ազգի քանդակաց. 331
ՅՕԴ. Բ. Յաղագս որք ճարտար և անուանի քանդակագործք կային 'ի վաղ ժամանակս. 336
Փիդիաս. 337
Պողիկլետ. 342
Միրոն. 342
Լիսիպպոս. 343
Պրաքսիտելէս. 345
Սկոպաս. 348

ԳԼ. Ե. Յաղագս նկարչութեան ։ 353
ՅՕԴ. Ա. Թէ ուստի՛ և ո՛րպէս նկարչութեանն սկիզբն ։ 353
ՅՕԴ. Բ. Յաղագս այլևայլ մասանց նկարչութեան, և յաղագս ճշմարտութեան ՚ի նկարս ։ 354
Յաղագս թէ զի՛նչ է ճշմարտութի՟ ՚ի նկարս ։ 358
ՅՕԴ. Գ. Յաղագս ազգի ազգի նկարչութե՟ ։ 362
ՅՕԴ. Դ. Երևելագունից նկարչաց, որ ծաղկեն ՚ի յունաստան, համառօտ պատմութիւն ։ 365
Փիդիաս և Պանենոս ։ 365
Պողիգնոտ ։ 365
Ապողոդոր ։ 366
Զեւքսիս ։ 366
Պարրասոս ։ 369
Պամփիլ ։ 371
Տիմանթէս ։ 371
Ապելլէս ։ 373
Արիստիդէս ։ 381
Պրոտոգենէս ։ 382
Պաւսիաս ։ 383
ԳԼ. Զ. Յաղագս երաժշտութեան ։ 390
ՊՐԱԿ Ա. Յաղագս բնոյն երաժշտութեան ։ 391
ՅՕԴ. Ա. Յաղագս սկզբան և հրաշալի զօրութե՟ց երաժշտութե՟ ։ 391
ՅՕԴ. Բ. Յաղագս թէ ո՛յք երաժշտութե՟ և նուագարանաց եղեն գտիչք, և ո՛յք զարգացուցիչք ։ 397
Ամփիոն ։ 398
Որփէոս ։ 398
Յագնիս ։ 398
Ոլիմպ ։ 398
Դեմոդոկ և Փեմիոս ։ 399
Տերպանդր ։ 399
Փրինիս ։ 400
Տիմոթէոս ։ 401
Արքիլոք ։ 402
Արիստոքսեն ։ 403
ՅՕԴ. Գ. Յաղագս նախնոյն պարզ ձևոյ և արևելեան երաժշտութե՟ . և թէ ե՛րբ և ո՛րպէս զեղծումն նորա ։ 404
ՅՕԴ. Դ. Յաղագս ազգի ազգի և բազմայեղանակ նախնեացն երաժշտութեան, և գրելոյ նոցա զայն խաղիւք ։ 406
ՅՕԴ. Ե. Թէ արդի երաժշտութի՟ և նախնին ո՛ր քան զո՛ր գերագոյն իցէ ։ 410
ՊՐԱԿ Բ. Որ ինչ նախնոյ երաժշտութե՟ն սեփականք ։ 413

ՅՕԴ. Ա. Յաղագս նուագաւոր դերասանութեան, որ խաղիւք գրէր. 413
ՅՕԴ. Բ. Յաղագս թէ զինչ որ 'ի թատերս դաշնակաւոր շարժուածներ, խաղիւք գրել. 415
ՅՕԴ. Գ. Թէ մարդիկ 'ի թատերս մին ոք արտասանէր և մին ոք զշարժուածս առնէր. 416
ՅՕԴ. Դ. Յաղագս հպղպաց կամ մնջկատակաց. 420

ԳԻՐՔ ԻԴ

ՅԱՂԱԳՍ ԶԻՆՈՒՈՐՈՒԹԵԱՆ

ԳԼ. Ա.

ՅՕԴ. Ա. Յաղագս խորհրդոյ պատերազմի. 426
ՅՕԴ. Բ. Յաղագս ազդարարութեան մարտի. 429
ՅՕԴ. Գ. Յաղագս ընտրութեան զօրավարին և այլոցն. 432
ՅՕԴ. Դ. Յաղագս զօրաժողովից. 440
ՅՕԴ. Ե. Յաղագս կազմութեանց պատերազմի. 450
Ա. Վասն պաշարոց. 450
Բ. Յաղագս թոշակի զօրականին. 456
Գ. Յաղագս զինուց նախնեացն. 461
ՅՕԴ. Զ. Յաղագս յառաջախնամ զգուշութեանց զօրավարի. 469
ՅՕԴ. Է. Չու և երթ զօրաց. 471
ՅՕԴ. Ը. Յաղագս բանակ հարկանելոյ, և ճակատ գործելոյ. 475
ՅՕԴ. Թ. 'Ի Պողիբեայ յաղագս կարգաւորութեան հռոմէական բանակին տեղւոյ. 478
ՅՕԴ. Ժ. Յաղագս սպասոյ և հրահանգաց զօրականին և այլոց հռոմայեցւոց 'ի բանակին. 483
ԳԼ. Բ. Յաղագս ճակատամարտի. 487
ՅՕԴ. Ա. Թէ պատուպարան մեծ յաղթութեան մարտին է զօրավարն. 487
ՅՕԴ. Բ. Յաղագս հարցանելոյ զդիս, և հրապարակախօսս առ զօրսն լինել նախ քան զճակատամարտն. 488
ՅՕԴ. Գ. Յաղագս յօրինուածոյ ճակատուն, և ճակատամարտի. 493
ՅՕԴ. Դ. Յաղագս պատժոց և մրցանակաց, ախոյանաց և յաղթանակի. 499
ՅՕԴ. Ե. Յաղագս արքունի անկելանոցին կառուցման. 512
ԳԼ. Գ. Յաղագս պաշարման քաղաքաց. 515
ՊՐԱԿ Ա. Յաղագս ամրութեանց նախնեացն. 515
ՊՐԱԿ Բ. Յաղագս կազմածոց մեքենայից մարտի. 517

ՅՕԴ. Ա. Յաղագս կրէայէն : 518
ՅՕԴ. Բ. Վասն բաբանէն և բաղբոջէ : 519
ՅՕԴ. Գ. Յաղագս խոյէն : 520
ՅՕԴ. Դ. Օմարտկոցաց կրէլէաց : 521
ՊՐԱԿ Գ. Առումն և պահ քաղաքաց : 522
ՅՕԴ. Ա. Յաղագս շրջապատնէշ և ընդդէմապատնէշ ամրութեանց : 522
ՅՕԴ. Բ. Յաղագս յարձակելոյ յամրականսն : 524
ՅՕԴ. Գ. Յաղագս խորամանկարկատ առնելոյ պաշարեալս : 524
ՅՕԴ. Դ. Հարումն և պահ քաղաքաց 'ի կազմածոց մեքենայից : 528
ԳԼ. Դ. Յաղագս նաւամարտութեան նաւինեաց : 533

404

735

ԷՋ	ՏՈՂ	ՎՐԻՊԱԿ	ՈՒՂԻՂ
22	31	եղբօրորդի	հօրեղբայր
28	28	հեծեալքի բրև	հեծեալք երբև
0	34	խրատուն կրասոսի	խրատուն կասիոսի
30	՚ի ծան.	հազարաց	հարիւրոց
34	39	Իին	Էին
45	26	կալպուր, նիոս	կալպուրնիոս
80	՚ի ծան.	Լիւսո	Լիւիոս
81	17	Հերոն	Հերոնիմ
104	23	յԱրքելաայ	յԱրքելայ
112	9	արբանակել	արբանեկել
132	18	մերժել, Արքեղայոսի	մերժել Արքեղայոսի
144	Վերջին	ղեթող	չեթող
150	30	մանաւաւդ	մանաւանդ
167	9	կեկերոն	կիկերոն
206	17. 25. 31.	հազար բիւր	հարիւր բիւր
217	18	առագաս ձգանեալ	առագաստ ձգեալ
234	6	աղորեաց	աղօրեաց
247	8	ծէծէին	ծեծէին
248	17	ղեռապատիկ	ղքառապատիկ
253	9	ացգեստանի	այգեստանի
275	՚ի ծան. յաման.	ապլիցն	ալիցն
365	29	յինսներորդի	յիննսներորդի
395	38	կնիդացիք	կինեթացիք
453	29	պարէն պզօրաց	պարէնս զօրաց
454	13	Յուլիանոսս	Յուլիանոս
494	7	երկոտասան հազար	երկոտասան բիւր
503	29	Արիստոմնի	Արիստոմենի
513	7	ընդ արձակուն	ընդարձակուն

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ
ԳՐԱԴԱՐԱՆ